


ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

Դ









АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

МАНУК АБЕГЯН

ТРУДЫ

4

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ԵՐԿԵՐ

Դ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1970

Յ. ԿՔ
Պ. ԿՔ

Խմբագրական Կոմիտե

ԱՂԱՅԱՆ Է. Բ., ՀԱՅՈՒՐԱՆ Գ. Հ., ՀԱՐՈՒՐԱՅԻՆՆԵՆ Ս. Բ.,

ՂԱՆԱԿԱՆՆԵՆ Ա. Յ., ՄԵԼԻՔ-ՉՂԱՆՁԱՆՅԱՆ Կ. Ա. ԿԱՆԱԿԱՆՆԵՆ Վ. Ս.,

ՊԻՎԱՋՅԱՆ Է. Ա.,

ՄԱՐԳԱՐՅԱՆ Կ. Ս.

Հասցի Երասաւանդաբան պատաստից և խմբագրից,
ԿԻՄ. ՊԻՎԱՋՅԱՆԸ



ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՏ

Երկերի 7 հատորում տեղավորված են Հայոց հին գրականության պատմության հերոսող գրքի՝ հեղինակի կողմից մշակված մասը, որը ընդգրկում է 10—15-րդ դդ. գրականության պատմությունը, «էջեր դաստիարակության հերթը» — Գևորգյան հեմարանում կարդացած դաստիարակության հերթը՝ 15—18-րդ դդ. տաղերգուների, պատմագրության և երգիչների վերաբերյալ, «Ուրվագծեր 19-րդ դարում հայոց գրականության պատմությունից (առաջին երեսնամյակ)» ուսումնասիրությունները:

Վերջին երկուսը Հայոց հին գրականության պատմությունը՝ հերոսող գրքի 1946 թ. հրատարակության մեջ՝ հեղինակի մոնավան պատճառով անավարտ մնացած հատորը ամբողջացնելու հպատակով, դրված են իբրև շարունակություն մշակված մասի՝ «Լրացում» բաժնում, նյութերի համապատասխան խմբագրությամբ և տեղագրումով:

Այս հատորը կազմելիս նպատակահարմար համարվեց ներդալ «Լրացում» բաժնում դրված նյութերը հերկայացնել առանձին-առանձին, բանի որ դրանք հեղինակի ձեռքով մշակված չեն իբրև Հայոց հին գրականության պատմությունն աշխատության մասեր, բայց և տեղավորել սույն հատորում, որպես հին գրականությանը վերաբերող նյութեր:

«Հայոց հին գրականության պատմություն» հերոսող գրքի համար իբրև բնագիր ծառայել է 1946 թ. հրատարակությունը, որը համեմատված է գրականության և օրվիտի թանգարանում պահվող ձեռագիր օրինակի հետ. կատարված են խմբագրական մասնակի նշգրտումներ, վերականգնված են ժամանակին կատարված որոշ կրճատումներ:

«էջեր դաստիարակության հերթը» ընդհանուր խմբագրով հերկայացվող բաժնի համար ևս որպես հիմք վերցվել է նույն հրատարակությունը և համեմատվել թանգարանում պահվող ձեռագրերի հետ: Այստեղից հանված է հայերեններին վերաբերող ենթադրվար, հետաքննումներ, որ երկերի Բ հատորում տպագրված է այդ քննարկի վերաբերող «Հին գու-

1 Տե՛ս «Առաջին հրատարակության ամբողջականից», Գ, 8 կետերը:

սանական ժողովրդական երգեր» ծավալուն հեռագրությունը (էջ 0—280)։

«Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության և պատմությանը» ուսումնասիրությունը աբեղատպվել է «Արարատ» ամսագրից (1908 թ., էջ 890—904, 1103—1115, 1909 թ., էջ 267—270, 321—334, 417—438, 721—733) ամբողջությամբ, ներառյալ և Հարություն Ալաբկյանի վասին հատվածը, որ բացակայում է 1946 թ. հրատարակության մեջ։

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱՎԱԿՈՒԹՅԱՆ

Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն Ի Յ՝

1940 թվականի աշնանը Մանուկ Աբեղյանը իր համառոտություններում տվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի գրականության և լեզվի ինստիտուտին գրելու հայ հին գրականության պատմությունը:

Այս աշխատության առաջին հատորը, որտեղ հայ գրականության պատմությունը հասնում է մինչև Գրիգոր Նարեկացին, այսինքն, 10-րդ դարը, հանգուցյալ գիտնականը ավարտել է—ինչպես այդ երեսում է հատորի առաջաքանին թվագրումից —1942 թ. ապրիլին:

Նույն թվականի կեսերից Աբեղյանը սկսեց աշխատել երկրորդ հատորի վրա, որ պիտի ընդգրկեր հայ գրականության պատմությունը 11-րդ դարից մինչև 19-րդ դարի առաջին տասնամյակների դարաբար գրականությունը, երկրորդ հատորի վրա Աբեղյանը աշխատեց՝ կարճատև ընդմիջումներով՝ մինչև իր մահը, բայց ցավոք լավատեց այն, կարողացավ մշակել միայն մինչև 14-րդ դարի վերջը, այն է՝ Առաքել Սյունեցին:

Մկրտչական շրջանում ինստիտուտը ենթադրում էր՝ օգտագործելով ռեկտորատը ամսագրում Աբեղյանի հրատարակված հոդվածները 19-րդ դարի դարաբար գրականության մասին, եղած բացը (15—18-րդ դարեր) լրացնել այլ հեղինակի շարադրանքով:

Սակայն, ժամանակի ընթացքում պարզվեց, որ Աբեղյանի արխիվում պահպանվել են Գեորգյան ճեմարանում նրա կարգացած՝ հայ հին գրականության պատմության հինգ այդ պակասող շրջանին վերաբերող դասախոսությունների սենսորությունները: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ սենսորությունները իրենց շարադրանքով ու արժանաթան տեսակետներով կարող են մշակված մասի թեկուզ համառոտ շարունակությունը հանդիսանալ, որով և ապահովվում էր հատորի հեղինակային միասնությունը:

¹ Առաջին հրատարակության բանադրական բոլոր աղետատները, հրատարակության պատրաստումը և խմբագրությունը կատարել են նորին Սարգսյանը և Արամ Առաքելյանը—Է. Պ.:

Այսպիսով, Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականութեան պատմութեան» տվյալ հատորը թաղկասցած է հետևյալ երեք հիմնական մասերից. ա) մշակված մաս, որ ամենից ընդարձակն է, ինչպես ասված, 11—14-րդ դարերը, թ) սեպագիր մաս, որ ընդգրկում է 15—18-րդ դարերը, և գ) տպագրված մաս («Արարատում»), որ ընդգրկում է 19-րդ դարի առաջին տասնամյակները, վերջին երկու մասերը հատորում անվանված են «Լրացում» — տարբերելու համար առաջին մասից:

Մի քանի խոսք այս թաղադրելի մասերից յուրաքանչյուրի վերաբերյալ:

ԱՌԱՋԻՆ՝ ՄԵԱՎԱՅԵ ՄԱՍ

1. Մ. Աբեղյանի «Հայոց հին գրականութեան պատմութեան» երկրորդ հատորի մշակված մասի ձևազերծը պարփակված է 19 տետրակի մեջ, որոնք համարակալված են — բացառությամբ 18-րդ տետրակի — իր իսկ Աբեղյանի ձևազերծով: Մ. Աբեղյանը համարակալել է նաև էջերը, ըստ որում իր ձևազերծով համարակալումը նա հասցնում է մինչև 16-րդ տետրակի վերջը, այն է՝ 1051-րդ էջը, 17 և 19-րդ տետրակները էջերը համարակալված են արգեն Մ. Աբեղյանի որդու, Եկարի Մհեր Աբեղյանի ձևազերծով, ինչպես և վերջինիս ձևազերծով է համարակալված վերը հիշված 18-րդ տետրակը, Այս երկու տետրակները պարփակում են ձևազերծ 1052—1183 էջերը: Ինչ վերաբերում է 19-րդ տետրակին, ապա նրա համարակալումը նորից արված է Մ. Աբեղյանի ձևազերծով, բայց ոչ իբրև 18-րդ, այլ 16-րդ տետրակի շարունակություն և ընդգրկում է 1052—1060 էջերը, այս երկուսի բացառությամբ կարելի սույն առաջաքանի երկրորդ կետում:

Այս հատորը նախորդի պես ունի «Հավելվածներ» բաժին: Առաջին շորտ հավելվածը նշված են իբրև հավելվածներ Մ. Աբեղյանի կողմից և մտնում են սույն մշակված մասի մեջ:

2. Իր ձևազերծ 19-րդ տետրակում — որը, ինչպես հայտնի կդառնա քիչ հետո, գրված է 16-րդ տետրակից անմիջապես հետո — Մ. Աբեղյանը 1059-րդ թերթի երկրորդ էջի վրա ունի հետևյալ նշումը իր «անելիքի մասին».

Գրելիք (14—17-րդ դարեր)

I. Եկեղեցական գրականության վերջալույսն և արևմուտը, Հովհան Բրտնեցի, Առաքել Բաղիշեցի, Առաքել Սյունեցի և այլն:

II. Վիպական գրականություն:

III. Քնարերգուներ. Մկրտիչ Նաղաշ, Թվկուրանցի, Աղթամարցի և ուրիշներ:

IV. Գուտանական երգեր — հայրեններ:

Գործող շրջան — գրականության նորագույնը 17—19-րդ դարերում, Հետազոյում, որը Աբեղյանը ավարտում է սույն «գրելիքի» առաջին

կենտը՝ քաջառուցյալ թաղիչեցու, 18-րդ տետրակի վերջին, 1183-րդ թերթի երկրորդ էջի վրա նա նորից նշում է իր անելիքը.

Շարունակութուն— Առաքել Բաղիչեցի.

Յարմառ Մանուկի սիրավեպը.

Տաղասացութուն

1. Մկրտիչ Նաղաշ

2. Թլկութանցի

3. Գր. Աղթամարցի

4. Անանուներ

Գուսանական տաղեր

Այդ երկու նշումներից կարելի է հզրակացնել, որ Մ. Արեղյանը հասնակ պատկերացում ուներ իր անելիքի մասին, նշումների առանձին կետերը տեղ-տեղ տարբերվում են իրարից միմիայն ձևակերպումով, քայքայ ոչ բովանդակությամբ:

Սակայն, այդ պարզապես, ինչպես հայտնի է, հիմնականում գրելիք էլ մնաց. 1183-րդ էջով ավարտվող Առաքել Սյունեցին Արեղյանի շեշտ-յոց հին գրականության պատմության երկրորդ հատորի վերջին, հեղինակի կողմից մշակված թեման էր:

Գրելիք-ից կարելի է հզրակացնել, որ Առաքել Սյունեցուն պիտի հետևեր Առաքել Բաղիչեցին, որը մեզ հայտնի 19-րդ տետրակում քաջակամ է:

Բարեբախտաբար, Մ. Արեղյանի Թղթերի մեջ գտնվեց մի ձեռագիր տետրակ, որի առաջին 8 էջը ունի «Անանուն տաղեր» վերնագիրը, իսկ դրանց հետևող 6 էջը՝ «Առաքել Բաղիչեցի»: Տետրակի ընդհանուր վերնագիրն է՝ «Նյութեր հայոց հին գրականության», որ և գրողի մասին պիտի վրա: Թե՛ տետրակից և թե՛ գրության բովանդակությունից ու ձևից կարելի է հաստատագրել, որ դա Մ. Արեղյանի վերջին շրջանի գրածներից է և որ այն բաղադրիչ մի մասը պիտի դառնար «Առաքել Բաղիչեցի» գլխի:

Նկատել անհնալույսն, որ Առաքել Բաղիչեցին Հայոց հին գրականության պատմության կարևոր օղակներից մեկն է, առանց որի պակասավոր կլիներ այդ պատմության շարադրանքը, նպատակահարմար համարվեց հիշյալ հատվածը — թեև այն չի ընդգրկում Բաղիչեցու ամբողջական գիմնական — ազգագրիչ ընդհանուր հյուսվածքի միջ:

3. Կոստանդին Նրզնկացու բաժինը, բաղկացած 15 պարագրաֆից ու մի համընկածից (Շեմհանամյի ձեռագրի ազդեցությամբ), ավարտվում է 16-րդ տետրակում, նրա վերջին, 1051-րդ էջի վրա, ըստ որում համընկածը մտցված է հետագայում. հակառակ Արեղյանի սովորության՝ տետրակների շարքիցները դեռ նետել կամ էլ կենտրոնացնել նրանց վերջում՝ համընկածը մնացել է պարփակված իր շարքում:

Շեմհանամյի հին գրականության պատմության երկրորդ հատորի 19-րդ տետրակը բովանդակում է միայն մի պարագրաֆ, որի վերնագիրն է՝

«Վերածնունդ»-յան գրականության ամսագրին էտապը, թիվ 16, որ հետագայում մատչելի է ընդլայնվել և դարձված է 1:

Թե՛ այս 16 թվից և թե՛ պարագրաֆի ամփոփող բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ այն, ըստ սկզբնական հղացման, պետք է լինե՞ր Կոստանդին Երզնկացու ստեղծագործությունը քննարկող գլխի (որը, ինչպես մեզ արդեն հայտնի է՝ համաձայն վերջնական հավորման՝ 15 պարագրաֆից էր բաղկացած) վերջին, հավելվածին նախորդող 16-րդ պարագրաֆը:

Փոխելով իր միտքը, Մ. Աբեղյանը հասնել է այս 16 պարագրաֆը 16-րդ տետրակից, նրա փոխարեն զրել հավելվածը, էջերը համարակալել, ապա շարունակել համարակալումը 16-րդ պարագրաֆի էջերի վրա՝ հաջորդելով այն 1052-ից՝ 1060-ի:

Այդպիսով, պարսի գալիս, որ 16-րդ տետրակի անմիջական շարունակություն է 13-րդ տետրակը: Ապա ո՛ր մնացին այդ զնայում 17 և 18-րդ տետրակները:

16-րդ պարագրաֆը, այսինքն՝ «Վերածնունդ»-յան գրականության ամսագրին էտապը ավարտվում է հետևյալ պարբերությամբ. «Բարեբախտաբար զրի անկման մնացել են զուսանական «Հայրենները, որոնք մեր քննարկությունը զոհար վարդերն են: Սրանց մասին էլ կտեսնենք այս գործի շարունակության մեջ»:

Հետագայում Մ. Աբեղյանը մատիտով երկու խաչ է դրել այս պարբերության վերջին, ու նախորդ թերթի (1059) երկրորդ էջում կրկնելով երկու խաչը, նույնպես մատիտով ավելացրել. «Երայց նախքան այդ մի հայացք ձգենք մեր եկեղեցական գրականության վրաս»:

17 և 18-րդ տետրակները պարփակում են հենց եկեղեցական գրականության այդ տեսությունը, ինչպես մեզ հայտնի է, 18-րդ տետրակի համարը Աբեղյանի ձեռքով լի գրված, բայց դրա փոխարեն նախորդ տետրակի հոսմանական XVII-ը դրոշմված է Աբեղյանի իսկ ձեռքով: Պարզ է, ուրեմն, որ Մ. Աբեղյանը երկրորդ անգամ փոխել է իր մտադրությունը «Վերածնունդ»-յան գրականության ամսագրին էտապը հաստատված տեղի նկատմամբ ու որոշել լղծել այն ոչ միայն «Կոստանդին Երզնկացի» գլխի, այլև նրանից անմիջապես հետո, այսինքն՝ նրա և եկեղեցական գրականության տեսության արանքում:

Արդ՝ ո՛ր զնել այդ պարագրաֆը: Աբեղյանը 16 թվի փոխելով մատիտով 1-ի, ապա նույնպես մատիտով ընդհանուր վերնագիր «Տաղասացություն» (շապիկի վրա՝ «Տաղասացներ») և ննթավձերնագիր՝ «Ընդհանուր տեսություն» տալով, պարզ է, որ մտադրություն ունե՞ր լրացնելու այդ նորատեսիլ գլխի նոր պարագրաֆներով, բայց թե ուր պիտի գետեղոր այս ամենը՝ չէ՞ր որոշել ու իր տարակուսանքները նա նշել է՝ «արդյալ մատիտով»՝ հենց վերնագրին կից հետևյալ բառերով. «Գնել վիպական քերթվածներին առաջ? Հետո?»:

Այդ տարակուսանքները Մ. Արեղյանը, որքան մեզ հայտնի է, չլուծեց, Վիպական քերթվածների մասին, որ ըստ նրա հրապարակած պիտի հետևեր ձեռնարկական գրականությանը, նա չդրեց, Վարդապետությունը գլուխն էլ մեաց նույնությամբ՝ լույս մեզ հայտնի Վերածնունդի գրականությանն առաջին էտապը՝ պարագրաֆով։

Ելնելով այս ամենից, այլև նկատելու անհնալով, որ նշված պարագրաֆը տեղի տեսակետից միանգամայն համապատասխանում է Մ. Արեղյանի սկզբնական մտադրությանը՝ Խնամքի տեսքով որոշեց թողնել այն Եկոստանդին Երզնկացի գլխով իրեն այդ գլուխը և նրան նախորդող գլուխները ճշրագրական հատված։

Հիշված 16-րդ պարագրաֆը ներկա հատորի մեջ նշված է 17-րդ համարով, որովհետև Մ. Արեղյանը «Նախագրում» այդ պարագրաֆը գրելուց հետո, 15-րդ պարագրաֆի վերջին հատվածը առանձնացրել ու դարձրել է 18-րդ պարագրաֆ հետևյալ վերնագրով՝ «Գրականության զարգացումը»։ Այս նոր վերնագրի տակ մատիտով Արեղյանը նշել է՝ «միայնակ տառապանքության», զենով կողքին երկու հարցական, որով և արտահայտել է իր տարակուսանքը այս հատվածի տեղադրության առթիվ։

4. Ներկա հատորի Ա գլուխը, որ կրում է Վերածնունդի գրականության ընդհանուր վերնագիրը ու Եկոստանդին Երզնկացիի և Երզնկացիի զարգացումից հետո, 1943 թ. հունվարի 18-ին, Եկոստանդին Երզնկացիի և Երզնկացիի զարգացումից հետո 10-րդ դարի վերջերսում և 11-րդ դարի սկզբներում իբրև հիմք հայտնի գրականության վերածնունդի զարգացումը խորագրի տակ, կարդացված է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալում։

Նույնը, առանց գաղափարության ժամանակ արված սակավաթիվ բացատրությունների և հավելումների, տպագրված է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի Վերածնունդի մեջ (1943, № 1, էջ 39—52)։

5. Ներկա հատորի Վերածնունդի Մարկավազ վարդապետը գլուխը, որ բաղկացուցիչ մասն է սերտ մտավոր հոսանքի առաջին փուլերը գրականության մեջ՝ բաժնի, իրեն առանձին հատված տպված է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Վերածնունդի մեջ (1944, № 1—2, էջ 31—60)։

Հիշյալ գլուխը Մ. Արեղյանը, Վերածնունդի տպագրության հանձնելուց առաջ, ներառել է զգալի փոփոխության թիվ՝ ըստ բովանդակության և թիվ ըստ կառուցվածքի։ Նա հարստացրել է իր գործը մի շարք նոր և կարևոր նյութերով, խմբագրել ու ընդլայնել է երկրակառուցությունը՝ ընդհանրացումներ, փոխել մի երկու հատվածի վերնագրերն ու կառուցվածքը, վերջից ավելացրել մի նոր հատված՝ «Զգուշացումները և ռազմականությանը և դրա ազդեցությունը գրականության մեջ և այլն»։ Այս ամենին հետևանքով աշխատանքն ընդհանրապես դարձել է ավելի մշտական ու կատարյալ։

Նկատի ունենալով Հիշյալ Հանդամանքը, Խնտիտուտը նպատակա-
Հարմար գտաւ ներկա Հատորում տալ ոչ թի այս Հատորի Համար Անդ-
յանի կողմից նախապէս գրված «Ընդհանրաւ Սարկավադ վարդապետա-
գութիւն» թմարկավագ վարդապետի կենսագրութեան շուրջը վերտառու-
թյամբ համընկածով, այլ վերջինիս հիմնովին վերամշակված վարկանշը
իր նույնանուն համընկածով՝ ապոված «Ընդհանրաւ» մեջ:

Կարեւոր ենք Համարում Հիշելու նաև, որ այստեղ իբրև քննարկ օգ-
տագործվում է՝ մեզ գրադեմոլոգ աշխատութեան «Ընդհանրաւ» կատար-
ված աւել արտատպութեան՝ հեղինակի գրադարանում պահպանված այն
օրինակը, որի վրա նրա ձեռքով կատարված են մի շարք նոթ, ուղղորդա-
լրացումներ և ուղղումներ:

6. Պրնիցիպի հրկրորդ կետը «Վերականգնողական գործունէ-
ւունքի» միջնադարյան մի շարք հայ գրչագրերում, Այդ վեպի ընտիր վա-
րկանշանքից մեկը (լափաժ) «Պատմութիւն Զարմանի Ամանի» վեր-
նագրի տակ, հանդերձ ֆրանսերեն թարգմանութեամբ, հրատարակված է
Փարիզի «Անալիտ» ամսագրում (1904, № 3—11 և 1905, № 2, 4—
9) եմբողջի հայագետ Յր. Մաքիւրի կողմից:

Զարմանի վեպի արձակ և լափաժ տարբերակները կարելի է գրա-
նել միջնադարյան մի շարք հայ գրչագրերում, Այդ վեպի ընտիր վա-
րկանշանքից մեկը (լափաժ) «Պատմութիւն Զարմանի Ամանի» վեր-
նագրի տակ, հանդերձ ֆրանսերեն թարգմանութեամբ, հրատարակված է
Փարիզի «Անալիտ» ամսագրում (1904, № 3—11 և 1905, № 2, 4—
9) եմբողջի հայագետ Յր. Մաքիւրի կողմից:

Ա. Անդրանիկի կարծիքով, որ նա արտահայտել է Խնտիտուտի և Մա-
տենադարանի մի քանի աշխատակիցների, Զարմանի վեպը ծագումով
հայկական լինելով հանդերձ (դա հավանորեն ընդհանուր արեւելյան մի
սյուժետ է), ստեղծագործական արժանատիւն մշակման է ենթարկվել
հայ իրականութեան մեջ: Նա գտնում էր, որ Հիշյալ վեպը իր գեղարվես-
տական արժանիքների շնորհիվ հանդիսանում է միջնադարյան հայ գրա-
կանութեան ուղղորդալ հրաշարաններից մեկը, որը հատկապէս աչքի է
ընկնում իր կենդանի պատմութեամբ, մագլցողական գործը լեզվով ու ու-
նով, սահուն-երաժշտական ուսանելիքով:

Այս նկատառումով էլ, ահա, Անդրանիկը անհրաժեշտ էր համարում
Զարմանի վեպը մտնել հայոց գրականութեան պատմութեան մեջ:

3 Այդ մասին ցուցում տւի նաև Հեղինակը. տետրակների 188-րդ թերթի հրկրորդ հ-
րէսի վրա, այդ զեւրից տալով Անդրանիկը գրել է. «Ընդհանրաւ Սարկավադ վարդապետ» գրա-
թուն ամբողջ (էջ 187—222, հետք նաև համընկածը) վերամշակված է «Ընդհանրաւ» մեզ
ողողորդելու համար, գրքի մեջ գնել վերամշակվածը: Իսկ զգի՜ր վերնագրից անմիջապէս
տեսք եղել է «Ընդհանրաւ» վերամշակվածը, որ գրված է հեղինակի կողմից: Պ.:

4 Վերջ համառոտ քաղվածքով հետևյալն է: Առթերտութեամբ Զարմանադան թա-
ղալորը թերթի վրա հասնում ունենում է մի արտա զգովուն, որին կենցալ է Զարմանի Ան-
ման անուամբ: Մեծաշուքով՝ Զարմանն այդ է ընկնում իր գեղեցկութեամբ, խառնու-
թեամբ և քաղաքական: Պարտից թաղալորը դատար Եւրոպայի արքիւր լսելով Զարմանի

7. Մ. Արեղյանի Վարդ Հին գրականության պատմության հրկրորդ հատորի այս մասը կազմված է հեղինակի՝ Գևորգյան ճամարանում 1899—1900 թվականներին և հետագայում կարգացած դասախոսությունների շարահարաններից (տե՛ս «Արարատ», 1908, էջ 890 և ՄԱՄՊ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1941, № 5—6, էջ 85)։

Օգտագործված ձեռագիրը ամփոփված է երկու տարբեր շաղկկների մեջ, ըստ որում առաջին շաղկի մեջ գտնվում են հատորի «Տաղանաքություն» բաժնի նյութերը, երկրորդի մեջ՝ «Պատմագրություն» և «Երգիչներ» (Մայաթ-Նովա) բաժինները նյութերը։

Առաջին⁴ շաղկին ունի 68 համարակալված և մեկ չհամարակալված սովորական տետրակի լափի թերթեր, երկրորդը՝ 48+23 թերթեր, ըստ որում վերջինը սկսվում է 8-րդ թերթից (որի առաջին էջը լնջված է ու ներկայացնում է շարունակություն այլ շարահարանի) և վերջանում 81-ով։

Առաջին շաղկից ունի չթանաքագծված, աշխարհիկ հոսանք. 15—18-րդ դարն վերնագիրը և մի շարք նշումներ կատարվելիք անհրաժեշտ լրացումներ վերաբերյալ (հեղինակների անուններ, գրքերի վերնագրեր և էջեր)։ Երկրորդ վերնագրված է՝ «Առաջիկա պատմագիր. Չափարկալայում»։ Արարատ համարներում կրկնադրվում են շաղկի նյութերը, ինտերտեքստը կատարվում է հետևյալով։

ա. Հանված կամ կրճատված են անմշակ մասերը և բնագիրը ծանրաբեռնող մեջբերումները, առանձնապես Հովհաննես Թլկուրանցու, Զաքարիա Մարկավաղի և Մայաթ-Նովայի բաժիններում։

բ. Համապատասխան սկզբնաղբյուրների հիման վրա՝ ստուգված և ճշտված են հեղինակի կողմից արված բոլոր մեջբերումները։

գ. Տեքստը լրացված է մի շարք մեջբերումներով (գլխավորապես «Առաջիկա Դավթիժնի» գլխում), որոնց էջերը ցայց են տրված Արեղյանի կողմից։

Համարվել և տեսնելով նրան, սիրահարվում է և հորից դադարի, նրան անգամ ժողովուրդը չի տեսնում։ Պարսիկ նշանավոր փառանքի Լեզի Գուրգը փորձում է դավիկ Պարսիկին, ասելով վերջինս տղանում է նրան։ Այդ բանի համար Պարսիկը բռնաբարվում է պարսից թագավորի կողմից, բայց չուզում էր հավատարիմ ընկեր Փայվաթի լուսնիքով նա աղուկում է բանալի և սիրան Եսթիլապարիկին հետ հայրենիք վերադառնալով, ամուսնանում։ Ժամանակի անց, մեղմում է Պարսիկի հայրը, և նա գտնում է Ասորեստանի թագավոր։ Պարսիկը կատարել է իրենից և մղում Եսթիլապարիկին վերադառնալով, նկատ պարսից թագավորի հետ և պարտադրյալ մասնում նրան Եսթիլապարսիկին անունում է մի արևադարձ (Եսթիլապարիկին), որը մեծանալով դառնում է հոր նման գեղեցիկ, իմաստուն և զույլ մարդ։ Հաջորդի երեսնիկ արևադարձով 80 տարի ապրելուց հետո մեղմում է Պարսիկին նրա անգը Ասորեստանի թագավոր է դառնում որդին՝ Եսթիլապարիկին։

⁴ Այժմ գրականության և արվեստի թանգարանում պահվող Արեղյանի ֆոնդի № 86-ի էջեր։ Պ.:

⁵ Նույն ֆոնդի № 88:—Է. Պ.:

դ. Զեռացրի լուսանցքներում ձղած կարևոր նշումները՝ վերնագրեր, պիտոգույքայիններ, բառեր, անուններ և այլն տրված են տղայատանի ծանոթությունների մեջ:

Ե. Մոռացություններ կամ գրչի վրիպումներ բաց թողնված բառերը վերականգնված են քանակական փակագծերի մեջ. նույնպիսի փակագծերի մեջ են տրված աղճատ տեքստը հասկանալի դարձնելու համար տրված սակավաթիվ խմբագրական լրացումները:

Զ. Հայոց Հին գրականության 4-րդ շրջանի բովանդակությունն ու վերջինիս համապատասխան վերնագրումը նդել է Մ. Արեղյանի մոտրումները տարկան նրկար ժամանակահատվածում, շարունակ ենթակա լինելով վերափոխման և խմբագրման:

Իր ճեմարանական դասախոսությունների ձեռագիր տնտրականներում այն անվանված է «Վերածնունդուն և նոր գրարար մասնագրություն», որ հետագայում մատրիտով խմբագրվել է՝ «Հին լեզվի, ոգու վերածնունդուն և նոր գրարար մասնագրություն» լուսանցքում տրված հետևյալ ծանոթությամբ. «Վերածնունդուն ոչ եվրոպական գրականության իմաստով, այլ վերականգնացում» (սեագրի մասի տողին տետրակ, էջ 1)^Ը:

Տարիներ անց իր «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և Հին գրականության պատմության» ատկանոթի աշխատության մեջ (Երևան, 1923), որ նույնությամբ արտատպվել է ՍՍՀՄ գիտ. ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագրի» 1941 թ. № 5—6 «Վերածնունդունը հայոց Հին գրականության մեջ» վերնագրի տակ, Արեղյանը նույն շրջանը անվանել է «Հին, կրոնա-եկեղեցական վերածնունդուն և նոր գրարար գրականություն» («Տեղեկագրի», էջ 106):

Նշված հոդվածի ներածական մասում, որ գրված է նոր, արտատպության կապակցությամբ, Արեղյանը տալիս է հետևյալ ձևակերպումը. «Եկեղեցական գրականության վերածնունդուն, նոր գրարար և տշխարհիկ գրականություններ» (ե. տ., էջ 86):

Վերջապես, իր «գրելիք»-ում (1943—44 թթ.) Արեղյանը տվյալ շրջանը կոչում է «Գրականության նորոգումը 17—19-րդ դարերում» («17—19-րդ դարեր» ասելով Արեղյանը հասկացել է 1600—1830 ժամանակահատվածը, ինչպես այդ նշված է մի քանի տեղ սեագրում):

Ինտոնտոնը գերադասեց պահել վերջին ձևակերպումը:

Այս շրջանի սկզբնական մասի «Ներածություն» վերնագիրը տրված է մեկ կողմից:

Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆԵՐԵՏ

Ը Տե՛ս նույն տեղում, № 88—Է. Պ.:

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԴ

(10—16-րդ դարեր)

ՆՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


ԿՑԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. Վերածնությունը:—Հայոց հին գրականության երրորդ շրջանը (11—17-րդ դար) արտահայտությունն է զգեսավորապես հայկական վերածնության, Արգարեի գեղ շարունակվում են հին գրական տեսականներ՝ մեկնություն, ճառ, հոգևոր երգ և այլն, բայց աշխարհիկ տարրը հետևողհետև ավելի է մտնում նկեղենականի ստեղծած գրականության մեջ՝ առաջ են գալիս գրական նոր թեմաներ և նոր տեսանքներ, նոր լեզվով հորինված, մինչև որ լինում է մեր գրականության աշխարհականացումը: Առանձնապես բանաստեղծությունը բոլորովին փոխվում է իր բովանդակությամբ ու ձևով, և մեր հին քնարերգությունը ձեռք է բերում գրեթե բոլոր կարևոր թեմաները:

Այս փոփոխությունը հետևանք էր կյանքի և աշխարհայեցողության փոփոխության: Մինչդեռ քրիստոնյա աշխարհի ուրիշ կողմերում դեռ ընդհանրապես իշխում էր թանձր միջնադարը, 11-րդ դարի առաջին կեսին արդեն մեր կյանքի ու մտածողության մեջ մտել էր մի հեղաշրջում, որով կրոնա-ճգնավորական ոգին տակավա՛ստ տակավա՛ստ սեղի էր տալիս մի ուրիշ ոգու՝ դիմաց, և առաջ էր գալիս ինքնուրույն վերածնությունը՝, որից շէր կարող լսողգլխել և հոգևորականը:

Թե երբ է հղել այդ փոփոխություն և մեր հայկական վերածնության սկիզբը, այդ գովար է որոշել: Ոչ մի գրական նոր հոսանք,— ինչպես և

1. Յճ՝ այս աշխատի գրեթե նախաձեռնումը՝ Մ. Արեղյան, Համալսարանական հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմություն, զարնթաց նրա՛ստ ուղղության համալսարանի 1931—32 թվ. աշխատ, Երևան, 1933: Ազգայնաբանական հարցի իրավունքով՝ Ա. Մ. Արեղյան, Վերածնությունը հայոց հին գրականության մեջ, ՊՍՄՊ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», թ 6—8 (10—11), Երևան, 1942, արտատվածքի արտատվող:



աւրիշ մտաւոր, կուլտուրական երևույթներ, — մի քանի տարում չի ըս-
կրւում և երևան գայիս որոշ գծագրւած կերպով, Ինչպես Անանիա Շի-
րակացին գրում է, ամեն բնական երևույթի «լինելութիւնն է սկիզբն
ապականութեան, և ապականութիւնն դարձնալ անդրէն է սկիզբն լինելու-
թեան»։ Այս դիալեկտիկական, ըստ Շիրակացու, բանմասն հակադասկու-
թեամբն ծագում ու մահանում է նաև գրական երևույթը՝ տեղի տալով նո-
րին, հարկաւ, իր ֆունկցիան կատարելուց հետո կամ, ինչպես անվորա-
բար ասում ենք, բարգաւաճելուց հետո։ Նորի սկիզբը հենց այդ հնի մեջ
է. նույնիսկ նրա բարգաւաճութեան մեջ, Հին կրոնա-եկեղեցական ուղ-
ղութեան և վանական կյանքի ամենափայլուն ժամանակը մեզնում եղել
է 10-րդ դարի երկրորդ կեսին և 11-րդ դարի սկզբներին, երբ դա ցալ-
ստուն կերպով արտահայտվել է եկեղեցական ճարտարապետութեամբ և
Գրիգոր Նարեկացու գրական երկերով։ Նախ հենց այդ ժամանակներում,
10-րդ դարի վերջերին և 11-րդի առաջին տասնամյակներին, է սկիզբը
հնի ժապականութեան, այսինքն՝ քայքայման, որ և սկիզբն է Նորի բա-
ցաւայտ «լինելութեան», նոր մտաւոր հոսանքի, որ դանդաղ պրոցեսով
զարգանում էր առկապին շատ զորեղ կրոնա-եկեղեցականի կողքին, և
որի արդյունքն է մեր վերածնութեան գրականութիւնը։ Ուստի թեև Գրի-
գոր Նարեկացին իր էութեամբ պատկանում է Նախորդ գրական շրջանին,
բայց նրա երկերի մեջ արդեն, ինչպես տեսել ենք, երևում են վերածնու-
թեան սաղմերը։ Նույնը նաև Անանիան Զրուցագրի մի քանի զրույցների
մեջ, որ նույնպես տեսել ենք։

Այս վերածնութիւնն տեղիին առնված է արևմտեան նվորպական
գրականութիւնից. ուստի նախ մի քանի խոսք այն մասին, թե ի՞նչ են
հասկանում «վերածնութիւնն» տեղում՝ նվորպական գրականութեան մեջ։
Այդպես, այդ անունով կոչւում են Արևմտեան նվորպայի և առանձնա-
պես Ռուսիայի վաղ-բուրժուական (քաղաքացական) կուլտուրան 14—
16-րդ դարերում։ Այդ ժամանակ արդեն գլխավոր հասարակական դեր
էր կատարում բարձրացած Նոր դասակարգը — բուրժուազիան (քաղաքա-
ցութիւնը), որի դասակարգային շահերի և իրեայնորի արտահայտու-
թիւնն էին դառնում գիտութիւնը, արվեստն ու գրականութիւնը։ Կուլ-
տուրայի կենտրոն էին քաղաքները, Առևտրական կապիտալով փարթա-
մացած քաղաքացիները, հակադրվելով ֆեոդալին և եկեղեցականին, ճոխ
կյանք էին վարում պարսպապատ քաղաքներում շինված շքեղ բնակա-
լաններում, ազնիվ հագուստներով, թանկագին կարամսերով, ընտիր ա-
նոթներով, աշխատելով ձեռք-բերել ամեն վայելք խնդրանքներով, երա-
ժեշտութեամբ և այլն։

Այս Նոր դասակարգի կուլտուրայի առաջին հատկանիշն է դպրոցի
և գրականութեան աշխարհականացումը՝ հակառակ հոգևորական սքո-
լաստիկայի ձգտում է լինում ուսումնասիրելու բնութիւնը, բնագիտու-
թիւն, մաթեմատիկա, իրավագիտութիւն, Լատինական լեզուն զեռ երկար
մնում է իրրն ընդհանուր միջազգային լեզու գիտութեան, փոխառաջադա-
ն

թյան և այլի համար, բայց առաջանում է պահանջ գրելու մի այնպիսի լեզվով, որ հասկանալին ոչ միայն գիտնականները, այլև ուրիշները, մասեր ծագում են հասկանալի լեզվով ազգային գրականությունները, ազգային գրական լեզուները:

Նախորդ դարերում անհատականությունը ոչնչացած էր, անհատն իր անհատական լեզունը, ինքնուրույն անհատական մտածելու, վերածնունդի ժամանակ անհատն են տեսնել մարդու մեջ անձի ազատության զարգացումը: Առաջ են գալիս մարդիկ, որոնք համարձակվում են ինքնուրույն լեզու:

Այդ ժամանակներում ավելի մոտից ծանոթանում և ուսումնասիրում են անտիկ, այսինքն՝ հին հունական և լատինական արվեստը, գրականությունը ու գիտնականությունը: Ենթադրվում է, որ անտիկ գրականության ընտրյալ ձևերի և ձևերով կյանքի և ստեղծագործության մեջ հարաբերություն առաջանալու անտիկ աշխարհի կուլտուրային: Այդ են համարել այս նոր կուլտուրայի հիմնական հասկանալի, ուստի և ծագել է վերածնունդը տեղի, իբրև անտիկ կուլտուրայի վերածնունդը ընդդեմ միջնադարյան ճգնաժամական և սքոլաստիկական կուլտուրայի: Իբր միջնադարը եղել է միակերպ անհամաձայն շրջան, չի բավականացել ոչ մի ներքին զարգացում, և անտիկ կուլտուրայի ազդեցությամբ վերածնունդ են գիտություն, գիտնականություն, արվեստներ ու գրականություն: Զմեռվում անտիկ կուլտուրայի գործող ազդեցությունը՝ պետք է ընդունել, սակայն, որ վերածնունդը իբրև արդարև է ներքին ուժերի վրա հիմնված անբեկ հարգանքի, և դրա արժանատիները գտնվում են ավելի ևս հին ժամանակներում: Վերածնունդի լեզու շրջանի սկիզբն եղել է միջնադարյան բարենպաստության ժամանակ, Այսպես՝ վերածնունդ են տեսնում Դանտեի (1265—1321) և մի քանի ուրիշների մեջ՝ շնայելով նրանց բարենպաստությանը և միտքի զարգացմանը: Նույնը երևան է գալիս նաև Պրովանսի տրուբադուրների և գերմանական միներալների ներքին մեջ, որոնք նախակարգապետներ են վերածնունդի: Այս քանակական տեսանկյունից և պարզապես մեջ առնելով են նոր գրական ձևեր և տեսակներ, որոնց մի մասը գիտնականություն են անտիկ գրականությունից: Դրանցից են, օրինակ, Դանտեի ժամանակների կոմիդիան, հույական ժողովրդականները Պետրարայի (1304—1374), Նովելլաները Բոկակաչիոյի (1313—1375), էպիգրամայի, սատիրայի և այլն:

Հայաց գրականությունը, ինչպես և արվեստն ընդհանրապես, հարկավոր, կտրված չի եղել այլազգիների, առանձնապես արևելյան գրական հոսանքներից: Բայց 10-րդ դարում դժվար է տեսնել մեղմում անտիկ գիտության, արվեստի ու գրականության այնպիսի մեծ ծանոթություն և ազդեցություն, որի հետևանքով կերպարանափոխվեց մեր ինքնուրույն-Ֆեոդալական գրականությունը: Անշուշտ ճարտարներն գիտությունների հին թարգմանությունները թուրքական մոտացության տրամադրված չեն եղել, բայց նրանց ուսումնական արգել 10-րդ դարից առաջ խամարած է եղել: Նույնիսկ

Անանիա Շիրակացու նրկներն այլևս ուսումնասիրության առարկա չեն
եղել: Գրիգոր Մադիստրոսը մի նախնիով Արշարունի Պետրոս կաթողիկո-
սին (1019—1059 թթ.) խնդրում է իրեն ուղարկել Շիրակացու մի գիրքը,
զգուր մեծ քննիկոնն անուանեն, «որ են այժմ ի տան տէրուհեան, զոր
նախ քան զքեզ իրթնացեալ և թաղնի ընդ զըռուսնա: Ժամկէնն»², Ասպ նա
այդ առիթով հիշում է Շիրակացու գանգաւոր, թն մեր ազգն անհող է գի-
տութեան վերաբերմամբ: Հետո նա ինքն էլ իր կողմից արտելում է, թն Եր
բազմաց անպիտի՞ եղելոյ այսպիսի գործառնութիւնը և հանդէսը, թն Եր
մոռացումն այսպիսոյ մատենի ոչ միայն եղև անկանել, այլև բազմաց,
քանզի Արամեան անոի հպարտութիւն և անամոք բնութիւն և խռատապ-
րանոց քարս ոչ ստորակայի յայտոսիկ կրթութեան յարատեանկան հաւա-
նել, կամ եթէ ոչ պիտի, որք պետականին հասին բախտի, մեծարու լինել և
խուզել զխոհեմական արհեստս ի զարգ քարգոնսական [աւրացական]
ապարանին, որպէս մեծ Փաղովէոսն այլ և որք այլք այսպիսիք: Իսկել՝
Մ. Առքնացու գանգաւորի նման: Մի անգամ որ այսպիսի վերաբերմունք
է եղել զնպի արտաքին գիտութիւնները, քնականաբար չի կարելի մեր
վաղ վերածնութեան ժաման համար անտիկ փիլիսոփայութեան և այլի
ազդեցութիւնը տեսնել: Վերածնութիւնն ինքը, 11-րդ դարի առաջին
տասնամյակներէն սկսած, թերևս մասամբ նաև ընդունողական ազդեցու-
թյամբ, նորոգում է հին թարգմանութիւնները ուսումնասիրութիւնը և
զարթնցում է, ինչպես հետո կտեսնենք, առանձին սեր ու հակում դնել
հին հունական փիլիսոփայութիւնն ու գիտութիւնը: Իսկ մեր հայկական
վերածնութիւնն ինքնուրույն է: Դա ազգային կուլտուրայի ու գրակա-
նութեան շարունակական զարգացման մի իրականութիւն է, արգելոյն հայ-
կական քաղաքային կյանքի բարգաւաճման, դրա հետևանքով և ներքին
ուժերի այլ անալիստական շարժման, որ առաջ էր եկել հայրաբնակ
խաղաղութեան միջոցին: Եթե «վերածնութիւն» քառով է անվանվում
այստեղ մեր գրականութեան այս վերափոխված շրջանը՝ որովհետև այդ
ժամանակ «վերածնվել է հիմնական կարծիքի բուն աշխարհիկ ոգին
և աշխարհայնացութիւնը՝ հակառակ կրոնա-եկեղեցականի, և որովհետև
այդ շրջանի գրականութեան հատկութիւններն ընդհանրապես նույնն են,
ինչ որ Ֆլորպական վերածնութեան գրականութեանը: Դա զխտելութեան
հայ քաղաքացութեան, հայ բուրժուազիայի գրականութիւնն է:

2. Քաղաքներ և քաղաքացական կյանք ու կուլտուրա:—Հին դա-
րերից ի վեր հայտնի են եղել Հայաստանում մի շարք քաղաքներ— Ար-
տաշատ, Վաղարշապատ, Վան, Դվին, Այաթ և ուրիշներ: Ծրկաբաւտե խա-
ղաղ շինարարութեան դարաշրջանում (10—11-րդ դարերում) արագ
բարձրանում է ժողովրդական տնտեսութիւնը, երկրի քնակութիւնն ա-
ճում է: շինվում են բազմաթիւ գյուղեր, քաղաքագյուղեր ու գյուղաքա-

² Գրիգոր Մադիստրոսի թղթերը: Ե լույս ընծայեց Կ. Կոստանտնուպոլիսում 1910, հ. Գաղթ, էջ 26:

դարենէր, Դրոնք հետզհետեւ դառնում են ավելի ու ավելի մարդաշատ։ Քնդարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեզուքեամբ, զորում է Ստեփանոս Տարոնեցի³։ Նոր քարգաւաճած քաղաքներից՝ մեր պատմագիրների հիշատակութեամբ՝ ալեքի են ընկնում՝ Անի, Կարս, Արծն, Դվին, սրանց մէջ՝ առանձնապէս Անին, որի մասին ավելի պատմագրական տեղեկութիւններ ունենք և ավելի ծանոթութիւններ շնորհիւ պնդումներին։ Անին մի շատ նշանավոր տիպարն է այդ շրջանի մեծ քաղաքների։ Նա եղել է ոչ միայն սերդ և մայրաքաղաք, այլև շտհատան, առևտրական, արդուսպարծական ու կուստուրական մեծ կենտրոն թե՛ հայկական և թե՛ նաև օտար իշխանութիւնների օրով 11—15-րդ դարերում։ Այլազգիների ձեռքն անցնելուց հետո այդ քաղաքի ներքին կյանքը քիչ է փոխվել։ 11—14-րդ դարերում Անին լի դադարել զարգանալ իբրև հայկական քաղաք։ Բայց միաժամանակ և նա, սկսւալ ունենալով Առաջավոր Արեւելքի մահմադական երկրների քաղաքային կյանքի ընդհանուր զարգացման հետ, առատութեամբ ընդունել է հարևան ժողովուրդների ստեղծագործութեան հարուստ արդուսպարծութիւնը⁵ և դարձել միջազգային մեծ քաղաք իր բազմազգ բնակչութեամբ։

Գտնվելով մեծ առևտրական ճանապարհի վրա՝ Անին Բագրատունիների օրով արդեն բարձրացել է իր շահաստանով։ Այդ ժամանակ են շինվել և նրա նշանավոր հզոր պարիսպները, ամրացված բազմաթիւ աշտարակներով։ Ու միայն Անիի, այլև Կարսի, Արծնի և ուրիշ քաղաքների վրայով էին անցնում տարանցիկ առևտրական մեծ ճանապարհի ճյուղերը, ուստի և նրանք ևս դարձել են վաճառաչահ կենտրոններ և՛ ներքին, և՛ արտաքին առևտրի, և՛ ապրանքների փոխանակութեան համար։ Արտաքին առևտրով լինում էր և՛ Արեւելքի, և՛ Արեւմուտքի հետ։ Մով և ցամաք երկնէր և առատաւայր կրել ի սմա զգորութիւն իւր, —ասում է Ա. Լաստիվերտցին իր հայրենի Արծն քաղաքի համար, որ հռչակաւ և անանաւոր էր ամենայն աշխարհացա՝ Սովային առևտուրն անում էին Տրապիզոնի վրայով։ Նույն հեղինակը (էջ 91) Կարսի համար զորում է. թե՛ թմանկասկածի կէին, հարստացեալք ընչեզուքեամբ ի ծով է և ի ցամաքէ ամբարնալա։ Բարգաւաճում էին և երկրի արտադրող ուժերը, ծաղկում էր արդուսպարծութիւնը։ Արտահանում էին նաև երկրի արդուսպարծա-

³ Սեանգիտոսի Տարոնեցւոյ Առաջկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 161։

⁴ И. Орбели, Развалины Ани. История Современное состояние. Раскопки. СПб, 1911. Նույնի հայերէն թարգմանութիւնը. «Անիւյ պարիսպները. Պատմութիւն. Իշխման վրեժ. Պնդումները. Հազարամեակներով և ժամաթափումներով, Վաղարշապատ, 1911։ Н. Я. Марр, Ани. Книжкина история города и раскопки на месте городища. М., 1934.

⁵ И. Орбели, Развалины Ани, էջ 4 և հետ. 19, 25 և այլն։

⁶ Պատմութիւն Արեւմտեան Վարդապետի Լաստիվերտցւոյ, Քիշին, 1912, էջ 76։

կան, ինչպես և իրկրագործական ապրանքներն ու քնական բեքեքերը, Գը-
րաւքը ևս կազմում էին մեծ եկամուտների կարեւոր աղբյուրները Գլուգա-
տնտնաւթիամբ պարտապում էին քաղաքների արվարձաններում, պարիսպ-
ներից դուրս, — ուր և ապրում էին ցովորաբար նաև արհեստավորները, —
այլև գլուգներում, մեծամեծների կալվածներում:

Քնականաբար առաջ էր գալիս դրամական տնտեսութիւնը. դրամը մի
նոր անտրված էր դարձնել. մարդիկ ամեն տեսակ շահի նսեխց էին ընկնում,
սեմարգի հոգւ արծաթախրութիւն քան զաստուածսիրութիւն, և մամոնայն՝
քան զթրիսատոս, զգում է Լաստիվիտցին (էջ 79), 10-րդ դարից արդեն
նյութական կարողութիւնը — ոսկին, իրկրի հարստութիւնները, կալված-
ներ և ուրիշ անշարժ կայքեր կենտրոնանում էին առանձին վաճառական
անհատներին ձեռին. առաջ էին գալիս կապիտալիստներ, որոնք կազմում
էին մի նոր դասակարգ. Իր դարի համար մի տիպիկ կապիտալիստ է եղել,
մի փայլուն ներկայացուցիչ իր դասի, Տիգրան Շոնեցի, 12-րդ դարի վեր-
ջում և 13-րդի սկզբներում, տեղ չափազանց մեծ հարստութիւն թն՝ զրա-
մով և թն՝ անշարժ գույքներով:

Այսպիսով ֆեոդալական շրջանի երկու խշտղ դասերի՝ ազնվական-
նութիւն և եկեղեցականութիւն կողքին տնտեսապէս, ապա և մտավորա-
պէս բարձրանում և դիրք էր ձեռք բերում նոր դասակարգը — հարուստ
քաղաքացիութիւնը, որ նույնիսկ մրցում էր ֆեոդալների հետ. Սոցիալ-
քաղաքական կառուցվածքի, հասարակակարգի փոխվելով փոխվում է և
հասարակական պիտիւնիկան, իրավունքի հասկացութիւնը, ապա և դա-
դափառախոսութիւնը կրոնի, մարալի-բարոյականութիւն, արվեստի ու
զրականութիւն պերտաբոյալ՝ նախորդ շրջանի գաղափարախոսութիւնը
հակադրի, շնորհեաւ իշխանութիւն և թիւովունքի աղբյուրըս ուղմիկ
ֆեոդալներից անցնում է թաղաղ առևտրի վրաս: Ստեղծվում է դեմոկ-
րատիկ հոսանք ընդքմ ֆեոդալական հասարակակարգի: Անիում, հա-
վանորեն և այլ քաղաքներում, «առաջ է գալիս քաղաքային ինքնավար
կշանք, քաղաքային ինքնավարութիւն, քաղաքային արվանքների գլխա-
վորութիւնմ և օրենսդրական իշխանութիւնմ քաղաքի սահմաններում»⁷
«Ավագների խորհուրդը վարում էր քաղաքի բոլոր գործերը: Դրա թագ-
ման մասին տակաւին չկան տեղեկութիւններ, համենայն դեպս՝ դա գո-
յութիւն է ունեցել Անիում Շեղադիդների, վրացի կուսակալների և Չա-
քալալանների օրովն: Եվ որ ղրխավորն է՝ Անու կշանքը կանանց սոցիա-
լապէս հավասարեցրել էր սղամարդկանց հետ. «Անեցի կանայք անար-
գիւ տեղին աղամարդկանց քաղաքացիական իրավունքները»⁸: Երանք էր

⁷ Դրա շուրջ մեծ հարստութիւն մասին գաղափար կարելի է կազմել նրա խիստ բող-
ոսթիվ ընծաներից, որ արել է իր շինած վանքին 1212 թ., և որ փորագրել է արվել ար-
ձանաբարձրան մեջ: Այս մասին տե՛ս Н. Марр, Ани, էջ 23 և հտե. »

⁸ Н. Марр, Ани, էջ 25:

⁹ И. Орбели, Развалины, էջ 36:

¹⁰ Н. Марр, Ани, էջ 41:

հերոսաբար պաշտպանել են իրենց քաղաքն ընդդեմ թշնամիների, ինչպես 1124 թ. Ալժայամն (Ալժանիյիկ) անուանվ քաղաքացուհին, որ «առնացի ստացնալ տիրոս», քաղաքի պարսպի վրա դիմադրել է պաշարողներին, «սու յուրի համարեալ զխոցուածս նեախցն զոր վիրաւորէին արտաքուստ»¹¹, Ալժանիյին իհարկեմ մենակ լի հոգի կանանցից:

Կուստանկված հարստութիւնը գործադրվում էր ամենից առաջ քաղաքային շինարարութիւնի միջոց. քաղաքները ոչ միայն պարսպապնդում ամրացվում էին արտաքին թշնամիներից պաշտպանվելու համար, այլև դարդարվում էին բազմաթիւ հոյակապ եկեղեցիներով ու պալատներով և անտառապատներով: Անտառապատները անպարհապ և բոն քաղաքի համար գրում է. «վաճառականք սորա փառաւորք»: Բնակավայրերը՝ եկեղեցւոյ շինողք և դարձաբերք: Բն միայն սղամարդիկ, այլև կանայք մասնակից էին լինում շինարարութիւնն դորին, նույնիսկ քաղաքի աշտարակներով և զննվանում է մարդկանց ճաշակն ու պահանջը, ձգտում էին ամեն ինչ, և՛ եկեղեցիները, և՛ աշխարհիկ շէնքերը, նույնիսկ պարսպներն ու աշտարակները, գեղեցկացնել որն է կերպ: Եկեղեցիները դարդարում էին քանդակներով, ֆրեսկոներով ու նկարներով: Զարդարանքներով պնդվում էին և իշխանական պալատները և այլ շինութիւնների ֆասադները¹²:

Մյուս կողմից քաղաքներում ստեղծվում են բարեկեցիկ կյանքի պայմաններ: Անիում, անշուշտ նաև մյուս վաճառաշահ քաղաքներում, շինվում են քարվանսարաններ, որոնք անհրաժեշտ էին դրսից եկած առևտրականներին օթնանելու համար, կառուցվում են քարե տառնյակ գեղեցիկ կամուրջներ Ախալքալանի վրա: Անց են կացվում, նույնիսկ 10-րդ դարից սկսած, շրմուղներ հեռավոր աղբյուրներից քաղաքին ջուր մատակարարելու համար: Անիի պեղումներով երևան են եկել նաև քարակված փողոցներ և նույնիսկ մայթերի հետքեր, աղքատ անակները հետ և մեծ տուն, որ անկեղծ է հայտնաբերւում՝ զանազան քանդակներով: Միջնաբերդի ապարանքը հոծ է հողի հարուստ դարդարանքներով, մի դահլիճում բնակողաների նկարներ՝ բուսական շրջանակների մէջ: Մի ուրիշ դահլիճում որմերին նկարված են հողի պատերազմական կամ որսորդական տեսարաններ. որմերը, բացի նկարներից, թանձր ռակիզոված են հողի. առաստաղն ունեցել է երկրաշարժական ձևերի քանդակներ: Զի պակասել և քաղանիքը, իր նախասնչակով, ավազանով, տաք և սառը ջրի խողովակներով և այլն¹³, Ինչպես երևում է, Անին ունեցել է բարեկեցիկ կյանքի համար անհրաժեշտ շատ բաղանիքներ. ըստ Տիգրան լոնեների արձանագրութիւնի՝ ի թիվս բազմաթիւ ընծաների՝ նա իր շինած վանքին նվիրել է նաև երկու քաղանիք: Այսպես բարեշնչ են հղել նաև

¹¹ «Սմառել Անիցւոյ, Լավագմանք ի դրոց պատմութեան», Վաղարշապատ, 1888, էջ 126 և հտեւ:

¹² Առ. Լառնիվուցի, Պատմութիւն, էջ 78 և հտեւ:

¹³ Մ. Օրբելու, Рубинация, էջ 20—21:

¹⁴ Նույն աղբյուր, էջ 81 և հտեւ:

մյուս վաճառաշահ մեծ քաղաքները: Եւ իբրեւ ական մի պատուական լուսադեղ պայծառութեամբ փայլէր քաղաքս մեր ի մէջ ամենայն քաղաքացւածննին գեղեցիկ, բոլորովին զարգարուն, աշուպեւ գորում Ա. Լաստիվերտցին Արծնի համարը¹⁵:

Փարթամ քաղաքացիներն իրենց արտոնին կյանքը, նիստն ու կացը և հանգիստները ևս հարմարեցնում էին իրենց հարստութեանը: Լաստեում էին դիպակ, մետաքսն պատմումսններ և, ինչպէս պեղումներին հայտաբերվել է, մետաքսի ամբողջ հազարսններ՝ ոսկեթիւ ասեղնացործութեամբ: Իրենի կանայք էին բանեցնում պեղումների ժամանակ գտնված անոթի գողը՝ մետաքսով և ոսկեթիւով նուրբ կարած (գուլաքաթիւով կտրած), մետաքսն ժապավեն գոտին, ասպարանքաններն ու մատանիները Ամեն ինչ ճոխ ու լպնճ էր Ա. Լաստիվերտցին¹⁶ գովելով իր հայրենի Արծն քաղաքը, նրա վաճառականներին՝ զրում է. «Բարեկացն արատուութեամբ լի էր, ամենայն ինչ ըստ մտի էր սորա. և նման իմն էր նորահարսը կնոջ, որ գեղուն վայելչութեամբ և զարդուցն պայծառութեամբ՝ ցանկալի գուլ ամենեցուն: Թիւ հետո նա, մարգարեն խոսքերով, ամաստաւում է կանանց ճարարտավանութունը, նրանց զատորիկան ընդ երկիր զթարչին [նրկայն քղանցքները գնանքաբոլ տունելը], զգինդան, և զմատանիսն, զսպարանքանսն, զգողէսն [թիւն ասպարանքան արմունկից վերն], և զմեհիւսնդան, [— մանյակ, ոսկն վիշուց, օղ], և զայլն ամենայն, նրանց զոսկի զարգերը, զոսկի կամարները [քամարները], զպատվական հանգիստները: Եւ ինչպէս քեզուցութեամբ են եղել և տեսային կահ-կարասիքը, գորգերը, թաղմոցները, վարագույրները: Բանեցնում էին արծաթե ընտիր անոթներ, հախճապակիս և ճենապակիս ամաններ՝ հարուստ բազմազան նկարներով, ճաշակավոր զարդարուն զանազան գույներով և ցայտուն ֆիգուրներով: Դրանք շինված են եղել Անիում, թթեհ հիմք չկա այդ արարկանների ծագումը բացատարան Անիից համարելով¹⁷, ՎՄուտուանական ճաշակը հետզհետ ավելի մեծ լափով թափանցել է Անիի քաղաքացիների բնակարանները և հրեան է գալիս անոթների ձեւերի ու զարդանկարների վրաս¹⁸: Այս անոթների մի մասն, անշուշտ, դրո-

¹⁵ Պա. Լաստիվերտցին, Պատմութիւն, էջ 79:

¹⁶ Անդ, էջ 72—83:

¹⁷ Н. Орбелад, Ревелуции, էջ 46 և հետո:

¹⁸ Н. Марр, Ашх, էջ 36, 43:

սպանելով պարսկականներից ներս, զարգարուն պալատներում, շրջապատված ճարտարվածատի և գեղարվեստի պանդունքներով, սիրում էին ուրախ-
զվարթ կյանք, ամեն վայելչություն՝ «Միայն հեշտութեան և փափկու-
թեան սպանենք», — գրում է Ա. Լաստիվներացին (էջ 167) և՛ Անիի, և՛ ուրիշ
քաղաքների համար։ Ուրիշ տեղ (էջ 56) նույն պատմագիրը Հայոց աշ-
խարհի համար գրում է. «Ուրախական երգոց և քանից միայն լինէին
հանդէսք»։

Մատթեոս Ուտհայեցին գրում է. «Զկնի մահուանն Աշոտայ [= Գա-
գիկ թագավորի որդի և Հովհաննէս թագավորի եղբայր Աշոտի, Գագիկ
Բ-ի հոր] թուամորթեան զօրքն Հայոց և ասոցին զարուեստ պատե-
րազմի, մտին ընդ լծով ծառայութեան ազդին Հոռոմոց, նստան ի դինար-
բուսն, սիրեցին զքարորուտ [= լայնահոր նվազարան մի] և զերգս գուսա-
նացա՞ն։ Ներսէս Շնորհալին 12-րդ դարի կեսերին Բեդիսիոյ ողբիս մեջ
գրում է, թե խնջույքներով էին զբաղվում, երգ ու երաժշտաւթյամբ ուրա-
խություն անում։ Մի դար հետո Սմբատ Ա պարագետը 11-րդ դարի հա-
մար ասում է, թե «թուլացան և աղարտեցին զպատերազմ, և սիրեցին
զգին և զգաւանս»¹²։

Այսպիսի զվարթ կյանքի, կերուխումի, ուրախ ժամանցի համար քը-
նականաբար զարգանում էին գուսանների ուլայախության և սիրո երգերը,
որ ամենահին դարերից ի վեր սիրված են եղել մեր ազնվականներից և
այժմ էլ զվարճացնում էին հարուստ քաղաքացիներին։ Այդ երգերի մասին,
որոնք մեր վերածննդյան նախակարապետներն են, մանրամասն կիսու-
վի առանձին իր տեղում։

Աշխարհիկ շքեղությունն ու պերճութունը մտնում էր նաև եպիսկո-
պոսների բնականաբաններն ու կաթողիկոսարանը, որ ոչնչով ետ չէր մնում
պալատներից։ Այնտեղ էլ արծաթե հարգի էր դարձել և անաբաւ քարե-
պաշտությունը պակասում էր։ Եթե վաճառականներն առուստուրի հետ
նաև վաշխառությամբ էին պարապում, հոգնորականության մեջ էլ զար-
գանում էր կաշառակերությունը. «բարձաւ և ի քահանայից երկիւղ և ընտ-
րութիւն սրբութեան. նեղին և մղին մերձենալ ի սեղանն... և զայն ի ձեռն
արծաթեա, գրում է Ա. Լաստիվներացին (էջ 80)։

Մեծ հարստություն էին դիպում եպիսկոպոսները։ Պետրոս Արշալու-
նի, մականվանված Գետազարծ, կաթողիկոսը (1019—1059 թթ.), որ խառ-
նըվել է և քաղաքական գործերի և քարի համբավ լի թողել, ունեցել է մեծ
հարստություն. «Ունէր կազմութիւն հայրենեաց՝ տունալ ի թագաւորացն

12 Մատթեոս Ուտհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 79։

20 «Սմբատայ Սպարապետի Պատմութիւն», Մտնվա, 1858, էջ 37, Կիւիկիայի հայ
ազնվականների մասին ևս Մարկո Պելլիի ազնվական (1271—1295 թ.) մեջ կարգում
ենք. «Հեն օրերեան այնտեղի ազնվականների քաչարի մտքով էին և կուսարում էին
զմեքի հերոսական գործեր. բոլոյ ներկայումս ողորմելի արտաճներ են և ոչ մի բանի
շնորհ չունին, քացի հարեմնալաց. արով նշանավոր են։ Աղբյուրներ Հայաստանի և Ան-
գղերովկայի պատմութեան, Ուղեգրութիւններ, հատոր Ա (1858—1882), Երևան, 1982, էջ 46։

Հայոց՝ հինգ հարիւր ցեղ անուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս և նախնկոպոս հինգ հարիւր փոռասար և զաւառաստեօտւս ի վերայ իօթն հարիւր թիմի. հանապազ երկոտասան նախնկոպոս և շորս վարդապետ և տանն հայրապետին և վաթսուն երէց ի կրօնաւորաց, և յաշխարհականաց՝ հինգ հարիւր, Եւ լէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց, նաև զարդարանք եկեղեցեացն և տանն հայրապետութեանն քաղտմ և անհամար և հրաշալի մեծութեամբ [= հարստութեամբ] լցեալս²¹։ Չնայելով որ նա մեծ կալվածատեր է եղել, անձամբ ունեցել է այնքան քաղմաթիվ հայրենական գաւղեր, որոնց հետ նաև Մուրմառի բերդովանի նման նշանավոր կալվածքը²², յի քաղվել ըստ ժամանակի ոգու նաև արծաթասեր լինելու և մեծ գանձեր ձեռք բերելու. Բթանդի յոյժ սիրօղ էր գանձուց Պետրոս, որ և քաղումք վասն այնքի ևսկերէին զնա²³։ Կաթողիկոսի իշխանութեան ներքո գտնվող 500 «զաւառաստեօտւս» նախնկոպոսներ յի մասն արծաթասիրութեան և հարստութեան կոտորակելու վերաբերմամբ՝ հետևելիս են եղել իրենց վեհին։ Երբ սելջուկյան թուրքներն առում են անպարհաւք Արծնը, բնակաւոր որ և քաղմաթիւր քաղաքն Հայոցն, կոտորում ու կողոպտում են։ Եւ զսակոյ և զարծաթիւ մեծ կողոպտում մասին²⁴, և շարունակում. Բթանց զայս քաղում անգամ լուծալ է մեր ի քաղմաց յաղագս քորեպիսկոպոսին՝ [= զաւառաստեօտւ] որ ասէին Գաթուկ, եթէ զգանձատուն նորա Արի-հիմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա. ութ հարիւր վեցկի [= երեք լուծ, վեց հզ լծած արօք] եղանց նկանէին ի տանն նորա։ Ահա իր կաթողիկոսին արժանի զաւառաստեօտւ նախնկոպոսը։ Անշուշտ լափաղանցութեամբ կա, բայց այս էլ ծագել է նրա հարստութեան մեծութեանը։

Ժամանակի քաղաքական անկման մասին, ըստ եկեղեցու հայացքի, պարզ զաղափար է առնիս հետևյալ ավանդութեանը. 1022 թ. խալիֆայում է արեղակը, միաժամանակ և երկրաշարժ է լինում։ Նույնը կրկնվում է և 1036 թ.։ Հովհաննէս Սմատ թագավորը և Պետրոս կաթողիկոսը մի քանի իշխանների, որոնց թվում և Գրիգոր Մագիստրոսին, ուղարկում են Անանի՝ իր սրբութեամբ հռչակված Հովհաննէս Կողոն վարդապետի մոտ՝ երտնից իմանալու, թե ինչի՞ նշան է այդ երեւոյթը։ Վարդապետը հայտնում է, թե դա նշան է, որ սատանան արձակվել է կապանքից, ապա նա հին մարգարեական եղանակով նկարագրում է իրական դրութիւնը՝ ասելով. «Եւ ահա յայսմ հետէ ոչ որ կարասցէ կալ հաստատուն ի հաստոս փրկատուի և ի պատուիրանսն Աստուծոյ՝ ո՛չ հայրապետ և ո՛չ վարդա-

21 Մ. Ռուճայեցի, Ժամանակագրութիւն, էջ 153 և հետև։

22 Վ. Կոստանյանց, Տեղ-Պետրոս Ա Գնատարժ, Վաղարշապատ, 1897, էջ 18։

23 Մե. Լեւոնիվեւցի, Պատմութիւն, էջ 86։

24 Մ. Ռուճայեցի, Ժամանակագրութիւն, էջ 108։

պետ, ո՛ր էնպիսկոպոս է ո՛ր քահանայ, ո՛ր արեղայն է ո՛ր կրօնաւոր, ո՛ր իշխան է ո՛ր ժողովուրդ, իշխանք յարենան ի գողն և յաւիղչտակոզ, դատաւորք ի կաշառս և յանխրաւ դատաստանս. կրօնաւորք թողուն զանապատս. և զմենատանս և յաշխարհի զբազմունս զեզերին և շրջին ընդ փողոցս և ի մէջ կանանց, ասեն դաղօթս և թողուն զկարգս կրօնաւորութեան իւրեանց, սիրեն զվարս աշխարհի և զհետ նրթան զովնաւից մարդկան, որոճալով որոճին զդիւալեան երգս [= սիրո ճոգնքը]... Այլ և իշխանք պիղծ և մեծախաւ յանդգնեալ և մոլորեալ... միշտ և հանապազ ի գինարքունս դեզերին վասն սիրոյ և ցանկութեան շար և պիղծ ախտին և աշխարհեայն և էպիսկոպոսունք և քահանայք և կրօնաւորք արծաթասէրք առաւել քան աստուածասէրքս: Նույնը կրկնում է նա երկրորդ անգամին, թեւ ահա յայսմհետէ թալում հերձուածք մտանին լինկեղեցին... Յաղազս արծաթոյն թողուն ի քաց զհաւատն... վասն զի մեզասանքք և ցանկացողք լինելոց են շար նախապարհին... Առաջնորդք և իշխանք լինելոց են կաշառասէրք և ստախօսք և սուտերդումսն և ի մեռս կաշառացն թիրոն զդատաստանս իրաւանցն աղքատին... իշխանք և զատաւորք պոռնկասէրք... և ասեցողք լինին սուրբ ամուսնութեան և փաւկին ընդ պոռնկութեամբ ախտին... մեծարեն զմատնիւն և զգողսն, յափշտակեն անխրաւարար զաշխատողաց զինչն Յաղազս արծաթսիրութեան [առաւնորդաց] առան ձեռնադրութիւն թալում անարժանից և զամենայն պղծեալսն ածեն ի կարգ քահանայութեան... և զանարատն զարձուցանեն և քահանայութենէ առ ի լունելոյ արծաթ... թալումք ի քահանայից և ի կրօնաւորաց լինելոց են ցանկասէրք, ախտից փափազողք, որոճալով որոճեն զերգս դիւական... յզփանան առաւնորդք աշխարհի արծաթսիրութեամբ...»²⁶, Հովհաննէս Կողեոն վարդապետի խոսքերով պատկերացված է ոչ միայն 11-րդ, այլև 12-րդ դարի դրութիւնը:

3. ԹՈՐՈՂՈՐԱԿԱՆԳՈՑ ԱՊԼԱՆՈՂ:— Աշխարհիկ կյանքի ու ձգտումներին այնպիսի վիճակի միջոցին քնակաճարար ամենից առաջ սկսում է զարգանալ վերածնութեան էական կողմը— եկեղեցուց անկախ, ազատ մտածողութիւնը: Զորանում է պայքարը նոր զաւաթարախոսութեան համար՝ ընդդէմ նախորդ շրջանի զաւաթարախոսութեան, որի պաշտպան էին իշխողները— եկեղեցին և ազնվականութիւնը: Այդ հանգան է զաւրս, ինչպես սովորաբար՝ աղանդավորութեամբ, որի միջոցով Հայաստանում աւելին վաղ քան Նվերոպայում մեւսկորովն է ընդդիմադիր, հետող ոգին: Հայաստանը հղել է մի ակութ աղանդավորական անընդհատ շարժման համար՝ մերթ զաղտնի, մերթ հայտնի, նույնիսկ ապստամբութեան վերածվելով, Հայոց գրականութեան սկզբում հենց հանդիպում ենք սքաւրբարիանոս (խնկապետ սքաւրբարիանոս) աղանդին Հայաստանի արեւմտյան կողմերում: Ապա մեր աշխարհում գործել են նաև Մարկիոնի աղանդին, մանիքեութեան, մոլոնեութեան (մեսայան աղանդ), Ժւալոց աղան-

²⁶ Մ. Ուլեյակցի, Ժամանակագրութիւն, Հլ 52—55, 66—74:

դինք և ուրիշների հետեռդները՝ Այստեղ լպիտի, հարկավ, զանազան անուններով երևացող ազանդների մասին մանրամասն խոսելու Դրանցից առանձնապես, — քայքայ համառոտակի, որքան որ մեր խնդրին հարկավոր է, — հիշելու է երկուսը — պալլիկյան և թոնդրակեցոց ազանդները, որոնք երկուսն էլ հայկական հողի վրա են ծագել:

Պալլիկյանները տարածված են հղի Հայաստանում 8-րդ դարի ընկրկներից. նրանց զեմ կոչվի են Հովհան Օձնեցու ժամանակ և՛ Նաեռնով, և՛ եկեղեցական կանոններով: Այդ աղանդը 9-րդ դարում բացարձակ ծաւալւելում է գլխավորապես Փոքր Հայաստանում: Զնայելով կրած հալածանքներին՝ աղանդավորներն այնքան զորանում են, որ նույն դարի կեսերին մի մեծ ռեպրեսիոն շարժում են առաջ բերում: Նրանք զին ի ձեռքն ապստամբում են թիզանդական կառավարութիւն զեմ, պահանջելով կրոնական և քաղաքական ազատութիւն: Նրանց ումն այնքան մեծ էր, որ կայսրութեանը զմադրում են 25 տարի շարունակ, մինչև որ 873թ. հաղթւում են կայսերական զորքերից և կոտորւում: Նրանց կենտրոնը, Տհիքրիկի քաղաքն ալիւրւում է, և նրանց մնացորդները ցրւում են: Հետագայում նրանք փոխադրւում են Թրակիա, Ինչպես սովորաբար ընդունում են, այս աղանդի ազդեցութիւնը մեծ է հղի ոչ միայն սլավոնական, այլև ընդհանրապես եվրոպական աղանդների կազմութեան վրա: Այս աղանդն իր քարոզած սկզբունքներով մերթ նույնացրել են միջնադարի հետ, մերթ մտածողներ են մանրեցնութեան, կամ Մարկիոնի աղանդին²⁷: Այդ նրանցի է առաջացել, որ երբեմն զանազան ազանդավորներ, քննադրում է Հովհան Օձնեցին, հարում են իրար՝ եկեղեցու զեմ մի ընդհանուր կոթով մզելու համար:

Պալլիկյանների պարտիւնուց հետո աղանդավորութիւնը լի մեռնում Հայաստանում: Շատ շանցած՝ դարձաւ հայկական հողի վրա, հայկյանքից ծնունդ է առնում մի նորը, թոնդրակեցոց աղանդը, որ համարում են պալլիկյանների հաջորդը: Ըստ Ստեփանոս Տարոնեցու՝ Հովհաննես Դրասխանակեյտցի կաթողիկոսի (897—928 թթ.) որով, այն խառն ժամանակներում, հանգես է եկել, իբրև այդ աղանդի հիմնադիր, Սմբատ անուկով մեկը՝ «հազարակ ամենայն քրիստոնէական կարգաց»: Այս նոր աղանդը շատ նմանութիւններ ունի պալլիկյան աղանդի հետ. նրա շուրջը խմբված պիտի լինեն պալլիկյանների մնացորդները Հայաստանում, և հիմիկ նույն հին աղանդն է նոր անունով երևան եկած: Աղանդի կենտրոնն հղի է Ապահունքի գավառում Թոնդրակ գյուղը, ուր նստում էր աղանդապետը, որից և աղանդի անունը: Բայց նրա հյուրերը՝ նայելով սեղծիքին՝ կոչվել են նաև կաշեցի, թուլալիցի:

²⁵ Տե՛ս սույն աշխատութեան Ա հատոր, Տոթնորոգ հակնված (եղեկեթ, Գ, Հինգերորդ հակնված):

²⁷ Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien, vom Karapet Ter-Märttschian, Leipzig, 1893. Այս-տեղ էջ 98—91, Die Thondrakier.

Թոնդրակնիքի կամ Թոնդրակյան աղանդավորները տարածվում են ավելի Մեծ Հայաստանի հյուսիս-արևմտյան կողմերում և 11-րդ դարի առաջին տասնամյակում արդեն բացարձակ կնիքով բռնի գործողություններին են դիմում։ Այդ ժամանակներում նրանց կողմն է անցնում մինչև անգամ Հարթի եպիսկոպոսը և եկեղեցուն հակառակ կարողադրություններ անում։ Սարգիս կաթողիկոսը (992—1013 թթ.) ստիպված է լինում միջոցներ ձեռք առնել այդ եպիսկոպոսի դեմ և պատժել նրան։ Աղանդավորներին թիվը, սակայն, շարունակում է աճել, Մանանադի գավառում նրանց հարում են արեղաններ, ինչպես և գյուղատեր ազնվական կանայք և տղամարդիկ։ Նրանք քանդում են իրենց գյուղերի եկեղեցիները, խորտակում են անդաստաններում կանգնած խաչքարերը։ Բայց երբ այդ աղանդավորները 1011 թ. սեյրում են Պարխար լեռների հյուղերից մեկի վրա կանգնած մի հայտնի խաչքար, ապա աղմուկ է բարձրանում, գավառի եպիսկոպոսն այրում, ավերում է նրանց գյուղերը։ Բայն հասնում է դասավորին, որ, հասկանալի է, պահում է ոչ թե աղանդավորներին, այլ եկեղեցու կողմը²⁸։ Թոնդրակնիքիները, սակայն, շարունակ աճում ու ծավալվում են և սպառնալիք են դառնում։ Հիշված դեպքից մի 40 տարի հետո, 1051 կամ 1052 թ., նրանց դեմ ենում է Գրիգոր Մազիստոս Պաշտպանի իշխանը, որ ընդանդակյան կայսրուհիյան կուսակալն էր Միջագետքի միայն, և որի իշխանությունն տակ էին նաև Հայաստանի այն կողմերը, ուր գտնվում էին այդ աղանդավորները։ Նա զենքի ուժով ճնշումներ է դիմում, ավերում է Թոնդրակ գյուղը և աղանդավորներին վտարում է իր իշխանությունից։ Սահմաններից, Բայց աղանդը լի ունիանում, այլ գաղտնի շարունակում է հարատևել և հասնում է մինչև 18-րդ դարը²⁹։ Այս աղանդավորները ևս, ինչպես ընդունում են, անցել են Քրակիա և ազդել եմբոպական աղանդների կազմության վրա։

Նրանց ազդեցությունը երևում է ի միջի այլոց նաև ալքիմյան կամ ալքիմացոց աղանդի վրա, որ 11—13-րդ դարերում տարածվում էր Հարավային Ֆրանսիայում, Ուստի և այդ Թոնդրակնիքից աղանդը, ինչպես և պավլիկներությունը, կարնորություն ունի ընդհանուր միջազգային տեսակետով ևս։

Ի՞նչ է եղել Թոնդրակնիքից ուսմունքը։ Եստ քան, հարկավ, դեռ կենդանի դարձացման մեջ է եղել բերանացի քարոզով և ավանդություններ։ Նրանցից ոչ մի գրվածք չի մնացել։ Մեր ձեռքը հասել են միայն հակառակորդների գրածները³⁰, որոնց մեջ ամեն լուստանք թափում են նրանց

²⁸ Տճ՝ Ար. Լառնիկեցի, Պատմություն, գլուխներ ԻԲ և ԻԳ, էջ 142—152։

²⁹ «Փոքիս, Գ. Գրիգոր» 1880, հակամեքենի համար, էջ 91—190՝ «Թոնդրակնիքիներ մեր հերոսներ, Ա. Երեցյան»։

³⁰ Դրանք են՝ ա) Գր. Նառնիկեցի, Քուլթ, որ աղված է Բարեղ Սոթքոյանի «Ուսումնասիրություն Մանթրե-Պաշտպանության քարոզչությանը աղանդին և Գր. Նառնիկեցու Քուլթը», Վենետիկ, 1893, աշխատության վերջում, էջ 106—117, Սույնը աղագրված է նաև Վենետիկի «Բազմավեպ» մեջ 1892 թ., էջ 56—64, 118—119։ բ) Գր. Մազիստոսի Կել հ-

զլինել: Դայն և այնպես քաղաքական ծանոթությունն ենք ստանում այդ ազանգազմորենների ընդդիմադիր զաղափարախոսությունից վարդապետությունից մասին: Նրանք կատարելապես չէին մերժում քրիստոնեությունը, այլ ժխտում էին եկեղեցու բոլոր կարգերը: Ձէին ընդունում ժրիստոսին իբրև առաված. աղանդապետն ինքն իրեն քրիստոս էր անվանում: Մերժում էին Ս. Գրքը, ներբողությունը, դոյութունը, Հանգեծիայ կյանքը, մահունեների հարությունը, հողու անմահությունը և այլն: Մերժում էին եկեղեցու նմիքապետությունը (Հիերարխիա), քահանայական կարգը, ձեռնադրությունը, ըստ նրանց աղանդապետ Սմբատի,— գրում է Գրիգոր Մադիստըրոսը (էջ 154).— Եւ այլ ինչ է այդ, քայց վասն խաղիւյ ժողովրդրդանն:

Մերժում էին նաև եկեղեցու խորհուրդները՝ մկրտություն, հաղորդություն, խոստովանություն, ապաշխարություն և այլն: Խափառում էին ամեն պատմամունք, եկեղեցական արարողությունները և արվորությունները— կրթական, օրը, ձերարդությունը ծաղրում էին և ոչինչ էին համարում քահանայի պգնութը, պատարագը, զահաքությունները և այլն: Ձէին հարգում և նույնիսկ ունեցնում էին եկեղեցիները, խաչերը, խաչքարերը, որոնցով զարդարված էին հանդերը, լեռները, արհամարհում էին սըրբերին, տիրամորը և այլն: Անգոսնում էին, արհամարհում, պախարակում էին ամուսնությունից կարգը: Գրիգոր նարեկացին նրանց ուրիշ ժրիստոսներին հետ հիշում է և թղպակին ամուսնութեան անգոսնութիւն... զպսակն անգոսնն, և զոր սիրով մերձնան առ յիրարս, կատարեսցա սէր համարին և յԱստուծոյ և հանոյ ժրիստոսի թէ Աստուած սեր է, և զսիրով միաւորին կամի և ոչ զպսակս (էջ 110 և հտն.): Ան և կնոջ այսպիսի մերձավորությունը ժամանակակիցները քնակակաբար համարել են, ինչպես գրում է Գր. Նարեկացին, ժժղնէական անխորի պղծութիւն: Եւ այս ինչն անօրէնութիւնք լարագործացն այնոցիկ,— գրում է Գր. Մադիստըրոսը,— ոչ պահք նոցա... և ոչ խտրութիւնք արանց և կանանց և ոչ ընտանեաց, թէպէտ և ոչ յայտնապէս համարականին և ոչ պատուեն և ոչ զմի ինչ ոչ յաստուծայնոց ոչ յեղելոց. այլ զամենայնն ծաղր առնեն՝ զհին և զնոր օրէնս: Այս հեղինակը նրանց կենտրոնն անվանում է Մենավանք: Եւ քնակեալք էին ի Մենավանս այն արք Հանգեծիայ կրեւաւորաց և կանանց բազմութիւն բոգիցք (էջ 152): Արիստական կատարվորացին նա այս աղանդավորությունն անվանում է օմոդնայ կրօնք, ասելով թէ պարունկական մոլեղին արտաք, քօրէն է նոցին փարախինք, և թն պրունկությունն անում քանխարտապէս, ոչ ածեալ զմտաւ զարեան մերձաւորութիւնս: Եւ վերջն այս պատմագիրն ավելացնում է. Եւ այն զնոցա մժղնէ զգործն անպատշաճ համարեացք ընդ գրով արկանել, քանի կարի աղտնղի էս:

ԳԸ թղթերը. ահա Գր. Մադիստոսի Թղթերը, Կ. Կոստանդնուքի Հրատ., Ազնոսեանգրադու, 1920, էջ 148—169: Գ) Ա. Լատիվեցոյի, Պատմութիւն, գրեւում հիշած պրիստից:

Այդ աղանդավորների համար մեղքը նույնպես գոյություն չունի։ Ուստի մեղքի պատիժ և ապաշխարություն էլ չկար։

Հնաավորական կյանքին և եկեղեցուն հակառակ մի վարդապետություն էր թոնդրակեցող ռուսներ, ժայռահեղութիւն հասած մի բողոք վանական ու ճշնավորական կյանքին, եկեղեցական իշխանութիւն, եկեղեցու կարգերի ու դադափարների դեմ, որոնք, ինչպես տեսել ենք, շափաղանցութիւն էին հասած 10-րդ դարում և 11-րդի առաջին տասնամյակներում։ Պա հակաեկեղեցական մի մեծ շարժում էր։ Թե ինչից էր ծագում և զարգանում դա, մեզ այդ շին բացատրում ժամանակակից գրողները։ Բայց պարզ է այդ։ Պա եղել է նախ՝ քաղաքացութիւն փարթամ զարգացման և աշխարհիկ կյանքին հակվելու հետևանքը, Ապա՝ եկեղեցականութիւն վատ բարքերը, հոգեւորականներից շատերի գեղձումները, կեղծավորությունը, եկեղեցական իշխանութիւն ճնշումները, բուռն վերաբերմունքը դեպի աղատ մտածողութիւնը, այս ամենը դրժել էին դրանցից դժգոհներին՝ հակառակ դիրք բռնելու։ Եվ վերջապես՝ շատ տարրերի, որոնք չէին կարող հրաժարվել իրենց ռեական խելքից և հաշտվել եկեղեցու քարոզներին հետ, սկսում էին կռիվ եկեղեցու դեմ, ձգտելով եկեղեցին հիմնովին վերանորոգութիւն—սեփորմացիայի ենթարկելու, շատ ավելի վաղ քան լուծների և ուրիշների գործողութիւնը։ Պատահական չէ, որ Արիստակես Լաստիվերտցին շատ վաղում է թոնդրակեցող աղանդին հարած նպիսկապոսի ու քահանաների և իշխանի նախկին մեծ բարեպաշտութիւնը³¹։ Ինչքան էլ Պատմագիրը բացատրի, թե նրանք ուրիշներին խաբելու համար կեղծավորութիւնամբ են բարեպաշտ եղել, այդ ընդունելի չէ։ Իրողութիւնն այն է, որ նրանք սկզբում, իրոք, շերմեռանդ հավատացող են եղել և հետո միայն անցել են թոնդրակեցող կողմը։ Խնչ էր ստիպում, որինակ, որ այն նշանավոր Վրվիւ իշխանը հրաժարվել եկեղեցուց, նա, որ իր կալվածում նույնիսկ կրոնաստան էր շինել, ճգնաւոր եղբւրս ժողովելու ի նմա, և ընդարձակ սահմանք՝ անկարօտ պահէր զկհանա նոցան։ Եր ամեն տարի մեծ պասին այդ կրոնավորների մոտ էր գնում քե՛հ հանդիսակից լինէր նոցա՝ մինչև յաւուրս մեծի պասեքին. և բազում այլ գործս բարեաց ցուցանէր ի սոցա սպասաւորութիւն. նաև յաղթատասնութիւնս և ի քահանայից հնազանդութիւնս՝ քան զբաղումս յառաջագնաց ցուցանիր։— Ի՞նչ էր ստիպում այդ հայտնի իշխանին,— որից անկասածում էր դատավորը,— ինչպես և Հարթի ազգեցիկ նպիսկապոսին, ոչ միայն հրաժարվել եկեղեցուց, այլև բոլորովին հակառակ գնալ։ Նրանք անպայման փորձով անսել էին պոլութիւն ունեցող կեղծիքները, զգվել էին՝ դրանցից, և այդ թիւադրել էր նրանց մտնելու հակառակ բանակի մեջ և՛ ձգտելու եկեղեցու վերանորոգութիւն։ Բայց նրանց զազափարը չէր կարող հայերի մեջ իրականանալ այն դարում, քանի որ եկեղեցին ու նրա պաշտպան իշխանութիւնը ու բիզանդական կայսրութիւնը դեռ շատ զո-

31 Ար. Լաստիվերտցի. Պատմութիւն, էջ 143—146, 152—153։

րեղ էին, իսկ այդ հետո ու ժխտող ազանցը մի ունդուցին ընդդիմադրութիւն էր իշխող դասակարգի դէմ, մի դասակարգային պայքար, որ անխնայ պիտի բնաշինջ անել աշխատեին իշխողները:

4. **Գաղափարախոսության զարգացման դանդաղ ըմբացքը:**— Թոնդրակեցիներին ընդդիմացիոր վարդապետութիւնն զրական կոչմը, ինչպե՞ս ասվեց վերնում, մեզ չեն հաղորդել նրանց հակառակորդ հեղինակները, քայց հասկանալի է այդ: Մէմմանական հերետիկոսական գաղափարն այն է, որ երկրին է առաջնութիւն տրվում, քան երկնքին: Այդ նշանակում է, որ բնութիւնը, իրական կյանքին առաջնութիւն պիտի տրվեր. հայտնութիւն կրոնի փոխանակ պիտի իշխեր ռաքիտեւիզմը: Հոգին եւ պիտի մզվեր մարմնի առաջ, իրավապետի մարմինն ու բնութիւնը ստանալին իրենց իրավունքը, և գրականութիւնն աշխարհականանալով՝ կապվեր գլխավորապէս իրական կյանքի, երկրի և մարմնի հետ: Վերածնութիւնն այս գաղափարը, սակայն, չէր կարող իր ամբողջութեամբ արագ անդրադառնալ գրականութեան մեջ 11-րդ դարի առաջին կեսին, երբ դեռ շատ զորեղ էր կրոնական ոգին, և ժանրաձեռն ճնշող էր եկեղեցուն իշխանութիւնը, և գրականութիւնը դեռ գտնվում էր գլխավորապէս հոգեւորականների ձեռքին: Գրաւոր դպրութիւնն մեջ զարգացումը, սկսվելով եկեղեցու տնտեսականութիւնի անվնաս դաղափարներից, կատարվում էր շատ դանդաղ տնմպերով, և ոչ միակերպ հավասար ընթացքով, և ոչ էլ անընդհատ, քանի որ Հայոց երկիրը հենց այդ դարերում ենթարկվում էր պարբերական թալաններին: Բայց այնուամենայնիւ, սկսված առաջադիմութիւնն առաջին կամ այնպէս շարունակվում է, մինչև որ վերջիվերջ գրականութիւնն մեջ էլ երկրավորին արվում է առաջնութիւն: Եւ մեր գրականութիւնն այս շրջանը հետաքրքիր է նոր գաղափարախոսութիւնն աստիճանաբար զարգացման ընթացքով: Խնդիրն այստեղ գրավոր դպրութիւնն մտնել է և ո՛չ գուսանական երգերի և ժողովրդական քանահոգեւորական, որոնք սկզբից ի վեր աշխարհիկ բնավորութիւն են ունեցել:

ՆՈՐ ՄՏԱՎՈՐ ՀՈՍԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԵՂԱՎՈՐՆԻ

1. Լուսավորության և ուսման ծաղկումը:— Դրականության աշխարհականացումը պիտի լիներ ամենից առաջ ժողովրդական և արտադրականների ձեռքով: Եվ իսկապես, վաղ վերածնունդյան շրջանում եզնվականների մտավոր վիճակը բարձրանում էր, նրանք ևս սկսում էին ուսում առնել և դիտություններ ու գրականություններ պարսկալի, միաժամանակ և հռվանավորել ուսումնականներին: 10-րդ դարից ի վեր հանգեւ ենթող Պահլավունի տոհմի մարդիկը հայտնի են դարձել ոչ միայն շինարարությամբ ու ռազմական գործերով, այլև իրենց ուսումնասիրությամբ. ներանք ջանացել են տառաջանել լատինական¹: Լավ ուսում են սովել և մանուկ Գրիգոր Պահլավունուն: Ուսումնասիր են եղել և Բագրատունիները. իմաստուն կամ իմաստասեր է հիշվում Հովհաննես Սմբատ Թագավորը: Նրա մասնակի իր գիտությամբ հայտնի է եղել Անիի Սարգիս վարդապետը, Գրիգոր Մագիստրոսի բարեկամներից մեկը, որին այդ Պահլավունի իշխանը իր մի նամակի մեջ² դիմում է գրելով՝ «հզոր հոգեւոր և աստուածային տեղեկ»... Միշտ կարոտեալ կամ բանի ճում և գրի, քանզի հզոր եւ ի պուհտիկոսականն մատնադրութեան: Եւ սիրելի է ինձ,— արձկացնում է նա, — ոչ այլ ինչ, եթէ այնպիսի լսել ինչ կամ ասել³:

1 Գ. Մագիստրոս, Թղթեր, ԺԱ, էջ 42 և հետև.

2 Անդ, ԺԲ, էջ 57:

3 «Տեղեկոս» նշանակում է ակադեմիկոսություն. այդ բառը Բիզանդիայում գործածվում էր իբրև տիտղոս ոգևորի իմաստասիրաց կամ հանդուրաց նշանակությամբ: Հետաքրքիր է այս դիտական վարդապետի հիշատակարանը, որ նա մուսուլման էր և իր ժամանակում էր հայ իրականությանը [1049-1051-1061], վերադառնալով մարզիվանէ արքայն Հայոց մեծիմասուն Յովհաննէս Գագի եւ Սարգիս վարդապետ զորքա զայս յարքունական տուն զանաւն տեղեկ: ի յանկան միում, անայցիւր Թափառեալ Թաւուր յարկն յատակին և զոթի լայր լոկէայն: Իսկ իմ հայեցեալ իմամբ ի գրեւոցին, և ըստ սովորական մեր — յորմականս զայցուն բացեալ՝ ք բանն բերկրէր. [արեւրդէր] և եւ զատուցեալ լընկե-

Անխի արքունիքում եղել է գրադարան. նույնը կար և կաթողիկոսարանում, իբրև ուսումնասիր և գիտուն հիշվում է նաև Գագիկ Բ-ն, որի համար Մատթեոս Ուտհայեցին գրում է. «Այլ հօր էր յիմաստասիրական ընդան և անյաղթի պատասխաններն»⁴։ Այսպես նաև և Վանանդի Արաքյան Գագիկ թագավորը։ Այս վերջինիս մի նամակ է գրել Գրիգոր Մագիրատրոսը՝ հանձնարարելով նրան տնչեռիս Գրիգոր Հնձաքի (Հինձք վանք և գյուղ Կարինի յոտ) կրտսավորին։ «Գրիգոր անուանեալ տնչեռիս,— գրում է նա,— իմաստքի ստուգել արքայութիւն քո, դի այլ հմուտ է աստուածողէն դասանութեան մերոյ յայտի, նաև հնում և սրտաբին գրոց յոյժ անդնալ։ Եւ ըզմայ տնչաքեալ զփափագանս իւր լնուլ պատարուն ընթերցմամբ, զի այնու ոչ երբէք շատեալ, եւ կամիմ զի և զա արքունիս քոյոյ քարգնոսական [— արքայական] անպարանի առկայաքեալ արտաքէ քեզ նմարան, զի մի՞ ընտիւն Ասքանաղեան և Արամեան դպրութիւնս՝ ի բազմաք սատարեալ՝ ի մոռացումն անկցի... Աի տնանեմք զքեզ ի հոմերական տաղսն վերտառեալ լսփարեական և ոտանաւորս հաղենորգական կարկատեալ, զի և դա [= Գրիգոր Հնձաքի] յայնոսիկ յարդարեալք (Թուղթ Թ, էջ 97)։ Կնչանակն՝ այլ Գագիկ թագավորը եղել է իմաստասեր, միաժամանակ և ոտանավորներ է հորինելիս եղել։ Նա հովանավորել է զփանկաններին և ռեհեղել է ռեմարան, այսինքն փրկսոփայական դպրոց, ուր ակորներում էին կրոնականի հետ և արտաքին գիտութիւններ։ Այդպիսի ուսումն արդեն վերածնութիւն ռզու առաջին պահանջն էր, որ պայծառ արտահայտութիւն է գտել հանձնի Գրիգոր Մագիրատրոսի։

1. Կենսագրությունը։— Գրիգոր Նարեկացին իր հանձնարով ունեւր ընտրւան զգացումը, բայց իր երկով նա ուսմիթոս լի դարձել անմիջական հայերդներ համար։ Գուցե և եղել են նրան հետեւորդներ, ժամանակակից կամ քիչ ուշ հանդես եկող բանաստեղծներ, բայց այդպիսիների գրվածքներն երևան չեն եկել, Վերածնութիւն առաջին քաղաքիկոսութեւ, միայն ոչ մեր հին մեծ բանաստեղծի բնագավառում, դա Պահլավունի Գրիգոր Մագիրատրոսն է, Գրիգոր Նարեկացու շատ կրտսեր ժամանակակիցը, որից մնում են բազմաթիւ թղթիւր և մի քանի շափաթոս երկեր⁵։ Նա մի հնարքերի դեմք է, մի հայտնի իշխան, որ շատ հմուտ է եկեղեցական գրականութիւնը, սիրող և պաշտպան է հանդիսացել Հայոց եկեղեցու, կրտսերն է, բայց իր ժամանակի համեմատ՝ ավատամիտ ու լուսամիտ մի բազմազան անձ։ Նրա մեջ մարմնացել է իր ժամանակի վերածնութիւն մտքի մի կողմը— լրավականեալ միայն կրոնականում և եկեղեցական դպրոցով, հայերի մեջ վերանորոգել և զարգացնել հին հունա-

բայց կար կարուտ և եւրիս առ ինչն կարկատեալ։ Տար արդա արեալ իմ ընդ իս տարալ՝ հանալ ի բանդէն (Գուր. Արքունիքիւն, Մատենադարան հայկական թուրքամեթանք նախնայ (գոր Գ—ԺԳ), Վեհաթիկ, 1888, էջ 485)։

4 Մ. Ուտհայեց, Ժամանակագրութիւն, էջ 161։

5 Գր. Մագիրատրոս, Թղթեր, քննգրքի տաղարանով և ժանթութիւններով առաջին տեղում է լույս ընծայեց Ս. Մատենայեց, Աղեքսանդրապոլ, 1810։

կան գիտութիւնը, ուսումնասիրել մաթեմատիկա, երկրաչափութիւն, բժշկութիւն, ծանոթանալ հին հունական դասականութեանը և ընդհանրապես բազմակողմանի գիտանքներ ձեռք բերել:

Այս նշանավոր անձը որդին էր Վասակ Պաշլավունու, ծնված մոտ 990 թ.: Նա մեծացել է Անի քաղաքում, Պաշլավունիների պալատում, վայելելով նաև խնամքն իր հորեղբայր Վահրամ Պաշլավունու, որ Անիի թագավորութեան վերջին շրջանում մեծ դեր է կատարել իբրև սպարապետ և ութսունամյա հասակում՝ 1047 թ. մարտի մեջ ընկել է քաղաքաւր նրա մահը ողբում է Գրիգոր Մագիստրոսը իր մի Թղթի մեջ (ԺԱ, էջ 36 և հտն.): Հիշելով, թե ինչպես նա իրեն սիրել է, Մեր այս հեղինակն ուսումնը տալ է Անիում, հմտացել է Ս. Գրքին և եկեղեցական հայերի գրքավածքներին: Բայց որ կարևորն է ժամանակի ողու տեսակետով՝ նա պատանեկան հասակից արդեն պարտաւել է նաև արտաքին գիտութիւններով, ուսումնասիրելով փիլիսոփայութիւն և այլն: Միաժամանակ նա վարժվել է զինվորական արհեստին, որ շատ անհրաժեշտ էր այն դարում:

Թուրքական հրոսակներն արդեն մտել էին Հայաստան: 1021 թ. Գեղուձ կռիված մի ցեղ Ատրպատականի կողմից հարձակվում է կենտրոնական Հայաստանի վրա, հասնում Գլին և ասպատակ սպիռելով ժողովուրդը: Բնում Բշիի ամրոցին, որ Գրիգորի հայրական կալվածն էր: Վասակը Բըշու պահպանութիւնը թողնելով իր որդուն՝ ինքն իր մարտիկներով ելնում է ասպատակալորների դէմ, շարդում, հալածում է նրանց: Հաղթութիւնից հետո նա Սերկնելու (Արայի) լեռան ստորոտում հողնած քնում է քարերի ստվերում. քնած տեղը մեկն ուպանում է նրան⁶, Հոր մահից հետո հայրական ընդարձակ կալվածները, որ նիգ զաւթառից հասնում էին մինչև Գեղամա լիճ և Ագատ գետի հովիտները և այլուր, անքնում են Գրիգորին: Նա էլ, ինչպես վարվել էր իր հայրը, առանձին ուշադրութիւն է դարձնում վանքերի շինարարութեանը Բշիում, Կեչառքում (Մաղկաձորում) և ուրիշ տեղերում:

Գրիգոր Մագիստրոսը մյուս Պաշլավունիների հետ պաշտպան է կանգնում Անիի թագավորութեան և Գագիկ Բ-ի գահակալութեան: Նա իր գործերով ազնւում է Գագիկին հակառակ գնելու թաքսերի դէմ և բարգելու նրանց 1042—1043 թթ., բայց շուտով զժողովութիւն է ընկնում այդ երկուսի միջև, և նա հալածվում է թագավորից, ինչպես ինքը գրում է, կրելով քանտ, կապանք ու զրկանքներ և մինչև անգամ մահվան սպառնալիքներ (Թուղթ ԿԱ, էջ 139 և հտն.): Հետո թագավորը զղջալով կամենում է հաշտվել նրա հետ, բայց հավանորեն զուգու լի գալիս հաշտութեանը և Գրիգորը հեռանում է Տարոն:

Հայասնի է, որ Հովհաննես Սմբատ թագավորը Անին իր կալվածներով կտակում է Երզնանոց կայսրին: Նրը Գագիկ Բ-ը գնում է Կոստանդնուպոլիս այդ կտակի խնդիրը կարգավորելու, Գրիգորն ևս 1045 թ.

⁶ Մ. Յամայեցի, Ժամանակագրութիւն, էջ 11 և հտն.:

զնոււմ է այնտեղ, հուսարով, թէն գուցէ իր աչքեւթիւթիւմբ օգնէ Գաղիկին, բայց նա ոչինչ անել չի կարողանում: Եւրոն նտն, ի՞նչ ոչ են թողլոց զԳաղիկ ի տեղի իւր,— գրում է ժամանակակից Արիստակէս Լաստիւփերտցին,— յառաջ կաքանալ տայ գրտնալին Բշնոյ ցթագաւորն, և զսամենայն զիւր հայրենի ժառանգութիւն, և մեծարեալ ի նմանէ՝ առնու զպատիւ մայրաքաղաքիս, և զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց դեօզս և քաղաքս, գրով և ոսկի մատանեալ յազգէ յազգ մինչև յաւի-

նքը Գրիգոր Մագիստրոսը Պետրոս կաթողիկոսին ուղղած մի Թղթի մեջ (Գ, էջ 18) իր այդ արարքն անվանում է «անտեղի մտածութիւն», այսպէս գրելով. «Արդ ե՛կ դու, ո՛վ դերակատարդ իմաստից, տե՛ս զիմոյ անտեղի մտածութեանս, յորս անկայ փորձութիւն առաւել քան զպտմեանն, յորս ոչ բարեբանիկ զոյ նմա եհաս հանդէս. ըստ որում որ ի գեեհիկս պատմի առականա՞յ արտուտի զգուշութիւն. երկնի յստորս կտրծանիլ, և նա անկեալ պորտ յորսայս, զտտն ի վերայ յերկին շանայ կարկառել, թէ՛ մի՞ երկին յերկիր անկցի խափուցեալը ի պարսաւ առեալ ումանց քէ՛ Որո՞վ ծղէ ծնգօց ծառանաս, ծախկ, քո ծովդ խնօք: Պատասխանեալ հաւն ասաց. Որքան կարեմ, զայն առնեմ: Արդ իմ ծղէ ծնգօցս է... Սակայն յուսարով ի Տէր և հաւատարով իրորս անտուտ խոստմանց, յարեալ առապարեալ քաջագոտի գտեալ՝ ի սեպհականն հասուցի հայրենի, զոր ի բաղմաց վաճառեալ և ծախեալ, և այժմ հալածական լեալ փախոյիմք: Տէր արասցէ դատաստանս Գրիգոր Մագիստրոսն, ուրեմն, լի կարողանում դեմն առնել Հայոց թագաւորութեան անկման: Թեպետեա մի ըոպն հալատում է խոստումներին, հալանորն, բիզանդական կողմից, և այս մասին նույնիսկ իմաց տալու համար շտապով մարդ է ուղարկում հայրենիք, բայց վերջինս արդեն վաճառված էր շատերից: Եվ ոչ միայն այդ. նա ընկնում է քիորձութեան մեջ: Նա ևս ճնթական է լինում նույն վիճակին, ինչ որ հայ իշխաններից շատերը, նա ևս ստիպված է լինում իր ծախված հայրենի երկրից դուրս մնալու: Այդ մասին նա խորին տրտմութեամբ հիշում է իր Թղթի մեջ:

Նա 1048 թ. օրինների հետ արեւելք է ուղարկվում թուրքերի դեմ երկրի սահմանները պաշտպանելու, և կարգվում է Միջագետքի—հետը նաև Վասպուրականի, Բերկրիի, Արճնի, Մանաղկնուտի ու Տարոնի—կառավարելու դուքս (եկիտուն և դուկս) կամ բղձջխ կոչումով: Նրա «մագիստրոս» պատվանունը ոչ թէ մի դիտական աստիճան էր այն ժամանակ, ինչպէս այժմ, այլ Բիզանդական կայսրութեան մի պալատական տիտղոս էր ռազմական գծով: Գրիգոր Մագիստրոսն, ինչպէս իր Թղթերից երևում է, շատ քարեկարգութուններ է արել իրեն հանձնած մարզերում, բայց միշտ ցանկացել է թողնել իր վարչական գործը և միայն զրականութեամբ զբաղվել: Կայսրը, սակայն, լի արձակել նրան իր պաշտոնից: Իր բղձ-

խորթյան ժամանակ նա համախ հղել է Տարոնի ս. Կարապետի վանքում, որը նրա համար կանգնած են հղել ապարանք և դպրոց: Նա վախճանվել է 1058 կամ 1055 թ.:

Ց. Ուսման ծրագիրը ըստ Գրիգոր Մագիստրոսի և Շրա թարգման-
նութլուցները:—Քուրդ տալալ աշխարհականների մեջ առանձնապես փաշ-
լում է ալա Պաշլավունի իշխանը, մեր վաղ վերածնունդյան շրջանի լա-
վազուկն ենեղալացուցիլը, իսկական լուսավորական գործիչ, նա ոչ մի-
այն ուրիշներին հորդորել է գիտությանը պարապելու և դպրոց ունենա-
լու, ալլև ինքը շարունակ սիրով և անխոնջ հետենել է դրան՝ նշանաբան
ունենալով «պատարուն ընթերցմամբ», «գիտութեամբ լուսաւորել» դան-
ձընա: Նա ունեցել է իր դպրոցը: Նամակների մեջ դիմում է աշակերտներին՝
խրատենք տալով նրանց, ժուլլորին հանգիստենելով (սեւ հեղգս ոմանց
յաշակերտացն, որք ուսանին գիմաստասիրութիւն»), կամ անկնդդ ու-
րախանալով նրանց առաջադիմութեան համար:

Հետաքրքիր է նրա ծրագրին ուսանելի առարկաների վերաբերյալ:
Այդ պարզ իմացվում է նրա խե Քղթից (էջ 105 և հտն.) սեւ աշակերտս
իւր Բարսեղ և Եղիսէ յաղագս գրոցն Արիստոտելի: Նրանց այդ միջո-
ցին գտնվում էին Պեսարոս կաթողիկոսի մոտ: Իսկով, որ սա նրանց
տվել է Արիստոտել՝ Մագիստրոսն այդ առթիվ գրում է՝ (1). «Եթէ Արիս-
տոտելի հաւաքմունքդ այն է, որ ասացնալն և յաղագս երկնալին մարմ-
նուն և գեղատեսութեան երկրի, կամ յաղագս օրինադութեան կենցա-
ղոյս, յորս իշխատակ է զորականութեանց քակտումն և զախտիցն քա-
ժանմունս, զոր անանեն իտրհրդական, առաւելա՛ այտ զդո:

(2). Այ՛ եթէ միայն Պորպիւրի առաստիւթիւնն իցէ քաղորոշեալ
ի խնդրոյ Քոնստանդինոպոլսի հնգից ստորագութեանցն, որք են այսոցիկ՝ սեռ,
տեսակ, տարբերութիւն, յատուկ և պատահումն, կամ եթէ ութիցն, որք
են՝ դիտատրութիւնն, պիտանացուն, պատճառն, մակագրութեան կար-
գըն, վարդապետական յեղանակն, թէ առ ի՞նչ մասն, տարբերումն, կամ
դիւրն Ստագիրացոյն՝ գոյացութիւն, որակ, քանակ, և առիշը ուր, երբ,
կալ, ունել, առնել, կրել, այսոքիկ ոչ են մեզ ըզմոյլ ի հեռաեռանէ զայս-
պէս խնդրել: Քանզի առաւարդութիւնքս այս վաղ ուրեմն լաւաւանց
մեզ մինչ տակաւն պատանեակ եղելոյ:

Բերված հատվածից ուղադրություն է գրվում այն, որ երկրորդ պար-
բերության վերջում Մագիստրոսը հայտնում է, թե ինքն ինչպիսի փիլի-
սոփայական ուսում է տալի դեռ իր պատանեկության ժամանակ: Շարու-
նակության մեջ գրում է, թե ինքն առանց հոգնելու ամեն ջանք զործ է
գրել իր այդ ուսումը կատարելագործելու պարսկականից ու արաբակա-
նից, և թե այդ թուղթը գրելիս էլ աշխատում է «ծունաց անգանդաղ քա-
ռիցն արհեստից հետևաբար մասին ինչ տեղեակ լինել: Քանիք,— ավե-
լացնում է նա,— յայսոքիկ կրթեալ զմեզ վեհագոյն վարկանէի անկո-
ղպտելի և անծայրագոյն ստանձնել, քան դամենալն ինչ որ ի կենցա-
ղումս աղետագոյնս: Ահա իմաստասեր մարդու կարծիքը գիտության մա-
սին:

գրքերից, այլև ժողովրդական ամանդուքը ունից։ Եվ ինքը Մագիստրոսն ուշագիթ է նդել թե՛ զոնհիկնա պատմված ասականներին, ինչպես վերեվում բերված ծախ առանկն է, և թե այլ բանաշարական երկերին, ինչպես և Արտաշես Պարթևի (Արշակունի) թի զոնհիկնա աւանգնայա հանրածանոթ խոսքը, որ ծագում է հին Վիպասանքից (Քուրթ ԼԳ, էջ 87. «Ո՛ տայր ինն զծուխ ծխանի...»)։

Ուսումը լինում էր հայերեն. հարկավոր էր ունենալ հայերեն լեզվով գրքեր։ Գրա համար կային հին թարգմանությունները, ինչպես՝ Ուրմարտնոսի առանկները, որ հիշում է Մագիստրոսը (ՄԸ, էջ 132)։ Կար և Անանիայ Երեմկացու Մենիկունը, յոթում մթերեալ են,—ասում է նա,—տոգորք աստուածային և նկատեցաւ յայնչ ամենայն արհեստի մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն... երկրաչափութեանն և աստեղագիտութեանն... և զկնի այսոցիկ յարամանայք արհեստք և մակացութիւնք, մատենադրութիւնք, և զրէ եթէ ամենայն յոթոր մարտումն հետեւորականա (էջ 8)։

Գրիգոր Մագիստրոսն ինքն էլ աշխատել է ուսումնասերներին հարմարություն ընծանել սովորելու. նա արել է հին Գերականի մեկնությունը, որով հետագա դարերում ուսուցիչները սովորեցրել են աշակերտներին։ Նա իր ժերության հասակում, Միլագետքում վարած մեծ պաշտոնի օրերում էլ շարունակել է թարգմանության գործը։ Ուլ հմբ նրէք դադարեալ ի թարգմանութենէ նս. բազում մատեանս, զորս ոչ հմբ գտեալ ի մեր լեզուս՝ զերկուս մատեանս Պղատոնի, զՏիմէոսի տրամարանութեանն և զՓնդունի... և զայլս բազումս լիմաստասիրացն... և զերկրաչափականն զԵվլիդոսին սկսալ թարգմանել և եթէ տակաւին կամեսցի Տէր երկրաչափալ մեզ ի կննցադումս, բազում հոգս յանձին կայնալ զմեացնայուն յոլոր՝ Յունաց և Ասորաց թարգմանել ոչ դանդաղեցայց։ Եւ կարօտեմք քեզ մերձ ելոյ մեզ օգնականութեան այսպիսում իրողութեանցս (Քուրթ ԻԱ, էջ 66), զրում է նա իր բարեկամ Սարգիս վարդապետին, որի մօտին հիշատակություն եղաւ վերնում։

4. **ԹԻՂՈՒՆԵՐ**։—Գրիգոր Մագիստրոսի Քղթերն ունեն վերնագիրներ, որոնք ծագում են հավանորեն կամ հեղինակից, կամ նրան մոտիկ մարդկանցից, քանի որ վերնագիրները զնոյններն իմացել են, թե ինչ առթիվ են գրված և ում է ուղղված այս կամ այն Քուրթը։ Գրության բովանդակութիւնից միայն երբեմն չի իմացվում այդ։ Հեղինակը գիտության մարդ է. նրա այդ գործերն ամենից առաջ ունեն իր ժամանակին համար գիտական, մասնավորապես պատմա-հասարակական արժեք։ Այստեղ կարելի է գրանց բովանդակութիւնը մի առ մի թվել, այլ այսօրանք միայն պիտի ասել, որ այդ գրութիւնները հաճախ վերաբերում են գիտության և ուսման, ավելի են քննարկած ծանոթութիւններով, որոնք արգասիք են զորդի երկարամյա բազմակողմանի ընթերցանության։ Կան նաև կենցաղական բովանդակութիւն մի Քղթեր։ Սրանց մեջ նույնպես հեղինակը հանդես է

բերում իր հարուստ գիտանքները զանազան նյութերի մասին, նրանք
այնպիսի մասնատման ություններով, որ հիացնում է ընթերցողին:

Նրա Թղթերով մեր գրականության մեջ մտել է մի նոր գրական տե-
սակ—նախակալի տեսքով: Արդարև հայտնի են մեզանում Քրիսթ Թղթը
ժողովաժողի մեջ եղածները, քայքայում էր այն ժողովական գրություններն
որն էին գրված առթիվ: Ժինգոն Մագիստրոսի Թղթերը մասնավոր նախակ-
ներ են, որոնց նմանները չեն պահված կամ երևան չեն եկած մեր գրա-
կանության նախորդ շրջանից:

Նա ունի գրելու իր հատուկ եղանակը: Պետք է կախարհական ուղղած
մի նամակի սկզբում (Ա, էջ 3) գրում է. «Թեպետ և ըստ գեղեցիկ խնդրոյ
թու՜մ լուսավաղյուցնան, պետականդ բոլոր սրբադասից և գլուխ առաջն-
ական, պարտ վարկանիս երկարագոյն նորագոյն քանս իմաստասիրել
ծառայի ըստ, որով զուարեանաս իբր զհայր ի վերայ որդոյ, սակայն
սիրելի է ինձ միշտ կարճառոտ հաստանել: Վասն զի գրութուն մասն միա-
կի ուղղակի գրականական պարտ է զուղղանկիւնեանցն թէպէտ և մասն
գոյ: Եւ իմաստեայն մի բան բաւական է զքիւրս բերել զչնի հեռաւորաբար:
Կաթողիկոսն, ուրեմն, պատշաճ է համարել, որ Մագիստրոսն ազելի եր-
կար իմաստասիրելն նորագոյն քաները, քայքայ նրա համար սիրելի է
եղել կարճառոտ գրելը: Վասն զի,—ասում է նա,—ինչպէս մի հաստ ուղիղ
գիծը ցոյց է տալիս ուղղանկյան (քառակուսու) բոլոր ամբողջութիւնը:
Նույնպէս և հասկացողի համար մի խոսքը կարող է ետևից իրեն հետևու-
թիւն շատ խոսքեր բերել: Ահա նրա հորինելու հիմնական ձևը — կար-
ճառոտ գրելը, մի որն է գիտական կամ այլ օրինակով քայքայելու ասածը,
միտքածը թողնել ընթերցողին լրացնելու: Բայց նա երբեմն բավական
երկար և ընդարձակ էլ է գրում:

Հետաքրքիր է վերելում ընդգծված «իմաստասիրել» բառը, որ այս
դիտում հնդինակը սովորաբար գործածում է իր գրածներին բովանդակու-
թյան համար: Դա համապատասխան է հունարենի ֆիլոսոֆի՜ո բային, որ
նշանակում է՝ սեր ունենալ գիտի իմաստութիւնը կամ գիտելիքները: Գի-
տութիւն գործադրել, գիտութիւն մարտկել, իր գիտանքները կիրառել,
ուսումնասիրութիւն անել: Եվ Մագիստրոսը միշտ «իմաստասիրում է»:
Կարճառոտ գրելիս թե ընդարձակ՝ նա միշտ երևան է բերում իր քաղմա-
զան ծանոթութիւնները: Այդ բառի փոխանակ նա գործածում է նաև
պոլեմիկական (ԺԵ, էջ 50). «Երբևէ զկաղնեացն իմաստասիրել քեզ
... շատացան... Այժմ գիւնձորոցս կամիմք քեզ պոլեմիկանել: Եվ բերում
է զանազան ժատնասգիրներէք տեղեկութիւններ խնձորի մասին:

Ամենից շատ սիրում է նա հին հունական առասպելները, դիցաբա-
նութիւնը: Դրանք կիրառութիւն մը նա նույնիսկ գեղազանցում է կեղծ-
դասական կողմած գրական դպրոցի հնդինականներին: Հերոս է գրանք
սովորաբար կարճառոտ, երբեմն ակնարկներով, Այսպիսի գծայքերում
մեզ համար այժմ երբեմն անհասանալի են մնում նրա գործերը, երբ
չգիտենք այդ առասպելների բովանդակութիւնը, կամ հին աստվածների

բնորոշ պոեմը: Նույնպես անշուշտ եղե՛լ են դրանք նաև Մազիստրոսի ժա-
մանակակից հեղինակներին շատերի համար, բայց ոչ ալև անձեռի,
որոնց ուղղել է նա իր նամակները: Նրանք պետք է մի բան հասկանալին
իրենց թղթակցի գրածներին, թե ի՛նչ նրա կողմից գրված կլինե՞ին ժիժա-
ղելի դու:Քլյան մեջ:

Բերենք դրա համար իբրև օրինակ ակզբի մասը ԻՐ Թղթի, որի վեր-
նագրին է. «Ան վարդապետն Սարգիս առաջնորդ ուխտին Սնանայ, քան-
դի գրեալ էր Գազիկ առ վարդապետս ալս, եթէ՛ նկատցես առ իս և ի մա-
սին գրոց պարապնացուք:» Գազիկը, դա Գազիկ Բ-ն է շատ ճիշտասարդ
և զահագուրկ ժամանակ, քանի որ Մազիստրոսն իր նամակի մեջ նրան
եմանուկ է անվանում և նամակի ակզբում գրում է. «Եկա՛վ հասա՛վ մեզ
մոտ մեր առաջվա հղած [= երբեմնի] արցայից ուղարկված մարդը, որին
նա ուղարկել էր քեզ մոտ:» Բերենք օակայն քննադիրը, չնկն հհհա առ մեզ
յղենալն ի մերոյ նախուստն նույն աբբայէ, զոր առաքեալ առ քեզ, սրբա-
զանդ և գերակառա՛ր քուրդ ճեմարանի Արամեան ազգին և քրիստոսա-
կան կրօնիք և կուսակա՛ն բրաբրոնիւ սաղարթացեալ, որ և ինձ յոյժ ըղ-
ծալի և յույս բարեաց: Այլ մեր յոյժ երկիւղի եղեալ՝ տապ տապնապի տա-
րակուսանաց հասանէր, յորժամ զառնէս համբաւոյ հրոսակն նախընթա-
ցից ազդեցին մեզ, ոչ ուղղախօսելով զԳորոռնս Գղտիհոն մեզ ծանուցին.
զոր մեր երկիւղի կասկածանաց եղեալ նախնույն ալն կապտողի և յն-
դուգակի, առեմ՝ դիա՛րդ կրկին մատնեաց Տէր զտունս Մամիկոնեան ի
ձեռս նորա: Եւ ահա կարծիս կասկածանաց մեզ եղեալ յԱշտիշատայ դից
դիցապանական դիւանան յարձակման, զուցէ՛ սանդարձե՛տականին
խղեալ կապանաց, կամ եթէ՛ իղձք կնւսոյ հմայից զիւթութեան՝ իբրեւ առ
ի շատովն յարուցանեն զՍամուէլ, կամ շուստականն շիղարացն շարս
շամանդաղեալ շոհանան ի վերայ մեր: Մինչ յայսմ էաց զարհուրման, վա-
ռեալ վահանօք և սպառազի՛նեալ անարի նիղակօք, պատասխտի յուզական
շիկորական որակեալ, ուշ եղեալ առ նախընթացն Ամլաթին և ի մերն
Պարթէ՛» օգնականութեան կարօտեալ: Իսկ յայսմ եղեալ հանդիսի, տեսի
զԳղտիհոն եղեալ սա Գորոռն, և ի Դիոնիւսեան զմայլեալ, ատորակ կայ-
ծականաց հրադիմական կարմրութեամբ, և գթեալ Գորոռն զայնակեղեալ,
զաղափարեալ զԳղտիհոն: Սակայն ծանոյց մեզ զքոյդ ողութին, և պառ-
տեացն ձիւր դմա շնորհելով, վերջնանահանք առ քոյդ առաքեցաք սրբու-
թին: Եւ ալս ալսքան գոհօրէն և անկուփ կարկառուն բան կատակականն
(էջ 66 և հտն.): Այստեղ կան անկարկներ և՛ հայոց պատմութիւնից, և
Ս. Գրքից, և՛ հունական դիցաբանութիւնից: Որպեսզի ընթերցողը հաս-
կանաւ այդ սկստականական խոսքը և հանուք օտանա դրանից, նա պետք
է գիտենալ, թե ո՛վ է եղել Գղտիհոնը (իսկական Գդիհոն, Սյունիքի իշխա-
նը, Վահան Մամիկոնյանի հակառակորդը, որ անցել էր պարսիկներին
կողմը և մարտերից մեկի մեջ սպանվել): Նա պետք է տեղեկութիւն ու-
նենաւ Աշտիշատի աստվածներին, Սանդարձե՛տականին, վերկի միջոցով
Սամուէլի հարուցման առասպելի մասին ըստ Ս. Գրքի, ալև շիղարներին

(առանձին ոգիներ են) մասին, նա պետք է իմանա, թե ո՞վ են «նախընթաց Ամլաժները» (Ս. Կարապետ Շողհանեան Մկրտիչ Ամլորդի), «ամերՊարթևը» (Գրիգոր Լուսավորիչ), և Դիոնիսոսը (գինեու աստվածը, «Ի Դիոնիսեայ զմայլեալ» — հարրած)։ Սարգիս վարդապետը հայոց պատմության և Ս. Գրքի վերաբերյալ ակնարկներն անշուշտ շատ լավ գիտեր։ Բայց նա անպայման ժառանգություն ուներ և Դիոնիսոս («Քաջոս») աստուծու մասին, նա մի հայտնի գիտնական է նդիլ, Մագիստրոսը նրան անվանում է «գիտնական քաղաքի Արամեան ազգին», «մականցու քուրդ մականցութեան» (= տեղական ամեն գիտություն), և Գագիկը հրապարակ էր նրան միասին գրականությունը պարապելու։

Թղթի զվարճանական և առաջաքանից հետո Մագիստրոսը ծախրում է Գագիկին ըստ հրեայթին նրա համար, որ նա կնդից քաժանվել է ուղեցիկ զբոս մերոյն Պարթևին (այդ մասը մոլթն է)։ Կալ մի ամբողջ բժշկական տեղություն է անում նա կնապություն մասին՝ հիշելով հույն բժիշկներ Հիպոկրատեսին ու Սիսանդրոսին, և դարձյալ հռեական գիցարանությունից Պատեոս ասրն և մի առաջիկ Դիոնիսոսին և Ալոգոնին վերաբերյալ։

Վերջում նա ցանկություն է հայտնում, որ Սարգիս վարդապետն իր ուղեորություն ժամանակ նախ հանդիպի իրեն՝ Մագիստրոսին, որպեսզի — ասում է նա, — «սառ միմեանս զգեղնցիկ հակառակությունն ձեպեմք իմաստասիրելու»։ Այդ արգեն կնշանակն, ըստ հին հունական փոխադասության, գիտելիություն — տրամաբանությամբ զբաղվել, որ է «գիտություն» — տրամախոսություն վարելով վիճարանել հերկու միմյանց հակառակ պնդումների շուրջը։ Մեր ժողովրդականությունն իսկ, որ այժմ ստացել է բուրժուական քառի իմաստը (բուրժուական հեռումն թարգմանել են քրեականներ քառով), հին ժամանակ ունեցել է «գիտելիություն» վերելում դրված նշանակությունը։ Ինչպես հրեում է, Մագիստրոսին և նրա ժամանակի գիտնականների համար սիրելի է նդիլ «տրամաբանությունը», որ նա հիշում է իր նամականիքի մեջ։ Օրինակ՝ ՄԳ (էջ 124) Թուղթը (ՔԱՆ հրապարակ Գանիէյ) սկսում է այսպես. «Ջմտաւ ասի զՊարփիոփոնոս, զորմէ իշխատակեալ մեր յնախնայնն տրամաբանութեանն, և գիտեմք, զի տարակուսանա իմ սակաւ առաքի ձեր սիրոնցաւ»։ Եվ հետո պատմում Պարփիոնոսին տեսնուելը։

Մագիստրոսը չի մտածել գրական գործ կատարել, այնպես գրել, որ իր Թղթերը գրական-գեղարվեստական արժեք ունենան։ Նա դուռ է մեծ մասամբ անսեղանի և անպաշտոն, Գեղեցիկ հորինելու միակ ոճական ներշնչվել, որով ազդել է ձգտում նա, է՝ համակերպելու կուսակցումը և բաղադրականը — քաղաքականի հանդիսությունը։ Բայց և այնպես նա կարողանում է իր նշույթը սովորաբար հետաքրքիր դարձնել՝ ճարտարություններ համեմակելով ալն՝ նմանություններով, զրույցներով, առասպելներով և առականներով։ Առանց դրան էլ՝ Թղթերի մեծ մասը գրավիչ ու գեղեցիկ են։ Այդ առաջնայնս նրանից է բխում, որ այդ սիրքը երկերը մաս-

նապօր նամակներն են. գրողն իր տեճը չի թաքցնում նրանք: Նա ինքն ան-
միջականորեն շատ կարկառուն, կենդանի ու եռանդուն հանդես է գալիս
իր հայացքներով ու զարգացմանը, իր կարծիքներով ու զգացումներով
առ այն անձերը, որոնց ուղղում է իր խոսքը, կամ վերաբերմամբ այն
անձերի և նյութերի, որոնց մասին գրում է: Նա նրանքին շնորհակալ է
անում կամ արագ թողում է որի՞նչ խնդիրների, քայքայ չի մոռանում ընդ-
հանուր կապը: Առհասարակ նա հուսադրում է իրեն կամ իր բարեկամնե-
րին. հաճախ գտնում է կամ պարսպում, ծաղրում ու հեղինակ, նրանքն էլ
սգոհակորեն անկողի կարկառուն կատակական խոսք է հորինում միայն
զվարճանալու համար առանց որևէ ուրիշ նպատակի:

Ուրիշ դեպքում (Ը, 29) նա լուստանք է թափում կաթողիկոսի դեմ
լուստանալու մի նպատակով գլխին. «Ճիշտը սկսելն այն առ առիժ
համարձակիւր, և խորին առ հուր զմերձենալն և զհակառակելն խնդրէր, և
գիշերայաժու քուն առ արծիւն ի տունչեան մըցի, և շուստապաշտալ շուն
այն առ տէր իւր մատչիւ: Եւ ապա բացատրում է. թե ինչու՞ շշտական
իմաստաներներն այդպէս են կոչվել: Առանց քաշվելու նա քննադատում,
գիպում է նաև իր բարեկամ մեծերին, ինչպէս, օրինակ, այն ժամանակ
հայտնի Եփրեմ նպատակով, որ իր գործակիցն էր թոնդրակնոց ա-
ղանդի վերացման ժամանակ: Նրան ուղղած մի նամակի մեջ, որի վեր-
նադիրն է՝ «Եւդազա Նուանց կատակական առ Եփրեմ նպատակով Քննալ»
(ՄԸ, էջ 131): Մագիստրոսն ի միջի ալլոց գրում է. «Այլ փնձ ոչ սակաւ
եհաւ հիացումն համարողութեանդ քո՝ նրկրալափականն համարձակելոյ
մտանելոյ և զմեզ շարժելոյ: Ահա զօրէն ճային Ուրմպիանեալ կամ ասա-
ցեալն թէ ճանճն ճոխացեալ ճողոպրեալ կամեցաւ զճաշկա ի ծամե-
լեաց աղիւծուն, ի քուն զնա գտեալ: Գոր, այսօր անդր զագին գալարեալ,
հոգմահարիւր ի քաց մղեալ: և ոչ ռստուցեալ թուլուն արտակայիւ: Ապա
կոճեաց կեռեօքն կուրիւ կոկորդակոփ կասեաց ընդ ժանձօքն, և ժպտեալ
զոմանա եթող կիսամահ ընդ ռնգունսն զերծեալք: Գոր ի դատաստան
մտեալ Ակկարովնեան ճանճիցն, ճենճերելով ճմեմալք ճողոպարանն
ղնաշակաց առիւծուն: Գոր ոչ ընկալեալ իրաւունսն ի Կրիտիսէն Կրետացի
ասէ. «Ըճանճի՛կ, ի ճոխ առիւծուց ծամելիս մի՛ մտաներ, յորժամ ի քուն
մտանէ, եթէ ոչ՝ ճմլիս, ճապհոպիս, շատ ճենճեալս, ծա՛կն, ի փեթա՛կն,
ճանճի՛կ, անց տղաք, բոլոր և յարքունիսն մի՛ նրթար: Արդ՝ ի խո՛ղն,
ի խո՛ւցն, ի խրճի՛թն. անդ սաղմո՞ւն. նուազել ի ճմեմարանսն մի՛ ճնպիք,
եթէ ոչ՝ ճանճին պէժ ճմլիք: Ուրեմն նպատակովն առակով հասկացնում
է և անգամ պարզապէս գրում է, թե՛ «Որ ըսնը չէ համարձակվել թվա-
քանութիւնն ու նրկրալափութիւնն մեջ մտնելու և գիտութիւնն ճմեմարանում
նվազելու, ալլ զու մտիւր խուց, խուղ, խրճիթ և սաղմոս ասա, եթե չես
ուզում ճանճի պէս ճմլվել»:

Մագիստրոսը կարծես շատ անգամ առիթ էր փնտրում՝ փր հմտու-
թյունը, իր ունեցած գիտանքները ցուցադրելով զգալի դարձնել իր գիտա-
կան առավելութիւնները: Այսպէս, օրինակ, Սասունի նշանաւոր իշխան-

Թոռնիկ Մամիկոնյանին (որ իր փնասան էր) զրաժ նամակներէ մեջ (ՀԳ—ՀԷ, էջ 212—225): Այս իշխանը խոտտացած է հոգի կարմրախաւսոնէր ուղարկել նրան: Բայց ուշացրել է: Մագիստրոսն առաջին նամակով շատ ուժեղ ծաղրում է նրան՝ Հիշելով մի քանի առասպելական ձկներ կամ ձկնակերպ գաղաններ և ասելով, թէ ինքը քաղցած մնալով սպասում է մեծ խնդրիքի և ձկնից պատրաստած կերակուրներին: Եւսպէս կամելով մեր դյօշուած կիսին, զոմանս ի շամբուրս հարեալ ի վերայ շնգինստեայ, զոմանս ի ստեի Պոսիդոնիս ամօքեայ, և զոմանս ի սապակի տրամատրական մակնդուտ ելով ելլադացի իւղովք, և զոմանս ծպտեալ ի մէջ Դիայ, պարապատեալ արմանօք, քառանկիւնի և ուղղանկիւնի յարամանեալ լմբոն, և զոմանս գծօրէն կտապլըս, և դարձեալ խորտակնայս մանրազոյն պարականն խորտիկս, և զայլս որակաշնալս ոսկիտննակ քրքմով, ռնտին մակաւասար արկեալ և ռանմեմելի: Եւ այսորքի յանհասուն վարին զյատուկան լանուանէ Թուելա: Թոռնիկ Մամիկոնյանն անցած է հոգի հունադավանության, որ լէր արգելում արտօրքը ձուկ ուտել: Այդ ծաղրելով՝ Պահլավունի իշխանն իր նամակի վերջում գրում է. «Բայց դու Մամիկոնեան, որ համոզեան հաւանեացար Դնոնեան ընդարձակագոյն տօմարի, ո՞ր եք ի քէն այժմ կարացէ կորզել զուղակս, զոր Պոնտոս և Ուլկիանոս ոչ հանդուրժէ կերակրել: Եր և զայլոց ոմանց պատրաստեալ կերակուր յափշտակել փութայք՝ զթուխոց և զդեռնոց, որպէս գիւնչս և զքոռակէտս և զօձասա՞նդրս և զկրայակիրոս և զայլ զբիրս ի բզզոց տեղադր զնորման: Բայց դու փութա՞ զխոտտացեալն առաքել, թէ ոչ՝ զկնի այժմ նամակի նահնցուցից քեզ՝ ճարտասան բանիւք ճայթմունս առատաւթանս, զի ոչ քաղցրացիք ի կոկորդոս քո պարտաւթինէ կարմրախաւսայիդ: Զի ոչ միայն զայդ, այլ և զամենայն զեռունս և զրդիդան և զճճիս, զոր լուրբաթու ճաշակեալ է քո, տաղտկացեալ ախոնդեացդ զօրէն Վոռնեայ ժայթքեալ արտաքս բերցեալ: Վերջապէս Մամիկոնյանն ուղարկում է կարմրախաւսները և ինչպիսիք է նրան գիծատառքիւ յաղագրականաց: Ըմբ նա գրում է առասպելական ձկներէ կամ ձկնակերպների մասին զրուցների՝ Թվով տասնհինգուսից արկելի, և զեռ վնդն էլ կցում է. «Եւսպէսն է լուովագոյն փնծ մակագրել քեզ՝ ոչ գծուարին էա»:

Դարս արգեն փութալած ոգու տեսակներէց ալքի է ընկնում ԱՅ Թուղթը (էջ 39), «Առ Զննացին Գրիգոր Տննտիս տակս որոյ էլ ի վանաց և լոգոսի լնան Վարագայս: Սա այն կրոնավորն է, որի մասին խոսվեց վերևում:

Ինչպէս երևում է, նա, նախքան կարս ուղարկվելը, թողել է վանքը և զնացել Վարագա լեռը՝ միանձնական կյանք վարելու: Մագիստրոսն այդ առթիւ բնիմաստասիրում է՝ մի շարք լեռների մասին և հետո գծագրում է, որ ստակս Աստուծոյս փայլում են լեռները, մինչդեռ ինքը Հիսուս լինում էր Ժողովրդի մեջ, և «ոչ միայն ի լեռին կարող եմք զսասուած բանն ի մեզ ընդունել, այլ և յամենայն տեղուրս, —ասում է նա, և գրությունը վերջացնում է այսպիսի մի ծաղրով՝ առանձնական ճգնավորների Եւլլի եկն առ մեզ նամակ լանտառել կնդերչական [—գանդատական]

արտունջ տողորեալ սրտի՝ յնղանց, յնղչնրուաց և ի բոլոր զազանաց, ճՔԷ
նշանալք ի դրախտէն՝ զմեզ ի մերոյն սեփականէ արտաքս հանին. իսկ
Դաւթայ մեզ ի լերինս հրամայեալ կալ. այժմ և անտուտ հալածենա,
Երևի արտադրողներդ մեկը դրել է այս քացատրութիւնը. «Շանաք և
տնադ առէ՛ զգնացողս ի լեանն, ասնելով անբանից, քէ ի դրախտէն հա-
նաժ վարածքն նկին լցուան ի լերինս և զմեզ պէ՛հուզուր անեն ի բնակու-
թիւնս մերաւ Գրիգոր Նարեկացու օրով մի քարեպաշտ մարդ չէր կարող
սլոնակնաններինն, այսինքն լեռը քաշված ճգնավորներին, այսպէս ու ծա-
նակ անելով՝ հավասարեցնել վայրենի անասուններին ու զազաններին:
Դա նոր աշխարհայեցութեան արտահայտութիւնն էր, — որ երևում է մին-
չև անգամ թռնդրակցիներէ դեմ գործող Գրիգոր Պահլավունու Թղթի
մէջ: Բայց այդ ազանդի բարձման մասնակ էլ նա ցույց է տալիս մեղ-
մութիւնս թիչ զոր վնասեցաք մարմնական պատահանիւք, — գրում է նա
պարծառքով, — թէ՛պէտ և յօրէնսն հրամայէ զվերջին պատահասն կրել
նոցա. որպէս և նախ քան զմեզ թաղում զօրավարք և պետք ի սուր սո-
սերի մատենցիի զնոսա և անսղորմարար ոչ խնայեցի ի ծերս և ի ման-
կունս, որպէս արժանն էր. նաև մեր քահանայապետք ի կիզումն դժմաց
և ի դրոշմ տղունսանկերով (ԿԷ, էջ 162): Այսպէս վարվել էր հենց Մա-
գիստրոսի օրով Սարգիս կաթողիկոսը:

5. Գրիգոր Մագիստրոսի լնդում, առանձնապէս Թղթերի և մի քանի
շափածոներէ, իրավամբ համարվել է ընդհանրապէս խրթին և շատերին
անմատչելի: Այդ առաջադու է առավելապէս անհրաժեշտութիւն, որ
նա գործածել է բազմաթիւ հունարան կազմութեամբ բառեր, որոնք շին
քնդակարգել մէջ նոր լնդի մէջ. ուստի այժմ մեզ համար անհասկո-
նալի են մնում: Այդպիսի բառերը ծագում են կամ հին հունարան գրող-
ներից, կամ Մագիստրոսի իրեն կազմածներն են ըստ հունարենի: Մեր
նոր լնդուն չի յուրացրել այդ բառերը, զի դրանք գտնվում են փոխադա-
րանք և այլ մասնագիտական գրքերի մէջ, որոնք ընթերցումն և ուսումը
կարեւոր չի համարվել մեր նոր դպրոցներում: Իսկ Մագիստրոսը սիրում
է հենց այդպիսի բառեր հաճախութեամբ հորինել: Դրանց փոխանակ
մեր նոր լնդուն այժմ ունի ավելի հարմարավոր բառեր, կամ նժն լուռի
էլ՝ դրանց կիրառութեան կարիքը չի զգում: Կան, հարկավ, և այնպիսիներ-
ը, որոնք բոլորովին ավելորդ են, օրինակ՝ մակացութիւն — գիտութիւն,
մակացու — գիտակ, գիտքող, տեղյակ՝:

Ո Այս բառը լավ օրինակ է, թէ ինչպիսի նրբամէ հանարենէն հետեւելով բառեր են
կազմել. զա պիտի լինի՝ մակ — կացութիւն, մակ — կացու (ինչպէս վերա-կացու), բայց
ն առերեք մէկը դուրս է ընկել: Իսկ մակ-կացութիւն կազմած է ըստ հանարենի եղի-
տէ՛մ է բառի (նպիս-մակ, վրա. ոտէ՛մէ-կացութիւն), որ նշանակում է՝ գիտնալը,
տեղեկութեան, ծանոթութեան, մի բանի վերաբերալ գիտութեան: Նույն կազմութեամբ
տեղեկութեանը բայց նշանակում է՝ մի բանի վրա կող (տեղեկել), ապա փոխադա-
րար՝ ճանաչել, գիտնալ, տեղյակ լինել. ինչպէս հին հայերենում «կամ ի վերայ» նշա-
նակում է՝ վրա կանգ, կանգնել, ապա՝ ճանաչել, գիտնալ:

Այս հեղինակի լեզվի մթնոթյան մի պատճառն էլ այն է, որ նա գործածում է երբեմն քառերն այնպիսի նշանակութուններով, որոնք անպաշտոնական հեղինակն է և գրաքարում անգամ անտպուր են, օրինակ՝ «տեսի-տակա» բառը «գիրք» բառի իմաստով։ Նրա գրածների մեջ կան նաև բազմաթիվ հնացած կամ դաժնադաս բառեր, որոնք ուրիշ հեղինակներին մեջ չեն պատահում, և որոնց նշանակությունը դժվար է իմանալ, օրինակ՝ «տոտիներ», «շողանալ»։ Մարաշիլուսթյան վերաբերմամբ էլ կան շատ անսովորություններ—բազմաթիվ շրջումներ, նախդիրներին ու հոլովներին այնպիսի գործածություններ, որոնք հետո են մեր կլանիկ հայերենին, որին վարժված ենք։ Իրեն մասնավոր նամակներ՝ երբեմն անփութ են հորինված, ուստի կան պակաս բառեր, կիսատ մնացած խոսքեր, որոնց թերությունը, սակայն, կարող է քննարկ աղնատուներ ևս անողացած րենել։ Մի կողմ թողած յուրահասուկ մտածողության ձևերը, որոնք իսկական հասկանալի չեն լինում, պետք է ասել, որ Մագիստրոսի գրածների մթնոթյունը ծագում է նաև նյութի նորությունից և անհասկանալիությունից։ Եվ վերջապես՝ նա հաճախ պատասխանում է ուրիշների գրություններին, որոնց բովանդակությունը մեզ անծանոթ է. ուստի Մագիստրոսի անհարկներն այդ մասին մեզ անհասկանալի են¹։ Դիտարկելով հետևյալ խրթին է գրված նրա մի Քուղթը (2 է, էջ 238) Ան հեղդա լուսունն իմաստով, որ հայտնի է իր սկզբի «Յամագտական» բառի անուր մեջ։ Այդ արդեն տառն իր բանալու հնարավոր չէ հասկանալ։

Ո. Չափաձու գրվածքները։— Գրիգոր Մագիստրոսի մեծ գրվածքը ուսանավորով՝ սովորաբար կոչվում է «Շաղաղաղան», կազմված է 1018 տողից։ Ինքը հեղինակն առաջաբանի մեջ («Պատճառ ոտանաւոր բանիցս») պատմում է դրա ծագման մասին։ Նա 1045 թ. Կոստանդնուպոլսում շատ օրեր զանազան խնդիրների մասին զրույց է ունենում մի արար հմուտ բանաստեղծի հետ։ Սա գտնում է իրենց Կուրանը՝ ասելով, թե դա ոտանավոր է միայնօղ լալիատորութեամբ գծի, մինչդեռ Ավանտարանն այդպես չէ։ Գրիգոր Մագիստրոսը դրան առարկում է ասելով. «Տաղապատութիւնը Արարացւոցն սովորաբար վարժարանութեամբ մըղնալը միայնօղ ասարտեալ գծի. զոր դուք կափալ անուանէք։ Սակայն թէ համարիս զայս մարգարէական տեսութիւն»՝ զոր Մահմէտ քոյ գտառանուն ամ

¹ Գ. Կոստանյանցն իր ժամանակին շատ կարեւոր և նշանակալից դարձ է կատարել հրատարակելով Գր. Մագիստրոսի «Քուղթը» բազմաթիվ ծանոթություններով հանդիս. քալը հրատարակութեանը դեռ բավորաբար չէ։ Պետք է ամեն մի նամակի քննարկ համար ավելի մեկնություններ անել, մով ու խրթին կտորները լուսարանել, ինչպես և Գր. Մագիստրոսի գործածած դժվար հասկանալի բառերն ու դարձվածքները համար ժանրամասն քառարան գեղի զորն վերջում։ Այս անաղագիտելի ու ընթերցողները հետք էր գնել ամեն մի էջի ներքեւ, արագեղ կարելի լինի կարգալիս անմիջապես նկատի օժենալ։

¹⁰ «Տաղապատութեան» Գրիգոր Մագիստրոսի Պաշտոնաթուղթ, Վեհերդի, 1882։ Գ. Մագիստրոս, Քուղթը, էջ 31 և հետ., 294 և հետ.։

գրեաց, քառերեայ գծագրեցից քեզ. յԱղասայ սկսեալ մինչև ցգալուստն կրկին այնմ որ ասեղծ զնա. և մատենագրեցից ասաւել ևս Հրաշալի միով գծին՝ յօղասորեայ ետինն զոր գովէիր զնա: Իսկ նա բազում զրաւս ի մեջ եղեալ. «Թէ կարասցեն արենէ դու զայդ, յայն ժամ լինիմ և ես քրիստոնեայս: Մարգարտոր լորս օրվա մեջ կատարուամ է իր խոսքը. զերևով աշագարտողանեալ, որի վերնագիրն է՝ «Առ Մանուէլ»:

Այդ երկը մի շատ համարուող բովանդակութիւնն է Ս. Գրքի. վերջին մասի մեջ (էջ 70—73) խոսուած է նաև հայոց եկեղեցական պատմութիւն մասին՝ Սուրբ Գրիգորից մինչև հայերեն գրերի գյուտն ու թարգմանիչները.

Կամի՛մ աստ քեզ ասել յառաջ քան զայս ըզՊարթևին,
Ջարքո՛յն մեր Գրիգորի և ըզՀայոց Լուսաւորին,
Քաղաքարն Պահլաւին և ըստ տղգին Արշակունին...
Արդ զիս յայ՛ս տոհմէ գիտեմ ազգաւ Պարթև իմ հայրենին...

Ամբողջը ոչ թե բանաստեղծական հղացման, այլ լոկ սառն արվեստի արդյունք է, այն էլ շուտափոխյթ հորինված: Սակավ են գեղեցիկ կտորները. սրանց մեջ լավագոյնն է վերջին դատաստանի զգածված նկարագիրը սովորական մտտիվով.

Ի լորից հողմոց երկնից ծայն արծակէ զԳարբիէին,
Եւ զայլոցն հրեշտակաց թառակողմեան հրախրողին:
Ես տնկեալ կամ դողալով, սարսափելով վասն ատենին,
Յայնմ ատուր ահեղ մեծին և ի վերջին հրապարակին,
Մինչ երկնքըն զալարին և լուսաւորքըն խափանին,
Աստեղքըն շիջանին և արեգակըն խաւարին,
Հերինքըն հուրք ծախին, երկիր դողայ, վէմք երեին,
Հրեղէն կամարն որ կայ՝ երկնից վերև այն զալարին.
Սլանէ թնդին հրաշից և ցուանայ շուկ սրօքէին...

Դատաստանի տթոռի առաջ գալիս կանգնում են թուր մարդիկը՝ հարութիւն ատենելով.

Անդ ոչ քարեխօսել, ոչ մեծութիւն թէ պատկառին...
Ոչ տո՛ւր կայ, ոչ ատնու, բանըն կապած է հոռտորին,
Ոչ արքայ, ոչ թագաւոր, իշխան չկայ յայն համարին,
Ոչ հօօր, ոչ զօրաւոր, ոչ մարտական պատերազմին...

Ինչպե՛ս Գրիգոր նարեկացին՝ Գրիգոր Մարգարտոսն ևս դողում է, ճրեկակալութիւնով լսելով դատաւորի խոսքը.

Արդ զայս լուեալ զողամ և սարսափեմ հոգեվարին,
Պատէ զիս արհաւիրս և տատանիմ ք տապաւնին,
Եւ արդ կամ ահաբեկեալ յօրժամ յիշեմ զօր վախճանին,

Եւ սո՞ւտ իմ զմբարդած ի կենցաղումս ցատազիւ,
Մուտ խաբած շար ալատարանեզ և մեծութեամբ որք սովորին...

Գրիգոր Մագիստրոսը չի ռժաշկած քերթողական տաղանդով, այլ միայն վարժ ու հմուտ տաղաչափ է. ուստի և նրա «Հաղարատողնանն» ու մի քանի ուրիշ ոտանավոր գրվածքներն արժեք ունեն միայն տաղաչափական տեսանկետով: Գրիգոր Նարեկացին արդեն դարձի սկզբում իր Ողբերգության մեջ, հետևելով ողբասաց կանանց, գործածել էր հանգը. բայց առաջին անգամ Գրիգոր Մագիստրոսն է ընդարձակ լատով կիրառում այդ, հետևելով արաքական կափային (ոտանավորի հանգ, այլ և հանգավոր ոտանավոր): Նույնահանգ են հորինվում քերթվածի ռուբր տողերը: Դարձյալ՝ մեր հին մեծ բանաստեղծի երգերի մեջ կան երկուսը, որոնք ողված են մեծ տողերով, բայց Գրիգոր Մագիստրոսն է առաջին անգամ այդ բանեցնում վիպական գրվածքի համար և զարգացնում հանգով, Այդ ոտանավորը մի սովորական, ամենից երկար շարին է. տողը նորմալ ձևով կազմված է 16 վանկից, բաժանված չորս անգամի. չորս-չորս վանկերով (4+4+4+4), յամբական բարձրացող ութմով: Տողերի առաջին անգամները, սակայն, մեր հին բանաստեղծները մեծ մասամբ կազմում են 1—3 վանկերից, որոնք առանձնապես շեշտվելով երկարում և հավասարեցվում են չորս վանկի, այսպես, օրինակ, «Հաղարատողնանն» սկիզբը.

Մե՛ծ ե՛ց գո՛ծֆ / աստուածային, || ըոքանչելի / նորա քանին,
Հուշալի՛ / անպատժելին, || լամենայնի / զարժանային,
Այն որ նստի / յերկինս երկնից || ի բարձրութեան / սերորէին,
Լուսո՞վ / ինքնամատուց, || պարածածկնալ / անքնելին:
Լո՞յս / ինքն առաջին, || լուսոյ բերող / երկրորդ մասին:

Տողամիջի հատածն անհրաժեշտ է, բայց ոչ՝ սողամիջի ավելի հանգը, որ մեկ-մեկ, երբեմն և հաճախ, գործածում է Մագիստրոսը:

7. Մագիստրոս և Պետրոս Գևորգյանը:—Մեր այս գրողը մի քերթված ունի՝ ուղղած առ Արշարունի Պետրոս կաթողիկոսը՝ «Յաղագս խաչանշան զաւաղանին զոր ընծայեաց տնառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի, տաացեալ խորհուրդ խաչինս: Սրա վերջում նա իրեն հատուկ մասի լեզվով մանրամասն քացատրում է այս ոտանավորի կազմությունը և՛ ոտքերի, և՛ հանգերի վերաբերմամբ. «Հանգներգութիւնս այս... տաղ է հոմերական քաջ ոլորեալ, և սա ամբողջ դիցազնակուն լատիարեանս բոստ ըլլեանացուցնա: Վերջը նա ավելացնում է, թե դա ամենի տեսութեան ունի պէտտ, և որք ոչն են հետևեալ տրամախոհութեանս՝ այս մեծի լողողութեանս, զոր հագիւ հազ որ կարասցէ ներուշեղապոյնս տունել, մի՛ այսմ

11 Մ. Արեղամ, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1933, էջ 206 և հետև.

հետևանքի ճանարանիքս։ Եվ ապա դիմելով կաթողիկոսին՝ կցում է. «Այլ քեզ որ ժայրագդոյնդ ես լույս, և դամպարափալը ջահազատութեամբ պայծառաւորեալ և շտապարեալ, որ քեզն հետինն շտապալը շտապը. այլ ինչ յայտնի է։ Վասն դի ըստ սրովքէականն գերունակութեան՝ մակալատական հեղուկն ի ստորակայանայն առ ի ժայրագդոյն տարիւոյն դիտեցի, սապէս և քն ի քո հաստատեցալ հօտ։ Ողջ լին, փոխան Քրիստոսիքս։ Թվում է, թե Պաշլավունի իշխանը քիզանդական հաճոյախոսութիւն է անում։ Նա այդ կաթողիկոսին ուղղած թվում ինը թղթերի մէջ ևս շափազանց բարձրացնում է նրան, ինչպէս նրանում է, այդ հոգեւոր պետը ոսկնախրոսթիան հետ նաև գիտուն և ուսումնասեր է նղել։ դրա համար և Մադիստորոք միշտ ատանձին տրո՞ւմ ու հարգանքով է վերաբերվել նրան. «Որ ամենայնի ես քաւական, — գրում է նա մի Թղթի մէջ (Ա, 3), — և զանապաւն հեղուա գիտութիւն և շնորհա։ Այս կաթողիկոսը նղել է նաև հոգեւոր երգիչ. շարականոցներ ձեռագիրները նրան վերագրում են մի շարք շարականներ. «Պետրոս Գնտաղարձ»՝ զԼանգստեան ջարականան, զՄարտիրոսացն, և զբաղումս ի Մանկտեացն (ստաց)»¹²։ Այս ավանգութիւնն անշուշտ միայն այն ունի պատմական, որ այդ բազմաթիւ երգերի մէջ կան նաև նրա հորինածները, թե որոնք՝ այդ մենք այժմ շնք կարող իմանալ։ Այդ կաթողիկոսը, որ բռնելով հուլաների կողմը՝ բարի համբավ լի թուել Անին բիղանդացիներին հանձնելու պատմութեան մէջ, այս քաղաքի անկումից հետո օտրիպված էր մինչև կյանքի վերջը տարագրի մնալու իր հայրենիքից, նախ քան թիպանդան կուսակալներ չորսմանով այս ու այն կողմ տարվելու, և ապա Կ. Պոլսում ու Սերաստիայում ավազելու իրեն պատվավոր կալանավոր կյանքի վերջում նա դառն փորձով զգացել է իր աշխարհային մեծութեան ու փարթաւութեան ունկնդրութիւնը։

Հանգստյան շարականները մասամբ համապատասխանում են նրա այդ անձնական վիճակին, բայց շատ ընդհանուր ձևով¹³։

Ունի եղեալս անպիտանացայ,
Գեղեցկալարմար շինուածոյս քակտումն.
Իմաստունս չիմարեցալ
Ի յալեաց մեղաց յոր ընկղմեցալ...
Կուղն եհաս վերին կոչողին,
Կուչատէրն ահեղ, կուղն ահաւոր.
Դատաւորն անալառ, դատաստանն արդար,
Հրնշտակն անողորմ դատեն զմեղաւորս¹⁴։

Ուրիշ երգի մէջ քերթողը ննչեցլալի բերանով ասում է¹⁵։

¹² Եւրափան հոգեւոր երգաց, էջ 210-211, 1867, էջ 8։

¹³ Կ. Կատարեանց, Տնք Պետրոս Գնտաղարձ, էջ 47 և հմե.։

¹⁴ Եւրափան հոգեւոր երգաց, էջ 884։

¹⁵ Անգ, էջ 680։

Պակասեցաւ յաղագստո՞ւմէ,
էքեալ թողի զկենսա աշխարհի.
Եւ մարմին տնայնութեան
Գարձաւ ի հող ուստի ասեղծաւ:

Գրիգոր Մագիստրոսն էլ հորինել է մի հոգեւոր երգ՝ «Զոքս ըստ պատ-
կերի քում ասեղծեալ»¹⁶:

6. Մագիստրոս և Վահրամ—Գրիգոր Վկայաւոր:—Ավելի կարեւոր է
իր որդի Վահրամին ուղղած նրա մի ոտանավոր գրվածքը (ՁԳ, էջ 234.
«Լուսա թէ եկեա...»). որի մէջ առաջին անգամ կիրառված է մեր 14-վան-
կանի (4+3||4+3) լսվիւր, որ բավական սիրված է 18-րդ դարում և
հետո¹⁷:

Այս քեզ Բէլայն հաս հանդէս և Թորգմաննն շայկայ,
Ահապարեա և փութա՛, զի ես Կաղմեանն Արամեան:

Ոտանավորները վերջում հայրը դիմելով իր որդուն՝ գրում է. «Ազե՛-
առ ընթերցի՛ր զարհեստ ոտանաւորացդ. դիւցաղնական է տաղդ, քաղ
ոլորեալ, և տաղ պղպղուն, ոգուն և զեղուն, նուակի վանկեք շարականաւ...
իբր առ մանկականն քեզ կամեցաւ յրատակ վճիտ շարագրել զայստեիկ,
դի մի՛ անկարելի ոմանց թուեցեալ, արտավազիկ արշաւանօք փախիցն.
այլ գիրաւուր եղեալ թերեւ լսիցնն. դի սովորեալ կաթին, կարացն զկե-
սյսր զմերս փութացուցանել քանաստեղծութիւնս, զի զկատարեալն կե-
րակուր ասցուք իբր զքաղ խոհանքը»:

Գրիգոր Մագիստրոսի դիտավորութիւնն է եղել, որեմն, իր որդուն
և ուրիշներին մի օրինակ տալ, որպեսզի նրանք իրեն հետեւեով դարգաց-
նեն մեր լսվածք բանաստեղծութիւնը: Նրա որդի Վահրամից, սակայն,
չեն մնացել լսվածք երկեր: Մագիստրոսի մի գրութիւնից՝ «Առ վնստն
Վահրամ որդին իւր»՝ իմանում ենք, որ նա իր որդուն նույնպիսի ուսում
է տվել, ինչպիսին ինքն առել է պատանեկան հասակում. «Յատուիկնցի
կըթմունսն, մինչ տակաւին յանտիական տիս հասեալ, ի տէրունեան ճե-
մարանին զարգանաւ... Առաջանութիւն Պիթագորեան և Պղատոնա-
կան և Ստագիրաւոյն [= Արիստոտելի] իբրու զատինս դիեցեալ, մինչ ի
տարերս տակաւին տարբերէիր, տնայացեալ ըզձայի քեզ արբուցանել
անգանդաղ... և փոխարէնս հայցեմ ի քէն զաւանդութիւնն մեր ոչ մոռա-
նալ երբէք և զփոյթ սիրոյն առ Քրիստոս աստուած մեր և զդոյս ճարպի
նախնոյն մերոյ ոչ շիջուցանել, զՊարթևին ասեմ քոյոյ հաւուռ» (ՁԳ, էջ
235 և հտն.):

Հոր մահից հետո Վահրամը նշանակվում է հոր հաջորդ՝ Միլադեա-
թի, Տարոնի և մյուս մարզերի կուսակալ: Քայց նրա մէջ կրոնական ոգին

¹⁶ Անթ. Գ. Զեմ.

¹⁷ Մ. Արեւելոյ, Հայօք լեզվի տաղանդավորութեան, էջ 234 և հտն.:

ավելի զորեղ էր. ուստի նա պաշտոնը թողնելով բաժանվում է կնոջից և դառնում կրոնավոր՝ Գրիգոր անունով: Ապա նրան, հակառակ իր կամքի՝ 1065 թ. ընտրում են կաթողիկոս. բայց նա երկար չի գրադվում կաթողիկոսական գործերով, այլ ուրիշներին թողնելով իր պաշտոնը վարել, ինքը պարապում է գրական գործունեությամբ: Նա գնալով Կ. Պոլիս, Եգիպտոս և Պաղեստին՝ հավաքում և հունարենից ու ասորերենից հայերեն թարգմանում է կամ թարգմանել է տալիս հատկապես վկայաբանություններ, դրա համար կոչվում Գրիգոր Վկայասեր: Մինչև կյանքի վերջը (վախճ. 1105 թ.) նա շարունակում է իր սիրած գործը՝ թարգմանելով կամ թարգմանել տալով նաև ճառեր ու մեկնություն:

Երկրորդ Մեսրոպ մեկ երևեալ,
Ջգիրըս թագումըս թարգմանեալ,
Առ ի Յունաց և լԱսորաց
Ճառքս սրբոց վերաբերեալս,—

այսպես է գրում՝ ներսես Շնորհալիկ նրա մասին իր Եվկայասանութեանն մեջ 1121 թվին:

Այսպես՝ նա, Վահրամը թնայտեալ բանաստեղծ լի դառնում, ինչպես կցանկար իր հայրը, բայց շանացել է լրացնել մեր վկայաբանական թարգմանական գրականություն թերին: Նրանից առաջ և հետո ուրիշներն էլ աշխատել են նույն գործի վրա. թե հատկապես ո՞ր վկայաբանություններն է նա թարգմանել՝ այդ հայտնի չէ:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՆԵՐՏՅԻ

1. ԸՈՊԾԱՑՈՒՐ ՂԵՐԽՈՒՆԸ:— Գրիգոր Նարեկացու Ողբերգության հրատարակությունից մի քան տարի անգամ շանցած՝ սելջուկյան թուրքերը սկսում են հրոսել Հայաստան: Նրանք քանդում, հրդեհում են ամեն ինչ: Շուտով հայոց թաղամթիվ իշխանությունները միմյանց ետևից կործանվում են: Նրանք փոխանակ միահամուռ ուժերով դեմ դնելու արտաքին թշնամիներին, պառակտված են մնում: Մյուս կողմից թիզանդական կայսրները հետզհետե ընդարձակում են իրենց իշխանությունը Հայաստանում, տիրելով Վասպուրականին, Անու թագավորությանը և ուրիշ կողմերի: Նրանք, փոխանակ հին կայսրներին հետևելով՝ երկրի պաշտպանությունը թողնելու տեղական իշխանություններին՝ իրենց նշանակած սպարապետի գլխավորությամբ, անմիտ քաղաքականությունից զերկալ արևմուտք, Փոքր Ասիա և Միջագետք են հեռացնում հայ ազնվականությունը, որ կովոջ տարրն էր, երկիրը թողնում են առանց պաշտպանության սելջուկյան վայրենի հրոսակների դիմաց: Սրանք առնում, սրի մատնում, ավերում են Արծն, Անի, Կարս, Մելիտեն և այլ հարուստ ու շահաստան քաղաքները. իրենց արշավանքները և ասպատակությունները կրկնում են պարբերաբար: Հայաստանի ընակչությունը կոտորվելով և

գիտելուով ու սոցիալիստիկայով պահպանում է: Ունչւանում է քաղաքացու-
թյունը կամ ազնվականութիւնն հետ երկրից դուրս է հալածվում, ցրվում:
Հենց այդ շրջանում սկիզբն է առնում հայ ազգի երկար դարեր տեղի հղե-
րական վիճակը՝ տառապելու ու ցրվելու թնիկ երկրից դուրս՝ Եգիպտոս՝ ոչ սուր
սատակնաք՝ ցրուհեան զօրէն մոլորական աստիճանք¹⁸,—գրում է Արիս-
տակես Լաստիվիքոսցին: Բիզանդական տիրապետութիւնը և սելջուկյան-
նճրի արշավանքները տականութեան անում Հայաստանը, և նոր քա-
ղաքակրթվող երկիրը հա է ընկնում: Երկիրը հանգստութիւն չի ունենում:
Ավերվում են առանձնապէս երկրի հարավային կողմերը և կենտրոնական
մասը, որ ծաղկում էր առումն ու գիտութիւնը: Այստեղ կազմվում են
մահմեդական իշխանութիւններ: Ավերմունքները շարունակվում են,
մինչև որ թուրքերը Արիստակես Թադաւորի օրով տիրում են Հայաստանին
և գիւնում գնալի Փոքր Ասիա:

Անշուշտ ոչ բոլոր վայրերը Հայաստանում միաժամանակ ենթակա
են հղել լիովին ավերման: Ուսումնառումը քաղաքացիական ասպատակ են
զտնում պահպան կուլտուրական վայրերի վանքերում, հլուսօրհային և
արեւելյան Հայաստանի անստատակառ, ավերի պաշտպանված լնտներ
վրա, որ մնում են հայ իշխանութիւններ, ինչպէս և հնապիր Սև լեռների
անապատներում, հետագայում նաև կիլիկիայում, որ կազմվում է մի
նոր հայ իշխանութիւն: Այդ վայրերում էլ ազնվականներն անընդհատ
կոլովներով մեջ լինելով՝ միջոց լուսնին ուսման վրա մտածելու: Աստի
գրականութիւնը մնում է դարձյալ մանաշնորհ վանականների: Իսկ սը-
րանք պարապում են դավանական վեճերով, մեկնութիւններով, ներքող-
ներով կամ ժողովում ու թարգմանում են, ինչպէս տեսանք, վկայաբա-
նութիւններ ու հատեր: Հայ կյանքը չի շարունակում իր բնական շարժում
արագ առաջ ընթանալու: Քաղաքական հանգստանքներն այնպէս շուտ են
տակիս ամեն շինարարական գործ, որ աշող սկսված մտավոր շարժումն
ու փոխված ոգին շուտով չեն զարգացնում մի նոր տեսակի փայլուն գրա-
կանութիւն: Առանձնապէս բանաստեղծութիւնը դադարում է արվեստա-
վոր զարգացումից, և մինչ ասպսել էր, որ հողերը զօրեղ քնարերգու-
թիւնից հետո ծաղկեր վիպական բանաստեղծութիւն, բարդապաշտ մի
նոր կենսութեամբ բանաստեղծութիւն, մենք երկար տասնամյակներում
ուրիշ չենք գտնում: Ժողովրդական ու գուսանական սիրո ու պարի երգը
չի քարձրանում իր բնական դրութիւնից: զոնն մինչև այժմ հայտնի չեն
հղել Գրիգոր աշխարհականի կամ հոգեւորականի հորինած այդպիսի
երկեր:

2. Պատմագրութիւնը:—Այս աղետալ շրջանի կտրեւոր երկը Արիս-
տակես Լաստիվիքոսը պատմութիւնն է: Կենսագրական տեղե-

¹⁸ Ար. Լաստիվիքոսի, Պատմութիւն, էջ 1—2:

¹⁹ «Պատմութիւն Արիստակեսի վարդապետի Լաստիվիքոսի վրան անցնող անցնող
ի լալլապետն ազգաց օրը շուրջ զմեզ ենք, Թիֆլիս, 1812:

կոսթյումներ շունենք այս հնդինական մասին: Պետք է կարծել, թե Լաստի-վերտը, որտեղացի է նա, գտնվել է Կարին զավառի Արծն քաղաքի մոտերը, քանի որ նա դրա համար գրում է լեռնաշղթա մերձ²⁰: Իր գրքից իմանում ենք, որ նա ապրել է 11-րդ դարում, զի նա իրեն ակնատես է դնում շատ զենքերի, այսպես, օրինակ, 1026 թ. Վասիլ կայսրի դեմ ծագած ապստամբությունից հետո է. Շղայս հալածանքի գիտնմ, և այլոք իմովզ տեսի²¹: Միաժամանակ լեռան վրա 1046 թ. տեղի ունեցած մեծ կոտորածի, ապա և Արծնի ավերման մասին գրում է. ռուս աշուք մերովք տեսած և ընդ փորձ լարեալն անցաք, դայն միայն գրեցաք²²: Պատմությունը սկսում է Տայքի Դավիթ Այուրապաղատի մահից հետո, երբ Վասիլ կայսր (Բարսեղ Բ, 976—1025 թ.) իր թագավորության ժամանակ հիմնադրեց Կարինը (976+25=1001 թ.) դալիս է տիրելու նրա կալվածներին, և ապա կայսրների հաջորդությունը պահելով վերջացնում է Ռոմանոս Դիոգենես կայսրի մահով 1071 թ., հիշում է և Ալիսալանի մահը 1072 թ.:

Նրա գրքից շատ կարևոր պատմական տեղեկություններ ենք ստանում Հայաստանի մասին այդ շրջանում, որի ընդհանուր դրությունը դժգոհությամբ վերնաշին, Ռուրի առիթներով էլ բերված են կարևոր նյութեր այս պատմագիրից: Այստեղ այսքանը միայն պետք է շեշտել, որ նա առանձնապես մանրամասն պատմում է հույների և սելջուկյան թուրքերի զավթանությունների մասին, նրանց կատարած քաղաքականությունն ու ավերածությունները, երկրի ամայացումը, ռուս իրեն պղծալիս գիշարանա՞ս՝ որք հանդիպին հօտի՞ որով ոչ քուցե՞ հույի, զի ոչ թէ իւրեանց կերովն միայն շատանան կոտորել, այլ զամենայն քանան, — ույնպէս և ի Պարսից ճկեալ գործն ոչ թէ աւարաւ յազնեային, այլ տնայազ քաղց մեղով ստատկմանն ունէին. զի զոր աշուք տեսանէին, անհնար էր նմա ի ձեռաց նոցա պրծանիլ, մեծ բարեգործութիւն հաշուելով զայն²³: Այսպես խիստ է բնորոշում Պատմիչը Նրանց զավթանությունները. նրանք լին բազմականանում, չլստ իւրեանց արիւնարքու բարուցն, մարդկանց կոտորելով, այլ սիրում են լարալար ստանել բոլորովին անմեղ մարդկանց: Բերենք այստեղ երկու օրինակ: Բնակ զթանձրամարմինսն և զհարստակողսն յերկիր ի զուէս արարեալ, և պարզեալ զձեռնն ի ցիցս վարեալա՞ ի գետինն պնդէին, և կորզեալ զմորթն եղնգամբքն հանդերձ յայսկոյս և յայնկոյս ընդ բազում և ընդ թիկունս մինչև ի ծայրս ձեռնն երկրորդի բռնաբար քարշեալ և հանեալ, լար աղնալանցն տնէին: Այս գրքից հետո բացառանում է Պատմագիրը. բնի, քանի՞ զառն է պատմութիւնս, և շարունակում է գրել ուրիշ նման եղանակագործությունների մասին. Բնակ զերի-

20 Անդ, Ժ, էջ 63:

21 Անդ, Գ, էջ 18:

22 Անդ, ԺԲ, էջ 85:

23 Անդ, ԺԸ, էջ 188:

ցանցն և զկրօնաւորացն ո՞ր լսելիք տանին զնորանշան շարին՝ զոր նո-
գատ կրօնքին զորոց ի կրօնքն ի վնր քերթեալ զմիտքս՝ տարեալ երեսօցն
Հանգերձ զգլխովն շրջէին, և այնպիսի դատն տանլանօք տանլեալ, յնստ
ապա սպանանէին. որ քան զայս զի՞նչ այլ ոք դառն և անհնարին տան-
լանս իմանայցէ. որ ի սրբոց վկայութիւնս շերտի ուրեք եղնայն²⁴,

Բարի մարդը շի կարողանում և ևրեակայել անդամ, քն այդպիսի անա-
սիքի լարարանքներ կարելի է տալ մարդկանց: Նստ շի կարողանում և
այն Հասկանալ, որ ժողովուրդները երկար տարիներով ապրին միմյանց
մոտ և շարեակամանան իրար հետ, նվ հիմն այդպէս շի եղել, դրա պատ-
ճառը ոչ քն արդեն մեղմարարտ Հայերն են եղել, այլ արշունուշտ խուժա-
ղութները, որոնք մինչև վերջը շարունակել են մնալ նոյնը: Զի ոչ մի օր,
կամ միայն ժամանակի Հանդիպեցած անդորրութեան կամ դիրքութեան,—
զորով է նա,—այլ ամենայն ժամանակ ատուրք մերոց շի եղն խոտվու-
թեամբ և նեղութեամբ. և օր ըստ օրէ յաւելոյր ևս ի շարլարանն և ի տա-
ռապանն: Սե ոչ ոք ի նոցանէ քարեմիտ եղն առ մեզ. քէպէտ և քաղում
ամօք քնակեցան առ մեզ. ոչ արգելաւ սրտմտութիւն նոցա որպէս իժի, և
ոչ եղն յագումն ազաճութեան նոցա իրրն հրոյ. զի ամենայն խորհուրդք
նոցա որ վասն մեր՝ ի շարութեան են, և քանք նոցա՝ շի նենգութեամբ:
Վասն զի ամենայն նոցա ամենեւեմ նորագոյն սկիզբն շարեաց առնէին. զի այն
էր խորհուրդ նոցա ամենեցուն՝ մաշել և սպանել զմեզ իրրն զհնգեալ
Աործս, և քանուալ զիշխատակս մեր ի միջոյ իւրեանց, զի բնա մի՛ Հայնս-
ցին և տեսցին զմեզ կենդանիս. այլ եղիցին զերեզելք մեր անհետ ի
ներքոյ ոտից նոցա:—Ահա՛ այն եղրակացութիւնը, որին հանգում է
Պատմագիրն այդ քաղաքոսների բնավորութեան վերաբերմամբ:

Իսկ հայերի վրեժակը. Մերս ծանրագոյն և առաւելագոյն է քան զա-
մենեանն, անթաղաւոր և անիշխան, տնտէրունչ և անվերականգն՝ ըստ
հոգւոյ և ըստ մարմնոյ, և ոչ գոյ մի տեղի ապաստանի գտանել մեղ. այլ
նուազեալ հնազանդեալ եմք ի ներքոյ քաղաւորութեան հիմնաքանց կալ,
և զաստիկ հարուած գաւազանի նոցա օր ըստ օրէ ընդունել: Նվ այսպէս
մինչև Պատմութեան վերջին տարին, 1072 թվականը:

Պակաս քաղաքապետար շէին վարվում և հույները: Ահա քն ի՞նչ է
զորս նա Վասիլ կայսրի հրամանով 1025 թ. կատարվածների մասին.
«Քաղաւորն ընդ կողմանս աշխարհին զորս առաքէ, ասպատակ արձակէ,
պատուէր տալ մեծասաստ հրամանաւ՝ մի՛ ողորմիլ ծերոյն և մի՛ երիտա-
սարդին, մի՛ տղային և մի՛ հասակաւ կատարելուն, մի՛ առն, և մի՛ կնոջ,
և մի՛ ամենեւին ամենայն հասակն: Եւ այսու ձեռնարկութեամբ, քանդեալ
ապականէ դաւառս երկոտասան: Յորս էր տեսանել տեսութիւն ողորմելի
և քաղում արտատուտց արժանի. քանզի քաղաքեմեղուն ապարանց ար-
քունական տաճարաց՝ որք մեծամեծ ծախիւք և հնարագորտութեամբ նար-
տարաց՝ ի սքանչանս տեսողաց և ի վայելս ուրախութեան բնակողացն

²⁴ Անդ, ԺԸ, էջ 128 և հետ.

շինեալ էին հրայրեացի անկնալ կործանեցան, և որք նոցին տեարքն՝ առ նմին սրահկոտորը Աւաղ պատմութեանս, ամաղ լար արարուածին. զիսա՞ր կարացիք իս աղքատս գիտութեամբ և տխմարս քան դամենեանան ընդ գրով արկանել զայն ժամու զլեալան, և կամ ողբալ ըստ արժանեան զմեր քշուառութիւնս²⁶։ Եվ այսպէս հունական քանակը, որ իր զազանութեամբ քնալ էտ լէր մնում թուրքերից։

8. Աշխարհայեցութիւնը։— Լատիվներացին լատիւզանցութեան և հասցրել նախորդ պատմագիրներին մի ռեական հասկնութիւնը. շունի հաճախ ինքնուրույնութիւնը. Բնականաբար նա նա աղղկած է մեր հին մատենագիրներից, բայց այդ այնքան էլ ողբալի չէ։ Զատիւզանց և Աստվածաշնչի աղղկցութիւնը. Կարելի է ասել, որ ներշնչւած է մարգարեական գրքերից և երբեմն դրանցից է առնում իր գրութեան ուժը։ Երբեմն էլ նա որն է անցընել արաբագրելիս բնորում է Ս. Գրքից ամբողջ հատվածներ՝ հարմարեցնելով այն իր պատմած եղելութեանը և միշտ իսկ՝ ինչ որ մարգարեներն ասել են նորայեցիկների համար՝ համարում է հայ ազգի համար, և ժեր ժողովրդի գլխին եկած թշվառութիւնները հասկնում է իրեն կատարումն հրեական մարգարեների կանխատեսութիւնների. Բայց պետք չէ նրան այնքան միամիտ կարծել, թէ հին հրեական ժողովուրդը և հայ ազգը զիտթեր միմյանց հետ։ Այդ իսկապէս միայն մի արտաքին ձև է, որի մէջ նա միշտ նկատի ունի ներքինը, որ է հայ ժողովրդի իրական վիճակը և աստուծու կամքը։ Իրեն իր գործի զաւակն ու վտարագետ, ամեն պատմական դեպք նա համարում է աստվածային կամքի արտահայտութիւն։

Մինչ ապաստւմ ենք, որ 11-րդ դարում երեան գար համեմատաբար ընդարձակ աշխարհայացք, հակառակն ենք գտնում. Եղելութիւնների իրական պատճառների քննութիւն չկա։ Մարդկանց ժիւղը ճնշւած էր հատեհ ետև արագ վրա հասնող աղետների ժանրութեամբ. ժամանակի ազգային շարաքառատիկ վիճակն ասիպում էր նրանց նորից ետ դառնալ, կրօնի մէջ գտնել միտթարութիւն, և իրենց դժբախտ կյանքի բացատրութիւնն ու ելքը որոնել։ Առաջին հարցը, որ տալիս էին մտածողները, այս էր. ինչո՞ւ են գալիս մեր գլխին այս աղետները։ Ժայիքը, որ այնքան քարեպաշտ էին, այնքան եկեղեցիներ ու վանքեր էին շինել աստուծու փառքի համար, ինչո՞ւ են տառապում թուրքերի հեղքին։— Գտնաւորաւ գտնելը դժվար չէր՝ հին մատենագիրներն արդեն պատրաստել էին այն պատգաւաբարը, որ եղել է հին հրեաների և իսրայր քրիստոնյաների մէջ. — Թէ մարդիկ մեղք են գործում, և աստված նրանց պատժում է իրենց մեղքի համար։ Նա, Լատիվներացին էլ, ամեն թշվառութիւն համարում է աստվածային պատիժ մեղքի համար։ Բացի մեղքից՝ նրա համար էլ ուրիշ պատճառ չկա սելուկներին և հույների զազանութիւնների համար։ Զայն ամենայն յաղագս այնորիկ եղած, զի ընթերցիք և դիտասցիք, իմէ մեղքն

26 Անգ. Բ. էջ 13 և հետև.

եղև այս ամենայնի պատճառ որ անց ընդ մեզ գի հայեցեալ ընդ մեզ՝
դարձուրեալից երկնիւն յնրեանց տեառն և դողալ յահէ՛ զբոլորեան նորա.
կանխէլ յառաջագոյն խոստովանութեամբ և անպաշխարեօքեալքս, — ահա՛
դժբախտ եղեւությունների միակ պատճառն ու ելքը և իր երկի նպատակը,
որ նա շնչեալով է իր գրքի վերջում և որ հաճախ կրկնուի է նա գրքի մեջ
իբրև պատգամ, խորին համոզմունքով, վճռաբար, իբրև մի մարգարե:

Այդպէս խոսում է նա իբրև մեկնաբան և բարոյախոս վարդապետ,
մեղք և անպաշխարել, մեղքը լալ փրկութեան համար: Կարծես դա հին բա-
նաստեղծութեան, անպաշխարութեան շարականներին և Գրիգոր Նարեկացու
Ողբերգութեան իշխող գաղափարն է: Բայց այդ ըստ նրանույթին միայն
նույնն է: Մեղք և անպաշխարել, նմանութեանը միայն այսպէսն է. որա-
նից զմեն արդեն դալիս է նոր ոգին: Մինչև հիմա մեղավորն էր անհատ
մարդը, նա լալիս էր իր սեփական անձնական մեղքը. մինչև հիմա միս-
տիկ ճշմարտորենն ու նրանց արտահայտիչ բանաստեղծը ողբում էին ան-
հատական մեղքը: Հիմա մեղավոր է ազգը, նա՛ պետք է անպաշխարել, Ան-
հատն անպաշխարում էր մարմինը տանելով. դրանով նա ձգտում էր զրտ-
նելու իր հագու փրկութեանը, որ մահից հետո հանդերձալ կյանքում էր
լինելու աստուծու հետ միացումով: Իսկ Արիստակէս Լաստիվերտցու հա-
մար այդպիսի բան չկա. նա հեռու է միստիցիզմից: Այստեղ անպաշխա-
րութեանը քարոզչութիւն է տանջանքից ազատելու և ազգի փրկութեան հա-
մար, որ այս աշխարհում պիտի լինի, այն էլ ոչ թէ մարմինը մոռցնելով,
այլ բարձրի մարտնչութեամբ, կյանքի բարոյական կարգավորութեամբ:

Եթէ միստիկ ճշմարտորեն համար աշխարհի վրա մտածելն անգամ
մեղք էր, Լաստիվերտցին չի մերժում աշխարհը և նույնիսկ հարստու-
թեանը հարկավոր է համարում: Բայց ամենայն հարստութեան պիտի
ծառայի բարի նպատակներին և ձեռք բերելի արդարութեամբ և իրավուն-
քով, առանց վաշխի ու տոկոսիցի: Առաջ այսպէս էր, — գրում է նա իր
հայրենի Արծն քաղաքի համար, — ուստի սամենայն ինչ ըստ մտի էր սո-
րառ: Բայց կյանքը փոխվում է. սկսում են հարստութեան գիշը միայն
իրենց վայելելի համար, փարթամ ապրելու, ճոխ հագնելու և զարդար-
վելու նամար, իշխաններն ու վաճառականները գտնում են գողերի գո-
ղակից, կաշառառու, վաշխառու, խաբեբա, գրկող, շահախնդիր, նրանք
հզօմեում և ամբարտաւորեալեում են: Այդպէս և սոմարն Անի և որ շուրջ
զնովաւ դստերը իւր՝ առաւել յամբարտաւանութեան կրթեալ՝ ընդդէմ երկ-
նից կայքս հարկանէին, Տքաղաք՝ որ զմեզս իւր ի կատարումն լրի իւրով
ունէր:

Այդ քաղաքի բեռնիկները թշնամիներն զմ հայս են զնում իրենց
ամուր պարիսպների և անմատչելի աշտարակների վրա, մոռանալով, ոգի
սրբութիւնն է ամբողջին, և պարիսպ՝ ընտիր քրոջն աստուածապաշտու-
թեան: Եվ ահա 1064 թ. Պարսից թագավորը բազմաթիւ սպառազնեանե-
րով դալիս, պաշարում, առնում է այդ քաղաքը, կոտորում է բնակիչնե-
րին. «Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նմա զործելոցն արշուրեքաւ:

քարձորաշէն և գեղեցկայարմար ապարանքն, և եղև ամենայն բնակութիւնն իբրև հողաբարձր։ Ե վաշխն և նենգութիւնն որ ի նմա՝ խափանեցաւ։— դրու՞մ է լաստիվներոցին և ավելացնում։ ԵԱյս է քաթին անխրա ճաղաքաց, որ շինեն զինքնանս արեամբ օտարաց, և ի քրտանց տնանկաց փարթա՞մանան, և ի վաշխից և յանխրատութեանց զտունս իրենանց ամբաջուցանեն։ Ե ինքեանք զմիտս իրենանց անողորմ ունելով առ աղքատս և տնանկըս՝ միայն հնչտութեան և փափկութեան սպասեն, և ի գործոց արտեղութեան ո՛չ խորշին, այլ միայն արքանալ լինին ի ցանկութեանցն, որ զնոսա ըմբոսնայ ունիւ²⁶։ Այսպէս՝ թնայետ կրոնական ձևի տակ, բայց արդեն ընդարձակութեմ է Արիտական և աստիվներոցու պատմաբանացը։ Ազգի ուժը իր ներքին բարոյականութեան մեջ է։ Եթէ չկա այդ ներքին ուժը, ինչքան էլ նա փարթածացած լինի, պարթապներով և աշտարակներով ամբաջացած շեն քաղաքներով հարուստ, նա անխրատափելի պիտի ընկնի, ինչպէս Անին, որի համար դրու՞մ է, թե Վերկ տէր ի մէջ պահապանաց և իշխանացն երկպառակութիւն և անմիարանութիւն ամբոսումն և բաժանումն։ Ե անդէն թողնալ զգործ պատերազմին՝ ի փախուստ դարձան։ Եվ այլապէս շէին կարող վարվել բարքերի ապականութեան ժամանակ հնչտասեր, ցովի ու թուլամորթ մարդիկ։ Ապաշխարել, ուրեմն, ըստ լաստիվներոցու չի նշանակում ուրանալ աշխարհը, ուրախ ու երջանիկ կանք չլսարել, ապրել ինչպէս մի ճգնաժամ, այլ մեծացնել ներքին բարոյական ուժը և դրանով միայն հնարավորութեան ունենալ պատերազմելու արտասին թշնամիներին դնմ և փրկվելու։

4. Աշխարհասիրություն և հայրենասիրություն։— Աշխարհն արդեն ստացել էր արժեք այն աստիճանի, որ նույնիսկ այդ կրօնասեր մարդը, սգաւոր պատմիչ և աստիվներոցին, խորին սիրով սիրում է այն, սիրում է իր հայրենիքի անդատասանները, մշակած դաշտերը, շինանիստ ամասներն իրենց քարձորաձողուն ու մեծամեծ ցանկալի տներով, ժողովրդի քարելից կյանքը, ուրախ-զվարթ աշխատանքը, կատարած ուրախութեանները, երգներն ու պարերը, թագաւորն իր փառաւորութեամբ, գործերն ու կռիւլները, որոնք կային մի ժամանակ և չկան այլեւ։ Ուստի այժմ, ասում է նա, յեղդըս փոխեցաւ մեզ ամենայն։ Այս աշխարհասիրութիւնից է, որ նա համախ կրոնական ձևի տակ, բայց իսկապէս մեր աշխարհիկ կյանքի դժբախտութեան ողբերգուն է դառնում։

ԵԱյնպէս՝ որ երբեմն ժամանակաւ իբրև զգրախոս տնկախիտ առաջի իւր, կանաչաքող, տներալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւորացն ցուցանիր. քանզի իշխանք նստէին յիշխանական զահու զուարթահայաց դիմօք, և զգարնանաբեր ծաղկանոցաց բոնեալ զնմանութիւն՝ վառ ի վառ գունովց առաջի կացեալք, ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք. ուր և ձայնք փողոցն և ծնծալիցն և այլ նրգեցողական արուեստիցն դասողացն անձինս լի առնէին ուրախական

²⁶ Անց. ԲԳ, էջ 168 և հետ։

բերկրանոց, Անդամոսը և ժերք նստելին ի հրապարակս հարկնոր և պատուական արժեք բարգասաւնալ։ այլ և մարք զմանկունս ի գիրկս ընկանալ, և մայրենի գթովքն աղէխարշնալ, վասն առատ ուրախութեանցն մոռանային զտխարկան ժամանակս ճրկանց։ զօրէն աղանձաց զնորասիրտուր ձագօքն միշտ թոթոնելով։ Զի՞նչ ասացից և զհարսանցն ի սենեկի, և զփնայիցն յառապաստի զսիրահարուստ ըզժիցն զբորբոքումն և զանժոյժ քնութեանն զհանգամիտութիւն...

Արդ այժմ թագաւորն անկնալ ի պատուոյ, իբրն զգերի կաշանաւոր նստի ի հեռարնակ տեղիս։ այսպէս և հայրապետական ամբիստն արժանացնալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր գիմօք իբրն զգին նորահարսն՝ մեացնալ յայրիութեան։ Հեծելազօրն անտէրունչ շրջնալ ոմն ի Պարս և ոմն ի Յոյսն, և ոմն ի Վիրս։ Սեպուհ գունդն ազատաց ելնալ ի հայրենեաց, անկնալ ի ճոխութենէ, մոնլին ուր և են իբրն զկործին աղիւծուցն ի խըշտիս իւրեանց։ Արքունական ապարանքն աւերակ և անսարգի։ Մարդարնակ աշխարհն թափուր ի բնակչացն։ Ոչ լսի ձայն ուրախութեան ի կութս այգեաց և ոչ բարեբալնութիւն տա կոխօղս հնձանի։ Ոչ խաղան մանկունք ասալի ծնողացն, և ոչ նստին ամբոսով ժերք ի հրապարակս։ Ոչ լսի ձայն հարսանեաց, և ոչ զարգարին անաղաստք հարսնաւարանին։

Ինչպես որ զորովագումթ մայրն իր մահացած որդու բարեմասնութիւնների զոմքն անելով՝ աղիւղորմ ողորմ է նրա մահը և նորինորոտ սրտատառչոր հեծկիւտւմ է, որովհետև սիրում է որդուն, նուրնպես և այս բանաստեղծ պատմիլը։ Եթե նա շարունակ դառնակեցի՞ծ սրտով զոմքն է անում ամբողջած Հայաստանի անցած կյանքի, այդ նրանից է, որ նա սիրում է այն ամենը, ինչ որ վերհիշում է։

Քեզաս կատարած կենաց տանն Հայոց... աւերեցան զասաւրց և զքնացին յաւար տանն Յունաց։ Եղեն շինանիւտ ասանց բնակութիւն գաղանացը²⁷։— Կհա նրա որքերգութիւնն նյութը, նա Հայաստանի շեն և ուրախ կյանքի, շինանիւտ ավանների ու բարգաւաճ քաղաքների երգիչն է, միայն ոչ ցեծութեամբ ու բերկրանքով, այլ զատն վշտով ու հառաչանքով։ ոչ թե ուրախութեան երգ հորինելով, այլ որքերգութիւն։ Բայց նա ոչ թե աշխարհի ու կյանքի ունայնութիւնն ու տնչութիւնն է երգում, ինչպես Գրիգոր Նարեկացին իր Ողբերգութեան մեջ, այլ աշխարհի, Հայոց գեղեցիկ ու շեն աշխարհի ունչացումը։ Ունայնութեան գաղափարի եղալլ անգամ լի երևում նրա մեջ։ Ուրիշներն այն ամբողջութիւններին հետո կարող էին հանգել այդ գաղափարին, բայց կատարվորոցին հետո է զքրանից։ Նա սիրում է իրական կյանքը, միայն նա ցավում ու լալիս է լի ուզում, որ այդպես ամբողջ լիներ, և ցանկանում է, որ աշխարհը մնար իր նախկին դրութեան մեջ։ Ահա նրա վշտի ու հեծեծանքի աղբյուրը—աշխարհափրութիւն ու հայրենափրութիւն։

Ճ. Իրականութեամբ սրտախորդ պատկերը։— Կատարվորոցին ունայնուտ գրող է այն մտքով, որ նկատի ունի իրական կյանքը, նա իրական

գործության, հեղեղության ճշգրիտ վերարտադրությունն է անում, լինին թըշվառություն օրերը, թե փառավոր անցյալի ցանկալի շինարարությունը, աշխարհի մարգարտությունը, հարուստ քաղաքներն ու ավանները, նորանց քնակելիների ուրախ, բարեկից ու բարեպաշտ կենցաղը։ Այդ ամենը նա անդրադարձել է ոչ թե իբրև մի ձև, մի նմանություն, պատկերավոր արտահայտություն համար, և ոչ թե այլաբանորեն, այլ նպատակ ունենալով հենց իրականությունը ցուցադրել, պատկերացնել ընթերցողի առաջ։ Եվ նա կարողացել է իբրև բանաստեղծ տալ մեզ աչք, և տալ գեղեցիկ, պարզ ոճով, Աստվածաշնչի կարճ ու պատշաճ օրինակներով, բայց նյութին վաշելու ճղանակով, առանց մթնոլթյան, առանց պերճության և ուռուցիկ կուտակության, նրբամիտ անդրանիվ Ս. Գրքի և հին հեղինակների արտահայտության ձևերից։ Այս է նրա սեփական գործության ձևը։ Եթե դուրս թողնենք Ս. Գրքից բերած մեծ ու նրկալ ցիտատները և դատողությունները, նրա գրվածքը միանգամայն է՝ հաճելի է, և՛ խիստ ազդու, որովհետև նա լի հորինում սառն և անտարբեր, այլ միշտ զգացված, որով և համակում է ընթերցողին իր զգացմունքով։ Եթե նա նրբամիտ մեր առաջ չի էլ բաց անում իր հեղձամղձուկ սիրտը, բայց միշտ էլ զգալի է նրա խորին վիշտն իրականության համար։ Եվ այս նա հաղորդում է մեզ մեծ կենդանությանը, հորինելով սալորաբար նկարներ և նմանություններով, որոնց հաճախ շատ դիպուկ ու գեղեցիկ են։ Շատ բանաստեղծական և ուժեղ է, օրինակ, նրա արտահայտությունը, նոր նա Հայոց աշխարհի ամայացումը տալիս է աշխարհարարման վիճակի նմանությամբ և մեռելության ու կենդանության հակապատկերներով։

«Վա՛յ անուշայն, վա՛յ աշխարհանք խորհրդոյն, յորում կործանեալ ապականեցան բնակիչք նրկրի. քանզի դարձաւ յառաջին անգարդութիւնն ըստ աշխարհապատում բանին. օժրկիր, ասէ, էր ամայի և տնպատրաստ. վասն զի մարդ չէր որ գործէր զնրկիքս։ Զի զոր օրինակ գեղեցիկ դէմք առն՝ ի ծաղկի հասակի սիրուն և ցանկալի տեսողացն ցուցանի, իսկ յորժամ զարդարիլ հողին մահուամբ բաժանի ի նմանէ, յառաջին պայծառ և գեղեցիկ զարդուցն աճարկելի և անշուք ցուցանի տեսողացն, նաև գութն ընդ նմա հատանի. ըստ այնմ, թէ սկոռացեալ իղէ եռ սրպէս մեռեալ ի սրտէ. ըստ նմին օրինակի զնրկիր է տեսանել. զի յորժամ մարդաբնակ շինութեամբ հարստանայ, յայնժամ նրկբազործք առատութեամբ սերմամբ զանգատառն լեռն. որք յորժամ բուսանի, կանայազգի տնայեմբ զվայրսն վայելաքուցանեն, և բարձրաբերձ աճմամբ ի վեր ընձիւղին. և յորժամ զհասկիցն զկերպարանս ի գագաթունսն նրեկցուցանեն, յայնժամ քանձրախիտ բարձրութեամբն ամպածե տեսողացն ցուցանի, և ի քաղցրաշունչ օդոյն՝ ճուճի, ճնմի զօրէն ծովային ալիսաց. այսպէս և հօտք անդէժն արօտականաց ի հովիտս դալարաբեր բուսոց առ ցուրտ աղբերակամբք խայտան խաղան, և նրկիր իբրև զդայնակ՝ գեղեցիկ դիմօք դարդարի նոթօք, ըստ այնմ, եթէ ռնծասցեն դաշտը, և ամենայն որ է ի նուաճս։

Իսկ այժմ զնորին հակառակն տեսանեմք՝ երկիր անբազ, թափուր ի րնակէաց. քաղաքք կործանեալք, և անդաստանք խողանացեալք և փշաբերք, ահագին և դարհուրելի անցատորացն ցուցանի։ Նաև քաղցրածայն հաւաք տալով, որք մարդասէր բարոյիւք ընտանի գոլով մերային ազինեա, որ քաղցրանուագ եղանակօք զվայրսն հնէցեցանեն, և յառաւօտինսն ճոռական երգովք և բարձրածայն կարկաշիւք զերկրագործն ի ցնօյն զանդադանաց իբրն խթանաւ՝ դարթուցնալ, իրաքանիւր արուեստինց պատրաստարար յարդարէին. բայց այժմ շէնք տներակք ն ամալիք և անմարդիք, և Նոցա ոչ գոյր տեղի բնակութեան. զի ո՞ւր տառնդունքն ըսյն կատուցանեն, և ո՞ւր տէրք ի թուկոց ի նոստ ապաւինին ըստ սաղմոսին ձայնի. և կամ ուր ծիծառն զիւր վարանից բունիկն յարգարէ՝ աներկիւղ սեռացանել զստ ի յինքնեւէ ծննայեանս։

Ինչպէս կարելի է նկատել, բանաստեղծական նմանութիւններն այստեղ այնքան ընդարձակ են, որ կարող են նույնիսկ անկախ նկարագրիւնն դառնալ։ Դրանք, անցյալն ու ներկան, զրոյի իրեն ապրած իրականութիւնն անդրադարձումն են շատ պայծառ վերհիշումով։ Նրա մտքից շարունակ անբաժան է մեռւմ այն, թէ ո՞րքան լավ և ուրախ էր առաջ, և որքան վատ ու տխուր՝ հետո։

Սիւ նրա գրվածքի կենդանութեան գլխավոր դադանիքն այն է հենց, որ նա ապրած է իր գրածներին նյութը, և՛ ներքինի ուրախ, և՛ հետազայի տխուր իրականութիւնը։ Հենց զրանից էլ թխում է նրա լիրիզմը—քնարականութիւնը, որ անպակաս է։ Բերենք իբրեւ օրինակ մի հատված նրա ԺԱ գլխից. տեսնելու համար, թե ինչպէս է նա հորինում պատմվածքը.

Եի սոյն ամս քացաւ դուռն քարկութեան յնրկնից ի վերայ աշխարհիս մերոյ. և շարժեալ զօրք բազումք ի թուրքատանէ, որոց նիւկարք արագունք իբրեւ զարծուիս, և սմբակք նոցա իբրն զվէմս հաստատունք, աղեղունք լարեալք, և ալաքեալ նեւք նոցա, դուռնորեալք քաղապէս, և տելուծանելի ունելով զխրացա կօշկաց։ Սէ ելեալ ի գաւառն Վասպուրականի, յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրն զայլս քաղցեալս տեսաղանալս ի կերակրոյ. և եկեալ մինչև ի դաւառն Բասեն, և մինչև ի դաստակերտն մեծ, որ կոչի Վաղարշապատ, քանդեալ ազատկանցիկն դաւառս քան և չորս արով և հրով և գերութեամբ։ Ողորմագին և բազում ողբոց և արտասուաց արժանի է պատմութիւնս։ Որք իբրն զառիւծս ընթացեց, և իբրն կորիւն առիւծուց անողորմարար արկին զգիւնկունս քաղմաց գէշ զազանաց և թուկոց նրկնից. և կամէին այնու ձեռնարկութեամբ զալ ի քաղաքն կարնոյ։ Բայց որ ծովու ելլ օահման՝ ասելով՝ Եջալդ վայր եկեցեցս, մի ալլ մի՛ ևս յաւելուցուս, ալլ անդրէն ի քեզ խորտակեցիկն ալիք քոս, նա արկ զխաւար թանձրամած առայի նոցա, և արգել զնոսա լընթացի իւրեանցս։

Յ. Հայրենասիրական ողբերգությունը։— Այս սգավոր պատմիչը մի ուրույն տեղ է բռնում մեր պատմագրերի շարքի մեջ, նա իսկական

քնարերգու բանաստեղծ է՝ բայց գրել է պատմություն և գրել է ոչ թե՛ որևէ ուրիշ ինքրով կամ պատվերով, ինչպես Նախորդ պատմագիրներն առհասարակ, այլ ինքնաքերարար, իր տանջված սրտի զգացումները զնդելու պահանջից դրդված։ Դրա համար և նա շատ բան անտես է արել իր պատմության մեջ առնելու²⁶։ Ապրելով դառն ու դժնդակ ժամանակներում և լինելով շատ բաների ակտեսանես և անձամբ շրջից փորձ լարեացնա՝ անցած, նրա փափակ ու զգայուն սիրտը չի դիմանում իր տեսածներին ու լսածներին։ Նա չի կարողանում պաղարյունությամբ վերհիշել այն ավերներն ու կտառաթենքերը, որ արել են հույներն ու թուրքերը. սգում ու ողորում է, իր արտի խորքից հեծծելով ու թառանջելով իր դժբախտ հայրենիքի ու ժողովրդի համար, երբեմն նույնիսկ, ինչպես տեսանք, աղոթում է նրանց համար։ Եվ նա այդ ողբն անում է ոչ իբրև մի միասնիկ ճգնաժամի աշխարհից կտրվել կարողանալու համար, այլ իբրև մի հայրենասեր, որ սիրում է աշխարհը, Հայոց աշխարհը։ Յոված սրտով նա շարունակ ընդհատում է պատմությունը և արտասվալից ողբեր է հորինում։ Հակված նրա համար ողբն է։ Ըզնությունների պատմությունը հաճախ նրա համար է անում, որ ընթերցողին հասկանալի դարձնի իր ողբի նյութը։ Եվ այսպես վարվում է նա գիտակցաբար, առանց խորհելու, նպատակ դրած իրեն։ Նրա շնախերգանքն անգամ ոչ թե գաղափարան է, այլ մի ողբագին երգ է։

Ժամանեցին մեզ աուրք շարշարանաց,

Եւ գտին զմեզ նեղութիւնք անհնարինք.

Քանզի լցեալ չափ մեզաց մերոց,

Եւ ել աղաղակ մեր աւազի աստուծոյ...

Որոյ աղազաւ ազգք օտարածնաց

Ոտարացոցին զմեզ ի բնակութենէս մերմէ,

Եւ դարձան փառք մեր յապականութիւն։

Շուկ է մեզ ոչ մեաց։

Եւ կորեաց ի հատման յուսոյ մերոյ։

Ջօրացաւ մահ և եկուկ,

Եւ դժոխք շատ ասել ոչ կամեցան։

Ամենեցուն յարձակեցան ի մեզ ձեռք,

Եւ յանգման յաւուրս մեր ժամանակ ոչ ծանեաւ։

Ջմեացորդս պատահաին վճարմամբ անցելոց։

Յաջորդք ի հաջորդաց իրիսանակեցին,

Եւ նուազեաց արդին արծարծիլ շնոյ կենդանութեան։

Հաստատունք յաշխարհի ի պանդխտութեան իւրեանց։

Պանդխտեցան երկրորդ անգամ և եղան վտարանդիք...

... Զարթեան պատերազմունք ի շորից կողմանց։

ծարենելից սուր, յարեմտից սպանումն,
ի հիւսիսոյ հուր, և ի հարսուոյ մահ:
Բարձան որախտութիւնք յերկրէ,
լռեցին ձայնք քնարաց.
Լռեցին բոմբիւնք թրմրկաց,
Բարձրացան աղաղակք լալեաց:

Այսպէս որքերգելուց հետո կցում է. քնն աշտոյիկ աշտօան) Բայց
ժամ է մեզ ի գլուխս պատմութեանս ընթանալ, և աստի ոկիզքն առնել, որ-
պէս զի դիւրածան լիցի մեզ բանս, ալսինքն՝ հասկանալի լինի, թէ ին-
չու ինքը հենց սկզբում ողբում է: Ուրիշ անգամ⁸⁰ կոտորածների մասին
գրելուց հետո քաջականչում է. «Ո՛վ, քանի՜ դառն է պատմութիւնս և ող-
բոց արժանիք, և իսկույն, ողբալ սկսելուց առաջ, ամօնացնում է. «Ելլ
թե՛րևս որ մեղադիր լինիցի մեզ, թէ մինչև ցերբ զվշտաց և զնեղութեանց
արկանես առաջի մեր զրոյցս: Ապա իրեն արդարացում է. թէ եղած ու
կատարված բաներ է պատմում, Ծորպէս զի ամենեցուն՝ որք լսիցն՝
ջարժեցից արտասուս, թէ ո՛րքան դառն ժամանակի հանդիպեցաք. կար-
ծական եղև մեզ այս կեանքս... Այնպէս ամենայն ի խաղաղութեան
բնակէ, և մեք զերիք և կայանաւորք, սրակոտորք և տեսերք և յրնչից
կողոպտածք: Եվ անմիջապէս սկսում է իր ողբը Հայաստանի քաղաքա-
կան և կուլտուրական անկման համար:

Ողբեր հորինել են և մեր նախորդ պատմագիրները, բայց փոքր ժա-
նալով, ամօնի ճարտասանական զուսպ քնարականութեամբ մինչև կատի-
վեաքու երկի մէջ իսկական թուան լիբրով կա, հորդարուի բռնկում և
անմիջական արտասուցութիւն արտակնք մորմոքի:

Այսպիսի ողբերն, ինչքան էլ ազդու են, հաճախ կրկնվելով զանդա-
ղեցնում են պատմութեան ընթացքը և հոգնեցնող ու նուշխիկ ձանձրալի
կարող են լինել իրենց միակերպութեամբ, բայց միայն այն ժամանակ,
երբ այս բանաստեղծի երկը կարդում են պատմական եղելութիւններ քա-
ղելու համար: Թնայտեալ պատմութեան համար էլ դրանք ունեն իրենց նշա-
նակութիւնը, — նա այդպիսի ողբերի մեջ ևս տալիս է կայանքի գծեր, կա-
րնոր մանրամասնութիւններ, որոնցով կարողանում ենք կենդանի պատ-
կերացնել կատարված քաղաքացւոյութիւնները և երկրի ընդհանուր դրու-
թիւնը, — բայց և այնպէս դրանց արժեքն ամօնի քանաստեղծական է:
Մենք դրանց մէջ տեսնում ենք սրտի կակիծն այն դժբախտ օրերի հայրե-
նասեր մարդու, որ երբ պատմում է թուրքերի ու հուլեների զոհած խեղճու-
թիւնների մասին, ինքնաբերաբար տեսուցող լցված, հաճախ բանաստեղ-
ծութիւն է հորինում արձակ լեզվով և դառն ու աղիողորմ հառաչելով լա-
լիս է իր հայրենիքի կործանված փառքը, կուլտուրական և քաղաքական
կայանքի անկումը, քաղաքների ու ամօնների ամերումը, և երգում է այն-

⁸⁰ Աւգ, Ժէ, էջ 111 և հետ:

պէս խորն ու անկեղծ ու հուզիչ, որ խորին վշտով համակուած է ընթերցողին: Եմ նրա այդ տրտմանի երգը երկու պատկերով, փառավոր և ուրախանցյալի և իր ժամանակի անփառունակ ու տխուր վիճակի, դարեր շարունակ նմանողութեան տղայուր է զարձել: Եվ այսպէս Հայոց թագավորութեաների անկումից հետո, Հայաստանում սելջուկյան թուրքերի տիրապետութեանը դժոխս տատանված, անվում է Հայրենասիրական ողորբագրութեանը Արիստական Լաստիվներացու երկով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿՆԱՎԱԳ ՎՈՐԴԱՊԵՏ

1. Անճապարհություն:—Մեր վերածնութեան նոր մտավոր հոսանքի առաջին արտահայտիչներից մեկն է և Հովհաննէս (Յովհաննէս) Սարկավագ Վարդապետը: Այս համբաւավոր գրողի կենսագրութեան համար, ցավոք, սակավ տեղեկութիւններ ունինք, և եղածներն էլ մասամբ դժոխս տտեղմած²¹. Նա վախճանվել է 1129 թվականին. ծնողան տարեթիվը հայտնի չէ: Որովհետեւ նա մեռնելիս եղել է շատ ծեր, առնվազն 80—85 տարեկան, հետեւաբար ծնված պիտի լինի մոտավորապէս 1045—1050 թվականներին, համարձեռն ամելի ևս վաղ: Ըստ Վարդան Արենցու²² ևս Փառխոս զավառից էր, որ հաճանալիան ազգէս: Արցախի այս գավառը մի ժամանակ եղել էր մի հայկական փոքրիկ քաղաքական կենտրոն, որ ունեցել էր իր առանձին թագավորները: Կտրօի Արաս թագավորի (984—990 թթ.) մայրն, ըստ Ստեփանոս Տարոնեցու²³, Փառխոսի թագավորների ցույրն էր, «քարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողացս: 1003 թ. Երշխանքն Փառխոսուց, որ ի Հայկազեան ազանց բաւեալ մինչև ցմենքներիմ և ց'որիգոր՝ սպառնցան մահուամբ: Զորոց աշխարհն բաժանեալ հակառակութեամբ ի միջի իւրեանց արքայն Հայոց Գագիկ և Փառլուն ամիրայն Գանձակայս: Գանձակի ամիրան նմանել է ընականաբար արեւելիայն դաշտտիւնի մասը, իսկ Հայոց թագավորին անցել են Վայոց Ձորից զնպի հյուսիս—արեւելք ընկած լեռնային զավառները. «եւ տիրեաց նա [Գագիկ] յուրով բերդից և վաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, նալենոյ և Փառխոսուց»²⁴.

Թե ո՞րքան է տեւել այս բաժանումը, այդ հայտնի չէ. բայց դրանով ոչ միայն լի մարել տղջակին անկախութեան զաղափարն ու ոգին այն կողմնորում, ուր կ'ալին միշտ տեղական հայ իշխաններ, այլ, ընդհակառակն, ամելի ևս վառ ու բորբոք է մնացել հանդուպ այլազգիների ոտընկերութիւններէ: Բացի այդ՝ շարունակ զարգացել է այնտեղ եկեղեցական

²¹ Այս մասին ան'ո հոսն գրքն Առաջին հովելված²⁵ Մարկավագ Վարդապետն կ'անճապարհութեան յարգէ:

²² Մեծին Վարդանայ Պատմութիւն արեւելեականս, Մոսկով, 1881, էջ 159.

²³ Ստեփանոս Տարոնեցայ Պատմութիւն արեւելեականս, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 144, 145, 146.

²⁴ Անգ. էջ 316.

մշակույթը, ինչ որ ծնողներին միջոցով անպայման գործող ազդեցություն է գործել մանուկ Հովհաննեսի կրթության և ընտելություն վրա, եթե միայն ստույգ լինի Վարդանի հաղորդումը, թե նա Փանոսոս դավաճից էր, ինչպանը³⁵ գրում է, թե ինքն իսկ Սարկավազն Քեր խոսքով... զբաղված ժը մեջն ասում է իր մասին. «Ե նախնաց քաղաքացւոց և յիմաստուն ծնողաց բուռնալ, որք սնուցին զիս որինօք հագույն կենաց» Խոսել քան ըստ թնութեան տաժիք խնամալ յառ մանկուհա. որովք յազատելուս հասակին դաստիարակեալ՝ յոյս տայի քաղութեանս, Հովհաննեսի ծնողներն, ուրեմն, առանձին խնամքով սնուցել և դաստիարակել են իրենց որդուն, ներշնչելով նրան քաղաքացւոյն և զատկից արդեն իր բընաստոր շնորհքով հույսեր է տվել իր ապագայի համար, Ուսումը կատարելագործելու նպատակով, անշուշտ ծնողներին որոշումով, նա մտել է Հաղբատի վանքը:

Հովհաննեսի մանկության և պատանեկության տարիներին Հայաստանի ամենազօրախոս ժամանակն էր, Հայկական իշխանություններն իրար ետևից ընկնում էին, և երկիրը մատնվում էր ավերմունքի, Ռայց Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերը, ուր տիրում էին հայ թագավորներ և իշխաններ, ապա և Վրաց թագավորները, ընդհանրապես դեռ խաղաղ էին մնում: Կենտրոնական Հայաստանում վանքերը հետզհետե խափանվում էին. ուսումն ու դիտությունն ևս ավերվող քաղաքներից փախելով՝ ապաստանում էին երկրի համեմատաբար ապահով վայրերում, լեռնային ամրուր և խուշ անկյուններում: Այստեղ դարձյալ վանքերն էին դատնում գրականություն մշակող, Սանահնի ու Հաղբատի վանքերը, որոնք հիմնված էին 10-րդ դարում, վայելելով Հայոց Քաղաքատեղի թագավորների, հետագայում նաև Վրաց թագավորների առանձին խնամքը, նվերներով հարստացել ու դարձել էին ոչ միայն թագավորի կրոնավորների հղբարաններ, այլ միաժամանակ նաև լուսավորության կենտրոններ իրենց անվանի գրագետ վարդապետներով: Սկզբում Սանահնի վանքն է հռչակվում իր դպրոցով և գիտուն վարդապետներով, որոնցից Անանիա Սանահնեցին Նշանավոր է հանդիսացել իր գրական երկերով³⁷, Սանահնից հետո սկսում է բարձրանալ Հաղբատի վանքը:

Տուրքի և Ալիսապան սուլթանների վայրագություններն արգելք չեն լինում, որ մեր պատանի Հովհաննեսը Հաղբատի (գուցե և Սանահնի) վանքի խաղաղ անկյունում ուսմամբ պարապեր և զարգացներ իր ընդունակությունները: Նա այնտեղ խորը հմտանում է իր ժամանակի ոչ միայն

35 Ղ. Մ. Ալիշան, Յուզիք հայրենեաց Հայոց, Բ հատոր, Վենետիկ, 1870, էջ 386:

36 Այս ցիտատը բերում է և Ջարգանալյանը «Հայկ. հին գյւր. պատմ. մեջ, ողբերգից ցույց տալով սուրիշ տեղ մեր անբոլբ բուռնով ըստ հին վենետիկյան ռովորություն, Հեռաբացիք է իմանալ, թե Սարկավազ վարդապետն իր ոչ գրվածքի մեջ է գրել այն:

37 «Հաղբատ և Սանահնի վանքերը (987—1809)» Ժ. Ռ. [Յովհանն. Ս. Տիր-Մխեաթյան], Եկրարատն ամսագիր, էջեր 1601, էջ 371—277, 338—344:

նկնդնցական, այլն արտաքին գիտութիւններին, ինչպէս և ճարտաստ-
նութիւնն ու քերթողութիւնն, և զառնում է մի շատ գովելի անձ իր ձեռն բն-
րած ուսումով։ Նա մեղում է նույն վանքում իրար կրօնավոր և իր անխոնջ
գործունեութիւնով ու հոյակով քարձրացնում է իր վանքի անունը։

Երեւի, ինչպէս կարծում են, Հովհաննէսը վաղ տարիքում ասացել է
սարկավազութիւնն և նկնդնցական աստիճանը, և երևի երկար իջրն սարկա-
վազ է մնացել. ուստի և Սարկավազա հորջորջը մնացել է նրա վրա իրրն
սովորական անուն։ Նա քնակտնարար ունեւր նաև ժամանակի գիտական
աստիճանը՝ վարդապետութիւն, որով և սովորարար կոչվում է Սարկա-
վազ Վարդապետը։ Նրան անվանում են նաև՝ Եմեստասեբա, Եմես Եմ-
սիստեան Հաղթատաշ։ Նրա գործովտնը, որ ջայթմ մեղում է Հաղթատի
վանքում, ուր սնվել և ուտել էր, ունի այս տապանագիրը. Եմեսան այս՝
սնմական է³⁸ Ստփնտտի Սարկավազին, Այս Եմեստեան քառն անը-
սում է, հարկավ, իր Հին հունական լատինացւոյն իմաստով՝ իբրն իմաս-
տուն, գիտուն, գիտնական, այլն ճարտաստ, ճարտասանութիւնն ու փի-
լիսոփայութիւնն ուսուցիչ։ Նա իր քանաստեղծութիւնն մեջ, որի մասին
ներքեւում կիստովի, ինքն իրեն անվանում է Եկիսականար իմաստաւ, ա-
յսինքն կիսականար ստփնտեան։ Ետտ պարզ է, որ այս Եմեստասեբան
ուսումնասիրել է նաև իմաստասիրութիւն։ Թե այսպիսի քովանդակու-
թյամբ երկն էլ հորինել է նա, թե չէ, այդ չգիտենք, նրա մահից մոտ
հարյուր տարի հետո ծնված, շատ տեղեկութիւններ զիտակ պատմա-
գիրը³⁹ նրա մասին գրում է. «Յոյժ իմաստուն էր այլն և աստուածային
շնորհօք զարգարնալ. սորա քանքն ամենայն իմաստասիրական ռնով,
որպէս զԳրիգորի Աստուածաբանի, և ոչ գեղջուկա։ Եմեսիմաստն գիտու-
թեամբ քան զյուրովս և հանճարեղն լամենայնի՝ մտահարեալն Յոհաննէս,
Սարկավազ կոչնցեայա, մեր այն վարդապետներէց է, որ երբեք չի գահա-
ցել իր իմացածով, այլ հարաջան աշխատելով ձգտել է նորոնոր գիտանք-
ներ ձեռք բերելու։ Եվ իզուր չէ, որ նրա աշակերտ Սամուել Անեցին, ա-
ռանց նրա անունը տալու, պարզապէս կոչում է նրան Եվարդապետն
մեծ, Եմեստասէրն, Եմեստասէրն աստուածային, իսկ ամէլի ուշ՝
Կիրակոս Գանձակեցին մի տեղ նրան հիշում է լուկ Աշխատեղեքն մակ-
անունով։ Նա ինքն էլ ներքեւում վերլուծված իր քանաստեղծութիւնն մեջ
իր մասին գրում է, թե ուսման ու գիտութիւնն համար շատ տարինոր գի-
շեռ-ցերեկ գեգերել ու տքնել է։ Վերջերս հայտաբերված մի հին հիշա-
տակարան⁴⁰ նրա մասին գրում է. «Սա ի մանկական անտի տիրոց մինչև

38 Այսինքն՝ հավիտեական կյանքի մուտքի ճամբան, շնամուղն է, որի վրայով
պիտի անցնել Հանգերձայի մէջ մտնելու համար։

39 Պատմութիւն Հայոց Կերակոսի վարդապետի Գանձակեցոյ, Թիֆլիս, 1808, էջ
184 և Կան։

40 Տե՛ս նրանի պետ. համալուարենի Եփեսոսկան աշխատութիւններն, հոտոթ
XII, Երևան, 1940, էջ 416—418. Ար. Մալոխայանի շշարագիր դպրոցի ծագումը և նրա
հետագա վիճակը հոգովածի մէջ.

քվերդին որոշումն հազույն յնրկրորդն [չնրկրէն?] ոչ երբեք շնորհալ սայ-
թաքնցողք երբեք զուշ ոգւոյն ի նպատակէ ընթերցման. ուսանելու և ու-
սուցանելու, գրելու և ընթերցելու, հսկելու և աղօթելու, զտիւ և զգիշեր
արտաքոյ ամենայն պատգանաց և վայրաքարշ իրաց:

Կիրակոս Փանծակեցիին (էջ 107 և հտն.) պատմում է նրա ընթերցա-
սիրութեան մասին հետեւյալ գրույցը. «Այնպէս փոյթ էր այլոյ յաւուսն, զի
պատահեաց յաւուր միում՝ զնալ նմա յայլոյն, ուր գրեանն էին, և այլք ընդ
նմա, Իբրև և լիին՝ որ ընդ նմայն էին, և փակեցին զդուռն, նա թաքոյց
զանձն ի ներքս, աչապէս գիտելով նոցա՝ եթէ նախ ել նա: Իբրև անցին
աւուրք բազումք ի վերայ, դարձեալ զնացին յայլոյն ի պէտս ինչ, տնտիւն
զնա և սքանչալացան: Հարցանէին զնա, թէ՛ ամբարէս ապրեցաք առանց կն-
րակորէ և ըմպելոյ: Ընա նոցա զգրեանն, զոր ընթերցեալ էր, և
եկաւ է, ասէ, իմ կերակուր և ըմպելի, զոր կերալ և արբի զաւուրս զայ-
ստանցալ:

Այսպիսի անդուշ աշխատանքով նա դառնում է քաղմակողմանի հըմ-
առութիւններ ի տեր, մեծ գիտնական, փոյլիտոփա մատենագիր, տոմարա-
գետ, պատմագիր, ճարտասան հեղինակ կրօնական ներքողներին, միա-
ժամանակ և բնական գիտութիւններով պարապող ու բանաստեղծ: Նրա
գիտնականութեան հետ բնականաբար մեծանում է և նրա իմաստութեան
համբաւը և նյութ դառնում գրույցներին: Նա մենակ լէր. միաժամանակ
կային և ուրիշ գիտնական վարդապետներ—նրա ընկերները: Նրանցից
հիշվում են՝ Ալավկա որդի Դավիթ, Թոքակերի որդի Գրիգոր, քաջ Սար-
կավազ վարդապետն ամենից քաբձր էր: Այս երեքն էլ, աւուր է Կիրա-
կոս Փանծակեցիին, շէին յաշխարհէն Փանծակայա: Եվ ապա (էջ 107) քե-
րում է, երեք Փանծակում լսած, հետեւյալ գրույցը. «Եղէպ իղև զի յաւուր
միում նստէին երեքնան արքս սքանչելի, ճկն անդ ոմն շինական այր մի
և ասէ ցնոտա. «Եմբան» որ գիտէ ո՞ր իմաստնագոյն իցէ: Այս իբրև
ժաղրական ասաց: Պատասխանի ետ Թոքակերի որդին և ասէ. «Եմ ասեմ
քեզ. մինչդեռ էաք ի մերում աշխարհին, ես կտրող էի և կարող. իսկ Սար-
կավազս՝ կտրել միայն գիտէր: Իսկ այժմ սա կտրէ և կարէ, և քաղում
նկարս յանդու: Ի վերայա: Այս առականաբար վասն իմաստութեան նորա
ասաց:

Նա իր շնորհն ու մեծ պատրաստութիւնն ամուլ չի թողնում. բացի
այն, որ աշխատասիրում է շատ զրգածներ, ալի և անտարբեր և անհո-
ղացող չի մնում ժամանակի հրատապ խնդիրներին վերաբերմամբ. «Սա
զբազմաց փափաքելին, և ո՞չ ձեռնհաս, զհաստատ և զանշարժ տօմարն
եղանդեաց Հայոց՝ փոխանակ շարժականին և անհաստատնոյն. արար ե
միաբանութիւն ամենայն ազգաց տօմարի ընդ Հայոց»⁴¹: Հայկական տո-
մարի այս կարգավորութիւնը Սարկավազ վարդապետի նշանավոր գոր-
ծերից մեկն է: Հայոց թվականը, որ սահմանված էր Մովսէս կաթողի-

1 Կիրակոս Փանծակեցի, Պատմութիւն, էջ 104:

կոսի օրով, ակազում է 552 տարեթիվից և շարժական էր: Տարին հաշվում էին միշտ միայն 365 օր: Նահանջ տարի լկար, որ լրորս տարին մի օր ավելի հաշվեին, և տարին ունենար 366 օր: Տոմարի այս թիւրութունը շփոթութունների անդիք էր տալիս: Արդ՝ Սարկավազ Վարդապետի ձեռով 1084 թվականից ընդունվում է անշարժ տոմարը Նահանջ տարով: Բացի այդ տարեգրութեւր կամ Նախասարդի մեկը, որ տարիների ընթացքում հուլիսի 11-ից դեպի նոր շարժվելով՝ 1084 թ. ընկնում էր փետրվարի 29-ին, ըստ ժամարկապագիքո անշարժ տոմարի՝ Նշանակվում է օգոստոսի 11-ին⁴²:

Սարկավազ Վարդապետի հոգացողության առարկա են դառնում ժամանակի համար կարևոր ուրիշ խնդիրներ ևս: Այսպես, օրինակ, նա քանատիրական աշխատանքներ է անում, պարզելով և դյուրիմաց դարձնելով հին իմաստասիրական գրվածքները, աշխատելով ձեռք քնել ստույգ օրինակներ ու միայն արտաքին կուլմած երկերի, այլև կրոնականների համար⁴³: Սաղմոսների թարգմանութունը փոփոխության է ենթարկված եղել կամ աղճատումով, կամ այլևայլ թարգմանութուններով: Այդ դրությունը շփոթության առիթ է տալիս եղել: Սարկավազ Վարդապետը դրա առաջն անհերք համար Հաղթաստի վանքի գրանոցում որոնելով գտնում է հին թարգմանիչների գրած մի Սաղմոսարան և արտադրել տալով առարձեռով Հայաստանի բոլոր կողմերը, քրպեպզի ամեն տեղ միատեսակութուն լինի այդ երգերի նկատմամբ: Եվ ուրիշ այսպիսի հոգացողություններ:

Նրա գործերից ամենակարևորը, սակայն, եղել է այն, որ նա իրեն վարդապետ միշտ հոժար է եղել ուսուցանելու. սիրով զբաղվել պատասխանել է ուրիշների տված հարցերին և, որ պիտավորն է, ուսուցչութուն է արել և պատրաստել է քաղվածքով աշակերտներ, որոնց մի քանիսի գրական աշխատությունները դեռ մնում են: Նա իր այս ժրաշան աշխատանքով մեծացրել է Հաղթաստի դպրոցի անունը և կարելի է ասել, որ ինքը պատճառ է դարձել այդ վանքի գիտական և ուսումնական փառավոր համբավի: Նա ուսուցել է և Անի քաղաքում. վերևում հիշված հետաքրքիր ձեռագրի մեջ⁴⁴ Սարկավազ Վարդապետի համար պատկերավոր ձևով գրված է նաև հետևյալը. «Իր իբրև գիմաստուն մեղու՝ քարձնալ յանդամս մտաց զծաշիկս յբանագոց ցանոց հատոց և համոց՝ բերել ի քաղաք իւր և տեղի սնեղեան ի քաղաքամայրս Անի, և լի առնէր պտունն ի փարթաժութենէ անտի... Եւրջ բազ բոլորեալ զմանկունս գիրեանս խոնարհաբար և ախորժելի սիրով ուսուցանէր գիրքին և զխորին իբրս: Այս դպրոցում ևս ուսուցել է նաև ճերականութուն, թվարանութուն և այլ առարկաներ:

42 Ստանեյան Բագրեմ Երեմիկանցոս, Ազգայնատեմ, Կոստանդնուպոլիս, 1928, էջ 365—374, 1306—1309.

43 Ղ. Ալիշան, Ցաղիկս հայրենայն հայոց, հատոր Բ, էջ 286 և հտե.:

44 Տճ՝ էջ 65-ի 40-րդ ֆանդությունը:

Այսպիսի բազմակողմանի ու բեղմնավոր գործունեությունն համար ինքն, այս մեծ վարդապետը, վայելել է մեծ հարգանք ամենքից: Այս «Վարդապետն սուրբ»,— ինչպես կոչում է նրան Սամուել Անիցի, — իրեն կրոնավոր ևս հայտնի է եղել իր քարոզը քաղաքավարութեամբ— կեն- ցազնավարությամբ: Նույնիսկ զրույցներ են պատմել նրա սրբության մա- սին⁴⁵, և եկեղեցի յայժմ արդեւ զստ թագաւորն Վրաց Դաւիթ... այնքան զի մինչ լսէր զզայտատւ նորա, յստ յանէր ընդ առաջ նորա, և խոնարհեցուցնայ զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւնս⁴⁶:

2. Երկերը:— Բազմաթիւ և ըստ բովանդակության բազմազան են եղել Սարկավաց Վարդապետի գրական գործերը, որոնք մեծ մասամբ չեն տպագրված, մասամբ հրատարակված են եղել, կան այնպիսիներն էլ, որոնցից հատկապես են միայն հայտնի: Նա հորինել է ներբողականներ, մեկնա- թյուն, ճառեր, առգեր, շարականներ, աղոթքներ, սոմարական աղթա- սություններ, խրատներ (սբան խրատու առ ուսումնասէրս), տիեզե- րագրական և ուրիշ քննադատական գրվածքներ, փոխադրյալներ, քարո- յադիտական երկեր և այլն⁴⁷: Մտտ ցավալի է կորուստը նրա հորինած Պատմության (ըստ երևույթի՝ հրկու գիրք), որ հիշատակում են հետագա գրողները, և որից հատկապես է մեջ բերում Սամուել Անիցին⁴⁸, նա գրած է եղել սելեուկների պատմութիւնը սկզբից և ևս: Տուրքիի վերջին տարիներում, ինչպես և Ալիսալանի ու Մեխրջաշի օրով կատարված դեպքերին նա ժամանակակից է եղել: Մեզ հասած հատկապես մեջ ցո- լանում է նրա վերաբերմունքն իր պատմած եղելություններին և նրա ճարտար ու բովանդակային շարադրութիւնը՝ պարզ, մշակված և արվես- տավոր, միանգամայն և ազնիւ ոճով: Ավելորդ չի լինի այստեղ բերել այն- կտորը, որով նա ընդհանրապես է Մեխրջաշին օրը ևս առնույր զփառս իշ- խանութան քարերաղան Մեխրջաշ գլխի հօրն մահուան՝ Ալիսալան կոչե- ցելույն, մեծապէս կարգօք յօրինէր զթագաւորութիւնն ըստ անուանն ար- դարեւ եղնայ արքայ արքայից: Ոչ հետևեալ հօրն քարուց և կամաց, այլ յաւել տանուանող զընդդէմն արործեալ: Մինչ զի և մտահան եղնայ զնո- րայն քաւերք զիմացմունս, իրեն եղնայ հակառակ խաղաղութեան և կե- նաց մարդկան՝ արեամբ և զբզմամբ խանդաքեալ: Ի՞նչ ինքն իմաստաբար քաղաքավարութեան կարգօք պատրաստէր զամենայն: Արդ խոհեմն այն- և արի քան զյոյրովս ի թագաւորաց և քան զամենեանան որ եւ մեծօք՝ ոչ աշխատ տանէր հոգ՝ որքան արդարութեամբ առ ամենեանն վարիլ: զի մի՞

45 Կ. Գանակեցի, Պատմութիւն, էջ 195 և հմեւ:

46 Անգ. էջ 105:

47 Ղ. Ալիշան, Յուդիկ Կայրենաց Լայաց, հատոր Բ, էջ 378—387, «Սարկավաց Պատմութեան», էջ 295—300: Գ. Ջորճեմայան, Լայկ. հրէ. զգր. պատմ., Վենետիկ. 1897, էջ 604—616, Լ. Ոսկյան, Լոկհոնեան Սարկավացի գրութիւնները, «Էջնագէտ Ամ- օրոյս», Վրենա, 1925, էջ 118—120, 225—247: Անգ. էջ 37—39՝ «Էնվհոնեան Մո- փաղագի Կանքը», Եւրե հեղինակ:

48 Ո. Անիցի, Լասթաւանք, էջ 97 և հմեւ, 119 և հմեւ:

որ լիցիք տրտում ի դրկելոց, և հպարտ՝ ի քոռողաց, էր և արատաբարոյ և մեծախորհուրդ. այլ և տեսիլ մարմնոյն արժանի թագաւորութիւն. ընդ որում հնգութիւն ի քաղցրութիւն րարուցն լծակցեալ՝ ասեւէր սիրելի ամենհոգեւ. զոր միայն կողեցից թագաւոր և փարթամ, Սա ի դուզն ժամանակի փոքր ինչ նուազ զորորա հնազանդէր տեղեղերս, զորս այլք ի թագաւորաց ի քաղցում ժամանակս և կամ ո՛ր բնաս Բայց ո՛ր այնքան պատերազմաւ և բռնութեամբ, որքան սիրով և քաղցրութեամբ: Զի թէ սակաւ ժամանակաւ այնքան զօրեաց, կարծեմ թէ և ոչ Եւրոպէ կարէր ոչ տալ մուտս արքայութեան նորա, եթէ յուղմեալ էին կենաց նորա ժամանակէն: Նրա մահից հետո, —ասում է, — քանակաւորմելի եղև խոռովութիւն ամենայն ազգաց... Եւ այսպէս բարեքն ի բաց վճարեցան ընդ խղճան կենաց թագաւորին. որոյ ներք և աշխատութիւնք թագաւորական ուրոյն, և շահն և օգուտն՝ հասարակաց ամենեկոյն, մեծամեծքն և ընտրելիքն, մանաւանդ զխաղաղականն ասեմ զկենսն, և զանկարօտս և զանհանաքս:

Այս մեծ հնդկեանկի գրական դեմքը լիովին կպարզվի, երբ նրա բոլոր երկերը, ինչ որ մնացել է, կհավաքվեն և իսկական գիտական եղանակով կհրատարակվեն ու բազմակողմանի կուսումնասիրվեն: Այն ժամանակ մենք կտեսնենք նրա հայացքները, թե ինչպես եւ ի՞նչ լուսավոր մտքով համար քարծր է կանգնած եղել միջնադարյան թանձրամտեծ խափարից, մի խուզարկողի ու որոնող ոգի, ձգտող իրերը բնական ձևով քայքայելու, մաքառող ընդդեմ սնահավատքի կամ, ինչպես ինքը գրում է, քառասպելական, ստույթյան, ճշիմարեերի կտրեխներին: Ալիշանը⁴⁸ նրա գործերից, — ցավոք դարձյալ առանց հայտնելու, թե նրա ո՛ր երկերից, — րորում է նրկու ցիւտաւ՝ ասելով, թե ինքը Սարկավազ Վարդապետն ուսումնական բաներ սովորելու և գրելու համար հայտնապես պահանջում է, թե Բեմենին բազմահմուտ պարտ է գոյ ձեռնարկողին այսմ, ոչ միայն սրբոց և տառուածաշունչ գրոց, այլ և արտաքնոց: Ուրեմն պետք է տիրապետել ժամանակի ամբողջ գիտութիւնն: Բայց ալգքանն էլ զեռ բավական չէ. եւ պահանջում է նաև փորձով ստուգել գիտցածը. «Գարծնայ թէ և սոքաք [կրօնական և արտաքին գիտութիւններով] կիրթ և վարժ, ուսանց փորձի՝ կարծիքն հաւատարմեալ ոչ կարացնին. և փորձն՝ հստատառն և տեսնելալ... վասն զի ոչ է պարտ միայն հնագիտակ [= հին բաներն իմացող] լինել, այլ և ինքնաբար [—ինքն իրեն բավական, ուրիշի անկարող] ըստ շնորհացն աստուծոյ: Ահա թե Սարկավազ Վարդապետը որպիսի արժեք է տալիս փորձին: Եւ ուսնց աշակիս հնարիս գրող կամ խօսող գիտնոց խնդր՝ մեղադրելով կանուանէ. «եօլ հանճար՝ անհանճարեցն», — ավելացնում է մեր բազմահմուտ բանաստեղծ-բանասերը և շարունակում. «Սերդ անտարկուսաբար կրնանք ըսել որ Սարկավազ Վարդապետ շատ մեծ արդյունք ունեցավ այսպիսի ջանքով և գործերով, որոց բովանդակութիւնն է՝ ըլլալն իր ժամանակին և երկրին».

48 Ղ. Ալիշան, *Թարգմանք հայերէնէն*, Բ, էջ 285.

դրվողի միեմակի արգահատությունը, — ահա թե ի՞նչն է կազմում միեմակնությունը և շրջանի նոր ողորդությունն էությունը անգործում։ Փաղաքականությանը, հին անկախությանն և ազատությանը, Ժողովրդի բարեկեցությանը կորուստը, Ժողովրդի հայրենասիրի ինքնին ու ցրվածը, նախ այս անգործում ևս անկախությունը հետևած աղետից ցրված է ու խնայմանը։

Բայց հրկրորդ տերունդն արգեն ուշաքննում է. լոկ ողորդ քաղականն չէր, նմ ահա ծնվում է ջրված հայ ժողովրդին ի մի հավաքելու և փրկելու ձգտումը որով զարգացարարախոսությամբ, որի առաջին արտահայտվելը հրականության մեջ՝ է մեծիմաստ Սարկավազ Վարդապետը, Կիրակոս Գանակեցին (էջ 105) հաղորդում է նրա մասին. «Սա զրեանց ճառս ներք թողանանս ի մեծազոր արքայն Տրդատ, ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ և Մեսրոպ. արար շարական Ղեռնդանցն քաղցր եղանակաւ և յարմար քանիւ, որոյ սկիզբն է այս՝ Պայծառացտն այսօր քուր ձկնէ. գրեց և նոցա ճառս ներդրականաւ նրա անուանով մնում է և մի ներդրական լուսավորին, ճշանդական ռեղի և կրթի հանճարով յօրինեալն»⁶¹. Որ Սարկավազ Վարդապետը ճառ, ներդրական ու շարական հորինել է հայկական պատմական անձերի մյաւ, կարելի է ասել. որ դրանցով հիշեցնելով հայ անցյալը՝ նա ցանկացել է խրախուսել արտաբնկ մարդկանց, ի պատիվ Ղեռնդանց ոգած հոգեք երգի⁶² մէջ նա գրում է. «Շնորհամբ արեան սրբոց քոց հետապետաց զնկեղեցւոյ քոյ ջրութալ մանկուներս ժողովեա՛ր յուրախութիւն, ըզվարատեալս տրտմութեամբ և արտասուսաց յորդահոս ըըլխմամբ փրկութեան մերոյ պարգնաց քաջ-խա՛ղաւ նա խնդրում է, ուրեմն, որ աստված հայ նկեղեցու ջրված մա նուկներին, տրտմությամբ և հորդահոս արտասուքով վարատվածներին (իրենց տեղից, հրկրից քշված, ցիրուցան եղածներին) ժողովի ուրախությամբ և փրկի. Երված հայ ժողովրդին հավաքելու այս տենչն ու ձգտումն ահա դառնում է մի նմիքական իղծ ու աղօթք և շատ վաղ, Լաստիվերտուր կրտսեր ժամանակակցի, Սարկավազ Վարդապետի ձեռով մտնում մեր տաճարավորման մեջ. Այդպեղ դեռ չկա քաղաքացիան անկախության խնդիր, այլ միայն տառապանքից ազատվելու և Հայաստանում մնալու մի իղծ է այդ»

Մարկանյազ Կարդապետի այս աղոթքը շատ փոքր, իր ձևով շատ հասարակ ու հետևանք բան է. բայց իր բովանդակությամբ մեծ ու վսեմ է և անկեղծորեն բխած լինելով իրականությունից, խորն ազդու է մասնավանդ նոր թեատրոնի հաղթահարող նրբելով՝ հրկեղծում էր հնկեղծում տառապայալ հայապայալ իրանիքի, առանձնապես նրանից. որ հնկ երկար դարձր

Եւ ԺԺԻՆՈՒՆՅԱՆ ՔԱՆՈՒՆ Եւ ՆԵՐՈՒՆՈՒՆԻՆԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄ Ի Մ. ՀՊԱՆԱՐԻՅԻՆ Եւ Ի ԹԱՐԳՄԱՆԻՅԻՆ Եւ ԱՌԱՋԻՆԱԿԱՆ ԴՐՈՒՄԱՐԱՆԻՅԻՆ Եւ Ի ՎԵՆԵՏԻՅԻՆ Ի ՇԱՐՄ ՀԱՅԿԱՐԱՆԻ ՄԱԿԵՐԹՅԱՆ 1888 Ք.Յ. ԳՊՐ. ԱՊՐԵՇԻՆՈՒԹԵՐՆ, ՀԱՅԿ, ՎԱՐՔ. ԱՊԱՆԱՄ. Բ, ԷՔ 212, ԺԱՆՎԱՐ. ԵՎ ԵՂ 612:

[illegible]

զգուժ էին իրենց վարատված լինելը և աչքերը կարծեսզ դարձնում էին դեպի իրենց ընկի ներկիրը՝ Հայաստան:

Այսպեան՝ մեր բանաստեղծությունը, կրոնական զգացումներից և հայրենասիրական ոգիից հետո, գտնում է արդեն իր կարևոր և մեծ թեմաներից մեկը, որ այլևս կրոնական չէ: Ժիշտ է, որ առև զուտ շատ տխուր է, բայց դա այլևս ողբ էլ չէ, այլ մի նոր բովանդակություն ու նոր ոգով մի երգ է, դարձյալ հայրենասիրական: Եվ այսպիսին զարգացումը բնական էր. խիստ կրոնականից մի անցածով թուիչ լեր կարելի անել դեպի մաքուր աշխարհականը, աշխարհիկ կենցաղը ու սերը, քանի որ բանաստեղծները դեռ հոգևորական էին, իսկ հայրենասիրությունը նաև սրանցն էր: Այսպիսին հայրենասիրական թեման միաժամանակ և այն դարի պահանջն էր: Եվ քանի որ հայ ժողովրդի վիճակը նույնն է մնացել 11-րդ դարից մինչև առ ի 20-րդ դարի առաջին հրկու տասնամյակները, քանի որ կրկնվել են կոտորածները և ժողովրդի վտարանդամը, ուստի և այդպիսի թեմայով երգը, անգամ աղոթքը, հարատևել և կրկնվել է մինչև 19-րդ դարում և դեռ: Եթե սիրելի գրականության կը թափանչին օտար աշխարհ...», «Ենկաջ, որդեակց իմ սիրելիք...», «Մեր հայրենիք գիտ կուկանչէ...», «Մինչ իմ որդիք, ո՞վ գիտե՞...», օտար աշխարհ հաճում են», «հայ 19-րդ դարի երկրորդ կեսին սիրված երգերն ընդհանուր կողմը: Դա իր բովանդակությամբ մի ամբողջ գրական տեսակ է, որ իր սկիզբըն առնում է Մարկավազ՝ Վարդապետի այն ըստ նրևույթին աննշան հոգևոր երգից:

4. **ԳԻՐԱՎ ԻՄԱՍՏՈՒՐՆԱՈՒ:** Արվեստի ծագումն Ընդ տեսությունը:— Մարկավազ Վարդապետի բանաստեղծություններից մեկում է միայն մեկը՝ Բան իմաստութեան ի պատճառս զքոսանայ յառ ձագն որ զաղօթանոցաւ երաւ ճուռնդէր քաղցրահայն որ կոչի սարկկա՞ն: Այս մեծ (188 նրկայն ստղերով) քերթվածն իր ձևով ու բովանդակությամբ մի նշանակալից նորություն է մեր հին գրականության մեջ: Եթե դա պատահմամբ գրված է լիներ կորստից, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությամբ թերի կ'սկսար Եվ ո՞վ գիտե՞ քանի՜ այդպիսի արժեքավոր բանաստեղծություններ ոչնչացել են:

Այս երկն իր նյութով՝ բանաստեղծի և սարկկ թուրին ժիշտ փոխանակված մի տրամախոսություն է. որի մեջ թուրնը ներկայացուցին և արտաքին քննության:

Թեման՝ արվեստի ծագման խնդիրն է, հստակապես երաժշտությամբ ու բանաստեղծությամբ, որոնք նրկումը հնումն սերտ կապված են նղել

Են Տղազարով և Զրազմալիզա հոգևոսւմ, Վենետիկ, 1847, էջ 221 և հաջ. «Խեղճանեալ Մարկավազի իմաստասիրի և վարդապետի տեսքեալ Բան իմաստութեան ի պատճառս զքոսանայ յառ ձագն և այլն, մի նախորդ ճշմարիտ հոգւածով՝ Եճիվանեալ Մարկավազ:» որ ունի Գ. Մ. 3 ստորագրությունը, որ է՝ «Եւայր Դեանգ Մարգար», Ալիշանի հին օտարագրությամբ:

միմյանց հետ. քանիստեղծը երգի և խոսքերը, և եղանակը հորինողն էր, և՛ երգողը, այսինքն՝ կատարողը։ Այսպիսի ստեղծող է եղել և Շովհաննես (Յովհաննէս) Սարկավազը, որ ինքն այս քերթվածի մեջ իրեն անվանում է սարեկի արվեստակից, «այսինքն՝ երգիչ»։ Նա արվեստի ծագման մասին մի նոր տեսություն է առաջ քննել, Մինչդեռ ըստ հին կրոնական հայացքի՝ արվեստի աղբյուրը Վայտնությունն է, նա քանիստեղծությունը համարում է քնություն և ներքողում է քնություն։

Այսուհանդերձ, նրա այս քերթվածի ամբողջությունը զննողություններից մեկն այն է, որ բովանդակության առաջնադասությունը լինում է կրոնական առէջի վրա, որը, սակայն, երկրորդական տեղն է բռնում։ Մի կողմից՝ իր դարից տարբեր և անկախ մտածողն է հանդիսանում, մյուս կողմից՝ ամեն ինչ պարուրված է կրոնական պարուրանով, որ քնական է այն ժամանակի համար, փոխարին մտածողը գտնվում է իր ժամանակաշրջանի մեջ և ոչ նրանից դուրս, և այս տալիս է նրա երկին իրականության դրոշմ, որով և ավելի զրավիչ է դառնում այն, էական կրոնականը ոչ թե Ս. Գրքից առնված սակավաթիվ խոսքերն և ավանդականներն են, այլ քրիստոնյաների աչքին կարևորություն ունեցող մի քանի խնդիրներ, — որ են, այսպես ասած, Վայտնությունը, Վեպրնական կամ Եկկասմա մեղքը, որ իբր ժամանակաշրջանի տեսքում է բոլոր մարդկանց, Բարեւոյնի աշտարակաշինության հանցանքը, — որոնց մասին քանիստեղծի տեսակետը ծավալվում է գլխավոր մտքի, թեմայի հետ զուգընթաց, Առհասարակ քերթվածը հարուստ է բազմազան բովանդակություններ, առիթ է ուրիշ դրույթներով ևս, որոնք առաջին հայացքից թվում է, թե կողմնակի խնդիրներ են, սակայն դրանցով իսկապես պարզաբանվում է քերթվածի թեման։

Ըստ հին տեսության, ինչպես ասվեց վերևում, արվեստի աղբյուրը Վայտնությունն⁶⁴ է։ Արդ՝ դա, ըստ կրոնական հայացքի՝ այն գիտանքն է, որ աստված տալիս է կամ հայտնում է մարդուն այլևայլ գերքնական միջոցներով, կամ իր երևալովը նրանց, կամ հրեշտակի միջոցով։ Հայտնություն է և օտակ աստվածային ներշնչումը. այսպես, օրինակ, կարծում էին, թե այդ ունեցել են Ս. Գրքը գրողները, ուստի մեղքում այն կոչվել է Անաստվածաշունչ։ Դա մի շատ հին կրոնական հասկացություն է. հոմերոյան քերթվածների մեջ էլ աստվածահին մտական է խոսում։ Մեր գրականության մեջ էլ նույնը երևում է. Դավթակ Փերթոզն իր Ողբի սկզբում դիմում է աստվածային քանի արվեստավոր հոգուն, ահելով՝ «յօրինա՛ իմաստիւ զտխրական երգմունս»։ Գրիգոր Նարեկացին էլ դեռ նույն կրոնական հայացքն ունի. նա, ինչպես տեսել ենք, իր Ողբերգության մեջ դիմում է աստծուն, ասե՛լով։

⁶⁴ «Վայտնութիւն» — Révélation, Offenbarung, откровение.

Եղիցի՝ հոգի [=շուկ] քս խառնեալ ի սա,
Շունը զօրութեան Մեծիդ միտացի՝
Ի քո՝ ինձ շնորհեալ ստեղծարանութիւնս:

Իսկ մի ուրիշ տեղ նույն գրքի մեջ նա գրում է՝ դարձյալ խոսքն
ազգայնական:

Ի քէն ազգեցեալ գրել ինձ զսոսին:

Այսպէս, հին կրօնական հավատալիքով, աստված ինքն է խոսնչ
մարգարեների բերանով կամ թի ձեռն մարգարէիցն:

Գլխիտի կարծել, սակայն, թն Սարկավազ Վարդապետը մերժում է
ընդհանրապէս հայտնութիւնը: Այդ դեռ շատ վաղ էր նրա դարի հա-
մար, երբ իշխում էր մեծ քարեպաշտութիւնը: Նա ընդունում է կրօնա-
կան հայտնութիւններն իբրեւ ճշմարիտ հղելութիւններ և իր քերթվա-
ծի մէջ հիշատակում էլ է առաքյալներին հղած հայտնութիւնը վերնա-
տանը հոգեգայտին. «որպէս և այլ տեսնեալանքն», այսինքն՝ Քրիս-
տոսի մարդիկութեան վերաբերյալ հայտնութիւնները, որոնց ասվում
են նաև շտեմբրիսականք: Նա այդ հին տեսութիւնը շի ընդունում մարդ-
կային արվեստի—երաժշտութեան ու քանաստեղծութեան նկատմամբ:

Ինչ վերաբերում է Սարեկի քաղմանկաց եղանակների պատճա-
ռին, այդ էլ, ըստ մեր իմաստասեր Սարկավազ Վարդապետի, հայտ-
նութիւն է, բայց այսպիսի մի հասկացութիւնամբ, Երբ Սարեկն իր
արվեստի ծագումը քաղատրելու համար ասում է Բանաստեղծին. «Անդ
կացի ի բնականին որոշ պարզն էլ յայտնութիւն», այդ կնշանակի բնա-
կանի մեջ մնալու հետեանքով է արվել նրան երգելու շնորհքը, կամ
նրա արվեստի ներշնչումն իրականի պարզն է, արդի քառով ասած,
բնասուր է: Ուրիշ տեղ էլ քերթվածի մեջ Բանաստեղծն ասում է, թն
առեկ, սոխակ և այլն «Բնականան են պաշտօնեայց»: Այս կարգի
հայտնութիւնն, ուրեմն, որիք բան չէ, բայց եթն մի բնական հատ-
կութիւն: Այստեղ էլ, ուրեմն, Բանաստեղծը շնչտում է բնականը, բնու-
թիւնը, ինին արտաքին աշխարհն իր աժդողութիւնամբ, թն որն էլ անկի
հատկութիւնների միահամուտը, իբրեւ նրան իրեն հատուկ բնութիւնը,
ընդարդու բնութիւնը: Սարեկը երգում է զըհայրենին քարաբնիկը,
այսինքն՝ նա երգում է ինչպես իր հայրերը, ինչպես իր սեռի թուլեկ-
ներն իրենց ընդարդու բնութիւնամբ:

Միևնուր թուլեկների երգեցողութիւնը բնածին է և ոչ-սովորովի,
այդպէս չէ մարդկայինը: Մարդա զարգանալով քառնրացն է մտավո-
րապէս, հնաքնել է բնական վիճակից, ընկնլ է ուլ բնաորոշ—ուլ-բնա-
կան, անբնական վիճակի մեջ, ձենց այդ պատճառով նրա արվեստն,
ըստ Սարկավազ Վարդապետի, բնածին չէ, այլ նա այն սովորում է
նմանելով բնութիւնը, բայց միշտ էլ ճած է մնում բնութիւնից:

Ե. Հորիմվածքը: — Դժբախտաբար մեզ չեն հասել Սարկավազ Վարդապետի ուրիշ բանաստեղծությունները, որ տեսնեինք, թե ինչպես է գործադրել նա իր տեսությունը⁵⁵։ Բայց հենց այս միակ քերթվածի մեջ էլ երևում է, որ նա իրեն քերթող գեղեցիկ հորինել գիտե՝ նախ տեսնենք, թե նա ինչպես է անդրադարձել բնությունն ու իրականությունն իր աչքերի մեջ։ Գրիգոր Նարեկացին էլ, որ զեռ կանգնած է կրոնական հայացքի վրա, ունի բնության դժացում։ Նա բնությունն զգում է ներհայեցական—ինտուիտիվ կերպով. նա բնությունից վայրկենական տպավորություն օտանալով՝ անմիջական ծանոթություն է ունենում նրա մասին և այդ,—ինչպես և իր զիտակցության մեջ ծնված մի միտք կամ մի հուշիկ, — արտահայտում է բանաստեղծորեն ինքնարդիւն և արագ ծագած պատկերներով։ Այսպես լի Սարկավազ Վարդապետի համար, Սա էլ, հարկավ, տպավորվում է բնությունից, բայց նրան մատույն է երկար դիտելով այն, խորհելով ու դատելով, ուսումնասիրելով և եզրակացություն հանելով նրա մասին։ Այսպես վարվում է նա իրեն իմաստասեր, և որովհետև նա միաժամանակ և բանաստեղծ է, իր աչքիս հոգեկան դործունեությունը ձևավորում է բանաստեղծորեն։ Նա նախ մտածել է իր քերթվածի հիմնական դադափարը—թեման և ապա ստեղծել է դրա համար պատշաճավոր արտածիտը — Բանաստեղծի իրեն և Սարեկի արամախոտությունը։ Բայց այդ ստեղծումը կատարվել է ոչ օտու, անկենդան ճգնակով, այլ շերտ շերտով հորինել է նա մի իմաստասիրական քնարերգություն։ Մեծ նարտարությունն է նա ընթերցողի առաջ սփռում է իր մտածմունքներն ու զգացմունքները, և ինչպես լավ գիտել գիտե, նույնպես և գիտածը տալիս է մեզ, մանրամասնությամբ նկարում է Սարեկ թռչունը, միշտ ցույց տալով իր վերաբերմունքն առ նա։ Զվաք քերթվածի սկզբում այլաբանություն, այլ մեր առաջ երևում է իրական երգեցիկ թռչունը, թեպետ Բանաստեղծը խոսքն ուղղում է նրան։ Մենք տեսնում ենք նա իրեն Բանաստեղծին իր որոնող մտքով, միաժամանակ Մ կրոնավորին իր աղոթանքում։ Նրա երկի գեղեցկություններից մեկն էլ հենց այս է, որ նա նա իրական թռչունի մասին է երգում, և՛ իր տեսություն, այլև բանաստեղծության նյութ է դարձնում իր անձնականը։ Նրա քերթվածի մեջ ամեն բան ասված է պարզ ու հասարակ ձևով,

⁵⁵ Սարկավազ Վարդապետի տեսության մասին այս եզրակացությունը հս և՛ պարզել տալիս անգամ 1855—1900 թթ.։ Այնուհետև նույնը կրկնել հմ Հայաց հին գրականությանը ցատկաբանությունների փոխանակ էլիմիանում, Թրիկիում, Բազմում և Երևանում։ Նույնը կտ նաև 1923 թ. Բանաստեղծի համար դասախոսություններին ազգայնաբանական Համառոտագրության մեջ, որ հրատարակված է Էմիտագրի իրավունքով, որ և 1941 թ. ապրիլից ՄԱՄԻ ԳԼ հայկական Գիտելի «Տեղեկագրի» մեջ։ Արդ 1940 թ. նրանում տպված մի գրքի մեջ ազգայնաբանի մեջը բառացի անկողնակն է իմ եզրակացությունը։ Նա յուրաքանչէր է նույնիսկ իմ ցավը՝ Գրգորապետարար մեզ չեն հասել...», և արդի բաներ։ Ուստի խնդրում հմ ընթերցողներին, որ լվաւեն, թե հս օգտվում հմ 1940 թ. ապրիլի գրքից։ Ին օգտվում հմ անկողնակն աղետությունների, մի փոքր փոխելով նյութի ցատկաբանությունը։ Ազգայնաբանի այն անգամ չի արել։

սակավաթիվը պատկերավոր արտահայտություններով, ասկայն այդ՝ իր պարզությամբ հանդերձ՝ ազդեցություն է թողնում իր հարուստ բովանդակությամբ, որ շարունակության մեջ հետզհետե ավելի ճոխանում և աղցղում է զանազան մտքերով, որոնց արտահայտության համար նա գտնում է բառեր ու խոսքեր մեծ փարթամությամբ, բայց ոչ ճոռոտությամբ։ Փերթվածն ազդում է նաև իր մեծավայելուչ ոտանավորով, որ մարդու լսելիքը շոյում է իր յամբական ութմամբ, որ և իր նրկայն տողերով ու սուղամիջի հասածներով ունի լուրջ բնավորություն և շատ պատշաճում է բովանդակությանը։ Այս լավիք, հարկավ, Սարկավազ Վարդապետի ստեղծածը չէ։ Նույնով հորինել է Գրիգոր Մազիստրոսը, այն էլ միակերպ հանգերով։ Դա զսլիս է ավելի հին ժամանակներից և գործածական է հեղե նաև հետագայում։ Սարկավազ Վարդապետն այդ կիրառել է մեծ աչքողությամբ, առանց հանգերի, ինչպես նաև մեր ոտանավորներն իրենց հին ձևով։

Հետևենք քերթվածի բովանդակությանը, որով կարողվի գլխավոր խնդրի դրույն ու լուծումն ըստ հեղինակի, ինչպես և Քերթողի մտածության ընթացքը և նրա նրկի հորինվածքի ընդհանուր բնույթն ու գեղեցկությունը։ Իսկապես պետք է կարգալ և ուսումնասիրել քերթվածի բնագիրը՝ սրա գեղեցիկ ամբողջության մասին հիշատակելով զաղարկալ կազմելու համար։ Մավաք այստեղ լինեք կարող մեծ հատվածներ մեջ բերել։

Փերթվածն սկսվում է դիմումով Սարենկին։ Եվ որովհետև հեղինակն իր աղոթանքում է, հրավիրում է թուշիկին քովերգելու ալարին։ Այնուհետև նա ամենայն մանրամասնությամբ, մի ամբողջ մեծ հատվածով (34 տող) վերլուծում է Սարենկի նրկի թողած այլազան տպավորությունները։ Մեկ ա՛յս է լսում նա այդ նրկի մեջ, մեկ՝ ա՛յն, ինչպես մի բնագետ՝ նա հաճախ ուշադրությամբ լսել ու դիտել և ուսումնասիրել է այդ թուշիկին, ուստի և մեծ նշույթությամբ բնորոշում է ն՝ թուշիկ, ն՝ նրա նրկի այլ և այլ, իրար հակառակ հատկությունները։

Արթ՛ւն և զուարթուն թուշուն հրակող և բարբառող,
Կանչող և կարկաշող, հրեհուող ծայրող սպառնանքը...
Ամենքն և մտաւար, ուրախարար լսասիրաց.
Քաղցրածայն զաշնակաւոր, որպէս կարծնմ, ըստ արուեստին.
Սառակախոս և հարթավանկ, խանդադատող և ողորդակ.
Հրամայող և ողորդող, ըզխաւտականըս ներադրող,
Սպառնացող և հեզախօս, դրգուող կողող և հրամարող.
Կականող և ձայնարկու, յոյժ խընդացող և զուարճացեալ.
Արդ ցիշորն քեզ ի տիւ, և խաւարն որպէս ըզյոյս...
Պիտոյիք սղագտունիք իբր անճաշակ մարմին լրցեալ,
Նուազօքն կերակրեալ որպէս ուետող զայն զօրութիւն...

58 Այս լուրի մտերմածությունները կարելի է անգնել Մ. Արեւանի «Հայոց լեզուի ստղայագիտություն» աշխ., Երևան, 1938, էջ 261—262։

Քաղաքի երգի գովգով Կոնկարտաթյամբ ստանա ինքեղով զարդարե-
նում է նա իր նյութը և դիմում իր բուն խնդրին։ Բանաստեղծը լսելով
Սարեկի երգը՝ հափշտակվում է դրանով և հարցնում, թե այն բարոյա-
տի ամենահայտնի երաժիշտը՝ որտեղից է ստացել իր քնարական դաշ-
նակավորը երգելու շնորհքը, քանի որ նա բանավարդապետն է ինքնու-
ստան է, ոչ մի ուսուցչի մոտ չի սովորել։

Ո՛վ պարոդ դու անձանձիւր և կաքաւիլ յոքնանրեազ...
Անդ աստի՛ իցէ Բեզ խօսել յայլալեզուս և յընասելիս.
Ե՛կ ուսմ՝ ինձ, դի ծանեայց, կիսակատար իմաստակիս.
Մի՛ պատեառեիր դանքանութիւն, դո՛ւ յօղածայնըդ վերծանօղ,
Անյօր ձայնիւ վարդապետեա՛, և բոտացի՛ր զիս աշակերտ:
Զի հասարցից քեզ փոխարէն ընդ ուանլոյ իմաստութեանն,
Արձակեալ քեզ ներքողեան թողից ըզկնի անտպական,
Ան հանդերձեալն ժամանակ անշնչելի քաջայարմար,
Յորդորականս և վայելուչս, յորմէ օգտին իմաստաքեալք։

Այստեղ առաջին մասի մեջ հենց,—Քերթողն ինքն իր երկը մասե-
քի է քաժանել,— գծվում են այս ժամատության բանին կարևոր կողմե-
րը. 1) գովարանում է բնությունն ի դեմս Սարեկի. 2) դրվում է նրա երա-
ժշտական շնորհքի ժազման խնդիրը. 3) Քերթողը ցանկանում է, որ
ինքը ի դեմս Սարեկի՝ դառնա բնության աշակերտ և սովորի նրանից,
և 4) որ բնության աշակերտ դառնալով՝ նա անմահ, անշնչելի, քաջա-
յարմար ներքողյան կթողնի ապագայի համար։

Երկրորդ մասի մեջ թույնկը պատասխանելով Քերթողի հարցին՝
ասում է, թե մարդիկ մեղանել են և դրա հետևանքով ընկել են թոշ
քնաւորս — անքնական վիճակի մեջ. մինչդեռ ինքը Սարեկը չի մեղա-
նել, չի կորցրել իր սկզբնական ունեցածը, մնացել է քնականի մեջ. ուս-
տի իրեն տրվել է այլատնութիւն։

Վերևում արդեն րացատրվեց, որ այդ նշանակում է, թե Սարեկի ե-
րաժշտական արվեստը քնատուր է, քնածին է, ոչ-սովորովի ի տարբե-
րություն մարդկայինից, որ հայտնությամբ չի ծագում, Որպեսզի հնա-
րավոր լինեիր մարդկային արվեստի ծագումը համարել բնության նմա-
նողությամբ սովորելի, և ոչ հայտնությամբ, պետք էր հիմնավորել այդ
քաջատրեղով, թե մարդս զրկված է հայտնությունից։ Եվ ահա անհրա-
ժեշտորեն մեջ է բերվել միջնադարյան մտածողության համար անխու-
սափելի մեղքը՝ Մարդս իր գործած մեղքի պատճառով կորցրել է իր
քնականը, քնական վիճակը. քնականը կորցնելով, զրկվել է հայտնու-
թյան շնորհից. ուստի և մարդուս արվեստը չի կարող հայտնությամբ
լինել։ Այսպիսով ժխտվում է հայտնությունն իրեն մարդուս արվեստի
աղբյուր, և հնարավոր է լինում արվեստը համարել բնության նմա-
նողությամբ սովորելի։ Ահա թե որպիսի դրույթներով է մտածել մեր
Քերթողը, դրույթներ, որոնց հավատացել է այդ կրոնավոր իմաստասե-

ըր, որոնք և անհրաժեշտ են նորից քերթվածի թեման բազմակողմանի լուսարանելու և հիմնավորելու համար:

Սարեկի այս պատասխանը մեծ մասամբ վերացական ինստիտուցիոն ունի, համապատասխան արտահայտությունը. բայց արամայոստությունը կենդանացնում է նյութի բացատրությունը, ապառվ նրան շարժում: Ճնշել և բովանդակությունից և նկատմամբ շատ գեղեցիկ և ուժեղ է առանձնացնել նորոգ մասը, որի վերնագիրն է՝ «Իրականացնել վարդապետն զգիմադրությունը [= պատասխան] Ձադուն և առնա ու մարման-տանություններ: Քերթումը ընդունում է Սարեկի պատասխանը, թե քանակական ի բաց դրությունը նշել է հանցանքի համար, բայց ավելացնում է, թե ինքն այդ գիտն «ի ընտրեմն», այսինքն՝ այդ տեսանկյան հետևել է նա ընտրությունը գիտելով և գիշեր-ցերեկ ուսման ու գիտություն հետևելով: Ուրեմն հայաստություն լուծակալը մեղքի հետևանք համարելու է հանգրված՝ բացատրվում է նաև իրերի ընտրությամբ: Քերեք այս կտորը:

Ձայն ասաց պատահառ բազմանուսող նկատակացն
Քըռնունը քաղցրախոս ի հարցանելուն մեր ըզնա...
Բնականին ի քաջ դարձին վրան ևզալման առ վեհագոյանն
Նմանապէս են պատուհաս, որպէս գիշեմի ի քննութեմէ,
Ուսայ նս գեղեցիկամբ ևս ի բազմաց ամաց հետէ.
Ձի տքնեցայ դօր ամենայն և զգիշերըն բովանդակ
Առ իմաստըս ցանգութեամբ, նաև սիրտն որ առ հանճար,
Ձայն ասաց և հաստատեաց որպէս կընէի իւրոցն իրաց.
Թանգիմանեաց զմեզ ուղիղ, և ինքն օղովուն սըլացաւ,
Ի քարձրութիւն աստոյն նըստաւ ըզհայրենին բարբառելով:

Սարեկը շարունակում է նորից, իսկ Բանաստեղծն ընկնում է մտածմունքների մեջ: Մեր աչքի առաջ պայծառ պատկերանում է գիտությունը ու գրականությունը պարապառ իմաստասերն իր հոգեկան վիճակը վերլուծելիս: Մենք անանում ենք խոհուն, գործույս, հետազոտող ու համատարացող կրոնավորին, որ ոչ միայն շատ կարողացել է, այլև գիտել է ընտրությունը, զգացել է նրա վանությունը և աշխատել է ըմբռնել նրա վեհությունը, և նուրիսի փանաթի, աննշան, գեղով անվայելույ և անարք էականների մեջ ներդաշնակություն տեսնել: Նա նստած է իր խուցի թանապատին մեջ, թոր հանգարտությամբ օգտվի, որպեսզի իր իմաստությունն իզուր տրված լինի իրեն, և ապարդյուն լանցնի իր մեծ լանջը: Բայց նրան տանջում է այն միտքը, թե ինքն իրեն մարդ մեղքի տակ է ծնված և քնականից զրկված: Այս միտքը անեղած է նրա գլխի մեջ, քանի որ թույլնը նստած է ծառի ճղին ու երգում է, ու երգում ճակողներով և իր քրեականի պարզեղով հանգիստ չի տալիս նրան, խանգարում է նրան մասնավոր և նուրիսի աղոթելու: Մեծք նա աչքը պտտեցնում է այս ու այն կողմ թուլեղող Սարեկի ետևից, մերթ ուրախանում է՝ հասնած օւնկնդիր լինելով իր սիրած թնամորին, մերթ ախրում է, հուզվում:

մտածելով, թե Սարեկը պանդխտանեաց ըզմեզ ուղիղա՞նք, Ապա ուրեմն անշահ է իր քուրորդ գեղեցիկները, որ ինքը մի թույնիկից անգամ ցած է գտնվում։ Բայց վերջը նա այն հերակացուքայան է գալիս, թե իր վերադարձումը անարդար է Սարեկի «հանդիմանութունը»։ քանի որ նրա ասած մեղքն՝ ինքը չի գործել, «Մարդկանց մեջ պատահած ըստմատեն-ասկ հանցանքներն ինձ վրա ձգելով,—ասում է նա Սարեկին,—Դու ինձ նեղում ես առանց հոգնելու, իբր թե ինձնից մի վնաս գտած լինեիր»։ Աղաղակելով ամբաստանում ես ինձ, ինչպես զրկվածների սովորութիւնն է, Սաստիկ մեղադրում ես ինձ հրապարակով դատավորի առաջ, կամ գուցե կարծում ես, թե ես թշնամի եմ և իբրև օտար կռվել եմ քո դեմ։ Ես՝ որ քեզ սիրում եմ՝ քեզնից տրտնջում եմ...»։ Այսպես նա չի հասկանում, թե ինչո՞ւ ուրիշների մեղքերի համար ինքը պիտի պատժվի։ Այնքան խորատառզգլիվ է նա իր խոհերի մեջ, որ թանաքամանը թափում է իր զգեստի վրա, ապա սթափելով ինքն է ամբաստանում Սարեկին և հարցնում, թե ինչու նա անապատ լի քաշվում և այնտեղ երգում միայնութիւն մեջ, ինչպես ափսեակները, որոնց լսողները օրի են, էլ ինչո՞ւ է նա մարդկանց մեջ ապրում։ Բերենը այս մասի վերջից մի կտոր, որ շատ կարևոր է թե՛ մայր տեսակետով.

Թէ ազգակից ես սոխակի, ասա՝ դու ինձ դիմադրութիւնը,

Շնորհ յառիւս գու քեզ հայտն յանապատի քաղես նոքայի։

Երաժիշտը են և նոքա, բայց ցանկացան անապատի,

Դաշնականացրն նուագօգ ըզրացավայրսն զարդարեն.

Սակաւուց եղև լըսել ըզրարեմայն երգատրութիւնս.

Գովեցան և զըզուեցան յորոց լուան ըզգաղցրալանգան։

Ամփիոն այր Թեքացի և Արիոն Միթմնացի,

Որդեա Թրակացի, այս երաժիշտը են մեծազօր»⁵⁷.

Այլ նուագեալ առ նոֆօֆ աբ բնականաւն են պաճեճեալ,

Ձի գործի այս առաւետի նոֆա յունին ի բնութեհէ։

Այստեղ դարձաւ հայտնվում է, որ արվեստի համար կարևորն է լրանակներ, բնութիւնը, Բայց շարունակենք նրա դիմումը Սարեկին.

Մի և դո՞ւ ես յայնցանէ զորոց լուար ըզպատմութիւն,

Համարութեաւ և անուանի, որպէս արդիւնքըն վրկայեն.

⁵⁷ Զրատարակիւն այս հոսանքն առաւելակտն երաժիշտների մասին գրել է հեռե-յալ ծանօթութեամբ. «Ամփիոն երաժիշտ յայն՝ արցալ Թեքացի, որ պարտադեպ զԹեքէ, կամ որպէս քերթողքն առաւելակն, քնոր յԱզադսնէ ընկալեալ, և նորին նուագացն ցաղցրութեամբ զքարինս շարժեալ ի շարս և ի զնոնդումն պարտադեպ ընթացուցնէր»։ — Արիոն քերթող և երաժիշտ ի Միթմնա ցաղաթէ (նորսոթ)՝ թափեալ ասի քնարան զպիտին մի, որ ոպա ընդ աստեղապանս դառնեալ—Իսկ Որդեա երգել կամ քերթող էր անուանի, յորալ ի լուր ձայնին զազակն ամեհէր ընթանային, և կողմքը (—նշելով) ծառք ծափ զծափ հարկանէին»։

Բայց միով էս պակասեալ, զի լսիրեցեր զընդ Նոսա կեալ
նւ լարարեր տեղ ճեղ դադարա, որ և նորա նն տաւողեալ
Աստ զաս Նառիս մերձ առ ինն իրք արուեստիւ ինձ յանգաւիցք,
Բազմապէս ձգտարեալս ձգտեալսն և կարեալսն:
Համեռեկան տաղիցըն շափ քն ծանուցեալ լինի քաղմոց՝
Յոտանաւոր և ջուցական (2) ըստ քերթողացն տեսակի,
Կամ թէ էս ամլագոյն, որպէս թըր ինձ գիտողիս.
Զի վարժումն և կրթութիւն ոչ մասնէ առ քնութիւն:

Երբորդ մասի ալս վերին տողերի մէջ քերթողական արվեստն իր
ծաղումով պարզապէս քնութիւնն նմանութեան ու արդյունք է համարվում
և զորով կենդանի շնչում է, որ քանաստեղծութիւնն աղբյուրը քնու-
թիւնն է, Առաջին մասի մէջ արդեն, ինչպէս տեսանք, Բանաստեղծը
ցանկանում է, որ ինքը դառնա ի դեմս Սարենկի՝ քնութիւնն աշակերտու-
նալ երբորդ մասի մէջ նա ասում է, թե քերթողները նմանելով քնու-
թիւնը՝ սովորում են իրենց արվեստը, քայց լին հասնում իրենց արվեստ-
տի նախազադարար քնութիւնը: Այստեղ քերթողը քնութիւնն քաղը
զորածնելով Սարենկի փոխանակ՝ պարզ հայտնում է, որ այդ թուրք
քերթիվածի մէջ հանդիսանում է քնութիւնն ներկայացնողը:

Չորրորդ մասի մէջ քանաստեղծն ամելի էս պարզաբանում է նա-
խորդ մասի մէջ արժարժված խնդիրները: Սարենկը պատասխանելով
Քերթողի հարցին, հայտնում է, թե մարդու հետ ապրելու խորհուրդն
այն է, որ մարդը ստիպված լինի ալո կենակցութիւն մտնելու, որ
ինքը՝ մարդն անհամբար և նուրիսկ իր ժողովաներին, այսինքն քնու-
թիւնը, որ, ըստ հին կրօնական հայացքի, ստեղծված է մարդուն ծառա-
յնու:

Ընդ մեզ կենակցութիւն ձեզ լընարողացըդ [զկենակցութիւն] առ

աստուածն:

Առ ծառայս անդուգութիւն՝ զանդուգութիւն մեծարողացդ:

ՊարԱլալ, ուրեմն, անհամբարութիւն (աւանդութիւնն) քնու-
թիւնը, անհամբարութիւնը, հարկով, արվեստի նկատմամբ, ինչ որ
արդեն երկու անգամ ասված էր երբորդ մասի մէջ:

Ի՞նչ տեսանք արդեն, որ Բանաստեղծը երբորդ մասի մէջ լին ըմ-
բռնում այն, որ ուրիշների մեղքերի (Աղաք մեղքի և աշտարակաշի-
նութիւն) համար ինքը պիտի պատժվի, և մի սլալկայան նա ըմբոստա-
նում է Աղաք մեղքի դեմ և թվում է, թե նա պիտի մերժեր այն: Բայց
այդ հնարավոր լէր 11-րդ դարում՝ առանց ընկնելու թողարկեցող
աղանգի մէջ: Թեքեո սրանից իրեն զերծ պահելու համար նա ալս շոր-
րորդ մասի սկզբում թուրքի բերանով կանգ է առել նույն խնդրի վրա՝
մեկնաբանելով հիշված մեղքերը և ամելի պարզելով՝ ինչ որ ինքն եր-
բորդ մասի սկզբում ասել էր, թե մարդու ջրանկանին ի քաղ զքութիւնը-
դիսն թի քնութեան և իր ուսած գիտութիւն մը: Այստեղ նա իր ալս տե-

ստեփանը հիմնավորում է քանակականորեն: Մարդիկ, իբրև մտավոր ու-
րանական էականք, իրենց ազատ կամքով աշխատել են քարձրանալ
նախնական քանական վիճակից՝ աստուածութեանը ցանկալի, բայց
դժբախտաբար ամբարձնալ, ճշգրտեալ լինելով: Այս են
հղի նախամարդու և աշտարակաշինութեան մեղքերը: Գրանով է, որ
նրանք կորցրել են իրենց անմեղութեանը, Բանաստեղծին աշտարակի ռա-
ցիոնալիստական մեկնութեան ճանապարհ դնելով հանդերձ, իբրև իր
դարի զարկ, իր լուսավոր համայնքավոր է աստվածաշնչային զաղա-
փարին ժառանգական մեղքի մասին: Բայց նա չի կարողանում լուս-
թյամբ հաշտվել մի ուրիշ կրոնական մասի հետ, թե իրենց շինարար-
ական և մարդկային մեղքի համար դրախտից հանվելով պատուհանաբան
են և ավելի նա դառն ճակատագրի ունեն մարդկանց սեպտայնուս հա-
մար ստեղծված անմեղ կենդանիները: Բնութեան սիրահարը, որ Քերթ-
վածի ակտիվ հրահանգով ենթադրում էր իր սիրելի թռչնիկին, վերջում
էլ նրա բերանով, իբրև քաղց ալի կրոնական հայացքի դեմ, — դրանով
լուսվային և Լիդամա մեղքի դեմ, — անկեղծ կարեկցութեամբ նկարագրում
է թռչունների ծանր դրությունը:

Բայց և անմեղքըս վնասեցաք վաղն ձերոյդ ժրպրհութեան,
ի փառքս ձեր մեք գոյութեայք և վառն ձեր ազատեանեայք...

Եւ աղէտք վըշտագինք պարապատեն ըզմեղ յերկրի,
նորդակք և ձըմեքունք և պիտոյից պակասութիւնք,
Յագ և խթութիւնք և սարածած մահու արկտաթք...
Յորս աւելի՞ մեք աշխատիմք՝ ոչ ունելով յարկս և քաղաքս,
Ոչ համբարքս մըթերեալս ի լիութիւն հարկաւորացն,
Ոչ զեղս և ոչ բըծիշկս որով ցաւոց ախտ դադարէ,
Ոչ կակուղ ինչ կերակրիկ մեղ ի սփոփանքս դիւրութեան...
Ձըրկութեն մեր ի ձէնք, և դուք ըզմէնք ամբաստանէք...

Հինգերորդ վերջին գործիկ մասը հղրակացութեանն է.

Ժշմարտիս զայս խոսնցաւ ըստ պատահմանցն հանդիպման,
Ըզրացաւորեալ հոյլքս բանից իմաստաբար բարբառելով:
Որով յաղքեալ մեզ իմտտեմոցս և կարծեցեալ բանտոտեղծացս...

Հաղթող է հանդիսանում, ուրեմն, ինքնութեան ներկայացուցիչը,
սարուհատիս երաժիշտն ամենահայտնի անվարդապետս, որ բուն արվես-
տավորն է, իսկական երգիչը, իսկ նրա գաշակերտս և սարվեստակիցս

60 Այս բացատրութեան համար նա նկատելի ունեցել Եկի հետեւյալ խոսքը, որ ասում
է նվաճի խարճիքս. «Ձի գիտէր աստուած թէ յորում աւուր օտարիցէք ի նմանէլ քանայցեն
աչք ձեր, և լինիցիք ի բուն զաստուածս՝ ճանաչել զբարի և զարք» (Մեռնդք, Գ, 2):
Իսկ Բարեկոյնի աշտարակաշինութեան համար նկատելի ունեցել հետեւյալ. «Ենկայք շինեա-
լաք մեզ քաղաք և աշտարակ, որով լինիցի զպահն մի և էլ յերկինս» (Մեռնդք,
ԺԱ, 6):

իմաստասերը՝ «կարծեցեալ բանաստեղծ», որ լի հասնում իր վարպետին — բնությանը:

Ռ. Զգուհում դեպի բնություն ու ռացիոնալիզմ և դրա ազդեցությունը գրականության մեջ:—Սարկավազ Վարդապետի ռեան իմաստութեան քերթվածի բովանդակությունից, որի մանրամասնությունները վրա դրոշմաժր կանց առանց, տարզ երևում է, որ եղել է ձգտում դեպի բնություն և ռացիոնալիզմ կրօնի մեջ, որով գլխավոր նշանակությունը տրվում էր ոչ թե հայտնությունը, այլ բնության դիտողությունից բանականությունը և նոր ճշմարտություններին: Դրա արդասիրեն է եղել արվեստի ժաղպան նոր տեսությունը և առհասարակ մի նոր արվեստի պահանջը: Մեր իմաստասեր Բանաստեղծը շատ աչող լուծել է կարևոր գրական խնդիրը, պնդելով, թե բանաստեղծը նմանում, հետևում է բնությանը, իրականությանը: Այս հայացքը, որով արժեքը տրվում է բնությանը, այս արդեն մի մեծ նորություն էր մեր գրականության մեջ և կարող էր ծագել միայն վերածնունդի դարում իրեն հետևանք այն նոր ոգու և ազատագրության, որ առաջ էր եկել կյանքի մեջ: Սարկավազ Վարդապետն այդ անդրադարձել է բանաստեղծության մեջ: Բայց նա մենակ չի եղել այդպես մտածող:

Այսպես որոնմի՝ ինչպես էլ սնվողական թուրքերի ավերածություններով քայքայվել է Հայոց աշխարհը, դարձել քաղաքային կյանքի պնդող դարգացումն անհետևանք լի անցել: Նոր մտավոր հոսանքի առաջին արտահայտությունները, որ տեսանք կորստից փրկված երկրի մեջ, այս ևս 11-րդ դարի համար խոշոր գրական երևույթ է իր նոր անսակներիով և նոր թեմաներով: Հովհաննես (Յուզհաննէս) Սարկավազ Վարդապետից հետո՝ 12-րդ և հետագա դարերում մեր բանաստեղծները, թեկուզ հոգևորական, այլևս չէին կարող գիտակցաբար լանդրադարձել բնություն և իրական կյանք, և լերգել հայրենասիրություն իր գաղափարախոսությամբ:

Բանաստեղծության մասին նոր հայացքն ազդում է և ձևի վրա: Դրա անմիջական հետևանքը լինում է և այն, որ մեր բանաստեղծներն և առհասարակ մաստնադիրները թողնում են սեթեթ շինծու ձևերը, անհասկանալի հնարանություններն ու ճոռոմ ոճը, որ մտել էր բանաստեղծության մեջ անգամ: Պարզությունն ու բնական մտածողությունն սկսում են իշխել ընդհանրապես: Դրականության մեջ երևան է գալիս 12-րդ դարում կենդանի խոսակցական լեզուն՝ միջին հայերենը, որ արդեն բավական հոռացած էր հին գրական լեզվից՝ գրաբարից: Ստեղծվում են, ինչպես գրում է Սարկավազ Վարդապետը, ըստ բովանդակության և ըստ ձևի ավելի գեղեցիկ, «ստեղծական», «սու հանգրծիալ» ժամանակ անշնչելի քայքայարժա քերթվածներ: Այս է եղել ազդեցության արդյունքը բնության աշակերտի, մեր տեղի իմաստասերի աշխատանքի, ինչպես և նրա պես մտածող նրա ընկերների, որոնց մեջ ինքը՝ Սարկավազ Վարդապետը փայլել է իր մեծ սիրով առ բնությունը և այժմ փայլում է իր թիմաստության բանով, որ մի ներքող է մտնության:

Կիրակոս Գանձակեցիին⁵⁹, հիշելով Սարկավազ Վարդապետի մահը՝ 1126 թ., շարունակում է. «և զկնի ամի միոյ վախճանեցաւ սուրբ լուսաւորիչն Դաւիթ վարդապետն, Ալաւկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս զնորոգեալսրմարս և պիտանացուս ի խնդրոյ քահանայի միօջ, որում անուն էր Արքայութիւն, ի քաղաքէն Գանձակայոյ. Դաւիթն ինքն էլ Գանձակ քաղաքից էր։ Նրա մասին հիշում է և Վարդան Արմենացի⁶⁰, ասելով, թէ Սարկավազի մահից մի տարի հետո վախճանվել է և Տլծակիցն իւր Ալաւկայ որդին Դաւիթ, որ կանոնքն էր դիւրահասաւ։ [Այլ ընթերցված՝ «որ կանոնքն գրեաց դիւրահասաւ»]։ Թե Դաւիթ վարդապետն ինչի՞ մեջ է եղել Սարկավազ Վարդապետի Տլծակիցքո, աշխնքն՝ դորձակից, աշխատակից ընկերը, այդ հայտնի չէ։ Այնուհետ է, որ ես ես իր ժամանակին հայտնի հեղինակավոր մի անձ է եղել, որ նրա մահվան մասին հիշում են և՛ Վարդանը, և՛ Կիրակոսը և վերջինս նրան զուստորիչ է անվանում։ Նրա Կանոնական օրինադրութիւնները կամ՝ Կանոնները, քարեքախտաբար, մնում են, թեպետ և դեռ ձեռագիր, քայքայւոյ՝ մասին ունեց քաղվածաբար տպված բաժանան տեղեկութիւններ⁶¹։

Դաւիթի գործը, որ բազկացած է 98 կանոններից, ունի ոչ թե գրական արժեք, այլ կոպտոր-պատմական։ Դա ունեցել է իր ժամանակի համար գործնական կարևորութիւն, թե ինչպե՞ս պետք է վարվի մի քահանա կամ այլ ոք իրեն վերաբերյալ որոշ դեպքերում։ Դրա համար ես, հաճախ ոգտվելով եկեղեցու հայրերի կամ Հայոց եկեղեցական կանոններից, ինչպե՞ս և ավանդութիւններից, տալիս է խորատներ ու հրահանգներ, քայք ոչ սառն, հակիրճ օրինադրական եղանակով, այլ սովորաբար ընդարձակ րացատրութիւններով։ Այդ եղանակով ես ձգտել է մտքերը զուստնորելու և ոգլուրահասա դարձնելու իր ասածները, ինչպե՞ս բնորոշել են նրան և նրա գործը Կիրակոսն ու Վարդանը։ Նրա ասացվածք պարզ ու կենդանի է և անգամ ժողովրդական։ Նրա քննարկած քաղաքական նյութն ևս մեծ մասամբ ժողովրդական է։ Ալաւկա որդու այս գործը Հայոց դրականութիւն մեջ իր տեսակով առանձին մի բան է, գոյցն առաջինն ու միակը։ Նա ներկայացնում է կյանքն, ինչպե՞ս կա, ինչպե՞ս ինքը տեսնում է այդ, և իր կանոնները դնում է իր աշակերտին աշխնքն՝ Արքայութիւն քահանային՝ ըմբռնելի երևութների դեմ։ Այդ դիտողական նկարագիրն է, որ բարձրացնում է կանոնական օրինադրութիւնների արժեքը։ Նրա պատմական նշանակութիւնը հենց այնանց է, որ ես սերտ կապված է իր ժաղման, միջավայրի ներքին վիճակի և դարդաց-

⁵⁹ Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 107։

⁶⁰ ՏԻՒԻՆ Վարդանայ Պատմութիւն տեղեկական, Մոսկւա, 1861, էջ 159։

⁶¹ Տեղագրական հանգան, ԺԳ գիրք, 1906, էջ 108—118. Նույն, ԺԵ գիրք, 1907, էջ 82—87. Կ. Պատմութեան, Դաւիթ Ալաւկա որդի Այո հոգւածը մեղ միակ ոգլուրն է։

ման պայմանների հետ և ճշգրիտ հայտարարել է նրանց: Այս բնորոշումը, որ զայն և մեր հին գրականությունը հմուտ մի անձից⁶², բավական է արդեն Դավիթ վարդապետին համարելու: Մարկավազ՝ Վարդապետի արժանավոր գլխավորը:

Անշուշտ, կարելի չէ պահանջել, որ նա մեր ժամանակի տեսակետներն ունենա, այլ բավական է, որ նա իր կանոններով մաքառել է իր դարի վառ սովորությունների և ապականված բարքերի դեմ, ինչպես և դանազան առողջապահական միջոցներ է առաջարկել ապոփոմներին և մի քանի այլ բաների վերաբերմամբ ըստ իր ժամանակի հասկացություն: Նրա գրքից հնարավոր է լինում ծանոթանալ մեր հին կենցաղին, բարքերին, մասավոր բարոյական դրույթյանը, և, կարելի է ասել, Ալավկա որդին համայն հին սովորությունները կամ սովորական դիրքերն է վերաբերել հիմնականում միջոցներ գործադրել, երբ որդի կենդանիներ՝ շուն, գայլ և ուրիշներ դիպչում են ուտեցողի, և ավելի ևս առանձնապես շմկեանկի՝ զնայքերում, այսինքն, երբ գարշելի մկնով պղծվում է որևէ ուտելիզն: Զքի նորա [մկան] շատ է, քան դամնայնա, գրում է նա: Այժմ ևս թմկեանկը կամ մկեանալը զզվելի է: Այդ, իհարկ, առողջապահական զգուշությունից է ծագում: Աջալուծյուն քահանան ամենից առաջ դրանով է հետաքրքրվել. նա մկեանկի մասին է օկան իր հարցումը, ուստի դրան վերաբերյալ կանոնները գրված են Դավիթ վարդապետի գործի սկզբում:

Սակավաթիվ շնն այն կանոնները, որոնց մեջ խոսվում է պատժի ենթակա զանազան մեղքերի ու հանցանքների մասին, ինչպես են՝ ամուսնական քրեապոփոյություն, տուրական արտեր, քապանություն, զոդություն. վաշխառություն, հրդեհումն, երդմնազանցություն, հիշոց, կախարհություն և այլն: Առանձնապես մանրակրկիտ ձևով գրում է նա կանոններ ընդդեմ զանազան հմայությունների և սնահավատության. հրահանգներ է տալիս զանազան բարեպաշտական ծեսերի, տոների, ժամերգության. պահերի, մկրտություն, մեռելի կոծի և այլի վերաբերմամբ: Կան կանոններ նաև սեռական հարաբերության, ծննդաբերության, ջահանտների երկրորդ ամուսնության, ձրի ուսման մասին, և ընդդեմ այն անկարողության, որով քահանայական տների պատկանող աշխարհականներից ոմանք իրենց սեփականությունն էին դարձնում ժողովուրդը և, նույնիսկ թահանա շնդած դպքերում էլ, բուսությանը հանդիսանում էին եղահաւորութիւն քահանայից: Հատկապես հետաքրքիր է վերջին (98-րդ) կանոնը, որի մեջ խոսվում է այն. ժամանակի շնորհավանառության և կաշառակերության մասին: Աղվանից աշխարհում: Առաջնորդները պահված ամուսնիներին բաժանում էին միմյանցից և գրով թույլ տալիս ուրիշ-

⁶² « Ազգագրական հանգան, Ժն, էջ 87. հոգված և, հաստատված »:

ների հետ կենակցելու Այսպիսիներին նրանք որոշ հարկի տակ էին դնում և ամսն ամիս պահանջում հարկը, նրանք թունեին իրենց գործին հավատարիմ գործակալներ, որոնց ձեռքն էին հանձնված օրհնության թղթերը և անվանական ցուցանիշները, Այդ մարդիկ, ինչպես միշին դարերում ինդուստրիալ բաժանողները, յուրաքանչյուր ամիս զավառից զավառ էին շրջում... և խառնվածք պահանջում էին նշանակած տուրքերը և այլն: Հետևանքը լինում էր սկսել և առն բաժանումն, դատակաց ցրումն, ընչից առումն, առնց առումն, ի հայրենիաց ելումն, ի գաղտնաբռն և յատեանս բողոքումն... և այլ և յուրով բռնախնդրութիւնս:

Այս է ահա Վանոններին կամ թորինադրություններին բողանդակությունն ըստ հիշված տղթութիւն: Այդ աշխատությունից օգտվել է Մխիթար Գոշը, քայց դա պիտանաջուս է համարվել նույնիսկ 13-րդ դարում, և, ինչպես նրնում է, դրանով առաջնորդվել են ընդհանրապես, մինչև անգամ Մխիթար Գոշի Երատաստանագրքին հրատարակվելուց հետո: Դրա պատճառն այն է, որ Գալթի վանոնների բողանդակությունը, թեպետ և մտաւոր եկեղեցական վանոններից ծագած, ինչպես ասվեց, սերտ կապված է այն ժամանակաշրջանի իրականության հետ, և ամեն ինչ արտահայտված է դիւրամբոնելի ձևով: Նկատի ունենալով այդ գործի գործնական կիրառական նշանակությունը, կարծում ենք սխալ չէ, որ այդ Վանոնական օրինադրությունները դնում են հայկական դատաստանագրքերի շարքի մեջ⁶⁸: Իսկապես որ այդ երկն իր տեսակով մի նոր բան է ձեռք մեր հին զրականության մեջ, և այդ նորն էլ ժնունդ է նոր մտավոր հոսանքի:

68 Ե. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմութեան, հատ. Ա, Երևան, 1939, էջ 76.

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՏԹԵՈՍ ՌԻՌԱՅԵՑԻ ԵՎ ՌԻՐԻՇՆԵՐ

1. Ժամանակագրություն:—Հայոց գրականության 12-րդ դարը,—հայտնի չէ, թե ուռաչին անգամ ումից, —կուլմած է քերթաթիւ դար՝ համեմատութեամբ 5-րդ դարի կամ Քրիստոսի: Այդ կնշանակի՝ մեր գրականութիւնն առաջին անգամ զարգացում լի ունեցել: Քաջ ալդ ճիշտ է միայն պատմագրութեան համար, այն էլ, երբ նկատի ենք առնում այս գրական տեսակը հորինվածքի կողմից, Արդարեւ 5-րդ դարում գրված պատմութիւններն աւելի կամ պակաս շարժուի գեղեցիկ են. անհնգ Եղիշեի ղՀայոց պատերազմի նման գեղարվեստական երկը՝ իր ընդհանուր գույնով և զգացման գաղափարով ու խնդրով, որ սկզբից մինչև վերջն իշխում է ամբողջի վրա՝ տալով նրան մի գեղեցիկ միութիւն: Մական հետզհետեւ արվեստը պակասում է մեր պատմագրութեան մեջ, մինչև որ առաջ է գալիս ժամանակագրութիւնը կամ տարիագրութիւնն առանց որևէ արվեստավորութեան, անգամ առանց անձնական տեղի նույնութեան: Եթե Եղիշեի երկի հորինվածքի գեղեցկութիւնը ծագում է հոսանքան կլասիկ գրականութեան ազդեցութիւնից, ժամանակագրութիւնն արգասիք է միջնադարյան ընդհանուր քրիստոնեական կուլտուրայի: Նույն գրական տեսակը նույն ձևերով և նման աշխարհայացքով սիրված է եղել նաև Եվրոպական ժողովուրդների մեջ: Տարեգրութիւնն այն ժամանակներում պարզամիտ գրագետների համար համեմատաբար հեշտ կատարելի մի գործ է եղել — գրի առնել եղելութիւնների պատմութիւնն առանց որևէ ուսումնասիրութեան ու ներքին կապի, առանց որևէ համակննտութեան գեղեցիկ հորինվածք առաջ քերելու մի գեղարվար գաղափարով, որ ի մի միութիւն, ի մի ամբողջութիւն ձուլւի պատմված գեղարվար:

2. Մատերիոս Ռուսայեցու Ժամանակագրությունը: — Այսպիսի պարզ ու հասարակ տեսակի առաջնակարգ ներկայացուցիչն է մեզնում Մատթեոս Ռուսայեցին իր Ժամանակագրութեամբ:Նա Սարկավազ Վար-

1 Մ. Ռուսայեցի, Ժամանակագրութիւն: Գրքի ողջի վերնագիրն է. «Գրառութիւն արարեալ Մատթեոսի մեծի քահանայի Ռուսայեցու վասն Քաղաքաշինաց քաղաքորոցն և

դասակարգի որով է ապրել, բայց ոչ Հայաստանում, Նրա կենսագրությունը հայտնի չէ, ինքն իրեն անվանում է՝ «Մատթեոս Ուռույթի և վանական», «Մատթեոս Ուռույթի և վանաց երէց»², Հայկանորեն Ուռույթի մի վանքի երէց։ Նա ժամանակագրությունը գրել է այդ քաղաքում, «Եւ Մատթեոս... զամս քաղութա քաղաքսն քննութեամբ կացի և արիարարս յառա ի քաղաքս Միջագետաց յԱռհա ժողովեալ գրեցաք մինչև ցայս վայր»³, որ է 1000 թվականը Ներսայալ Միջագետքում հին դարերից ի վեր ապրել են շատ հայեր. 11-րդ դարի երկրորդ կեսին, բիզանդական քաղաքականութեան հետևանքով, Նրանց թիվն ստվարանում է այնտեղ։ Բավական թվով քաղաքներ իրենց շրջակա գյուղերով տնցնում են հայ ազնվականներին ձեռքը, որոնք իշխում են այն տեղերում իրեն բիզանդական կուսակալները, Այդպիսիններից մեկն եղել է մի ժամանակ նաև հին նշանավոր Սղեփա կամ Ուռհա քաղաքը, որի բնակիչների մի խոշոր մասը 11-րդ դարի վերջերին և 12-րդ դարում հայեր էին։ Մեր ժամանակագիրը Մատթեոսն ահա այդ կողմերի հայության արտահայտությունն է 11—12-րդ դարում և հետաքրքիր է իրեն այնպիսին, ինչպես իր աշխատությունից երևում է, նա իր ժամանակի ռազմականներից և կրոնիկներից չէ, ոչ հարստացողներ և արվեստներ և սովորել, ոչ էլ քերականական ուսում ստացել։ Կրոնական գիտությունն էլ հմուտ չէ. բայց, հարկավ, նա ևս, ինչպես ուրիշներն այն դարում, տոգորված է կրոնական ոգով ու հայացքով։ Նա համեմատ մարդ է և շատ համեստ էլ կարծիք ունի իր մասին։ Բայց մի մեծ առավելություն է ունեցել այդ երեցը։ Մերի է իր գործը, հոգով-սրտով նվիրված է եղել դրան, և սկսած 12-րդ դարի սկզբից կամ 11-րդի վերջերից, երկար տարիներ ձեռնարկաբար աշխատությամբ կարողացել է քաղաքական աղբյուրներից նյութեր ժողովել, զնայքեր տարեթվերը որոնել, գտնել և ըստ կարի ճշտել, և եղելությունները, տարիներին կարգով դասավորված, միմյանց հետևից գրի առնել և հորինել մի մեծ և ընդարձակ գիրք, վերջացնելով այդ գործը 1140-ական թվականներին, ծնունդից օրերում։

Ենիշ է, Նրա աշխատության բազմազան նյութերի մեջ չկա որևէ ներքին կապակցություն, բայց նա այդ արել է ոչ սառն, ոչ անտարբեր կերպով։ Նրա երկի մեջ հաճախ գտնում ենք նույն ոգին և զգացմունքը, ինչ որ Արիստակես Լաստիվերտցու, միայն ոչ բուն սաստկությամբ, ավելի զտված ու նստած, և քաղաքական դրություն և հայության վիճակի պայծառ հասկացություններ։ Այս տարբերությունն առաջացել է այնու, որ Ուռույթի ժամանակով և տեղով քաղական հետք է եղել Լաստիվերտ-

այլոց բազմաց ի Դժ թուականին սկսեալ մինչ ի ՌԺԱ թիւն տարտեալքս Այս վերնագիրն քատ երևույթին ուրիշի գրած է. ՌԺԱ (ս. 511-551—1152) թվականը վերաբերում է շատ քաղաքացի Գրիգոր Նրեցի Նարեկությունը։ Գրքի սկզբում էլ պակասում է մի գրքը կատար

² Անդ. էջ 113, 114.

³ Անդ. էջ 278.

ցու ապրած աղետալից ժամանակից ու տեղից, թեպետ և իր օրով և իր ապրած երկրում էլ պակաս չեն եղել աղերածն ու կոտորածը:

Նրա աշխատությունը կազմված է երեք մասից, առաջինը բովանդակում է Հայոց ՆԱ (=թ. 952) թվականից մինչև Հայոց Շ (=թ. 1051) թվականը, Երկրորդ մասի առաջարանի մեջ (էջ 114) գրում է. «նա և այլ նա ունիմք տանել ձեզ ամաց քարանձավից զաշխատութենէ Մատթէոսի Ուռհայեայն և վանաց երկրում: Ուրեմն մտադիր է գրելու մինչև 1131 թվականը (1051+80=1131), Պետք է ընդունել, որ նա հիշված առաջարանը գրել է այս թվականից ոչ առաջ, քանի որ կարելի չէ կարծել, թե նա մտադրված լիներ պրելու իր գեռ լապրած տարիների ժամանակագրությունը, Երկրորդ մասը հասցրել է մինչև Հայոց ՇՄ (=թ. 1101) թ., Գրանից հետո, ասում է երրորդ մասի առաջարանի մեջ (էջ 277), «զամս տասն [ուրեմն ոչ վաղ քան 1141 թ., քանի որ 1131+10=1141] ոչինչ արարաք հոգս վասն այս ժամանակագրութեանցս և թողնալ էաք ի բացնայ զարուեստ գրութեանցս»: Մերումբյան ժամանակ վերսկսելով իր գործը՝ հայտնում է, թե «զամաց երեսնից ցնե նա առաջի կայ ի գրի հաւաքել»: Ուրեմն դարձյալ մինչև 1131 թվականը (1101+30=1131), նույն առաջարանի վերջում նա հայտնում է, թե ՇՄ (=1101) թվականից հետո պիտի գրի «զայլ նա զամաց քսան և հնգից և երեսուն» լիցի վճարումն պրոցս: Ուրեմն մինչև 1126 կամ 1131 թվականը, Այսպես ուրեմն, նա մտադիր է եղել իր ժամանակագրությունը հասցնել մինչև Հայոց ՇԶ (=580+551=1131) թվականը, բայց բերել հասցրել է մինչև 1136 թվականը: Հետ այսմ նա իր աշխատությունը երկրորդ և երրորդ մասերը գրել է 1131 թվականից հետո և երկար ժամանակում: Գործի համար նյութեր հավաքելը, հարկավ, նա վաղ է սկսել. «Եւ այս եղև ի հայրապետութեան տանն Հայոց տեառն Գրիգորիսի և տեառն Թարսդի, յորժամ եղև սկիզբն առաջին՝ երկրապատմութեանս, Գրիգորիսը Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն է (1066—1103 թթ.), իսկ Թարսնդը՝ նրա աթոռակից Թարսնդ կաթողիկոսը (1101—1213 թթ.): Ուրեմն ոչ ուշ քան 1105 թվականը, որպեսզի միաժամանակ այն երկուսի օրով եզած լինի ճառաչին սկիզբը: Ուռհայեայն իր գործի համար մեծ քանք թափելով՝ հարցուսիրտ է արել հին ժամանակների ականատեսներին և ականջալուրներին, շատ բան իմացել է ծերունիների ավանդությունից և կամ քաղել ուրիշների թողած հիշատակարաններից:

Առաջին մասի հարյուր տարվա պատմությունը գրել է նա բոլոր այնքանեաց տեսողացն և լսողացն, որք էին ի հին ամաց ծնեալք, և ընդ ընթերցողսն յառաջին պատմագրացս, որք ականատեսք էին լեալի ամենայն եղելոցս: Երկրորդ մասի ղեկավար համար նա գրում է, թե կատարվել են «շատուրս հարցն մերոց, որք էին քաղում տեղամ տեսեալ ալօք իւրեանցս: Այդ մասի վերջին տասնամյակների, ինչպես և երրորդ

մասի մեջ պատմված դեպքերին նա ժամանակակից է. որոշ բաներ նա անձամբ է տեսած կամ անանատեսներից լսած. Քլայս բազում անգամ լուսալ է մեր ի բազմացն. Քլորն է մեք իսկ լուսաք զայս ի քաղաքացեացնն, և նմանները:

Որքան նրա ժամանակագրությունն իր հարուստ քովանդակությամբ շատ կարևոր մի աղբյուր է պատմութեան համար, նույնքան այնտեղ գտնում ենք միասիտ դուրսահանությամբ, տարիների կարգով, իրար հետևից մեջ ընկած ամեն տեսակի բաներ ևս. ընդթյան երևութներ՝ երկրաշարժ, գիսավոր աստղեր, դանազան օդերևութներ, կարմիր ձյուն, սև ձյուն, անասունների կոտորած, թռչունների պատերազմ, մարախ, սովեր, մահադարձամ, նախապաշարումներ, ինչպես ընդհանրապես տարեգրքներն ալլ ազգերի մեջ, նա պարզամտությամբ հավատ է ըն-
ծալում ամեն տեսակի պատմվածքների, երկնային նշանները — երևութ-
ները համարում է դժբախտությունների շարագուշակ ազդարարներ, և նմանները: Գրանց ևս միտքին խառն պատմում է նա. երբեմն կոտ-
նառոտ նշումներով, երբեմն էլ քավական ընդարձակ ու հանգամանո-
րեն, ամեն տեսակ եղելություններ եկեղեցական և քաղաքական կյան-
քից: Խոսում է հայոց թագավորների և կաթողիկոսների, հունական կայ-
սերների և ուրիշ իշխողների մասին: Փոխանիս քեմ է հանում քաղմա-
թիվ վայրերի ու քերդերի տները, մեծ ու փոքր բռնակալներ—հույն ու
հայ, արաբ ու թուրք, եղիպտական թե վրացական, ժամանակագրության
վերջին մասի մեջ՝ նաև խալկիք (Ֆրանկ): Նրանք շարունակ առշա-
վանքներ են դրժում, իրար հետ պատերազմների մեջ են, միմյանցից
հափշտակություններ են անում, կազմում են իրենց համարը նոր իշխա-
նություններ կամ կորցնում են իրենց իշխանությունը: Ամենքն ամենքի
դեմ են: Երկիրը գտնվում է շարունակ խռովահույզ ու մրկածույր վիճա-
կի մեջ: Եվ հետևանքը լինում է երկրի ավերում, ժողովուրդների կոտո-
րած, տնտեսական քայքայում, սով, — սղանաշունչ կոտորած, «կո-
րուստ հաստացնելոց», զգոր կրեաց ազգս Հայոց ի գիսաւոր և ի պիղծ
ազգէն Յդրմնացւոց, Թուրքաց յեղբարոյ իւրեանց Հոռոմոցն, հետո նաև՝
«ի մուլի ազգէն Ֆրանկացն: Բացի Միշադեոսից նա ուշադրություն է դարձ-
րած նաև Ասորիքին և Հայաստանի հարավային կողմերին անշուշտ այն
պատճառով. որ դրանք Ուռլային մոտիկ են, և դրանց մասին ավելի նյու-
թեր է ժողովել: Մեծ հասած գրքի ակզբում հենց պատմված է, թե «Եղև
սով սաստիկ ի քաղում տեղիս. բայց յաշխարհն հարաւոյ, յերկրին Տաւ-
կաց [=ասորաց] եղև նեղութիւն մեծ, և առաւել քան զամենայն ի Միշա-
դեոս. և ի իստողթին է սովոյն տալնապ և տալտանում լինէր ի քաղում
տեղիս, և ևս ի հոլակաւոր մայրաքաղաքն յՈւռլա, զոր կանգնեաց Տիգ-
րան արքայ Հայոցն և այլն:

Նա պատմում է շատ պարզ ու հասարակ լեզվով, սովորաբար աղ-
քատ ու մերկ, անպանծուն ժողով, նույն քառերի ու դարձվածքների կրկնու-
թյամբ, մեծ մասամբ, անշուշտ, իր աղբյուրներին հետևելով, Գովածքը

մեկ-մեկ կենդանի և աշխուշ, նույնիսկ ազգու է դառնում. այդպիսի հաս-
վածներին մեջ ժողովրդական զրույցների արձագանքն է լսվում: Բայց
հանդես է գալիս և ինքը ժամանակագիրը՝ բարեհոգությամբ դաժանելով ու
կարծիքներ հայտնելով զանազան անձերի և իրակությունների մասին.
իր սիրով դեպի ամեն ինչ, որ ժողովրդի օգտին է, ինի դա հայ թե օտա-
րազգի, իր ասելովյամբ դեպի ավերիչներն ու հարստահարիչները, և իր
հայրենասիրությամբ: Մերթ ընդ մերթ Արիստակես Լաստիվերտյու-
Անով, քայքայող Նրա չափ հաճախ, նա էլ ողորդ է հորինում: Հայրենասի-
րությունն է դրդում մեր այս տարեգրին ասելու և՛ հույներին, և՛ թու-
րքերին: Նրա այդ զգացմունքը, սակայն, կույր չէ. նա ուրիշներին վատ
կողմերը եթե պայտարակում է, լավներ էլ տեսնում է. երբեմն պակաս չի
զողում նաև հունական կայսրներին ու զորավարներին: Բայց երբ նրանց
դիպում են հայերին և անխրավություններ են տեսնում, այն ժամանակ նա
քառ չի գտնում իր զայրույթն և ատելութունը ցույց տալու: Երազանա-
բար սպանմամբ ընթանալով իրեն զօժ թունաւոր, որ էլից գտնդի անհա-
ւատ ազգաց, — ասում է նա հույն զորավարներից մեկի համար, որ
եգիպտացիներից հաղթելուց հետո՝ վրեժը հայ ժողովրդից էր առնում:
Ինչը հայոց քարաքանդակ մեծ սպարապետ Վահրամ Պահլավունին չի
թողնում, որ հաղթական հայ զորքերն անողորմաբար կոտորեն փախուղ
հույն զորքերին, օրոհք, քեզմականակ, լին խնայում նույնիսկ խաղաղ
հայ ժողովրդին: Սովոր են ազգն Հոռոմոց երդմամբ կորուստնել զա-
մենայն մեծամեծս աշխարհիս, — ասում է նա: Եվ այսպես վարվում են
նրանք ու միայն հայերի, այլև ուրիշների և իրենց իրենց վերաբերմամբ:
Այդ պատճառով հույները նրա համար բացառաբար և նենգաւոր ազգ
են, Եանդորմ և լսար ազգա:

Մտաթեոս Ուհայեցին, սակայն, հանգիստ չի կարողանում խոսել
հունական իշխանության մասին գլխավորապես այն պատճառով, որ
հայոց նրկիրը՝ հայ իշխողների ձեռքից խաքեությամբ հափշտակելուց
հետո՝ անպաշտպան են թողնում արևելքից խոտոթ թուրքերի առաջ:

Նույնպես նա զայրույթով լցված է այս վերջինների դեմ: Նրանց
զործած դաժանությունները պատմելիս բռնկում է մեր այս տարեգրի
հայրենասիրությունը, և նրա զրիւր թափ է առնում՝ օտնդծելով դեղե-
ցիկ զրապան հատվածներ: Բերենց այդպիսիներից մի փոքր կտոր: Մե-
քաստիսյի ավերումը մանրամասն պատմելուց հետո նա գրում է.

«Ո՛վ կարասցէ մի ըստ միոյն պատմել զկորուստ բարկութեանն և
զլաց ապաշաւանաց տանն Հայոց, զոր յանօրէն և յարեսնարբաւ զազա-
նացն զօրացն թուրքաց կրեաց յանտիրութենէ, ի օտաւ պահապանացն,
ի տկար և ի թուլամորթ վատ ազգին Յունաց: Վասն զի մի առ մի քակնալ
հանին զքաջ զօրականսն ի տանէն Հայոց, զորս հանին յարկաց և ի դա-
ւառաց և բարձեալ խափանեցին զաթոռ թագաւորութեանն Հայոց, քա-
կեցին զցանկ պահպանութեանն զօրաց և զօրավարաց. և ազգն Հոռոմոց
իսրեանց անուռ քաշութեան զանգարալ փախելն արարին պարծանք. նմա-

նեցան վատ հովուացն, որ յորժամ զգալն տեսանէ՝ փախլի Սահայն Հոռոմբ յայն ջանա ջանացան, որ զուր զպարիսպ ամբողջն տանա Հա-յոց քանկակ կործանեցին և Ղուարսիք ի վերայ արձակեցին սրով, և զամենայն յաղթութիւն իւրեանց համարեցան, և ինքեանք տեսա-կառելի նրեանք կուրտ զօրավարօք և ներքինի զօրօք զՀայք պահել ջա-նային, մինչ և Պարսիք անտէր տեսին զամենայն արեւելք։ Եւ յայնժամ մեծաւ զօրութեամբ զօրացան ալլազդիքն, որ ի մէկ տարույ հասան մինչև ի դուռն Կոստանդնուպօլսի և առին զամենայն աշխարհն Հոռոմոց, զքա-ղաքս ժովնդերաց և զկղզիս նոցա, և արարին զազգն Յունաց որպէս ըզ-քանտարեկայս ի ներս ի Կոստանդնուպօլսիս⁵։

Այսպիսի հատվածներէ մեջ Ռուհայեցիին քարձրանում է պատմագրի աստիճանին. նա ճիշտ ըմբռնել է պատմական իրականութիւնը և զան-ցիկ արտահայտել է այդ նրա պատճառարանութիւնը սելջուկյան Թուր-քերի արագ ծավալվող աղողութիւններէ նկատմամբ մինչև այժմ էլ պա-հում է իր արժեքը։

Գալիս են խաչակիրները իր յօգնութիւն քրիստոնէից։ Ռուհայե-ցիին ուրախանում է Սեւեոսն հայ կրօնավորները և այն հայ իշխանները, որոնք հաստատված էին Տաճրոսի քարձռնքների վրա, ինչպես Ասորի-քում ու Միջագետքում, սրտաբաց ու գրկատարած ընդունում են նրանց, հասն կնքալ օգնում։ Թայց նրա նրանք մի փոքր ամբարնում են Արեւելքում, սկսում են այժմ նրա՛նք նեղել հայերին. հայ իշխանների ձեռք խլում են նրանց կալվածները և ոչնչացնում նրանց իշխանութիւնները։ Եվ Ռուհայեցու ատելութիւնը շուտ է գալիս այն նորեկ քրիստոնյաների վրա, որոնք «ամենայն անիրաւութեամբ և անառակ վնասիւք մոռացան ըզ-պատուիրանս տեսան։ Ուստի աստված էլ նրանց ալլեա լի օգնում, ասում է Ռուհայեցիին։ Նրանց կրած առաջին կոտորածը պատմելիս մեր Տարեգիրը նույնիսկ ուրախանում է։ Այս դեռ առաջինն է, — ասում է նա. «յոտաջ միտ գիք և մի՛ ձանձրանայք։ Նրա այս յարախնդութեան պատճառն այն է, որ խաչակիրները քարքարոսաբար մեծ լարիքներ են ասացնում և անմեղ ժողովրդին և նրանկներն, — ասում է նա, — յլսժա-րութեամբ հեղումն արեան առնէին անմեղ և արդար արանց⁶։

Դառն արհամիրքների ու կոտորածների հետ Ռուհայեցին արձանա-դրել է նաև ռաբալի գործեր, երբեմն իսկական փոքրիկ վիզպակներ մտն-րանկարական ձևով, անգամ ժողովրդական վիզպական մանրամասնու-թյամբ պատմվածքներ։

Այսպես, օրինակ, մենք տեսնում ենք, թե ինչպես Թոռնիկ Մամի-կոնյանը այն խառնաշփոթ ժամանակներում քաղությամբ պաշտպանում է պահպանում է Սասունի անկախ իշխանութիւնն ընդդէմ հարձակվող Թուրքերի և բռնակալ Փիլարտոսի ու Ֆրանկների և ուրիշների և սպան-

⁵ ԱՅԿ, էջ 136 և հետ։

⁶ ԱՅԿ, էջ 203 և հետ, 208 և հետ, 207 և հետ։

վում է դարանամուտ նետահարույթյամբ⁷։ Մի իսկական վիպական հերոս է նա, որի ժամանակն ու կյանքի գծերն տեսլայման ազդել են մեր ազգային հերոս Սասունցի Դավթի վեպի ու բնավորության վրա⁸։ Այսպիսի վիպական կատարներին էլ, օրինակ, նաև ժերուների մեծ իշխան խաչիկի և իր որդիներին մասին պատմածը, հայրիկը սակավաթիվ մարդկանցում քաղաք-նաբար մարտնչում է հարձակվող աշխուզիկների բազմության դեմ⁹։ Նրա կտրիճ որդին, տասնուհինգամյա իշխանը, փախչելով իր արգելանոցից, ուր փակվել էին նրան, որ կռիվ չգնա, ինչպես մի առյուծ մարտի մեջ է մտնում և սպանվում։ Եվ տեսնալ իսպիկ¹⁰ քնկաւ ողն Նորա, անկաւ ցուսերն ի ձեռաց նորա,։ Նա էլ սպանվում է։ Նրա մյուս որդիները, շատան և Ծննդուկ, որոնք իրենց երկրից բացակա էին, վերադառնալով՝ մարտով լուծում են իրենց հոր և եղբոր մահվան վրեժը¹¹։ Այս արիության գործը, որ ժամանակագրության մեջ պատմված է ինչպես մի ժողովրդական վեպ, կատարվել է 1041 թվին Վասպուրականի Թոռնյան զավառում¹²։ Քայց մյուս կողմից տեսնում ենք նաև շատ ցավալի արարքներ ևս։

Ահա նույն Վասպուրականի Թուրամորթ Թագավորը՝ Սենեքերիմ, այդ նախապաշարված ենդ խելապատակը, որ Թագավոր լինելով հանդերձ՝ լի հասկանում իրերի գրույթյունը, հուսադուժ Թուրք զորքերը 1018 (ըստ այլ ընթերցվածի 1016) թվականին մտնում են Վասպուրական¹³։ Արքայորդին՝ Դավիթ և Շապուհ զորավարը զորքով ելնում են նրանց դեմ։ Մինչև այն ժամանակ, — առում է Տարեգիրը, — հայերը շէլին բնաւ տեսնալ Թուրք զօրք հեծելոց. և ի հանգիստն իրաց՝ տեսին ալլաղնալ զնոսա, աղեղնաւորս և հերարձակս իբրև զկանայս։ Եւ յայնժամ զօրքն ձայոց շէլին սովոր պատրաստ լինել ընդդէմ նոսիցն։ Քայց և այնպես մերկացնում են իրենց սուսերները, քաղաքը հարձակվում թշնամու վրա և շատերին կոտորում։ Այլազգիներն էլ հեռվից նետահարությամբ վիրավորում են հայ զորականներից շատերին։ Քեաշ և հզօր պատերազմուչ Եսայուհ զորավարը, հակառակ արքայորդու կամքին, նահանջել է տալիս, որպեսզի սնան ալլ զգետաւ պատրաստեն նետերի դեմ։ Գնում են Ոստան քաղաքը և Թագավորին պատմում եղելությունը։ Սենեքերիմը, փոխանակ իր զորավարի խրատին հետեւելով նոր պատրաստություն տեսնելու թշնամիների դեմ, և կամ մյուս հայ Թագավորներից օգնութիւն խնդրելու, ահա մե ի՛նչ է անում. Ժնյ ձկնր և ոչ էարք, — առում է Ուռհայնցին, — ալլ կայր Թախորհ, լի տրտմութեամբ, և զգիշերն ամենայն անքուն անցունէր, և նստեալ քննէր զժամանակագրութիւնս և զսասցողաժոս աստուածախոս տեսանողացն, զարրոց վարդապետացն, և զտանէր զրեալ ի

⁷ Անգլ. էջ 100 և հանդ. 202—210.

⁸ Միտքն ամուգիր, Բիֆլիս, 1886, էջ 1739—1741, 1743—1748, Մ. Արեղյուճ, Ազգային վեպ. Հոգված, շարունակութունը հուլի ամսագրի 1860 թ. հունվար և փետրվար ամիսների համարներում։

⁹ Մ. Ուռեղյուցի, Ժամանակագրութիւն, էջ 96 և հանդ.

¹⁰ Անգլ. էջ 46 և հանդ.

գիրան ղժամանակն հյանձնոյ Թուրքաց զօրաց և զօրականաց. և ծաննաւ զկորուստ և զկատարած ամենայն երկրի. և գտանէր ի գիրան գրեալ այսպէս, իմէ թի ժամանակին յայնմիկ փախիցեն լարենից լարեմուտս... Եւ ի վայրցանը քաղաքն էր. մարգարենն իրր գուշակած են եղել թուրքերի այս հարձակումը Հայաստանի վրա և հայոց ամբողջ երկրի կորուստըն ու վերջը. էլ կարենի չէր գիտագրել. Բայց նույն մարգարենն իրր խորհուրդ են տվել փախել լարենից արևմուտք. Ահա թե ո՞րչափով կորստարեք է՝ եղել նախորդ դարում ժայռահեղութիւն հասած նեղ կրօնական ոգին և սրտ հետ կապված սքոլաստիկական անմիտ մեկնաբանութիւնը. Այդ մորթապաշտ Սենեքերիմին հենց այդ էլ հարկավոր էր՝ «փախել լարենից արևմուտք», և նա իր հայրենի աշխարհը տալիս էր զանգառան կայսրին, որ մեծ ուրախութիւնով ընդունում է այդ նվերը. և փոխանակ տալիս է նրան Սնրաստիա քաղաքն իր գաղառներով... Ժամանակագիրն այս տխուր պատմութիւնը մանրամասն անելուց հետո հիշում է միայն այս հետևանքը. «Եւ անտէրացաւ աշխարհն Հայոց ի թագաւորաց և իշխանացաւ. Եւստ ճիշտ խոսք է. Սենեքերիմի բացած կորուստյան դուռն այլևս չի փակվում, շուտով նրան հետևում են և ուրիշները. Կամա թե ահա՛մ ելնում են ու ելնում երկրից զուրա, և ոչ միայն իշխանները. Փոխանակ միահամուռ ուժերով նոր մղելու ներխուժող թշնամիներին՝ Թուլամորթութիւնով փախում են ոչ միայն արևմուտք, այլև ուրիշ կողմեր, և այդ է՝ եղել հայութեան լար բախտն ամբողջ ինը հարուր տարի շարունակ»։

Այգայիսի հայրենասիրույն մեծամեծները դիակները միայն երբեմն երբեմն վերագործել են իրենց երկիրն՝ այստեղ թաղելու համար, ինչպես վարվում են վերաբերմամբ նույն Սենեքերիմի, որ մեռնում է 1022 թ., և դին բերում թաղում են Վարագում իր հայրերի մոտ. Այս է դրանց հայրենասիրութիւնը։

Այգայիսի հայրենաթափութիւնը՝ հասկացող մտքերի ու զգայուն սրտերի, ինչպես և իրեն՝ Մատթեոսի համար եղել է աղքատ դասն մշտի, որով շարունակ համակվել են մեր հեղինակները 12-րդ դարում. Կարելի չէ առանց զգածվելու կարգալ Գրիգոր Վկայասերի թաղումը (էջ 300)։ Նա 1105 թ. մեռնում է Հայոց մեծ իշխան Գող Վասիլի մոտ, որ նփրատից արևմուտք կազմել էր մի քաղաքն մեծ հակական իշխանութիւն. «Եւ թաղեցաւ մեծաւ հանդիսիւ ի Կարմիր վանքն մեծաւ Քնուտն [Գող Վասիլի իշխանութիւն կենտրոնն է]... Եւ իշխանն Հայոց Վասիլն և այլ ազատագունդն Հայոց արարին կոծ մեծ ի վերայ Նորա, և դառնակոծ արտասուեց լալին առ հասարակ ի վերայ Նորա... և նովաւ իշխեալ լալին սուրն Հայոց, և լալին զանտիրանալն իւրեանց ի յօտար աշխարհ և զեղանիլն ի հայրենի տանէն իւրեանց»։

Մատթեոս Ուռհայեցիին ինքն ամենից լավ տալիս է իր գործի գնահատութիւնն իր գրքի երրորդ մասի առաջաբանի մեջ¹⁾. իրեն նմանեց-

¹⁾ Անդ, էջ 279 և հետ.

նելով բույն շինող ժիժոնանկին. «Ռրպէս և այն քնքն թուռնն, թէպէտ և ձայնովն քնդդիմանայ բազմաց, այլ մարմնովն տկարանայ, այն որ կոչի ժիժառն. սակայն նա զմերս ունի նմանութիւն առ զարմանալի գործ բնականութեան իւրոյ. թէ դիւրոյ յուշելոյ բնականութիւնս կազմէ և ի բարձունս առանց հիման կատարանէ, շաղախաբնն և շիղախքն վատտակս հնարով հնարէ, և ամբութիւնս պնդագոյնս հաստատէ, և որդառ իւրոց զնա տացէ ժառանգութիւնս, զոր և այլ յազմանդամ թուռնոց անհնար է զայն գործել, արծուոյ ասեմ և նմանեաց նորա... Արդ ալապիտի օրինակաւ հանճարեղք և դիտնականք զամենայն քննութիւնս Հին և Նոր Կտակարանացն աստուծոյ կարող են առնել... Բայց զայս հաստատապէս ասացից և առանց նրկալութեան, վասն այս՝ որ ի մէջ քննեալ գծադրեցաւ, անհնար է նթէ այլ կարող լինի զայս գտանել և կամ հաւատամբ ասեմն միահամբուն տգզաց և թագաւորաց, հայրապետաց և իշխանաց, զամենայն ժամանակս թուականութեամբ ի դիր հասցնել, վասն զի վնարնալ հասան արալինքն, որք ակնատեսք էին ամենայն ժամանակացն: Արդ զայս ոչ ոք է կարող առնել, զոր ինչ մեք արարաց, զի զոր ինչ գրեցաք՝ գրեցաւ: Եվ նա մեծ հիշատակ է թողնլ իրեն՝ իր երկով զառնալով իր ժամանակի հարազատ հայնքին և տալով մեզ մի մեծ ժամանակաշրջանի ընդարձակ պատկերը:

8. Գրիգոր Երեց անունով մեկը շարունակել է Ռահայնցու ժամանակագրութիւնը 1137 թվականից մինչև 1162 թ. ներառելով¹²,

4. Սամուէլ Աճեցի: — Նախորդից ավելի կարեոր է այս ժամանակագրի աշխատութիւնը¹³: Նրա մասին կենսագրական տեղեկութիւններ չունենք. իր գրքի մէջ (էջ 137) գրում է. «Ե ՌԺ (=1161) թվին թագաւորն Վրաց Գորգի էառ զԱնի ի յունիս ԺԳ. և ապա յօգոստոս ամսամիտին՝ կոտորեաց զՏահարամէնն էմ. աւ զութառն Ռ. ան. և այսորիկ ակնատեսն եղաք մեք»: Ինքն էլ թաղմամբով ազգերի պատմութիւններից տարեգրութիւններ լսաւազանց համառոտ: Հայոց պատմութիւն նկատմամբ՝ ցականավթիով գնացերով համեմատաբար ընդարձակ քաղվածքներ է արել: Այսպես ինչ նաև Սարգսիւս Վարդապետի գրած Պատմութիւնից հատվածները: Ժամանակագրութիւնը հասցրած է մինչև 1180 թվականը: Ոչ մի գեղարվեստական գրական արժեք չունի:

Սամուէլ Աճեցու ժամանակագրութիւնը շարունակել են սկսած 1181 թվականից մինչև 1336 թ.: Ուրիշ ձեռագիրների մէջ եղել են հավելումներ և ուղիւնդ մինչև 1657 և 1665 թվականները¹⁴,

12 Անգ, էջ 385—428. Գրիգոր Երեց անունը՝ էջ 370:

13 Սամուէլ քահանայի Աճեցու, Հատմանց ի գրեց պատմագրաց յաղագ Գիտի ժամանակաց մինչև ի ներկայս ժաշտոցող արտոնաց, Հատաշարեւով. Համեմատութիւնար, հավելվածներով և ժառանգութիւններով Արշակ Տեր-Արքայանք, Վաղարշապատ, 1898:

14 Տճ՝ Ս. Աճեցի, Ժառաջարկ, էջ ԲԸ, և էջ 140, 161, 173: Սամուէլ Աճեցու աշխատութիւն հնա տպագրված են և շարունակողների գործերը: Բացի այդ՝ նաև իրեն հավելվածները—էջ 185—188. Հովնաթիմիի վերջագրով, Համառոտ պատմութիւն անցիցն անցից ի վերին կազմման Հայաստանի ըստ կարգի ժամանակագրութեան (նովսել ի

Ե. Մխիթար Անեցի¹⁵։ — Եղեւ է Անի քաղաքի Կաթողիկոսն անհղեցոյ
աւագործացը. ապրեւ է 12-րդ դարի վերջերում։ Պատմութիւնքս գրեւ է
Հատիճայի վանահայր Գրիգոր վարդապետի խնդրով։ Պատմութիւնն ու-
նեցեւ է ճրեթ թարակս։ Մեզ հասեւ է միայն առաջին պրակը — սկիզբն և
գլուխը ինք։

Երկն քուսկանէն Հայոց ցոնթ, ոյն է՝ յամէ տեսն 1522 ց1600)։ էջ 200—203. «Քարնիս
տանկացո։ էջ 204—212. «Պատմութիւն աղղին Ռաբրինեանց...»։ էջ 212—223. «Համա-
ռատ պատմութիւն Ռուբրինեանց իշխանացո։ էջ 234—243. «Պատմութիւն Վարդա Երաբաթ
նպիսկազատի ևրդոցս Սողոմոն ճննողի»։

Սա հասն «Վահրամայ Բարսեղոյ ոտանաւոր պատմութիւն Ռուբրինեանց», Փարիզ. տպ. .
4. Վ. Մանաղարեան, 1866. ժամանակակից Ենթահայտ։

16 Մխիթար Անեցի, Պատմութիւն, Մ. Պետերբուրգ, 1879։

ԱՇԽԱՐՀԻԿ ՈԳՈՒ ՎԵՐԱՃՈՒՄ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԿԻ

ԿՅՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայ զաղութն ասորական Մեջերկրալսքում իբրև Ռայկական մշակութի վայր: — Մինչ Հայաստանի Հյուսիսում Հովհաննես Սարկավագ Վարդապետը խոնարհվել էր արդեն դեպ իր արևմուտքը, և Մանթենոս Ռուհայեցին Միջագետքում աշխատում էր իր ժամանակագրության վրա, նույն միջոցին Հայաստանից դուրս, Մովս ընդդում, 1121 թ. իր առաջին քանաստեղծական փորձն էր անում քսանամյա ներսես Պաշլավունին՝ հորինելով իր Եփրատանուֆրինն աշխատությունը: Հուլյնների և սելջուկյան թուրքերի ձեռքից 11-րդ դարում հայերը դիմում էին դեպի արևմուտք: Բազմաթիվ հայ իշխաններ իրենց մարդկանցով, հաճախ իրենց ժողովրդի բազմությամբ, մայր երկրից դուրս քաշվելով կամ քշվելով՝ տեղավորվում էին Փոքր Ասիայում, Կիլիկիայում՝ Տավրոսյան լեռների վրա, Միջագետքում, այլև Ասորիքում՝ Եփրատ գետից արևմուտք: Նրանց կազմել էին այդ կողմերում անկախ կամ կիսանկախ փոքր իշխանություններ, երբեմն էլ անունով միայն ենթարկվելով Բիզանդիային՝ իրենց անկախությունը պահում էին կռվելով մի կողմից թուրքերի դեմ, մյուս կողմից՝ հույն իշխողների: Այսպիսի տարադիմիկ վայրատանկաներից մեկն էր Նոնի և Ներսեսի պապը, մի Պաշլավունի իշխան, Գրիգոր Մադիստրոս Պաշլավունու լուրորդ դստեր ամուսինը: Նրա ուղիներին մեկն էր Ապիրատ Պաշլավունին, Ներսեսի հայրը: Նա տերն էր Մովս կամ Սով կռված փոքրիկ ընդդիմ կամ ղզնիկ, որ գտնվում էր Տյուք պալատում, Անտիոքի երկրի մեջ, Մարաշից (— Փրմանիկից) դեպի արևելք և Այնթապից դեպի հյուսիս-արևմուտք, Սև լեռան շղթայի ճյուղերից մեկի մեջ, մի բրդաձև քարածայռ ու քարանկարկատ զագաթի վրա, ամեն կողմից սնպացած¹:

¹ Բաբգե Ժ. վ. Կյուլտերյան, Մովս, Մովս-Տյուք և Հոսմ-Կյու, Վիճենա, 1906. Պե-
լոնգ Մ. Ալիյան, Շնորհալի և պարսկացի իշխ. Վահագնի, 1873, էջ 96 և հետև., 151, 158, 210:
Բ. Կյուլտերյանը մանրամասն ուսումնասիրել և արձայն է Մովս բերդի և Տյուք գա-

Անխաբահականների հետ զաղթում էին նաև կրոնավորներն ու վարդապետները, որոնք տեղավորվում էին նորաշին վանքերում, գլխավորապես Սև լեռան վրա։ Այսպես կոչվում էին Կիլիկիայի և Ասորիքի միջև հարավից զնայի Հյուսիս ձգվող Ամանոս լեռնաշղթան, ափնի ևս արադնայի Հյուսիս-արևելք և արևելք թեքվող այն ճյուղերը, որոնք խառնվում էին Կիլիկիայի Հյուսիսային կողմերով դնդի արևելք պարզված Տավրոս մեծ լեռնաշղթայի ճյուղերի հետ։

Այս լեռան ընդարձակ թևերի վրա՝ բնական ամրության համար ժողոված էին հույն և ասորի կրոնավորներ ու ճգնավորներ, Գրիգոր Վկայասերի ջանքերով հիմնվում են այնտեղ և հայկական վանքեր, Ասորիքի այս մասում, — Կիլիկիայից արևելք, Տավրոսից հարավ և Եփրատից արևմուտք և Հյուսիս-արևմուտք, — թմիրասացիքը կոչված աշխարհում (հին Պոմազեն թագավորության երկրում, որի մայրաքաղաքն էր Սամսատ), «Մէջերկրայքում», ինչպես անվանում է ներսես Ենոքյանին այդ կողմերը, 11-րդ դարի վերջերի և 12-րդի սուլթան Երվա ատանալյաններում կար, ինչպես տեսանք, Գող Վասիլի հայկական մեծ իշխանությունը, որի կենտրոնն էր Քեսոսը՝ քաղաքը Եփրատին մոտիկ, Կայիս այնտեղ նաև մի քանի ուրիշ հայկական մասեր իշխանություններ, Այս «Մէջերկրայք» ահա իր վանքերով ու հայկական իշխանություններով՝ դառնում է հայկական կուլտուրայի համար մի նոր վայր, որի փայլուն ներկայացուցիչներն են հանգիստացի Գրիգոր ու ներսես եղբայրները 12-րդ դարում, իսկ 13-րդ դարում՝ Վարդան Այգեկցին։

Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ-Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն իր կյանքի վերջին տարիներն անց է կացրել այդ կողմերի վանքերում, որոնք վայելում էին Գող Վասիլ ազդեցիկ իշխանի հովանավորությունը, ներսես Ենոքյանին իր «Վիպասանություն» մեջ այդ կաթողիկոսի համար գրում է, թե Եփրատից վերադառնալիս՝ նա

Ջոթնանօք զանց արարեալ,

Մինչ քի Տաւրոս լեառքն հասեալ,

Անդ ուր սըրբոցըն բնակք եղեալ...

վառի տեղը, նա երաւաղեմի ապագրությանից բերել է նաև Մատթեոս Ռաֆայելոս ժամանակագրութեւնը տարածելու Գրեգոր Նիկեի (Կոստյո վանք) վանքում, ուր (1161—1162) Տէրն Անտաքոս... իջանէր յԱլեքայ երկիրն, և ի բերդն Կաթողիկոսի, որ վառի Եսփո, «Մեջեղայ» անվան տակ նա հուսկեցել է «Մեջեղ Ա. կայսր Քիլիկիայի» (1081—1118)։ Բայց պարզապես աղետալում է զայն Ռուդ Նեոպոլիտների մէջ, ըստ էլիմաստի ապագրության, է «չերկիրն Տլեքայ» — Մի ժամանակ օխալմամբ կարծել են, թե Եսփոքը Տավրոսյան լեռների մէջ, Եսփոց աշխարհում, և տրբերդից հորով գտնված լեռն է։ 2 Բարգին Կալկանդայում «Եսփոց աշխատության մէջ, էջ 28, 71 և այլն, նույնպես և մի. Յրմանյանը՝ «Սեղագրատում», էջ 1325. պար. 910, Քեռոն քաղաքը նույնացրել են Պեհ-հանիի հետ, որ գտնվում է Եփրատի վրա աջ ափին։ Գրիգոր Ներսէս, ռակաչն, հաճախ հիշում է այդ երկուսն իրեն առանձին քաղաքներ. Քեռոն, Պեհանի, Ռապան, Հոսմկլա ու Քեռոն, Պեհանի, Ռապան. — Քեռոն Պեհանի, Ռապան (Ռաֆայելի, էջ 270, 375, 395)։

Ի վաշիշուլ յայն վայր եկեալ
Հովոսապետին զգօնացեալ,
Ի Սեաւ մըթին լեառն անուանեալ,
Ուր են հոգիք լուսաւորեալ...

Անտեղ նա ոչ միայն կրօնավորական կյանք էր վարում, այլև գրա-
կանությամբ պարապում.

Զբանի սիրողսրն հետեւեալ
Եւ առ ինքեան բնակեցուցեալ.
Ձգիրլս Հոգւոյն միշտ ընթերցեալ
Եւ ընդ եոսին յար խօսակցեալ:

Հետո նա սեղափոխվում է Ժեսուն և Կարմիր Վանքը, որ Քեսունի
մոտ էր:

Ի Մէլերկրեալս անդուստ փոխեալ,
Որ Եփրատայ մերձ առակացեալ
Քաղաք Քեսուն իմն անուանեալ,
Յոր հուպ է վանք Կարմիր կոչեալ:

Գող Վասիլ իշխանն ու իր ամուսինը պատվասիրում ու հանձանում
են կրան՝ քրտափմամբ ձերբառնեալս:

2. Ներսէսի ուսումն ու կրթությունը: — Գրիգոր Վկայասերն իր ձեռք
տակ մեծացնում ու կրթում էր իր ցեղորդի Ապիրատ Պահլավունու Գրի-
գոր որդուն, վաղ մանկութունից, կամ ինչպես ներսէս նկարագրին
գրում է,

Որ իր ստննէ գրուով հատեալ,
Առ համանուն հորն վարժեալ:

Հետո նա Գրիգորի հետ պահում ու խնամում էր նույնպես և նրա
եղբայր Ներսէսին, որ ծնված էր շուրջ 1101 թ. և Գրիգորից մոտ վեց կամ
յոթը տարով փոքր էր⁴։ Ներսէս լամբրոնացիէն⁵ գրում է, թե Գրիգոր Վկա-
յասերը Ներսէսին էլ շատ վաղ տարիքից անում է կրօնավորության
համար:

Այդ լուրս ցտպեցինք կամ րոբզերն էլ Եփրատի վրա կամ մոտ են եղել՝ ցույց տրված
կարգով հլուսխից հարով:

² Ընկրթիս Ենթակալ, Ռաեք լափաւ, Վենեթի, 1880, էջ 548 և հետ:

⁴ Մ. Սումեյան, Ազգայատում, էջ 1869, պարագրաֆ 961 գրում է. «Իր կաթողիկոս
եղբորմէն և կամ 8 տարեկան պատիկ, որով շուրջ 1100-ին ծնված կլլա Սովա Գլլային
մեծը, Ռափինքը նրան 1108 թ. և՛ թնված դնում:

⁵ «Թովեառ ներթղական... ներթիս լամբրոնացւոյ. ան՝ս Եփրաթը ընդանրական
ներթիս Ենթակալս, էլմեթին, 1885, էջ 481—497, բերված կտար՝ էջ 479:

Տէր Գրիգորին որ երկրորդ է,
Ի պատուական սուրբ իւր զարմէ
Ջայս հարազատ հղբայրս ընտրէ
Ի շրտընդեայ փոքր հասակէ,
Ի միանձամբ սըրբոց կողէ,
Դաստիարակ ուսման կարգէ,
Ներսէս զանուն նախնւոյն կաշէ:

Քայլց այդ երեխաները երկար շին վայելում նրա խնամքը. նա վախճանվում է 1105 թ.։ Մահից առաջ նա Անի քաղաքից իր մոտ է կանչում իր քնուրդի Քարսեղ կաթողիկոսին, — որ իւր հայրական կողմից էլ Պաշխալունի էր և կաթողիկոսի ամբողջիցն էր արնելը, — և նրան է հանձնում ալն երեխաներին, որ լավ կրթի ու դաստիարակի նրանց, որպեսզի մեծ եղբայրը՝ Գրիգորը հետո կաթողիկոս դառնա։ Վկայասերի մահից հետո Քարսեղ կաթողիկոսը սիրով կատարում է նրա կտակը։ Նա մնում է Գող Վասիլի իշխանութւյան մեջ և նստում է Շուղր անապատում։

Ի յանազատ իմըն բնակեալ՝
Ի մէջ լեռանց՝ Շուղր անուանեալ:

Այն ժամանակ իր ուսումնական վարդապետներով նշանավոր է հղել Փետունի մոտ Կարմիր վանքը, որի առաջնորդն էր իր գիտությամբ հռչակված Ստեփանոս Մանուկ կոչված եպիսկոպոսը։ Պատմում են, որ սա, Մեծ Հայաստանում արդեն քահանա ձեռնադրված, քարոզելիս է եղել։ Արևելքից գնացել է Փետունի Կարմիր վանքը և այստեղ էլ տասնութ տարեկան հասակում սկսել է եկեղեցու բնից քարոզել և վարդապետել ժողովրդին։ Վարդապետներին թույլտվությամբ։ Ուրիշները Քարսեղ կաթողիկոսին զանգատվել են այդ առթիվ։ Կաթողիկոսը կարգադրութուն անելուց առաջ լսել է նրա քարոզը, շատ հավանել է, ու միայն թույլ է տվել, որ այդ նորահասակ երիտասարդը շարունակի վարդապետել, այլև իր մատանին ու զավազանը նվիրել է նրան և եպիսկոպոս ձեռնադրելով նրան՝ կարգել է առաջնորդ Կարմիր վանքի և Գող Վասիլի իշխանութւյան։ Իր գիտությամբ և սրբակյաց վարքով հայտնի այս վարդապետ-եպիսկոպոսին է ահա հանձնում Քարսեղ կաթողիկոսը Գրիգոր և Ներսես Պաշխալունի եղբայրների կրթութունն ու դաստիարակութունը։

Փետունի Կարմիր վանքը դառնում է մի նոր վարդապետարան. երկու հղբայրների հետ ուսանում են և ուրիշները, որոնցից են Սարգիս Շնորհալի, Իգնատիոս Շնորհալի, Քարսեղ Շնորհալի, «Շնորհալի մականունին կրկնումը նշանավորագույն աշակերտներուն վրա՝ մտածել կու տա, թե

այդ կողմերը որոշիչ պատմական ուժ էր և իհարկե կամ թնամանի կարմիր վանքի աշակերտության մեջ. ինչպես փոքրիկ պատմականը Սյունյաց դպրոցին և իմաստասեր պատմականը Արազածոտնի դպրոցին հասկացալ մակդիր անունի պես գործածվեցանք¹։ Այդ «Ենթահայրենիք»-ը, ինչպես և ներսան Ենթահայրենյան մանցել են մեկնություններ, իրենց վարդապետ Ստեփանոս Մանուկից, սակայն, չի մնացել ոչ մի գրական նրկ։

Կարծիր վանքում ներսան անել է եկեղեցական ուսումը, որ հետո էլ նա կատարելագործել և ընդարձակել է անդուլ ջանքով։ Նրա ուսած առարկաներն են՝ Ս. Գրքը, տարբ հայերի գրվածքներ, եկեղեցու և սրբերի պատմություններ, զանազանություն, հայկական մատենագրություն ու թարգմանություններ թե՛ եկեղեցական և թե՛ արտաքին գիտությունների. հմտացնել է եկեղեցական կանոններին ու կարգերին, սովորել է եկեղեցական երաժշտություն ու սոմարագիտություն, վայելուչ շարադրություն գրաբար լեզվով, այլև վայելապարություն թի զանազան կերպով։

Նա ունեցել է գեղեցիկ ձեռք և նույնիսկ ծերության օրերին, ազատ ժամանակին, արտագրել է գրքեր, որոնց մի քանիսը հասել են մեզ։ Ներսան չա՛մբրոնացի է՝ գրում է.

Ներսէս պատուով գնի ճոխացաւ,
Այլ ի գործու ոչ կասանցաւ,
Ճեռացն արկիւր վաստակեցաւ,
Գիրքս գրելի միշտ ճշգնեցաւ.
Որպէս հօրանա ուլուց ցուցաւ
Գեղեցկագորի գիրքն կարգաւ։

1 Գ. Զորաճառարան, Հայրենական Հին գրադարանի պատմություն, Վենետիկ, 1857, էջ 418 և հետ. էջ 448—449. Ս. Մանուկյան, Ազգայնական, Պատմական-գրական, 1818, էջ 189F և հետ., պար. 217: Օրմանյանն ու Զարգանույանը Եսայիի վանքն և Կարմիր վանքը «խոշոր ժամը նույնացան ևն իրար հետ, գրելով՝ «Եսայի տեապոստին Կարմիր վանքն (Զորաք.)»։ Քեռանի կամ Եսայի Կարմիր վանքն, «Եսայի կամ Քեռանի Կարմիր վանքն (Օրման.)»։ Այդ արկալը տարբեր վանքեր են։ Ներսան Ենթահայրենյան «Վիպառանաթյան» վերնում բերված ազգերի մեջ գրում է, թե Գրիգոր Վկայաբերը քրեանկվեց Եսայի անվանված մի անապատում [—վանքում] լեռների մեջ։ Հետո նա գրում է Բարսեղ կաթողիկոսի թաղման համար. «Զոր և լուսաթի [—վանքում] եպիսկոպոսի ի Եսայի տեաքն հանգալեալս արին և թաղեցին վերնում հիշված Եսայի անվանվ վանքում։ Իսկ Կարմիր վանքը, ինչպես վերնում բերված առջերից կարելի է տեսնել, է Քեռանի մաս։ Ուստիցին (էջ 325 և հետ.) գրում է, թե վերավերված Բարսեղ կաթողիկոսն «եւ տեսնել շինքն ի վանքն իր օր կռի Եսայի, «մեռաւ և թաղեցաւ ի Եսայի»։ Այս անմիջապես պատմում է նա, թե ժողով 15 անաւ թի Կարմիր վանքն մերկ ի Քեռան գաւառն և կաթողիկոսն 15 անապատում Գրիգոր Գաղապետուն։ Որքի տեղ (էջ 350) նա Գրիգոր Վկայաբերի համար գրում է, թե «Թաղեցաւ... ի Կարմիր վանքն մերկ ի Քեռան։ Նույնպես և Գաղ վանքին համար ասում է, թե «Թաղեցաւ ի Կարմիր վանքն (էջ 354)»։

2 Ն. Մանուկյան, Բազմ թվական, 1906.

Ուսումնասիր լինելով, նա շատ ցանկացել է բարձրանալ իբրև գիտ-
նական, բայց ժամանակի շփոթ գրութիւնը թույլ չի տվել նրան հասնել
իր նպատակին: Եւրտաքինն՝ գիտութիւնների ուսման պակասը նա ըզ-
գացել է դեռ իր գրական գործունեության սկզբում: Եվիպասանութիւնն
վերջում նա ինքն իրեն անվանում է Եւսմարի նուաստացեալն, իսկ նա-
խերգանքի մէջ հայտնելով իր ցանկաբութիւնն և առգիտութիւնը,
գրում է.

Ձի հրահանգից վարժարանի
Ձեմ տակաւին եերկուս բանի,
Եաթենականն քաղաքի
Ջանեն իմաստիւք ոչ կըրթնցի.
Ուր լրսարանն Պղատնի,
Եւ լսմի ոտիւք Հոմերովնի.
Ուր ստորագողն Արիստոտէլ,
Տասըն բանի գըրողն էի.
Ուր հոլլք ամէն հըռետորի,
Ժողովարան մարտասանի,
Ներհըմտութիւն քերականի,
Բալի քերամըն քերթողի.
Ջորտ գիտել ետի պատշտմի,
Եւ տառ տառ մեռեալնի:
Եւ դի յինէն այս է հեռի,
Տարաքերիմ յամենայնի՝
Եթէ գիտ'ող սկըսանիցի
Եւ կամ ո'րպէս վճարեսցի:

Ոչ միայն Սե լեռան վանքերում, այլև Հայաստանի քաղաքներում
լկար այլևս հին հոյեանկան գիտութիւն ու փիլիսոփայութիւն ուսումը, որ
այնպէս աշող կերպով վերակսվել էր ամէլի քան հարլուր տարի առաջ, և
որի ուսումն այնպէս լայն ծրագրում էր Գրիգոր Մազիստրոսը, Եւր մեր
վարժարանք՝ ի թագաւորական պատրաստեալ հրամանացն, քաջազան-
ւում էր Ներսէսը իր ժերութիւն սարիներին:

Աղգային քաղաքական իշխանութիւն հետ՝ ալդ ևս վերացել էին,
մնում էին վանքերը:

Յ. Գրիգոր և Ներսէս եղբայրները Մովս և Հոռմկլա բերդերում: —
Ներսէսը զեռ Վարմիր վանքում աշակերտ էր, որ նրա հայրը՝ Ապիրատը
նետահար սպանվում է իր բերդի պաշտպանութիւն ժամանակ: Շուտով
նա զրկվում է նաև իր Եհսեդը հորիցն՝ Բարսեղ կաթողիկոսից: Վարմիր
վանքում ժողով է լինում, և կաթողիկոս է ընտրվում 1113 թ. իր եղբայր

Ս. Ն. Եւստակի. Քաղք ընդհանրական. էջմիածին, 1865, էջ 150, «Պատմական առաջ-
ջին թղթայն... մանուկիս»:

Գրիգորը տասնութ կամ տասնինը տարեկան հասակում, նա է հոգում իր ընտանիքի մասին, ինչպես գրում է Ներսես իր Վիպասանության մեջ.

Ձիւրաքանչիւրքս տնօրինեալ,
Եւ ըստ բախտի կարգաւորեալ.
Ձեզքարս ինքեան հարազատեալ⁹
Յիշխանական դահ յառաջեալ.
Վասիլ անուն վեհ երեւալ,
Եւ Զօրավար համապատուեալ.
Եւ Մարիամ քոյր անուանեալ,
Որ յաշխարհի կարգքս մըտեալ:

Կրտսեր Ներսեսը մեռւմ է իր կաթողիկոս եղբոր մօտ և շարունակում է իր ուսումը. երբ արթունքին է հասնում, քահանայ է ձեռնադրվում, հետո՝ նաև եպիսկոպոս: Կաթողիկոսը նստում էր կամ Կարմիր վանքում կամ Շուշրի վանքում, բայց Գող Վասիլի մահից հետո Ուսույի կոմսին աղոթում է տիրել Փնսւեի իշխանությանը, և Գրիգոր Պաշլավունին 1116 թ. իր աթոռը փոխադրում է իր հայրենական Սոփք բերդը: Ժամանակի քաղաքական դրուժնունը շատ անկայուն էր: Խաչակիրները հետզհետեւ բռնանալով՝ հայերի ձեռից հանում են նրանց բերդերը Ասորիքում ու Միջագետքում: Մենլուկյան թուրքերն էլ արևելքից արշավում էին դեպի այդ կողմերը: Կար նաև Փռքը Ասիայում հաստատված սելջուկների մի ճյուղը, Իկոնիայի սուլթանութունը (1074—1294 թթ.), որ կոչվում էր Հոռոմ, Հոռոմ (Ռում) և կենտրոն ունեւր Իկոնիոն քաղաքը Կիլիկիայից արեւմուտք. դա էլ ձգտում էր տիրանալու այդ երկրամասին: Մի շրջորոգ կողմից Եգիպտոսի իշխողներն էին խուժում դեպի Ասորիք: Այստեղ շարունակ տեղի էին ունենում ընդհարումներ, բերդերի և երկրամասերի հափշտակություններ ու խառնակություններ: Սոփք փոքրիկ բերդն ևս անսպասելի էր: Ուստի կաթողիկոսը մի լատին իշխողից զնում է Հոռոմի կողմից բերդը, որ ավելի ամուր էր (Եփրատի աջ ափին Թլապաղարի հարավ-արևելյան կողմում, Այնթապից դեպի հյուսիս-արևելք, Եգիպտոսից արեւմուտք): Կաթողիկոսաբանը 1150 թ. փոխադրվում է այդ բերդը, Ներսեսը 1151 թ. գրված իր «Բան հաւատոյ» երկի «Յիշատակարանի» մէջ¹⁰ պատմում է Իկոնիայի սուլթանի արշավանքի և աթոռը Հոռոմի կա փոխադրելու մասին և գեղեցիկ նկարագրում է այդ բերդը.

Արդ յայսպիսում ժամանակի
Դառն և դըմենեալ և անբարի,
Յորում բնակեմք յայսմ ամրոցի
Ի գեղապատ քարանձախի,
Ի յնփրատայ պարագրեի,

¹⁰ Ն. Շնորհալի, Բանք յափաւ, էջ 223 և հաւ.

Որ չվնասուի քառորդ հոսի,
 Յնից կուսէ հեղիկ շարժի,
 Ի միւս փոքուէ մըտիւք պատի.
 Ինքս ամբարձեալ իբր ըզկըզդի.
 Յալեաց ժողուց ոչ երկընչի.
 Ի մարդկանէ ոչ դարհուրի,
 Ջի է հնարից անյաղթելի:
 Զոր տնօրինիչն ամենայնի
 Տեղ պատրաստեաց ապաւինի
 Սուրբ աթոռոյս ըսքանչելի.
 Ի բարկութեան ժամանակի
 Յորում նեղիմք յանօրինաց
 Ի յարաւորի յար գազանաց,
 Եւ ոչ նուազ ի զըրժանաց
 Ի սուտանում քրիստոնէաց:

Ներսէսը, որ միշտ անբաժան էր իր եղբորից և նրան ոգնում էր իր պաշտոնական գործերի մէջ, մինչև կյանքի վերջը կենում է այդ բերդում, ուստի կոչվում է նաև Ներսէս Կլայեցի: Գրիգոր Պաշլամպունիս ժերոթյան պատճառով 1166 թ. հրաժարվում է աթոռակալութունից, և Ներսէսն ընտրվում է կաթողիկոս: Երեք ամսից հետո վախճանվում է Գրիգորը, իսկ Ներսէսն ապրում է մինչև 1173 թ.:

4. Երկու եղբայրների գրական վաստակը: — Այս եղբայրները մեծ նկեղեցական պատմութեան գլխավոր ղեմքերից են. նրանք ցույց են տվել մեծ գործունեություն: Երկուսն էլ պարապել են նաև դրականությամբ, ավելի Ներսէսը:

Ներսէս Լամբրոնացին¹¹ գրում է, թե Գրիգորը դրադարան է կազմել, իսկ Ներսէսը ընթերցանությամբ է պարապել.

Զգիրլս ցըրուեալս ի մի ածէր,
 Սոքօ զաթոռն արմատացնէր,
 Կցորդ բարեաց զնղրայրն ունէր,
 Որ յիմաստից վարժ մըտեալ էր,
 Միշտ ընթերցմանըն պարապէր
 Եւ հայր խորին բանից լինէր:

Ուրիշ տեղ էլ¹² Լամբրոնացին գրում է Ներսէսի համար, թե նա տի լընթերցումըն պարապէր:

Գրիգորն իբրև կաթողիկոս քաջալերող է հանդիսացել վարդապետ-ներին զանազան երկեր հօրինելու. այսպես, օրինակ, Սամուել Անեցին նրա հանձնարարությամբ գրել է իր ժամանակագրությունը, Ներսէս Շնոր-

¹¹ Ն. Ներսիսյի, Քույր քեզեանսման, էջ 876:

¹² Անպ. էջ 876:

Հային հորինել է իր մի քանի երկնքը, նա, հետեւելով Գրիգոր Վկայասե-
րին՝ ինքը թարգմանել է և ուրիշներին թարգմանել է տվել վկայարանու-
թյուններ և կարգազրեւ է, որ սրբերի նախատեսանքներին եկեղեցում կար-
գազրեւն նրանց վարքերը, Կիրակոս Գանձակեցին¹³ գրում է. «Եսկ սրան-
չնի հայրապետն Գրիգորիս Առն ի գործ արկնաւ շիննաց եկեղեցի հա-
շաղան գմբէթայարկ ի նոյն բերդի. և սկսաւ թարգմանութիւն առնել յառ-
տաւածային գրոց, և թագում գիրս հա թարգմանել ի Հայ լեզու, զո՞րն
ինքնամբք և զո՞րն ի Առն ալլոցա: Այդպիսի աշխատություններն համար
նրան կուիւն են Գրիգոր Փոթը Վկայասեր: Նա հեղինակ է նաև մի քանի
ինքնագիր հոգևոր երգերի¹⁴, որոնք հորինված են սովորական մատիվ-
ներով: Նրանն են և լուսավորչի մեղեդին՝ «Ի յիշ արևու արևա և ջրօրհ-
նեցի տաղը Հիսուսի մկրտության մասին: Վերջինս մեր կրօնական գեղե-
ցիկ երգերից մեկն է¹⁵».

Ո՞վ դարձանալի խորհուրդ այս մեծ յայտնաւ,

Արարիլն Աստուած ի Տորդանան եկնալ...

Յորդանան լուծալ՝ փախտապան դառնայր,

Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր:

Գն՝տ, մի՛ զարհուրիր, քո արարիլն եմ ես,

Ծկնալ մկրտիմ և լուսնամ զմեզս...

Գրիգորից ավելի է տեր ու հարգանք և ժողովրդականություն վայելել
Ներսեսը թե՛ մահից առաջ և թե՛ հետո: Նա հայոց եկեղեցու մեծ հայրե-
րիցն է, իսկապես բազմակողմանի քննադատ ձերքով օժտված բանաս-
տեղծ-երաժիշտ, շնորհալի մի անձ ոչ միայն իր բազմազան գրական
ընդունակությամբ, այլև իր կյանքով: Ուստի և նրա անվան հետ անբա-
ժան մնացել է Շնորհալի մականունը: Նա շատ բեղմնավոր է եղել իր գրա-
կան վաստակներով և առանձնապես իր շարժող քերթվածներով ու եր-
գերով: Գրանք համար և նա կուլիւն է նաև երգող, ինչպես ինքն էլ իրեն
անվանում է իր մեծ քերթվածների հիշատակարանների վերնագրերնե-
րում¹⁶: Մերության օրերին անգամ նա լի դադարել բանաստեղծելուց:

ՆԵՐՍԵՍԻ ԶԱՓԱՄՈ ԵՐԿԵՐԸ

1. Հայացքը բանագործության վրա: — Ներսես Շնորհալին արվեստի
ու գրականության վրա նայում է ամենից առաջ ձևական և դիզայնիկա-
կան — ուսուցական տեսանկյուններից: Այդ հայտնում է նա իր մի քանի

¹³ Կ. Գոնեռլեցի, Պատմութիւն, էջ 102:

¹⁴ «Նարեկան Հագեթը երգոյս, Էյմիսծին, 1881», էջ 8, էջ 12, 284, «Գրիգոր Վկայա-
սէր՝ հորայրն Շնորհալուրն» [Երգեց] շնորհուրդն աննաւն և զՄիսնհայրապետ:

¹⁵ Կարելի է գտնել Աղեք. Մանթարլանցի խմբագրած «Տաղեր ու խաղերս ժողովու-
ծուի մէջ, Ալեքսանդրապոլ, 1900, էջ 3:

¹⁶ Ն. Շնորհալի, Թանգ լուսնաւ, էջ 186, 222:

երկերի մեջ: Խոսքի շնորհքն, — ասում է նա, — միատեսակ չի տրված
մարդկանց¹⁷.

...Շնորհն ոչ միակի,
Այլ ի բազումքս բաժանի.
Ոմանց տայ [աստված] շնորհ մեկին բանի,
Ձի հանրական լուր օգտեսցի.
Այլոց իմաստ ծածուկ ճառի,
Ձի զարթուցէ զնիրհալ հոգի:
Ոմանց տայ բան՝ որ ոչ լավի,
Բայց զօրատր և ըստ կարգի.
Այլոց շնորհ է բանըն տաղի,
Ձի և այնու միտքն բանի:
Քանզի բնութիւն մեր է յայտնի,
Արագտալ և ձանձրալի.
Վասն այսորիկ տայ նա լեզուի
Ձյոքն ասեռեան ազգոս բանի:
Ըստ այսմ և նա նըկարեցի
Քննրազգական բանն ի քարտի,
Ի զուարճութիւն բանասիրի
Նւ բարեմիտ ընթերցողի:

ԵՅԻՋԱՄԱԿԱՐԱՆ ԵՐԳՈՂԻ ԲԱՆԻՍԻՆ,

ՈՒՆԻ ՆԿԱՄԱՄԱՄԷ, ՈՒՐԻՄՆ, ԽՈՍՔԸ լինում է պարզ (սեփական բանն), որ
ամենքը հեշտ հասկանում են, և խրթին (սեփական ճառն), որ զօվար հաս-
կանալի է: Այս տեսակն էլ, ըստ ն. Շնորհալու, հարկավոր է. քմրած հո-
գինքը գրանով սթափվում են, քանի որ մութ գրվածները հասկանալու
համար մտքի լարում է պահանջվում: Բայց ինքը մեր բանաստեղծը մի
երկու տաղ միայն ունի մութ սեղ, ինչպես է, օրինակ, «Ի սուրբ քառա-
սունսն»¹⁸: Նա սիրում և կիրառում է ընդհանրապես ըստ հեշտ ու թեթև
և դյուրըմբռնելի խոսքը: Այսպես հորինելն այնուհետև նրա մեծ ազդե-
ցությամբ հաստատվում է մեր բանաստեղծության մեջ, և ալլապես էլ
չէր կարող լինել, քանի որ արվեստի գեղեցկությունն արդեն տեսնում էին
բնականին հետևելու մեջ: Ապա նա շարունակելով իր միտքը պարզել
ասում է, թե մարդիկ կան, որ ունեն ուղիղափառ, ազգու և կարգավորյալ
արժակ խոսքի շնորհ. ուրիշներին էլ ոտանավորի ձևից է տրված: Ոտա-
նավորով խոսքն ավելի գեղեցկանում ու սլայնչլանում է ու օգնարճա-
լի է դառնում, բայց այդ երկու տեսակն էլ հարկավոր են. որովհետև
ձանձրալի լինելու համար բազմազանություն է պետք: Այդ երկու տե-

17 Անդ. էջ 184 և հետո.

18 Անդ. էջ 184:

19 Անդ. էջ 486 և հետո.

սակի էլ նպատակը մեկ է և գործնական, այն է՝ օգտակարությունը, մարդկանց բացումը, զարգացումը, ինքը՝ ներսեն Շեքոնցային ունի ոտանավորի շնորհ։ Նա լավատես է հորինել իր բազմաթիվ երկերը, բացի պաշտոնական թղթերից և մի քանի ազոթքներին։

2. **Տաղաչափական աղվեստի զարգացումը**—Հետևելով իր շնորհքին ու հայացքին ոտանավորի վրա, մեր այս բանաստեղծը մշակել է հայոց լեզվի տաղաչափությունը, ուստի նախ տեսնենք նրա վաստակի այս կողմը, որով նա ազդել է իր ժամանակակիցներին վրա։

Ներսես Լամբրոնացին նրա գովեստի մեջ²⁰ գրում է.

Համերական տաղին լավող,

Ուտանաւոր տառից գլտող.

Ի հոգևորսն ըզնոյն տուող,

Որով ըզսիրտս կարծր ճըմող։

Ներսես Շեքոնցայու ռիթմական զգացումը, ինչպես իր դրածներին երևում է, շատ մեծ է. նրա ոտանավորները խիստ երաժշտական են։ Այդ պատճառով նա քիչ է բանեցրել մեր հին կրոնական բանաստեղծության ոտանավորներն ազատ ոտքերով և ազատ անդամներով²¹, այլ զերազատաթիլում է ավելի պարզ ոտքերին, այսինքն՝ անթերի տակտերին։ Նրա ամենից ավելի սիրած ոտանավորն է յամբական երկանդամ 8-վանկանին, կազմված երկու յամբական քարդ ոտքերից, որոնց մեջ առաջին տոքերը կարող են և անշեշտ լինել։ Տաղերի, ինչպես և ուրիշ հոգևոր երգերի մեջ, սակայն, առաջին անգամը նա մեկ-մեկ կազմում է երեք վանկերից, որոնք առանձնապես լինում են և հավասարվում յուր վանկին։ Այսպես է վարվում նա յամբական երանգամ 12-վանկանի և յամբական քառանգամ 16-վանկանի ոտանավորների մեջ ևս²²։ Մեծ քերթվածներին մեջ, սակայն, նա սովորաբար պահպան վանկեր լի թողնում և պահանջում է, որ ընթերցողն էլ այնպես կարդա, որ ոտանավորի լավն անթերի երևան գա. ոչ ավելի և ոչ պակաս։

Այդ տարեկան բան գտնաբերու,

Եւ վերծանեա ըստ իմաստնոց,

Ոչ առանել և ոչ նուազ,

Այլ ի յառին բերեալ լավոց։

Շեքոնցայու գործածած լավերը խիստ բազմազան են։ Մի քանի լավական հեղինակներ նա այնպես զարգացրել է և ռիթմիկ դարձրել, որ օրինակելի են մնացել և մեր հին գրականությունինց նույնիսկ նորին են անցել։ Գարեջի է սանել, որ հաջորդներն իսկապես նրա փորձերն են միայն գոր-

²⁰ Ն. Շեքոնցայի, Քուրթ ընդհանրական, էջ 106-ին, 1885, էջ 484.

²¹ Տե՛ս Մ. Անդրեյև, Հայոց լեզվի տաղաչափություն, էջ 320 և հետև., 341 և հետև., 372 հեթ, էջ 198—206.

ծաղրել, շատ քիչ բան փոխելով: Կան նրա լափածո ձևերից, հարկավ, և այնպիսիները, որոնք չեն ընդհանրացել: Ուսանավորների բազմաթիվ տեսակները, սակայն, ոչ թույլալը նրա ստեղծածներն են. դրանցից մի քանիսը զտեում ենք Գրիգոր Նարեկացու և Գրիգոր Մագիստրոսի տաղերի մեջ, Կա նաև Վարդան Հայկազն անունով մեկի հորինած «Տաղ գերեզմանական վասն Իրոխման երանեալ և սուրբ կաթողիկոսին Հայոց Գրիգորի Վկայասիրի»: Հեղինակը, ինչպես իր գրածից ենթադրում են, ժամանակակից հղած պիտի լինի Վկայասիրին²³, Այդ աստղը՝ զարարախառն աշխարհիկ լեզվով է, ութվանկանի ոտանավորով, միակերպ «ի» հանգով, շատ նման Լեւոնու Առաքելյան գրածներին:

12-րդ դարի սկզբից աղղեն ժամանակի խոսակցական լեզուն և բնականացի աշխարհիկ բանաստեղծության ուտանավորը մուտք են գործել զրականության մեջ, այդ ժամանակի սիրտ երգերից, սակայն, բան չի հասել մեզ, որ կարողանալինք որոշել, թե ի՞նչն է կազմում Շեքրհալու իրեն տաղաչափական գյուտը, Բայց այն հանգամանքը, որ մատաղ հասակից ի վեր վանքերում ապրած այդ մեծ կրոնավորը լի խորել նմանելու սիրտ երգերի ձևին և նրանց ոտանավորով հորինել է ոչ միայն տաղեր, ինչպես Գրիգոր Նարեկացին, այլև կրոնական բովանդակությամբ մեծ բանաստեղծություններ, ա՛յդ միայն ցույց է տալիս, որ վերածնության թարմ ոգին թափանցել էր նաև վանքերի խուցերը, բայց ոչ ամեն վանականի: Եստեղը Ներսես Շեքրհալու պես ազատախոհ չեն հղել և թանփակ բնորոշումն պարտավել են նրա արարքը, և Շեքրհալին ստիպված է հղել ուրիշներին հեղինակավորությամբ պաշտպանելու իր նորամուծությունը: Այսպես՝ «Բան հաւատոյս մեծ քերթվածի շնիշատակարանի» մեջ²⁴ 1751 թ. նա գրում է.

Եւ դի ոտիւք է պարզական,
Եւ ոչ բանիւ անշափական,
Մի՛ յայս լեզուաւ պարսաւական
Բարբառեսցի անփակ բերան:
Քանդի բազումք նախ վարցեան
Այսպէս չիմաստս աստուածական,
Ջի արարլին բանի բնութեան
Տաջեն այսու բան դովութեան,
Որպէս Դաւթեան սաղմոսարան,
Եւ Սողոմոն ատակարան.
Մեծքն Գրիգոր աստուածաբան,
Եւ սուրբ Նիքիմ աստուածական:

²³ «Բազմավնկ», 1873, 264, Գ. Զարեանեալուն, Հին դպրութեան պատմութեան, 1887, էջ 700 և հետև.

²⁴ «Բանք լափու», էջ 323.

Հետագայում վանականներն այդ երկրի ձևի համար ավելի ևս պախաբան-
կել են մեր բանաստեղծին, որ նա ստիպված է եղել հետևյալ տարին,
1752 թ., «Ողբերգություն» մեծ ջերթվածի վերջում (սօրիշատակարան եր-
գողի բանիս)»²⁵ դարձյալ պաշտպանելու իրեն։

Եւ մի՛ ի յայս ող անտանայ,
Քէ լափաւոր բանիւ է սայ,
Եւ արտաքին կարծի ելմայ.
Որպէս եւ զհրգի մփրապիտայ:
Զի եթէ սուտն որ ձնանայ,
Սովաւ աշնքան զեղեցկանայ,
Քանի՞ արդեւք վայելլանայ
Ըշմարտութեան բանս որ ի սմայ:
Յրպոյն հանգոյն Սաղմանի,
Սա, որ Երգոց երգ անուանի...
Եւ կամ Դաւթնանըն Սաղմոսի...
Եւ ալլ բազմաք՝ որ են յայտնի.
Որք վարեցան լափով բանի...

Այս նրկու մեծ զուտ կրոնական երկերը, որոնք հորինված են սիրո
երգերի լափով Ծ-վանկանի տողերով, նաև հանգավոր տներով են, ինչ-
պես հեղինակն ինքն անվանում է, ստամբ լանգականք, այսինքն՝ ամեն
երկու նույնահանգ տողերը միասին բառ բովանդակության կազմել են
մի միութուն, մի տուն (սրելիք)։ Այսպես հորինվել են, ուրեմն, հնումն
սիրո երգերը։ Մի անգամ որ այսպիսի ոտանավորով և հանգերով խոսքն
ավելի ցեղեցիկ ու վայելու է դառնում, ներսն Եւուրալին, իր ողբա-
կան զգացումով ու հաշակով, լէր կարող լինիլ որ արդարեւ միայն
նրա համար, ար մփրոդիտյան երգերն էլ այդպես են հորինելիս եղել։
Այսպիսով աղբարժիկ երգերի լափերի գործածությունը նրա մեծ հեղի-
նակությանը ընդհանրացել է ամեն տեսակի կրոնական բանաստեղծու-
թյունների համար ևս։ Նույնը պետք է ասել և ոտանավորների հանդի
նկատմամբ։

Արդարեւ Գրիգոր Նարեկացին և Գրիգոր Մադիստրոսը գործածել են
աղբարժիկ լափերից մի քանիսը, բայց Նարեկացին գեո գրել է անհանգ
ոտանավորներ։ Սուրբաբություն մեղ միայն մի երկու տեղ նա, ինչպես
ինքն ասում է, նմանելով ռոմասացների բանաստեղծությանը՝ հանգեր է
կազմել։ Մեր այդ կրոնական մեծ բանաստեղծի հույսեր հավանորեն գեո
այնքան ծավալված չի եղել 12-րդ դարի առաջին կեսին, որքան հետա-
դարում։ Առաջին նրա տողերի ոտանավորը չի օւնեցել հետևողներ ամեն
տեսակի կրոնական քերթվածների նկատմամբ, մասնավորապես որ նրա բա-

նաստեղծական համայնքը հիմնված է եղել ոչ թե տաղերի վրա, այլ «Ող-
որհորհրդային», որ անհանգ է և կայացել էր նաև ժամայինական համարվել,
Գրիգոր Մազիստրոսն արդեն հանգը բանեցրել է կրոնական բովանդա-
կությունը աշխարհագրական գրավածքի մեջ, բայց նրա գործը պատմա-
կան քան լինելով՝ ընդունելություն չի գտել: Հայ կրոնական բանաստեղ-
ծությունն անհանգ է մնացել մինչև ներսես Շնորհալին, որի երկերից
շատերը, առանձնապես տաղերը, նույնպես անհանգ են: Բայց և այնպես
նա քսան տարեկան հասակից արդեն սիրում է բանեցնել հանգերը,
հատկապես մեծ քերթվածներին մեջ:

Հանգի գործածությունն այն դարում թե՛ Արեւելքում և թե՛ Արեւմուտ-
քում շատ միակերպ էր. նույն հանգը սովորաբար անցնում է ածական
քերթվածի մեջ սկզբից մինչև վերջը: Նրան հաղարարող տղերքի վեր-
ջում կրկնվում են նույն հնչյունները, և փոխանակ փաղաքշելու մարդու
լսելիքը՝ շուտով հոգնեցնում են այն և տաղտկալի դարձնում երկի ըն-
թերցումը: Շնորհալին իր ընտիր ճաշակով չէր կարող լզգալ այդ, և նա
մի քանի տեղ հանգերի փոփոխություն է անում կամ տղերք անհանգ
թողնում՝ այսպես բացատրելով այն²⁰.

Ո՛չ մի տառի վերջ լանգական,
Ջի մի՛ ծուլից լուր ծանրանան.
Այլ խտրաբար փոփոխական,
Ձի ընթերցողք ու ձանձրանան:

Այս փոփոխությունը, ցավոք, երբեմն այնքան շատ թվով տղերքից
հետո է լինում, որ գրեթե անզգալի է մնում: Ժամանակի պահանջն այդ-
պես էր, և այդ համարվում էր արվեստի կատարելություն հաճելի ազգերի
բանաստեղծության մեջ: Շնորհալին, սակայն, ունի նաև բավական թվով
երգեր, որոնց մեջ ամեն տուն իր առանձին հանգն ունի, և երբեմն նա
նույնիսկ տող ընդ մեջ անհանգ ոտանավորներ է հորինում: Սով նա հան-
գերի այսպիսի կիրառության նկատմամբ ևս անսլոյսման ազդել է իր հա-
ջողների տաղաչափական արվեստի վրա.

Նրա բանաստեղծության մեջ շատ սիրված է նաև ժայռակապը կամ
գլխակապը (ակրոստիխ), կամ չալրանական կարգով Ա—Ք և կամ շուտ
տված Ք—Ա: Նա հաճախ կազմում է այսպիսի գլխակապեր շենրսեսի
բանս է, բժան ներսեսի, շենրսեսի է այս երգած, Շէր ներսեսի է սառ
և այլն: Այսպիսի գլխակապերը կարծես դիտավորյալ կերպով են գոր-
ծածված՝ հեղինակի անունը պահելու համար: Նրանք երկատող տների
տղերից առաջինն սկսվում է Ա—Ք կամ Ք—Ա տառերից մեկով, և երկու
տողն էլ վերջանում են տների սկզբի տառով՝ կազմելով հանգեր կամ թե
չո՛ք քաղաձայնությ, կամ առձայնությ, օրինակ.

Անտուանօնդէն Հոգաւմէն ի սմա
Խաղաղութեան անուն արքայ...
Երբեք առաջի զնրապետի,
Ջմարդիկ յերկիրս մակադրեմ...²⁷
Թրմբոնալ զհեղիս առնէ զրուարք,
Տայս լանկանել զառն որոգայք,
Ժամանակեալ զկենցաղքս յոյժ
Ասէ, զանկնալսն ի սմա անրոյժ,
Իբրեւ երազ խոր գիշերի,
Կամ պղղպըջակ ինչ կաթուածն²⁸։

Այսպիսի ակամեքները տողաւորներէ հետ հանդիսութիւն կազմե-
լով՝ տներին տալիս են ըստ ձևի նա ամբողջութիւն։ Երբ առանձին տների
քոյր տղերն սկսելով են նույն տառերով և տողեր կարճ են, նույն
հնչունների կրկնութիւնը տողերի սկզբում՝ թողնում է ռիթմական հան-
դիսութիւն — քաղաձայնաւորի կամ առձայնաւորի տպագրութիւն²⁹։
Գրանով ևս զգայի է լինում տողերի, ինչպէս և տների ամբողջութիւնը,
երբ վերջիններս փոքրաթիւ տողերից են կազմված։ Այսպէս հորինված
են Ն. Շնորհալու նշանավոր «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն»
երգերը, ինչպէս և մի քանի ուրիշները։ Բերենք իբրեւ օրինակ հետե-
ւալները.

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արագը,
Ան իս լոյս ծագեա՛
Աշխարհ ամենայն,
Ան իս նայնցեալ՝
Ախտակից յերուք։
Բանամ ըզըրթունս,
Բարբառիմ լեզուսս,
Բողոքեմ զանձնէս։
Գող եղէ մեղաց,
Գրառչ փոքրտեան,
Գուր ինձ փորեցի։

8. Հոգեվոր երգեր ու տաղեր և թղթեր։ — Որչափ բազմազան են
ներսնա Շնորհալու քանեցրած տաղաչափական ձևերը, նույնչափ ալքի է

²⁷ Գրեմ է, որ Անդրայու ժամանակ արդեն է և ն առանց ծիսակն ՏԵ արտասու-
վել, և նա չի խորշում քառերի վերջում է տառի փոխանակ է գրելուց։

²⁸ ԹԵ, էջ 336։ ՏԵ՛ս և էջ 359 և հոս, «Անգրապարտութիւն տառից յիշատակեա»,
որոնց աները սկզբում են Թ—Ա տառերով։

²⁹ «Հանդիսութիւն», հանգի և տանա մասին ընդհանրապես՝ ուն'ս Մ. Արեղյան, Հա-
լոց լեզվի տաղաչափութիւն, էջ 203—452։

ընկնում նրա ստեղծագործությունը նաև իր այլևայլ գրական տեսական-
րոմի, Այն նկատմամբ ևս նա շատ բան, հարկով, ժառանգել է նախորդ-
ներին, ինչպես հն՝ տաղեր ու զանգեր, հողերո հրգեր-շարականներ,
հողերու խաղաղություն (աշուշտով խոստովանիմա), թղթեր և այլն. բայց
նա մեր գրականություն մեջ մտցրել է նաև նոր գրական տեսականներ և հին
տեսականներ զարգացրել է: Այսպես, օրինակ, նրա լավագույն թղթերի մեջ³⁰
ներքին մտերմական զգացումով ալյոխ է ընկնում իր եղբորորդի Ապիրա-
տին ի Կոստանդնուպոլիս ուղղած նամակը, որի մեջ նկարագրում է իր
այդ տոհմիկի գինավարժական աղողությունները, ցանկանում է նրա գա-
լուստն ի Հռոմկա ամրոցը և տալիս է նրան խրատներ:

Ավելի կարևոր են Շնորհալու բազմաթիվ հոգևոր երգերը, որոնցով
նա խիստ ճոխացրել է հայոց եկեղեցու ժամերգությունը³¹, Դրանց մեջ
կան և շատ գեղեցիկները և այնպիսիները, որ մի ժամանակ սիրված և
ժողովրդականացած են եղել, Բերենք միայն երկուսը՝ առանձին Վարդանանց շա-
րականից³², որի զիսկապես է՝ «ներսեսի երգ», Ամեն մի տունը նվիրված
է Ավարայրի ճակատամարտի մեջ ընկած այն հերոսներին և մեկի հիշա-
տակին, որոնց անունները հայտնի են պատմությունից. Բանաստեղծը
մոռացություն չի տվել նաև 1036 անանուն ռամիկ քաջերին:

Նորահաջ պատկառու և զօրազուրիս առաջիննաց,
Վառենցար զինու հոգևոյն արիարար ընդդէմ մահու,
Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր ըզթըշնամին,
Վարդագույն արեամբող ցով պըսակեցեր զեկեղեցի:
Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,
Նորհակալ իմաստութեամբ խոհեմացեալ անճառապէս,
Խորէն խորհրդական և ժանուցեալ անուն բարի,
Զաշէոյն վըկայ եղեալ հեղմամբ արեան պըսակեցաւ:

Բազմաթիվ են ներսես Շնորհալու բյուրոյականները, այն ուսանա-
լորները, որ նա կցել է հաճախ իր ուրիշ աշխատությունների վերջին:
Ավելի ևս մեծ թվով են նրա տաղերը³³, որոնք գրված են տերունական,
ինչպես և քրքրիկ տոներին երգելու համար: Դրանց հորինված են խիստ

30 Երանց լափուս, էջ 363—372:

31 Երանցական, էջ 41, 1881, էջ 8 և հետ. Երանց Ներսէս (Կրօն) զվառ էալն Աստ-
որհալեան, զմեթառնորդն, զնինուլացալն, զկողմացից ամենայն կիրակիին, զԹող-
կազարդի հարցն, զՆորոյն վարդանան լորս պատկերան, զՎարդագույնի գերգու պատկերան
և զԹոման գերգու պատկերան, զԵրանեսու Դմ հարցն, զՄարգարէից Գմ հարցն, զԵրե-
տականացալն, զՆորոյն Վարդանանց, զՆահապետանց, և զԱյոս ունեան, զՆորոգողն,
զԱստուած անեղն, զԱրարականն, զԱրեազալի չորակոսան, զԵրանեմ զչեղն, զնախաց
սիրովն, և զԵրեկ հայցեմն, և ըստ սմանց՝ զսարք ծակալն ևս սարս է տուցեալու: Այլ
և Ամուստած անեղն, Երանց լափուս, էջ 433 և հետ.:

32 Երանցական, էջ 571 և հետ.:

33 Երանց լափուս, էջ 385—476:

քաղաքական լափերով: Հետաքրքիր է, որ «Աւետեաց» տաղը նույն ձևով է՝
ինչ որ հին գուսանական հայրենները³⁴. Հետազայում մեր քանաստեղծ-
ներն «Աւետումը» նրգում են ինչպես մի սիրո նրգ.

Քարբառ տեսնեաց ձայնիւ
Գարբիէլ գոչէր սրբորումայն.
«Առ քեզ առաքիմ, մաքո՞ւր,
Պատրաստեմ տեղի տէրունայն:
Նրազ ցընծութեան նրգեմք-
Ուրախ լն՛ք, բնկրեալդ, աչք ընդ քեզ»:

Շատ թարմ և ուժեղ են հնչում նրա մի քանի տաղերը, ինչպես, օրի-
նակ, Հոփսիսիմյան կույսերի համար երգածները³⁵: Սրանց նյութը քնակա-
նարար Ազարթանգեղոսի Պատմության հետեւողությամբ է. բայց քերթողը
սեփական ծրանկայությամբ նորոգած է այն: Մի քանի քառերով ու կարճ
խոսքերով կատարված է Հոփսիսիմի գովքն ու դեղնցկության նկարա-
զիրն արագ ու եռանդուն և ռիթմիկ տողերով: Քանաստեղծը գիտն ուղղա-
կի խոսքերով և դիմումներով աշխուժացնել պատմվածքի ընթացքը: Նա
այս հին գրական տեսակը կատարելության է հասցրել:

Երչանի՛կ, հոգիահրաշ
Կոյսըն մաքուր սուրբ Հոփսիմէ՛.
Լոյս ծագեցաւ ի՛ կտիտինէ՛
Հայոց Մեծաց յարեմըտէ:
Գուսական փողըն գոչէր,
Տայր աւետիւ սուրբ Գրիգորի-
«Փութա՛, ե՛լ ի վիրապէղ,
Լուսավորի՛չ Հայաստանի»...
Մովային շուշան ծաղիկ,
Բուսեալ ի տանըս Թորգոմի...
Ի վայելուլ դեղ պատկերին
Յիմարեցան ազգըն Հային.
Պետեց և իշխանք առ հասարակ
Եկին ի դուռն Հընձանին...

Հոփսիսիմի վրա անապատյան ոսքերով հորինած մի ուրիշ տաղն
ամեն տների վերջում կրկնում է նույն տողը և անում է նույն քաղածայն-
ների հանգիստություն. օրինակ՝

Սիրամետնդ սիրամարգ սըրբալի,
Նըրքափայլ ոսկէթել տարփայլ,

34 Անգ. էջ 428 և Գան.

35 Անգ. էջ 429-472.

ծնապատկեր իւղագլուխ ցանկալի,
Լրեշտակ հրաշագեղ, Լոբփոխմէ՛:

4. Նոր գրական տեսակները: — Բազմաթիվ են ներսծնի նոր գրական տեսակները: Բայց մի տեսակ որ նա, ինչպես տեսածք, գործնական հայացքով է առաջնորդվել իր լսարանի ստեղծագործությունների մեջ, ուստի նրա այս աշխատությունների մեջ ևս կան այնպիսիները, որոնք գեղեցիկ ուսանավորներով, հաճախ նաև փայլուն ուժով հորինված լինելով՝ հանդերձ՝ պրոզայիկ գործեր են: Բնականաբար այստեղ երկար կանգ չենք առնի նրա այդպիսի գրվածքների վրա, որոնք հորինված են ուսուցական կամ այլ նպատակներով: Մի քանիստեղծի որն է պրական երկի արժեքը, սակայն, պետք է շարժել ոչ միայն դրա գեղարվեստականությունը և իրեն արտահայտություն իր ժամանակի ոգու, այլև այնու, թե դա ո՞րքան և որպիսի գրական-կուլտուրական ակզենություն է թողել հետագայի վրա: Այս վերջին տեսակետով շատ բախտավոր են հղել Շնորհալու անգամ՝ նոր գրական տեսակները:

Այդպիսիներեք է ամենից առաջ նրա երիտասարդական տարիքում գրած «Լիպսանությունը», որ հիշվեց վերևում⁸⁵։ Նպատակն է, ինչպես հեղինակը գրել է նախաբանի մեջ, արտահայտել երախտագիտություն առ նախնիները:

Պարտական է հոր որդի
Հասուցանել վարձըս ծնողի,
Ան անգրագարն փոխարինի
Բազում երկանցքն պատշաճի:

Մովսես Խորենացուն հետևելով՝ նա ուսանավորով պատմել է Հայկազն և Արշակունի սոցմների մասին, շատ քիչ է կանգ առել Բազրատունիների համար: Երկուր գրել է Գրիգոր Լուսավորչի և Պաղտատունիների՝ Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Վկայասերի, Բարսեղ կաթողիկոսի, իր եղբայր Գրիգոր կաթողիկոսի, իր հոր և եղբայրների և իրեն մասին:

Այս գրվածքը բանաստեղծական արվեստի տեսակետից ընդհանրապես մի հետեւակ բան է. բայց մի գլուխ կա մեջը: Դա առաջին լսարանի պատմական քերթվածն է մեր գրականության մեջ: Բացի սոցմատիկությունից, ինչպես և աստվածաբանական միտումից, որ երևում է նախաբանի մեջ, երիտասարդ ներսծնի արդեն ջուլջուլ է տալիս նաև ինքի հայրենասիրական ոգի: Զի տանում հույներին,

⁸⁵ Եթանք լսարան, էջ 498 և հետ, «Երազգրութիւն համբալտն վիզուտանութեա՞ռ ասկո Հայկազանց սեռի և Արշակունիացն դարմի ի սկզբանց մինչև ի վախճան, առաջնաւ ներսւն» հղումը կաթողիկոսի Հուլյոյ լիւրակոն Խախէի ի համբալտութեան հիւսկ օրոքս:

Որք այժմ ըզմեզ գոն աղարտեալ,
Ձանթազատորքս պարտաւեալ:

Առանձին սրտմտությամբ խոսում է մահմեդական տաճիկները (արաբ-
ները) և ավելի ևս նրանց կրօնին հետեող իր ժամանակակից այլ աղգորի
մասին.

Արեանաբրուք զազանացեալ,
Ձաղիր գործովք անասնացեալ...
Ձոսկերցս մեր ըզլորացեալ,
Ձոր էր նախնի ազգաց ժըծալ,
Վիշապօրէն սոցա կըլեալ,
Եւ առիժուց նրման մանրեալ,
Ձի ի համար թիւ ոչ անկեալ
Անպարտ արեանցըն զոր հեղեալ.
Կամ ծառայիցն անգին գերեալ,
Եւ կամ յայտնին որ վաճառեալ.
Կամ ըզգոյիցն յադրշտակեալ,
Որք ընդ ձեռամբ նոցին անկեալ,
Որոց այնքան աղքատացեալ,
Որպէս յերկաթ գոլով՝ պընդեալ,
Թողից ըզլարըն մեծ ասեյ
Ձհողոց կորուստըն գործեցեալ,
Ի հաւատոցն ուրացուցեալ,
Եւ շար գործովք ապականեալ...
Ի յաշխարհէ ծնընդեան ելեալ,
Ի հայրենեաց տարածեթեալ,
Ցերկիր օտար պանդխտացեալ,
Մինչ զի ըզմերըն մոռացեալ.
Ձաշխարհըս մեր օտարք կերեալ,
Մեր առաջի ալաց տեւեալ⁶⁷:

Այս «Վիպասանությունը» իր կով ոճի և լեզվի պարզությամբ շատ
սիրելի է եղել և հետագայում, եռյնիսկ նմանողության օրինակ է դար-
ձել, Կիլիկիայի հայոց Լեւոն Գ թագաւորը 150 տարի հետո վաճրամ
Բարսեւ կոչված վարդապետին շարունակել է տվել այն, սկսած թուրքերի
հարձակումից և վերջին Գագիկ Բագրատունի թագաւորից մինչև մոտ
1275 թիվը: Գրված է Բուրիսյան տիրապետության մասին միևնույն ձևով
և եռյնիսկ եռու բնալը հանգով, ինչպես Շեքրհալու գործը⁶⁸:

⁶⁷ Ահդ. էջ 539 և հտե.:

⁶⁸ Dulaurier, Historiens Arméniens, էջ 498, 515 և Զաւրեանայան, Հայկ. գրք-
քառմ., էջ 701:

Մի ուրիշ նոր գրական տեսակ է շափածո ներքողյանը: Հին ներքողյանների ու ճառերի մեջ որոշ կտորներ ոչ միայն պոեմատիկական բնավորություն ունեն, այլև երբեմն իրենց բխիժով և լիբիզով մոտենում են շափածո խոսքին և անգամ շափածո բանաստեղծություն կարող են համարվել: Այդ բավարարություն չի տվել ներսես Շնորհալու: Նա ուսանավորով բանաստեղծարար հորինել է ս. հալի ամբողջ ներքողյանը, նյութն առնելով Դավիթ Անհաղթի անունով հայտնի ներքողյանից³⁹, որի և հասցուցությունն է արել: Դրա վերջին մասը չենք հավատով ասված մի մեծ օրհներգություն է, բանաստեղծի սիրած ութվանկանի տողերով ու փոփոխ մանգրով:

Ուսանավորով է հորինված և Մաղթանք առ սուրբ հրեշտակներ⁴⁰, որ կա հրեշտակների մասին օրավեստ ներքողական: զրվածքից հետո, իսկ այս երկը ներսեսը 1162 թ. դրել է իր եղբայր Գրիգորին կաթողիկոսի խնդրով, հետևելով Դիոնեսիոս Արիստակացու «Ճաղագա երկնայնոյն քահանայապետութեան» (= Հիերարխիայի), որ հայերեն թարգմանել է Ստեփանոս Սյունեցի Քերթողը հունարան լեզվով: Ուստի Շնորհալու ոճը, նրա ազդեցությամբ, այս զրվածքի մեջ մտնել է, ասելի բարձր և արուեստակնալ է⁴¹, նա խոսում է հրեշտակների կամ զվարթունքների ամեն մի դասի կատարած դերի ու պաշտոնի մասին:

Ներսեսն առհասարակ միշտ պատրաստ է եղել ոչ միայն իր եղբոր, այլև որեւէ խնդրով իրեն դիմող ուրիշների սիրով պատասխանելու և հաճախ իրեն տրված հարցերին իր մեծ հմտությամբ լուծում տալու: Նա ունի նաև մի ցերթված՝ «Ճաղագա երկնից և պարողը նորա բարանաբարի դիմաց նորին ի շափ երկոստասանինց պարզեալ ոտից ի խնդրոյ առն քոչկապետի և աստեղագիտի Միլիթարայո⁴², Քերթվածը քարառնաբարձ, այսինքն դիմառնաբար է հորինված. խոսում է ինքը երկինքը իր կողմից: Խոսքին զմեզով իբրև անձնավորված էակ:

Իմ եղական գույով բնութիւն և սկըզբնական,
Յաննդէ՛ն ձգեալ կամար անզուգական,
Անչըրպետեմ զչուրսն վերին և ներքեական...
Բուրա՛կ եմ կիսագունդ որպէս խորան,
Բնութեամբ կայուն, անձամբ շարժուն անկայական:
Հիմն և աւարտ եմ զուլացութեանցս այս նիւթական.
Անդունդք ի խոր, բարձունք ի վեր, մինչ վերանամ:

³⁹ Երեսը չափուս, էջ 229—268. Ենթադրվում է նախատես ավելի հին սրբոյ. հօրէն մերձ Գաթլ Անյաղթ փրիստօֆայէ ասացաւ, Ուսանալոյ յափով աստանալ հօգաւ. ԵՏ՝ ան ներսեսի ներքողական կենսատու սուրբ Խաչին:

— 214, էջ 267 և հետո:

⁴¹ Ղ. Մկրտչեմ, Ենթադրվում է զուրազայ իւր, էջ 278 և հետո: Գ. Արաքեանյան, Պատմ. հին դարերի, էջ 622: Արաքեանյան, Մատենադարան հոյն, թարգմանության, էջ 282 և հետո:

⁴² Ընդ, էջ 278 և հետո:

Ամբողջը 12-վանկանի մի մեծ գրվածք է, որի մեջ նկարագրված է հրկիչի քսա ժամանակի հասկացությունը՝ արեգակ, լուսին, յոթն մուր-
դակներ, աստեղերկու կենդանակերպներ և այլն, առանձին խորհրդածու-
թյուններով, ինչպես նույն նյութի մասին գրել են նույն դարում նաև բի-
զանդացիների մեջ, Հայոց գրականության մեջ այդ մի երբ գրական տե-
սակ է մի երբ թեմայով, ոչ լիովին կրոնական բովանդակության, և հետա-
գայում առաջ է բերել նմանողներ, Շեքսպիրու այդ ցերթվածի մեջ պակա-
սում է բանաստեղծական թերշքը, բայց այն հանելի է իր ընտիր ու ճա-
շմարտոր ոճով և սահուն ու ութմեկ ռասանավորով։ Գրվածքի վերջում կա
մի տրոգորական այս վերնագրով՝ Ենոքին այլապես տալիս ի խնդրոյ տն-
ուան նախագիծ տառից տանց։ Ամեն տան (հրկտողի) սկզբի տառերը
կազմում են այս գլխականը՝ ԵՄԻԹԻԹԻԹ ԲԺԻԶ, ընկալ ի ներսնէլ զայս
բան։

Այս բժիշկ Մխիթարը⁴³, Շեքսպիրու բարեկամը, հղել է նաև աստեղ-
դագէտն և, հրեի, իբրև այնպիսին՝ նա մեր ցերթողից խնդրել է տաղաշա-
փությամբ գրել հրկեքի մասին։ Նրանից չի մնում աստղաբաշխական
գրվածք, բայց կա մի կարևոր բժշկական գործ, որ նա անվանել է Ժմեր-
մանց մխիթարութիւն, զի սա մխիթար է դրժիշկն ուսմամբ, իսկ զհիւանդն
առողջութեամբ⁴⁴, իր ժամանակի այս նշանավոր անձը, ինչպես իր գրքի
առաջարանի մեջ ինքը հայտնում է, եղել է Հեր (այժմյան Խոյ) ցաղաքից։
Ե՛ր մանկութենէ սիրող եղէ, ասում է, իմաստութեան և բժշկական առ-
ուեստից, և վարժեցայ ի դպրութիւն արաբացոց, պարսից և հնչեանացոց։
Իր գիրքը գրել է 1186 թ. հորդորանքով Շեքսպիրու հաջորդ Գրիգոր Պահ-
լավունի Տղա մականվանված կաթողիկոսի, որին գովում է նա ասելով՝
ժամենեկին սիրող իմաստութեան և հմտութեան Գրիգըր նա հորինել է ցաղ-
վածորեն և թարգմանաբար արաբ, պարսիկ և հույն բժիշկների գրվածք-
ներից։ Առաջաբանը գրաբար է, իսկ ըստ նյութը ժամանակի խոսակցա-
կան լեզվով։ Եւ արարի զսա գեղչուկ և արևակ բարբառով, զի դիւրահաս
լիցի աճենայն բնթերոցաք, առ ի յիշատակել զմեզա։ Մխիթար Հերացիին
գրած է նաև Եվասն քարանց և յատկութեանց նոցա և բժշկութիւն նոցա, և
ուրիշ բժշկական աշխատություններ ևս, որոնցից քաղվածքներ կան հե-
տագա բժիշկների գրվածքների մեջ, բայց ըստ երկերը հրեան չեն եկել։
Ահաասարակ բժշկական ուսումն և արվեստը հնուց սիրված է հղել հայերի
մեջ։ Մխիթարից և՛ առաջ, և՛ հետո եղել են շատ բժիշկներ, նրանցից ա-
ռանձնապես հիշելի են Ստեփանոս (բժիշկ Ահարոնի սոճմից) 13-րդ դա-
րում, հայտնի գիտնական մի բժիշկ 15-րդ դարում՝ Ամիր Դովյաթ Ամա-
սիացին, ինչպես և Ասուր Սեբաստացին 17-րդ դարում։

Առաջնորդվելով վերևում բացատրված իր տեսանկետով, թե բանա-

43 Պ. Ալիքյան, Շեքսպիր և պարագայ իւր, էջ 257 և հոսն, ԵՃԱՆԵՐԻ տմարեայն, ՌԻՅԵՆ, 1888, հետմեջիւր։

44 ԵՄԻԹԻԹԻԹ ԲԺԻԶ ԲԺԻԶ, ԶԵԽԵՐԻԿ, 1882։

գործութիւնն նպատակն է ուսուցանել և ոտանալորը զվարճալի է դարձ-
նում զբովանձը, Ներսէս Շնորհալին գրել է և երկու շարք լատինոս խրատ-
ներ, և որպէսզի ամենի զվարճալի լինի, այդ փոքր երկերը հորինել է քի
դիմաց այբբենից տառից, այսինքն՝ այբուբենի կողմից⁴⁵։ Դրանք ունեն
վերացական բնույթ, բայց շատ հաճելի են հեղինակին հատուկ սահուն,
երբեմն և պատկերավոր ոճով։ Շարքերից մեկը՝ «Խրատ ուսումնական»
մանկանց՝ կազմված է մեր տառերի թվով քառյակներից։ Դա ինչպե՞ս
մի մանկավարժական զբովանձ է, որով թե՛ այբբենն է կարգով սովորեց-
նում, թե՛ միաժամանակ քառյակը թանկան խրատներ է տալիս մտնուկ-
ներին։ Առանձնապէս այդի է ընկնում և այն, որ նա հորդորում է սիրել
ուսումն ու գիտութիւնը։

Այսպէս, վերջաբանի մեջ ասում է.

Եկ բեր, մանուկ, զունկրն քո լիս,
Լուր և անաս իմում բանիս...
Սիրեա՛ դուստմն, որով պատուիս
Ի յերկնայնոցն և ի յերկրիս։

Բուն քառյակների մեջ էլ հաճախ նա կրկնում է նույնը. օրինակ՝

Գիմըն դանձէ քեզ թիւր թարի,
Գրելով գիմաստս ի տախտակի,
Ձեա արկ ի քոյդ պարանոցի,
Որ պատուական է քան զսեկի։

Դեռ 19-րդ դարի առաջին հիսնամյակին էլ, ինչպէս Շնորհալու ժա-
մանակ, վարժապետները տախտակի վրա գրում էին աշակերտների դա-
սերը և կախում նրանց վզերից։

Դայն դուռն բանալ քեզ գիտութեան
Ըզտանարին իմաստութեան.
Բախեա և մուտ արհուլթեամբ,
Մի արտաքոյ մեաք հեղգութեամբ,
Ձայն դարթուանէ ըզքեզ, մանուկ,
Ձայնիւ հընլմամբ որպէս թըմբուկ.
Մի՛ յուսմանէ լինիւր տաղտուկ,
Ձի մի՛ տաք վայ անձինդ յատուկ,
Ժէն ժուժկալ լինել, առէ, յուսումն,
Թէն անպտակ առնուա յարրումն.
Հայեա՛ք յոսկին, որ ի քրայումն,
Ձի ծեծելով առնու զմաքրումն։

45 «Բանք լատինոս», էջ 226—250։

Այսպէս և ուրիշ քառյակներէ մեջ, Բարոյակրթական խրատները ար-
վորական բովանդակութիւն ունեն, ներքմէն և կրօնական — հետանալ շա-
րութիւնից, վատ մարդկանցից, սուտ խաղերով լլըրաղվել, նմանել իմաս-
տուններին, լսել ծնողներին և վարդապետին (ուսուցչին), հետեոյ լինել
իմաստուններին, լլինել ծուլի, հպարտ, լինել ջանասեր, խոնարհ, հնա-
զանդ լինել ծնրներին և նմաններին:

Պէն պատուիրէ պարկճատ լինել,
Մի՛ գորովայնըց խըճողի,
Մի՛ ըզգինի բընաւ սիրել,
Մի՛ տարածամ ղըքրանդ յածել:

Խրատներէ մյուս շարքը գրված է ությակներով՝ «Բան ներտաղական
ի խրատ ոգոց հասկանից ի դիմաց մերային տառից տանց յիւրացան-
չիւրան քառից», այսինքն՝ ասեն խրատ կազմված է լորտ տնից (երկու
տողը մի տուն), Խրատներն ուղղված են ասեն մարդու՝ ն՝ մանուկներին,
ն՝ նրիտասարդներին, ն՝ ծնրներին, քայց ոչ գիտուն մարդկանց, «Սա ոչ
գիտեոց՝ այլ տղայապէս մանկանց տըաւ նուախալապէս», գրուի է հնդի-
նակը: Ունին ընդհանուր բարոյակրթական բովանդակութիւն — քրինակ-

Թենըն քանից, ասէ, շարաց
Մանեճա զլեզուդ վասն ընկերաց.
Ի բնրանոյ ք հուսն ի քաց
Ձիտսա աղտեղիս նախատանաց:
Նան ի քտն քամքաստանց՝
Դիր պահապան քոյոց շքրթանց...
Մայն ծանուցանէ յոյժ ծանրագոյն.
Ձրան նրդման ուրանալոյն...
Ձայն շար ասէ զազահութիւն,
Ձի շատ մեղաց է ծնելութիւն:
Ձի ի նմանէ է սպանութիւն,
Նա է աւար և դերութիւն.
Անտի ակահալ է գողութիւն,
Ծւ տնիրաւ դատողութիւն.
Ի յայնժանէ վաշխատութիւն,
Եւ ըզմիմեանս տանիութիւն:

Խրատներ է տալիս և աշխարհի մեծամեծներին՝ լլինել անքաղտու-
վան, այլ քաղցր ու հեղ, խոնարհ և շատ նմանները: Կան նաև կրօնական
բովանդակութիւն խրատներ, այլև կլանքի անցաւոր լինելու մասին.

Կենըն կենաց զանցաւորէ
կըրկին դըրամք քաղաց ասէ.

Ընդ մին մըտեր մերկ յարգանդէ,
Ընդ միւսն ելցնա մերկ յաշխարհէ,
Արդ զի՞նչ օգտիս դու ի շահէ
Բ քաղաքիս ալս վաման,
Յորժամ ի գրունսն կողոպտէ
Մահն, որ կենաց թըշնամին է:

Քուրդովին նույն ձևով, ինչ խրատական քառյակները, հորինված է և թան հասարակ վասն անեղին և եղելոց քարառնաբար ի դիմաց հայկական տառից լատինացի մամբ ոգեւել⁴⁶, Դա մի փոքր զրկածք է, սկզբի քառյակների նյութը դավանաբանական է, հետո շատ էական կենտրոնվ համառոտ դրված է Ս. Գրքի բովանդակութիւնը, սկսած աշխարհի ասեղծումից մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը: Բանաստեղծական արժեք չունի. հարկն է լով քարենական նպատակի համար:

Վերջապես՝ վերևում հիշված Ապիրատի խնդրով, Հոռնկայում 1151 թ. Ենոքհայի գրել է իր մի ուրիշ աշխատութիւնը, դարձյալ թան հասարակ, որ նախել է ի հիշատակ իր ծնողներին և ազգականներին⁴⁷, Դա Ավետարանի անգարդ և արագ ոճով համառոտ պատմութիւն է մոտ 1500 ութվականի տողերով, հանգերի փոփոխմամբ:

Փոքր բանի կարճ ի կարճոյ
Միայն ըզմիտսն ցուցնույ,
Ընթերցողաց վերանանույ
Արագ մըտացն հասնույ:

Սկզբում դրված է եկեղեցու դավանութիւնն աստվածութիւն և սերկուրնութիւն մասին: Այս գործը, որ առանձին բանաստեղծական արժեք չունի, իր ժամանակին անպայման շատ հաճելի միոց է եղել Ավետարանի պատմութիւնը սովորելու համար: Դա առաջին փորձն է ժեսարական հորինելու, բայց իրեն՝ հեղինակին, երևի, չի քաղաքարել:

Տ. «Առակը» — Բանկուկներ: — Մեր Ենոքհայի բանաստեղծը ոչ միայն մեկին գրելու հակումն է ունեցել, այլև հակառակ լի եղել իր խոսած լեզվով, անգամ քնտանեկան ոճով շարադրելուն: Նա գրականութիւն մեջ մտցրել է մի հոր տեսակ նա՝ թուական վասն ուրախութեան մարդկան⁴⁸, թուական բառն ալստեղ լսելի հասկանալ տրդի իմաստով, այլ իրրև թանկութիւններ: Տպագրված են 120 թառակներ, որոնց մեջ կան և ժամանակի խոսակցական լեզվով գրված: Ինչպես ժողովրդական հանելուկների, նույնպես և թառակներին նպատակն է ոչ ալիքան մարդկանց

⁴⁶ Երանգ լատին, էջ 218 և հետ:

⁴⁷ Անգ, էջ 167—227. թան հասարակ ասանաք թագի լուսնոյ:

⁴⁸ Անգ, էջ 580 և հետ:

ուրախացնել, որքան զվարենալի հղանակով սովորեցնել և արամատութիւն զարգացնել, դիտել տալ բնութիւնը, զանազան իրեր և այլն:

Գրանց նյութը կիսով վերաբերում է կրօնական բաների և անձերի, ինչպես նաև՝ աքեղա, միակնց, դրախտ, ասպաշխարանք, առաքյալք, կանթեզ, Արեւ և Կային, Արարհամ, Աղամ, Դավիթ, Ղովտ և այլն. նաև Հայոց պատմութիւնից՝ Վարդգաստ, Տորք, Տրգաստ: Հետաքրքիր են ավելի այն բազմաթիւ ճառակները, որոնք, ինչպես ժողովրդական հանելուկները, Հորինված են կենդանիների, անասունների, տարբա շորս հղանակների և այլ ոչ կրօնական բաների մասին, որինակ՝ Այուե, երկինք, արեգակ, յաւին, տեճեր, աշխարհ, ժառ, կշեռք, մրտզ, Խուռն, պղտ, խորք, խաղող, խեմար, տանեմ, ընկուլզ, ցորեն, շրաղաց, ագոսով, այծ, աղվես, աքշ, էշ, կատու, կրիա, շուն, խոզ, մաքր, ուղտ, շորի, սագ, սիրամարգ, կաքավ, արտուտ, քզեզ, մեղու, մրջիմ, դինի, գիրք, դանակ, դուռն, աշտարակ, աղեզ, սուր, սանդր և այլն:

Շնորհալիկ այս նոր գրական տեսակը յուրացրել է անշուշտ ժողովրդական բանահյուսութիւնից. նրա հանելուկների մի մասի նյութն էլ առնելոված է ժողովրդականից: Այսպես, օրինակ, ժամանդական շեյխի (— վանահօր) և կաթուղի ֆրերի (— եղբոր՝ կրօնավօր իմաստով) նմանցրած արշի հանելուկի վերջին տողն առնված է ժողովրդական առածից, թե՛ քննելի աչքը մերու տանէին էս:

Շնորհալի մի կայր զեռ ըզֆրեր.

Ու ինք խաւ ի վեր մուշտակ ունէր,

Նազայր, քուլ¹⁰ կենայր ու յառնէր,

Ու Հեռ տանէին զայերն ածիր:

Ամպրոպ ու կայծակի հրեղեն և անձրևաբնր աստուծուն — Վահագնին ըստ մեր ժողովրդական հավատալիքների՝ փոխանակել է Ըղիա մարդարեն, և վերջինս՝ Ըղիան հանելուկի մեջ նկարագրված է հիշված աստվածութեան գծերով.

Տղայն լուտէր բայց միայն հուր,

Մեծին ազատւի տալի տղար:

Հեծեալ հրեղէն ձի ու դնայ սուր,

Ի ինքն ի յամպոյն հոսէ մեզ շուր:

¹⁰ Տպված է՝ քաշուլ կենայր, սղղում եմ քաշուլ կենայր: Է. Անալյանի տեղագրական քաղաքների մեջ քաշուլ քաղի համար զգում է աստուծոյ քաշուլ: Գա. աղանաւմ է՝ քաշուլ քաղի: ՏՊ՝ Ս. Ամատունի, Հայոց քաղ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 676 և 678. Գլխաւորել, քուլիւլ—շեհրի, կուտուկերի և այլն, իրոր վայր հզելով, թավալելով խաղալու: Գործ է ածվում և մարդոց համար: Բժաշկագիրքի հերթ ու մեր խաղաղիկ իրոր քայլիցիւն (Պոռչյան): ՏՊ՝ Ս. Է. Ամատուն, Գաղաղական քաղաքան, Քիֆլիս, 1913, էջ 1120. Բժուլ: կենայ, քուլիւլ, քուլիւլիւլ—շտի զգզվել: իրորու հեռ զգզվիլ: շեհրը քուլիւլում են, գետին տապալել և այլն:

Ինչքան էլ ժողովրդական տարրը երևում է մի քանի ռառակներին՝ մեջ, բայց սրանք էլ, ինչպես և մյուսները, իբրև դրական երկեր Շնորհալու իրեն ստեղծածն են։ Նա ժողովրդական հանելուկների տեսակն ընդարձակելով, վերածել է նույնահանգ քառյակների (մեկն ությակ է), և անպատշաճ ու հակիրճ ոճով, բայց դիպուկ այլիմաց նմանութուններով նկարագրել տոակներին մի քանի քնորոշ կողմերը և առաջ բերել իսկական դոքորիկ բանաստեղծություններ՝ լի ճշգրիտ իրականությամբ։ Այսպիսով ժողովրդական բանահյուսության այդ հասարակ տեսակն ստացել է որոշ գեղեցկություն և ունի մի առանձին համեղություն ու զրավյություն, մանավանդ երբ հորինված է խոսված լեզվով։ Բերենք մի քանի օրինակ։ Հենց սկզբում գրված հանելուկի մեջ կենդանի տեսնում ենք սևավոր արեղային՝ առանձնացած աղոթելիս.

Մէկիկ հատուկ մի կայր փոքրիկ,
'Ի ի գլուխն ունէր սեռուկ թնայրիկ.
Երթայր նըսաէր ինքըն լըռիկ,
Ազոթք առնէր խիստ սըպըրկիկ։

Ահա և քարաշրջիկ խեղճուկ այծը, որ իր մարմնով ծառայում է և՛ քրճաղգեստներին, և՛ գինարբուններին, և՛ ամենքին.

Յամէն շըրջի ինքն ի քարեր,
Ունի ծախու մազէ թըրճեր,
Գինոյ ունի ազուրդ տըկեր,
'Ի օտուէր ձըրի գանկի կոթեր։

Ջանասեր մըշյունների երկայնածիղ քարավանները նմանեցրած են Խորասան գնացող բռնակիր էշերի քարավաններին.

Կարի տեսայ ես շատ կարուան,
Որ կու իշնայր ի Խորասան.
Իշուին քուկիկ էր ու անփալան,
Մէկիկ հատիկ բառնան ու գան։

Գեղեցիկ է կանաչազգեստ մանուկ զարուհն իր արտադան խաշների հոտերով և բազմաթիվ գեր ձիերով. և ընդհակառակն՝ քառաթափ շատ անձաւ Հոռմիլայի և շրջակա երկրի այրող աշունը, որ ցամաքեցրել է գետի ջուրը, խանձել ու հնձել է դաշտի խոտը՝ զրկելով ձիուն և էշին։

Թագուր Կորգայ աղուոր տեսակ,
Ջամէն հաղնի կանաչ դիպակ.
Խաշինք ունի անթիւ բանակ,
Շատ զէր ձիան որձ ու մատակ:
Մանուկ մի կայր զօրեղ հրեղէն,

Արժեք հասոյց զքուրն ի գետէն,
Ձիւնն ի իշուս արար նա քէն,
Հընձնք վերոյց դիտուն ի դաշտէն:

Ո՛րքան իրական է նկարագրված աշխարհ կերակրող ըրազացն իր
ցրտոտնում (ջրտուն) տառապող անվուզ (փառ), շաղ տված ալյուրով ու
լախլախով:

Մինն ի յանդունդըս տառապէր,
Մինն ի յերեսուն թըջանէր,
Գըլխովըն ծափըս հարկանէր,
Հղկենարարն մեղ բերէր:

Ո՛վ կհամարձակվի բռնակալի երեսին բան ասել. բայց մի դարմա-
նալի բան կա թուռնի մաղիլներով, և նա ցատկում է բռնակալի երեսի
վրա:

Եկ դու մի՛տ դիր, սիրելի՛,
Ժբք մի աւեմ զարմանալի.
Մէկ մի ունի մաղիլք հաւի,
Վազէ յերես բռնակալի:
(Սանդր)

Ինչքան էլ հանելուկներն նվաստ տեսակն է մշակել մեր բանաստեղծը,
նա չի մոռացել անցաւոր մարդ էակի հեղհեղուն բախտը և որ «աշխատե՛ր
հյութանոց է, մարդիկը հյութ են. կուսան ու կերթան», այն էլ ինչպե՛ս
կերթան...

Պանդոկ մի կայր վերայ երկրի
ի յանցաւոր ճանապարհի.
Որ անծանօթքն ի նմա գային,
Եւ ծանօթքն գընային:
Մինչ հիւրն գայր՝ մեծարէին,
Եւ մինչ գընայր՝ կողոպտէին,
Ոչ թէ մասն ինչ իրա տունսին,
Այլ գրովանգական խըլէին:

ԵՑԻՍՈՒՄ ՈՐԳԻՑ

1. Դարերի յեզեղանքը և ողբերգությունը:—Հիշված բուրք նոր
տնակի երկերը թեպէս ունեն գեղեցիկ հատվածներ, բայց իրենց նյու-
թով բանաստեղծին արդեն հնարավորութիւն չեն տվել ոչ երեսակայու-
թյան թռիչքներ գործելու և ոչ էլ ներառվելու իր հոգու խորքերը և քր-
ջըրելու իր զգացումները: Կարծես Ենորճալին երկար որոնումներ է արել՝

դրա համար մի հարմար նյութ գտնելու և գտել է ամբողջ Ս. Գրքը, Ուստի վերնում հիշված բթան հաւատոյն երկից հետո, որի նյութն Ավետարանի պատմութիւնն է, 1152 թ. հորինել է մի իսկական բանաստեղծական զործ՝ «Ողբերգութիւն վիպասանական ի տառից սրբոց», որ սովորաբար անվանվում է ըստ ակզրի բառերի «Յիօտու Ծղի»։ Ամբողջ վերնագիրն է՝ «Տէառն ներսեփ նուէր մաղթանաց ներշնչական տաղիւստութիւն քանից, ըստման տղթից ներանձնական հոգեոց զարթուցելոց մտք ի թմբորութենէ կրից յիշատակաւ անցնումն իրի ներկայի և ապա-դայի, ողբումն հեծութեան սրտի, խոսք ընդ աստուծոյ»։ Այս ցիտատից հենց կարելի է տեսնել, որ Ենորհային այս երկի համար ազդել է Գրիգոր Նարեկացու Ողբերգութիւն Մատչանից։ Մյուս կողմից նա հետեւել է նաև Գրիգոր Մագիստրոսի «Ճաղարտողյանին»։ Ինչպես վերջինիս մեջ ոտանավորով տրված է Աստվածաշնչի բովանդակութիւնը, նույնպես և Ենորհայու երկի վիպական կողմն առնված է Ս. Գրքից և նույնիսկ ամբողջ երկը, լսութ և ազգար տող (սերկհաղարեան տամբ յանգսկանս), հորինված է նույն թիւն հանգով, ինչպես Ճաղարտողյանը։ Բացի չին և Նոր Կտակարանների պատմութիւնից՝ վերջը նա հիշում է նաև քրիստոնեւորման համար աշխատող հայրապետներին ու նահատակներին, ճգնաժամներին ու շարլարվածներին և վիպերգը հասցնում է մինչև Քրիստոսի հրկրորդ դալուսը—աշխարհիս վախճանը, վերջին դատաստանն ու հալիտենական կյանքն ըստ քրիստոնեական հալատալիքի։ Դա բովանդակում է, որեմն, այսպես ասած, դարերի չգննդաները, մարդկային պատմութիւն անցյալը, ներկան և ապագան։ Բայց զա լուկ վիպական աշխատութիւն չէ, այլ միաժամանակ և քնարական քերթված է կամ, ինչպես հեղինակը ընտրոշել է, սողներգութիւն վիպասանական։ Սի կողմով պատմվածք է, մյուս կողմով՝ մի սրտաբուխ երգ։ Եվ այս կողմից արդեն նա նմանել է Գրիգոր Նարեկացուն։ Այս նմանութիւններով հանդերձ՝ նա հորինել է մի օրիգինալ — իսկատիկ, չարաստեղծ ընտիր երկ, որի մեջ անձնականը — լիրիզմը բռնում է կարեւոր տեղ։ Բանաստեղծը կամ «Երգողը», ինչպես ինքն իրեն անվանում է հեղինակն այդ երկի հիշատակարանի մեջ⁵¹, — իր վրա է դարձնում ըստ Ս. Գրքի և՛ մեղավորներին, և՛ արդարներին արարածները, հարկավ, իրեն չհամարելով արդար.

Սկիզբն ի հորէն մեր նախնական
Մինչ ի վերջին դարուս վախճան,
Ըզբան և զգործ համանգամայն
Առ իս փոխնալ դիմառական...

Ամբողջ զրվածքի մեջ շարունակ իշխում է բանաստեղծի իր զեմքը, որ հեծութիւն մը դիմում է աստուծուն.

⁵⁰ «Բանք լափաւ», էջ 7—166.

⁵¹ «Յիշատակարան երգողի բանիս», էջ 160.

Ընդ աստուծոյ զէմ յանդիման
հօտակցելով անէն անարժան:

Այդ եւօքան ընդ աստուծոյ իսկապէս մի բազօթական բառն է, բազմապէս աղօթքներ մի շարք, որոնց յորաքանչյւրի մէջ ներման է գալիս «Երգողի զգացումն հրի մի գիծ, հոգեկան վիճակի մի կողմ: Նայելով պատմած իրողութիւններին՝ նորեմն նա զգուս է և խոստովանում իր արարքը, նորեմն որն է խնդրվածք է տնում՝ ծիղծառ աղօթիցն, և այդ ամենի ժամանակ, ինչպէս Գրիգոր Նարեկացին, շարունակ իրեն անարժան ու մեղավոր է գտնում: Մարդկային զանազան վիճակների ժամանակ պատմվածքների մէջ՝ բնատու հետ խոսքը, այս է կազմում նրկի նպատակը և էական տարրը, ամբողջի ընդհանուր գույնը, որով և նրկի միութիւնը:

Գրեթէ անընդհատ կապակցութեամբ ամփոփ պատմվածքի մէջ իրար հաջորդում են անէնք և իրողութիւնները և ազա համապատասխան քնարերգութիւնն ու խորհրդածութիւնները: Նրեմն այդ նրկուն իրար կից են մէջ բերվում, ինչպէս, օրինակ, զրույցը կարճահասակ մասքավոր Զաքեոսի մասին, որ Հիսուսին տեսնելու համար բարձրանում է ժանտաղէնին (էջ 113):

2. Արտահայտութեամբ ձեռ Գրիգոր Նարեկացու ձևի հետ համեմատութեամբ: Հասարակութեամբ ազդեցութիւնը ոճի վրա: — Ներսէս Շնորհալու այս հրկի համար, ինչպէս Գրիգոր Նարեկացու «Ողբերգութիւնն», իշխող է աստված, որից բխում է և նրկունք քանաստեղծութիւնը: Նրկունն ևս իրենց իրենք, այսինքն՝ բանաստեղծութիւն համար նույն նպատակն են դնում թե՛ իրենց իրենց համար և թե՛ ընթերցողների (էջ 158):

Եւ որք ինն և կամ յնա իմ

Այսու բանի քնդ պաշտօնին,

Համարեացիս միջու ընդ նոսին

Ձիս ըզնեքսէս մաղթել սովին:

Եւ տա հոգիս իմ յաւանդին

Եւ ի մարմինս իմ տապանին

Բարեաց աղգումն ի քէն լիցին,

Եւ ցընծացեալք կայտոնացին:

Այսպէս ուրիշ նման կողմեր նրկունք մէջ ևս:

Ինչպէս բերված հաստվածներէց կարելի է նկատել, Ներսէս Շնորհալու այս բանաստեղծութիւն մէջ ողբերգը մեղմ է, տխուր ու քնքուշ, ամենայն ինչ հանգարտ է ու փափուկ: Ոչ վերամբարձ սլացք ու թռիչք, ոչ արտի այրուք ու ճննճնորում և ոչ տաշտող ու կրակոտ զգուս: Այստեղ շնք գտնում հուսահատական ճիւղ և աղաղակ, որով ինքն իրեն կտրատում և ոչնչացնում է Գրիգոր Նարեկացին ողբալիս: Ներսէս Շնորհալու մոտ ևս զգացումներն զնդումն անկեղծ է, մեծ է կրեական զգումն և ուսնողը, բայց, ինչպէս սովորաբար, նա շափաւորութիւն սահմանից չի

անցնում, Երկուսի մեջ ևս կատարելապես նույն զգացումներն են, միայն-
արտահայտության թափում ու ձևով տարբեր։ Բայց Շնորհալիքն նման է
մի բարենկիրթ մարդու, որ իրեն պահել զիտեն, մինչդեռ նարեկացին հի-
շնցնում է մի քնակա՛ն մարդ, որի ներքինն անզուսպ է և որ անմիջակա-
նորեն, առանց քաշվելու արտահայտում է իր բռնկումները և հեծեկալով
արտասովում։ Նա համեմատովում է մի պղտոր հեղեղի, ոչ զրգանք տալով՝
ալիք-ալիք ետևից քշում է առաջ, և որի մեջն ընկնողը տանջալից տար-
վում է հրկար-հրկար, առանց հասնելու հզրին. մինչդեռ Շնորհալիքն նման
է մի ականակետ, վճիռ աղքետակի, որ հանդարտ սահում է կարկաչելով,
և որի խաղաղ ավիտն նստած՝ մարդ ուղղվում է խորհրդածության մեջ
աշխարհիս մասին։ Բայց այսպիսի դանազանությամբ հանդերձ՝ Շնոր-
հալու այս երկը պակաս ազդու չէ, քան նարեկացուը. դա մի հեծություն,
մի հաղալ է, մեզմ ու հեղիկ, և ոչ հեծկլտանք ու թառանչ, բուռն ու
սաստիկ։

Ինչի՞ց է առաջացել երկուսի այս ոճական զանազանությունը —
Անշուշտ, երկու բանատեղծների խառնվածքի, բնավորության տարբերու-
թյունից. մեկինը տաք ու բռնկող, մյուսինը՝ անուշ ու հասգիստ։ Բայց
կա և հասարակությունը, որի արտահայտիչն են դառնում իսկական քա-
նատեղծները, ոչ միայն իրենց զորեի բովանդակությամբ, այլև Անուշ
ոճով։ Երկուսի էլ այս կրոնական գրականություններն արտացոլել են
յուրաքանչյուրն իր ժամանակի հոգևորական դասի պատկերը, առանձ-
նապես կրոնավորությանն ու ճգնավորությանը։ Արդ՝ նարեկացու Ողբեր-
գությունն զրվելուց ուղիղ հարույր հիսուն տարի հետո է ստեղծել Շնոր-
հալին իր երկը, իսկ այդքան երկար ժամանակի ընթացքում շատ բան էր
փոխվել։ Վերածնունդյան հեղաշրջող հոսանքը բավական զորացել էր ար-
դեն, ազդել էին դրա համար և Հայաստանի ու հայ ժողովրդի քայքայիչ
վարկվերությունը, մեծեղական այլազգիների հզորական ախրադեռու-
թյունները, անընդհատ երեւուն վիճակը և նմանները։ Այդ ամենի հետե-
վանքով արդեն շատ փոխվել էր նաև կրոնավորության ոգին։ Գրիգոր
նարեկացու օրով, ինչպես նկարագրված է աշխատության առաջին հա-
տորի մեջ, կրոնավորությունն ու ճգնավորությունը չափազանցության էր
հասած թե՛ ներդառա մարդկանց բոլորոված երևակայությամբ և թե՛
արտաքուստ իր արտահայտության սուր ու բիրտ, ճշուն ձևերով—մերկ
ու բռնկոտն տնալ, կամ գրգյալներ հագնել, բազմօրյա անավաղ պահե-
րով և այլևայլ միջոցներով տանջել մարմինները, ամեն տեսակ արտա-
քին ուժով ու բուռն ցուցադրությու՛ն մրբկող հոգիների և միատեղական
ցավազար ձգտումներին—մեղադրել ինքն իրեն, սաստիկ ապաշխարել,
յայ, արտասովել և նույնիսկ ինքն իրեն ծեծել և այլն։ Այնպիսիները հոգով
ու մարմնով անհանգիստ գերի էին ապաշխարություն րոնակալ ուժին և
համոզված էին, թե՛ մեղքերի ծովն ընկած՝ արեկծովում են կուտակված
աղքետների մեջ և շարունակ ավելի ու ավելի խիստ միջոցների դիմելով՝
աշխատում էին միմյանցից գերազանցել ինքնառանջությամբ։ Նրանց
հարկավոր էր իրենց հոգեկան պղտոր վիճակի համապատասխան զգա-

յացունց ապաշխարական արտահայտութիւնն, զորեղ ու բուռն խոսք, ձեռն-
շափաղանցում, քապնդանիք զօրաւորք վիրաց անբժշկականաց, դեղձ աղ-
դողականք ցաւոց անտեսանկանաց, որպէսզի աշխարհի ողորդող կարողա-
ւորով, որոս վրա աղոթելով, ամենիկ ևս լային ու կոծիկ իրենց, Թեթևը,
մեղմը, հանգստութիւն, միակեքակը նրանց հաճելի լինի լինի և լինի էլ ազդի-
ն ու բաւարարելու, քանի որ կյանքի մեջ կրում էին նույնը ծանրաթախիթ
փոթորակահույզ կերպով։ Արդ ինչպէս կրոնավորութիւնն էր, նույնպէս և
նրա պահանջած և նրա արտահայտիչ բանաստեղծութիւնը, ու միայն բո-
ւանդանութեամբ, այլև ուժեղ գոյններով և բազմադիմի խոսքն ճշդօր
վերով, մեկը մյուսից ուժեղ պատկերներով, հորդահեղ ոճով։

Այսպէս շէր կարող լինել Շնորհաւու ժամանակ, երբ կրոնավորու-
թիւնը, այսպէս ասած, աշխարհիկ էր դարձած, և լսի ձև էր մեծ մասամբ,
ինչպէս կրոններն ենքքեւում, երբ խոսք կլինի Շնորհաւու շէնդահանրա-
կանն աշխատութիւն մասին։ Կային, հարկավ, նաև զեռ մեծ քերթնական-
ներ, բայց ապաշխարութեան հորդ հոսանքը պակասած էր, կրոնավորու-
թեան բարձրացած, հորձանահոս հեղեղը նստած էր, պղտորութիւնը
պարզված, քափը թուլացած։ Չկար այլևս բորբոքված ուղեղների նրկ-
նաթիւն միտքիցիզմը, արտաքին ցուցադրութիւնը, Խոկանն քարե-
պաշտ կրոնավորը, ապաշխարողը դարձած էր ներանձնավոր, իր մեջ, իր
հոգու մեջ քաշված համեմտ ու զուսպ վանական, սրբաւոր, պարզ ու մա-
քուր կյանքով, բայց բնավ ոչ ինքնատանջ ճգնավոր, ոչ կամավոր նեղու-
թիւն կրող, շարժարկող։ Չկար կրոնական հարաւորութիւնն իր արտաքին
ծանր ու կեղծքիւն ձեւերով։ Բովական էր միայն, որ քարեպաշտը, իր մեջ
ամփոփված, լեւր համատեղողի մեր աստծուն։ Այս տիպի կրոնավորներին
լավագույն ներկայացուցիչն է եղել Ինքը Շնորհաւին։ ու միայն իր ապ-
րած համեմտ միակերպ կյանքով, այլև իր Ողորդութեան թե՛ բովանդա-
կութեամբ և թե՛ ոճով, որ համապատասխան է իր և իր նմանների ներ-
քինին։ Ամեն ինչ լափավոր, մեղմ, փափուկ, հանգստու և ոտանավորն
էլ միակերպ, բայց սահուն ու սիրուն։

8. **Վերջին դատաստանը։**—Շնորհաւին այս երկի մեջ ունի մեծա-
վաւելու հատկանքներ ևս։ Վերջին դատաստանի նկարագրի մեջ, որ մեր
հին բանաստեղծների սիրած նութերից մեկն է, ինչպէս և մեղավորների
պատիժների թվարկութեան ժամանակ, մեր այս հեղաբարո քերթողի
երևակայութիւնը մեծ քափ ու թռիչք է առնում։ Նա սաստիկ զգածված է։
Բերնեք մի քանի կտոր՝ կրճատումներով։

Յորժամ տարերքըս դողողդին,
Հաստատութիւնքն սաստնին,
Իբր ըզժովու կոհակք կուտին
Ի յնսանդանըն կաթսային,
Հայնատարած դողալ դետին,
Ի քանկրութեանց հիմանց շարժին.
Մի ըզմիտլ հետ խափանին,

Կասեալ յերկուցըն տատանին,
լեբրինք հիմամբքս դարհուրին,
նւ ուժգնակի բախմամբ թընդին,
Կարծր բնութիւնք վիմաց հալին,
նւ ամենայն նիւթք հըրդեհին:

Լռութիւնն է լինում. կենս-դիշնորին հանկարծակի գոչում է Գարրիելի փողը, հոգիները սլանում են իրենց տեղերից, ուր պահւած էին, Գերեզմանները բացվում են, փտած մարմինները նորոգվում են, նույնիսկ ծովի ձկների ու ցամաքի զազանների կերածները, Հոգիները միանում են մարմիններին, և մարդիկ բոլորը դառնում են հրեանամյա. սչ ծեր կա, ոչ մանուկ, ոչ արու, ոչ էգ և այլն. Բացվում է ասլանը, նստում է դատավորը: Քաղաքում են աղքատները, քաղցածները, զրկւածները, Պատըծվում են զրկողները, զոդերը, սպանողները, սպանիկները:

Պատժվում են և խարեքա վանաւանկանները, նենգավոր արհեստավորները, աղքատներին ուղիղ շղատող դատավորներ և շատ ուրիշներ: Պարգևներ են ստանում արժանատիները— առաքյալներ, մարգարեներ և այլն:

Ներսէս Շնորհալին իր այս Ողորդութիւնով հանդիսանում է երկրորդ և վերջին նշանավոր եկեղեցական բանաստեղծն իրան տրտահայտելու ինչպէս ասվեց, արդեն մեղմացած, բայց իսկական բարեպաշտ կրօնավորութիւն— ներանձնավոր վանականութիւն: Նրա այդ երկն իր խորաթափանց անկեղծութիւն համար, որ քնարերգութիւն էական պայմանն է, շատ սիրելի է եղել հետագա սերունդներին: Սաղմոսի հետ միասին հայկական տալազրութիւն հենց սկիզբներում, 1565 թ., արժանացել է տպւելու, և այնուհետև հաջորդ երկու դարում նորից տալազրվել է ամբիջքան ինն անգամ: Մեծ է եղել այդ գրքի ազդեցութիւնը, հմայքն ու պահանջը, Գարեբ շարունակ գրաւ վրա ոչ միայն աղոթել են և սիրտաւաճել. դա՛ եղել է ոչ միայն գկարծր սրտերը ճըմլուքս, ինչպէս գրում է ներսէս Լամբրոնացին, այլև զբանով ուսել են Աստվածաշնչի պատմութիւնն ու եկեղեցու դավանութիւնը և բարոյական խրատներն ան առել. որովհետև բանաստեղծը լի մոռանում, որ ինքն իր կոչումով հոգևոր դաստիարակ է: Ընտիր և արդարեւ գերբնտիր, միանգամայն և իսկաշնորհ և բազմաշնորհ զրկած մըք, այսպէս է բնորոշում այդ երկը բաղմահմուտ բանասեր ու բանաստեղծ վարդապետը⁶³:

«ՈՂՐ ԵՂԵՍԻՈՅ»

1. Քերթվածի իրական պատմական նյութը և ծագումը:— Իսկական բանաստեղծական հղացմամբ և արվեստով գրված բերված մի մեծ քնարական քերթված է Շնորհալու այս երկը⁶⁴, նրա գլուխգործոցը: Գրա

⁶³ Ղ. Ալիբեյ, Շնորհալի և զորացայ խոր, էջ 277:

⁶⁴ «Ողս Եղեմէյ յորիմէյ տեառն ներթիթի Կլայեցայ», Տփիս, 1829, ի տպարանի ներթիսեան գործոցի Հայրց:

Ներսէսի ԵաՀան կամ Զորավար եղբոր որդին, պատանի Ապիրատը, պաշարման ժամանակ նդել է Սղեմիայում և այնտեղից տղատվելով գնացել է Սովք և պատմել այն քաղաքի ավերումը, Ուրիշ փախստականներ էլ անշուշտ Հասած կլինեն Նույն գղեկը և պատմած Նույն աղետալի եղբայրության մասին: Ենթադրին ահա այդ զնայթի տպավորության տակ և Ապիրատի խնդրով Հայտնի է իր ժողովը:

Ենթադրին այդ երկը Հորինել է ըստ հրեայթին 1145 կամ 1146 թ., խաչակրաց ներկրող արշավանքից առաջ, երբ Ապիրատը, թեև արդեն զինավարժ ձիավոր, բայց զեռ սմանուկ տղայա է եղել: Այս Ապիրատին (որ հետագայում, 1195 թ. դարձել է կաթողիկոս՝ Գրիգոր Ապիրատ անունով) նա ուղղել է, ինչպես տեսանք, վերևում հիշված ոտանավոր նամակը և ընդարձակ թիան Հաւատոյա աշխատությունը: Արդ՝ իր պատանի տոհմիկի խնդրով և նրա ու նրա նման ստիմարներին և ոչ թե ազիտաններին Համար Հորինել է մեր քերթողն այդ ժողովը, որ աչպիսի ժագում ու նպատակ ունենալով Հանդերձ՝ նրա գրական վաստակների պսակն է, եռանդով ոգլած մի գեղեցիկ քերթված:

2. Դիմառնությունը.— Բանաստեղծն իր այս գրվածքն անվանում է Թարառնական: Ողեսիան անված է զիմանաբար իրրն որդեկորույս որբեայրի կին կամ քուկին, որ ռդրում է իր զլխին եկած մեծ աղետը: Նա սկզբում ողբակից է Հրավիրում Համայն քրիստոնյա աշխարհը.

Ողբացէ՛ք, եկեղեցի՛ք,
Հարսն՛ք վերին առադաստի,
Քո՛րք և եղբա՛րք իմ սիրելիք,
Որք լրեղհանուր կողմ աշխարհի,
Քաղա՛ք և գիւղք առհասարակ,
Ա՛ղգք և աղինք որ էք յերկրի,
Հաւատացեա՛լք Քրիստոսի,
Ի՛նչ երկրպագուք նորին խաչի...

Դիմում է քրիստոնեական նշանավոր կենտրոններին՝ Սրբառգնմ, Հռոմ, Կոստանդնուպոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, բանաստեղծորեն քնորոշելով նրանց կատարած դերերը: Այս խոսքն ուղղում է Մեծ Հայքին, Հայք ձկնկերպուն, առանձնապէս Վաղարշապատ և Անի քաղաքներին, և սաստիկ ողբալուց հետո պատմում է իր, Սղեմիայի, անցյալ փառավոր վիճակը և արարացիներից կրած թշվառությունը:

Այս նյութը մեր բանաստեղծը վիպերգել է մեծ հմտությամբ իրրն մի գիտակ անե, որ արգին իշխում է իր կատարելության Հասած արվեստին՝ հրեան բերելով բացաղրության թեթեւ ճոխություն և փայլուն գլուտներ: Որ նա խոսում է ոչ իր կողմից, այլ անձնավորված Սղեմիայի, այդ հենց մի անպիսի գլուտ է, որ ամբողջ երկին տալիս է մեծ կենդանություն: Նա հաղվաղեպ մոռանում է զիմառնությունը և զրում է իր կողմից, աչպես, օրինակ, էջ 54 և հտն. 14 տողերի մեջ. Թրայց զի հնար ոչ

լինիցի... Մի ըստ միտքէ դրնի բանի... Զի այս անկար շարագրողին, և այլն, Կան հատվածներ և տողներ ևս, որ լին հարմարվում մի ողորդող ևնոյ։ Բայց գիտառնութունը, այդ ճարտասանական ձևն, ընդհանրապես զնդեցկացրել է Ենոբհայտ Երկր։ Կարգայիս, մեծագույն մասամբ, մոռացվում է բարառնութունը, և մեզ թվում է, թե իրոք մի մանկակորույս, գորովագուր որրևայրի թշվառ կին է խոսողն ու կոծողը, Եղեմայի տիրուհին, որ լալով պատմում է իր գլխին եկածները։ Եվ այդ կենդանի մարդկային էակի դառն ցավն և աղկտուր արտահույժը համակում է մեզ ի գութ և ի խանդաղատանը։

Լացէ՛ք, լացէ՛ք բարձրը ձայնիւ,
 Զիս ողբացէ՛ք կողկողակիւ
 Եզեմիս՝ Ուրհայ քաղաքի
 Որդեկորոյս որր և այլի,
 Կանչեմ առ ձեզ ձայն կանացի,
 Կանանայիւր՝ ողորմելի,
 Քօղս ի գրչիոյ մերկանալով՝
 Զիմ պատանեմ ծածկելիս զարդի.
 Փնտռեմ քզմարս իմ քանկալի,
 Խըզեմ ըզհերս անխնայելի.
 Քարամբ ծնեմ կուրծքս սըրտի,
 Պաշխեմ գերեզս իմ լաղատելի
 Նրստիմ ի սուգ ի տան մըթին,
 Որպէս օրէն է սըգաւորի.
 Եւ միտխանակ որդան զգեստի՝
 Մե ըզգնեմ գոյն տըխրալի.
 Հեղում արտաքր անլափելի,
 Տորդ և առատ՝ նըման գետի.
 Քանկի տուակ եզլ լերկրի.
 Յիկզերաց նախատելի.
 Եւ անջաւորք հանապարհի
 Վա՛յ ի վերայ ասնն վայի։

(Էջ 27 և հետ.)

Ո. ԼԱԿԱՍԻ Կողմը։— Պաշարման, կոտորածի և կողոպուտի ենթարկվել են ոչ միայն Եղեմայիս, այլև հայկական քաղաքները—Անին, Կարսը և մյուսները, այն էլ մի քանի անգամ։ Եղեմայիս Անի քաղաքի ավերն ու կոտորածը պատմելուց հետո ասում է Նրան (Էջ 19)։

Վասն այստրիկ, ո՛վ եղեմի,
 Որ ես ներհուն այս ամենի,
 Ի քոյն յայնժամ խիստ աղետի
 Մանի՛ր և զիմս ողորմելի...

Քանիքի ներման յոյժ տեսանքի
Իմ ըս քոյին հասնալ լարի:

Դեպքներն և աղետալից վիճակը շատ կողմերով նույն և նման են եղել ասվելի բան մի դարից ի վեր 12-րդ դարի կեսից առաջ: Ուստի Շեքսպիրյան ի դեմս Նդեմիայի երգել է իսկապես նաև Հայաստանի ալզ իրական-նությունը: Նա իր եռանդն ստացել է թե՛ Նդեմիայի ավերման ցավից և թե՛, և ասվելի ևս, Հայաստանի:

Դժբախտաբար այդ ողորդական զգացումները հարատևել են և հետագա մի մեծ շարք դարերում, որովհետև հաճախակի ավերմունքն է եղել Հայաստանի նակատագիրը: Ուստի Շեքսպիրյան ստեղծագործության արժեքն ավելի ընդարձակվել է: Եվ նրա ժառանգական քանք, հեղինակի ժամանակներից կյանքի երգը, միաժամանակ և մեր ժողովրդի դարավոր վերքերի առաջին բանաստեղծական ողբն է, «հայրենասերի ողբը», առաջին Կերբ Հայաստանին: Ելուս կողմից՝ այս գեղեցիկ քերթվածի մեջ հանդես է բերված մի ուրիշ մեծ խնդիր ևս—քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների, քրիստոնեության ու մահմեդականության հակադրությունը: Դա միմյանց հետ նրանց վարած կռվի առաջին բանաստեղծական արտահայտությունն է: Այս է կազմում քերթվածի էությունը—քրիստոնեության ու մահմեդականության հակամարտություն և հայրենասիրական զգոցությունն ալազգիքից կրած ավերմունքի դիման վրա:

Արիստակես Լաստիվերտցին, Հայաստանի լավ որերի այդ ակնաստեսը, արդեն մորմոքվում էր Հայաստանի անկման, շեն երկրի ավերման համար և, ինչպես տեսել ենք, երբեմն իսկական ճեարական արձակ բանաստեղծություն էր հորինում: Մեր հին պատմագրությունների մեջ էլ պակաս չի եղել հայրենասիրական ողբադիվ զգացման զեղումը: Բայց այդ ամենն արձակ են և, բացի Լաստիվերտցու դրածից, ավելի հոեռորական, քան մաքուր ճեարական—բանաստեղծական: Նախորդ շրջանում մեր բանաստեղծության մեջ, ոչ էլ անգամ Գրիգոր Նարեկացու մոտ, շենք գտնում հայրենասիրական նվազը: Ներսես Շնորհալու այս մեծ թղթի 1070 երկատոգ տների մեջ առաջին անգամ լսում ենք մի լավատու և հանդավոր սրտահույզ ճեարերգություն: Բանաստեղծը մերթ սրտի կսկիծից քուտն ճիւղեր է արձակում թշնամիների դեմ, մերթ մեղմ և անուշ, բայց խորին տրտմությամբ լցված, հառաչում է Հայաստանի համար. որոնում է նրա անցած հին փառքը, որ այլևս չկա: Ամբողջի մեջ տեսնում ենք մի անկեղծ կարատալի վիշտ ու թախիծ վաղուց հեռացած ու կորած քաղաքական ազատության համար. տենչանք՝ ունենալու այն հին երկիրը, որ էր «նման փթթեալ ծաղկի», «պայծառացած ի գոյն վարդի», երանելի ու ցանկալի ամենքի համար: Մի երկիր, որ վայելում էր ուրախ կյանք, երե ու երաժշտություն, ամենալից սեղաններ, քարեկամական զվարճություններ: Ո՛ր է այս ամենը,—հարցնում է բանաստեղծը, դիմելով իրեն Հայաց աշխարհին:

Բայց հարցանեմ, ո՞վ քաղձալի,
Բանիս խընդրեմ պատասխանի.
Այժմ արդ ո՞ր է թագ քո զարդի,
Եւ կամ պըսակըն հրաշարի:

Ո՞ր զարդարանքըն գըշխոյի,
Հարսին որդոյ թագաւորի.
Ո՞ր պաճռանք հարսնարանի,
Կամ ռակեհու վերջաւորի:

Է՞ր չէ փնայն ի խորանի,
Կամ փնաւէրքն ի տանարի.
Ո՞ր են մանկունքն առագաստի,
Ձի ոչ հընչեն զերգըս Դաւթի.
Ձիա՛րդ լըռեալ ոչ հարկանեն
Ձփողըն հընչող տալստնացի.

Ո՞ր պարտաւի եզնամուլի.
Ձիա՛րդ ի թեզ ոչ գնենին.
Կամ մատրոտակքըն թաժակին,
Ձի ոչ քաշխեն զանոյշ գինին.
Ո՞ր քարեկամք զուարճակից...
Ո՞ր քաղցրածայն երաժըտի,
Կամ գեղգեղումն եղանակի...

Անդ ո՞ր գահոյք թագաւորի
Վաղարշապատ քոյ քաղաքի,
Կամ նախարարքըն աւրայի,
Արարատեանըդ գաւառի.

Ո՞ր են իշխանք որք առաջին,
Կամ զինակիւրք որք են վերջին.
Ո՞ր զօրականքն յասպարիզի,
Կամ լիզէոնքն ի ճակատի.

Ո՞ր մեծամեծքն ի բազմոցի,
Կամ ո՞ր սեղանն ամենայի.
Ո՞ր են ազատքն ի տաճարի,
Կամ տեառնորդիքն ի ժաղկոցի:

Ահա բարձաւ այս վաղագոյն,
Զայժ հեռացաւ որ յերկի.

Անուրջք՝ Եւ երազք էին յայտնի,
Անդ ծածկեցաւ ի զարթըմնի:

Այլ փոխանակ այստ ամենի՝
Եոյժ հակառակըն տեսանի.
Փանդի նըստիս որք և այլի.
Տըխուր դիմօք զերթ ի սըգի:

Ահա՛ Հայաստանի փառավոր անցյալն ու թշվառ ներկան Շնորհալու
օրոքս։ Նա էլ ճիշտ եռլն վիճակին է եղել և է՛ր, ինչպես Եղիսիան։ Պա-
կաս դժբախտ լի եղել և Անի մայրաքաղաքը, որ ձեռք ձեռք էր անցնում։
Գրիգոր Պահլավունին, Շնորհալու նղբալըր, մտադիր է եղել և նույնիսկ
րանակցութիւնն է սկսել Անիի իշխողների հետ՝ կաթողիկոսարանը Սոմք-
դղյակից փոխադրելու Հայաստան—Անի, բայց այս քաղաքի անկայուն
դրութիւնը հենց պատճառ էր դարձել թողնելու այդ միտքը։ Կարելի չէր
երգել Եղիսիայի վիճակը և անտես անել հայոց քաղաքներից այդ մեծի
բախտը, որ հետզհետե դեպի անկումն էր գնում գոնե ազգային հայաց-
քով։ Եվ՝ Շնորհալին Եղիսիային ողբակից է հրավիրում առանձնապե-
սաւ Անի քաղաքը։

Բայց և ըզքեզ յայս հրախրեմ,
Արեւելեան քաղաքդ Անի,
Կցո՞րդ լնր գու իմոյս ձայնի.
Եւ բախտփիլ տարակուսի
Քանզի երբեմն և գու էիր
Վալելլական հարան ի քողի.
Միեմաւորաց յոյժ ցանկալի,
Հեռաւորաց փափագելի։

Ապա սրտալի սիրուն նկարագրից հետո բանաստեղծը վերհանում է
եկեղեցու անցյալ վիճակն Անիում և շարունակում.

Սուրն անողորմ անօրինի,
Որ մեր արեանս է ի սովի,
Որ չէ յագնալ և ոչ յագի
Մինչև ի գալ կատարածի,
Նոյն եւ ճհաւ ուրեմն ի քեզ,
Որպէս չիս յայս ժամանակի,
Հընձեաց զորայն յանդաստանի,
Կանաչաւոր ի հասակի.
Զայգին խըլեաց արմատաքի,
Մերկեաց յոսոոցն ըզձիթանի.
Եհեզ զարիւն սըրբոց յերկրի,
Հոսեաց նրման չըբոց դետի.
Արար դիակն անթունելի,
Անթաղ մեռեալ գէշ գաղանի.
Քահանայիցըն քրիստոսի
Արեւմտ ներկեաց զեկեղեցի.
Սարկաւազաց քրիստոնէի
Մարմինքն անկեալ մէջ փողոցի,
Եւ այլ բազումք որ ոչ թուի,

Եւ է՛ տանջն անկարելի՛
Որ քեզ հասին յայնժմ վայրի,
Բոլոր ամեն մասունք շարճ⁵⁴,
Եւ արարին ըզքեզ գերի,
Քան ըզմադիւս ալլ աւելի:

Այդ ամեն լարիքները կրած լինելու համար Անին հրազիրովում է տրամակից լինելու:

Արդ ժողովնա զգրտաբերս ք,
Վասն իմ ի լա՛ց և ի սրգի:
Կուէա՛ ծայնիւ կանկանելի,
Շարժեա ի յողոյ զամէն հոգի.
Ջի զովաքումն ալրման սրբոյի
Ոչ է ալլ ինչ, քան այս լինի...:

Ներսէս Շնորհալու այս տխուր ողբերգով Վաղարշապատն ու Անի քաղաքը դառնում են Հայաստանի անցյալ մեծության սիմբոլներ, որ այն-համեման նրգովում են և ուրիշներին: Եւ ինչպէ՞ որովոր յԱյսր Հայաստանին կուլւած հայտնի նկարի զազատարը 19-րդ դարում անկած է թողրիս այս տողերից, որոնցով Շնորհալուն պատկերացրել է ավիր Հայաստանը, «նրստիս որբ և այլի, սըխուր գիժօք՝ զնրթ ի սըգի»:

4. Իրականութեամբ հրապուրիչ ցերեղը:— Շարունակենք տեսնել այս բանաստեղծութեան ուրիշ կողմերը: Նախ՝ թն ինչպես է նկարագրւած Եղեմիա քաղաքը՝ նրա բնական գեղեցկութիւնները, պարարտ հողը, չրհրն ու բուսականութիւնը, հարստութիւնները, շենքերն ու մաքրութիւնը և շէն ու բերկրալից կյանքը և շրջակա ավանները:

Եւ մայր էի քաղաքդութեան,
Անթիւ ծընալ դուստր և որդի,
Ջորս մայրաքար գիեցուցի,
Յըստեանց իմոց զկաթն արբուցի.
Գեղեցկատիպ յօրինեցի,
Վայելլապէս զարգարեցի:
Քանզի երկիր պարտորտ էի,
Աղբիւր կաթին յորդ քղիսէի.
Անտաքեր նըման վայրի,
Ի ալլ գերազոյս որպէս թուի.
Քուր ցնկաւոր լիւնէն քղիսէի,
Ջուարթ ծաղիկ քոյս յօրինէր.
Գետոց նըման վրտակ հոսէր,

⁵⁴ Տօգլով է քարիք. ուղղում եմ ըստ իմաստին՝ «շարճ»:

Ըզրութեամբ արեւմտեան արեւելեան
Մովսէսի միջին իմ ծածանէր,
Քաղցրիկ օդովըն ծիծաղէր.
Զաղտեղութիւն տըղմին մաքրէր,
Ըզհրապարակեալն զարգարէր.
Բազմագունի տունի յարինէր,
Որպէս ըզդրախորն որ յնոյն էր.
Սաղարթաբեր ծառով ծաղկէր,
Առատագուն պըտաւէտ էր.
Տերեւախիտ հեղիկ շարժէր,
Հոտ անմահից յիւրմէ բուրէր.
Նարդոս, քըրքում ինձ ընծիւղէր,
Վարդ, մանուշակ վերաբերէր:

Նախորդ շրջանում շինք գտնում այսպիսի բանաստեղծական նկարագիր, որի մեջ արտաքին բնութիւնը երգված լինելու քիչ պատկերներ կամ նմանութիւնների համար, կամ այլաբանորեն իբրև սիմբոլիկ պատկեր, այլ անկախ կերպով, բնութիւնն ինքն իբրև երգի նյութ: Կա Գրիգոր Նարեկացու պարզամտի տաղըք, որի մեջ արդեն զգացվում է վերածնության շունչը, թեպետ այդ էլ դարձյալ կրօնական նպատակ ու դիտում ունի: Արդարև մեր կլասիկ պատմագիրները, ավելի Մովսէս Խորենացին, պատմվածքի ընթացքում ունեն գործողութեան վայրերի մի քանի դեղնեցիկ տեղագրական կարճ նկարագիրներ, բայց ոչ ոտանավոր և այնպէս մաքուր բանաստեղծական, բազմակողմանի և հեղինակի զգացմունքով տողորված, ինչպէս է Շնորհալուց վերելում գրվածը: Սրանով մի նոր և ավելի գեղեցիկ ձևով վերածնվում է մեր կլասիկների երկերի այդ երկրորդական կողմը: Այստեղ, «Ողբի» մեջ Շնորհալին մեղմ և անուշ, բայց և գունդ ու նկարեն ուժով, երկնագրել է տեսարանը: Ընթերցողն զգում է բնութեան և քաղաքի նորը և անհամար գեղեցիկութիւնը, կարողանում է երևանայնել քաղաքն իր դիրքով ու բարեմասնութիւններով, իր շրջակայքով, և նրա փայլուն փարթամութիւնը: Եվ այդ կատարված է մերթ քմեր նմանութիւններով, մերթ մի երկու նկարչական բառով միայն, երբեմն անմոռանալի հասակ ու հոտուն տողերով:

Մովսէսի միջին իմ ծածանէր,
Քաղցրիկ օդովըն ծիծաղէր...
Տերեւախիտ հեղիկ շարժէր,
Հոտ անմահից յիւրմէ բուրէր...
Առատագուն ցօղն իջանէր,
Ոսկենրման ճաճանչ փայլէր...

Շնորհալու արվեստի հրապույրը մեծ է և այնու, որ նրա նկարագիրը տողորված է հեղինակի հուշով. նա բնութիւնը լի պատկերահանում

սասուն և անտարբեր ձեռով: Իսկույն զգացվում է, որ նա սիրում է ամեն ինչ, որ ինքը հեղորդում է: Բայց միաժամանակ այդ քուրդ պայծառ պնդ-
եությունն վրա թաշված է մի սև տխրություն, մի անհուն թախիծ, որ և հա-
մակում է մեզ: Այդ ամենն անցյալ է, և պատմվում է անցյալ ժամանա-
կում: Այս է բանաստեղծի շնորհակալությունը, որ թայնիկ անցյալ ժամա-
նակով միայն՝ զգալ է տալիս այն, որ հետո ավելի մանրամասն պիտի
պատմի, այն, որ այդ

Բարիքն ամեն ըստպահան,
Եւ քաղցրութիւնքն դասնացան:

3. Բարբարոսական ուղեմական գործողությունների ռեալիստական
պատկերը:—Վերառնալով բարբարոսությանը ի վերականգնման քաղաքական
իրականությունն այս դասն ենք ևս—Եղեմիայի կործանումը: Քաղաքի
պաշարում, մարտերով պաշտպանություն և առում ու կոտորած, այդ
շատ սովորական կրկնված երևույթ էր այն դարերի քաղաքական կյանքի
մեջ: Գրեթե բոլորովին նման ձեռով, ըստ Արիստակես Աստիվերոսի,
հղել է և Անի քաղաքի անկումը Եղեմիայի դեպքից ութսուն տարի առաջ.
1064 թ.: Ներսես Շնորհալին չթիւն անձամբ ներկա չի եղել այդպիսի
ուղեմական վայրագ գործողության, անշուշտ հաճախ լսել է ոչ միայն
Եղեմիայի, այլև ուրիշ բերդերի մասին: Նա իր Վիպասանությունն մեջ
պատմում է, որ իսմայելացիները (=արաբները) արենձիքից սփռվելով
հասնում, պաշարում են իր հոր Մովսես բերդը: Նրա հայրը և ամրակա-
ները քաղաքամբ պաշտպանվում են. թշնամիները չեն կարողանում
առնել բերդը, բայց հայրը աշտարակի վրա նետահար է լինում: Նա իր
մահից առաջ վրեժն առնում է նետն արձակողից և մեռնում է թաղիք
մահաւաժը⁵⁵: Այս դեպքը նրիտասարդ բանաստեղծի իր աստիճան
մեջ տրոհն բաղանկան մանրամասն պատմել է: Նույնն ավելի ևս ընդար-
ձակ և արդեն հասուն արվեստով եղբերորդում է նա Եղեմիայի համար:
Նա մեծ առաջանդով և բանաստեղծական կենդանի հյուսվածքով ու կար-
գամբայալ շարահարություններ արձանագրել է միջնադարյան բարբարոսա-
կան ուղեմական գործողությունների ընդարձակ ռեալիստական պատկե-
րը: Սկզբում դեռ համեմատաբար հանգիստ պատմում է Եղեմիայի իշ-
խանություն հետզհետե թուլացումը շրջակա մահմեդականներից—հազա-
րացիներից (=արաբներից): Երբ հասնում է թույն դեպքին, նա դառնա-
նում է աստիվերոսի առ մարտագնա գաղանները և թանձր գույներով
նկարում է թշնամիներն արաբները: Գործողությունն ամբողջ դասնում
է մի ուժեղ դինամիկա, շարունակ սփոթիվող մի նկար: Ե՛րբ այդի առաջ
շարժվում են մերթ դրո՛ք հարձակվողները, մերթ ներսի պաշտպանվող-
ները կամ թե միաժամանակ երկու կողմերն ևս, և մերթ հնչում է նրանց
քաջալերական խոսքն ու ճառը, կամ մենք տեսնում ենք միաժամանակ

⁵⁵ Քթանք չափաւ, էջ 553 և հետեւ:

Մինչև ի դրանքս՝ դրոճկինս
Իսկ մարդագէմ լաք գաղանին
Հասայրասուրեն քամէին,
Եւ որպէս գայլք ի հօտ գառանց՝
Ի մէջ նոցունց անկանէին...

Կատարվում է սոսկալի արյունահեղ կոտորած։ Ժողովուրդը գլխակո-
րույս գիծում է դեպի դալակը (Ներքի բերդը, ինչպէս կոչել են Անիում)。
դռները փակ են, իրար վրա են կուտակվում դռների մոտ։ Սրտաճմլիկ
տեսարան է բացվում, որ և շատ աղնիքաւը նկարագրում է բանաստեղծը։
Մարդկային թշվառութիւնը շատ մեծ է։ Կարելի չէ առանց հուզվելու
կարդալ նրա մեծ արվեստով հյուսված ալլա հատվածի տողերը (էջ 48 և
հետև.), որ իրականութիւն ռեալիստորեն գծված ճշգրիտ պատկերն է, մի
իրականութիւն, որ հաճախ է տեղի ունեցել։ Գրանք նկարագրի լինելով
հանդերձ՝ և ողբ են, և՛ ցավի ճիւղը։ Մի կողմում՝ անմեղ մարդիկ—կիւն,
ծնր, երեխա. հայր ու որդի, մայր ու դուստր. զարհուրագին տագանայի
ու խուճապի են մատնված, հեղձամղձուկ են լինում իրար վրա դիզված,
այնպէս որ՝

Որպէս ի գետ կամ ի սոլի,
Վերայ գրխոցն լողային։

Մյուս կողմում՝ մի վայրագ պատկեր. ալլադգիներին բազմութիւն-
ները հանգիստ սրտով և՛ կոտորում են, և՛ գեղեցիկներին ի գնդաբնակ
ընտրում, իսկ սպանվածներին ու զերիներին կողոպտում, մերկացնում։
Կապուտ-կողոպտու և՛ տներում, և՛ եկեղեցիներում։ Սեղանները կործա-
նում են, խալիքն ու պատկերները ռաւատակ աւախ։

Իսկ ի՞նչպէս է տուում իր հաղթանակը ինքը Զանգի ամիրան։ Նա
երգվում է լվնասել դղեկի մարդկանց. սրանք անձնատուր են լինում.
բայց նա երգմանազանցութեամբ կոտորում է նրանց, Ապա ինքն իր մեծա-
մեծներով և Մահմեդի պաշտոնյաներով, այսինքն հոգնորականերով
նստում է եկեղեցիներից մեկի սեղանում, հարձնք է նստնցնում նույն
տեղում և երգով գինարուց է անում։ Նույն անուակ շփախութիւնները
կատարում են և ուրիշ եկեղեցիներում։

Գործ գարշութեան անդ գործէին,
Ջուր տաւցնալ էր Մէհմէտին.
Ջուր և խոփել է աղտեղի,
Լըսնըն զարշ՝ սըրբասիրին։

Եկեղեցիներէն մի քանիսն էլ, տուում է, գործում են ազանքի և
էջերի տուն. մի քանիսի մեջ էլ քանկվում իրենք, քոր են վատթարք, քան
զանրանին, եզրակացնում է բանաստեղծը։ Գերիներ են միմյանց բաշ-
խում և գեղեցիկներին ընտրելով ուղարկում հորատան՝ մեծ աւաթանին,
ինչպէս և խալիքային,

Յ. Մահմեդականության և քրիստոնեության Կովի Ռիմնական
պատճառը, մեղքը: Նոր Ռայացքը: Նրկրայություն:—Արիստակես Լաստի-
վերտցին զարմանում էր, որ սելլուկյան թուրքերը, տարիներ շարունակ
Հայերի հետ իրեր զբաղի տպրելով, դարձյալ շարունակ շարունակ են
խորհում Հայերի համար: Շատ տարիներ հետո նորաճառակ հրիտասարդ
Ներսեսն իր առաջին աշխատությունն մեղ արայես է քննթաղրում այդ
ալլազգիներին.

Արեանարրուք զաղանացեալ,
Ջազիր գործովք անասնացեալ...
Սուրն անդղորմ անօրինի,
Որ մեր արեանս է ի սովի,
Որ շէ յաղեալ, և ո՛չ յաղի
Մինչև ի գալ կատարածի:

Մահմեդականների և քրիստոնյաների կռիվն, ուրեմն, անվերջ պի-
տի լինի: Դրա հիմնական պատճառը նրանց տարբեր կրոնական հա-
կացությունն մեղ է գտնում Շնորհալին: Այս բացատրությունը շատ քնա-
կան էր այն ժամանակում: Բայց ինչո՞ւ տուժողը պիտի քրիստոնյաները,
Հայերը լինեն: Այս հարցի նկատմամբ մեկնության Շնորհալին, ցավովք,
հին մեկնաբաններից դերը լի անցնում: Երբ նա Ջանգի ամիրայի համար
գրում է, թե սեորհէր շընջել զայս [—զայլ քրիստոնեայա] որ կտրինս,
այսպես անմիջապես ավելացնում է հետևյալը (էջ 69).

Ոչ գիտելով զայս լիմարին,
'ի ոչ ըզմրտաւ ածել կտրին,
Թէ ո՛չ ուժով իւրոյ քաղկին,
Կամ զօրութեամբ իւր պիղծ գընդին
Մատենալ ի սուր 'ւ ի գերութիւն
Եղև Ուռհայ յառնուլ նորին.
Այլ իմ մեղազըն քաղմութիւն,
Եւ յաճախել գործոց շարին.
Մատենաց ի ձեռս անօրինին...

Եթե այսքանը միայն լիներ և սրա ետևից անմիջապես շարունակ-
վեր 78-րդ էջի ութներորդ տողից՝ «Արդ մի՛ պարծիր, ո՞վ անըզաժա,
ապա այդ և՛ քնական, և՛ ղեղեցիկ կլիներ: Բնական կլիներ, որովհետև
թեպետ այն զարհուրում կար վերածնությունն ոգու, նոր մտավոր հասանքի
ազդեցությունը, բայց հինը դեռ թուրքովին չէր բացասվել և չէր դադա-
րել գոյություն ունենալուց, մասնավորապես կրոնական աշխարհայացքի այն-
պիսի կարևոր մասը, որպիսին էր՝ աղետները համարել աստվածային
պատիժ մեղքերի համար: Ուստի կարելի չէր, որ Շնորհալու նման մի
խիստ բարեպաշտ և մեկնաբան հայկոպոս թովանդակությամբ հարուստ
մի քերթված գրեր և այն զաղափարը մեղ լքերեր: Բայց որ նա հետո եր-

կար ու քարակ, ամբողջ 182 տողերի մեջ, Ս. Գրքից բազմաթիվ օրինակներ բերելով պաշտպանում է մեկնաբանների կարծիքը, այդ արդեն իր սառնութեամբ և երկայնութեամբ վնասում է երկի վայելչահոգւոյ զեղեկութեանը. անբնական է թվում այդ լսել մի որոշանոց կնոջից. այդպէս հորինում է ոչ թե բանաստեղծը, այլ մեկնաբանը:

Այդ կետը, սակայն, մի ուրիշ տեսակետով կարեւորութեան ունի. դրանով մենք տեսնում ենք հասարակութեան որոշ խաղիւրդ մեջ երեսն եկած նոր հայացքը: Մարադրութեան ընթացքից պարզ եկատում է, որ այդ մեծ հատվածը հետո է ավելացրած: Գրան առիթ տվողն եղել է մի քանի հետաքրքիր նոր մտածմունք, այն, որ երկբայութեան ոգին արդեն գործելիս է եղել: խոհուն մարդիկ սկսած են եղել կասկածել մեկնաբանների այգայիսի հին քաջատրութեան ճշմարիտ լինելու և աստուծոյ դատաստանի իրավացի լինելու մասին:

Այլ զի ոմանք ընգդէմ բերին.

Եւ աստանօր հակառակին.

Ասին՝ դիւրոյ իրաւացին.

Այս է վճիռ դատաստանին:

Մի՞թե բոլոր քրիստոնյաների մեջ նրանք են միայն մեղանշել, որ աստված նրանց է պատժել,—հարցնում էին մարդիկ:

Կամ թէ արդա՞ր արդեօք էին,

Որոց ի ձեռքս մատնէին,

Ջանգի և իւրցն ամենեքին,

Որ ըզնոսա շարլարեցին:

Մեկնաբան բանաստեղծը, հարկավ, պիտի հանգստացնեն արդարիք հարցերով դրադողներին, ասելով նրանց, թե աստված սաստիկ պատժում է այնպիսիներին, որոնց ամենից ամենի է սիրում, և պատժում է, ինչպէս և աշխարհում վարվում են ոչ թե լավ մարդու, այլ սանարժան վերջին մարդոյ և դահճի ձեռով: Ջանգին և իրայիններն, ուրեմն, մի պատժող գործիք են միայն, ինչպիսին են նաև կարկուտը, խիստ եղբայր, անլաւի անձրեք, կամ անխոնավ երաշտը, մարտին և դաշտին ասպականող զգվելի մուկը,—մի հայացք և օրինակներ, որ դառնում ենք նաև մեր կրտսիկ հեղինակների գրվածքների մեջ, ինչպես, օրինակ, նաև Մովսէս Խորենացու մեծ Ողբի մեջ: Այդպիսի սղահիճները վերջն ամենի խիստ պիտի պատժեն,—ասում է Շեքսպիր:

2. Ամենքմերի շարանը:—Արվեստի եկատմամբ որքան անհարմար է հիշված երկու մեկնաբանը մեզով, նախնան պատգամ և տեղին է շարունակութեան մեջ լսել որդեկորույս մոր քերանից թափվող սոսկալի սպառնալիքն և անձեքն, ուղղված Ջանգիին: Այդ մեծ հատվածի սկզբի մասի մեջ, որ հյուսված է մեկնաբանների վերնում քերված օրինակներով, զեռ համեմատաբար հանգիստ է խոսում վշտահար տիկինը:

Հասարակութիւնն ներկայացուցիչ թշնամ կնոջ հոգին հետզհետեւ ավելի է լրջում տետութիւնով տալիս ասան ասարկութեանը, և առանձնապէս դեպի Քանգին արիւնակներ, այնպէս որ նա նույնիսկ երբեք է կատարել վրեժխնդրութիւնը: Եվ այդ ժամանակ խոսքի գլուտներն ու մեկը մյուսից ավելի շարադնա պատկերները մեծ հորդութիւնով ու թափով հաջորդում են իրար, առաջ թե նրա բռնկած արտի լրութիւնը դուրս թափելու համար: Նրա արտը լի հովանում, մինչև որ Զանգին ձգում է Եր հորն անշէջ կիզողական, որ հավիտյան թայրէ իսպառ, բայց ոչ ծախէ: Այդ ժամանակ, ասում է նա,

Ուրախ լիցին արդարք ի տէր,
Մինչ հատուցման լինին դատեր.
Ձի ի յարեան մեղաւորին
Լուսացն քղծնու արպէս յաղթեր.
Եւ ասացէ մարդ՝ արդարեւ
Գուցէ աստուած իրաւարեր:

Այս վերջին տողերով խոսում է դարձյալ հեղինակը. նա ականարկում է վերնում հիշված երկրաբաններին, որոնք իրավացի չեն համարել աստուծու դատաստանի վճիռը:

Դժվար է այստեղ անհծքի մեծ հատվածից (էջ 78—91) ընտրութիւնով տողեր միջ բերել: Բուն և ուժեղ են դրանք գրեթե բոլորը, շատ ազդու են և նույնիսկ ճշշող են շարաքաղձ արտահայտութիւններ կուտակութիւնով:

... Աստուած իսպառ

Կործանեցէ՛ դեզ յախտեան,
Եւ խլիւսցէ՛ դարմատըս քո,
Յերկրէ հանցէ՛ կենդանական.
Չարք ամենայն որք անիծան
Ի սկըզբանէ մինչ ի վախճան...
Վերագացն՝ քոյդ զապաթան...
Արդ՝ եղիցի՝ ո դու հալածեալ,
Որպէս փռչի հողմով հոսեալ...
Եւ ճանապարհ քո խաւարեալ,
Յաշ և յահեակ գք և պաշարեալ...
Ի դուր խորին ապականեալ
Իջցն՝ ո դու անդրը կորուսեալ...
Սրբով արեւդ պականեալ,
Լիցի՝ տանեաց խոտ ցամաքեալ...
Ընդ քեզ և ազգըդ կորուսեալ
Հագարացոց լիցի՝ շրնչեալ.
Որդիք ձեր որք, կանայք գերեալ,

կիցի՛ն մուրողք և տատանեալ...
Ջինլո և բզզոյս ձեր վաստակեալ
Առցն՛ն օտարք յափշտակեալ...
Ձեր յիշատակ յերկրէ՛ր բարձեալ...
Ի դառնութիւն դարձցի՛ն տարեք,
Ջըրհեղեղին ելցե՛ն գետերը,
Մեաւ ամպ մըթին կարկըտարնը
Ջքեղ արասցե՛ անպտղաբեր:

Եվ այսպէս բազմաթիւ անեծքներ լինեց շարք: Այդ բոլորն ասվում է այն խոր համոզմունքով, թէ խոսքի ուժը մեծ է, և անեծքն անպայման կազդէ: Նախնական հավատքը, ըստ որի թողում էին թոթովելով և անխժում շարաբանելով, շատ մեծ է եղել մեր ժողովրդի մեջ, և հաճախ դուր արտահայտիչն է եղել մեր գրականությունը: Ըստ մեր հին Եփեսոսացի և Արտաշէսի անիծել է իր որդի Արտավազդին, նոր վեպով՝ Դավիթը՝ Մհերին, և այդ անեծքները, վեպերի առելով, կատարվել են: Այդպիսի մի անեծք է ասում և Դավթակ Բերթովն իր գրած դամբանականի մեջ: Դժբախտաբար այդ անհավատքը բավական դժը է կատարել նաև մեր ազգային պատմության նկատմամբ. իբր Մեծն Ներսէսի և ուրիշների անեծքները ժանրացել են մեր ժողովրդի գլխին: Ենթահային ևս հավատում է, թէ Նրանց անեծքների հետեւանքով աստված քարկացել է՝ քրառնայով՝ զՊատարութիւն և զԵղիսայութիւն [Հայոց] և մատնելով ի սուր և ի գերութիւն [զհայս], և ցրուելով ըստ հրէական սո՛հմին ի սարկութիւն և ի ժառայութիւն ամենայն ազգաց⁶⁶, Թեպետ մեր քանաստեղծը հավատում է անեծքի զորությանը, բայց չպիտի մոռանալ, որ այդ մեծ շարք անեծքները Նրա իրեն կողմից չեն ասված: Անշուշտ, նա համոզված էր, որ Ջանգին և մյուս շարագործներն առանց անեծքի էլ կպատժվեն: Նա կցանկար, որ բոլոր մահմեդականները քրիստոնյա դառնան, կամ քրիստոնյաները հաղթեն, և Նրանց ավարեն [=քչեն] մինչ լայն կոյս անքնակ: Բայց որ նա քաղիւսակերներին պատճառով ասեր Ջանգին իր կողմից նաև զԵղի քեզ և ազգըդ կորուսեալ, Հազարացոց լիցի զընդեալ: և ուրիշ մի երկու նման տողերը, այդ ընդունելի չէ: Եթե սուս որդի քերթվածի երգողը չէր կարող լինել հՀոմանս—մարդկային և լքարողել հՀոմանութունս—մարդայնութուն, լինել մարդասեր ու բարեգութ դպի ամեն ոք, և անիծել անմեղներին: Բայց ի՞նչ այդպիսի մի երկու տողը չեն հարմարվում մեր հեղինակի մեղմ ու քարի հոգով, դրանք շատ քնական են վշտահար, օրդկորույս Որբնայրու համար, որի բերանով խոսում է և տառապած հասարակությունը: Նա ոչ միայն Ջանգին պիտի անիծեր, այլև Նրա ազգ ու տակը և ասեր Նրան՝ քո արմատը (քորը)

66 «Թուղթ ընդհանրական», էլմիսթին, 1885, էջ 425 և հտե. «Ատենաբանութիւն» ասված ճառի մեջ:

կարվի: Շնորհալիկն այդ տողերն էլ ասել տալով Որեհայրուն՝ ճշգրիտ հետևող է նդել իրականությանը. այլապես թերի կլիներ իր ժողովուրդը կերպարը—Բայց մենք շարունակենք:

Բարկացալտ և ցատկամանիք աննծքներից հետո բանաստեղծը հորինում է մի զորեղ հակազդություն, որ իր կողմից բաց անելով անիժողի սրտի քնքուշ խորշերը՝ պարզաբանում է նրա աննծքների հիմքը: Որդն-կորույս մայրն ատանձին զորովով ու զուրդուրանքով է վերաբերվում դեպի սպանված սիրտունն զավակները. և Քերթողը դրա համար նա զտնում է պատշաճավոր ոճ, ժողկալից, կոկ ու շնորհալի տողեր:

Բայց դու՞ք որդիք իմ սիրելիք
Ձէք ինձ մեռել, այլ կենդանիք.
Քանզի յերկրի հաւատացեալք,
Եւ ի յերկինքս եղբայրիք:

Եվ նա, մայրը, խանդակաթ սիրով նկարագրում է իր զավակների համար մի բերկրալի տեսարան. նրանց հարությունն ու երանավետ կյանքն ժամահաճական դրախտում:

Յորժամ կենաց ցողոյն արբշիք,
Վաղվաղակի բուսանիշիք,
Որտա ընդստ վերաբերիք...
Որպէս Եղիկ մուլբուշիքիք,
Սաղարթագեղ պառնանիքիք.
Պառն կենաց մերձեալ հրպիք...
Աշխատեցեալք իրքն մըշակք,
Ի տապ սոթոյ աստ քըրտննցիք,
Յորժամ հընձէք զոր ցանեցիք՝
Յանմահական դրախտին հանգիք.
Ընդ զովարար տընկոյն նըստիք,
Յաղքերէն կենաց արբշիք...
Անճառ լուսով լուսաւորիք,
Եւ թագ ի գլուխ պըսակնաշիք...

Նահատակվածների այդ շանճառ լուսով լուսավորվելըս պիտի լինի մնացողներին մոխրարություն: Այդ էլ իրականության անզրադարձումն է— ամեն մահացածի համար մաղթել հպու լուսավորում, —մի շատ հին կրոնական հավատալիք և բարբի գիծ, որի գերապրուկը հասել է մինչև մեր օրերը:

8. Քաղաքական լավատեսություն և լավ օրերի գնդեցիկ նրազը: Աշխարհիկ կյանքի ծարավն ու հաղթանակը բանաստեղծության մեջ— Քրիստոնյաների համար մի լավագույն բախտ է պաշտած երկրում. շուտով ամեն ինչ կսիրվի, ասում է մեր Քերթողը ռդեհկորույս կենդանիքի:

Ահա սակաւ ինչ ժամանակ,
 Փոխէ զպղծորը զուրն ի յըստակ.
 Եւ տայ ըմպել զսոճաճաշակ
 Այնմ որ արքայք ինձ զըմբնդակ.
 Ձվերջին մըրուրն կայուտակ
 Արքայանէ Նըմին բաժակ.
 Իսկ ինձ պայծառ և քաղցրունակ,
 Զանժառարան ըմպել վըտակ,
 Ոչ թէ իմոյն միայն զիմակ,
 Զոր ինչ հատուց ինձ ձախողակ.
 Այլ և եօթնիցըս յափ կըրկնակ
 Թարօցի ի ծոց իւր հակառակ,
 Իսկ ըզկապեալսզ որ էք ի փակ,
 Արձակեցէ տէր ընդարձակ.
 Եւ զգերութիւնս իմ վտարակ
 Գարծուցանէ ալարէն ի յարկ.
 Մատենէ զգերիւս իմ ի յապտակ,
 Սուր՝ ի զքեզան ձեռն փոխեակ:

Ենորհալին յափազանց լավատես է ապազայի համար. նա անշուշտ
 լսած է եղել երկրորդ խալախութեան համար նոր պատրաստութիւնը
 Եվրոպայում: Նա մեծ հույս ունի, որ պիտի գտնի շուտով, հաղթեն մահ-
 մեղաներին: Այս հույսը նրան ոգևորութիւն է պատճառում. նա
 խնդութեամբ ցնծում է և գեղեցիկ տողերով ու մեծ աշխուժով նույնը հա-
 ղորդում է իր ժամանակակից ընթերցողներին.

Շարժէ կըրկին զազգըն ֆրանկ,
 Անհուն հեծեալ և հետեակ:
 Իբր ըզծովու ալեաց կուտակ՝
 Բորբոքելով գան խիստ և քարկ.
 Ափան ծովու աւղի դունակ,
 Կամ զերթ աստեղծ երկնից ի կարգ,
 Լրնուն զամէն երկրի յատակ,
 Որպէս ըզծին ասրաքատակ:
 Հընչին զերթ հոգմըն հիւսիսակ,
 Զամպըն վարեն ըզհակառակ,
 Մաքրեն զաշխարհը՝ բովանդակ,
 Ծանհաւատից առնեն զատարկ.
 Զմահմանական անգ հասարակ
 Լինուն յաւար և յատպատակ.
 Փենն զխորինըն Խորասան,

ԶԲարէլի²⁷ առնեն խիստ աներակ...
 ՉՄէթէ քակեն հիմն ի յատակ,
 Զքարոն զլորեն ըզսնորակ,
 Զըզեն Կարմիր ծովուն յատակ:
 Որպէս ատիւ ընդ նապաստակ՝
 Զհետ մըտանեն նոցա երազ,
 Կաժ զենթ ապիւծ զուէ ատակ,
 Փախին երէքն անհետակակ,
 Այսպէս շընչին նոքա իսպառ
 Ի սուր սուտեր՝ ի տէգ նիզակ.
 Եւ զայլն առնեն փախըստական,
 Վարեն մինչ յա՛յն կոյս տնորեակ,
 Առնուն զծառայս և զազախենայս,
 Զկանայս նոցա և ըզզաւակ.
 Տիրեն ամէն երկրի ծագոյց,
 Եւ յընդհանուր կողմն աշխարհաց.
 Քրիստոնէից հանուր ազգաց
 Փըրկիչ լինին յանօրինաց:

Ահա թէ ինչպիսի է մեր բանաստեղծն անդրադարձրել իւայնկրայս.²⁸
 արշավանքների իրականութիւնը, կարծելով թէ նրանք պալիս են իրոք
 արեւելյան քրիստոնէականներին զգնելու և նրանց փրկելու մահմեդականների
 ձեռքից: Բայց նրա լայնատեսութիւնն այդքանով չի սահմանափակվում:
 Հովհաննէս Սարկավաֆն իր գրած աղոթքով, ինչպես վերևում տեսանք,
 խնդրում է աստծուն, որ արտասովորոշ տրամաբանութեամբ զտարված ու ցըր-
 ված ժողովուրդը ժողովվի ուրախութեամբ և փրկվի, նույնը Շնորհալին
 երևակայում է արդեն շատ շուտով կատարելի, նույնիսկ ավելի շուտ քան
 մի տարի (քչի լէ ամով այս լինելոցս), և այդ մասին բանաստեղծու-
 թեամբ ավետում է.

Գան ժողովին յամէն կողմանց,
 Ուր հալածեալ են և ցրուած...
 Յայնժամ որդիքդ իմ հեռացած,
 Որ ալժմ յինչն էք բաժանած,
 Գայք ի վերայ քարձեալ կառաց,
 Պալարակապ երկվարաց.
 Որք ցրուեցայք յամէն կողմանց
 Զորեքծաւեան տիեզերաց,
 Ի գաւառաց հեթանոսաց,
 Եւ յաշխարհաց Պարսից, Թուրքաց:

²⁷ Քաղիչ: Քաղկեդնէն կոչում Եսէօքի Բաղդադ քաղաքը:

Պիտի գան ժողովման աշխարհի բոլոր կողմերից, և ի՞նչ ուրախություն է որդեկորույս մօր համար. բայց այդքանը միայն չէ.

Լինի աշխարհ քրիստոնէից
Անշափ 'ւ անքաւ բարեօք լըցած:
Լինի առատ սլոտուղ քաղմաց,
Մերմեց 'ւ ամէն պարզութեամբ,
Մարդիկ ընծան զուարճացած,
Յուսել յլմայելքն պարարած.
Որք վա՛յ ասեն, վա՛յ մեռելոց,
Նշուկ կարդան գերեզմանաց,
Քէ է՞ր յհասիք յօրքս կենաց,
Ցանգիւտ քարիւ հասարակաց:

Ահա թե ի՞նչ է տենչով երազում մեր բանաստեղծը: Հարկավ, նա չի մոռանում եկեղեցու վերատնի պայծառացումը, բայց էականն այդ չէ, նա մեծ կրոնասէր լինելով հանդերձ՝ չի քարոզում «Մի՛ կայ հակառակ լարին» սկզբունքը. այլ, ընդհակառակն, սիրում է քաջութիւնը, քաջամարտիկ կեցիկն այլապէս թշնամիներ զեմ՝ երեսցից պաշտպանվելու համար: Նա համոզված է, թե մահմեդականութիւնն և քրիստոնեութիւնն կռվի մեջ պարտութիւնը մահմեդականներին պիտի լինի, Եվ ինչ որ կարնոր է՝ քրիստոնեաները պիտի հաղթեն ոչ թե հին կրոնա-եզնավորական ոգին պարգացնելու, աշխարհն ունայն համարձելու և մերժելու համար. այլ արտի-զովորթ կյանք վարելու, լավ հոգեվիշու, ասել-խմելու և եուլիսկ պարարձելու: Ենորհալու ստեղծագործութիւնն, ուրեմն, չի է կշմարի ծարավով. իրեն արտահայտութիւնն է՝ իրեն լեզուակի, և՛ իր ժամանակի հասարակութիւնն քաղձանքի: Այսպիսով վերջ է տրվում նա-րեկյան խիստ կրոնա-եզնավորական հայացքին մեր բանաստեղծութիւնն մեջ, միաժամանակ և սկիզբն է դրվում մի քաղաքական գեղեցիկ երա-զը—արեւելյան քրիստոնեաների լավ օրեր և վերածաղկումն եվրոպացի-ներին օգնութիւնս: Բայց Ենորհալին դեռ լուսի թուն հայրենիքի, մայր Հայաստանի անկախութիւն, Հայոց Թագավորութիւնը սեփական երկրում վերականգնելու երազը: Նա դարձել է երգիչ իր շրջանի արեւմտյան հա-յութիւնն սպասելիքներին և ընդհանրապէս այն ժամանակվա դրութիւն, որի մեջ ապրել է ինքը: Միաժամանակ և նա դեռ 12-րդ դարում բանաստեղծել է խաչակրութիւնն մատին, այն՝ որ մեր շեղանդիտ ոգրիւ հօրի-նումից ըրտ հարյուր տարի հետո ծնված խաչակցի քանաստեղծ Տօրկ-վատո Տաստեն պիտի երգեր իր «Ազատված Երուսաղէմ» հուլանավոր վիպական քերթվածի մեջ: Արդարն մեր բանաստեղծի երկի նյութը խա-չակրութիւնն չորանի մի միջադեպ է միայն, քրիստոնեաների համար մի դժբախտ եղելութիւն, բայց նա ոչ պակաս ուժով նկարագրել է ուղղա-կան իրականութիւնն այդ սխալվոր կտորն ևս:

Եվ այսպէս՝ Ներսէս Ենորհալու ձեռով հատորն կիրառվել է նրա

ազմաց ժամանակակից Հովհաննես Սարկավազ Վարդապետի տնտե-
թյունը, թե քանաստեղծությունը հետևում է բնությանը, որ է՝ իրական-
ությունը, Դժվար է կարծել, թե նա ժանոթ լինելի Սարկավազի աշխա-
տություններին, զի այն շրջանում արևելյան և արևմտյան վարդապետ-
ները, թեև բազմաթիվապես բաժանված, բայց միմյանցից կտրված
չէին։ Արևելքից միշտ երթևեկել են Հայոց կաթողիկոսարանը, որի նշա-
նավոր եպիսկոպոսն էր Ներսեսը։ Բայց եթե օտարալից էլ լինեիր Սար-
կավազի տնտեսությանը, կարող էր նրանից անկախ ևս արտահայտիչ
լինել նույն հայացքին. ժամանակի ոգու պահանջն էր այն։ Նա անդրա-
դարձրել է աշխարհիկ իրականությունը, հարկավ, ոչ բոլոր կողմերով,
այլ այն միայն, ինչ որ չէր կարող պարսավելի Ժանդուտն բերաններինը,
թունի որ այն դարում շատ բան դեռ անպատշաճ էր համարվում մի
հոգևորականի համար։ Բայց ինչ որ նա երգել է վեհ ներշնչումով ու ոգե-
վորությամբ, դա մարդու իրականությունն է առանց գերբնական ուժերի
և էականների մասնակցության, որին հավատում էին այն դարի մարդիկ,
որով և լի է խաչակրության քերթող խաչագրի բանաստեղծի նշանավոր
երկը։ Որ մեր բանաստեղծը հետևում է այդպիսի վիզական հրաշալիքնե-
րից, դրա մեջ հենց պետք է տեսնել նոր մտավոր հոսանքի հաղթանակը։
Մեր բանաստեղծությունը 12-րդ դարի կեսին արդեն երկնքից իջել էր
երկիր և դարձել կյանքի և բնության գեղեցիկ արտացոլումը ոչ միայն
իր ընդհանուր էությունը, այլև ըզրանգակության մասնամասնորով,
ինչպես և բնական ու պարզ ձևով, շնորհալի Գերթողի փափուկ, տրամա-
կան կամ լուրջ հույզով և անուշ, արտաշարժ շնչառությամբ, որոնց ստեղծողը
բնավ չէր դիմում արվեստական լի պերնություն ու փայլի, ավելորդ զար-
դարանքների։ Ամեն ինչ թեթև ու ճաշակավոր, անբռնազոր ու կենդանի։

ԱՐՁԱՆ ԳՐԱԾՆԵՐԸ

1. Առեմաքանություն։ — Ենորհային իր գրական երկերը հորինել է
ուսանալորով. արձակ լեզվով գրել է միայն պաշտոնի վերաբերյալ
գործերը։ Բայց վերջիններս էլ իրենց տեսակի մեջ որոշ շարժում գրական,
ավելի եւ պատմական արժեք ունեն։ Գրանցից ժամանակավոր առաջինն է
«Առեմաքանությունը», որ նա ասել է իր կաթողիկոս ձեռնագրվելու առ-
թիվ բազմության առաջ⁵⁰, Անում է իր նախորդի, իր կաթողիկոս հղբոր,
Գրեգոր Պահլավունու գովքը՝ թվելով նրա արժեքները, նվաստացնե-
լով և ամբաստանելով իրեն։ Գիտակցելով իր նոր վեհ պաշտոնի ծանր
պարտականությունները՝ շարունակ համեստությամբ շնչում է իր
անարժանությունը։ Նկատի ունի նաև ժամանակի ծանր դրությունը։
«Ջարհուրիմ երկիդի նայեցեալ յիմ տկարութիւն և ի մեծի այս աս-
տիճանի բարձրութիւն և ծանրութիւն, մանաւանդ ի շար և յանմասն բա-

⁵⁰ Արեւելե Ներսէսի, թուղթ ընդհանրական, էջ 411—426.

բնաց ժամանակիւ, որք ոչ միայն յարտաքնոցն որք հակառակ են հասարակութեան և անհոգիութեան, այլ և անուամբ քրիստոնէից. նաև յորոց կցորդ են կարգի մերոյ և ձևոյ, որք յազազս փոփոխուի անհոգի հակառակ զտեսնաց աստուծոյ և աստուածայնոյ ամբողջութեան ի սկզբանէ հայրապետութեան տնայն մերոյ մինչև ցայսմ՝ որպէս ժանօթ է ամենեցուն, և զաղատեալս ի Քրիստոսէ զենկզեցի սուրբ ընդ հարկաւ արարին անօրինաց՝ կամաւ և ոչ ի հարկէ (էջ 421)։ Դժվարութիւններէն մեծն այն է, որ հայ ժողովուրդը, ասում է նա, երբ ի միտմէ աշխարհի բնական՝ որպէս այլոց ազգաց, զի դիւրին էր շրջիւ առ ետս ասանքորդացն և-սերմանել զբանն, այլ ըստ մեզաց մեքոց ցրտեալ են ազգ մեր և ժողովուրդը ընդ յոլորտս տիեզերաց ի մէջ օտարաստեալ ազանց։ Նաև ամբողջ սուրբ զրդուեալ է ի հասարակութենէ ի զանազան և յանպատշաճ վայրս տարրերի ընդ հարկաւ և երկիւղիւ այլասեռից և անօգնական և աննաւէր ի մերասերաց, որում ոչ է կար համարման շրջիւ և ուսուցանել, այլ թաղարար լինել որպէս զվնասապարսառ (էջ 422)։ Վերջապահի մեջ նա մի ցանկութիւն ունի, որ աստված հաճի սքսկնել զմեզ... և դարձուցանել զամենեւեմս յաշխարհն նայրեհի... յարուցանել թողաւոր տղաբաշ։ Լէհա նրա աղոթքն ու փափագը։

Ով սիրում է ճշմարտ ֆրաւններ, այնպիսուն հաճելի լի լինի այս ատենարանութիւնը, որ վնաս է իր պարզութեամբ, ազգաց և ոչ թե տառքին ձևով, այլ ջերմ ներքինով, որ բխում է ջերմ սրտից։ Մեկ-մեկ բանեցնում է երկար ասացվածքներ, բայց ընդհանրապէս շատ հասարակ, իսկապէս մեկին ռոճով մի հորինվածք է դա, առանց որևէ ճարտասանական ճոհում զարգարաններ, կիրառում է հարցումներ և շրջումներ միայն և օակավաթիվ պատկերավոր ձևեր։ Բայց զրանց փոխանակ՝ նրա ճառն ուժեղ է սրամտաբանութեամբ, մտածութեան կապակցված ու կարգավորյալ ընթացքով, որ այնպիսի խոսքերի համար անհրաժեշտ պայման է։

2. ԹԵՐԱՊԵՎԵՆԴԻԱՆԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ։— Գրա-պատմական և բանաստեղծի կենսագրութեան կողմից ավելի արժեք ունի Ենորհայրու այս թուղթը, որ ուղղված է բոլոր հայերին⁵⁰։ Սկզբում հայտնում է իր կաթողիկոս ընտրվելն և կաթողիկոս եղորդ մահը, սինքն... հրատ անվնաս յանջութի և յառանց արեաց նաւահանութեան, և զմեզ եթող ի տաժանելի և յաղացաւոր կենան ի մէջ օձից և կարճաց և զանազան խաժանող զաղանաց, երեւելանց և աներկութից, և ոչ այս միայն, այլ ժանրութեան բռնանց ի ներքոյ՝ հոգևորաց և մարմնաւորաց։

⁵⁰ Անդ. էջ 1—113. Թուղթ ընդհանրական ներսխի կաթողիկոսի Հայոց առ համարին հայաստան ազգեան։ Ընդհանուր հասարակաց զայնկանաց յոճից. որք յարենքս ի անհրաժեշտ աշխարհոց Հայաստաննայց բնակալս, և որք յարմարեան կողմանաց օտեւայց նօթհհոթեանս, և որք ի միջերկնայն ի մէջ տալիսից, ազանց տարաբերեալս, և որք յիջապանչար յոգնքս աշխարհաց ըստ մեզոց մերեւոյց ի թաղացս և ի դժուկս, ի փոքր և յաղագրեալս։

«Օձ, կարիճ ու գաղանձ կուլում է նա Հոռմկլան շրջապատող ալլազ-
գի բռնակալներին: Ուրիշ տեղ էլ⁶⁰ նույնպես գրում է. թե կաթողիկոսը
մեռնելով իրեն թողնել է բի ծովու աշխարհի և շուրջ եղելոց օձից և կար-
ճաց և վերջում հիշում է իր ննդությունը, ասելով, թե եկողները կպատ-
մեն ձեզ թզմարմնաւոր կրից մեր տաժանում»՝ զոր ունիմք ի շուրջ եղե-
լոցս զմեօց: Հայտնելով, թե ի՞նչ է իր պարտականութիւնը՝ խորապե-
ցաւում է, որ շըրջել աս ամենեանեան՝ ընդ ամենայն կողմանե աշխարհի,
և քարոզել... անկարելի է յաղագս ժամանակիս լարութեան և բազմիշ-
խանութեան: Եւ քաղաք թագաւորական և բազմաթաղով ո՛չ գոյ ազգի
մերում, որպէս զի անդանօր նստելով յԱթոռ հայրապետութեան և վար-
դապետութեան՝ ուսուցանելաք ժողովրդեան մերոյ: Եւ առ դժվար է եղել
կաթողիկոսարանի, ինչպե՛ս մեր բանաստեղծի Նյութական կացութիւնը
հերութիւն օրերում: «Այլ եմք իբրև զայժեանմի յուսորդաց և ի շանը
փախուցեալք ի քարանձաւիս յայս քնակելով,—գրում է նա,—յորում ո՛չ
և մարմնական հարկաւոր պիտոյիք շատացեալք ի դիւղից կամ յաղա-
րական, չորոց ունիմք և ո՛չ մի: Նաև ո՛չ անգաստան հողոյ, զի վաստա-
կօք և աշխատութեամբ զպէտս մեր ընուաք, և ո՛չ օգնութիւն ուստեք.
որպէս արժան էր, ի թագաւորաց և լիշխանաց: Գկարողանալով անձամբ
«խրատել և ուսուցանել», ասում է նա, «մեք իբրև ի կամաւոր բանտէ և
կապանաց՝ յայսմ տօթադին քարանձաւի արեւելեաց»՝ զորով ձեռնի մերոյ
խօսիմք՝ որպէս բերանով՝ ընդ ամենեպիւն:

Նրա այս գրութիւնը շատ հարուստ ու բազմաբովանդակ է: Խրատե-
ների մի մասն, իհարկե՛ս, սովորական ընդհանուր տեղիք են, բայց շատը
շոշափնելով ժամանակակից իրական կյանքի այլ և այլ կողմերը՝ տալիս
են մեզ բարձրի ընդարձակ պատկեր. Ակվրում դրում է դավանաբանա-
կան խնդիրների և կրոնական դիտելիքների մասին, որոնք, որովհետև
Ենթահայու գրից են ելել՝ ասպագա դարերի համար ևս արժեքավոր են
եղել: Ապա խոսքն ուղղում է ժողովրդի զանազան դասերին՝ կրոնավոր,
վանահայր, առաջնորդ, քահանա, իշխան, զինվոր, քաղաքացի, երկրա-
գործ և ամենից վերջը՝ կանայք: Այս ամեն ինը կարգի մարդկանց տա-
լիս է իրենց վիճակին համապատասխան խրատներ: Կանանց, օրինակ,
պատվիրում է «պարկնշտութեամբ և բարեձնութեամբ լինել յամենայնի...
և առաւել քան ոսկւով և արծաթով՝ ամօթխածութեամբ և պատկառանք
զարդարել զանձինս»: Անմիտ երիտասարդներին գալթակզեցնելու հա-
մար ներկերով շայլազունի իրենց երեսի գույնը. կալատութիւնամբ լպտ-
րապել: Հետեւող լլինել կախարդութիւն և դեղատոմսութիւն աղանդներին:
Այս մասին հիշում է նա իր նամակներից մեկի⁶¹ մեջ ևս. «Կանանցն
պատուէր տուք,—գրում է նա Թորոս քորեպիսկոպոսին,— ի կախարդու-

⁶⁰ Անգ. էջ 148—149. «Պատմականի ուսարին թղթայն թագաւորին Հոռմաց Մա-
նուկին»:

⁶¹ Անգ. էջ 115. «Թուղթ ի Սամառիա քաղաք յաղագս արեւորդեան Գորհին, էջ 209
և հետեւ»:

թննէ և ի գեղատուութենէ և յամենայն դիւական աղանդատութենէ ի բաց կալաւ: Արժանի չհամարել քրիստոնեական թաղման տնայնացի և որ դպիւղծ և զազանդի իրս ի կերակուրս և յրմպելիս խառնեալ՝ ապա ուտել քրիստոնէի վնաս դիւական սիրոյն [=սիրահարեցնելու համար]... զգուշացուցէ՞ք զնոսա յամենայն ի յայսպիսի բժժազորութենէն:

Երկրագործներին ու բոլոր ժողովրդականներին խրատում է՝ չապականվել՝ բազմաթիւ պոռնկութեամբ և շնութեամբ, չհարբել գինով, ժյուրում զգիտութիւն և յիմարութիւն է, որ է մայր պոռնկութեան և անիրատութեան և վիճման և ազտեղի բանից անարգանաց, յորմէ և սպանութիւնք լինին: «Երաճեալ,—ասում է,—մի՛ զլնդուն ձեր առնէջ գործի սատանայի ի ձեռն լար և դռն յիշոցաց, մանաւանդ որ զհաւատ և զհոգիս անարգեն, և զմկրտութիւն աւաղանին և զմկրտել քահանայն և զգնահ և գրեման: Ապա զարձայ՝ պատվիրում է կրթել մանուկներին և բաւում ապա նրանց. «Սատեցէ՞ք լսովորել ի խոսս աղտոգիւս և ի յիշոցատութիւնս: Այսպէս խրատում է ըստ պատշաճին նաև քաղաքացիներին, գինվորներին, իշխաններին:

Հոգեւորականների բարոյական և ուսումնական վիճակն անպայման աւելի ծանոթ է եղել Շնորհալուին, և նա երկար ուսուցանում ու խրատում է նրանց. իսկ մենք նրա «Ընդանրականով» քաջական ծանոթանում ենք նրանց, ըստ ձկնղնջական հայացքի, ընկած բարքերին: Տնօնենք այդ մի փոքր մանրասուն, քանի որ նրանց այդ դրութիւնը կարնոր է գրականութիւն պատմութիւն համար: Կրօնավորների կյանքի մէջ արդեն մեծ փոփոխութիւն էր կատարվել. այլևս չկար Ստեփանոս Տառնեցու նկարագրած անընչասեր և անստացված աշխարհաբացութիւնը: Ընդհանրապէս, նրանց առհասարակ արդեն բռնել էին, այսպէս ասած, աշխարհականացման և աշխարհասիրութեան ուղին: Վանք, անապատ քաղվելով՝ հանդերձ՝ կրօնավորները չէին կտրում երկրավոր ցանկութիւններից և միշտ ևս էին նայում դեպի աշխարհ: Ընտաքքեր է այն, որ կրօնավորութիւնն արդեն դարձած է եղել հարստացման միջոց: Երազումք են ի ժամանակիս կրօնաւորաց, որ յաշխարհի առանց ժառանգութեան էին, և հարկատուք իշխանաց, և աղքատք ի դոյից, և կարօտք հարկաւորացն. և յորժամ զան կրօնաւորութեան ընկալան՝ տեսաք եղին ի վանորայս բազում ժառանգութեան, և փարթամացան ստացուածովք. և ու ժոյշի հարկաւոր դիտարկել եղին անկարօտ, այլևս անարգք լսող, և յաշխարհի հարկք և երկոյս տաժանեայք, և ասա անհոգութեամբ և հեշտութեամբ ստոտարացեալս:

Այսպէս հարստանում էին նրանք, որովհետև վանքերում ապրելով փոխանակ հասարակաց աշխատանքին ժառանգելով՝ իրենք առանձին սեփական տնտեսութիւններն ունեին և զրանցով էին պարապում՝ «ի յիւրեանց առանձնական գործս արի և արթուն լինելով, և ի հասարակացն՝ հեղգ և պղբոգ: «ձգուցացուցանեմք,—գրում է Շնորհալին,— զհիմարտագութիւնք երամ»՝ յագագա նոր եղելով անարթութեան ի վնաս:

բայս ի մերում ժամանակի, այգեգործ իւրացանչիւր ոք լինելով ի կրօնաւորաց, որպէս ի գեղոց, որ անվայելուչ է կրօնաւորական կարգիս: Ընդ կրօնավորներն,—ասում է նա,—իւրար նախանձում են, թէ՛ ո՞վ քան զընկերս լընդարձակագոյն տեղւոյ ե ի պարարտ նրկիք անկիցէ ալգի, և թէ՛ զիւրոգ անուղղանիցէ իմաստութեամբ զնորագոյն տունկան: Եւ փոխանակ զարուեստս ատաքինութեան ուսանելոյ ի միմեանց՝ յայգեգործութեան հնարս վարժին անհմտաց ի հմտագունիցն: Արժան է, ասեն, այսպիսի օրինակաւ վաստակել եղամբք, և բրել ձեռամբ՝ փայտատեց և բահիք, և հակառակ տնկոցն զարմատս և զքոյսս արմատաքի խնդ: ... Այլ և հատանելոյն օրինակ զանազանեալ է՝ իրաքանչիւր տնկոյն սնդից ատ իմաստունոց յալնոսով, զի զոմանս հուպ յարմատսն, և զայսն ի րացեալ հատանեն. յոմանս սակաւ գուռսն, և ի կէսս յուրվագոյնս թողուն, և այս ամենայն՝ որպէս զի յաճախագոյնս պտղաբերեացն, և յուրվս զգինւոյն լափոյ աճեցուցեն զթիւս: Թողից ասել զպատուաստելոյն հնարս, մի քան զմի ատանելեալ ի հանճար, և զգործելոյն եռանդն ընդմութեան, զի ոչ զտիւն ոմանք բաւական համարին ժամանակ գործելոյ, այլ և զգիշերն ևս խառնեն ընդ տունջեանն: Այսպես մի ամբողջ արվեստ և ուսում այգեգործութեան, որով պարապել են կրօնավորները: Նստս բնական է, որ տղապիսինքի ուշ ու միտքն իրենց սեփական գործին է եղել: Երբ այլ և այլ տեղերից իրար հանդիպում են այգեսեր կրօնավորները,—ասում է նա,—երանք իւրար ողջունելուց հետո՝ ոչ թե կրօնավորական գործի մասին են հարցնում միմյանց, «այլ թէ յայսմ ամի, ո՞վ նորայր, զիւրոգ է պտղաբերութիւն քոյին տնկոցն. արաւն՝ է՝ թէ նուազ, եւ նա թախծեալ արտիւ պատասխանէ՝ զինչ ասացից, ասէ, զազէտոն որ պատահեցան. զի ոմանք ի ճճեաց վնասեցան, և յոմանց ծաղիկքն թոթափեցան, և այլքն արեակէղ եղեալ ողկուղաց շորացան, և կէտք՝ նեխութեամբ ապականեցան, և թէ զի՞նչ արարից՝ անգիտանամ զիւր վատեցիս եղելս:—Եւ ընկեր թելագիր եղեալ նմին՝ խրատ տալ, զոմանս պատուաստել ի տնկոցն՝ որք պտղակորոյսք լինին, և զայլսն՝ զանազան փորձեալ հնարիք բռնկել ի պատահելոց կրիցն (էջ 28 և հետ.):»

Այս քոլոր աշխատանքն անում էին կրօնավորները, որպէնզի շատ զինի ստանան և թաղահովութեամբ և որկորատութեամբ ապրեն, և ոչ թե, ըստ կանոնի, քաղականանան ծմբարանական կնրակրով և հանդերձով: Երանք նույնիսկ արբեցութիւն էին անում: Գինին վաճառելով էլ էին պարտապում և արծաթ ամբարում, կամ թե կրօնավորին անվայել լուոյժ և մեղկ կյանքս էին վարում: Այդպիսիները թողնելով ընկերակից կրօնավորներին կննակցութիւնը՝ առանձին էին բնակվում, եւ յազազս ճգնողական վարուց՝ որպէս միայնակեացք, այլ վասն ազգութեան ախտի, զի զանձին իւրոյ աշխատութիւն ոչ հասարակաց հկեղեցոյն, այլ իւր միայնոյ ամբարիցէ... Զի առ բազումս,—ավելացնում է Շնորհալիս,—քան զերկիւղն աստուծոյ ատանել զօրէ ընկերակցացն ամբար ճրկիւղ, յնտս դարձուցանելով զաժարութիւն մտացն ի շար ցանկութեանց մեղացն

կատարման է: Դրանք, այդ թաքուն մեղք գործողները, մեռ համեմատաբար լավերն են հղել: Ե՛նե՛ր ո՛մանք դարձեալ յաշխարհասէր և ի մեղկ կրօնաւորաց,—շարունակում է Շնորհալին,—զի... անձամբ իսկ ընդ աշխարհականն բնակնն ի գիւղս և ի քաղաքս և ի բանից բերանոյ զարշուփինս և ի գործս վստթարութեան, և յորովայնամուտութիւնս անպատկառս և յարեցութիւնս անառակս, և յամենայն անկարգութեանց բերմունս՝ առանկշտն քան զնոսան (էջ 26): Եթի՛վականն երգեմն էլ պական լնն հղել այդպիսի կրօնավորների բերանից:

Եւն քանզի ի նիւթականաց ցանկութիւն զբազումս, ի կրօնաւորաց ժամանակիս տեսանեմք ըմբռնեալս, որք զթիթանայն յայսպիսի ծանրութեան հոգոց՝ դժուարինս վարկանիւն, ուստի, ասում է Շնորհալին, Ե՛ն մեք ոչ զնեմք օրէնս՝ աշապիսի կրօնաւորաց ամեննին ի քաց կալ ի տնկագործութենէ և յամենայն զոյնց ստանալոյս: Նա լամ գիտն, որ այնպիսիներն իրեն լնն լսնու. ուստի պատվիրում է, որ նրանք զօնն իրենց հնկամուտներէց մաս հանեն աղքատների ու կարօտների համար, այն էլ իրենց ձեռով և ոչ թն մահից հետո ուրիշների միջոցով:

Կրօնավորների ուրիշ պակասութիւններ էլ թվում է կաթողիկոսը: Ինչպե՛ս, օրինակ, շնչին պատճառով նրանք թողնում են իրենց եղբայրակիցներին ու շրջում են վանքից վանք: Հենց որ նրանց մի նկատառութիւնն էն տեսմ իրենց անպատշաճ գործերի կամ խաբկիքի համար՝ զի՝ շնորք թողնում, փախչում են: Գողութիւնն են անում, թալլ և ստութիւն վառն գողութեանն: Այ լակ բախի, այլ և մեծամեծ եղգմամբ ուրաջութիւնս, և նմանները: Սի՛ւ սակավ լնն հղել ստանակները. Ե՛թազի մերոյ կրօնաւորաց գրողունս տեսնեմք անխրճեմք և անխրճեմ անգաւ ասագազունից, և զրեթէ զբովանդակն քաց ի սակաւուց (էջ 30):

Թողնում ենք վանահայրերի և աշխարհի եպիսկոպոս առաջնորդների համար գրվածները: Բերենք մի քանի քան քահանաների վերաբերւալ: Կան քահանաներ,—ասում է,— որոնք, ինչպե՛ս լում ենք, Եյառաւօտէ մինչև ցժամ պատարագին ի վաճառափողոցս քաղաքին շրջին ի տուրն վառութիւն վաճառուց: Կամ հասարակաց զգնատներով և աղտեղի տրեխներով ելնում են բեմ և պատարագ անում. հնկղեցիների պայծառութիւն և ընդհանրապէս մաքրութիւնս հոգ լնն տանում, վարում են զանազան աշխարհիկ պաշտօններ, և այլն: Եւնեմք զոմանց քահանայից ձիւստարծս լինել և զէնս առնուլ ըստ դինուորաց, և ի խրախճանութիւնս խաղուց ձիւնթացից ընդ նոսին արշաւել երկվարօք և ի յսրս երէոց և ի ննտաձգութիւնս և յամենայն ինչ յայսպիսիս (էջ 30): Վիճակավոր առաջնորդ եպիսկոպոսներին էլ պատվիրում է՝ Եթ՛շ արեմթաց ձիւնթ շահատակել, և շամբք և բազէիք որոսականօք բերիլ առ երէվայրիս և թուլունս, որպէս լանմք զոմանց թէ՛ իցենս: Դրանք եպիսկոպոս լինելով հանգեմ՝ լնն տարբերվել աշխարհական տներէրից, և նրանց քանք բերանոյն հղել են քանմտաբար խեղկատակութեամբ կամ աշխարհօրէն զառաջանս կամ զանկատութիւնս ի լնկուն յեղյնդով անարգել զքօք (էջ 37):

Այսպէս՝ Ներսէս Շնորհալու շէնդհանրական թղթից իմանում ենք, որ Հոգեւորական դասի հասկացութիւնները ու կենցաղի մէջ արդեն մեծ փոփոխութիւն էր մտել։ 12-րդ դարի կեսերին կրօնավորութիւնն անգամ ինչ դարձած։ Այս փոփոխութիւնը կաթողիկոսը թացատրում է ժամանակի թղթաւորութեամբ, աղքատութեամբ, պաշտօնային անհաշիւ փոփոխութեամբ, որ նա շեշտում է հաճախ (էջ 48, 50, 52, 55)։ Նաև ուրիշ թղթերի մէջ (օրինակ՝ էջ 309)։ «Ի նուազեալ բարեաց ժամանակս մերոյ, Այդպէս լիք առաջ, ասում է նա, Հայաստանայց եկեղեցիները պայծառ էին սկզբից բաժնել յանձնումն աշխարհի ի հիմանցս, իր հին բարի ավանդութիւններին հակառակում են, դրա պատճառն ուրիշ քան լէ, քան թէ տգիտութիւն և ինքնօրէն անձնաւաճ կամ անպաշտութիւն՝ որք ո՛ւ տեսին դատաւրին պայծառութիւնս, մինչ ողորմութեամբ տեսան լի էր երկիր, այլ ի հալածանաց օրերս ժամանակի ընդ խորթատեսակա նաւիցան տղգութիւն, որովք կապեալ են յամենայն ուրիշ ազգ մեր յաղքատութեան, որպէս ընդ երկաթոյ ի ներքոյ լծոյ ծառայութեան իւրաքանչիւր ազգաց՝ ուր և ի իցեն։ ոչ և հարկաւոր պիտոյիցն կարօտ են ըստ մարմնոյ, թող թէ պայծառութեան եկեղեցւոյ ի խնդիր (էջ 71)։ Շնորհալու հիմնավորումը ճիշտ է մասամբ, ինչ որ եկեղեցիների բարեգործութեան է վերաբերում։ Թե լէ՝ կրօնական ոգու թուլացումը, որ սկզբնական էր արդեն 11-րդ դարից, քանական զարգացման հետևանքով առաջատուութեամբ շարունակվել է մինչև 12-րդ դարի կեսերը և հետո մինչև 17-րդ դարը, ազդելով նաև մեր գրականության զարգացման ընթացքի վրա։

Ներսէս կաթողիկոսի այս մեծ գրութիւնը որքան իր բովանդակութեամբ շատ կարևոր պատմական փաստաթուղթ է, նույնքան և արժեքավոր մի գրական երկ է։ Իրոք բանաստեղծի գործ՝ դա քանականաբար հորինված է գեղեցիկ ձևով, հեղինակին հատուկ հաճելի ոճով։ Մտքը այդ կարգաւորվ՝ երբեմն հրապուրվում է նրա կարգավորչալ ու թնթն, միաժամանակ և հաճախ պատկերավոր մտածութեամբ։ Նա միտքն արտահայտում է սովորաբար կարճ ասացվածներով, հասակ ու սրտալի խոսքերով, խուսափելով բառերի և քերականական ձևերի կրկնութիւնից։ Ձի մոռանում իր աստիճանին պատշաճ խրատական եղանակը։ զրուցում է մեղմ, հանդարտ ու ծանր. ոչ հրամայողաբար, ոչ ինքնազուրկ մեծամեծութեամբ, այլ համեստաբար, իրեն էլ ոչ արգար համարելով։ Ոչ մի շինծու խոսք չկա։ հաճախ խոսում է մեկնաբան Շնորհալին։ Գործածած նմանութիւնները մեծ մասամբ ոչ թէ բանաստեղծական պաշտօնանքի համար են, այլ միտքն օրինակներով հեշտ հասկանալի և համոզիչ դարձնելու։ Թայց որքան միաժամանակ և առանձին համ ու հոտ են ընծայում նրա խոսքին։ Այսպիսի դպքերում երբեմն, ինչպէս ներքևում քերված հատվածների մէջ, ասացվածները քաղական ընդարձակվում են միջադեպի խոսքերով, բայց մեծ մասամբ լին կորցնում իրենց հեշտ հասկանալիութիւնը, որովհետև հեղինակը չի մոռանում խոսքերի կապակ-

ցությունն ու մտածութիւնն թիւր, Եւստ քան, անշուշտ, Ս. Գրքն և ուրիշ կրօնական գրքաւորներ խոսքերով և օրինակներով է համեմատ, ինչ որ անհրաժեշտ էր ըստ ժամանակի պահանջի։ Բայց պակաս լին և իր սեփական գլուտերը, բնությունից և կենդանի իրական կյանքից առած, միշտ լիտաւանայով, որ ինքը գրում է ոչ միայն խրատներ, այլև ուսուցանելու համար, հոգնով, օրինակ, գրաւոր աղօթքներն ծագման մասին՝ գրում է. «Եւստայգոյն ի ժամանակս... մինչդեռ նոր ծագեցաւ զսրտուն հաւատքս, ամենքը յայնքեանց մտաց խօսէին զքան ազօթից՝ ըստ ժամանակի պիտոյից... Իսկ ի ժամանակս յետինս՝ ցանգի հանդերձեալ էր ձմեռն մեղացն աստուածանեօք խստութեան ցրտացուցանել զսրտքումն առ աստուած սիրոյնս, զոր համար և հոգեկիր վարդապետներն իրենց աղօթքները գրելով թողնել են հետևորդներին։ Բայց ի՞նչպես են առում քառանկերն ալի հոգեբուխ աղօթքները։ Գիտե՞լով նրանց՝ պատվիրում է. «Մի՛ իրր չոր ընդ խոզովակ անցանիցէք անմտաբար ընդ խորհրդական րանս աղօթիցն...» (էջ 68)։

Եւստայի նաեւայնով իր ժամանակի հոգեբուխներին, գիտե՞լ, որ շատերն ախորժելի լին լինել իր ասածները եկամ յաղագոս ծուլութեան և միզատարութեան, կամ վառ արեւմտելիով գմեհալ։ Այլգրքներին էլ, առում է նա, «Մեք զոր հրամայեալն է մեզ՝ արտաքուս, ազգականիով որպէս զէս ի բարձր դիտանոցէ զպատուիրանս աստուծոյ ի յանդիս ձերս։ Եվ իսկոյն ամենայնում է համեմատաբար. «Բայց մի՛ ոք կարծիցէ զմէնչ, թէ իբրև առողջ զմեզ համարելով յախտից մեղաց՝ ձեզ միայն զբժշկականս զայս մատուցանեմք զնզ՝ որպէս հիւանդացեալցոյ։ Այլ ծանիցէ ամենայն ոք, զի մեք առաւել քան զամենեւեան ունիմք պէտս հոգեց թշկուութեան։ Բայց որպէս յիմար հիւանդի է զիրն առողջութեան դեզ, զոր մատուցանէ նմա յախտացեալ ոմն բժիշկ՝ ի քաց մերժել, տեսանելով զգտաւ մարմնոյ նորա,—նոյնպէս իմաստնոյ է ոչ զբնութեան բժշկին ունել փոյթ, թէ առողջ է և կամ հիւանդ, այլ զգեղին քննել զօգտակարութիւն, եթէ առողջարար իցէ, եթէ վնասակար։ Արդ՝ և զուր մի՛ վնասն մեր անարժանութեան և ի հոգեբոսն պակասութեան՝ զօգտակար դեղս հոգաց՝ զորս մատուցանեմք ձեզ՝ արհամարհիցէք և ոչ ընգունիցիք» (էջ 21)։

Նկատել ունենալով, որ իսկական բարեպաշտ կրօնավորները,—և կային դեռ բազմական թվով ազգայիններն ևս,—զուցե իրենից նեղանալ մասեւելով, թե իրենք խրատներն կարող լին, առատում է նրանց. «Թէ՛ պէտ և... լուսիք ինչ պէտս կարեաց՝ մերոյ դուշնացեալ բանից, այլ որպէս ծառայք՝ որք զհասարակականն կնրակուր հրամանս աստուն ի տէրանց բաշխել՝ ոչ միայն քաղցելոց, այլ և յագեցելոցն շնորհին,—նոյնպէս և մեք։ Այլ ընդհանուր ծառայակցաց մերոց՝ հրամայեցաք ի տեսանէ՛ տալ զբանին կնրակուր, հասարակարար պարտիմք մատակարարել՝ փարթաւմաց զիտութեամբ և աղքատաց ի գիտութենէ, զօրաւորաց առաքինութեամբ և տկարագունիցն յառաքինութենէ» (էջ 23)։

Բերնը նրա՝ երկար պարբերությամբներով և թարդ ասացվածքներով գրված պրոզայից իբրև օրինակ և հետևյալ գեղեցիկ հատվածը. «Առ առաջնորդս արքայ ռուսից վանականացս, այսինքն՝ վանահայրերին աղղած գլխի ակիցքը. Նա մարդուս երկու ալքերի նմանությամբ խրատում է նրանց, թե լավ ասալնորդ լինելու համար նրանք պետք է ն՝ գիտություն ունենան, և առաքինասներ գործեն»:

«Փոքր ինչ և առաջնորդացոյ ի յերկինս ճանապարհորդելոցն [—կրօնավորներին առաջնորդներին] տացուց ծառայակցարար զհոգեւորական և գաստուածային րանին կնքակուր, որք աշաց ունից գործ և սպասաւորութիւն մարմնոյ եկեղեցւոյ»:

Զի զո՞ր օրինակ աչք առաջնորդին անձին յամենայն շարժումն՝ ի յաւաղոյնսն կամ ի վատթարագոյնս, ըստ այսմ նմանութեան և ոչ առաջնորդը՝ առաջնորդելոցն: Եւ որպէս թիբք աշացն, իմէ՞ մաքուրք լինիցին ի յախտից ինչ ի ներքս անկեւոց, սրատեսութեամբն անմուտք առաւնորդէ անձին յաղիզ հետապարհն. իսկ եթէ շամանգուզք մթինք զերանկելուցն՝ որ ի գլխոյ անտի յաշն իջանեն՝ խնուն անտեսութեամբն, սխալէ՞ և ընդ ինքեան ի խորհրատ մամուլ գրուր անձն իւր արկունչ. — ըստ այսմ օրինակի և առաջնորդք եկեղեցւոյ:

Որ որ երկոցումք աշօք լուսաւորեալ իցէ, այսինքն՝ գիտութեամբ աստուածաշուռչ գրոց, և առաքինասէր գործովք՝ ամբօնութեամբ և սրբութեամբ և ամենայն արդարութեամբ, զոր պատուիրանք աստուծոյ ուսուցանեն, այնպիսին որպէս անձին իւրոյ, սոյնպէս և համօրէն ճգրայրութեանն Բարսեղ առաջնորդէ յաստուածայինսն:

Իսկ որ զմի յաւաշն Բա՛ց ունիցի, և միւսոյն կոսիւցեալ իցէ, այսինքն՝ որ կամ գիտութիւն առանց գործոց առաքինութեան, և կամ առաքինութիւն առանց գիտութեան ունիցի, թերի՞ է ի Բարեաց և ոչ կատարեալ. քանզի միակտեանց հմտնի այնպիսին: Զի թէպէտ և որ գիմաստութիւնն ունիցի՝ գիտէ զշաւիղս արդարութեան ճանապարհին ուսուցանել Բանիւ, այլ ինքեան ո՛չ գնալովն ընդ նոյն՝ գործով, ո՛չ կարէ հաւանեցուցանել զայլս գնալու նոյնպէս և այն՝ որ սրբութեամբ վարուց իցէ միայն՝ առանց գիտութեան զրոց, թէպէտ և անձամբ իւրով գնալ ընդ ճանապարհ օրինացն աստուծոյ, բայց զի այլոց՝ որպէս արժան է՝ ո՛չ գիտէ իմաստութեամբ առաջնորդել, վասն այնորիկ քաղում անկարողութիւնս մտանէ յեկեղեցի:

Իսկ այնոքիկ՝ որ զերկոսեան տեսարանս աշաց խաւարեալս ունիցին ի լուսոյ, այսինքն՝ զի են տղէտք աստուածային գիտութեանց, և են պղծեղ յամենայն գործս արդարութեան, մամեաւանդ թէ՛ և հակառակօքն լցեալք, և յանդգնին տալ զանձինս յառաջնորդութիւն եկեղեցւոյ (որ և զբաղումս տեսանեմք յայնպիսեաց ի մերումս թշուառացեալ ժամանակի՝ ծնունամուրե եղեալ յայտոսիկ), — լինին այնպիսիքն ըստ տէրունական առաւինն, կոյր կուրի՝ յորժամ առաջնորդէ՞, ասէ, երկոցին ի խորիւրդատ անկանին. որք ո՛չ յաստուծոյ, այլ ի սատանայէ շարժեալք՝ գիմեն յա-

աւելնորդութիւնն յայն՝ ի կորուստ ինքեանց և առաւելորդելոցն» (էջ 48 և հտն.յ)։

8. Ուրիշ գրութայումներ։—Ներսէս Շնորհալուց մեռաւ ինչ և քաղաք-
քիւլ ուրիշ թղթեր, գրութայումներ, որ նա ուղղել է ալլ և ալլ անձերի, եր-
րեմն իբրև պատասխան նրանց տված հարցների։ Նամականքի մէջ կան
նաև մասնավոր, անձնական քովանդակութիւն ունեցողներ, բայց այդ
գրութայումները մեծ մասամբ վերաբերում են դավանական և ալլ կրօնա-
կան խնդիրներին, որոնցով հետաքրքրվել են ժամանակակիցները։ Ուստի
նա նորեմն գրանց մեջ դիմում է նաև մեկնութիւն, մասնավանդ որ նա
լավ ծանոթ և վարժ էր մեկնութիւն, քանի որ գրած ուներ նաև Մատթե-
ոսի Ավետարանի մեկնութիւնը։ Այդ գրութայումները իբրև պատմական
փաստաթղթեր կարևոր են գլխավորապէս հայոց եկեղեցու պատմութիւն
համար, բայց կրթման էլ ձեռք բերածն են և առհասարակ գրական աղ-
ժեք իբրև պերճախօսութիւն։ Այդպիսիներն ալքի են ընկնում իրենց
զորեղ տրամաբանութիւնով, բերված գեղեցիկ տրինակներով և զանազան
հարտաբանական ձևերի զորեղութիւնով, ուժեղ մականադրութիւնով և
առարկութիւնով, մի քանի դիպքում նաև ծաղրով ու հեղեղութիւնով։

Պատմութիւն համար առանձին նշանակութիւն ունեն ալլ թղթերը,
որոնք վերաբերում են այնպէս կոչված Միութիւն խնդրին, այսինքն՝
հայկական և հունական եկեղեցիների միացման խնդրին, որ հարուցվել
էր մի կողմից՝ հայոց կաթողիկոսի և մյուս կողմից՝ Բիզանդիայի կիս
Մանուէլ կայսրի միջև։ Միութիւնը գլուխ չի եկել ներսեսի մահվան
պատճառով։ Այդ թերթերից տեղեկանում ենք ներսեսի խոհմ, քաղա-
քագետ և զօրւյք ինքնավարութիւնը. տեսնում ենք, թե ինչպէս նա պաշտ-
պան է հայոց եկեղեցու պատվին, թաղավորի հետ խոսում է և պահան-
ջում է եկեղեցիների վերաբերմամբ խոսել ինչպէս հաւատարմ հովանարի
հետ (էջ 159)։ Նա չի կամենում միութիւնը գլուխ բերել մենակ ինքն
անձամբ, առանց հայոց եկեղեցական ժողովի, որ պատրաստուել էր
անելու։ Ինքը պաշտպան է հայկական եկեղեցական մի քանի ծեսերի,
սովորութիւնների միայն նրա համար, որ լզրգոյ որանց վարժված ժո-
ղովրդին, թե լէ պատրաստ է նույնիսկ դիշող լինելու, «և ալլ,—աւելնա-
նում է նա,—պաշտպան առաւելածալին սիրոյն հաղորդութեան և ո՛ր իբր ի
մոլորութենէ դառնալով ի ճշմարտութիւնն» (էջ 221)։ Այստեղ արդեն
լսում ենք ներսեսի այնպէս ասած՝ ազատամտութիւնն Ասիայ։ Այդ եւ
ծագած էր անշուշտ նոր մտավոր հոսանքի ազդեցութիւնով. բայց այդ
մասին զործոն էր նաև հույների մեջ ցրված հայ ժողովրդին հունական
կրօնական հալածանքներից ազատելու ներքին դիտումը⁵⁵։

4. Գրիգոր Տղա։—Ներսէս Շնորհալուց հետո կաթողիկոս է դար-
ձել (1173—1193 թթ.) նրա վասիլ եղբոր որդին՝ Գրիգոր Պաշտպանին,

⁵⁵ «Ընդհանրական», էջմ., 1885. Միութիւն խնդրի համար փոխանակված բոլոր թղթ-
քերն և ներսեսի, և ուրիշներ՝ էջ 118—280, 426—427, ներսեսի մյուս թղթերն ու դրո-
թայումները՝ էջ 285—411.

«Տղայա մականունով: Նա սնվել, կրթվել և ուսում է առել կաթողիկոսա-
րանում և հայկաճորեն այնտեղ էլ մանուկ հասակում կոչվել է այդ մա-
կանունով: Նա էլ փափագում է նկեղենքների միտմիտուն առաջ բերել,
նկարի ունենալով, որ այդու կթնթնանա հունական տերութիւն մեջ ապ-
րող հայերի վիճակը, բայց հաստատ պահելով «ճշմարիտ հայութիւն-
ութեան» Այս մտքով շարունակում է նա բանականութիւնները միտմիտուն
մասին հուշներ և հայ հոգևորականների հետ. 1176 թ. ժողով է գումար-
ում Հոռմկլայում, բայց Մանուկ կայսրը մեծում է, և միտմիտունը գլուխ
լի գալիս: Գրիգոր Տղայից մնում են մի քանի թղթեր⁶⁴, որոնք գրված են
հմտութեամբ, երբեմն և սուր ուժով, բայց լուսնն առանձին գրական նշա-
նակութիւն և կարևոր են նկեղենական պատմութիւն համար:

Նրանից մնում է և մի ոտանավորով գրվածք: 1187 թ. մահմեդա-
կանները Սալահադինի ձեռով նորից տիրում են Երուսաղեմին. կոթան-
վում է խաչակրների հիմնած թագաւորութիւնը: Այս դեպքն ազգում է
ի միջի ալոց և հայաց կաթողիկոսի վրա, և նա հորինում է թան ողոր-
գական վրան առման Երուսաղեմի⁶⁵, Այն գրված է Ներսէս Շնորհաւո-
րի գրքի Ողբի⁶⁶ նմանողութեամբ բարանալի, ութնական տողերով և
սինն հանգով (1395 տող): Խոսում է անձնավորված Երուսաղեմ քաղա-
քը, սկզբում դիմելով նշանավոր քրիստոնեական քաղաքներին, թվելով
իր սրբավայրերը և ողբալով իր աղետները: Լի է բացառաբնութիւննե-
րով, կրկնութիւններով և, ինչպես հաճախ վարվել են մեր գրողները,
բանազրոյսիկ անկարկնեով Հին Կտակարանի մեջ պատմված դեպքերին:
Զուրկ այն կենդանութիւնը, պատկերների փայլն և մտածութիւն ու
զգացմունքի խորութիւնը, ինչ որ Շնորհաւոյ քերթվածը: Արժեքավոր է
միայն պատմութիւն համար իր հաղորդած «հարուստ պատմական իրո-
դութիւններով և Պաղեստինում ապրող ֆրանկների բարքերի, սովոր-
ութիւնների ու հաստատութիւնների նկարագրով»:

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ

1. **ՆԵՐՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**— Ինչպես «Մեջերկրայաք» նկարտի և Ամա-
նոսի միջև, Նուրնպես և Կիլիկիան Ամանոսից արևմուտք՝ շատ հին ժա-
մանակներից ծանոթ էր հայերին, որոնք առեւտրական հարաբերութիւն

⁶³ Անգ. էջ 449, 467:

⁶⁴ Անգ. էջ 228 և հետ., 250 և հետ., 266 և հետ., 482 և հետ.: Վերջինս՝ «Պատմութեանի
վարդապետացն Հայոց Հիւսիսային կողմանցն» կոչւած՝ «Գրքերի կաթողիկոսի Տղայ կո-
չեցելու» նամականիւն. Վենետիկ, 1865, էջ 58—80. Այստեղ նաև «Պատմութեանի թղթայն
վարդապետին Գրիգորի Տուտեօքայն», էջ 5—52. Գրիգոր Տուտեօքայն երկու թղթերն առ
Գրիգոր Տղա՝ անս. «Արարատ» ամսագիր 1895, էջ 821 և հետ., իսկ «Թուրք վարդապե-
տացն Հայոց Հիւսիսային կողմանցն» .. առ .. տէր Գրիգորի օտ լեզու «Ընդհանր.», էջ մի-
սինն, էջ 426 և հետ.:

⁶⁵ Քննարկը ֆրանսերէն թարգմանութեան հետ ազգած է Պարիզում. DUBOIS, F.
Recueil des Historiens des Croisades, Historiens Arméniens.

ունենին այն կողմերի հետ 12-րդ դարում Հայաստանի քաղաքական աղետներին հետևանքով՝ շատ հայ իշխաններ իրենց ժողովրդով տեղափոխվում են նաև Կիլիկիայում, որ բիզանդական իշխանության ներքո էր, որ և իր ժողովափնյա դիրքով մի հարմարավոր վայր էր Արևմտյան Եվրոպայի հետ հաղորդակցություն պահելու համար։ Հայությունը հետզհետե թվով աճում է այնտեղ և տնտեսապես զորանալով դառնում է աղղցցիկ և Հայ իշխանները սկզբում բիզանդական կուսակալներին պաշտոն են վարում, հետո արևմտում են որոշ քերդերի բիզանդական գերիշխանության տակ։ ապա մգտում են նաև քաղաքական անկախ իշխանություն կազմելու։ Բագրատունի Փապիկ Բ. Թազավորի մոտիկ ազգական Ռուբենը 1080 թ. Կիլիկիայում հիմնում է անկախ հայկական իշխանություն, որ 12-րդ դարի վերջում դառնում է Թազավորություն ընդարձակ սահմաններով և հարստեղծ է մինչև 1375 թ.։ Այս նոր Հայաստանը ժողային մեծ առևտրական հարաբերություն ուներ Եվրոպայի հետ և բարեկամական կապեր՝ մոտիկ խաչակիր իշխանությունների հետ, միաժամանակ և չէր կտրված Մեծ և Փոքր Հայաստանների հետ հաղորդակցությունից։ նա շուտով ծաղկում ու բարձրանում է և՛ քաղաքականապես, և՛ տնտեսապես, հանդիսանում է մի նոր կուլտուրական վայր իր բազմաթիվ նորաշին վանքերով։ Գրականության մեջ ալթի ընկնող ներկայացուցիչը 12-րդ դարում է Ներսես Լամբրոնացին։

Լամբրոնացու մեծ պատյը, Օշին անունով մի աղնվական, Փանծակի կողմերից 1073 թ. տեղափոխվում է Կիլիկիա, ուր կուսակալ էր նրա ծանոթ ու բարեկամ Ապղարիպ Աթորունի իշխանը։ Սա տալիս է Օշինին Լամբրոն ամրոց բերդը Տորոսյան լեռների մեջ։ Օշինը և նրա որդին՝ Հեթումը, մեռնում են կայսերական ծառայության մեջ և դառնում են այն կողմերի հայտնի իշխանները։ Այդ Հեթումի դուստրերից մեկին հետ ամուսնանում է Ներսես Ենորհալու մեծ եղբայրը՝ Վասիլը։ Հետագայում Հեթումի որդին՝ Օշին անունով՝ Ենորհալուց Թազուն կին է առնում Ենորհալու կրտսեր եղբոր՝ Եահուեի, հույն և Զորավարի Եահանդուխտ դուստրը։ Այս Օշինի և Եահանդուխտի զավակն է Մմբատը, ապագայի Ներսեսը, որ ծնվել է 1153 թ., վախճանվել 1198 թ.։ Ստեղծա ժամանակ ծանր հիվանդացել է նա, և ծնողներն ուխտել են իրենց որդուն, եթե առողջանա, նվիրել ձկնղեցու ժողայությանը։ Ուստի մանուկ հասակից նա կրոնական կրթություն և ուսում է առել Սկևռա վանքում, որ շինել էր իր հայրը, և հետո՝ Ներսես Ենորհալու մոտ կաթողիկոսարանում։ Այստեղ նա սովորել է նաև հույն, ասորի, լատիներեն լեզուները։ Ենորհալին նրան տվել է կուսակալի քահանայի կարգ՝ մկրտության՝ Մմբատ անունը փոխելով ի ներսես, և հետո, երբ նա դեռ քսաներկու տարեկան երիտասարդ էր, Գրիգոր Տղայից ձեռնադրվել է նպիակդպոս և նշանակվել Տարսուի, Լամբրոնի և Սկևռա վանքի առաջնորդ։

Մեծանալով Ենորհալու ձեռի տակ՝ Ներսես Լամբրոնացին սիրում է առումն և գիտությունը, և վաղ երիտասարդական տարիքից արդեն ան-

խոնջ պարապում է զրականութիւնս՝ անկողի թարգմանութիւններ և հո-
րինելով մեկնութիւններ և այլ կրօնական երկեր։ Բացի այդ՝ ազգվելով
ներքին ճշմարտացի՝ նա սերտ փարում է եկեղեցիների միութեան խրոնո-
րին, այդ նկատմամբ հետեւում է իր մեծ ուսուցչի, հետո և Գրիգոր Տղայի
ուղղութեան ու հայացքին։ Ձախազանց ցավում է, որ միութեան գործն
անկատար է ու անցել։ Սիրելի է և միանձնական կյանք՝ իդեալ ունենալով՝
Գրիգոր նարեկացուն։

«Ուսումնասիրելով օտարների մեջ տիրող եկեղեցական կարգ ու
սարքը, և բազմաթիւ հայերի մեջ տիրացած անկարգութիւնների հետ,
որոնք հետեւանք էին քաղաքական աննախաձեռնի ու վարատական կա-
ցութեան, կամարոնացին սկսում է սիրահարվել ուրիշների մոտ տեսա-
մին»⁶⁸ և ինքնագլուխ ինչ-ինչ փոփոխութիւններ և նորութիւններ է
մտնում եկեղեցու կարգերի մեջ։ Արեւելյան վարդապետները դժգոհում
են նրա ընթացքից և այդ մասին հայտնում են Կիրիկիա Լեոն Բ-ին, որ
արեւելիների հաճելի լինելու համար հոգարում է կամարոնացուն հե-
ռացնել իր մօտից։ Այս հանգամանքներն ահա՝ առիթ են ընծայել կամար-
ոնացուն հորինելու իր նշանավոր Ատենաքանութիւնը և գրելու Լեոնին
ուղղած թուղթը⁶⁹։ Ատենաքանութիւնը, ըստ վերնագրին, խոսված է
«Ճաստաւածախումբ և ի տիեզերական ժողովն Տարսուհի, որ տեղի է
ունեցել 1197-ին։ Դա ժողովիւն խնդրին ի նպաստ նուանդուն և պարճա-
րան հորդարական է», թաղային գործերի քննադատութեամբ։ Լեոնին
ուղղած թուղթը գրված է լի զայրույթով իր հակառակորդների դեմ. արե-
ւելիներին համարում է քոթմարք և անկարգ և լիմար բանից շաղակ-
րատողը։ Անկարկելով Գրիգոր Տուտեորդուն և Փորայրեցուն՝ գրում է.
«Ի Ձորոգան գերկուց արանց, որք իբրն զշունչ լիբրս հաշնն՝ զկա՛մս
հաճեմ, որք վասն զԱնեցի արքեան ի զուանաց և յորովայնամութենէ,
յարեքութենէ ի կաթողիկոսութիւն քարշելոյ՝ զմեզ նախատենն (էջ 232)։
Անեցին Անի քաղաքի Բարսեղ եպիսկոպոսն է։ Եւ այսպիսի նախատե-
կան խիստ խոսքերով նա անարգում է իր արեւելյան հակառակորդներին։
Եկեղեցական պատմութեան համար կարևոր այդ երկու գրութիւնները
եթէ մի կողմից՝ վաւերագրեր են ժամանակի բարքերի համար, մյուս
կողմից՝ ճշգրիտ բնութագրում են իրեն՝ ներսին կամարոնացուն իրրն հա-
մարձակ, բուռն նուանդոտ, բայց և կրքոտ ու հուզվող, տաքաբլուն ու
բռնկվող մի մարդու, որ իրեն զսպել լզիտեւ։ Բայց դրանք միաժամանակ
և լավ ապացոյց են նրա հոստորակաւ շնորհքին։

68 Մ. Օրմեյուճ, Ազգապատմ., Գոստանցնապոլիս, 1912, էջ 1479 և հտն., էջ 1512
և հտն.

69 Տպագրված Վենետիկ, 1665, «Լեւորի մասնագիրք» շարքի մեջ «Գրիգոր Կաթո-
ղիկոս Տղայ, ներսին կամարոնացի», նախ՝ «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կաշեցւոյ նամա-
կանք», էջ 5—60. Հետո՝ «Երեսնի կամարոնացւոյ Տարսուհի եպիսկոպոսի ասեւաբանու-
թիւն», էջ 98—205. Թուղթ, էջ 207—246. Մասք, էջ 249—256.

2. Համբարձմամ Գեորգեայանը:—Ն. Համբարձումը: ճարտասանու-
թյունն ավելի ևս փայլուն է նրա ձոցնդասարան և Համբարձման ներ-
քողայաների մեջ⁶⁸, որոնցով նա հանդիսանում է տաղանդավոր հոգևոր,
լավագույն ներկայացուցիչը մեր հոգևոր պերճարտությունն ուստի և
այստեղ մանրամասն, հարկավ, մեծ կրճատումներով, տեսնենք նրա
Համբարձման ներքողանը, քանի որ մեր հին գրականության այս տե-
սակի նրկերից ոչ մեկի վրա առանձնապես կանգ չենք առնել: Նա բնա-
խոհարար կրթություն է ստան առանձին տեսակի մարտասանական ձևեր՝ գիմնա-
րացականություն, մայնարկություն, հայրցում, նմանություն, կրկնու-
թյուն և այլն: Դրանք նա բանեցնում է վարպետորեն, ունի պահպանու-
թյանը: Կրկնություններով էլ, օրինակ, նրա ասացվածք ոչ թե թուլանում
է, հակառակ ու ձանձուրի գտնում, այլ, ընդհակառակն, պարտում և
զրափայլություն է ստանում: Ամենն ասում է նա վայելուղ դարձվածներով,
ոչ ասելով բառասանգծական պատկերներով, հար ու ժաղկուն, քայք
պարզ ու մեկին ունով, առանց կուտակարանության, հեռու մթնությունից
և բարդ ու պարբերական ասացվածքներից: Չրազնեբը հասնախ ետեև ետև
կազմում է նրկերով: Խոսքից, ինչպես նկատող տեղից բանասանգծու-
թյան մեջ, զրանով որոշ շարժականություն և կշռական դաշնակավորու-
թյուն առաջ բերելով: Բայց Համբարձումը ներքողանի գեղեցկությունը
միայն արտահայտական ձևերի մեջ չէ, այլ ավելի ևս նրա ներքինի,
հասի ամբողջ կառուցվածքի և լիրիզմի մեջ:

Ազգրից հենց նա իր բնարանին պատշաճ մի շարք դիմումներով
զրափում է ժամավոր ունկնդիրների ուղարկությունը և զարթնցնում երեսն
հասաքրքրությունը՝ կենդանի հաղորդակցություն ստեղծելով իր և նրանց
միջև, ինչ որ հարկավոր է ամեն հասարակության: Ե՛մնա՛ այսօր, հա՛րսն
ողջախոհ, հինգդեցի՛ հեթանոսաց, ի պատիւ յիշատակի փնփային քո
Քրիստոսի խորհրդոց: Այսպես է սկսում նա այդ հառը և ապա շարու-
նակում. Ե՛րբարեցէ՛ք, ո՛վ մանկունք առադաստի, այսօր ուրախութիւնամբ,
զի՛ հասաապեցաւ սիբա՛ ձեր ի հանդէս փառաց նորա մեծութեան: Ձուար-
նացեալ խրախոյս խնդութեան հարէք ի մէջ տաճարիս, դասապն՛տք
դասուց հանդիսի ժողովոյս: Քանզի ահա այսօր լրումն փափաքանաց
ձերոց յերկինս երկնից կառուցեալ ամբարացաւ: Ո՛վ արեամբ փրկեալ ամ-
բի՛ծ գառինն՝ սնպհական ժողովուրդդ... այսօր եկա՛յք բարեբացիք սլա-
ցիս: Ընդ նմին թնօք հաւատոց ի փառս երկնաւորս, յոր մտեալ նստաւ
շնոգ աշի՛ հոր, տո՛ւաւաշխայ և հանապա՛ր ամենեցուն ձեզ: Ապա
իրեն դառնալով ասում է. Ե՛կյէ ինձ, որ զտարտաժողովունս ընթացեալ
պաշտպան կացի՛ առուս մեծի, ո՛վ տայր հաւասարել խորհրդոյս և զա-
մենսնանս զձեզ սխրացուցանել՝ իմաստութեամբ տոնելոյս: Հետո մի

⁶⁸ Անդ, էջ 249—250. Երանդանութեան ներքողական դրժմումը ի Համբարձման
առաջն Յիսուսի Ժրխոսով յիշկենա, էջ 250—255. Ենթադեհան առաջեալ ի հրաշ-փառ
արարած մարտի պարտ:

մի կարճ ասացվածներով հիշեցնելով հրեշտակների երգակցումը ոգևո-
շելի փառքի տոներն, ասալուսներին պշտած սքանչացումը և մարգարեների
արևնաթլան հրգիսքը՝ բացառականում է. «Ո՛ր դուք հինգհնչույ մանկանք,
բարեմալ զմայնա քաղցր անդամակա՝ սաղմոս ասացէք աստուծոյ մե-
րում, սաղմոս ասացէք քաղաքորին մերոյ, սաղմոս ասացէք»։

Անպայման մեծ է հզօն քերմ հավատով և անկեղծ ոգևորութիւնամբ
ասված այս խոսքերի ազդեցութիւնը հավատացալիների վրա, բայց այդ
չի բավարարել ճատոյեռոսին. ուստի իսկույն հասալում է նա՝ «Այլ ասա՛ղ,
զի հնդգութիւն մեր ժանրացեալ ի զբաղմանէ մարմնոյ՝ հաւանել հրա-
մանին վերջացաւ, և զմաշակ համեղ գիտութեան»՝ յամբել անձին երգօք
սրհեութեամբ՝ յուրացաւ Փանղի որպէս մարմնոյ ոչ է մի տեսանելն
զյաղեցուցիչ իւր համադրամա՝ և ճաշակելն, այսպէս ո՛չ է հաւասար լսել
զրանա աստուծոյ, և ո՛չ խոսողական հանճարովն որոնել. զի այսու պա-
րարեալ բերկրի, և տչու երբէք ոչ միտթարեա՝ Նարունակեցով զաբգաց-
նել ասածը՝ բերում է մի ուրիշ նմանութիւն, թե մարդուս կյանքի համար
բավական կրիներ մի տեսակ կերակուր, բայց նրա մարմնին տրված են
զանազան պտուղներ ու կերակուրներ, որպեսզի յուրացանայրի էլ համ
ու հոտն առնի և զվարճանաւ։ Այսպէս և նրա հոգուն տրված են մեկից
աւելի կերակուրներ—զանազան աստվածային տոներ, իրենց առանձին
խորհուրդներով և անուշահոտ քուրմամբ, որպեսզի նրանցով զվարճաց-
նի իր մտավոր գիտութիւնները։

Եվ անմիջապէս կորովի ձայնով կանչում է Սատանային, իբրև ամե-
նամեծ թշնամուն. «Ո՛ր ես, անզե՛ղզ ի լարիս բանասրկու. ո՛ր դու,
զրպարտի՛չ դատաբազ, ե՛կ այժմ կա՛ց մեզ առնթրի, ոչ իբր զսիրելի,
այլ իբրև զթշնամիս և այլն։ Եվ այսպէս շարունակում է մի մեծ շարք
խոսքեր, որոնցով Սատանայի տկարութիւնն ու պարտութիւնն է մեղ
քերում, ամայեցնելով ու խայտառակելով նրան, և փառաբերում է համ-
բարձումը, միշտ այնպէս ճառելով, որ կարծես Սատանան կողքին
կանգնած լինելու։ Եվ նա հավատում է դրան և հավատացնում է իր
ունկնգիրներին։ Հավատում է, որ՝ ինչպէս Հին գլուխքը, հրգմենցուցիչ-
ները սաստում էին լար ոգիներին, ինքն էլ իր այդ խոսքերով դուրս է
քշել Սատանային։ Աւստի իր ճառի այս նախաբանի վերջում ավելաց-
նում է. «Ձայսոսիկ առ բանասրկու թշնամին ի դէպ էր մեզ ի սկզբանս
բարբառել, և զմախանօք յաշաղօղն ի ժողովոյս մեր ամօթով արտաքո
վարել և ապա զճոզնոր սեղանս բարեկամացող սփռել և զամենանճան
կերակրել»։

«Հոգևոր սեղանիս, այսինքն՝ ճառի կենտրոնական մասի նյութն է,
«(1) թէ զի՛նչ հարկ աստուծոյ իշմանն ի յերկիր, (2) կամ այսօր՝ ուր
էնն ի յերկրիս՝ փառօք համբարձմանն»։ Այս խնդիրներից առաջինն է
փրկագործութեան խորհուրդը. փրկիչ Հիսուսն իբրև մարդ հաղթել է մեղ-
քին. մարդս հետեւելով նրան՝ նույնպէս պիտի հաղթի մեղքին և վերա-
դառնա իր առաջին հայրենիքը. «Պարտաւորքս սրբեալք առ աստուած

դարձնուցաւ... Այս խորհուրդը համառոտակի, թիժն, աշխուշ ուժով քա-
ջատրելուց հետո անցնում է երկրորդին՝ Համարաձայնը, որ ճառի
քննարանն է։ Նոր Կտակարանի փոքրիկ պատմութիւնն և արվանդութիւնն
ընդարձակում է՝ ստեղծելով մի վիպական նրկ պատկերների ու տեսա-
քաններին ընդհանրանալի և խոսքերի մասնամասնութիւններով, միշտ
աշխատելով ազդելու ժամավորների նրեակայութեան և զգացմունքների
վրայ։ Եղ աշտեղ իրենում է նրա մեծ շնորհքը։

Հիսուս իր աշակերտների հետ Զիթնայաց լեռան վրա է և այնտեղից
սկսում է նրկնք վերանալ. «Ի վայրն՝ ուր ուսան դճուտս նորին թշնա-
մեաց, և ուր լուսն սքանս լարչարանեացն և երկնան, ժանուցեալ զփա-
ռաւոր համարանումն՝ քերկրեցան։ Ի լեռոն՝ ուր տեսին զնա յազօթս անա-
րանդուսանօք, անտի տեսին զնա սլացեալ ընց տապա լուսնդին փառօք...
Ի Կնքրոնեան ձորոյն՝ ուստի տարան զնա ի խաչ սուսանօք, ի նմանէ
ամբարձաւ ի կռսս քրովքէից նորք հողմոցն թեօքս։

Հանգն է գալիս ամենից առաջ Հիսուսի մայրը. «Եվ այլն՝ ուր խո-
ցեցաւ յայնժամ ի նախատանացն սայրասուր ալաքօք, այժմ տեքանէ
զորդին իւր թագաւոր պննեալ պսակօք... Վասն այսորիկ ցնծայր, հրճուէր,
և այսպիսի ինչ ի բարձրանալն որդւոյն զկնի բարբառ արձակէր։

— Այսօր սիրտ իմ հաստատեցաւ, և քերան իմ լարձանկեցաւ ի վե-
րայ թշնամեաց, ո՞վ անգրանիկ իմ և տէր, որ կափուցեալ տատանէր ի
քո յանճառն խոնարհութենէ։ Այսօր բարձրացուցնք զդուք մօր քոյ փա-
ռօք, որդի՛ իմ և աստուած, որ լուսթնամբ կորանալը ի քամբասուն
զկուսութիւն իմ լուսթի բժժանօք։ Այսօր պայծառացուցնք զդէմս իմ՝
նշուլից հետոք ոտիկդ հառապութիւք, որ ի ժամ լարձարանաց քոց զգե-
ցաւ սուգ՝ մթին ստուերօք...»։

Ապա Մարիամը դիմում է առաջալեւերի դասին, որ հաղորդակից
լինեն իր ցնծութեանը։

— Ո՞վ Պետրէ, ընդէ՞ր լոռս. ահա հրեշտակը ակուր արեալ եղա-
նական շուրջ զվարդապետան քո զօրհնութիւնս, ա՛ռ զգուհդս քո, և խառ-
նեա ի պարս նոցա, նրգանցեա՛, տալով օրհնութիւն այնմ՝ որ օրհնեաց
զերկիր գալստեամբ իւրով, և պայծառացուց զերկիւնս ընթացիւք իւ-
րովք... Սոգ ահա արտափայլէ ի փառոց նորա, և երկինք խոնարհի ընդ
ուրիշ նորա, և բարապանք նորին քտնան զդրունս մտից նորա. դուք
մինչև ցո՛ր վայր պշուցեալ՝ կամիք տեսանել զընթացս նորա։

Բայց Հիսուսի աշակերտների ուշքն ուրիշ քանով է տարված։ Հա-
րութիւնից հետո փոխվել է նրանց վերաբերմունքն առ իրենց ուսուցիչը.
«Եւ այնուհետեւ սկսան յայլ ոչնա կերպարանաց պատիւ տեսնա և վար-
դադետին առնել։ Ի նայելն ընդ նա զարժուրէին, յիշելով զթնագրեալ
անդովքն... Ի խօսելն պատկառէին... Սէրն քորքոցեցաւ ի սիրտ նոցա
նորոգապէս... յայս կոյս յայն կոյս ընթանային ամօթխածութեամբ և հայ-

60 Վերնամ հիշված «Հետիւր մոտենալիրք...» էջ 259 և հետո։

էին ի դէմս նորա անյազ փափագմամբ... և Այսպիսի հոգեկան վիճակի մեջ էին նրանք, երբ Հիսուս ձեռները բարձրացնելով՝ օրհնեց նրանց, և անդէն փութապէս մեկնեալ՝ սկսաւ վերանալ յերկինս։ Իսկ նոքա արտաթափ լուսաակտոր խոնարհեալ, զերկիր համբուրեալ՝ շնորհ ունեւորվ օրհնութեանն, յարուցեալ փութապէս և նրազ պշուցեալ նայէին ընդ երկինս յերթալն նորաւ։

Նրանք հոգնուիմ են զհայր վեր պշտեմ նայելուց։ Ահա տեսարանի մեջ շարժում է մտնում. գալիս են երկու բարեկամ հրեշտակներ՝ նրանց ափսոսելու և զհայ երկինք նայելը դադարեցնելու։ Ասում են.

— Արք գալիւնացիք, այժմ զի՞ նաչջ հայեցեալ ընդ երկինս անշրպետութեամբ ամպոյզ որոշեալք ի օրեւելոյն։ Այս Յիսուս որ վերացաւ ի ձէնք՝ սոյնպէս գարծալ եկեացէ։ Արդ գարծիք սպասեցէք սորա կրկին գալստեանն։

Աշակերտները հարցնում են.

— Եւ զի՞նչ լինցուք աշակերտք թանկարժեք ժամանալք ի վարդապետէն... Մեզ զի՞նչ տալք միտիթար, ո՞վ դուարթունք, ի տրտմութեան և ի ցնեմութեան միջի վարանեալ աշակերտացս. ցնծութիւն՝ զի տեսաք զնա յայնպիսի փառս ճոխացեալ, և տրտմութիւն զի ստորեւ ի նմանէ եղաք առաջ մեացել։

Հրեշտակներն ասում են.

— Արք գալիւնացիք, մի՞ հիանալք, ցնծացէք, զի պայ համարածեալք ի յերկիր, և պսակէ դամեանեան զծեզ ի նորոգութիւն յարութեանն հրաշապէս...

Եվ նառախոսը հրեշտակի բերանով նկարագրում է մի ուրիշ տեսարան. նա ունկնդիրների երևակայության առաջ բանում է աշխարհի վերջը, երբ Հիսուս փառքով կիշնի երկնքից երկիր, նրա հետ բոլոր հրեշտակները, մարդիկ էլ գերեզմաններից ամպերի վրա ընդ առաջ կթռչնու. Դարձալ փոխվում է տեսարանը. հրեշտակները նորից դառնում են համբարձմանը։

— Ահա դուք տեսաք, — ասում են նրանք, — թե ինչպե՞ս պապաւ վնա, և թե՞ն թայլելով օդերի վրա՝ օթանշեւապան բարձրացաւ ու ձեր մարմնական աչքերից ծածկվեց ներքեւի ամպով։ Այժմ բացեք ձեր մտաւոր աչքերը և դեպի երկինք հառեցե՛ք՝ բուսանել խորհուրդս անպատումս։

Ի՞նչ է դա։ — Այդ հասկանալու համար դենք այստեղ հետեւյալը քրիստոնեական զրուցաբանութիւնից։ Հին հայացքով ամպերից վեր, տեսանելի երկնքից դենք, էր երկնային զորութիւնների կամ զվարթութեանների վայրը։ Ներսես Շնորհալու ըստ Գիռնիսիոս Արիսպագացու գրած մի աշխատութիւնից, որի մասին խոսվեց վերևում, իմացվում է, որ նրանք, այդ երկնայինները, բաժանվում են ինը դասերի, որոնց ամեն երեքը կազմում են մի կարգ։ Բարձրագույն կարգի մեջ են՝ Սերովքները, Քերովքները և Աթոռները. հետո գալիս են՝ Տերութիւնները, Զորութիւնները և Իշխանութիւնները. իսկ ստորին կարգի մեջ են՝ Պետութիւնները, Հրեշտակա-

պնասներ և Հրեշտակներ: Այս երկնային ճշգրտները: Բոլորն էլ ընդհանուր անունով կոչվում են Զորութուններ կամ Զվարթուններ կամ Հրեշտակներ: Բայց ճշգրտակա կոչվում են սովորաբար իններորդ դասի զվարթունները միայն, և ներսեւ Լամբրոնացու այս ճառի մեջ ճշգրտակա քառու միայն այդ նշանակութիւնը է գործածված: Նրանք, լինելով վերին երկնքի ամենացած մասում, երկրին ամէլի մոտ են և երևում են մարդկանց, նույնպէս երբեմն նաև Հրեշտակապետները, ասանձնապէս Գաբրիել և Միքայիլ:

Գառնանք Լամբրոնացու ճառին:

Նրանք, Հրեշտակները, մարդկանց վերականգնելն են, սեղանակ են մարդկային գործերին, ուստի դիտելին, թէ ո՞վ է երկինք համարածողը: Վերին կարգի երկնայինները մոտ են աստուծուն, որի կամքը և նրանք հաղորդում են ցածի կարգերին: Բայց նրանք հետո լինելով երկրից, չգիտեմք, թէ ո՞վ է վեր համարածողը: Ուստի իններորդ դասի Հրեշտակները այդ մասին տեղեկութուն են տալիս վերիններին. Քրանգի աստուած ի ստորնայնոցս ի վեր նկատէ, ասում է Հիսուսի աշակերտների հետ խոսող Հրեշտակը, որ ինքն էլ ստորիններէն էր: Հիսուս, ուրեմն, ամբարանալիս նախ հանգիպում է իններորդ դասին—Հրեշտակներին, հետո հետզհետե քարոզում է դեպի վերին դասերը, մինչև հասնում է ճշայր աստուծուն: և նստում նրա աջ կողմը: Ներսեւ Լամբրոնացու ճառի այս մասը Հորինված է ահա՝ այս բերկնային դասակարգութիւնը և այս քրիստոնեական փրկութեանութիւնը վրա. պատմվում է Հիսուսի համարածսն գործողութիւնը, նրա ընթացքն երկնայինների զառակարգութիւնը—Հիերարխիայի միջով:

Երբ Հիսուս հասավ իններորդ դասի Հրեշտակներին, նրանք, որովհետև գիտեին, թէ ո՞վ է համարածողը, ցնծութիւնով նկատ նրան ընդ առաջ,—ասում է պատմող Հրեշտակը և շարունակում, թէ՝

«Ոմանք զգործն աստարանին համբարանալ, և ոմանք զթագաւորէն հարցանեն ուսանել: Ներքինքս անուանեն զնա թագաւոր փառաց և վերինքն տառակուսին, թէ ո՞վ է սա թագաւոր փառաց, որ ընդ երկինս ճանապարհ է յնրկը և առանց օգնականի ինքնիշխանութեամբն հորդեաց: Գաբրէլնանք աղաղակէին. «Տէր զօրութեամբ իւրով, տէր կարօղ ի պատեհաւմիւ: և Միքայիլնանք հիանան. և ճիւղա՞րդ կարմիր ունի հանգեմը զի գոյն արեան և մարմնոյ:... Նրանք քողոքում են Հիսուսին և աղաղակում:

— Տէ՛ր ամենակալ, մինչև ե՞րբ ոչ ողորմիս վերինս Երուսաղէմի, և քաղաքացն դախտին, ուստի արտաքս ձգեցնք գերի զնականչն զԱղամ...

Հիսուս միտքարական խոսքերով պատասխանում է.

— Փրկեաց զնոսա քաղալի իմ, և սրտմտութիւն իմ միայն զդէմ կալաւ Հրեշտակներն ու Հրեշտակապետները լսելով, որ մարդկային ազգը փրկված է, ցնծում ու հրճվում են և ուղեկցելով համարածող արքային՝ ձայն են տալիս վերիններին, որ շտապեն ճանապարհ բանան:

Եվ մինչդեռ Հրեշտակներն ու Հրեշտակապետները և սերովքներն ու քերովքները խոսում էին միմյանց հետ,—շարունակում է պատմող Հրեշտակը դառնալով դեպի աշակերտները,—ինքը Հիսուս, որ Հրեշտակների դիմացից էր գնում, առաջ անցնելով այսպես պատահանեց վերին դասերին.

— Ես եմ որ խօսիմ զարգարութիւն և իրաւանս փրկութեան. ես եմ որ իրաւամբք և արդարութեամբ յաղթեցի և կոխան զթշնամին հակառակամարտ՝ արարի. ես եմ որ զգործաւ աղօ մարդկան փրկեցի, և զարձան զյոյս նոցին յերկինս ուղղեցի. ես եմ որ զթշնամութիւն ի մարմին իմ սպանի, և խաղաղութիւն յերկինս և յերկրի արարի:

Վերին դասերը հարցնում և ասում են.

— Եւ զի՞ կարմիր են, ասեն, պատմեալն քո և հանգերձ քո՞ իրրեզնէականհարի լիոյ հնձանի կոխելալ... Անդ զի արարեր զայս ամենայն աստուածապէս՝ հաւատամք. մարմնոյ հանգերձ արիւնոտ ընդէ՞ր զգեցեալ ես ի վերայ աստուածութեանց փառաց, և բոցորատիպ գունով զնոյն պաճովեալ... Եւ զի կարելի է քանելիք գործ յերկրի անմարմնոց զօրութեանց՝ հաւատամք. քայց դու ահա տկար պատմեալանադ վանեցեր զմեծածէմ մարտս՝ հիսնամք, և զյանդանակ քաղմապատիկ ի մտաւորից քոց ուսանել ըղձանամք. յայտնեալ իշխանութեանց և պետութեանց երկնայնոց զնորոց արուեստի քոյ իմաստս, աստուած՝ մեր և տէր:

Հիսուս պատասխանում է.

— Աշխէ որպէս դուք կարծէք, ասէ, աստուածային զօրութեամբ իմ, ո՞վ երկնաւորք, ի զլուսն ածեալ զմարդկան փրկութիւն ուղղեցի, և ոչ թէ կառք և երիվարք Հրեշտակացոյ ինձ ի մարտս պաշտպանեցին... այլ փրկեաց միայն քաղով իմ, և արտմտութիւն արդարութեան մարմնոյս իմոյ՝ միայնակ առանձինն կացեալ ընդդէմ՝ կոխեաց զթշնամին: Միայն ի իստեան պէսպէս փորձութեանցն յաղթեցի... Միայն ընդ մաքսաւորսն ճաշակեցի... Միայն ի խաչին լարչարանս դիմեցի... Զէն ոչ առի ի ձեռս զհրեան ձեռն անոր, այլ տկար մարմին... և այսպէս պատերազմեալ յաղթեցի աշխարհիս՝ վասն այսորիկ արդարութեամբ իմով և կամաւոր մահուամբ զմեղաց մարդկան զմուրհակն պատառեցի. և այժմ՝ ելանեմ նստել ընդ աքմէ հօր, բարեխօս և քահանայ հօտին իմոյ, զոր պատուական արեամբ իմով գնեցի:

Այս որ լսում են Հրեշտակների ցնցերը,—շարունակում է պատմող Հրեշտակը.—զարմանում են, որ նա իրրեւ տկար մարդ հաղթել է Մատանային: Մկանն ապա նոր եղանակաւ զերզս նմին վերելգել. և զմարդիկ ի կցորդութիւն օրհնեղութեանն իւրեանց ժողովել:

— Մտփո հարէք, ասեն, ա՛ղգք հեթանոսաց, համաձայն քաղցր երգոցս Հրեշտակաց, և աղաղակեցէք ընդ մեզ փառաց թագաւորիս ի ձայն ցնթութեանն զոմութիւն օրհնութեան... Ահա մտանէ քահանայապետս առ աստուած պատարագան հաշտութեան... և առնէ խնդրաւան վասն ձեր փրկութեան. «Եւս՛յր, կալիմ զի ուր ես եմ ի ծայրագոյն զառնոյս... մտցէ

եկեղեցի իմ տեսանելի գլխառս զօր ստացայ... Հա՛յր, զորս նորուր ինձ գինք արձան ժողովորդ սեպհական, սիրցցի ի լափ սիրոյ քոյ ընդ միածնիս հաճութեան, և բարեխոսեմ ամեն զնոսա ի պատիւ փառացս իմ հասարակութեան: Ուրեմն մարդկային ազգի փրկությունը կամ նրա բարեբաղուն, աստվածային դատարար:

Այստեղ վերջանում է նրկու հրեշտակներն խոսքը: Անմիջապես հետեւում է ճառի վերաբերելը, որի մեջ նառախոսն արտահայտում է իր սեփական զգացումները՝ խոսքն ուղղելով նորից եկեղեցուն, այսինքն քրիստոնյա տեկնադիրներին, և հորգորելով նրանք, որ հետեւն շրջանին: Ե՛րբ մեծի շնորհիս,—բայցազանչում է նա,—ո՛վ անճառ երախտեացս, որում արժանի դատար, եկեղեցի՛, ի համբառնայս Քրիստոսի... Ա՛րկ ի բաց զքեզ տգեղութեան երկրաւոր սահնցման... Խարխիս քո յերկինս, դու ընդէ՛ր ի ստորինս կորանաս... Անտի՛ օ՛հ հրախրեցար դեւա ի յերկրէ յերկինս, յապականութենէ յանապականութիւն, ի միշտ յարճաց ի հրեշտակաց դասակցութիւն: Դարձիւ յունայնութեանց և կացո՞ղ դուստ քո յուզից պոզստայն գի... արժանի լիցուք յես էլիցն աստի՛ երկնային ասնն օթնանայն...»:

Այսպէս՝ ներքեւ Լամբրոնացին իր ներքազանի բան մասի մէջ զվարթ նշանակով նկարագրներ է անում, ընմ հանում դործող անձեր և նրանց խոսել տալիս միմյանց հետ: Հիսուսի մայրը, Պետրոս առաքեալը, Միլանները, ինչը Հիսուս, հրեշտակներն իրենց գտածով փոխ առ փոխ նրանն են գալիս ունկնդրի ալքի առաջ, հարցումներով դիմում իրար, պատասխանում, հիացմունք հայտնում, խոսքում մեծ ցնծությամբ ու հովատով: Տեսարանները հետզհետեւ փոխվում են, ամեն ինչ շարվում է, կտրծես՝ մի վեպ է պատմվում դրամատիկ ձևով. ամբողջը կազմում է մի մեծ գործողութիւն, արագ ու նոանդուն ընթացքով: Զառսխոսը սկզբից մինչև վերջը մեծ ավելումով ու արտի զեղումով բանաստեղծում է ինչպէս մի քնրթող, վառում է ունկնդրի ժամավորներին երևակայությունը, նրանց տեսնել է տալիս իր պատմածը և լսել է տալիս դործող անձերի խոսքերը: Ահա թե ի՛նչ է նրա արվեստի բնորոշ կողմը—ազգել ժամավորներին երևակայության վրա, առաջ քնել ոգևորութիւն ու ցնծութիւն տոնի առթիվ: Այժմ իսկ՝ կարգալիս մարդ գրավվում է, հաճույք ստանում նրա վսեմ, ազնիւ ու պայծառ խոսքից, ո՛ր մնաց ալի զնդակազմ սղոմարդի կենդանի բնմասացութիւնը լսող հովատացյալներն այն դարում: Բայց ներսեւ Լամբրոնացին հետամտու է ոչ միայն ազգելու և հովատը մեծացնելու, այլև կրոնի ուսում տալու: Այս նկատմամբ էլ նրա ճառը շատ հարուստ է, թովանդակալից: Եվ նա սովորեցնում է քրիստոնեական սկրոնագիտութիւնը: Հաճախ Ս. Գրքի բառերով ու խոսքերով ոչ միայն պատմելով, նկարագրելով, ուրիշներին խոսեցնելով, այլև նույնիսկ մեկնելով, բայց այնպէս նուրբ ու թեթեւ հղանակով, որ լի զգացվում, թե մեկնում է:

Լամբրոնացու այս նրկի վրա դիտմամբ ավելի երկար կանգ առանք,

զիցա մեծ քանակութիւն մեկն է, միանգամայն և մի պայծառ որոնակ է, թե ինչպե՞ս այս գրական տեսակը մնացել է նորայն Հին կրօնական ներքոգլխանը, քայլց փոխվել է ձևի և ամբողջ հորինվածքի գեղեցկութիւնը, Այդ քիւսմէ է ոչ միայն հնդկականի տաղանդից, այլև ընդհանուր նորոգիչ ոգուց։ Ներքոգլխանի կամ ճառի այս գեղագրան վերածումն էլ մի արտահայտութիւն է նոր մտավոր հոսանքի. ո՞ր կամբոնացու այս ճառը, և ո՞ր նման թեմաներով Հին ճառերը։

Յ. Ուրիշ աշխատություններ։—Ինչպե՞ս վերևում ասվեց, մեր այս հնդկականը շատ վաղ հասակից սկսել է շարադրել և անդու լանքերով գրել է բազմաթիվ երկեր⁷⁰, Նրանից մնացել են, բացի արդեն հիշվածներին՝ նաև ուրիշ թղթեր ու ճառեր, շատ մեկնութիւններ, այլև լատիներ գրվածքներ—շարականներ և ուրիշներ, որոնք մեծ մասամբ կրօնական քովանդակութիւն ունեն, Նրա հորինած հոգևոր նորոգիչ լուսին քանաստեղծական արժեք. համարժեքան շարականներին մեջ, օրինակ, նորայն քրիստոնէական զորացարանութիւնն է հնդկավում սատև և անպաճույճ. քայլց դժվար թե ամբողջ կանոնը⁷¹ մեր այս հնդկականի գործը լինի։ Փոքր ինչ եռանդուն և իմաստային է Ջատկի կանոնի հայտնի օրհնութիւնը⁷².

Այսօր յարեալ ի մեռնլոց
Փնտայն անմա՛հ և երկնաւոր,
Ժեզ տւեալք ի յերկրայինս,
Հա՛րսն ի յերկրէ եկեղեցի.
Օրհնեսա՛ ի ծայն ցընծութեան
Ջատուած թո, Մի՞տն!
Այսօր անճառ լույսն ի լուսոյ
Լուսաւորեաց զմանկունըս թո...
Այսօր խաւարն անդիտութեան
Հալածեցաւ երբեակ լուսովն,
Եւ քեզ ծագեաց լույս գիտութեան...

Ն. կամբոնացու ամենամեծն ասանավոր գրվածքն է՝ Եօվեմսո Ներքոգլխան պատմագրական թանիւ յաղագս վարուց մեծի Հայրապետին տեսուն Ներսիսի Նշանցույ հայոց կաթողիկոսիս⁷³, Այս 937 տողից կազմված լատիներ հորինված է Ներսես Շնորհալու հետեոգլխամբ ութնականի տողերով. հանգերը փոխվում են մեծ հատվածներին հետո։ Դա մի պոեմա, մի քերթված է բառիս սկզբնական նշանակութիւնը իրեն արվեստով արված մի գործ, կամ ինչպե՞ս ընդհանրապես կոչվում են

70 Բազմաթիվ մեկնութիւններ, երեք թուղթ, Հինդ ճառ և այլն. Տե՛ս Գ. Ջաթընու-նեյան, Հայկ. Հին գրութիւն, էջ 854—860.

71 Եւտրական, Նշմանքին, 1881, էջ Գ. 355 և հտե.

72 Անգ, էջ 288.

73 Տպագրված է ի Եթաղթ ընդհանրական... Ներսիսի Շնորհալուս, Էքմեթին, 1885, էջ 467—467.

ոտանաւորով հորինված երկերը, մանաւանդ երբ մի որոշ երկայնութ-
յուն ունին և վիպում են որեւէ դէպք: Այդտեղ պատմվում է **Շնորհալու**
կենսագրութեան մասին: Բայց դա մի ցնտրական, լիբիկական քերթված
է, քանի որ դրա մէջ արտահայտված են նաև հեղինակի զգացումները
առ **Շնորհալին**. նա ոչ միայն պատմում է, այլև ջգովում, ներքուքում է:
Այսպես լինելով հանդերձ՝ նրա այս մեծ երկը, ինքնան էլ ոտանաւորով
է հորինված, լուսնի առանձին գրական արժեք, որովհետև ըի արտա-
հայտված բանաստեղծական ներշնչումով, կենդանի պատկերավորու-
թյամբ: Որքան նա շերմ, բուն մի հոնտոր է հանդիսանում իր ճառերի
մէջ, այնքան պաղ ու թույլ է իրեն քերթող: Գուցե այդպես է մասամբ և
այն պատճառով, որ նա անվարժ է եղել ոտանաւորներ հյուսելու:

...Զմինն յընտրելոց ալօք տեսի,
Գովել բանիւրս բազմացի.
Այլ դի անվարժ ի լսի տաղի,
Ոտանաւոր տառից կարգի,
Փերթողական մեծ արհեստի
Չեղեալ ներհուն ըստ արժանի:

Եվ այսպես վերացական մտածութեամբ է հորինել նա այս պո-
զիտոն ընդհանրապես: Չափազանց ներթուղում, մեծացնում է **Շնորհա-**
լուն, բնութագրելով նրան՝ իբրև տեր բազում ու բազմազան բարեմաս-
նութիւնների. այդ ժամանակ մեկ-մեկ նա դիմում է սովորական ձևերի:

Բանիքն աղբիւր յորդ հոսեցաւ,
Միծաղապէս ծաւալեցաւ,
Մինչ ընդ աշխարհըս ծովացաւ,
Եւ արուցիւ մարդկան զըռտաւ:

ձեռնալ տալերը սակավաթիւ գեղեցիկներքն են.

Սազկեալ աղինք մեր փրթթեցան,
Երանց երանց գունով ներկան,
Ի նոր փարունս ուրախացան,
Եքեզ փառք հախ փայլեցան.
Մարգագծեմինք և խաղ ջընծան,
Յորոց անուշ հոտ բուրեցան...

Նպատակն եղել է իբրև **բնութագր** և բաշակերտ գովելով պատմել
Շնորհալու մասին, նրա վարքն ու արարքը:

Շարժեալ ստիպէ հարկ տերունի
Ըզշարադրումն իմբս բանի՝

Նիւթ գողենտի տալ յապագանի
Հօրն որ արժան վարուց պատուի:

Այսպես է սկսում նա իր երկը, և քիչ հետո գրում է.

Քանզի բազում հողի բաղձայ
Տնդեկանալ պայս յարակայ,
Անյազ անուանըն սէր տենայ
Տարաշխարհիկ հօտըն նորա.
Քաղժեալ ի սուգ նըստեալ ողորայ,
Միիթարիլ կարօտանայ,
Յորմէ երբէք ոչ թուլանայ,
Թէ նըշանակ վարուց շմեա.
Եւ թէ պատմօղ ոք յառաջ գայ
Սիրողն ի քանս ուրախանայ...

Ներսէս Լամբրոնացին, ինչպես ինքը գրում է.

Արձան կանգնեալ սրբոյն յապագայ:

Եվ իսկապես, նրա այդ ցերթվածը մի «արձան» է, որ ապագա սերունդներին հիշեցրել է Շեքսպիրու կյանքն ու գրական գործունեությունը, Դա հեղինակի իրեն համար էլ մի հիշատակ է այն մասին, որ նա մեր գրականութիւն մէջ սկիզբն է դրել մի նոր գրական տեսակի—**առաջնավորով կենսագրութեան**: Լամբրոնացուն այս մասին հետեւել է իր աշակերտը, «նաչաւտուր անունով մեկը, որ իր... վարդապետի վրա գեղեցիկ ու ցերթողարան ողբ է շարագրել ոտանավոր»⁷⁴, Բայց մեզ հայտնի չէ, թե այդ մի կենսագրական⁷⁵ է արդյոք, թե՞ մի դամբանական ողբ, ինչպես է Դավթակ Գերթոյի ցերթվածը ?—րդ դարում:

4. **Թարգմանություններ**:—Ներսէս Լամբրոնացին հմուտ է եղել ասար լեզուներին, նրան են հանձնել թարգմանել պաշտոնական գրություններն ու նամակները, այլև ռԳիր կարգաց լատին եկեղեցւոյն և ռՈրհնութիւն թագաւորոյն⁷⁶, Շատ նշանակալից են օրենքներին հավաքումն ու թարգմանությունները, որ են՝ **Աւրէնք յաղթող թագաւորաց քրիստոնէից**⁷⁷ Կոստանդինոսին, **Թէոդոսի և Լեոնի**, **Սեւմառոս ժողովումն օրենաց վերստին**, **Աւրէնք և դիրք ի ձեռն Մովսիսի՝ յելից զրոց**, **այլև ռՈրինագիրք մի քաղաքի Ղևտական զրոց**⁷⁸, Բերենք **այստեղ թարգմանելի հետաքրքիր հիշատակարանից հետևյալը**.

«Այս քաջալուրդ արինադրութիւնք տառապեալ եպիսկոպոս Տարսոսի թարգմանեցի ի ձերացեալ հիւնացի մատենէ, թուին **Ոհն** [—645 +

74 Գ. Ձաբրեանցյալ, Հայկ. Հին գրութիւն, էջ 862, «Ողբք թ տէր Ներսէս արհիմ Տարսոսի, ասացեալ նաչաւտուր պաշտօնէի, նորում աշակերտին»:

75 Գ. Ձաբրեանցյալ, Մատենագրական Հայկական թարգմանութեանց նախնական. Վենետիկ, 1888, էջ 560 և հետև.

76 Անդ, էջ 750—755:

+ 551 = 1196]... Յոմս քահանայապետութեանն Հայոց Գրիգորի⁷⁷, որ
 երրորդ էր Նախնեացն իւրոց ի Հռոմկայն, լաջորդ արթուլն, Թովն Ութ
 [= 642 + 551 = 1193], յոթ և տասնեորդ ամի նորին Հայրապետութեան,
 խնդիր եղև առ Նոյն արարականն ի քաղաքաց և ի գաւառաց բնակչաց՝
 Գաղափական արեւելացն. զի ուր Իսմայելացւոցն էին իշխանք ի քաղաքս
 և գաւառաք՝ զգառ Հայաստանեայցս ոչ դատէին. այլ զխնդրոցն իրա-
 ւանց՝ առ իւրեանց արեւն ատաճէին. զի այս էր ի նախադրութի Մենքեացն
 հրամանն առ դատաւորս քաղաքաց՝ յիւրեանց յօրինացն դատ Թողու
 զնոսին. Եւ եկնալ ոսոխս յեկեղեցին՝ հարցանէին արեւն ի քահանայից
 և ի քահանայապետաց. ոչ ունէին գիրս, որով ընտրեցն զիրարունս.
 զոր և այլոց ազգաց տնտանէին՝ քրիստոնէից և մարմանաց, այսինքն՝
 հռոմայեցոց, հնչնացոց, ասորոց, եփպտացոց, արաբացոց, յարոց
 և այժմու իշխողացս Թուրքաց, Ի խնդիր եկին ապա առ Հայրապետս ի
 Հայաստանայց՝ արթունք կղերկոց և աշխարհականք, խնթկալ
 յայլոց ազգաց և նախանձնալք զարարութեան. Եւ խուզեալ ընդ նա մեր՝
 յարկնդս գրոց կաթողիկոսարանին՝ ոչ գտաք արեւն, իսկ միայն զգա-
 նականս, որ ի սուրբ հարցն ժողովելոց էր գրեալ. և որ ի նոյն յարե-
 ցաւ ի նոցանէ կանոնս զգուլաւորս եկեղեցւոյ. Իսկ Գաղափ արեւն ոչ
 գտաւ ի մէջ Հայոց, ոչ յեկեղեցիս և ոչ առ իշխանս. Եւ կարի վշտացնալ
 հայրապետն՝ խնդիր ատնէր առ այլ ազգս և պատահալ անց յասորոց
 Թէոդոս անուն կիրթ յիմաստութեան քահանայ, յայտնեաց տեսնալ զի
 զայլ առ ինքն այս նամատաւ արքեպիսկոպոս, և հրաման տեսալ ինձ
 տառապանալ իւր ձեռնասուն որդւոյ Ներսէսի՝ յնդաշնոցաւ ի հայս, նմին
 յիշատակ բարի, և զկնի եկելոցդ ուղղութիւն ընթացից. Յետ որոյ ապա
 և ի հնչնացոց արարի Թարգմանութիւն մովսիսական արքեպիսկոպոս
 և ի նոյն և Նոստանդեալ արքեպիսկոպոս, ի նմանէ Թարգմանեցի և զգնեաւա-
 կան արեւելոց. և ընծայեցի որոց սիրենն վարիլ սովաւ և հաճոյ գտանիլ
 աստուծոյ, և կատարարիչ քաղաքաց և գաւառաց:

Ներսէս Կատարեացին այս հիշատակարանի մէջ յատ լավ քննարկել
 է, թե ժամանակի ի՞նչպիսի կարիքից են ծագել քաղաքական օրենքներ
 մոզովմանեալք. որ միել այդ յին եզել հայերի մէջ: Բայց այդ միտադա-
 մայն և կրիկիկայի հայ պնտութիւնս պահանջն էր և վերանորոթան շրջա-
 նի նոր մտավոր հոսանքի արդյունքը: Դիշտ նույն ժամանակներում, մի
 ութ-ինը տարի առաջ, 1184 թ. սկսել էր կազմել և Մխիթար Գոշն իր
 «Դատաստանագիրքը» հյուսիս-արևելյան Հայաստանում՝ և այս ոչ թե
 մահմեդականների ազդեցութեամբ, այլ օրինագիրք ունենալու պահանջից:
 Բայց, ինչպես երևում է, Մխիթար Գոշի գործը դեռ հայտնի և տարած-
 ված չի եղել, գոցն և դեռ չավարտված:

⁷⁷ Գրիգոր Տգա կաթողիկոսն է:

Ա. Ի. Ա. ԿԱԳԼՈՒԹՅՈՒՆ

ՄԻԽԹԱՐ ԳՈՇ

1. Հյուսիս-արևելքյան Հայաստանի ազատութիւն մահմեդական բռնատիրութիւնից:— Մենչուկյան տերութեան մէջ 11-րդ դարի վերջերից սկսելու էին ներքին խռովութիւններ. առաջ են դալիս կենտրոնից անջատված անկախ իշխանութիւններ թե՛ Հայաստանում և թե՛ այլ երկրներում: Վրաստանը, որ համեմատաբար զերծ էր մնացել թուրքերի դործած մեծ ավերմունքներից, կարողանում է շուտով դորանալ. նրա թագավորներն օգտվելով թշնամիների ներքին դժտութիւններից՝ իրենց երկիրը մտցրում են նրանց բռնակալութիւնից:

Միաժամանակ նրանք սկսում են գրավել Հայաստանի հյուսիս-արևմտյան կողմերը, ուր զեռ կալին հայ անկախ իշխանութիւնները, բայց այլազգիներն դեմ մտքատումով շատ թուլացած: Այդպիսիներից էր Լոռի քաղաքի և շրջակա գավառի Բագրատունի տերութիւնը, կամ Զորազնտի թագավորութիւնը, որ Անու անկումից հետո մի առժամանակ սկսել էր առանձին նշանակութիւն ստանալ: Նա ընդարձակելով իր սահմանները դեպի հին Աղվանքի կողմերը՝ կոչվում էր նաև Աղվանից թագավորութիւն: Բայց Աղվանքն անունն այն ժամանակ լուկ աշխարհագրական էր, բնակիչները բոլորը հայ էին և թագավորութիւնն ու երկիրը հայկական էր, ինչպես և Աղվանից կաթողիկոսութիւնը, որ վաղուց ի վեր մի հայկական կաթողիկոսութիւն էր, միայն անունը պահում էր հինը:

Եկիրիկէ Բագրատունի, որ ի Լոռէ քաղաքի, — գրում է Կիրակոս Գանձակեցին, — գամենայն ժամանակս իւր կացեալ ընդդէմ Վրաց, ի հաստատութեան պահէր զհայրենիս իւր. և յետ մահուան նորա որդիք իւր՝ դաւնալը ի Վրաց, ելեալք ի տանէ հայրենեաց գնացին ի Պարսկսա:

1 «Աղվանք» կոչվում էր Հայոց աշխարհի մի մասը: Դավթ Մենչուկյան թագավորը պատմիքում է Աղվանից կաթողիկոսին, թե՛ «Եթզովձա զամենայն եզրեկոյսսուսուս Լաւոց աշխարհից որ յնդուանն են...»: «Եւր Բարսեղ յարուցեալ զնայր յաշխարհն Հայոց ի յԱղուաք գաւառի՝ ի Լոռէ քաղաք առ թագաւորն Հայոց Կիրիկէ՝ օրդի Անհաղիսին Դաւթիս: Մ. Ուռնայեցի, ժամանակագրութիւն, էջ 86 և հետև.:

Նրանք տիրում են Տավուշին, Մաննարեղդին և այլ տեղերի՝ Ձորագետի թագավորության անկումը լինում է 1112 թվականին Վրաց թագավոր Դավիթ Վերաշինողի ձեռքով, Այս թագավորի օրով, սակայն, շարունակում են ծաղկած վիճակի մեջ մնալ հայկական վանքերը, ինչպես՝ Հաղբաբեր, որ տեղանք Հովհաննես (Յովհաննէս) Սարկավազ վարդապետի օրով։ Նաև նրա հաջորդները, ձգտելով Հայաստանի կողմնում ընդարձակելու իրենց տիրությունը, աշխատում էին հենվել հայերի օգնության վրա։ Հայերին գրավելու համար նրանք նվերներ էին տալիս հայոց վանքերին, նոր տիրած հայկական գավառներին կառավարիչներ նշանակում էին հայերից։ Ուստի և շատ հայ ազատներ, հովանավորվելով նրանցից, մտնում էին վրացական զորքի մեջ, աշխատելով ընդհանուր ուժերով ազատել Հայաստանը մահմեդական լծից։ Դավիթ Վերաշինողը փորձում է տիրել նաև Ալյաբատին. նա 1124 թ. նվաճում է Անին, բայց երկու տարի հետո այդ քաղաքն անցնում է նորից Ենդզառանների ձեռքը։ Գեորգի Գ. թագավորն (1156—1184) էլ 1161 թ. տիրում է Անիին, բայց չի կարողանում երկար պահել, 1165 թ. այդ քաղաքը նորից նվաճում են թուրքերը։ Միայն 1174 թ. նա կրկին առնում է Անին, որ այս անգամ մնում է վրացիների ձեռին։

Գեորգի Գ. թագավորի օրով հանդես է գալիս Ջաջարյան կամ Երկայնաբաղուկն (վրացերեն՝ «Երաբագրին») անունով հայտնի հայ իշխանական տոհմը, որ հաստատվելով Ձորագետում՝ խնամախոջ էր այնտեղի Բագրատունի թագավորների հետ և որի սերունդներն իրենց արձանագրություններին մեջ իրենց համարում էին ծագումով Բագրատունի՝ այսպիսով Բագրատունիան։ Այդ տոհմից Սարգիս անունով մեկը, իրեն ժամանակին հայտնի մի պաշտոնյա, 1161 թ. դառնում է Անու կառավարիչ, իսկ 1174-ին՝ կառավարչի տեղակալ։ Նա նշանավոր է դառնում ավելի ևս Քամար թագուհու (1184—1210 թթ.) օրով։ Լոռին և Անի քաղաքը թագուհուց նվիրվում են Ջաջարյաններին ի ժառանգական սեփականություն և Սարգիսը կարգվում է Վրաց թագավորության ամիր-սպասալար, այսինքն՝ սպարապետ։ Մի տարի հետո մեռնում է։

Սարգիս զորիները վայելում են Քամար թագուհու շնորհը և կատարում Վրաստանում ամենաքարծր պաշտոնները. նրանցից Ջաջարեն դառնում է իր հորից հետո՝ ամիր-սպասալար, իսկ Իվանեն՝ աթաբեկ, այսինքն հաջորապես։ Այդ երկու իշխաններն ևս շատ նշանավոր են հանդիսանում և մեծացնում Քամարի թագավորության սահմաններն ու փառքը։

Ջաջարյանների մեծ աչքողությունները տեղի էին ունենում այն ժամանակ, երբ Լևոն Բ-ն ընդարձակել էր իր երկրի սահմանները՝ Կիլիկիա-

2 Կ. Գեմակեղի. Պատմաթիւն Հայոց, էջ 145։

3 Ենդզառան, էջմիածնի հայագիտական ժողովուրդ, Վարդապետ, 1913, էջ 73, Ենդեզարյանից, Ջաջարյան (երկայնաբաղուկ) ասված ծագումը... էջ 88—89։

յից դուրս նվաճումներ անելով և ձգտելով դնպի Մեծ Հայաստան, Թվում էր, թե Զաքարյաններն ու Լևոն Թազավորը պիտի աշողին միմյանց ձեռք մեկնել։ Սրկու եղբայրները հարձակվում են և էուրյան (Յոթյան) իշխանուության վրա, պաշարում Խլաթ քաղաքը, բայց իմանեն անզգուշության հետևանքով դերի է ընկնում, և ստիպված են լինում հաշտվել և քարեկամության դաշինք կռել Իվանեի գուսարի կնության տալով էուրյան մելիքներին։ Զաքարյանների առաջադադարով կանգ է առնում Հայաստանի հարավ-արևմտյան կողմում Եգիպտոսի էուրյան հզոր տերության առաջ։ Դրա սրտխանակ Զաքարեն իր արշավանքը մինչև իր մահը ջարուհակում է դնպի Ասորպատականի կողմերը։

Այսպես Վրաստանի Թազավորները շնորհիվ իրենց խնրոք քաղաքականության՝ զրավելով հայերին՝ վրացի և հայ միացյալ զորքերով, հետո և հալ զորավանդների ձեռով կարողանում են նվաճել մեծ Հայաստանից մի մեծ երկրամաս մինչև Ասորպատական և իրենց գերիշխանության տակ ուզակ էինել Թաթարների ներխուժումը։ Եվ վերջապես հայ ժողովրդի մի սավար մասն ազատվում է մահմեդականների բռնատիրությունից և ենթարկվում է բարեկամ քրիստոնյա տերության։

Այդ բարեկամությունն արտահայտվում էր այնու, որ ազատագրված Հայաստանի իսկական կառավարիչները աղոթիկ Զաքարյաններն էին Վրաց Թազավորի անվանական գերիշխանության տակ։ Թե ինչպիսի կախում են ունեցել Զաքարյանները Վրաց Թազավորներից, այդ դեռ լիովին պարզված չէ։ Բայց նրանք եղել են Հայաստանի տերերը, ամեն կարգադրություններ անելու անսահման իրավունքով։ Նրանք անվանում էին իրենց ձեռին գտնված երկիրը թթազավորություն, թինքնակալ պետություն, իսկ իրենց՝ նաև թթազավոր, զառհինջահ, Կիլիկիայի հայ եկեղեցականությունն ևս Զաքարին ուղղած իր թղթի մեջ նրան կոչում է ամեծ ապարապետ և զառհալ արևելեան կողմանցն։ Նրանք Հայաստանի գավառները ոչ միայն իրենց էին սեփականում, այլև տալիս էին իրենց զինակից հայ ազնվական տոհմերին, որոնք իբրև վասալներ ենթարկվում էին Զաքարյաններին և անվանում էին նրանց իրենց ապատրոնք, այսինքն թտերք։ Այսպիսով վերականգնվում է և ուժեղանում Հայաստանում ֆեոդալական (ազնվական) հասարակական-պետական կառուցվածքն իրեն հասուկ հիերարխական կազմով ու կախումով միմյանցից աստիճանաբար։

Իշխանության կենտրոնն էր Անի քաղաքը, որ Թուրքերի տերության ժամանակ էլ պահել էր իր առևտրական մեծ քաղաքի դերը։ Կալին և ուրիշ առևտրական կենտրոններ։ Սրբ հայ իշխանություններ են կազմվում, աղելի ևս զարգանում է առևտուրը նաև Արևմուտքի հետ Կիլիկիայի միջոցով։ Բարձրանում են վաճառականները, որոնք ունեն և ոչ միայն զրամական մեծ հարստություն, այլև գնումներ անելով կամ վաշխառություն տիրանում էին մեծ կալվածների և անշարժ կալքերի։

4 Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 158։

Տնտեսական պարզացման հետևանքով առաջ է գալիս կուլտուրական բարգաւաճում և շինարարությունը քաղաքներում: Մազկում է նաև եկեղեցական շինարարությունը: ԵՇիննցյան բաղում վանորայք, որ ի վաղուց ժամանակէ անտի անբնալ էին ի հենիցն Խամայէլի,—գրում է Կիրակոս Գանձակնցի (էջ 155),—վերստին նորոգեցան եկեղեցիք... շինեցան և նոր վանորայք և եկեղեցիք, որ ի հնոցն ըն՝ էին լնալ վանքս: Վաճառականներն ու ֆեոդալները ոչ միայն աշխարհիկ շինքեր էին կառուցում, այլև նվերներ էին տալիս վանքերին ու եկեղեցիներին և ամեն կերպ նպաստում նրանց: Այս նդանակով նրանք միշտ էին գտնում իրենց կուտակած հարստութեան մի մասը գործադրելու:

Անել լի ուղիք, որ ինչպես Բագրատունիների շրջանում, նույնպես և այժմ հարստությունը տանում էր նաև դնպի ճոխ ու փարթամ կյանքի վախճությունը: Բայց ինչպես այն ժամանակ, նույնպես և Ջաքարյանների օրով սրված էր վախճող և աշխատավոր դասակարգների հարաբերությունը: Բուն արտադրող ժողովուրդը նեթակա էր անխնա կեղծմանն ու շահագործման: Այսպիսի սոցիալական հակասության հետևանքով բնականաբար սովում էին սոցիալական հարաբերությունները, և իրար դնձ կանգնած էին երկու տնտեսական հակառակ կողմերը: Նույն ֆեոդալական դրությունն ու դասակարգային ներհակությունն էր և արեւմտյան հայության մեջ ու Կիլիկիայում: Նահապարծովող աշխատավորության դրությունն ավելի ևս ծանր էր մահմեդականների իշխանության տակ և անցած ժողովրդի համար: Գրիգոր Տղան (1173—1193 թթ.) դեռ իր կաթողիկոսության առաջին տարիներում, ուրեմն Ջաքարյան և Ջրայրների իշխանությունից առաջ, միություն խնդրի առթիվ Գրիգոր Տոսեոպոլիտն ի Հաղբատ ուղղած թղթի մեջ՝ գրում է. «Յամենայն Հայոց ազգաց եկեղեցիքս որ յայդ կողմանքդ են, մանաւանդ թէ ի քոյոր սնոս՝ խաղաղութիւն, անդորրութիւն ձեզ է պարգնեալ ի վերուստ: Թագաւոր քրիստոսաւէք, և իշխանք բարեպաշտօնք, պարզեք զաւառաց և անդոց՝ հոգնոր և մարմնաւոր հանդերձ ազատութեամբ, և դուք կամաւ անգիտանայք և անտես առնէք զբնկումն ազգիս, և ստայոյզ պատճառօք հրաժարէք ի գլխոյս կոչմանէ... երբ դուք հրաժարէք, յառաջ զո՞վ կոչմեք. զկրքարատեանդ եթէ զկարենցիք, եթէ զՏաւրոնցիքն՝ որ նեղեալ և զգուեալ են ի հարկապահանջ բռնակալացն, և կարօտին միայն աւուրն պարենիս: Այսպիսի է նկարագրում Գրիգոր Տղան հայերի վիճակը մի կողմից մահմեդականների, մյուս կողմից վրացական իշխանության ներքո ֆեոդի Գ-ի օրով, երբ քա մենին արդեն առել էր: Նա քրիստոնյա տերության մեջ ապրող հայերի վիճակին հակադրում է տառապալիղ դրությունն այն հայերի, որոնք դեռ գտնվում էին մահմեդականների ձեռքին: Բայց հիշված Եղեղեղի և մարմնավոր ազատությունն ունեին միայն քրքրեպաշտոն իշ-

Ն Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչելու նամականի, «Պատասխանի թղթի» վարդապետին Գրիգորի Տաւրոնցայնէ, Վենետիկ. 1665, էջ 67 և հետո:

խաններն և հոգևորականներն ու վանականները՝ Սրանք էին իշխան-ներինց աստուծո՛ւ ապարդեք դաւառաց և անգոցաւ Իսկ աշխատավոր ժողովրդի տնտեսական վիճակը ծանր էր։ Այս մասին, ինչպէս սովորաբար, անուշադիր են պատմագիրները, բայց ոչ մեր այլ գրական հիշատակաբանները, առանձնապէս առականները, որ կտեսնենք հետո։

Որ իշխանները հովանավորում էին վանքերը, այդ միայն նրանց քարեպաշտութիւնից չէր բխում, այլև նրա համար էր, որ գիտութիւնը, ուսումն և դրականութիւնը, ինչպէս առաջ, հոգևորականներն էին մշակում գլխավորապէս վանքերում։ Սրենիք են հանդիսանում բազմաթիւ վարդապետներ, որոնց մէջ իր կյանքով, իր ուսուցչական և գրական գործունեությամբ փայլում է Մխիթարը, Գոշ (= քարհ, կարճամորուս) ավելի անունով։ Եւկայէս կոչէին զեա մականուամբ, քանզի հեղափոխ ենին այլիք նորա, բացառութեամբ է կիրական Գանձակցին (էջ 205)։

Նշանավոր վարդապետներին է և Հաղարծին վանքի առաջնորդ Խաչատուր Տարոնեցին՝ տգիտութեամբ հռչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստիւ։ Սա պայծառացոյց զսուրբ ուխտն՝ որում առաջնորդ էր ինքն, որ յառաջ քան զգալն նորա՝ ամայի էր և խամբացեալ։ Զսա պատուէր մեծապէս թաղաւորն Վրաց Գիօրպի, հայր Քամարին։ Եւ եկեղեցւոյն ձեռնադրովն իւրով ետ զերկուս գեղան, զԱրասաձոր և զՏանձուտն, և այգի մի ի Միջնաշինին... Սա երեք զխաղն ի կողմանս յարեկից, զանմարմին եղանակն ի ժարմին տեղ, գորտեալսն յիմաստեց, որ ցալն մամանակս լիւ էր սփռեալ ընդ աշխարհս։ Սա եկեալ գրեաց և ուսուց՝ բազմացաւ։ Ընկողք, կիրակոսը լի հիշում, թն Խաչատուր Տարոնեցին ո՛րտեղից էր եկել արևելք, ո՛րտեղից էր բերել երաժշտական խաղերը, և ո՛վքեր են եղել զբանս հնարողները։ Այդ ձայնանիշները շատ կիրառվում են հետագայում, քայք 18-րդ դարի վերջերից ի վեր մոսացութիւն են տրված, և այլևս հնարավոր չի եղել նրանց վերծանութիւնը, որով հայտնի կլինեն մեր հոգևոր երգերի հին եղանակները, որ խաղերով նշանակված են ձեռագրերի մէջ։ Խաչատուր Տարոնեցին եղել է նաև երգեցող և բանաստեղծ։ Նրա հորինածն է և թորհուրդ խորին, անհաս, անսկիզբն քառերով սկսված երգը, որ ասվում է պատարագի արարողութիւն սկզբում և շատ ծանոթ ու սիրված է եղել նաև իր վսեմ եղանակի համար։

2. Մխիթար Գոշի կեանագրությունը։—Այս ռեժիմ վարդապետի մասին կենսագրական տեղեկութիւններ հաղորդում է գլխավորապէս Կիրական Գանձակեցին⁷։ Նա Գանձակ քաղաքից էր։ Մեռողները նրան տվել են յուսումն Գրոց սրբոց։ Զափահաս դառնալով նա ձեռնադրվել է Կուսակրոն քահանա։ Տարիներ հետո ցանկանալով ավելի ռեժիմ լինել Գրոց սրբոց և առական խորոց՝ որ ի նոսա, աշակերտել է Հովհաննես (Յովհաննէս) Տավուշցի վարդապետին, որ իր գիտութիւնով երևելի է

8 Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 109 և հետև։

7 Անդ, էջ 195—205 և այլուր։

եղել այն ժամանակները և տեղեցտեղ շրջելով քարոզութիւն տրել: Սրա-
յինպէս և մի քանի ուրիշների մոտ սովորելուց հետո Մխիթարն ստանում է վարդապետական աստիճան: Բայց նա չի դաժկանանում իր առած ուսումով, այլ գնում է արևմտյան կողմը, Սև լիւռը, և չհայտնելով, թե ինքն արդեն վարդապետական պատիվ ունի, ուսանում է արևտեղի վարդապետներին մոտ և շատ օգտւում է նրանցից: Վերադարձին Մխիթարը կարին քաղաքում ծանոթանում է Քուրթ իշխանի հետ, որ այնտեղ էր ստարտուցեալ ի թաղաւորութենէ Վրացաւ: Նա շատ սիրում է Մխիթարին: Թե՛ նրր և քանի՜ տարի է ուսում առնում այս Գեղականիւր և գիտությամբ մեծիմաստ վարդապետը, այդ հայտնի չէ: Երբ վերադառնում է իր հայրենիքը,—ասում է Կիրակոս Գանձակեցին,—նրա գիտության համարվք տարածվում է ամեն կողմ, և շատերը ժողովւում են նրան աշակերտելու: Բայց հետո նեղվելով մահճականներէ՝ գնում է Խաչենի գավառը: Հաթիբի իշխան Վախթանգի և նրա եղբայրների մոտ, որոնք մեծ պատ-
վով ընդունում են նրան:

Քուրթ իշխանը թաւար թագուհու օրով վերադառնում է իր հայրենի-
քայխարհն Կաչենոյ և Մահկանաքերոյ: Թագուհին շատ մեծայրում է նրան՝ տալով նրան նրա հայրենի տեղերը, այլև ուրիշ շատերը: Այս որ իմանում է Մխիթարը, հիշելով իր հին բարեկամությունն այն իշխանի հետ՝ Հաթիբից գնում է նրա մոտ և բնակվում է Գետիկ վանքում, որ Կաչենո գավառում էր, Աղստեղ գետի վրա, գետի վրա կողմում (ոչ հեռու Գիւլիշանից): Վանքի առաջնորդը, Սարկավագ անունով, որ Մխիթարի աշակերտներից էր, ուրախությամբ ընդունում է նրան: Վարդապետն այնտեղ մնում է երկար ժամանակ:

Մաստիկ երկրաշարժից քանդվում է Գետիկ վանքը: Միաբանները Մխիթարի խորհրդով լին ցրվում, այլ Իվանե Աթաբեկից խնդրում են մի բարեկամայնույն տեղ, որ անվանվում էր Տանձուտա ձոր, և այնտեղ հիմ-
նում են մի նոր վանք—սնոր Գետիկ: Նախ շինում են երկու փոքր եկե-
ղիցի, հետո 1181 թ. սկսում են շինել և հինգ տարուս ավարտում են մի
ամենամիասն եկեղեցի կոփածոյ վիմօք և զեղեցկաշէն արուեստի, դմբե-
թայուրկ երկնանման, սխրայի տեսողացա, Եինում են և եկեղեցու գավիթ
սգեղապարզ կոփածոյ վիմօք: Վանքի շինարարությանն օգնում են Հա-
թիբի տները՝ Վախթանգ Խաչենեցին և իր եղբայրները, Քուրթ իշխանի
որդիները և դուստրը՝ Արզու Խաթուն, որ Հաթիբեցի Վախթանգի կինն
էր: Ետ օգնում են նաև Զաքարեն ու Իվանեն, որոնք Քուրթ իշխանի
գնորդներն էին: Միանգի նոքա ունէին գիշխանութիւն դաւադին, և
սուրբ վարդապետն (Մխիթար) լուր տրեցին. քանզի Զաքարէ խոսատ
վանութեամբ որդի էր նրա հոգնոր [ուրիշ տեղ, էջ 158. «էր հայր խոս-
տովանութեան եմա»]: Եւ ընծայեցին եկեղեցւոյն սահման շրադարձով
լինէի ի լեռան, և բով մի յԱրասաձոր և զԶօրձոր ի նահանգին Քչնոյ և
զԱշաւա ի դուրս վանացն: Եինում են մոտիկում և երկու գլուղ, այլև
ուրիշ շէնքեր: Այսպես Քուրթ իշխանի մերձավորներն առանձնապէս՝ հո-

գում են Մխիթար Գառի վանքի համար, նրա դուստր Արզուն ոչ միայն շատ օժանդակում է շինութեանը, այլև, ասում է Կիրակոս Գանձակեցին, «արար և վարագործ գեղեցիկ՝ դատեօց իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց, ներկեալ պէսպէս և զանազան, գործ քանդակահրապ և նկարեալ պատկերոց, հշգրտադոյն հանուածովք, տնօրինականօք փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն...»։ Նա նույնն անում է և ուրիշ եկեղեցիների ու վանքերի համար։ Այսպես, իշխանների հովանավորութեամբ զարգանում են վանքերը—այն ժամանակների կուլտուրական վայրերը։

Ինչպես վերևում ասվեց, Մխիթարի գիտնականութեան համբաժը մեծ էր. նրա մոտ հավաքվում էին բազմաթիվ աշակերտներ զանազան կողմներից. ամենքը փափագում էին տեսնել նրան և սովորել նրանից։ Ինչպես ինքը Մխիթարը վարվել էր մի ժամանակ, շատ վարդապետներ ծածկում էին իրենց աստիճանը և աշակերտելով նրա մօտ՝ նորից ստանում էին վարդապետելու իրավունք։ Նրա աշակերտներից ոչ սակավներ հետագայում հայտնի են լինում իբրև վարդապետներ։ Նա մեծ հարգանք էր վայելում ոչ միայն իր աշակերտներից, այլև երկրի իշխողներից և եկեղեցականութունից։ Նա հնդիսակավոր էր շատ խնդիրների մեջ։ Սրբապատարադի համար շարժական սեղան ունենալու խնդրի առթիվ Ջաքարեն եկեղեցականներին ժողով է գումարում Անիում, և Մխիթարը հիվանդութեան պատճառով բացակայում է, եկեղեցականներն ասում են. «Ահհաք է մեզ առանց մեծ վարդապետին առնել զայդ», այսինքն՝ ընդունել շարժական սեղանը, իսկ երբ Մխիթարին թախանձելով բերում են, Ջաքարեն գիմալեղելով նրան, ասում է. «տրովհետեւ եկիր դու, ինձ ոչինչ է փոքր զեօցանէմ»։ Նա Մխիթարին ավելի քարձր է դասում, քան եկեղեցականների համապատասխան Զնայելով դրան՝ նա չի մեծամտում, և մարդահասութեան չի անում. նա րնավորութեամբ համարժեք է և առանց քաշվելու մեղադիր է չինում Ջաքարին, որ իշխանաբար է դործում եկեղեցական խեղճների մեջ։ Թայց և նա հոգացող է իր ազգի համար. պատրաստ է որոշ կրոնական ծեսերի մեջ զինող լինելու, միայն թե ազգային կուրաստ չլինի։ Նա քարի է և ներդամիտ իրեն մեղադրողների վերաբերմամբ և Ջաքարին մաս միջնորդում և ազատում է շատերին, որ զորավարն ուզում էր իրենց տեղելից վտարել։

Սվ վայսպես շարունակ աշխատելով և ուսուցանելով՝ նա 1213 թ. վախճանվում է, իր աշակերտներով ու միաբաններով շրջապատված և թաղվում է իր շինած վանքում։ Նրա ծննդյան թվականը հայտնի չէ։ Նա մեռել է հասնելով 81 իւրին ծերութենէն, ժալնորքով և լի աւուրքքով։ Եթե այսպիսի ծերութեան է 80—85 տարեկան հասակը, ապա նա ծնված պիտի լինի շուրջ 1130 թվականին։ Այս արեւելյան մեծ վարդապետը, ուրեմն, ժամանակակից է ներսիս Ենորհալուն և ներսիս Լամբրոնացուն։

* Կ. Գանձակեցի. Պատմութիւն Հայոց, էջ 157—166։

և ինչպես սրանք զրականութիւն մեջ փախուցնեն և արեւմտեան հայութեան, եւրոպեան և Միտիթար Գոշին իր վարդապետական ու գրական գործունեութիւնով արտացոլումն է հյուսիս-արեւելեան հայութեան վիճակի 12-րդ դարում:

8. «Եւստաստամագիրք Հայոց»:- Միտիթարի կենսագրութեան վերջում կիրակոսը գրում է, թէ «Եմթող նա յիշատակ է արձան գերեզմանի գիրք մտախորհս յօգուտ ուսումնասիրաց: Եվ նա հիշատակում է հետեւյալները՝ «Համաբոս մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայի», «Սուղ ինչ կանոնք», թէ ինչպես ն ինչպիսի կարգով պետք է պատարագ անել, «Գիրք մի Ողբք ի վերայ քեութեանն» ի դիմաց Աղամայ առ որդիս նորա, «և ի դիմաց Եւայի առ դասերս նորա», «Գիրք մի լայտարարութիւն ուղղափառութեան հաստոյ ընդէմ ամենայն հերձուածողաց» ի խնդրոյ մեծ զորավարին Ջաքարէի և եղբոր իւրոյ, և «Թուղթք խրատականք»: Կիրակոսի հիշածներէն հետաքրքիր կլինեն «Ողբքը», բայց այս դեռ հայտարարված և ապագրված չէ: Զեռագրերի մէջ նրա անունով կան և ուրիշ հրկներ, որոնցից ապագրված են «Աղոթքնեմ», «Առակք» և «Եւստաստամագիրք Հայոց»⁹: Վերջին հրկուսը Միտիթար Գոշի ամենակարեւոր գրական գործերն են, և այդ հրկուսն ևս ժամանակի արտահայտութիւնն են:

Հայոց հին կյանքը մինչև 12-րդ դարը կամ 11-րդ դարի վերջերը առաջ չի քերել որեւէ աշխարհիկ իրաւագրական աշխատութիւն. եղել են միայն եկեղեցական կանոնները: Սրանցով և սովորութիւնքով աշխատեցական դիրքերով բազմականացել են և աշխարհիկ ֆեոդալները, մասնավորապէս որ, ինչպես հայտնի է, նրանք ևս մասնակցում էին եկեղեցական կանոնադիր ժողովներին: Աշխարհիկ օրենսգրքիւն լքուցութեւն բացատրովում է այնու, որ մեր գրավոր գայրութեան սկզբից ի վեր շատ դարեր զոյւթուան չի ունեցել ազգային ինքնուրույն պետութիւն: Բայց զարմանալի է, որ Ռադրատուեայց Թագավորութեան օրով ևս, գոնե հարուստալա խաղաղ շինարարութեան դարում, չի զգացվել գրավոր օրենքների պահանջ, և առաջ չի եկել հայկական որեւէ օրենսդիրք: Այս բացատրվում է այնու, որ շատ վաղ վերջ տրվեց ընդհանուր հայկական պետութեանը, և կազմվեցին մի շարք մանր, իրարուց անջատ տեղութիւններ, որոնք չէին կարող ընդհանուր օրենսդրութիւն հրատարակել: Ապա եկեղեցին, հոգեւոր իշխանութիւնը, շատ զորեղ էր իր ազդեցութեամբ նրանց վրա. ուստի շարունակում էին եկեղեցական կանոններով բազմականալ: Անիի Թագավորութեան վերջին տասնամյակներում դեռ նոր պիտի հաստատուար սեփական ազգային օրենքների պահանջը, բայց վրա հասավ հայկական սօցիալ-քաղաքական կյանքի քայքայումը, երբ ալլան միւրոց լկար ալգ մասին խորհնու:

⁹ Միտիթար Գոշ, Եւստաստամագիրք Հայոց. Իրատարական հետազոտութիւնք հանդիւր մանթագմեմքը Վահան Ժ. Վարդապետի Բառտամանք, Վարդապետ, 1880, բարձր զննարտութեան արժանի մի հրատարակութիւն, ընդգրկում քննադատականութեմքը (1-180 էջ), բազմաթիւ ծանօթութեաններով և ձեռագրական ալլ ընթերցմանեւր:

Այդպիսի աշխատութեան առաջին փորձը եղել է Ալաւկա որդի Դավթի ձեռով. նրա «Կանոնները» կամ «Կանոնական օրինադրութիւնները» արտահայտութիւն էին Հայտնի-արեւելյան Հայկական զաւթանների առաջին բարգաւաճմանը վրաց թագավորների հովանավորութեան ներքո: Այդ դրութիւն, ինչպէս տեսանք, զնալով զարգանում է, և առաջանում է. Զաքարյանների իշխանութիւնը Հայոց երկրի մի ընդարձակ տարածութեան վրա. մյուս կողմից մեծանում և ուժեղանում է Հայկական պետութիւնը Կիլիկիայում: Երկու կողմերում էլ կազմվում են Հայկական ավատական իշխանութիւններ նման սոցիալ-քաղաքական պայմաններով. տնտեսապէս և կուլտուրապէս ժաղկում են նրանք, և ձգտում են ամբիջ ևս բարեկարգվելու: Եվ իհարկէ՛ միաժամանակ երկու կողմերում ևս զգացվում է անհրաժեշտ պահանջ աշխարհիկ որենքների: Պետք էր գրաւոր օրինադրքի միջոցով հիմնավորել և հաստատել ազգային պետութիւնների մէջ արդեն գոյութիւն ունեցող իրավական դրութիւնը: Արեւմուտքում այդ ինչպէս տեսել ենք, աշխատում է գլուխ բերել Ներսէս Լամբրոնացին Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղայի հրամանով, հետագայում Սմբատ Սպարապետը, իսկ Արեւելքում՝ Մխիթար Գոշը Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հարկադրանքով: Բայց այդ ոչ լոկ կաթողիկոսների մտքի ծնունդն էր, այլ ընդհանրապէս այն մասնաւոր, որոնք գտնվում էին մահմեդականների ձեռքին: Վերջիններիս դատավորները Հայերի դատը չէին անում, թալլ գլխորդսն իրաւանց՝ առ իւրեանց օրէնսն առաքէին, և, դրում է Ներսէս Լամբրոնացին: Այս էր ալլազգի իշխողների կարգը: Իսկ Հայերը լուենին դատաստանադիրք, որով ըստ օրենքների ինքն արդարադատութիւնը, և դրանից առաջանում էին դատի ժամանակ շահանդարական վերաբերմունքներ դատավորների կողմից: Ուստի՝ ներքը պահանջում էին ազգային պրավոր օրենքներ. և քանի որ այդ չկար, ետ դառնալով դիմում էին ալլազգիներին: Այս դատարանական ժտեր դրութիւնը եղել է Արեւմուտքում, և՛ Արեւելքում, և այս շատ խորը գիտակցում է Մխիթար Գոշը:

Երաւաստանադիրքն ունի մի «նախադրութիւն», որի առաջին գլխի վերնադիրն է. «Պատասխանի ալնացիկ, որ բամբասեն զմեզ ոչ ունել դատաստանս: Եվ ապա նա հենց սկզբից գրում է. «Շանդեթձալ գրել զգիրս պատաստանաց, յառաջ պատասխանի տողութ ևոցա, որք բամբասեն զօրէնսն Քրիստոսի, թէ դատաստան ոչ կայ ի նմա. քանզի բազումք են որ զովն զալլազգիս, որպէս թէ իրաւացի դատաստան ունին: Մխիթարը կրոնավորի ու մեկնաբանի վայել պատճառութեանութեամբ արդարացնում է դատաստանադիրք լուենալը, և հետո երկրորդ գլխի մէջ բացատրում է: Թե ի՛նչ պատճառից գրված՝ ինքը կամենում է զգրել դատաստանք: Առաջին պատճառն այն է, ասում է նա, որ ճշաւում անգամ լուաք բամբասանս յալլազգեաց և ի քրիստոնէից, թէ՛ քնսին ի Քրիստոսի օրէնքս դատաստան ոչ կայ: Եվ նա թվում է տասներկու-

պատճառներ, որոնցից յոթներորդն է. «Զի մի՛ վասն ոչ զօրոյ դատաստան՝ երթիցեն առ ալլազգիս ի դատաստանն: Եւ քիբորդ՝ տնտանմք զի ալժմ ումանք յնպիսկուպոսաց և ի վարդապետաց և ի քահանայից և ի զխաւոր աշխարհականաց և յիշխանաց զի աշարտանօք և կաշարօք և սգիտութեամբ թիւրեն զուլիզ դատաստանն: Վասն որոյ սակաւօք որոշմի՛ կամեցաք զգիրս դատաստանի, զի լիցի ի յանդիմանութիւն այնպիսեացն և յուղղութիւնս: Նա յի մոռանում տրիշնեցի նախատական խոսքերը. իններորդ պատճառաբանութեամբ յայն մեջ դարձալ ասում է, թի՛ իր գիրքը գրել է, որպիսզի յայմենայն ժամ ի՛ ձեռս առնալ յիշեմք. և ցուցցուք ալլոց ազգաց, թէ՛ զորոց դատաստանաւ վարիմք. որով ըմբերանեալք մի՛ կարասցեն նախատել զմեզս:

Մեծ վարդապետն իրեն ճշմամբ է զգացել հայկական արդարադատութեան աղաքիսի վատթար վիճակից. Եւ բազում ժամանակաց տարակուսեալ լինէի վասն սորեն իրաց ի նախատեն զմեզ մերոց և օտարաց,—գրում է նա—Այլ և հարկեաց զմեզ յայս սիրեցեալ աշակերտն Սուրբ Գրոց Պատուո հարկեցուցիւ բանիւք, և ոչ կարացի աւելուլ յանձն պատճառ ունենալ զսգիտութեան և զմարմնոյս տկարութիւնս: Բայց երբ Ստեփանոս կաթողիկոսը մի քանի անգամ ստիպում է Նրան կատարել այդ գործը, նա վերջը սկսում է այն: Վերջին ԺԱ զլիսի մեջ՝ «Յիշատակարան սակաւօք, հայտնում է, թի՛ Ե՛րբ (1184 թ.) և ո՛ր (Դասնո անպատում և Հոռոմայնն վանքում) սկսել է գրել Տեախազրութեանք—ը, և որպիսի նեղութեամբս Այստեղ նա թվում է զմիւսրութեանն երբ՝ «անպարապութիւն, զի ընդ ստեամբ արտաստէտիս զմանկուն ունէի բանի. և զպանդխտութիւն. և զանտեղութիւն գրութեան... և զպակասութիւն գործեաց պծագրութեանց, և զազգաստութիւն մատենից, յորոց զնիւմս հաւաքել ի դէպ էր բանիցս:

Տեախազրութեանս մյուս դուխների մեջ Մխիթարը պարզում է իր հայացքը դատաստանական խնդիրների և անձերի մասին, ինչպես նե՛ դատաւարութիւն, դատաւորներ, վկաներ, երդում, օրենքների աղբյուրներ, և այլն, և վերջապես մի ամբողջ զուլս (Թ) դարձալ ժամանակի ցաւոտ կողմի մասին՝ «Յաղապս թէ ո՛չ է պարտ քրեատենէի երթալ յատեն անօրինի, զի բազում է միշտն, որպէս այժմ ցուցանէ բանս: Եւ Մխիթարը մանրամասն թվում է հայի և մահմեդականի հասկացութիւնների տարբերութիւնները: Բայց շնայելով զբան, ասում է նա, «զբազումս տնտանեմք այժմ, զի յորժամ ի հոգևոր դատաստանս մեր գիտեն թէ ոչ արգարանան՝ դիմեն և գնան առ ալլազգիս, զի քերես նոցա դատաստանաւ չաղթեսցեն ոտխաջնս: Ուրիշ տեղ (զլ. Զ, էջ 28) գրում է՝ երբ դատաւորներն ուղիղ դատաստան չեն անում, «Դալթակդին միտք տկարացն և դիմեն առ ալլազգիսն երթալ ի դատաստանս:

Քուս դատաստանագիրքը կազմված է երկու մասից, առաջին՝ «Եկեղեցական կանոնք», և երկրորդ՝ «Աշխարհական օրէնք»։ Թե ինչպիսի աղբյուրներից և ինչպե՛ս է զբաղվել Մխիթարը իր գիրքը հորինելիս, այդ

մատին փաթեթը և աղբակը կանգ առնել: Միտքի պիտեք է եկատել, որ ես ինչպես սեռախաղբութեան մէջ հայտնում էլ է, աղբյուրների պակասութեան է ունեցել և, ինչպես երևում է, աղբյուրները միանգամից չի ունեցել ձեռի տակ, այլ հետզհետեւ, և այսպես էլ հետզհետեւ օգտվել է դրանցից: Անտի նրա գրքում հոգվածների գասալորութեան մէջ զգացվում է օրենքների խմբավորման նկատմամբ որոշ ձևական թերութիւն: Փայլով րովանդակութեանը՝ պետք է ասել, որ թեև Միխիթար Փոշն օգտվել է օտար աղբյուրներից, բայց նկատել է ունեցել և հայկական սովորույթներն ու աղպային իրավաբանական ավանդութիւնները, և համախ ջննադատում է իր աղբյուրների հոգվածներն և իր տեսակներն է առաջ քաշում. օրինակ՝ «Միխիթարը, ինչպես պարզ երևում է նորա Պատաստանագրքից, ամենեկին չէ համակրում մոլոսիսական խիստ և վրեժխնդիր օրենքներին, և ընտրելով նոցա միից մեղմագույնները՝ ինքն անդադար կամ կնքպարանափոխում է նոցա և կամ թողնում է դատավորի ազատ կամքին նոցա զործանելը կամ չզործանելը»¹⁰: Այդ իսկ պատճառով նրա Պատաստանագրքից հիմնականում ունի աղպային քննիչ ու գաղափարախոսութիւն ի հակադրութեան նախորդ քաղաքական շրջանի ալլաղբի, այսինքն մահմեդական իշխողների շահերը պաշտպանող օրենքներին, իրոք մահմեդական կրօնի, թղի նոցա ըստ իւրեանց կրօնիցն առնեն զդատաստան, որում է Միխիթարը: Այդ աղպային-կրօնական ներհակութեան հետեանցով «Պատաստանագրքի բոլոր հոգվածներում կամքի թելի նման անցնում է աղպային խտրութեան գաղափարը, ուր հայը հակադրվում է քալազգոտն, ուր իրավական գերակշռութիւնը պատկանում է հայութեանը, հանձին ֆեոդալական դասի և դրա համապատասխան շահփով անդմիւրս, սահմանափակվում են քալազգիներին իրավաբանական պաշտպանութեան միջոցները»¹¹:

Մենք այստեղ, հարկավ, չպիտի խոսենք այս նշանավոր աշխատութեան առանձին հոգվածների մասին, բայց կցանկանայինք մի երկու կնիք բերել Առաջին մասի երրորդ գլխից, «Յաղագս դատաստանաց վարդապետաց», և այս նրա համար, որ «վարդապետն բարձր հաճախ հիշատակվում է մեր հին գրականութեան մէջ, Հայոց եկեղեցու մէջ վերջին դարերում գրեթէ չի գործածվում բարձրագույն. ամեն վանական, կրօնավոր, որ ձեռնագրվում էր կուսակրօն քահանա, միաժամանակ ձեռնականորեն ստանում էր վարդապետի կոչում: Այսպես չի եղել հնումն, երբ «վարդապետն նշանակել է թուաւցող, թուաւցիւն (զոկոտը), և այդ անունը իբրև մի գիտական տիտղոս, կոչում՝ առանձին ժխակատարութեամբ տրվում էր արեղաներին: Դրանով նրանք իրավունք էին ստանում ուսուցանելու, քարոզելու ժողովրդին, և իբրև նշան այդ կոչման՝ կարող էին ձեռներին դափաղան բռնել: Վարդապետութեան գիտական կոչումը

¹⁰ Միխիթար Փոշ, Պատաստանագրքի շաղագս, «Երաստանագրքի» Վահան Գ. Բաւաթայանի, էջ 117:

¹¹ Ե. Մամեկյան, Հին Հայ իրավունքի պատմութեան, հատ. Ա, Երևան, 1989, էջ 80:

տալիս էին միայն վարդապետները վարդապետացուի գլխականն պատ-
րաստութիւնը քննելուց հետո: Արդ Մխիթար Գոշն իր Դատաստանագրքի
մի ընդարձակ հոդվածով (էջ 88—93) կանոնադրում է ն վարդապետա-
կան կարգը. քաղենք սրանից մի քանի հետաքրքիր կէտեր:

1. Հենց սկզբից ասում է նա. «Եւ վարդապետք նորոգին ըստ իրա-
ւանց: Ուրեմն վարդապետացուները, նախքան իրենց կոչումն ստանալը,
պետք է վարժված լինեն անգիտական ուսումով»:

2. «Յիշուցիւք և յերից վարդապետաց կոչեացին ի պատիւ հրամանի,
թէ և պատահի միտլ աշակերտիլ. և թէ զկամաւ նպիսնողոսի և կամ նս
առաւել զհայրապետի ընդ իւրեանս առնուցուն, նաեղիցիսնի, բարեք ևս
գործիցեն. ապա թէ ոչ՝ ըստ օրինացն յերկուց և յերեք հաստատեացի,
Իսկ ի միոյն զվարդապետ և զանձամբ ընտրեալսն իրաւունք կացցէ զս-
տաստանի լռեցուցանել. ալլ ըստ օրինացն զվարդապետն պատուելաւ:
Ուրեմն առնվազն երկու և երեք վարդապետ միասին պետք է վարդապե-
տական իրավունք տալին վարդապետացունին»:

3. «Եւսկ [որք] նախակրթիւնք ի միոյն վարդապետէ և ամբարտա-
ւանեալք՝ յալլմէ առնուցուն պատիւ հրամանի արհամարհելով զիւրեմ,
իրաւունք լիցին դատաստանի՝ ի նմանէ գրեանալն երկրորդեւ: Հետե-
քըքիւր է հետեւալ կետը»:

4. «Եւսկ զայնոսիկ որ հանդերձեալ իցին կոչիլ յաշտիման հրամանի,
զհամար ուսման գրոցն արժան է պահանջել, թէ ո՛ր և կամ յոսմէ՝
զտառաւ [= զգիրս] զիւրացանիւր ընթերցաւ ուսմամբ. և այս առ ալնք
լիցի, զոր ի բազումս շրջեալ անգիտանամք ուսմանն. զի մի՝ պատրնալ
անկատարս զպատիւ առնալ՝ քաղում վնասա խակութեամբն գործիցենաւ:
Ուրեմն մեծ զգուշութիւն էին քաննցնում, որ սոցետները յատանալին
վարդապետական կոչում: Իսկ նթն պատուհն կանոններն անհամապա-
տասխան կնքպով վարդապետ կոչվածներ, զայնադիսին լռեցուցանել
իրաւացի դատաստանաւ, առնալ ի ձեռանէ զգաւադանն՝ տայցին ցուպ
շրջողութեան: Այդպիսիներին, ուրեմն, պետք էր արգելել քաղութիւն
անել: Կան և ուրիշ կետեր թվարդապետք կոչման մասին»:

Վերջապես պիտի շնչեն, որ Մխիթար Գոշի այս մեծ աշխատութիւն-
նը, իրեն միակ հայկական օրինագիրք, շատ տարածված և գործածված
է նորի ոչ միայն Հայաստանում, այլև հայկական գաղութավայրերում՝
Վահաստանում, Խորհում, ինչպես և Վրաստանում, որը մտել է Վրացա-
կան օրինագրքի մեջ և այստեղից իրեն նույն ծառայել ուսական օրենս-
դրութեան համար: Դրանից օգտվել է և Հենթում թագավորի եղբայր
Սմբատ Սպարապետը իր «Յաղագս դատաստանաց թագաւորաց» օրի-
նագրի համար, որ կազմել է Կլիմիակում, Այսքան հաւ մեծ է նորի այս
մեծ վարդապետի այս մեծ երկի գործնական ու կուլտուր-պատմական
նշանակութիւնը: Դրանից օգտվել է և հայոց հոգեւոր իշխանութիւնն իր
իրավասութեան ենթակա գործերի համար վճռահատում անելիս:

4. Առեկներ:—ն. Մառը¹²,—որի սիրով կատարած երկարամյա հետազոտութիւնն է արժանացել մեր հին դրականութեան այս հյուղն և որի շնորհիւ շատ բանասիրական խնդիրներ պարզված են և ունենք վարդապետականութեան մեծ խնամքով պատրաստված մի ժողովածու:—ցույց է աւելի, որ թնկած և նշույններ լի գտնվում հայոց հին դրականութեան մեջ, բայց հայերը հետո անտի ծանոթ են եղել նրա առականներին, որոնցից մի քանիսը հիշատակվում են մեր հին մատենագիրների մեջ, բացի այդ՝ մոտավորապէս 7-րդ դարում հաջորդին ճարտասանութեան կամ ծրիթողական արվեստի զբաղմունքի թարգմանել են Ուրմիսիանու առեկները¹³, որ նշույններից են հետադարձական խմբագրութեամբ. այդ առականներ, ըստ ն. Մառի, թվով տասնհինգ են եղել, որոնց վրա հետագայում ավելացել են նաև ուրիշները և դարձել են քսան և երեք: Հաջորդաբար 6—7-րդ դարում թարգմանվել է նաև «Մարտիրոս» (Մարտիրոս) կոչված գիրքը¹⁴, որի հնդկականը հայտնի չէ և որի մեջ խոսվում է կենդանիների թարգմանքի, այսինքն թարգմանքի, բնավորութեան մասին: Այս գրքին ծանոթ են երևում նույնիսկ մեր կլասիկ հնդկականները՝ Ազարթաստ, նշույն Սողոմոն և ուրիշները: «Մարտիրոս» և նշույններից են, Ուրմիսիանուի անունով, շատ սիրված են եղել հետո՝ հայ հնդկականներից: Հատ-հատ ուրիշ առականներ ևս հիշատակում են մեր հին հնդկականները:

Գրիգոր Մագիստրոսը, ինչպես տեսել ենք, նախկիններից մեկի մեջ պատմվում է դպրոցներում աշակերտներին սովորեցնել քերականութեան և ճարտասանութեան հետ նաև «առասպելավարժութեան», այսինքն՝ աշակերտներին գրել, տեղեր տնել և մեկնել տալ առականներ, որ և մի շատ հարմար վարժութեան է եղել ապագա մեկնաբաններ պատրաստելու համար: Առականների հայկական ժողովածուներ, տակալ, հայտնի չեն, իսկ ժողովրդական առականներ մշակելու և նրանցից ժողովածուներ կազմելու մասին՝ մտածել անգամ կարելի չէ մինչև 17-րդ դարի կեսերը և ավելի ևս ուշ ժողովրդական առականներ, որոնցից մի քանիսը պատահաբար մեջ են բերում հին հնդկականները, նույն բախտն են ունեցել, ինչ որ մեր հին ժողովրդական բանահյուսութեանն ընդհանրապես: Դրա պատճառն այն է, որ գրականութեանը դեռ եկեղեցականների ձեռքն էր. իսկ եկեղեցականը, ինչպես հայտնի է, իր կոչումով արդեն ընդունակ չէր մշակելու:

¹² Н. Марр, Сбраники притч Вардяна, ч. 1, Исследования. СПб., 1889 նույնի, Ժողովածույն առական Վարդանայ, մասն Բ, բնագիր, ԿԳր. ԹԶԵԳ, նույնի, Գ. III, Проложения, СПб., 1894:

Տե՛ս և՛ «Ժողովածույն առական Վարդանայ», Թարգմ. Զ. Յ. վ. Տաշան, Վիեննա, 1898, Եզր. Մատենագրութ. ԱՊ:

¹³ Տե՛ս Н. Марр, Сбраники притч Вардяна, 1, էջ 289, ծան. մի հետադարձ նկարագրի մեջ:

¹⁴ Տղազարած են Մխիթար Գոշի առականների հետ, «Առական Մխիթարայ Գոշի», Վեննա-թիկ, 1854. հոտեց, էջ 187 և հտն. «Առական Ողոմադիանու»:

Թեկուզ մի խոնարհ գրական տեսակ, ինչպիսին առաջիններն են, Դրանք մեր գրագետ հեղինակականի կողմից ոչ միայն արժամարկված են հզոր իրեր գեղընկական, ուստի և անարժեք բաներ, այլև իրենց աշխարհիկ քննադրությամբ աստիճանաբար հալածված։ Զանազան տեսակի գուշակություն անողների հետ, ինչպես են՝ «Հաւաճմալք», «Հաջաճմալք», «Հատաճաքը», մերժված և հաղորդություն անարժան են համարել նաև «Գրախառն», «Գրատես», շրջողք տանէ ի տուն, «Հետաքրքիր», «Գրուցարար», «Առասպելախառն», «Վերջինը վերաբերում է առականությանը», «Հայերեն բառասպել» բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաև իրեն առակ, ինչպես որ սույն կրկին նշանակություններն ունեն հասարակական հունարեն *mythos*, լատիններեն *fabula* բառերը, Միխիթար Գոշը գրում է հաճախ «խորատե՛ առակ», «Հանդիմանէ՛ առակ», և այլն, «Որոշմանառա՛ առակները» Ծ-րդի խորատական մասն ակնվում է «խորատե՛ առակներ»։

Այսպես, ուրեմն, հետևի հալածված են հզոր ինչպես դուստները և ուրիշները, այնպես և առասպելախոսները, այսինքն առականությունները։

Բայց և այնպես կյանքը կառուց չի տեսում, չորսորակների համար, ինչպես տեսնեք, այլևս անպատշաճ չի համարվում, թեկուզ ողորձե՛նք, երգել աշխարհային կյանքի բարիքները և երկրի, առանձնապես քաղաքների, ծաղկումն ու ավերումը, նա ակնում է հորինել նաև նոր գրական տեսակներ։ Այսպէս 12-րդ դարից սկսած՝ նա, ինչպես ուրիշ երկրներում, մշակում է նաև առակներ, մեղեդեցական իր կոչումով ուսուցիչ էր, վարժ մեղեդեցականությունների մեջ գործադրվող ալլաբանական ձևին. նա ամեն առասպելի մեջ էլ տեսնում էր ալլաբանություն. ուստի քնական է, որ նա սիրեր խրատական ալլաբանությունը, մի վերջում այդ, հոգեւորականները վերք ի վերք ոկոսում են ժողովել ամեն տեսակի պատմվածքներ, որոնց տակն են խրատական ալլաբանություն ևն, և որոնք մեր հին գրականության մեջ հայտնի են մի ընդհանուր առում անվան տակ։

Առաջին հեղինակը, որի համար հաղորդում են, թե որեւէ առակներ, է ներսն Շնորհալիին (1102—1173), որի համար կիրակոս Գանձակեցին գրում է¹⁵, թե Վերա և առակ խորհրդարար ի գրոց, դի հիմանակ առասպելից զայն առաջին ի գրեալքուս և ի Երեսնիս։ Անդհալու անունով մնացած կան 120 առակը վասն որախութեան մարդկան։ Դրանք, սակայն, ինչպես տեսնեք, առասպելաբանականներ են և ոչ առակներ։

6. Միխիթար Գոշի առակները։—Իսկական առակների առաջին ժողովուրդն ու խմբագրողն է Միխիթար Գոշը։ Ն. Մառը կասկածում է, թե Գոշի անունով հայտնի առակները նրանք՝ Միխիթար Գոշինը լինեն, բայց նրա կասկածը չի հաստատված համոզիչ հիմունքներով։ Որ կիրակոս Գանձակեցին, — որը ոչ թե Միխիթարի աշակերտն է, ինչպես սխալմամբ դնում

15 Կ. Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 140 և հետ։

է Մատը (C. II., 4. I, էջ 66 և հտն.), այլ Վանական վարդապետի աշակերտը և Մխիթարին ոչ ժամանակակից, — որ Կիրակոսը չի հիշատակում, թե Մխիթարն առականը է գրել, այդ, իհարկե, չի կարելի իբրև հիմք ծառայեցնել, ինչպես անում է ն. Մատը, կասկածելու, թե Մխիթարն է հեղինակ նրա անունով հայտնի առականքի: Գանձակեցին նպատակ չի գրել Մխիթարի բոլոր երկերի ցուցակը տալ և ոչ նրա բոլոր երկերն էլ նա հիշում է, ինչպես ի միջի այլոց նա չի հիշատակում նաև Մխիթարի ԲԿԱ-ատաստանագիրքն ևս:

Մատի կասկածի համար, սակայն, իբրև հիմունք ծառայել է նաև այն, որ էջմիածնի Մատ. մի ձեռագրի մեջ (№ 2238), — որ ժողովածու է պանդան ձեռքերի (մատամբ ամբողջական արտագրված, մատամբ հատվածորեն), — ի միջի այլոց կա վերջում Մխիթար Գոշի առականքի վերջին մասը՝ «Առանկ ստեղծականք», որի համար իբրև հեղինակ, վերնագրի մեջ գրված է Լովհաննես Սործորեցին և որի վերջում կա հանկյալ հիշատակարանը. «Եւ զվերջացեալս ի բարեաց գործոց զտարտամ գրիս զՅՈՇ Ժանօթ քանի և տեղեալ նրալկացի: Իսկ այժմ՝ Սործորեցի: Ազայնմ լսոտաւս ի բարիս զիս, և զհիմսն ամենայն: Ի թվականիս Փրկչին ՌՅԺԶ. Եւ զայիտակ պէտս Գրիգոր զվերջին գծող յիշել ազալեմա: Նուչն տեղում ներքին յաւանցքում. Բնակ ըստ հայոց ԷՃԽԳ աւարտ եղև գիրքս: Ապա մի հիշատակարան ևս, որ, ըստ ն. Մատի, ժողովածուն կազմողինն է: Վերեւում քերված Կիրակոսականքն ն. Մատը եզրակացում է. թե Սործորեցին հիշված ժողովածուն կազմողը չէ, այլ առականքի արտագրողն է: Որ ժողովածուի մեջ Սործորեցին դարձել է առականքի հեղինակ, այդ իբրև նրանից է, որ ժողովածուի մեջ սկզբնապես առականքի համար հեղինակ հիշված չի եղել. այդ իբրև նրանից է, որ Սործորեցու արտագրածը, որից օգտվել է ժողովածուն կազմողը, այդպես է եղել: Որ Սործորեցու արտագրածի մեջ հեղինակ հիշված չի եղել, այդ էլ ցույց է տալիս, որ Մխիթարի անունով հայտնի առականքը հին ժամանակ անանուն են եղել: Հետևաբար, հետագայում, շատ ուշ ժամանակ, արտագրողներն այդ առականքը վերագրել են Մխիթարին:

Այսպիսի ենթադրութլւոններով, սակայն, և այն հանգամանքով, որ առականքի ձեռագիրները հետին դարերի են, կարելի չէ անստույգ համարել Մխիթարի հեղինակ լինելը: Բանը որ ենթադրութլւան է հետնում, կարելի է շատ տեսակ-տեսակ ենթադրութլւոններ էլ անել: Քանի որ մեր ձեռքը չի հասել Սործորեցու արտագրածը, կարող ենք ենթադրել, որ դա ունեցած է եղել Մխիթարի անունը, բայց սկզբի թերթը կարող էր մաշված կամ պոկված լինել, ուստի և հիշված ժողովածուն կազմողն առականքն անանուն դրած լինեն իր ժողովածուի մեջ: Կարող էր ժողովածուն կազմողը, քանի որ բոլոր առականքը չէր արտագրում, այլ միայն վերջին մասը, մոռացմամբ լղնել առականքի հեղինակի անունը: Նա կարող էր նույնիսկ դրած լինել Մխիթար անունը, և մի արտագրող մոռանալ, կամ քննաչափաբար Մխիթարի տեղ Սործորեցի դնել, և այլն, և այլն:

կարելի չէ լուկ ենթադրութիւն վրայ հիմնվելով հարցական թողնել այդ առականորէ հեղինակի ով լինելը, կամ հետին դարերում գրականորէ անողով ավելացրած հասարակ Մխիթարի անունը, որ կա ամբողջական ծնունդ-դիրները վրայ, քննելով դրանք շատ հին լինեն:

Թե Մխիթարի անունով մնացած առականը նրանք են, այդ ցույց է տալիս նրանց բովանդակութիւնն էլ, որ տանում է մեզ այն ժամանակը, երբ հայերը դեռ քաղաքական ազատութիւն ունեին և մահմեդականներէ ավելի ուժեղ էին զգում իրենց: Իմ այդ հինգ Մխիթար Գոշի ժամանակն է, 18-րդ դարի երկրորդ կեսին, երբ հայերը թե՛ Արեւելքում և թե՛ Արեւմուտքում—Կիւրիկայում շատ ավելի ուժեղ էին, քան մահմեդականները:

Գտնել տեսնել մի քանի ուրիշ հետազոտողները վրայ նա: Այս տեսող-ների հեղինակը շատ հմուտ մարդ է նշել, ինչպես նշել է և Մխիթարը: Նա գիտակցաբար վերաբերվելով իր գործին՝ հարկ է համարել մեկ-մեկ ժանոթութիւններ տալ իր կատարած դրոշի և ընդհանրապես առականորէ մասին իրրե մի գրական տեսակի: Այդ ժանոթութիւններից հինգ խա-նում ենք, որ այդ ժողովածուն իր տեսակում ժամանակով առաջինն է մեր մէջ:

Ամենից առաջ տեսնում ենք, որ առականը ժողովելն ու գրելը դեռ անպատշաճ է համարվում. ուստի և հեղինակը բացատրում է, թե ինչու է ինքը գրել: «Թէպէտ անըմբռն [անպատշաճ] ասացանքով կարծի, սա-կայի թանկութեամբ առանել պիտո՞ւնի նրան, որոյ աղագու սակաւ յօժարեցաք գրել:»¹⁶ Ապա այդ գործն ուրիշները ժողովել են համարում, և հեղինակը խնդրում է, որ լծադրեն իրեն: Ամեն անգամ որ մեր հեղինակները մի նոր բան են մտնում գրականութիւն մէջ, ստիպված են կամ ապացուցել, թե թույլատրելի է իրենց արածը, կամ խնդրել, որ լծադրեն իրենց: Այսպես, Կորյունը մեր գրականութիւն սկզբում դեռ ստիպված է երկար ու բարակ ապացուցել, թե ո՛չ միայն թույլատրելի է, այլև հարկավոր է Մեսրոպ Մաշտոցի նման մարդկանց վարքը գրել: Ներսէս Սնորհալիս իր «Պատմութիւն հիշատակարանում ստիպված է ապացուցել, թե կարելի է մեր այժմ սովորական դարձած տաղալարութիւնը, որ այն ժամանակ գործածվում էր միայն աշխարհիկ երգերի հա-մար, բանաստեղծութիւն հորինել նաև հողերը՝ բաների մասին: Հովհան Մամիկոնյանը ժողովրդական զրույցներից ու երգերից խմբագրելով «Մարտիկ պատերազմը», վերջը գրում է. «Յորժամ զարարութիւնս զայս ընդօրինակէք մի՛ ինչ թուեսցի ծաղր ունեք... Նույնիսկ Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» համար, որ նորութիւն էր մեր գրականութիւն մէջ, գրում է. «Եւ արդ մի՛ ոք պարսուեսցէ զասացնալս, զի թէ տիմար ոք իցէ՝ ուսցի, և թէ կատարեալ՝ զպակասն ի սմանէ ինքն լցցէ. զերկո-ցունիցն պատրաստ նմա սիրով ընկունել զկամենն: Ժիշտ աղագու և նույն

16 «Առակք Մխիթարայ Գոշի», Ին, էջ 80.

Մխիթար Գոշն առականների համար գրում է վերջաբանում. «Եւ արդ մի՛
ոք ծաղր ատենիցէ զմեզ, զի առնուի ի սոցունց ի դուքատորութիւն և յառա-
ջութան ի դէպ համարեցաք, քան զաշխարհականացն վարիչ սովորու-
թեամբ: Եթէ հաճոյ ումանց թոյիցի, տնառն շնորհ. ապա թէ ոչ, թողութիւն
մեզ արասցէ օրոգով նորին» (էջ 153):

Մեծ դժվարությամբ ուրեմն, նույնիսկ առակի տնտեսը մտածք է
գործում և կենդանականի զրականության մեջ: Դա ծաղրի առարկա է, զի
դրա առաջակնն աշխարհիկ բնավորություն ունի. և եթէ կենդանակներ
մշակում է այն, որովհետեւ թանձրամիտներին ախորժելի է առականների
առաջակնն, և դրանով հնչող է սովորեցնել ու կրթել:

| Մխիթար Գոշն առականների մեջ տնտեսում է բնականաբար երկու մաս.
քուն պատմվածքը և խրատական եզրակացութիւնը: |

Պատմվածքը.—որ նա կոչում է անակ, քաղաքիւր, օրինակ, եղանակ
և այլ բառերով.—բայ Մխիթարի՝ լինում է երեք տեսակ՝ քաղաքական,
առաջակնական և ստեղծական: Բարոյական առականներ (քաղաք, բարք =
բնություն քաղից, օրից և Թաղալիսոս զրքի կոչումը) առնված են կեն-
դանինների քաղաքից, բնավորութիւնից կամ բույսերի հատկութիւններից
և շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողութիւն: Առաջակնական
առականների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիններին, երբեմն և
քույսերին, իբրեւ գործող անձերի. իսկ ստեղծական առականներն առնված
են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են:

Քաղաքական եզրակացութիւնը,—որ հնդինակը կոչում է՝ խրատ,
եղանակ, ելմտորութիւն և այլ քաղաքիւր,—երկու տեսակ է՝ աշխարհիկ և
եկեղեցական. Երկրորդ և սակաւագուց առակք ստեղծականը, որ նման առա-
ջելոցն կերպարանէ զճշմարտութիւնն աշխարհօրէն և կենդանականապէս
(Մխ. Առ., էջ 128),

Առականների երկու մասերից հոգեբանական հնդինակի համար բնակա-
նաբար ավելի կարևոր արժեք ունի այս երկրորդը. խրատական մասը,
այն էլ ավելի կենդանական մեկնությամբ, որովհետեւ հնդինակը ցանկա-
նում է, որ խոսակցութիւնն ժամանակ մեջ բերվեն աշխարհի մեկնությամբ
առականի, քան աշխարհականների սովորությամբ վարվել, այսինքն
առականները լուի աշխարհական մեկնությամբ պատմել: Ուստի խրատների
մեջ կարևոր տեղ ընեում են հոգեբան խրատներն ու հոգեբան առաջինու-
թիւնները: Բայց Մխիթարի նման մեկը չէր կարող անուշադիր մնալ զնպի
կենցաղական խրատը, առօրյա ընկերական հարաբերութիւնները, սո-
ցիալական և ազգերի հարաբերութիւնն և նման խնդիրները կամ ճշմարտ-
ութիւնն աշխարհօրէն:

Մի անգամ որ հնդինակի համար առակի մեջ էականն է առակի
ճշմարտութիւնը, ուստի և նա առակը մշակում է այնպէս, որ կարևոր
տեղ քանի ճշմարտութիւնը: Կենդանակն՝ առակը հորինվում է ոչ իբրեւ
խնդիրընդուն քանադանդանական տեսակ, այլ իբրեւ մի առաջական դիպակ-
տիկական երկ, որ նպատակ ունի ախորժելի ձևով խրատել և ազդել: Դրա

Համար առակի առասպելն այնպես է հորինվում, կամ փոփոխվում (երբ ուրիշ աղբյուրներինք է առնված), որ հարմարվի բարոյակրթական մասին, կամ դրոժողութիւնն այնպես կարճ է պատմվում, որ երբեմն նույնիսկ խրատական մասն ազնիվ մեծ տեղ է ընձում, քան պատմվածքը: Ուստի օտկալ ենք գտնում քանաստեղծական եկարյութիւն, կենդանիներին և մարդկանց բնավորութիւնն էական գծերի ընդդուում և ոչ էլ միշտ առաջ և ուժեղ դրոժողութիւն ենք գտնում սեղմ ու պայծառ պատմվածքի մէջ, որ դժգոյսովնստորեն հորինված առակներին կենդանութիւնն է կազմում: Արգարն Մխթար Գոչն էլ սեղմ ու հակիրճ է, բայց ոչ միշտ պայծառ ու կենդանի: Սովորաբար մի երկու ընդհանուր գծեր է տալիս նա և ապա իրական անցնում է խրատին: Արքեմն էլ պատմվածքն այնքան կարճ է և այնպիսին, որ դժվարութիւնով կարելի է ներկայացնել: Հանել, կամ հանած ներկայացնելու շատ թույլ կապով է կապվում պատմվածքին, կամ համապատասխան չէ նրան:

Հնդկականը, օսկալն, իր խրատը բավական չհամարելով՝ դեռ գրում է. «Ջահանջ նշանակալ լափաւորապէս համեմատեցաք՝ պատճառս տալով տեսողաց քանին նմանապէս զթերին լցուցանել» (էջ 30): Կենդանին՝ Մխթարն առակն ասողին աղատ է թողնում մկնութիւնն թերին լրացնել, ճիշտ ինչպես նա իր Գատաստանագրքի ռկատարեալը ընթերցողի համար ևս ասում է, թէ՝ «զպակասն ի սմանէ ինքն լցնէ»: Այստեղ էլ, արքեմն, առակներին և Գատաստանագրքի հնդկականը նման ձևով է մտածում:

Քանկանաբար պիտի օպասենք, որ Մխթար Գոչն առակների մէջ ևս նույն հայացքն ունենա դատաստանի մասին, ինչ որ Գատաստանագրքի մէջ, Այստեղ նախադրութիւնն մէջ (էջ 28) պատկերում է, թէ դատավորները պետք է թողնէր դատաստան անենք և ապա (էջ 32) գրում է. «Եւ թէ ոսոխքն յատենի անդ քանակովի լիցին՝ մի՛ տայցնն թոյլ, այլ սաստեցնն... Ուսցին և զատախաղքն, թէ ոչ վասն վիճոյ գան յատեանն... լատ կարդի տայցնն խօսել ոսոխացն»: Այս երկու զառափտն էլ, դատավորին արդար մարդ լինելու հետ միասին, արտահայտված ենք գտնում մի առակի մէջ:

Հարաջ վրոյն տատարակի քակտեալ, և ինչ շինեալ, և նզե նոցա երթալ առ արդարն արդիւ ի դատաստան. և անդ զմիմեանս նախաւորին և պարթէին, տատարակ ողորդուհոթեմք, կրեւտարալթեմք. և հարաջ զպէտք քատանեօրէիք. և նախաւոր ամէ կնդաւարալթեմք, և ամէ զայլոց ոտեւոյ զվտուակն: Իսկ դատաւորն Երկուցն ասաւ և հարցաւ զհարաջ. թէ թե՛զ՝ ք քակտեցիր: Եւ նա ասէ. Երեսուցայ Նշան ինչ աչ տեօր, և վասն աչն առն ինձ: Հարցաւն զարեւոյ. Դա՛ւ էիք Երեւալ զոր ասելք: Եւ նա ասէ՝ ոչ.— Եւ կամ ոչ՝ իր երկու հետեւ եզեալ ի վերոյ միմեանց. Եւ ասէ՝ Երեւալ էր: Հրտմալ տեղքէ դարեւցաւնի: Եւ ևս ևս ասաւ ինչ ապա:

Անտառասան յոլիլ հրտմալն առակս դատել, և աչ յայտնի մեծաբանել, և կամ քչդատասալ զմիմեանց զտալխաղաք: Եւ դարեւալ զի զոր լիցնմք նդեալ՝ ասուցանէ լատեալ, և զշինեալս յալուլ՝ Թէ և յառի իցէ, լցակել: (Մխ., մե. 118)

Այստեղ, ուրեմն, տեսնում ենք, թե ինչպե՞ս ռադիկալները՝ Համբարձումի և Տատրակը, դատաստանին են գնում արդար Արագլի մոտ։ Բայց նրա տուրք իրար նախատում են, իրար հետ վիճում են և ամեն մեկն իր արժանավորությամբ պարզեցնում։ Դատավորն երկուսին էլ անտեսում է, ապա հարց ու փորձ անում և դատաստան կտրում։

Տեսնենք մի ուրիշ գիծ էլ։ Դատաստանագրքին մեղ (Նախագրութուն, էջ 29) Մխիթարը պատվիրում է, թե Եղատուրին մի՞ լուրջ է զոռոխին կամ զդատախազին բանն միայն... Այսինքն նա մեկ կողմը միայն լսելով՝ լայնոր դատ անի։ Առականրից մեկի մեղ ասում է, թե անընարող դատողները՝ ինն են թագավոր, իշխան, դատավոր, թե նկեղեցու առաջնորդ, «անփորձապէս դատապարտեն», այսինքն ասանց ճշմելու դատապարտում են նույնիսկ արտաքին տնտեսից կամ համբարից (այսինքն ուրիշներից լսելով)։ և անակախառն պատվիրում է, թե լայնագ է քի անելն է կամ ի համբարաւ դատելը (Մխ., ԺԸ. 19)։

Նկատենք և հետևյալը։

Մխիթար Գռին առականրը, որոնց թիվը 190 է, խմբագրված են, ինչպե՞ս վերևում ասացինք, մի շատ հմուտ մարդու ձեռով, ինչպիսին իրոք եղել է Մխիթարը։ Դրանց համար նա օգտվել է նշույտի առականրից ու Բարդուխտից, ինչպե՞ս և այլ գրավոր աղբյուրներից ու ժողովրդական առականրից։ Անպայման կան և այնպիսիները, որ հեղինակին իրեն ստեղծած են։ Նա, ինչպե՞ս երևում է, մեծ նյութ է ունեցել ձեռի տակ, բայց ամեն ինչ որ ունեցել է, չի գործածեր։ Քաջագույն ի պիտեղեաց և լանգիտելեաց թողարք իբր համազօրս յօրինակս և լսողակս (էջ 29)։ Բայց ամեն ինչ, որ նա անել է իր ժողովածուին մեղ՝ շատ որոշ կարգով դասավորել է ըստ նյութի, այսինքն՝ ըստ գործող անձերի, նախ՝ երկիրն ու երկիր և երկնայիններ և ապա՝ բույսեր, լեռներ, կենդանիներ ու մարդիկ։ Ամբողջի մեղ երևում է մի մտածող, կարգ ու կանոն սիրող մարդու ոգին։ Այսպիսի միակերպություն շունեն Վարդանա առականրը, որոնք և մի մարդու գրից լեն գուրս եկած և ոչ էլ մի գարու արգասիք են։

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ ԵՎ «ԱՌԱԿՔ ՎԱՐԴԱՆԱՅ»

1. Վարդան Այգեկցի։—Մեր հին գրականության հարստություններից մեկն են կազմում և «Վարդանա առականրը։ Մրանց նախահայրն է Վարդան Այգեկցին, որ Մխիթար Գռչից մի սերունդ կրտսեր է։ Մխիթարը վախճանվել է 1213 թ. խորին ծերության հասակում, իսկ Վարդանն այդ ժամանակ արդեն տարիքավոր է եղել և անվանի՝ իր քանատեղծական բարոզներով։ Մենդյան և մահվան թվականը հայտնի չէ. ապրել է 12 և 13-րդ դարերի մեղ։ Մեկել է մի բազմաանգամ ընտանիքում, հին Տլուք գավառի Մարաթա անունով մի քնակավայրում. ինքն իր մասին հայտնում է, գրելով, ռոգորմելի Վարդանա որ ի Մարաթառա, որ է՝ ի Մարաթայոյ։ Սովորել է Կիլիկիայի Արքակաղին վանքում (Սոսից հյուսիս, մի

լինաւն վրայ), որ մի ժամանակ եղն է կաթողիկոսական անթոռանիստ: Այդ ժամանակ և մոտիկ ծանոթացել է մի քանի իշխաններին՝ «յոյժ ծանօթացաք նոցա սիրով աստուծոյ»:—գրում է նա:

Այնտեղ նա ոչ միայն կատարեցազորեմ է իր ուսումը, այլև մշակել է իր համար գործին համապատասխան որոշ աշխարհայացք հասկանալի դասակարգային հարաքերութիւններ ղեկաքննելու: Իր թղթերից մեկում հայտնում է, թե նվեր պիտի տալ անփական աշխատանքով ձեռք բերածը միայն, որ աստուծուն ընդունելի լինի. բայց իշխաններին այդ վիճակ վատ չէ. «Քանզի վա՛յ է զնա որ իշխան կամ առաջնորդ կացուցանեն յայս շար և ի դառն ժամանակիս: Զի թէ մեք որ սակաւ ունիմք զկարիքն, և իշխանութիւն և կարողութիւն ոչ ունիմք, բայց փոքր ի շատէ ատանց զրկանաց ո՛ր կարեմք մնալ, ապա վտան նոցա զի՞նչ ասացից, որ ունին զիշխանութիւնն և զկարողութիւնն և զբազում կարիքն և զանկորդն և զբազում ժախքն, զոր բազում անգամ տնտաշ շրջելով ի մէջ նոցա: Եւ անգաւանաք ամենեւին սրբոց թողլն աստուած նոցա և մեզ ողորմութեամբ իւրով, քանի մարդիկ մեք զիշխանութեան: Իշխաններ չապք վածքն, ուրեմն, զզրկանքիս վրա է հիմնված. և այդ ասում է նա իրեն իրականութիւն: Ինչպես եղիշն Լազկերտ թագաւորի շարութեան մասին խոսելիս ասում է. «Թէպէտ և ոչ ունիմք հրաման բամբասել զիշխանն, բայց և ոչ գովողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուածամարտն լինիցի. այլ զանցա իրացն պատմեմք... ոչ բամբասանէր մտք, այլ ճշմարտութեամբ զնշխարացն ասելով, նույնպես և վարդանն սկզբից դնում է, թե իր ստածը բամբասանք չէ. «Եւ զայս ասելով ոչ ճիշտ բամբասան զիշխանն, քան և մի՞ լիցի այր. զի գրեալ է, թէ մի՞ բամբասանը զիշխան ժողովրդանն քո: Այլ ողորմելով նոցա՝ զշարութիւնն սատանայի ցուցանեմ ձեզ: Մաստանայի շարութիւնն իշխաններ ձեռով:

Եվ տեսնք, թե նա ի՞նչ զգուշացրել է վերաքերում դնալի մի իշխանի կնոս դահեկան շարափաստակ նվերը, որ նա տվել է ընդհանուր եղբայրութեանն Արքակաղին վտնջում: Նա զիշխար երազներ է տեսնում այդ մասին. «Զառաջին [նրազը] յորժամ առի [նվերը մի իշխանից], տեսալ ի նմին զիշխարի. և ա՛հա լցաւ բերան իմ յանկարծակի զազրելի աղբով. և ոչ կարելի թափել զնա ի բերանոյ իմմէ. և իմ խնդրեալ անցոյթ անդի՛ փախցի գնա, և գտի՛ տարն ոչ փարատէր հոտ զարշաթանա նորա ի քմաց իմոց: Այս յուսմանն ի ժամանակն եղև ի սուրբ ուխտն յԱրքակաղին: Եւ սուրբ իշխանին էր կէս դահեկան, զոր ետ հասարակաց եղբայրութեանն:

Որ իշխանի տուրքը բոլոր եղբայրութեանը՝ վարդանն է առել, այդ ցույց է տալիս, որ նա Արքակաղին վանքի եղբայրութեան անդամներէից մեկն է եղել և, համախորհել, մի ազատուածատար: Իր կյանքի այդ շրջանից արդեն նա եղել է կրօնավոր: Նրա հետագա կենսագրութեան մասին լինաւ տեղեկութիւններ. չի ստուգված նրա «Ամթնցի երէցն լինելը, և իր ծննդականները և կամ ծննդանա լինելն ալը նախ Ամիգում, հետո՛ Տլուգում, Եթն

նա «երեք» էլ ինչպե՞ս անշուշտ հղել է «վանական երեք», այսինքն՝ կուսակրոն քահանա, թե չէ՝ նրան առկորաբար անվանում են «վարդապետ»։ Իբրև աշակերտին նա հղել է քարոզիչ, այլ անպայման մի վանքում նստած։ վարդապետները քարոզներով շրջում էին և սեղից տեղ աշխարհականներին մեջ։ Մեթոդիկական հասակում երիտասարդ կրոնավորներին ուղղած մի խրատի մեջ¹⁷ նա գրում է. «ենչինպէս և ես, ո՞վ որդեակք, ի մանկութենէ՞ մինչև ի ծերութիւն շրջեցայ ի մէջ աշխարհի [=աշխարհի մարդկանց] և տեսի բազումս զմեզս մեծամեծս, և անչարի լուսայ ծածկաբար ի դործողացն զյարս. նաև ուսայ յաստուածնդն զորոք որոց ոչ զոյթիւս։ Մանկութիւնից (=երիտասարդութիւնից) մինչև ծերութիւն նա շրջել է, անշուշտ, իբրև քարոզիչ վարդապետ։ Որ նա գրում է. «ենչպի լուսայ ծածկաբար ի դործողացն զյարս», այդ նա ծածուկ լսել է իբրև խոստովանահայր։ Դրանից, սակայն, պետք չէ հետևեցնել, թե նա ծխատեղ քահանա է հղել։ Խոստովանահայր լինում էին և վարդապետները։ Նա, ինչպիսի ընդհանրապես վարդապետները, ունեցել է և իր շքնիկ ժառանգութիւնը, այսինքն՝ բուն, իսկական վիճակը, քարոզչութիւն թե՛ զարդանդակներում, զճշգրտ գաւառում, կենտրոն տեղնայով իր հայրենի մարաթան։ Այստեղ, այս կողմերում 11-րդ դարից ի վեր կազմված էին հայկական մեծ գաղութավայրեր. այստեղ՝ Տլուք գավառում էր և կաթողիկոսական Սոփ քերդը։ Բնական է, որ Սոփից կաթողիկոսական աթոռի տեղադրութիւնից հետո՝ նույն գավառում հղել է հայկական հոգևոր իշխանութիւն և պետք է հղել նաև մի քարոզիչ վարդապետի։ Թե ինչպիսի՞նչ հայ քահանայութիւն է հղել այն գավառում և նրա քարոզներն իրենց բովանդակութեամբ որպիսի՞նչ ազդեց են ունեցել տեղական ժողովրդի կյանքի հետ, այդ պարզված չէ։ Նա մի քարոզի մեջ դիմում է և՛ արանց, և՛ կանանց (սփոք՝ դասք արանց, սփոք դասք կանանց) և առանձին խրատներ տալիս նրանց. կանանց հորդորում է, որ հնազանդ լինեն և հողատար, իսկ արանց՝ որ սիրեն իրենց կանանց և քաղցրութեամբ խրատեն նրանց. զի նրանք կարժամիտ և ուկար են։ Բայց որոնք քարոզչական ընդհանուր տեղերն են։ Նույնպես առկորական է հանդիմանել կանանց, նրա համար, որ զարդարվում ու պնդվում են, երեսները շաւարում, ունեքրին գնդ գնում, որպիսիք պնդեցկանան ի գայթակցութիւն երիտասարդներին, կամ դեղերով իրենց զրկում են երեսներ ընդունակութիւնից, և նույնը ստործնցնում ուրիշներին։ Մի ուրիշ ճառի մեջ նա զմեքից աստիճաններով աստափեցնում է վաշխառներին, մշակներին վարժել կտորողներին, նրանց, որ զրկում են որբերին, ալորներին ու տնականներին կամ խաբում լսի ու կշռի մեջ, նրանց, որ կաթի ու գինու

17 «Եւստատիոսային» որպէս զորոք խրատը վարդապետացիներին կարելի է կարծել և համատուտ միայն զբնիցն զրել աղբորմելոյս վարդանայ ար ի Մարաթոս, և այժմ ի ձորս մարք լիքին միանեանց աս մեծիկարդիս կրտսեանոյս որ ցուն ի կարգո կրտսեանոյս թնտն և կոմ միանեանքն ի ծերպո վիմաջո։ Н. Марр, СБОРНИК пр. Вард, часть I. էջ 297.

մեջ շուրջ են խառնուել և այնպես ծախսում: Այս ամենն էլ աստիճանական, նույնիսկ աստիճանաշարժան մոտիվներ են:

Ըթն այդ բովանդակությամբ ճառերն ասվել են Տլուքում, կարելի է դրանից հետևել, ինչպես վարվել է ն. Մառը, որ այնտեղի հայ գաղութը չի հղել մի խուլ անկյուն, այլ մի առևտրա-արդյունաբերական հարուստ կենտրոն և Վարդանի այդ քարոզներն ուղղված են հարուստ քաղաքացիներին և վարձատրականների դեմ:

Ժառերի այդպիսի ընդհանուր բովանդակությունից կարելի չէ ենթադրել, թե դրանց համար այն շնորհալի քարոզչիչը հայտնաբեր է ենթադրվել և ստիպված է հղել իրեն հալածական հեռանալ կամ փախչել իր ընդհանրապես ու հայրենի Մարաթա գյուղից: Դրա պատճառը թաքնված է, հավանորեն, քաղաքական հեղհեղուկ դրությամբ մեջ, կամ գուցե մի ծանրակշիռ հայացի շուրջը սաստիկ ընդհանրման մեջ տեղի իշխողների հետ: Երկու տարի. նա Նյութական նեղություն մեջ է ընկնում:

Պաղտին իշխանի համար 1212 թ. գրած քանակագրու ճառ աշխատության մեջ ուսում է. «նա լավ յոյժ ծանաթ հղե մեզ, զի հրկու ամ է [ի] դրադումն աշխարհի էաք և ոչ ընդերծուն [ընթերցումն] գրոց. քանզի քունն է կարիք մարմնոյ յործամ պակասէ. զի հալածական հղաք ի ընդհանրապես քանքանքն է մերմէ յերկրէն Կիլիկիոյ և ի գաւառէն Տլուքոյ և եկաք յԱյգեկս, և աստուած ի քարի աշողեաց զամենայն գործս մեր և զպէտս մարմնոյ, իսկ ի հին ուսմանէ յիշեալ հաւաքեցի... Հայոց ոկա [= 661 + 551 = 1212]. և էր թագաւոր Հայոց լէօն Ըոթրիհանան ի Կիլիկիայ...»¹²: Ուրիշ տեղ նա սույն ճառի համար դրում է. «ե յորորոյ ամի դալատեան մերոյ ի Մարաթա ի սուրբ լերինս յԱյգեկս, և հղի ի դիրս զոր դրեցի ճառս իր. [= քանն և երկու] ի խնդրոյ թագաւորազն իշխանին որ կուի Պաղտինս: Այս սլորորոց ամեն է 1212 թվականը, երկու տարի էլ նեղություն է կրել մինչև Այգեկում տեղափոխվելը, ուրեմն նա իր հայրենի Մարաթայից, Տլուք գալիսից հալածական է հղել 1206 թվականին:

Եստ հավանական է, որ իր ծանոթ թագաւորազն իշխան Պաղտինի (Բալդինի) հովանավորությամբ և հաջողվել է Վարդանին դառնալ միաբան Սուրբ լեռան կամ Սե լեռան վրա 12-րդ դարի վերջին քառորդին հիմնված Այգեկ կրոնաստանի: Այստեղ էլ Վարդանը երկար, գուցե մինչև կյանքի վերջը, մինչև խորին ծերություն ապրել է, ուստի կոչվել է «Այգեկցի»: 1225 թ. նա դեռ կենդանի է և աշխատում է ըստ մի գրության:

Այստեղ, այս բանապատումն կամ ժողովրդ ուխտումն նա պարապել է գլխավորապես գրականությանը, թղթակցել է շատերի հետ. զանազան հարցերով դիմել են նրան, ինչպես Պաղտին իշխանը, Անտիոքի Միքայել նախակոպուր և ուրիշները, և նա սիրտով պատասխանել է նրանց. գրել է ճառեր, խրատներ երկտառաբոց կրոնավորների համար: Ե՛մս նուսաստս յամենայնի յերթս ճառս կարգեցի զքանն խրատուց նորամուտ կրօնա-

¹² Արապորդ գրչի տղիտությունից կամ տեղեկությունից են առաջացած խառնվերք:

տորաց մանդատներն և ոչ ժողովքն: Մեզքում նա աշխատել է առանց գրքերի, հիշողությամբ, Պաղտին իշխանի համար 22 ճառը հորինել է «ի հին ուսմանն յիշնալը, գրում է նա» նրա գրքերը մնացել էին Տիւրքում: Միքայել եպիսկոպոսի հարցմանն էլ նույնպես է պատասխանել: «Կա՛մ ես լսեապատի աստ հեռի ի գրենաց և ի մեկնւաց, ասում է նա. «Եւ ասաքի աստուծոյ անաստ ասեմ, որ լուսինս յանապատի աստ բազում գրեանս և կամ զմեկնութիւն հինգ լանիցս, զի անդից օրինակ և գրեցից: Ապա...» Եկաւից կատարել դժբախտս քո, զոր տայ սուրբ հոգին, ի հին յիշատակաց և յուսմանց, բայց և յամենայն շնորհաց որ լինի և ոչ ի մեր քանաց, քանզի խաւարեցաւ միտք իմ յաշխարհիս և նուազեցաւ լոյս աշացս և սկարացաւ ժողովեամբս:»

2. Վարդանի գրողությունների թեման կամ նյութն էական նորությունն չէ—նա քարոզում է, թե ավելի լավ է, որ կրոնավորները կենան ձգքայրանոցներում. նրանք պիտի աշխատեն և ապրեն իրենց աշխատանքով, սեփականութիւն պետք է չունենան: Նրանք նվերներ պիտի ընդունեն միայն, երբ կարող են աշխատել, այն էլ միայն երկրագործներից և արհեստավորներից. որովհետեւ, ինչպես վերեւում տեսանք, նա անընդունելի է համարում անարգար եղանակով ձեռ բերվածը. ուստի իշխաններից պարզն ընդունել թույլատրում է լուկ ժայռահեղ կարիքի գնալը: Այս վերաբերում է, հարկավ, կրոնավորների անձնականին. թե չէ՝ դժվար է նշանել, թե վարդանը քարոզեր, թե վանքերը չպետք է նվիր ընդունին, քանի որ այդ դարում և առաջ շատ սովորական էր վանքերին տալ ամեն տեսակ ընծաներ և՛ անշարժ, և՛ շարժական զուգեքերով: Նա քարոզում էր, որ սեփականութիւն չունենան կրոնավորներն անձամբ և ոչ վանքերը:

Ն. Ենորհալու Մկրտչանրայանի Վերլուծութիւն ժամանակ տեսանք, թե ինչպես կրոնավորներն ընկած էին անձնական հարստութիւնների հոտից, սեփական այգեգործությամբ էին պարապում: Մի քառասուն տարվա ընթացքում Ենորհալուց հետո՝ կրոնավորների բարքերն ավելի ընկել էին, քան բարեբաղն: Մեկգեկա անունը հենց ցույց է տալիս, որ այգեգործութիւնը մեծ տեղ էր բռնում այն անաղատում, ուր ապաստանել էր վարդանը: Նա գրում է. «Եկա՛ ինձ, որդեակ, թէ ընդէ՛ր եւր աշխարհ է և կամ ի խցաւոր վանից, յորժամ պիտոյ էր քեզ այգիս և դրախտս տեղել, Ահա խաբեցեր զմարդիկ և զաստուած, խաբեցար և դու. զի լես միախաղիեաց: Զի ուր արտավարութիւն անելի քան զպէտան, և այգի և դրախտն տեղի և բուռանի վաստակով և ջրով, և ի գիշերի աղաղակէ դճետ զաղանացն, և ի տունջեան գոյէ պարսաքարի դճետ թունոցն առ ի պահպանութիւն մրցոցն և ողկուղացն. և ի վերայ այսօրիկ ա՛յլ մեծագոյն կորուստ. զի վէճ և կռիւ, նախանձ և մտխանք ոչ պակասէ. սա ի՛մ և այն քո, — ոչ էլ և այնպիսի վարքն միախաղիեցի, այլ աշխարհականիս:»

Եթէ Ստեփաննոսի Պատմութիւնը, ինչպե՛ս տեսանք, արտացոլում է Օրբելյան իշխաններին և իրեն՝ Ստեփաննոսի տոհմային պահանջի, ապա նրա այս քնարական քերթվածը, որ նա հորինել է 1800 թվականին², իր մեջ անգրադարձել է հեղինակի և նրա ժամանակի հայ հայրենասիրական ոգին ու խոկերը։ Այս տեսակետով պետք է մատչել նրա այս բանաստեղծութեանը, որի քրուն վերնագիրն է. «Բան բարառնական ոգեալ դիմառնարար ի դիմաց վաղարշապատու Ս. Կաթողիկէին»։ Ողբ աւագականք և ձայն աշխարականք լինալ անհուն հեծեծանօց աւերման աշխարհիս Հայոց և բնաւին սպառնլոյ հայրապետութեան և թագաւորութեան համագունդ իշխանութեան, շարեալ լափաբան բերմամբ հոծեմբական արհեստի ի Ստեփաննոսէ Սիւնեաց ալցելուէ ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատուր Կելառեցի»³, Ով որ եղել է այս սվերնագրի գրողը, — քերթվածի հեղինակը, թե՛ հավանորեն ուրիշ ոգմին, — նա բնորոշել է դրա բովանդակութիւնը ոչ ամբողջ էական կողմով։ Դա լոկ ողբ լի։ Քերթ-

¹ «Ստեփաննոս Օրբելյանի Ողբ ի Ս. Կաթողիկէն», քննարկը առաջարկեալ է հանձնարարութեամբ հրատարակեց Կարապետ Կաստեյանց, Քիֆլիս, 1885։

² Անդ, էջ 21։

³ Անդ, էջ 58 և հանա։

վածքի վերջում կա մի սծիշատակ քանի ըստ անուան ոգոդին: Ութ տնից հորինված մի սծիշատակարանն է սա (ամեն մի տունը ութ տողերից և տարբեր հանգեհով), որի տները առաջին տողերը կազմում են Վետնփանուս (և ոչ Վետնփանուս) գլխակապը: Տներին մեկ մեջ անվանելով հիշյալ հալատրին գրառունսպան հոգով լցնել, Անյաթ հոնտ[որ] շնորհօք ծաղկնալ, քառնիքուն և շատերից չզովարաննալ, տասն է, թե նա թյկարատեան տանէն նկնալ՝ սփոթով մեծաւ հարկադրել է իրեն զրեւոյ իր քերթվածը՝ Բի յայս հանդէս քանից մզնալ: Այս ցույց է տալիս, որ Օրբելյանի քանաստեղծությունն արդյունք է ոչ լոկ անձնական խոկերի, այլ նրա պէս խորհել է նաև Էկրատեան տանը ծանոթ նշանավոյ վարդապետը, հալատր Կնչառնի, անպայման և ուրիշներն արեւոյս վարդապետներին: Խնչ է նզել աչդ խոհն ու խոկը, և ինչի՞ արտահայտություն է այդ:

2. «Ուրդի» պատմական Ռիմքը Գլխատմար արևմտյան Գալոթյան և թեման:—Օրբելյանի իր Պատմության վերջին դուկներին մեկի մեջ՝ մեծ զարդովքով գրում է, որ Անոն թագավորի մահից հետո՝ Կոստանդին կաթողիկոսի վրա դնելով թաքուրս բազումս զրադատ քանից՝ զրկում են նրան կաթողիկոսությունից և քանաարկում են լուրս տարի: Այս լինում է 1289 թ.: Նրա փոխանակ կաթողիկոս են զետւմ Ստեփաննոս անուեով մեկին: Այդ ժամանակներում Եգիպտոսի սուլթանը տիրում է Ֆրանկներին իշխանության վերջին քաղաքներին և քրիստոնյաների մեծ կոտորածներ տեսւմ, Պաղեստինն ամբողջ նորից ընկնում է մահմեդական լծի տակ: Հերթը հասնում է Հայոց հայրապետական աթոռանիստ Հոռմկլային: Մի ամիս պաշարիցուց հետո՝ 1292 թ. առնում են և այս բերդը, կոտորւում, և կաթողիկոսին իր նպակապոսներով և այլ մարդկանցով գերեվարում Եգիպտոս, ուր նա մի տարի քանաարկված մնալով՝ մեռնում է քանտի մեջ: Եվ այսպէս՝ մոտ 140 տարի հետո Հոռմկլան, Հայոց նշանավոր կաթողիկոսների և զրոդների նստավայրը, դադարում է Հայոց կաթողիկոսի աթոռավայր լինելուց: Կաթողիկոս է ձեռնադրվում 1293 թ. Գրիգոր Անավարդեցին, որ հորինած ունի ներդրաններ, մի զրվատ, թուղթ ու քաղմաթիվ շարականներ, նա նստում է Կիլիկիայի Միտ քաղաքում, Կիլիկիայի Հայոց թագավորությունը մենակ է մնում և շրջապատված մահմեդական իշխանություններով: Մեջ է դալիս ավելի զուրկ կերպով հին քաղաքականությունը՝ կրոնական պիլումներով օգնության թիկունք ակնկալել արդեն հեռու ընկած քրիստոնյաներից: Գրիգոր կաթողիկոսը, որ սգիտէր և զնգուր և զպարութիւն լատին և յոյն աղգին, բռնում է Հոռոմների հետ միաբանելու ընթացքը, ԵՍՆ սկսաւ,—ասում է Օրբելյանը,— առ սակաւ սակաւ զամենայն աւանդութիւն Հոռոմոց նկնդնալոյն սպրդեալ մոռանելի ի մերս նկնդեցի. և ի մերոյս ի բաց քեցել մի միս: Առաջատում է

4 Յեդ. ԳԼ, ԳԹ, էջ 436—457.

6 Գ. Զորբաճեղյան, Հայկ. հին դար. պատմ., Վենետիկ, 1887, էջ 779.

գոթոհոթութուն և խռովութուն, թե՛սկ մեք հանապազ աղեցաւ և լերդախոց չինելով ի վերայ ալսոր ամենայնի՝ հաշնալ մաշլաք ծփական խորհրդովք ի տուէ և ի գիշերիւն։ Եմ հետեանքը լինում է այն, որ նա արեւելյան եպիսկոպոսներին և իշխաններին համանությամբ ու ստորագրությամբ գրում է վերելում հիշմած թուղթը կաթողիկոսին։

Հեռաւորն ու խռովուն վարդապետները շատ լավ հասկանում էին, որ շրջապատող մահճադական տերութիւններին վտանգված էր նաև Կիլիկիայի Հայոց թագավորութիւնը։ Նրանք նկատում էին նաև արեւմտյան հայ հոգեւորականության գալթումը դեպի հունա-հռոմեական եկեղեցիները, ինչ որ գոտութիւն էր պատճառել արեւելյան և արեւմտյան հայ եկեղեցականներին միջև, սկսած դեռ Ներսէս Լամբրոնացու և Գրիգոր Տառնորդոյ ժամանակներից։ Այս ամենի արգասիքն է ահա պատմապիւր եպիսկոպոսի քերթվածը, որ ցարեզում է կաթողիկոսական աթոռը փոխադրել Արեւելք։ Բայց կա և ամելի կարեւոր կողմը։

Եթե Շեքրէալին, որ եկեղեցիներին միութեան կողմնակիցն էր, համոզված սպասում էր երկրորդ խալակրաց արշավանքի (1147—1149 թթ.), թե ֆրանկները շուտով պիտի գան, և քրիստոնյաները տիրեն ամբողջ երկրին, և հալածված ու ցրված քրիստոնյաները դան ժողովման իրենց տեղերը և ուրախ կլանք վաշիւնն,— ապա այդ հույսը լկա այլևս։ Վերացել էր այդ երազը, որ թերևս երբեք չէին էլ ունեցել արեւելյան հայերը իրենց քնիկ երկրում։ Շեքրէալին, թեպետ ողորում էր Հայաստանի քաղաքական իշխանութեան կործանումը, բայց չէր մտածում Հայոց աշխարհում անկախ հայկական թագավորութիւն վերականգնելու մասին։ Նա իր ընթրվածի մեջ ներկայացուցիւ է հանդիսացել արեւմտյան հայութեան, 12-րդ դարի կեսերին, Իսկ Օրբելյանը 13-րդ դարի վերջերում արտահայտել է բուն հայաստանցիների իզմերի ու տնելներ, և ևնալատուր Կնչառեցին և նրանց նման մտածող արեւելցիները ամփոփվելով իրենց մեջ՝ այնպատու էին մի նոր ազգային գաղափարախոսութիւն զարգացնել և դրանով առաջ քերել ազգային հասարակական շարժում, այն, որ ցրված հայերը ժողովման մայր հայրենիքի մեջ, և Հայաստանում, հասկանալիս Վաղարշապատում լինի ազգի ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքական կենտրոնը։ Խնչ էր այս քաղաքական ձգտման հիմքը Մեծ Հայաստանում։

Յ. Թաթարական իշխանությունը 18-րդ դարում։— Զարմանալի չէ, որ թաթարների ծանրալուծ տիրապետութեան շրջանում, 13-րդ դարի վերջում ծագում է Մեծ Հայաստանի քաղաքական ազատութեան գաղափարը։ Դեռ Կիրակոս Գանձակեցին հույս և ակնկալութիւն ունեւր, թե հայերը թաթարական լծից կփրկվեն։ Այսպիսի քաղաքական լավատեսութեան հիմքն այն էր, որ թեպետև հայերն, առանձնապէս գլուխացիք, տնտեսապէս շատ նեղւ էին, բայց ազգայնապէս դեռ բողոքովին շնկմված լին ալլաղգիներին։ Դեռ կային հայկական իշխանութիւններ, իրենց ներքին ավատական իրավունքներով, թեպետ թաթարների գերազույն իշխանութեանը ենթակա։ Ինքը Առեփանեսոս Օրբելյանը Սյունյաց մեծ իշխանու-

թյան պայազատներին մեկն էր, հաշտուր Կեչառեցին կամ Կեչառեցին էլ, ըստ երևույթին, էր հայտնի Պռուշյան տոհմին⁶, որ Նշանավոր Պռուշ իշխանից առաջ կոչվում էր Հաղրակյան (հաղբակյան) կամ վարդանաջ (այլև Հայկազուն)։ Պաշլավունիների սեփականությունն է եղել Կեչառեց կամ Կեչառուս (այլև Կեչառիս) (այժմյան Մաղկավոր կամ Դարալիակ) գյուղն և այնտեղի հույկավոր վանքը։ Գրիգոր Մագիստրոսի շինածն է այնտեղի մեծ հույկապե հեղեղները, իսկ 13-րդ դարի սկիզբներին այդ Կեչառեց գյուղն ու մենաստանը սեփական ասացվածքն էր Պռուշյան տոհմի, և նշանավոր Պռուշ իշխանի հայրը, հաղբակի որդի Վասակը, 13-րդ դարի առաջին քառորդին շինել է սովել այնտեղի փոքր զնդեցիկ հեղեղներն է իշխանակ նաև իր պատրոնների, իվանե և Ջաքարե եղբայրների⁷։ Քաթարական աբշավանքի երկրորդ տասնամյակի սկզբում հենց Նորոդում են ալջ վանքը, Կային և ուրիշ իշխանական տոհմեր։ Այսպես Ջաքարյաններն, հեթանոսներով թաթարական իշխանությանը, զեռ երկար պաշտում էին իրենց դիրքը։ Նրանք թաթարների օրով ևս առժամանակ ժառանգական իրավունքով լինել կորցրել իրենց դիրքը նաև Անիում։ Բայց ժայ քաղաքի կառավարությունը հետագայում մոնղոլ խաների կողմից հանձնվում էր ուրիշ, սովորաբար հայ իշխանների։

Ավելի կարևոր է հետևյալ պարագան, երբ թաթարները տիրում են ամբողջ Հայաստանին, նրանց արշավանքի ավերիլ հոտանքը, որ ինչպես մերիկ տակն ու վրա էր անում երկիրը, շուտով նստում է նրանց կառավարիչները՝ սահմանված մեծ հարկերը ստանալու համար՝ աշխատում էին երկիրը խաղաղ պահել, հպատակ աշխատավոր ժողովրդին ապահով և զերծ անել կողոպուտից և ավերմունքից։ Նրանք ձգտում էին, որքան կարելի է, շենացնելու և քաղմամարդ դարձնելու աշխարհը։ Վերաշինում էին իրենց իսկ ձեռքով քանդված ավանները, քաղաքները, ինչպես Գանձակ, Կարին, Բաքի այդ՝ երկրի զանազան մասերի հարմարավոր հաղորդակցություն համար՝ շինել էին տալիս ճանապարհներ, հալածում էին ավազակներին⁸։ Հատուկ ուշադրություն էին դարձնում առևտրական մեծ ճանապարհների ապահովության և կարավանների ազատությանը, Հայաստանի վրայով դեպի Տրապիզոն էր անցնում հին տարանցիկ ուղին, որ գործել էր Բաքարտունիների և Ջաքարյանների օրով և կապում էր Արևելյան Արևմտքի հետ։ 13-րդ դարի վերջերում թաթար զաների ձեռնեղծությունը իրեն վաճառաշահ մեծ կենտրոններ բարձրանում են

⁶ Յեղիմեյա վ. Յալեմ, *Ռուսամասերությունը Սոսն Կալիպոլիսում* Վարդ. Ազգա-սանդի, Վիեննա, 1892, էջ 124 և հետ.

⁷ Կեչաղ վ. Մ. Ալիբեյ, Ալիբեյ, քաղաքը Հայաստանից, Վենետիկ, 1860; էջ 319—320.

⁸ К. Костомаров. Из армянской литературы XIII—XIV вв. Оттиск из Собрания, посвященного А. Н. Веселовскому, Москва, 1914, էջ 3.

⁹ Վեղ Ալիբեյ. Մանդակալ արավանքները, Վաղարշապատ, 1913, էջ 78—84. Երկրի վերահաստատումն և հարկահանությունը.

Անարպատականի քաղաքները՝ Սուլթանիա և Թալլերդ. արանցից էլ Հայաստանի վրայով էին ատետրական նախապարհները դիմում դեպի հյուսիս՝ Սև ծովի ափերն¹⁰ ու Խորիմ (Կաֆա, արդի Թեոդոսիա քաղաքը) և դեպի Արևմուտք՝ Փոքր Հայաստանի—Իկոնիայի սուլթանության—և Կիլիկիայի հայ թագավորության երկրով, որ բարեկամ է դաշնակից էր թաթարներին, Առևտրական կապիտալի շնորհիվ զարգանում են նաև մեր երկրի քաղաքական կյանքն ու արդյունաբերությունը։ Կարին, Սրբնկա և այլ քաղաքներն ատանձնապես կարևոր ատետրական կենտրոններ են դառնում։

Առևտրի, ինչպես և երկրի կառավարության մեջ, քնակառարար, մեծ գիր էին խաղում և հայերը թե՛ հին իշխանական տոհմերից և թե՛ նորոգյուղ ընտանիքներից, Առաջանում են և նոր մեծ կապիտալիստներ, որոնք իրենց հարստությունը ձեռք էին բերում թե՛ հին հայանի միջոցներով և թե՛ այնով, որ վերականգնում է հսկող էին դառնում տերության գանձարանը մտնող հարկերի ու սուրբների, Այսպիսի մեծ կապիտալիստներին պետք է հիշատակել Պարոն Սամադիին, որի մասին տեղեկություններ են տալիս արձանագրությունները, սկսած 1263 թվականից մինչև 1291 թ., իսկ 1295 թվին արձանագրություններից մեկի մեջ հիշվում է նրա թոռ Բեսուրան¹¹, Սամադիներ եղել է մեկն Անիի այն երեք պատրոններից, որոնք շիրիջունիս քաղաքը վերացրել են տաղմաճիների¹² միջոցով։ Այդ իշխանը, ևս, եղել է և վարչական անձ. ըստ արձանագրությունների, նա կարգադրություններ է արել հողային սեփականությունների ու հարկերի, կալվածքների առ ու ծախքի և փոխանակություն մասին, Ինքը գնել և ուրիշներին տվել է կալվածքներ, ի միջի այլոց 1264 թվականին, — ինչպես Երևանի Կաթողիկոս եկեղեցու արձանագրությունից իմացվել է, — նա զենել է իր հողով ու ջրով և Երևան քաղաքը, որ 13—14-րդ դարերում հայտնի է եղել ոչ միայն իր ալգիներով, այլև իր խանութներով իրեն վաճառաշահ մի վայր։

Շնորհիվ վարչության խաղաղասեր քաղաքականության և համեմատական բարեկարգության, յնայելով շափաղանց ժանր հարկերին, Հայոց երկրի տնտեսական կյանքը սկսում էր փոքր ինչ աշխուժանալ, Երկրի ժողովուրդը ամենամեծ մասով հայ էր. ընկած դրությունից բարձրանում

¹⁰ Монастыря Я. А., О торговле в городах Армении. Зриваия 1930, էջ 100 և հս. «Развитие международной торговли в монгольскую эпоху и участие в ней городов Армянского нагорья».

¹¹ Հեմլ Համալ. և քրդի. ինտիմուտի «Տեղեկագիր»։ Ա. Գիրք. Երևան, 1935, էջ 163 և հս., Գ. Ղաֆուզյան, Երևանի Կաթողիկոսի և նրա՝ Հայոց հողերի վիճակն արձանագրությունները, Այս հոդվածից են առնվում և մեացած տեղեկությունները Սամադիի վերաբերյալ։

¹² Տեղադատ, թթաղուտ ասվում էր քաղաքներից առնվող առևտրի և արդյունաբերության հարկը, իսկ այդ հարկը հավաքողները կոչվում էին տաղմաճիս կամ թթաղալիս։ Թթաղալս բառի տեղ քերականից են նաև քրալս, քրալս։ Հ. Սրբելի. Անվա ավերակներից, էջ 61 (ժան. Թարգմանյի)։

էին քաղաքները: Ավեր էր Վաղարշապատը, բայց դեռ կանգուն հայաբնակ կենտրոններ էին Գլին, Անի, Կարս, Կարին և այլն. հոծ հայ բնակչութիւնն էն ունեցել Մեծ Հայաստանի մի քանի նահանգները, ինչպէս և Կիլիկիայի հայկական թագավորութիւնը և ուրիշ կողմեր:

Հայաստանի բախտը սկսած Հուլիզու դանից (1256—1265 թթ.) կապված է հզօն պարսկական մոնղոլների իշխանութիւն հետ. քիչ քանները գովելի եղանդով լծուեալ էին նմանել Պարսկաստանի հին իշխողներին, որոնք հովանավորում էին գիտութիւնն ու գրականութիւնը¹³: Սրանից հայերին, սակայն, այն մասնիկն էր միայն հասնում, որ նրանք ընդհանրապէս համբարատար էին դնելի աշխարհներն ու աշխարհները: Այդ համբարութեան և երկրի խաղաղութեան հետ՝ բնականաբար լինում է նաև կուլտուրական առաջադիմութիւն: ժանապետաց որ թաթարները մինչև մահմեդականութիւն ընդունելը շատ լին խառնվում Հայաստանի ներքին գործերին. լկար ընդհանրապէս կրոնական հալածանք, հարկից ազատ էին մնում և նույնիսկ հարստանում էին հոգեւորականները, եկեղեցիներն ու վանքերը, որոնք և ազգային լուսավորութեան ու կուլտուրայի կրողներն էին: Անգամ թաթարական տառքին ավերել արշավանքների ժամանակ և քիչ հետո արդեն եղանակներ կերպով սկսում էին նորոգել ավերված վանքերը՝ Կիլիսոսք և ուրիշները, ինչպէս Վանական վարդապետն էր անում: Կառուցում էին և նորերը, վարդապետները հավաքում էին աշակերտներ, կազմում էին գրադարաններ: Հիմնում էին կամուրջներ, ջրմուղներ և նմանները: Մի քանի իշխանական տներ, կարողանալով թաթարների հետ բարեկամական հարաբերութիւն պահել, հովանավորում էին վանքերին ու գիտնական վարդապետներին: Եվ այսպիսով Հայաստանում կանգ չի առնում լուսավորութեան գործը, առաջ են գալիս գրողներ ու միայն հին սերնդից, այլև թաթարների օրով ծնված նոր սերնդից: Նրանք պահպանում և զարգացնում են հայ կուլտուրական ժառանգութեանը, Առանձնապէս հայտնի են դառնում հին Տաթևի վանքը, և ապա Նորավանքն ու Գալլեմորի վանքը Վայոց Ձոր գավառում:

Այս վերջինը կոչւում էր և ՏԱՂԵՐԻՐԱՅ ՎԱՆՔ: զրա շինել սովորն ու հովանավորն էր Խաղարայան Պոռ իշխանի որդին՝ էաշի, որա պապը՝ Վասակ, ինչպէս ասվեց վերևում, շին էր պահում Կիլիսոսքի վանքը, որ ըստ 1248 թվականի մի վիճակաւ արձանագրութեան, նորոգում են թաթարների ավերածութիւնների օրերում: Գալլեմորի վանքը հուլանվում է իր գալուցով իբրև քերկրորդ Աթենք: Այնտեղ տաուցել էր Ներսէս Մշեցի (մեռ. 1284 կամ 1290 թ.) վարդապետը, որ աշակերտել էր Վարդան Արեւելցուն, գիտնական հումարան և հումանական գրականութիւնը: Նա սկզբում գործել էր Տարսնի Առաքելոց վանքում, հետո հաստատվել Գալլեմորի վանքում: Նրա աշակերտներից մեկն և նրա հաջորդ էր Ստաշի Նշեցի:

¹³ Стопан Лаз-Пуль, Мусульманские диваны пер. В. Бартольд, СПб. 1899, էջ 181:

(մեռ. 1336 թ.), Սասունի Նիլ գյուղից. շատ հնդիւնականութիւն մի վարդապետ, ժամանակի համալսմամբ գիտնականներին մեկը, որին տնվաւում են «Սոսանի փիլիսոփայ», «Աւայաղթ հոգեւոր»։ Նրանից մեռում են և գրական աշխատութիւններ—Ս. Գրքի մեկնութիւններ, թղթեր, «Վիճաքանութիւնք», «Մեկնութիւն քերականի»։ Նա իր նրկարամյա գործունեութիւնը ընթացքում Գլաձորի վանքում պատրաստել է բազմաթիւ աշակերտներ, թվով մինչև 363, ինչպես հաշվում են։ Այդ վանքում, ինչպես նաև մյուսների մէջ, բացի Ս. Գրքի ու կրօնական գիտութիւնների հետազոտութիւն, ուսուցանում էին նաև քերականութիւն և փիլիսոփայութիւն, Արիստոտելի, Պորփիրի, Գիոնիս Թրակացու և ուրիշների մեկնութիւններով։ Նրանք ժողովում էին և ձեռագիրներ, դրադում էին ձեռագիրներ արտագրութիւն՝ պրքեր բազմապատկելու համար. երբեմն և ձաղկի զրբով ու մանրանկարներով զարդարում էին իրենց արտագրած ձեռագիրները։ Նույնի Նիւնոս աշակերտներից իրրե ժաղկարար և մանրանկարիչ, միաժամանակ և իրրե գիտնական վարդապետ, հայտնի է Մխիթար Սասունցի (1291—1337 թթ.)¹⁴։ Սա աշակերտել էր նախ Ներսես Մշեցուն, հետո Նսալի Նիւնոս. ապա ուսուցիչ է եղել Մեծփա վանքում և պատրաստել բազմաթիւ աշակերտներ։ Պարապել է և դրականութիւն՝ հորինելով ճառեր, մեկնութիւններ և այլ գրվածքներ։

Արդարև քաղաքական կացութիւնը 13-րդ դարի վերջին քառորդին շատ հարափոփոխ էր. Թաթար իշխանները հաճախ զենքի ուժով միմյանց դէմ էին հիւսում. նրանցից շատերը հնկում էին մամլիկանների վրա և հակված էին մահմեդականութիւն կողմը և Նույնիսկ երբեմն հալածանքներ էին հանում քրիստոնյաների դէմ. բայց կային նաև դաներ, որոնք քարեմիտ էին գնայի քրիստոնյաները, զի արտեց միչ էին տնւում իրենց թիկունքը։ Այսպիսիներից էին Հուլալու դանը, որի համար Ստ. Օրբելյանը (էջ 416) գրում է. «Մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյսն և անկակալութիւն քրիստոնէից»։ Նրա որդին՝ Ապաղա, քայլ հնգ և բարի և խաղաղարար. և սա սիրող քրիստոնէից»։ Ապաղայի մահից հետո (1282 թ.), ինչպես գրում է Ստեփաննոս Օրբելյանը¹⁵, «նստի Թագուտարն՝ եղբորորդին Նորին՝ դան ամենայն աշխարհի. որ և Ահմադ անուանեցաւ զինքն. և խորհեցաւ քակել զօրէնս քրիստոնէութեան և առնել մշտման զամենայն ազգ»։ Նա իր զաւր հաստատուն դարձնելու համար՝ 1286 թ. զենաց անհուն զորք ի հորասան ի վերայ Արդուինին՝ որդայ Ապաղայ զանին, զի սպանցէ զժողովն Թագաւորութեանն. և կայնալ զնա դարձաւ ալարէն։ Իսկ Աստուածն քրիստոնէից յայնմ գիշերի դարձոյց զսիրտ մեծամեծացն առ Արդուին, զոր հանեալ ի քանտէ կապանացն՝ թագաւորեցուցին և սուր ի վերայ նոնալ կոտորեցին զամենայն թշնամիս

¹⁴ К. Костанкч, Из армянской литературы XIII—XIV вв. Оттисск из Сборника, посвященного А. Н. Веселовскому. Москва, 1914, էջ 6—8.

¹⁵ Ստ. Օրբելյան, Պատմ. հաւանքին Միսական, Թիֆլիս, 1876, էջ 425 և հան.

նորաւ, Հասեալ զկնի սատակեցին զԱհմադն և զհամախոհս իւր՝ զՀասան Մանլի շիխն, զՍահիպ դիւանն, զԱլիքնախն և զայլս բազումս:

Եւ էր ընդ նոսա թագաւորն Դեմետրէ, զոր սիրեաց Արդունն, և հտնմա զամենայն աշխարհս Հայոց՝ զառնն Աւագանն [Ավագն Իվաննի որդին էր] և զտունն Շահանշահանն [—Ջաքարբի] և զԳագեցին և զորդիսն Սալուսն Աթարեկին: Եւ ինքն էր յոյժ սիրող քրիստոնէից և եկեղեցիաց: Էր ընդ նոսա և Տարսայիճն [—Ստեփաննոսի հայրը], զոր յոյժ մեծարեաց և սիրեաց Արդունն: Ապա դարձաւ Դեմետրէ մեծաւ խնդութեամբ և ամենայն ազատաց, և մեծամեծք Վրաց և Հայոց ընդ նմա: Եւ եկեալ ի Շարուր՝ գնաց նմա ընդ առաջ Տարսայիճն մեծամեծ պատուով, և արքունեական ընծայիւք մեծարեաց զթագաւորն: Եւ նա արեալ տարաւ ընդ իւր զնա յնրիկն Աւագանն՝ յԱյրարատ. և քաղում թախանձանցք բռնազբոսեաց զնա, և հոգ Աթաբէկ ի վերայ ամենայն տէրութեան իւրոյ մինչ և ի Տփիսիս և լենի և ի Գարս... Եւ յայնմ հետէ ունէր Տարսայիճն զաթաբէկութիւն աշխարհիս Հայոց և քաղում պիւրութիւն և ողորմութիւն ամենք նեղեալ ազգիս Հայոցս: Նա Տփիսիս գնալով՝ այնտեղի արքունի գիվտնի հարկատուութեան դաւթարից հանում է 150-ից աւելի հայկական վանքեր և ազատում է հարկից:

Թվում է, թե արդեն առաջացել էր հայկական մարզերի քաղաքական միութիւնը մեկ հայ իշխանի ձեռի տակ, և վերականգնվում էր Ջաքարայան տիրապետութեան շրջանը: Բայց ցավոք, հրկար չի տևում այն. Դեմետրէ թագաւորը սպանվում է 1289 թ., և հաջորդ տարին վախճանվում է Տարսայիճը, Վերանում է Հայաստանի քաղաքական միութիւնը մի հայ իշխանի կռուովարութեամբ, և հայ իշխանները մնում են իրարուց անջատ: Բայց դրանով չի մեղմում Հայաստանի քաղաքական միութեան քաղաքիս, Կոնստանդնուպոլսի և ամեն ինչ, անջուշտ ոչ ժողովրդի բոլոր խաւերի մէջ, այլ նշանավոր իշխանների ու վարդապետների:

Այլ դրութիւն է ստեղծվում, երբ թաթարների մեծամասնութիւնը Արդունի որդի Ղազան զանի (1295—1304) օրով և նրա հրամանով ընդունում են մահմեդականութիւն և հետզհետե սկսում են, իբրև մուսուլման դամադրականներ, աւելի ու ավելի նեղութիւն պատճառել հայերին, և հայերի ընդհանուր դրութիւնն ամեն ինչ ավելի վատթարանում է 14-րդ դարի կեսերին և հետո: Հայերն այն ժամանակ արդեն հոսանքաբե են լինում իրենց քաղաքական իղձերի մէջ, բայց 13-րդ դարի վերջերում, և նուրիսկ Ղազան զանի օրով, որ բարեհաճ էր զնպի հայերը, դեռ կենդանի է հղել Հայաստանի քաղաքական անկախութեան զապահարը, որ և անդրադարձվել է մեր բանաստեղծութեան մէջ: Տեսնենք այժմ այդ:

4. **Որբնայանի Վոլրիս Գյուպն ու Բոքիմվանքը:**—Այս քերթվածի հիմնական զապահարի համեմատ էլ աշուղութեամբ ընտրված և համարված է նրա նյութը (սյուժետը) և ընդհանուր հորինվածքը: Ինչպես միտումնաւոր վիպական բանաստեղծութեան մէջ անուղղակի տրվում է որևէ քաղաքական ուսում, նույնպէս և այս քերթվածի հեղինակն իր հիմնական

զաղափարը քարոզում է և իր զգացումներն արտահայտում է իրեն «Ար-
քայուհի» անձնավորված Կաթուղիկեի բերանով։ Սա քերթվածի կենտ-
րոնն է։

Ձայն բարձրագույն և ահագին
Նման ոգացող որոտացին,
Կանյին ահեղ և սաստկագին
Գայ ի դաշտեզ Արարատին։

Այսպես է ակնել Օրորելյանն իր «Ողբեր»։ Ձայնը լսվում է ամեն տեղ և
հրավիրում է՝

Երթա՛լ ի գուժ աղաղակին։

Հոգիներն այդ ձայնի վրա դարձնում են մահաբեր քնից, խուռն կարավան
կապած իրար հանից դիմում են դեպի «Արամա[ղ]ենան տունը», լցնում
Արարատյան դաշտը, հասնում Հայոց նոր Քաղաքը—Վաղարշապատ, Եվ
ի՛նչ են տեսնում.

Տեսին ի նմա դարձարուհին...
Ջմայրն լուսյ Հայկայ դարմին,
Մերկ, խայտառակ ի րաթրոնին,
Ջանձամբ արկնալ զգուրձ խոււարին,
Հերքն հողեալ որպէս կնտին,
Ստինքն ցամաք զերդ ըսկընդկին¹⁸.
Ջկուրժքն բախէր քարամբ ուժգին,
Առաջ արեանց իրանէին.
Մոխիր կուտէր նման բլրին,
Ցանէր ձեռամբն ի գագաթին,
Երամք կանանց ճշող շալից
Շուրջանակի զնա պարէին.
Դասք երգողաց կանգնեալ կային,
Ջղամբանական փողոս անէին.
Աւաղական ողբովք լային
Ջղալարափողսն հնչէին.
Կէսքն շիւան մեծ քարշէին,
Կէսքն զվարսիցըն փետէին։

Եկողները հարցնում են ողբացող Արքայուհուն.

Այս ո՞վ, այս ո՞վ ի րազմոցին
Նման մեծի արքայուհոյն.
Այս ի՞նչ, այս ի՞նչ սուգ անհնարին...

¹⁸ Սկզբիկ—ամալ կամ երկուս լուսնեղ զարեանքի հին։

նա, մեծ քաղաքին, սրտի խորքից հոգուց հանելով պատասխանում է.

Այս ե՛ս, այս ե՛ս էջք Միսինին...
Իսկ այս՝ որ շուրջ զինն պաքեն՝
Ծն իմ դստերքն որ նախ նին...
Եկնդեցիք Հայաստանին.
Ժողովեցաք ի միասին
Լնույ ողբովք զաշխարհ բնակին:

Ուրեմն Արքայուհուն, ալսինքն պաթուղիկէինա [դիմառնաբար] շրր-
ջապատող լալկան նանանց հրամբ պատկերացնում է Հայաստանի Եկա-
թուղիկէինա—մայր եկնդեցու դուստր եկնդեցիններն ու վանքերը, որ մեծ
մասամբ նույնպէս ամայացած էին, Եվ Արքայուհին բացատրելով իր
ստեփ պատճառը՝ ասում է եկեղեցիին.

Երբեմն էի որպէս զերկին,
Հիմ հաստատր եմ գտնին.
Երբեմն տրփի արեւորին,
Այժմ խաւար անհնարին...
Երբեմն հարան առաքաւորին,
Մածնալ գրկեքն իմ փեսային,
Այժմ եմ սեղեխ գտարուտին,
Անպէտ նման հոսնալ շրին:

Նախատուր Կնչաւեցին, անշուշտ, վշտահար սրտով պատմել է Օր-
բնչանին Վաղարշապատի Կաթուղիկէի տխուր դրութիւնը, որ և անդա-
դարձվել է Ողբիչ մեջ.

Այժմ անպիտան նման աղբին,
Եղեալ կոխան լորձոտանւոյն...
... Մկիթայի հօրանք թուրքին,
Կամ խաչտառակ մանկունք նոցին,
Որք միշտ կոխան... ասնէին,
Տեղիք լարեալցն, որք գործէին...
Փոխան րուքմանցն նարդոսի
Աղբք և աւիշք... կուտին...
Հօրանք այժից... բռնին:

Կնչանանի՜ Կաթուղիկէն լքված, անուշադրության է մատնված հղի,
մի ամայի անշնոյ դաշտի մեջ, Ավեր է հղի և Վաղարշապատ մայրաքա-
ղաքը, և շուրջը միայն խաշնարուտի տեղ: Այդ դրութիւնից է, որ թայրիս
եմբքայուհինա, ալսինքն ի բայ լքված եկնդեցին, ճշարով ողբում է: Եվ
նա բացատրում է իր ցավալից վիճակի պատճառը, այն է՝ Հայաստանի
քաղաքական անկախության անկումը և այլազգիների տիրակալութիւնը,
հրկրի ազնորումը, խշմանների զուրս քշվելը, կորելը... Եվ քերթողը Ար-

քայուհու բերանով երկար կանգ է առնում Արշակունի, Բագրատունի,
Արծրունի և Նույնիսկ Միսական թագավորութուններ և նրանց կործան-
ման վրա, և վերջը հարում է.

Ահա՛ սոքա այսպէս անցին,
Բնաւին ի քաց եղծեալ ցնացին.
Որպէս դատուեալ ալ շերնին.
Նման երազոյ կարծեօք թուին,
Որպէս ծաղիկք ամառայնոյն
Արեւակէզ թարշամեցին.
Որպէս սաղարթք վարսեալ ծառին
Խորշակահար ցամաքեցին...
Արդ ոչ էս է, ոչ երնին,
Անէացեալք նման նանրին,

Ի՞նչ է եղել հայկական քաղաքական անկախության անկման հե-
տեանքը: Հայ իշխանութիւնները.—շարունակում է ողբացող Արշալու-
սին,—անցան այնպեան, և

Միայն այլրի զիս աստ թողին,
Որպէս զօլինչ ի քաց լծին:

Իսկ ի՞նչ է մտածում Արթուրհին, որ Նույն է՝ ի՞նչ քաղափար է քարո-
ղում հեղինակը նրա բերանով: Նա շարունակում է ասել.

Արդ մենացեալ յանվայր [=անշէն] դաշտին
Քերպ զգազան անապատին,
Ջաշուհրս ածեմ կողկողացին,
Ձայն արեւակեմ սղորմաղին.
«Ու՛ր էք, որդի՛ք իմ արածին,
Եկայք տու մայրքս ձեր նախնին,
Որպէս օրէնն է զաւանդին,
Տանել խնամ ծեր ծնօղին»:

Ահա թե ի՞նչ է քարոզում նա — վերադարձ դեպի մայր երկիրը, հոգալ
սրա համար: Վերադարձ այն ամենքի, որոնք իրենց օտարական են հա-
մարել: Հայոց աշխարհից դուրս և միշտ կարտուով նայել դեպի իրենց մայր
երկիրը: Բայց տակավին առհասարակ ուշադիր չեն այդ կոչի ձայնին. և
այլրի թագուհու վիճակը մնում է Նույնը, որ վերնում տեսանք: Նա ոտնա-
կոխ է այլազգիներին:

Տեսէ՛ք զիմ փառքն զսուաջին,
Տեսէ՛ք զվերլին նախատս անձին,
Թէ ո՞ւր էի, 'ս ո՞ւր բնկեցին.
Յնրկնից լերկիր զիս իջուցին,
Խորք անդնդոց զիս ծածկեցին...

Աւ"ր են փհտայքն իմ ատաղին,
 Հայրապետաց զովքն որ անցին.
 Աւ"ր թագաւորքն իմ են նախկին,
 Ու"ր և ազատքն ընդ սեպուհին.
 Աւ"ր են իշխանք գահադշխին,
 * Նախարարաց կոյտքն որ կային.
 Աւ"ր զօրութիւնք թիւր ըմանկին,
 Խռանեալ ամբոյնքն անթուշին.
 Աւ"ր րաբունիքն որ լիս կային...

Եվ մի մեծ շարք ճարտասանական հարցումներով հիշեցվում է Հայաստանի անցյալ փառքն ու ճոխութիւնը, որ, — ասում է, —

Նման հողմոյ լիս շնչեցին
 Աւ անհետ ք բաց անցեալ փառքին:

Եվ իրեն մեռւմ է լալ ու վա՛յ տալ իր պիտին և գիմում է եկողներին, որ նրանք էլ վա՛յ տան:

Փոխան բուրձանցըն նարդոսի
 Աղբք և աւիշք ի քեզ կուտին...
 Փոխան զենմանք պարարակին
 Հօրանք այծից ի քեզ բունին.
 Ա՛յ վա՛յ քեզ վա՛յ որ չվճարին,
 Վա՛յ քո փհտայքըն ատաղին...
 Վա՛յ դքս երէցն Արշակունին.
 Վա՛յ զքո կրտսեր թագաւորին.
 Վա՛յ զքո Սիւնին և զԱրծրունին.
 Վա՛յ զԾամբկոնին և զԱղուտնին,
 Վա՛յ զՇիրական և զՎանանդին.
 Վա՛յ զհարսնոյն և զԾոփացին...

Այսպես ասատիկ ողբ ու կոծ. բայց՝ մինչև եւրո: Եվ Արքայուհին վերջը դիմում է իր սեփական դուստրներին (Հայաստանի եկեղեցիներին—վանքերին), և նրանց, որ եկեղեցին նրա կոյնին¹⁷ և իր մոտ էին, խոսքն ուղղում է նաև այն ժամանակվա բալոր նշանավոր վանքերին ու հայկական կենտրոններին, և հայաբնակ վայրերին, որ են՝ Գվին, Անի, Միւսինիք՝ և Աղուանք ընդ Վիրային, Ամարաս վանք, Արատզի թաղնոս ասաքյալի վանք:

¹⁷ Քննարկելի՛ք՝ ո՞նց և ուր ինչ սուղեկներն—և կրտսեր որ ինչ մաս սուղեկներն տնայեցինքն բայն այսպէս խոսեցինք ձեզ անցեալ լի. այլ կրտսեր է: Ինչ անցեալ՝ Վերջի ընտանոց Ընդ ինչ:

Նոր զարդարէ փառօքըն հին,

Եւս առաւել քան զոր էին.

Գայ մեզ գայել ծայրի ուժգին.

«Վերջինս է մեծ ցան զառաջին»:

Ահա Օրբելյանի ճերթվածի նյութն ու դիմավոր զաղափարը: Հայրենասիրութիւնը նրա երկի մեջ ավելի խորացած է, դարձած մի կոնկրետ ձգտում: Այդ ալիս ոչ թէ լուկ ոգը էր, ոչ թէ տարագիր ժողովրդին հասկացելու և փրկելու մի տարտամ իղծ և աղոթք էր, որ երգել էր դժոռ Լուվանենես (Յովհաննէս) Մարկավագ Վարդապետը. ոչ թէ մի երազ արեւմտյան ազգերի ձեռքով փրկվելու արեւելյան քրիստոնեւթյան հետ, այլ քարոզվում էր վերջ տալ ողբանքին, խնամ տանել սեփական երկրին, ձգտել բնիկ երկրում ունենալու եկեղեցական կենտրոնը և Այրարատյան դաշտում, իր նախնիի վայրում, վերանորոգելու Հայոց թագավորական զահր Այս արդեն մի նոր ու մեծ, պարզ ու որոշ զարգացում էր մեր հայրենասիրական երգի մեջ արեւմտիկ զաղափարի—տիրով կապվել բուն հայկական երկրի հետ և կլինի ճշորդումը:

Ճ. Ուրիշ ձևակերպողմբ:—Վերեւում բերված բովանդակությունից և հատվածներից կարելի է տեսնել, որ Օրբելյանի բանաստեղծությունն ձեն ըստ ընդհանուր կառուցվածքի հարմար ու զեղծելի է մտածված. ըստ ոճի կամ մանրամասների արտահայտություն, սակայն, բավական աղքատ է, լուռի պերճություն. հայ թագավորությունների մասին պատմող կտորների մեջ Նույնիսկ պարզախ է հնչում: Բայց դրվածքն ընդհանրապես լուրջ ու ցամաք չէ, ինչպես գուցե թվա ռմանք: Դա ազդում է, որովհետև ընչում է մի անկեղծ քնքր զգացմունք, որ կենդանություն է տալիս ամբողջին, և որովհետև իր էական զաղափարով մտածել է թեւագրում ընթերցողին, Դրանցով այդ երկը հաճույք է պատճառել իր ժամանակին, պատճառում է և մեզ իսկ:

Օրբելյանի ճերթվածի ձևական թերությունը պարզ ու հասարակ ոճի մեջ չէ,—քանի որ այսպիսի ձևով էլ բանաստեղծությունը կարող է զեղծել լինել,—այլ պակաս ինքնութայնության մեջ: Դա մասամբ նմանողություն է ներսեւ Շեքոպեարու Եղեմիտ Ողբին: Ավելորդ է այստեղ դնել այդ երկուսի մանրամասն համեմատությունը: Երկուսի մեջ էլ ընտրված է դիմաւորության ձևը, Եղեմիտն իբրեւ ողբացող այրի կին կամ տղիկին, Վաղարշապատի Կաթողիկեն՝ իբրեւ Նույնպիսի թագուհի: Երկուսն էլ ուրիշ-ներին կոչում են ի որդակցություն: Երկուսի մեջ էլ հին լավ օրերի և ժամանակակից աղետությունից վիճակի հանդիպարություն, որ սակայն Ն. Շեքոպեարուց առաջ էլ արել է ողբացող Արիստակես Լաստիվերտցին: Երկուսի մեջ էլ դրա համար կիրառված են տուր բառով ճարտասանական հարցումներ: Կան նաև մի քանի նման պատկերներ և այլ թեթև նմանություններ, որ երկրորդական են, որինակ՝ «պացող կնոջ նկարագրի մեջ Շեքոպեարին ունի՝ ռժարամբ ծնծծմ կուրծքս սրտի», Օրբելյանը՝ «Ձկուրծքն բախէր ցարամբ ուժգին»: Անցնել և այլն չերեւս ստվերի պես կամ

հրապի պես. կամ «Որպէս ծաղիկ ամառայինէ (Են.), «Որպէս ծաղիկք ամառայինոյն» (Օրբ.): Բայց այդ ամենը, բացի գուցէ բարաւնութիւնից, կարող են համեմատ լինել նշուքի նմանութեան պատճառով և միմիանցից անկախ ևս ծագած լինել իրական կյանքից: Բացի այդ շատ ճարտասանական և բանաստեղծական պատկերավորութիւններ այլ ժամանակներու և ինչպէս՝ նախալիկն անվանել են մայր եկեղեցի, իսկ միւս և կեղծիքները՝ նրա դուռները: Սրանից էլ կարող է բխած լինել վաղարշապատի կաթողիկէի բարաւնական պատկերացումն իբրեւ մի կին, շրջապատված իր դուռներով— եկեղեցիներով, վանքներով: Բայց այս ամեն ձևական նմանութիւնները նրկորդական են, քանի որ Օրբնյանի երկի ընդհանուր հորինվածքն ու նրա զարգացումը հեղինակի իրեն (գուցէ նախատուր Կնչառնցու հետ խորհրդակցութեամբ) ստեղծածն են և նշուքին ու թեմային հարմար ևս վալիւուլ մտածված ու գուրբ բերված, եւ որ զխաւթուն է, ինչպէս վերնում ասվեց, նա արտահայտիչ է գործնական հայութեան որոշ խաւթներ:

ԽԱՅԱՏՈՒՐ ԿԵԶԱՌՆՅՈՒՄ

1. Որք վասն իշխանաց:—Այս գրողի մասին շուրջ կենսագրական տեղեկութիւններ, բացի վերնում հիշվածներից, որ իմանում ենք Օրբնյանից, որոնցից և երևում է, որ նա մի հեղինակ է, որ պատկառելի գրողական է հղել, Կնչառնց կամ Կնչառնի վանքի առաջնորդ կամ միաբան, ուստի և ըստ ժամանակի տվորութեան կուլիւն է Կնչառնցի կամ Կնչառնցի Գուցն և այդպէս անվանվել է իր տեղեկներով: Քանի որ, ինչպէս տեսանք, Կնչառնցու գրգռվել է Օրբնյանը գրել իր «Ողբը», ապա ապաստել է, որ նա ինքն էլ հայրենասիրական ոգով տոգորված լինել: Այնպէս չիշոււմ է Կնչառնցու «Ողբը» վասն անհրաժեշտ ասան արեւելեան¹⁹ և բերում է արանից ութ տող: Այդ, ըստ երևութիւն, նույնն է, ինչ որ մի ուրիշ ձեռագրի մէջ կա «Ողբ» նախադրու Կնչառնցուն վասն իշխանաց վերնագրով,²⁰ որովհետեւ սրա մէջ կան մեր բանաստեղծ բանասերի իր մեծ աշխատութեան մէջ առած ութ տողերը: Այս «Ողբը» կազմված է երկու մասից. երկուսն էլ արվեստի տեսականից անշա՛ն բաներ են, բայց արժեք ունեն իրենց պատմական բովանդակութեամբ:

Ինչպէս վերնում տեսանք, Սյունիքի Տաքոսայի՛ն իշխանը, որ ընդարձակ սահմաններով Հայաստանի կառավարիչ էր, մեռել է 1290 թ., և դրանից հետո Արեւելեան Հայաստանի վիճակն սկսել է վատանալ: Ղազան ղանի իշխանութեան սկզբում (1295 թ.), նրա գործակար Նաւրուզը, որ

¹⁹ Ղ. Ալիբեյ, Այսթրաք, էջ 268 ա, 18—22:

²⁰ Հայաստանի Պետ. Զեռագրատուն (Մատենադարան), գրք-քիթ № 426 (Գանձարան), էջ 661—665, Այս «Ողբը» տրոսգործիւնը շեղհորդութեամբ ասուցա Մատ. գիտ. աշխատակից Լ. Նալիկյանից:

«չուժ ասեցող էր քրիստոնէից և թշնամի եկեղեցացա, հրամայում է աստ-
հասարակ քակել զամենայն եկեղեցիս, և կողոպտել զամենայն այլ քրիս-
տոնեա և, թլիստել զքահանայս: Եւ քահանայն զազում եկեղեցիս. խռովու-
ղեցին թաղում քահանայս. կոտորեցին թաղում քրիստոնեայս. և որք ի
սրոյն մնացին՝ կողոպտեցին զամենայն ինչս. գերեցին թաղում կանայս
և մանկտիս: Եվ այդպիսի վարվել են, մինչև որ Կիլիկիայի Հայոց թագա-
վոր Հեթումի միջնորդութեամբ՝ Ղազան զանր հրամայել է զտղարեցնել
քրիստոնյաների հալածանքը, և զինել խաղաղութիւն մեզ և ամենայն
աշխարհիս Հայոց, գրում է Ստեփաննոս Օթրեյանը²⁾, հալատուր Կիլի-
սիայի «Ողբի» մեջ պատկերացված է ահա Արևելյան Հայաստանի այս-
տիպօր դրութիւնը 1295 թվականին, և երևում է, որ նա այն միջոցին էր
հորինել է իր քերթվածը, ինչպէս Ֆրիկն իր նշանավոր մի քանաստեղծու-
թիւնը, որ կտեսնենք հետո: Նա ողբում է մեք բերելով երկրի ըստ եկեղե-
ցական հայացքի ընկած դրութիւնը:

Ջերկիրս արեամբ, մեղաք ներկեցաք...

Ջեկեղեցեաց դրուելս փակեցաք...

Ջաւաղանին խորհուրդն ուրացաք...

Ջխալն և զհաղորդն զայլացուցաք,

Ջեկեղեցին սուրբ քամահեցաք.

Մաղր ու նախատ թաղմաց մեք եղաք.

Յերկաթ ու ի նեղ զընդան մեք մըտաք,

Յաղքատութիւնս որ ժամանեցաք...

Ի ձեռն շար ազգի դրաւեցաք.

Որթիչկ լուինք քալիս որ դիպաք...

Ինչո՞ւ է այդպիսի—Որովհետև այլևս չկան հին հայ իշխանները,—
մտածում է քերթողը: Եվ նա իր քերթվածի երկրորդ մասի մեջ մեկ մեկ
թվում է իր շրջանի նշանավոր իշխաններին.

Մեռան իշխանքըն մեր ցանկալի,

Ու իրեանց որդիքն աղայ հասակի.

Սուգըն տիրեաց մեզ իւրայէլի...

Սաղո՞ն, սիրա՞ծ մեծ Ապա զանի,

Գոված, ընտիր լամէն հանգիսի,

Ջալերդը քաց, դինչ Դամասկոսի,

Տես ըզգոտառս ի յերեւմանի,

Ջեկեղեցիքս ի մեծ վրտունկի,

Ու Բաղանայիս ի տաքտաքոնի,

Ջիւթլու քուղայն յարեան հալալի,

Ջիւրեան նըման պատկերն ի մոխրի.

²⁾ Ստ. Օրբելիան, Պատմ. նահանգին Սիսական, էջ 471—475:

Ջարքայն իշխեմ յիշել զվրացի,
Ջատւաս երեան զԴեմետրէի,
Որ դեռ քրտումնն ի վայր կու վաթի՝
Միրտըն քաշած, ու դեռ կենդանի,
Պարոն Պըռքըն զարդ հեծելի,
Որ զերկաթի դուռն առէր փռշի,
Ալու բազուկ էր նոր Ահսի,
Հիմն հաստատ Հայոց հաւատի...

Նա այսպէս գովելով հիշում է և Պոռշի որդիներին, Տարսայիճ իշխա—
նին և ուրիշներին. վերջը բացականչում է տրամուլթամբ լի.

Աւա՛ղ, թէ զորն ասեմ ի լալի,
Ջայն հին ու նորքն ի գերեզմանի,
Վա՛յ զմեացորդքս առաւ կենդանի,
Մակար չէաք ժընեալ յաշխարհի,
Արդ գերեցաք ու խիստ արժանի,
Մեր գերադարձքն լեն ի միշի:
Աւգնեա մեզ ի նեղութեան մերում,
Աստուած, ազալեմք:—

Այսպէս ազոթքով վերջացնում է Նաև առաջին մասը:

Նրա երկի արժեքը միայն այն չէ, որ նա ազգովի է ժամանակի իրա-
կանությունից, այլ ավելի այն, որ ողբալով Հայաստանի թշուառ դրու-
թյունը երկրորդ մասի մեջ կարոտով հիշում է հին նշանավոր իշխաննե-
րին, որոնք պոռթկման առնձին էին, սգաւարաւոր ի պատերազմի՝
պատուեցան ի դուռն արքունիք կամ, ինչպէս մեկի համար գրում է միջ-
նադարի համար մի անսպասելի համեմատությամբ,

Հանց ուժընդակ էր ինքն յատենի,
Քան թրիստոսի նըշանն [= խաւը] ի բեմբի:

Փերթողը խիստ ցավում է, որ այլևս չկան նրանք. եթե լինեին այն-
պիսի իշխաններ, մեր երկիրն արյունով չէր ներկվիլ: Քվում է, թե նույն
տարիներին հենց մեր այս քերթողի մտքում ծագել է Հայաստանի կենտ-
րոնում հայկական քաղաքական իշխանությունը վերականգնելու դադա-
փարը, որ քիչ հետո երգել է Ստեփաննոս Որբելւանը հենց այս քերթողի
հորդորանքով: Պետք էր հայերին ուսուցանել, թե ի՞նչ էր հարկավոր
իրենց փրկության համար:

2. «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացու»:— Խալատուր Կնչա-
ռեցին գրականության համար ուրիշ կողմից էլ որոշ գիր կատարել է:
Թաթարներին իշխանության օրով, 13-րդ դարի երկրորդ կեսին, ինչպէս
տեսանք, կանգ լի առել հայկական քաղաքների բարգաւաճումը: Նրանց:

քնակիչներն էլ ունենին իրենց գրական պահանջը: Քաղաքացիական հր-
գեթից, որոնք զվարճացնում էին փարթաւ քաղաքացիներին նրանց ուրա-
խութեան խնդրանքներ յիշողին, ծագում է նաեւ քեքի ընթերցանութեան
գրքերի կարիքը: Սրբերի վարձերը, «Յայտմատութիւն» մէջ մտած է ուրիշ
վկայարանութիւններն այլեւ շէին գտնուում ընթերցասերներին: Հար-
կավոր էին, այսպէս ասած, զրոյսուցիկ կամ զվարճական վեպեր և,
որոնցով նրանք զբաղվին իրենց պարապ ժամերին: Մեր գաղութիւն
առաջին դարում արդեն անհնար է ընդհանրապէս չի կարծաթեմքներ
վերագրված «Աղեքսանդրի պատմութիւնը»²², որ սիրված է եղել հայերի
մէջ: Միջնադարում ասպետական ռումաններ յի առանձին ցիկ և կաղ-
մէլ: Յարանխայում նաեւ Ալեքսանդրի վեպերը, որոնք մշակված են հեռ-
թիւն ավանդութիւններ և ֆեոդալական սովորութիւններ խառնուրդով:
Ինչպէս երևում է, մեզանում ևս 13-րդ դարի վերջերում պահանջ է եղել
այդ գրքի համար, որ նախատուր վարդապետն անձամբ արտագրել է այն՝
«սորագրեալ» [= մաքուր գրելով] ի գրոց հետը²³:

Քայց նա իրեն լոկ եզրիշ շէ հանդես հկել, ալլ նաեւ իրեն ընթերց-
այն պատմութիւն հատվածներ վերջում դրել է ընթերցման, որոնց մէջ
նույն նյութը ժամանակի կենդանի խոսակցական լեզվով պատմում է
նմանողութեամբ, կամ հորինում, հարմարում է բոլորնապէս նմանողա-
կան պատմութիւններ, որոնք կուլում են «կաֆայա», այսինքն հանգա-
վոր ոտանավորներ: Սրանց մէջ, սակայն, չի առնվում հատվածների քո-
վանդակութիւնն ամբողջապէս, ալլ այս կամ այն կենտր, որ արժանանում
է հեղինակի ուղարկութեանը, որից և ազդվում է նա: Ուստի այդ ոտանա-
վորները միասին չեն կազմում մի կապակցված պատմվածք: Այս ձևով,
սակայն, նա թարմացրել է ավելի ևս հետաքրքիր ու գրավիչ է դարձրել
Աղեքսանդրի առասպելախառն Պատմութիւնը: Հետո ուրիշները, — ինչպէս
նույն Պետրոսեան տոհմից Զաքարիա եպիսկոպոսը Գեուկյաց, որ կուլում է
Գեուկցի, ինչպէս և արա ուսուցիչ Գրիգորիս Աղթամարցի, — նույնպէս
հորինել են համանման ընթերցման, որոնք հետագայում խառնվել են
միմյանց և ազալազգվել են, կրելով նորանոր խմբագրութիւններ հաւն-
լումներով ու կրճատումներով: Այդ գրքի սերն ու պահանջն այնքան մե-
ծացել է, որ ծաղկագրվել ու նկարագրվել է է՝ Զաքարիա եպիսկո-
պոսն էլ եղել է դրա նկարող ու ծաղկագրող. «Զաքարիա եպիսկոպոս»²⁴
գծող և նկարողս Աղեքսանդր գրոց, գրում է նա իր համար: Ուրիշներն
էլ նույնն արել են, այնպէս որ կան ձեռագիրներ, որոնց ամեն երկու երե-
սին կա մի նկար պատմված գեպքերի վրա²⁵: Քննարկները գրված կան
նաեւ նկարների տակին կամ շուրջը և վերաբերում են երբեմն նկարներին:

22 «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, Վենետիկ, 1842:

23 Յայտնեւ Հեղեղիտ, Ուսումնասիրութիւնք Ստոյն կայսրիւնայ վարաց Աղեք-
սանդրի, էլ 88 և հաւն., 118 և հաւն.: Տեղեկութիւններ յի մասն առնվում են այս գրքից:
«Սրբագրեալ» ոչ ուղղի ըստ այդ բառի նա իշտեղեկութեան, ալլ՝ մաքուր գրել, արտագրել:

24 Անդ, էլ 118:

ինչո՞ւ է այսպէս սիրվել այս գիրքը: Դա միակն է եղել իր տեսակի մէջ և ժողովրդականացած, իբրև պատմութիւն Ալեքսանդր Մանգոյանացու, որի անձնավորութիւնը և՛ արեւելյան, և՛ արեւմտյան շատ ժողովուրդների հիացմունքի առարկա է եղել: Բայց կա և հետեւյալ հանգամանքը: Այն ժամանակի պարզամիտ մարդիկն ընդհանրապէս շատ հեշտ համատեղ էին ամեն տեսակի հրաշալիքներով լի պատմվածքների, որոնք գրգռում էին նրանց իրականացումը և դուր էին գալիս նրանց: Հիշենք միայն, թե ինչեր է պատմելիս եղել Հեթում թագավորն առ Մանգու դանն արած հեռավոր ճանապարհորդութիւնից վերադառնալիս. «Բազում իրս զարմանալիս և անծանօթս պատմէր մեզ զբարբարոս ազգացն, զոր տեսեալ էր և լուծալ: Ասեն թէ կայ աշխարհ մի անոր քան զՎաստայիքն, ուր կանայք են ի ձև մարդոյ րանականաց, և արճն ի կնոպարանս շանց, և ձն անբանց, մեծք և մազղը... Կայ կղզի մի աւագուտ, յորում քուսանի ծառօրէն ոսկի ինչ պատուական... և ի հատանին այլ բուսանի ի տեղին բոս նմանութեան եղբրուաց»²⁵: Մրանց նման բաներ են և Սուտ Նալիօթենեսի Ֆանտաստիկ պատմածները, թե Ալեքսանդրը հեռավոր երկիրներում ինչ հրեշմաղոր էականք է տեսել: «Տեսաք շնագլուխս և անգլուխ մարդիկ, ուր զայսն օւնէին ի լաւքսն և զրեւոնէ:... «Եւ էին յայնմ անտառին վարդիկ, որ օնկածոյք կուէին, և ունէին մեծութիւն առ մարդ կանգունս քսան և չորս, և երկայնապարանոցք էին, և ձեռք և մատունք սղոցածնք... Ապա անդուտս գնացեալ՝ եկաց ի դալարիկուտ իմն վայր, ուր կային վարդիկ վայրենիք նման հսկայից, մեծութեամբ իբր զառաջինսն, լաւքօք բոլորակք: Բաւք, շէկք: և ունէին երեսու որպէս զաղիւծալ... հերս ունէին կանգունս չորս և յայնութիւնն իբրև աշտէի, և եկին առ մեզ մաշկեալ պարեգօտովք, հզօրք յոյժ, պատրաստք պատերազմ տալ՝ առանց տիգաց և նետիցք: Տեսնում են և երեքալքանի զազաններ, կրիայի շափ լվել, մարդակեր մարդիկ, թթաւ իբրև ալօս, որ շան պէս հաչում են. հրաշալի ծառեր, ձկներ, բորք հուրք ոչ լինէին երեսալք, այլ ցուրտ չուրք աղբորացք, հինգ ոտանի զազաններ, չհինգ ալօք և այլք վնցալք և վնցոտանիք, երկայնութեամբ իբրև կանգունս երեսուն: «Անդուտս մարդիկ, զգլուխ ոչ ունէին րնաւ, այլ ի լանջս ունէին զալս և զերբաննա, և այլն»²⁶:

Դժվար թե ինքը Կնչառնցին համատացած լինի ամեն այսպիսի, իր բառով ասենք, զշաղկապէս բաների, բայց այսպիսի կտորներն էլ է նա վերածնել ցերթվածի:

Ա՛յ իմ հրաշագործ Աստուած՝
 Արարիչ ազգաց ամենի,
 Աւ զարմանալի քոյ դործք՝
 Զինչ պատմեն երամք տեսողի.
 Ըզրուսանովի ոլխարս

²⁵ Կ. Պաննիկեյի, Պատմութիւն Հայոց, էջ 256:

²⁶ «Պատմութիւն Ալեքսանդրի Մանգոյանացու», հատ. ՄԵԸ, ԲՊ., էջ 168, 128 և հտն.:

Զը տեսաք ի Հունդուստանի,
 Բայց զայս տընկածոյ մարդիկ՝
 Զենք տեսել յառակս ամենի:
 Այս են Հրակալքըն վայրենի
 Որ են սըներ ի յանտառի,
 Հանքք բոլոր թաւք շիկամորթի,
 Երեսս ունել իբր առիւծի,
 Հերս ունէին լորից կտնգնի՝
 Ու լայնութիւն զինչ աշտէի.
 Պարեգաւտաւք մաշկեղինի՝
 Պատրաստեցան ի կուր յայտնի.
 Եւ խարճ ածին յանկարծակի
 Երկուց կողմանց վտանգելի,
 Տեսողացս է հիանալի,
 Եւ ի մէնք է ձեզ պատմելի...²⁷

6. Նեչառնեցու կարծիքն Ալեքսանդրի կյանքի և Պատմության մասին:—Կա մի ուրիշ պարագա էս, որով այս գիրքն արժանացել է մեր այս Քերթոզի առանձին ուշադրութեանը: Առաջաբանի մեջ «Նախադրութիւն շարադրութեանց գրոց աշխարհակալին» նա հայտնում է, թե «Առտուածազան խնդիր հարանց հոգեորաց և համշիրակ համբակաց և համակամ ե մշտաշարժ սիրով ստիպել է՝ իրեն «արտաբանել... զաշխարհակալ իմաստունն, որ տիպ և գաղափար եղև նշմարիտ երկնաւոր քաղաքութեան և կուսածին աստուծոյն մեռյալ Զիտուի Քրիստոսի»։ Որովհետև թեպետ և Արիստոտելը գրել է այն վիպասանութիւնը, սակայն արդիւնքն զահաււէտ ոչ տրամադրեցաւ ի տարմալուի մտաց նորաս, այսինքն նա իր պատմածները ըի նմանեցրել Քրիստոսի տնօրինականներին, որ և ինքն այն անում է «յօգուտ ոմանց բանասիրաց»։ Վերջն ավելացնում է, թե Ալեքսանդրի կյանքը պատմում է «յօգուտ և յօրինակ ամենայն թագաւորաց և իշխանաց... և քաղաքացիական արանց պատերազմողաց .դ. [=չորս] են տրտադատմունք՝ գիտութիւն, արիութիւն, համբաւ և դատաստան»։ Այսպես և ըստ այսմ օրինակի վսեմ է արքայից և դորասպետաց իմաստուն և հանճարեղս լինել... Իսկ արդար դատաստանաւ՝ որ է մասն քառից խոհեմութեանց ըստ իմաստնոյն Պղատոնի, որ գրեալ է ի Տիմէական տրամարանութեանն որ իսկապէս ի սա տեսանի լաւարարիտ յաշողութիւն առ ասացեալ իրացս յայտարարութիւնքն»։

Բերենք նախաբանի բուն մասը. որի մեջ բացատրում է, թե ինչպես Ալեքսանդրի կյանքը ստիպ և զաղափարէ կամ պատկերն է Քրիստոսի կյանքի. «Առտաւոր նախաբանեմք զձեռնդ նորա [= Աղեքսանդրի], որ եղև շարժմամբ և նշանօք՝ բերելով զնկարագրութիւն ասպնիսազն աստու-

²⁷ Անովտե է 2. Տաշտեի «Ուսումնասիրութիւնք Սոսն Պալիսթենեայ գրքից, էջ 180.

ծոյն որ եղև ի Բիթղամհէմ աստեղն գուշակմամբ և գալստեամբ Արարաց-
ւոց, իսկ յաղթութեամբն խուժադուժ ազգաց՝ յայտ առնէ զյաղթութիւն
Տհառն խաչիւ ի վերայ խաւարասէր իշխանին, նաև քակտումն Սուրայ և
Մայրանայ՝ դաւերման զԺոխոց բերէ զյիշատակ, իսկ զըմպանակն մահա-
բեր արքեայ նմա՝ արտայայտէ զճաշակումն լեզուոյն և քաջախոյն վասն
յառաջաճաշակ պաղոյ նախաստեղծին, իսկ փայլակն որ անկաւ ի ծով և
աստղն զոր վերացոյց արծաթին՝ ցոլցանէ դաւանդումն Հոգւոյ Հօրոյն՝ որ
ի ծոց ծնողի նորա, եւ զշանթն Հրացեայ ի շուր՝ ազդէր զնոյնմանալ լու-
սաւարացն. իսկ շամանդաղն՝ զխաւարն աշխարհատարած, որ ընդ թռամբ
ածեալ շօշափէր ի բորն զՀանդերձ, նմանապէս ամբ կենաց նորա ԼԳ [— 38].
նոյնքանիւ յափեալ զժամանակ՝ ելանելոյ յաշխարհէ աստուածն քանիչ,
վերջն ավելացնում է, թե ամբողջ Համեմատութիւնը լինվին կգտնես
գրքիս վերջում:

Գրեթէ բոլոր ձեռագիրներն ունին րարաւնութիւններն անմիջապէս
կից վերջարանական մի Հատված, որի խորագիրն է. «Եթէ ամենայն
կենանք վարուց յաղթութեան և արիւթեան, նաև վախճանն նշանօք առ
տէրն մեր, զոր բերեմք մարգարէութեամբս. կամ ըստ ուրիշ ձեռագրի՝
«Եթէ որպէս առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս վերաբերի Աղեքսանդրոս»²⁸,
Սրանից մի կտոր տպագրված է²⁹:

Խաչատուրը ջանում է Համոզել, որ եթե Եվային խաբող թշնամու
ասածը, «Կամ առ Մովսէսի օհն օրինակ եղև տնառն լարլարանաց... նաև
պոռնկիւն Ովսէի և մեղանշելն Դաւթի ունի տեսութիւն մարգարէութեան,
նաև պատկերն Աթենայ, տպա ո՞րչափ ևս առաւել այրս աչս սքանշելի
Աղեքսանդրոս Մակեդոնացի տիպ և գաղափար եղև երկնակալ թագաւո-
րին մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր Աստուծով և աստուած օգնական
պարզօք յայտ առնեմք: Ապա բերում է 18 քաղաքաւնութիւն Քրիստոսի
և Աղեքսանդրի կյանքի, Կաֆաներից մեկի վերջին տողերի մեջ էլ նա
գրում է.

Քաջ առիւծ էր [Աղեքսանդր] Հեծելի...

Կարողութեամբ Սամսոնի,

Եւ օրինակ էր Քրիստոսի:

Խաչատուր Կեղանցու այդ վարմունքը, որի դեմ 19-րդ դարում ան-
գամ ծառացել են Եվրոպայում նստած կաթոլիկ վարդապետները, Հետա-
քըքիւր է նախ այնու, թե մինչև ո՞ր է Հասել մեղնում միջնադարյան սքո-
լաստիկ մտածողութիւնը. մեր վարդապետները քրիստոնեական աստծու
մարդնութիւն, այսպէս ասած «տնօրինականներին» սիմբոլիկ պատկեր-
ները տեսել են ոչ միայն Հին Կտակարանի մէջ, այլև Աղեքսանդրի Պատ-
մութեան: Այդ մի շատ պայծառ իլյուստրացիա—լուսաբանումն է այդ

²⁸ Հ. Յոգլան, Ուսումն. Ստալն Կալ., էջ 87, 100—105, 115:

²⁹ «Պատմ. Աղեքս. Մովսէս», էջ 195, ծանոթութեան մեջ:

ուղղութիւն, որաւ համար և կանգ առանք այդ մասին: Բայց միայն այդ-
քանը չէ Կեչառեցու գործի պատմական նշանակութիւնը, այլ զա միա-
ժամանակ ցույց է տալիս, որ նույնիսկ սքոլաստիկ վարդապետն ազա-
տախոհ է եղել: Նա, որ ժանոթ է Պատենի, գուցե և ուրիշ փիլիսոփաների
երկերին, առանց քաշվելու ազատ մեկնութիւններ է տալիս ճշմարտով
աշխատելով, այսինքն հալաւալով իր ասածների ճշմարտութիւնը,
շմտածելով անգամ, թե որանով պրոֆանացիայի—սքոլապոէթութիւն է ե-
թարկում իր կրօնի խորհուրդները: Եվ այդ անում է նա ճաստովածազան
հոգեւոր հայրերին ու ճշմարտական համբակներին խնդրելով՝ «յօգուտ
ոմանց բանասիրացաւ: Այսպիսի ազատամտութիւնն, որեմն, լոկ անհա-
տեկան չէր, այլ հաստով էր եղել որոշ մտավորական խափի:

Ամենքը, հարկավ, այդպէս չեն մտածելու եղել: Կեչառեցին գիտե-
ն, որ իրեն մեղադրողներ էլ կլինեն այդ բանի համար. ուստի Ալեքսանդրի
կյանքն իրրեւ ստիպ էր զազալիարա Քրիստոսի ներկայացնելուց հետո՝
«Յիշատակարանի» մէջ գրում է. «Եւ արդ զայս այսպէս համեմատեալ
մի՝ ստգուտանիմ յոմանց, զի զպատճառն վերադոյն ճատեցաք. այլ ըն-
թեռնելով զսա յիշման արժանի լիցի և ձէնշ Խաչատուր Կեչառեցիս. զի
ի յարմարում սակաւ բանիցս և ի գրութիւն գրոցս հաւատով աշխատե-
ցաւ. նաև զի [այլ ընթերցված՝ ան՝ դիշ] հեթանոսական գրեալն ան-
միաբան են և անվայելուչ ի վերոյ շաղկապեալ բանից, որանկացաւ, և
ներքոյ լի սնոտի կարծեօք և խաբէութեամբ»³⁰. Շատ հետաքրքիր է և այս
հիշատակարանը: Որ այս, այսինքն Ալեքսանդրի և Քրիստոսի կյանքն
այսպէս համեմատեցի,—ասում է նա,—զրա համար թող շմեղադրվեմ
ոմանցից. որովհետեւ պատճառը վերեւում հայտնեցի—իսկ վերեւում ասել
էր, թե «աստվածազան հոգեւոր հայրերը» ստիպել են Նրան այդ մեկնու-
թիւնները գրելու: Դրանք երեք Կեչառեցի միաբաններ են եղել—Չմեղա-
դրեք ինձ,—ասում է նա,—այլ, ընդհակառակն,—շարունակում է նա,—
այս որ կարդաք, ինձ հիշման արժանի արեք. «Երովհետեւ սակավ խոս-
քերս (այսինքն իր քաղաքատեցիւնները) հորինելու և այս գիրքը (Ալեք-
սանդրի Պատմութիւնն) արտագրելու համար հալաւալով նեղութիւն կրե-
ցի, մանավանդ որ հեթանոսական գրվածքները (Ալեքսանդրի Պատմու-
թիւնը) ճանմիաբան են, իրար լրոնող, հակասական են և ճանվայելուչ,
անվայել, անհարմար են՝ դրսից կապակցված խոսքերով որակավոր են,
այսինքն գեղեցիկ են հորինված, և ներսից լի են սնոտի կարծեքներով ու
խաբէութեամբ: Կնշանակի՝ թե և Կեչառեցին արել է իր 18 քաղաքատու-
թիւնները, քայքայ նա լի ընդունել ամեն ինչ, որ պատմված է Սուտ-Կալիս-
թենեի գրքի մէջ: «Ալեքսանդրի Պատմութիւնն կարճ ու գեղեցիկ քննա-
դատութիւնն ըստ ձեռի և ըստ ըրվանդակութիւն» մի անհրաժեշտ հիմք է
Կեչառեցու և իր պէս մտածողների զարգացման աստիճանը որոշելու հա-
մար: Նրանք այնքան էլ խիստ պարզամիտ և դյուրահալմատ չեն եղել, որ

³⁰ Ե. Յալլան, Ուսումն. Ստոյն Կալ., էջ 88 և հտն.:

այն դրժի շաղկապմանքներն ընդունեին: Հարկավոր էր նրանցից զատել Ալեքսանդրի լավագույն բարեմասնությունները: Դրա համար ահա նեղություն է կրել Կնչառեցին իր մեկնությունն անելիս:

4. Կաֆառնըմ և այլ քնքրվածները:— Եկեղեցւոյն Պատմութեան համար հորինված կաֆաների մասին դեռ չեն կատարված բավարար քանակական աշխատանքներ, որոնցով պարզված լինեին նրանց աղետաւորները և որոշված լինեին, թե որո՞նք են Կնչառեցու գրածները, որոնք՝ Ֆրիկինը, Դրիգոր Աղթամարցունը, կամ ուրիշներնու, Երկու քառյակի նույնութեանը Ֆրիկի րանքների հետ՝ յուր իւր կտրվի ներքեւում: Բացի այդ պետք է նկատի ունենալ, որ Կնչառեցու գրվածքներից սակավաթիւ պատառիկներ միայն կան տպագրված. չեն հրատարակված նրա այլ բանաստեղծութեաններն ևս: Ուստի հնարավոր չէ այժմ առհասարակ լիովին լուսաբանել նրա քերթողական դեմքը, պարզել նաև, թե նա ինչպե՞ս է մշակել իր ըստ բովանդակութեան նմանողական կաֆաները, որքա՞ն և ի՞նչպիսի ինքնուրույնութուն է մտքրել նրանց մեջ՝ համեմատութեամբ Եկեղեցւոյն Պատմութեան: Այդ պատճառով այստեղ կրեմք նրա անունով եղած երկերից բավարար հատվածներ, որոնցից կերևա նրա արվեստը:

Նա հաճախ հորինում է բարաոնութեամբ (պրոսոպոպոյիա), այսինքն կամ խոսքն ուղղելով անխոս կամ վախճանված հերոսներին, կամ նրանց բերանից խոսելով: Եկեղեցւոյն Պատմութեան այն հատվածի համար, որի մեջ պատմվում է Ալեքսանդրի ու Դարեհի ճակատամարտն և Դարեհի հաղթվելն ու փախչելը, տպագրված կա հետևյալը.

Ձայն արար, ձայն արար,
Փող քընտրին ձայն արար...
Հաներ զթուրըդ քո ճահար,
Ի երկվարըդ քո հեծար.
Ջամբոխդ ի հանդէս տարար,
Զօրօք դորավիդ եղար.
Ի Դարեհի հանդէպ հասար,
Ճակատըն բոլոր անցար.
Փոթորակի պէս խառնեցար,
Արծըւաբար դու բարեբացար...
Ճակատ առ ճակատ եղեն,
Խառնեցան յանդուգն ու ահագին,
Դիակօք զվայրըն լրցին.
Խաւարաւ արնն ի յերկին:
Խառնամբոխ մեծ հանդիսին
Աղեքսանդրու և Դարեհիս,
Սուսերամերկ կարաւանիս.
Աճապարեալք ռատի գընդիս.
Դիաթաւալ արեան ծովիս,

Ճարիր և ճակատ ի մէջ դաշտիս,
Կէսք վա՛յ ասնն յասպարիսիս,
Կէսք վա՛յ ասնն յաշողակիս:
Դարե՛հ, դարձաւ այլամդ ի լար.
Թաղդդդ նննգեց քեզ յարալար.
Դարձի՛ր ի հետ՝ և արա քեզ ճար.
Հա՛ն արտասուս անձրեաշար.
Թանգ ի վերուստ է անհընար,
Խափանեցաւ խորհուրդդ անկար³¹:

Եթե Կելառեցու այս վիպական հատկութիւնների մեջ առանձին շնորհք չի երևում, ընդհանրական, ազդու և ճաշակավոր են նրա ողորդումը ու բարոյախոսական կաֆաները հայրենի շափով և կենդանի խոսակցական լեզվով հորինված. սրանց մեջ խոսացրած, սեղմ արտահայտված է որևէ իմաստալից միտք ըստ ժամանակի ոգու և լայնացու, օրինակ, մի ուրոշ շնորհքով է ողված Ալեքսանդրի մոր ողորդ մահվան համար.

Մա՛րք մանկագունից, լացե՛ք,
Վա՛յ տուք ինձ թշուառականիս.
Որ փառաց թափուր եղէ,
Խաւարի այնք ծնողիս.
Արեն իմ շուտով մըտաւ,
Քաղեցաւ շուշս իմ ու հոգիս.
Մաւրս ծաղկաթափ եղէ,
Անպըտուղ կամ ի յաշխարհիս.
Այ՛ իմ միամտր որդի,
Աղեքսանդր հզօր մեծ արքայ.
Զեղէ արժանի տեսող,
Վա՛յ մօրքս քո Ոլոմպիայ.
Ոչ բան մի բերնէդ լուայ,
Թէ սրտիս մէջըն կայ ճարայ,
Քո ցաւուդ ես դեղ առնէի,
Կամ հէթիմ բերէի բեշարայ³²:

Գեղեցիկ են և հետևյալ իմաստական-ուսուցական քերթվածները.

Հիւանդին աստուած է դեղ,
Որ մահու և տէրն է կենաց.
Ջհաքիմըն սարաք ասեն,

31 Միտուան, Համագրութիւն Հայկական Կնիքիւր, և Լեոն Մեծագործ, Հաւաքեալ ի Ք. Ղեկեղեցի վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1835, էջ 308, ծան. 1—400:

32 Ա. Կոստանյանց, Գրիգորիա Աղթամարցի և իւր առղերը, Հավելված Աղեքսանդրի Պատմութեան տաղերը, Թիֆլիս, 1898, էջ 121 և հետև. Այս քերթվածը համարում եմ Վե. չառնքանը ըստ ամենայն Հավելումներում:

Խելօքնուն է բանս ասուցած.
Ձոր և խմաստուն խօսիւք
Գալինոս բազմաց վկայեաց.
Հրամանն ի վերուստ պիտի,
Որ արեւն է բլթիչկըն գոված:

Միննույն միտքն արտահայտված է բախտի անվի պատկերով ևս
ըստ ժողովրդական հավատալիքի.

Յորժամ շարխն ի յետ քակի
Ու ձեզէ ի յաշքոն խորոր,
Ոչ դարձ և ոչ մալն աւգնէ,
Ոչ հարիր հազար ձիաւոր:

Ահա և խաբուսիկ բախտի գծմ ղայրույթը, կամ մարդաս անճարու-
թյունը հեղհեղուկ կյանքի և ապագայի անհաստեթյան առաջ.

Է՛ շարխ, ես քեզ ո՞նց աստամ,
Երբ շունիս զոք ոչ մաւտնոր,
Ոչ դավլ, ոչ երգում տնիս,
Ձի քո սիրտըն է նենգաւոր...

Այս և նախորդ քառյակը կան նաև Ֆրիկի «Ընդդէմ ֆալաքին» քա-
նաստեղծության մեջ³³ և հավանորեն այստեղից են անցել «Ալեքսանդրի
Պատմությունը»:

Երբ շարխն ու ֆալաք են մի
Միացն՝ ր, ես ո՞ւմ գանգատիմ.
Այս իմ սրնուցած ծառայք
Չըթողին սակաւ մի հանգչիմ.
Տօլվաթն ի քամի նըման,
Որ յերկրէ յերկիր վտարիմ,
Աստուած գիտէ թ' ուր մեռնիմ,
Կամ ես ո՞ւմ ձեռք տի թաղվիմ³⁴:

Վերջին տողերը համա. Ֆրիկի հետևյալ տողերի հետ³⁵.

Ոչ գիտեմ թ' ուր մեռանիմ,
Ոչոք շունիմ որ թաղէ զիս:

Կեչառեցին սիրում է երգել կյանքի ունայնությունը, որիչ քերթված-
ների մեջ՝ երբեմն բազմաթիվ տնեքով, որոնք դասավորված են այբբե-

³³ Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 218 և հտե.:

³⁴ Ը. Յաղյան, Ուսումն. Մտայն Կալ., էջ 115 և հտե. «Ընդդէմ աստուած է դեզ».
Խաճ Կ. Կոստ., Գր. Աղթ., էջ 121:

³⁵ Անդ, էջ 31. «Գեղեցիկ պատկերք ու հերք տեղով սկզբուղ բանքի մեջ»:

նայան կարգով ըստ իրենց սկզբի տառի: Այդպիսիններից է, օրինակ, **սևյա կնանքս** է հրազ նման տողով սկսված շարքը³⁸, որ լի է բարոյակրթական խրատներով, բերենք դրանից հետևյալներն իբրև օրինակ.

Ճանապարհ անրիծ գնայ.
Որ շտիրէ տանջանքն անվախճան.
Մի՛ խաբիր մնոտի սիրով,
Որ խաւար բերէ հոպկան,
Յիմար գինին լէ՛ բարի,
Նայ է ամեն մեղաց բանայի.
Նըման այնոր մի՛ լինիր,
Որ լաւիէ զքամին ի քարի:
Շատ ապրելն լէ պարծանք.
Պատասխանն իրաւ կու պիտի, և այլն³⁹:

Այս տաղից տարբեր է նույն սկիզբն ռեհցող հետևյալ գեղեցիկ ծերթ-վածը մարդկային կյանքի ունայնության մասին³⁸.

Այս կնանքս է յհրազ նըման,
Զինչ դարթնու՝ լինի փոշիման,
Ի ջուռն զինքն իշխան գիտէ,
Երբ դարթնու՝ աղքատ է՝ անբան.
Թէ քաղցել է՝ հաց տեսնու,
Լըրջանայ՝ կարոտ՝ անպիտան,
Այսպէս Աղէքսանդր եղև,
Որ մըտաւ ի նեղ գերեզման:

Աշխարհի երերուն կյանքի պատկերն ու ունշութիւնն է երգել կնշառեցին նաև հետևյալ սիրուն կաֆայով³⁹.

Այս կնանքս է ի ծով նըման⁴⁰,
Որ մարդիկ ի ներս կու լողան.
Մարմինս է ի նաւ նըման,

38 Ընշում է Աշխարհի իր «Այրարատ» աշխատութիւն մէջ, էջ 256 և հոն. *Նկատուցի և Կնշառեցաւ մասին զրնչիս, բերելով այս առաջին տողը:*

39 Անձամբ ասում էմ Հոյսատանի պիտ. *Ճանապարհան (Մասնազատան)* 3417 Թվականին գրված Ք 8689 հեռագրից, էջ 76: Ակզբից պակտս է, մի թերթ համառ լինելով. նույնն այրենական կարգով սկզբից սկսած («Այս կնանքս է հրազ նման») կա Ք 7709 հեռագրի մէջ, էջ 153 ա:

38 Կ. Կոստանյունց. Գր. Աղթ., էջ 126. Յայլուն, Ուսումն. Ստոյն Կուլ., էջ 127, հեղինակը Կնշառեցին է:

39 Կ. Կոստանյունց, Գր. Աղթ., էջ 115. ահ՝ և Յայլուն, Ուսումն. Ստոյն Կուլ., էջ 118 և հոն:

40 Պետ. Անուագրատում, Ք 7029 հեռ., էջ 156 անի «Աշխարհըն է ի ծով նըման»:

Հոգիս է դանձ անմահական.
 Միտքս է նաւաւար ճարտար,
 Որ հանէ զցամաքն յերևան.
 Աւա՞ղ թէ կոտորի այս նաւս,
 Մեք ի վար մընամք փռշիման:

Աշխարհիս ունայնությունն ու մահն է ողորմ նա երազի և մեռնող հոր պատկերով ու խրատական բովանդակությամբ նաև հետևյալ անտիպ քերթվածի մեջ, որ բերում ենք ամբողջությամբ⁴¹,

ՈՂՐ ԱՊԱՆԵԱՐՈՒԹԵԱՆ
 ԱՍԱՑԵԱԼ Ի ԿԱՅԱՏՈՒՐ ԿԵՅԱՆԱՅԻՈՅ

Եղբա՛րք, ձեզ խըրատ մի տամ,
 Մի՛ կենաք դուք շատ խոր ի քուն.
 Զարթի՛ք և արթուն կացէ՛ք,
 Խիտս ի մօտ եմք յօրն ի մահուն:
 Աշխարհս է յերազ նըման,
 Զինչ լինի մէկ մ՝ անուշ ի քուն.
 Եւ ի քուն լինելն ի ներս՝
 Գանձ զբտաւ անթիւ և անհուն.
 Խընդալուն ցրնծայր ի սիրտն՝
 Եւ ուրախ էր դանձին սիրուն.
 Եւ հանց համարէր յիւր միտքն,
 Թէ լինիմ իշխան մեծատուն:
 Երբ որ ի թընոյն զարթեաւ
 Եւ տեսաւ որ է՛ր սուտ ի քուն,
 Յայնժամ՝ փռշիման դարձաւ
 Ի վերայ իւր շատ խընդալուն⁴²,
 Ետրժամ հրամայէ աստուած,
 Որ խընդիր գան մարդուն հոգւոյն՝
 Պահիկ մի դադար չի տան,
 Որ տեսնու զորդիքն իւր սիրուն:
 Զաշերն ողորմուկ ասէ՛ք
 Եւ նայի ի դէմ սիրելիուն.
 Ի ճարկէ ճարակ ընկնի,
 Զի զըտնու հնար զերծանելուն.
 Հառաչէ սրտէն ի վեր
 Ու կոչէ զմայր տըղեկներուն:
 Ու հանց պատասխան տայ իւրն.
 Որ նուազի ի խեղճ յասելուն:

⁴¹ Առնում եմ Պնտ. Ձեռագրատան վերնում հիշված № 8658 ձեռագրից, էջ 70 հ հան.

⁴² Վերջին 13 տողերը տե՛ս «Արարատ» ամսագիր, 1918, էջ 250, իրր Զրիկի:

Եթ ունի մարմն ու ոգի հմ հս,
 Որ կանցնիմ ի ներքև հողուն:
 Տըղա՛յք, ձեր օրն ուղքն հմ հս,
 Որ կերթամ 'ւ ալ ոչ դամ ի տուն:
 Հիմիկ դուք ձեզ պէտ արէք,
 Թողէ՛ք զլարն զնացէք հետ բարուն:
 Չարին տեսցող լերուք,
 Որ լինիք բաժին գնահետուն:
 Բարեացքն սիրող լերուք,
 Գործեցէք 'ւ արէք ձեզ անուն:
 Գիտեմ՝ քանի որ ապրիք,
 Վերջք մահ է ձեզի գալուն:

Զեռացիներն մեջ կան հալատուր Կեղառեցու անունով և ուրիշ քան անտեսողություններ, այսպես, օրինակ՝ հետևյալները հայրենի շահով. «Տաղ ի հալատուր Կեղառացու՛» նա էմ կորուսեալ ոչխար, մոլորեալ ի սուրբ քո հետնէն⁴³, որ ունի կրոնական խրատական բովանդակություն, աղոթախառն: Նաև «հալատուր Կեղառեցույ ասաց [նալ] տաղ ողէշահ և պիտանի՝ Թէ մարդ ես և միտ ունիս՝ ես տամ ձեզ (քեզ) խրատ մի քանիս⁴⁴»

Բացի այսպիսի ոգեշահ, խրատական քերթվածներէց՝ գտնում ենք նաև «Վարդ ու պիւլպիւլի» մի վեպ⁴⁵ նույնիսկ խառն թուրքերեն տնով. ու հալատուր վարդապետէ ասացեալ Կեղառեցուէս: Սկսում է այսպես. «Յորժամ եղև գարուն, եկ պիւլպիւլն այգին. Տեսեալ ըզթուսի վարդին ունայն ի նըմին, Տըրամեցաւ դառնագին, արտասուէր ուժգին. Զի ոչ եգիտ անդէն ըզիր սիրելին»: [հաջորդում է մի թուրքերեն տուն, և շարունակությունը հայերեն]: «Ասէ ցայգեգործն. Ենդրա՛յր սիրելի, ո՛ւր է վարդըս պայծառ, զոր աստէն թողի. Միթէ տեսեալ ես դու. տուր պատասխանի, Թէ ով տարաւ զնա արար զիս գերիս, և ալլև: Կանկածելի է, թե այս տաղը Կեղառեցունը լինի:

5. «Բարաոնուրիւնք ի մահ և Աղեքսանդրի»:— Մակեդոնացի աշխարհակալի պատմության վերջում գրված են Կեղառեցու շորս բարաոնություններ, որոնցից հետո գրեթե բոլոր Զեռացիներն մեջ կա այս հիշատակարանը. «Որք լսէք զաղիսդորմ բարաոնութիւնս՝ զյարմարող սուրա զհալատուր Կեղառեցին յիշեցէք ի Քրիստոս»⁴⁶, Դրանից հետո կա մի հինգերորդ բարաոնություն ևս խրատական բովանդակությամբ, որ ոչ անհիմն կերպով Կեղառեցունը չի համարվում: Առաջին շորս բարաոն-

43 Վերնում հիշված Մ 888 ձեռ., էջ 89 բ:

44 Պեմ. Զեռացրատուն, Մ 7709 ձեռ., էջ 149 բ. վերջին նրկուսը հիշում է և Ալեքսանդր Բարաոնախ Մեջ, էջ 269 և հտն.:

45 Պեմ. Զեռացրատուն, Մ 1836 ձեռ., էջ 35 բ. տունում եմ անձամբ:

46 Զ. Տաշլաթ, Ուսումն. Առաջին Գալ., էջ 107:

նությունները ողորդե՞ն՝ Ալեքսանդրի, նրա մոր, նրա կնոջ և նրա նախարարների բերանից ասված: Դրանք մեր աշխարհիկ պերճախոսության լավագույն օրինակներինց են, շորսն էլ իսկական գեղեցիկ հորինվածքներ, որոնց մեջ տալու է հեղինակի ճարտասանական արվեստը: Իզուր չէ, որ Ստեփաննոս Օրբելյանը Կեչառեցուն անվանել է «անյաղթ հոնտոր՝ շնորհօք ծաղկեալ», «հզուով լցեալ», «գովարանեալ», այլև «շնորհադարձ»: Լեզուն հին հայերեն (գրաբար) է, և ոչ թե ժամանակի այն խոսակցական լեզուն, միջին հայերենը, որով հորինված են Կեչառեցու կաֆաները: Այն դարում միջին հայերենը գործածում էին բանաստեղծության համար, իսկ ճառեր և այլն հորինում էին գրաբար, ինչպես, օրինակ, Հովհաննես Երզնկացին, որ մեծ հաջողությամբ և՛ գրաբար է գրում, և՛ միջին հայերեն: Նույն հաջողությունն այս երկու լեզվի նկատմամբ ունի նաև իսլաուր Կեչառեցին:

Քարառնությունների նյութի համար հեղինակը բնականաբար օգտվել է Ալեքսանդրի Պատմությունից: Սրա թարգմանությունից ազդված է նաև լեզվի նկատմամբ, և այս շատ հասկանալի է, քանի որ նա շատ դժադվել է այդ գրքով և կաֆաները հորինելիս էլ նմանել է դրան:

Քարառնությունների մեջ դտնում ենք մի երկու հեթանոսական հասկացություններ և աստվածների հիշատակութուն. բայց վերջինս ոչ իբրև մի ձև պատկերավորության համար, ինչպես հաճախ վարվել են կեղծ-դասական գրողները և նույնիսկ մեր հայտնի բանաստեղծները⁴⁷: Այդ մասամբ հետևանք էր հին հունական գրականության ծանոթությանը, որ սկսվել էր արդեն 11-րդ դարում: Գրիգոր Մագիստրոսը շատ սիրում է այդ կիրառությունը, երբեմն «պերճանալու», այսինքն պարծանքով բան ծախելու նպատակով: Այսպիսի պերճանքից, սակայն, հեռու է Կեչառեցին. նա մի երկու հույն հեթանոսական անուններ մեջ է բերում սակավաթիվ անգամներ, այն էլ մեծ մասամբ հետևելով Ալեքսանդրի Պատմությանը: Շատ բնական է հնչում, օրինակ, լսել Մակեդոնացի հերոսի կամ նրա մոր բերանից իրենց աստվածների անունները: Եվ այս բարձրացում է մեր հոնտորի հասկացությունն իր արվեստի մասին. նա ողբացողներին իրենց խոսքն ասել է տալիս իրենց դարին և հավատարիքներին համեմատ, ինչպես մեր օրով վարվում են պատմական վեպեր գրողները: Բացի այդ՝ «շնորհօք ծաղկեալ» հոնտորը քարառնություններից յուրաքանչյուրի մեջ մեծ հմտությամբ դրել է նրանց աստղի վիճակին ու կյանքին համապատասխան բովանդակութուն:

Առաջին քարառնության մեջ Ալեքսանդրի բերանով մանրամասն

47 Այսպես, օրինակ, երբ Հովհ. Հովհաննիսյանը գրում է՝

Պար մատաղ մասսա ծպտեմ նրեթի

Առաջին անգամ ինձ երևեցավ,

Նա գեղեցկության սիրտ պտտկերին

Երկրպագելու ինձ պտավեր տվավ:

նկարագրված է ուժեղ, առուելգ, բազմաՀաղթ երիտասարդի մահացման աղետը թի հիւանդութեանն իւրում ըմբռնեալ դեղովն։ Նա իրրե դավաճանութիւն գոր, թունաւորված լինելով, կոկում է մահվան դեմ։ Գնչառեցին այնպես շնորհալի է հորինած, որ այդ նրա հոգեարքը կարգային՝ մարդ խղճում է նրան, այն դժբախտ հերոսին։ Ալիարդ էի կամ յո՛րպիսի հասի տառապանս, ասում է նա, որ կարծում էին, թե Ամենից կամ Արամազդից սերված լինելով՝ անմահ պիտի լինեի, և այժմ յիմարեալ անճողորպելի ի մահուանէ, որ յաղթէ յաղթողացս։ Նա մտարեհում է իր արարքները՝ սկսած արքուն հասակից, և վերջը տվալտված՝ ասում է. «Արդ որ այսքան հզօր և յաղթական փառաց հասալ, արդ այժմ կամ տարարեհեալ ծիմամբ կոհակօք ի մահիճս մեռական և մահահրաւէր։ Տեսակս իմ ցանկալի՝ սեւցեալ թխացեալ քան զքարինս եթովպական։ հասակս իմ պանծալի՝ դժոտեալ ի վայելալի պերճութեանց. դուստ իմ ընգզրկեալ ծնեալ իրրե զհասկ՝ որ հասանէ ի մանգաղս մահու։ Ճակատս իմ լիալիր և մաքուր՝ ծրարեալ և պատեալ ի վարչամակս դեղոց. արեւնս իմ ծովածաւալ սպառնանկատ և քաղցրահայեալ՝ կաշկանդեալ և խփեալ մածմամբ՝ իր խըրդանց և շղիկանաց. վարս և հեր գլխոյ իմոյ փոտեալ ցամաքեալ իր զմանուշակ գարնայնոյ լեռնս աւուրս սպառնչովո։ Այսպես և բերանն ու լեզուն, ձեռքերն ու մեջքը և ոտներն ինչպիսի են եղել և են։ Նա, ինչպես հաճախ ասում են մեռողները, վերջը մտարեհում է իր պատանութիւնը, երբ Ստագիրացու (Արիստոտելի) մոտ ուսում էր առնում, փիլիսոփայութիւն սովորում, ամեն ինչի մասին խոկալով և գիտութիւնների ու արվեստների մէջ խորանալով. այրածամ ծաւալէաք ի ծաղիկ բուքաստանաց իմաստութեանն, ի գիտութիւն գոյից և ի ծանութեանն աստուածայնոց և մարգկային իրողութեանց... Իսկ այժմ յիմարեալ անասնաբար, ոչ կարել գիտել զգիտողն. բայց զայս միայն՝ դի բաղկացեալ ի քառից տարեց ի նոյն իսկ լուծանիմ. զի ինքն միայն է անմահ որ ամենից տիրէ։— Ահա՛ հին հեթանոս իմաստասերի եղբակացութիւնը մարդու և նրա մահվան մասին. նա բաղկացած է շորտ տարբերից, մահանալիս լուծվում է նույն տարրերին։ Չկա նրա համար անմահութիւն. միայն ինքն աստված է անմահ։

Երկրորդ բարաւոնութիւն մեկ ողբագին խոսում է՝ աշխարհակալի մայրը. «Եացէ՛ք զիս, մարք մանկագունից միամօր գաւակաց... զի ոգիս թեաւ և շունչս ել արտաքս. իսկ մարմին թշուառականիս առասպելաբար շրջի, գիակիր լինելով տատանեալ կենաց իմոց։ Արեւն իմ էանց և սպառեաց լուսինն լրացեալ. պարք զօրու աստեղացն ինձ թօթափեցան, և խաւարեցան տեւալարանս ի հայեցուածէն։ Նա մտաբերում է իր հղացումն Ամենից, ըստ եզրպտական մարգարէի ասելուն. հիշում է իր որդու օխրագործութիւնները և ավելացնում. «Եւ ես կարծէի զիս մայր կայսեր և ինքնակալի. այժմ մեռելոյ մայր... Մեռանիմ ընդ իմ մեռելոյդ. կորելիմ ընդ կորուսելոյդ. նուաղիմ ընդ ոգեարիդ...»։ Խոր ցավում է, որ որդին հեռացել է Մակեդոնիայից, և ինքն այլևս չի տեսել նրան։ «Մագեցար

իբր արուանակ, և ցնդեցար նման մըրկի. գոշեցեք ամպօք իբր առիւծ, և տկարացար զինչ սարդի ստտայն. ժաղկեցար իբր զգարուն, և խորշակահար եղեր թարշամեալ, որ քաղումք յինէն զարհուրէին, այժմ ես ի քաղմաց կորնլիմա:

Նա կին է, որդեկորույս մայր՝ զրկված և անոք, և իբրե կին և մայր էլ վերջացնում է իր ողոր. մերթն յաղթեցին ինձ անէծք մօրն Դարեհի կամ ծնողին Պարոսի արքային հնգկաց, որ ես այս թշուառութեանս հանդիպեցայ: Կատարվիլ է Աղեքսանդրի կողմից սպանվածների մայրերի անեծքը, որ տվիլ են Աղեքսանդրի մորը:

Նա ալվիլի թշվառ է Աղեքսանդրի մանկամարդ կինը՝ Հուքսիանե, Դարեհի գուստրը, որ սրտառուշ կերպով ողբում է իր հիքությունը երկու կողմից. «Դարեհ լէ ի միջի հայրն իմ հոշակաւոր, և Աղեքսանդրէ բարձաւ ի միջոյ... տուն և հօր իմոյ քայքայեալ ցրուեցան, և ապարանք առն իմոյ մեծապէս տատանեցան. իսկ ես հոսայ իբրե զշուր, կոխան եղէ իբրե զհող անպիտան... Ա՛յդպէս առես զիս յաւանդ ի ձեռանէ հօր իմոյ, տէ՛ր իմ Աղեքսանդրէ, զի և աւուր միոյ տեսլեան երեսաց քոց ոչ եղէ արժանի, արարեր զիս զշիտյ և թաղուհի, և քոյին սոսկալի սիրոյդ ես ոչ եղէ արժանի. որք էի ի ծնողաց, արդ այրի եղէ ի դիտոյ Կարօտիմ մահունից, զիբկա արկանեմ տապանիդ, խոնարհիմ քո գոցապարիդ, յանձն առնեմ զոգիս քում ոգւոյդ: Սա էլ իր ողբը հեծեծալով վերջացնում է իբրե հին արեւելյան թագավորի մի ամուսին. «Ձի որպէս հանդերձեալ ես յաստուածոցն խառնիլ երամս, այսպէս և զիս արա գերեզմանակից և մահակից. զի կին կայսեր ոչ պարտ և պատշաճ է գուգն ընդ ումեք»:

Թողնում ենք նախաբանների ողբն ու կոծը, որի ժամանակ խոսքերի փոխանակութիւն է լինում նրանց և Աղեքսանդրի միջեւ:

Խաշատուր Կելառեցու գրիւը թուիք ու թափ է առել այս ողբերը հորինելիս: Մաղկալից ու շքեղ է նրա ոճը պատկերավոր արտահայտութիւններով, միանգամայն և թեթեւ, պարզ ու հստակ: Նա կարողացել է թափանցել իր քաղաքնութիւններն աստղների հոգեկան վիճակի մեջ ե իր հոգով անցկացնելով նրանց զգացմունքը՝ տալ մեզ այն՝ նրանց վիճակի համապատասխան լիրիզմով: Երբեմն կարծես նա քանաստեղծութիւն է հորինում երկատող տներով:

Տուն հօր իմոյ քայքայեալ ցրուեցան,

Եւ ապարանք առն իմոյ մեծապէս տատանեցան...

Այսպես վարվել են նշանավոր հռետորները. և դրանով էլ մեծ ազդեցութիւն են գործել ունկնդիրների վրա: Կելառեցին էլ իր այս երկերով հանդիսանում է իբրե աշխի ընկնող մի հռետոր, և կարծում եմ, որ նա իբրե քերթող էլ ավելի պատվավոր տեղ կընեն մեր հին գրականութեան մեջ, եթե ունենայինք նրա բոլոր երկերը: Բայց և այնպես նշանավոր հռետորները միշտ նվազ քանաստեղծ են, քան ճարտասան:

Տե՛ս Երկրորդ հավելված՝ «Բարաոնութիւնների հեղինակը»:

1. Գրականություն:— Վերջերս շատ խոսվեց, թե Ֆրիդիկ Եման Բա-
նաստեղծ ենք ունեցել և լենք տպագրել նրա երկերը, և նույնիսկ իբր
դիտմամբ թաքցրել են այն, և Ֆրիդիկ Եման չէր և մնացել: Մինչդեռ իրա-
կանությունն այն է, որ այս Բանաստեղծը շատ լավ ծանոթ է եղել հայոց
հին գրականությանը և հետաքրքրվող ու պարագլուխ մարդկանց: Միայն
1513 թվականին, ամենապարտ Ցակոբիս տաղարանին, Ֆրիդիկ այս կամ
այն քերթվածները գտնվում են պանաղան ժողովածուների կամ պարբե-
րական հրատարակությունների մեջ: Դեռ 1876 թ. Երուսաղեմի հայոց
վանքի «Սիօն» լրագրի մեջ տպագրված են սոցիալական խնդիրների
տեսակետով կուրսոր քերթվածները՝ «Վասն թալեհի և բրդի» և «Ընդդէմ
Յալաքի» (եւ լրբի, երբ ծախ մարդուն): Տփլիսում 1882 թ. տպված
է վարդապետ Տնկանցի շատ ծանոթ օձայնը՝ ժողովածուն, որի մեջ և
Ֆրիդիկ նշանավոր «Գանգատը»՝ «Անտուած արդար և յիրախ», այլ և ու-
րիշ երեք Բանաստեղծությունները: Ֆրիդիկ հրատարակություններ հղել
են և հետո՝ 1885, 1896, 1905 թվականներին, ինչպես և 1912 թ. օձայն
էջերն ժողովածուի մեջ՝ վեց քերթված: Տպվել են և թարգմանություններ
Ֆրիդիկի՝ Ֆրանսերեն և ռուսերեն լեզվով և քննադատական հոդվածներ
կամ ակնարկներ նրա մասին: Արդարև լուսնենք Ֆրիդիկ բոլոր կամ ասվար
թվով տաղերի հրատարակություն մի գրքի մեջ, բայց միայն այս սիր-
ված ու ժողովրդական Բանաստեղծի քերթվածները լեն եղել այդպիսի
վիճակի մեջ: Պատճառն այն է, որ սակավ մարդիկ մեզնում հնարա-
վորություն են ունեցել մեր հին գրականությանը պարագլուխ, և ավելի
ևս քերթը միջոց են ունեցել ևնոագիրները պրպտելու: Նրանցից ժողովե-
լու այս կամ այն Բանաստեղծի երկերը և տպագրել աւուու: Զպիտի մո-
ռանալ և այլ, որ դրանք ցրված են ձեռագիրներին մեջ, որոնք գտնվում
են այլ և այլ մատենադարաններում, այն էլ աշխարհի զանազան կող-
մերում: Մեր մի շարք հին հեղինակները դեռ սպասում են իրենց երկերի
հրատարակության և ուսումնասիրությանը: Ֆրիդիկ այդ նկատմամբ ա-
վելի բախտավոր է եղել. նրա մասին խոսվել է և դասախոսություններին
մերձ:

Այսպիսի գրության մեջ էր, եթե կարելի է այսպես ասել, «Ֆրիդիկ-
գիտությունը», որը 1818 թ. էջմիածնի «Արարատ» ամսագրի մեջ լույս

48 Տեղերից հրդեհ էլ նրա մասին խոսել է Քրիլիսիում, Հայ գրողների կազմաւու-
ններությանը հրավերով 1918 թ. արած դասախոսության ժամանակ՝ «Ընդհանուր տեսու-
թյուն հայոց հին Բանաստեղծության», որ և հայտը տարւում տպագրվել է Քրիլիսիումում:
Նույն դասախոսությունը նա կատարել է նաեւ Բաղու քաղաքում: Նա 1917 թ. զարեանը,
դարձալ Հայ գրողների ընկերությանը հրավերով, դասախոսել է Քրիլիսիում օձայն միջ-
նագորշան աակները և օգրիւուական հարաբերությունը նրանց մեջ, որ և հետո տպա-
գրվել է Երևանում: Այս դասախոսության ժամանակ խոսվել է Ֆրիդիկ մասին:

առնալով մի հոգոված՝ «Արտաքված մի Հայ Զորիչ» վերնադրով⁴⁹, «Արտաք-
ված» բնավ մոռացված չէր. ինքը հեղինակն իր հոգովածի մեջ բավա-
կան մանրամասն բերել է, ինչ որ իր գրվածքից առաջ տպված է հղել
Ֆրիկից և սրա մասին⁵⁰։ Այդ հոգովածը մի ուսումնասիրություն էր Ֆրիկի
և առանձնապես նրա ապրած ժամանակի մասին. դա պիտի լիներ առա-
ջարան այն հրատարակության, որ Հեռնարկն էր հեղինակը, նա էջ-
միածնի, Օքսֆորդի, Հոնդոնի, Պարիզի, Վիեննայի, Երուսաղեմի, Կոս-
տանդուպոլսի (Լեւոնյան) մասեննադարանների ձեռագրերից հա-
վածքն էր Ֆրիկի երկերն իրենց աղբյուրներում հանդերձ և պատ-
րաստել տպագրության և սկսել էր նույնիսկ տպագրել, բայց իրենից
անկախ պատճառով գլուխ չեկավ այդ գործը։ Հետագայում ևս 1927 թ.
փորձ եղավ հեղինակի թույլտվությամբ Նրանում տպագրելու նրա ժո-
ղովածուն իր առաջադասումով հանդերձ, բայց դարձյալ անկատար մնաց
այդ։ Վերջապես նրա ժողովածուն լույս տեսավ 1941 թ., բայց հայտնի
չէ, թե արդյոք ժողովածուի իրեն տպագրության համար պատրաստած
գործի՞ց, թե՞ սրա նախնականից⁵¹։

2. Կենսագրություն։— Ֆրիկի կենսագրության միակ աղբյուրը նրա
քանաստեղծություններն են։ Նրա երկերի լեզուն միջին հայերենն է,
բայց նա լեզվի հետ բավական ազատ է վարվում։ Նրա գործածած բազ-

⁴⁹ «Արարատ» ամսագիր, էջմիածին, 1918, էջ 64—88, 171—203, «Արտաքված մի
Հայ երգիչ», Տիրայր հայկեղոսի։ Այս հոգովածի մեջ կան չափազանց կամ քիսլա հա-
վածած կտրերների հանած հորակացություններ, ավարկածներ, որոնց մասին չենք խո-
սիլ, սի բաղադրված անարժեք են։ Բայց մեացածով մի կարևոր գործ է դա, և այստեղ
նկատել ունենք այդ։

⁵⁰ Դրանից հետոն էն վերևում։ Ավելի մանրամասնություններ ձեռք բերել ցանկա-
ցողը կարող է գիտնել հոգովածին։

⁵¹ Ֆրիկ, Բանաստեղծություններ, ժողովածուն՝ համեմատություններով, ծանոթագրու-
թյուններով և քառարանով կազմեցին Ֆիլ. դիտ. թեկնածու Մ. Մկրյան և Ե. Թաթոյան,
իմրագրությամբ Լ. Մելիքյանի, Մ. Մկրյանի, Լ. Մկրտչի, Արմիտի հրատարակչության,
Երևան, 1941։ Գրքի այս երեսաթղթի նակատին տպված է նաև «ՄԱՐՄ» գիտությունների
ակադեմիա-հայկական Ֆիլիալ, գրականության և լեզվի ինստիտուտը, ԵՍՀ լիկներ Տիրայր
հայկեղոսի գործը, չէր էլ լինի այս հրատարակչության իր քառյակ և կրկնակ անուննե-
րով։ Նրա անունն իբրև քանաստեղ Տիրայր խցկված է 2-3 տողի մեջ, էջ 83, որ քիչ
մաքրու աքի կընկնի։ Ֆրիկն իր ժամանակին ալոպիա բան չէր ասիլ։—Այս հրատարու-
կությունը, ցավոք, անկրթական-անքննադատ է, լի վրեպումներով, թերի քառարանով,
առանց քաջատրական ծանոթությունների։ Վերջից էջ 258—263 դրված «Ծանոթագրու-
թյունները» վերաբերում են ցերթվածների աղբյուրներին, և թե երբ են ցերթվածներն
առաջին անգամ տպագրվել։ Այս տեղեկություններն էլ ամենամեծ մասով առկա են
Տիրայր հայ.-ից, դարձյալ չհիշատակելով նրա անունը։ Նրա փոխանակ՝ փայլում է հրո-
սաթղթի մեջ հիշված ցառյակ անուններից կրկնակը, որի ձեռով մի երեք տարի առաջ
հրատարակվել են Ֆրիկի երեք ցերթվածը։ Այս 1941 թ. հրատարակչություն ասի նաև մի
առաջարկան «Ֆրիկի ստեղծագործություններ» վերնագրով և «Մ. Մկրյան» տառագրությամբ.
օգտված է մտամար հան Տիրայր հայ.-ից, էլի առանց նրա անունը հիշելու։ Կրկնում են,
այսպես չէր վարվիլ Ֆրիկը։

մաթիվ խոսքի դարձվածներն ու լեզվական ձևերը նկատի ունենալով՝ հա՛վանական է ենթադրել, որ նա հղել է Արևելյան Հայաստանից կամ ապա՝ բնի ու գործին է ազնիլի արևմտեղ, բայց ոչ թե առանձնապես Սյունիքում, կամ Կիլիկիայում, ինչպես կարծել են:

Կարելի է որոշել նրա մի քանի բանքերի դրուժյան տարիները և սրանցով՝ դրանց հեղինակի ծննդյան և մահվան թվականները՝ մոտավոր հաշվելով, նա ծնվել է թաթարաց արշավանքի սկիզբներում, շուրջ 1236 թվականին, «Ընդդէմ Ֆալաքին» քերթվածը հորինել է ոչ առաջ քան 1286 թվականը և հավանորեն հենց այս թվականին. «Եվասն Արզուն դանին և Բուղային» երկը հորինված է 1289 թվականից ոչ առաջ, ամենայն հավանականությամբ, հենց այս թվականին, իսկ «Գնանդատ» քերթվածը՝ հավաստի 1295 թվականին: Այս վերջին քերթվածը հորինելուց հետո դեռ նա ապրել է շատ տարիներ և հասել է լի ծերության և վախճանվել է 14-րդ դարի առաջին կամ երկրորդ տասնամյակին:

Այս թվականների մասին տե՛ս «Երրորդ հավելված», «Ֆրիկի կենսագրության շուրջը»:

Զի հիմնավորված այն կարծիքը, թե «Ֆրիկ» անունը բանաստեղծի իսկական անունը չէ, այլ՝ սրանաստեղծական անունը կամ կեղծ անունը: Այդ պարզության մի անձնանվան նվազական ձև է, թերևս, ինչպես կարծել են, Ֆրեդերիկ անվան: Ղ. Ալիշանը⁵² գրում է, «Բարակ զագ»-ման և ուղիղ մտաց տեղը, նաև ճարտար տաղայադի պեսպես վանկերով՝ նորանուն քերդոդ մը կայ՝ Ֆրիկ, որդի Թագվոշի եղբորորդի Դոդոնայի, որուն ժամանակն որոշակի հայտ չէ, բայց այս (ԺՆ) դարես ետք այլ չէ. գրվածքն բարոյական խրատք են, սակայն սրտով սփռած: Պակաս շնորանուն» շեն Ֆրիկի հայրն ու հորեղբայրը, որոնց մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդել Ալիշանը, և ուրիշներն էլ չեն գտել ցայժմ:

Ֆրիկն իր տաղերի մեջ քնդհանրապես հիշել է իր անունը, և տաղերի վերնագիրներին մեջ էլ սովորաբար կա Ֆրիկ անունը. բայց շնայելով դրան՝ որոշ լավով անորոշություն կա այս կամ այն ոտանավորների հեղինակի վերաբերմամբ, որովհետև մի վաստ սովորություն է հղել հեղինակի անվան փոխանակ ուրիշ անուն գնելու: Դրա դեմ բողոքելով իր մի քերթվածի⁵³ վերջում գրում է մեր բանաստեղծը.

Ով զիմ անունըս խափանէ,

Զիւրբն գրրէ պարծենալոյս.

Աստէնս շանէ ինքն թողութիւն,

Անդէն գրկի ինքն քի բարոյ:

⁵² Ղ. Ալիշան, Յուզիկի հայրենեաց, հատ. Թ, էջ 125. «Ազգային վիպասանություն» հազվածի մեջ:

⁵³ «Արարատ», 1918, էջ 26. տե՛ս Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 95. «Ներքին Ֆրեդան» աստընայս, «է՛» անօրէն և տնտեսկն քերթվածը:

կարևորն այն չէ, թե Զորին աշխատեցնակա՞ն է եղել⁵⁴, այն էլ, ինչպե՞ս ձևադրել են, անգրագետ և անուս, այլ թե նա ուսում է ստացել, ե՞րբ է մտել արդյոք հոգևորական դասի մեջ և բանաստեղծութիւնները կյանքի ո՞ր շրջանում և ի՞նչպե՞ս է հորինել: Նա ի՞նչ համար գրում է⁵⁵.

Յիմ հօրէն դայս լսեցի,

Թէ թրիստոսի ըզքեզ կուտամ:

Այս ցույց է տալիս, որ հայրն ուղեցնել է որդուն հոգևորական կու- մանը նվիրել: Այսպիսի դեպքում նրան մանկական հասակից արդեն, ըստ ժամանակի սովորութիւն, պիտի սկսեին կրթական կրթութիւն տալ, ուրեմն և դրագիտութիւն սովորեցնել: Մի տեղ⁵⁶ նա գրել է.

Ի մանկութենէ ի վեր

Զիս ուսման խոցըն կու մաշէ:

Այս էլ նշանակում է, որ նա մանկութիւնից սկսած սիրել է ուսումը և պարապել դրանով: Եվ իսկնպե՞ս, նրա բանաստեղծութիւններին տես- նում ենք, որ նա մեծ ծանոթութիւն ունի Ս. Գրքի և առհասարակ կրո-

54 «Զորին» հոգի է աշխատեցնակա. այդ մասին ինքը հեղինակը մի քանի հիշատակու- ցիւններ է արել իր բանաստեղծութիւններին վերնագրերում. «այսպէս, օրինակ՝ մի վեր- նագիր. «Այլ ասդ վասն քարեգործութեան մարդկան ի Զորին է աշխատեցնակա՞նէ առաքնալ: Կամ մի արիշը. «Զորին ճարտար աշխարհականէ» (Զորին, Բանաստեղծութիւններ, էջ 8): Զորին աշխարհական լինելու մասին էլ տուալին տեղում գրված է Տիրայր նպս.-ի շատ անգամ հիշված հոգևոր մեջ: Նա իր կարծիքը հիմնավորել է վերնում բերված առա- ջին վերնագրի վրա, որ այդպէս կա այդ տեղի հինգ ձեռագիր օրինակներից միայն մեկի մեջ կարմրագիծով գրված, բայց մեծ եղծված, հազիվ ընթեռնելի: Բայց այս հոգևորագիրք չի նկատել, որ այնտեղ գրված է ոչ թե մի Զորինէ, այլ եր Զորինէ: Այսպէս է տպված Նաե Զորին Բանաստ. էջ 85 նույն քերթվածի (սեմ սիրտ, վտտին մի՛ լսել) ալ ընթերց- վածների մեջ: Երկրորդ վերնագրին էլ, որ բերել է Մ. Մկրյանը, դարձաւ այդ տեղի շարք թէ հինգ ձեռագիրներից մեկի մեջ միայն կա այդպէս: Տե՛ս Զորին, Բանաստ., էջ 85, «է՛» անորէն և անասակն քերթվածի ալ ընթերցվածների մեջ: Սակայն սրա համար էլ պահեց է նկատեմ, որ Հայաստանի պետական թանգարանի համար 383 ձեռագիրք (որից անվւած է տպված քերթվածը) եւ 1528 թ. արտագրած Խմբիմ այսպէս. «եր. 272. վերնագիր՝ «Զոր- րին ճարտար աշխարհականէ: Մատ զարդ երեսմ է, որ այս երկրորդ վերնագիրն ասածը ոչ թե հեղինակի գրածն է, այլ մի ուրիշ մարդու, որ գրանով ուղեցնել է իր իմացած ան- ղեկութիւնը տալ բանաստեղծի մասին: Ապա՝ այն հանգամանքը, որ աշխարհական հի- շատակութեամբ լըրո-հինգ ձեռագիրներից միայն մեկի մեջ կա, և որ երկու դեպքում էլ «Զորինէ» է գրված, դեռ ցնեցիլ է դարձնում այդ երկու վերնագրերները, թե արդո՞ւք հե- ղինա՞րկն է այնպէս գրել իր համար, որ կասկածելի է: Ապա դարձաւ՝ «աշխարհական» բառը եւ միայն բերված երկու ձեռագիրների մեջ գրված գիտեմ, և ոչ թե սեմ քանիս, ինչպէս գրել է «Զորին» ստեղծագործութիւններն առաջաբանի հեղինակը:

55 Զորին, Բանաստ., էջ 63. «Երեսու անուն լին զմացտը քերթվածի մեջ:

56 «Արարտա աւսագիր, 1318, էջ 78. Հիշված հոգևոր մեջ: Զի տեղում, թե ո՞ր բանքից է առնված այդ 1341 թվականի «Զորին, Բանաստեղծութիւններն ժողովածուի մեջ չեն ներկայացնում այդ երկու տողերը: Ըստ երեսուցիկ Տիրայր նպակագրու ժողովածուն ամ- բողջապէս լի տպագրված:

նական խնդիրները. մեծ հմտութիւն և անկեղծութիւն, տալիս է Ս. Գրքի բովանդակութեան համեմատ խրատներ, ծանոթ է նաև ուրիշ երկերի, ինչպես՝ Եփրեմի ճառեր, Վարդ արքեպ. շարադրում է դավանաբանական քերթվածներ, աղոթելով հանդերձ, կամ Թրիստոսի տնօրինականքի պատմութեամբ, Եվ, վերջապես, նա մեկ մեկ հոբինում է և դրաբար լիզվում, հաճախ կրօնական երկերի մեջ ընդունված սովորական դարձվածքներով ու պատկերներով և բանասէներով, ինչպես և բազմաթիվ անկարկներով, որոնք վերաբերում են եկեղեցու ընդունած հավատի խնդիրներին. կարելի չէ ասել, թե այսպիսի գրվածքներն անուս մարդու են, և կամ թե այդ ամենը նա յուրացրել է եկեղեցում ժամերգութեան ժամանակ՝ ընթերցվածները լսելով կամ այլուր ուրիշներին կարդացածներին ունկնդիր լինելով, նա ինքը կարդացել է։ Երբ նա գրում է⁵⁷.

Անալի դարձել եմ ի միտս ու անհամ,
Ո՛ր և առնում ըզգըրոց ճաշակ և ըզհամ,—

այդ ապացույց է, որ նա առաջ գրքեր կարդացել է և վայելել նրանց համ ու հոտը։ Այս ամենով հանդերձ՝ նրա երկերը չեն կրում հին քերթողական ուսման դրոշմ. պարզ երևում է, որ նա չի առել վարդապետությանն ընդունված իմաստասիրական ու հեծողական և սքոլաստիկ աստվածաբանական-մեկնաբանական ուսումնի իր նրբամտութեանն երևել, Գրա համար և, ինչպես երևում է, չեն հավատացել, թե նա կարողանար այնպիսի բաներ հոբինել. ուստի նա ստիպված է եղել գրելու⁵⁸.

Տէր կենդանի է և օրհնեալ,
Որ չէ ալլոց բանքս ասացած,
Ձինչ ըզծաղիկ եմ ժողովել,
Քան զմարդարիտ պայծառ շարած։
Թէպէտ յերկար քան կու խաւի,
Յըրիկն ասել է ի մըտաց։

Ուրիշ տեղեր նա իր բանքեր հոբինելու շնորհքն աստուծուց է համարում. օրինակ, նա ասում է⁵⁹.

Գոհանամք յողորմածէն...
Որ զանաբժանս արժանացոյց,
Որ հանց զօհար բան ի շար կու դալ։

Երևում է, որ ծաղրել են նրա պարզաբան գրվածքները, մանավանդ այնպիսի կրօնականները՝ «Բան մեկնութեան», «Անաստուածք ի տնօրէ-

⁵⁷ Զրէկ, Բանաստ., էջ 206. «Փափաքել եմ ի չուրնս քերթվածի մեկ»

⁵⁸ Զրէկ, Բանաստ., էջ 72. Երբ քեզ խրատ էր պատրաստած տղայով անվաճ մեծ աստատեղծութեան մեջ, բովանդակութեանը գրքից է առնուի։

⁵⁹ Անգ, էջ 80.

նութիւն փրկւիւն⁸⁰, ասելով, թե նա ի՞նչ գիտեմ, ե՞րբ է ուսում առել, որ այդպիսի բաներ է հորինում: Դրա համար և նա շատ նուրբ կերպով հեղ-
նում է այնպիսիներին իր տի՛ ծնունդ սուրբ կուսինն քերթվածի մեջ⁸¹:

Ֆրիկն ի՞նչ հող է կամ մոխիր,

Որ հանց գոհար բան շարէ նա.

Ոչ է ծառայ վարդապետի.

Ոչ կարգացել է օր մի նա.

Ոչ⁸² ի հօրէ առնալ միտաթ,

Ոչ աստուծոյ տուած նորա,

Նա ե՞րբ կարէ հանց բան ասել,

Ով որ կարգայ՝ օրհնէ ըզնա:

Այս տողերը սխալ բացատրելով⁸³ հզրակացրել են, թե Ֆրիկն իբր
չի ծառայել վարդապետի, հետեւաբար ուսում չի առել, նա մի օր էլ չի
կարգացել, հետեւաբար և անգրագետ է եղել. իբր հայրն էլ միշտ յի ու-
նեցել, որ իր որդուն քղարոց տար ու կարգացնէր: Այդ տողերը, սա-
կայն, հեղեղութեամբ են ասված. պետք է հակառակ իմաստով հասկա-
նալ, ժողովրդական լեզվի մեջ շատ հաճախ հաստատական ու դրական
խոսքերն ասվում են բացասական ու հարցական ձևով: Այսպէս՝ քանաս-
տեղծը երբ ասում է՝ «Ֆրիկն ի՞նչ հող է կամ մոխիր», նա ոչ թե իրեն
նվաստացնում է իրոք ինչպես ուրիշ դեպքում⁸⁴, այլ հեղեղելով պատաս-
խանում իրեն բամբաստողներին՝ ասելով իսկապէս, թե Ֆրիկը հող ու մո-
խիր հո՞ւ չէ, նա կարող է գոհար բաներ շարել. նա ուսում է առել վարդա-
պետի մօտ, շատ կարգացել է, հորից էլ միտաթ-կրթութիւն⁸⁵ է ստացել,
աստված էլ շնորհք է տվել նրան. հետեւաբար նա կարող էր այնպիսի
քանա հորինել, որ ով կարդա՝ օրհնի նրան:

Ուշագիր պիտի լինել, որ խնդիրն այստեղ ուղղորդական գրել-կար-
դալու կամ ուսում առնելու մասին չէ, այլ գեղեցիկ ոտանավորներ, այն
էլ ըստ ձևի և ըստ բովանդակութեան թողհար բաներն հորինելու: Այս
քանաստեղծական շնորհքը նա, հարկավ, վարդապետների մօտ չէր սո-
վորել, և չէր էլ կարող նրանցից սովորել այն, որ քնատուր էր. Բալց

80 Անց, էջ 187, 160:

81 Անգ, էջ 126:

82 Բնագրի մեջ տպված է «թէ», առնում եմ ըստ իմաստին այլ ընթերցվածը «աշ»: Այս հաջորդ տողի սկզբի «այս» բառն սխալում եմ «այ» ըստ ամբողջի իմաստին. այլա-
պէս անկապ և անմիտ է մնում դրա հաջորդ տողը: Եթե «այս», այսինքն շնորհքն ասա-
ծուց է տրված, ապա այլևս կարելի չէր գրել, թե «նա ե՞րբ կարէ հանց բան ասել»:

83 «Արարատ», 1818, էջ 78 և հտե., բայց հօղվածագիրն այս տողերի մեջ հեղեղու-
թեան տեղեկելով հեղեղորձ՝ տալիս է այդ սխալ բացատրութիւնը:

84 Յերկ, Ռանատու, էջ 119. Քան պիտանի և լաւա քանաստեղծութեան մեջ՝ «Ֆրիկն
ի՞նչ հող է և մոխիր, որ ուր քարայր նա քանկացան»:

85 «Իրարաթ» բառն այսպէս սկրթութեան է բացատրված («Արարատ», 1818, էջ 78):

այդպէս չէին հասկանում այն ժամանակի սքոլաստիկները. նրանք կարծում էին, թէ այն էլ պետք էր դպրոցում—վարդապետարանում ուսած լինել:

Ժամանակակից բանաստեղծ Կոստանդին Երզնկացին իր մի քերթվածի սկզբում գրում է. «Ուսանք լարախօսին գինէն վասն Նախանձու, թէ որպէս խօսի սա այսպիսի բան [խոսքը ոտանավորների մասին է], զի վարդապետի չէ աշակերտելը, և ապա՝ քաջատրում է. ահա՛ է աշակերտելն և այլ է շնորհքն ի հոգւոյն: Եվ ինքը բանաստեղծը պատմում է, թէ երբ տասնուհինգ տարեկան ժամանակ վանքում ուսումն արեւելիս է հղել (էի վանքն յուրումն էի), իր մեջ զգացել է բանաստեղծելու բացովածատուրը շնորհքը: Այսպես և Ֆրիկը, որ հայարտ է իր սգահար բաներով, անպայման ուսում առել է որն է վանքում կամ մի քահանայի մոտ, բայց հորինել է բնատուր շնորհքով, որ բնատուրով տուած նորա»:

Նա հորինել է բազմաթիւ աշակերտն բաներ, երաժշտական անսխալ ռիթմով, որ ապացույց է, թէ նրա շնորհքներից մեկն էլ նզել է երաժշտական զգացումը: Նա հավասար աշողութիւնով և զրիթն հավասար թվով ոտանավորներ է հորինել մեր երկու շատ ռիթմիկ լափերով— «Հայրենի կարգով», որ է՝ 2+3+2||3+2+3 ոտքերով տողերը, և 4+4 լամբական տողերով. մի երեք բանք էլ ունի 3+3+2+3 պարզ ոտքերով: Այստեղ կարեւոր չի այս ոտանավորների մասին մանրամասնելը⁶⁶, միայն պիտի ասել, որ կան աղճատումներ, քանի որ առաջ ընկած, որով խանգարված են լափերը:

Թէ բանաստեղծը միաժամանակ և երգիչ է նզել թէ չէ՝ այդ չգիտենք. մեկ քերթվածի վերնագրի մեջ կա «երգիչն բառը՝ Եւսան թախհի և բրի ի Ֆրիկ երգչէ. մեղին, սակայն, չի հիշվում Ֆրիկ անունը: Իսկ վերնագիրների համար լինք կարող ապահովապես ասել թէ հեղինակից են ծագում: Մի քանիսի վերնագիրներն են «Տաղա կամ Բեյլ Կադ Ֆրիկանն ասացեալ: Ավելի գործածվում է՝ «Նորին Ֆրիկանն ասացեալ Բեյլ...», կամ լոկ «Նորին Ֆրիկանն ասացեալ»: Այս բաներն բայը լափի շփոթութեան մեջ ձգի. զա գործածվում է «հորինելու իմաստով նույնիսկ պատմութեան համար, օրինակ՝ «Հայրոց պատմութիւն ասացեալ Մովսիսի Խորենացու»:

Ֆրիկն իր սրաները կամ շրանքերը, ինչպես ավելի հարմար է կիրառել աշխարհարարում (սույն բառը գործածվում է նաև որոշ բարբառ-

⁶⁶ Այս լափերը մեղմամասն ասումնտեղիված են որս հեղինակի մի ձրիչ աշխատութեան մեջ. «Հայրոց լեզվի տաղալափութեան, ասումնտեղիքն արեգ. դ-ր Մ. Արեղյան, Երևան, 1938, էջ 267—275՝ «Հայրենի կարգ», էջ 198—209՝ «Մամբական ոտանավորների բարդ ոտքերով» է էջ 240—241՝ «Անագիտային 11-վանկուն, երրորդ ոտքը լամբա»:

Հայրենի լափի մասին ան՝ առանձնապէս Մ. Արեղյանի «Երկն զառանգական ժողովրդագրական իրերն» ուղիատութեան մեջ, Երևան, 1981, էջ 15—48. արտասուգ. Հեմլ Հեմ, համարարանի «Տեղեկագիր» Մ Մ 2—3, 6, 8:

ների մեջ թրանք» կամ թրանք», նաև թրանք ձևով) հորինել է կարգալու համար և անձամբ գրելով: Այդ երևում է նրանից, որ հորինելու ժամանակ իր քերթվածն անվանում է թրանք և հետո դրա մասին գրում է՝ ես և որ կարգալ...», կամ «որ երբ կարգալ...» և այլն, օրինակ, վերևում քերթված վերջին ցիտատի մեջ: Մի ուրիշ քերթվածի մեջ ևս՝

Ով կարգալ զայս բաներս 'ւ ինքն զմարդի...

Թէ քննէք զայս բաներս ի միտ 'ւ ի հոգի...

Եւ ուրիշ, որ կարգալք ի մէջ ժողովի...⁸⁷

Երբ բանաստեղծն իր երկը հորինելիս խոսում է դրա կարգալու մասին, կնշանակի նա հորինում է գրելով: Ոչ մի հիմք չկա կարծելու, թե Զորիկը բնականապես հորինելիս լինելը և հորինելիս թելադրած լինելը մեկին, որ գրեր. կամ բնականապես հորինելը և իրար նման և այնքան մեծ ու երկայն բանաստեղծությունները անշիտթ միտը պահելը և հետո մեկին թելադրելը, որ գրեր: Այդ հնարավոր է միայն կարճ բանքերի ու եղանակավոր երգերի վերաբերմամբ, այլև վիպական քերթվածների, որոնց մտաբերմանն օգնում է դեպքերի հաջորդությունը:

Թե ե՞րբ է նա սկսել բանաստեղծել, այդ չգիտենք. նա իրեն բերթող աշխատել է նաև ալևորության ու ծերության օրերին, ինչպես հիշում է մի շարք երկերի մեջ, ինչպես, օրինակ՝

...Երբ զարձաւ սևդ ի սպիտակ:

էջ 57

Քո սևդ ի սպիտակ դարձաւ:

էջ 86, 113

Հոգոյն շնորհք երևտ ծերուս:

էջ 88

Թե ինչո՞վ, ի՞նչ պարագայում է նա իր ապրուստը հայթայթել, այդ չի երևում նրա բանքերից: Մի քանի անգամ նա խոսում է հարստության նտնից լինելու մասին, բայց չի պարզվում, թե արդյոք անձնապես ի՞ր մասին է խոսում, թե՞ իրեն բարոյախոս՝ ընդհանրապես, բայց իր վրա դարձնելով ասելիքն և տուաչին դեմքով խոսելով, միաժամանակ իր անձնականը խառնելով հետը. այսպես, օրինակ՝ հետևյալների մեջ.

Շատ ուրերցի մարդու մորոյս...

Շատ պարծեցայ ի վերայ ոսկոյս...

էջ 92

⁸⁷ Զորիկ, Բանաստ., էջ 158. «...Տնօրէնութիւն փրկչի» քերթվածի մեջ աղճատված տող է հետեւելը. «Աստուած օրհնէ զայսն կարգացողն յարժամ երգէ զԶորիկն յիշեալ»։ Եւ ընթերցվածով վերահանգնվում է «...որ քզԶորիկըս յիշէ նայա», էջ 40, «Մինչ ասէ զմահե...» քերթվածի մեջ:

Անշուշտ իրեն, հեղինակին նն վերաբերում հետևյալ տողերը, ի՞նչ
միայն հիշված չէարգայն, վարիանտ՝ «Հարգայ» բառը տեղանուն է.

Անկալ ի յոսկոյ ցընոր

Ու ըզհոգոց տունըն շինեցի...

Ասցի թէ շինեմ ես բերդ

Ու քաղաք և դարպասընի...

Շատ մի (վար. դարգակ) դատեցայ, եղբա՛րք,

ի Հարգայ (վար. Հարգայ.) ես շատ մի տարի.

Ասցի թի՛մ շանօքս առնեմ

Մեծութիւն առանց հրամանի...

էջ 42

«Հարգայ» անունը փորձել են նույնացնել Կիլիկիայի «Հարգան» տե-
ղանվան հետ⁶⁸, բայց այդ դեռ կարելի չէ հաստատ համարել և Կարծում եմ
պետք է առնել ավելի շուտ «Հարգայ» փոփոխակը և նույնացնել «Հարգա»,
շուտ տված՝ «Հարգա» տեղանվան հետ, որ նշանավոր կենտրոն է եղել
Աղձնիքում, թաթարաց իշխանության երկրում, քան թե Կիլիկիայի մի հե-
ռավոր անկյունում՝ գտնված մի տեղ, թաթարական տիրապետությունից
դուրս:

Մարտի անձնակա՛ն բանաստեղծութիւնն է «Ողբանք փոշիմանու-
թեան» (էջ 25 և հտն.), որի մեջ կան հետևյալ հետաքրքիր տողերը.

Բունն եմ ածել ես աշխարհի,

Որ կու վազեմ հետ շատ շահի.

Ջինչ տէրն երեսո՛ւ հերիք լածի,

Այլ մեծութիւն սիրտ ունէի.

Ժողովեցի շատ մի բարի,

Ընդակ արի զնա թաթարի...

Այն բազային եմ նրմանի,

Որ փոքր ոքսին ոչ հասանի.

Ով որ ածէ դայքն այլ մեծի,

Քաղցած կենա և անօթի:

Ահա եղաւ այնչափ տարի,

Որ տուն ու տեղն դեռ կու քակի.

Ջինչ մեծամեծ վաստակ արի,

Ամէն դարձաւ հող՝ և ի փոշի:

Նա իր աշխատած հարստութիւնից զրկվել է թաթարների ձեռով կա՛մ
կողոպտվելով, կա՛մ հարկահանութիւնով: Կիրակոս Գանձակեցիին խոսելով
իր ժամանակի ժանր հարկերի մասին՝ գրում է. «Սեւ ոյր ոչ գոյր՝ զուստեհրս
և զդատեհրսն առնուին ընդ պահանջմանն»։ «Որ ոչ կարէր հաստեցանել

⁶⁸ «Արարատ», 1918, էջ 86.

զսակն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցնս⁶⁹, Արդ՝ կարծում են, թե Զրիկի որդին էլ նույն դժբախտութիւնն է ունեցել⁷⁰. բայց այն բանաւորագրութիւնը⁷¹, որի մեջ հիշատակվում է այդ, կարոտ է բանասիրական քննադատութիւն:

Տե՛ս Երրորդ հավելված՝ «Զրիկի կենսագրութիւն շուրջը»:

Կենսագրական տեսականից շատ հետաքրքիր է մի բանքը (էջ 40), որի սկիզբն է «Գնաց մանկութեան հասարակութիւն. բանաստեղծը խոսում է դատնացած հոգով. նա կորցրել է ամեն ինչ, ընկել է անհուն հոգաբերի մեջ, չուների տուն ու տեղ, խոցվում է, ամբողջ օրը տանջվում է հարկի ձեռքից—

Գնաց մանկութեան հասարակութիւն
Ու երեկ ինձ հոգ անհոգուն.
Ջըրկած եմ երկու կենօք,
Վասն այնոր չեմ ելնել ի հուն:
Գազան՝ անասուն ու հաւ
Գէմ ունին իւրեանց տուն ու բուն.
Ոչ տուն ու ոչ տեղ ունիմ,
Կու խոցիմ զօրն ի յայն հարկուն:
[Վար.՝ Կու խոցիմ ի յանհաւատուն]:

Նա սկսել է գինու մեջ թաղել իր վիշտը, բայց քանի ավելի գինի է խմում, այնքան ավելի ծփանքի մեջ է ընկնում: Նա հույսը կտրել է մարդկանցից, չի հավատում, թե որեւէ իշխան կօղնի իրեն, հասկանալի է՝ հարկի պարտքը տալով: Եվ վերջը մտածում է լինել թափոք վանքերուն, այսինքն վանական դատնալ, որպեսզի ծառայի աստծուն, որ տեր է մարդուս «անձին ու հոգուն», և եթե աշխարհիս անցավոր կյանքից, տուն ու տեղից զրկված է, գոնե անդնիի կյանքի ճարն անի: Գինու գործողութիւնը նա ուրիշ երկերի մեջ էլ հիշում է.

Գանձով գընած ես դու գերի,
Դու է՞ր խըմես զօրըն գինի:

էջ 28, տ. 91—92

Եթե բառացի հասկանանք, Զրիկը գերի է ընկել, հարկավ, թաթարների ձեռք, և փրկանքով գնվել, ազատվել է: Թե նա ո՞ր տարիքին է ընկել այսպիսի գժբախտութիւն մեջ, այդ դժվար է որոշել նրա բանքերով միայն: Անկորութիւն ժամանակ նա իրեն դժբախտ է զգում մեկակութիւնից:

Դու լէ՞ր կու դատիս, Զրիկ,

Երբ չուների գունդուստր ու որդիք:

էջ 85, տ. 24

69 Կ. Գոհնուկեցի, Պատմութիւն Հայոց, էջ 360, 240:

70 «Արարատ», 1918, էջ 83 և հետ: Այստեղից և «Զրիկ», Բանաստեղծ, էջ 10:

71 Անդ, էջ 40 և հետ. «Գնաց մանկութեան հասարակութիւն»:

Երբ նրա ստան սպիտակ է դարձել, արդեն հիշում է աշխարհի սնայ-
նության մասին և մտածում.

Լեճաց ա՛մ լէ՞ր կու պատիւ,
Աշխարհիս երակ դու Զրիկ.
Ոչ տուն ու [ու] տեղ ունիս,
Նւ ոչ կին, ոչ դուստր և որդիք:
Լե՛մ երբ հանց ընկեր քո բախտն
Ու թալիհն, ա՛մ, ի՞նչ կայ հարկիք...
էջ 112, տ. 60 և հաւ.

Ինչքան էլ սպասելու, աշխիւքն աշխատանք անելու մասին է գրում,
բայց աղքատ է, աշխատածք, երևի, դիւու է տայիս, զգալով նույնիսկ, որ
լավ բան չի անում.

Թէ՛ [— երանի՞ թե՛] լինէր ինձ դուռնաթ և խելք ի բարի,
Որ կարի հա՛նց կենալ, ինչ որ կու պիտի
է՛, աւագ, է՛, աւաղ, ափսոս կու լինի,
Զիմ խիւաց ուժն յինէն դիւնին կու տանի:
Պարտական եմ հոգով, լեզուս կու կապի,
Թէ լէ՛ ալ շատ բաներ յառաջ հանէի:
էջ 153, տ. 60 և հաւ.

Դառն է նրա միճակը Ժերության ժամանակ. նա իրեն բուրբոյն մե-
նակ և անճար է զգում.

Ոչ գիտեմ թ՛ որ մեռանիմ,
Ոչ որ լուսիմ որ թաղէ զիս.
Ոչ ունիմ տեղ հանգրստեան,
Ոչ խնդրացել եմ յորդիս...
Ոչ եղբայր՝ ոչ ոչ զոք ունիմ,
Որ աւաղէ, ափսոսալ զիս.
Ոչ ծրլեմ, ոչ բուսանեմ,
Զերդ զաղընձած սերմ եմ գիրիս:
Թէ ունէի ճորտ ու ծառայ,
Կամ կարենոր յաւարտրիս,
Սոքա ալլ զիս ուրացան,
Ու ատեցին զազքատ հոգիս:
Զայս ի յիմ բախտէս ունիմ,
Որ չի նայել քաղցր առօք յիս.
Ինձ նըման ալլ լէ՛ ծընել,
Ինչ կու նայիմ ի վերայ բանիս:
էջ 32—33, տ. 10—25

Նրա թշվառութիւնն այն աստիճանի է, որ ղախենում է, թե իրեն
կարգին չթաղեն իր ազգատության պատճառով.

Եղովի ու վաճիկն ալ ծերիս.
Երկու կենօքս շ'յաջողեաց,
Այս խոց մնաց ի վերայ սրտիս:
Էջ 33, տ. 55—57

Է՛, Զերիկ, պատրաստ կացիր,
Ի ծերութիւնդ լի գլորիս:
Այլ շունիս փող մի պահած,
Որ զքեզ թաղեն երբ մեռանիս...
Էջ 32, տ. 32—35

Ապա աղաչում է աստուծուն, որ օրհնեալ հողը ծածկէ իրեն: Ահա թէ ո՛րքան ծանր է եղել նրա վիճակը ծերութեան օրերին. նա սոսկում է, որ կարող է չարժանանալ նույնիսկ կարգին թաղման, որ ամենամեծ դրժ-բախտութիւնն էր համարվում մինչև վերջերս մեր ժողովրդի մեջ:

Այսպիսի դժվար օրերին, երբ նա մենակ էր, տանջվում էր և՛ նյութապես, և՛ հոգեպես, նա հայացքը բնականաբար պիտի դարձնէր դեպի եղբայրանոցները, լինէր քսիրոզ վանքերուն և այնտեղ գտնէր միեմբարութիւն: Թէ նա իրոք մտել է որեւէ վանք, այդ որոշ լի երևում նրա բանքերից, իսկ որ նա շատ փափագել է դրան, գուցէ և դարձել է որեւէ վանքի միաբան, մնալով իբրեւ աշխարհական, այդ զգացվում է նրա բանաստեղծութիւններէից:

Տն՝ ա պարագրաֆ 8. Եւրօքեշա՛հ բանքեր և միատիկական ձգտումս:

Այսպես ծանր ծերութիւն է ունեցել այս ժողովրդական բանաստեղծը, որի երկերը սիրված են եղել և ամփոփված մի տեղ Զերիկ գիրքս վերնագրով: Թեպետև նրա մասին չկան ուրիշներէից հաղորդված տեղեկութիւններ, բայց նրա բնավորութիւնն ու գաղափարները լիովին ծանոթ են մեզ հենց նրա սեփական բանքերից: Նա եղել է զգայուն արտի տեք, դիտող ու խորհող, ոչ անտարբեր դեպի շրջապատի իրական կյանքը, կատարված նշանավոր եղելութիւնները: Նա անկեղծ կերպով տանջվել է հասարակական և ազգային թշուառ դրութիւնից. հաճախ վառվել է վրժախընդրութեան բողոքով, այնքան շատ նա ատել է ժողովրդի հարստահարիչներին: Նա առաջնորդվել է որոշ քարոյական սկզբունքներով, հարկավ, ըստ իր դարում իշխող ընդհանուր հասկացութեան և, ինչպես շատերն իր ժամանակին, նա էլ տոգորված է եղել կրօնական ձգտումով ու միատիցիզմով: Եվ նրա երկերի հիմնական մտքերը վերաբերում են քաջի անձնականից նաև ազգային, սոցիալական և կրօնական խնդիրների, կրօնականը, սակայն, հաճախ ընկերականի հետ շաղկապված:

Յ. Ազգային ու սոցիալական հարցեր:— Վերածննդի շրջանի գրականութեան կարեւոր թեմաներից են այս երկուսը: Ազգային հարցն, ինչպես տեսել ենք, յառաջին տեղն էր բռնել քաղաքական անմիջիվառ դրութեան հետեանքով. իսկ սոցիալականը ծագում էր երկու դասակարգների տնտեսական վիճակի ծայրահեղ տարբերութիւնից: Մինչև արդիականը,

Հոգեւորականն ու փարթամ քաղաքացին հարստանում ու վաշխում էին, աշխատավոր ժողովուրդը տառապում էր հետին լքավորութիւն մեջ, Եվ այսպէս Ռազրատունիների իշխանութիւնն ժամանակից ի վեր նաև թաթարների օրով, Սրանց դրած մեծամեծ հարկերը վերջին հաշիւով ծանրանում էին գյուղացի ու քաղաքացի աշխատավորութիւնն վրա. հարկահաններն նա, լինելին այլազգի թե՛ հայ, կեղեքում էին ժողովրդին. գործում էր և վաշխառութիւնը: Եվ հետզհետե՛ թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում առաջանում էր մի կողմում՝ ընկաղտերկ մասաւս, որ ճորտ ու ծառա էր դառնում պաշտոնատար ազնվականութիւնն ձեռին, մյուս կողմում՝ փարթամ հարուստներ ու շահագործողներ: Այս գրութիւնը, որի մասին կարևոր չէ նրկար կանգ առնել այստեղ, քննականորաբար առաջ էր բերում դասակարգային սուր պայքար, որի արտահայտութիւնը 12—13-րդ դարի համար արդեն տեսել ենք (սկսականներս հատկապէս «Սոցիալական հարաբերութիւններն առականների մեջ» գլուխը): Այս երկու խնդիրներն էլ, ազգային ու սոցիալական, չէին կարող լզրաղեցնել Ֆրեկի նման մի քանաստեղծի, որ ծնվել էր առականագիր Մխիթար Գոշի մահից մի քան-քսանութինը ասորի հետո, ժամանակով ավելի նա մոտ էր Վարդան Այսեկցուն և ապրել էր Վարդանա առականների սկզբնական զարգացման շրջանում: Երեք թերթավանդների մեջ, որոնց երկուսի գրութիւնն թվականները շատ համաձայնական ճշտութեամբ և մեկինը հավաստի հայտնի են, առանձնապէս զորեղ է հընլում Ֆրեկի ձայնն ազգային և սոցիալական հարցերի մասին:

4. **«Ընդդեմ ֆալաքին»:**— Այս բանքը նա հորինել է Արղուն դանի թաղավորութիւն և Օրբելլան Տարսայի՛ճ իշխանի աթաբեկութիւնն սկզբում, երբ մեծ հույս կար ազգային միեմակի բարձրագման համար. ուստի քանաստեղծը լավատեսութեամբ է հայտարարում գայիք քաղաքական փոփոխութիւնն մասին.

Հիմիկ դըմարեց բաներս,

Որ թաթարն հղաւ թագաւոր.

Ջըրկեց զամենայն աշխարհս,

Ու գոզերն հզիր մեծաւոր:

Այս ա՛յլ չի մընայ հանցեղ.

Ու ֆալաքն ոչում կարևոր [—կարեկից],

Զարնու և Աղզէ ի վայր,

Չհամարէ զոչ ոք թագաւոր⁷²:

Ուրեմն վերջ կլինի զրկանք-դուլում անող թաթարական թագավորութիւնը: Նրա այս համոզմունքը հիմնված է այն տեսութիւն վրա, թե մարդկային բախտը հեղհեղումկ է, Գիմելում բախտի անվին (լարի ի ֆալաք)՝ նա ասում է.

72 Ֆրեկ, Բանաստ., էջ 217 և հետ., «Աթորաս», 1818, էջ 186 և հետ.: Այստեղ Թ-րդ տողն է «Ու ֆալաքն», իսկ Նախորդի մեջ՝ «Ու ֆալաքն»:

Է՛լ չարիս, ամ քեզ ո՞նց ատամ,
 Երբ շունիս դուռնի մօտենոր,
 Ոչ դաւել, ոչ երգումն ունիս,
 Զի քո սիրտդ է խիստ նենգատոր:
 Զուր որ կու սիրես այսօր,
 Կու գընես ի յոսկի աթոռ.
 Յեզուց կու ձրցես յաշից,
 Հաստարես հողոյն մոխրաւոր:
 Ոչ մուլքն, ոչ ապրանքն օգտէ,
 Ոչ հարիւր հազար ձիաւոր.
 Յորժամ շարխն ի լետ քակուի.
 Եւ ձրգէ ի յալքըն խոլոր:

Դրա համար նա իբրեւ լավ ապացոյցներ ունի ժամանակակից Թա-
 պաւորներին և իշխաններին արագ բարձրացումն և անկումը:

Ինչ վերաբերում է սոցիալական հարցին, այս բանքի մեջ նա, թե-
 պետ դեռ անհամարձակ, ֆալաքի պատկերով, թայց արդեն դժկամակում
 է կյանքի մեջ տիրող անհավասարութեան և անարդարութեաններին դեմ,
 որոնց ենթակա էր եղել և ինքը: Ֆալաքի, ճակատագրի կամ բախտի հին
 հավատքը, որի դեմ պայքարել էր դեռ Եղնիկ կողմացին, կարող էր ըն-
 դունելի լինել ռամկի համար, բայց ոչ Ֆրիկի պես խոհուն ու քրիստոնեա-
 րար գարգուն մտքի: Ֆալաքը նրա բանքի մեջ մի լոկ ճարտասանական ձև
 (ֆիգուր) է, որով նա վերադասական դադափարից ստեղծել է ըստ հին ժողո-
 վրրդական հավատքի մի խոսուն ու գործունէ էակ, որ իբր բաշխում է
 մարդկանց բախտը, և ապա մեծ աշողութեամբ իր մտածմունքն արտահայ-
 տել է մի կենդանի տրամախոսութեամբ, որ տեղի է ունենում բանաստեղ-
 ծի ու վերացական դադափարի անձնավորման մեջ:

Այդ անհրաժեշտ էր բանաստեղծական գեղեցիկ արտահայտութեան
 համար: Բայց այս ձևական կողմն է: Նրա ֆալաքն այլևս հին կույր բախ-
 տը չէ, բախտի կույր աստվածութունը, որ մարդկանց բաշխում է պատա-
 հական միժմակներ: Բանաստեղծը նրանից պահանջում է բարոյական
 սկզբունք, այն է, որ մարդկանց բախտն ըստ արժանիքի պիտի տրվեր,
 արդար և ուղիղ դատաստանով, մինչդեռ ֆալաքը ծուռ, անարդար գատա-
 վոր է: Ինչո՞ւ—Մի անգամ որ մարդ անհաջողութեան է հանդիպում, ֆա-
 յաքն այլևս չի ուղղում նրա գործը: Այսպես է սկսել Ֆրիկն իր այս բանքը:

Է՛լ չարիս, երբ ծրոհս մարդոյն,
 Զօրն ի բուն փորեա նորա հոր.
 Յորժամ դու քակես ըզմանն
 Ու լթողուս որ դառնա լուր:
 Սահուն՝ և երերուն պահես,
 Յաստուրս ի գիւ՝ և ի գըլոր:

Կապի՛ւ մի շարի ցուցնես,
Թէ դու լից զայդ հոգս ու ցընոր:

Այս իրեն՝ Զրիկի մի՛նական է իր ժոված բախտով, որ մինչև վերջը լի ուղղվում է Լամ, իմաստուն, գիտուն, «ուղորդ» մարդիկը, — ասում է նա, — աղողութիւն շունին, աղքատ ու դժբախտ են, մի կտոր հացի կարոտ են մնում, նրանց տունը քանդվում է. իսկ վատ, անգետ, հիմար, անհոնար ու ծուռ մարդիկը մեծ հարստութիւն և իշխանութիւն են հանդիպում:

Ե՛ւ չարիս, ըզվատի տունըն,
Կու ծնինս դու ոսկով բոլոր.
Ձաղէկն ի յնրկի ի ննրս
Վրտարես որ ժողովէ կըտոր:
Ձանն որ խողարած լվայլէ՝
Կու շինես ահեղ ձիաւոր.
Աւ ուղորդ մարդկանց տունըն
Կու քակես առանց բաճառի:
Յաւա՛ք, թէ քեզ քաֆր ասեմ,
Նայ ասեն, թէ մարդըն մոլոր.
Թէ չէ ի դիտուն մարդիքն
Յերակ լէ՛ր նախն դու խոլոր:
Ձանգէտ ու զնաքաղ մարդիքն
Աւարւորս առնես մեծաւոր.
Ձիմաստուն մարդկանց հացըն
Կու ձրգես ի սար կամ ի ձոր:

Ի՛նք բանաստեղծն իր քերթվածի այս մասի մեջ առհասարակ անհատական կյանքի մեջ տեղի ունեցող անհավասարութիւնն դեմ է դժգոհում և մտնելանդ այն անարդարութիւնն դեմ, որ մարդ բոլոր արժանիքի լի զնահատվում և աղողութիւնն ունենում:

Նրա անունով հայտնի նույնիմաստ երկրորդ բանքի մեջ⁷³, որ արվեստի նկատմամբ թույլ է, քան աւաջինը, շնչոված է դասակարգային անհավասարութիւնը.

Թէ բուրջն ու թաւհն աղէկ՝
Յաստուծոյ է քեզ հրամայած,
Ձինչ յաշխարհս մարդ որ կայ՝
Ձերդ մըշակ են քեզ կանգնեած...
Այն մարդն որ թաւհն ունի
Յուումէ իսկի լէ զրկած.
Ձօրըն նա պարապ նրստի,
Աւ բարիքն ի մօտն է կուտած...

73 Զրիկ, Բանաստ., էջ 225 և հաճ., «Վասն թաւհն և բուրջի ի Զրիկ երգէս».

Մէկն թագաւոր չի՛նի,

Մէկն աղքատ մոխրին պատըկած:

Այս իրական դրութիւնն է, աշխատող և շաշխատող դասակարգերի վիճակների մեծ տարբերութիւնը, որ միամտութիւնով բացատրվում է քախտով կամ աստուծով: Բայց բանաստեղծը չի բավարարվում դրանով: Նա ցանկանում է հավասարութիւն, և ձգտում է իրական անհավասարութիւն թուն պատճառը որոնելու, բայց չի գտնում այն.

Ձայս ո՛նց գիտենալ կտրենք,
Թէ այս է՞ր է (ի) հանց բաժանած...
Ձայս ո՛նց գիտենալ կտրենք,
Ես մըսօքս ի հոգս եմ անկած.
Ասեմ, թէ այս է՞ր լինի,
Որ զամէն հասար չէ զուգած:

Նա դասակարգային պայքարի խնդիր չի դնում. բայց որ նա հասարակութիւնը բաժանում է երկու դասակարգի—անարժան վալելուղներ և զրկված արժանավորներ, և որ նա դժգոհում է անարդարութիւն դեմ, գտնելով այդ դրութիւնը ծուռ, և ցանկանում է, որ հավասարութիւն լինի, այդ արդեն ըստ ինքյան դասակարգային պայքար է:

Ֆալա՛ք, դու (ես) ժըդիք ընկեր,
'ի ուղղորդին ես խիստ նենգաւոր.
Թէ չէ՛ դու հայեց ի նա,
Որ շունի հունար հոգեւոր.
Անկել է յոսկուն ի մէջն,
Շրփաթել դինչ ըղթագաւոր:
է՛՜յ շարխ, ամ քեզ ի՞նչ ասեմ,
Քան զամէնն ես խիստ դու մոլոր...
Մուտ է զինչ որ դու կառնես
Ո՞վ լինի հաւա՛ն քեզ ալդոր:

Այսպեա՛ս ամեն ինչ ծուռ է, ֆալաքի դատաստանն ուղիղ չէ. նա ծուռ դատաւոր է: Այսպեա՛ս է դիտել և անձամբ զգացել բանաստեղծն աշխարհի իրականութիւնը: Նա դժգոհ է եղած դրութիւնից, չի կարողանում հաշտվել դրա հետ: Եթե նա միայն նրանով վերջացնէր իր բանքը, թե՛ ամեն ինչ որ անում է ֆալաքը ծուռ է և թե՛ ոչ ոք նրա արածին հաւան չէ, այդ կնշանակէր՝ բանաստեղծութիւն մեջ անդրադարձնել իրականութիւն պատկերը: Այս էլ անշուշտ արժեքավոր և մեծ գործ կլինէր, մանաւանդ որ քերթողն իր երկի մեջ ցույց է տալիս քննադատական ոգի, կանգնում է աշխատավորների թեր և պահանջում հավասարութիւն և ըստ արժանիքի վարձատրութիւն, դառնալով աշխատավորութիւն մտքի ու զգացմունքի թարգմանը: Բայց նա այստեղ կանգ չի առնում, ավելի հեռուն է գնում:

Տալաքն ինձի բացիացաւ...

— Եթ' հաջիւ, անգէտ տղետը,

Քանի ես ֆալաք եմ լինլ

Չեմ տեսել քան ըզքեզ մոլոր.

Ջարինդ ի վերաս ձրգեօ

Քէ ֆալաքն է մեղաւոր.

Չգիտե՞ս թ' արարլէն լինի,

Ջով կամի առնէ մեծաւոր...

Հազար թէ ֆալաք եմ ես.

Չեմ կարող որ տամ քեզ կտոր.

Հրամանքն աստուծոյ լինի,

Ես առնեմ ըզքեզ թագաւոր:

Ուրեմն ամեն ինչ տնօրինողն աստուծոս կամքն է, և ոչ ֆալաք ասածը. Կնշանակի՝ բանաստեղծի գծգոհությունը վերջին հաշվով վերաբերում է աստուծուն: Մակայն բանը որ հասնում է աստուծուն, այստեղ արդեն ետ է կանգնում նա, ասելով.

— Տալա՛ք, քեզ մեղ ո՞վ դընէ.

Ջինլ առնեա՛ղ ամէնն է ազւոր.

Գիտեա ըզտալու տեղին.

Ջանաթմանն ու զարժանաւոր:

Ապա մե՛զ հանցեղ թուի,

Քէ գու լիս իբաւ դատաւոր,

Ջամէնն է հաշուով զուգել [Աստված],

Ու զմարդիկք պահել ահաւոր:

Ուրեմն՝ մե՛զ է այդպես թվում, թե չէ աստված ուղիղ դատաստան է անում: Ապա ինչպե՞ս անձնականով սկսել էր, նույնպե՞ս վերջացնում է իրենով, ցանկալով, որ իր գորախտությանը վերջ լինի և հին վիճակը ետ աստացվի.

է՛լ լարիս, ամ հերիք արալ

Ու ձկէ զթակտիլդ ի յուր.

Կըրէ գշարութիւն յինէն

Եւ դարձո գինշ հին կայ ի նոր:

Այս է մեր բանաստեղծի այս բանքի բովանդակությունը: Այստեղ տեսնում ենք, որ ազգային և իր անձնական շարաքաստիկ հանգամանքների և հասարակական անարդար անհավասարությունների պատճառով բանաստեղծության մեջ երևում է գծգոհություն իրական անհավասար սոցիալական վիճակից, և մի վայրկյան միայն բանաստեղծի մտքի մեջ շողում է երկքարության ոգին, թե աստուած թիրալ դատաւորն չէ: Բայց այս վերջինս, նրա մտքի ցուրը, արտահայտվում է դեռ շատ մեղմ, անհա-

մարձակ, նույնիսկ երկխոս եղանակով, ու վերջը բանաստեղծը նույնիսկ համակերպում է եղած դրությանը. թե աստված ամեն ինչ հաշվով է արել — անձնապես մխիթարվում է, թե՝

Աղքատն իմաստուն լաւ է,
Փանց հազար անգէտ զանձաւոր:

Այդպէս է և աստուծու մոտ, դի

Աստէն նա [գանձավորը] շունի հոգի,
Անդէնին է դառն ու մոլոր:

Ուրեմն ոչ թե մի ծրագիր ազգային դրության և սոցիալական անարդար վիճակի բարվոքման համար, այլ լոկ մի մխիթարութիւն անդննի կյանքով՝ բոտ ազնետարանական Աղքատ Աղաբի առակի, Եվ աշխարհ չէր կարող լինել 13-րդ դարում, երբ գեո իշխում էր քրիստոնեական մեծ բարեպաշտութիւնը, և Յրիկն, ինչպէս նրա մյուս երկերից կտեսնենք, իր ժամանակի որդին էր այդ նկատմամբ:

Կենսագրական տեսականից էլ կարևոր է բանաստեղծի այս բանքը. պարզ երևում է, որ նա այս հորինելու ժամանակները, 1286 թվականին, եղել է ալեքս, մոտ 50—51 տարեկան. արդեն կորցրած է եղել իր ստացվածը և աղքատութիւն ու անհաշուութիւնների մէջ ընկած:

Տե՛ս Երրորդ համբնված՝ Յրիկի կենսագրութիւն շուրջը:

Ե. ԵՎԼԱՍ ԱՐԴՈՒՆ ԴԱՄԻԿ և ԲՈՒԴԱՅԻՆ:— Յրիկի այս քերթվածը նրա լավագոյն գրվածքներից մէկն է: Սրա մէջ ամբիլի պայծառ երևում են նրա բանաստեղծութիւն ձևական կողմերը, նրա մի քանի հասկացութիւններն ու մտածմունքն ազգային և սոցիալական խնդիրների մասին, միաժամանակ և հայ ժողովրդի ժանր տնտեսական և ներքին քաղաքական դրութիւնը, այլև որոշ կենսագրական տեղեկութիւններ ենք ստանում հեղինակի մասին: Այս երկն իր հիմքում մի քերթված է հեղինակի օրով կատարված մի պատմական եղելութիւն և իր ժամանակի վրա, ոչ թե ոտանավորով ժամանակագրութիւն, այլ մի իսկական բուռն քնարերգութիւն:

Պատմական դիպվածն է 1289 թ. Արդուն դանի գեմ լարված դավադրութիւնը, որ լի հաշտվել. կոտորվել են գաղաղիները, շենք այս թվականին էլ ամենայն հավանականութեամբ Յրիկը հորինել է իր այդ երկը:

Տե՛ս Երրորդ համբնված՝ Յրիկի կենսագրութիւն շուրջը:

Օրբնայանը, ինչպէս տեսնել ենք, Արդուն դանի համար հաղորդում է, թե նա թիւքն էր յոյժ սիրող քրիստոնէից և եկեղեցեացի: Այս պատմագիրը նրա մասին պարզապէս գրում է, թե յԱստուած քրիստոնէից յայնմ գիշերի դարձնող զսիրտ մեծամեծածնն առ Արդունն, որին հանում են բանտից, թագավորեցնում և կոտորում նրա խշնամի Ահմադ դանին ու սրա կուսակիցներին: Ուրեմն հավատում էին, թե քրիստոնեական աստվածն է թագավոր կարգել հայերի բարեկամ Արդունին: Կնշանակե՛ հայերի համակրութիւնն ուղղված էր առ Արդունը, ինչպէս և գնացի նրա հայր Ապաղա

դանը և պատը՝ Հովսեփու դանը։ Յորիկի համակրութիւնն էլ բնականաբար
եղել է Արղունի կողմը և ալ 1289 թ. նրա դեմ դավադրութիւն սարքող-
ներէի, որոնց պարագլուխն էր Թուդան։ Նա քրթմաժի սկզբում փառք տա-
լով՝ «արգար ու իրաւ դատարար» աստուծուն՝ քաջազանչում է և քաջադի-
մում սպանված դավադիր Թուդային։

Տեսէք, թէ ի՞նչ դարմանք եղե
Հետ Թուդային և Արուսիին,
Թուդա, դու ո՞նց կամիր նենգել
Աստուածադիր թաղաւորին.
Զոր քրիստոնեայքն ամէն հաւաք՝
Ի յաստուծոյ կու խնդրէին.
ՁԱՐԴՈՒՆ Ղանն աստուած եղիր,
Ո՞վ է յաղթող Արղուն Ղանին.
Արղունն ի՞նչ վրնաս գործեց,
Գիտեմ՝ որդին էր Արադին։

Արղուն զանն էր Թուդային սվեր քաշել և ամեն բարիք տվել, մե-
ծացրել այն աստիճանի, որ նա Արղունից պակաս չէր, — ասում է Յորիկը,
— կամ, ինչպես Օրբելյանը գրում է, եղել էր «չինքսան», այսինքն՝ «ա-
ւազաց աւագ»։

Դու քանց զԱրղունըն լիւր [= լէիւր] պակաս,
Ի քո յաւէդ խիստ կու վախին [= կու վախէին],
Թուդա էիր, շինքսան եղար,
Բէկլար բէկի՛ իւր [= էիր] հեծելին.
Զգիտեմ, թէ զի՞նչ կամիր [= կամէիր] լինել,
Դու լի՛ւր [= լէիւր] որդի Չանկըզ-Ղանին։

Իր ստացած բարեքների փոխարեն՝ Թուդան կամեցել է Արղունին
սպանելով ինքը դառնալ թագավոր. բայց այդ, — ասում է Յորիկը, — նրան
տրված չէր ի վերուստ։

Մտիկ դրէ աշխարհ ամէն
Ըսքան լինեացն երկնաւորին,
Տեսէ՛ք, թն ի՞նչ արար աստուած
Ըզհատուցումըն հրգօրին.
Փակեց ըզբարձրն յաթոռոց,
Ջախեց զգլուխն վիշապին.
Ով կուռն տայ թագաւորաց,
Իւրըն բերէ կործանութիւն։

Աստանան էլ, — ասում է բանաստեղծը, — այդպես մտածեց իր
ստեղծողի նկատմամբ. բայց իր փառքից զրկվելով վայր գլորվեց, կոր-
ծանվեց, անդունդն ընկաւ։ Այդպես էլ սատանայի գործակիցներին աստ-
ված

Հանց խայտառակ հրապարակէ,
Ձինչ որ արար հետ Բուդային:
Տէրքն էզարկ երկնից ի վայր
Չընքսա-Բուդին և Արուսիկն,
Եւ ամենայն զխաւորացն,
Ձինչ ի մէկ տեղ խորհուրդ արին:

Ազգային-սոցիալական խնդիրը շատ կարևոր տեղ ունի Ֆրիկի այս-
քերթվածի մէջ: Մարունակ զգացվում է բանաստեղծի զայրույթն առ դա-
վադիրները և սրտանց բովաբարութեամբ, որ նրանք պատժվել են իրենց-
գործերի համար: Նրա այս երկու հուշերը ծագում են երկու դրդիչներից:
Մեկն այն է, որ, ինչպես տեսանք, դավադիրները ցանկացել էին սենսզել-
աստվածագիր թագավորին, որ բոլոր քրիստոնյաների ուղածն էր. բնա-
կանաբար Ֆրիկն էլ ուրիշների հետ պիտի զայրանար նրանց գործի հա-
մար և զոհ լիներ, որ նրանք պատժվել են: Երկրորդ դրդիչն ազգային-սո-
ցիալական է, այդ այն է, որ նա այդ դեպքից առաջ էլ սոսկալի ատել է
դավադիրներին, որոնց անունները դավադրութիւնից ու կոտորվելուց առաջ-
արդէն իրենց շար գործերով հրապարակի վրա են հղել և հանրաժանութիւն:
Մեր քերթողի խորին ատելութիւնն զխաւոր աղքատը, դա աշխատավոր-
ութիւնն թշուառ իրականութիւնն է, որ շարունակ մշտն է քերթողին: Դա
հայ ժողովրդի առաքապահին վիճակն է այն բռնակալ մարդկանց ձե-
ռին, խեղճների հառալանքն ու հեծութիւնը, զբնկած որբերի և այրիների
քաշած նեղութիւնները, շատ մարդկանց տների քանդումը և ամեն տե-
սակի կեղծքումները, որ աշխատավոր ժողովրդի զխիւն բերում էին ոչ մի-
այն դավադիրները, այլ և ընդհանրապես բոլոր սեմասայիները:

Ֆրիկի բանաստեղծութիւններին՝ արքի վերջում դրված սքանաբանիք
մեջ սեմասայիքն բառի դիմաց կա սանձանութիւն: Այս բառը մի քանի
անգամ գործածված է սովյալ քերթվածի մէջ, թաթարական դարաշրջանի
պատմութիւնն համար կարևոր է, և պետք է թե՛ լեզվաբանները և թե՛
պատմաբանները որոշեն զրա նիշտ նշանակութիւնը: Նույն շրջանում քա-
ղաքներից առևտրի և արդյունաբերութիւնն համար առնվող հարկը կոչ-
վում էր ստաղմառ կամ սթաղմառ, իսկ այս հարկը հավաքողները՝ ստաղ-
մալիւն կամ սթաղմալիւն: Նույն կաղմութիւնն ունի սեմասայիւն բառը սեմ-
ասառն բառից, որ մի անգամ գտնուի ենք Ֆրիկի սույն քերթվածի մէջ: Ըստ
գործածութիւնն այս բառը նշանակում է՝ իշխանավոր, կառավարիչ, վերա-
կացու, պաշտոնյա, իսկ սեմասառ՝ իշխանութիւն, կառավարութիւն
(թաթարական), վերակացութիւն, գուցե և կողոպտում, կամ սրանց
նման մի բան: Մասասայիւներն, ըստ Ֆրիկի, կեղծքիւներ են: Ինչպես հայտ-
նի է, իշխող դանների հողային ընդարձակ կալվածներ էին շնորհվում
բարձր պաշտոնյաներին ու զինվորականներին, որոնք և ամեն կերպ լա-
գիստանց շահագործում ու հարստահարում էին ժողովրդին: Այդպիսինե-
րից են հղել նաև Բուդան, որ ամեն բարիքն ստացել էր Արդունից, այլև

իր ընկերշակները (բորթախնինք)։ Նույնը եղել են և ուրիշ կառավարի-
նները կամ պաշտոնյաները։ Նրանք ոչ միայն ճշգրտւում ու կողոպտում էին
աշխատավորներին, այլև իրենց մեծ թվով նախիրներն ու խաշներին հո-
տերն արածացնելու համար՝ ոտնակոխ էին անում, ամբերում մշակված,
շեն ու մարդարանակ երկիրը, ձմեռն արան գնալով, ամառը քոշելով սա-
րերը։ Այս քոշվորութիւնը՝ հարկերի ծանրութեան հետ միասին՝ հայ ժո-
ղովրդի ու Հայաստանի պատուհասն էր դարձած։ Նստարնակ ժողովրդին
տնդահան անելով՝ իբր նախորդ ու հովիվ քշում էին այս ու այն կողմ։
Ետ քնական է, որ ժողովրդասեր Ֆրիկը դայրանար ալդուխի կնդեքի-
նների վրա և շատ գուշիներ, որ ժարգար և իրաւ դատաւորն տները խփել
ռչնացրել է թուղային և նրա ընկերներին, որ նա անմեղ տանջվածների
վրածն առել է։ Դրա համար և մեր բանաստեղծը վերնում բերված վերջին
քառյակից հետո՝ իբրև հավատացյալ իր գոհութիւնն է հայտնում.

Դու ես, տէ՛ր, խնդրող վրէժից,
Ի խոր նայիս անգնդային.
Լսես ձայնի հառալանաց,
Եւ հեծութեանցըն տընանկին։
Դու զբրկելոց ես ողորմած,
Որբերըն քո՝ են և այրին.
Տէ՛ր, դու տեսար լերկնից ի վայր,
Զինչ քո ծառայքըն քարշեցին։
Գէմ լի մնաց աղբիւր ու գետ,
Որ լացուցածքս շնըմեցին.
Գէմ լի մնաց լեռներ ու դաշտը,
Որ մասաւշիքն լկեխեցին։
Զմեռն յարան երթին [— երթալին] լալով.
'Ի ամառն ի քոշըն քարշէին.
Քրտն տարի դար [— տանջանք] քարշեցաք,
Ու հալեցաւ ոսկր ու մորթին։
Լոկ շնչաւոր ենք մնացել,
Խելք, զգայարանք մեղ չերնին։

Ֆրիկի հիշած քցան տարին տանում է մեզ 1260-ական թվական-
ները, երբ 1261 թվականի հայ-վրացական ասպատութեական շարժումից
հետո՝ սկսում է ավելի ևս ծանրանալ ժողովրդի դուրթիւնը, և Ֆրիկը կա-
րող էր մշտահար սրտով ասել՝ Եդարա— տառապանք, դառն օրեր քաշե-
ցինք։

Անեծք ու վրեժխնդրութիւն, ահա թե ինչով է բորբոքվում Ֆրիկը մա-
սաւիների հանդեպ։ Եվ որքան մեծ է եղել ընդհանուրի թշվառութիւնը,
նույնքան և ավելի բռնն է մեր բանաստեղծի ատելութիւնը նրանց՝ վե-
րաբերմամբ։ Նա անուններով հիշում է մի երեքին, որոնցից մեկի համար
գրում է.

Տէրն սաստեց խոլոր աշօք,
Որ ցրեցաւ տունն ու բարին.
Հանց փոխարէն արար աստուած
Այն Գրիգորին և իւր ազգին.
Որ ամենայն մարդ վկայեաց,
Թէ օրթախնին անիծեցին:

«Գրիգորը Գրիգոր Լուսավորիչն է, իսկ նրա ազգը՝ հայ ազգը: Աստուծած,— ասում է Զրիկը,— Գրիգորի և նրա հայ ազգի վրեժն ա՛յնպես առավ, որ ամեն մարդ վկայեց, թե [հայերը] օրթախներին [= դավադիր ընկերներին] անիծեցին, այսինքն՝ հայ ժողովրդի անեծքով կատարվեց այդ աստուծոյ նրա, ժողովրդի վրեժն առավ: Անեծքի կատարման այս հասկացութիւնը, որ դարեր շարունակ իշխել է հայերի մէջ, Զրիկի այս քերթվածի մէջ ուրիշ դիպքերում ևս ուժեղ կերպով երևան է գալիս: Իսկ Գրիգոր Լուսավորչի հանդէս գալը բացատրվում է այնու, որ հիմն օրթախները աշտուղութիւն ունենային քրիստոսադիր Թադավորի դիմ, մահմեդականութեան կողմից պիտի վտանգվեր Գրիգորի հովանար, հայոց եկեղեցին: Հայերը նեղութեան մէջ էին ոչ միայն տնտեսապես, նկատմամբ այս աշխարհի [= աստէնիս],— ասում է Զրիկը,— այլ և այն աշխարհի [= ասեդէնիս], այսինքն կրօնի:

Յերկու դիմաց ինք պարտական,
Մէկ՝ աստէնիս, մէկ՝ ասեդէնիս:

Բայց մենք շարունակենք տեսնել, թե ինչպիսի վրեժնեղութեան կրակով հոռւ է Զրիկի սիրտը: Մի ուրիշ ժամօրէնս կեղեքիչի համար նա ցանկանում է.

Հանց խորտակէ աստուած զնա,
Որ իւր ազգովն ամէն ընչին:

Իսկ մի երրորդի համար գրում է.

Տիրասպա՛ն, աստուածորաց,
Լիրբ 'ւ անամօթ այն շուն Սօֆին.
Հանչաք վաղէ դունէ ի դուն,
Մինչ որ անկնի ի մէջ դըբին:

Եւ վերջապես բերելով Ս. Գրքի խոսքերը՝ բացականշում է.

Թէ երանի՛, որ հարկանէ
Ջորդիքն ի քարն՝ չարկամիին.
Մենք վա՛շ ասենք անձանց մերոց,
Թէ ո՞նց տեսաք ըզթշեամիին:

Սրանից էլ ավելի չէր կարող լինել աստուծոյ և վրեժնեղութեան բոցը հայ աշխատավոր ժողովրդի չարկամների ու թշնամու վերաբեր-

մամբ: Մեր գրականութիւնն մեջ կան ուրիշ նման անհեթեհեր ևս: Դասվածքներթողն էլ, ինչպէս տեսնել ենք, անհեթեհներ է տալիս մի իշխողի, մի անձի սպանողներին, բայց դա հետեւորական բնավորութիւնն ունի: Ներսէս Շնորհալու դորեղ անհեթը «Եղեմիտի Ողբիւ» մեջ մի քաղաքի կոտորածի համար է, որ բանաստեղծն ինքը տեղում չէր ապրել: Իսկ Յրիկի խոսքերն ավելի ազդու և ուժեղ են, վերաբերում են ոչ թի միայն մի անձի սպանման, կամ մի քաղաքի ավերման, այլ մի ամբողջ ժողովրդի շատ տասնյակ տարիներով կրած ամեն տեսակի և՛ մարմնական, և՛ հոգեկան տաղանապ ու տառապանքներին, որ ոչ միայն զգացած է բանաստեղծը, այլև ինքն իր անձի վրա կրել է այն:

Այդ ամենի հետ կար նաև քաղաքացիական կռիւլը. քաղական չէր, որ հարստահարում էին, այլև լարախինդ մարդիկը ծաղրում, վիրավորում էին անմեղ խեղճներին, նրանց քաղաքական զգացմունքին դիպում, ինչ որ տանել չի կարողանում բանաստեղծի զգայուն սիրտը:

Գիտե՛մ, կային հանցեղ մարդիկք,

Որ ի մեր լարըն խնդային.

Նրբ նստէաք ի հրապարակ,

Ամէն ըզմեզ ծիծաղէին:

Հա՛նց բարեհոս աշուի ունինք,

Որ նոքա ա՛յլ գլխիվայրին.

Թող լլուսանայ մարդ ի դրամ,

Եւ ոչ ի զուր մարդ ծիծաղին...

Այդ լարախինդ մարդիկը հարստացած մասաւյիներն են, որոնց արարներէից այնքան դառն ցավով լցված է մեր բանաստեղծը, որ չի հանգրոտում, շարունակ դրված ու գրգռված է մնում. ուստի կրկին ու կրկին դառնում է նա նույն խնդրին.

Ապա դայս ա՛յլ կամիմ ասել,

Ձինչ մասաւյիքըն գործեցին.

Խիստ յուսացան ի յանցաւորս,

Եւ սլարծեցան յիրեանց մտին,

Թէ մենք շինենք շատ մի թուման,

Երթանք կախենք զորքն և զայրին.

Հետ ընկերաց ծուռ են կացել,

Եւ շատ մարդկանց տուն քակեցին...

Ձինչ որ տունչ էր տէր նոքա,

Ձայն գոհութեամբ հերիք լարին...

Հանց խար(ա)զանաւ տէրըն ծծծեց,

Որ իմացան զինչ գործեցին...

Հա՛նց սատակեաց աստուած զնոսա,

Ձինչ մասաււնց (— մասաւնեաց) լար կամէին:

Իսրայէլի գերիքն էաք,
Զեռն ինք ընկել ի Բուդային,
Ումեկ հասեւ էր ի սրտէ,
Թէ ի՞նչ լինի ճար մեր քանին.
Դառն և ողորմ ինք մնացել,
Թէ ե՞րբ հասնինք մեր մուրաւին...

«Անտված ա՛յնպես սատկեցրեց նրանց (մասասլիներին), ինչպես (տանջված մարդիկը) լար էին կամենում մասասլիներին», — այսինքն՝ կատարվեց ժողովրդի անված անեծքը: Հարստաճարված խեղճ մարդիկը, — շարունակում է քերթողը:—

Յիրեանց բառեացըն [—բարիքներին] զրկեցան,
Դէմ աստուծոյ շատ մի լացին.
Գանգատ ասցին ի խոր սրտէ
Հառաչանօք զայս ասացին.
«Տէ՛ր, մի՛ հաներ զմեզ ի կենացս,
Մինչ որ մեր պարագրս վճարին»:

Այս նշանակում է, թե տանջվածներն աղոթել են, թե իրենք լմեռնեն, մինչև որ իրենց «հատուցումը» լինի, այսինքն իրենց վրեժն առնվի և իրենց աչքով տեսնեն աստուծու արդար դատաստանը և մասասլիների պատիժը:

Ֆրիկը շատ լավ գիտեր, որ Բուդայի և սրա համախոհների շնչումով չէր բարվոքվում կառավարութան սխտեմը, դեռ չէր ոչնչանում «մասասար», դեռ մեռւմ էր մյուս մասասլիների ոհմակը: Այս ամենի բնաշնչումն էր կամենում նա, ծանր և անտանելի հասարակական ու քաղաքական կարգերի հեղաշրջումն էր «ոնչում»: Այս է նրան հուզում, և այս էր նրա երազի առարկան: Դրա համար, օակայն, նա դժբախտաբար ուրիշ միջոց չի գտնում և չի առաջարկում այս քերթվածի մեջ, բայց եթե ազալն աստուծուն և անեծք.

Զինչ մասասլի կայ՝ հասասար
Ամենեքեան թող ժողովին,
Որ ազալնք ըզտէր աստուած,
Որ ցուցանէ⁷⁴ Արդուն Ղանին,
Թէ չէ՛ ադէկ այն արտասուքն,
Որ թափեցին օրթախընին:

Արդուն Ղանին աստված հասկացնի, — ասում է բանաստեղծը, — որ լավ չէ այն արտասուքը, որ օրթախները — դավադիր ընկերակիցները

⁷⁴ Ֆրիկի «Բանաստեղծութիւններ» մեջ տպված է «ցուցանէ», իսկ «Արարատ» թմուգիր, 1916, էջ 176 է «ցուցանէ», որ և ուղիղն է:

թափեւ հն տվիւ: Ղանին արած այս նուրբ ազգարարութիւնը վերաբերում է նաև նրա մօտ ժողովված ընդեր մասապիներին, որոնք դեռ կենդանի էին և հավատարիմ էին Արղուն Ղանին. նրանք էլ պիտի իմանան, որ լավ բան չէ այն լարիքը, որ բերում են ժողովրդի գլխին: Բանաստեղծը, սակայն, անմիջապէս նրանց մի հրճի անունները տալով՝ «Հոգցող անուն» ասածու հրամանով հայտնապէս զգուշացնում է նրանց, որ շուտ հոգ տանեն իրենց մասին, այսինքն լարիքներ չգործեն, թէ չէ՝ նրանցով կզրապվեն, ժողովուրդը նրանց անհոգ կտա, և աստված այդ անհոգը կլսի. կկատարի:

Կու հրամայէ Հոգցող անուն⁷⁶
Թաւար Ղուլան Սաղազաւիւն,
Թէ շուտ հոգցէ՞ք Վերեանց բաներդ,
Թէ չէ լի հետ ձեզ պարապին,
Անէծքն չէ ոչում բարի,
Շուտ կը բռնէ դադամորդին.
Աստուած յերկնից ականջ դրել,
Խիստ կու լսէ մեղաւորին...

Փերովանի վերջին մասը մի շատ ազդու հաստիւծ է, որ առանձին առած կարող է լինել մի գեղեցիկ կրօնական բանաստեղծութիւն: Այստեղ արտացոլում է Զրիկի ուղղութիւնը, ոգին և իղձը՝ նա դեռ կանգնած է հին կրօնական, բիբլիական զաղափարի վրա, թէ ուրիշների հետ ինքն էլ մեղավոր է. մեղանիւ է և ժողովուրդը, թէ աստված ոտար դաժան բռնակալների ձեռով մեղի համար պատժում է ժողովուրդին, բայց պատժում է իր սիրելիներին և վերահաս դժբախտութիւններով՝ լուկ փորձում է մարդկանց: Այսպէս դեռ իշխում է նույն հայացքը, ինչ որ ներսնս Շնորհալու ժամանակ:

Աստուած յերկնից ականջ դրել,
Խիստ կու լսէ մեղաւորին,
Թէպէտ որ քիչ մի կու դատէ,
Բայց կու փորձէ զլու սիրելին:

Իմ ահա իրեն մեղավոր զգացող մեր այս բանաստեղծը, իբրև մի երկար տանջված մարդ, երեսը պետին դրած՝ արտասուքով թրչելով հոգը՝ աղոթում է: Նրա աղափր հավատացող մարդու, — Գրիգոր Նարեկացու խոսքով ասած, — սրտի խորքերից բխած մի շերտ խոսք է առ

⁷⁶ Ենթադրու է Կամակի գինամաց, պիտիլի, Կեփառնամաց բանի տառեր առերգելներն են: «Հոգացող անուն» կերպարութիւնն աստուծու համար՝ համեմատ / «Սէք անուն Եփսոս» կերպարութեան, որ պահում ենք ներսնս Շնորհալու մի երգի մեջ: Ինքը Զրիկը գործածել է «Եփսոս անուն»: Տե՛ս Զրիկ, Բանաստ., էջ 63. «Եփսոս անուն, չի գիտեցար քերթվածի ոկզբում:

աստված։ Բայց նա միայն իր անձի փրկության համար չէ ազերսում, այլև ընդհանուրի. ոչ թե հոգևոր փրկություն է հայցում, այլ մարմնավոր ազատում «մասնաօրէն»:

Տէ՛ր, որ զՅուսան տուեր կէտին,
Հաներ արծակ հող 'ւ ի գետին,
Ջայս մեղաւոր ծառայքս յնտին
Մի՛ տար տանել մեղաց գետին...⁷⁶
Ողորմութեամբըդ կու մընամք,
Որ վերջք առնես դու մեր շարին.
Աւուրքս անցաւ հետ մասնաօրէն,
Եղբր լըկայ, հոն լերեին:
Ցաւ յերկարեց 'ւ ի յոսկր անցաւ,
Այլ չի մնաց համբերութիւն.
Տէ՛ր, վասըն քո աստուածութեանդ
Յօգըն հասիր մեզ յատենին:
Փրկեա՛ ըզմեզ ի տանջանաց,
Երևցո՛յ զերեսս քոյին:

«Օգնության հասիր մեզ հատենին» — դատաստանին։ Այս նշանակում է՝ «արդար և իրավ դատաւ արա մեզ համար, ինչպես վարվեցիր Բուդայի և ընկերականների վերաբերմամբ, նրանց դիվան-դատաստանը տեսար, նույնպես վարվիր այժմ մնացած մասնալիներին, ընդհանրապես բնական հետ, վերջ տուր մեր կրած լարեքին ու ցավին և փրկիր մեզ տանջանքից։ Բայց թե ի՞նչ միջոցով պիտի լինի փրկութիւնը, այդ չկա։ Յորիկի այս կերպի ազերսն արտահայտութիւն է հասարակ մարդու, անհարակ ժողովրդի, որ խորն զգում է իր տառապանքի սոսկալի ծանրութիւնը և ցանկանում է ազատվել դրանից, սակայն որևէ գործնական միջոց չի գտնում, քայց եթե անիծել և շատուած-աստուած կանչել, Այսպես և Յորիկը, որ «արդար և իրաւ դատաստան»-ով սկսում է իր այս նշանավոր քերթվածը և նրանով վերջացնում։ Այդ է նրա քերթվածի գլխավոր, հիմնական գաղափարը։ Այդ էլ մի աստվածաշնչյան հասկացութիւն է. «Դատ արա ինձ, աստուած, և իրաւ արա ինձ ի դատաստանի իմում»։ Աստուծու արդար դատաստան և իրավունք։

Բայց դրանով քնավին չի նվաստանում նրա այս գործը, որ սերտ կապված է ժամանակի իրականության, իրական կյանքի հետ, անդրադարձնում է առհասարակ ամենքին մտատանջող հարցը, թե ե՛րբ պիտի դա թաթարական իշխանութիւն վերջը։ Եվ եթե նա դրա համար մի կոնկրետ քաղաքական ծրագիր չի տալիս իր բանքի մեջ, դրա փոխանակ նա ալնպիսի թանձր ու մտալլ գույներով նկարիչ է ազգային-հասարակական

⁷⁶ «Մեղաց գետ» — դժոխքի հրեղեն գետը, որի մեջ իբր ընկնում և քղում են մեղավորները։

ծանր վիճակը, և այնպիսի սրտամորմոք զգացմունքով է խոսում այդ մասին, այնպես մաստիկ սրտենցում, թե ինչու ուշանում է սպասած փոփոխությունը, «մասնախն» ու «մասնասլիններին» վերջը, և այնպես մեծ իդեոլ և ուժգին թափով նրդում է փափագած փոփոխությունը, որ անշափ գրավում է և իր հետ հափշտակում ընթերցողին, նա մեր գրականություն մեջ հասարակական և ազդային-քաղաքական խնդիրներին առաջնակարգ քնարերգուն է իրել, այնպես ասած, պարագայականն է կամ սգիւզվածական րանաստեղծն: Բայց այդ քերթվածը չէ միայն:

Ո. ՎԱՍԻԿԱՆԱՆ:—Մինչ րանաստեղծն իր նախորդ նրկու նրկները հորինելիս 1286 թվականից ի վեր անկույթյամբ սպասում էր թարգար և իրաւ դատաւորն աստուծու վճռին, որով վերջ պիտի տրվի ժողովրդին տանջանքին, 1295 թվականին հակառակն է լինում, սաստիկ հալածանք է սկսվում հայերի դեմ: Ուստի նա այդ միջոցին հորինված Վրանգանտն⁷⁷ րանքի մեջ, սարտի դառնությունիցն զժողովրդին ձայն է րարծրացնում առ աստված, դառնալով արտահայտիչ այն ժամանակի հայկական աղետավոր իրականության և փոխված աշխարհայացքի: Դա մի խիստ բողոք է աշխարհի ամեն անարդարության և անհավասարության դեմ, լինի այն բնական թե ընկերական, և մանավանդ այն անարդարության, որ հալազգը կրում էր՝ դարեր շարունակ շարշարվելով իշխանների ձեռին: Նորից մեր իրականության մեջ հարց է տրվում կտրուկ կերպով, թե ինչու է քրիստոնյա ժողովուրդն այնքան կնքնովում ալլակրոններին: Ներսէս Շնորհաւու ժամանակ արդեն հկնքնուց անկախ և ազատ բնագատությունն ու նկրալության ոգին գործում էին աստուծու թարգար և իրաւ դատավոր լինելու մասին, — որովհետև ամենայն ինչ աստուծուց էր ծագած ընդունվում: Բայց ժեկնարան րանաստեղծը հակառակում էր այդպես մտածողների դեմ՝ իր պաշտպանության ատկ արենելով աստուծու դատաստանը, րաքատրելով, թե իրր մեղքի պատճառով էին հայերի գլխին դալիս այն ամեն շարիքներու Սգնիկ Կողրացուց սկսած միամտությանմբ հաշտվում էին այդ մեկնության հետ. իսկ այժմ, երբ կրոնական ոգին համեմատաբար թուլացել էր, այդ այլևս չէր բավարարում շուրջ վաթսուհամայա հասուն տարիքն ունեցող ձրիկին, նրա հետ, հարկավ, նաև ուրիշներին, և ինքը րանաստեղծն արդեն դատ է սկսում և վիճում նույնիսկ թարգար և չիրաի և ողորմածն աստուծու հետ: Նրան դառնցնում է այս հարցը.

Ապա այս է՞ր որ կու լինի,
նե թէ յումէ՞ կայ և յայտնի:

⁷⁷ Այս Վրանգանտն վերնագիրը հետադրից լի ծագում, այլ Արիստակէս վ. Տեկոնցի գրածն է: Տէ՛ս նրա «Հայագր» ժողովածուն, Թիֆլիս, 1882, էջ 148 և հետև. Ձեռագրի մեջ վերնագիրն հղել է՝ «Բոս ի ձրիկ գրգռին», վարիանս՝ «Բոս ի ձրիկ գրոցն»: «Ձրիկ գիրք» անունը ցույց է տալիս, որ այդ վերնագրով մի ժողովածու է հղել ձրիկի ռոտեւալներին:

Նույնպէս և մի ուրիշ երկրի⁷⁸ մէջ ինքն իրեն հարց է տալիս.

Ձայս ո՞նց դիտենալ կարենք,
Թէ այս է՞ր է(ի) հանց քաժանած:
Ձայս ո՞նց դիտենալ կարենք,
Ես մըտօքս ի հոգս եմ անկած,
Ասեմ՝ թէ այս է՞ր լինի,
Որ զամէն հասար շէ զուգած:

Կենդանակի՝ բանաստեղծը երկար ժամանակ խորհում, ձգտում է թափանցելու իրերի խորքը, գտնելու աշխարհում եղած և՛ ազգային, և՛ դասակարգային անհարթութիւնները ու շարիքների իսկական արմատը: Ազգային դժբախտութիւնների հիմնական պատճառն է համարում է այն, որ աշխարհում կան բազմաթիւ ազգեր, և ոչ թե մեկը: Եվ այդ տեղից էլ սկսում է իր ասելիքը: Զէ՛ որ սկզբում մեկ Ադամ-Եվա են եղել և բոնկ բարբառ համազգային⁷⁹, բայց զարմանալի է, շատ զարմանալի,—ասում է նա,— որ այն մի գուգից

Ո՞րքան ազգեր ծնան յերկրի.
Ուրիշ լեզու ամէն մէկի,
Որ մէկ մէկի ու հաւտնի:

Այսպէս թվում է իր ժամանակի իրեն հայտնի ժողովուրդներին, թվում քսան, որոնք իրենց ցեղական ու լեզվական տարբերութեամբ ընդհանրապէս իրար դեմ անհավան կերպով կանգնած են եղել: Այս անհավանութիւնը կրօնականի մեջ ավելի մեծ ուժով է երևան եկել: Միօր՝ թար Գոշի առակների ուսումնասիրութեան ժամանակ արդեն տեսել ենք, թե ինչպէս ժողովում էին ուրիշների կրօնական ծեսերն ու սովորութիւնները. բայց հայերի և քալազդիներին, ալսինքն մահմեդականներին հարաբերութիւնն այն ժամանակ ընդհանրապէս բարկամական էր: Այդպէս չէր զրութիւնը հարցեր տալի անց: Հայերս, որ ճշմարիտ հաջատն ունինք, ասում է Յրիկը, տանջվում ենք ալազդիների ձեռքին: Եվ նա ցածագրում է 1295 թվականի թշվառութիւնները:

78 Յրիկ, Բանաստ., էջ 227, «Վասն Թայնհի և բրիշ»:

79 Եստ զյուրաքանչիւր յիտի լինել զընդու համար, թե քիանդատումս զվեճի բռնվելով աստծու հետ, Յրիկն ամենից առաջ կասկածի տակ է առնում աստվածաշնչաբան, «Յրիկ (ժողովածու)», Երևան, 1937, էջ 114, հոգոված Ա. Ղանալանյանի): Իսկ մի ուրիշն՝ ավելի ևս զարգացնելով իր Նախորդի միտքը՝ գրում է. «Իր այս բանաստեղծութեան մէջ Յրիկը համարեալորեն վեճի կանչելով աստծուն, նախ և առաջ լուրջ կասկածի է ենթարկում աստվածաշնչումն նկարագրված աշխարհի և մարդկանց արարչագործութեանը: Յրիկը չի հավատում Ադամ-Եվայի լեզննդին» (Յրիկ, Բանաստեղծութիւններ, Երևան, 1941, էջ 10, Առաջաբան Ս. Մկրտչանի): Այսպէս զրոգներն իրենց մտածածը վերագրում են Յրիկին. թող կարգան նրա թիան պիտանի և լաւ առաջնալ Յրիկան զման արարչութեան, և այլ կրօնական քերթվածները:

Այլ կամք ի ձեռս անօրինի,
 Որք կու վարեն անդին զհրի.
 Ո՞րքան քակեն եկեղեցի,
 Քանի՞ շինեն պիղծ մըղկիթնի:
 Քանի՞ կանայս առնեն այրի,
 Եւ ո՞րքան որք քրիստոնէի.
 Ո՞րքան արիւն հեղան յերկրի,
 Քանի՞ առնեն րան խոտնի:
 Ո՞րքան տանջեն զմեզ յաշխարհի,
 Եւ կեղեքան զկեանս մեր յայտնի.
 Եւ դո՛ւ ներե՞ս յամենայնի,
 'ի անտե՞ս առնես զմեզ ի վըշտի:

Ինչո՞ւ պետք է թարգմար և իրաւա աստվածն այս ամենը ների և այս անիրավութիւններ յիմօք հայտնի կերպով շառնի: Եվ մի տեսակ հանդիմանութիւն մը ավելացնում է՝ դիմելով աստծուն.

Գիտե՞ս, մարմի՛ն եմք մըսեղի,
 Գէ՛մ արծա՛ն շմք ինչ պըղընծի.
 Եղե՛ղըն շմք, կամ խո՛ւտ վայրի,
 Որ խանձ արկեալ ես կըրակի,
 Քան զանդաստան փըշարերի,
 Կամ մաքառաց ինչ պըրակի:

Եւ ա՛յ, ասենք բարկացել ես հայ ազգի վրա, ինչպէս երբեմն հրա-
 ների վրա, ուրեմն ինչ բարկութիւն, որ քեզնից թափվի՝ մե՞ր գլխին պի-
 տի զա կուտակվի: Այս հարցապնդումները և մանավանդ հայ ժողովրդի
 ողբերգական վիճակը զորեղ թափով են արտահայտված, որովհետեւ րա-
 նաստեղծի վիշտն էլ սաստիկ է: Ժողովրդի կրած տառապանքի մեծու-
 թիւն պատճառով մեջ է գալիս այն զաղափարը, որ թեթեւակի երևում էր
 արդեն Մխիթար Գոշի առակներին մեջ, թե ավելի լավ է մի՛ անգամից
 մեռնել ոչնչանալ, քան թե տանջվել շարունակ:

Արդ՝ եթէ շմք ինչ պիտանի,
 Եւ կամ շունիմք զործ ինչ բարի,
 Կամ քո սրտիդ եմք ատելի,
 Որ շարարաք ըստ հրամանի,
 Նա՛ դու ջընջէ՛ զմեզ մէկ հետի,
 Որ քո բարի սիրտըդ հանգչի:

Այս մի հուսահատական ճիւղ է, որ ինքնաշարժ կերպով թուում է
 քանաստեղծի բերանից. բայց իսկույն նա զգաստանում է, որ հեղեղ է
 աստուծու ջրարի սիրտը, և ուղղում իրեն.

Թէ ա՛յս կամօքըդ քո լինի,
Ամենակա՛լ աստուած քարի,
Նա՛ մեք տանեմք, որչափ պիտի,
Եւ համբերեմք ամենայնի,
Այլ որ վատուծն է՝ թող կորի,
Եւ զոր կամիս՝ թող ա՛յն լինի:

«Թող վատուծը, թույլը կորի, թե չէ՝ մենք, եթե այս լինում է քո քարի կամքով, կդիմանանք ամեն բանի. թող ամենակալ քարի աստուծուդ կամքը լինի», — ասում է քանադատեղծը՝ այլևս չհուսահատվելով իր ազգի համար և համակերպելով աստուծու կամքին:

Շարունակության մեջ անցնում է հասարակական ու քնական անհավասարություններին: Թե՛ ազգը թողնենք, — ասում է նա, — քայքայի՞ թե՛ քարդար, իրավ դատավորի հրամանն է,

Որ մէկն ապրի տասն տարի,
Մէկն հարիւր այլ ավելի,
Մէկն ոչ ի տասն հասանի,
Երկու-երեք ամսոց մեռնի:

Եվ նա թվում է քնական և սոցիալական անհավասարությունները — մեկի վաղաժամ մահը, մյուսի բազմամյա անպետք կյանքը. մեկը՝ խիստ ուժեղ, մյուսը՝ սարսափելի վախկոտ. մեկը՝ հանճարեղ ի բնե, մյուսն՝ անշնորհք. մեկը՝ հրեշտակի պես զեղեցիկ, մյուսն՝ անճոռնի տգեղ. մեկը՝ քարեգործ, մյուսը՝ լար, սպանող, և այլն, Հապա դասակարգային անհավասարությունները:

Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկին հազար ձի և շորի,
Մէկին ոչ ու մի, ոչ մաքի...
Մէկին ատլաս և զրբջլզի,
Մէկին շապիկ մի լի հասնի.
Մէկին հարամբն յաշողի,
Մէկին հալալըն կորուսի...

Մէկին ըռախտ և զրահի,
Ըռխով նըստի ի պէտաւ ձի.
Մէկն է բոպիկ և անվարտի,
Հետևակին առաջ փախչի.

Նա բարկութեամբ ի հետ հասնի,
Ջվիզըն կըտրէ և շողորմի.
Ջկին և զտրդայքն առնու գերի,
Եւ հանց տանի, որ այլ չթափի:

Սրանք են աշխարհի ուժեղներն և այսպէս են վարվում թուլերի հետ:

Իշխան դըրեր ես մէկ մէկի,
Քան զքանատար դալ՝ ոչխարի,
Կամ զերդ վազան նապաստակի,
Կամ քաջ առիւծ՝ ամէն հետի:

Այսպէս է խիստ ուժեղ խոսքով քննութեամբ Զորիկը կեղծող և կեղծովող դատակարգներ, աշխարհի իշխանները հոտերը պատառող գայլեր և առյուծներ են: Նա առանձնապէս կտնջէ և առնում նաև հարուստների կամ քախտավորներին և աղքատներին կամ քախտաւորներին վիճակի մեծ տարբերութիւն պրտ: Բախտավորներին մեջ են և հոգեւորականները.

Անբախտըն դալ ամօթալի,
Հեզ և հանդարտ, աւաքների.
Գալ և կանգնի յետին տնդի,
Անշուք, անշնորհք և անյարգի:

Իսկ, լընդհակառակն, ահա թե ինչպիսի վիճակ ունի շլուժն ի փորին, այսինքն՝ զիրուցի բեռը փորին՝ հաստափոր, ցնփոր, տգետ և անգործ քահանան.

Բախտաւորն դալ ճօնկտալի,
Գալ և նըստի յաւազ քարծի.
Լուծն ի փորին թէ շուրջ անցնի՝
Ոչ ալելու մի չի դիպնի.
Բայց վաւըն մէկ ատու տունի,
Որ թէ զատիկ, այլ տուն լինի,
Նա՛ խաշամբոյրն իւր շատ անկնի,
Սորթ և էրի և դադանի:

Ամեն լավ ու վատ բան, ամեն աննման անհարթութիւնները կախված են քախտից, իսկ քախտն էլ աստուծոյց է տրվում.

Ամէն ի բախտըն գալ կտտի,
Թէ աստուծոյ տունալ լինի:

Հետեւաբար քանաստեղծը քախտավորի և անբախտի հակադրութեամբ ևս տարակուսում է աստուծու պարգար և իրաւա վերաբերմանքի մասին: Եթե այդպէս է, աստուծու վերին իրավ է, ապա ինչո՞ւ աշխարհում գոյութիւն ունին աշնակիւի շարիքներ, անհավասարութիւններ ու դժբախտութիւններ: Բանաստեղծն ուղում է իմանալ այդ երևութի պատճառը, բայց նա իր հարցերի պատասխանը չի գտնում, և երկրայութիւն մեջ մնալով՝ վերջը նա իր հարցերի համար «մեղա դալով», դարձյալ խոստովանում է, թե աստուծու սղատաստանն իրավա է. նա, աստված, ամեն

մեկին դիտավորութեամբ, որոշ նպատակով (սենսթով) և տալիս իրենց վիճակը, ուստի և ինչպես որ աստված կամենում է, այնպես էլ պիտի լինի.

Ես քեզ մեղայ հրկնաւորի,
Տնան աստուծոյ ահեղ մեծի.
Քո դատաստանն է յիբաւի.
Նեաքով կուտես ամէն մէկի:
Տէր, քո կամայն է աշխարհս լի,
Այսպէս լինել, զոր ասացի:
Քեզ օրհնութիւն ի մէջ տացի,
Ամենազօր տնանդ Յիսուսի:

Այս դեպքում էլ, ուրեմն, համակերպում և աստուծու կամքին ոչ միայն նրա համար, որ վերջիվերջո իրավ է գտնում աստուծու դատաստանը, այլև որովհետև աստված թահեղ, մեծ, ամենազօր տէրն է՝⁸⁰. կամ, ինչպես Բենեդէմ ֆաւաքին քերթվածի մեջ ասում է, աստված

Ձամէնն է հաշուով զուգել [— արել],
Ու զմարդիկք պահել ահաւոր:

Այսպես ուրեմն՝ Յորկն իր հրեք քերթվածներով, որ տեսանք և որոնց նյութն են ազգային ու սոցիալական խնդիրները, հանդիսանում է մեծ հայրենասիրական բանաստեղծ, ժողովրդի ցայնքով վշտաւար մի երգիչ և լավագույն ազգային ապագայի ձգտման, թաթարական լծից ազատվելու իդէի մի քարոզիչ: Նրա գրավւթյունն ամէլի մեծ է այնու, որ նա ազգային խնդրի հետ միասամանակ և իրար հետ կապակցված ու միակերպ ուժով, պրաղվում է նաև հասարակական-տնտեսական, դատակարգային և ընդհանուր մարդկային խնդիրներով: Եղակի ուժգնութեամբ և խորին առելութեամբ աղաղակ է բարձրացնում աշխարհում իշխող ու հարստահարող կոպիտ ուժի դեմ, բուն զայրույթով նկարում կենդանող պարոնին, շահագործող ուժերին ու նրա վայրագությունը, հեղեղութեամբ երգիծում բախտամուր, տգետ քահանային ու նրա պերճությունն ու վայելքը, և քնքշութեամբ արգահատում խեղճերին, թուլերին ու կենդանւածներին, միշտ ձգտելով մի լավագույնի, մի իդեալի:

⁸⁰ Լանցե'ք, քէ ինչ են ասում: «Այսպիսով, Յորկն այս [Գանդատ] բանաստեղծութեանից ինքնուրոյնքան բխում է այն կերակացութեանը, որ տառված քարոզար և լիբաւի լէ. հեռեւարար նա աստված լէ [այսինքն աստվածն աստված լէ— Մ. Ա.] և ազգային գոյութեան էլ լաւիք (Յիւլ, թանաստ., էջ 18, Առաջաբան Մ. Մկրտչի)»— Կե'ղէ Յորկ, 80-րդ դարում էլ քաղելիք ևս անցած էղել, այն էլ ի'նչպիսիք:— Եթէ վերեւի արտասոյց՝ տողերի հեղինակը լինէր սեղգուստ, ուղղամիտ և սելդագատ, —ինչ որ անհրաժեշտ է ամեն մի գիտական աշխատողի համար և աւանդարակ ամեն մի մարդու համար, ապա նա Յորկին այնպիսի բթեռ ձեռվ չէր բռնադատել, որ մոգեմեթիզմը—արգիստման ենթաբովի և նոր ժամանակի մարդու քղամիջ հագնի:

Նա որոշ լի հայտնում, թե ի՞նչ է իր իղնալը՝ թայց հրք նա դժգոհում է բազմաթիվ աղագրի և լեզուների գոյությունից և մարդկանց վիճակի անհավասարությունից, այդ ցույց է տալիս, որ նա բաղձում է, որ լինեն արդիարհում մի աղջու մի լեզու, և որ բոլոր մարդիկ հավասարապես վայելեն բարիքները։ Նրա քննադատությունը հենց վկա է նրա ազգային ու դասակարգային գիտակցությանը. և նա դրանով իսկագնաց պայքարում է թաթարական բուրձու կեղծքի տերություն և ընդհանրապես իշխող դասակարգի դեմ։

Քերենք մի համեմատություն։ Սուրբ Գրքի մեջ Հորը (Յորը) ահեղ ու հզոր աստուծուց զանգատվում է և նրա հետ դատ վարելով արդար դատաստան է ուղղում իր անձնական մարմնավոր տառապանքի համար։ Գրիգոր Նարեկացին 11-րդ դարի սկզբում իր Ողբերգության առաջին բանի մեջ ժառանգորդ աստուծուն անող աստուծուն դժմելով՝ ասում է.

Եւ ի վեկա իմ քնզ քնզ գա՛տ խառնեմա

Հզո՞ր, մի՛... տաղտկալի քնզ երեւոցի...

Այլ իբր դարերալ խունկն հաճոյական...

Ի վերստին գիտ կորուսեալս հոգալ առակի

Ընդունելի կամաց քոց լիցի։

Իսկ Ֆրիկը 13-րդ դարի վերջերում իր «Գանգատի» սկզբում գրում է.

Աստուած արդար և յիրաւի,

Եւ ողորմած յամենայնի,

Հանդէս [= դատ] ունիմ, բան մի վիճի,

Քէ դու լսես քո ժառայի։

Ո՞րքան տարբերություն մեր այս երկու հին մեծ բանաստեղծների մեջ, մեկը վսեմ ու ճոխ ձևով, մյուսը՝ պարզ ու հասարակ, թայց ոչ պակաս գրավիչ։ Խնդիրը սակայն այդ չէ։ Նրանք երկուսն էլ դատ են սկսում աստուծու հետ։ Նարեկացու աղատ ղեկը Նույնն է, ինչ Ֆրիկի «Հանդէս» և «բան վիճի»։ Այս երկու դարձվածն էլ նշանակում են իր թիրավունքը միտոռելը, ուղեւ, պահանջել, ինչպես օտար քառով ասում են, աղավա անելովը—դատ վարելով, վիճելով, կռվելով⁸¹։ Եվ ո՞րքան տարբերություն այս երկուսի աղատիքը հղանակի, նյութի և նպատակի մեջ։ Մեկն աղերսախառն խոնարհություն մը է դիմում ժառանգորդ աստուծուն անող «հզորին», մյուսը՝ դժգոհությամբ ու համարձակ հարցապնդում է

81 «Գոտա» նշանակում է նաև «թրավումք», իսկ «դասեմ»՝ նաև «վիճել»։ Տե՛ս ՆՐ. Անուշան, Արմատական քառարան, «գոտ» բառի տակ, «Հանդէս» նշանակում է նաև «դատաստան», իսկ «վիճա» բառը՝ նաև «կռվել»։ Տե՛ս Անուշան քառարան Հայկազենեան լեզուի։ Ըստ «դավա» բառը նշանակում է՝ «դատ, վճէ, կող, կռիւ»։ Տե՛ս «Բժշկական լեզու»-ի զգարարք, Վենետիկ, 1888, էջ 516, «տառայ» բառը։ Այլն ՆՐ. Անուշան, Թարգմանիք փոխառյալ բառեր հայերենի մեջ, Վաղարշապատ, 1902, էջ 321՝ «ճավա» — վիճի, դատ։

ուղղում նույն «ահեղ, ահաբորժ, թամենազորին» իր արած դատաստանի համար: Մեկի դատի լեռան ընդ աստուծու վերաբերում է իր և իրեն նման կրոնավորների անձնական հոգևոր, այսինքն կրոնական կյանքին և իր «կորած հոգու» փրկությանը, որ լինելու է անդենի աշխարհում— երկնքում ըստ ժամանակի հավատքի: Նա արտահայտիչ է իր դարի վաճառական-կրոնական կյանքի ու միատիկական անուղիներին, իսկ մյուսի ազատ ու վեճի քանին նյութին է ընդհանրության, ժողովրդի իրական զրգարալու կյանքն այս աշխարհում և նրա մարմնավոր փրկությանը տառապանքից: Սա էլ արտահայտիչ է իր ժամանակի ազգային և հասարակական իրականությունն, իր ժամանակի մտածածնների ու ձգտումների: Ծվ ալսպես մեր բանաստեղծությունն երկնքից ինչևիցե աշխարհականացել է արդեն և դարձյալ կապվել իրական աշխարհիկ կյանքի, երկրի հետ: Բայց այդ դեռ չի նշանակում, թե արդեն առավելությունը կատարելապես տրվում էր երկրին. դրա համար դեռ հարկավոր էր, որ ժամանակ անցներ: Զրիկն, իբրև տաղանդավոր բանաստեղծ, քաղամեղմանի կերպով արտացոլել է իր երկերի մեջ ժամանակի ամբողջ ոգին: Տեսնենք նրա բանաստեղծության այլ գծերն ևս:

2. Մեղքն իբրև ժողովրդի տառապանքի պատճառ և նրա փրկության միջոցը:— Սխալ է ասել, թե Զրիկը Հայոց աշխարհին հասած զրգարալուծությունները հետևանք չի համարում մեղքերի, և իբր նա ալոկ կողմից խղում է այն կապը, որ ունի իր նախորդների հետ⁵², Արդարեւ, նա «Գանգատի մեջ առանձնապես չի բերում մեղքը, որովհետեւ նրա խնդիրն է ազգային և դասակարգային անարդար և անիրավ վիճակների դեմ քողոքելը. բայց այնտեղ էլ վերջը նա ոչ միայն համակերպում է աստուծու կամքին, այլև կողմնակի հայտնում է մեղքի մասին՝ ասելով աստուծուն, որ եթե զքո քրտիդ կամք առնի, որ շարարաք ըստ հրամանի, նա՛ դու ջնջե՛ զմեղք: Աստուծու հրամանի համեմատ չգործելը հենց՝ է մեղքը, որի համար և պատժում է աստված:

Մի բանքի մեջ (էջ 147) նա թաթարների օրով կրած անվերջ շարիքների ժամանակն անվանում է «մեղաց դար»— մեղքի համար կրած տանջանք, հալածանք, տառապանք:

Ըս ի՞նչ գիտէի, եղբայր,
Թէ մեղա՛ց դարն հանց լինե՛նայ,
Զինչ որ կու քարշենք հիմիկ,
Շատ շարիս⁵³, և վճար չըկայ:

«Ըս ի՞նչ գիտեի, թե մեղքի տանջանքն այսպես է, ինչ որ այժմ քաշում ենք շատ շարիքներ, և վերջ չկա: Մի ուրիշ բանքի մեջ՝ «Վասն ան-

⁵² В. Брюсов, Пoesия Армян, 1916, էջ 79.

⁵³ Սխալ է այս «շարիս» բառը բացատրել իբրև «հարկի մի տեսակ», ինչպես շրված է Զրիկի Բանաստ. Բառարանի մեջ: Այդ պարզապես «շարիք» բառի հայեցակետ հոգովն է:

միաքանութեան քրիստոնէից», որ նա գրել է 1295 թ. հալածանքի ժամանակ, նա մասնավորապէս մեղքի խնդիրն է դնում՝ այսպէս անհեղինակ.

Որք որ լսեն այս ողորորում՝
Թող ըզմեղաց սուգըն պահեն:

Նա խոսում է քրիստոնյա ազգերի՝ հատկապէս ֆրանքներին, հոռոմներին մեղքերի մասին. ամենքը ժմեղաց տէր են.

Ամէնքն ատողք են միմեանց,
Վասն այն օտարք ըզմեղ կոխեն.
Գէմ քրիստոնեայք մեծ մեղք ունեն,
Որ հանց յերկար դար [— տանջանք] կու քաշեն...
Թող թ'ապա յո՞ր աղգի մեղաց
Ձեկեղեցիքըն հալածեն...
Թագաւորքըն լի հաշտին,
Հետ միմեանց որս կու պահին,
Հանապաղ դարձ ժողովեն
Եւ զմիմեանս ի սուր քաշեն:

Սա մանրամասն նկարագրում է քրիստոնյաների իշխող դասերի ընկած բարքերը. վարդապետներ, եպիսկոպոսներ, թագաւորներ, քահանաներ, վանականներ, միակնցներ, ճգնավորներ ու հայրապետներ, ամենքը, բացի աշխատավորներից, մի առ մի ներկայանում են իրենց բացասական կողմերով և շեն պրծնում մեր բանաստեղծի հարվածող խարաղանից: Ամենքը մեղավոր են ըստ իրենց կարգին: Քրիստոնյաները

Ձինչ մեղք որ կա՝ դամէն գործեն:

Այդ պատճառով և, — ասում է նա, —

Ըզմեղ երես ատուած ի ձեռն
Անօրինաց որ կոտորեն:

Ատուած բարեիթոյի է արել նրանց, քրիստոնյաներին, — ասում է: Նա.

Ապա ի՞նչ ցեղ առաջ երթան
Դէմ թըշնամոյն, կամ ո՞նց յաղթեն:

Ձերկն այդ ամենն առաջ է բերում սրտի ցավով և հուսալիով, որ, աստված օգնութեան կգա, որ շի պահիլ, և

Յարուցանէ մեզ Թաղաւոր
Սուրբ, որ առնէ զարդարութիւն.
Խնդրէ վրէժս ի թշնամեաց:

Որ քրիստոնեաց խոր կու փորեն,
Կխորտակէ զմեր թշնամին...

Ապա մեղքում, մեղքի թողություն խնդրելով և, ինչպես ուրիշ բան-
քերի մեջ, աղոթքով դիմում է աստուծուն, ասելով.

Յարոյ նղջիւր մեզ փրկութեան.
Օղնեա ազգիս քրիստոնէից...
Մի՛ տար անձանց մեր աստուծոյն,
Ոչ հաւատացըս մեր բեկումն...

Թե ի՞նչ ասուր թագավորն է ձերկի ցանկացածը, այդ չի ասում նա:
Համայնորեն մի հայ, կամ ուրիշ մի քրիստոնյա, հաղիվ թե Արդունի նման
մի թաթար թագաւոր, քրիստոնյաների բարեկամ, ցանի որ զժվար է
կարծել, թե թաթարի համար գործածեւ ասուրքն տիտղոսը, որ ընդուն-
ված էր քրիստոնյա թագավորների համար, Բայց համենայն դեպս նա
էլ, ինչպես ժամանակակից Ստեփաննոս Օրբելյանը, փրկությունը տես-
նում է մի թագաւորի ձեռով, այլև քրիստոնյաների միաբանությամբ:
Եվ փրկությունը ասնորենների, այսինքն այլազգիների ձեռից, ոչ միայն
հայ ազգի համար, այլ ընդհանրապես քրիստոնյաների:

8. Մահվան և ունայնության նրդը:—Սոցիալական անհավասար և
անարդար բախտի դեմ բողոքելով հանդերձ՝ բանաստեղծը, լարիքն
ուղղելու համար, տեսանք՝ ոչ մի գործնական միջոց չի առաջարկում: Նա
դեռ կանգնած է հին կրոնական հայացքի վրա, այն է՝ ասնարգել զգառքն
և զպատիւն անցաւորականն, լինել իմաստուն և աշխարհն համարել
ունայն:

Աշխարհս ունայն է, քանի որ մահը զալիս, սրբում տանում է ամեն-
քին հավասարապես: Եվ ձերկը ոգում է համայնաշինչ մահը մի մեծ դա-
գելով, որի առաջին մասը հետևյալն է՝

Ծորժամ որ մահն մօտենայ
Եւ անողորմ զըրողըն գայ.
Ոչ ի ծն՛ր կու խընայէ,
Ոչ ի մանուկ՝ ոչ երեխայ.
Զի քըննել հսկսկոսսոս,
Ոչ վարդապետ, ոչ քահանայ.
Զի քըննել թագ(ա)ւոր՝ և իշխան,
Ոչ դայնոսիկ որ կու մուրայ.
Զի ասել, թէ պարտական (է),
Կամ աղքատ է, կամ տղղայ.
Զի խըղճար յօտարականն,
Թող թէ հազար դառն կու լայ.

Անողորմըն բաժանէ
 Զնոր պըսակած հարսն ու փեսայ.
 Բաժանէ ի մէկմէկէ
 Զթոր և զհողայր՝ առնու քընայ,
 Հանց կրակ զնէ ծընողացն,
 Որ յախտեան երթայ մընայ.
 Զհայրն ու մայրն կու տանի,
 Կաթնակեր տղայն ի տուն մընայ.
 Հանց որքեր յետ կու թողու,
 Որ սար ու ձոր ամէն կու լայ.
 Ի հիմնէ՞ տու կու քակէ,
 Որ այլ իսկի շէն չի մընայ.
 Հանց ցանկութիւն կու խափանէ,
 Որ իւրն նըման իսկի չըկայ.
 Ոչ այն սըրորց կու ամայէ,
 Որ աստուծոյ բանիւ կու գայ.
 Մեղաւորացըն չողորմի,
 Զասէ՞ չէգուց նա դարձ կու գայ.
 Ոչ ի գողոյ՝ ի պիտակէ,
 Ոչ յաղաւթաց կու գարշի նա.
 Պաշտօնանից և ի քաջանց
 Ոչ երկընչի՝ և ոչ վախենայ.
 Զինչ որ ծնեալ կայ՝ մեռանի,
 Մահն ամենի հասեալ կու գայ.
 Ոչ մեծատան, ոչ աղքատի
 Յերբ հասանի՝ համբեր չը տայ.
 Հանց բնութիւն զինչ մահն ունի՝
 Զեմ ի մընալ, թէ նա խրդեայ.
 Զորժամ ելնի տաքն ու կակուղն,
 Նա՛ հոյն ու շորն անպիտանայ.
 Լըսէ՞ խըրատ Պրկանէս,
 Իսկի յայս կեանքոս շահ չըկայ...
 Յրիկն հանցեղ պարզ է խոսել,
 Որ ամենա՛յն մարդ իմանայ,
 Թէ ճըջմարիտ է բանս՝ ողորդ,
 Որ այս կենցաղըն խաբ կու տայ...

Այս միեւնոյն նյութին նա գտնուած է և ուրիշ քերթվածների մեջ.
 մահը պատկերացնելով իբրև անողորմ և ամենազոր տիեզերական ուժ,
 որ անխնա և անողորմ ոչնչացնում է ամենքին, ամենքին։ Ուստի,—ասում
 է նա,—«իսկի յայս կեանքոս շահ չըկայ», «այս կենցաղըն խաբ կու
 տայ», «այսինքն աշխարհիս կյանքն անօգուտ և խաբուսիկ է։ Ինչի՞նչ է
 պետք այս կյանքն ու հարստությունը».

Տեւէ՛ք, թէ քանի՞ մարդ [իկ]
Աշխարհէս դարտակ մընացին.
Ջամէնըն յետին թողին,
Անընչիկ ի հոն գընացին⁸⁵...

Մահն ինչքան էլ ցավայի տեսարաններ է բանում, Զրիկի բանաստեղծութիւն մեջ շի դառնում կատարյալ ոշնացածան մի սուր զգացում, այլ մահվան երգը ծագած լինելով քրիստոնեութիւնն էութիւնից, դժուարացած է քրիստոնեական հավատալիքներին և հասկացութիւններին հետոյն Ռեո իշխում է Ավետարանի խոսքը՝ «Երանի սգաւորաց, զի նոքա միւս-թարեացիներ։ Ուստի մահվան մասին բանաստեղծութիւնն ասվում է իբրև միւսթարութիւն տառապանքների համար. այսպիսիները մահով ազատվում են աշխարհիս դժնդակ աղետներէց։ Բացի այդ՝ ով որ այս աշխարհում եղել է աղքատ, բայց իմաստուն, այնպիսին ոչ մի երկյուղ չունի մահից, որովհետև եթե նա այս աշխարհում բախտավոր չի եղել, մեռնելուց հետո անգինը հակառակ վիճակն է ունենում. մինչդեռ վայելող հարուստը, կեղեքիւր՝

Ի յանդէնն է դառն ու մոլոր։

Կամ մի ուրիշ տեղ գրում է Զրիկը՝

Ով որ այս կեանքս է խիստ ուրախ,
Անդէնըն շատ ի լաց կենայ։

Այս միտքը նա հաճախ կրկնում է և դրա ճշմարտութիւնն ապացուցելու համար նա մի ուրիշ գեղեցիկ դադելով շատ կենդանի պատկերացնում է ավետարանական Աղքատ Ղազարի ու Մեծատան վիճակները և՛ աստեն, և՛ անդեն։ Եվ այս նա հիշեցնում է իր մի շարք ուրիշ բանքերի մեջ ևս։

Յէ՛ք չես երթար ի միտքդ ի վար,
Է՛ գերեվար մարդ ու տըխմար...
Ի կեր 'ւ ի խում ի հետ մեղաց,
Ի շուրջ կու գաս զօրն անդադար.
Ջրեկես ու տաս մարմնոյդ ի կեր,
Գիրացընես որդանց համար.
Գերեզմրներն ի վար հայեց,
Տե՛ս քանի՞ մարդ կայ ի շար.
Ամէն փրտեր ներքև հողին,
Փան գմեղ քանի՞ հարիր հազար...
Փան զՄեծատունն այլ ո՞վ հարուստ,
Այնչափ ունէր ակն ու գոհար.

⁸⁵ Աեդ, էջ 174.

Կապայ հազնէր ցնդք ի ցնդաց,
Փողպատն ամէն մարգարտադար.
Ի կնք ՚ւ ի խում ի շուրջ կու գար,
Եւ անգնէն լուսէր խապար.
Լիմրարտաւան կնքաւ դամէնն,
Յիտոյ մեռաւ հանցկուն յիմար:

Նրա դռանը կննում էր տառապլալ աղքատ Ղազարը կարոտ հացի ու հագուստի: Մեծատունը նրան չէր օգնում: Երկուսն էլ մեռնում են:

Մեռաւ, գրնաց Աղքատ Ղազար,
Տնդն է կանաչ սառ ու պայծառ,
Անմահութեան ադրիւրն առջին,
Շուշան ծաղկունք հարիւր հազար,
Նա՛ մեծատունն ասէր լալով
Թէ՛ ժկաթ մի ջո՛ւր, Աղքատ Ղազար»...

Մահն, ուրեմն, զարհուրանք է միայն հարուստների, ուժեղների և կեղծքիչների համար, որոնք զրկանքով վայելում են աշխարհի բարիքը և մահով զրկվում են դրանից: Իսկ ճնշվածները, սոսկալուկներն ու տառապլալները մահով միայն ազատվում են իրենց թշվառ վիճակից: Մահը գոնե հավասար ու միաներկ է զերարեքում ամենքին, և դրանով գնթառնվում է անհավասարութեան վրեժը և գոհացում տրվում սոցիալական հավասարության պահանջին:

Այսպիսով մահվան և ունայնության երգը, որ սկսված էր մեր միստիկական րանաստեղծության մեջ, մի նոր ձևով և նոր բովանդակությամբ կրկին երևան է գալիս բոլորովին տարբեր Գրիգոր Նարեկացու մահվան երգից: Մինչ ըստ վերջինիս՝ ունայնության դադափարը հնչատացնում էր ճգնաժամի աշխարհից կտրվելը և մահը միջոց էր տալիս նրան շուտով միանալու աստուծուն, — ապա այժմ, 19-րդ դարում, ազգային և սոցիալական անարդարությունների հանդեպ դա հանդիսանում է, ինչպես ասվեց, իրրե միտթարություն, մոտ երկու դար ավելի վաղ, քան նման երգը, օրինակ, ֆրանսիական դրականության մեջ: Եվ այնուհետև այս սրտազար մրմունջը ջարտանկվում է հաջորդ դարերում, քանի որ ազգային և սոցիալական աղետավոր դրությունը նույնն է մեռում: Մեր գրեթե բոլոր բանաստեղծները երգում են այս ընդհանուր նյութը, և ամենքին էլ մերթ հանգստացնում է, մերթ անհանգստացնում այս տիեզերական մեծ առեղծվածը, որ քնարերգության կարևոր թեմաներից մեկն է:

9. Կրոնական ու ճոզնալի քանքեր և միստիկական ձգտում:— Ձրիկը, սոցիալական անհավասարութունը վերացնելու համար, ինչպես ասվեց, ոչ մի գործնական միջոց չի առաջարկում: Նա հետևում է ավելատարանական խոսքին, թե՛ սքսվորները միտթարվում են անդնելու Բայց

մխիթարվում են ոչ ամենքը, այլ թիմաստուններըս կրոնական մտքով։
Եվ Ֆրիկի քերթվածներն ամենամեծ մասով պատվում են այս խնդրի
շուրջը, թե ինչպես պիտի լինին թիմաստունները, թխելոքները։ Նրա
այդպիսի բանքներն ունին հոգեշահ բովանդակություն խրատական քնա-
վորություն։ Դրանք են՝ Թիան ոգեշահ, Բիան պիտանիա, Եվասն հոգոյա,
Եմալ վասն հոգոյա և նմաննր։ Դրանց մեջ փափուկ շեշտերով միակերպ
հեղհեղվում են հոգու և մարմնի հակամարտության խնդիրը, այս աշ-
խարհի և այն աշխարհի կամ աստեղի և անդենի, երկնավորի և երկրա-
վորի վերաբերյալ մտածություններ քստ միջնադարյան սովորական կրո-
նական հայացքի։

Օուտ է մարմին և սընուտի,
Ներքըն հոգին կերթայ փրտի։

Էջ 20

Առաջիկայումս է հոգու հանդերձյալ կյանքի, հոգու փրկության հա-
մար, զի հոգին առավել է, քան մարմինը։ Պետք է միշտ պատրաստ լինել
մահվան և վերջին դատաստանի համար, լպիտի խարվել անցավորին,
քննել այս ու այն կյանքը, վերջին օրը հոգալ, լինել անընչասեր, հոգևոր
ճանապարհը բռնել գնալ, ուրանալ այս կյանքը, պահքով, աղոթքով ու
լացով, արտասուքով սպանել մարմինը, մարմնավոր վայելքների ետե-
վից լընկնել, կենդանի ժամանակն անել հոգու ճարը, աղքատներին օգ-
նել, անցավորը շտրել, հառաչելով զղչալ, Ժմեղա գալ, կացքը փոխել,
այս կյանքս ոչինչ համարել և այն կյանքին ցանկալ, իրեն համար ան-
դենը հայրենիք շինել, բարիք անել ուրիշներին, շահել կաշառք, շատ
վաշխ ու մեծ տոկոս, հետևել միշտ ավետարանական խրատներին, մար-
մինն ուրանալ, որպեսզի հոգին պայծառանա. և շատ նմաններու կարիք
չկա այստեղ նրա այդպիսի երկերի մասին առանձնապես խոսելու։ Միայն
պետք է ասել, որ Ֆրիկն իր այսպիսի քերթվածներով հանդիսանում է
մեր հին գրականության նշանավոր կրոնական բանաստեղծներից մեկը։
Հավանորեն նա իր այսպիսի բանքերը մեծ մասամբ հորինել է իր կյանքի
այն շրջանում, երբ ցանկացել է լինել ստիքող վանքերում, և ինչպես
վերևում գրեցինք, դուցե և դարձել է որևէ վանքի միաբան, մնալով ա-
ռանց որևէ քահանայական աստիճանի, իբրև մի աշխարհական կրոնա-
վոր։ Այսպիսի վիճակով միայն հասկանալի է ծագումը ոչ միայն այդպի-
սի, այլ նաև այն բազմաթիվ կրոնական քերթվածների, որոնց նյութն
առնված է Ս. Գրքից կամ այլ կրոնական գրույցներից։ Բերենք հետևյալ
աղոթքը, որ մի կտոր է մի մեծ բանքից։

Առաւօտ խաղաղութեան,
Դէմ քո լուսոյդ ես կու մընամ.
Զինչ ըզձուկն յաղի ծովէդ՝
Քաղցրը շըրիդ ի դէմ կու գամ...

Կենդանի աղբիւր դու ես,
 Մարաւիս տուր, որ զգովանամ,
 Ոչ ոսկով, ոչ արծաթով,
 Ոչ աշխարհիս կու ցանկանամ,
 Քո տեսողդ եմ փափագած,
 Տալս կարօտոյս զգրն երերամ.
 Ժողովէ՛, աէր, ի քեզ,
 Որ քո լուսովդ արժանանամ...
 Քան զքեզ ա՛յլ ծանօթ չունիմ,
 Քո գրանէդ քուր հեռանամ...

Այս գեղեցիկ մեծ քերթվածը⁸⁶ նա մի շնչով ոգի է այն ժամանակ,
 երբ կարծես դարձել է կրօնավոր որևէ վանքում, որի դռնից, իբրև աս-
 տուծու դռնից, շի ուղում հեռանալու Ապա՝ նա փափագում է, ինչպես միս-
 տիկ, աստվածային լույսին և աստուծու թեփանչ կամ թեփանչանալու ար-
 ժանանալու. ինչ որ կրկնում է և ուրիշ բանքերի մեջ, նա իր այդ գերակա
 նպատակին տիրանալ է աշխատում սիրով ըստ կրօնական հայացքի,
 ուստի մի քանի քերթվածների մեջ սիրտ գովքն է անում, այսպես, օրի-
 նակ, հետևյալի մեջ⁸⁷.

Այս է հաճապիրու ծաղիկն,
 Որ թափէ ըզմարդն ի հողոյ.
 Գիտեմ թէ դայս ո՛ւր ուղեմ,
 Սա կենայ ի լիառն ի սիրոյ...

Մի ուրիշ քերթվածի մեջ⁸⁸ ամուսնաւորը ասացեալ Զրկանն յաղապս
 Կենդանի սիրոյ առ աստուածն⁸⁹ բացատրում է, թե սիրով են եղել ամեն
 նշանավոր գործեր, որ Ս. Գրքի և այլ սրբազան գրքերի մեջ պատմվում են.

Քան զամէն ինչ յառաջ սէրն է գոյացել:

Այդ աստվածային սիրու շառավիղն իրեն բանաստեղծի մեջ էլ է
 ծագում, և դրանով է, որ նա կարողանում է իր բզեզների բաները հո-
 րինել.

Թէ լրկայ սէր հոգոյն ի սրտէ բրդիեալ,
 Զայս ամէն գեղեցիկ բաներն ո՞վ ասէր:

Ուրիշ քերթվածի մեջ էլ⁹⁰ քնոքին Զրկանն ասացեալ հավատոյս⁹¹ իր
 առ աստված սիրո գովքն է անում.

⁸⁶ Յրիկ, Բաճառ., էջ 62—63:

⁸⁷ Անդ, էջ 63:

⁸⁸ Անդ, էջ 152—153:

⁸⁹ Անդ, էջ 146—148:

Այս սէրս, որ ի չի՛մ սիրտս է
 Քրնակել, զայն նա՛ դիտենայ,
 Որ ինքըն հանց սէր ունի,
 Որ նրման ընկեր շունենայ:
 Այս սէրս աշխարհիս սիրտս
 Չէ նրման, ով ինքս իմանայ՝
 Այս սէրս ի լուսոյ եկել,
 Ով սիրէ, նա՛ անմահանայ:

Այս քն այս սերն իր սրտում ունեցողը՝

Շատ հոգւոյ [= հոգոյ] քաներ ասէ,
 Ով լըսէ և զինքն իմանայ,
 Զմարմինըն տաճար շինէ,
 Որ աստուած գալ հանգչի ի նայ:
 Յանկայ երկնային լուսոյն,
 Եւ յերակ ըզմահն յիշէ նայ:
 Զամէն ցեղ մեղաց տեսակ՝
 Թող կոխէ ու անցնի գընայ:

Ուրեմն դարձյալ մի միատիկական փափագ մահով միանալու աստու-
 ծու հետ. աստված իր մեջ, ինքն՝ աստուծու, կամ՝ որպեսզի

Երբ որ յարութիւն լինի,
 Նա անանց յուսոյն տիրանայ:

Դառնանք բանաստեղծի արվեստին:

10. Ստեղծագործութիւն ինքնաշարժ ազդումով: Ձևական կողմը:—

Առաջին տպավորութիւնը, որ ստացվում է Ֆրիկի բանքերից, այն է, որ
 դրանք մեծ մասամբ հորինված են սպոնտան կերպով, այսինքն մի ինք-
 նաշարժ, ինքնարուխ ազդումով, առանց խորը խոկալու, մի տեսակ բնազ-
 դարար: Կարծես մի ներքին ճայն խոսում է նրա մեջ, նա ունենում է մտքի
 լուսավորութիւն և սաստիկ հուզված ու լցված, մտասույզ ու հափշտակ-
 ված, դիմում է բանաստեղծութիւն: Այդ է պատճառը, որ նրա քերթված-
 ներն ունեն մեծ քնարականութիւն: Հոգեշահ բանքերն անզամ, որոնք
 թվում է թե իբրև խրատներ պիտի լինեին սառն և անկենդան, ունին
 անձնական բնույթ, ինքնարուխ ելնում են սրտի խորքից և առանց որոշ
 ծրագրի, ինչպես ասիերից դուրս ելնող գետ՝ հորդահոս զեղումներով և
 անարգել առաջ ընթանում: Եվ բանաստեղծն ինքը լավ զգում է իր ստեղ-
 ժագործութիւն այս եղանակը:

Յորժամ որ զմիտքըս կու պարզեմ [— կը մաքրեմ]

Ազդումն հոգոյս ի յիս կու գայ:

Երբ կու ծագէի միտքս և հոգիս,
Ընզուս իմ հանց պըտուղ կու տայ՝⁹⁰

Այդ սհագու ազդումը — ավյունը, ըստ բանաստեղծին, աստուծու
շնորհն է. ուրեմն նա ետևն կրոնական հայացքն ունի իր բանաստեղծու-
թյան ծագման մասին, ինչ որ Գրիգոր նարեկացին:

Փառք աստուծոյ միշտ կենդանոյն,
Որ հանց շնորհ նա մեզ կու տայ.
Որ կարենանք հանց բան ասել,
Որ իմաստունն հաւան կենայ՝⁹¹

Այս միկնույն քերթվածի վերջին մասի մեջ նա ասում է.

Մեք զոհանամք յողորմածէն,
Թէ ի մեղաւորքս ոնց կու գըթայ.
Որ զանարման տրմանացոյց.
Որ հանց զօնաք ի շար կու գայ.
Փառք փառաց թագաւորին,
Որ մեր մըտացըս լոյս կու տայ.
Զինչ արեն ի շող ջըրին՝
Ի մէջ հոգոյս կու թըռուլայ:

Ուրիշ զրգանքներ մեղ էլ⁹² իր հոտանավորներն անվանում է սգահար
բանք, սգահար բան շարելը: Թէ ինչպիսի ուժեղ, արտասովաթոր ապրում-
ներով ու տանջալի հուլիներով է նա հորինել իր շատ երկերը, այդ պարզ
տեսնում ենք նրա հետևյալ տողերից⁹³, որոնց մեջ նա ավելի էս մանրտ-
մասն նկարագրում է իր բանաստեղծելու պրոցեսը.

Շատ մի հայերէն բաներ խորհրդով դըրախտ տընկեցի,
Զալիցս աղբերացըն ջուր քաշեցի զինչ որ սընուցի.
Զիմ լերդս զինչ բզհաց կերայ, ա՛յ եղբայրք, ինչ որ բուսուցի,
Երկու լուսն ի մին դարձաւ զիշերին, մինչ՝ որ հասուցի.
Անկայ ի հոգոց ծովըն, երբ որ զայս բաներս յիշեցի.
Զիմ միտքըս յողնորդ արի՛ւ ի ծովու յատակն իջուցի.
Զիմ աչերը լափ արի ու ծովու ջուրըն լափեցի.
Վասն ա՛յն մտգաւորին համար, որ ծովու յատակըն լինի:
Անլափ աղայ՝ մ զաստուած, որ հոգոյ աշքըս բացուի,
Նւ իմ ըզգայաբանէքո յաշխարհի ժանգէս մտքերի:

90 Ձեռնի, Բանաստ., էջ 48:

91 Անգ., էջ 50:

92 Անգ., էջ 136, տի ձեռնագ Սուրբ Նաթինէ քերթվածի վերջում:

93 Անգ., էջ 44, տրամ օգնչաւ և լուս քերթվածի վերջում:

Բանաստեղծն իր բանքերը «զօհար» կամ «մարգարիտ» է անվանում իրենց հոգեշահ բովանդակության համար, իսկ վերջինս,— հետևաբար և «զոհարը», «մարգարիտը»,— է իսկապես այն անանց, անմահ կյանքը, աստվածային լույսը, թրիստոսի տեսությունը, որը տենչում է նա իբրև իր կրոնական իդեալը, ինչպես ամբողջ քերթվածները, նույնպես ինքնաշարժ, անբռնադրոս ծնվում են և ձևավոր արտահայտությունները, նմանությունները և առհասարակ փոխարքերությունները, որոնցով շատ հարուստ է Ֆրիկի լեզուն։ Կարելի է ասել, որ նա մեծ մասամբ նկարեմ ձևով, գունագեղ պատկերների շարքով է մտածում, քիչ անգամ վերացական արտահայտության է դիմում, ինչպես, օրինակ, հետևյալ տողերի մեջ⁹⁴.

Գերի Ֆրիկ՝ կ, մարդ մի՛ խաբիւ,
Մի՛ սուտ վարուք կեղծաւորիւ.
Գրեա ի յօն դիւ շինութիւն,
Որ յաիտեան անհոգ լինիս։
Այս կեանքս գութ է և խաւար,
Եւ ի ձեռինդ յապտեր շունիս.
Դարանակալն հոն կա թաքել,
Ժարտար փայլէ՛ որ շրմբունիս։
Երբ ելանես, դու հանց գրես,
Որ լետ յաշխարհս այլ չի նայիս.
Տարածածեալ օրն և զընաց,
Հաւ ընկերացն ե՛րբ հասանիս։
Մինչ դեռ ամառն է՝ պէտ արա,
Որ ի ձըմեռն շանկանիս.
Զիւնն ի վերայ լերանց իշաւ,
Յաջողութիւն գու քեզ շունիս։
Թէ կալ ու կաս առնես այսօր,
Զիւնն ի վայր դայ, դու մըսես.
Երթա արեն, և դու մընաս,
Ի շինութիւն լը հասանիս։
Զիւնըն ալիքդ է սպիտակել,
Զըմեռն է այն, որ ուժ շունիս.
Տե՛ս՝ դու տըղայ լիս անիմայ,
Աղէկ լըսէ՛, թէ խելք ունիս.
Թող զայս խաւար աշխարհս ի բաց,
Լուս աշխարհի թէ ակն ունիս...

Երբեմն պատկերներն ընդարձակվում, կազմում են մի մեծ ամբողջություն, ինչպես, օրինակ, հետևյալ կտորը, որի մեջ բանաստեղծը դիմում է աստծուն՝ իբրև այգեգործի.

⁹⁴ Անդ, էջ 85 և հտն.

Թէ դրենս ցանկ այս այգոյս,
 Ի կողոպտէն անհոգանամ.
 Այգէզործ ըզքեզ գիտեմ,
 Թէ պէ՛տ լանեմ, նա՛ շորանամ:
 Զիս տընկէ՛ ժառ յերկիր բարի,
 Որ ես մաստատ տրամատեմամ.
 Զհարաւային հողմըն դարնան
 Հընչէ յիս, որ բորբոքամ:
 Զիս յօտէ՛ 'ի խոր փորէ',
 Որ ես դարթիմ գուարթանամ.
 Խաղացոյ շուր կենդանի
 Ցարմատ սրբտիս, որ կանգնանամ:
 Առգա՛ յորդ վրտակով,
 Որ կանաչեմ և մանկանամ.
 Մի՛ թողուր զիս անարև
 Եւ անծաղիկ, որ գոսանամ:
 Զիս սընոյ և դարմանէ՛,
 Որ ի ժամու պտուղ քնդ տամ.
 Յանքրդիս եմ ցամաքիլ.
 Ամպ չէ ցողեալ, որ դուարթանամ:
 Տօղեա՛, տէր, զցօղ ողորմութեան,
 Լինի պտուղս իմ քաղցրահամ.
 Աղերսեմ թագաւորից,
 Անոում պարգևս և պարծենամ:

Ինքնարուխ ստեղծագործության հանգամանքից ժաղգում են հաս
 Ֆրիկի արվեստի թերութիւնները: Արդարև առանձին ձևավոր խոսքերը
 գնդեցիկ և ազդու են, բայց պատահում է, որ նա իրար ետեից շարում է
 պատկերավոր ռոմանտիկ բաներ, թեթևությամբ հորինում է վերևում բա-
 ցատրված հայրենի և յամբական լսարանով բազմաթիվ տողեր, որոնց
 ներքին կապակցութիւնը մնում է տարտամ, կամ թե մի երկար շնչով,
 մի նվազով բերում է բազմաթիվ նմանութիւններ, այնպես որ գրվածքը,
 կարծես, այլարանութիւն է դառնում: Այսպիսի ընդարձակված պատկեր-
 ները մեկ մեկ մնում են անհատակ, մութն ու դժվար ըմբռնելի, զի րա-
 նաստեղծն էլ ետ չի դառնում իր երկերը հղկելու և կարգավորելու: Նա
 դրանք այնպես բնական ձևով էլ թողնում է, ինչպես սկզբում ինքնաշարժ
 ոգեւ է: Այդպիսով առաջացել են բազմաթիվ ավելորդ կրկնութիւններ ու
 միայն տարբեր բանքերի մեջ, այլև նույնի:

Ապա՝ մի աշի ընկնող թերութիւն էլ այն է, որ քերթվածները հա-
 ճախ շատ երկարացել են և այնպես, որ երբեմն հեշտ չի հասկացվում
 կամ պարզ և արագ չի իմացվում բազմաթիվ տողերի կամ տների ու մա-
 տերի հաջորդականութիւնը մի հիմնական մտքի, մի թեմայի շուրջ, կամ

թի գրանք իրար հետ միանում են լուկ ընդհանուր բովանդակությամբ։
Պատահում է, որ նույնիսկ մուժն է մնում և շի որոշվում քերթվածի թե-
ման, հիմնական միտքը։ Արդարև մի քանքի համար⁹⁶ հեղինակն ասում
է, թե

Ֆրիկն անցնող պարզ է խոսել.

Որ ամենայն մարդ հասկանայ...

Բայց ոչ բոլոր բանքերն իրենց ամբողջությամբ միշտ և իսկույն
հասկանալի են, թեպետև սովորաբար պարզ ու հաճելի են նրա տողերը։

Առնենք իբրև օրինակ նրա մի քերթվածը⁹⁷, որի մեջ ասանց ռա-
շոուն տիրանալու միտքիական ձգտումը հրկան է դալիս սկզբում կեն-
դանի կամ կենդանարար ջրի պատկերով, վերջը՝ ծովում որոնած զոհարի։

Փափագել եմ ի ջուրն, լուսով կու գընամ,
Թէ հասնիմ յայն աղբիւրն, որ կենդանեամ.
Ծախում եմ յայն ջրընէ ու հետ զոհանամ,
Թէ թողուն մէկ պահիկ, յոր յինքն լողամ.
Այն սիրովն յաւազանն ես զիս լուանամ,
Նորոգիմ վերքստին քան ըզհին Ադամ։

Այս մի երկայն շարք տողերի մեջ շշուրտը դեն դնելով՝ ասում է.
որ եթե արժանի լինի՝ մեծապես կփայլի. եթե պենդանեաց երկիրն է
կամենում, աստուծու օրենքից շի հնուանալ, եթե ուզում է բանանց բարուն
տիրանալ, պիտի մոռանա տուն ու տեղ, քույր, եղբայր, պիտի սաստիկ
արտասվի, մեղքից մաքրվի և արդարանա, թողնի հարստութիւնը, քուրձ
հագնի, նեղ ճանապարհով գնա, աստուծու մոտենա, որպեսզի վերջին դա-
տաստանի ժամանակ անվախ արժանանա Հիսուսի տնտին, լավ ընկեր-
ներից հո լինա։ Հետո նորից վերադառնում է շջրին։

Յայն աղբիւրն եմ կարօտ, որ լաց կու կենամ,
Թէ հասնի կաթ մի յիս, որ արդարանամ։
Երանի՜ ինձ հազար, թէ հանց լինենամ,
Որ ի մեծ աղբիւրէն կարօտ շի մընամ.
Դու աստուած ես գըթած և խիստ ողորմած,
Յայն ջրընէ ինձ արբոյ, որ ես լիանամ,
Ի բրդիմանց սուրբ հոգւոյդ, որ ես զովանամ,
Յնրեսաց ի լուսոյդ ուրախ լինենամ...

Դարձյալ՝ մի ավելի ևս մեծ շարք տողերի մեջ նկարագրելով իր հո-
գեկան վիճակն ու տենչանքը՝ ասում է, թե վերջին դատաստանի որը Հի-
սուսի այ կողմը գնա, խոստացած բարիքներին տիրանա այն կյանքում։

⁹⁶ Ֆրիկ, Բռնասա., էջ 47. մազման մասին հորինված ստեղծագործի մեջ։

⁹⁷ Անդ., էջ 203—208.

բայց կասկածում է այդ մասին, համարելով իրեն մեղքերով մեղադրել, քանզի փորձողից զնգանված, ինչպես մի հիմար կամ հարքած, Վերջն աստուծուն դիմելով՝ ավելացնում է.

Երբ բացեր դիմ ըզմիտս, որ ես կու ըզգամ,
Վառեցաւ սէրդ ի յիս, զերդ հօր կու ետամ.
Խօսեցայ հետ սրբաւիս, թէ ես ի՞նչ լինենամ,
Ո՞վ հանէ յայս կապէս, որ ես գուրանամ:
Տէ՛ր, զթո ձայնդ յիս հասո՛ւ, որ խաղաղանամ,
Լոյս ծագեաց խաւարիս, այլ ոչ կուրանամ,
Խըղճացիր ծառայիս, որ շանպիտանամ,
Փարշեցիր զիս ի թեզ, տէ՛ր, ո՞ւր դառնամ,
Երբ յիշեմ զայս զոնաւ բաներս ու ցընծամ,
Զահագին զիմ ըզմեղքն ու նըստիմ և լամ:

Պիտի սպասեինք, թե քերթածի վերջն է. բայց այս «զոնաւ բաներս» լուսավորվում է նրա միտքը, և զուգորդութիւնով մեզինքն է «զոնաւ» [— մարգարիտը] ծովի մեջ որոնելու հետեւյալ ընդարձակ պատկերներն ալլարանութիւնով.

Ջինչ ըզգետ յաշխարհիս բոլոր պիտի դամ,
Ու մըտնիմ ես Զըրիկս ի ծովն ու ծըփամ.
Ի յայեաց կոծեւոյն ես ո՞նց [վ. է՞ր] վախենամ,
Երբ ծովուն ի միջին ես դարդ լինենամ [— ընկզմիմ],
Երբ որ զիս հարցանեն, թե ո՞ւր կու գընամ,
Ես նորա պատեհի պատասխանի տամ,
Թէ՛ խնդրեմ զայն զոնաւ, որ փարթեմանամ
Ու տեսնում իմ մըտաց աշօքս և դողամ:
Ո՞վ բերէ զինքն առ իս, որ պահ մի խընդամ,
Կու քաղի շունչս յինչն, թէ ե՞րբ մօտենամ,
Եւ առնում պահ մի յափս և ուրախանամ,
Եւ հեղով և մաւմնով ես անմոռեմ:

Ես հաստատ և անքեհ նաւի կու մընամ,
Որ մըտնիմ ես ի նա՛ւ և այլ լեքերամ:
Նաւապետ է Քրիստոս, ի հետ կու գընամ,
Քան ըզնա այլ ինձի հարակ շունենամ.
Հասուցէ զիս յայն տեղն, որ ես կու ցանկամ...
Թող մաշիմ ի յայս հոգս և խիտ շընանամ.
Իմաստուն և խելօք ապա լինենամ.
Երբ անեմ ըննութիւն ու զլաւն իմանամ,

97 Զիկ, Բանաստ. տպված է «Կտանեսում», իսկ «Արարատ», 1918, էջ 263 ունի «Յիս»

Երբ սակաւ մի աստ լամ, նա՛ անդ խընդանամ.

Արարչէն ես պատիւ և փառ ըստանամ,

Որ հանգչիմ ես անդէն՝ ւ ի նա գոհանամ:

Նախ՝ նկատեմ, որ թի նա գոհանալու, այսինքն «յարարիչն գոհանալ» դարձվածը նշանակում է՝ դավանել, խոստովանել, ճանաչել արարչին իբրև աստված: Այլա՛ թրխստոսի՝ նախապես լինելու համար իբրև համեմատութիւն՝ բերեմ հետևյալ շարականները⁹⁸.

Մով կենցաղոյս հանապաղ դիտ արեկոծէ,
Մըրըրկեալ ալիք թըշնամիէն ինձ յարուցանէ,
Նաւապետ քարի, լեր անձին իմոյ ապաւնէ:
Մերձ եմ յընկըզմիլ, ոգնեա՛ ինձ, նաւապետ քարի,
Քանզի ծանրացան ի վերայ իմ բեռինք մեղաց...
Փըրկեա ի վտանգէ քղնաւարեկս ի յաւնաց ժողոտս...

Այստեղ երկար խոսվոց Յրիկի այս քնրթվածի մասին իբրև մի օրինակի, թե նա ինչպե՛ս է հորինում: Բացի այդ՝ մանրամասն բերվոց դրա բովանդակութիւնը, որպեսզի պարզված լինի, որ մեր բանաստեղծի այս երկը գուտ կրոնական բովանդակութիւն ունի. թեման է, ինչպե՛ս սովորաբար նրա մյուս կրոնական երկերին, «Հոգով և մարմնով անմահանալու, ասանց քարուն տիրանալս: Եվ նա այդ բանին հասնել է աշխատում սովորական միջոցներով—լինել իմաստուն և աստե՛ն ապաշխարել տեղեկի խնդութեան համար: Մի անգամ որ այս է քնրթվածի նյութը, թույլատրելի չէ թեթեւ մոտեցումով,—ինչպե՛ս վարվել են,—ամբողջ քնրթվածից պոկել հանել ժողի մեջ թգոհարա (=մարգարիտ) որոնելու պատկերը, որ տեսանք նախորդ 9-րդ պարագրաֆի վերջում ևս, և դրա մեջ դնեն ինչ որ ազգային բան⁹⁹, կամ «հասարակական մի նոր կյանքի» ձգտում¹⁰⁰, Այդ, կարծում եմ, կնշանակի քնա՛վ լհասկանալ Յրիկի այս երկը, կամ թե բուն կերպով շուտ տալ դրա կրոնական իմաստը և իր ուղած բովանդակութիւնը դնել մեջը: Գեթ հին բանաստեղծութեան նկատմամբ պետք էր լինել ուղղամիտ և ուղղատես: Նրա որոնած թգոհարա կամ «մարգարիտը» ոչ թե հասարակական երջանիկ կյանքն է, այլ անդե՛նի «միասնիկ» կյանքն, ասանց քարին, «Հոգով և մարմնով անմահանալու» կրոնական բաների մասին խոսելու համար՝ պետք էր ծանոթ լինել նյութին և կրոնական լեզվին: Գոհարա կամ «մարգարիտը» կրո-

⁹⁸ Երեսնական հոսանք հրատարակում, 1861, էջ 182 և հետո:

⁹⁹ Արարատ, 1918, էջ 202 և հետո. Տիրալը հղիկաղագոյի հիշած հագվածը:

¹⁰⁰ Յրիկ, Բանաստ. էջ 15, 17. Մկրտչի հիշած Առաքարա՛նի մեջ. «Յրիկը... Ադսի է, երազէն է հասարակական մի ետ կյանք, այնպիսի կյանք, որ կեղծվող աշխատավորութեան կարգաւար երջանկութեան բերել: Իր այս Ազատւմն ու մարգարիտը Յրիկն աշխարհաբան արտահայտել է մի քանի բանաստեղծութիւններով. երջանիկ կյանքը՝ երազաբան սարգարդի կամ քանակ է, որը հետք չի թող: Համար բանաստեղծը պարտաւոր է ամբողջ աշխարհը պատկեր գրել և ամեն մի զովորութեան հաղթահարել:

նական լեզվի մեջ մի սխմբու է հենց այդ հոգեւոր անմահութիւնն ըստ քրիստոնեական գաղափարի. այսպէս, օրինակ, Կոմիտաս կաթողիկոսն իր հոսանքովոր օրհներգութիւն մեջ Հոկիսիմիան կուսանքին անվանում է «վաճառական» առատը անյայտ մարդարտին՝ «սաներնույթ մարդարտի հոխ վաճառականներ», այս դեպքում զնոյներ, զնորոններ ըստ «վաճառական» բառի ներկորդ նշանակութիւն: Բերեմ նաև Առաքել Սյունեցու ներքոյանից¹⁰¹ հետևյալ կտորը, որով նա դավաբանում է Գրիգոր Տաթև-վացուն. «Գրիգորիոս՝ վաճառականն անգին մարգարտին, որ զամենայն անցաւոր և զանոսի՝ դիւրագին վաճառեաց և առ սչինչ համարեցաւ, և միայն զվարդաբլտն Քրիստոս առ ինքն ընկալաւ»:

Յրիկի նրկնի մեջ ուրիշ դեպքերում էլ կիրառված են նկենդանական դրականութիւն մեջ սովորական դարձվածներ, արտահայտներ, պատկերներ և նմաններ: Դրանք արդեն ընդհանուր տեղիներ են, բայց բանաստեղծից նորինորո զգնչելով են, ուստի և կրում են յուրահատուկ դրոշմ: Այսպէս են, օրինակ, իրեն հոգնպէս հիմանդ համարելը ֆիզիկական հիմանդի պատկերով, աշխարհիս կյանքը նրազ ընդունելը, վերջին դատաստանն ու դժոխքը, որ բավական հաճախ նա նոր ու թարմ ձեռք նկարագրում կամ հիշեցնում է ի վախ և ի զգուշութիւն մեղավոր-ների, այսպէս և հոգու և մարմնի միջնագարլան հակամարտութիւնը:

Հոգիս ի մարմինս ասաց.

«Ա՛յ տըխմար, ողորմ ու լալի,

Վաղըն դատաստան լինի,

Ձիս առնէ որդի գահներ»:

Հոգիս է տըխուր նրատեր,

Ձով տեսնու՞ լալով դանգաւոր,

Թ՛ քեզայ հարամու ընկեր,

Թալանեց՝ և արար զիս գերի»:

Ահա որ աշունն նրկ,

Կու շարժիմ, քամին կուտանի.

Յոգուածս ի թոռիլ արեր,

Ձինը կըտրած ծառն որ ցամաքի:

Ոտիցս ի դնալ տեսում,

Նա՛յ դողայ՝ ի յետ կողորի,

Աչերս իմ սակաւ գոցի,

Իմ թուլակ լեզուս կու կապի...

Հորինում է հաճախ ոչ միայն սովորական ոճական ձևերով, այլև Ս. Գրիգոր անկարկներով՝ Աղամից սկսած, կամ զոչում է Ավետարանի

¹⁰¹ «Գրեք քարազօմեան... Գրիգորի Տաթևացուն, Ամարան հասար, Կ. Պոլս, ԹՃՂ—1160-ի-551—1741, էջ 719. «Առաքել վարդապետի առաջնու ներքոյանն առ քաջ հոստորեն... Գրիգոր Տաթևացի...»:

¹⁰² Նրիկ, Ռաւոսա., էջ 171. «Տաղ... վասն հոգոյս»:

խոսքերով և առականերով: Ներսէս Շնորհալու «Յիսուս որդիս երկի ձեռով մի քերթվածի մեջ»¹⁰³ էլ առնում է «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»: Հայտնի երգի տողերը, նվ մերջապէս՝ կան ամբողջ բաճկնի աստվածաշնչուն նյութերի մասին, բոլորն էլ հորինված գունեղ, պարզ, թեթեւ ու անձնական զգացմունքով:

11. Մի քանի ուրիշ գրական տեսակներ (գրական սեռեր):—Հաճախ նա իր երկերի մէջ ստեղծում է անկնշտ, հոգեբույս արդարֆներ, աղաչական ու աղբազին եղանակով, որոնց մէջ խոսելով աստուծու հետ՝ ապաշարվում է մեղմ լիբիզմով, զգացվում է ցավատանջ հեղինակի ճշնշվածութիւնը, կարծես, մի ժանր բնական տակ:

Իմ մեղքն ի վերայ ուսիս

Կու հակէ ի վայր կու տանի:

Ավելի ևս հաճախ խոր կրօնական ոգով տոգորված՝ ինչպես մի քարհնգի ձերբունի, զրույցի ձեռով հանգիստ խրատում է իրեն, կամ իր՝ անձով՝ ուրիշներին: Նրա խրատներն էլ, որ ընդհանրապէս ավետարանական բովանդակութիւն ունին՝ ուղղված անդինն, միշտ քաղցր ու համեղ են, երբեմն ժողովրդական ձևով:

Ձայն վերայ ի՛նձ եմ խօսեցեալ,

Մի՛ մեղադրէք, խըրատ կու տամ:

Ուրիշներին շփոթմունքներ համար այսպէս է ասում նա վերջին դատաստանի և դժոխքի մի զգածված նկարագրի մեջ¹⁰⁴: Բայց աշխարհի հարստահարիչները, աշխատավորների քրտինքով լավ ուտող-խմողները շատ բան ունին Ֆրիկի լեզվից նեղանալու. նա առիթ չի փախցնում ոչ միայն յումորով, այլև դառն հեղինակով, անգամ կծու սարկազմով ծաղրելու այնպիսիներին և նրանց վրա բանաստեղծական երգիծարանութիւններ հորինելու: Ահա մեկը¹⁰⁵.

Է՛ անմիտ և անասուն,

Գիտե՛ս՝ զոր տեղիքըն կուզես...

Հազար կապիւն մեղք ունիս,

Այդով ո՛նց երկինք ելանես:

Եղբայր, թէ դու շա՛տ ուտես

Ու խըմես, նա՛ շա՛տ հառաչես,

Չասես, թէ դու մարդ ծընար,

Յիրաւի ի յէշ նըմանիս.

Երթաս թաւալիս յաղբիսն,

¹⁰³ Ֆրիկ, Բանաստ., էջ 116 և հռն., և նորին Ֆրկանն առաջնով թան արտանի և լատ:

¹⁰⁴ Անդ, էջ 167—170:

¹⁰⁵ Անդ, էջ 155—158, «Բան շահաւէտ»:

Հետ Թոքաս և Հետ Կուք Հանձն.
Այգով դու ի՞նչպէս հասնիս
Յայն սըրբոց դասն որ դու կուզես...

Մի մեծ խրատի մեջ (47 քառյակ), որ սկսվում է «է՛» անօրէն և անառակ երիտասարդն բառերով¹⁰⁶, ամեն երկու տողով նկարագրում է անառակ հարստի վարք ու քաբքը և ապա ուրիշ երկու տողով՝ Թի ինչպէս պետք էր ապրել:

Դու զատամունքդ կըրճւտէիր,
Զինչ նենգաւոր հարբած ուղտոյ.
Փաղցըր պիտէր զինքըդ բանալ,
Անուշ խօսել Հետ սիրելոյ.
Զկեզուդ մըխել ես շար ու սուր,
Զես ձանձրանալ յիշոնց տալոյ.
Փառարանող ստեղծած է դա՝
Զաիւ և զգիշեր, դառաւ տուռ,
Բերանըդ պիղծ է ու զապիր՝
Ի յամենայն պիղծ տառելոյ...
Զխռչակըդ լայն ես դու բացեր՝
Զհարամն անհոգ ի կուլ տալոյ...
Լանջացդ անուշ դասը քո յերակ,
Զեռն կնոջ անօրինոյ...
Բազումըդ հաստ էր և յաղթող՝
Վասըն կըռույ ե ծեծելոյ...
Զեռքդ պիղծ է և անմաքուր՝
Յաղտեղութեանց 'ւ ի զրկելոյ...
Սիրտըդ լցած է նենգութեամբ,
Փան ըզգայլոյ և զառիւծոյ...

Վերջին մասի մեջ կենդանի նկարագրում է, թե այդպես ապրողն և իր խրատն ըպահողն ի՞նչ վիճակ է ունենում վերջին դասատուներին: Մի ուրիշ քերթովածի մեջ¹⁰⁷ սուր երգիծարանութիւնամբ գիմում է հարստին ու «փարթամին» ծաղրելով նրանց նիստ ու կացն ու վախճանը:

Է՛ր ես հագել դո՛ւ նասիւն
Ու նրստել զինչ մէկ ի նուին.
Ժողտեր են կանգնած յառջեդ.
Զըռօալ գինին լընուին.

106 Յիկն, Թանաս., էջ 85—104, «եթաւ ոգնչա՛ւ ատցնել Յրկանն վոտն երիտասարդի և արեցողացս: Մի օգիշ ձեռագրի մեջ «եթաւ օգնչա՛ւ ատցնել Յրկանն վոտն ցանկութեան երիտասարդի շնութեան»:

107 Յիկն, Թանաս., էջ 122—123, «Բան մեկնութեան»:

Տառապելքն հն ի դուռն ձկնի,
 Որ իւրեանցն կրտոր մուրային.
 Կանչէր թէ՛ ի զատ հանէք
 Յերեսէս, որ իրթ շուղէին.
 Յորժամ դատաստան լինէր,
 Որ ըզքեզ լառաջ կոշէին,
 Ի՞նչ ես դու տուել նոցա,
 Որ ի քո՞ դուռն կու գային,
 Ո՞ւր են տյն ամէն ճորտերն,
 Որ կանչեն անո՞ւշ պարոտին.
 Թող զան ու թափեն ըզձեզ
 Կըրակէն՝ և ի հուր գեհենին.
 Ո՞ւր է քո ոսկի կապայն,
 Որ ծառայքն ի թնն առնուին.
 Ո՞ւր է փափուկ անկողինդ,
 Որ գիշերըն քեզ փըռէին,
 Լէյսօր ոչ կապայ ունիս,
 Ոչ անկողին ի մէջն ի հողին.
 Յայգուց հուր ու բոց ածեն
 Ի բերան ըռօաշ խրմողին...
 Ո՞ւր է ձեր ամէն դեկանն
 Ու թաւերն և շատ ծառանին
 Թող զան ու թափեն ըզձեզ
 Ի ձեռացըն լար տանջողին...

Այդպիսիներն իրենց արդարացնել են ուղում՝ իրենց արարքների-
 համար մեղավոր բռնելով ստատեալին. այդ էլ ծաղրում է մեր բանաս-
 տեղծը¹⁰⁸.

Լեզէկ քընընէ ըզքեզ,
 Ա՛յ լիմար, թէ ի՞նչ բանի ես.
 Զլարըն քո կամաւ դործես,
 Զսատանայ պատճառ դու դընեսս,
 Եղբայր, քեզ երդումըն տամ,
 Սատանայ դու հ՞րբ տեսել ես.
 Լեսա՛, թէ ի՞նչ կերպ ունի.
 Կամ ի յու՛մ բերնէ լսել ես.
 Դու զմիտքդ սատանայ դուգես,
 Ի յաշխարհս քի շուռ կու ածես.
 Սատանայ զայն ի՞նչ գիտէ,
 Զինչ որ քո մըտօքըդ քըննես.

Յայն կենանքն ո՞վ առնէ մըտիկ
Այդ պատճառիդ ինչ որ դընեա:

Մնամիտ պիտի լինել կարծելու համար, թե Յորիկը չի համարուում սատանայի, ինչպես և աստուծու գոյութիւնը¹⁰⁹։ Նա վերնի տողերով միայն ծաղրում է մեղքը սատանայի վրա զոգններին և սատանային իրեն, թե չէ՝ մեր քանաօտեղծը, ինչպես ընդհանրապես միջնադարում, ընդունում է սատանայի սաղարանքը նույնիսկ իրեն համար, բայց դրանով չի արգարացնում նա ինքն իրեն, նա իրեն էլ է խիստ ծաղրում այդ նկատմամբ, այն էլ խորին ծերութիւն օրերին իր լավագոյն բանքերից մեկի մեջ¹¹⁰։

Ջանացի թէ լոյսն ելնեմ,
Ի խաւարէն խիստ մոռեցայ...
Ալիքս է դեղին դարձեր,
Նա մեղօք այլուի սնացայ...
Ականջս խաբողին դըրի,
Ջաստուծո՞յ բանըն մոռացայ...
Բեշիար ինձ դայս ասաց,
Թէ՝ ա՛ւան զքեզ ինձ մէկ այլ լըկայ։
Ձիմ կամքս ես դու կատարել,
Ես քեզ տամ՝ զինչ քեզ պիտեանայ,
Տակիմ ըզքեզ իմ դարպասն,
Որ անես աղէկ թամաշայ։
Ձթըմբուկն էր ի ձեռն արեւ
Ու ինձի կ'ասէր, թէ՝ անաղա՛,
Որ ես հանգչիմ իմ դասովն
Ու եղբայրն իմ Բեզզէքուլայ։
Հանքեզ դու շընորհք արեւոս,
Ով հաջի քեզ՝ ծիծըղայ։

Ահա թե ինչպիսի թթամաշայս—տեսարան է բաց անում Բեշիարը։ Նա հանդիսավոր կերպով բազմութիւն ատաշ պար է ածում իր կամքը կատարող ծերունուն և խաղք ու խայտառակ դարձնում նրան։ Յորիկ մի քանիք մեջ¹¹¹ ինքն իրեն դիմելով ասում է, թե ամեծ առեանիս ժամանակ՝

¹⁰⁹ Յորիկն ութնութիւն էլ դարերին. «Յորիկն իր մի քանի տողերի մէջ երեւոյն է գոլիս և ետեւ որդեւ արթնոտ։ Նա շատուան տղաուն է զարկում Եանգլանիքս, Կանքնեիքս, Եանգլա, Եանգլանէ։ Յորիկ (մեղավաճու), Երեւան, 1537, էջ 88. Հեղձեծ Ե. Քորոտլանէ։

¹¹⁰ Յորիկ, Բանաստ., էջ 78—81, և Նարին Յորկանն է ասացեալ լաւ հաստատչա. ուրիշ ձեռագրեր մեջ. «Ողորտեք զզոյման ի հագի տառքեալ Յորկանէ։

¹¹¹ Անգ, էջ 57 և հետեւ, և Նարին Յորկանն ասացեալ Հեղձեւհա, Եղձում է «Յորիկ զինչ քեզնեզայ ես դաւ խրաքով։

Կապի թո բըլըրու լնգուդ,
Ի յահէն լինիս դու լնգուդ,
Ուր են քո ամէն բաներն,
Հայերէն մասալ ու առակ,

Վերջին տողից պետք է հզօրացնել, որ նա որոշ թիւով «մասալ ու առակներ» պիտի դրած լինի, բայց հայտնի է միայն մեկը¹¹², որ վերնագրի մեջ անվանված է ետեղւոյ Երկու հարուստ եղբայր կային Մարտի, — ասում է նաւ — Մեծ եղբայրն ուզում էր մորթել փոքրին, որպեսզի բոլոր հարստութիւնն իրեն մնա, Պատից մի աղյուս պատմում է իր գըլխից անցածները և համոզում մեծ եղբորը չգործել եղբայրասպանութիւն: Գնդեցիկ պատմված առակ է, որի բուն գաղափարն է մարդուս ոչնչութիւնը: Խոսող աղյուսը սկզբնապես եղել է մի մեծ պարոնի մարմինը, որ զանազան արկածների հանդիպելուց հետո՝ բանեցիկ է իբրև աղյուսի նյութ¹¹³:

Այսպես՝ Ֆրիկը կիրառել է բազմազան բանաստեղծական ձևեր ու տեսակներ, երբեմն միմեկույն բանքի մեջ, նա և՛ ձևով, և՛ հարուստ բովանդակութեամբ հանդիսանում է մի ինքնուրույն առաջնակարգ բանաստեղծ, որ հավասար գնդեցիկութեամբ երգում է և՛ իր անձնական կյանքի վիճակը, և՛ ազգային-քաղաքական և հասարակական խնդիրներ, արտահայտիչ դասնալով իր օրերի իրականութիւնը, պայքար մղելով ընդդէմ հարստահարիչների և խորը հավատալով ժողովրդի լավագույն ապագային: Նա միաժամանակ և լավագույն կրօնական քնարերգու է: Նա աչքի է ընկնում և՛ անու, որ աշխարհումբ հորինում է դանազան տեսակներ, ոչ միայն իսկական քնարական քերթվածներ, այլև խրատական երկեր, երգիծաբանութիւններ, աղոթքներ և այլն, բոլորն անձնական զգացումով հեղինակած:

Վերջապես՝ այս էլ պիտի հիշել, որ նա շատ սիրում է նաև իմաստալիւս տոբր, բայց ոչ իբրև մի առանձին տեսակ, այլ աշխարհի տողերով ու տներով նա համեմատ է իր բանքերը, ինչպես վարվում են ժողովրդի մեջ շնորհալի խոսողները գործածելով առածներ: Կարծես այդպիսիներին էլ հետևում է և նրանց առածներից էլ օգտվում է մեր այս բանաստեղծը: Հաճախ նրա քերթվածների մեջ դրնում ենք մեծ վարպետութեամբ հորինված մի քանի իմաստալից խոսքեր, որոնց մեջ խտացրած կերպով արտահայտվում է հեղինակի բուն գաղափարը կամ խրա-

112 Անգ. էջ 109—202, «Տեղ Երկուսն առաջնալ ի վերայ եղբայրասպանին»:

113 Այս առակը նման բովանդակութեամբ կա Վենետիկի Միսիթ. Ձեռագրատունը, № 1928 (9., է.), էջ 579—582, 1660 թվականի մի տաղարանի մեջ «Առակ լուս և պիտանիս վերնադրով: Վերջին երկու տողերն են՝ «Այս քանի բանս իրմէն տես լնջիս Բօլալի կուսեհարաւ: Ավարի և վերջի երկու տները, որ ձեռի տակ սնիմ, նման լին Զրիկի գործին: Երեք, Թուրկը Եսլիս բովանդակութիւնը վերապատմել է. բայց հավատարմ կարծի է տեսլ միայն ամբողջ եկամտի անելով: Գուցե և Թալակը յուրացրել է Ֆրիկի առակը:

տը, մեծ մասամբ իբրև քարոյախոսական հղրակացութիւններ: Այսպես, օրինակ, հետևյալները նրա մի երկից.

Ջինչ զօրն ի բուն մարդըն խորհի,
Գիշերն ամէնըն խափանի...
Ջինչ որ մարդոյ խորհուրդ լինի,
Ամէնըն հոգ է և քամի¹¹⁴,
Այն բազալին եմ նմանի,
Որ փոքր որսին ոչ հաւանի.
Ով որ ամէլ զալքն ալլ մեծի,
Քաղցած կենայ և անօթի...
Երբ ժամանակ մարդոյն ժըսի,
Երես ի վայր նա զըլորի,
Երթայ դիպնի հանցեղ դարի,
Որ մինչ ի մահն ոչ վըճարի¹¹⁵:

Կան քերթվածներ, որոնք մասամբ կազմված են իմաստական աս-
քերի շարքից. այսպես, օրինակ, նրա մի գեոգեշահ և պիտանիք բանքը¹¹⁶.

Իմ սի՛րտ, վատին մի՛ լսել,
Ու շարին տեղ իսկի մի՛ տալ.
Ցայս աստղութիւն վերայ
Վատն իսկի մարդու շի մնալ:
Այն մարդն որ ինքն վատ առնէ,
Հանդիպի ինքն վատի մի ալլ...
Յորժամ քո շարկամն ընկնի,
Գու ի քո սիրտդ մի՛ խընդալլ...

Քեպետ և այսպիսի խոսքերը հաճախված են Զորիկի երկերի մեջ,
բայց նա իմաստաբան քերթող չէ, այլ քնարերգու: Իմաստական ասքերը,
որ առաջ անվանում էին ռասք իմաստնոցա, մի առանձին զրական տե-
սակ են կազմում, և ունենք բանաստեղծներ, որոնք սիրում են այդ և
հորինում են ամբողջական իմաստա-ռասքական զրվածքներ:

ԻՄԱՍՏԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՑԻ ԿԱՄ ՊԼՈՒԶ

ԻՄԱՍՏԱԿԱՆ ԱՍՔԵՐ

1. Իմաստա-ռասքական բանաստեղծություն:— Առանձին չես
միաժամանակ 13-րդ դարի վերջին քառորդից ի վեր, մինչև 17-րդ դարը
և հետո, ժաղկում է իմաստական և ուսուցական կամ խրատական բա-

¹¹⁴ Ձրիկ, Թանաստ., էջ 25, «Վատն ողբանք փոշիմանութանն»:

¹¹⁵ Անդ, էջ 26:

¹¹⁶ Անդ, էջ 29 և հան., «Երբիկ Զորկուն ասքնալ Հագեշահ և պիտանիք»:

նաստեղծութիւնը, Հայրենասիրական որոշ գաղափար արծարծել և ուսուցանել է եղել իսկապես նաև Սահպանեոս Որբեյանի «Ողբի» միտումը, բայց իմաստական բանաստեղծութիւն չէ այն: Վերջինս հարկնված է սովորաբար միջին գրական հայրենով ու ժողովրդական ոգով և բովանդակութիւն ունի ընդհանրապես բարոյական գաղափարներ, երբեմն պարսավի կամ խորհրդածութիւն հետ միացած: Բանաստեղծներն իրենց ուրիշ երկերի հետ մեծ սիրով քերթում են նաև իմաստալից բանքեր կամ, ինչպես հետո անվանում էին, «ասք» իմաստեցոյ, «բանք» իմաստութեան, որոնց մեջ կան այնպիսիները, որ ժողովրդական առածներն և իմաստալից ասութիւններ համեմղ ու զուենղ վերակերտումն են: Որքան մեր միջնադարյան առակները ձևով մեծ մասամբ անմշակ են մնացած, այնքան ալիւլի գեղեցիկ են հորինված այս փոքրիկ իմաստական քերթվածները, որոնք մի քանի տողով, սեղմ և կուռ ոտանավորներով տալիս են մեզ երբեմն ընդարձակ աշխարհայեցութիւն: Դրանց իմաստաբան հեղինակները մեկ-մեկ փայլում են անձնական համարձակ, իրենց ապրած դարաշրջանի նկատմամբ՝ անգամ խիզախ տեսութիւններով, բայց նրանց ասքերը մեծ մասամբ, ինչպես մեր միջնադարյան առակները, տողոված են քրիստոնեական բարոյական գաղափարներով, դրադում են կրոնական ուղղութիւն խրատներով, մերթ-մերթ նաև այնպիսի խնդիրներով, որ անձնապէս հետաքրքիր են եղել քերթողի ժամանակի մարդկանց համար: Կան հարկավ և այնպիսի քերթվածներ, որոնց քարոզած գաղափարներն արծիք ունեն նաև ամեն տեղի և ժամանակի համար, քանի որ ընդհանուր մարդկային կյանքն է կազմում դրանց բանաստեղծների մտածութիւն նյութը: Թեպետև այդ քերթվածները պատարուն են բարոյակրթական քարոզներով, երբեմն կազմված են մի ամբողջ շարք իմաստական ասքերից—բարոյական սենտենցիաներից: Բայց դրանց հեղինակներն իսկական բարոյախոսներ—մորալիստներ չեն: Նրանց երկերն ուսուցական կամ խրատական լինելով հանդերձ՝ սովորաբար իսկական քնարերգութիւններ են, որովհետև ոգւոված են անձնական տրամադրութեամբ, ջղոտ և խորն զգացած, և բարոյական խրատներն էլ ըստ երևույթին իրենց հեղինակներին փորձառութեան և ապրումների արգասիք են, ինչպես, օրինակ, Ֆրիկի և Կոստանդին Նրզնկացու:

Այս տիպի, ինչպես և ընդհանրապէս խրատական և հոգեշաղ քերթվածները կազմում են մեր հին բանաստեղծութեան հարուստ ճյուղերից մեկը, բայց դրանց զարգացման պատմութիւնն անել այժմ հնարավոր չէ, որովհետև դեռ չի կատարված բնաստիութեան աշխատանք, չեն ժողովված և հրատարակված բոլոր այդպիսի երկերը, որոշված չեն շատերի հեղինակներն և նրանց ապրած ժամանակը:

Այս իմաստական ասքերը հորինված են սովորաբար հայրենի չափով և լեզվով ու ձևով շատ նման են միմյանց. ուստի հեշտութեամբ հնարավոր է եղել դրանցից կազմել մեծ կամ փոքր շարքեր, մեծ մասամբ

առանց հեղինակներին անվան, և այսպես էլ մտնել են դրանք զանազան ժողովածուների կամ տաղարանների մեջ: Իրոք հեղինակներ հիշվում են Պլուզ և Ֆրիկ: Կան նաև սակավաթիվ այնպիսիները, որոնք հաշատուր կնշառեցուր կամ ուրիշներին են: Դրանց մասին այստեղ հերթադրել և առանձին մանրամասնությամբ խոսել: Հիշենք այսպիսի ու մեծ տաղաշարքների մի հայտնին, որ սկսվում է «Եղևան որ ազիզ կենալս անողով, որ կա և՛ Ֆրիկին անունով, և՛ անանուն»¹¹⁷: Դրա մեջ կան նաև քառյակներ Պլուզի անունով վերնում հիշվածներին, ինչպես և սերո տաղերին: Բերենք առաջին հրկու քառյակները, որոնց քարզած խորատը խոնարհ և կակուզ քնավորութեան մասին՝ շատ էլ չի հարմարվում Ֆրիկի պոեմին:

Կազմա որ ազիզ կենալս,

Որ ամէն մարդ ըզքեզ սիրէ՝

Դու հողու նըման կացիր,

Որ ամէն մարդ ըզքեզ կոխէ:

Քանց զերկրսն այլ ի՞նչ ամուր,

Որ կըրակըն զինք կու հալէ.

Դու լըրի նըման կացիր,

Որ կըրակն ի քենն վախէ:

Դեննք այստեղ մի իմաստական առք ևս գիտութեան և ուսման մասին¹¹⁸.

Մտիկ կանթեղին արա,

Զուրն ու ձէթն ու լուսն ի շարս.

Կանթեղն է մըտաց նըման,

Զուրն ուսման, ձէթն գիտութեան:

Քանի միտք դու սո՛ւրբ ունիս,

117 Տպված է Գ. Կասառնյանցի «Նոր ժողովածու», Գ. պրտի. Միջնագարյուն հայաց տաղեր և առանավորներ» հրատարակութեան մեջ, Քիթիս, 1886, էջ 35—40. անված է մի ձեռագրից, որի մեջ վերնագրին եղել է՝ «Ֆրիկան առացնալ զայս տաղս, մի ուրիշի մեջ նայեն անանուն է եղել»:

Այս աղաշարքը ես ունիմ Պետական թանգարանի Ձ 383 ձեռագրից, վերնագրին է՝ «Նազ հոգայ և մարմայ», անանուն: Նայել է իմիսինի Մատենադարանի Ձ 2394, էջ 176. անանուն. իսկ էլիմածին Մատենադարանի Ձ 2681, էջ 127 թ՝ «Ֆրիկան առացնալ զայս տաղս վերնագրով»:

118 Այսպիսի իմաստական առքերի շարքեր կան Վենետիկի Միսիթարյուն գրադարանի ձեռագրերի մեջ, Ձ 74 (Ա. Տ.), էջ 255—256. անդ, 730 (Զ. Ա.), էջ 85—87, անդ, Ձ 1235 (=730 Ա. Յ.), էջ 21—24: Այլև Cod. Anicman, ձեռագրի Ձ 279, fol. 11—13 «Նազ Աղաժայս վերնագրով»:

119 Վենետիկի Միսիթար. Մատ. Ձ 1235 ձեռագրի մեծ տաղաշարքից: Տե՛ս և Նահապետ Քուլակի Գիվանը, էջ 81, նմ:

Որ կարող ես սիրող ուսման¹²⁰,
Գիտուն և հոգիս պայծառ,
Որ լուս տալ քեզ ի մըթութեան:

Մի անգամ որ իմաստական ասքերի մաքողական ժողովածուներ զեռ լին կազմված և հեղինակներն ըստ հնարավորին դեռ լին պարզված, և դեռ լին կատարված մենագրական աշխատանքներ, հասկանալի է, որ այժմ կարելի է, ինչպես վերևում նկատվեց, դրանց դարգացման ընթացքը որոշել և ձևն ու բովանդակությունը բնութագրել ինչպես հարկն է:

Բավականանում ենք այս գլխի առաջին պարագրաֆի մեջ գրվածով: Ավելացնենք միայն, որ ոչ միայն իմաստաբան հեղինակների անձնական, այլև ազգային ոգու և պատմական փորձառության արտացոլումն ևս անշուշտ մեծ է դրանց մեջ:

13-րդ և 14-րդ դարերում քանաստեղծներից առանձնապես աչքի են ընկնում՝ բացի Ֆրիկից, որ քնարերգությունների մեջ հաճախ իմաստական ասքեր է խառնում, նաև հալատուր Կնառեցին, որ տեսել ենք, այլև Հովհաննես (Յովհաննէս) և Կոստանդին Երզնկացիները:

2. Երզնկացի իբրև առևտրական և կոպտորական կենտրոն:—Այս քաղաքը, հին Երիզա (Երեզ) ավանը, հնագույն դարերից ծանոթ է իբրև կռակաշտական կրոնական կենտրոն: Քրիստոնեական շրջանում նշանավոր է դարձել քաղաքից ոչ հեռու, արևմտյան կողմում, Սեպուհ լեռն իր Ս. Լուսավորիչ և այլ վանքերով ու ճգնարաններով: Այնտեղ, ինչպես և շրջակայքի ուրիշ վանքերում, կենում էին ոչ միայն կրոնավորներ ու մենակեցներ, այլև զրագետներ, որոնք ձեռի տակ ունեին շատ գրքեր և ուսում էին տալիս երիտասարդ սերնդին: Կանաչով և ընտիր պտուղների պարտեզներով շրջապատված Երզնկա քաղաքը, Եփրատ գետի վրա, այլև նրա քարերից գամառը (հին Եկեղիք), կարևոր դեր է խաղում թաթարների իշխանության օրով: Մահմանագլխի մի մեծ քաղաք էր այն, որից արևմուտք, Փոքր Ասիայում, տարածվում էր Հռոմի (Հռոմ, Ռոմ) տերությունը—Իկոնիայի սուլթանությունը: Առևտրական տարանցիկ մեծ ճանապարհը Կիլիկիայից գալով՝ թուրքերի իշխանության երկրից հասնում էր Երզնկա, այստեղից անցնում դեպի Մեծ Հայաստանի ներսը և դեպի հարավ՝ Քավրիդ քաղաքն և դեպի հյուսիս՝ Սև ծովի ափերը¹²¹, Համբավավոր վենետիկեցի ճանապարհորդ Մարկո Պոլոյի ուղեգրության (1271—1295 թթ.) մեջ կարդում ենք Մեծ Հայաստանի մասին¹²². «Այս

120 Անգ, 6-րդ և 7-րդ տողերն այսպես.

Գու սիրով շանտ ուսման,

Հոգիդ է պայծառ գունդ . . .

121 ՏՃ՝ առաջ հատվածի առաջին դիտի 8-րդ պարագրաֆը՝ «Թաթարական իշխանությունը 13-րդ դարում»:

122 «Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հատ. II (1253—1293 թթ.), Երևան, 1932, էջ 48 և հաջ.՝ Տարանցիկ առևտրական է Քավրիդ»:

մի մեծ երկիր է։ Անսովոր է մի քաղաքից. որ կոչվում է Արդինկա [Երզն-
կա], որ Հյուսիսում են աշխարհի լավագույն բճենդենբրը։ Նա ունի որևէ
վայր գոյություն ունեցող բնական աղբյուրներից լավագույն բազմաթ-
նները։ Երկրի ժողովուրդը հայեր են, որոնք հպատակվում են թաթարին։
Բազմաթիվ քաղաքներ և գյուղեր կան երկրի մեջ, բայց նրանց քա-
ղաքներից ամենեն ընտիրը Արդինգանն է, որ արքայապետպետական թեմ
է և Արդենդան [—Արդուում] և Արդիդի [—Արհեհ]։ Մի չափանույն, կոչվում
Պայպուրթ, որ անցնում ենք Տրապիզոնից Քավրիդ գնալիս, կա արծաթի
հանք¹²³։ Երզնկան իր նշանակությունը պահում է մինչև 15-րդ դարի
մեջերը։ Թույլ Գոնցալես դի Կլավիխոյի ուղեգրության (1403—1406 թթ.)
մեջ¹²⁴ ասված է. «Երզնկա, Սուրմալու [—Սուրմառի], Իգդիր և Խոյ քա-
ղաքներն այդ ժամանակում քաղաքական և առևտրական կարևոր կենտ-
րոններ էին։ Քավրիդը Պարսկաստանի առևտրական մայրաքաղաքն էր
այդ շրջանում։ Առևտրական ճանապարհը Կենտրոնական Ասիայից գա-
լիս էր Քավրիդ և ապա դեպի Սև ծովի նավահանգիստները, մասնավոր-
ապես Տրապիզոն։ Երզնկա քաղաքն այսպես է նկարագրված¹²⁵. «Ամեն
քայլափոխին կային շատ գեղեցիկ պարտեզներ և այգիներ։ Հայերն են
շինել Արդինդան [—Երզնկան] և քաղաքի պարտեզներում կարելի է տես-
նել շատ տեղեր քարերի վրա փորագրված խաչի նշանը... Քաղաքը շատ
բազմամարդ է, և այնտեղ կարելի է տեսնել շատ գեղեցիկ փողոցներ և
հրապարակներ։ Շատ պաշտոնական անձնավորություններ ապրում են
այստեղ, որոնց մեծագույն մասը հարուստ մարդիկ են, և կան շատ փար-
թամ վաճառականներ։ Հիշվում է Քահարթեն անունով մի հայ իշխան
Երզնկայի։ Առատուրը հայերն են անում. «Արդինդանի հողերից բազմա-
թիվ կարավանները տանում են վաճառականական շատ ապրանք, գու-
յով Սուրիայից գնում են թուրքիա» [—Հոսմ]¹²⁶։

Հովհաննես Երզնկացու պատանություն և երիտասարդության ժամա-
նակ, 13-րդ դարի երկրորդ կեսին, Երզնկա քաղաքն և իր շրջակա վան-
քերը հղել են ծաղկած դրություն մեջ, Քաղաքի առաջնորդ հեղել է Սարգիս
եպիսկոպոսը, մի շինարար և ուսումնասիր անձ. իսկ կառավարիչ իշ-
խանը՝ Նրա որդին՝ պարոն Հովհաննեսը, որ հետևող է իղել իր հոր օրի-
նակին, երկուսն էլ վայելել են մեծ վստահություն դաների կողմից։

14-րդ դարում և հետո՝ Երզնկան հաճախ անցնում է թուրք ու թուրք-
մեն ցեղերի մեկի ձեռքից մյուսին, բայց, ինչպես վերին նկարագրից տե-
սումք, ընդհանրապես պահում է իր նշանակությունն իբրև առևտրական
կենտրոն, միաժամանակ և հայերի համար իր վանքերով իբրև մի կույ-
րուրական վայր։ 13-րդ և 14-րդ և նույնիսկ 15-րդ դարերում Երզնկայից
ծագել են մի քանի նշանավոր եկեղեցականներ և գրագետ վարդապետ-

123 Յեդ, էջ 66 և հան.

124 Սեդ, էջ 88.

125 Սեդ, էջ 95.

126 Սեդ, էջ 97.

ներս Այս քաղաքի և իր շրջակայքի կուլտուրական կյանքի արտագրությունն են ահա և մեր երկու ականավոր գրողները՝ Հովհաննես և Կոստանդին Երզնկացիները:

8. Հովհաննես Երզնկացու կենսագրության մասին քաղական տեղեկություններ ունենք իր գրվածքների հիշատակարաններից և ուրիշներին¹²⁷: Նա ծնված է շուրջ 1250 թվականին Երզնկա քաղաքում, ռատի կոչվել է Երզնկացի, Երզնկայեցի: Իր ձեռով գրած մի գրքի մեջ գրել է իրեն համար. «Նուսաստ և տկարոգի Յոհաննէս Երզնկայեցի, սպասաւոր բանիւ: Մխիթար Գոշի առականի մի մասի արտագրութիւն հիշատակարանի մեջ 1294 թ. նա գրում է. «Ձեռքբերում գրիչս զՅՈՒ. ծանոթ բանի և տեղեւ: Երզնկացի, իսկ այժմ Սործորեցի, աղաչեմ լսողանալ...»¹²⁸, Հովհաննէսը, որ հայտնի է նաև Պլուզ (կապուտաշուի) մականունով, ուսումնառել է Սեպուհ լեռան Ս. Մինաս վանքում, բայց այնտեղի ուսումով չի բավականացել, նա մոտիկ վանքերն էլ այցելելուց հետո անցնում է հյուսիս-արեւելյան Հայաստան և աշակերտում համբավավոր Վարդան Արեւելցի վարդապետին Կայենո ձորի մի վանքում, նա 1271 թ. վերադառնում է Երզնկա, և տասը տարի հետո այստեղից անում Կիլիկիա, ուր, իբրև մեծ հնդիկական տեր վարդապետ, լավ ընդունելություն է գտնում ժամանակի կաթողիկոսից և Հայոց թագավորից, պարագայում է ուսուցչութիւնը: 1284 թ. նրան գտնում ենք Տփղիս քաղաքում: 13-րդ դարի վերջերում նա հաստատված է Արտազու Ս. Աստվածածնի կամ Թադեոս առաքյալի վանքում, Սործոր գյուղի մոտ շինված, ուստի կոչվում է նաև Հովհաննէս Սործորեցի: Ինչպես ուրիշ տեղերում՝ այստեղ էլ այս վանքի առաջնորդը, Զաքարիա սևուռով մի ուսումնասիր անձ, սիրով ընդունում և պահում է նրան: Այստեղ էլ նա պարագայում է նաև գրական աշխատանքով: 1316 թ. մի անգամ էլ հանապարհորդում է ի Կիլիկիա և վերադառնալով Արտազու վանքը, այնտեղ էլ երեւի ապրել է մինչև մահը, որի ճիշտ թվականը հայտնի չէ. դեռ մեծ մոտ 1326 թ.: Վերջին գրական աշխատություններից մեկը, եթե ոչ վերջինը, որ հիշվում է, է 1321 թ. կատարած մի թարգմանություն լատիներենից, որ նա սովորել էր, երևի, Կիլիկիայում եղած ժամանակ:

4. Երկերը:— Հովհաննէս Երզնկացին իր ժամանակի գիտնական վարդապետի մի տիպարն է, որ պարագայում էր միաժամանակ և ուսուցչութիւն, և՛ գիտութիւն, և՛ գրականութիւն, և՛, ինչպես ուրիշները, ազատ ժամանակին նաև գրչութիւն, այսինքն ձեռագիրներ էր արտագրում: Նա թւեցնել է ճարտար լեզու, և ամեն տեղ, ուր գնացել է, հառեր է ասել և հիացում պատճառել իր ճարտասանութիւն, միշտ քաղաղութիւն է արել և սովորեցրել: Լինելով ուսումնասիր՝ բազմակողմանի հմտութիւն տեր է դարձել, աշխատելով իբրև մեկնիչ, տոմարագետ, ք-

127 Ղ. Ալիշան, Ռալիկը հայրենեաց Հայոց, հատ. Բ, էջ 457—463. «Երզնկա և Հովհաննէս Երզնկացի»:

128 Էջմիածնի Մատ. ձեռագիր Ձ 2238:

բանականագիտ. Հոբինել է ճառեր ու ներքողներ, այլև իբրև բանաստեղծ՝ տաղեր ու շարականներ և այլ քերթվածներ։ Նրա աշխատություններից մի քանիսն արդյունք են ուրիշների դրժման. այսպես՝ 1250 թ. Նրզնկայի Ս. Գրիգոր վանքի միաբանություն խնդրով գրել է Քնանոնք և սահման միաբանություն հղբարաց։ Կաթողիկոսի և ուրիշների դրժմանով Հոբինել է Դիոնիս Թրակացու Քերականության մեկնությունը, նկատի ունենալով Հին մեկնությունները։

Տիդիտոս նրանից խնդրում են, և նա գրում է «Ծաղազս երկնային շարժման»։ Այսպես ուրիշներն էլ խնդրում են նույն նյութի վրա գրել քանաստեղծություն, և նա գրում է «Ծանա հանգով հազար տողով ոտանավորներ»¹²⁰, նկարագրելով երկինքն ըստ ժամանակի հասկացության, երբեմն և դիմադրաբար երկնքին դիմելով։ Արվեստի տեսանկյունից սակավաթիվ գեղեցիկ տողեր միայն կան միջին, ինչպես հետևյալը՝ «Ներքո-դական գովեստ երկնի»։

Ո՛վ սքանչելի ձեզուն յարկի այս մեծի տան,
Ի բարձրելուն բան է ձգնալ որպես խորան...
Դու յարկ մեծին ձեռամբ շինեալ արքայական,
Ջահք ի բարձանց ի քեզ կախնալք անշխական,
Դու անթառամ ծաղկանց լուսոյ մեծ բուրաստան,
Որք լանդաստան քո դեղեցիկ ծաղկագրեցան.
Ոյ թէ միայն քո պարանոց վարդարեցան,
Այլ բովանդակ մարմին և անձն շքեղացան։
Յոյժ մեծութիւն քո հրաշագեղ անլստական,
Հանդերձս նուրբ և պատմունան քեզ կարգեցան,
Ոյ թէ միայն կրկին ակունք որք ճոխեցան,
Այլ յոգնակի ակունք լուսոյ շարագրեցան,
Եւ մարգարիտըս լուսաւորայլ որք յեռեցան
Ընդ գիշերոյ սպիտակաւորայլ ջահ ճախրական,
Իսկ ի տուէ բաղմաւորայլին բոց կայծական,
Յոր գիշերոյն աղօտ փայլունքն ծածկեցան¹²¹։

Հաճախ նկարագրին անուժ է իբրև այլաբանություն կամ իբրև խորհրդանիշ—սիրտը որն է կրօնական համայնաւելիքի կամ մարդկային կյանքի մի երևույթի, ինչպես, օրինակ, հետևյալն ուրեղակի մասին.

120 Տիդորգովան է Նոր Նոթիքիանում 1792 թ. «Տեսողակ համառու և լի իմաստեւ-խա՛հ բանիւք, տարեւալ հոգեկնց և իմաստուն վարդապետին Յօհաննիսի մղձկնացալ, որ և ասի Սործորեցի...»։ Հեղինակի տողաբանի վերնագիրն է. «Ծաղազս երկնային շարժման», Յօհաննիսի մղձկնայնցալ շարագրեալ իմաստեւոց բանից ի խնդրս բարեգաղութ և երկնաշաղարք պատանալս լուսուն Վաղթանկայո։ Անուժ է իր աշխատության ծագման պատմությունը։ Նրկրորդ մասը (էջ 21 և հետ.) ունի վերնագիրս՝ «Ճաղաղութ որ ի ամս եղնալ բունիցն» կանխաբանութիւնս. համառու գիտն է իր քերթվածի բովանդակությանը։ Գրել է «Ի խնդրս բարեգաղութ իշխանին Ասլաքի»։

120 Անգ, էջ 61.

Այլ և զպալծառ լուսոյն աղբիւր միշտ հոսական,
 Ըզգեղեցիկ անն աշխարհի լոյս ցուցական,
 Զնա ի կամաքդդ քո բերես ջաշ փայլական,
 Որ զկեդրանդուն հրոյ բաշխէ բնաւից պիտան,
 Սա մեղ խրատ օթըստօրէ քարոզական,
 Ըզմա՛հ և զկեանք օրինակէ դէմ յանդիման,
 Առաւօտուն ծագմամբ զծնունդն մայրական,
 Երեկոյն թաղմամբ ըզմուտն ի գերեզման,
 Սա զօրինակ բերէ լուսոյն անեղական,
 Որ ի ծոցոյ հօրէ ծրնունդ որդի և բան:
 Թարեւից զեղով ծագէ փնայական,
 Արագապէս ընթացս առնալ հըսկայական,
 Զարեգականն արգարութեան պատմէ ըզբան,
 Զաննիւթ լուսոյն մեղ քարոզէ լոյս եղական¹³¹,

Հովհաննէս Երզնկացուց մեռմ են բազմաթիւ և բազմազան բովանդակութեամբ երկեր, բացի վերևում հիշվածներից նաև շատ ճառեր, մի քանիսն ի սուրբ Հոսաւորիչն, որ ասել է Հոսաւորչի տոնի օրը նրա սնունդով վանքում Մեակուհ լեռան վրա, մեկնութիւններ, խրատական երկեր, ոտանավորներ խրատական բովանդակութեամբ, այլև տաղեր, ջարեականներ և այլն¹³²։ Սրանց մեջ նա հաճախ ցուցաբերում է շեղմ սրտագին զգացումներ դեպի հայկական սրբաւայրերը և անցյալը։ Նրա բանաստեղծութիւնները, ցամաք, դեռ լին համաքոված և միասին հրատարակված մի ամբողջական ժողովածուի մեջ։

Նրա անունով մեռմ են և բազմաթիւ իմաստական ասքեր ևս, առանձնապէս հայտնի են մի մեծ շարք ասքերը՝ «Երդ Պլուզ վարդապետի ասացեալն զերնագորով»¹³³։

Յ. Հովհաննէս Պլուզի աշխարհապաշտը։ Մարմնի իրավունքը։— Մեր այս գրողն իր ասքերով հանդիսանում է իրեն իսկական իմաստաբան քերթող, հանգիստ ու գիտուն վարդապետ, լուրջ բնավորութեամբ, անխի մտածող, քան զգացող։ Նա իր ժամանակի աշխարհիկ ոգին շատ ուժեղ և բյուրեղականորէ անվերել է իր ասքերի մեջ։ Արդարև նա դեռ երևան է բերում մի քրիստոնեական հոգեւորականութիւն, բայց արդեն խիստ տարբեր նախորդ շրջանի հայացքից։ Աշխարհը նրա համար այլևս մի հառաչանքի հովիտ չէ, չի լաբարանքներով ու լաբրանքներով, այլ մի զվարթ կյանքի վայր, որը, սակայն, իր մեջ ունի մի մեծ հակադրու-

131 Անո, էջ 64 և հտն.։

132 Մանրամասնութիւնը տե՛ս Գ. Զաքարեան, Հայկ. հին դար պատմ., էջ 730—767, «Երզնկացույն երկասիրութիւնքը»։

133 Ձեռք տակ ունի վննեակի Միթարյան Մատենադարանի № 234 թ. ք. Հեռագրից հառապ արտագրութիւնը։ Նույնը մեծ մասամբ անվաճ է Վ. Փոփոքյան, Պատմութիւն հայոց գրականութեան, Քիֆիս, 1970, վերջի ենթալրերի մեջ, էջ 81։

թյուև—մաւր, Եվ որպիսի՝ հեղեցիկ պատկերավորութիւններ, սեղմ ու չի բովանդակութիւններ, մի քանակի մեջ կարողացնել է արտաշայտել նա այդ:

Աշխարհս է կանաչ մարգեր,
Մենք ի մէջն հնք կաքու ձագեր.
Գրորոզն է հղի բազա,
Կու կրէ մէկ մէկ դար ի վեր:
[Վարիանտ՝ Հրեշտակներն արծիւ դարձեր,
Կու տանին զմեզ մէկ մէկ ի վեր]:

Մարդս չի կարողանում ուրախ և երջանիկ զգալ իրեն, որովհետև մարդկային վիճակը և կյանքն իսկ անկայուն է.

Աշխարհս ի տուապ նրման,
Որ ի վեր՝ և ի վայր թաւալի.
Վերինն ի վայր դառնայ,
Եւ վարինն ի վեր ուրբի:

Մըտիկ դու հիւսանն արա՛,
Որ թապութ՝ և օրոցք շինէ նայ.
Մէկըն գայ և մէկն հրթայ,
Նայ իւր բան պակաս չի մընայ:

Այսպէս, ուրեմն, ծնունդ ու մահ միասին են շարունակ և այս երկուսի մեջ մարդու բախտը վեր ի վայր է թափալում: Անզգալի անցնում է կանաչ երիտասարդութիւնը, կարծես իսկույն վրա է հասնում ծերութիւնն իր երկյուղով, որ մարդու սիրուն շինվածքն անսպասելի պիտի քայքայվի:

Աշխարհս է ի ծով նրման,
Ով որ գայ՝ անթաց չի մընայ.
Յայս ծովս հս ի նաւ մըտայ,
Գրեաք նաւ, և հս լիմաքար:

Եզեր մօտեցեր է նաւ,
Վախեմ թէ քարի գիպենաւ,
Քակտի իմ աղուար շինուածս,
Ու տախտակըս մէկմեկանայ¹³⁴,

¹³⁴ Վարիանտի մեջ ավելացրած է այս քառյակը.

Երբեմն ուղարկմ գոտաւում,
Որ հանէ դիւաք մի քամի,
Այս մըտունը լայս մի տայ,
Զմեզ քարի երկիր մի հանի:

Եւ մարդիկ կարա՛վան կապած զնում են անդենը, առանց կշռանա-
լու աշխարհից:

Շատ քաղաքացի մեծաց
Թիմաստեոց տալանց լըօնցի,
Ք'այնչա՛ն չըկըշտանայ մարդն
Աստեւորովս, ինչ որ մեռանի.
Տանին գերեզման դռնն
Եւ հողով իւր աշքըն լըցուի.
Ապա փոշիմնայ 'ւ ասէ,
Քէ հերիք է 'ւ այլ չի պիտի:

Այն անգամ որ մարդս անվերջ լի վայելում կյանքը և իր աշխատան-
քը և ծնրութիւնն ու մահ կա, հետեւաբար ունայն է ամեն ինչ և անօգուտ՝
ամեն վաստակս, կյանքի այս անկայունութիւնն ու մահն են ձգում մեր
իմաստաքանին հոռետեսութիւն մեջ, թե չէ՝ կուգոր նա իբրև սկաքավի
ծաղոս անվերջ ապրել սկանալ մարգագետնում:

Աշխարհս է ոչինչ նման,
Շատ դատին, դառնան փոշիման.
Հալալ ու հարամ այննն,
Հոս թողուն 'ւ ի հոն կու գընան:

Հոռետեսութիւնը շատ բանաստեղծների տանում է դեպի հանուշքը,
ըրպեական վիճակի վայելչութիւնը, բայց այս կենսութախ հայացքը մեր
գրականութիւն մեջ 17-րդ դարի վերջերին է առաջ գալիս, իսկ 18-րդ
դարը դեռ շատ մոտ էր հին կրօնական շրջանին: Ուստի ինչքան էլ մեր
բանաստեղծի հոռետեսութիւնն հիմնական պատճառն աշխարհասիրու-
թիւնն ու կենսասիրութիւնն է, բայց նա լրիկ համակվում է տխուր վըշ-
տով՝ չհամարձակվելով անգամ դրա պատճառը բացահայտ շնչտելու կամ
աշխարհն ու կյանքը նրգնելու: Ուրիշներին նույն հոռետեսութիւնը տա-
նում է դեպի ամենայնի ոչնչացումն և անտարբերութիւնը. բայց մեր
բանաստեղծը դեռ բարեպաշտ քրիստոնյա է. նա համատում է անդենի
կյանքին: Ուստի նրա համար ամեն բան ոչինչ է, բացի գիտուն լինելուց.
գիտութիւնից ու բարի գործից, հատկապէս աղքատասիրութիւնից, ինչ
որ Ֆրիկն էլ քարոզում է, այն էլ աստենիս արարքներն անդենի նկատ-
մամբ:

Մանկտի՛ք, երբ ի հաց Նըստիք,
Զէնեցէ՛ք աղքատք ձեզ ընկեր.
Մեռնիք 'ւ ի յանդէն երթայք,
Կու Նըստէք մէկ մ'այլ ի վեր:

Բայց բարեգործութիւնը, աղքատասիրութիւնը, որ արվում է
սքարձիւ համար, դեռ բավական չէ: Որովհետեւ մարդ չկա, որ մեղա-

վոր լիինի. պետք է որոնմն ուղղալ, սղալ, մեղքը լալ: Սակայն կարո՞ղ էր արդոք մեր իմաստասրան Պլուզն իրագործել այդ Մի Գրիգոր նաբեկացի 10-րդ դարում՝ համակերպվելով իր ժամանակի որոշ դասի դոկտրինային: Կարողանում էր շարունակ ազալ ու ողորալ, որովհետև նա խորը համոզված էր, որ աշխարհն ու կյանքը վատ է, և մի՞միայն լարիք. նա մերժում էր աշխարհը, մեռցնում մարմինը, որ միանար աստուծու հետ, և այդ էր անվերջ փնտրելու նա: Հովհաննես Պլուզն,— և իր պես մտածող ուրիշները,— անընդունակ էր այդպես վարվելու: Նա չէր կարող ուրանալ աշխարհը, մեռցնել մարմինը. ուստի նրա ապաշխարանքան երգը սառն է հելում և չի դրկում նրան:

Ելալ ժողովեցի զիմ մեղքն
Ու դրրի առնես ու լացի,
Յանդէնքն քաբան կ'երթար,
Շալկեցի՝ և ի հետ զընացի.
Հրեշտակն այլ ի դէմս ելալ,
«Թ» «Ո՛ր կ'երթաս ողորմ ու լալի.
Այդ շայակդ որ դու ունիս,
Անդէնին քեզ տեղ չի ընկնիս:

Պլուզը ոչ միայն գործնականորեն չի կարողանում հետեւել նախորդ դրանի միատեղական ձգտումներին ապաշխարությամբ, այլ նա տեսականորեն էլ արդեն հակառակ է դրան. նա մարմնին գիտակցաբար տալիս է իր իրավունքը: Նա մարմին ու հոգի, այս երկուսը միմյանց հավասար ընկերներ է համարում սկզբունքով, իր ժամանակի համար մի խիզախ տեսությամբ: Ռերենք նրա նշանավոր քերթվածք, որի մեջ նա պարզում է իր տեսական տարող միջնադարի մտքերն զբաղեցնող խնդրի մասին:

Երկուս ի մէկտեղ բերած,
Ջերդ զընկեր կ'ասես թէ՛ պահէ՛.
Ու շորս բընութիւնս օտար,
Հետ իր(ե)րաց կ'ասես թէ՛ սաղէ՛,
Ջայս շորս չիրար ո՞նց պահեմ,
Ամեն մէկ լինքըն կու քարշէ,
Ջիս հոգս ի յայտոց միշին,
Ջերդ կըբակ զգոմ կու հալէ,
Հողըս շոր խաշկիկ առնէ,
Ջուրս գէճ կու ցըրտացընէ,
Փամին զիս յերեք ունի,
Կըբակին բոցըն կու վառէ՛,
Հանցեղ սիրելի լարկամ
Մէկտեղ ո՞վ իսկի տեսեր է.
Հոգիս թէ ի վեր քարշէ,

Հողըս ծանր ք վալը կու հակէ:
Վախիմ թէ հողոյս լըսեմ,
Եւ հողոյս բանըն դըժարէ՞:
Եւ հետ հողոյն Ե՛վ թըռչի,
Երբ նորա տունըն հեռի է:

Բանաստեղծը նույնիսկ նրկրայում է, թե կարելի լինի իրար հետ իբրեւ ընկերներ հալտ պահել հողին ու մարմինը, որոնք իրար հակառակ ու յարկամա՞ն են, ինչպես լորս տարբերը, նա հնարավոր չի համարում մարմինը թողնելով՝ հողու հետ զնալ. և ոչ ոք էլ չի կարող հողու հետ վեր պաշնալ, ասում է նա, քանի որ ժնորա [—հողու] տունը հեռի է: Բացի այդ՝ կենդանի մարդը մի թույլ է՝ և կազմված լինելով լորս տարերթից, որոնք իրար աննման են, մեկմեկու շարկամ են, միմյանց հակառակ ազդեցություն ունին, և մարդս նրանց պահանջին ենթակա լինելով՝ անհրաժեշտորեն պիտի՝ կատարե նրանց, որ է՝ իր մարմնի կամքը: Բեռնեք և հեռեւլալը, որ կա իբրեւ շարունակություն նախորդ քերթվածի:

Հինդ դուռն է ք բաց թողած,
Թէ՛ փակէ՞ որ դող չի մտնէ՛:
Ըզդողըս ես տանէս ունիմ,
Որ զդրոներս ի բաց կու պահէ:
Շաղուած ես ի լորս իրաց,
Այդ ցնդ շէնքդ ամուր չի լինի.
Օգրն հողուն ի՞նչ նըման,
Հուրն ու ջուրն են խիստ ատենի.
Ի հակառակէ ատեղծած,
Եւ եղած ես մարդ կենդանի,
Վերնայ օդն ու հուրն ու ջուրն,
Եւ մարմինըդ դառնայ փոշի:

Այսպես ուրեմն, մարդու մարմինն ունի հինդ զգայարաններ, որոնց դռները բաց է թողած և կարելի չէ փակել և կտրվել աշխարհից. մարդս ուղի լուղի բավարարություն պիտի տա մարմնին, որը կարելի չէ մեռցնել հողին փրկելու համար: Այսպիսի աշխարհայեցությամբ վերջ է տրվում հին կրոնական քնարերգությանը, որ միստիկական բնավորություն ուներ և արտահայտվում էր անվերջ ողբասացությամբ ու մարմինը մեռցնելու Էիզեբորդ: Եվ եթե այժմ էլ բանաստեղծը գեռ քարոզում է մեղքը լալ ու սգալ, այդ ինքն անկարող է անել. դա մի երանելի վիճակ է, որ իրենից շատ հեռու է: Ուստի նա անմիջապես շարունակում է.

Երեմկ ես նորա ասեմ,
Որ զաշխարհս ի սուգ կ'ուզենայ.
Զիր մեղքն ի յիշումն ածէ,

Զօրն ի բուն նըստի նա ու լայ-
Արտասուքն սապոն լինի,
Սնութիւնն ըսպիտականայ,
Թէ չէ՝ օր հարսնիցըն գայ,
Նա հանդերձ հարսին շունենայ:

Ծվ նույնիսկ այս լացն էլ, որ երանելի մարդիկն արել են և անում են, ըստ մեր իմաստաբանի՝ ոչ մի զգուտ չունի և ավելորդ է: Ահա թե նա ինչպե՛ս է արտահայտել այդ միտքը հետևյալ տողերի մեջ.

Մէկ մարդ մի ճուհար ունէր
՝ի ի խելաց շահել չը կարաց.
Զինչ խելքն ի վերայ եկաւ,
Նա՛յ գընաց ճուհարն ի ձեռաց:
Գընաց նա ի վայր նըստաւ՝
Ողորմիկ ու շա՛տ մի իւաց.
Նորա լացն այլ ի՞նչ շահ է,
Երբ գընաց ճուհարն ի ձեռաց:

Վերջապէս՝ փոշիացող մարմինը, որ իր տան դռները բաց ունի արտաքին աշխարհի դիմաց, ամենևին պատասխանատու չէ մեզքի համար. հոգու համալը—գործը, արարքն է այդ, և նա թող պատասխան

Հոգին հողվըտովն անցաւ
Ու զմարմինն ի հողն անխօծց,
Թէ՛ չզմեղքն ես ու դո՛ւ արաք,
Յանդէնն ի՛մ երեսն ամալեցոս:
Մարմինն ի հողուն ի դուրս
Այս խօսօք զհոգին վճարեց,
Ենս հող էի՝ ի հող դարձայ.
Քո ամալն է՝ ըզթեզ բըռեցոս:

Այսպէս՝ մարմինն ստանում է իր իրավունքը: Մրանից հետո մի քաջ էր միայն մնում, որ բանաստեղծը մարմնի գովքն աներ, և մեր բանաստեղծությունը թողնելով իր մօայլ քննվորությունը՝ գառնար լուսաշող ու զվարթ: Բայց Պլուդից չեն մնում այսպիսի տաղեր: Առանց որնէ հիմքի նրան վերադրել են մի սիրտ երգ, որի մասին կխոսվի հետո:

Ուրիշ իմաստակա՞ց ասքեր:— Հովհաննէս Պլուդի անունով երեւման են եկել և ուրիշ ասքեր, որոնք մասամբ գեռ մնում են ձեռագիրների մեջ և լին հավաքված ի մի: Այս ասքերն ունեն ընդհանուր խրատական բովանդակութիւն և մասամբ ժողովրդական առածների և իմաս-

առաջի ասացվածքների բանաստեղծական զարգացումն են իրրե քառյակ-
ներ: Բերենք հետևյալները¹³⁵.

Աւա՛ղ, մեղ հալիլ պիտի
Բայն արնն որ լոյս կու ծագէ.
Շատ կայ ք յարե նըման,
Ի պընչն օձըն կու վազէ:
Գիտուն մարդն յարե նըման,
Խօսքըն լուս պայծառ կու ծագէ.
'Ի անգէ՛տ մարդն օձուն նըման,
Հանապազ ըզմարդ կու խոցէ:
Մարդ կա որ հաղար արժէ,
Հա՛ղար կայ որ մէկ մի լարժէ.
Ան մարդն որ հաղար արժէ,
Անգէտին մօտ փող մի շարժէ:

Վերջին քառյակի առաջին երկու տողը հայտնի ժողովրդական ա-
սած է:

Բազան ի անտառ մորին,
Թէպէտ բու, թէպէտ բազա է.
Ճոհարն ի ծովուն միջին,
Թէպէտ քա՛ր, թէպէտ ճոհար է:
Խելօքն ի յանգէտն ի մօտ,
Միտք արա, թէ քի՛նչ նըման է.
Ժըրազն ի յառչե կուրին՝
Կու վառի, 'ւ ինքըն չի գիտէ:
Խելօքն է ի ծով նըման,
Որ քանի շափես՝ կու տանի.
Անգէտն է ի տիկ նըման,
Փառչ էւէլ լընուս՝ նա՛ պատռի:

Առնենք և հետևյալները վերևում հիշված ձեռագրերից.

Զորս բան առ խըրատ յինէն,
Որ դամէն աշխարհս քեզ արժէ.
Զայլոց մեղք դու մի՛ ջըններ.
Զքոյդ յերակ մըտօքդ անտիճէ:
Զաստուած մօտ ի քեզ դու տե՛ս.
Եւ զմահուդ օրըն դու յիշէ:
Զխըրատս ի սիրտդ տընկէ,
Զքեզ յամէն լարեաց այս փըրկէ:

135 Տպված են՝ Վ. Փափաղյանի ռեզումե. հայոց գրականության աշխատություն վեր-
ջին դրված ռեմունիկներին մեջ, էջ 82 և հետև.

Լաւ մարդ էս նորա ասեմ,
 Որ բանայ գրեցուան զամով.
 Հանցեղ լեզուն գին շունի,
 Զինչ լընուն տուն մի ճոհարով:
 Լեզուն է գործիք բանի,
 Արգարաց քան զհալած ոսկի.
 Զմարդուն է մէկ փերթ ստեղծեք,
 Եւ օձուն է երկու ճըղի:
 Այն մարդն որ երկու խօսի,
 Զմէկըն քաղցր և զմէկըն լեղի,
 Եղբայր է օձին եղեր,
 Եւ զնորա անէծքն ընդունի:

Այսպէս և մի շարք ուրիշ իմաստական ասքեր, որոնք կան Պլուդի անունով¹³⁶, Կան ասքեր ևս, որոնք որոշ ձևագիրներին մեջ Պլուդի անունով են, ուրիշներին մեջ՝ անանուն, կամ երբեմն մի տեղ՝ Պլուդի, մի ուրիշ տեղ նույնը՝ Զրիկի անունով¹³⁷:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՅԻ

1. ԿԵՆՏԱՂՐԱԿԱՆ:— Հովհաննէս Երզնկացուն ժամանակակից է մեր այս անվանի բանաստեղծը, որ նույնպէս, ինչպէս Հովհաննէսը, արտագրութիւն է Երզնկայի և իր շրջակայքի կուստրական կյանքի, որ տեսանք վերնում, նրա կենսագրութեան մասին, ցավոք, գրեթէ բան չգիտենք: Բայց նա քախտավոր է եղել այնու, որ նրա քերթվածները, թվով քսաներկու, մեզ հասել են 1336 թ. Թավրիզում կատարված մի արտագրութեամբ. դրանք վրա ավելացած են ուրիշ երկուսը մի տաղարանից (ի՞նչ և ինչ քերթվածները)¹³⁸: Արտագրութեան ունի հետեւյալ հիշատակարանը. «Բայց գրեցու ասյ ի Թավրէժ ի Դատվազայի Մնչայրանս... Ընդամբ մեղապարտ և դատապարտեալ ոգոյ՝ նուաստ գրչի Ամիրիս՝ մականուն Փօլին Քալայմալ՝ ի Յուսոփայ որդուս՝ Միթուի թոռն՝ ի վալիլումն անձին իւրոյ... ի թվիս 925 (=1336) ի նաւասարթի գրէցաւ այս գիրս, ամէն»։ Կոստանդինի բանքերից մեկն¹³⁹ ունի այս վերնագիրս.

136 Այս ասքերի մի մասը ապագրված է «Պոննէ քաղաք», 1781, էջ քսից, «Բանք գրեանէն և գրեանէն» տառերով տարբեր ձևերով:

137 Տե՛ս Նահապետ Փուլակ, Դիվան, Փարիզ, 1902, էջ 81 և հետ. «Երասական և ալլարանական երգեր», որոնք ապված են Սուտ Փուլակի անունով, և էջ 125—129, «Ես նախագրութեանն», որոնք մեջ եւսի անանուն տաղերից ինը հիշված կան Պլուդի անունով, վերջը՝ Զրիկի անունով, իսկ երկուսը՝ և՛ անանուն, և՛ Պլուդի, և՛ Զրիկի անունով:

138 «Կոստանդին Երզնկացի և յօր քերթվածները», ուսումնասիրութեամբ հրատարակեց Է. Մ. Պետրոսյան, Վենետիկ, 1905: Այս հրատարակութեան մեջ ենթագրաբար վերագրված են Կոստանդինին նաև ԻԳ և ԻԶ քերթվածները:

139 Անդ, ԻԱ, էջ 159:

«Բան Կոստանդնուսայ առ ձեր Հոգևոր եղբայրն Ամիր, Հոգով ի Հոգի՝ ե
տրտէ ի սիրտս. դա սկսվում է այս տողերով.

Պարոն Ամիր, մեր պարծանաց եղբայր և սիրելի.

Ջայս սակաւ բանքս ի կարգի որ վասն ձեր շարտադրեցի,

Աղէկ մարտիկ դի՛ր ու ճանչէ՛, ուժով է բանքս և պիտանի.

Բայց յանդէտ մարդիքն ի մօտ է անպիտան, դառն և լեղի:

Ռուբինդակութիւնով մեր տնտեսական կազմված է իմաստական առքե-
րից, որ բանաստեղծն ուղղում է իր մտերիմ բարեկամին: Սնթաղում
են, թե այս պատրոն Ամիրը՝ նույն Ամիր Փռլինն է, որ Թալիզում իր
համար արտագրել է Կոստանդնի քերթվածները: Թե պարոն Ամիրն ի՛նչ
պարագաներով մեր բանաստեղծի սրտակից «սիրելին» է եղել, այդ
հայտնի չէ: Հավանորեն նա Կոստանդնի հետ միասին մանկութիւնն ժա-
մանակ ունել է մի վանքում, քանի որ բանաստեղծն անվանում է նրան
«Հոգևոր եղբայր», բայց մինչ Կոստանդինը դարձել է վանական, նրա
բնկերը մնացել է աշխարհական: Կարծում են, թե Կոստանդինը կենդա-
նի եղած պիտի լինի դեռ 1336 թ., երբ Ամիր Փռլինն արտագրել է նրա
բանաստեղծութիւնները. բայց այդ կարծիքը հիմնադրված չէ: Միայն
այն ստույգ է, որ Կոստանդնի քսաներկու քերթվածները հորինված են
հիշված 1336 թվականից առաջ: Ապա նրա բանքերից մեկի մեջ¹⁴⁰ մի
ցուցմունք կա հեղինակի ապրած ժամանակի համար. խոսելով կյանքի
ունայնութիւն և մահվան մասին՝ նա գրում է.

Թէ լինի Հոգր փատիշահ զերդ Ղազան,

Զմնայ՝ քանի է ինք սրտով զերդ գաղան:

Այս տողերի մեջ Ղազան դանը (1295—1304 թթ.) հիշվում է այնպի-
սի Անով, որ նա մեռած պիտի լիներ այդ գրելիս: Կնշտնակի՝ Կոստան-
դինն իր այդ բանքը հորինել է 1304 թվականին կամ հետո, հետևաբար
նա ապրել է 13-րդ և 14-րդ դարերի մեջերս: Որ մեր բանաստեղծն իր մի
քերթվածի մեջ անվանում է իրեն Կոստանդնի Երզնկացի, այդ ցույց է
տալիս, որ նա ծննդով Երզնկայից է եղել, կամ թե մանուկ հասակից
սնվել, ունել, կրոնաւորել ու գործել է Երզնկայի վանքերում: Ինչպես
նրա բանաստեղծութիւններից իմացվում է, նա վաղ հասակից արդեն
ցույց է տվել զրական շնորհք: Վանականները կեղծ բարեպաշտութիւնով
ատել, նույնիսկ հալածել են մեր քերթողին այն պատճառով, որ նա աշ-
խարհիկ երգերի մտտովներով կրոնական բանքեր է հորինել: Այլևս ուրիշ
բան չգիտենք Կոստանդնի կյանքից, բացի նրա բանաստեղծութիւննե-
րից, որոնց մեջ տեսնում ենք նրա խոհերն ու զգացումները:

2. Կրօնական և խրատական բանք:— Կոստանդինն իր բանաս-
տեղծական աշխատանքներն սկսել է, թերևէ, իր նախորդներին հե-

140 Անդ. ԺԳ, էջ 130:

տեւելով, կրօնական քերթվածներով, Նրա առաջին (II) երկն, ըստ Ամիր
Փռլինի ժողովածուի, է մի կրօնական գրվածք, իսկապես Ս. Գրքի պատ-
մութիւն բովանդակութիւնը հոտանավորով: Դա մի համառոտ, բայց
ճշակավոր պատմվածք է՝ հետևողութեամբ Գրիգոր Մագիստրոսի և
Ներսես Շնորհալու: Իսկ երկրորդ (B) քերթվածը կրօնական իմաստով
խրատական թրանք է, որ հավանորեն Նրա այս տեսակի գրվածքներից
առաջինն է ժամանակով, Դրա առաջին տունն այս է.

Ահա սկիզբն առնում քանից
և խըրատ տամ հասարակաց.
Իմաստութիւն ձեզ ցուցանէ՝
յով որ հոգոյ աչք կայ ի բաց:
Զինչ մարգարիտ շարեալ յոսկի՝
հանց գեղեցիկ բանն ի մըտաց,
Բայց անգիտին ուինչ թուի
դինչ մարգարիտն ի մէջ խոզաց:

Ամբողջը մի զովք է ոչ թե ժաշխարհիսն կամ սերկրավոր իմաստու-
թեան, ալ սերկրավոր իմաստութեան կամ աստվածային գիտու-
թեան, որի հիմքն է սերը.

Ով սէր շուքի իր հաւասար,
որ գիտութեան հիմն է դրած,
նա՛յ զգիտութիւնն աստուածային
հրպարտ հոգով իսկի լգիտաց.
Հանց տես թէ հիմն ի վերայ շրոց
կայ անհաստատ իրք մի շինած:

Կոստանդինն երկրորդ թրանքը հորինել է ըստ երևութիւն այն ժա-
մանակ, երբ իր կրօնական ուխտն է արել. նա քարոզում է լսիրել այս
աշխարհս, անցավոր բաների նստից լցնալ, և վերջը խնդրում է աստու-
ծուց, որ իրեն բաշխե երկնավոր պարգևը.

Տէ՛րըդ վերին, փ քէն խընդրեմ,
զըթա՛յ ի յիս, հայր ողորմած,
Եւ բաշխէ՛ անարժանիս
քո երկնային մեծ պարգևաց.
Որ արբիմ շնորհօք Հոգոյն,
կենամ սիրովն երկնաւորաց.
Եւ թողու՛մ զայս անցաւորս
ես Կոստանդինս յինչէն¹⁴¹ ի բաց:

141 Արտագրողն իր անունն էլ ավելացնելով՝ այս տողը դարձրել է՝ «Եւ Կոստանդինս
և զԱմիրս ոք գրեցի ի մենէ ի բաց»: Արտագրողի ավելացրածը զգուր ձգելուց հետո՝ «ի
մենէն» բառն էլ, որ թողել է հրատարակելը, բնականաբար դարձնում էմ գլխնէն:

Այս երկու քերթվածներն էլ սովորական են իրենց բովանդակութ-
յամբ, բայց գեղեցիկ են իրենց պարզութիւնով եւ կենդանութիւնով: Կան
տողեր ու տներ, որ հիշեցնում են բանաստեղծի մյուս երկերը. ինչպես,
օրինակ, երկնքի ստեղծագործութիւնն պատկերը.

Կամարակալ խորանն երկնից
առանց սինի հաստատեցան,
Գեղեցկութիւնք վայելչապէս
զարմանալի յօրինեցան.
Մաղկեալ երկինքն աստեղինօք՝
լուսաւորօք զարդարեցան,
Ի գիշերոյ զարդ աստեղացն
և ի տունդհան արեգական:

Ա, էջ 64

Գեղեցիկ տներից է, օրինակ, և հետևյալը.

Լըսէ՝ քեզ բան խիստ գեղեցիկ,
ծաղիկ քաղած է ի բազմաց,
Անմահութեան պըտուղն է սայլ,
որ է յերկնից յաշխարհս իջած.
Թէ զնորայ ճաշակն առնուս,
կամ սէք ունիս՝ և ես ժարաւած,
Այլ չհաւանիս անցաւորիս,
թողուս զամէն աշխարհս ի բաց:

Բ, էջ 75

Այս երկրորդ օրանքին մեջ արդեն Կոստանդինը ցույց է տալիս իր
հակումն և ընդունակութիւնը հորինելու կարճ ու կտրուկ իմաստակա-
նաբեւ, որոնք կարող են իբրև առածներ գործածվել, ինչպես հետևյալ
տունը, որ կազմված է շորս այդպիսի խոսքերից.

Քանի հասնիս ի մեծութիւն՝
խոնարհ կացիր մարդկան ու ցած,
Որչափ լինիս դու իմաստուն՝
շատ մի՛ խօսիլ մէջ անգիտաց:
Աղքատին մի՛ բարկանալ,
որ լըգատէ գրեզ աստուած:
Քո ընգերին հոր մի՛ փորել,
Թէ չէ՝ այն քե՛զ կայ պատրաստած:

Բ, էջ 75

Ուրիշ գրվածքների մեջ էլ նա կերտում է իմաստական ասքեր, որ
մենք կտեսնենք իրենց տեղում. բայց մեր բանաստեղծի առաջին գրա-

կան մեծ արժանիքը դրանց մեջ չէ, այլ այլաբանորեն հորինված կրօնական երկերի մեջ:

Գ. Արեգակի, գարնան և լուսու քանցքը:— Սրանց մեջ արդեն տեսնում ենք կյանքի ու ընդթյան սիրահար շնորհալի բանաստեղծին, որ հետևող չէ ուսուցական քերթութիւններ, նա յաւաքել է Գրիգոր Նարեկացու այն տաղասացութիւնը, որ հոգնոր իմաստով, անձնական շեշտերով երգում է ուրախ, լուսավառ ընդթյունը, Կոստանդնի այս կարգի քերթվածները շատ տվելի մաքուր ու շինչ են, սուտի և ավելի գեղեցիկ են, քան իր վարպետ Գրիգոր Նարեկացու Մենդյան ու Վարդավառի տաղերն իրենց մթնոլթիամբ և բառախաղերով: Արդարեւ, այլաբանութիւնը դեռ մեկ-մեկ ազդում է մտքի պայծառութիւն վրա, բայց Կոստանդնի արվեստն ավելի զարգացած է, բանաստեղծն ընդհանրապես խուսափում է այլաբանական անհատականութիւնից: Նա կամ բավականանում է վերնադրի մեջ միայն հիշելով, թէ իր բանքը հողեր է, կամ իր երկի անկախ մեկնութիւնն է անում՝ զննելով այն իր գրվածքի վերջում, երբմէն էլ մեկնութիւնը դնում է իբրեւ առանձին քերթված, այնպես որ բուն բանքը մնում է իբրեւ մի մաքուր օրհնեզօրութիւն քնարայն. կամ թէ այնպես է հորինում, որ կարելի է և հոգևոր, և մարմնավոր նշանակութիւն հասկանալ այն: Նա ընդթյունից անում է ընդհանրապես մեղմ ու քնքուշ տեսարանները, արեգակի ծագումը՝ լուսով ու գույնով, դարնանային կյանքով ու բուրմունքով լցված: Այս տեսակի երկերի մեջ է ահա ամենից ավելի փայլում Կոստանդնի բանաստեղծական տաղանդը: Ուրովհետեւ նա կյանքի և ընդթյան էութիւնը գտնում է լուսի ու սիրտ մեջ, ուստի նրա երգերի մեջ լուսնն ու սերը դարձն են մի տեսակ պաշտամունքի առարկա. նա ներդրում է արեգակի ծագում, դարնան գալուստ, լուսն ու սեր, հորինելով մեկը մյուսից գեղեցիկ քերթվածներ (Գ, Ե, Զ, ԺԱ, ԺԵ, ԺԶ): Հետևենք նրա այս երկերին այն կարգով, որով դրված են Ամիր Փոլինի ժողովածուի մեջ:

4. «Գարուն»:— Նրբորդ քերթվածի վերնագիրն է՝ «Այս գարունն զգալուստն Քրիստոսի պատմէ առակօք»: Այլաբանական լինելը շատ պարզ է և ինքը բանաստեղծն իր երկի երկրորդ մասի (վերջին շորս տները) ակզբում գարնայա այսպես է հայտնում այդ մասին.

Ըզսակաւ բանքըս որ գրեցի

Վասն գարնան եղանակաց,

Եւ յիշեցի օրինակաւ

ըզյարութիւն դատաստանաց...

Կենդանակի՝ գարնան նկարագիրը նա անում է իբրեւ օրինակ Քրիստոսի, ինչպես ասում են, ժերկրորդ գալստեանն, երբ մեռելները հարութիւն պիտի առնեն և դատաստան լինի ըստ քրիստոնեական հավատքի: Այս երկի մեջ դեռ զարգացած չէ Կոստանդնի արվեստը: Քանի որ գատաստանի ժամանակ արդարները պիտի ցնծան, իսկ մեղավորները պի-

տի լան, ուստի բանաստեղծը գարնան նկարագիրն անուամ է նկատի ունենալով և՛ սրանց, և՛ նրանց, Թայց երբեմն մեղավորների մասին խոսելիս հեռանում է գարնան պատկերից և հետևում հանրածանոթ կոռւնկան պատկերացումներին, որ կապ չունին գարնան հետ. ինչպես, որինակ, քերթվածի առաջին տան ներքևում ընդգծված սողների մեջ.

Գարունն լինի ուրախութիւն
և ջրնծութիւն երկրածընաց.
Կիսոց մի գայ մեծ հարսանիք,
կէսի մի յերկաք, ի բանդ 'ւ ի լաց:
Ոմանք ծաղկին գերդ բուրաստանք.
գոյն ըզգոյնով ջնդջ ի ցնդաց.
Ոմանք գգեհուն մեծ տըրտութիւն
և շառշառին ըզհետ դիւաց:

Մյուս տների մեջ երկակողմանի նկարագիրներն առնված են պարտեզի և արտ ու բուրաստանի գարնանային աշխատանքից և բուսականութիւնից. այստեղ էլ, սակայն, մեղավորների համար բերված չոր ու անպիտան, լավ պտուղ չափող ծառերը, փուշն ու հրով այրելը, որ կըրկընված են տարբեր տների մեջ, ինքնուրույն գոյութեւ չեն, քայց հարմարվում են գարնան եղանակին, ինչպես հետեւալների մեջ.

Մառքն ծաղկա ի վեր փռլեն,
թէ կան դաւար ու չեն մըսած.
Ով ու քնդրի շուր 'ւ անպիտան,
նոքայ ճրճոյն են պատրաստած.
Բուրաստանքն զարգալին,
վարդն փրոշ տերեւ շարած,
վասն այնոր ինք թագաւոր,
որ համբերէ ի մէջ փըշաց:

Կամ հետեւալ տների մեջ.

Ահա եղև յորդոր գարուն,
յայտնեցաւ զինչ կայ պահած.
Ու զինչ ծածուկ գործք ու սերմանք.
զիրենք ցուցին յամէն ցնդաց:
Ահա բարի սերմանահանքն
հընձեպցն զպտուղ բարեաց.
Իսկ սերմանողքն շառաւրեան
ժողովեցեն փռի խոպանաց:
Մառ մի ծաղկել գեղեցկապէս
և լի պըտղով կայ զարգարած.
Եւ մին մի շուր և անպիտան,

յիեմն մահաբեր փուշ կոյ բոսած.
Վասն այնորիկ սուրբն ճեղղէն
ի մի ծառոյ կայ պատճառաւ,
Որ ոչ քերէ պրտուղ բարի,
Նայ հատանէ հառաքակաց:

Բանաստեղծն այս քերթվածի մեջ դեռ շատ անվստահ է շարժվում իր հորինման ժամանակ: Կարծես նա իր առաջին փորձն է անում այսպիսի մի երկ ասեղծելու, ուստի չի խիզախում շատ հեռանալու բնդունված հին ձևերից, և այնպես է հորինում, որ այլաբանությունը թափանցիկ լինի և անհետնեն էլ հասկանալի բուն կրոնական իմաստը, նրանք որ

Ձմարմինքն են զարդարել
զեղեցկապէս ու խիստ պայծառ,
Եւ չեն ի հասկանալ,
մըտօք ճանչիլ բան ծածկարար:

9, էջ 88

Բայց ընայնով քերթողի անհամարձակությանը՝ արդեն երևում է նրա բնախոր ճաշակը և մտածությունը յուրահասուկ գեղեցիկ ձևերով, առանձնապես զարնան հրճվալից նկարագրի մեջ, ինչ որ վերաբերում է արդարներին: Այստեղ պատկերները ոչ թե հարասություն են Ավետարանի, այլ ինքնուրույն դրսեւոր են և շատ թարմ ու զվարթ են, ինչպես, օրինակ,

Ոմանք ծաղկին զերգ բուրաստանք
դոյն ըզգոյնով ցեղք ի ցեղաց:
Մառքն ծաղիկս ի վեր փռչեն,
թէ կան դալար և չեն մըսած:
Վարդն փրոէ տերեւ շարած:

Ծ. «Բանք յերկու դէմս»:—Մեր հին բանաստեղծության գոհարներից մեկն է նրա առաջնայան օրհներգությունը (ե քերթված, էջ 85—88), որի վերնագիրն է. «Բանք յերկու դէմս մտաց տեսութիւնք ի հոգի և ի մարմին. զոր առակօք խօսի այսպէսս: Եւ առակօք խօսիս դարձվածը ցույց է տալիս, որ այդ բանաստեղծությունը հորինված է այլաբանական նմանությամբ, բայց այլաբանությունն այլևս պարզ չէ և, ինչպես հեղինակը հայտնում է, բանքը կարող է և սի մարմինս հասկացվել, թրիստոնյա հաժապացալի վսեմ ներշնչումով ասեղծված լուսաբացի մի նկարագիր է դա, որի մեջ պատկերներն, ամենի ու ամենի հրապարկիչ, հաշորդում են միմյանց: Մենք քանապեսդ ճշտ տեսնում ենք բնության զարթոնքը, լուսազարդ շքեղությունն և կենդանությունն ու շարժումը. միաժամանակ և նրա հետ զգում ենք նրա սերն առ առաջնություն յուսյր և նրա խորագրաց սրտի սքանչացումը, որով նա դիտում է նախ

կենդիշերային արթուն-անքուն լուսատուները և ապա բնության մյուս
գեղերը՝

Զարթի՛ք ի յերազուտ,
բացէ՛ք զաշերտ՝ ով կայք ի քուն.
Տեսէ՛ք մէջ գիշերիս շա՛տք,
որ պահ մի չեն լելի քուն,
Անդադար ի շուրջ փալո՛ղ
կան հրամանաւ մի աստուծուն,
Որ բանիւ զերկինք ի վեր
կամար կապել երես քամուն:

Բանաստեղծը զարթնում է քնից, վեր կենում. երբ երկար գիշերն
անցնում է, տեսնում է՝ լուսինը պայծառ և բազմաթիվ աստղերն՝ տի յիւր
սպասուն՝ զուրգարում են երկինքը: Երեսում են առաջնորդաւ նշանները.
Ժագում է պայծառ լուս-աստղը Արուսյակի¹⁴² (= արեգակի) առաջից.

Մի աստղ ելաւ պայծառ
առջև Արուսեակին լուսոյն.
Ունէր լոյս գեղեցիկ
քան զաստեղացն այլ ցերեպոյն.
Ետեն ըզնա լուսին,
և հրաման տալ աստեղնոյն.
Հաւասար ի մայր մտան,
նուագեցան յիրենց լուսոյն:

Ով ահա դուրս է գալիս ինքն արեգակը.

Զերեսս երկնից ելաց,
երբոր ծագեց լոյսն արեւուն.
Տղայ երեւցաւ,
քաղցր կոչի իրենն անուն.
Հոգի հաւասար երես շատող
պայծառ լոյս աշերուն,
Ով սիրով մընաց լուսոյն
Արուսեակին առաւօտուն:

Մանուկ արեգակի ծնունդը, բնության մեծասքանչ խորհուրդն և
երևույթը, հոգի և կենդանութիւն է բերում, ամեն կյանքի աղբյուրն է:
Ամեն բարիք պարգեւում է մարդուս արեգակի ծագելիս: Առաջնորդան
լուսարացին է, որ աստված, սիրով լցված, քաղցր է նայում արարած-
ներին. և վերջապէս լուսածագի ժամին է բուրում անմահութեան անուշ

¹⁴² Քրիստոնեական կրօնական լեզվի մէջ «Արուսեակ» է կոչւում հաճախ արեգակը.
որ և իբրեւ Ժամրդ՝ նշանակում է Քրիստոս:

հոտը, որ հարքեցնում է հողինները, և մահը համիտենական կյանքի փոխում. բանաստեղծը այնպես հափշտակված է առավոտով, որ տենչում է, որ կյանք, խնդաթյուն, սեր լինի իր համար առավոտյան, նույնիսկ իր մահը:

Ձ. «Բանը լաղազս Արնգակամ արդարութեամբ»։— Պակաս գեղեցիկ էլ և այս բանը (Զ, էջ 88—90), որի վերնագրի մեջ հեղինակը դարձյալ գրում է. «զոր առակօք խօտիս, և թե ալլարանությունը՝ վերաբերում է Քրիստոսին, սոր և ժագեաց ի հօրէ միածին որդին»։ Այստեղ էլ նկարագրված է զարնան արեգակի ծագումն ու նրա սքանչիլի ազդեցությունը քնության ալլ և ալլ կողմերի վրա: Առաջին անգամ մեր բանաստեղծության մեջ խանդավառ սգով, արագաթուխ՝ սլացքով ու թափով փառաբանվում է արեգակը կարծես մի արեալաշտից. լույս ու քերմություն, խավարի հերքում, ձմեռնային սառնամանիքի վերացում և աշխարհի ցնծություն:

Ահա՛ դիշերս էանց,
նըշան նդե առաւօտուն.
Ասագրն պայծառ ծագեց,
աւետաւոր նրեկ լուսոյն.
Խաւարըն հերքեցաւ
ու ցրեծացաւ աշխարհս ամէն,
Երեւեկ ետուն միմեանց,
որ արժանի եղեն լուսոյն:

Զինչ որ ի բանդ կային
և ի խաւար ի խոր զընդան,
Նայ լոյս ծագեց նոցայ
յարեգականն ի մեծ լուսոյն¹⁴³.
Երկիրս էր սառն ու պաղ,
ու ցուրտ ձըմեռն ու հողմալին,
Ահա նդե պարուն
յարեգականն ի մեծ լուսոյն:

Սկսվում է քնության մեջ կենսաբեր շարժումը— ծիլ ու ծաղիկ, քրեթի խաղացում և ընդհանուր կենդանացում.

Երկիր կենդանացաւ,
ու լեռն ու դաշտ կանաչ բուսան.
Պաղիկ բերին ծառերն
յարեգականն ի մեծ լուսոյն.
Պաղկունքըն զարդարին

143 Ըմբռ. «Ժողովուրդ որ ետէր ի խաւարի՝ ետես լոյս մեծ. և որոց նստին յաշխարհին և ի օտուրս մահու»։ Ըսյա ծագեաց նոցա»։ Ավետարան ըստ Մատթ. 9, 16:

ասզգի ասզգի գոյն ըզգոյնով,
 Փրոփ վարդըն կարմիր
 յարեգական ի մեծ լուսոյն,
 Անկունքոտ յորդորին
 ու ջընծալով յաւաջ խաղան,
 Գետեքո ոլոր կապին
 յարեգական ի մեծ լուսոյն,
 Զինչ որ կայ արարած,
 ու անհոգի մեռած կային,
 Ահա՛ կենդանացան
 յարեգական ի մեծ լուսոյն:

Բանքի այս առաջին մասն անցնելու է հորինված, որ կարծես թե դրա հնչյունակը մեր ժամանակի մի բանաստեղծ լինի, որ հիացած է արեգակի հրաշակերտ զորութեամբ և երգում է այն առանց որևէ «ծածուկ» մտքի: Բայց դա Քրիստոսի ծննդյան մի գովք է այլարանութեամբ:

7. Խորհրդավոր Ըմանութեան օրինակներ:— Ինչի՞ց է բխում Կոստանդնի այս հիացական խորասուզումն առավոտյան լույսի մեջ և քննութեան այսպիսի վեճ ըմբռնումը, որ ունի նա, կամ այն, որ լույսն ու սերը նրա համար մի տեսակ պաշտամունքի առարկա են:— Անշուշտ այդ ծագում է ամենից առաջ ընտելյան լուսագեղ տեսարանի տպավորութեանից: Բայց այդ չէ միայն: Նա ներշնչված է նաև քրիստոնեական սիմբոլիզմից, որով Քրիստոս կոչվում է «լույս», «արեգակն արդար», «արդարութեան արեգակ»: Սրա լույսն՝ սիմանալի լույս, և Քրիստոսի ծնունդն ի հօրէն (ըստ զավանութեան) ասվում է նաև «ծագումն ի լուսոյ», Քրիստոս՝ «լույս ի լուսոյ»: Այսպես երգվում է Արևազալիս և «Քրիստոսի Մենզեան» շարականների մեջ:

Լոյս, ի լուսոյ ծագումն, արեգակն արդար...
 Ի ծագել լուսոյ առաւօտուս
 Մագնա ի հոգիս մեր զլոյս ք իմանալի:

Կոստանդինն, ինչպես և իր հօգևոր հղբայրները, շատ անգամ երգել են Քրիստոսի համար նաև:

Ի հօրէ ծագեցար
 Լուսաւորել զարարածս,
 Արդարութեան արեգակն...
 Լոյս ի լուսոյ ծագել ի հօրէ
 Եւ լուսաւորեաց ըզտիեզերս,
 Մենեդ յանրատուեր լուսոյն...
 Լոյս ի լուսոյ զմեզ լուսաւորեա...
 Լոյս ի լուսոյ ի հօրէ առաքեցար...¹⁴⁴

¹⁴⁴ «Մարական», էջ 106, 1801, էջ 587, 24, 27, 672, 60:

Այս խորհրդանշանները, սխմբուները, ինչպես արդեն տեսել ենք, հանգեցու մեջ մտել էին արեգական աստված Միհրի (Միթրա) կրոնի ազդեցությամբ¹⁴⁵, Արդ Կոստանդին Նրզնկացիին սույն հին նյութն է երգում, նույն ժամանակ աստվածը, կամ աստվածային լույսը և արդարության արեգակնային ու Նրա ծագումը. բայց մինչև հոգևոր երգերի մեջ, որպեսզի ֆիզիկական լույսն և ֆիզիկական արեգակը չհասկացվին, ավելիացնում էին ժամանակի և արդարա կամ արդարությունն բառերը, Կոստանդինը մի փոփոխություն է անում. նա այս որոշիչները դուրս է ձգում և առնում միայն լույս և արեգակ, Նրա երգն, ուրեմն, այնպես է հորինվում, որ թվում է, թե նա փառաբանում է իսկական ֆիզիկական արեգակն և նկարագրում է լուկ առավոտյան լույսի ծագումն իր շարժումներով և ազդեցություններով, բայց իրապես այդպես չէ, Ֆիզիկական լույսից և արեգակից ասացած Ներշնչման հետ իշխում է և հավատացյալ քրիստոնյայի զգացմունքն առ արդարության արեգակն և սրտ ծնունդը, այնպես որ նա երգում է միաժամանակ և՛ նյութական, և՛ ժամանակի լույսերը, և՛ ֆիզիկական արեգակը, և՛ արդարության արեգակը կամ, ինչպես ինքը հեղինակը նշոտ բնորոշում է, նա ստեղծում է թմանք յերկու դեմս մտաց տեսությունք ի հոգի և ի մարմինք, Եվ այս է տալիս Նրա բանաստեղծությանն առանձին ուժ ու վսեմություն, «Արդարա, ժամանակի բառերի բացթողումով արձակվում են մեր կրոնավոր բանաստեղծի թևերը. նա արդեն ազատ թռիչք է գործում իր սիրած բնության մեջ և երգում լույս, աստված, արեգակի ծագում, ուրախ զարուկ, այնպես, ինչպես ինքն զգում ու հասկանում է բնությունը, Դրա հետևանքով և մեր բանաստեղծությունը ձեռք է բերում մի նոր անկախ գրական տեսակ—բնության փոփոխություն, որի մեջ մեծ տեղ են բռնում բանաստեղծի անձնական տպավորությունները բնությունից ու զգացումները մի ներքին քերթության և կրոնական խորհրդավորությամբ կամ խորհրդականության մեջ, ինչպես ասում էին հնեերը, Եթե լուսո և արեգակի հին պաշտամունքը քրիստոնեական հավատքի մեջ մտել էր իբրև մի սխմբու—խորհրդանշան միայն, այժմ այդ սխմբուը մեր բանաստեղծության մեջ դառնում է արդեն ինքնուրույն երգի նյութ, Բնության երգն, ուրեմն, ոչ իբրև մի հատված ուրիշ մեծ երկերի, ինչպես Ներսես Շնորհալու ընդհանուր ողբի մեջ է, Բայց այսպես գոն Կոստանդինի քերթվածների ու մեկնական մասերի մեջ:

Անգետ մարդիկը, որոնք խելամուռ չեն կրոնական գրականությանն ու հավատալիքներին, հեշտությամբ միայն ֆիզիկական նշանակությամբ կհասկանան Կոստանդինի այդպիսի քերթվածները, և այդպես հասկացողներ եղել են թե՛ Կոստանդինի և թե՛ մե՛ր իսկ ժամանակակիցներին:

145 Մ. Արեգյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, «Հեղինակը երգե հատվածի երկրորդ գլուխ» և թվանշանությունը, պարագրաֆ 6. «Միհրի կրոնի ազդեցությունը», էջ 503 («Երկեր», հատ. Գ, էջ 518):

Կոստանդինը, սակայն, այդպես չի մտածել, այդ երևում է ոչ միայն վերնագիրներին, այլև քերթվածներին մեկնական մասերից. Ահա թե ի՞նչ է գրում նա վերևում բերված արեգական քանքի շորքերդ տնից հետո.

Ե՛ր չէք ի դարմանալ
ու կամ հարցունք ինիլ բանիս,
Վասն այս արեգականս
և իր պայծառ լցեալ լուսոյն.
Այս նո՛ր ծագեց մեզ լոյս
քան զարեգակն, ու ա՛յլ պայծառ.
Զինչ լուսաւորք կային՝
ծառայ կոչին այն մեծ լուսոյն:

Ինչո՞ւ չեք դարմանում ու հարցնում, թե այս ի՞նչ արեգակ է պայծառ լուսով (որ երգում է ինքը), ի՞նչ նոր մեծ լույս է ծագել արեգակի պես ու նրանից էլ ավելի պայծառ, այնպես որ բոլոր լուսավորները նրա ծառան են,— այսպես հարցնում է քանաստեղծը և անմիջապես պատասխանում.

Ի լուսոյն ի սկըզբանէ
չի լուսով շառաիղ ծագեց,
Լոյս ի լուսոյ ծնաւ
յարեգական ի մեծ լուսոյն,
Այս լոյսս ի յայն լուսոյն,
որ ինքն է տէր ամէն լուսոյն,
Ու թագաւոր կոչի,
ամենուն լոյսն ի իր լուսոյն:

Քանաստեղծն այստեղ քառախաղ չի անում, այլ ընդունված բանաձևով և շշատավիդիչ օրինակով խոսում է քրիստոնեական դավանանքի մասին և բացատրում, թե իր երգած լույսը, և՛ ամեն լույս, և՛ ամենի լույսն աստվածային լույսից է. (արգարության) արեգակի մեծ լույսից, և սա էլ աստվածային հայր աստուծո լույսից թի սկզբանէս ծագած մի շշատավիղ (նառաքյալ), ինչպես ընդունում և բացատրում էին դավանաբանության մեջ, Որ քանաստեղծը լույսն ասեւրով հասկանում է մտավոր, հոգեոր լույսը, կամ քրիստոնեական կրոնի լույսը, այդ պարզ երևում է այս 2 բանքի վերջին երեք տներին. ոչ քրիստոնյաները, որ չեն հավատում թարեգական և իր լուսոյն,—ասում է նա,—սուրեն մասերն լուսոյ յարեգականն ի մեծ լուսոյն, իսկ ինքը Կոստանդինը փափաղում է, որ լուսավորվի թարեգականն ի մեծ լուսոյն: Բայց որ նա գրում է, թե ամեն լույս և ամենի լույսն աստվածային լույսից է, պետք է հասկանալ նաև ֆիզիկական արեգակի լույսը, քանի որ այն էլ ծագում է աստուծուց, բայց, հարկավ, ոչ իբրև աստվածային լույսի մի մասն, իբրև նրանից

ծագող մի «շահաւէի» (ճահագայթ), այլ իրրն աստուծու «արարած»¹⁴⁶ լույս:

Կոստանդնի քերթվածները, աստենճնապէս Ը-ն ճիշտ հասկանալու համար կանգ առնենք և հետևյալի վրա: Լուսածագն, առաջնորդան արեգակն ու զարուհը հեթանոսական ժամանակից ի վեր կապված են նոյն նաև մի ուրիշ համատարիքի հետ, այն է՝ մեռելների հարուժյունը պետք է լինի գարնանն արևածագին: Միազգեղական հարուժյունը վախճանական արշալույս է, մինչդեռ վեղալական արշալույսն ամենօրյա հարուժյունն է: Ըստ հայ ժողովրդական հավատքի՝ արշալույսն ամեն օր կրկնվող հարուժյուն է միաժամանակ և հողիների դատաստան, որից տարերք է վերջին դատաստանը: Հավատում են, թե ամեն օր արևածագին բացվում են երկնքի դռները և ինչպես հին իրանական հավատքով՝ լուսո աստվածը, որի աթոռն է արեգակը, այդ դռների առաջ դատաստանի է նստում, իրանացիների համար առաջին դատավորն է Միթրան, առաջնորդան արեգակի աստվածը, ըստ հայ ժողովրդական հավատքի՝ Քրիստոս, որ հարկավ քրիստոնեական ժամանակում փոխանակել է հեթանոսական աստուծուն: Դատաստանից շետո արդարները գնում են անմահության անուշակ դրախտը¹⁴⁷: Այս համատարիքը մինչև մեր օրերը կենդանի մնում էր մեր ժողովրդի մեջ և արտահայտվում է նրա լուսաբացի ժողովրդական ազգայնների մեջ: Սրանցից հանրածանոթ է հետևյալ հիմնը, որ անշուշտ գալիս է շատ հին ժամանակներից.

Լուսացա՛վ, լուսացա՛վ,

Լույսն է բարին,

Միտն է ծառին...

Երկնքի դռները բաց է.

Ոսկի աթոռ դրած է.

Քրիստոս վրդան նրստած է.

Լուսավորիչ կանգնած է,

Ոսկն գրորիչ քրոնած է.

Մեծ ու պըստիկ գրքում են,

Արդարները խաղում են,

Մեղավորները լալում են:

Լուսացա՛վ, լուսացա՛վ:

¹⁴⁶ Գիտամք այստեղ այսքան կանոններ ասում այս խնդրի վրա, որովհետև անճաշ և անժուռ կերպով հրատարակել են և ուղղործել են, թե Կոստանդնի քերթվածներով իր հանդիսանում է պալեոթիստ: Այդ մարդկը կամ պալեոթիզմ լին հասկանում, կամ անտառությամբ բարձրացնել են ուղտ մեր հին բանաստեղծներին: Այդպիսիների տանջով՝ Ձերկի համար աստվածը գոյություն լուսի, նա թաթիստ է: Կոստանդնի քերթվածներն, անգամ Գրիգոր Նարեկացին պալեոթիստ են... Առանց այդպիսի կեղծիքների էլ մեծ է մեր հին բանաստեղծների փառքը:

¹⁴⁷ Մանրամասնություններն և աղբյուրները տե՛ս Մ. Աբելյան, Հայ ժողովրդական հավատքը. Dr. Manuk Abeghian, Der armenische Volksglaube, Leipzig, 1899, էջ 19 և հետև.

Այս հին համայնաւիթն ևս իր կողմից ազգն է Կոստանդնի արեգակի ու զարնան երգերի վրայ: Մենած ընտթյունը վերականգնանացնող զարու-նը դարձն է մի խորհրդավոր օրինակ ոչ միայն Քրիստոսի ծննդյան հա-մար, որով աշխարհւս, ըստ համայնացլալնների, ստացել է մի նոր հոգեւոր կենդանութիւն,— այլ և Քրիստոսի տերութեան զաւստյան և մեռնիների հարութիւն, երբ և դատաստան պիտի լինի: Դրա համար և Կոստան-դինն, ինչպէս տեսանք Գ քերթվածի մեջ, այդ երգում է զարնան պատ-կերով և վերնագիրն էլ դնում է. «Այս զարունս զգալուստն Քրիստոսի պատմէ առակօք»:

Նա զարնանային առավոտյան լուսաբացի պատկերով երգում է երկրի կենդանացումը Զ քերթվածի մեջ, ըթն վերջինս հասկացվում է Քրիստոսի ծննդյան համար, նրա Ե քերթվածի մեջ՝ «Բանք յերկուս-դէմս», շատ կտորներ հարութիւնն են ակնարկում, և կարող են այսպէս էլ հասկացվել, ինչպէս են հետեւյալները.

Հոգի հաւար երես,
շատոց պայծառ լոյս ալերուն,
Ով սիրով մընաց լուսոյն
Արուսակին առաւօտուն:
Քաղցր է ծընունդ լուսոյն,
երանի տամ հս այն մարդոյն,
Որ բաժին ինքն ունենայ
ի յայն լուսոյն առաւօտուն
Թէ դուռն կայ երկնից
պարզաւորու մի աստուծուն,
Ի ծագել արեգականն
ի մեզ բացվի դուռն բարոյն:

Կամ հետեւյալները.

Թէ անուշ հոտ կայ բուրել
ի կե(ա)նք փոխէ զդուռն մահուն,
Են շատոց հոգի հարբած
յանուշ հոտոյն յառաւօտուն.
Թէ անմահական սէր կայ՝
Որ հոգի տայ հոգեւտուն,
Իմ բաժին սէրն ու հոգին
խառնել ի սէրն առաւօտուն:
Թէ ինձ կեանք կամ խընդութիւն
բաժին կայ ի դուռն ի Սիրուն [= աստուծոյ],
Մէկ պահու սէրն ի սրբալէ՝
Թող լինի ինձ յառաւօտուն...

Շատ ու թափանցիկ են մանավանդ այս տողերը.

Ով կամի սիրով լինիլ
 ինքն յարութեան որդի լուսոյն,
 թող խընդրէ ի յայն Սիրոյն [= Հիսուայից],
 որ ինքն յարեալ առաւտտուն,
 ի Սիրուն սէր յաւելու
 սիրով զընալ տունն ի Սիրուն [= աստուծոյ]:
 'Ի ով Սիրոյն ինք հետեի'
 հասնի սիրովն առաւտտուն [= հարութեան առաւտտուն]:

Եվ վերջապէս այս վերջին տողերը շատ պարզ կերպով ակնարկում
 ան, որ Կոստանդին երգած առաւտտու խորհրդարար վերաբերում է նաև
 հարութեան արեգակի ծագմանը: Այսպէս է իր համար ազոթում մեր
 բանաստեղծը:

Տէ՛ր, զըթա՛յ լիս ի ծառայս,
 և տուր բաժին ինձ յայն հոգոյն,
 Որ շատոք ին ցանգացել,
 բայց քիչք հասան առաւտտուն...
 Խընդրեմ ի քէն, տուր ինձ
 սէր ի սիրուն առաւտտուն:

8. Վարդ ու սոխակի ալարանակամ սիրավայր և սիրտ գովարա-
 ւութիւն:— Մեր բանաստեղծը, որ լուսի սիմբոլիզմից անցնում էր ա-
 րեգակի և լուսի երգերին, ինչպէս վերեւում բերված կտորներից կարելի
 է տեսնել, լուսի հետ անհրաժեշտորեն սեր էլ էր երգում, քանի որ քրիս-
 տոնեական աստվածը ոչ միայն Մկրտչա էր, այլ միանգամայն և սիրտ
 աստված և Սէր էլ կոչվում էր: Նա հավատում էր, որ ինչպէս աստվա-
 ծային լուսից է սամն լուսա և թամենի լուսը, նույնպէս և Սէրը
 աստուծուց է ամեն սեր. «Ի Սիրուն սէր յաւելու: Աստվածային սիրուց
 է, որ ծագում է արեգակը:

Թէ Տէրն [= աստված] ի յարարածս
 հայի քաղցր ի յիւր սիրուն,
 ծայն պահուն է որ լինի
 նրջան լուսոյն առաւտտուն:

Առաւտտան լուսն, ուրեմն, աստուծու քաղցր աչքից է, և նա քաղցր
 աչքով նայում է իր սիրուց: Ահա թե ի՛նչ հայացք ունի Կոստանդինը և՛
 սիրտ, և՛ լուսի ծագման մասին: Հենց դրա համար էլ նա լուսի երգելիս
 չի մոռանում և սերը: Բայց նա առանձնապէս էլ երգում է սերը, Բնու-
 թեան այս խանդավառ բանաստեղծը, որ իր ներշնչումները բնութիւնից
 ստանալով աստվածային լուսն երգելիս առնում էր ֆիզիկական լուսն
 այլաբանութեամբ, չէր կարող իր կրոնական բանքերի համար լռելով
 աստուծու իմաստով աշխարհիկ սիրու երգերի ձևերից: Եվ իսկապէս՝

Այսպիսի սիրավեպեր և սիրելու «արվեստներ» և օրինակներ չեն առաջ եկել մեր դրականութիւն մեջ, դի մեղնում կլանքի մեջ չի եղել դրանց պահանջն ունեցող արքունիք, սկուրտուազական փերաբերմունք տիկինների հանգնիւլ, Չին եղել և սկուրտուազ ասպետները, այն ժամանակի կիլիկյան քառով՝ «ձիավորները», ձիւտ նույն դարում թաթարական բռնապետութիւնն էր Մեծ Հայաստանում, և հայ ազնվականութիւնն արգին դնայի քայքայում և տնկում էր դիմում, Ուստի մի քանի սիրավեպեր, որ մնացել են մեր հին դրականութիւնից, ոչ վերացական, ոչ էլ ուսուցական բնավորութիւն ունին: Վարդ ու սոխակի սիրավեպն այլաբանորեն կիրառում է ոչ թե իբրև քերտ արվեստ, այլ իբրև մի սիրտ քերթված՝ ընդհանրապես սեր գովերգելու համար:

Արևմուտքում ևս, հարկով, հորինված կան նաև հզոր սիրտ քերթվածներ, նույնիսկ 14-րդ դարում: Բայց համեմատութիւն համար քերտնք այստեղ մի փոքր կտոր իտալական վերամնութիւն վերջին շրջանի, 16-րդ դարի նշանավոր բանաստեղծ Տորկվատո Տասսոյից: Նրա հռչակավոր սկզբնական ծրուագիւմն վիպական քերթվածի մեջ¹⁴⁶ զենքերի շալունի ու շոխդի և արշունհեղ կոտորածների ու մահվան հետ՝ մեծ տեղ է տրված նաև սիրտ քնարական գովքին: Ահա նրա Երջանիկ կղզիների մեջ Երջանկութիւն տաճարը, սիրտ կախարդական ամրոցն իր մարդկային սիրահար զուգով, շուրջը ծաղկող ու պտղող ծառեր, ականակիտ լճակներ իրենց մեջ լողացող սիրատարի ու հրապուրիչ, մերկամարմին ջրանուշներով, Գարնանային զեղծիկ բնութիւն սիրով լցված:

«Սիրավատ թուռնները

Ճոճում են զմրուխտ շվաքարանները,

Եվ իրենց միայն հասկանալի լեզվով

Հառաչում են իրենց խինդ ու վշտի համար:

Այդ թևավորներից մեկը, խատուտիկ փետուրներով մի կարմրակտուց թռչուն, մարդկային ձայնի նման հնչյուններով երգում է վարդի մասին:

«Ահա վա՛րդը, որ պատրաստ է բացվելու.

Որքան պակաս են բացված նրա թերթերը,

Այնքան ավելի հմայք կա նրա մեջ՝¹⁵⁰

Բայց ահա՛ նա փթըթել է մեր առաջ,

Ու փըթթումից հետո իսկույն ծաղկաթափ:

146 Յուլիանո Տասսո (1544—1596 թթ.), Ազատված Երուսղեմի Օգոստոսի եմ ուսու. քաղմանութիւնից. «Освобожденный Иерусалим», поэма Торквато Тассо, перевел В. С. Ливорен, СПб, Տասն և հինգերորդ ու տասն և վեցերորդ երգեր: ՏՃ՝ հատկապես էջ 238 և հետ., 16-րդ երգ, ությակներ 12—17:

150 Հմմտ. հայ գուանական հայրենի՝ «Վարդն բացուած մի՛ օրէլ . . . Վարդըն պուպուկիկ սիրէ՛» . . .

Ի՞նչ այդ այլ ևս այն ծաղիկը չէ:
 Որ գեղունահներն արտում նախանձ էր բոբրոքում,
 Ի՞նչ նրանց կրակոտ պաշտողների հայացքը գրավում:
 Բավական է մեկ որ միայն,
 Որ թառամի ծաղիկը մեր կյանքի,
 Ամեն տարի բնությունը նորոգվում է,
 Իսկ մեր նրիտապարզությունը չի վերադառնում:
 Քաղենք ուրեմն վարդն առավոտյան,
 Օրը կանցնի, և իրիկնադեմին արդեն կըթառամի նա:
 Փաղենք շուտով սիրո ծաղիկն
 Ու սիրենք, քանի կարող են մեզ սիրել:
 «Լաճց երգեցիկ հավքը, և իսկույն
 Օգը նորից լցվեց թռչունների ճովողությունով:
 Աղավախները համբույրենք են տալիս,
 Ի՞նչ ամեն ինչ բռնված է զարնային հրայրքով:
 Ե՛վ կաղնիին, և՛ դափնին, թփերն ու խոտեր,
 Ինքը հողը, գետնի ջրերը,—
 Ամեն ինչ միայն սեր է շնչում,
 Ամեն ինչ անձնատուր է սիրո բուռն իշխանությանը:»

Մեր Կոստանդնի բանաստեղծության մեջ էլ (Քերթված ԺԱ, էջ 110—118) սերը գրված է զարնային թարմ ու գեղեցիկ բնության մեջ, բայց առանց որևէ կախարդանքի ու հավերժարսերի: Ամեն ինչ բնական ձևով է, հարկավ, որոշ այլաբանությամբ— ծաղիկներն աղջիկներն են, և ամենագեղեցիկը վարդն է, որին նախանձում են մյուս գեղունահները, Հավքերը (թռչունները) աղայքն են: Զկա մարդկային սիրահար զույգը, դրա փոխանակ այլաբանորեն բլրույն ու վարդն են սիրահար: Զարգարուն բուրաստանում սիրավատ հավքերը, գեղեցիկ հագնված և ծաղիկների անուշ բուրմունքից հարբած, իրենց սերն են քաղցր եղանակում: Այստեղ էլ սերը ներգործում է բնության բոլոր երևույթների վրա, թափանցում է և՛ կենդանի էակների, և՛ ծառ ու ծաղիկ, անգամ ջրերի մեջ: Ամեն ինչ լցված է սիրով, ամեն ինչ լինում է սիրով և կենդանի ու գեղեցիկ է միայն սիրով:

Միբոլ արեգակի լուսից գեղեցկանում, բացվում, փթթում է վարդը. նրա պայծառ տեսքից ուրախանում են նրիտապարդները ու մոռանում ամեն հոգս ու տրտմություն: Բայց նա ինքը վշտերի մեջ է, քանի որ վաղանցիկ է իր փթթած կյանքը: Ուստի կրակի պես վառվող այդ գեղանի սիրունին իր սիրական թլուրի առաջ բանում է իր սիրատանջ սիրտը և հրավիրում նրան, որ համբուրի իրեն՝ վարդին՝ ու կշտանա սիրով: որովհետև կգան, կքաղեն իրեն,— ասում է նա,— ու բլրույն այլևս չի գտնիլ նրան:

Ահա՛ մեր Կոստանդնի սիրավեպի նյութը, որ էապես նույնն է, ինչ որ նրանից ավելի քան 250 տարի հետո հորինող իտալացի հռչակավոր

բանաստեղծինը: Մեր քերթյաթի մեջ սերը նույնիսկ ալիւի վեհ ու վսեմ է, զի դա հեշտանք չէ փափկութիւնի դրախտում, այլ, ըստ կրոնական հայացքի, բխելով Սեր աստուծուց՝ դարձած է հավերժ կենդանութեան աղբյուր, մի աստվածային ստեղծագործ կենդանարար ու գեղեցկացնող գորութիւն ամբողջ բնութեան համար:

Տեսնենք քնարերից հաստվածներ:

Այսօր եղև պայծառ գարուն,
ցընծան ծաղկունք և յորդորին,
Հազնին ցեղք ի ցեղաց
մանդրուն հաւերն՝ ի հաւն խօսին.
Ի վերայ լերանց բարձանց
զոյն ըզդոյնով ծաղկունք փրօին,
Մածկեն զերեսս երկրի,
ըզլեռն, ըզդաշտ ու զբաղյանին,
Ոն գեղեցիկ փետուր հագել
փոքրիկ հաւերն ի ծաղկոցնին.
Ու հազար դասըս դասով՝
քաղցրածայնեն զանլուսնին.
Հարբել են յանուշ հոտոյն,
ու նստել (են) ի վրա ծաղկին.
Ի սիրու են ըստեղծած,
սէր կայ յիրենք որ կու խօսին,
Բուրաստանք է զարդարած,
ու ցեղ ու ցեղ հաւեր խօսին.
Ու ամէն հաւ սէր ունի
ու շատ հասրաթ ի յիր սըրտին.
Յանդադար քաղցրը ձայնէն
քունն է հատել ի գիշերին.
Ու ամէն հաւ յիր գիմաց
վասն ի սիրուն քաղցրը խօսին:

Ահա թե ո՞րքան ուժեղ է արտահայտել մեր բանաստեղծը թուրք-
ների զարնային հրալրքը—ցանկութեան բոցը: Մաղիկները ցնծում են,
Վարդը դեռ չի բացված. մանիշակի նախածնունդայամբ՝ ծաղիկները—
հորոտ-մորոտ, ձյունծաղիկ, շուշան, նունուֆար, նարգիզ, մաբրենի,
սոսամբ ծաղիկ և ուրիշներ—հավաքվում, խորհուրդ են անում, որ կրտ-
րեն վարդենին, ասելով՝

Որ ոչ գայ վարդըն կարմիր,
ու գեղեցիկ տերև փրօին,
Ու ի նորա պայծառ տեսում
որդիք մարդկան ի մեզ չհային:

Ուրեմն այստեղ փթթած վարդը գեղունիների նախանձն է շարժում,
քանի որ նա է գրավում աղաների հայացքը:

Թլրուլը, վարդի սիրահարը, հանկարծ վեր է կենում ու ձայն տալիս ծաղիկներին, թե վարդը քնից զարթնել է իր կանաչ վրանի մեջ: Վարդը որ լսում է բլրուլի ձայնը, բաց է անում վրանի դուռը, հանում կանաչ կապան և կարմիրը հագնում: Ծաղիկները թառամում են, ուռնիք տերևները թափվում, ուրիշները փախչում, բարձր լեռներն են ելնում. ժամանց ամոթից կապտում ու սուգ են անում, մի քանիսն էլ երկյուղից դողում են ու դեղնում: Իսկ վարդը զարդարում է բուրաստանը. բլրուլը զալիս, նստում է նրա դիմաց և հոյակապ տողերով ամենափիռ սիրո գովքն է անում սքանչացած, ասելով՝

Թէ՛ սՍէր է ծառն ու սէր ծաղիկն,
ու սէր հատուն ձայնն ի ծառին.
Սէր է վարդն ու սէր՝ բլրուլն,
սիրով նըստել (ի) վերայ վարդին.
Սիրով են զոյն ու զոյն
ու գեղեցիկ այն ծաղկերին.
Վասն սիրոյ փոքրիկ հաւերն
ի ծաղկընուն վերայ նըստինս,
նա՛յ բլրուլն ուրախանայ
ու բազմի (ի) վերայ վարդին.
Թէ՛ աշագար բարի զալուն
վարդին՝ ծաղկանց թագսւտրինս,

Վարդն էլ խանդակաթ գմայլանքով պարզում է իր սիրո ազդեցութիւնը և իրեն, և ամենի վրա.

նա՛յ դառնայ վարդն ի բլրուլն
ու պինդ փրուէ զիր տերևներն.
Թէ՛ ժնա ալ եմ սիրու տէր,
ուսկայ սըրտիս մէջն է գեղին,
Թէ շքկար սէր յիմ սըրտիս
ու ես ունի անհոգութիւնն,
նա՛յ ես է՛ր ի կախ լինի
զօրն ու գիշերն ի մէջ փըշին.
Ես սիրո՞վ կամ կենդանի
է եմ զարդարել զիմ տերևներն.
Ու թէ սէրն յիսնէ զատի,
նա՛յ զիս տանի հոգմ ու քամին.
Բլրա՞ւ, մի՞ դու զարմանալ
զպայծառ վարդին գեղ պատկերին,
Զի ով որ սէր շունենայ՝

առ ինք լըկայ գեղեցկութիւնն.
 Զուրբն սիրո՞վ յիս վերանայ,
 որ յարմատոյս առ իս քամի.
 Ի ի լուսոյ արեգականն
 ես ժողովեմ գեղեցկութիւնն.
 Ի յիմ անոշ հոտոյս
 կենդանացան որ զհոտն առին.
 Ի ի յիմ պայծառ տեսու
 ուրախացան ի ի խաղ մըտին.
 Զինչ որ յաշխարհի կայ
 հոգս ու ցրեոր ու տըրտմութիւն՝
 Ի յիմ շնոֆոր տեսու
 փարատեցան երբ դիս տեսին,
 Յով որ սէր կայ յիր սըրտին,
 նա՛յ դիս նորայ կամակ տանին:
 Որ քանի նայ յիս հայի,
 նա՛յ հանդարտի սէրն ի սըրտին:
 Առնուն գիւ և տառին,
 սիրով փրոփն ի մընչիսնին,
 Որ ի յիմ պայծառ տեսու
 ուրախանան ի ըմբեն զգինին:
 Ահայ կա՛մ ես զարդարած
 ի իմ տերննիս զերդ հուր վառին.
 Ու բացել եմ զիմ սըրտիս
 մէջն ի դիմացտ որ է գեղին.
 Ար՛եկ դիս համբուրէ.
 ու կըշտացիր սիրովըտ հին.
 Ահա՛ գան և գիւ քաղին
 ի ալ ոչ զըտնուս ի բաղշանին:

Սիրո այս գովքը 13-րդ դարի վերջերում կամ 14-րդ դարի առաջին քառորդին՝ մեր հին բանաստեղծութիւն մի աննման, մի փարթամ փրթթած ծաղիկն է, որ, թեև այլաբանությամբ, քայլ ալիս գունագեղ ու վճիտ է հորինված, և այնպես պատշաճ է հարմարեցրած իրական կյանքին, որ պարզապես հասկացվում է աշխարհիկ բովանդակութիւնը: Ձեռագրում, որ հեղինակը վերնագիրը գրել է՝ Տրանքս վարդի օրինակաւ զթրիստոս պատմէ՛ս, բնականաբար շատ զմիւր կարելի էր կրօնական այլաբանութիւն համարել այն: Ուստի բանաստեղծն ստիպված է յինում գրելու մի առանձին քերթված (ԺԹ, էջ 119—125) այս վերնագրով. «Մեկնութիւն վարդին համառօտ: Վասն անդիտաց շինեցի. զի կարծէին եթէ մարմնաւորաց էր բանք վարդիս: Ես վասն այն գրեցիս: Այս ժմեկնութիւնս մեշ նա քացատրում է, թե վարդը շիտուս է, Մանիշակը՝ չու-

դան, Բլբուլը՝ Քրիստոսի հարության փողը փչող Գաբրիել հրեշտակը և այլն։ Հեղինակն ինքը թերևս սկզբից հենց մի կրոնական այլաբանական բանք է ցանկացնել հորինել աշխարհիկ սիրու երգի ձևով ու մոտիվներով, բայց նրա գրածն իսկապես աշխարհիկ բանք է դուրս եկել։ Իսկ մեկնությունը, որ հետո ավելացրել է, չի հարմարվում բուն գործին։

Միևնույն նյութին և այլաբանությունն են վերաբերում նաև Կոստանդնի ժն և ժՁ (էջ 132—142) բանքերը, որոնց առաջինի վերնագրի մեջ՝ «Բան գարնան օրինակաւ խորհուրդի Քրիստոս», մի՞ մարմին հասկանալը գրանս, այլ հոգեորո, զգուշացնում է հեղինակը սկզբից, թե ինչպես պետք է հասկանալ իր «ի խոր ծածկեալ բանք», «ծածոկ բանք»։ Այս սիրավեպի մեջ նորանոր կողմերից լրացվում է դարնան զեղազարդ պատկերը։ Դա շերմին, լուսաճաճանչ ու հրեփալից մի հարսանիք է մայր երկրի համար ձմեռային մուսյլ մթությունից և սառած քարացած մեռելությունից հետո, երբ հարավ հողմի փչելով վերանում է ամեն տրամություն և կենդանացած շարժվում, ծաղկում է քնությունը։

Հեզ որոտայ ամբ ցողաբեր,
Կամար կապի լերկինս ի վեր,
Հոսէ յերկիր ահեղ գետեր.
Հասար զերկիր են արբուցել...
Մովըն դըրուրդ առնու սիրով,
Խաղան զեռունք յերկիր՝ ի ժով.
Ակունքս յորդոր դան պաղ ու հով.
Եւ ի քարէն յառաջ բըխել
Ահեղ գոշնն զետերտ լուով՝
Տորդ ի լերունքս ի վայր գալով.
Գան ման ի ման ծաւալելով,
Միրով ի ծովն երես դըրել...
Հաւերբտ դան քաղցըր ձայնով,
Միծեռն ի հետ սաղմոսելով.
Գայ արտուտիկըն կարգալով,
Ջառաւտուն է բարբառել։

Ամեն կենդանի էակ, կապանքից արձակված, տեղից շարժվում է, ծնում և աճում։ Ժողովվում են և ծաղիկները բուրաստանում. վարդը միայն զեռ չի երևում։

Բլբուլն հհաս շաքարբերան,
Անտաբեր մեծ յարութեան.
Վարդին հհար կանաչ վըրան,
Որ գայ բազմի զերդ հուր վառել։

Բայց վարդը ծածկվելով կանաչ կապայով՝ թաքնվում է.

կամով ծածկի ի մէջ փրշին,
Զերդ որ ի յամբ մըտնու լուսին:

Բլրովը աղաշում է վարդին, որ երեսը բանա, բայց վարդը, հակա-
ռակ բլրովի հորդորներին, մերժում է նրա խնդիրը. որովհետեւ, իրեւ մի
ամոթխաժ աղչիկ, լի համարձակվում ազատ երեսն գալ և երեսը ցույց
տալ, քանի դեռ ժամանակը լի հասել, և անգետները բամբասում են:
Վերջիվերջո նա դուրս է գալիս. նրան տեսնող ծաղիկներինց ոմանք դու-
նաթափվում ու սխալում են, իսկ գեղեցիկները շրջապատում են նրան
ու զովում նրա գեղեցկությունը: Ուրախանում է բլրովը, մեծ հրավերք
է անում. գայիս են բլրուները (աղաները) խմբերով. մեծ խնջույք են
անում նվազելով, վարզն այժմ առանց քաշվելու բազմում է նրանց մեջ
և ասում բլրուին, թե նա այժմ որքան կուզե թող գոլի իրեն: Ապա տե-
ղի է ունենում վարդ ու սոխակի մեջ մի զրույց, որով վարդը պարզում
է, թե ինչ է սպասում իրեն աշխարհում—լինել դեղ, վարդաշուր, և բա-
նաստեղծ իրեն դառնալով ասում է.

Կոստանդ, ի խօր ծածկեալ է բան,
Զայս որ առ մեզ տուեր նըշան.
Տօր գոհութիւն անըռական
Այնմ որ կամաւ է խոնարհել:

9. ԱՇԾՑԱԿԱՆ ԲԱՆԱՍՏՆԵՂԹՈՒՅՈՒՆ:— Լուսի ու սիրու, գարնան և
արեգակի սիրահար ցորթողի բանքերը, որոնց պատկերներն առնվում
էին բնությունից և աշխարհիկ երգերից, խորթ և անհաճո են երևում
Նրզկայի վանականներին, որոնք թեպետ սիրով լսում էին Շահնա-
ման, բայց քրթմնչում էին, թե Կոստանդինը մարմնավոր բաներ է հո-
րինում: Կային և նախանձողներ նրա շնորհին: Բանաստեղծը շատ վըշ-
տեր է կրում ստուտ եղբայրներից, որոնք շարախոսությամբ բամբասում
էին նրան: Նա թեպետ և հպարտությամբ արհամարհում էր այնպիսիներ-
ին, որովհետեւ նրանք ժանգոտ և ժանձիտ էին, բայց լինելով գյուրա-
զդաց՝ հոգով շատ վրդովվում է և կռիվ է սկսում նրանց դեմ իր երկերով:
Այդ առթիվ նա հորինում է իմաստակաւ ասեւեհ, այլև անձնակաւ քնա-
նդություններ վշտահար գեղումներով իր խոցված սրտից: Այսպիսով
նա ստեղծում է մի նոր տեսակի քնարերգություն—անձնական բանաս-
տեղծություն, որի համար նյութ են դառնում բանաստեղծի իրեն ապրած
անձնական հանգամանքները, սերն ու ատելությունը, բախտն ու դժ-
բախտությունը, ինչ որ մասամբ արդեն տեսանք Ֆրիկի բանքերի մեջ:
Անհատն ուրիմն ընդհանրությունից անջատվելով ստանում է իր արժեքն
և պաշտպանում ու ցուցադրում է իրեն: Կոստանդի անձնական բանաս-
տեղծությունները կարեւորություն ունեն և այնով, որ բխում են ոչ թե մի
որեւ սոսկ անձնական պատճառից, այլ որ նա սիրում է կյանք, բնու-
թյուն, լույս ու զարուս: Եվ իսկապես կյանքի ու բնության սերը, և արա

համար կրած թախիծն ու վիշտն են կազմում նրա ստեղծագործության, ինչպես և նրա բանաստեղծական հառաչներն ու զանգատների էական կողմն ու հատկանիշը: Եվ դրանով է, որ արժեքավորվում են նրա բան-քերն իր անձնականի մասին, որոնց մեջ նա, իր սրտի ցավերը երգելու հետ՝ պարզում է և իր աշխարհայեցությունը:

10. «Տեսիլը»: Հայացքն իր բանաստեղծության ծագման վրա:— Ը բերթվածը (էջ 97—101) ունի այս բացատրական վերնագիրը. «Ումանք չարախօսն զինէն վասն նախանձու թէ որպէս խօսի սա այսպիսի բան, զի վարդապետի չէ աշակերտել. զի այլ է աշակերտելն և այլ է շնորհքն ի հոգւոյն. զոր ես պատմեմ ձեզ յաղագս տեսլիսն իմոյ, զոր տեսի ի զարմանալի տեսիլ, մինչ ի վանքն կայի հնգեւտասան ամաց, զոր տեսի այր մի արեղակնապագեաւ և յի լուսով»¹⁶¹:

Ումանք չար են հետ ինձ ու նախանձով են յիմ վերայ՝
Վասն իմ գրեհալ բանիս, որ առ մարդիկ երևենայ,
Ասեն, թէ՛ «Ո՛նց գըրէ բան քաղցրահամ ու մեզ կարգայ,
Որ ի մեր միջիս ընդեր կամ համեմատ իւր չլկայ»:
Կոյր են հոգւով աչօք, մըտօք յիմար են անյիմայ,
Թէ տէր ո՞վ է խելաց կամ այս շնորհիս որ առ իս կայ.
Ես եմ աման հողէ, ՚ւ յիս լըցած կայ խաղինայ.
Ձոր ես խօսիմ հոգւով՝ այն մեծ տիրոջն է մանանայ,
Ով գող է այս գանձիս ու կամ նենգով ինձ լինայ՝
Աստուծոյ է հակառակ, ՚ւ ինք դատաստան արնէ նորայ:

Բանաստեղծը չի բավականանում ասելով, թե իր շնորհքն աստուծուց է, և իր եննգ նախանձորդներն աստուծու հակառակ են գնում, նա ան-գետներին այդ հասկացնելու համար՝ գիմում է տեսլի պատկերին, մեղմ ու փափուկ ձևով ստեղծելով մի սիրուն բանք, որի ուրիշ նմանը չկա մեր տեսլական գրականության մեջ: Դա և՛ տեսիլ է, մի վիպական երկ, և՛ անձնական բանաստեղծություն: Նա պատմում է, թե երբ տասնու-հինգ տարեկան մանուկ էր և վանքում ուսում էր առնում, մի գիշեր քնած ժամանակ տեսնում է, որ՝

Մանուկ մի լուսեղէն, յաթոռ նըստել որպէս արքայ,
Նըման արեգական է գեղեցիկ որ լոյս կու տայ:

Մեր մանուկ Կոստանդինը, զարհուրած և առանց հարցնելու, թե ով է նա, երկրպագում և նրանից երեք խնդիր է անում. խնդիրներից վեր-ջինն է՝

¹⁶¹ Այս վերնագրի մեջ, էջ 97, տպված է՝ «աշխատիւն», «զարմանալիս» ասանք «կգրի» բիւ նախդրի, «վանք» ասանք վերջի «ն» հոգի, մինչդեռ նույնը հրատարակչի տուշաբանի մեջ, էջ 11, տպված է անսխալ «աշակերտելն», «ի զարմանալիս», «վանքն»:

Ասցի. «Ես եմ աղքատ, 'ւ յերակ բանի կարօտ կնցայ,
Ենորհէ դաւ այս գերոյս մասն ու բաժին ինձ և ղիլայաւ:

Տեքք շնորհում է նրան այդ ընդունակութիւնը: Եվ այնուհետև նա
հանգստութիւնը կորցնում է, և հետո միայն, երբ ուսման մեջ վարժվում
է, հասկանում է իր տեսլի խորհուրդը.

Եղև յանկարծակի ինձ բան խօսիլ ով ուզենայ.
Այնպէս որ ես ի չիմ խօսիք շարեւրն գարմացայ.
Միտով ու մեծ յուսով ես այս բանիս ի փորձ մըտայ,
Զհոգիս փոխան տուի, 'ւ ասլայ ես այն հոգոյն հասայ:
Իմ բանս ի յայն լուսոյն եկել առ իս ինձ մանանայ,
Որ իմ ալօքն ես զինք բարձր ի յաթոռ նըստած տեսայ...

Բանաստեղծն, որեմն, իր տաղանդը համարում է աստուծու հայտ-
նությամբ իրեն պարգեււած մի շնորհք: Դրա գիտակցութիւնը նրան ոչ
միայն ուրախութիւն է պատճառում, այլև հպարտութիւն.

Այսպէս հոգովս ուրախ եմ ե ի մեծ մտաւտ հասայ,
Որ ես առանց շրթունք կու խըմեմ յայն գինուն շիլայ.
Սարխօշ եմ յայն սիրուն, 'ւ է միտքս ի հօն յուր ինք լինայ.
Զունիմ շատոց կարիք, ով է շարկամ ու ղիս որսայ:
Ես եմ մէջ աշխարհիս զերդ ըզյիմար ի յանդիշայ.
Ոմանց թուիմ խելօք, ոմանց խիստ խև ու անյիմայ,
Ոմանք շար ին հետ ինձ, կըրճեն ատամ ի չիմ վերայ,
'ի ոմանց պատեհ թուի զարիւնս հեղուլ իր կամ լինայ...

Այս տողերից երևում է, թե ինչպէս հալածել են ավյունով հարբած,
թաւեալա բանաստեղծին: Տալոք, պակասում է այս քերթվածի վերջին
մասը՝ ձեռագրից թերթ դուրս ընկած լինելով: Բայց առանց դրան էլ
մենք լավ տեսնում ենք վշտացած բանաստեղծի ազնիվ հոգին, ազնիվ էլ
ներշնչումով:

11. Իմաստական ասքեր:— Կոստանդինը վարպետ իմաստաբան է
և շատ էլ հորինած ունի իմաստական ասքեր: Նրա զենքն իր շարկամնե-
րի դեմ կոչելու համար՝ է գլխավորապէս բարոյական խրատը, իմաս-
տալից ասացվածները, որոնք բխելով բանաստեղծի իրեն անձնական
կյանքից, հորինված են խիստ զգայուն, թրթուռն ու եռանդուն: Հաճախ
իմաստա-խրատական ու քնարական տները փոխիփոխ հաջորդում են
միմյանց և կենդանի ցուլացնում են հեղինակի զգացումներն ու խորհրդ-
դածութիւններն իրեն և իր հակառակորդների վերաբերյալ. դրանք
ուղղված են գլխավորապէս Ելար ընկերներին դեմ¹⁵². Թեան յաղագս շար
ընկերաց և պատրաստ կալ մոլորեցուցիչ ոմանց, որք հակառակին բա-

152 Տե՛ս նաև՝ Թերթվածներ՝ Թ, էջ 74 և հտե., Դ, էջ 80 և հտե., Ա, էջ 81 և հտե., Բ,
էջ 102 և հտե., ԺԳ, էջ 129 և հտե., ԺԷ, էջ 143 և հտե., ԻԱ, էջ 154 և հտե., ԻԲ, էջ 155 և հտե.:

բութեան» (քերթ. Գ, էջ 80—84)։ Այդպիսի ընկերները մոտենում ու մո-
լորեցնում են ինչպես քաղցրախոս թշնամիներ, գառնազգեստ գալիեր,
թունավորող բժիշկներ։ Հպարտ, շարասիրտ ու կույր առաջնորդներ են
ներանք, բարին ատող ու նախանձող, արգել հիմարներ, որ մարմիններն
են միայն զարգարում, շեն հավանում իմաստուն ու գիտուն մարդուն,
որին «խեն» են անվանում։ Բանաստեղծն ինչքան էլ աշխատում է սառ-
նասիրտ լինել, լի կարողանում։ Վի ալն տգետներն իրեն են գիպում, շեն
հասկանում իր գրվածքների բուն իմաստը, շեն ըմբռնում «ծածուկ
բան», «բան ծածկարար», այսինքն այլաբանություն, ու շեն գնահա-
տում իր գրվածքները։

Թէ մեկ մի դանձն ի մեզ եղել ու զնայ ի ծովն ի վայր,
Զուհար բերէ ի դուրս, նա՛ անպիտան կոչին զնա քար...
Գիտունն ի յանգիտաց մէջքն ծառայ է շարալար,
Որ նըման խամ ապիկու յաժան ձրգեն անգին քոհար։

Նրա վրդովմունքն այնքան մեծ է, որ իմաստական րանքը հետքը-
հետե փոխվում է մի դառն ողորի ու երգիծանքի իր անմխիթար ժամա-
նակի վրա ընդհանրապես։

Հազար աւաղ տամ ես որ տէրն ըզմեզ շտեռորդս արար
Ի յանցեալ ժամանակիս՝ որ մեզ լըկայ իրք մըխիթար.
Հովիւ չունինք տեսող ու մենք ենք մոլորեալ ոլխար,
Շատ գայլք են յարձակել ի վերայ մեր խիտ տհաճմար.
Պիտէր մեզ նաւապետ մարդ կենդանի զերդ Նոյ արդար,
Որ մեզ տապան դործէր, ծովուս լինէր եղր ու վրձար...
Զունինք մարդ կենդանի, հոգեով մեռած ենք հաւասար...
Ի մէջ ծովուս ժըփինք, ոչ նաւ ունինք, ոչ նաւավար։

Վերջը բանաստեղծն ինքն իրեն դառնալով խրատում է իրեն.

Զհոգիդ քանի՞ մաշեա, է՛ Կոստանդին, զօրն անդադար.
Հերթք արա սրբաիդ, զքեզ ի ծովո՞ւդ մէջքն տեսար.
Դարձի՛ր ի յետ նայէ՛, ու գի՛տ խելօք թապտիր ու ճար,
Որ շմեաա ի մէջ ծովուն, ՚ւ յեզր ի հանգիստ իսկի շհասար։

Այսպիսի մի անձնական, միաժամանակ և հասարակական քնարա-
կան երկ է և է քերթվածը (էջ 91—96), որ վերնագիր տւի՝ ԾՅաղագս ան-
գիտաց սուտ խօսելոյ զրանս, անպիտան և հակառակ կալ իմաստնոց։
Բանաստեղծը խիստ հուզված է Ժանդէտ և անմիտ մարդկանցից, այն-
պես որ նա տանջվում է, կորցնում իր հանգստությունը և բողոքի ու հա-
ռաչի ճիշեր է արձակում բարկ խոսքերով, ուժեղ և անմոռանալի շեշ-
տերով։

Յերրիսթ¹⁵³ կանչեմ հազար և ահեղ հառաչ բերեմ լալով,
ի յանգէտ մարդկան ձեռաց զհոգիս երեմ անշէշ հրրով.
Եմ յիմար դարձել ու իս ու սաւղայի¹⁵⁴ ի շուրջ գալով
Եւ վասըն էշ ու անյիմայ ոմանց՝ հանեմ զհոգիս շուտով:
Ես յտեիմ հանգըտտութիւն, և յնրակ խոցիմ անդէտ խօսով...

Նա խիստ հարմարեցնելով խարազանում է իրեն հալածողներին, որոնք անհոգի կենդանիներ են, լցիտեն մի պիտանի և խելոք խոսք ասել, ատելով ատոււմ են իմաստուն մարդուն: Եվ Կոստանդին այս քերթովածը հետզհետե դառնում է լավ, բարի, իմաստուն և վատ, լար, տգետ մարդկանց համբեր՝ հակամարտութիւն մի հոյակապ պատկեր. և որովհետեւ քանաստեղծը՝ նկատի ունի մի կողմից՝ ինքն իրեն և մյուս կողմից՝ իր հակառակորդներին, ուստի նրա բնորոշումները և՛ շատ բիրտագիտ են ու փափուկ ոճով, ինչպէս սովորաբար հաստել է Կոստանդին, և՛ խիստ, ցասկոտ ու արեւելաբար, ամբողջը ազնիվ հզտումով լցված, անկեղծ ու խոր զգացումով ոգոված, դառն գանգատի և հոգեհանգն ընթացիկ խառնուրդով:

Ճիմաստունն ո՞վ է յաղթել, թող թէ հրնար բերեմ շարով,
Կամ զուգեմ քանք աղտեղի և քամքասեն սուտ խօսելով.
Նայ լոյսէ, և նայ խաւար, որ չկայ հրնար մերձեանլով,
Ճի յիբմէ փախի հեռի ի խոր տեղիք բընակելով:

Եվ այսպէս իրար հաշորդում են մի շարք գեղեցիկ տներ իմաստուն և անմիտ մարդկանց մասին.

Իմաստունն է առաւօտ, արեւտար է ցընծալով,
Իսկ անմիտն ի խաւարի կայ թանձրացել երազ քընով,
Իմաստունն արեգակն ուղէս է պայծառ և լի լուսով,
Իսկ անմիտն է խաւարի տուն և տեղի, լի ցաւով:
Իմաստունն է քուրաստանք ծաղկով լըցած գոյն բզգոյնով,
Ի անմիտին սիրտն է ի լի մութն ու մըլար սանամանով:
Իմաստունն ուղտուղ քարի, անմահութեան հաշակ տալով,
Իսկ անմիտն է անպտուղ, դատարկացեալ և լի փըշով:

Իմաստունն աշխարհից կուշտ է, միտքն՝ առատ, իսկ անմիտը՝ ցանկութիւն մի ճաղցած ու ծարավ, ծակալք. իմաստունը գնում է ճշմարտութիւն հանապարհով, իսկ անմիտն ընկած է խորխորատ ու ծով... Ի՞նչ թուություն միայն ունի իմաստունը.

Իմաստունն ոչ երկընշի թէ հարկանեն գինքըն սըրով,
Բայց յանգէտ մարդու խօսից խոցի հոգով ու մարմնով,
Ճի անգէտն և անըզգամն աստուած չունի ինք գիտելով:

¹⁵³ Յերիսթ—բողոք:

¹⁵⁴ Սաւղայ—մեղմեղմիկ:

Եվ խոցվում է մեր բանաստեղծը, որ այնպիսի մարդիկն աշխարհի սկզբից ի վեր հակառակում ու լար են կամենում իմաստուն մարդկանց և հալածում նրանց: Եվ նա ընկնում է մեծ հոռետեսութիւն մեջ աշխարհի վերաբերմամբ, գրելով՝

Բովանդակ աշխարհս է գայլ
և միաբան կան մի ժողով,
Նա՛յ գառին ո՞ւր կայ հանգիստ
մէջ գայեցուն ինք կենալով:
Ով խելօք է և ուղէ
զինք կենդանի սրբաի կամով՝
Թող լինի ի յաշխարհէս
ինք անծանօթ հրաժարելով...
Լաւ է ինձ մէջ գազանաց
մարդակերաց բռնակնով,
Քանց անմիտ՝ և անիմաստ
որ լիս խօսի լանդէտ բանով:

Բանաստեղծն իր դրութիւնից մի ելք է որոնում և խրատելով իրեն՝ գրում է.

Կոստանդին, է՛ր կաս ազար
'ւ ի սիրտ ելնես թէ՛ղ մ'ըշտաւով:
Վասն անգէտ 'ւ անմիտ ոմանց՝
զքեզ է՛ր տանջես շատ ցընորով:
Ոչ կարես հաւան պահել
դու զամէն մարդ հետ քեզ սիրով:
Թէ կամիս հանգիստ կենալ,
որ լըմաշես դու զքեզ հոգով՝
Մի՛ փառաց դու հետեիլ,
մի՛ անզանիլ անեղբ ի ծով,
Ձի ծովուն ոչ կայ հանգիստ,
յերակ ծրփի յալիս քամով:

Սոյնպիսի անձնական եղանակով հորինել է նա և մյուս տաքերը, ինչպես, օրինակ, Թ քերթվածը, որի սկիզբը շունենք: Այստեղ խրատ-նեքն իբր ուրիշի կողմից ուղղված են Կոստանդին: Դրանցով նա երբեմն անձնաքնութիւն է անում և ինքն իրեն խրատական խոսքեր ուղղում, հանդիմանում իր պակասութիւնները, բայց այնպիսի ձևով, որ դրվածքն ստանում է ընդհանուր խրատական ընամորութիւն: Միբրում է, որ ուրիշներն իրեն գովեն, վրդովվում է ուրիշների խոսքերից, մինչդեռ,— ասում է,— պետք է լինել խոնարհ, անփառասեր, համբերող, մի խոսքով՝ լինել Եփմաստուն և հանճարեղ մարդ կատարեալ: Իր ամենա-

մեծ պակասութիւնը նա իր լեզուն է գտնում, իր բանաստեղծութիւնը,
լի թանկագին խրատներով, որ իբրեւ քեռ գնում է ուրիշներէ վրա.

Լեզուն նրման հրքոյ
քաղում անդառը է հրդեհել.
Դու լեր խալաս ոսկի,
որ շատ հետեւի ի հուր մըտել.
Լեզուն հողմըն սաստիկ,
որ շատ խրոխ է տարտարել.
Դու լեր ծառ պըտղաբեր՝
ի մէջ երկրի արմատացել:
Լեզուն է հեղեղատ,
շատոց հիմունն է կործանել.
Դու լեր մէջ հաստատուն,
գըլուխ անգնան հիմըն շինել.
Լեզուն է յորդ քամի,
ծովուն խրովութիւն բերել.
Ի զա՛տ կաց ի նմանէ՝
յատակ ժողուն ջոհար պահել:

Բայց կարո՞ղ է արդոք Կոստանդինն թի գատ կենալս իր լեզվից,
այսինքն հրաժարվել իր բանաստեղծութիւնից:

12. Մարմնի իրավունքը:— Մեր քերթողն իր ասքերը հորինում է մի
ներքին կովով սհողու և մարմնիս միջև: Մենք զգում ենք, որ նա, զբաւով
հանդերձ իր մեծութիւնը լեզվադարներէ դիմաց, ճիգեր է անում կտրվե-
լու աշխարհից, զսպելու իրեն, հեռանալու մարդկային անձնասիրութիւն-
նից ու անսիրտութիւնից: Սակայն և այնպէս՝ նա ոչ մի կերպ թափարա-
բութիւն չի գտնում, և իզուր Թ՝ քերթվածի մեջ, կարծես մի բարեկամի
կողմից, ինքն իրեն խրատներ է ուղղում.

Փո սիրտտ ի յաշխարհիս
ի հասրաթէն է հուր վառել.
Քանի որ շատ սիրես՝
նա՛յ շատ դըռներ է քեզ բացել.
Մարմինտ է ցանգութեամբ
ի յաշխարհիս սէրըն մաշել.
Քանի որ շատ վայլես՝
յետե կարօտ ես մընացել:
Մարմինտ որ էր տըղայ՝
նրման ծաղկի գեղեցկացել,
Իսկ այժմ ահայ հասեր
՝ և երիտասարդ ես կատարել.
Հիմի գայ ծերութիւնն,
որ ինք ըզմահն էր գուշակել.

Ոչ փա՛ռք այլ հրեհի,
և ոչ պատկեր գեղով լըցնել:

Եվ ահա հետո դայիս է մահը, և հարութունն գարունն իր բոլոր պատգամներով: Բայց արդոք այդ մահը և ժանդենը սարսուցենո՛ւմ է Կոստանդին Երզնկացուն, ինչպես իր ժամանակակից Ֆրիկին:— Բնավ ո՛չ, Կոստանդինը սիրում է մարմինն ու աշխարհը: Եվ նա վերջիվերջո բռնկում է և խնդիրը բացահայտ դնում ժ (էջ 107—109) քերթվածի մեջ, որ մի պատասխան է նախորդ քերթվածի մեջ իբր բարեկամից տրված խրատին ի դեմ: Բերենք այդ շատ հետաքրքիր բանաստեղծութունը, որի վերնագիրն է՝ Երկնեալ պատասխանի այսպէս ի դէմս:

Հոգով տուե՛ր խըրատ
դու Կոստանդենայ կամաւ լըսել:
Ասէ՛, թէ՛ հասկացայ,
կամիմ պատասխանի առնել:

Եվ ի՞նչ է նրա պատասխանն իր խրատատու քարեկամին: Նա սրտ առաջ բաց է անում իր տանջված սրտի ծածուկները, ասելով.

Մի՛ այդչափ ի գործոց
դիս յայտնապէս յանդիմանել:
Տըկար եմ և անզօր,
մի՛ ծանր ու մեծ բեռն գընել:
Հոգիս է խիստ յօժար
բանից իմաստընոց լըսել:
Մարմինս է հեշտասէր,
դի յաշխարհէս է ինք ծընել:
Ի յերկուքիս միջին
մոժ եմ ի մէջ հըրոյն վառել:
Անհիմն և անհաստատ՝
եմ անհանգիստ ի շուրջ եկել:
Ի յորս հակառակէս
ուսկամ յերեք եմ մընացել:
Զի հուրն ի վեր քաշէ,
նա՛յ հողըս ծանդր ի վայր հակել:
Սեկաւ մի ի ջըրոյն՝
բոցըն հըրոյս է հանգարտել:
Քամին է յօգնութիւն
և բորբոքէ՛ զհուրըս վառել:
Ծրկու կամաց ծառայ
գըժար է ինձ յիրաց սաղել:
Կամ հուրն ի ծոցն առնու
ու անվընաս վինքըն պահել:

Կամ մարմնաւոր ոտօց
վերայ ձողուն թեթե քայլել:
Կամ զհոգմն արագընթաց
մարդ ընդ ձեռամբն է արգիւնի:

Եվ այսպէս՝ նա չի կարող լսիլ աշխարհը, քանի որ ռենշտատեր
մարմինն աշխարհից է ծնված: Նրա, այդ կրոնավորի, սիրտն աշխարհ-
հի կարտուղ վառվում է, ինչպէս կրակով: Նա չի կարող ն՝ հոգուն, ե՞
մարմնի կամքին ժառանգել, ինչքան էլ ցանկանում է: Հնարավոր չէ հաշ-
տեցնել այդ երկուսը, որ իրար հակառակ են, ինչպէս շորս տարրեքը,
որոնցից կազմված է մարմինը: Եվ այսպիսի հալումաչ և անհանգիստ
հոգեկան վիճակի մեջ են,— առում է նա,— ոչ միայն ինքը բանաստեղ-
ծը, այլև ուրիշ շատերը:

Ջայս եմ ես ինձ խրատ
և յանդիմանութիւն գըրել:
Եւ դիս բազմաց նըշան,
վըկայ և օրինակ բերել:

Անմիտ կեղծավորները, սակայն, ուրիշի վիճակը չեն հասկանում՝
խոցում են Կոստանդնիւն և կակիժ ու վերջ հասցնում նրան, հարձակվում
նրա վրա: Բայց մենք շարունակենք տեսնել, թե ինչպէս այդ համեստ
կրոնավորը վշտահար կերպով և անհամարձակ սպիռում է իր սրտի ցա-
վերը:

Ինձ չէ՛ պարտ համարձակ
նըման եղբօր ի քեզ խօսել:
Այլ ինձ երես դրնել
փոխան հողոյ՝ ով որ կոխել:
Ի սըրտէ արտասուք
ու շատ գանգատ լալով բերել,
Ով ոք սիրով սըրտի,
եղբայրութեամբ ի յիս նայել:
Ձի շատ կրակիժ ու վէր
ի մարդկանէ է յիս հասել:
Իմ սիրտս է խոց դուգած,
Դառն ցաւօք է դիս տանջել:
Եմ հողէ պարխալ ածել
ու բերդ ամուր անուն հանել:
Ձերկիւր պատերազմաւ
ի յիմ վերայ եմ յարձակել:
Ես եմ առանց սքլէհ
ու մերկ եմ յանդիման կանգնել:
Հազար դեհաց խոցեն,

ու լերեի, թէ եւ խոցել՝
 նա՛յ կէսք մ'ասեն՝ Դայ է
 յիմար ու խն մաղաս կաթել.
 Ու կէսք մ'ասեն, թէ պարտ
 է զայսպիսոյս արիւնն հեղել,
 Նայ ես պատասխանեմ,
 թէ՛ Կոստանդին, չէ պարտ լըսել,
 Եւ ոչ քեզ հաւատալ
 ամէն մարդու՝ և ի սիրտ մըտել:

Ահա թէ ի՛նչպիսի ուժգին անկեղծությամբ խոսում է բանաստեղծն իր անձնական զգացմունքների ու վիճակի մասին, իր գանգատին տալով անմոռանալի գույն: Մենք տեսնում ենք շնորհալի բանաստեղծի հուզիչ դրոթյունը և նրա մեջ գտնում մի մարդ, որ բարձր է իր ժամանակակից վանականներից, որ և ունի իր հաստատ համոզմունքը և չի ընկնում իր հակառակորդների առաջ:

Անշուշտ, նա մենակ չի եղել իր ազատ հասկացություններ. իր հայրենակից Հովհաննես (Պողոսյան) Երզնկացին էլ, ինչպես տեսանք, նույնն է արտահայտել իր իմաստասիրտ աքերոփ: Այս երկուսի այդ երկերը ոչ միայն գաղափարով նույն են, այլև ձևով, առանձնապես լուրս տարրերի պատկերով, նույնիսկ մի ձրկու տողերի նմանությամբ. այնպես որ, ըստ երևույթին, նրանցից մեկն ազդված է մյուսից: Բայց չնայելով այդ նմանությանը, նրանք շատ տարբեր են միմյանցից: Մինչ Հովհաննես Երզնկացին հորինում է հանգիստ, քառն մտածմունքով, Կոստանդինը մի զգայուն բանաստեղծ է, ամբլի քնարերգու, քան բարոյախոս: Նա իր անձնական շնչոտերով երգում է ոչ միայն իր սեփական ապրումները, այլև իմաստախորատական ոտանավորները: Եթե Հովհաննես Երզնկացին ամբլի մտածելով է մարմնին տալիս իր իրավունքը, Կոստանդինն իր խառնվածքով նույնիսկ անհնար է համարում ըսելու ու լերգել աշխարհի կյանքը. քնությունը ու մարդկայինը:

18. «Սիրու քաները»:— Հոգու և մարմնի խնդրի մասին այնպիսի պարզ խոստովանությունից հետո մեր բանաստեղծն այլևս չպիտի դժներ այլաբանությամբ և սեր պիտի երգեր նաև ոչ կրոնական իմաստով: Եվ հավանորեն այս շրջանից հետո են հորինված նրա սիրո երգերը, որոնցից երկուսը կորստի լին մատնվել¹⁶⁶, Դրանցից առաջինի վերջում հեղինակը, մի տեսակ իրեն արգարացնելու համար, գրել է հետևյալ հիշատակարանը.

Եղբարք մի կան հետ մեզ սիրով,
 Աշխարհի բան ուզեն դրոփ.
 Նա՛յ ես վառն այն յայտնի ձայնով՝
 Սիրու բաներս ասցի յուրով:

¹⁶⁶ Քերթած Խ, էջ 169—171. «Տաղ սիրու»: Քերթված Խ, էջ 171—173. «Տաղ սիրու» ասելով:

Այդ աշխարհի բան՝ ուղող ժողովուրդները պետք է հղած լինին Կոստանդնի սննդակից աշխարհականներ։ Ձնայելով որ նա բնական է աշխարհում, այսինքն առանց այլաբանության է հորինել սիրո հրդեհ, բայց դեռ ոչ կատարյալ վստահությամբ է անում մարմնի գովեստը։ Երկրի վերջում ինքն իրեն հանգրվանում է՝ համարելով այդ ունայն, սուտ, անշահ և անօգուտ, սխալ և անցավոր բանը և խրատում է իրեն՝ «դառնալ» (= ետ կենալ) գրանցից, որովհետև իրեն թափն իր մ'այլ անկաշ, այսինքն ինքը կրոնավոր է։ Երկրորդ տաղի մեջ, սակայն, նա արգեն իրեն սկզբունք է դնում, թե կին սիրողն է ճշմարտություն և անմահություն գտնում։

Ով ընկեր ի քո սիրուց բանտի զընտան'
Հաղեղէթ և անմահութեանդ է՝ նա տես։

Սեր ունեցողն է սկենդանի հոգևոր մարդը, առում է նա. իսկ առանց սիրո մարդուն նա, կնոջ բերանով, անվանում է ժանրային և անասուն։ Այսպիսի հասկացություն հայտնելուց հետո՝ քանաստեղծն այս երկրորդ տաղի մեջ արգեն համարեակ է. նա այլևս չի զղջում իր աշխարհի բանքին համար, այլ, բնականապես, գրում է. թե առանց իր սիրած էակի չկա իր համար բեկանք մտաբանում։

Այլ լրկա՛յ թեզ, Կոստանդին, կեանք մտաբանով,
Որ ի յիր քաղցր սեռուն հանց կարօտ ես,
է՛ սուրաթ պայծառ ու պատկե՛ր լուսատես,
Ձիւ աշերս ի քո սիրտու չէ՛ր կու զատես։

Կոստանդին Երվնկացու այս երկու սիրու տաղերը մեր ույս տեսակի ամենահին քանաստեղծություններն են, որ մինչև այժմ երևան են եկել, և հենց իրեն այդպիսիք հետաքրքիր են։ Մարմինը, մարմնի գեղեցկությունը միայն չէ, որ գովվում է դրանց մեջ, այլ արտահայտվում է նաև սիրահար երգչի հոգեկան վիճակը։ Տաղերն արվեստակված չեն, այսինքն ճարտար ձեռքով շինված լեկ ոտանավորներ չեն, այլ սիրաբույս են, Կոստանդինի արժանի։ Շատ պարզ զգացվում է, որ այդ կրոնավորը երգում է անկեղծությամբ իր սեփական ապրումները։ Անշուշտ, նրա այս երգերի մեջ ևս, ինչպես առհասարակ մեր գույքանակալ սիրու տաղերի, մեծ տեղ է բռնում սիրուհու մարմինը։ Նա ևս համարյա անկասկած է կանացի գեղեցկությամբ, կնոջ պայծառ ու լուսատես պատկերով, ժողովրդի շիտակա հասակով։ Նա ևս սիրավառ գովքի է արժանացնում կնոջ՝ լուսնանման բուրբ դեմքը, սև մազերը, շշուշ երեսին մազերն ուրքը, շրթունքների ներսում բուրբ ու արեգակ շարածն առամները, կարմիր երեսը, անգամ գույնզգույն հագուստը, մանր քայլվածքը, — մարմնի մի գովք, որ անպայման հնուց է գալիս, որ և մասամբ գտնում ենք արգեն Գրիգոր Նարեկացու, ինչպես և հետագա բոլոր սիրո երգիչների ու գուսանների երգերի մեջ։ Բայց մինչև մեր միտով մեծ քանաստեղծը խո-

րին անկասածութիւնով և հոգեւոր հիացումով ազդեցում ու երկրպագում է Սուրբ Կույսին, իբրեւ մի աստվածային անհասանելի, աննշխարական էակ-
կի,—մեր այս Երզնկացու համար իր սիրտը մի մարմնավոր կին է. մի
խնայական տարփածու զեղուհի, որ դառնում է մեծ հիացմունքի առարկա
|Մի անգամ որ նա տեսել է իր անձկալիին, այլևս սրա զեղեցիկ պատկերը
չի հեռանում իր մտքից, և նա, այդ կրօնավորը, մնում է հարթած դրու-
թյան մեջ, Երբ նրան շիւ աչքըս տեսաւ,— ասում է նա,—

Ձօրն հս ի յիւր սէրըն կենամ,
Յնրակ հետ իւր տեսուն գընամ,
Ձաշերս արեամբ հետ իւր թանամ,
Ձիւրայ հոգիս յիսնէ տարաւ,
Երբ որ անուշ հոտն յիս բուրեց՝
Ձիւս ի խելաց շուտով թափեց.
Ի յայն պահուն սիրտս իմ եփեց,
Երբ իւր տեսն ինձ երեւցաւ

Ապա իր տեսած կնոջ նկարագիրն անհիւռց հետո՝ դարձյալ մեր ա-
ռաջ բաց է անում նա իր հոգեկան վիճակը, որ ունի տարփայլի կողմից
առանց պատասխանի մնալուց։

Ես եմ կարօտ ի յիւր սիրուն,
Ձինչ ծարաւած յերկիր ցողոյն,
Կամ զինչ դարնան անուշ քամուն,
Թէ երբ հընչէ հոգմըն հարաւ
Քանի որ յիմ տեսում¹⁵⁶ զատեր,
Կենաց ճարակն է ինձ հատեր,
Հացն ու հոռայն է զիս պատեր,
Հոգու քաղիլ ու սըրտացաւ

Թեպետեւ Գրիգոր Նարեկացուց մինչև Կոստանդին Երզնկացին երեք
դար ժամանակամիջոց է ընկել, բայց մենք, ցավոք, չունենք ոչ մի սիրու
երգ, որ այդ երկար ժամանակաշրջանում հորինված լիներ, և նույնիսկ
լգիտենք էլ, թե արդե՞ր եղե՞ն ին ուրիշ սիրո երգիչներ ևս՝ բացի գուսան-
ներից, որոնք միշտ էլ գոյութիւն են ունեցել։ Սակայն քանի որ դեռ չէր
մեռել կրօնական ոգին և Կոստանդինն ինքն էլ մի վանական էր, ուստի
Գրիգոր Նարեկացու Ողբերգութիւնից և Աստվածածնի երգից անցումը
Կոստանդինի սիրու երգին կատարվել է, ըստ երևույթին, ընականորեն,
Երևում է, որ այս բանաստեղծի սիրու երգերի վրա ազդեցութիւն է թո-
ղած գուսանակաների հետ նաև մեր միատիկական բանաստեղծութիւն-
ներ, Նա կինը երգում է նման ձևերով ու հատկութիւններով, ինչպես միս-

¹⁵⁶ Տպված է ազատ ձևով. «Հիւս տեսուն», աղղում եմ «յիւս տեսում», որ է՝
իմ աչքից։

տիկ հրգիշն իր աստուծուն կում իր պաշտած Ս. Կույսին: Կինը, թեև մարմնավոր, ոչ աստվածային էակ, նրա համար հանգես է դալիս զազադարական պատկերով, միատիկական Սեր ու Լույս աստուծու հատկութուններով, ևս ունի և արեգակի հրգիշն իր սիրո առարկան ամենից անաջ հրեականում է քնանկանորեն իրեն մի լուսատու էակ, իբրև մի արեգակ ու լուսին: Եթե միատիկ հրգիշ Գրիգոր նարեկացին, խավարի մեջ նստած, գիտում է իր Լույս աստուծուն և ասում. «Կամք քո յիս, և իսկաբն ինձ ճառագայթ»¹⁶⁷, նույնպես և մեր այս կրոնավոր տաղերգուն թխաւորած սրտով: Նստած է կես գիշերին, և նրա տարփային, իրրև մի լուսեղեն էակ գլուսատես պատկերով, արեգակ ու լուսին, լույս է ծագում նրան, նրա աչքերին, և լուսավորում նրա մտայլ ու տրտում հոգին.

Ի յերկրի ի՞նչ կայ նրման քեզ օրինակ,
Դու ի յերկնից լուսեղէնքն ես նրմանակ.
Քու տեսովդ ես դու լուսին պատրի թամամ,
Որ իմ սրբոտիս խաւարեալ՝ լուս կու ծագես:
...Երբ որ դուն յարգարեւոյ մանրաքայլես,
Ասեն՝ արև ծագեցաւ ի մէջ գիշերիս...

Այսպես և ուրիշ տողերի մէջ արվում է լույսի համեմատութիւն:

...Իմ աչերուս լուս ծագեցաւ
Երբ դունըզգուն ելնէ փայլէ,
Ջերկիր ի յիւր լուսոյն հալէ:

Գրիգոր նարեկացին դիմելով աստուծուն՝ դրում է.

«Միայն թագաւոր ինքնակալ դօրեղ... գալատեանդ քոյ ակն ունիմ և ողորմութեան փրկչիդ սպասեալ յուսամ. ի յոտս քո անկանիմ, և զգարշապարիդ հետս համբուրեմ...»¹⁶⁸, Կոստանդնի համար ևս իր սիրած կինը թագավոր կամ թագուհի է.

Դու սուլթան ես, պէհլուսապ շատ ծառանով
Ջծառայիս ձայնըն գիտեմ որ կու կանչես...
Թէ ինեւր որ քքեզ տեսնի առ յիս գալով,
Եւ խընդութեամբ ի դէմ գայի քեզ սիրով.
Ի յերկրի երես զընի քեզ կոխելով,
Ու հոգիս անդ հանէի յօժար կամով:

Այս գետնաքարը ստրկացումը բռնակալ սիրո (այսինքն՝ սիրական կնոջ) առաջ, ինչ որ ընդհանուր է արեւելյան ժողովուրդների բանաստեղծությանը, անշուշտ խորին հնութիւնից ի վեր հատուկ է եղել նաև մեր

¹⁶⁷ Գրիգորի նարեկայ վեպից վանկանի Մատթաւորութեան, Վանկանի, 1840, Ողբերգութիւն, Բան ԿԾ, էջ 167:

¹⁶⁸ Անդ, ԿԶ, էջ 171:

գուսանական սիրո հրգեթին, և սրանից օգտվել է մեր միստիկ բանաստեղծը։ Բայց էականն այստեղ այն է, որ այդ սիրո քանակալութունը նույն կերպ ազնվացած է երկու դեպքում էլ. որովհետեւ ինչպես միստիկի համար մեր աստուծու ծառայութիւնը սիրով՝ մի փրկութիւն է, բազմական է, որ նա ողորմութեամբ քաղցր աշքով նայն իրեն, — նույնպես և մեր այս սիրո երգչի համար նույնպիսի ծառայութիւնն ազատութիւն է.

Դու հուքմով փատիշահ ես քու եասիրով,
Ես սիր կամ քո ծառայ՝ զինքն ազատես.
Ես ազատ եղեալ եմ այսօր յերկրի վրայ,
Թէ ծառայ սրբտի կամով զիս տեսանես.

Ինչպես որ միստիկը շարունակ զբաղված է աստուծով և փափագում է տեսնել նրան, նույնպես և մեր այս երգչի հոգուն հարատեւ իշխում է սերը, և նա տենչում է իր սիրելիին մեծ կարոտով, ինչպես տեսանք վերեւում բերված տներին մեջ։ Միստիկի համար աստուծուց բաժանված վիճակը պատճառ է դառնում անվերջ ողբ ու լացի. այսպես և մեր այս երգչիը հառաչում և արտասովում է, որ իր սիրուհին հեռու է իրենից, ինչպես տեսանք վերեւում, այլև հետեյալ տողերի մեջ.

Դու քանի հեռացեալ ես այս քո գերուս,
Արտասուքն ի վայր թափես ի յաւերում:

Սիրելի կնոջ ներկայութիւնն ու տեսքը միայն արեւցնում է սիրահարին. և նա միայն մի խնդիր ունի.

« Բուրաստանք ծաղկով ի չի տես թէ վառես.
Որ ի յիս անմահութեան հոտ կու բուրես.
Դու ծաղկանց ես թաղաւոր վարդի գունով,
ձիս ի քո դիմացդ ի փուշն յէ՞ր կու դատես...
Այս սուրաթ պայծառ ու պատկեր լուսատես,
ձիմ աչերս ի քո սիրուտ յէ՞ր կու դատես.
Դու դարեան քամի, ես ծաղիկ ծարաւած,
Իմ ծարաւ սրբտիս համար հողմը հընչես:

Միստիկ Գրիգոր նարեկացու բոլոր ձգտումն է անվերջ սիրով անբաժանելի միանալ իր աստուծուն, նույնպես և մեր այս բանաստեղծն է փափագում անվախճան սիրով, անբաժան կերպով լինել իր սիրածի հետ, որ նրա համար մի տաճար, մի աստվածային տուն, մի սրբութիւն է միստիկի աստուծու հատկութիւններով՝

Թէ սիրտ ունիմ՝ սէր անվըճար,
Որ բաժնելոյ այլ չըկայ կար.
Նա իմ հոգոյս եղեր տաճար...

Այսպէս մեր առաջին սիրտ հրգի վրա, ինչպէս համեմատութիւնից կարելի է տեսնել, խիստ ազդել է մեր միասեփական բանաստեղծությունը, և այդ ազդեցութիւնը հարատեւել է հետագա բանաստեղծների սիրտ հրգերի մէջ, նման ձևերն առաջացել են, հարկաւ, մասամբ նաև երկուսի՝ Գրիգոր Նարեկացու և Կոստանդին Երզնկացու երգած նութիւնների էութեան նմանութիւնից, մեկի համար հզոր սեր առատված, մյուսի համար նույնպիսի սեր դեպի իր տենչալին, և երկուսի համար ևս հոգնատուր ձգտումն միանալու նրա հետ, որին սիրում է ինքը, Միսեփիկի միացումն իր աստուծու հետ լինում է աղոթողի մահից հետո. այդպէս չէ, հարկաւ, մեր սիրերգուի համար, այդ կլինի միայն այն ժամանակ, երբ նա իր սիրածի հետ խնջույքի-ուրախութեան կնստի.

Ձնայ երբ ի խաչ տեսնում նազով,
 Լուսին սուրաթ սիահ մազով,
 Ես ի յիւր դէմ նշնեմ սազով,
 Եւ թէ ժառայ լինիմ կամով
 Յայնժամ լինի այն մեզ նըշան,
 Երբոր խըմեն լինի¹⁶⁹ շիշան,
 Նըռան գունով¹⁶⁰ գգինին ռաւյան,
 Որ քու տեստես նըմանեցան:

Եվ չլինած, թողգով— խնջույք, ուրախութիւն, դինի, նվազ ու հրգ, պար ու խաղ անքաժան են սիրու հրգերից,— դա հարսանիքն է,— ինչպէս նույնը գտնում ենք նաև Կոստանդինի վարդ ու սոխակի սիրավեպի վերջում: Այդ ժամանակ է միայն տեսնում նա կատարյալ և անքաժան սերը: Կոստանդին Երզնկացին, հարկաւ, չի ունեցել այդ ուրախութիւնը. նա կուսակրոն վանական էր: Բայց որ նա ունեցել է, ինչպէս ասում են, իր աստի հատորը, որին և հրգել է նա, այդ անկասկած էլ նա անհույս սիրով սիրել է և հրգել նրան,— տնայական ավելի մեծ թվով քանաստեղծութիւնների մէջ: Անհույս սիրով մինչև կյանքի վերջը սիրել և հրգել է իր հոշակավոր Լուսինային նաև մեծանուն խաչաւացի բանաստեղծ Պետրարքան (1304—1374 թթ.), մեր Կոստանդին կրտսեր ժամանակակիցը: Բայց որքան տարբերութիւն այս երկուսի կյանքի մէջ, ի տաւալացի քերթողը, որ կուսակրոն էր դարձել իր անհույս սիրտ համար, մի փառասլանել հրգի, ամենքից հարգված ու գովված հենց իր քնքուղ զգացմունքով իր բազմաթիւ շնորհալի երգերի համար, մի դափնեպսակ հրգի, որի կյանքի մանրամասնութիւնները հայտնի են և որի գրական գործերը մնացել են: Իսկ մեր Կոստանդինի կյանքի մասին գրեթե բան չգիտենք, բայց եթե այն, որ նա խաչաւացի բանաստեղծից առաջ արդեն ջնդհալի կերպով հրգել է սեր, և որ նա նույնպէս դժբախտ է եղել, բայց ավելի ևս նաև

¹⁶⁹ Տպված է ազնառ ձևով *քչքնիք*, ուղղում եմ *քչինիք* ըստ իմաստին:

¹⁶⁰ Տպված է *գգինեպէ*, ուղղում եմ *գգունով* ըստ իմաստին:

իր սիրու երգերի համար, որոնք, ինչպես և նրա մյուս քերթվածները, մնացել են ոչ բոլորը: Նրա կյանքն իր մեջ ներկայացնում է հայ ժողովրդի ընդհանուր կյանքի պատկերը:

14. ԲԱՃՁԵՐ ԿՃՃՈՒԿԱՐԱՆ ՎՋՄԻ, ԿՋՆԱՐԻԻՍ ՈՒՆԱՅՈՒԹՅԱՆ ԵՄ ՎԱՐՎԱՆ ՄԱՍԻՆ:— Կոստանդնի թյայտնի ձայնով և քրքրել նրան ավելի ևս վիշտ են պատճառում, և նա իր գործով ու զազափարներով մենակ է մնում իր շրջանի կեղծավոր մարդկանց մեջ, որոնք հարձակվում են նրա վրա, հիմար ու խելագար անվանում նրան: Նա ոչ մի մխիթարություն, ոչ մի սիրելի մարդ չունի. սիրելիներն անգամ խորթանում են նրանից: Նրա ժԹ (էջ 147—149) քերթվածը,— թիանք խօսելի ի ժամ տրտմութեան, զոր գրեցի առ պա(հն վա)սն) սուտ եղբարց, զոր վիրատրեցայա,— ամբողջապես դառն արտասուքով ողողված անձնական վշտի մի սրտաճմլիկ հեծեծանք է: Միև ինսուրախ երգիչը մտերմական սեր էր որոնում մարդկանց մեջ, բայց չէր գտնում այն. նրա կյանքը շլուներ դիւրութիւն, քանի գնում ծանրանում էր. նա չէր վայելում հանգիստ և ուրախություն, շարունակ վիշտ ու նեղության մեջ էր: Եվ նա խորտակվում է, ընկնում հուսահատության մեջ, մանավանդ, որ վերջ չէր տեսնում իր տանջանքներին:

Ես քանի՞ հառաչ բերեմ

կամ ի սրբոյն կենամ ազար,

Եւ չերակ զօրն ի դուսայ

հոգօք մաշեմ զիս անդադար.

Ես չունիմ հանդըստութիւն,

'ւ ուրախութեան ինձ չըկայ ճար,

Որ պահ մի հանգիստ տեսնեմ,

կամ դուրանայ կեանքս զըժար:

Զերդ ի ծով կամ տատանել,

չերակ ծրփիմ յալիս խաւար,

Եւ չըկայ եզր ի ծովիս,

կամ թէ ճամբուս թէ՛զ կայ վըճար.

Ոչ ունիմ ես օգնական,

յուս 'ւ ապաւէն ինձ կամ եար,

Որ ի յայս շատ ցընորէս

չինէր խօսօք ինձ մըխիթար:

Ոչ ունիմ մարդ սիրելի

ի (յնտանեաց) փնձ կամ օտար,

Որ զըթայ սրբտովն ի ճիս,

կամ ազնտայ զիս իր եղրայր.

Ով սըրտով էր սիրելի՝

եղաւ հեռի յիսնէ՛ւ օտար.

Նա՛ օտարին ի՞նչ մեղ դընճմ,
եղբոր լինիմ յիրմէն ազար:

Այլեւ ուրիշ մխիթարութիւն չէր մնում կյանքի ու քնութեան սիրով վառված հրեմելից երգչին, բայց եթէ սթափվել իր արմենութեանից և տեսնել, որ այս սուտ կենցաղս, այս սերահէ կյանքը լարժեր, որ մարդ դրա համար մտածուի լիներ. մասնականդ որ գողի պէս գալիս է ամենա-
զոր և ամենասպառն մահը, որ ոչ մի բանի մտիկ չի տալիս, գալիս հան-
կարծ որսում է ամեն մարդու և զերեմիարում: Բանաստեղծն այսպիսով դիմում է աշխարհի տնայնութեան ու մահվան ցավագար երգին՝ անձնա-
կան վշտերի մխիթարութիւն գտնելով դրա մեջ, քանի որ մահն է վախ-
ճաւն ամեն անհատական տանջալից կյանքի: Աշխարհն ունայն է ոչ այն
պատճառով միայն, որ մահ կա, այլև որ լկա ոչ մի բարութիւն ու շահ,
լկա սիրելի և անկեղծ ընկեր, լկա իսկական վայելչութիւն, լկա կենդանի
ոգի, նույնիսկ ձմարդն լկա:

Այս կենանքս է ունայն և ժառանկ ենք մահու,
Զունի՛ մեզ դրոշմը բարութեան և շահու,
Երազ է խաբող և խալայ¹⁶¹ անցաւոր,
է սո՛ւտ սիրելի և ընկեր նենդաւոր:
Ծուցնէ՛ մեզ սիրո՛ւ դուռն ու տա՛յ շատ նիշան,
Բայց է՛ ի ծածուկ գաղանի՛ պէս ու շան.
Նըստեալ է սաղի¹⁶² սայ ի մեծ շամիաթ¹⁶³,
Հանել դի ոչինչ սուտ բաներն փ դիմաթ¹⁶⁴,
Զգինին որ թափնէ՛ կայ ի ներս մահու դեղ,
Ոմանք որ խըմեն՝ արքենան ցեղ ու ցեղ.
Հոգւով են մեռած ու թուին կենդանի,
Ով որ ենք խըմել յայն գինուն շիշանի...

Նվ Կոստանդինն իր Ժ՛ (էջ 128—132) քերթվածի մեջ մեծ ուժով և տխրութեամբ, բայց հանգիստ երգում է աշխարհի տնայնութեանն ու մահվան դործած ավերածութիւնները: Նա չի վրդովվում, դի կյանքը նրա համար արդեն անարժեք էր: Մահը նրան ցավ կտատեաւոր, եթէ նա մահով զրկվելու լիներ այն գեղեցիկ կյանքից, որ նա երազել էր լուսի շողունից և սիրտ հրալրքից կերտված: Նա ամեն բանի մեջ ամենասպիտ սեր էր տեսել, և իր համար սեր էր որոնել կյանքում, բայց փոխարենն ատելութիւն էր գտել:

Ձայս ի յո՞վ հարցուկ լինիմ,
որ ինչ խըրատ տար կամ կար,

161 Խալայ—սուսաց երեսյթ:

162 Սաղի—մատուցի:

163 Ջամիաթ—խնայք:

164 Ղիմաթ—ցին, տքմք:

Թէ դիս է՞ր աշխարհս ամէն
հանց կու ատեն թըշնամարար.
Զով սիրով ես ընդունիմ,
Թէ ի սրբոյն ինձ տայ խապար,
Նայ յետե ինք յերեսաց
ցունէ զիր սէրն ու անկատար:

ԺԹ, էջ 148

Եվ մի անգամ որ կյանքի մեջ լկա սեր, հետեաբար լկա և գեղեցկութիւն (ՔՂի ով որ սէր շունենայ՝ առ ինք լկայ գեղեցկութիւն), ապա թեկուղ ոչնչանա այն—անսեր, պաղ կյանքու և հա թե ինչից էր ծագում նրա հանգստութիւնը մահվան և ունայնութիւն մասին երգելիս.

Ես սիրո՞ւմ կամ կենդանի.
'Լ եմ զարգարել զիմ տերեւին.
Ու թէ սէրն յիսնէ պատի,
Նա՛յ զիս տանի հողմ ու քամին:

ԺԱ, էջ 136

Համայնորեն մեր այս սիրելի բանաստեղծն է 14-րդ դարի առաջին քառորդին՝ 1304 և 1314 թվականների ձեռագիրների մեջ հիշատակված Կոստանդինը, երգնկայի վանքերում բնակարան եղբայր, կամ Վեդեպուր հայր, ապա նույնիցը նաև բնակալից¹⁸⁶, նա է, որ իր հուսախար կյանքի վերջին տարիներն անց է կացրել մի սառն ու մռայլ խուցի կամ քարայրի մենավորութիւն մեջ տխուր ու տրտում, և անշուշտ այնտեղ էլ աշքերը համիտայն խփել, երազելով վառ գարուն, լույս, սեր:

15. Գոտաճական երգերի ձևական ազդեցությունը:— Հասարակական և ընդհանրապես աշխարհական կյանքի ազդեցությունը մեր հին կուլտուրական կենտրոնների—վանքերի վրա՝ քանի գնում զորանում էր: Վանականներից շատերը, ինչպես տեսել ենք, 12-րդ դարի երկրորդ կեսին արդեն իսկապես անուսով միայն կրոնավորներ են եղել, իսկ իրենց նիստ ու կացով, ապրուստով և հասկացություններով շատ էլ ընե տարբերվել աշխարհականներից: Այդպիսիների բերանից կրոնական երգերի հետ անբաժան են եղել նաև գոտաճական սիրո տաղերը, բայց իրենք ըստ երևույթին տակավին խոտելի են համարել այնպիսի բուն աշխարհական բաների հորինումը: Միայն Կոստանդինն աշխարհիկ ոգուց դրդված՝ վերջիվերջո գոտաճական սիրո մեջն էլ քանցքել է ի սգայթազդութիւնս՝ ստատ եղբայրների, որոնք նույնպես ընդունում էին մարմին իրավունքը, բայց կնդածավորում էին: Մինչ այդ՝ գոտաճական ուրախութիւնն և սիրո երգերի ազդեցությունը վանականների բանաստեղծութիւն վրա՝ եղել

¹⁸⁶ «(Տիշխար) ընդ նմին (Գրիգորիսի) և Վեդեպուր հայրն իւր Կոստանդին միայնակաց, որ քաղում առաքելութեամբ զարգարեալ է»: Մ. Պատույթե, Կոստանդին երգնկացի, վենետիկ, 1906, էջ 13 և հաւել:

է ավելի ձեական կողմից՝ ուսանավորի շահերով և որոշ թվով մտերվ-
ների ու պաակներների հետևողութեամբ, ինչ որ տեսնում ենք արդեն Գրի-
գոր Նարեկացու առղերի մեջ և, ուսանավորի նկատմամբ, նաև ներսես
Շնորհալու երկերի մեջ: Կոստանդին Նրզնկացին էլ բնականորեն այդ-
պես է վարվել նախքան սիրո երգեր գրելը:

Ջարմանայի է, որ նրա բանաստեղծութուններից ոչ մեկը հայրենի
շահով չի, որ այնպես հաճախ կիրառել են Հովհաննես Նրզնկացին ու
մանավանդ Պրիկը: Նրա սիրած շահն է մեծատող քառանգամ յամբական
ոտանավորը, որի սկզբում դնում է սովորաբար հոսմանկ, նույնիսկ եր-
կամանկ անդամ¹⁰⁶: Միտ բանքերից մեկը 11-մանկանի է՝ 3+4+4 ան-
դամներով, և մի երեք բանաստեղծութեան մեջ էլ բանեցրել է նա երկան-
դամ յամբական ոտանավորը: Հորինում է շատ ութմեկի, ընդհանրապես
ճիշտ պահելով ութմեկան ջեշտերը, ինչպես վարվել են սովորաբար մեր
հին բանաստեղծները:

Գալով հանգերին՝ պետք է ասել, որ Կոստանդինը մի քանի բանքի
քառատող տների առաջին երեք տողերը կազմում է միանման հանգերով,
իսկ չորրորդ տողը վերջացնում տարբեր հանգով, որ կրկնում է հաջորդ
տների չորրորդ տողերի վերջում (aaab cccb dddb և այլն): Մի բանքի
(քերթ. ԺԶ) առաջին տան չորս տողն էլ ունին նույն հանգը, որ կրկնվում
է մյուս տների չորրորդ տողերի վերջում: Գուսանական երգերի նմանո-
ղութեամբ են արված հանգերի այսպիսի կիրառութուններն և՛, ինչ որ
գտնում ենք նաև 18—19-րդ դարի աշուղական երգերի մեջ ևս:

16. Պարսկական բանաստեղծության մեկամ ազդեցությունը և չա-
փածո բանաստեղծության կատարումը—Եթե կրոնական հանգամանք-
ների հետևանքով միայն ձեական կողմից էին նմանում մեր գուսաններին,
այս ալազգիների բանաստեղծութունների ըզմանդակութունից խուս-
սափում էին նաև քաղաքական տեսակետով: Սակայն մինչև այժմ դեռ
չի պարզվել հայկական և իրանական զեղեցիկ գրականութունների հա-
րաբերութունն ըստ ձևի և ըստ ըզմանդակութեան մեր վերածննդից
շրջանի առաջին երեք և ոչ հաջորդ դարերի ընթացքում: Բայց այդ չի
նշանակում, թե մեր քերթողներն անծանոթ են մեացել պարսկական եր-
գերին: Ապրելով իրեն հարևաններ և միևնույն տերութեան մեջ, հայերը
հնագույն ժամանակներից արդեն յուրացրել էին իրանական միպական
բանահյուսութեան շատ հատկանիշներ, իսկ Կոստանդին Նրզնկացու ժա-
մանակներում իրանական շրջիկ գուսանները մուտք էին գործում և Հա-
յաստան: Մեր այս բանաստեղծն իր ԺԴ (էջ 128 և հտն. ռժանգ յաղագս
անցաւոր մեծութեան...) քերթվածի վերնագրից հետո գրել է հետևյալ
ծանոթութեանը. «Այր մին [նստ]ել կայր ու Շահնամայ ասէր Աայնով. նայ
նղբայրք խնդրեցին, թէ ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ. նս
շինեցի գրանքս զայս. ի Շահնամայի ձայն կարդացէք»:

¹⁰⁶ Մ. Աքեղյան, Հայոց լեզվի տաղաչափութեան, էջ 241 և հտն.

Այս հետաքրքիր ժանտթուփյունից իմանում ենք, որ իրանական աշխարհիկ բանաստեղծությունը 13—14-րդ դարերում թափանցած է եղել անգամ մեր վանքերը, և թեղբայրները, այսինքն Կոստանդնի կրոնականից վանականները սիրով լսելիս են եղել Շահնամ և Նուշինակ ցանկացել են դրա ծածկնույն ոտանավոր լսել հայերեն: Շահնամը, հարկավ, միայն Նրզնկայի վանքերում չի ասվել, և ավելի ևս սիրով մեր աշխարհականներն են այն դարերում լսել պարսից այդ մեծ դիցազնեցությունից: Պետք է կարծել, որ Հայաստանում Շահնամը ասել են և պարսկերեն լեզվով: Այս մեծ քերթվածից հայերեն հին թարգմանություն, այն էլ ոտանավորով, հայտնի չէ. հատվածները անշուշտ կայանում են հայերեն, ինչպես դեռևս մեր օրերում էլ պատմում են հայերեն¹⁶⁷: Կոստանդնի հաղորդածը՝ «ասել ձայնով», թի ձայն կարգա՝ վերաբերում է ոտանավորին, քանի որ նրանից խնդրում են հորինել ոտանավոր թի Շահնամայի ձայն, այսինքն այնպիսի շարիվ, որ կարելի լինի Շահնամայի պես առողանել: Եվ նա հարմարում է մի քերթված 11-վանկանի. տողերով, ինչպես Շահնամը է, անապետյան ոտքերով, սկզբից ունենալով մի յամբ: Այսպիսի մի շարի, որ գործադրել է նաև Գրիգոր Նարեկացին. շատ հեռու է Շահնամայի շարից, բայց կարելի է ձայնով ասել, թի ձայն կարգա՝ ինչպես Շահնամը: Կոստանդնի քերթվածի բովանդակությունն է աշխարհի ունայնությունը և ոչ թե աշխարհիկ վիպական նյութ: Ուրեմն պարսկական մեծ դիցազնեցության նմանողությունը եղել է լոկ ըստ ձևի:

Տե՛ս Զորորդհ հավելված՝ ՊՇահնամայի ձևական ազդեցությունը:

17. Վերածնության գրականության առաջին էտապը տևում է մոտ երեք հարյուր տարի, 11-րդ դարի առաջին տասնամյակներից մինչև 14-րդ դարի առաջին քառորդը, մինչև Կոստանդնի Նրզնկացին: Այնուհետև մոտ 75 տարի գրականությունը հայտնի չէ մեզ մինչև Առաքել Սյունցիի և Բաղդիչի—Եկեղեցական բանաստեղծությունը, Եթե մի հետադարձ հայացք ձգենք այս երկար ժամանակաշրջանի գրականության ընթացքի վրա, կտեսնենք, որ, ընայելով հայերի անբարեհաջող քաղաքական վիճակին, մի իսկական ինքնուրույն վերածնությամբ աշխարհիկ միտքը թափանցում է հայ եկեղեցականի գրականության մեջ: Մեր բանաստեղծությունը՝ Գրիգոր Նարեկացու Ողբերգությունից ի վեր՝ ձեռք է բերում նոր գրական տեսակներ և բազմաթիվ նոր թեմաներ—կրթական միասնական զգացումն ու մտածությունը, հայրենասիրություն, քնության սեր ու երգ աշխարհի ունայնության ու մահվան դաղափարը, անձնական հանգամանքներ, բուն ժողովրդական աշխատավոր դասի իրական կյանքն ու աշխարհայացքը, սոցիալական խնդիրներ, ժողովրդի դանազան դասերի հարաբերություն ու դատակարգային պայքար, դժգոհություն եղած դրու-

¹⁶⁷ Ֆիդուսի. Բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովուրդ, Երևան, 1984, էջ 157—222. սիրուտով Զուլ, հայ-իրանական վեպ, որի ռուսով լեզուով և Բաբսեղյան

թյունից, աշխատավորի բողոքը սոցիալական անհավասարության դեմ, երգիծանք վատ կարգերի, ազգային քաղաքական ձգտումներ, կրոնական երկրաչափյուն, ազատախոհություն և այլն: Ահա մի նոր աշխարհայեցողություն, կրոնական կաշկանդումից ազատություն, որ հետզհետե, թեպետ դանդաղ և ընդհատումներով, արտահայտված ենք գտնում մեր գրականության մեջ:

Որ մեր բանաստեղծությունն այսպես շուտ, եվրոպականից շատ վաղ է թոթափել միջնադարյան ոգին, դրա պատճառը պետք է տեսնել անշուշտ ոչ միայն ցեղի ընդունակ բնավորության ու նրա այն մեծ շարժման մեջ, որ, ինչպես տեսել ենք, ունեցել է 10-րդ դարում, այլև իր հայրենիքի դրուժյան մեջ, Բացի արևմտյան քրիստոնյա ազգերից, հայերը շփվում էին նաև արևելյանների հետ՝ պարսիկների և արաբների Թեպետ իրանական և հայկական բանաստեղծությունների հարաքերությունը և առանձնապես իրանականի ազդեցությունը մերի վրա ըստ ձևի և ըստ բովանդակության, ինչպես վերևում ասվեց, դեռ լի ուսումնասիրված, բայց ադրդե պարզ է, որ մեծ է եղել արևելյան ժողովուրդների կուլտուրական ազդեցությունը հայկական քաղաքային և ընդհանրապես հասարակական կյանքի վրա, հետևաբար անպայման նաև գրականության վրա: Այս ներքին և արտաքին հանգամանքների շնորհիվ ահա մեր բանաստեղծությունն այնչափ շուտ է մի կատարյալ հեղաշրջում, որ ընկնում է Պրովանսի մոտավորապես նույնպիսի բանաստեղծության հետ միաժամանակ, հարկավ, Պրովանսից անկախ, քանի որ մեր բանաստեղծությունն իր նախապատրաստությունը կյանքի մեջ ունենում է 10—11-րդ դարերում, երբ ֆրանկների հետ հարաբերությունն լուսնին հալոլը: Հաջորդ 12-րդ դարի վերջում և 13-րդի սկզբում միայն, այն էլ Արևելքում ունեցած շփումով, նոր դեռ մտավոր շարժում էր սկսում առաջ գալ իտալիայում և Ֆրանսիայում, ուրեմն՝ մերից բավական ուշ: Բացի այդ մեր բանաստեղծության զարգացման ընթացքը տարբեր է լինում եվրոպականից: Առնենք ֆրանսիականը և սիրո բերթվածները:

Պրովանսի բանաստեղծությունն ընկնում է: Այնտեղ, ինչպես և Հյուսիսային Ֆրանսիայում, բանաստեղծները պարապում են արվեստակյալ շինծու ձևերով: Միշտ միևնույն ընդհանուր գաղափարներով, կնոջ պաշտամունքի ու գեղեցկության մի գովքով միայն, այն էլ քաղաքացի, ավանդական դարձած ու դժվար հասկանալի խոթին արտահայտություններով և ոտանավորի բարդ, խճճված տեսակներով: Չկա անհատական զգացում, չկա ընդունակ սեր. ամենի ու ամենի լոկ դատողության մի բանաստեղծություն, մտավոր վարժություն մը հորինված: 14-րդ դարի առաջին քառորդից, — ուրեմն մեր Կոստանդին Երզնկացու ժամանակից, — նույնիսկ կանոն է դրվում, թե սերը չպետք է սովորական ձևով երգել, այլ միայն այլաբանությամբ, և թե կանանցից միայն Ս. Կույսին և մյուս սբբուհիներին կարելի է երգել: Շնորհիվ գոված կիներ միայն կնոջ գաղափարն է, նրանց տարբանքը՝ միայն տարբանքի գաղափարը. ամեն ինչ

Նրանց գլխով անցնում է իբրև վերացական շինվածք և ոչ նրանց սրտով իբրև կենդանի հույզ»¹⁰⁰։ Ահա թե ինչպես են ընդունում Պրովանսի և Ֆրանսիական սիրո բանաստեղծությունը 14 և 15-րդ դարերում։

Մեր սիրո երգը,— այս ենք առնում միայն,— բոլորովին ուրույն և ավելի հաջող ընթացք է ունենում։ 10—11-րդ դարերում արգեն լինում է Աստվածածնի կրոնական գովքը գուսանական սիրերգի մոտիվներով։ Երկու վարդ ու սոխակի պատկերով փառաբանվում է սիրաբորքոք տարփանքը։ 13-րդ դարի վերջում կամ 14-րդի սկզբներում այդ երգն ազատվում է այլաբանությունից, և եթե հետազայում ևս Աստվածածնի անունով են սիրերգում կամ վարդ ու սոխակի պատկերով կամ այլաբանությամբ ևս գրում են, այդ ոչ թե նրա համար, որ թույլատրված չէր բացահայտ երգել սեր, այլ որ այլաբանական ձևը դուր էր գալիս կրոնավորներին, իսկ եթե Աստվածածնի անունով են սիրերգում, այդ այնպիսի վճիտ աշխարհիկ երգ էր լինում, որ բանաստեղծները հայտնում էին, թե կուզե՞ք՝ աշխարհիկ սեր հասկացե՞ք։ Մյուս կողմից՝ բանաստեղծությունը 12-րդ դարից սկսած ձգտում է ազատվել կաշկանդանքից, խրթնաբանություններից ու ժածուկ ճառերից, և Դանտեից մի դար առաջ արդեն մեզնում կարիք է զգացվում կենդանի խոսակցական լեզվով գրելու։ Բայց որ գլխավորն է՝ ինչքան էլ շատ միակերպություն կա մեր սիրո երգի մեջ ևս, բայց և այնպես 15—16-րդ դարերում մեր այդ երգը, ինչպես առհասարակ տաղասացությունը, ոչ միայն չի ընկնում, այլ, ընդհակառակն, ավելի դարգանում, ուժանում է և ստեղծվում են շատ ընտիր ու փայլուն բանաստեղծություններ, Առաջ են գալիս վիպական քերթվածներ՝ կրոնական ու այլ բովանդակությամբ, ինչպես նաև սիրավեպ առանց որևէ այլաբանության, նովելլաներ և այլն։ Սրանց կողքին, շատ վաղ դարերից ի վեր, մինչև վերջը միշտ գոյություն է ունեցել գուսանական բերանացի երգը, սիրո և ուրախության տաղը, բոլորովին զերծ որևէ կրոնական կաշկանդանքից և այլաբանությունից։ Բարբախտաբար գրի առնված մնացել են գուսանական «հայրենները», որոնք մեր քնարերգության գահար վարդերն են։ Սրանց մասին էլ կտեսնենք այս գործի շարունակության մեջ։

Բայց նախքան այդ մի հայացք ձգենք մեր եկեղեցական գրականության վրա։

¹⁰⁰ Histoire de la Littérature française par Gustave Lanson, Paris 1895, էջ 84 և հաջ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԱԼՈՒՑՍՆ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏԸ

ՃԻԳԵՐ ԱՆԿՄԱՆ ԱՌԱՋԻ ԱՌԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Ավերմուքների դարերը.—Մենք թեալիոխում ենք այժմ մի պատմական ընդարձակ շրջան, որ կամ անծանոթ է, կամ սակավ ծանոթ, զի մեր պատմաբանները խուսափել են ընդհուպ մոտենալու մեր ժողովրդի այս հինգհարյուրամյա պատմութիւնը 14-րդ դարի առաջին տասնամյակից մինչև 19-րդ դարի սկիզբները։ Այսօր մի մեծ մտայն ու այնպիսի տարածութիւն են կազմում այդ դարերը, որոնք, ընայնով իրենց փոքր հանգրվաններին՝ աղետալի հետևանքներ են ունեցել մեր ժողովրդի համար, ավելի ևս շարաւար, քան արարակա՛ն, սելջուկյան և թաթարական բռնատիրութիւնները։ Այստեղ կարող ենք և կարենք է միայն ընդհանուր կերպով գծել մեր երկրի ու ժողովրդի շարաքատիկ միճակն այս մեծ շրջանի առաջին դարերում։

Ամենից առաջ աչքի է ընկնում իշխող տոհմերի և իշխողների հարաբերութիւնը դրութիւնը, որին ընկերակից էին հարատե պատերազմները, ուստի և երկրի հարատե ավերումն ու ժողովրդի ավելի ևս կեղեքումներն ու քայքայումը։ Թաթարներն ընդունում են մահմեդականութիւն, և ընդհանրապես այլևս բարեհաճ չէին դիպի քրիստոնյա հայերը։ Մուսուլմանների կողմից տեղի էին ունենում սաստիկ ճնշումներ։ Առաջին, 14-րդ դարի երկրորդ տասնամյակից, Պարսկաստանի մոնղոլական հարստութիւնը, որ տիրում էր նաև Հայաստանին, թուլանալով խաղալիք է դառնում զորավոր կառավարիչների ձեռքին և վերջապես ընկնում է (1344 թ.)։ Առաջ են գալիս մի շարք ինքնագլուխ խաներ զանազան կողմերում։ Հայաստանը մնում է Ատրպատականի իշխողների ձեռքին։ Խաները կարճատե տիրակալութիւնով հաջորդում են միմյանց և իրար հետ կռիւլով ավերում են երկիրը մինչև մեծ ավերիչ ևանկթա՛ւուրը։

Այդ ժամանակներում բարեհաջող միջ չէր նաև Կիլիկիայի հայկական թագավորութիւնը։ Պաղարեւ էր հայերի դաշինքը թաթարների հետ. երկրում մեծանում էին երկպառակութիւնները. կաթողիկոսները

հաճախ գիշումներ էին անում կաթուղի եկեղեցուն, ինչ որ խռովութիւններ էր առաջ բերում: Դրսից անընդհատ հարձակում էին շրջակա մահճականները մասամբ այն պատճառով, որ հայերը չէին կտրվում արեւմտյան տերութիւններից, թեև ոչ մի շահ չունեին նրանցից և չէին կարողանում մի ընդհանուր լիզու գտնել գոնե Եգիպտոսի տերութիւն հետ, որի ձեռով և վերջիվերջո 1375 թ. ընկալւում էր կողմերի հալկական անկախ թագավորութիւնը:

Նույն տարիներում Հայաստանին տիրում են երկու թուրքմեն հարստութիւններ—Ղարաղոյունի, որ է Սև խոյի (1378—1469 թթ.), կենտրոնը Քաղբիզում, և Աղղոյունի, այսինքն Սպիտակ խոյի հարստութիւն (1378—1502 թթ.), կենտրոնը Ամիդ (Դիարբեքիր) քաղաքը: Միաժամանակ և Զինգիդ խանի տերութիւններից (կանանց կողմից) լանկթամուրը 1380 թ. սկսում է Ջաղաթայի խանութիւնից (Տրանսօկսիանում—Քուխարայում Սիր-Պարյա գետից հյուսիս, արդի Ուզբեկստան երկրում) իր արշավանքները Պարսկաստանի վրա, ավերում է Նաև Ատրպատականն. ու Հայաստանը, նրա բանակները 1387—1402 թթ. մի քանի անգամ հեղեղում են Հայաստանը և քարուքանդ անում Արցախ, Սյունիք, Նընդակ, Կարբի, Բշնի, Գաւնի, Կողք, Սուրմարի, Կողովիտ, Արճեշ, Կարս, Վան, Մալաթիա և այլն. մտնում են Նաև Կիլիկիա, 1400 թ. անցնում են Անատոլիա, Այստեղ Իկոնիայի (Հոսմի) սուլթանութիւնը 1294 թ. կործանված էր թաթարների ձեռով, և կազմված էին մի շարք իրարուց անկախ իշխանութիւններ. 1299 թ. մի թուրք ցեղապետ՝ Օսման անունով՝ իրեն հռչակել էր սուլթան և հետզհետե գորանալով ընդարձակել էր իր տերութիւնը երկիրը: Կազմվել էր տաճիկների օսմանյան տերութիւնը, լանկթամուրը 1402 թ. շարգում է օսմանյան թուրքերին ևս Անկյուրիայի մօտ, և վերջապէս կազմվում է նրա հսկայական մեծութիւն տերութիւնը՝ կենտրոն ունենալով Սմրդանդ մայրաքաղաքը:

Լանկթամուրի մահից (1405 թ.) հետո մեծ խռովութիւն է սկսվում նրա ժառանգի և նվաճված տերութիւնների միջև. օսմանցիներն ու թուրքմենները վերականգնում են իրենց իշխանութիւնները: Ղարաղոյունիների ցեղապետը՝ Ղարա Յուսուֆ՝ պատերազմում է լանկթամուրի որդի Շահրուհի դեմ (1405—1447 թթ.), ապա նույն պատերազմը շարունակում է Ղարա Յուսուֆի որդի Իսթանդարը (1420—1437 թթ.), մինչև որ դառնում է տեղի Ատրպատականի և Հայաստանի մեծ մասին՝ կենտրոն ունենալով Քաղբիզ քաղաքը: Իսթանդարից ապստամբում է իր եղբայր Ջհանշահը (1437—1567 թթ.), և իշխում է Նաև Հայաստանի մեծ մասի վրա (Այրարատ, Սյունիք, Վասպուրական և ուրիշ կողմեր), Մի առժամանակ համեմատաբար խաղաղում է երկիրը. Ջհանշահի որդին իբրև ընդհանուր կուսակալ Հայաստանի և այլ երկրների՝ նստում էր Նախիջևանում՝ իր ձեռք տակ ունենալով կառավարիչ բեգեր Նրեանում, Վանում, Տփղիսում և ուրիշ տեղերում: Բայց շուտով սկսվում են պատերազմներ Աղղոյունիների և Ղարաղոյունիների միջև, հաղթում են Աղղոյունիները

1469 թ. և տիրում են նաև Ատրպատականին և ամբողջ Հայաստանին ծանր լծով: Նրանց իշխանությունը, սակայն, երկար չի տևում:

Սեֆյան տոհմից Շահ Իսմայիլը (1502—1520 թթ.) Շարսուրում ջարդում է թուրքմեններին, նվաճում է ամբողջ Պարսկաստանը, մայրաքաղաք գործնում և Թավրիզը: Իշխում է Սեֆյան հարստությունը (1502—1736 թթ.): Այս նոր պարսկական տերությունն արևմուտքից սահմանակից է դառնում օսմանյան տերության հետ. սկսվում է զարավոր պատերազմ օսմանցիների ու պարսիկների միջև. Շահ Իսմայիլի օրով հենց օսմանյան տերությանը կցվում են Հայաստանից Կարնո, Կամախի և Մշու գավառները: Բայց երկարատև պատերազմի ընթացքում Հայաստանի գանազան մասերը հաճախ մեկից մյուսին են անցնում մինչև Շահ Արաս թագավորը (1587—1628 թթ.) և հետո: Երբեմն էլ օսմանցիները տիրում են և ամբողջ Հայաստանին, բայց արևելյան Հայաստանն ընդհանրապես մնում է պարսկական իշխանության ներքո:

Այսպես՝ այս երկու հարյուր և ավելի տարիների ընթացքում Հայաստանում իշխել են զանազան տոհմեր՝ մոնղոլ ու թուրքմեն, թուրք ու պարսիկ—բոլորը մահմեդական, թշնամի միմյանց և ավելի ևս հայերին: Պատերազմները գրեթե անընդհատ էին. նույն տոհմի իշխողներն անգամ հաճախ միմյանց դժմ էին նշում, և Հայաստանը շարունակ դառնում էր պատերազմների ասպարեզ: Մահմեդականները, որ վայրագ անգթությունամբ կոտորում էին միմյանց ևս, ավելի ևս մեծ դաժանություններ էին վերաբերում դեպի քրիստոնյա հայերը, որոնց իրենց թշնամիներն էին համարում կռվող կողմերը: Ուստի սուր ու կոտորած, ավար ու ավեր միշտ կախված են եղել անպաշտպան հայ ժողովրդի գլխին: Ոչ միայն լանկթամուրը, այլև ուրիշները մասսայական կոտորածներով քնաշնչում էին ժողովրդին, գերեզմարում, մի տեղից մյուս տեղը քշում: Բնակիչներն իրենք էլ գլխակալության դուրս էին գալիս իրենց ընդհանրից, զնում Փոքր Ասիա, Կ. Պոլիս, Բալկաններ և այլն ավելի մեծ բազմություններով, քան ռուսական և թաթարական արշավանքների օրով: Ավելի սոսկալի է լինում դրությունը, երբ հին պատերազմող բռնակալների սովորությունները հրամայում են ժողովրդին դադարել երկրից դուրս, իրենց ետևում այլու՝ լավ, ավերելով ամենայն ինչ, որպեսզի հետագուց թշնամին միայն ամայի երկիր գտնի: Փանդվում են քաղաքները. գետնի տակն են մտնում Դվինի, Անիի նման վաճառաշահ կենտրոնները. ոչնչանում է արդյունաբերությունը, գրեթե դադարում անտուրը: Պակասում է հողագործությունը, մշակված, բերրի դաշտերը խռպանանում և ամայի դառնում: Չորանում, արմատախիլ են լինում այգիներն ու պարտեզները: Փոքրանում է երկրագործ հայ ժողովրդի թիվը. նրա տեղը հնազանդ բռնում են վաշկատուն թաթարներ, քուլվոր թուրք ու քուրդ ցեղեր, որոնք երկար ժամանակ դեռ չեն դառնում նստակյաց և քուլվորություն ավերում են շեն ու մշակված հողերը, հաճախ հափշտակում անպաշտպան քրիստոնյա ժողովրդի ձեռից այգիներն ու տները: Կրկնվում են համատարած սո-

վերը: Մյուս կողմից՝ սովալլուկ ու մերկ ժողովուրդը տառապում է կո-
ղտալիներին և հարկահան կոլված հարստահարիչների ձեռքին: Օսման-
յան նրկրում ժողովրդի համար մի պատուհան է դառնում նաև օսման-
կաթողվա ասածը: Այս ամենի հետ շարունակվում են կրոնական հալա-
ծանքները և՛ մոլեհանդ կառավարիչների, և՛ ֆանատիկ մահմեդական
ամրոխի կողմից. փակում կամ քանդում են եկեղեցիները, ստիպում են
մահմեդական դառնալ, և թշվառ ժողովուրդը հաճախ բռնի հավատա-
փոխ է դառնում. տեղի են ունենում նաև բազմաթիվ նահատակություն-
ներ կրոնի համար:

Այսպես ահա հայ երկիրն ապրում է մի գրեթե անընդհատ փոթոր-
կահույզ վիճակ և վերջիվերջո մի սոսկալի անկում, տնտեսական ու
կուլտուրական: Հայաստանի պատկերն անգամ փոփոխվում է թե՛ ազ-
գազորներն, ըստ բնակչության ցեղերի, և թե՛ նույնիսկ ըստ աշխարհա-
գրական անունների, իսկ ժողովուրդը հետադիմում է ըստ ամենայնի:
Այսպիսի գրությունն առաջ է եկել հետզհետե, աստիճանաբար, և մեր
պատմաբանները պետք է դեռ նոր պարզաբանեն այս աստիճանական
անկումը բոլոր մանրամասնություններով: Դեռ նոր ունեց է հայտնա-
բերվեն ի միջի այլ բաների նաև հայկական կուլտուրայի նեցուկ հայ
աղնվաղանություն, աստիճանական ոչնչացումը կամ աննշան գրության
վերածվելը, ինչպես, օրինակ, Սյունյաց մեծ իշխանության Օրբելյան
տոհմի, որ սպառվել է 1438 թվականին: Ավելի ևս կարևոր է իմանալ
մեր կուլտուրայի՝ լուսավորության ակումբների՝ վանքերի վիճակը և
նյութական, և՛ կուլտուրական կողմից 14—17-րդ դարերում և հետա-
գայում:

2. Ունիթոռական գրականություն և լատինաբան աղետ հայերեն:
— Այս ամբողջության մեծ շրջանի առաջին դարում հայոց վանքերը
բնականաբար դեռ բոլորովին ընկած չէին: Նրանք էին, որ դեռ շարունակ
հակադրում էին Կիլիկիայի իշխանների և բարձր հոգևորականության
ձգտումին՝ քաղաքական նպատակով կրոնական դիջումներ անելու կա-
թոլիկ եկեղեցուն: Հոռմն արևելյան հայ վանականների դիմադրությունը
խորտակելու համար մի նոր միջոցի է դիմում. նա պարսկական մոնղոլ
հարստության թուլացման սկիզբներում հենց՝ 1319 թ. քարոզիչներ է
ուղարկում Արևելք: Հիմնում են Մարաղայի լատին եպիսկոպոսությունը՝
կենտրոն ունենալով մայրաքաղաքը՝ Սուլտանիա: Հայ վարդապետները
սկզբում հետաքրքրվում են լատին եպիսկոպոս Բարթոլոմեոսի (մեռ.
1333 թ.) ոչ թե կրոնական քարոզներով, որոնցով նա հռչակված էր այն
կողմերում, այլ նրա բնագիտական հմտություններով: Այդ ժամանակ
դեռ ծաղկած գրության մեջ էր Վայոց դավառում Գայլեձորի (Գլաձորի)
վանքը, որի մասին խոսվել է վերևում. նրա վանահայր նալախ Նիցիին,
որ իր աշակերտների մեջ զարթոցել էր գիտության սեր, թույլ է տալիս
նրանցից մեկին՝ Հովհան Փոնեցուն 1328 թ. գնալ հիշված լատին եպիս-
կոպոսի մոտ՝ նրա նոր գիտությունը լսելու և լատիներեն սովորելու:

Ձոնեցին հրապուրվում է կաթուղիկ քարոզչից ու բլատին աստվածաբան-
 նութեան արուեստակերպ ձևերից, հարուստ է կաթուղիկ եկեղեցուն և մի
 քանի բնկերներով 1330 թ. հաստատվելով նրնչակի Ապրակունիս կամ
 Ապարանների վանքում՝ սկսում են քարոզել միացում կաթուղիկ եկեղեցու
 հետ, նրանք ունենում են հետզհետե ավելի ու ավելի հետևողներ նա-
 խիլեանի և Ճահուկի գավառներում. ստեղծվում է կաթուղիկ եկեղեցու
 հետ միանալու հոսանքը և միացումը գործնապես, կամ բնարարություն-
 նը, որ հայտնի է լատիններեն քունիթուություն անունով։

Մունիթուները գործում էին թե՛ բնականացի քարոզներով և թե՛
 զրավոր կերպով։ Մի կողմ թողնելով և նույնիսկ արհամարհելով հայոց
 գրականությունը, անարգելով ամեն ինչ, որ հայկական է—ծես, սովո-
 րություն և այլն, նրանք լատիններենից թարգմանում էին կաթուղիկական
 ոգով կրոնական գրքեր, մեկնություններ, քարոզներ և այլն, նույնիսկ
 լատին ժխտարաններ, հրքմն և ուրիշ բովանդակությամբ գրքեր, որոն-
 ցով տարածում էին հայերի մեջ Արևմուտքի սքոլաստիկական ուղղու-
 թյունն ու գաղափարները։ Այս ունիթուական գրականությունը, հար-
 կավ, գրական արժեք չունի։

Ունիթուների նախանձախնդրությունը լատին եկեղեցու համար այն
 աստիճանի է հասնում, որ նթե հնար ունենալին, հայոց լեզուն կոթխա-
 րինեին լատիններենով, բայց որովհետև այդ անել անկարելի էր, ուստի
 նրանք հայոց գրական լեզուն ձևում են ըստ լատինների. կիրառում են
 նորաստեղծ հռովմական ու խոնարհման ձևեր, նոր տեսակի նախդիրներ,
 բառերի լատինաձև շարադասություն ու համաձայնություն, լատիններենի
 հետևողությամբ կազմված նոր բառեր և արտահայտություններ և այլն։
 Այսպիսով առաջ է դալիս մի ցտարորենակ լեզու, մի լատինաբան հա-
 յերեն, որ բացի հայոց լեզուն խանգարելուց ոչ մի բանի և ոչ ոքի պի-
 տանի չի եղել։ Այս ունիթուական աղճատ լեզուն իր գրականությամբ
 հանդերձ բավական գործածություն է ունեցել և երկար է տևել, մինչև
 նույնիսկ Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստա-
 ցին, որ և 1721 թ. առաջին անգամ վննետկում տպագրել է տվել Պետ-
 րոս Արագունացի քարոզչի «Առաքինութեանց գիրքը...» քնորում [—յո-
 րում, Մ. Ա.] նախ ընձեռին զեթթանց առաքինութեանց... Անդրաձեցեալ
 [=թարգմանալ, Մ. Ա.] ի լատինականէն ի հայ բարբառ, ի դաստեռն
 նախիջանու, ի վաղնջուց ժամանակաց։ Իսկ այժմ ի լոյս տնցեալ [=ա-
 ծեալ, Մ. Ա.] աշխատասիրութեամբ և սրբազութեամբ տեառն Մխիթա-
 րալ վարդապետի Սեբաստացու Արքայ հայր կոչեցելոյ։ Այս դեռ սրբա-
 զրված լեզվով է և վննետկում 1772 թ. կատարվել է դրա երկրորդ տպա-
 գրությունն էլ, որի մեջ հիշվում է, թե թարգմանությունը եղել է 1339 թ.։

Ունիթուների (Յուվիսմ) Որոտնեցի և վանական Պարոտները։—Ունի-
 թուների հայրենամերժ և ավանդուրաց անզուսպ գործունեությունն ա-

1 Գ. Զորբանալյան, Հայկական մատենագիտություն, Վննետկ. 1883, էջ 49։

ռաջ է բերում հուզումներ, խռովութիւն, և բնականաբար լի մնում առանց զորեղ հակազդեցութեան, որ ունենում է իր քաղաքացիական հետեւողները ոչ միայն հայոց եկեղեցու համար, այլև ընդհանրապես կուսութեան, լուսավորութեան և մասնավորապես գրականութեան նկատմամբ: Տաթևի, Գալլեփոլի (Գլափոլի) և մի քանի ուրիշ վանքեր, որոնց մեջ դեռ շարունակվում էր հայկական ուսումը, իրենց աշակերտներին կրթում էին լի-նելու ոչ միայն ուսումնասիր, այլև հայրենասիր, և անաղարտ պահպա-նելու հայոց լեզուն, ինչպես և ազգային եկեղեցին իր ավանդութիւննե-րով: Նրանց աշակերտներն ահա հակառակ են ելնում ունիթոններին և՛ քերականացի, և՛ գրավոր քարոզներով: Այդպիսիների մեջ առաջին տեղը բռնում է Հովհաննէս (Յովհաննէս) Որոտնեցին, Կախիկ մականունով (1315—1388 թթ.)², Նա Օրբելյան տոհմից էր, թի գաւառէն Որոտնոյ ի գեղէն՝ Վաղանդու՝ որդի մեծի իշխանին Ժաւնի, որ էր ի դարձէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ Վասակն էր... յուք իմաստուն և գիտնական Հին և Նոր Կտակարանաց, լուծիչ Աստուածաշնչոյ երբից և արտաբնոց³:

Գրիգոր Տաթևացին ևս իր ներքոյնի⁴ մեջ գրում է. «Գրուով նորա ազատ պայազտտ յազնէ Սիսական բնիկ Հայկազնի. գաւառաւ Որոտնէի իշխան ազգաւ, տիրելով բազմաց և փարթաւ գոյիցա: Օրբելյանները վա-ղուց իրենց համարում էին Սիսական տոհմի ժառանգներ, ուստի դար-մանակի չէ, որ Որոտնեցուն այն տոհմից են դնում: Նա Գալլեփոլի հոյա-կավոր վարդապետ Սասիկ Նիցեոս աշակերտն էր, շատ տասնամյակներ նվիրվել էր ուսման, սովորել,—ինչպես գրում են,—օտար լեզուներ, հմուտ էր գլխավորապես լատիներենին, հետեւելով արեւմտյան ուսման քննարկն և կաթոլիկական դպրոցներում ընդունված մեթոդներին: Նա ուսումնա-սիրել էր նաև հայերի մեջ հուշող ընդունված արտաքին գիտութիւնները, Փիլոսոփ, Արիստոտելի, Պորփիրիի և ուրիշների երկերը: Բազմաճանաչ, իմաստիւք առցեալ,—գրում է Տաթևացին հիշված ներքոյնի մեջ,—ընդ ոգէշուշ մատենի՝ յարտաքինսն վարժեալ սովիւստի: Թի սմանէ ըն-թերցումն սուրբ գրոց և վարժումն արտաքին կրթութեանց, տեսական իմաստից և գործնական արդեանց շարաշարութեանց: Ի սմանէ յոքնա-նկար նորագիծ տառք, և երաժշտական եղանակք... Մեկնութիւն հոգէ-շուշ մատենից... և արտաքինսն արտաքին սովիւստիցա: Ուրիշ տեղեր Գրիգոր Տաթևացին⁵ իր վարժապետն Որոտնեցուն անվանում է «մեծ հետադարձ Հայոց», «ազգիս Հայոց մեծ հետադարձ»:

² Այս քվակն է դնում Մ. Օրմանյանն իր «Ազգայնագրութիւն» մեջ:

³ «Աստուծոյ լիակ-Քաւարաւ և յաշորդաց իւրոց, արարեալ Քաղմա վարդապետի Մեծարեցաւ, Փարիզ, 1880, էջ 14 և հետո: Տպված է Մովսէս Կազանկատովցու «Ազգայնագրութիւն» հատորին կից:

⁴ «Գիրք քարազգեան, որ կաշի մատան հատոր, արարեալ Գրիգորի Տաթևացոյն», Կ. Պոլս, ԹԺՂ (1741), էջ 711 և հետո, սեւերին Գրիգորի ներքոյնի աղբրագարար ոգեալ ի թողումն Թիեղեթոյ վարդապետին խոյ Յոհաննա Որոտնեցոյն:

⁵ «Գիրք հարցմանց... Գրիգորի Տաթևացոյն, Կ. Պոլս, ԹԺՂ—1729, էջ 773. ալիս Ժառանգորդ, մատան հատոր, էջ 731:

Այս շնորհալի անձը թողնում է աշխարհիկ կյանքը և հոստատովելով Տաթևի վանքում, որի հետոց նշանավոր էր հզել իր վարդապետարանով, նա նորից կազմակերպում է այն վանքի դպրոցը և ուսուցանում է այնտեղ բազմաթիվ աշակերտներին, աշխատելով իր ձեռքերած բոլոր ուսումը տալ նրանց:

Այն ժամանակներում հայտնի է դառնում նախիջևանից ոչ շատ հեռու Աստապատի վանքի (Կարմիր վանքի) դպրոցն ևս, ուր ուսուցանում էր սեփական դասընթացի Սարգիսը: Ունիթոսները հենց սրա աշակերտների միջոցով անկարգություններ են առաջ բերում, ուստի նրանց դեմ կռվելու համար Հովհաննես Որոտնեցուն, իր աշակերտների հետ միասին, Տաթևից հրապիրում են Ապրակունիսի վանքը, ուր նա շարունակում է ուսուցանել մինչև կյանքի վերջը: Նա մոտիկից զորեղ ախոյան հանդիսանալով ընդգծեմ Նրնչակի և նախիջևանի ունիթոսների և մեծ ժողովրդական-նություն ստանալով՝ արգելք է դառնում կաթողիկոսյան տարածվելուն հայերի մեջ⁶, ժողովեաց առ ինքն զբազում աշակերտս յամենայն գաւառաց և լուսազարգեալ պայծառացոյց զազգս Հայոց վարդապետօք և քահանայիքս. զոր իբրև արեգակն փայլէր ընդ ամենայն ազգս Հայոց և լուսաւորէր զամենեօքեան զխոռոթեամբս,— գրում է Քովմա Մեծոփեցին⁷, Հետաքրքիր է, որ Ապրակունիսի և Աստապատի վանքերի դպրոցները մեծ հաջողությամբ են ունենում և հռչակ են վայելում ոչ միայն իրենց երկու վարդապետների շնորհիվ, այլև Որոտնեցու աշակերտ և Ղրիմեցի Մադաթիս վարդապետի նշույթական օժանդակությամբ, որ, ինչպես գրում է Մեծոփեցին, էր «ի ծովահայեաց քաղաքէն Ղրիմայս [համալսոցն Կաֆայից, այժմյան Քեդոտսիից], յոյժ մեծատան որդիս, ղրիմեաց զվանորայս Հայոց», «վասն զի զերկուց վարդապետաց դասաւորեսն՝ զՅովհաննու և զՍարգիսն՝ նա պահէր ի շինութեան՝ զԱպրակունեացն և զԱստապատեանն»:

Հովհաննես Որոտնեցին ուսուցանում էր ոչ միայն բերանացի դասավանդությամբ ու քարոզներով, այլև գրավոր աշխատություններով. նա գրած ունի դավանաբանական աշխատություններ, մեկնություններ, քարոզներ և այլն: Ինչպես Գալլեձորի վանքի դպրոցում, Որոտնեցու դպրոցում ևս շարունակում էին ուսումնասիրել հին փիլիսոփայական երկերը, նրանից մնում են Արիստոտելի, Պլուտարխի և Փիլոնի գործերի մեկնություններ, որ նա արել է, անշուշտ, իր աշակերտների համար: Նրա անունով կան նաև առականեր, որոնցից է և հետևյալը.

Ընսի յառականց, թէ զաղուէան բռնեալ կենդանի քերթեցին և մին փողի շափ մորթի ի վերայ գլխին թողին, և այնչափ ի վերայ ազոյն և ի վերայ ճանգերոյն: Եւ թողին զնալ: Յայնժամ մարդիկն տեսեալ՝ ծիծա-

⁶ Ք. Մեծոփեցի, Պատմագրիւն, Փարիզ, 1880, էջ 38 և հտե.:

⁷ Անդ, էջ 18 և հտե., 58 և հտե.:

⁸ Անդ, էջ 15 և հտե.:

դէին Բարձրաձայն, Եւ ասէ աղուէսն. ԵԳԵՄ արեղայ ի մէջ հարսանեաց չեմ՝ որ կու ծիծաղիքս⁹:

Որոտնեցին վախճանվել է 1386 թ., ըստ ուրիշներին՝ 1388 թ. Ապրակունիսի վանքում և այնտեղ էլ թաղվել: Նրա մահվան առթիվ Մեծփնցին գրում է. «Ես սոյն ատուրս հանգեաւ (Որոտնեցին) ի Քրիստոս, և խաւարումն նոյն աշխարհիս Հայոցս¹⁰: Ահա թե ինչպէս է անդրադարձել Նրա մասին նրա երիտասարդ ժամանակակիցը, նրա աշակերտի աշակերտը: Եվ նա, Մեծփնցին, իրավունք ունիւր. «Ջի ոչ միայն սով մարմնական տուաւ մեզ, — գրում է նա, — այլ և սով հոգեւորական»: Այդ հոգեւոր սովը վերացնելու համար Որոտնեցու աշակերտները նրա մահից հետո տեղափոխվում են զանազան վանքեր. «Մեծն Յակոբ զնաց յերկիրն Արարատեան և բնակութիւն իւր արարեալ զսուրբ ուխտն Սաղմոսավանից, որ 20 ամ աշակերտեալ էր Յովհաննու Որոտնեցու, Եւ վարդապետն Գրիգոր զնաց աշակերտօք իւրովք ի դաւառն Եկեղեցաց յերզնկայն. և այլք աստ և անդ ցրուեալ եղին»: Սրանցից Հակոբ ու Միքիթար վարդապետները զնում են Ուտունիք: Ապրակունիսի վանքում Որոտնեցու ամբիոնը ժառանգում է Գրիգոր Տաթևացին, որի մասին կիսովի ենքքեում¹¹:

«Մարմնական սովից» և իշխանավորների բռնութիւններից, ինչպէս և նշութական պակասութիւնից դրիմեցի Մաղաքիա վարդապետի և Հովհաննէս Որոտնեցու մահից հետո, ստիպված է լինում «մեծ վարդապետն Սարգիս, որ ունէր զսուրբ ուխտն Աստապատու», թողնելու իր վանքը և զնալու «ի Հիւր քաղաք սակաւ աշակերտօք ի սոյն ամի դառնութեան»: Նա այնտեղ է անցկացնում թաւաւորս սովոյն դառնութեան, ապա անցնում է Քալբերունյաց գավառը և, տեղի նպիսկոպետի սիրալիք ընդունելութեամբ, հաստատվում է «ի մալրաքաղաք վանն Սուխարայ, որ այժմ Խառարաստոյ վանք կոչի»: «Եւ նստաւ յաթոռ վարդապետութեան, Եւ ժողովեցան աս նա բազումք ի գրոց աշակերտաց և ի կրօնատրաց և յուսումնասիրաց աւելի քան 60 կարգաւորք և ուսումնականք: Եւ ուսոյց զամենայն ժովեզերս վասպուրական գաւառիս ուսմամբ և զիտութեամբ»¹²: Նա այստեղ գործում է 1389—1402 թվականը: Նրա մահից հետո նույն տեղում մեծ աշտողութեամբ ուսուցանում է «պատկառելի քաջ վարդապետն», որ սակայն «ի հալածմանէ անօրինաց» ստիպված է լինում իր աշակերտների հետ զնալու Տոսպ երկիրը, Սալնապատի վանքը, ուր և վախճանվում է 1406 թ.:

⁹ Պէտ, Մատենադարան, հեռ. ՅՍ 57 (նքր համար), 81 (հին համար): Ժողովածու: Հովհ. Որոտնեցու երկերից, Լուծմունք, Գիրք պարզամանք, առակներ (160-րդ էջից): Առակներից հետո (էջ 172) հիշատակուրտն. դրիշը՝ Ռըստաւէտ Սիւրաբուրդի. հավանաբար ի լուսաւար քանից տեւան իւրեանց և վարժապետին Յովհաննու Որոտնեցու: Առակների մի մասը կա վարդապետ պատկերի մեջ:—Հաղորդից ՀՄԶԸ ԳԱ գրականութեամբ ինքուրտեւոր գիր. աշխատակից Վիգեն Կնյուսյան:

¹⁰ Անդ, էջ 15:

¹¹ Անդ, էջ 39:

¹² Թ. Մեծփնցի, Պատմութիւն, էջ 85 և հտե.:

Հիշենք և Արճիշո դավառի Մեծոփա վանքը, որ նշանավոր է Հանգիսանում Հովհաննես անունով մի ուսումնասեր կրոնավորի աշխատությամբ¹³, նա այդ վանքում սովորելուց հետո՝ ցանկանում է ավելի բարձր ուսում առնել և վարդապետական աստիճան ստանալ, նվ՛որովհետև եռյցայր վարդապետ ի ծովեղերս Վասպուրականից, նա մի քահանայի հետ գնում է Հովհաննես Որոտնեցու մոտ՝ տասներկու տարի աշակերտում է նրան, Որոտնեցին 1386 թ. մտադրում է նրան վարդապետական իշխանություն տալ, բայց հանկարծակի հիվանդանում և վախճանվում է, մեռնելուց առաջ պատվիրելով իր աշակերտ Գրիգոր Տաթևացուն՝ Հովհաննեսին վարդապետական աստիճան տալ, Այդպես էլ լինում է, Հովհաննեսն այնուհետև վերադառնալով իր հայրենի երկիրը՝ ծաղկեցնում է Մեծոփա վանքը դարոցով ու շինարարությամբ, նա հաջողում է նույնիսկ մի եկեղեցի շինել այնտեղ յոթ դժվար տարիների ընթացքում՝ 1402—1409 թվականների մեջ, Եվ սկիզբն առար շինութեան սուրբ եկեղեցւոյն յաւուրս Զաղաթային [այսինքն՝ Լանկթաճուրի օրով 1402 թ.], յորմէ ամենայն եկեղեցիք Հայոց ի հիմանէ քակեալ լինէին¹⁴:

Այսպես՝ մեծ խնդրության ու տագնապի, նեղության ու կողոպտւածների, հալածանքների ու կոտորածների, անգամ Լանկթաճուրյան ավերումնքների օրերին կային դեռ վարդապետներ, մեծ մասամբ Հովհաննես Որոտնեցու աշակերտները, որոնք անսպառ հոսանքով, ամեն տնտեսական զրկանքներ կրելով, ճիգեր էին անում լուսավորության ճրագը վառ պահելու մեր վանական դպրոցներում, նրանք պահում էին բազմաթիվ աշակերտների խմբեր, երկար տարիներ, նույնիսկ տասնամյակներ սովորեցնելով նրանց ոչ միայն հայոց եկեղեցու մեջ ընդունված ուսմունքը, այլև արտաքին գիտությունները, որքան կարողացել էին իրենք հեռք բերել, նվ՛ հեշտ չէր այն ժամանակ ուսում առնելը. վարդապետները հաճախ նեղվում ու հալածվում էին, և ստիպված էին լինում մի տեղից մի ուրիշ տեղ թափառելու, անգամ փախչելու իրենց բազմաթիվ աշակերտների խմբերով, Բայց և այնպես նրանց մեծ ճիգերը ապագայում շին մնում. նրանք կարողանում են Հայաստանի որոշ թվով անկյուններում, զոնե ժամանակավորապես, կուլտուրական և եկեղեցական անկման առաջն առնել:

4. Գրիգոր Խլաքեցի Մեղեմը:— Այդ վանքերում ավանդված առարկաների մեջ հզեղ է և գրչության արվեստը, որով գրքեր արտագրելով՝ բազմացնում էին, Այն նկատմամբ կարելի չէ լինել այնտեղ Գրիգոր Մեղեմեցին, Երրորդ հաւատարիմ առն Աստուծոյ Մերի, գոյով ի քաղաքէն իւլաթայ, յաշակերտացն մեծին Սարգսի՝ հոգևոր հարազատ և համշխարհայն, նա չի նստում Սարգսի վանքում (Սուրբար ուխտ), այլ Բղնույաց երկրի Արծկի քաղաքի Յիպան կոչված վանքում, նա պարապում է գրչության մեջ և գիշեր գիրս գրէր, և ղամենայն աղքատս կերակրէր... և

13 Անդ, էջ 52—53:

14 Անդ, էջ 53:

զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր... Եւ 50 ամ
գիրս գրեաց տիւ և գիշեր անհանգիստ տքնութեամբս¹⁶։

Նա ներկայանում է և իբրեւ գրական աշխատող. «Բազում երգս քան-
ծուց և տաղից յիշատակ թողեալ ինքեանս։ Գրել է թղթեր զանազան
մարդկանց ուղղած։ Նրանից մնում է Յիշատակարան աղետից, որ ու-
տանավորով հորինած մի պատմութիւն է Հայաստանի 1386—1422 թթ.
թշվառութիւնների, որոնց ժամանակակից և ականատես է եղել ինքը¹⁷։
Բացի այդ՝ նա զգրից ժամանակաց պատմութիւնս ի լոյս ածէր ի հար-
ցանելն և ի պատասխանատուութիւնս, և զգիրս սրբոց մարտիրոսաց և
վկայիցն որ կոչի Յայսմաւուրց՝ սակաւագրան և անվթար շարագրեալ ի
սրբոց հնոց և նորոց վարդապետացն՝ ի լոյս էած, իր կազմած «Յայս-
մաւուրց»-ի մեջ նա ավելացրել է նաև իր օրով նահատակվածների պատ-
մութիւնը։ Այս անխուշ աշխատավորին իրեն էլ 1425 թ. ավելի քան 75
տարեկան հասակով շարադրելով նահատակում են «պիղծ ազգն Մարաց»,
— ասում է Մեծփնցիի և ասպա պատմում ուրիշ երեք վարդապետների
նահատակութեան մասին ևս։ Ոչ միայն գրասիրութեան, այլև ուսումնասի-
րութեան մի տիպար է եղել այս վարդապետը։ Երբ Գրիգոր Տաթևացին
1409 թ. Տաթևի վանքից Մեծփա վանքն է տեղափոխվում և դասավնե-
ղում է ավելի քան 80 հոգու, Գրիգոր Խլաթեցին, ընալելով իր անցած
տարիքին, մոտ վաթսուամյա հասակին, Արծկեի վանքից գալով այն-
տեղ՝ ունկնդիր է լինում հոլակավոր գիտնականի դասախոսութիւննե-
րին¹⁸։

Ծ. Գրիգոր Տաթևացի։— Տաթևյան վարդապետարանի բարձրագոյն
ուսումը և ժողովրդականութիւնը պահւում և ավելի ևս մեծանում է շնոր-
հիվ Գրիգոր Տաթևացու, որ մի ամանդապահ, գործունյա և բազմազետ
ուսուցիչ է եղել։ Ըստ Առաքել Սյունեցու՝ նա «ընթերցման էր պարապօղ,
աշակերտաց էր մարդօղ... Ժածուկ բանից բացայայտօղ, շի գիշերի
խոկմամբ զիմաստս գրոց հաւաքէր, և տուրընչեան աշակերտացն պատ-
մէր»։ Արտաքուստ էլ նա գեղեցիկ է եղել, այնպես որ երբ ամեն կողմից
աշակերտելու էին զայիս նրա մոտ, — ասում է Առաքել Սյունեցին¹⁹, —
«ենախ ի տեսն ուրախանային, և ասպ խօսիւքն ցնծային։ Նախ ի պատ-
կերին գեղեցկութիւնն խնդային, և ասպ ընդ բարբառոյն համեղութիւնն
գուարճանային»։

Նրա հայրն արճիշեցի էր, մայրը՝ փարպեցի, ինքը ծնված էր մոտ

16 Թ. Մեծփնցի, Պատմութիւն, էջ 41 և հտեւ։

17 «Յիշատակարան աղետից Գրիգորի Խլաթեցու, պատմական վիպասանութիւն, Վա-
ղարշապատ, 1897. հրատ. Գր. Խալաթյան. արտատպութիւն «Երեսօրհան» համագրից, 1897,
էջ 178—182։

18 Թ. Մեծփնցի, Պատմութիւն, էջ 52։

19 «Առաքել վարդապետի տոացիով ներառեան առ քաջ հոգեւոր... Գրիգոր Տաթե-
ւացի...»։ Տպված է Գր. Տաթևացու «Փարսկագրքի» Ամարան հատորի վերջում, էջ 716 և հտեւ։

1446 թ.¹⁹ Վայոց Ձորում, ուր բնակվում էին ծնողները, Երկար տարիներ, ըստ Մեծօփեցու 28 տարի, աշակերտել էր նա Հովհաննես Որոտնեցուն, որից և ստացել էր վարդապետական իշխանությունը Երզնկայում, իսկ ժայռագույն վարդապետական գաղազանը՝ 1387 թ. Ապրակունիսում, Որոտնեցին, վախճանվելուց առաջ (1388 թ.), — ասում է Մեծօփեցին²⁰, — «կոչեաց զմեծ վարդապետն [Գրիգոր] և զընկերակիցսն նորա, օրհնեաց զնոսա... և եղ զԳրիգոր ամենեցուն զուխ և ուսուցիչ, ինչպես երևում է, Գրիգորն արգեն հայտնի է եղել իր գիտությամբ, և նրա հոգեբոր եղբայրներն էլ ցանկացել են, որ նա՝ լինի Որոտնեցու ժառանգը. «Եւ յաշորդեաց յաթուռ սորա [Յովհաննու] քրիստոսածաւալ աղբիւրն և անմուտ արեգակն՝ երկրորդ լուսաւորին Գրիգորինս վարդապետն Տաթևացի հաւանութեան և կամօք մեծ վարդապետին Սարգսի...»²¹ և համշիրակ և եղբարց իւրոց՝ Յակոբայ Սաղմոսավանիցն Արարատեան գաւառին և Քէրգայ Երզնկացու, և ամենայն աշակերտաց զնդինս և ուրիշների, որոնք, ինչպես տեսել ենք, գնում են զանազան վանքեր:

Գրիգորը, սակայն, երկար չի մնում Ապրակունիսի վանքում. երեք նույն պարագաները — սովոր, տնտեսական պահպանությունը, որ ստիպում են Սարգիս վարդապետին հեռանալու Աստապատից, նույն ժամանակում հարկադրում են Գրիգորին թողնելու Ապրակունիսը և իր աշակերտների հետ գնալու Տաթև, «Եւ տունն Օրեբլեանց առ իշխանն Սմբատ՝ որդի Իսանէի՝ թոռն Բուրթլիսի: Սմբատ իշխանը, որ Հովհաննես Որոտնեցու եղբայրն էր, հավանորեն կանչել էր նրան՝ իր մոտ իր վանքում ուսուցանելու: Այդպես էլ անում է Գրիգորը. Տաթևի վանքում ժողովում է ամեն կողմերից բազմաթիվ աշակերտներ և ամեն եռանդով պարապում նրանց հետ 1390—1409 թթ.):

Ըստ Գալիեծորի վանքի ավանդության, ինչպես Որոտնեցին՝ Տաթև-վանքին ևս հմուտ էր ոչ միայն հին եկեղեցական և հայկական գրականություններին, այլ ուսումնասիրել էր նաև հունական փիլիսոփաների գործերը, ինչ որ Արամուտքում ևս անում էին, և ծանոթ էր ունիթոսների մեջ ընդունված գրականությանը: Հավանորեն, ինչպես կարծում են, նա գիտեր նաև լատիներեն լեզուն: Իր դպրոցում նա սովորեցնում էր իր իմացածը, այն է՝ հայոց գրականություն, լին և նոր Կտակարանների մեկնություն, սուրբ հայրերի գրվածքներ, «զգիրս արտաքին իմաստասիրացն», «լուծմունք արտաքին գրոց»²², որ են Պղատունի, Արիստոտելի, Փիլոնի և Պորփիրի գրվածքները և նրանց բացատրությունը՝ Բացի այդ՝ աշակերտներին վարժեցնում էին նաև երաժշտության, նառասացության և զրուության արվեստներին:

¹⁹ Մ. Որմանյան, Ազգագրություն, էջ 1381. Թվականները բերվում են մեծ մասամբ ըստ Օրմանյանի հաշիվների:

²⁰ Ք. Մեծօփեցի, Պատմություն, էջ 17, 33 և հաւ., 56:

²¹ Աստաղատի վանքի ուսուցիչը, որ հետո, ինչպես տեսել ենք, տեղափոխվում է Խոռոզաբադ վանքը:

²² Ք. Մեծօփեցի, Պատմություն, էջ 31, 24:

Գրիգորի համբավի վրա ամեն կողմից հավաքվում են նրա մոտ աշակերտներ, ոչ միայն Սյունիքի զանազան տեղերից, այլև Եկեղիքից, Արարատից, Զուղբուրից, Առտապատից, Շամախուց, Կապանից, Գանձասարից, Փայտակարանից, Քավրիզից և այլն։ Գալիս են նաև Արճնշի կողմերից։ Ինչպես արդեն տեսել ենք, Սարգիս վարդապետի մահից հետո՝ նրա աշակերտներին սովորեցնում էր Վարդան վարդապետը, որ մի լուրս տարի հետո վախճանվում է։ Են որ մնացեալ աշակերտաց նորա, — գրում է Մեծոփեցին, — թողեալ զնացաք ի գաւառն Սիւնեաց առ մեծն Գրիգոր վարդապետն ամենայն Հայոց... Որ և նա ուրախացեալ լոյժ՝ սիրով ընկալաւ զմեզ իրն ղորդիս իւր սիրելի հոգեւոր և բաղձալի, զի հայր նորա էր ի գաւառէն Քաշքերունեաց ի քաղաքէն Արճիշոյ։ Են երկուտասան եղբարք, աշակերտք մեծին Սարգիս, մեք էաք որ յետ մահուան նորա գնացաք յաշակերտութիւն նորա, շարունակում է Մեծոփեցին, հիշելով իր ընկերների անունները՝ վերջին տեղում հարելով ևս նա անարժան Քովմա։ Տաթևացին ժողովում է իր աշակերտներից շատերին և վաթսուների ավելի քահանաներ, ինչպես և Արճնշի կողմից եկած առանձնակու կրօնավորներին և սկսում է յուսուցանել զգիրս արտաքին իմաստասիրացն, ապա և ուրիշ գրվածքներ։ Նա իր զործը կատարում էր զժվար ժամանակում, երբ առ զոյր անդորրութիւն և ոչ հանգիստ խաղաղութեան վասն անօրինաց շարութեան։ Երեսուորն Յուսուփ, տէրն Քարիզու, էառ զՈրոտն ի Սմբատայ իշխանէ, վասն րարեխօսութեան նոցա եկն. և նա ոչ լուաւ աղաչանաց վարդապետին։ Այդ Յուսուփը Պարա ղոյունի, Պարա-Յուսուփն է, որ խնկթափման մահից հետո վերականգնել էր իր տերութիւնը (1405—1420 թթ.)։ Այն ժամանակ Գրիգոր Տաթևացին, թի հալածմանէ անօրինաց, առնելով իր աշակերտներին, 1409 թ. տեղափոխվում է Արճնշի գավառը, Մեծոփա վանքը. վանահայր Հովհաննես վարդապետը սիրով ընդունում է նրանց։ Հավաքվում են զանազան կողմերից շատ ունկնդիրներ ևս, և ավելի քան ութսու արեղա, և Տաթևացին մի ամբողջ տարի պարապում է նրանց հետ, մեկնելով Ս. Գրիգորի հետ ևս զգիրս գրութեան երկոցեան վարդապետաց Գէորգայ լամբրոնացոյն և Արիստակէսի։ Այստեղ էլ, սակայն, նա չի կարողանում հանգիստ կատարել իր ուսուցչական գործը. նրա աշակերտները մի տարի հետո՝ զգաղտագողի առնում են նրան, այսինքն փախցնում են, զնում Արարատյան գավառը, առ մեծ վարդապետն Յակոբ Սաղմոսափանից՝ հոգեւոր հարազատն իւր։ Են մեք ամենեքին վարդապետք և աշակերտք զնացաք առ նա, ավելացնում է Մեծոփեցին, շնորհեալ զնում են և ուրիշները, որոնց թվում և Մեծոփա վանահայրը՝ Հովհաննես Հայտնի լէ, թե ո՞րքան է մնում Տաթևացին Սաղմոսափանցում։ Տաթևից գալիս են նրա աշակերտները և քննորդին, եպիսկոպոս Առաքել Սյունեցին, և վերագարծնում են նրան Տաթևի վանքը, բայց նա այլևս

երկար չի ապրում. հիվանդանալով շուտով վախճանվում է 1410 թ.,
բոս ուրիշներին՝ 1414 թվականին²³։

Ահա իր ժամանակի մեծ վարդապետը, որ շնայելով դժվարություն-
ներին՝ հռանդով անվճատ շարունակում է իր ուսուցչական գործունեու-
թյունը, պարապելով քաղմաթիվ աշակերտների հետ, որոնք իրենց
ավարժապետին հետ աստանդում էին, փախչում Հայաստանի այս կող-
մից այն կողմը, Մեծօփեցին, ցավոք, չի հայտնում, թե ինչպես և ում
օգնությամբ էին ապրում այն ուսումնասիրողների քաղմությունները։ Ան-
շուշտ օգնում էին առանձին անհատներ. վերևում տեսանք ժմեծատան
որդի՝ հզնազգյաց Մաղաթիա վարդապետի նյութական օժանդակությու-
նը վանական դպրոցներին։ Մի նույնպիսի օգնություն հիշում է և Գրիգոր
Տաթևացին իր «Ամարան հատորին» վերջում գրված «Յիշատակարանի»
մեջ (էջ 721)։ Նա իր ուսուցիչ Հովհաննես Որոտնեցուն և ուրիշներին հի-
շելուց հետո՝ ասում է.

Եւ զձարապետ միայնական,
Որ նա հղև մեզ օգնական,
Հոգալ ըզպէտըս մարմնական
Աշակերտաց մերոց լըրման,
Յիշման ի տէր լիցի արժան։

Երևի վանահայրերն էլ էին հոգում նրանց մարմնական կարիքները։
Բայց անշուշտ այդ չէր այնքան նեղություն պատճառում այն սակավա-
պետ մարդկանց, որքան իշխողների կեղեքումը և խռովահույզ վիճակը,
որ արգելք էր լինում նրանց իրենց սիրած ուսումով պարապելու Գրիգոր
Տաթևացին էլ ոչ թե նյութական պակասությամբ էր մտահոգված, այլ,
ինչպես ինքը գրում է²⁴, իրենց ակամա կրած լարշարանքներով, իրենց
ստրկական ծառայությամբ և որ իրենց իսկապես ստրկացած են հղել
խստասիրտ տերերի ձեռին։ Նա խնդրում է, որ Մ. Գրիգորի բարեխո-
սությամբ աստված ազատի իրենց ժյաշխարհակալէն, յըստ հոգւոյ զե-
րողէն և յըստ մարմնոյ նորին արքանեկաց լարաշար տանջողացն։

Գրիգոր Տաթևացու համարվր մեծ է հղել ոչ միայն նրա սրբապետ-
նության և ուսուցչական գործունեության համար, այլև նրա քաղմաթիվ
գրական աշխատությունների։ Գրանցից այստեղ կհիշենք միայն երեք
մեծ հատորները, որոնք տպագրված են զեռ 18-րդ դարում։

Նրա «Հարցմանց գիրքը»²⁵ երկուսն են՝ մեծ և փոքր։ Վերլինիս
վերնագրին է՝ «Հարցմունք Գէորգ վարդապետի և յուծմունք Գրիգորի

23 Թ. Մեծօփեցի, Պատմութիւն, էջ 34, 51 և հաւ. 56 և հաւ.:

24 «Թարգմորք», Ամարան հատոր, Կ. Պոլիս, ի թուին ՌՃՂ (= 1180 + 551 = 1741),
էջ 421, Ս. Գրիգորի քարոզի վերջում։

25 «Գիրք հարցմանց... Գրիգորի Տաթևացւոյն», Կ. Պոլիս, ի թին Հայաց ՌՃԸԸ
(= 1178 + 551 = 1729)։

նորին հարազատինս²⁶։ Այս Գեորգ վարդապետը վերևում հիշված Գեորգ Օրդնկացին է, Հովհաննես Որտոնեցու աշակերտներից մեկը, որ նույնպես պարապել է գրականութեամբ՝ գրելով լուծմունք ու մեկնություն։ Տաթև-վացին մանրամասն պատասխանել է նրա 14 հարցումներին շքազար-լուծեամբ տոմարի Հայկազեան սեփեհ հարիւրից կրկնակի քառից և վե-ցնակ վեցիցն, որ է՝ 836+551=1387 թ.։

Մեծ ռաբրայանց գիրքը, ինչպես հեղինակը հայտնում է վերջում գրված «Յիշատակարանի» մեջ, ավարտել է թի շքազարլուծեան Հայ-կազեան տոմարի ՊԽԶ թուի», որ է՝ 846+551=1397 թվականին։ Գրել է թի խնդրոյ ումմն բանասիրի Ատոմի, բազում միջոցաւ և փախըս-տեամբ ի տեղիս։ Սկզբի «Յատաշարանի» մեջ (էջ 4 և հտն.) հայտնում է, թե գրել է թի խնդրոյ ուրումն աշակերտի Ատոմի, այլև թե իր աշա-կերտներն էլ շատ անգամ աղաչել են իրեն «գլխնդիրս ոմանս լուծանելու։ Ռացի այդ՝ ավելացնում է նա, «Զի աշխատութիւն իմ մի՝ միայն լիցի ներկայիս լսելու, հոգ տարայ և յետնոցն գրուաւ աւանդելու։ Ուրեմն լի բավականացել բերանացի դատախոսելով, իր դասախոսածն ավանդել է և գրավոր։ Դեռ հարց ու պատասխանով հորինված մի դասագիրք է իս-կապես այն բոլոր խնդիրների մասին, որ հետաքրքրելիս են եղել այն ժամանակի հարցասերներին։ «Յիշատակարանի» մեջ (էջ 772) հայտնում է, թե «է՛ ինչ ի սմա հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացուածոյն։ Օգտվում է և արտաքին իմաստունների կարծիքներից։ Կա բան էլ, որ իրենից է գրել։ «Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փունջ մի անուշահոտ բազմերանդ ծաղկանց, կամ շնին թռչնոյ գլխորիսի մեղու, կամ որպէս զլոմայս արույն տա-ռապեալ գոյիւ աղբոս [=պարգե] ընծայեցի ի գանձանակ ճոխութեան ձերդ մեծութեան, իմաստասէր և ճշմարտասէր եկեղեցոյդ Հայաստա-նեայց և ընթերցասէր մտաց։

«Յատաշարանի» մեջ խոսում է իր կիրառած տրամաբանական մե-թոդի մասին։ Դրանից առաջ, գրքի սկզբում, գրել է ամբողջ աշխատու-թյան սմեծ ցանկը—քառասուն զուեւ, վերջից քառասունմեկերորդը՝ ռաբրայանց Գեորգեանը։ Այդ ցանկի գլխավորագություններից արգեն ի-մացվում է գրվածքի ամբողջ բովանդակութիւնը— «գլխաւոր բանքս։ Հետո էլ ամբողջը բաժանում է տասն հատորի, և ամեն հատորի սկզբում դնում է նույն հատորի ցանկը՝ պրակների բաժանած, և այս ամեն մի պրակն ունենում է իբրեւ մի մաս, որի վերնագրի մեջ հայտնում է, թե սմեծ ցանկի» որ կետին է համապատասխանում, օրինակ՝ «զուեւ Գ ի մեծ ցանկէն և առաջին պրակ երկրորդ հատորիս. վասն թիւրութեան հերձուածողաց։ Սլ վերջապես՝ անհրաժեշտ է համարել այդ մեծ գրքի ամեն մի վերին լուսանցքում էլ դնել հատորը, պրակը, բովանդակութիւ-նը. օրինակ, ռաբրայ Բ. պրակ Ա. վասն հերձուածողաց։ Այսպես ամեն

²⁶ Տպագրված է նախօրոյի վերջում, էջ 773—789։

միջոցներ ձեռք է առել, որպեսզի, ասում է նա, դիմելով ընթերցողին, քդիրուս գտցես զամենայն գոր և խնդրեսցես առանց շփոթելու ի կարգի իսրեանցս: Այս ամենը, հարկավ, մի լոկ արտաքին ձև է. բայց այդ միայն վկայում է, թե որքան,— մեր ժամանակի համար անզամ նախանձնի,— մեծ հոգացողությամբ է վերաբերվել նա դեպի իր ընթերցողները, և որքան մեծ արժեք է տվել նա իր գործադրած նյութի բաշխմանը և դասավորությանը:

Այստեղից և ընդհանրապես ճշարտմանց գրքին բովանդակությունից երևում է, որ շատ կարգացած, շատ մտածած մարդ է եղել Գրիգորը, լավ ծանոթ տրամաբանությունը, կշռադատող և համեմատող, դասավորող, տեսակավորող և ուսանողների դուրսբերման համար խորհող, նույն ոգին երևում է և նյութի բացատրության կամ շարադրության մեջ: Ձգտելով հարցումներին ըստ կարելույն լիակատար պատասխանել, բերում է նույն խնդրի մասին զանազան վկայություններ ու պատճառներ, բազմաթիվ կարծիքներ ու լուսաբանություններ, և որպեսզի ընթերցողի համար շփոթում առաջ չգա, սովորաբար դիմում է թվարկության—առաջին, երկրորդ և այլն, թվարկությունները հասցնելով հերթին մինչև 30-ի, և ավելի ևս: Որպեսզի իր գործը թերի և անբավարար լլինի, նա բերում է նաև հակառակորդների կարծիքները և ընդդեմ պատասխանները: Օրինակ՝ տասներորդ հատորի մեջ շատ երկար խոսելով Բվասն հանգերձնայ աշխարհին, մերժում է կաթոլիկների ընդունած ճշավարանն ասածը, և նույն հատորի ԺԳ պրակ դնում է. Բվկայությունը հակառակացն և պատասխանիք նոցին» (էջ 695), այսպես սկսելով. Եկլլ և տեսցուք զվկայությունս հակառակացն և յարմարեսցուք զպատասխանիսն, դի առձեռն պատրաստ լիցին:

Ճշարտմանց գրքին խնդիրները, ընականաբար, ամենամեծ մասով կրոնական են, շրջադէմ նոցա որք դրախտն և զհարկն ասենք, այսինքն ճակատագրի հավատքն ընդունողների դեմ. շրջադէմ հրէիցս, շրջադէմ արիոսեանց: Շրջադէմ հոգեմարտիցն, շրջադէմ Նեստորի և երկարակացն, Եկստոսածախանությունն ըստ Գրիգորիսիս և այլն: Խոսում է և հրեշտակների ու զևերի, մեղքերի և առաքինությունների, մարդու հոգու և բազմաթիվ ուրիշ նյութերի մասին: Հետաքրքիր է մեծ ցանկին ժն գլուխը՝ կամ հինգերորդ հատորը. Բվասն կազմությունն մարդոյն, որի մեջ բերում է ոչ միայն մարդակազմության, այլև ընտանսության վերաբերյալ դիտելիքներ, տալով ժամանակին հետաքրքրող հարցերի պատասխանները: Օրինակ՝ Ս. Գրքի մեջ պատմվում է, թե մարդը հողից է ստեղծվել, ուստի առաջին հարցումն է. Բվասն է՞ր մարդն ի հողոյ ստեղծաւ: Պատասխանի՝ Ասեմք վասն բազում պատճառի. Նախ՝ որպէս ասացաւ ի վերոյ, հողն ունի զայլ ք [=երեք] տարրքն խառնեալ. յորժամ ի հողոյ ասէ՝ [Ս. Գիրք] իմանալի է զդ [զշորս] տարրքս: Ուրեմն՝ մարդն իսկապես չորս տարրերից է կազմված և ոչ թե միայն հողից: Ապա բերում է թվարկությամբ ինն ուրիշ պատճառներ ևս հողից ստեղծ-

վելու, օրինակ՝ Բենեդիկտոս²⁷ զի մայր մեր հոգն է, և՛ սեղան, և՛ տեղիք, և՛ գերեզման. թէպէտ և այլ տարեքն են մեզ ազգականք, այլ մեք ի մօրէ՛ ճանախմքս²⁷:

Կան դատողություններ և ապացույցներ, որոնք շատ միամիտ են. բայց չպետք է մոռանալ, որ հեղինակն ապրել է 14-րդ դարում: Այսուհանդերձ՝ նա եղել է մեծ մտածող, ուժեղ տրամաբանող, և նրա երկերի մեջ կան նաև իր ժամանակի համար շատ լուսավոր մտքեր ևս: Այսպես, օրինակ, ճակատագրի հավատքը հերքելիս՝ իբրև մի երրորդ հիմք դնում է հետևյալը (էջ 8 և հտն.). «Երրորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և ճշմարտ էր, յայնժամ բանս մեր ոչ հետևէր իրացն, այլ իրն բանիցն հետևէր, որ է՝ յայտնապէս սուտ. զի մնացականն ոչ մնացականին ոչ հետևի: Այլ անդրադարձնալ [= ուրիշ կերպ պատասխանելով, այլ կերպ ասած]. զի հետքն՝ ընթացից ոտիցն հետևին, և ոչ ոտքն հետոցն, և ստուերն՝ մարմնոյ, և ոչ մարմինն՝ ստուերին»:

ՄԱԿԱ ՈՐԵՄՆ ԵԱՅՏ Է, զի բանն զիրն ոչ կարէ ճշմարտել, այլ իրն զբանն ճշմարտէ, յորժամ գոյ կամ ո՛չ գոյ...»: Այսպես ուրեմն՝ քանի՜, խոսքը, մտածությունն է հետևում իրականությանը, ոչ թե իրականությունը՝ խոսքին, որ մտածության արտահայտությունն է:

Ավելորդ չէ այստեղ դնել կաթոլիկ և հայկական աստվածաբանություններին հմուտ անձի կարծիքը²⁸, Վաթնացիին անկասկած պետք է դասել ժամանակին գիտնականներուն շարքը: Հարցմանց գիրքը թի ոճով և թե պարունակությամբ համահամեմատ կերպարան և արժեք ունի միջին դարու հուշակալ լատին աստվածաբաններուն, Թոմաս Ակուինացիի, Ալբերտոս Սուաբացիի և Սկոտոս Երինացիի (Thomas Aquinatis²⁹, Albertus Sueviensis³⁰, Scotus Erigena³¹) գործերուն հետ, հանգիստակշիռ առավելություններով և համանման թերություններով: Ասկե կհետևեցնենք թե ոչ միայն լատիներենի հմտությամբ, այլև լատիներեան ընդունած ձևերով ուզած է մաքառիլ անոնց դեմ: Մինչև իսկ կրնանք ասելցնել, թե Հարցմանց գիրքին միջին բացատրություններ կրնան լուսաբանվիլ սկոլաստիկյաններուն լատիներեն դարձվածներուն համեմատությամբ: Սրանից, սակայն, չպետք է հետևեցնել, թե Տաթնացիին լատինաբան հայերենով գրած լինի. նա հորինում է մաքուր հայերենով, Բայց զարմանք չէ, որ այդպես գրելով հանդերձ՝ նա մեկ մեկ գործածած լինի օտարաբանություններ, հատկապես երբ իր կաթոլիկ հակառակորդների կարծիքներն է մեջ բերում:

Գրիգոր Տաթնացու երկրորդ մեծ աշխատությունն է «Քարոզգիրք»-ը:

27 Գր. Յաքոբցի, Գիրք Հարցմանց, էջ մթ-229:

28 Մ. Ունանյան, Ազգագրամ, էջ 2029:

29 13-րդ դարի ամենից գիտուն և մեծ աստվածաբանը:

30 13-րդ դարի սքոլաստիկ փիլիսոփա և աստվածաբան:

31 9-րդ դարում, սքոլաստիկայի հիմնադիրներից մեկը:

երկու մեծ հատոր. առաջինը՝ ռեմեմբրան հատորը³², երկրորդը՝ ակմարան հատորը³³, Այս երկրորդի վերջում (էջ 720 և հետ.) կա հնդինական հիշատակարանը, որից իմացվում է, որ նա քարոզչների գիրքը կազմել է տնտրաստեզհալ ժամանակի ի թուաբհրութեան մեծի յուքն հարիր յիտուն և վեցերորդի ամիս (856+551=1407), ռեմեմբրան հատոր-ն, ասում է, պարունակում է ձկն (=160) քարոզ, և ակմարան հատորը՝ ժՁԴ (=184): Նա հայտնում է, որ քարոզչների մեջ կան այնպիսիները, որոնք իրենք չեն, այլ ուրիշներից են առնված. ուստի վերնագիրների մեջ գրված են «նորին» և «յայլ», «դի յատկացին ի միմեանց, և մի՛ գողացնալ թուեցին տիմարաց մտաց»: Ուրիշներից առած քարոզները բավական թիվ են կազմում, հնդինականների անունները չեն հիշվում սովորաբար: Առաջին հատորի (էջ 15) երկրորդ քարոզն է «նոամեծի Ծօհաննու Որոտնեցու տիեզերալոյս քարունապետի...»:

Այստեղ, հարկավ, լսիտի խոսենք քարոզների բովանդակության մասին, որ շատ քաղմազան է, ընդհանրապես քարոյակրթական և ուսուցական ուղղությամբ: Խոսում է, օրինակ, սիրո, խոհեմության, արիության և գործի, հնդգերի, երկրագործների մասին, այլև ճնի, «հալալ աժուսնության», «վասն արդար վաճառաց և կշոռց», հեղեղեցու խորհուրդների և այլն և այլն: Մեծ տեղ են զուգում նաև սրբերի ու տոների վերաբերյալները:

Տաթևացու Քարոզը, որ իբրև տեսակ, փոխանակել է հին ճառին և «ենբրողանին», լուսի վերդիններիս պերճ ու պաճուճած և խոսնդալից ձևը, ընդհանրապես սառն ու ցամաք է, պարզովի ու հասարակ, խոսված լեզվին մոտ, բայց ոչ միջին հայերենով: Իշխող տոնն է հանգիստ սովորեցնող ուսուցիչ, որ տալիս է լուրջ րացատրություններ. ազատ չէ սքուլաստիկ ձևերից, թվարկություններից և մեկնություններից, որոնք իր ժամանակի մարդկանց համար անհրաժեշտ ու հաճելի են հղել: Առաջել Սյունեցին շափազանց գովելով իր սեփականության Գրիգորին՝ անվանում է նրան «մեծ հոռտոր», «քաջ հոռտոր», «հոգեշարժ լեզուի» տեր: Անշուշտ, նա իր բերանացի քարոզների մեջ ավելի հոռտորական շնորհ է ցույց տվել, քան զբավորների մեջ: Հովհաննես Որոտնեցու թաղման ժամանակ ասած նրա ներքողյանն³⁴ իսկապես հարուստ է ճարտասանական ձևերով—հարցում, բացազանություն, կրկնություն, նման կազմություն, խոսքերի և այլն. կան նաև պատկերավոր և առատաբան արտահայտություններ առանց ճոռճություն, տրամադրի զգացմունքով և ան-

³² Գրիգոր Յաքևացի, Գիրք Փարզութեան, որ կաշի ռեմեմբրան հատոր, Կ. Պոլիս, Թաթև Ռեմբ. (=1789+551=1740):

³³ Գրիգոր Յաքևացի, Գիրք Փարզութեան, որ կաշի Ամարան հատոր, Կ. Պոլիս, Թաթև Ռեմբ. (=1790+551=1741):

³⁴ Գր. Յաքևացի, Գիրք Փարզութեան, Ամարան հատոր, էջ 711 և հետ. «ենարին Գրիգորի ներքողան յորդգաբար քոնալ ի թաղումն տիեզերալոյս վարդապետի իսկ Ծահաննու Որոտնեցու» (զույգ ձև):

կնդծ սիրով լի մի գեղեցիկ ներքողան, Սուրբ Գրքից առած նմանութիւններով մի երախտադրական գովեստ արժանավոր գործչի:

Բայց ինչպէս էլ լինի, այս շրջանի վարդապետների գրավոր երկերը մեծ մասամբ ունեն ու թե գրական-գեղարվեստական արժեք, այլ ընդհանրապէս կուտուրական: Կարելի չէ, հարկաւ, մեր ժամանակի չափանիշով վերաբերվել նրանց գիտական գրւածքներին ու գործունեութիւնը, Առաւելներն ու զույցները, ոին դատողութիւններն անգամ պարզում են այն դարու ոգին ու հասկացութիւնները, կյանքն ու բարքերը, էլ ընք այսու կան նաև բազմաթիւ փայլուն մտքեր ու դատողութիւններ, որոնք այն ժամանակի համար աննշան են: Գլխաւ է մոռանալ, որ այն մարդիկը աքնել է հորինել են գործնական նպատակի համար—պատրաստել, ըստ իրենց ժամանակի հասկացութիւն, գիտուն աշակերտներ, որ ընդունակ լինեին մաքսառնու և ազգային տնկման առաջն առնելու:

Նույնպիսի գործնական նպատակի համար է հորինել Գրիգոր Տաթևացին իր ուրիշ աշխատութիւններն նա, այսինքն՝ ռեկրեստոսի գրոց լուծմունսն, զՍտորագրութեանցն, զՊէրիարմէնիասին, և զԱռաքինութեանցն. նաև զՊորփիրին զպարապմանց լուծմունքն, զՍաղմոսի քաղութոյն, զԱռական քաղութոյն, և զմաստութեանն, և զԺողովողին... զՅորայ լուծմունքն, զՅոհաննու աւետարանի քաղութոյն զԼուծմունքն Արիստակիսի և Գէորգեայ գրութեանն... զՔաղութուն Մատթէոսի աւետարանին, և զԵսայայ քաղութուն, և զԲեկեփորիկն, և այլն³⁶:

Յ. Թովմա Մեծոփեցի:— Քաջերոշայց գամառից էր սա. սովորել է Մեծոփա վանքում, նաև վերնում հիշված Սարգիս վարդապետի մոտ. վերջն աշակերտել է, ինչպէս տեսել ենք, Գրիգոր Տաթևացուն: Նա իր ժամանակի ուսումնասիր ու գործունէր վարդապետներից է և առանձին մասնակցութիւն է ունեցել կաթողիկոսական աթոռը 1441 թ. Սիս քաղաքից՝ Վաղարշապատ տեղափոխելու գործի մեջ: Իր հիշատակը մնում է զխաղորդական երկու փոքրիկ գրավոր աշխատութիւններով:

Նրա առաջին գործն է վերնում շատ անգամ հիշված ռեկրեստութիւն լանկ-Քամուրայ և յաջորդաց իւրոց³⁷, որ դրական արժեք չունեցող մի հասարակ գործ է: Իսկապէս մի տեսակ ժամանակագրութիւն, մեծ մասամբ հիշողութիւնով գրված, երբեմն նույնի կրկնութիւններով: Նվ ինքը հեղինակն էլ լավ գիտե իր գրվածքի թերութիւնը. այսպէս՝ (էջ 44) խոսելով շորս վարդապետների նահատակութիւն մասին, ավելացնում է. «Այս շորս վարդապետքս յաւուրս մեր անօրէնք քայանին... Այս էր ի յ 874 [=1425] թուականին աւելի կամ պակաս. դու անմեղադիր լիւր, գի ծեր էի և յետ 50 տմացս սկսայ. վասն այսօրիկ յետ և յառաջ գրեցի: Բայց և այնպէս Թովմայի աշխատութիւնը պատմական տեսակետով կարևոր է: Հայաստանից դուրս կատարված եղելութիւնների մասին գրածները

³⁶ Տե՛ս Եփրէ հարցմանք, էջ 791. Եփրատակարան տպեցման Գրքարան:

³⁷ Թ. Մեծոփեցի, Քամութիւն, Փարիզ, 1860:

շատ համառոտ են, և մասամբ անճիշտ: Հայաստանի վերաբերյալ պատմությունն սկսվում է 1386 թվականից Սյունիքի ավերումների հյուսիսային թաթարների ձեռով: Այս համառոտ պատմում է Լանկթամուրի 1387 թ. գործած կոտորածներն ու գերությունները Հայաստանի զանազան կողմերում, մի առ մի հիշատակելով տեղերի անունները: «Եւ անտի [Թաւրիզից] լուծալ եկն յերկիրն Սիւնեաց ի վերայ գղեկին Ծրնշակու: և ապա ի վերայ երկրին ծակատուօ՝ էառ զքաղաքն Սուրբ Մարի ի հիմանց տապալնալ զամուրն մեր... և գերեաց զքաղաքն և զամենայն շրջակայ գեղորայսն: և Հայերն ամբանում են Թարգող լեռան վրա, որ թշնամիները չեն կարողանում առնել: «Եւ անտի լուծալ եկն յերկիրն Արարատեան և Կարբու և Կոտայից. և խսարեալ [պաշարեալ] զամուրն Բշեոյ՝ էառ զնա և սպան զնախնդարս աշխարհին զտէր վանական, որ էր այր ի մաստուն և գիտնական... Եւ զայլ ամենայն քաղութիւն հաւատացեալոց շարշարէին տանքանօք, սոսկով, սրով, գերութեամբ, անտանելի շարշարանօք և անագործոյն բարուք ամբարդաձայն արարին զամենալից դաւառն Հայոց... Եւ առնալ զառ և զաւար և զգերին անթիւ, զոր ոչոք կարէ ճառել զսղէտս և զդառնութիւն մերոյ ազգին: Եւ ընթացեալ քաղութ զօրօք ի Փայտակարան Տիդիս քաղաք, էառ զնա և գերեաց անթիւ և անհամարա:

Համեմատաբար մանրամասն պատմում է հաջորդ տարուի (1388 թ.) դարեանը Լանկթամուրի հարձակումը Ղարադղունի թուրքման Ղարա Մահմադի վրա և պարտությունը ծապաղջրում, ինչպես և նույն տարում երա գործի շարգվելը Սասունի վրա հարձակվելիս: Պատմագիրն անձամբ եղել է այս իրողությունների մեջ: Նա գրում է. «Եւ հան զմեզ զառ ի վեր լերինն Խութայ: Եւ հոյն օր հասին զօրք Չաղաթային [= Լանկթամուրի] ի վերայ մեր... եւ հաւ մեզ ի յօգնականութիւն... և մեք ի լեռն ելանէաք... Եւ եւ հաւ առ մեզ... Որ և ես ի ներս կայիս (էջ 21—28): Նա անձամբ եղել է և Վանի մեծ կոտորածի մեջ. «զոր տեսաք աչօք և լուաք ականճօք մերովք: Եւ թայց ո՞վ կարէ պատմել զթիւ գերեացն և զսպանումն անմեղացն... զի յցաւ աշխարհ ամենայն գերութեամբ Հայոց. մեռան քահանայք և աշխարհականք, հաւատացեալք և անհաւատք... Աւաղ և եղով ամենայն Հայոց» զի աւերեցաւ ամենայն երկիրս. զի յԱրճիշոյ մինչև ի տուն Վրաց. և մինչև ի Կուր գետն Աղուանից շաղախեցաւ արեամբ անմեղաց երկիր ամենայն շարշարանօք, սպանմամբ և գերութեամբ: Եւ յետ քնալոյ նորա յաշխարհէս մերմէ եկն սով սաստիկ յաշխարհս մեր և տարաձեցաւ յամենայն տեղիս... Զի ոչ կարեմ պատմել զդառնութիւնս մեր զոր տեսաք աչօք և լուաք ականճօք. զի շնչեցաւ մարդկութիւնս, մանաւնդ Հայկազեան գաւառիս» (էջ 30 և հտն.):

Այս պատմում է, թե 1395 թ. Լանկթամուրը Միջագետքից դարձաւ արշավում է Հայաստանի վրա, սրով ու հրով և գերութեամբ ավերում Երզրեկա, Բասեն, Արարատյան գավառը, Սուրմառի, Կողք և այլն: Դրան էլ հաջորդում է սովը: Կոթի է լինում Չաղաթայի և Յուսուփի (Թուրքման Ղարա Յուսուփի) միջև, որ փախչում է Չաղաթայի ձեռքից, Երրորդ անգամ

էլ Լանկթամուրը 1401 թվին արշավում է մեր աշխարհի վրա, 1402 թ. անգութ կոտորածներ անում Սեբաստիայում, հաղթում է Իւտրումին [=սուլթան Բայազիդին], վերագառնալով ամբողջ, գերում մինչև Վրաստան և ետ գնում իր քաղաքը:

Այնուհետև Մեծփեցին ամելի ու ամելի մանրամասն գրում է Լանկթամուրի հաջորդ Շահ-Ռուհի (1405—1447 թթ.) և Ղարա Ղոյունլի Ղարա Յուսուփի, սրա որդի Սքանդարի (1420—1437) և սրա եղբայր Ջահանշահի օրով կատարված դեպքերի մասին: Շարունակ պատերազմների, հարատև նույն ամբողջութենքը, կողոպուտները, շատ կարճատև խաղաղություն այս կամ այն շրջաններում. այն էլ մեծ հարկապահանջությամբ նեղում են մերկ, ընչազուրկ ժողովրդին: Պատմագիրն իր պատմած եղբայրություններին ոչ միայն ժամանակակից է, այլև ավանատես և անձամբ կրել է շատ նեղություններ: Են այս կակիծ դառնութեանս անճառելի է ընդ գրով արկանել, զայս աղէտ տարակուսանաց նեղութեանս: Բայց սակաւ մի ծանօթութիւն տամ լիտ մեզ եկեղեցի դի լալով լալք զկորուստ ազգիս Հայոց, զի անձամբ ի ներս կայացաւ (էջ 91), և ապա որքան կարող է՝ արտաճմիկ նկարագրում է երկրի թշվառութիւնը: Են այս եօթնամիջ են որ ի ներքոյ գառն պատուհասի կամք. զի սուրն կորոյս, սովն ապան, դերին պակասանաց, ցազանք կերան զմարդիկ, թուլունք կերան զվաստակս... (էջ 95): Վերջին դեպքը, որ պատմում է, Շամշուդին քաղաքի, ապա և Տփղիսի առումն ու կործանումն է 1440 թ. Ղարաղոյունի Ջահանշահի ձեռով:

Ինչքան ըստ երևույթին աննշան է Մեծփեցու այս պատմական գործը, բայց նա դրանով շատ պայծառ տալիս է մեզ իր շարաքաստիկ ժամանակի թշվառութիւնների տխուր պատկերը 1386—1440 թթ., երկրի անկումն ամելի քան Լանկթամուրի ձեռով՝ նրանից հետո իշխող Թաթարների, թուրքմենների ու քրդերի վայրագ արարքներով: Հարատև իշխում է մի մղձավանջային դրութիւն, որ շատ զգայուն սրտով և կենդանի ցուցադրում է մեր այս պատմագիրը, որովհետև ինքն էլ ուրիշների հետ անձամբ ապրել է շատ բան: Պատկերը լրիվ է, քանի որ նա միաժամանակ խոսում է նաև վանքերի և նշանավոր վարդապետների—Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և նրանց աշակերտների անդուլ գործունեութեան մասին՝ Հայաստանում լուսավորության ու գիտութեան ճրագը գոնե վառ պահելու այդ աղետալից դարում: Այդ մենք տեսել ենք արդեն:

Մեծփեցու երկրորդ աշխատութեան նյութն է կաթողիկոսական աթոռը 1441 թ. Սիս քաղաքից Վաղարշապատ տեղափոխելը և Կիրակոս կաթողիկոսի աթոռակալութիւնն ու անկումը հաջորդ երկու տարում³⁷: Ակզքում անուններով հիշում է այն նշանավոր վարդապետներին, որոնք զանազան վանքերից հավաքվելով եկեղեցական ժողով են անում: Են

37 Թավմա Մեծփեցու գեթյատակարանը, հրատարակեց Դատագրատես Կարապետ Կասաբյանը, Քեֆլիք, 1892:

այլ քաղուժ վանորայք և կրօնաւոր սուրբ հարք և պատուական երիցունք անխի քան զերեք հարիւր անձինս և քաղուժ միայնակեացք. և ազատք և որդիք ազատաց ձեռնաւորք և տանուտէրք. և անթիւ և անհամար քաղ-մութիւն ժողովորդեան՝ արանց և կանանցն, Մի խումբ հեռավոր վարդապետներ և եպիսկոպոսներ դրավոր թղթով իրենց համաձայնութիւնն են տալիս ամբողջ տեղափոխութեան համար: Ապա Մեծոփեցիին մի առ մի թվում է այն պատճառները, որոնց հետևանքն է եղել կաթողիկոսական ամբողջ տեղափոխութիւնը, որ կատարվում է Հայոց եկեղեցու անկման առաջն ամսելու համար: Այդ վերաքերում է Հայոց եկեղեցու պատմութեանը³⁸, Այստեղ այն միայն պետք է շեշտել, որ այդ խնդիրն, ինչպես տեսնել ենք, մեր քաղաքացիական մեջ արժարժված էր դեռ 1300 թ. Ստեփաննոս Օրբելյանի թղթի մեջ և այժմ, մոտ դար ու կես հետո, իրագործվում էր Գրիգոր Տաթևացու և ուրիշների աշակերտների լավագույն հոգևորականների ձեռով, որոնցից մեկն և այլ դործին նախածնե-նողներին ու ձեռնբերեցներին էր ինքը՝ Թովմա Մեծոփեցին:

Բայց նրանք եկեղեցական դասի մի փոքր մասն էին կազմում, այն էլ ոչ ամենքը լավագույններին: Այն կողմում կար կրօնավորներին, վանականներին ստվար մեծամասնութիւնը, նրանք, այսպես ասած, աշխարհական վանականներն էին, որոնք վանքերից օգտվում էին միայն իրենց վախճանների և հաճույքների համար, իսկ իրենց կենցաղով չէին տարբերվում աշխարհականներից և երբեմն ամեն տեսակ արատներով ապականված և ավելի ևս ընկած քան աշխարհականները:

Թովմա Մեծոփեցին իր Պատմութեան մեջ հանդես է բերել 14—15-րդ դարերի անձնվիրութեամբ աշխատող լավագույն վարդապետներին, իսկ այստեղ, նրա այս փոքրիկ նրկի մեջ մենք տեսնում ենք եկեղեցական դասի վատթար կողմերը 15-րդ դարում, նրա բարոյական քայքայումը, զեղծումները, խարդավանքներ, կաշառակերութիւն, անուղղա և անկարգ ու վավաշ, հեշտասեր ու ցոփ կենցաղ և այլն: Անառակութեամբ և արքեպիսկոպոսի և պիղծ վարույթ շրջէին, և ինքեանք կապող և արձակող նստէին Հայոցն (էջ 56).— և այսպես իրենք կաթողիկոսները:

Վանական կրօնավորների անկման սկիզբն էր առել շատ վաղուց. ներսնա Շնորհալու գրվածքների մեջ արդեն այդ տեսանք, Այդ դրութիւնը երբեմն զորանալով, երբեմն թուլանալով հարատեւ էր, և 15—16-րդ դարերում արդեն, կարելի է ասել, ծայրահեղութեան էր հասել: Թեպետ կային, անշուշտ, և սրբակրօններ, բայց նրանք փոքրամթիւ են եղել և հեռագհտե կորցրել են իրենց ազդեցութիւնը: Այդ է պատճառը, որ էջ-միսիներ 1441 թ. դառնալով եկեղեցական կենտրոն, երկու հարյուր տարի շարունակ, մինչև 1640-ական թվականները, չի կարողացել դառնալ նաև կուստուրական կենտրոն և առաջ բերել գրականութիւն:

³⁸ Տե՛ս անդ, էջ 7—48. Կ. Կոստան. — Կոստան. Ս. Էջմիածնի վերանորոգութեան քերականութիւնը

1. Կենսագրական:— Տաթևյան դպրոցի առաջնակարգ հեղինակա-
րանաստեղծն է Առաքել Սյունիցին, որի կենսագրությունն մասին շատ
բան չգիտենք: Նա Գրիգոր Տաթևացու քեռորդին էր և աշակերտել էր
Նրան, ինչպես պետք է հղարակացնել Նրա հետևյալ տողերից³⁹.

Ձմեռ վարդապետն իմ դասասաց,

Գրիգոր անուն պատճառ բարեաց,

Յիշէք յաղօթս ձեր առ աստուած...

Ձիմ մեծ բարունապետն յոյժ իմաստասէր

ՁԳրիգոր մեծ ճգնաղգնաց աղերսէք առ տէր...

Ձմեռ վարդապետն իմ հանճարեղ...

Առաքելն արքայիսկոպոս էր, Վիսնիաց վերադիտողը, ախինքն
գլխավոր տեսուչ, առաջնորդ, որ նստում էր Տաթևի վանքում: Նա քա-
կանարար հովանավորում և օթանդակում էր իր առաջնորդարան վանքի
ժաղկմանը: Ինչպես տեսել ենք, նա անձամբ ուրիշների հետ գնում էր
Սաղմոսավանք՝ Գրիգոր Տաթևացուն իր աշակերտներով վերադարձ-
նելու Տաթև, որտեղից նա այլազգիների պատճառով ատիպլած հեռացել
էր: Քավմա Մեծոփեցին, որ Տաթևում լսում էր Գրիգորին, շատ զովում է
Առաքելին, թե էր սուրբ ուխտին առաջնորդ հեղահոգին և քնարեայն յո-
րովայնէ՝ սուրբ եպիսկոպոսն տէր Առաքել և վե՛ծ իմաստասէրն, քուրոր-
դին մեծ վարժապետին, որ ունէր զմիտքն իբրև զհրեղինաց. և էր սիրող
ամենայն առաքելութեանց: Ուրիշ անգամ այս պատմագիրը Նրան ան-
վանում է Վիսնիացի եպիսկոպոսն և վարդապետն Տէր Առաքելը⁴⁰:

Գրիգոր Տաթևացին էլ 1407 թ. գովեստով է խոսում Առաքելի մասին,
գրելով թե իր գրքով⁴¹ հիշատակումն լինի՝

Նախ քեռորդւոյն իմոյ ըստ մարմնի,

Մընընդամիտ երգաբանի,

Առաքելոյ առաքինի,

Ըս Սիւնական զըլխոյ արհի:

Վերջին տողից էլ իմանում ենք, որ Առաքելը եղել է Սյունիքի օսր-
հինք, որ է՝ գլխավոր առաջին եպիսկոպոսը, արքայիսկոպոսն ու առաջ-
նորդը (գլուխը):

2. Երկերը:— Բացի առաջնորդական գործերից և դրականութիւնների՝
նա ամենայն հավանականութեամբ ունեցել է նաև ուսուցչական գործու-
նեութիւն, և իր աշակերտների համար հորինել է Վեկնութիւն կամ հա-

39 Առաքել Սիւնիցի, Աղոթգիրք, Հրատարակեց Մ. Պետրոսյան, Վենետիկ, 1207, էջ
229, 271, 332 (հիշատակարանների մէջ):

40 Պ. Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 51, 53:

41 Գր. Տաթևացի, Գիրք Չարագողութեան, Ամարան հատար, Վերջին հիշատակարան, էջ 731:

մաստ լուծմունք Սահմանաց՝ գրողն Դաթի Անյաղթի, և ժերականու-
թեան մեկնութիւնն կամ ժերականութեան լուծումն: Եվ իդուր լէ, որ
Մեծովնցին նրան ժմաստաւէրն է անվանում:

Բացի այս երկուսից՝ Առաքել Սյունեցին ունի նաև բազմաթիւ ուրիշ
արձակ գրվածքներ, մեծ մասամբ քարոզներ և ներբողներ⁴², բայց նա
ավելի լափածո գրող է, մի ժենդամիտ հրգայաց, արգասավոր քա-
նաստեղծ: Տաղարանների և զանձարանների մեջ կան բազմաթիւ տաղեր,
որոնց հնդինակ գրվում է Առաքել Սյունեցին կամ ՎՏէր Առաքելը կամ
ՎՏէր Առաքնալը, ինչպես նա ինքն իրեն անվանել է իր գրվածքների
մեջ: Բայց կան շատ այնպիսի տաղեր էլ, որոնց հնդինակը հիշվում է լոկ
ՎԱռաքնա անունով, և այդպիսիները կարող են նաև Առաքել Բաղիշե-
ցունը լինել: Համաստի կամ հավանորեն Առաքել Սյունեցունը համարում
են մոտ Հիսուս տաղ և մի մեծ աստղարարշխական քերթված Վլասն եր-
կոտասան կենդանակհրօյիցն... ասացեալ ի յԱռաքել վարդապետէս, մի-
շին կա նաև այս տողը. ՎՏէր Առաքել գրեցի զայս բանս⁴³: Այստեղ քննու-
թյան շնք առնիլ նրա այս երկերը, այլ միայն նրա մի մեծ քերթվածը,
որ հայտնի է ՎԱղամգիրքն անունով: Առաքել Սյունեցին, քստ երեսույ-
թին, ունի նաև աշխարհիկ ոգով բանաստեղծութուններ, անգամ սիրու
երգեր, բայց տողերիս գրողը ձեռի տակ շունի անպիսիք⁴⁴:

Ձ. Աղամգիրք Գ:— Առաքելի Աղամգրի երրորդ տպագրութիւնը⁴⁵
կազմված է երեք զրբերից, որոնք ոչ թե նույն երկի մասերն են, այլ
ամեն մեկը մի առանձին գործ է. բայց երեքն էլ վերաբերում են նույն
նյութին, առաջին մարդկանց—Աղամ-Նվայի մեղանշման ըստ Ս. Գրքի,
կեննից ատաղ 1401 թվականի սկզբին հորինված է երրորդ (Գ) գիրքը,
ինչպես ինքը հնդինակը հայտնում է այդ գրքի ճիշտապարաններն
մեջ⁴⁶: Այդ մի փորձ է մի նոր գրական տեսակի: Առաջին գլուխը ութ-

⁴² Բազմաթիւ, 1913, մարտ, էջ 97—101. Մ. Պոտուշյան, *Մատենագրութիւնը
Առաքել Սյունեցւոյ*.—Այստեղ հիշված են 12 արձակ գրվածքներ, որոնց վրա պետք է ավե-
լուցնել նաև վերևում հիշված ներբողյանը, որ նա ասել է Գրիգոր Տաթևացու մահվան
առթիւ:

⁴³ Տպագրված է 1792 թ. Նոր Նախիջևանում, Հովհաննէս Ծղեկացու Վաղագս երկ-
նային շարժմանն իսկված է «Տեսարակ համառոտ և լի... վերևագրով» ուշիտոթյան
հետեւ, էջ 62—73:

⁴⁴ Ռուսերեն թարգմտված Վալդե Բանաստեղծության ծաղկաքաղիչ մեջ (Антоло-
гия армянской поэзии, под ред. С. С. Арутюняна и В. Я. Кирпичева, Москва,
1940), էջ 259—267: Վերաբեր (перевод М. Кузмина) վերնագրով, Առաքել Սյունեցու
անունով աղված են 19 քաղական, որոնց շատ զգնեցիկ սիրու երգի տներ են: Ոչ մի
կնքայ հետաքրքիր չեղով ինձ գանել դրանց հայերեն թնագիրը: Այդ ժողովածուի հայ
խմբագիրն էլ լիարտազգով հայտնել, թե որտեղից են թարգմանել տվել հիշված բանաս-
տեղծութիւնը: Ծաղկի է, որովհետև Տեղ Առաքելի մաննագնդների գործերից մեկը պիտի
մնա ասանց եկատի անվելու այս աշխատության մեջ:

⁴⁵ Ս. Սիմեոնի, *Աղամգիրք, Երեք գիրք՝ Ա, Բ, Գ, Առաքելների բաղգատոթյամբ*. Հին
պատգրութիւնների մեջ՝ 1727 թ. և 1799 թ. պակասում է Բ գիրքը:

⁴⁶ Անդ, էջ 221. Ե յուժ հարիւր Հայոց թուական և լիսներորդ մտեալ Նոր ամս. էջ
223. Ե յուժ հարիւր Հայոց թուական և լիսներորդ սկսեալ Նոր ամս:

վանկանի քառասուղ նույնահանգ տնեւոյ (թիւով 30), դրամատիկական
ձևով մի հորինվածք է, մենախոսութուններ Ադամի և Ծվայի, և կամ
խոսքերի փոխանակութիւն այս երկուսի միջև, Դրախտից արտաքսվե-
լուց հետո է. նախ՝ ինչպես մի տեսարանի մեջ հանդես է գալիս Ադամը,
հետո՝ Ծվան, Դիմում են խաբող բանսարկուին, թե ինչու՞ նա նախանձում
է մարդուն, կեռջը դարձնելով իր լարիքի ընկեր՝ զրկել է նրանց անճառ
փառքից, անմահ կյանքից, ինքն էլ ուրիշ լռատվելով պիտի ժառանգի
անեծքն ու անշեշ հուրը։ Բանսարկուի վրա հարձակվելուց հետո՝ հեշում
են իրենց կորցրած վիճակը.

Ադամ ասէ.

Ջերդ զարեցակն էի մարմնով,
Ճառագայթեալ պայծառ հողով.
Աստուածատիպ ծաղկեալ լուսով,
Ընդ հրեշտակաց պարակցելով:

Ծւա ասէ.

Եւ որպէս հարսըն զարդարեալ,
Եւ յառագաստ լուսոյ քաղմեալ.
Որպէս դըշխոյ փառօք հրճուեալ,
Նորանշոյլ ճառագայթեալ:

Ադամը մեղմութեամբ հանդիմանում է Ծվային. սա մեղքը ձգում է
իրեն խաբողի վրա.

Ծւա ասէ.

Ինձ վայել է՝ դոր դուն ասես,
Պատճառ չարեաց եղէ ես քեզ.
Բայց դու ականջ դիր որ լըսես,
Զիւ հէնց խաբեաց՝ զինչ ես ըզքեզ:

Ադամ ասէ.

Ես քի սիրոյ քո յաղթեցայ,
Վասն այն ի քէն հէնց խաբեցայ.
Ով որ կընողն ա՛յլ հաւատայ,
Այսպէս շարիք լինին նմա:

Ծւա ասէ.

Ես վասըն քո լար լկամեցայ,
Վասն ա՛յլ փառաց զայն խորհեցայ.
Քո ինձ լըսելն ես լշահեցայ,
Այլ զքեզ քան դիս առակ տեսայ:

Աղամբը շարունակում է իր հանդիմանական խոսքերը, Եվան արդարապես է իրեն.

Եւս ասէ.

Ինձ լըսեցիր վասն փառաց,
Հանդիպեցար անարդանաց.
Համբերեսցուք շարարանաց,
Քանզի կերպք մեք հետ իրաց:

Հետո երկուսն էլ զզջացին ողորմ են իրենց վիճակը.

Աղամ ասէ.

Ահա բանամ զբերանս ցաւօք,
Աղաղակեմ հառաչանօք.
Մաստիկ գոլեմ դառն արտասուօք,
Քանզի ի հուրն անկայ աղջօք:

Եւս ասէ.

Կըսկըծեցաւ սիրտս ի սիրիս,
Ընդ ճաշակելի դառնն պտղիս.
Մորմոքեցաւ առ իս հոգիս,
Ընդ բարքառել թիւնատրիս:

Աղամ ասէ.

Հառաչելով դանձն իմ բախեմ,
Գոշմամբ ըզսիրտըս պատահեմ.
Ծիչ բառնալով աղաղակեմ,
Միինչն ի հող դարձեալ նիրհեմ:

Եւս ասէ.

Քունըս հատեալ է ինձ յաշաց,
Ի սաստկագին հառաչանաց.
Երկունք մահու զիս պաշարեաց,
Ձի ինձ անշէջ հուրն է վառած:

Աղամ ասէ.

Լալով իմ սիրտս ոչ հանգարտի,
Որքան ողորմ՝ հոգիս մաշի.
Հեղձամղձուկ լինիմ յերկրի,
Ծնտո ի հուրն անշիջելի:

Եւս ասէ.

Ինձ հուր վառեալ կայ ի սըրտիս,
Եւ մորմոքէ միշտ քզհոգիս.
Մուկս եւ ծրծումք այս մըրըրկիս
Չթողու հանգչել ինձ յաշխարհիս:

Աղամ ասէ.

Ես որպէս մոմ հալեալ դողամ,
Հառաչանոք զանձն իմ ողբամ.
Թ' յորժամ մատնիմ ի դատաստան,
Աստուծոյ փ'նչ տամ պատասխան:

Եւս ասէ.

Դու որ յինչն եղեր խարած,
Այգքան ողբաս տարակուսած,
Ես որ պատճառ եղէ լարեաց,
Ինձ թէ քանի՜ հըր կայ վառած:

Վերջը նրկուսն էլ մեղքը նշում են տառապան վրա, ասելով, որ եթե
նա ծառն ու պտուղը կամ օձը ստեղծած չլիներ, կամ իրենց պատվիրան
սոված և անձնիշխան թողած չլիներ, ապա.

Յկոք խարեալ որպէս անբան,
Կամ մերկացեալ զփառս անվախճան,

Շարունակութեան մեջ իշխում է ոտանավորով մեկնաբանութունը
հեղինակի իրողից, թի ինչո՞ւ նախամարդերն այնպիսի փորձանքի պիտի
հանդիպեին: Նա մեղադրում է նախնիներին, որ օձին են յոնչ և ոչ աս-
տուծուն. երանք պատասխանում են, թի իրենց հանցանքը մի իրաւո
պիտի լինի մարդկանց համար: Այսմը դարձաւ ողբում է, որ կորցրել
է իր նախնին վիճակը: Հեղինակն իր կողմից դիմում է բանասարկութեան և
սին՝ ուսմել խոսքերով բնորոշելով նրանց. դեւերը պատասխանելով՝ ար-
դարացնում են իրենց: Ապա նա մի գլուխ նվիրում է «արարչութեանը» և
վերջին գլուխը (Ժ), դարձաւ սկզբն օձին և բանասարկութեան, թէ որպէս
պատրեաց զնախնիսն: Այս է ահա այս «Աղամ գրքին» Բ—Ժ գլուխների
բովանդակութիւնը:

Միջը կան սակավթիվ գեղեցիկ տներ. բայց այնքան մեծ տեղ են
բռնում մեկնութիւնն ու դատողութիւնները ժամանակին հետաքրքրող
կրօնական հարցերի մասին, որ ամբողջութիւնը դառնում է ձեռվ անկա-
տար մի երկարաբան գործ: Հեղինակը չի կարողացել մինչև վերջը պա-
հել սկզբնական հղացման ձևը. գործող անձներին—Աղամ, Եվա, բանասար-
կու, օձ, աստված—հետզհետե բնմ հանելով՝ նրանց բերանով հայտնել
կարևոր համարած նյութը: Այդ. երեխ, անհնարին է եղել այն շրջանում.

ծրք իշխում էր սքողաստիկական մեկնաբանութիւնը, որը բանեցնելը համարվում էր ամեն հեղինակի համար մի անհրաժեշտ պահանջ ու պարտականութիւն, մասնավորապէս որ Առաքելն իր այս աշխատութիւնը հորինել է Քրիստոսի Տաթեւացու հրամանով ու ժրագրով և ընդ որում ուղղեաց ըզկարգ բանին ըստ իւրաքանչիւր պատշաճին, ասում է նա երկրորդ հիշատակարանի մեջ⁴⁷։

Բայց և այնպէս Տէր Առաքելի այս բանաստեղծութիւնն մեզ որոշ չափով կա մի նորութիւն, որ ըստ երեսփոխ հաճելի է եղել ժամանակակիցներին։

4. Աղանգիրք Ա։—Առաջին դիրքը բաղարարութիւնն չի տվել բանաստեղծ հեղինակին իրեն. ուստի նա 1403 թվի սկզբներին գրել է մի ուրիշ «Աղանգիրք», ըստ տպագրածին՝ Ա-ը⁴⁸, ըստ գրութիւնն մասնաւոր կի՝ երկրորդը։

Ի յուր հարկը շալոց թվական,
Յիսուսն՝ երկու մտեալ նոր ամ,
Խորհրդաւոր բանքս գրեցան՝
Ի խրախուսիւն սըրտից մարդկան։

Այս գիրքն էլ նախորդի պէս լի է նման թերութիւններով և ամէնիս մեծ չափերով, որովհետեւ ամբողջի ժամայն էլ ամէնի մեծ է. բայց անպայման մեծ են արա և առավելութիւնները. Այս անգամ Առաքելը գրել է մի գեղեցիկ վիպական բանաստեղծութիւն, մի գրական տեսակ, որ վաղուց արդեն սիրելի էր հայ ընթերցողներին. նա հորինել է մի կրօնական քերթված՝ Նյութ առնելով Ս. Գրքից նախնիների մեղանշումը—դրախտի կորուստը, ինչ որ շատ ուշ դարձած է բանաստեղծութիւնն առարկա այլ ազգերի մեջ. Այս քերթվածն իր վիպական մասով մի սիրուն նորութիւն էր մեր կրօնական բանաստեղծութիւնն մեջ, մի ուշագրավ ընթերցանութիւնն գրվածք, որ բաղարարութիւնն է ամէն ոչ միայն ժամանակ

47 Անդ, էջ 324. քերական և հեռակալ անհրաժեշտ.

Վերադարձնել իմ ըստ հոգւոյ,
Ըն ազգակից հիշքն մարմնայ,
Նա հրոսմեաց ինձ գրեկալ
Զտանաւորքս ըստ խորհրդոյ.
Առաջ գրեկ ինձ ըստ կորգի
Յազազս նախնեաց յիշատակի,
Վասն Ազամայ և Ուայի,
Ի զմա օճին և բանաստեղծի.
Բարեմտեմ յայտ պանծալի,
Մեզ իմաստից, ժաւորք շնորհի.
Ի նայն շնորհ մասն ինչ տաի.
Զտանաւորքս շարագրեցի...

Ապա 18 գեղեցիկ անհրաժեշտ զովարանում է նա Գր. Տոթեւացուն։

48 Անդ, էջ 325.

նակակիցներին, այլև հետազա դարերում, անգամ 19-րդ դարում, ինչպես
երևում է այն հանգամանքից, որ դա երկու անգամ ապագրվել է 18-րդ
դարում՝ 1721 և 1795 թվականներին՝ Այժմ էլ դրա որոշ մասերը կար-
գացվում են հաճությամբ:

Պատմվածքը ճաշակավոր է. Աստվածաշնչի պարզ գրույթը մոխր-
րած, կենդանացրած է՝ ստեղծելով արտաքինի և ներքինի—հոգեկան
կողմի համար թարմ մանրամասնություններ, նոր մոտիվներ, միջադե-
պեր ու նկարագիրներ:

Ակզբում, Ա գլխի մեջ, պատմում է արարողության մասին, իսկ Բ
գլխի մեջ խոսում է «Վասն գեղազարդության նախնեացն և դրախտին»:
մի նոր հղացում, որ լկա Ս. Գրքի մեջ: Ամբողջապես լույս ու փայլ է,
ծաղիկ ու բուրմունք, անմահության հոտ, բերկրանք ու ցնծություն: Եվ
երջանիկ է Ադամն իր փառքով:

Անդ լույս սիրոյն ճառագայթէր,
նա խընդութեամբ փառքըն փայլէր.
Ուրախութիւն յորդահոսէր
նա հըրճուանաց ձայնըն հընչէր:

Այս գլուխը (20 տուն) գրվածքի շքեղ նկարագիրներից մեկն է. հա-
վասար գեղեցիկ են գրեթե բոլոր տները:

էր փառք դրախտին անպատճելի,
Ձըքնաղատնա և սըխրալի,
Ծաղկունքըն տայր փայլիս փայլի՝
Արեգական նման և լուսնի,
Դժմքն Ագամայ փառք ծաղկեալ,
նա որպէս լույս ճառագայթեալ.
Ծովմունք լուսոյ անտի հոսեալ
նա որպէս հուր փայլատակեալ...
...Բուրէր և հոտ անմահութեան,
Բերկրեալ խայտար ինքն ընդ ինքեան:
Ագամ ծաղիկ էր նորածին,
Հուսարողորդ զարնանային,
Փըթթեալ փառք ի մէջ դրախտին՝
Մափըս ծափի տայր ի սըրտին...
Ոտքըն ճեմս առեալ պարէր,
ի մէջ ծաղկանցն որ վառ վառէր
Ձեռքըն ծափըս հարկանէր,
Ձի խընդութեանցն ոչ հանտարտէր:
Մառքն և ծաղկունքն որ ի դրախտին՝
Ձերդ զարեգակըն փայլէին,
Ցանուչահոտ քուրմանց նոցին՝

Որպէս թըմբոհալ լինէր նախնին,
 Խարժեովն անմահ էր 'ւ անթառամ,
 Փառօք ծաղկեալ էր զանազան,
 Սըրտիւ ցրեծայր խրախճանական,
 Բերկրեալ ի փառս արքունական...
 Անդ հոգ զրախտին փայլըս փայլէր,
 'ի ի շրոյն ցումունք լուսոյ հոսէր,
 Օգր զանմահից հոտըն բուրէր,
 Հռւրքն վառեալ ճառագայթէր:

Ամեն ինչ լուսամբօր ու փայլուն էր, բայց միակերպ չէր աստծու և
 մարդու, ծառերի ու ծաղիկների լույսը,—ասում է բանաստեղծը.

Անդ կերպ լուսոյն էր զանազան,
 Յեղ մ' անեղին, ցեղ մ' եղական,
 Ա՛յլ ազգ զրախտին, ա՛յլ ազգ մարդկան,
 Մառք և ծաղկանցն ալլ զանազան:

Բանաստեղծը տեսանելիքի հետ յի մոռանում նաև լսելիքը, հոտո-
 տելիքն ու ճաշակելիքը.

Անդ աչքն ի գոյն ծաղկանցն հրճուէր,
 Ականջն ի ձայն զուարթնոցն զմայլէր,
 Ռնկունք յանոյշ հոտոյն թրմբէր,
 Բերանըն միշտ քաղցր ճաշակէր:

Աղամի փառքն ու հրճվանքն ավելի մեծ էր և այնու, որ նա, աստու-
 ծու պատկերը, ծաղկում էր աստվածային լուսով, իսկ

Աստուած ընդ փառք մարդոյն հանգչէր
 Ըւ յիւր պատկերն ուրախանէր:

Կան միայն աստված ու հրեշտակներ և երկու նախնիները: Կան և
 Սաղաւելն իր դներով, որոնք արդեն երկնքից կործանված են անգունդ և
 ընկած են իրենց սկզբնական փառքից: Գեղազարդ զրախտը, նախնիների
 բնակարանը, ու նրանց զրախտային վայելչութիւնը գրգռում է լար Սա-
 զաւելի նախանձը, և այս դառնում է մի մոտիվ, մի դրդիչ քերթվածի մեջ
 դործողութիւն առաջ բերելու: Ըվ բանաստեղծը բնական ձևով անցնում
 է սփանն բանասարկութիւն և օձիւն և խաբամանս (Գ. գլ. 130 տուն): Այստեղ
 երևում է Քերթողի շնորհքը տեսարաններ ու դրութիւններ, հոգեկան վի-
 ճակներն ու տեղեկութիւն, գործողութիւնն ընդարձակելու և դործող անձերին
 խոսեցնելու իրար հետ և բնութագրելու ավելի իրենց ասած խոսքերով:

Ամենից առաջ հանդես է գալիս Սաղաւելը, ուլարն առաջինս, իր
 դեմքի հետ (տներ 1—51), նա Աղամի զրախտային երջանկութիւնը տես-

ննդով՝ նախանձից տրաքում է։ Բայց ազնիւ լավ է՝ բերենք Քերթողի
սողիւնը։

Ջայս ամենայն տեսնալ շարին՝
Հեղձամղձուկ լինէր յանձին.
Ու մորմօքէր կըսկըծագին՝
Պիղծ Սադայէլ շարն առաջին.
Որպէս ըզհուր վառեալ հոցին՝
Նա բորբօքէր գլարն ի հոգին.
Նւ գիգանայր ծովս նախանձին,
Կայր խաւարեալ բոլորովին.
Ողբայր սաստիկ հառաչագին,
Նւ մախանօք մաշէր զհոգին.
Զար նախանձովն որ առ նախնին՝
Հանգիստ լուսէր ամեննին,
Ջմաղձ դառնութեան իւրոյ տենին
Փրախէր զդասօքն անդընդային.
Սպառնմամբ ցասնոյր շար բանակին,
'Ի ի բարկութիւն շարժէր գնոսին։

Ժողովում են նրա մօտ խաւարային դասերը, որ իմանան, թե ի՞նչ
է կամենում իրենց պետը։ Եվ նա՝

Ասէ թերէ՛ք զարկածք շարին
Առ հասարակ ամենեքին.
Արկէ՛ք ի բովս հրահալոցին,
Տնացուք, թէ զինչ ծնանիցին։

Սադայելի հպատակները բերում են լարի արկածները, այսինքն
շար փորձանքները, ամեն տեսակ մեղքերի պատրանքները, ինչ որ ապա-
գայում լինելու էին, լցնում են անշեշ հրատի բովի (քուրայի) մեղ ու
բորբօքում և իրենց խոսքերն ասում։ ճիշտ ինչպես նույնը, ըստ միջնա-
դարյան սնահավատքի, իբր շար ոգու զորութիւնով անում էին կախարդ-
ները։ Եվ ի՞նչ են ասում շար ոգիները Սադայելին։ Մենք Աղամի ծնունդ-
ներին շար կանենք,— ասում են նրանք,— իսկ նրան, այդ առաջին մար-
դուն, դու պիտի խորտակնու։ Դու հակառակ կանգնեցիր Արարչին, և մենք
քեզ հետնելով՝ անճառ փառքից արտաքսվեցինք, իսկ այս հողածինը
մեզ հակառակ՝ պիտի գնա և բնակվի Հողրի մօտ։ Այդ գնպթում մենք էլ
չենք կարող հաղթել նրան։ Այժմ է ժամանակը նրա կորուստը հնարելու։
Մենք քեզ շատ բամբասեցինք, թե ինչո՞ւ հակառակ բան չի մտածում։
Դու շատ զորք ունես։

Այնպէս մեծ շար խորհեա՛ր դոցին,
Որ յաւիտեան ոչ ազատին։

Ձի վիշտք շարեաց հողեղինին
Յիւր արարիչըն հասանին:

Մինչ այդ Բանսարկուի բովը վառվում է ն՝

Հախալ ժընաւ զպատկէր շարին,
Որպէս և որթն յանապատին:

Այդ ժամանակ ահա Բանսարկուի մտքում ծնվում է իր անելիքը.

«Ուրախ լինուք, ասէր ցնոսին,
Ես իմացայ զկորուստ մարդին»:

Եվ նա բացատրում է, թէ իրենք անհնազանդության պատճառով են
արտաքսվել երկնքից, այնպես պիտի անել, որ Ադամն էլ չհնազանդի
աստուծուն և արտաքսվի գրախտից:

«Ես Ազամայ յաղթեմ, ասէր,
Բայց դուք կացէք այլոցըն տէր:
Բայց թէ յաղթեմք հողեղինին,
Այն որ հրնարք է մեր շարին,
Այլ հնարեցուք զանհրնարին՝
Մինչև ի մահ զալ Անմահին»:

Եվ բանաստեղծը թվում է բազմաթիվ շարիքներ, մեղքեր, որ շար
«գինները պատրաստում են մարդու համար»:

Ասեն. «Բերէք զանպակ գինին,
Ըզգառն և զմրուրն խաւարալին.
Քաս բըռնեցուք նախաստեղծին,
Ձի նա արքցէ զմահն իւր անձին»:
Բերին գիւաղողն դառնալի,
Ձողկոյղըն շար որպէս լեզի.
Արկին ի հընձանըս թիւնալի,
Ձի քարկութեան բաժակ լիթի...

Սըրտմտութեամբ զայն կոխէին,
Եւ քարկութեամբըն ճըմլէին.
Ի վիշապաց գինի հանին՝
հառնեալ թիւնոք մահաբերին:
Չսըրտմտութիւն իժից շարին.
Ձմըրուր մաղձից թիւնաւորին,
Ձի որ ըմպէ զնա կամովին,
Այլ հնարք լրկայ թէ բըժըշկին:

Պետպես սկսվառակաների մեջ լցնում են այն գինին, որ զանազան
մեղքերի որակ ունեն, — «ոմն գինի լիմարութեանն», «ոմն գինի մոռա-

յութեանն, ժամն գինի խարէութեանն, գողության, ազահության և ամեն տեսակ մեղքերի գինին: Այսպիսի շարիքներ նյութելուց հետո՝ Սաղայելը մտնում է օձի մեջ, որ սկզբից հենց որ տնեի Աղամի դեմ, որովհետև սա նրա անունը օձն էր դրել, իսկ այս անունն այն կենդանին իր համար պարսաւ էր համարում: Բանասերկուն, որ մտնում է նրա մեջ, իր թույնով լցնում է նրան, որ առաջ թունաւոր չէր:

Փայիս է թունաւի օձը Եւայի մոտ կանգնում ու խաբում նրան (տեսեր 52—72).

Ասէ. «Ուրախ լին և բերկրեա՛,
Քեզ աւետիս տամ՝ և Աղամայն»:

Նա նենգությամբ ձեռնում է նախնիների հնազանդ բարեկամը և ոչ ամբողջ, ինչպէս անասունները, այլ իբրև իմաստուն, որ գիտե ծածուկ բաները, լինելիքները. գիտե, որ մարդկանց համար մի ուրիշ մեծ փառք կա, որ Ստեղծողը ծածկել է, չի հայտնել նրանց: Եւան հաւատում է, թե նա ամեն բան գիտե, իսկ օձը շարունակում է շողոքորթելով.

«Դու իմ դրշխոյ ես անձնիշխան,
՚ի ես քո ծառայ հնազանդութեան.
Որքան դու տէր լինիս ու իշխան,
Այնքան փառօք ես ճոխանամ...
«Բայց երբ հասնիս այնքմ փառաց,
Հրաշափայլիս իբրև զաստուած.
Ի յանճառ կեանս հրքճտանաց՝
Յիշեա, թէ նա՛ զայս բարբառեաց»:

Ուրեմն նա, որպէսզի հաւատացնի Եւային, թե իր ասելիքը ստույգ է, այնպես է ձեռքնում, թե իբր ինքն իր (օձի) օգտի համար էլ է մտածում: Բայց նախ քան զաղտնիքը հայտնելը՝ մի պայման է դնում, որ Եւան այն լասի Աղամին, Աղամը շիմանա այն,

«Զի նա հըպարտ է, բարկանայ,
Եւ անկատար բանքս մընայ.
Բայց դու հնազանդ ես, հաւատա՛,
Զի դու լիցիս տէր Աղամայն»:

Այսպէս նա խորամանկությամբ գրգռում է Եւայի անձնասիրությունը, Այս պահ մի լուծ է, մինչև որ կախարդելով խելքահան է անում նրան, և ասում, թե՛ ինչու ստեղծողը նախանձել է և պատվիրել. «Մի՛ ուտեք յամէն ծառօք: Եւան հիմարանում, դառնում է օձի խոսակիցը և առանց Աղամին հարցնելու՝ պատասխանում է.

«Մառօք գրախտիդ որ այսքը կան՝
Մեզ ուռելոյ հրաման տուան,

Բայց ի ծառայն շար գիտութեան,
Առաջ լուսնել, զի մահ կու տանա:

Խրոխտալով ուրախանում է Չարը. նա արդեն գիտե՞ գաղտնիքը և
ասում է, թե Տերն այդպեօս պատվիրեալով՝ խաբել է նրանց, և որպեքի
իր ասածը հաստատի, ավելացնում է, որ հիմն այն ծառը բարիքի պատ-
հառ լինեն, ինչո՞ւ պիտի աստված անդժոժն այն: Դրա պատուէն ուսողը
ոչ թե կմեռնի, այլ կաստվածանա.

«Թէ դուք ուտէք՝ այն ձեռք բանան,
Իրրե զաստուած լինիք բնութեան:
Ահա ձեզ ձայն մեծ աւետեաց,
Որ ի յապանջըս ձեր հընչեաց,
Ջանճառ խորհուրդ զոր Տէր ձեռնեաց,
Եւ յայտնցի ձեզ սիրելեաց»:

Այստեղ վերլացնում է ո՞նի իր ասելիքն ու դժող: Բանաստեղծը դառ-
նում է Եվային և շատ կենդանի պատկերացնում է նրա վիճակը պտուղն
ուտելուց առաջ, ուտելիս և հետո (տեսիւ 73—86): Նա, թեթեւամիտ Եվան,
ցնճում է փառամոլութիւնով. կարծես մի նոր արեւ ծագած լինի իր գլխին:
Նա արդեն մոռացել էր աստուծու պատվերը և մինչև անգամ խեթ քրտով
էր վերաբերում նրան, որ արգելել էր պտուղն ուտել. դի երկնքից ընկած
շար փայլակն, այսինքն Սաղայիւր,— ասում է բանաստեղծը,— նրա
խելքն առել էր, միտքը խավարեցրել: Ուրախութիւնից ի՞նչ էր անում նա.

Խաղայր մարմնով գինչ դիւահար,
Ճեմա առնելով պարէր յերկար,
Վազէր ի ծառն անասնաբար:

Պտուղն առնում է ձեռք, բայց զողում է մարմնով. զի դեռ կասկա-
ծում է, թե մի՞ գուցե կարուստ լինի: Պտուղը դնում է բերանի մոտ, բե-
րանը լի բացվում, բերանի պահապանները—շրթունքներն ու ատամները
փակվում, արգելում են.

Իսկ յար լեզուն որ քարքառէր՝
Ի ներսկուտ գիականս բանէր...
Բացեալ զբերանըն զլժեալին՝
Սամեաց ըղթինքն ոճի լեզուին,
Ձմաղձըն մահու որ փ պլտղին՝
Նա կլանէր բոլորովին:

Եվ հանկարծ պատահում է սպասածի հակառակը.

Յանկարծ լինէր ի հիացման,
Ետեւ զոր ոչ կարծէր յինքեան.

Խլեցին զլուսոյն պատմութեան,
Լինէր խաւար գիշերանման:

Նա սկսում է մորմոքալ, կսկծալ, հառաչելով աղաղակել. սաստիկ-
զոռում, զոռում է ինչպես անբան, բարձրաձայն ճշում է մոլեգնած:

Նա արտասուս սաստիկ հոսէր,
Լալով միշտ զանձն իւր հեղեղէր,
Որպէս սգաւոր զհերսքն փնտէր,
Եւ արեամբ զանձն իւր շաղախէր:
Որպէս մոյհալ ինչ կատաղէր,
Որ և ըզհիս Բազկին ուտէր.
Քունըն հասեալ, հանգիստ շունէր,
Յաղաղակէն ոչ գաղարէր:
Յերկինս հայել՝ ալքն մըթնէր,
Դիտել զերկիր՝ միշտ խաւարէր.
Յնտ և յառաջ տարակուսէր,
Յաջ և յահակ միշտ երերէր:

Եվայի դառն դիպկածի նմանը ոչ հղել է և ոչ էլ կլինի,—ասում է
Քերթոզը,— ամեն տեսակ դժնդակ ցաւ երևում էր նրա մեջ, Նա այնքան
կակիւռ ունեցաւ, որքան ունենում են մարդիկ, երբ մեռնում են և զժոխ-
քում տանջվում անվերջ:

Հերթը հասնում է Աղամի խարվելուն (տներ 87—130)։ Մ. Գրգի այս
կարն խոսքը՝ «Եւ ետ առն իւրում ընդ իւր, և կերան»՝ բանաստեղծն ըն-
դարձակել, դարձրել է առն և կնոջ հարաբերութիւնների մի սիրուն պատ-
կեր, որի մէջ Եվան, որ արդեն ճաշակել է բաբու և շարի գիտութիւն ծա-
ռի պտուղը, հանդես է գալիս ոչ իբրեւ մի պարզամիտ էակ, այլ արդեն
ճանաչում է իր շարն ու բարին, իր մարդու թուլը կողմը, և թէ ինչպես
պիտի ազդել նրա վրա, որ ենթարկվի իր կնոջը և հետեւի նրան։ Աղամը
միամիտ ու թուլ է, նա սիրում է Եվային. սկզբում տատանվում է, բայց
Եվան, ինչպես ասում են, լեզու է թափում, մինչև որ՝

Խարաւեցաւ միտքն Աղամայ...
Խելքն ընդ աշացքն գրնացին,
Եթող զաստուած և ոչ քզկին:

Պետք է կարգաւ այս հատվածը՝ բանաստեղծի թեթեւ ներշնչումն և
Աղամ-Եվայի խոսքերի գեղեցիկ տողերը վաշելելու համար։ Այստեղ
կրեւորնք սակավաթիւ տներ միայն:

Եկն առ Աղամ որպէս օտար,
Մերկ, խաչտառակ անասնաբար-
Աղամ տեսեալ զնա զարմանալոյ,
Թէ զի՞նչ եղև այդքմ պատճառ:
Ասաց, թէ՛ «Զի՞» կուլաս դու, կի՛ն.

Զի՜ հառաչեա աղորժագին,
 Այդ ի՞նչ լարիք որ քեզ եկին,
 Ո՛ւր է քո լոյս պատմութեանին... ։
 Ասէ՛, թէ՛ աջիս լարքն խաբեաց.
 Պրտդով ծառային, զոր Տէրն յայտնեաց.
 Առի ձեռոք իմ շորացած,
 Եւ մերկացայ յանճառ փառաց,
 Բայց թէ դու սէր ունիս քնդ իս,
 Փաւթով լսէ՛ քո կողակցիս.
 Ան կե՛ր' ե դու զպըտուղս ընդ փս,
 Զի մնամ ընդ քեզ ես ի դրախտիս.
 Թէ կայր քո սէր ընդ իս նախկին՝
 Այն սէրն այսօր երեւցին.
 Վասքն սիրոյ քո արարչին
 Յիջեա՛ և զմեր սէրն առաջին,
 Բայց թէ լլբսեա ամենեւին,
 Արժամ եհաս ցաւս իմ անձին,
 Սուտ է քո սէրն այն առաջին,
 Զի ոչ հոգաս վասն իմ դարձին,
 Թէ անասնոց լինէր այս լար,
 Դեռ մեզ պիտէր գնոսին հոգալ.
 Ես քո մարմինն՝ այսպէս խոցեալ,
 Դու ա՛յդպէս կաս անհոգացեալ...
 Ես որ գիպայ այս փորձութեան՝
 Մեռեալ ի հող դառնամ անձամբ,
 Հոգիս տանջի անանց մահուամբ,
 Թող դու մընա՞ս յայդ խեղութեանն ։
 Պատասխանեալ Ադամ նըմին,
 Խանգաղատեալ ի սէր Նորին,
 Տարակուսեալ մորմոքէին
 Ոչ գիտելով ըզգեղ ցաւին,
 «Մի՛ մեղադրեր դու ինձ, ո՞վ կին,
 Ես նոյն սիրովն եմ առաջին.
 Բայց թէ ուտեմ զպտուղ ծառին՝
 Ես քեզ նըման պատուհասիմ... ։
 Ուրախացաւ կինն ի հոգին,
 Զի ետ օրրով զպատասխանին.
 Հընար գըտաւ թըշուառ հոգին՝
 Սիրով խաբել զմարդն առաջին...

Եւս զանազան ձևերով լսեալ է համոզել մարդին, որ հետեւի իրեն.

«Թէ դու սիրով ուտես վասն իմ՝
 Էմ նենգութեան մեղքն չընչին ։

Վերջիվերջո Աղամբը՝ Եվային ազատելու համար՝ ինքն էլ ուսում է պտուղը և Նույն վիճակն ունենում, ինչ որ կինը. նա ազազակելով, ողբում ու վա՛յ է տալիս իրեն:

Հաջորդ Գ դուխը (12 տուն) ամբողջապես Աղամի ողբն ու սուգն է, որ անում է նա՝ կանխատեսելով իր և իր սերունդների ապագան՝ գրախտից դրկվելը, մահը, դժոխքը և այլն: Այդ ողբի մեջ մի պոլիս (Ծ, 28 տուն) նվիրված է Վեպան հոգեվարին և ճանապարհի հոգույն և պատերազմի դիաց և կայանին հոգւոցն: Հոգեվարի մասին խոսում է և Գրիգոր Տաթևացին⁴⁹, Մարգու մահվան ժամանակ՝ հոգին երբ բաժանվում է մարմնից, դեպի երկինք է դիմում իր հրեշտակի նուկից՝ «ցնալ ի կայանս հոգւոց»: Նա դժվարին և անտես ճանապարհին՝ սարսափա՜ռ ու ապշած վիճակի մեջ է ընկնում: Ղարհուրում է դեերի բազմութունից, «որ դառն և դաժան կերպարանօք շուրջ լինին ի վերայ հոգւոյն և պատերազմին ընդ նա: Բջամենայն մեղս իւրեանց տեսանեն և առաջի բերեն դեքն մանր քննութեամբ, զոր պոքօնալ են և զոր մոռացեալս: Տաթևացին ազդվել է Անտոնի տեսիլից, որ պրել է Աթանասը⁵⁰: Այս երկուսից էլ Ներշնչվել է և Առաքել Սյունիցին: Նյութի հղացումն, ուրեմն, ինքնուրույն է, բայց նա բանաստեղծել է Աղամի բերանից իրեն՝ Աղամի և նրա սերունդների համար և զգացմունքի ու պատկերի բավական ուժեղ մանրամասնութուններով, որոնց մեջ նա անկախ և ինքնուրույն է⁵¹:

⁴⁹ «Ժարդգիցք, Լեմբան հատոր, Կ. Պալսա, Ռեմթ (1189+551=1740), էջ 280—283:

⁵⁰ «Վարդ որոք հարանց», հատոր առաջին, Վենետիկ, 1855, էջ 17—80. Վարդ երանելուն Անտոնի եղբորացույ միայնակնցի, Քաղթ Աթոնաթն:

⁵¹ Համեմատելու համար դեռս էնք ալտեղ Անտոնի տեղիլը (էջ 61): Միայնակաց Անտոնը աղոթելն ազգաց զինքն յափշտակեալ մտօքն, և... տեսանէր զինքն իրրն որոտացալ ինքեան եղեալ և իրեն յոգս զինքն առաջնորդեալ յամօքն: Եւ տեսանէր զաման դառնին և անհնարին զմեռեալ, օրք կային յոգս և կամէին արգելուլ զնա զի մի՛ անցցէ: Իսկ որք մարտնչէին ընդ նոսա, առաջնորդէին Անտոնի, և պահանջէին նոքա բռն ի ոսցանէ և ասէին, թէ անցցուց մի՛ զսուղ պարտապան է մեզ. քանզի կամէին ասել իմ բռն ի նորա մեռցնէն և արգելուին զնոսա: Իսկ որք առաջնորդէին Անտոնի, ասէին նոսա, եթէ զմեռնեղեան նորա ալը ի բաց չնջեաց. այլ յորմէնտէ նղն միայնակեաց և խոտացաւ աստա՜ծայ իշխանութիւն ունիմ խնդրել ձեզ համարս: Թայնժամ նոքա ամբաստան եղին և յանդիմանել ինչ ոչ կարացին, քանզի ազատեցաւ ինքն և անարգել նղն նմա ճանապարհնս: Գարեայլ քիչ ճնտո (էջ 62). «Եւ ի վեր հայեցաւ և ետես զամ երկայն աճաղնոտես յորտա տեսիլ և անգրին, քանզի կայր և հոսանէր մինչև յամպս, և ելանէին ամենք իրրն թուստելոյք, և ետա տալանեալ զնոսն և զմեռն արքելոյր և ոմոնք ի վերայ քան զնա թուստելոյք և անքեալք՝ ալիսմեան տնեկելոյ և անմոլ վերացեալս: Եւ ի վերայ ալտեղեոց և երկայն կրճէր զատամուսն, և ի վայր անկեւոցն ի նմանէ ուրախ լինէր: Եւ անգին վաղվազակի ձայն նղն առ Անտոն և ասէ. իմա՛ որ եղևոք: Եւ բացան նորա միտքն և զիտաց զի հոգւոյն էին անցք ճանապարհին. և երկայնն որ կայր, նա է որ զլարի ընդ բարիս հաստացելոյք, և որ գտապարտս մե նմա՝ զնոսա տին և արգելս և յալոյ անքեալս: Իսկ ոչք ոչն հաստեղեան նմա, ոչ կարել զբռնել, այլ ի վերայ քան զնա զանք անկեալ:

Անվարդ չի լինիլ ալտեղ բնիկ ետե Սերապիսի գլխամասն Արքա Մարտիկ Նպու մտքին, որք ալս նմալոյք վախեանում է. «Իսկ եւ ի վեր հայեցալ ալիքեալ և անարգելոյք նորա ի կտու հնգեալոյք ալիքեալ աղաթուլմամբ աստեալ, և տանէին զնա զտեղք:

Անաթոլի թանձր զուլններով նկարում է մի տեսարան, որով խիստ պիտի սարսափին հերոսամիտ ընթերցողները և Աղամի հետ չասին.

Վա՛յ իմ անուր հոգեվարին,
Վա՛յ որ առեալ զհոգիս տանին.
Վա՛յ ապշութեան ճանապարհին,
Վա՛յ որ չգիտեմ, թէ ո՞ր տանին:

Խառնիխուն երևում են զներքի զնդերը, ահեղ դժժբերով, բերանները բաց արած, մեռելի բնական նամակը, այսինքն մատչանը բռնած: Ուղեկից հրեշտակը թռչլ է տալիս, և նրանք պտտում են հոգու շուրջը, կատաղում նրա վրա, տանջելով նրան՝ վանաղան կերպերով կռվում են նրա հետ,

Պէսպէս դիմօք կերպարանին,
Զարաաեակէք և դժնային.
Մըռնըռալով միշտ կատաղին,
Եւ պատասխի լաւատի գլուխին...

Դէմքն այլակերպք և ահագին,
Զարհուրական կերպարանին.
Հուր ցոլանայ լուրնգաց նոցին,
Եւ պաշարէ զգերեալ հոգին...
Զայնիւ գունն լոյժ սաստկագին,
Որպէս ճարթմունք յորոտ ամպին.
Եւ ճըշիլ ձայնից նոցին
Սարսեալ հոգոցըն նուաղին...

Հետ դարշումեանց յոյժ զազրագին
Որ ի դիմաց դասէն քորին...
Շուրջանակի պատեն զհոգին,
Ըստ վեց ջարժմանցն որ յանձին,
Ի վեր, ի վար, յայ՛ւ ահեհին,
Յետ և յառաջ մըրցեալ կըտտին...
Ի խաւարեալ օդոց միջին
Խաւարային դիմօք յայտնին.
Հոգին ապշեալ միտքըն ցընդին,
Միջարեկեալ յուսահատին,
Եւ զօղանջնն զոյժամք նոցին.

Հրեշտակաց փառօք լերկինս օաղմոսից և երգովք ընդ վերին լուսաւոր օդան. Եւ տեսի զայնիւ ոգաց. տեսի և զգուշութիւն օտաւանայի զի կային մեային և արգելութիւն զնա ժամ մի: Եւ լուայ ձայն լերկնից որ առէր. ի րաց կացէջ լերեաաց յառայոյ, որդիք խաւարի: Զայնժամ ետի նրաք մէ ան ի գիտելի, ազգազնեաց և ասի. փոփոքուց, որդիք օտաւանայի, և ամօթայից հղերուք, զի այլոց այդ արդար է: Եւ իբրև անց վերացաւ հոգի նորա, ընդ ամենայն փորձութիւն օտաւանայի, տեսի իբրև զայդ հրեղէն ի վերայ նորա, և տեսնայիմ եղն յննէաւ: Վարք ա. հարանց, հատ. երկր., Վննետ., 1853, էջ 205.

«Այո՛, այո՛, աշխարհ տեսին
Ջարկածք շարեաց մերոց ի դմին
Ի սկըզբունէ մինչ ի վերջին»:

Նրանք քանում են հափշտակել հոգին. բայց երբ հրեշտակն ասում է՝
«Ի ձեզ սաստէ Տէր»՝ ջրվում:

Ապա այդպեա խորտակված, նվաղած հոգին հրեշտակը հանում է
հոգիների կայանը, ուր հոգիները՝ նայելով իրենց գործած մեղքերին՝
դաս դաս ամբարված պահվում են հառաչանքով և լաց ու կոծով մինչև
դատաստանի օրը, վա՛յ տալով իրենց առաջուց, երբ հարուժւոյն և դա-
տաստան պիտի լինի:

Սրանից հետո րանաստեղծն երկու ատանձին գլուխներով (Ձ, 37
տուն, է, 56 տուն) գրում է Քվասն ահեղ դատաստանին քննութեանցն և
Քվասն տանջանաց դժխոցն, որոնք երկուսն էլ մեր քերթողների օրրած
նյութերից են և նորանոր կողմերից և ինքնատիպ մտքերով ու պատկեր-
ներով մշակված են Առաքելի ձեռով: Ահամզբքի այս վերջին երեք գլուխ-
ները (Ն, Ձ, է) շատ հաճելի են եղել մեր հներին, ուստի դրանք մի քանի
ուրիշ հատվածների հետ, իբրև անկախ քերթվածներ, առնված են ծաղ-
կաքաղ ժողովածուների մեջ:

Դժոխքի տանջանքների նկարագրով և տանջվողների ողբով՝ վեր-
ջանում է և Ադամի ողբը:

Այս ողբ երգոց նախաստեղծին

Որ դէմ քնութեանը քարբառին.

Այս գոյժ ողբոց միշտ կատարին

Յանցեալն, ներկայս և յապառիս:

Այսպեա է վերջացնում րանաստեղծն այդ գլուխը, միանգամայն և
Ադամի ժողովուրդ: Մենք զգում ենք, որ գործող անձը, Ադամ, մեղանշե-
լուց հետո, դեռ աստուծուն շահնդիպած, իր զխի՛ն վայ տալով, ինչպեա
մի կարճատև երազի մեջ տեսնում է շատ երկար ու դառն քաներ, և՛
աստուծուն իր վճռով, և՛ հոգեվարը, և՛ վերջին դատաստանը, և՛ դժոխ-
քը: Բանաստեղծը, ցավոք, տարտամ ու ոչ պայծառ է հորինում Ադամի
այս ժողովուրդ, մեկ մեկ էլ իր անձը, դեմքը խառնում է վիպական պատ-
մըվածքի մեջ և ավելորդ կրկնութւոյններով ձիգ դարձնում այն: Արվես-
տի պակասութւոյն է այդ: Ավելի մեծ պակասութւոյն է այն, որ դժոխքի
տեսից հետո, մոռանալով, որ ինքը վեպ է հորինում, նա երեք գլուխ
(Ը, Թ, Ժ, էջ 56—77) նվիրում է մեկնաբանութւյն և իր տեսութւոյններն
է քացատրում իրեն հետաքրքրող նյութերի մասին (Քվասն շարին թլ
ուստի՝ ունի զսկիզբն կամ զի՛նչ էս, Քվասն ցանկալոյ քարոյնս, Քվասն
մարդոյն թէ ո՛րպէս է պատկեր աստուծոյ...»): Պատմվածքին շնն վերա-
բերում նաև ԺԲ և ԺԳ գլուխներն (էջ 82—102) իբրև մեկնութւոյններ, Այս
հինգ գլուխները երբ անշտովում են, մնացած ԺԱ, ԺԴ, ԺՆ գլուխներին

մեջ պատմվում է քերթվածի զործողության շարունակությունը. «Վասն՝
յետ յանցման Աղամայ՝ հարցափորձելոյն աստուծոյ, որ ասաց, թե՝
Ո՛ւր ես»:

Յետ ողբալոյն տեառն Աղամայ
Հարցաքննեի զայ ըզնոսա.
Զի զըզցացեալ ասեն մեղայ,
Եւ յընչեսցին յանցանք նոցա:

Տէրն ասէ.

Ո՛ւր ես, Աղամ, մարդս առաջին,
Ո՛ւր է քո փառքն հրաջային.
Փառօք եղի զքեզ ի դրախտին,
Եկեալ լզտի ընդ նոյն տեղին:

Աղամ ասէ.

Հուայ ըզձայն զնալոյ ջոյին,
Որ հեռանաս վասն իմ յանցին.
Երկեալ միայն կեալ ի դրախտին,
Եկեալ թագեայ առ թզենին,

և այլն:

Տիրոջ, Աղամի, Եվայի միջև տեղի է ունենում մի տրամախոսութիւն,
որի հիմքը Ս. Գրքից է, բայց շատ սիրուն զարդացրել է բանաստեղծը.
Նրանք «մեղայն» չեն ասում և մեղքը նույնիսկ աստուծու վրա են ձգում.
Եվ աստված զնում է իր հայտնի վճիռը Աղամի, Եվայի և օձի վերաբեր-
մամբ: Այս ԺԱ գլխի բնական շարունակությունն է ԺԴ և հետո՝ ԺԵ գլուխն
(«Վասն տարակուսանօք փոշիմանելոյն նախնեացն ի զրկմանէ ծաղկա-
պանծ փառացն», «Վասն զղքմամբ ողբալոյն Եւայի»), Աղամն ու Եվան
դրախտից արտաքսված են, զոչում են իրենց հանցանքի համար, և ցավ
ի սիրտ հիշում են դրախտի վայելչությունները. ողբում են իրենց ողոր-
մելի մի՞հալը և մխիթարվում են, որ մերջը պիտի սիրկվեն: Այս գլուխ-
ները գեղեցիկներին են. բանաստեղծը մի երկրորդ անգամ Աղամի բն-
րանով սքանչացած նկարագրում է նրանց կորցրած դրախտի չճեղու-
թիւնը և ավարտում վիպական քերթվածը, բայց ոչ «Աղամգիրքը»: Նա
գրում է էլի 11 գլուխներ, «Վասն կողին» [այսինքն՝ կնոջ] և այլն, որոնք
սքոյաստիկական մեկնություններ են, որոնցով Առաքել Այուծեցին իր
սրամտութիւնն է ուզեցել ցույց տալ: Մի գլխի մեջ (ԺԸ) ընտելացրում
է կանանց ոչ լավ կողմից, առաջարկելով մեջ զգուշացնելով այսպես.

Թէ հանդիպիս դու մօտ ի կին,
Զայս բանքս մի՛ կարգալ նոցին.
Որ շանարգեն զզրոզ սորին,
Կամ բանքս ելնէ յաւաց նոցին,

Կամ զի կողն ոսկր է անբոգայ,
Ինքն ըստ ինքեան բան շիմանայ,
Վասն այն կընողըն խնէք լըկայ,
Ձինչ որ լըսէ՝ շուտ հաւատայ:

Եվ այսպես ամբողջ 36 տուն: Եկողն աշնջան մեծ տեղ է բռնում
«Աղամագրթի» այս երկրորդ մասի մեջ, որ ամբողջը կոչվել է նաև Եկող-
գիրքը:

Առաջելը լի բավականացել երկու «Աղամագրթերով», որոնց մասին
խոսվեց վերևում. նա նույն 1403 թվականին, ինչպես հիշատակարանից
(էջ 270) իմացվում է, գրել է մի երրորդ (ըստ տպագրության Ք = երկ-
րորդ) Աղամագրթ տասնամեկ (6 + 5) վանկանի տողերով, սկզբից մինչև
վերջը սէրս հանգով: Բովանդակությունը նույնն է, ինչ որ հախորդ եր-
կուսին: Գրվածքն ավելի սեղմ է, վիսպական մասը շատ շնչին է, ավելի
ուշադրություն է դարձրած մեկնությանը, թե ի՞նչ պարզաբան ունի Աղա-
մի մեղանումը: Կան, հարկավ, նաև սակավաթիվ գեղեցիկ տներ:

Առաջին ունի և մի շորրորդ հատոր Աղամագրթի, որ դեռ լի տպա-
գրված: Այդ կոչել են Երախտագիրքը, գրված է 6 + 6 + 5 վանկանի տո-
ղերով, ամբողջը նույն հանգերով: «Հեղինակին նպատակն եղած է այս
աշխարհի բնակիչներն իր հետ առնելով՝ փնտռելու ելենի այն անծանոթ
քաղաքը՝ ուսկից արտաքսված էր Աղամ»⁵²,

5. Հորինվածքի թերությունն և գրական արժեքը:— «Աղամագրթե-
րի» գեղարվեստական կողմից թուլությունը ծագում է գլխավորապես
այն հանգամանքից, որ հեղինակը կրկին նպատակ է դրել՝ 1. ոտանա-
վորով բանաստեղծորեն պատմել Ս. Գրքի զրույցը, 2. ոտանավորով հո-
րինել հին մեկնաբանների կարծիքները Ս. Գրքի զրույցի մասին և իրենից
էլ, որքան կարելի է, շատ բան ավելացնել ուրիշների ասածների վրա:
Այդ վերաբերում է «Եմարդեղության խորհրդին», որով բացատրել են
Աղամ-եվայի զրույցը:

Նա իր մեկնություններն անում է ոչ միայն հատուկ գլուխների մեջ,
այն էլ երբեմն ընդհատելով պատմվածքը, այլ մեկ մեկ նաև պատմվածքի
ընթացքում, ինչպես էլ կող ոտանավորներով են գրված այդ կտորները,
այժմ դրանք, բացի թերևս սակավաթիվ քառյակներից, գրական արժեք
չունեն: Առաջիկա աշխատության այդ մասը մեզ համար հետաքրքիր է
այնու, թե որքան զորեղ է եղել այն դարում սքոլաստիկական բացատրու-
թյունը, և որքան ընդհանրապես են եղել այն ժամանակի գիտնականներն
անգամ, որոնք իրենց «գիտնականությունը» ցույց են տվել պարծանքով,
բազմաթիվ այնպիսի համեմատություններ անելով և «խորհուրդներ» ու
«խորհրդավորություններ» գտնելով, որոնց վրա միայն զարմանալ կա-

⁵² Երազմովպա, Վենետիկ, 1913, մարտ, էջ 92. Մ. Պատարյան, Մասնագրություն
Առաջիկա Սինեցու հոգվածի մեջ:

րող է արդի մարդը։ Այդ նկատմամբ այստեղ բավական է միայն հիշատակել «Աղամզդիրը Ա-ի» ԻՔ գլուխը (էջ 159 և հտն.), Բանաստեղծ Առաքելին կաշկանդել է Փրիգոր Տաթևացու ազդեցությունը և կարծես նա մրցում է իր ճեպուհ հետ, ոտանավորներով մեկնություններ անելով երբեմն նույն խնդիրների մասին, ինչ որ Տաթևացին բացատրել է իր աշխատությունների մեջ։ Եվ բնական է այդ, քանի որ Տաթևացին է տոն տվել նրան Աղամի և Եվայի մասին գրելու և նույնիսկ շուրջել է ըզկարգ բանին առաջին գրքի (ըստ տպագրվածին՝ Պ գրքի) վերաբերմամբ։ Որ Առաքելը երեք գիրք է հորինել նույն նյութի մասին, այդ ցույց է տալիս, որ իր գրվածքներն ըստ երևույթին բավարարություն չեն տվել նրա գեղարվեստական զգացմանը, անշուշտ հենց այն սառն մեկնաբանական դատողությունների պատճառով։ Նրա երեք Աղամզդիրը թողնում են այն տպավորությունը, թե դրանք առանձին փորձեր են մի մեծ քերթվածի համար, ինչպես մի մեծ կոմպոզիցիայի համար կատարված նախանկարներ, որոնց հիման վրա պետք է գեղարվեստագետն ստեղծեր իր իսկական երկը։ Բայց բանաստեղծն այդ յի տերը, և նրա այդ երկերը մնացել են իրարուց անջատ և անկախ, բայց և չափազանց նման բաներ։

Եթե առաջին Աղամզդիրի մեկնաբանական մասերն (վերջի գլուխները և վերևում հիշված՝ Ը, Թ, Ժ, ԺԲ, ԺԳ, 56—77, 82—102) անշատվեին ի մի առանձին հավելված,— և դժվար չէր այդ անելը,— և հեղինակը Բ և Գ (ըստ տպագրվածին) Աղամզդիրի վիպական գեղեցիկ կտորներն օգտագործած լիներ Ա Աղամզդիրի մեջ, ապա կունենայինք մի հատիկ իսկական, գեղեցիկ վիպական քերթված, փոխանակ երեքի։ Այնպես էլ, սակայն, ինչպես կա, Առաջին Աղամզդիրը (ըստ գրության ժամանակի՝ երկրորդը), մեր հրաբորդ կրոնական բանաստեղծական մեծ երկն է, որ ունի իր բաղմամբով առանձին գեղեցկությունները։ Առաջին երկուսը՝ Փրիգոր նարեկացու Ողբերգությունը և Ներսես Ենոքհայու Ողբերգությունը (սփյուռքորդի) քնարերգություններ են։ Իսկ Առաքելի գործը մի առարկայական

53 Առաքել Սիմեոն, Աղամզդիր, Վենետիկ, 1907, էջ 324.

... Նա հրամայեց ինձ զբերել
 Զոռանաբաքս ըստ խորհրդույ
 Ասաց զբերել ինձ ըստ կարգի,
 Ցաղագա նախնեացն յիշատակի,
 Վասն Աղամայ և Եվայի,
 Ի դժոս օճին և քանսարկութի
 Բարունապետ յոյժ պանծալի,
 Սով իմաստից ծառայց շնորհի,
 Ի նայն շնորհէ մասն ինչ առի,
 Զոռանաբաքս շարադրեցի։

Մի քիչ վերևում էլ Փրիգոր Տաթևացու համար առում է.

Զի նա ուղղակաց ըզկարգ քանին,
 Ըստ իւրաքանչիւր պատշաճին։

բանաստեղծութիւնն է: Այդ էր ժամանակի պահանջը: Կրօնական ոգին չէր մեռած, բայց սառած էր. մարդկանց հարկավոր էին կրօնական քանաստեղծական գրվածներ, ոչ թէ նրանց վրա ազդեցիւն և իրենց մեղքերն ողբալու համար, այլ զվարճութիւն մարդալու և սովորելու:

ԱՌԱՔԵՆԻ ԲԱՂԻՇԵՑԻՏԻ

Յոգը մայրաքաղաքին Ստրմպուլա և վասն գալստեան ֆրանկաց ազդին և ազատիւ զաշխարհն Հայոց Առաքել վարդապետէ ասացեալս, տըպված է Սենահիտա, 1901, էջ 217. Վենետիկ վանք, Տաղարան թիվ 529, բաղդատած ուրիշ ձեռագրի մը հետս:

Աթոռն էջմիածին տեղափոխվելուց հետո՝ յի դադարում քաղաքական անկախութեան մասին նրազն աւ նորը, որ սենոված մնում էր նույնիսկ մեր ժողովրդի ամենադժբախտ օրերին, նրա 1453 թ. օսմանյան Սուլթան Մահմեդ II առնում է Կ. Պոլիս, կոտորում քրիստոնյաներին, այդ զնպքը ցնցող տրտմական տպավորութիւն է թողնում արեւելյան քրիստոնյաների վրա... Վերջին քրիստոնեական պետութիւնը, որ արեւելյան քրիստոնյաների հետարանն էր, հույսն ու ապավենը, ընկնում է: Արեւելքն ամբողջ մնում է մահմեդականների ձեռին:

Այդ ցնցող տպավորութեան տակ, ահա, Առաքելը, ինչպես քերթվածից իմանում ենք, նույն 1453 թվին ողբում է այդ եղելութիւնը: Քերթվածը շատ մեծ է, 4+4+4+4 տողերով, սկզբի մասի բոլոր տողերը (թվով 52) վերջացնում է «Ստրմպուլա անուեով»:

Արդ ամենայն ազգք և ազինք
ողբան ըզքեզ, քաղաք Ստրմպուլ-

նրկրորդ մասի (30 տող) ամենաառաջին տողը՝ «Բիւզանդիա» անունով:

Այլև կոչեմ զքեզ յանուանէ,
ընտիր քաղաք Բիւզանդիա,
Որ անօրէնք պաշարիցին
և արարին ըզքեզ դադա:

Երրորդ մասը, 62 տող, բոլորը ին հանգով, բացի վերջին 6 տողը, որ ի հանգով է:

Կոթի պատճառն այն է, որ քրիստոնեութեան կենտրոնը դառնում է ալարազործաց հանգստարանս: Հիացմունքով խոսում է Կ. Պոլիս հին քրիստոնեական փառքի մասին, չհիշելով դավաճաբանական վեճերն ու հալածածնները հույների կողմից, որ այդ ժամանակ չկային, այլ միայն

54 ՏՃՊ Գ. Զարեանեայան, Պատմ. հայերեն գրութիւն, Բ, նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 250:

ընդհանուր քրիստոնեական և կուլտուրական տեսանկետով մտածնալով
քաղաքին:

Գու մարդարիտ տեսակ պանձուց
Հոգևորաց, դու Լստըմպօլ,
Հանկարծակի կողոպտեցար
յանօրինաց դու Լստըմպօլ:

Երկրորդ մասի մէջ գովում է Բյուզանդիայի նախկին փառքը և ուղորմելի դառնալը և հիթանոսների ժամանակ ծաղրելի դառնալը. միակերպ հինը և արդէն տխուրը, և վերջը նորոգման հույսը:
Վերջը գրում է.

Արդ ակն տնիմ կատարածին,
Քէ նորոգիս Բիւզանդիա,
Եւ արատիս յանօրինաց բռնութենէ,
Բիւզանդիա:

Խնչպես պիտի ազատվի: Նորոգվում է խաչակրական արշավանքների գաղափարը, «ֆրանկաց ազգն», որ արեւմտյան քրիստոնյաները պիտի շարժին միաբան,

«Գայցնն ծովով և ցամաքով որպես դաստեղս, որ ոչ թուին»:
Նախ Մտամպօլ քաղաքը կառնին, այսպա

«Ելցին յերկիրն Արենից և կոտորին դամեննային,
Որպէս առեծ մըլընչելով ի յանօրէնս համարձակին»:

Կառնին Երուսաղեմ.

«Անթիւ լինի զօրք ֆրանկին որպէս
զաւազ յնոր ծովին»,
«Առցին զՀռոմոց աշխարհն ամէն,
մինչև ի Մըսըր հասանին»:

«Քակին զդիւաց բնակարան, զանօրինաց ուխտատեղին»,
Կառնին Շահաստան, Դավրեժ, Խորասան, ամենքին կգերեն:

Ծղեսիո ողբի նմանողութունը երևում է: Իսկ Հայոց ազգի՞ն ինչ:

«Ազգըս Հայոց պայծառանայ,
զի յալլազգեսցն արատեցին,
Բերկրիալ ցնծան ամենեքեան
որպէս յաւուրս Լուսաւորլին»:

Հետո պատմում է Տրդատի ու Գրիգորի գնալը Հռոմ և մի տարի այնտեղ մնալը և Վաչագանի Կոստանդնուպոլիս հետ, հայոց ազգը ֆրանկի հետ դաշինք կապեց.

«Սիրով դաշինս հաստատիցին՝
դադարս Հայոց ընդ ֆրանկին։
Զորս հարիւր մարդ ի հոն թողին
յԱրշակունեաց Պահլավունին,
Զի մընասցին և աճեացին,
Ֆրանկ ընդ Հայս միաբանին։
Արդ առաջնորդք նոքա լինին
արիական ֆրանկ ազգին։
Առջին զգաւտոն Արաբատեան,
որ է տեղիք Լուսաւորլին.
Թագաւորին յնշմիածին
Վաղարշապատ սուրբ քաղաքին»։

Հեղինակն իրեն համար վերջը գրում է.

«Սա անարժան ամենայնի
որ վարդապետ անունս կուլի...
Ու ասասցին տէր ողորմի
ինձ Բաղժամեղ Առաքելի»։

Դա չի կարող Սյունեցին լինել, որ այդ ժամանակ կենդանի չէր լինի։
Ողորի կարևոր նպատակն է մարգարեական, տոնով քաջալերել լրջ-
վածներին և հուսադրել քաղաքական ազատության վերաբերմամբ, կենտ-
րոնը Վաղարշապատ, որ լուսի Շնորհալին։

Բանաստեղծությունը, որ իր զաղափարով կարևոր և ուժեղ է, այն-
քան թույլ է իր միակերպ ձևով. բայց ժամանակակիցների համար ան-
շուշտ արժեքավոր, նրանց հարկավոր է բովանդակությունը, որ է կեն-
դանի, հուսալից շնչով ու հավատքով, թե հնուց սուրբ հայրապետե-
րից՝ մարգարեություն կա ֆրանկաց ազգի գալու համար, այն էլ իբր
Տրդատի զորքից (ազատներից) տրևմուտքում մնացած հայերի առաջ-
նորդությամբ։

Այդ հավատը մնում է մինչև օրս, այժմ էլ նախորդ իմպերիալիստա-
կան պատերազմից հալ ժողովրդի և Հայաստանի մեծ ավերմունքի ժա-
մանակ դեռ կենդանի մնում է հույսն ու հավատը, թե Հայաստանը, ինչ-
պես առասպելական ֆինիքսը, մոխիրների միջից կվերակենդանանա և
կաճի։

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

1. Որտեղացի է Եւա:— Այս նշանավոր անձի մասին կենսագրական տեղեկութիւնները տատանվում են: Այստեղ ղեկնք նախ Վարդան Արեւիկեցու հաղորդածը¹, ահիւն և վարդապետք յայնմ ժամանակի՝ Յովհաննէս, որ և Սարկաւագ՝ ի գաւառէն Փառիսոսայ ի քահանայական ազդէ, որոյ լիշատակը ճառագայթիցն իսայիին մինչև ցարդ ի բանա իւր և ի նմանէ աշակերտեալան.— Երեմիա, որ և Անձրեմիկ, որ և զամս Երեսուն շորակետ եղև, և այնչափ հլու եղեալ վարդապետին իւրոյ, որ ի սաստիկն երբեմն, թէ՛ յուր լո՛րս, զամս երիս ընդ այլ մարդ ոչ խոսեցաւ, բայց ճիշտ ընդ վարժիչս [այլ ընթերց. վարժիչն] իւր ի կարեա [վար. ի կարասիս, որ սխալ է].— և Սամուէլ երէց աշխարհի, որ զգաւազանսն յօրինեաց զՔրիստոսին՝ Անեցին [այլ ընթ. Սամուէլ երէց Անեցին, որ...].— և նախ քան զսոսա Անանիա, որ զԱռաքեալսն համարտեաց հրամանաւ կաթողիկոսին Պետրոսի՝ Սանահնեցին՝ Իսկ Սարկաւագ [այլ ընթ. սուրբ] վարդապետն կացեալ ի ժիւր մշակութեան զաւուրս իւր՝ հանգեալ ի հինց հարիւր վաթսուն և ութ [ՇԿԸ=568+551=1119. Վենետիկի տպագր. մեջ՝ 543ինց հարիւր ութսուն և ութ=1139] թուին. և զկնի ամի միոյ՝ լծակիցն իւր Ալաւկայ որդին Գալիթ, որ Կանոնքն գրեաց դիւրաւաս [այլ ընթ. որոյ Կանոնքն է դիւրաւաս, որ Կանոնքն էր դիւրաւաս].— և Թոքակերայ որդին կոչեցեալ աշակերտ եորին, և այլ արք ճգնաւորք ի Աղուանս, որպէս Պետրոս Խոնթկայ որդին և Յակոբ սքանչելին..., էին և կանայք թագաւորազունք կրօնաւորեալք կուսութեամբ ի Քորայրն՝ Խորասու և Մարիամ, առ որս գրէր սուրբ վարդապետն Սարկաւագ զգուշական խրատս:

Ըստ Վարդան Արեւիկեցու, ուրեմն, Սարկաւագ վարդապետը Փառիսոսս գաղտնիք է, քահանայական տոհմից:— Ինչպէս և գրէլ մեք Վերեամ

¹ «ՄՃՅԻՆ Վարդանայ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 159—180: Մեք գործածան ալս է: Վարդան վարդապետ Մննէ, Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862: Այլն ՀԱՅԸ Մատենադարան, Ժնև, խ 1770, էջ 68—69. Ընդգրկեալ է 1588 թ. Աստուածատուր գրիչը:

նրա կենսագրութեան մեջ, Սխալ է ասել, թե Վարդանի ամանդութեան համեմատ անոր հայրն ամուսնացած երեք մօն էր², Վարդանն այդպիսի բան չի հայտնել. նա գրում է՝ «ի քահանայական ազգէն. իսկ մեկը կարող է քահանայական տոհմից լինել նաև իրրե քահանայի թոռ, բայց աշխարհականի որդի»:

Սամուել Երեց Անեցիին գրում է³. «Ե ՇՀԸ [= 578 + 551 = 1129] թվին փոխի յաշխարհէս մեծ վարդապետն Սարգիս, որ է ի Փարսոսոյ՝ որդի քահանայի միոյ, և աշակերտ սորա Երեմիա, որ և յասելն վարդապետին, թէ՛ «Լուս լն՝ րա, զամս Գ [= Երթա] լուռ եկաց, ընդ միտս և ընդ աստուծոյ խօսէր, որ և Անծրե կոչեցաւ: Եւ ընկերք սորա՝ տէր հալատուր և Գրիգոր և Յովհաննէս և Սամուէլ. ամենեքին սորա Անեցիքս:

Վարդան Արեւելցու և Սամուել Երեցի գրածների բովանդակութիւնը նույնն է. վերջինիս հիշած «Գրիգորը»՝ առաջինի «Թոքակերայ» որդին է. ամէլի հն խալատուրն և Յովհաննէսն անունները: Բայց այս էական չէ, ինչ որ Վարդանը գրում է «Յովհաննէս Սարկալագիս մասին, նույնը Սամուելը գրում է Սարգիս անունով մեծ վարդապետին համար: Եվ իսկապէս եղել է Սարգիս անունով մի հայտնի վարդապետ, քանի որ Սամուելը (էջ 132) հիշում է նրա մահը. «Ե ՇՀԸ [= 588 + 551 = 1139] թվին ի Ժէ արեգ ամսոյ շարժմամբ կործանեցաւ Դանձակ քաղաք. և սուրբ վարդապետքն Գրիգոր [= Թոքակերի որդին] և Սարգիս՝ ընկղմեցան, և եկեղեցին Հաղբատայ փուղանիս, Հիմա, ի՞նչպէս պիտի քացաւրել, որ նույն բովանդակութիւնը պատմվել է երկու տարբեր անունների վրա: Անհամասկան է ենթադրել⁴, թե «Սարկալագիս անունն արտագրողների ձեռով դարձած լինի «Սարգիս»։ Ղի այս նկատմամբ մի մեծ դժվարութիւն կա: Սամուելը քիչ հետո գրում է. «Ե ՇՀԸ [= 578 + 551 = 1129] ամին փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ վարդապետն մեծ որ Սարկալագն կոչիւր՝ ի Հաղբատա. և ապա՝ «Ե ՇԶ [= 580 + 551 = 1131] թվին... նշեցաց յայսմ ամի լուսատրիլ և սուրբ վարդապետն Դանիթ Աւական որդիս: Եթե «Սարկալագիս անունն աղնատմամբ «Սարգիս» դարձած լիներ, ապա այլևս ինչու պետք է Սամուելը նրա մահը քիչ հետո երկրորդ անգամ հիշեր⁵: Պետք է ասել և հետևյալը: Կիրակոս Դանձակեցին խո-

² Հ. Ոսկյան, Հովհաննէս Սարկալագի կյանքը. «Հանդես Ամսօրյա», Վիեննա, 1926, էջ 28:

³ Ս. Անեցի, Հաւաքմունք ի գրեց պատմադրաց յազազս գիտի ժամանակաց մինչև ի ներկայս, էջ 138:

⁴ Այսպէս ենթադրում է Հ. Ոսկյան, Հովհ. Սարկալագի կյանքը, «Հանդես Ամսօրյա», Վիեննա, 1926, էջ 28:

⁵ Սարկալագ Վարդապետին վերաբերյալ զույսն և այս Հավելումը Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրք» մեջ (Հատարական գիտութիւններ, № 2—3, Երևան, 1945, էջ 31—60) և «Առանձին տրատադաթիումը» Հրատարակչիւց հետո՝ Պետ. Մատենադարանի (Ձեռագրատուն) գիտ. աշխատակից Հ. Խաչիկյանը մտադրեց ինչ Դանիթը: «Սամուել Անեցու 1176 թվին հնդկական ձեռագրից արտագրված գրութիւնը (№ 5818) «Սարգիս» համըմար լիւր. աստի այն ներմուծված է համարվում մեջ (Դանիթիւմ) Արեւիկ Մանուկ է. պար-

սելով երեք աստանշնչի վարդապետների մասին, որ են Սարկավազ Վարդապետ, Թոքակների որդի Գրիգոր և Ալավկա որդի Դավիթ, ավելացնում է. «Սոքա երեքման էին յաշխարհէն Քանձակայ, ուստի և նա, Զի հիմնավորված ծանօթության մէջ գրած այս բացատրութիւնը ԵՄաշխարհէն Քանձակայ այս է՝ Արցախ, որուն մեկ գավառն ալ է Փառիսոսը, Լստ այսմ առաջից ալլանալության նույնացրած է բաշխարհ Քանձակայ և Արցախ, Ինչքան էլ քաղաքական սահմանները փոփոխական լինեին այն գարնան և Քանձակի ամիրան, ինչպէս տեսանք, 1008 թ. գրավել էր Փառիսոս գավառի մի մասը, բայց և այնպէս Արցախը և ոչ իսկ Փառիսոս գավառը չէին կարող կոչվել բաշխարհ Քանձակայ, որ է Քանձակ քաղաքի շուրջն եղած գավառները, Հավանական է կարծել, որ դանձակեցիները նշանավոր վարդապետներին տեղական փառասիրութեամբ կապած լինին իրենց կողմերի հետ: Վերջապէս՝ պետք է նկատի ունենալ և հետևյալը, Վերջերս հայտնաբերված մի ձեռագիր մէջ, որ հիշված Հովհաննէս Սարկավազի կենսագրութեան աղթիվ, գրված կա նրա մասին. «Որ իրեն զմաստուն մեղու՝ բարձնալ յանդամ մոտաց զծաղիկս յերանգոց դունոց և հոտոց և համոց բերէր ի քաղաք իւր և տեղի սենդեռն ի քաղաքաւմայս Անի, և յի առելը գտունն ի փարթաւութենէ անտի...»⁷ Ընդգծված բառերից կարելի է հետևեցնել, որ Սարկավազ Վարդապետն Անեցի է եղել: Բայց նրա ծնողները կարող էին Փառիսոս գավառից լինել և Հովհաննէսի մատաղ մանկութեան ժամանակ Անի տեղափոխված, և Հովհաննէսն այստեղ մեծացած ու սնված, ուստի և Անի և Անիի նրա համար կարող էր համարվել զքաղաք իւր և տեղի սենդեռնը: Այսպիսի եղելութիւնները ոչ սակաւ է են:

Այսպիսով դեռ բացատրութեան կարոտ է մնում Հովհաննէս Սարկա-

այն նույնպէս կարող է Սարկավազին վերաբերել:—Ուրիշ խոսքով՝ ներմուծումը եղել է Սարկավազ անվամբ, որ հետո դարձել է Սարգիս: Բայց ներմուծումը կարող է հենց սկզբից Սարգիս անունով եղած լինել:

6 Ն. Ոսկյան, Հովհ. Սարկավազի կյանքը, «Հանգիստ» մամուլ, էջ 26, ծանոս:

7 Այս քաղում եմ վերցնում Սարկավազի կենսագրութեան մէջ հիշված Հոգմածից (Պետ. համալս. Գիտ. աշխատութիւններ, հատ. XIII, Երևան, 1940, էջ 348 և հտե., Ար. Մովսիսյան, Հայագիր դպրոցի ծագումը և հետագա զինակը): Հոգմածագիրը, էջ 414, ստղատակի լուսանկարում, դրել է հետևյալ ծանօթութեամբ. «Սարկավազի դպրոցի վերաբերյալ նշումները վերցված են հիշատակարան «Հայասն» վարդէց, որը արտագրել է Մարթա երեքը հայոց Պէլ թմին Անգղիականում: Հին ձեռագիրը գրվել է հայոց ԵՂ թմին Հազարասումը: Հին ձեռագիրը բառերով, երևի, պետք է հասկանալ այն գրչագիրը, որից արտագրել է Մարթա երեքը: Դրա գրութեան թվականը՝ Հայոց ԵՂ—508+551=1059 թ. բացարձակ սխալ է. քանի արտագրութեան կամ տպագրութեան վրիպակ: Այդ թվականին Սարկավազը չէր կարող Անիում տեղակի ուսուցիչ լինել, քանի այդ՝ հիշատակագիրը Սարկավազի մասին տեղեկութիւն է զբոս, որ նա արգեն վախճանված պիտի լինէր. ՍՍԽ ի մանկական անտի տիպ մեկն ընկերին ուղղումն նույնը յերկրագին (յերկրէն? Մ. Ա.) ոչ երբեք չեղան ուղիքածոցը երբեք զուշ ուղիքն ի նպատակէ ընթերցման, ասանելայ և ուսուցանելու...»⁸ Պետք է կարծել, թե ԵՂ թմին տեղ պիտի լինէ ԵՂ—508+551=1041, այսինքն Սարկավազի մահից մի 12 տարի հետո:

վագ Վարդապետի որտեղացի լինելը: Այդ կայարզվի միայն այն դեպ-
քում, երբ երևան գան այնպիսի ձեռագրական ընթերցվածներ, կամ այն-
պիսի նոր գրական հիշատակարաններ, որոնցով կատուգվի նրա ծննդա-
վայրը:

2. Երբ է վախճանովել նա:— Կասկածի տակ է գրված Սարկավագ
Վարդապետի և մահվան թվականը, որ է 1129 ըստ Սամուել Երեցի և
ըստ Կիրակոս Գանձակեցու: Վարդան Արենցու ձեռագիրներն մի մասի
և Մոսկվայի հրատարակության մեջ է ՇԿԸ [=568+551=1119] թվա-
կանը, իսկ Վենետիկի տպագրության մեջ՝ Եհնդ հարիւր ութսուն և ութ
[=568+551=1119], և ծանոթության մեջ թշին 0. ՇԿԸ, որ է հինգ հա-
րիւր վաթսուն և ութ: Այլ ժամանակագիրք՝ ՇԸԸ ասեն, որ է հինգ հարիւր
հոթանասուն և ութ [=1129], որ ուղղագոյն թուիս (էջ 121): Հայտնի բա-
նասեր Կ. Կոստանյանցն իր մի հոդվածի մեջ⁸ ընդունում է Վարդանի
որոշ ձեռագիրների մեջ եղած 1139 թվականը, և որովհետև թե՛ ըստ Վար-
դանի և թե՛ ըստ Կիրակոսի մի տարի հետո վախճանվել է Ալավկա որդի՝
Դավիթը, ուրեմն, ըստ Կոստանյանցի, նրա մահն ընկնում է 1140 թվին:
Նա այդպես դատում է նկատի ունենալով հետևյալը: Կիրակոս Գանձա-
կեցին Աղվանից կաթողիկոսների մասին գլխի մեջ հիշելով նրանց ա-
նուններն ու կաթողիկոսության տարիները՝ էջ 188 գրում է, «և տէր Ստե-
փանոս՝ ամ մի և կէս, ի տիս պատանեկութեան վախճանեալ ի ՇԸԸ
[=568+551=1119] ամի թուականին Հայոց: Գրանից հետո Կիրակոսը
պատմում է, թե Հայոց Գրիգորիս կաթողիկոսի ժամանակ քսան և հինգ
տարի թափուր է մնացել Աղվանից կաթողիկոսական աթոռը. «Ապա
մանուկ մի էր յազգէ կաթողիկոսացն Գազիկ անուն, որդի Գէորգեայ, զոր
սնուցին, և ուսուցին, և իրեն ի յափ հասաւ մանուկն, ապա գրեն թուղթ
մաղթանաց Գրիգոր վարդապետն՝ որդին Թոքակերի, և Դաւիթ՝ որդի
Ալօկայ, և այլ աշխարհն Աղուանից, առ մեծ հայրապետն Հայոց Գրիգո-
րիս... զի ձեռնագրեսցէ զնա եպիսկոպոս: Նա ձեռնագրվում է եպիս-
կոպոս, հետո՝ կաթողիկոս: Այս կատարվում է նույն 1139 թ., որովհետև
սույն տարին սաստիկ երկրաշարժ է լինում, կործանվում է Գանձակ քա-
ղաքը, «և շնորհօքն աստուծոյ ապրեալ եղև Խոբլենայ կաթողիկոսն, բայց
մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգորս⁹: Արդ՝ մի կողմ թող-
նելով Կ. Կոստանյանցի մի քանի ուրիշ անհիմն ենթադրութիւնները՝
առնենք միայն հետևյալը: Որովհետև Ալավկա որդի Դավիթը մեկն է
1139 թ. Հայոց Գրիգորիս կաթողիկոսին թուղթ գրողներից, «հետևաբար
նրա մահը չէր կարող հանդիպել 1140 թվից առաջ, պետք է հավանական
համարվի Վարդանի ցուցումը, թե Սարկավագ Վարդապետի մահը եղել
է 1139 (ՇԸԸ) թվին: Ըստ այսմ՝ Դավթի մահը պատահել է Սարկավագ

⁸ «Աղագորական հանգստ, ԺԳ գիրք, 1908, էջ 105 և հտն. Դավիթ Ալավկա որդի»:

⁹ Կ. Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց, էջ 188 և հտն., Երկրաշարժի մասին՝ նաև էջ
108. այլև Սամուել, էջ 122:

Վարդապետից մի տարի հետո, 1140 թվին: Սույն թվականը Դավթի մահվան համար, անշուշտ, Կոստանյանցից առնելով, ընդունում է և և. Սամուելյանը¹⁰, Այս խեղդիբը, սակայն, այդպես հնչող չի լուծվում:

1. Սխալ է ոչ թե Կիրակոսի և ուրիշների հիշած 1129 թվականը, այլ այն տեղեկությունը, թե մանուկ Գագիկի համար թուղթը գրվել է և Դավթ վարդապետի մասնակցությամբ: Այս գեպից այնքին քան հարյուր տարի հետո, երբ գրել է Կիրակոսը, Հիշող հիշողություն պահված չէր լինել զանազանների մեջ, նրանք կարող էին՝ չիմանալով թե ե՞րբ է մեռել իրենց նշանավոր հայրենակից Դավթ վարդապետը, սրա անունն էլ կապել հիշված թվի հետ, և Կիրակոսն այդ զրույցը լսելով՝ այդպես էլ գրի է տռել, առանց ուշ դարձնելու, որ ինքն իր գրքի մեջ (էջ 107) Դավթի մահն արգեն գրել էր 1130 թվին, Սարկավագի մահից մի տարի հետո:

2. Կ. Կոստանյանցն այնպես է գրում, իբր թե Վարդանի ցուցումն է 1139 թվականը. բայց այս տարեգրի ուրիշ ձևագրերների մեջ, ինչպես վերևում ասվեց, է 1119 թվականը: Այդ ցույց է տալիս, որ նրա ձևագրերների մեջ Սարկավագ վարդապետի մահվան թվականն աղճատված է, Այդ կարող էր լինել 1129, ինչպես է՝ Սամուել Անեցու ժամանակագրությամբ և Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ: Վերևում տեսանք, որ ինչ որ Վարդանը գրում է Սարկավագ վարդապետի մասին, նույնը Սամուել Անեցին գրում է Սարգիս վարդապետի համար: Արդ՝ Սամուելն այս վերջինի մահը գնում է 1129 թվին: Պետք է կարծել, որ Վարդանի մեջ քովանդակության նույնության հետ՝ թվականն էլ նույնն է եղել, որ հետո աղճատվել է: Այդ հաստատվում է հետևյալով:

3. Ժամանակագրերները, որոնց թվի մեջ և Վարդանը, հորինում են տարեթվերի կարգով, նա էջ 154 և հտն. (Մոսկվայի տպագր.) հիշում է 565 (=1116) թվականը, հետո՝ 567 (=1118 թ.), այսինքն՝ թի քալ տարոյն, այսինքն հայրող տարին, որեմն 1119 թվականը: Այնուհետև նա առանց թվականների հիշելու պատմում է մի շարք եղելությունների մասին, որոնց թվականները գիտենք այլ աղբյուրներից. այդպիսիք են՝ Վրաց Դավթ թագավորի տիրելն Անի քաղաքին, որ կատարվել է 1124 թ., Արաբների որդի Փատուրնի տիրելը նույն քաղաքին, որ եղել է 1126 թ., Ապա Փատուրնի մասին մի երկու քան պատմելուց հետո՝ նա խոսում է Սարկավագի և մյուս վարդապետների մասին, այսինքն՝ գրում է այն հատվածը, որ բերվեց վերևում (ա՛հ ինչ և վարդապետը յայնմ ժամանակին, — որ է Դավթ թագավորի և Փատուրնի ժամանակին), և այդտեղ Սարկավագի մահը գրված է, ըստ որոշ ձևագրերների, 1119 թ., իսկ ըստ այլ ձևագրեր՝ 1139 թ.: Արդ՝ այդ երկու թվականներն էլ աղճատված են. պետք է լինի 1129, որովհետև դրանից հետո հիշում է Փատուրնի մահը թի հինգ հարիւր եօթանասուն և ինն [—1130] թուին, և հետո պատմում

¹⁰ Խ. Սամուելյան, Հին Հայ իրավունքի պատմությունը, էջ 74:

է դիպքեր՝ հիշելով 1131 թվականը, ապա՝ Գանձակի երկրաշարժը 1139 թվին, և այսպես շարունակում է կարգով հիշելով 1141, 1145 և այլն։ Փանի որ նա պատմում է Փատուների մասին 1126—1130 թվականներին մեջ բնկած դժպքեր, օպասելի էր, որ Սարկավազի մահվան տարին նա զանր վերջին ներկու թվականների միջև, ուրեմն 1129 թվին, և ոչ թե ետ դառնար մինչև 1119 թվականը, կամ թե թույնը առաջ մինչև 1139 թվականը, և ապա դարձյալ ետ դառնար 1130 թվին, Փատուների մահվանը, և այլն։

4. Կա մի ուրիշ հանգամանք էլ, որ պետք է ուշադրութեամբ առնել չափաց տոմարի նորոգումը եղել է 1084 թ. Սարկավազ Վարդապետի ձեռով, ուրեմն, եթե նա մեռած լինի 1139 թ., նրա մահից հիսուն և հինգ տարի առաջ, եթե նա մահած լինի, դիցուք, խորին ծերութեան ժամանակ՝ 80—85 տարեկան, տոմարի նորոգման թվականին նա պիտի լիներ 25—30 տարեկան, իսկ նախքան 1084 թվականը պետք է առնվազն մի հինգ տարի միջոց լիներ, երբ մի կողմից՝ Սարկավազ Վարդապետն աշխատելու այդ գործի վրա, և մյուս կողմից՝ մտքերը պատրաստեին այնպիսի մեծ փոփոխությունն ընդունելի անելու համար. որովհետև խնդիրը միայն շարժական տարին անշարժի վերածելը չէր, այլ պետք էր նախապես 1-ը փոխարինել 29-ից տանել օգոստոսի 11-ի վրա, և արժեքի տոնական տարության օրերն ըստ այնմ փոփոխության ենթարկել, Արդ՝ 1084 թվականից մի շրջա-հինգ տարի առաջ, ըստ վերելի հաշվի, Սարկավազը պիտի լիներ 20—25 տարեկան, Դժվար է ենթադրել, թե այս տարիքի մի երիտասարդ, ինչքան էլ նա ընդունակ լիներ, այնքան մեծ հեղինակություն ունենար, որ կամ իր սեփական նախաձեռնությամբ, կամ ուրիշների հանձնարարությամբ ձեռնարկեր այնպիսի պատասխանատու գործ և գլուխ բերեր այն՝ ընդունելի դարձնելով ուրիշներին¹¹։ Իսկ եթե նա վախճանված լինի 1129 թ., ապա ուրեմն 1084 թվին մի հինգ տարի առաջ նա կլիներ 30—35 տարեկան, և այդ տարիքին կարող էր արդեն հեղինակավոր ու ազդեցիկ լինել և ձեռնարկել այդ գործը, այսինքն 1084 թվականից առաջ նախապատրաստել տոմարագիտական հաշիվները, իսկ այս յի նշանակում, հարկավ, թե նա 1084 թվականից հետո էլ յի դրադվել նույն գործով և այդ մասին գրավոր աշխատանքներ թողել։

Վերջապես՝ 5. Պետք է նկատի ունենալ և հետևյալը։ Սարկավազ Վարդապետի կենսագրության մեջ տեսանք, որ, ըստ Կիրակոս Գանձակեցու հաղորդածին, նրան շատ սիրելիս է եղել Վրաց Դավիթ թագավորը (1089—1125 թթ.) և նրա օրհնությունն է խնդրելիս եղել, նույնը բավական նման ձևով պատմված կա և Շիրազ տարեգրության (Վարդանիս

¹¹ Թնայնոյ մեր ժամանակագիրները լին հիշում, քայքայման անհրաժեշտ պիտի լիներ իշխանութեան հաշուքայն այդ գործի համար, և հավանորեն այն եղել է Անիում նստող Բարսեղ իշխանապետի կողմից. որ 1081 թ. Հաղպատի վանքում ձեռնագրվել է կաթողիկոս Հովնաթանն այս թվականներին էլ հանձնարարվել է Սարկավազին գլուխ բերել այդ գործը։

ցիտովրեքառ-ի) 12-րդ դարում կատարված հայերեն թարգմանությունների վերջարանի մեջ, ուր ասված է նաև, թե թագավորը «նրստէր ընդ նմա և փառէր զպարանոցաւ նորա, և նա ասէր. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութենէս, ի բաց զնա յինէն, զի մի աշխատ լիցիսաւ: Ըս թագաւորն համբուրէր և ասէր. «Անպակաս լիցի հոտս այս յինէն, հայր պատուական»¹², Արդ, ձթե ալդպիսի մի դնպզ պատահած լինի,—ինչ որ շատ հավանական է,— այն էլ թեկուզ Վրաց ալդ թագավորի վերջին տարում, 1125 թ., այն ժամանակ արդեն Սարկավազ Վարդապետը շատ ծեր պիտի լիներ, մոտավորապես 80—85 տարեկան, Հիմա, եթե նա վախճանված լինի 1139 թ., ուրեմն ալդ դնպզից (1125 թվից) հետո 14 տարի էլ պիտի ապրած լինի և մեռած 94—99 տարեկան հասակում, ինչ որ հավանական է, քանի որ նա 1129 թ. արդեն,—եթե ոչ սրանից առաջ,— «ծերությունից լուծված և հոտած» է հղել:

Հիշված բոլոր պարագայներն ապացույց են, որ Սարկավազ Վարդապետը վախճանված է 1129 թ. և ոչ թե 1139-ին:

ԾՐԿՐՈՐԳ ԼԱՎԵԼՎԱՄ

ԲԱՐԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԸ

Խաչատուր Կեղանցու բարաճություններից հետո՝ գրեթե բոլոր ձեռագիրների մեջ կա այս հիշատակարանը. «Որք լսէք զաղիոգորմ բարաճութենս զյարմարող սորա [այլ ընթերցված՝ ստորին] զխաչատուր Կեղանցիս լիշնցէք ի Քրիստոս տէր մերս: Ըն մի հիմք լկա կնդծ համարելու այս հիշատակարանը, Խաչատուր Կեղանցին շատ պարզ կերպով իրեն անվանում է բարաճությունների հեղինակ, Բայց ընայնով դրան՝ Հ. Տաշյանը՝ մի շարք խղճուկ պատճառաբանություններով ճշդ-նում է ցույց տալու հակառակը, որպեսզի վերջը դրանց հեղինակ համարի «Եկեղեցականորի Պատմություն» հայ թարգմանչին, որ է, ըստ նրա կարծիքի, Մ. Խորենացին, Տնտնեք նրա փաստարկումները:

Առաջին՝ նա ընդգծելով «զյարմարող սորա» բառերը՝ գրում է, թե դրանով շուր կարող հակացվել բարաճությունների հորինումը. ապա թե ոչ գտնե ժյարմարող սոցա պետք էր ըսուիլ: Նախ՝ ժյարմարելն բառն ինքը Կեղանցին ուրիշ տեղ էլ գործածել է «հորինել» բառի իմաստով: Այնպեսզի իր և Քրիստոսի համար արած իր 18 բարաճություններից հետո՝ նա հիշատակարանի մեջ գրում է. «Ընթերցելով զսա [այսինքն

¹² Տճ՝ Լ. Միլիտոս-Փիկ, Հովհաննես Սարկավազ վարդապետ հաղթաբացու «վաճ չարմաճ և ստաճութեան երկրք», «Տեղեկագիր» ՄԱԿ 9Ա Հայկ. ֆիլ. № 1, 1948, էջ 75:

¹ «Պատմութիւն Աղեքաւոցորի Մանկղոսացոյ», Վենետիկ, 1842, էջ 180—195: Տճ՝ և «Հիշատակարան», էջ 195, գտն.:

² Հ. Տաշյան, Ուսումն. Ստեփ. Գալ., էջ 108—111:

ԱՅ քարառնութիւնները], լիշմամբ արժանի լինի ի ձէնը հաշատոր Կե-
լառուեցի. զի ի յարմարումն սակաւ քաղցիցս [այսինքն 18 քարառնու-
թիւններին] և գրչութիւն գրոցս հաստով աշխատեցայս: Ահա մի ուրիշ
օրինակ ևս. թԱ ոչ գիտեմ, եթէ զիարդ յարմարեցից զողորմագութիւնսս²,
գրում է Մ. Խորենացին, ահարմարեչս քայլը յօրինելս քառի նշանակու-
թիւմբ: Այսպէս և ուրիշները: Եվ ինչու՞ չպիտի նույն Կելառեցին նույն
քառը գործածեր նաև իր քարառնութիւնների համար:

Ապա՝ գալով ստորաքառի եզակի ձևին, Լ. Տաշյանը, եթե ուզենար,
շատ հեշտութիւմբ կըացատրեր, թե թողաք ձևն աղճատումով դարձել է
ստորաք, մանաւանդ որ այս դերանվան անունը՝ «քարառնութիւնս»
կարող էր արտագրուից հասկացվել եզակի՝ իրրև քայս քարառնութիւ-
նը: Բայց կարիք էլ չկա աղճատման դիմելու. նույն Կելառեցին, ինչպէս
վերևում քերած ցիտատից կարելի է տեսնել, իր 18 քարառնութիւնների
համար, որ հոգնակի ձևով անվանում է թրանքս, դրել է եզակի ձևով
«գառաք դերանունը, և ոչ «գառաքս»:

Երկրորդ՝ Տաշյանը առանց հիմքի հայտնում է, թե Կելառեցին
«գլխավորագր սորաք» քառերի տակ «անշուշտ կհասկանա միայն Կալիս-
թենյա օրինակութիւնը [«արտագրութիւնը»] քարառնութիւնց և լուր
հորինած Հառաքաբանին և Վերջաքանութիւն հետ ի միասին», այսինքն
ամբողջ գիրքը: Վիեննայի քանասերը մոռանում է, որ այդպէս հասկա-
նալու համար Կելառեցին «գիրքը» կարդացողներին պիտի գիմեր և գրեր
«մերք ընթեռնութ գիրքս», և ոչ թե գրեր՝ «մերք լսէք զաղիողորմ քառառ-
նութիւնս»:

Երբ որդ՝ «Կելառուեցվո խեղճ ու ռամիկ [ընդգծումը հեղինակին
է] լեզվին քով քարառնութիւնց լեզուն շատ ու շատ քարէք է, մանաւանդ
վերջին շորորոգ քարառնութիւն մեջ», — գրում է Տաշյանը, և հետո ավել-
լացնում. «Մերպեսգի հախուռն շերևա լեզվի և ոճո կողմանն առյալ մեր
դատաստանը՝ դեննք հոս պատառիկ մը միայն երկու գրութիւնց, որ ա-
մեն տեսական համեմատութենն ավելի պարզ կցուցնեն իրքս: Եվ նա
յրերում է հետևյալները, ընդգծելով որոշ քառեր»:

Նշիար հաշատորոյ յոտանաւորներէն.

«Ասաց մատրուակ գինոյն
Որ զկրթայս ի ձեռս է առեր.
Առէ՞ք ըմպեցէ՞ զգինիս
Ու հերիք արէ՞ք գրուցիլ.
Յերկար ճանապարհ ունիս
Գնալու, ես անհոգացելի՞».

2 Մ. Խորենացի, Գիրք երբորդ, «Մերք մեջ»:

3 Տաշյանը տպագրել է «գնալ ու ես անհոգացելս: Ուղղել եմ ըստ իմաստին և ըստ
տառանավորի լսովին: Ե՞ս անհոգացելս միշին հայերենում նշանակում է՝ «անհոգացել հետ»:

Զալա տիկնոջ մրտօքն
Որ վախէր ըզնեա՞ն սպանանելա:

Նշխար Դ. բարառնութեան.

«Զալա առնելով ի յողոր շարժին, պատահան զպատմունճան, ներկ(ան)և, արեամբ զերեւա, փնտտեն զհերս վարսից, ճողան զմօրուս իւրեանց, հող զգլխով արկանեն, տան զերեսս միգախառն մօխրի, հնչեն զգալարափողա... զաշխարհան այսպէս հրատարակեն. Տէր արքայ, այսքան ժամանակս աշխատ եղաք ի գործ պատերազմի, ժովակուրս և զազանարեկ լինելովք, և այլն, և այլն:

Այս կտորները ոչ մի բան «պարզ» չեն ցույց տալիս, բայց եթե նրանց ցիտողի պարզամտութիւնը գրական և լեզվական խնդիրների նկատմամբ, եթե ոչ ավելին, Տաշյանի կարծում է, թե Կելառեցին 13-րդ դարում չէր կարող հին գրական լեզվով հորինել, այլ միմիայն լատին ու ռաբինի լեզվով. իսկ ինքը, Տաշյանը 19-րդ դարում կարող էր և գրաբար հորինել և աշխարհաբար. նույնպես և Ա. Բագրատունի կարող էր հին լեզվով «շայկ Դիւցազն» քերթել, իսկ «Տարեհր» քերականութեան գրքի մեջ ասել՝ «ասանկ ալ կրլալ, անանկ ալ», և այլն, և այլն:

Այսպես և շատ ուրիշ գրողներ, Եթե այդպիս դեմ ու դեմ դնենք նույն հեղինակների գրաբար և աշխարհաբար լեզուներով հորինած երկերը, շատ շատերի համար պիտի ասենք, թե գրաբար հորինածները նրանցը լեն, օրինակ՝ «շայկ Դիւցազն» Բագրատունու գործը լպիտի համարվի: Տաշյանն այդպիսի «հախուռն» փաստարկումն է արել, երևի յիմանալով, որ 13-րդ դարում բանաստեղծութիւններին, առանձնապէս հայրենիների համար, արդեն իշխող էր մեր միջին հայերենը, որ Մխիթարյաններն անվանում են «ռաբինի», Եվ Կելառեցին իր վերնում բերված կաֆան հորինել է միջին հայերեն լեզվով, իսկ «բարառնութիւններ» նա հարմարել է հին հայերենով. Եվ այնպես էլ չէր կարող լինել, քանի որ այդ տիպի երկերի—ճառերի, ներբողյանների և նմանների համար ընդունված չի եղել միջին հայերենի կիրառութիւնը: Այդպիս վարկել են նույն դարերում և ուրիշները, ինչպիս Զովհաննես Երզնկացի (Պլուզ), Աւա՛ Տաշյանը Դ. բարառնութիւնից իր բերած կտորի համար գրում է, թե «Ե դարու գոնն վերջին կիսուն [ընդգծումը հեղինակին է] լեզվի գորշմը յուր վրան կկրծա: Եվ այսքան. պետք է համարանք, Խնչ կա նրա բերած այն պարզ ու համառոտ նախադասութիւնների մեջ, որ ամեն վարժ գրաբար գրողի գրչի տակից դուրս լգան նմանները, այն էլ 13-րդ դարում մի գովված շնորհազարգ հետորի Տաշյանը դրանց հետ բաղդատելու համար պիտի բերեր ոչ թե Կելառեցու միջին հայերենով հորինած հայերենը, այլ գոնն նրա գրաբար նախադասութիւնն ու վերջաբանութիւնը, և այն ժամանակ կերևար, որ մեր այս բանաստեղծը կոկ գրա-

Յ. Տպկան է զգնա, ուղղում եմ ըստ շափին քղնառ:

բար գրել գիտեր, ճարտասանական գրվածքների մեջ, անշուշտ, ավելի զեղծիքի ոճով, նրա ճեպագրութեան մեջ գտնուի ենք նաև հետևյալ նույնիսկ ոչ սովորական ձևը՝ ավայել է արքայից և զօրապետաց իմաստուն և հաճախեղ լինելը, մի հոլովական կիրառութուն, որ կա նաև բարառութունից Տաշյանի ցիտած կտորի մեջ և՛ «աշխատ եղաք ի գործ պատերազմի» ծովակալու և դադանաբնի լինելով:

Չարբոբդ՝ իբրև մի ապացույց դնում է Տաշյանը և հետևյալը. «հաշատուր ըստ բավականի գիտե յուր գրութեանց արժեքը, ուստի միշտ կշանա արդարացնել յուր գրվածները՝ սակաւ բան, զգնչառեցիս ակաւ արարէք յիշման դիւ արժան, այսպէս և դու առ ի մտի, ծոյլ և ծանակ կեղառեցիս և նման բացատրութեամբք. և այսպէս զժամարավ կրնար բարառութեանց համար՝ եթէ յուր գործքն էին՝ ըսել թե «Որք լսէք զաղիո՞ղորմ բարառութիւնս՝ զանոնք այսպէս զովութեամբ յիշելովս:— Տաշյանի այս խոսքերը հերքելու կարիք չկար. զի զժամարավ կրնար տեսնուի մերժում այն, որ կեղառեցին կարող էր իր բարառութիւնները բնորոշել սաղիո՞ղորմ բառով: Ամեն հեղինակ էլ կարող է իր մի աշխատութեան համար այս կարծիքը հայտնել, մի ուրիշ աշխատութեան համար՝ այն, Դարձյալ՝ եթէ նա ըստ բավականի գիտեր յուր գրութեանց արժեքը և ըստ իր փիտցածի բնորոշել էր իր ուրիշ երկերը և իրեն՝ սակավ, ստկար, թոյլ և ծանակ բառերով, ապա նա ըստ բավականի գիտեր և իր բարառութիւնների արժեքը, որոնք իրոք սաղիո՞ղորմ ողբեր են իրենց բովանդակութեամբ, և նա կարող էր այդ սաղիո՞ղորմ բառով որակել այդ ողբերը:

Ավելորդ չէ նկատել և հետևյալը: Երբ կեղառեցին իր 18 բարառութիւններն Ալեքսանդրի և Քրիստոսի կյանքի վերաբերմամբ՝ անվանում է սակավ բանք, կամ մի տեղ հիշատակարանի մեջ իրեն համար գործածում է ստկար բառը, — թեկուզ նկատմամբ իր ուսանավորների, — ինչ որ համաստի համարելու հիմք չկա, — այդ մի հիմք չէ տանու, թե նա «վիշտ կշանայ արդարացնել իր գրածները»: Հետաքրքիր է, թե ո՞ր դեպքում է կեղառեցին իրեն անվանում թոյլ և ծանակ: Երբ Ալեքսանդրը տեսնում է ոչ շատ լայն Ակամանդրոս գետը՝ որի վրայով ցատկել է Աթիլլան, ըստ Իլիադի, եւ Աթիլլանի արածը մեծ բան չի համարում, և երանի է տալիս Աթիլլանին, որ արժանացել է Հոմերոսի զովքին, Ալեքսանդրի մի քերթող ասում է նրան. «Ալեքսանդր, քան զՀոմերոս... լաւ ևս գրեսցուք մեք զարարս քո»: Ալեքսանդրը պատասխանում է նրան՝ «Ըզձայի է ինձ ի Հոմերոսի պատմութեան թերախտէս գոյ, բան ի ձերդ» Աթիլլանը:— Կեղառեցին Ալեքսանդրի Պատմութեան այս կտորի առթիվ գրել է.

Ոչ հիանայ ընդ վաղն արի
Քաջազնաբար յափռն գետի,

⁸ «Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացւոյ», էջ 80 և հտն.:

Այլ գնորդողնան Հոմերոսն,
Քաղկացական բան գովեստի,
Այսպէս և զու առ փ մտի,
Ծոյլ և ծանակ Կելառեցի:

Առաջին լորս տողի մեջ ամփոփ գրված է Կայիսթեննիսի պատմա-
ծը. հետո մեր քանաստեղծն ավելացրել է վերջին երկու տողը: Խնչ և
այս երկու տողի իմաստը:— Անպայման այն, որ ինքն էլ չպիտի զար-
մանա Աքիլլեոսի ցատկերու (վաղն) վրա, այլ Հոմերոսի ներքողի, գովես-
տի վրա: Ապա թե Ալեքսանդրի ծագըն իր արարքները գովել ցանկացող
քերթողի վերաբերմամբ՝ համեմատութեամբ Հոմերոսի գործի՝ վերաբե-
րում է նաև իրեն՝ Կելառեցուն, որ ոտանավորներ է գրում Ալեքսանդրի
գործերի վրա: Պարզ է, որ Կելառեցին մեծ կարծիք լուծի իր քերթված-
ների վերաբերմամբ. բայց այսպես սծաղ՞ ու ծանակ է համարում իրեն՝
համեմատութեամբ Հոմերոսի,— որին հավասարվելը երբեք չէր էլ անցել
նրա մտքից:

Է ի ն գ ե ու ռ ղ՝ Տաշյանը բերում է և հետևյալն իրեն ապացույց իր
կարծիքի համար. «Էա՛վ կճանչնանք դարձյալ զեռալատուր, որ այնպես
«անվաշելու» կգտնեիր «հեթանոսական» գրվածքները, որ այսպիսի գիրք
մը գրելու համար թողութիւն խնդրելու պէտք կտեսներ. մինչ քարաո-
նութեանը հեղինակը՝ հարմար կամ անհարմար՝ հեթանոսական գիցա-
րանութեան նաեւախ՝ նաև ոչ ճիշտ՝ ակնարկներով ճշխացնել կ'ուզէ յուր
գրութիւնը... Նման բացատրութիւնք... Կելառեցով գրչնն գծվարավ
կրնային ելնել: Գծվարավ կրնային խոսքով, հարկավ, լի ժխտում,
որ սկրնային ելնելու, Բայց ուրիշ բաներ էլ տեսնենք: Նախ՝ Տաշյանը չի
բերում և իր ուսումնասիրութեան մեջ էլ չի բերած, թե Կելառեցին ո՞ր
դեպքում ո՞ր տողերով ներողութիւն է խնդրել «Ալեքսանդրի Պատմու-
թեան» գիրքը գրելու համար: Այդպիսի բան չկա: Ընդհանրական, նա,
Կելառեցին, այդ գրքին մեծ արժեք և կարևորութիւն է տվել, որ ար-
տագրել է անձամբ, ինչպես հիշատակարանի մեջ հայտնում է. Գրեցի
իմով ձեռամբս սակս աւգտի ինձ և այլ համարակաց, որք կամին աւգտի
յԱղեքսանդրէ: Նա այնքան մեծ նշանակութիւն է տվել այդ գրքին, որ
կաֆաներ է հորինել. դրա համար Ալեքսանդրի գործերը համեմատել է
Քրիստոսի տեսորինականներին հետ և այս արել է հավատալով իր գոր-
ծին:

Ապա՝ Կելառեցին, ինչպես տեսել ենք, Ալեքսանդրի Պատմութեան
մեջ գտել է նաև շատ սնտի կարծիքներ ու խաբուսթիւն. բայց այդ մի
պատճառ չէր կարող լինել, որ նա քարաոնութիւնների մեջ հեթանոսա-
կան բան չգտնէր. Որ նա իր այդ գործի մեջ արել է հեթանոսական գիցա-

7 «Եւր ու ծանակ» [= ծագածանակ] հավանորեն աղհատմամբ գործել է «Եւր ու
ծանակ»:

բանութիւնն անկարկներ, այդ ցույց է տալիս նրա բարձր հասկացութիւնը գրական արվեստի մասին:

Նա, ինչպէս վերնում բնորոշեցի, ազգայնացնելին իրենց խոսքն աւել է տալիս իրենց դարին և հավատալիքներին համեմատ, ինչպէս մեր օրով վարովում են պատմական վեպեր գրողները: Մի բան խառնում է Տաշյանը. այլ բան է, եթե քրիստոնեայ Կեչառեցին իր կողմից իր անձնական քնարերգութիւն մեջ գործածել հեթանոսական անկարկները, — ինչպէս արել են հաճախ կեղծ կլասիկ գրողները, նույնիսկ մեր գրականութիւն մեջ, — այլ բան է, երբ այդ կիրառել է նա հեթանոս հերոսների կողմից, նրանց բերանից ընդամենը վեց անգամ, այն էլ մեծ մասամբ առնելով հերոսների կյանքից այն, ինչ որ կա Վելեքսանգրի Պատմութիւն մեջ: Տաշյանը չի կարող ասել օրինակ, թե Մովսէս Խորենացին բարեպաշտ քրիստոնեայ չի եղել և հավատում էր հեթանոսական աստվածներին. բայց ահա մեր այդ Պատմագիրն իր հորինած նամակի մեջ, որ իբր Վաղարշակն է ուղղել Արշակին, սրա համար գրում է՝ «որոյ անձն և պատկեր... մեր աստուածոց» (Խոր., Ա. 9): Ահա և թե ինչպէս է սկսում նա մի ուրիշ թուղթ. «Ենթանկալ Յուլիանոս, ծնունդ Խնաքայ, Արամազդայ որդի, և ճակատագրեալ յանմահութիւն...» (Խոր., Գ. 15), կամ մի երրորդ թուղթ. «Մաղդեղանց քաջ և բարձակից արեգական Շապուհ արքայից արքայ» (Խոր., Գ. 17): Այսպէս և շատ բնական է, երբ Աղեքսանդրը մահամերձ յղում է իրեն՝ ասելով. «Կարծես առեալ եղջիւրօք անմահ կալ մնալ իբր թէ յԱմոնէ կամ յԱրամազդայ հելլենական նուագօք ի Կրանոսէ և յԼուայէ սերեալ ազգաբանութեամբ, և այժմ յիմարեալ անճողոպրելի ի մահուանէ», կամ երբ ասում է. «Ոտք իմ սրբնթաց իբր զգարշապարս յուշկապարեակոց օղապարիկ լինելով իբր զՔսէնեքս և Պագրիսոս, արդ վրիպեալ կապեալ ի մետաղս մահաճաց», Այսպէս և երբ նա հիշում է իր ուսանելն «ի մայրն իմաստութեան առ Աթենայ իսկուհւոյն», կամ երբ Ողոմպիադան ողբալով ասում է անկարկելով իր հզացմանը «եգիպտական մարգարէն ազդեաց ինձ զգալն Ամոնայ», նույնպէս և «Այժմ պիտոյ է ինձ տապարն Հեփեստոսի առ ի հերձանել զգլուխ ծնողիս Աթենայ», կամ երբ Հոթթսիանն լալով դիմում էր Ալեքսանդրին ասելով. «Որպէս հանդերձեալ ես յաստուածոցն խառնիլ երամս, այսպէս և զիս արա քեզ գերեզմանակից և մահակից»: Կեչառեցին հո չէ՞ր կարող այն հեթանոս ողբացողներին հիշել տալ քրիստոնեական աստուծուն կամ սրբերին, կամ Ալեքսանդրին ասել տար, թե «իմ ոտները որ սրբնթաց էին ինչպէս արագահաս սուրբ Սարգսի ճերմակ ձիւներ...»: Այսպէս, եթե սակավաթիվ հեթանոսական անկարկները մի բան ապացուցում են, այդ ոչ թե այն է, թե քարաոճութունների հեղինակը Կեչառեցին չի կարող լինել, այլ այն, որ մեր շշուկօք ծաղկեալ հետտորը հմուտ է եղել իր արվեստին:

Վերջապէս բնավ արժեք չունի այն, թե քարաոճութունների համար էլ անմահողական ոտանավորք են հորինել ուրիշները Կեչառեցուց հետո,

և կամ այն, թե մի ձեռագրի լուսանցագրութիւնը... Բ բարառնութիւնն նմանողութեամբ շինված... ուսանավորը Եկեղանցու անվամբ կը հիշէ հորինվածն: Նախ միտս ձեռագիրների մէջ այդ չկա, իսկ մի ձեռագրի մէջ էլ այդ ուսանավորը Գրիգոր Աղթամարցուն է վերագրված², Ապա՝ որ կաֆաների հեղինակների անունները իրար հետ շփոթված են, այսինքն Տաշյանը լավ ցույց է տվել: Եվ երկրորդ՝ դիցուք թե մի ձեռագրի լուսանցագրութեան հաղորդումը ստույգ իրաւանութիւնն է, և Եկեղանցին ինքը Բ թաւառնութեան նմանողութեամբ մի ուսանավոր է հորինել (սնանկագրութեան Տաշյանը չի պարզում), այդ ոչինչ ու ոչինչ չի ապացուցում: Մի՞թէ նորանշան մի երևութ է, որ բանաստեղծները, նույնիսկ մեծ բանաստեղծները, երբեմն հորինում են թե՛ իրենց մի երկի բնականողութեամբ և թե՛ նույն նյութը երկու երեք անգամ են բանեցնում, կամ առաջ հորինում են արձակ, հետո նույնը՝ ուսանավորով:

Այսպես ուրեմն, Լ. Տաշյանը ոչ մի կերպ չի ապացուցել, թե կնոթ է բարառնութիւնների հիշատակարանը և դրանց հեղինակը խախտուր Կեղանցին չէ: Մենք իրավունք չունենք մեր նշանավոր հանտորին դրկելու իր սեփականութիւնից: Այլ բան է, եթե փաստեր լինէին, հիմնավոր և համոզիչ:

ԵՐՐՈՐԳ Է ԵՎ ԵՆԻՎԵՐՍ

ՅԵՐԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

1. Թվականներ:— Յերկի կենսագրութեան միակ աղբյուրը նրա բանաստեղծութիւններն են: Ե՛ւրոպեացի Ֆալաքին³ քերթվածի մէջ՝ կան հետևյալ տողերը.

Ճիմիկ զբարեց բաներս.

Որ թաթարն եղաւ թաղաւոր:

¹ Պարզ է, որ բանաստեղծն ապրել է թաթարական իշխանութեան որով, այն էլ սրա առաջին շրջանում, երբ դեռ չէր մոռացվել նախորդ Զաքարյան իշխանութեան բարի հիշողութիւնը: Նա վերահիշյալ բանաստեղծութեան մէջ մարդու բարտի անկայութեան համար իբրև օրինակ բերում է հետևյալը.

Սահիպ Դիւանին ասենք,

Որ մըլքեց զերկիր նա բոլոր.

Հանցեղ սիւսաթ² ունէր,

2 Լ. Տաշյան, Ուսումն. Ստեյն Կալ., էջ 108:

3 Յերկ, Բանաստեղծութիւններ, էջ 216 և հետ. ինքն Յրկանն ասացնալ բան պիտոնէս:

2 Տպված է Եօթաթա, Եօթաթա, Եօթաթ է Եօթաթ, Եօթաթա, Եօթաթա:

Որ շումէր ոչ որ թագաւոր.
Ձինչ որ խանորայք կային
Յապն ունէր դինչ ըզմի խընձոր.
Ֆալաքն երբ ի սիրտ ելաւ,
Նա արար զինչ երկու կտոր:

Արգենց ջուլց է տրված³, որ այս Սահիպ Դիվանին նույն անձն է, որին հիշում է և Սա. Օրբնյանը՝ ասելով, թե Սյունիքի իշխան Սմբատը սինքն իշխէր ամենայն իշխանութեանց աւագին, Եւ տայ զզուտոր նորա զեռ-շաքն ի կնութիւն մեծ խոջային Սահիպ Դիւանին, որ ունէր ի բոլին զա-մենայն աշխարհս տէրութեան Ապաղայ դանին... և նա էր գիւանի զուխ և վերակացու ամենայնին, և էր այս յ1718 [= 718 + 551 = 1269] թուին⁴. Նա անցնում է մահմեդական դարձած Ահմադ դանի կողմը և, ինչպես բերել ենք վերեւում (սթաթարական իշխանութիւնում են Ապաղայի որդի Աղդու-նին⁵, Ըստ այսմ Յրիկի «Ընդդէմ ֆալաքին» քանաստեղծութիւնը քանի որ սրա մեջ հիշատակվում է Սահիպ Դիվանի խոջայի անկումը, հորին-ված է ոչ առաջ, քան 1286 թվականը, հավանորեն հենց այս թվականին կատարված դեպքի թարմ ազդեցութեան տակ:

Այս միևնույն քերթվածի մեջ Ֆալաքը քարկացած՝ ասում է հեղի-նակին. «Մի՛ հաչել, անզէտ ալեորս: «Ալեւոր» նշանակում է՝ սպիտակ մազեր, սպիտակած միւրուք ունեցող, շուրջ 50 տարեկան, ինչպես սովո-րաբար ընդունում են⁶, երկրորդաբար նաև՝ ծեր: Արդ՝ քանի որ Յրիկը 1286 թ. հիշվում է իբրև ալեւոր, շուրջ 50-ամյա, հետևաբար նա ծնված պիտի լինի շուրջ 1236 թվականին: Այս հավանական է դառնում և հետե-յալով:

Ներքեւում քիչ հետո կտեսնենք, որ Յրիկի «Վասն Արղուն դանին և Բուղային» քերթվածը հորինված է 1289 թվականից ոչ առաջ և հավա-

³ «Արարտաշ, 1918, էջ 181, 192—194, վերեւում հիշված հոգովածը՝ «Մոռաց. մի հայ երգիչ» Տիրայր հպտ.—ի Սրանից օգտվել է, առանց տեղանք հիշելու, նաև Մ. Մկրչյանը, «Յրիկի ստեղծագործութիւնը», տե՛ս Յրիկ, «Բանաստեղծք», էջ 6:

⁴ Սա. Սրբիլյան, Պատմ. նահ. Սիւն., էջ 418 և հտն.:

⁵ Степанянц Лён-Пегль, Мусульманские династии. СПб., 1899, էջ 182. Արղունի Բագավորութեան սկիզբը հորված է 1284 թ.: Բայց ստույգ պիտի համարել Օրբնյանին, որ ոչ միայն ժամանակակից է, այլև մօտիկ թանկ է նշելուց Սյունիներին:

⁶ Այսպես, օրինակ, հին գրողներից Գրիգոր Տաթևացին մարգու հասակի համար վեց շրջան՝ երեխայ, մանուկ, պատանեակ, երիտասարդ, ծեր և զտամացեալ՝ գնելուց հետո, ավելացնում է մի յւրիշ կերպ բաժանումն. «Եւ դարձեալ հասակ մարդու շարիցս սւնի զփո-հախումն, այսինքն՝ ի մանկութիւն, երիտասարդութիւն, յաւերտութիւն և ծերութիւնս: Փա-ռասումն և վեց (հը) տարիքի համար ասում է. «Աստ տիրէ ալիք և ակիզըն լինի ծերա-թեանս: Գրիգոր Տաթևացի, Գրիգ հարցմանց, Կաստանդեոսյայիս, ի թիւն Հայոց ՌՃԻԸ [= 1178 + 551 = 1729], էջ ՄԿԵ—285:

նորին սույն թվականին, Այդ բանքի մեջ բանաստեղծը խոսում է, ինչպես տեսել ենք, թաթարական հարստահարիլ իշխանության—ամասանի—և ամասանյիներին մասին և ասում է.

Անուբքս անցաւ հետ մասասիս,
Եղբւր ըրկայ, հում ընրեին:

Այս տողերը բառացի նշանակում են՝ օրերս անցան [—կյանքս անցաւ] այս մասասի հետ, որի վերջը ըկա, ծայրը ըի երևում: Եւ մասասի բառն, ինչպես տեսել ենք, վերաբերում է թաթարական կնդեքիլ իշխանությանը, Երբ բանաստեղծն ասում է, թե օրերս անցան, կյանքս անցավ այս ամասասի հետ, այդ պարզապես նշանակում է, որ նա ծնվել է կամ, ինչպես Ժողովուրդն ասում է, աչք է բացել ամասասի հետ: Արդ՝ թաթարական արշավանքն ի Հայաստան եղել է առաջին անգամ 1236 թ., հետևաբար և նա ծնվել է շուրջ 1236 թ. և 1286 թվականին եղել է շուրջ 50 տարեկան, իսկ 1289 թ. շուրջ 53 տարեկան:

Պատմական եղելությունը, որով ստույգ որոշվում է սվասն Արղուն ղանին և Բուղային քերթվածի գրության, հետևաբար և բանաստեղծի ապրած ժամանակը, հետևյալն է: Ստ. Օրբեկյանի «Դղրա»-ի մասին խոսանիս, Թաթարական իշխանությունը 13-րդ դարումն ապրադրաֆի մեջ տեսանք, որ մահմեդականության հարած Ահմադ ղանի և քրիստոնյաների վրա հենվող Արղուն ղանի կողմի մեջ 1286 թ. վրաց թագավորը և հայոց իշխան Տարսայիճը Արղունի կուսակից էին, և սրա ձեռով առաջ էր եկել Հայաստանի թաղաքական միությունը: Երեք տարի հետո դավադրություն են սարքում Արղուն ղանի դեմ: Ստեփանեոս Օրբեկյանը (էջ 430) պատմում է, թե «Երկպառակեցան զօրքն ղան Արղունին. և անկաշիօթումն մեծ ի մէջ մեծամեծացն զխաւորաց, և հանին բազում արեան ճապաղիս. զի կալաւ Արղունն զմեծ զօրավարն զԲուղայ Ձինֆոսն, որ կոչի աւագաց աւագ կամ տէրանց տէր, և եսպան զնա, զի խորհուրդ նենդութեան էին խորհեալ նմա. ընդ նմա և զամենայն համախոհս նորին՝ զՂազանն և զԹուխուֆս հազարապետն, զԱրուսն, զԱնճանն և այլ բազումս: Այդ ժամանակ, 1289 թ., զրպարտելով սպանում են և վրաց Գեմետը թագավորին: Դրանով ըի ունենում դավադրությունն Արղունի դեմ: Ինչպես հետո նույն Օրբեկյանը (էջ 467 և հտն.) գրում է, Արղուն ղանը 1291 թ. իր սիրած հարճից թունավորվելով մեռնում է: Երբ և ի մահուան նորա լինի կոտորուած բազում մեծամեծ աւագանայն՝ Խօջանին որ էր զանձապետ արքային, և Սուլտանին որ էր ի վերայ կնքակրոցն և ըմպելեացն. և Զիշուրն և Արղուն ղանին որք էին ի վերայ զատաստանայն, և մեծ զիւսնին Սաղաղաւլին՝ բարեբարոյ Զհտին որ էր ի վերայ ամենայն հարկաց աշխարհի: Այս անգամ էլ սպանվում են Արղունի մարդիկը:

Արդ, ինչպե՞տ արդեն ցույց է տրված⁷, Ֆրիկի սպան Արդուն ղանին և Բուդային քերթվածը հորինված է Արդունի դեմ կազմակերպված առաջին դավադրության մասին, որ տեղի է ունեցել 1289 թ.։ Ապա ուրեմն այս երկը գրված պիտի լինի ոչ առաջ քան 1289 թվականը, և ոչ թե (գուցե վրիպակով) առաջ քան 1282 թվականը⁸։ Ապա ընդունելի կարելի է համարել և այն, թե Ֆրիկի տվյալ քերթվածի մեջ իբր երևում են Արդուն ղանի մահվան ժամանակ կատարված դեպքերն ևս, թայն է մինչև 1291 թվականի վերջը⁹ կամ թե հետևյալը, որ ասված է առանց որևէ հիմնավորման, հետևելով նախորդին. սպան Արդուն ղանին և Բուդային և ոտանավորում Ֆրիկը, Բուդայի ապստամբությունից հետո, նկարագրում է մի քանի դեպքեր ևս, որոնք կատարվել են 1291 թվին, Այսպիսով Ֆրիկի այս ոտանավորը չէր կարող 1291 թվից առաջ գրված լինել¹⁰, Մյուս կողմից էլ այն չէր կարող 1295 թվից հետո գրված լինել...¹⁰, Ուրեմն իբր 1291 և 1295 թվականների մեջ է գրված այն։ Բերված երկրորդ ասացվածի վերջին մասը, որ վերաբերում է 1295 թվականին, կուրսություն լուծի. որովհետև թե որոնք են այն մի քանի դեպքերը, որ իբր կատարված են 1291 թ., այդ մասին ոչ մի խոսք։

Որ Ֆրիկի այս բանաստեղծությունը վերաբերում է Արդուն ղանի դեմ 1289 թ. կազմակերպված դավադրությանը, այդ շատ պարզ է։ Քերթվածի մեջ հիշված եղելություններն և անունները միայն բավական են ապացուցելու այդ **Թե՛** Ֆրիկի քերթվածի և **թե՛** Օրբելյանի Պատմության մեջ դավադրության պարագուխն է Զինքսան Բուդան, որ կամեցնել է սենեգելն Արդունին, կամ, ինչպես Օրբելյանը գրում է, թխորհուրդ նենգութեան էին [էր] խորհեալ նմա։ Ֆրիկը Բուդայի համախոհներից հիշում է Արուխին, նույնը կա նաև Օրբելյանի Պատմության մեջ, Ըստ Ֆրիկի՝ դավադրություն իմանում է Սուլթան Ադան, որին հիշում է Օրբելյանը իբրև Արդունի հավատարիմներից մեկը, Վերջապես երկուսի մեջ էլ հիշվում է Արդունի բարեկամ Սադադալ(ին), որ Արդուն ղանի հու-

⁷ «Արարատ» ամսագիր, 1918, էջ 182 և հտե., Տիրալը եղաւ., Մոտացված մի հաջ երգել, Այլև Ֆրիկ, Բանաստեղծություններ, 1941, էջ 6 և հտե., Մ. Մկրտչյան, Ֆրիկի ստեղծագործությունը, Այս երկրորդն ոգոված է առաջինից՝ առանց իր աղբյուրը ցույց տալու։ Ընդհանուր եղանակաւթյունը մասամբ ճիշտ համարելով հանգրձմ. ընդունելի չեմ համարում այս երկու հոգովածների էլ արդ ժանրամատենությունները։

⁸ «Արարատ», 1918, էջ 187։

⁹ Անդ, էջ 189, 193, 194։

¹⁰ Ֆրիկ, Բանաստեղծություններ, 1941, էջ 8։

Զհմնավորված կերպով առաջարկված է Ֆրիկի քերթվածի Մուլանն անունը համարել «Ղազան» անվան աղետում, և Ղազան անվան մեջ տեսնել Արդուն ղանի Ղազան որդուն, որ իր հոր մահվան ժամանակ ետառանում էր և 1295 թ. իր հակառակորդներին հաղթելով՝ դառնում է թագավոր։ Նույնպես մի լիննավորված առաջարկ է թալալաք անվան մեջ տեսնել Ստ. Օրբելյանի (էջ 171) հիշած սեփե թիւրապետ թուրքին, որ պատերազմի ժամանակ անցել է Ղազանի կողմը։ Տե՛ս «Արարատ», 1918, էջ 188, և հտե., Տիրալը հպս-ի վերևում հիշված հոգովածը՝ սկոտացված մի հայ երգել։

սակից ավագանիներին մեկն էր, որին ուրիշների հետ, ինչպես պատմում է Ստ. Օրբելյանը, սպանում են Արղունի մահվան ժամանակ, Այս քերթվածի մեջ նա հիշվում է իբրև դեռ կենդանի, նույնպես դեռ կենդանի է ներկայանում և Արղուն ղանը, Եթե այն գրված լիներ 1291 թվից հետո, Ֆրիկն անպայման ավելի ևս բուռն դայրույթով կիսոսեր այդ թվականին կատարված եղելության մասին. բայց ոչ մի ակնարկ չկա Արղուն ղանի թունավորման և նրա կուսակիցների կոտորածի վրա։ Ընդհանրապես, նա Արղուն ղանի մասին խոսում է իբրև կենդանի մարդու, և զոհ է, որ նա շեռ սպանվել։

Բուդա՞, դու ո՞նց կամիր [=կամէիր] նենգել.

ՋԱրղուն ղանն աստուած եղիր,

Ով է յաղրող Արղուն ղանին։

Այսպես չի կարող գրվել իր կուսակիցներով հանգերծ արդեն սպանված մի մարդու մասին, Կամ հետևյալը.

...Աղաչենք ըզտէր Աստուած,

Որ ցուցանէ Արղուն ղանին,

Քիչէ՛ աղէկ այն արտասուքն,

Որ թափեցին օրթախընին,

Եթե Արղուն ղանն արդեն սպանված լիներ, այնու ինչո՞ւ պիտի րաշաստեղծը գրեր «Աղաչենք աստուծուն, որ ցուցանէ» նրան, թե լավ բան չէ օրթախների թափած արտասուքը։ Այսպես ուրեմն, «Վասն Արղուն ղանին և Բուդային» քերթվածը գրված է 1291 թվականից առաջ և 1285 թ. յա առաջ. իմ կարծիքով՝ քերթվածի ամբողջ բնավորութունից երևում է, որ դա հորինված է հենց այս 1289 թվականին կատարված եղելության անմիջական տպավորության տակ անմիջական բռնկումով։

Երրորդ թվականը վերաբերում է «Գանգատ» քերթվածին։ Խաչատուր Կելահեցու «Ողբի» մասին գրելիս՝ արդեն տեսել ենք, որ Ղազան ղանի Թագավորության սկիզբներում սոսկալի հալածանք է հանել քրիստոնյաների դեմ մահմեդականության հարած Նավրուզ զորավարը. քանզի են եկեղեցիները, կոտորել են քահանաներին ու շատ քրիստոնյաների, շատերին կոզոպտել ու գերի տարել։ Այդ դրույթունը, որ արտահայտված է Կելահեցու «Ողբի» մեջ, ավելի զորեղ կերպով երևում է Ֆրիկի «Գանգատ» («Բան ի Ֆրիկ գրքոյն») քերթվածի¹¹ մեջ.

Այլ կամք ի ձեռս անօրինի,

Որք կու վարեն անգին գերի.

Ո՞րքան քակեն եկեղեցի.

Քանի՞ շինեն պիղծ մըզկիթնի.

¹¹ Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 332.

Քանի՞ կանայս առնեն այրի,
Եւ ո՞րքան որք քրիստոնէի.
Ո՞րքան արիւն հեղուն յերկրի:

«Քանի որ թաթարական տիրապետութեան նախորդ շրջանում եկեղեցիներ քանդելու մասին հիշատակութիւն չկա, ուրեմն կարելի է հաստատուել հղումացնել, որ Քանի Ֆրիկ գրքային բանաստեղծութիւնը գրվել է 1295 թվից հետո»¹², Լստ իս՝ այդ քերթվածը հորինված է ոչ թե 1295 թ. հետո, որ է՝ 1296 թվականին կամ ավելի ուշ, այլ հենց նույն 1295 թվականին, խորասանից Ղազան զանի զայու ժամանակները և Ղազանի թագաւորութեան սկիզբներում, երբ և տեղի է ունեցել եկեղեցիների քանդումը: Այդ հաստատում է հետևյալով, շենց այդ ժամանակներում էլ Կիլիկիայի Հայոց Հեթում թագաւորը, որ եկել էր Ղազանի նախորդի մոտ, «և հասաւ յայս տաճնայ շփոթի», — գրում է Ստ. Օրբելյանը¹³, — զնում է Ղազանի մոտ և խոսում է նրա հետ այդ հալածանքի մասին: Եթե նորա [«Ղազանը»] ի չքմեղս ձղեալ ասէր. ես ոչ գիտեմ զայդ. այլ նաւորդն գործեաց զամենայն: Եւ հրամայեաց առ ժամայն գրել հրովարտակ ընդ ամենայն աշխարհ, զի մի՞ իշխեսցեն ձեռնարկել յեկեղեցիս և ի քրիստոնեայս. այլ խաղաղութեամբ բնակեսցէ ամենայն ոք՝ զիր հաւատ և պաշտօն համարձակ ունելով: Եւ յայսմանէ սակաւ մի խաղաղացեալ եղեն հէնք տաճնապին... Իսկ Ղազանն առեալ զդաւոթիւն յ744 (— 1295) թուին յաշուն... կացուցանէր նա ի վերայ ամենայն զօրաց իւրոց և աշխարհաց զխոթութեանն՝ այր բարի և հօգ և յաղթող ի պատերազմունս, որ էր յոյժ բարեկամ և օգնական քրիստոնէից. որ և փնտայացաւ արքայի առելով զգոյր նորա ի կնութիւն. և ի սագրելոյ սորա լինէր խաղաղութիւն մեզ և ամենայն աշխարհիս Հայոց: Իսկ նաւորդը գնում է խորասան, ուր և մտածում է դավել Ղազանին, թայց իր տոհմով ոչնչացվում է խոթութեան հետքով: Եւ հա՛ւ տեսէք զեղջիւր եկեղեցւոյ, եթէ որպէս մեծագոյն պատահեաց զթշնամին իւր, — գրում է Օրբելյանը, — և խնդրեաց զվրէժ քակտելոյն իւրոյ. զի ոչ տեսաց իշխանութիւն նորա (նաւորդի) ամ մի. այլ իսպառ ընչեցաւ ազգաւ: Այս ամենն, ուրեմն, կատարվել է մի տարում՝ 1295 թվականին: Եւ Ֆրիկի Քանգաստ բանաստեղծութիւնն էլ գրված է հենց նույն թվականին հայերի այդ մեծ հալածանքի օրերին և ոչ թե հալածանքը դադարելուց հետո, «1295 թվից հետո»: Ուշադրութեամբ պիտի դարձնել, որ Ֆրիկը հորինում է քայերի ներկա ժամանակով՝ «կամք, վարեն, քակեն» և այլն. ուրեմն «կանք», «գերի են տանում», «եկեղեցիները քանդում են» և այլն: Այսպես գրում են մարդիկ, երբ գրելիս հենց կատարվում է այն ձեռնարկումը, որի մասին գրում են:

¹² Բնգ. Հր 9, Մ. Մկրտչ. Ֆրիկի աստեղծագործութիւնը:

¹³ Ստ. Օրբելյան, Պատմ. նահ. Սիւս. էջ 474 և հետո:

Ըստ նրևույթին նույն 1285 թվականի հալածանքի ժամանակ է Ֆրիկը գրել իր մի ուրիշ բանքն եւ՝ «Վասն անմիարանութեան քրիստոնէից» որի մեջ հիշում է եկեղեցիների հալածանքը («զեկեղեցիս հալածեն») և դիմում է աստուծուն ասելով՝ «Յարո՛ մեզ եղչիւր փրկութեան...»:

Փանի որ, ինչպէս տեսանք, մեր այս բանաստեղծը ծնված պիտի լինի շուրջ 1236 թ., հետեւաբար նա 1285 թ. իր նշանավոր «Գանգատաբանքը հորինել է մոտ 59—60 տարեկան պատկանելի հասակում: Դրանից հետո էլ նա ապրել է շատ տարիներ, և հասել է լի ծերության, քանի որ նա մի բանքի մեջ, որի սկիզբն է «Ջանացի թէ լուսն ելնեմ» (էջ 79), գրում է.

Աւիթս է դեղին դարձել:

Ընդունելով այսպիսի հասակը 70—75-րդ տարին, նա վախճանված պիտի լինի 14-րդ դարի առաջին տասնամյակներին:

2. Ֆրիկի որդու զրաւ դովելու խնդիրները:—Այս բանաստեղծի կենսագրության մեջ տեսանք, որ թաթարների իշխանության ժամանակ, երբ պահանջված հարկը չէին կարողանում վճարել, հարկի պարտքի տեղ հարկատուների զավակներին էին անում: Կարծում են, թե Ֆրիկի որդուն էլ տարել են հոր պարտքի փոխանակ¹⁴: Բայց այն բանաստեղծությունը, որի մեջ հիշատակվում է այդ, ինչպէս կենսագրության մեջ ասացինք, դեռ կարոտ է բանասիրական քննադատության: Գնենք այստեղ Ֆրիկի այդ գեղեցիկ բանքը¹⁵, որի մասին խոսվել է նրա կենսագրության մեջ: Մասերը նշվում են 1 և 2 թվանշաններով:

Նորին Ֆրկանն ասացել

1. Գնաց մանկութեան հասարթն,

Ու երեկ ինձ հոգս անիհուն.

Ջըրկած եմ երկու կենոք,

Վասն այնոր չեմ նլնել ի հուն:

Գազան՝ անասուն ու հա:

Գէ՛մ ունին խորանց տուն ու բուն.

Ու տուն ու ոչ տեղ ունիմ,

Կու խոցիմ զօրն ի յայն հարկուն:

[Վարիանտ՝ կու խոցիմ ի յանհաւատուն]:

2. Յաւել թէ գինի խմեմ,

Նա՛՝ ժըփամ դին լաւն ի յալուն.

Գընա, թող ի բաց զամէն,

Ու եղիր արող վանքերուն:

Յիշխան մի՛ յուսաւ, եղբա՛յր,

¹⁴ «Արորոտ», 1918, էջ 83 և հտե.: Այստեղից էլ տե՛ր «Ֆրիկ, Բանաստեղծության ներք», էջ 10:

¹⁵ Ֆրիկ, Բանաստեղծություններ, էջ 46 և հտե.:

ճար լըկայ ի յաղամորդուն.

Գընա, ծառայէ նորա,

Որ տէր է անձին ու հոգուն:

Գէմ զայն խասիաթս գիտեմ,

Կեանքըս լի մընա մարդոյն.

Ճարակ անտէնին արա,

Որ լիինիս ի հօն դու լալուն:

Ժողովածուն կազմողը՝ Տիրայր Եպիսկոպոս՝ Ֆրիկի այս քանքը հանել է երեք ձեռագրից (X, a, b), որոնց մեկի մեջ միայն (X ձեռ.) եղել է սովորական վերնագիրը՝ սնորին Ֆրկանն ասացնալէ, մյուս երկուսը (a, b) չեն ունեցել վերնագիր: Նա մի շորորդ ձեռագրի (c) մեջ գտել է վերնում դրված բանաստեղծության միայն առաջին (1) երկու քառյակն առանց վերնագրի, որնմն առանց Ֆրիկի անվան. իսկ հաջորդ երեք քառյակի (2 մասի 12 տողի) սխալմանակ տարբեր 14 տողեր, որոնց մեջ է և հեղինակի որդու գրավ գրվելը: Բերենք և այդ «անաուն քանքը»:

1. Գնաց մանկութեան հասրաթն,

Ու երեկ ինձ հոգս անհուն.

Զրկեալ եմ երկու կենօքս,

Վասն այնոր լիմ ելնել ի հուն:

Գազան՝ անասուն ու հաւ

Գէմ ունին իրենց տուն ու բուն,

Ոչ տուն ու ոչ տեղ ունիմ,

Կու խոցիմ ի յանհաւատուն:

2. Կասնն թէ խմէ գինի,

Որ լինես դու մի պահ ի քուն.

Ուսկա ի պարտուց յահուն¹⁸

Կու դողամ գինի ուն ի քամուն:

Գըրի գիմ որդին պըրաւ

Ուստի հուղապ գընալուն.

Միթէ թագաւորն երկնից

Նայ բերէ դիմ որդին ի տուն:

Հապար ցեղ թապտիր կածեմ

Թէ... ներուս թէ ելնեմ ի հուն,

Ժամ ժամ ի դէպ կապ կուգա,

Զի ընկնիր իմ ջուրն ի յառուն:

Ջանցի թէ հանց բան այնեմ

Որ էր... (Թերթ ընկած և պակասավոր):

Ժողովածուն կազմողն այս սանանուն բանքին (2) մասը, վերջին 14 տողերը, որոնց մեջ է հիշվում հեղինակի որդու գրավ գրվելը, համարել է

¹⁸ «Արարատ», 1918, էջ 83 «Եւհուն», իսկ «Ֆրիկ», Բանաստ. 3, էջ 40 ողջած է «լալուն»:

մի այլ ընթերցված Ֆրիկի բանքի, այսինքն վերևում գրված «առաջին բանքի», փոխանակ արա (2) մասի, այսինքն վերջին 12 տողերի (սկզբնաժամ՝ «Յաւել թէ գինի խմեմ» տողից) և իբրև այսպիսին էլ զօր տակ տպւած է «տողովածուի մեջ, որից և օգտվում ենք մենք: Այսպես վարվելու հիմքը միայն այն է եղել, որ այս կարծեցյալ «այլ ընթերցվածից» առաջ եղել է Ֆրիկի բանքի («առաջին բանքի») սկզբի մասը՝ (1) առաջին ութ տողերը, թայց այդ մեծ հատվածն իր թովանդակութամբ կապւումի Ֆրիկի բանքի երկրորդ (2) մասի հետ, որ արա այլ ընթերցվածը համարվի: Միակ նմանութունը որ կա երկուսի մեջ՝ է գինի խմեմ», ժխմէ գինին: Բացի այդ՝ ոչ մի հաստատ հիմք չկա պնդելու, թե այդ հատվածի հեղինակը Ֆրիկն է: Այսպես ուրեմն, ունենք երկու առանձին բանքեր, «Ֆրիկի բանք» կամ «առաջին բանք» և «տեւանուն բանք» կամ «երկրորդ բանք», որոնց սկզբի ութ տողերը նույնն են, իսկ շարունակութունը՝ տարբեր:

Այլ և այլ վարկածներով կարելի է բացատրել այդ երկու բանքի հարաբերութիւնը: Ի՞նքն ընդունվի, թե այդ երկուսի էլ հեղինակը Ֆրիկն է, ապա այդ զեպքում պետք է ենթադրել, թե նա դրանցից մեկն ու մեկը հորինելուց հետո առել է իր բանքի սկզբի (1) մասը, առաջին ութ տողը և շարունակութիւնը նոր թովանդակութամբ հորինել, որով առաջացել են երկու տարբեր քերթվածներ՝ իրենց սկզբի մասերի նույնութամբ: Իրենց աշխատութիւնների հետ այսպես վարվող քերթողներ էլ կան. բայց այդ դժվար է ընդունել Ֆրիկի նման առատաբան և հեջու հորինող մի բանաստեղծի համար: Նա իր մի քերթվածի տողերն առնելու փոխանակ՝ ամենայն թեթևութամբ նոր տողեր կշարադրենք նոր բանքի սկզբում: Բացի այդ՝ քանի որ հեղինակի անվան հիշատակութիւն չկա երկրորդ բանքի համար, ուստի վերջին հաշվով ենթադրական է մնում որա հեղինակի ով լինելը, հետևաբար և Ֆրիկի որդու գրավ գրվելը, որ հիշվում է այդ տեւանուն բանքի մեջ:

Դարձալ կարող է առաջ դալ և այս ենթադրութիւնը. Ֆրիկը հորինել է երկու բանքերից առաջինը, որի վերնագրի մեջ կա Ֆրիկ տեսնելը, և մի ուրիշ քերթող՝ յուրացնելով նրա քերթվածի առաջին ութ տողերը, շարունակութիւնը ինքն է հորինել, և այսպես կազմվել է «տեւանուն բանքը» կամ «երկրորդ բանքը»: Այսպիսի վերաբերմունքը մի անսովոր երևույթ էր Ֆրիկի ապրած շրջանում, երբ ուրիշի հեղինակութիւնների հետ ազատ էին վարվում: Այս զեպքում, սակայն, ժխտվում է, թե Ֆրիկն իր որդուն գրավ է գրել, քանի որ այդ հիշվում է «տեւանուն բանքի» մեջ:

Երրորդ՝ կարելի է ենթադրել, թե այդ «տեւանուն» կամ «երկրորդ» բանքն առաջացել է որևէ գրչի հետով պատահաբար այսպես. Ֆրիկի բանքի, այսինքն վերևի «առաջին բանքի» ետևից դրված է եղել մի ուրիշ բանք, երբ գրիչը Ֆրիկի բանքն արտագրելիս հասել է «Յաւել թե գինի խմեմ» տողին, նա անզգուշութամբ սկսել է արտագրել ետևի

ուրիշ բանքի նման տողից՝ «Կասեն թէ գինի խմէ», որով և առաջացել է «անանուն բանքը»։ Այսպիսի թռիչքներ արտագրության ժամանակ սովորական են. այդ առաջանում է նույն բառերի և նույնանման խոսքերի ազդեցությամբ։ Եթե այսպես ծագած լինի «անանուն բանքը», քանի որ դրա՝ ուրիշ քերթվածից ծագած մասի մեջ է հեղինակի որդու գրավ դրվելը, իսկ այդ ուրիշ քերթվածի հեղինակի ով լինելը հայտնի չէ, ապա որեմն դարձյալ ենթադրական է Ֆրիկի որդու գրավ դրված լինելը։

Չորորդ՝ կարելի է ենթադրել, թե այդ «անանուն բանքը» ծագել է այսպիսի մի կերպով։ Ֆրիկի բանքը գրված է եղել որևէ ձեռագրի մի թերթի երկրորդ էջի վրա. ետևից նույն էջի ցածի մասում՝ մի ուրիշ քերթվածի սկզբի մասը։ Որևէ պատճառով պատռված հանված է այդ թերթի ցածի մասը, որի վրա եղել են Ֆրիկի բանքի երկրորդ (2) մասը և այն ուրիշ քերթվածի սկզբի մասը։ Հետագայում մի գրիչ արտագրել է Ֆրիկի բանքից մնացածը, որ է առաջին (1) մասը, և ապա հաջորդ թերթից առաջին էջը, որի վրա գրված է եղել այն ուրիշ քերթվածի շարունակությունը, և այսպես մեխանիկորեն միացել են Ֆրիկի բանքի առաջին (1) մասը և մի ուրիշ քերթվածի մնացած մասը, և առաջացել է «անանուն բանքը»։ Այսպիսի դեպքեր պատահում են ձեռագիրների մեջ, բայց այսպիսի դեպքում էլ, քանի որ Ֆրիկի անունը հիշված չկա «անանուն բանքի» համար, չգիտենք թե ով է հեղինակը ենթադրական ուրիշ քերթվածի, ապա դարձյալ չենք կարող հաստատ ասել, թե Ֆրիկի որդին է պարտքի տեղ գրավ դրված եղել։

Վերջապես՝ կարելի է կարծել, թե այդ երկու՝ առաջին և երկրորդ բանքերը սկզբնապես ոչ թե տարբեր բանաստեղծություններ են եղել, այլ Ֆրիկի մի զեղեցիկ քերթվածի մասեր, որոնք պատահաբար անբաժանված են ամբողջությունից։ Այդ քերթվածը ենթադրաբար եղել է այսպես.

1. Գնաց մանկութեան հասրաթն,

Ու երեկ ինձ հոգս անիշուն.

Զբրկած եմ երկու կենօք,

Վասն այնոր լծմ ելնել ի հուն։

Գաղան 'ւ անասուն ու հաւ

Գէմ ունին իւրեանց տուն ու բուն.

Ոչ տուն ու ոչ տեղ ունիմ,

Կու խոցիմ զօրն ի յայն հարկուն.

[Վարիանտ՝ կու խոցիմ ի յանհաւատունն]։

2. Կասեն թէ խմէ՝ դինի,

Որ լինիս դու պահ մի քուն.

Ուսկա ի պարտուց յահուն¹⁷.

¹⁷ «Արարատ», 1918, էջ 31՝ «յահուն»։ իսկ ժողովածուի մեջ՝ «յալուն»։

Կու դողամ գինչ ունի ի քամուն.

Գըրի գիմ որդին զըրաւ,

Ուստի ճուղայ գընալուն.

Միթէ թագավորն երկնից

Նայ բերէ գիմ որդին ի տուն:

Հաղար ցեղ թապախր կածեմ,

Թէ... ներուս թէ ելեմ փ հոն.

Ժամ մամ ի դէպ կապ կու գայ,

Ձի ընկնիք իմ ըուրն ի յառուն:

Ջանցի թէ հանց բան այնեմ,

Որ էր... (սթերթ ընկած և պակասավորք):

Յ. Յաւել թէ գինի խմեմ,

Նա՛ ծրփամ գինչ նաւն ի յալուն.

Գընա, թող ի բաց դամէն,

Ու հղի՛ր սիրող վանքերուն:

Յիշխան մի՛ յուսալ, եղբա՛յր,

Ճար չըկայ ի յաղամորդոյն.

Գընա, ծառայէ՛ նորա,

Որ տէր է անձին ու հոգուն:

Գէ՛մ զայն խասիաթս գիտեմ,

Կհանքըս լի մընալ մարդոյն.

Ճարակ անտէնին արա,

Որ լլինիս ի հօն դու լալուն:

Այս ենթադրական ամբողջական քերթվածից 3-րդ հատվածի դուրս ընկնելով առաջացել է վերևի ասնանունն կամ սերկրորդ բանքը. և ժողովածուն կազմողը հայտնում է այդ մասին գրելով՝ սթերթ ընկած և պակասավորք: Իսկ Ֆրիկի բանքը կամ ասոացին բանքը առաջացել է այսպես: Գրիչն արտագրել է ենթադրական ամբողջական քերթվածի 1. մասը. երբ հասել է 2. մասին, որ սկսվում է Եկասեն թէ գինի խմէք, նա անզգույնությամբ, գինի խմելու զուգորդությամբ, թողել է 2. մասը և արտագրել է 3. մասը, որ սկսվում է Եկասել թէ գինի խմեմ առողով: Այսպիսով պատահաբար ծագել է Ֆրիկի բանքը կամ ասոացին բանքը, որի պահասավոր լինելն ըստ իմաստի զգալի չէ, և ուրիշներն արտագրել են նույնը: Եթե ընդունվի այսպիսի վերականգնված ամբողջական քերթվածը՝ Խորն Ֆրիկի մի երկ, ապա պետք է ընդունվի նաև Ֆրիկի որդու գրավ դրված լինելը: Բայց ինչքան էլ հնարավոր և հավանական է այդպիսի ամբողջական քերթվածի գոյությունը և նրա միջից կամ վերջից հատվածները դուրս ընկնելը, դարձյալ մի ենթադրություն է այդ, հետևաբար այս դեպքում էլ ենթադրական է մնում Ֆրիկի որդու գրավ դրված լինելը: Այդ ստույգ որոշելու համար՝ պետք է սպասել նոր հավաստի տեղեկություն:

ՇԱՀՆԱՄԱՅԻ ԶԵՎԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ասել ծայնով»։— Կոստանդին Երզնկացուց, ինչպես տեսել ենք, խնդրում են հորինել մի քերթված այնպիսի շափուկ, որ կարելի լինի թի Շահնամայի ձայն ասել, կարգաւ, կամ բասել ձայնով, ինչպես Շահնաման էին ասում, Եվ Կոստանդինը, նմանելով պարսկական դիցազնեքությանը, հարմարում է թի բանք, ասելով, թե թի Շահնամայի ձայն կարգացէք։ Անկարելի չէ այստեղ բացատրել, թե ինչպիսի է եղել այդ նմանողութիւնը, և թե ինչ է նշանակում թի ոտանավոր ասել ձայնով, և որն է Շահնամայի ձայնը, որի համեմատ պիտի ասեն Կոստանդինի հորինած ոտանավորները¹։

Հին ժամանակ բանաստեղծութիւնը կատարում էին երեք կերպ, երգում էին, թի թիւ էին ասում և թի ձայն կամ թձայնիւ էին ասում։ Երգելը պարզ է, թե բանաստեղծութիւն որպիսի կատարումն է, թի թիւ ասելը, դա թի թիւ ուսած, այսինքն՝ բերան արած՝ արտասանելն է առանց որևէ եղանակի, սովորական կարգաւ կամ պատմելու ձևով, որքան կարելի է, պարզ և մեկին։ Այսպես թի թիւ է ասել, մասամբ և երգել, մեր հին վիպասանութիւնը կամ վիպասանքը, որ և այդ պատճառով կոչվել է նաև «Թուելիք», «թուել» բառից, որ նշանակում է նաև պատմել, «Թիվ են ասվել» և դեռ այդպես ասվում են, և քիչ մասով միայն երգվում մեր Վասնա Մոերը, ինչպես նմանապես նաև ուրիշ պզգորի ժողովրդական վեպերը։

«Զայնով ասելը», դա մի առանձին տեսակի եղանակավոր ասելն է, որ երգելու և թիվ ասելու միջին տեղն է բռնում, Եթե թիվ ասում են սովորական խոսակցական կամ գրուցատրական ձևով ու ձայնով, որոշ զնայքերում նաև սովորականից էլ ցած ձայնով, թձայնով ասելու ժամանակ ձայնը բարձրացնում են սովորականից ավելի։ Արձակ խոսքի, պրոզայի այսպիսի արտասանութիւն ժամանակ խոսքի մեջ որոշ բառերի վրա, նայելով բովանդակութիւնն ու բառերի կապակցութիւնն խմբերին, ուժեղ շեշտեր են դրվում և վանկերի ժամանակը, այսինքն տեղութիւնը, երկարացվում է, այնպես որ արձակ ասացվածք ստանում է մի առանձին ուժով և եղանակավորութիւն, Մինչև այժմ էլ մեր Վասնա Մոերն պատմողները, եթե շնե երգում այն հատվածները, որ ուրիշները երգում են, հաճախ թձայնով են ասում, և հայտնում են, թե այդ ինչ կտորը պետք է ձայնով ասել, նույնիսկ վեպի պատմվածքի ընթացքում, վեպի բնագրի մեջ այդ-

¹ Ենթդրոշմ, բանաստեղծ Քեզան Կապուսյանի նվիրած ժողովուրդ, Երևան, 1934, էջ 117—126, Մ. Արեւշաթի «Շահնամայի ոտանավորի շափուկ հայ բանաստեղծութիւն մեք հարկած»։

² ՏՃ՝ առաջին աշխատութիւն Առաջին հատոր, էջ 44 և հետ. «Թուելիք, Թուելիք», Կրգա (Երզնկա, Գ, էջ 57 և հետ.)։

պիսի հատվածների համար դործածվում է կամ «երգել», թխադով (= երգով) ասելը, կամ թե չէ՝ «եկնով ասել» արտահայտությունը³։

Ոտանավորներն թի ձայն ասելը, կամ «ձայնով կարգալը», դա նույն ձայնով ասելն է, միայն այս դեպքում առանձնապես շեշտվում ու երկարացվում են, ոտանավորի կազմության համեմատ, ռիթմական ոտքերի ու անդամների այն վանկերը, որոնք իրենց վրա պետք է կրեն ռիթմական շեշտերը։ Քայքի այդ՝ ռիթմական ոտքերը կամ անդամները մի փոքրիկ դադարով անջատվում են հաջորդ ռիթմական ոտքերից կամ՝ անդամներից։ Այսպիսի արվեստական արտասանումի ժամանակ վանկերը միասնորայ մեկին են հնչում, ռիթմական շեշտերը միասնորայ ուժեղ և այդ շեշտերը կրող վանկերը միակնորայ երկար տեղադրությամբ, այնպես որ ունկնդիրների համար անշատ-անշատ լսելի են լինում առանձին ռիթմական ոտքերը կամ անդամները։ Այսպիսի արտասանումն ահա, որ կոչվում է թի ձայն կամ «ձայնով ասել» կամ «երգել» ձայնի, սիրված է եղել մեզնում մինչև 19-րդ դարի կեսերը և նույնիսկ մինչև 1880-ական թվականները զբարար ոտանավորների համար։ Այսպիսի արվեստական արտասանումով կարգացել են և Շահնաման և դեռ կարդում են մինչև մեր օրերը։ Դրանով ուժեղ կերպով արտահայտվում է այդ վիպասանության լավերը։

Պարական ոտանավորի էական հիմունքը կազմում է վանկերի երկարությունն ու կարճությունը։ Շահնամայի լավի յուրաքանչյուր ոտքը կազմված է երեք վանկերից, որոնց առաջինը կարճ է և ռիթմորեն անշեշտ, երկրորդն ու երրորդը երկար են, ռիթմական ուժեղ շեշտը, որ անկախ է պոզայի շեշտից, այսինքն սովորական արտասանության շեշտից, դրվում է երկրորդ վանկի վրա, երրորդ վանկը կրում է երկրորդական, թույլ շեշտ։ Այս լավի յուրաքանչյուր տողը, որ 11-վանկանի է, կազմված է չորս այսպիսի ոտքերից, որոնց վերջինը լուծի երրորդ վանկը։ Երկու տողը միասին կազմում են մի տուն (բնթ) և նույնահանգ են։ Զայնով կարգալու ժամանակ՝ ամեն ռիթմական ոտք հաջորդ ոտքից բաժանվում է մի փոքր զադարով, որ կարող է ընկնել նաև բառամեջերում։ Շահնաման, ուրեմն, հորինված է հետևյալ սքեմայով՝

Վանականները Կոստանդնյան խնդրել են հայերեն լեզվով այնպիսի ոտանավոր հորինել, որ կարելի լինի Շահնամայի ձայնով ասելու։ Այսպիսի լավով հայերենում ինչպե՞ս հնարավոր չէ ոտանավորներ գրել, զի հայոց լեզուն լուծի երկար և կարճ ձայնավորներ։ Մեր բանաստեղծը հայերեն ոտանավորի ոտքերն էլ կազմում է երեք վանկից, բայց յուրա-

³ Մինչև այժմ էլ հայոց եկեղեցու ժամերգություն ժամանակ զանգած է ու միայն երգելը, այլև թիվ ասելն ու ձայնով տոնելը որոշ դեպքերի և առանձին ախպի ընթերցվածների համար։ Տե՛ս Մ. Աբելյան, Հայ ժողովրդ. առասպելները Մ. Խորենացու Հայոց պոեմ. մեջ, Վաղարշապատ, 1888, էջ 66—71։ Եկնել, Վիպասանք, Երգչ. վիպասանք, ի թիւ ասել, թուել, Զանկաքն երգք։

քանյութ ոտքի միջին երկար և զորեղ շեշտված վանկի փոխանակ, ելեն-
լով հայերենի պրոտոգիայից—առգանությունից, դեռևս է շեշտված
վանկ, որ հայերենում համեմատաբար երկար է արտասանվում, քան
մյուսները և հարկավոր ժամանակ կարելի է ավելի ևս երկարել: Այս-
պիսի կազմությամբ ոտանավորը կարելի է ազատ կերպով թի Շահնա-
մայի ձայնն ասել, Բայց դա, եթե բովանդակության համեմատ կար-
դանք, իսկապես հայկական անապետյան ոտանավոր է, սկզբից մի
յամբական ոտքով, և արվեստական արտասանումով միայն ստանում
է բարձրացող-ընկնող ութմ: Ռիթմական շեշտերը կրող երկար վանկերը
նշանակելով հայերենի երկար (") նշանով, իսկ ոտքերի երրորդ վանկերը
(որ պարսկերենում ունի երկրորդական ռիթմական շեշտ), նշանակելով
հայերենի բութ (') նշանով, և ոտքերի միջի դադարները՝ ուղղաձիգ գծով
(1), Կոստանդին հետևյալ տողերն՝ ըստ Շահնամայի՝ ձայնով ասվում են
այսպես.

Այսկանանքսէ՛ | ունայնե՛ | ժառանգե՛նք | մահո՛ւ,
Գուե՛րմե՛զ | դրո՞ւնքա՛- | բութեանե՛ | շահո՛ւ.
Երա՛զէ՛ | խարո՞ղն՛ | խայալան՝ | ցաւո՛ր,
է սո՛ւտսի՛- | բելի՛ն՛ | ընկե՛րենե՛ն- | գաւո՛ր:

Կարելի չէ կարծել, թե հայերին Կոստանդին Նրզնկացու ապրած
շրջանում միայն ծանոթ է եղել Ֆիրդուսու Շահնաման և նրա բանեցրած
լափը, որ պարսից մեծ բանաստեղծից առաջ էլ ուրիշները գործածել են:
Եվ իսկապես Գրիգոր Նարեկացին արդեն ունի այդ լափով մի տաղ (սն-
կեղեցույթ), որ Շահնամայի ձայնով կարդալիս՝ ստանում է նույն բարձ-
րացող-ընկնող ութմը.

Երկինքն ի յերկիրս և երկիրս ի յերկինքն,
Վայրէջք ի խոնարհ և վերելք ի բարձունս...

Ձայնով ասելիս՝

Երկի՛նքնի | յերկի՛րսև | երկի՛րսի | յերկի՛նքն,
Վայրէ՛ջքի | խոնա՛րհև | վերե՛լքի | բարձո՛ւնս...

Այսպես ուրեմն, 10-րդ դարուց, Ֆիրդուսու ապրած ժամանակից ար-
դեն մեր բանաստեղծության մեջ գործածված կա Շահնամայի ոտանա-
վորի լափը⁴: Բայց չենք կարող ասել, թե Գրիգոր Նարեկացին այդպես
հորինել է պարսկականի ազդեցությամբ, ինչպես Կոստանդինը: Սա նմա-
նում է Շահնամային, բայց, ցավոք, միմիայն ձևական կողմից, բովան-
դակությամբ բոլորովին հեռու պարսկական հուշակավոր դիցազներգու-
թյունից: Նա, ինչպես ասվեց, հորինում է աշխարհի ունայնության և մահ-
վան երգը, արժանի իրեն խնդրող կրոնավորներին, և ոչ թե մի աշխար-
հիկ բովանդակությամբ քերթված, կամ մի ազգային հերոսական վեպ:

⁴ Մանրամասնությունները՝ վերևում հիշված «Ֆիրդուսի» ժողովածուի մեջ, էջ 117 և հետո: Ըսկ պարսկերենի համար տեսե՛ք՝ Persische Grammatik, von C. Salemann und V. Schukowsky. Berlin, 1899, և Грамматика персидского языка, сост. Мирзоу-Джафаром, Москва, 1901.

Է Զ Ե Ր

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Տ Ա Ղ Ա Ս Ա Ց Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

1. Մկրտիչ Նաղաշ:—Մինչև 14-րդ դարը մեր բանաստեղծությունն արդեն ունի ձևով բերած իր գլխավոր թեմաները՝ կրոնական-միաստեղծական զգացումն ու մտածությունը, հայրենասիրությունը, բնությունը ու սերը, աշխարհի ունայնությունը ու մահ և խրատական երգեր, այսինքն՝ քնարերգության գործն ընդեր խնդիրները, Մի տեսակ ինքնուրույն վերածնությունը քրիստոնեականի և հեթանոսականի միացումով:

Հաջորդ դարերում այդ միեւնույն անսպառ նյութերի մասին միայն ավելի արվեստավոր և ուժեղ ու նորանոր կողմերով պետք է երգեր հորինվեին, Բայց մեր կյանքը թաթարաց լծի տակ ճնշված էր, երբ քաղաքական ազատությունը ոչնչացված էր և խավարած էին լուսավորության կենտրոնները թե՛ կենտրոնական Հայաստանում և թե՛ Արևելքում ու Արևմուտքում: Բնականաբար այս ազնտալից շրջանում շէր կարող զարգանալ այդ վերածնության ոգին, Զարմանալ միայն կարելի է, թե այդ հարստահարությունների ու կեղծքումների, այդ անվերջ պատերազմների ու ավերմունքների շրջանում ի՞նչպես չի մեռնում բուրգովին բանաստեղծությունը և գեռ մինչև անգամ երեսն են գալիս մի շարք բանաստեղծներ, որոնք իսկապես զարգացնում են մեր բանաստեղծությունը, Դըժբախտաբար, այդ բանաստեղծներից շատ բան չի մնացած, շատ բան էլ դեռ ձեռագրերի մեջ է և եթե տպագրված են՝ ցրվել են, ուստի այժմ իսկապես չենք կարող մեր բանաստեղծության զարգացման ճիշտ պատկերը տալ: Մենք խոսենք միայն մի քանիսի մասին, որոնց երկերն ավելի են հայտնի:

Դրանց մեջ առաջին տեղը, ըստ ժամանակի, ունի Մկրտիչ Նաղաշը՝ ծնված Բագշ քաղաքի մոտ, Պոռ գյուղում: 1430 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս և այնուհետև եղել է առաջնորդ Ամիդ քաղաքի: Մեռած պիտի լինի 1470—1480 թվերի մեջ: Եղել է ծաղկող կամ նկարիչ, միաժամանակ և բանաստեղծ: Նա կյանքը նվիրած է եղել իր հոտի բարօրությանն այն նեղ ժամանակներում, Ամիդի բռնակալներից ստանալով որոշ դուրություններ և իրավունքներ հին եկեղեցիները նորոգելու և նորոգող շինելու: 1440-ական թվականներին, երբ մուսուլման մահմեդական ամ-

բոխը քանդում է նրա մեծ շանքերով շինած գնդեցիկ կաթուղիկն, նա սրտի ցավից հեռանում է Ամիդից՝ պանդխտելով Կ. Պոլիս և ապա Կաֆա (Քեոքտար)։ Բայց հետո նրան դարձյալ հետ է բերում իր վիճակը, ուր նա ոչ միայն բարեկարգութիւն է մտցնում, այլև Շահնշահի ավերմունքների ժամանակ (1450 թ.) իբրև միիթարող հովիվ է հանդիսանում իր հոտի համար, խնամք տանելով աղքատներին, գերիներին գնելով և ամեն տեսակ օգնութիւն հասցնելով կարոտյալներին։

Մկրտիչ նաղաշը թիպետ ունի մի-երկու երգեր վարդ ու բլբուլի մասին, ինչպես և ուրիշները, ու ծաղիկներով այլաբանական երգեր, բայց գարունն ու սերը, զվարթ բնութիւն երգելը չէ նրան հատուկ։ Նա շատ լուրջ կրօնավոր է և շատ սուգորոված է իր առաջնորդական վսեմ կուլմամբ, ուստի և իր բանաստեղծութիւն մեջ ևս մի նպատակ ունի՝ միիթարել, սովորեցնել, կրթել և այլն։ Նա սովորեցնում է կրօնական ոգով քրիստոնեական բարոյականութիւնը։

Նրա խրատական ոտանավորները, մասամբ ունենալով մի քանի գնդեցիկ ներշնչման կտորներ, ընդհանրապես շատ զգոյշ, թույլ ու միակերպ են, թիպետ դրանց մեջ էլ երևում է ազնիվ վարդապետն իր քարոյական հասկացողութիւնով և անկեղծ զգացումով։ Այստեղ նա ամեն շարիքի աղքատը, աշխարհի սկզբից ի վեր, անձնական փորձից սովորած, համարում է մարդկանց երկու կիրքը՝ ազահութիւն (սպասն ազահութիան) և ռիսակալութիւն (ռիսատ խոսով լիննալու և ռիս լպահելու)։

Ի սկզբանէ մինչ քի վախճան
Ամէն վնաս որ գործեցան,
Ազահութիւնն հղև պատճառ,
Որ ի բարեացն զրկեցան։

Ազահն գալլ է պատառող
Եւ ծարաւի արեան մարդկան...
Կաթուղիկոսքն շատացան
Անօրինացն քոնութեան,
Եպիսկոպոս օբնենն անքան,—
Ամէնն վասն ազահութիան։
Եպիսկոպոսք զկանօնն անցան,
Որ պոռնկաց կուտան հրաման,
Կաշառ առնեն կարմիր դեկան,—
Ամէնն վասն ազահութիան։
Վարդապետերս որ նոր ելան,
Թանին հղեն վաճառական,
Եւ քարոզեն զհաճոյս մարդկան,—
Ամէնն վասն ազահութեան։
Հաբեղանին զվանքն ուրացան,
Եւ ի գիւղօրայքն ի շուրջ կուգան։

Սաղմոս ասելն մոռացան,—
Ամէնն վասն ազաւուրթեան:
Երիցաներն յիւրար կոռւան,
Բիր վերուցին և զաւազան,
Փետեն մորուա, կոտորեն բերան,—
Ամէնն վասն ազաւուրթեան:

Ազաւուրթյան հետ միասին աշխարհի շարիքների պատճառն է ռիս-
կաւութիւնը, վերժիւնդրութիւն ոգին: Եվ, բնականաբար, նազաշը շա-
ւիտվորութիւն հետ քայրեզուի է և քրիստոնեական ներողամտութիւն,
խաղաղասեր ու անհիշաշար ոգին: Ոխակալ մարդը, ինչքան էլ աղոթք
անի ու պահք պահի, թեկուզ կուսութիւն մը անց կացնի կյանքը ու աստ-
վածային բոլոր օրենքները պահի և իմաստութիւն աղբյուրը լինի,— քա-
ւին շունի ի քրիստոսէ: Ընդհակառակը, հաշտ ու ներողամիտ ոգով, շա-
րին բարի անելով՝

Թէ ի յատակս դժոխաց ծանր մեղօք ընկղմեալ ես,
Թէ խոնարհիս քո ընկերին, յերկնից խորանն վեր ելանեա:

Եվ բանաստեղծը մեկ մեկ թվում է այն վատթար դորժերը, որ գործ-
վել են ու դորժվում են ազաւուրթութիւն,— զոգութիւն, հավատաւրացու-
թիւն, ընտանեկան երկպառակութիւն և այլն, պատերազմներ, արյուն-
հեղութիւն, աւերածն ու զերութիւն: Նույն ազաւուրթութիւն է պատճառ
դարձն և մեր ճկեղծացու անկման. կաթողիկոսները շատանում են (ըստ
ժամանակակից թոմս Մեծօգնցու՝ մի քանի տարվա մեջ վեց կաթողիկոս
են դիտում և վեցն էլ թունավորված մեռնում), եկեղեցականներին ան-
կարգութիւնը մեծանում, բոլորը միայն ազաւուրթյան համար: Մկրտիչ
Նազաշի այն կտորները, որ ժամանակի այս ընկած դրութիւնն են վերա-
բերում, իսկապէս շատ կծու և դառն են, և դրանք մեր բանաստեղծութիւն
մեջ առաջին բանական գեղեցիկ դարձմանն են ապականված եկեղեցա-
կանութիւն:

Նազաշն իբրև իսկական բանաստեղծ. թեպետ դարձյալ խրատական
ոգով, հանդես է գալիս չորս քերթվածի մեջ, որոնք ձևով շատ անզարդ
են, բայց լի են դորժ և համակող զգացմունքով. նա դրանց մեջ դրել է
իր ասորած կյանքն ու սիրտը, և քնարականութիւն մը զարգացրել խրա-
տական բանաստեղծութիւնը: Բացի այդ՝ փայլուն ձևի փոխանակ, որ
պակասում է, նա երկու քերթվածի մեջ մտցրել է երկախոսութիւնը, որ
շատ կենդանացնում է գրվածքի ընթացքը: Նյութի տեսակետից նույնիսկ
Նորութիւն ու թարմութիւն ենք գտնում այդ բանաստեղծութիւններին մեջ:
Առաջին անգամ նրա մեջ գտնում ենք պանդխտութիւն մեծ վիշտե-
ռ թշնամութիւնը պատկերացած, որ մեր ժողովրդի սրտի տխուր լարե-
րից մեկն է եղել ամենահին ժամանակներից սկսած մինչև օրս, և որ
բանաստեղծն զգացել է իր հոգու խորքով:

Զղարիպին հայն գիտեմ, որ վա՛յ կուտամ...
Զղարիպութիւնն յորժամ յիշեմ քան զուռ զողամ:

Պանդխտութիւնն հրգեցրո՛ւ, անշուշտ, նաղաշից ամենի վաղ եւն ծագել մեղանում, քանի որ նրանից առաջ դժբախտ ճակատագիրը շատ անգամ ստիպել է հայերին ոչ միայն խմբերով զաղթել՝ բռնի և հոժարակամ կտրվելով հայրենիքից, այլեւ ժամանակավոր կերպով դիմել օտարութիւն՝ ընտանիքի ապրուստը ճարելու և բնակաւնեցի հարկահանութիւնը թաւանանքով տալու համար:

Պանդխտել են և նաղաշի՝ իբնն նման մարդիկ, Դրանց՝ այդ օտար երկիր թափառողների բոլորի վիճակը շատ խղճալի է, և այդ աշնպես ուժեղ կերպով պատկերացնում է մեզ քանադասի ժողովրդի երկու հրգի մեջ, որ նրան կարելի է համարել մեր առաջին մեծ պանդխտի երգիչը:

Ղարիպին կեանքն է լալի ողբերգական,
Դառն ու լեղի, լի տրամաբեամբ ի նեղ զնգան...

Աւա՛ղ զղարիպն ասեմ, որ յօտար երկիր հանդիպի,
Աչերն արտասուօք ի լի, յերեսէն ի վայր կութափի.
Յորժամ ի մեջլիս նստի, լանկասկած արտիկն արունի,
Զաչերն ի բոլորն ասէ, կարեւոր և զոք նա լուսնի:

Առաջին մեծ ցավը սրտնեղութիւնն է, որ ունի իր սիրելիներից զրկված պանդխտը, այն, որ նրան ճանաչող ու հասկացող չկա, լուսնի կարեկից ասպնջական, մարդը մենակ է մարդկանց մեջ, ինչպես մի բանտում, նա խորտակվում, նվաստանում է հոգեպես:

Որ թէ լինի պարտեռզի և աննման,
Հանած վարած ասնն նմա մոլորական:

Ղարիպին խնջն է կորեր, միտքն է մոլար.
Սե թէ լինի քան զՍողոմոն մտօք ճարտար,
Որ թէ խօսէ բան մի քանի անգին ճոհար,
Սաստենն նմա թէ լուռ կացի՛ր, անգէ՛տ լիմար:

Միայն բնական կարողութիւնն ուրեմն, որ նրան հիշել է տալիս իր սիրելիներին, ու ցանկանում է տուն դառնալ, այլեւ աչն, որ նա ապրել է ուզում, ապրել մարդկանց մեջ, այդ է, որ նրա կյանքը դառնացնում է, հացը լեղի դարձնում, սիրտը փորում դալարեցնում.

Հոգի՛, մի՛ աօնը զարիպ,
Թէ չէ՛ իմ սիրտս կարունի,
Ղարիպն ի յօտար երկիր
Գեմ խիստ դժբառ կուլիսնի:

Այս դեռ նյութական պահաս շունեցող պանդուխտն է. իսկ աղքատ պանդուխտը և նրա անհանգիստ մտատանջութիւնները, անքուն գիշերներին հոգսը թէ «վաղիւն ես ի՞նչ լինիմ գերիս, երբ լուսանայաւ Եվ քանաստեղծը նկարում է մեզ քաղցած դարիպի շատ ողորմելի վիճակը, երբ նա «երես ի քաշ» փողոցներն է դուրս գալիս մի կտոր հաց մուրալու. շատերը նրա առաջը դուռը փակում են ու մի կաթ ջուր էլ չեն տալիս. և նա նստում, լալիս է. Բայց պետք է ապրել, ճար չկա. նա գնում է փոխ է ուզում. ոչ ոք չի տալիս. Եվ նա ստիպւած գնում մտնում է մի տուն՝ քաշվելով «ի տան տիբուն պինչ ի շանէն խիստ վախելով», բայց դարձյալ դուրս են հրում անարգելով, և նա հտ է դառնում տրտում և արտասովելով. Եվ վերջապէս ամաշելով մտնում է մի տուն, ուր հազար բարիքով լի սեղան է դրած:

Նա՞ հազար գէշ ասեն նմա անարգելով,
Ապա թէ տան կտոր մի հաց տրտնշելով...

Բայց որքա՞ն թշվառ ու ողորմելի է, երբ այսպիսի դարիպը հիվանդանում է փողոցում՝ անտեք, մեն մենակ, և մեռնում ու թաղվում է. Շատ թանձր գուշնով է նկարում քանաստեղծն այս ողբալի տեսարանը, այս մեռնող պանդխտի հոգեկան ու ֆիզիկական տանջանքները և մարդկանց անզթութիւնը դեպի իրենց նմանը.

Եւ կայր անկեալ մէշ փողոցին անտիրական...
Միծաղելով առին տարան յեզեր հողին...

Բավական չէ, որ քանաստեղծը հոգու խորին կարեկցությամբ լցված նկարագրում է այդ թշվառութիւնը, այլև նա չի մոռանում վերջում կարեկցութիւն քարոզելու իբրև վարդապետ և նույնիսկ աղոթելու ամեն դարիպների համար, որ աստված օգնե նրանց և հաջնեն իրենց փափագին. Մի քերթվածի մեջ, որ երկաթոսութիւն է պանդխտի և իր բարեկամի մեջ՝ պանդուխտն իր վշտահար սիրտն է քաց անում, նմանեցնելով իրեն երամից զատված ու մոլորված մի երեբուն թռչունի, որ հանգիստ կգտնի միայն այն ժամանակ, երբ երամին կհասնի. նրա համար այնքան սոսկալի է պանդխտութիւնը, որ նույնիսկ զգարիպս բառը լսել չի ուզում. Բանաստեղծն աշխատում է փորձել ասիոհել պանդխտին, թէ հոգ չունի, մեկ [օր] աստված նրան էլ կդարձնի հայրենիք. Բայց պանդուխտն ամենեկին չի մխիթարվում, և վերջիվերջո քանաստեղծին ուրիշ բան չի մնում, բայց եթէ ասել.

Ամէնքս եմք դարիպ, եղբա՛րք, հայրենի մարդ իսկի չունի,
Հաւասար գնալու եմք, դի այն կեանքն է մեզ հայրենի...

Այս միևնույն գործնական, խրատական մտքից է ծագում նաև Մկրտտիչ Նաղաշի հայաջըն ու երգն աշխարհի ունայնութիւն մատին, որ բա-

վական մոտ է Կ. Երզնկացուն, թեպետ ոչ այնպես փայլուն ու գունազեղ, բայց ոչ պակաս ներքին ուժով և ինքնահատուկ շնորհքով։ Նա ևս աշխարհի ունայնությունը տեսնում է նրա անհաստատության մեջ, Աշխարհը մարդու բարիք չի տալիս. եթե մի որ ուրախություն է տալիս, հետո գալիս է մշտական դառնությունը. մարդս միմիայն խաբուսիկ հույսերով է ապրում, և իզուր հետզհետ, ուրախություն ու հարստություն բորենելով՝ աշխարհի հոգսերով ու մեծ աշխատանքներով տառապում, և դեռ ոչինչ չտեսցած՝ մեկ օր էլ հանկարծ գալիս է մահը և պարևում դատարկ հանձ և առնել ողորմ ու լալիչ։ Եվ ազահության դեմ երգող վարդապետի համար՝ խրատական եզրակացությունը պիտի լիներ հորդոր՝ լսիրե՛լ աշխարհը ավելի, քան կարևոր է, լսարժե՛լ նրան և ապրել անասունի նման, լցանկալ հարստություն ու մեծություն, այլ քարին գործելով՝ քավականանալ կերակրով ու հանդերձով, որովհետև քաւելի քեզ ցաւ կը լինի՜ս։ Ունայնության երջն, ուրեմն, նազաշի գրչի տակ դառնում է մի խրատ, շեռ զգացված ու խորը դիտակցված, մի քայքայություն, թէ չպետք է ազա՛հ լինել, որովհետև ազահության մեջ ոչ մի խորհուրդ չկա, քանի որ մարդն ինքը չի վայելում իր մեծ աշխատանքները.

Բայց դու գայս դիտացի՛ր թէ լի՛նչ կու դատիս,
Երբ թողուս օտարաց 'ւ ի հող մտանես։

Անշուշտ, նազաշը չի քարոզում անգործություն և ոչ էլ աշխարհաբացություն, ինչպես միասին նարեկացին. այլ միայն անցավորի համար, որ մարդ ինքը չի վայելելու, չաշխատել անասունի նման և լիռտանալ հոգեորը, հավիճանականը. նա միայն լսփովորություն է քարոզում.

Աշխարհս տուն է լի գանձով,
Փարթոմթութեամբ և մեծութեամբ.
Այլ և սեղան է բարելի,
Որ ամենայն ոք ցանկանան.
Որք իմաստուն են, հաւատով
Ըզլափաւորն առնուն, պնան։

էջ 18

Ինչքան էլ աշխարհն ունայն է համարում, և մարդկանց աշխարհի մեջ մի ժամանակավոր հյուր միայն, բայց և այնպես նա չի արհամարհում աշխարհը, ուստի և բուրդով լի անտառներ չի համակերպում մահվան առաջ. —

Ճանապարհ հեռաւոր ունիս գնալու.
Ճար լուսի՛ս, ճար լուսիս փրկի՛լ ի մահու. —

Հուզված քայքայանշում է նա մահվան համար, դիմելով ինքն իրեն, և ապա նկարագրում իր իսկ տենչն ապրելու մահվան րոպեին.

Յորժամ մահ քեզ տիրէ՝ և որն հասանի,
 Եւ հոգիդ ի մարմնուդ ելնալ բաժանի,
 Նա՛ հայրս աստ և անդ ողորմ ու լալի,
 Ոչ օգնէ քեզ նղրայր և ոչ սիրելի:
 Շուրջ ամեն ողորմուկ զաշնոյ ու նայիս,
 Հետ թափեա արտասուք ու հետ շուարիս:
 Ոչ օգնէ մեծութիւն՝ և ոչ սէր աշխարհիս,
 Զինչ բարի գործեցեր՝ նա զայն տի տանիս:

էջ 6—7

Մահը և ապրելու այս տենչն ազնիւ զորեղ կերպով երգել է նա-
 զաշը ռուս վասն մեռելիք քերթվածի մեջ, գրված 1469 թ. Մերտին քա-
 ղաքի կոտորածի մասին ժանտախտից, որ վարդապետն ինքն իր աչքով
 տեսել է.

Այժօ տեսալ դառն կսկիծ ողորմագին.
 Հալով լացի և ողբացի արտասուագին,
 Դառն արտասուօք զողբա ասացի նոր մեռելին...

Այդ ողբը մի ժամանակ մեծ ժողովրդականութիւնն է գտել՝ երգվե-
 լով նորատի ննջեցելոց հուղարկավորութիւնն ժամանակ և մինչև անգամ
 մտել է Մաշտոցի մեջ, ուստի և փոփոխութիւնն է ենթարկված, մեջն ազն-
 յացրած են տներ, որ ուրիշ օրինակներում չկան: Բանաստեղծին, քնա-
 կանորեն, ոչ մի հասակի մարդու մահն այնպես ցավ չի պատճառում,
 որքան անմեղ երեխաների, նորատի մանուկների ու երիտասարդների,
 որոնք այնքան հեռու են մահից, և նա, ծերութիւնն հասակում, շատ
 սրտառու, խորին հուզմունքով նկարագրում է այդ մահը, որ ամենից
 արտասովի է.

Հացէ՛ք այսօր և ողբացէ՛ք ամենեքեան,
 Դառն արտասուօք հառաչեցէ՛ք դուք միտքան.
 Զի հանց կսկիծ այլ չէ տեսնի մարդ քանական,
 Որ սար ու ձոր և ծառ ու ճեղ ամէն կուլան:
 Լեղէկ մանուկ աղւոր պատկեր արեւման,
 Յունքն կամար, այքն կանթեղ էր լանդիման,
 Յամէն անձամբ և հասակօք ինքն աննման,
 Ամէն մարդոց էր սիրելի և սիրական...
 Մանուկ անկեալ և թաւալէր ողորմագին,
 Քանզի հասնալ էր օր մահու բուն ատենին,
 Հայէր ողորմ յաջ և ի ձախ, քակտէր հոգին,
 Ժար շունէր, ոչ օգնական յայնմ ատենին:
 Յայնժամ ելաց, լալով ասաց. «Ինձ խղճացէ՛ք,
 Եւ զենէհար ի մահուանէն զիս թափեցէ՛ք,

Ծե ի ձեռաց սուրբ հրեշտակին ազատեցէ՛ք,
Ջի դեռ մանուկ եմ, զենէհար, զիս զենեցէ՛քս:

Ապա մեռնողը աղիողորմ կերպով հոր երեսին է նայում, աղաչելով,
որ ոգնի իրեն. թշվառ հայրը պատասխանում է հառաչելով՝ Թե պատ-
րաստ է հոգին տալու որդու փոխանակ. բայց ոչ մի բան լուսնի փրկելու
ներան, և որդուն ուրիշ բան չի մնում, բայց եթէ լալ իր սկանաչ արևն
մանկութեանս:

Գեղեցիկ գոյնն երեսաց թառամեցաւ,
Ծե ծովային աշքն ի լուսոյ պակասեցաւ,
Վայելուլ զօրեղ քաղուկըն թուլացաւ,
Լար արծաթոյ ոսկի մանեակըն մանրեցաւ:

Եվ մեռնողն իր վերջին հրաժեշտը տալով և իր համար պատարագի
հոգ տանելով ընկնում է սղառն ու դժվար ճանապարհը, որ նա չի կա-
մենում զնալ, որովհետեւ դեռ ժամանակը չէ. դեռ արտում փափաղներ
ունի, որ նա անկատար հետը գերեզման է տանում: Այս մահը և նարե-
կացու մահը արդեն որքա՞ն տարբեր են. վերջինս ամեննին չի հուլում
և չի ցավում, թե կյանքի զրկվելու է, այլ միմիայն իր հոգու փրկության
համար է հոգում, մեռնելիս անգամ միմիայն ապաշխարելու և աղոթելու
վրա մտածելով. իսկ այստեղ էականն է այս դառն ցավը աշխարհը թող-
նելու համար. փրկությունն արդեն ձեռնակն է դարձել. ժենէհար ինձ
պատարագ դրէ՞ք պաշար, քսուրք աղօթիք զիս լիշեցէ՞ք դուք միտքան,
պատարագօք հաշտեցուցեք զաստուածն բան, որ զիմ հոգիս արքայու-
թեան առնէ արժանս:

2. Քերովք:— Մահվան այս երգը, որ մեր ցնարեղությունյան ամե-
նազխաժող թեմաներից մեկն է, իր ձևով և բովանդակությամբ կատա-
րելության է հասնի ժերոթի տաղի մեջ (սեպյ էջերս, էջ 76, 1 տ.):
Թե ո՞վ է այդ տաղի հեղինակ ժերոթեն, ո՞ր դարում է ապրել և ունե՞նք
արդյոք նրանից մնացած ուրիշ գործվածներ ևս, այդ հայտնի չէ: Ըստ
2. Պոստրյանի (Les Trouvères Arménien, եր. 168)՝ նա ապրած պիտի
լինի 15-րդ դարու վերջերում: Այսպիսի երգերը չէր կարող ուրիշ տաղեր
ևս հորինած լինել. բայց դժբախտաբար մինչև այժմ բան հայտնի չէ:
Այդ տաղի մեջ նա հանդիսանում է իսկական արվեստավոր երգիչ, նյու-
թը Մկրտիչ Նաղաշի նույն երիտասարդի մահն է, և նկարագրի մեջ էլ
մեկ-մեկ նույնը, բայց մինչև Նաղաշը ինքն է երգում և մեռնող մանու-
կին ու իր հորն է խոսել տալիս, այստեղ բանաստեղծը գերեզմանից դուրս
է կանչում նոր թաղված մեռելին և նրան խոսել տալիս իր մասին, Բա-
նաստեղծը ճանաչողություն չի հորինում, այլ վեպ. սեղմ, խորացրած
գործողությամբ ու նկարագրով, որ խիստ սրտատուլ ազդեցություն է
թողնում, երբ բանաստեղծն իր սեփական զգացումն արտահայտում է
սկզբնական իմ, եղուկ, հազար վա՛յս բացականչություններով, որ

կրկնում է ամեն էջում իր պատմածի և թե մեռելի՝ ամեն մի տնից հետո և ուժեղ ցնցում ընթերցողին, մտածմունքի մեջ ձգելով, ընայելով ինքը քանաստեղծը և նույնիսկ գերեզմանից խոսող մեռելը շատ մեղմ ու հանգիստ են պատմում։ Բանաստեղծն իր ամբողջ էությունը զգացել է մահվան սոսկումը, որ շատ մեծ է և մեծ է հուզել կացություններով և կյանքի ու մահվան դորեղ հակադրություններով։ Հենց սկզբից մարդու ֆիզիկականի համար ստանում ենք մի սարսուռ գերեզմանի առաջ, որի մեջ հոսում է գեղեցիկ ու խիստ նազելի մանուկը։

Երէկ հողվորօցն անցի, հոտ առի զքիմբն կափուցի,
Քայլ մ' երկուք յառաջ գնացի, նեղ ու խոր վնդան մի տեսի։

Վա՛յ անձն իմ, եղու՜կ, հազար վա՛յ։

Մանուկ մի պառկած տեսի գեղեցիկ ու խիստ նազելի,
Հարցուկ ես նորա եղա՜յ՝ թ' ի՞նչ կանես, այդ թեղ չէ տեղի։

Վա՛յ անձն իմ...

Դարձաւ ու ճուղապ հտուր թէ՛ կանգնե՛ց, կտրիճ գովելի,

Ես ա՛յլ քան ըզթեղ էի գեղեցիկ ու այլ ցանկալի։

Վա՛յ անձն իմ...

Մեռելի առաջին խոսքերից մենք խորն զգում և տեսնում ենք մարդու դառն ճակատագիրը, որ ոչինչ է ինքը, և այսօրվա զվարթ ու փարփամ մարմինը վաղը մի գովելի գեշ է, և իզուր կափուցանում է թիմօր ու հեռու փախչում, քանի որ ինքը մեռելի ընկերն է, բայց երբ մանուկն սկսում է պատմել իր տնցած կյանքը, իր հոգեվարքի զալարումները, նրա ամեն մի խոսքը մորե՛ծի պես հարվածում է մեզ, որովհետև մենք տեսնում ենք քաղցը և լավ բաների կորածանումը, տեսնում ենք կյանքի և մահվան անհուն տարբերությունը և մարդու կատարյալ անզորությունը։ Մի փյանք, որ ճոխ, ուրախ ու լիառատ, անհոգ ու առույգ է, մի մարմին, որ ուժեղ ու գեղեցիկ, առույգ և շնորհալից է, մի մարդ, որ ամենքի համար քանկալի ու հիանալի է, շրջապատված սիրելի ազգականներով ու բարեկամներով, մի խոսքով՝ ամեն քաղցածանություններով լի, մի կատարյալ քախտավոր մարդ, որ մահվան մասին երբեք էլ չի մտածում և իր բարի գործով չի պատրաստվել տնդենի համար, որովհետև մահն իրենից շատ հեռու է նրանկայել, այլ միայն կերել, անուշ խմել է, ճարտար խոսել, այս մարդը հանկարծ ցավից բռնվում է. նա սկզբում զարմանում է, որ հիվանդացել է, բայց շուտով ընկնում է անկողնի, թուլանում ու կարկամում է։ Ողորմագին ուզում է, որ օգնեն իրեն, բայց չեն կարողանում օգնել, մարմինը թուլանում է, լուսատու և ցանկալի աչքերը կուրանում են, զորավոր բազուկը անշարժ է մնում, զարմանալի ճարտարախոս լեզուն փապկում է և վերջիվերջո ասում է մանուկը։

Հոգիս ի մարմնույս ելաւ, ու մընաց մարմինս գարշելի,
Այն իմ սիրելիքն ամէն ողբալով լային դէմ ինձի։

վա՛յ անձն իմ, ճղու՛կ, հազար վա՛յ:

Բայց այդ չէ միայն մարդուս ունշութիւնը. լսենք մեռելին և տեսնենք նրա ողբալի վիճակը, որ անխուսափելի ճակատագրականութիւնն է:

Այն իմ քորո՛ւ՝ եղբայր՝ որ իւրեանց էի ցանկալի,
Շուտով ինձ պատանք բերին՝ Թէ՛զ հանէր, որ խիստ շոտորն:

Մերելիներն իսկ, ուրիմն, շուտ դեն են շարժուում իրենց սիրեցյալին, որ արդեն զգարչելիս է: Դրանից էլ ավելի դառնութիւն չի կարող լինել:

Կոստանդին Երզնկացու մոտ արդեն, որ նուշալիս երգում է գեղեցկի մահը, կա այդ զարշութիւնը, բայց նուրբ. այնտեղ մահը գեղեցիկ մարդկանց միայն ճշաշէ գերեզման գոյնն, որ է գերդ ծաղիկս, Եոջ այլ գեղեցիկ երևին սուրաթովք, Եոր ոչ այք ունին, ոչ լեզու կամ բերան. դարձել են փոշի և ոսկերք են ցամաք, այն անձն, որ պայծառ էր, քան զձիւն ապիտակս: Մկրտիչ Նաղաշի մոտ Եաւադ զայն աղուոր մանկտիքն, որ դարձան ի հող և ի փոշիս: Իսկ Քերովքի մոտ գեղեցկութիւնը զարշաքի է վերածվում, մի զզվելի ունշութիւն, որից թրթրում է քանաստեղծի վշտահար սիրտը:

Բայց այդ չէ միայն: Նրանք ինչպե՛ս գերու, կողուպտում են նրան՝ կարծես ապացուցելու համար, թե չլիտի սիրել աշխարհի սխաղքն ու հարցասութիւնը, խելով զարգարանքներն ու հագուստը, ու իրենցից շատ հեռու խոր ու գե՛ղ գեղանի մեք հողով ծածկում և ասում, թե Եանշարժ եղիցիս:

Ահա թե ի՛նչ է պահված մարդու համար, թող նա քիմքը չկափուցանի և չշտապի հեռու փախչել: Միջնադարյան հաճատացլի համար, սակայն, մահվան արձաժիրքն ավելի երկարատևում է հանդերձյալի տեսարանով, մահով չի ունշանում մարդը, մեղավոր մարդը:

Խիստ ողորմելի է մարդ, որ մեղօքն ի հողն փչանի.

Երթայ նա անշույս խաւար, տարտարոս՝ ի հուր գեհենի.

Ոչ սուրբ բարեխօս լինի, ոչ եղբայր եղբօրն ցգնիլի:

Մկրտիչ Նաղաշի մեք գոնե այն միամիտ հաճատը կար, թե պատարազը, մեացողների աղօթքը կօղնի մեռելին. այստեղ այդ ամենը անարժեք է. միակ բարեխօսը մեացել է Աստվածածինը, որին դիմում է նաև Նաղաշը, և միակ միջոցը անփական բարի գործն է կենդանութիւն ժամանակ, բայց այդ էլ չի անում մարդ, հարուստ մարդը՝, որովհետև չի հաճատում իր մահվան, և իր գործն այնպե՛ս չի բռնում, որ մեռելիս չվարի:

Մըսքին Քերովքէ անխել բառք է պաղ ու խօսք է քամի,

Թէ խիստ իմաստուն ես դու, նայ արա ճարակ դու քեզի.

Փանի զաշխարհիս կացեր՝ լին գործեր դու գործ մի մարի,
Ըզպիսու աշխարհիս սիրէ, որ կորուսու է քեզ 'ւ ամենիս
Վա՛յ անձն յիմ, եղո՛ւկ, հազար վա՛յ

Յ. Հովհաննէս Թլկուրացի²։— Մին, Քերովրեի տաղի մեջ ավելի
մարդու ունեութիւնն ենք տեսնում, քան սարսափը մահից՝ Հովհաննէս
Թլկուրացու մահվան երգերի մեջ՝ ընդհակառակն։ Այս բանատեղծը, որի
կենսագրութիւնից միայն այսքանը գիտենք, որ 1489—1525 թթ. եղել է
Սսի կաթողիկոս, իր ամբողջ էութեամբ դողում ու սարսափում է մահից,
որովհետեւ ամենամեծ լարիքը, որ կա մարդու համար, դա մահն է.

է՛, մա՛հ, քանի ըզքեզ լիջեմ՝

Կու դողամ և կու սարսափիմ.

Ձկայ քան ըզքեզ լեղի,

'ի ամենայն լեղւոյն լեղի ես:

Լեղի՞, 'ւ ամենայն լեղւոյ՝

Մի՞թէ դու ի քե՛զ նման ես.

Դժոխք քան զքեզ լեղի,

Եւ յետոյ դայն ալ դու բերես:

էջ 46

Նա այնքան ատում է մահը, որ նույնիսկ բորբոքում, վայրանում է
ատուծո՞ղ դեմ, որ քնն պահելով մարդոց դեմ՝ մի հանցանքի համար մահ
է ստեղծել:

է՛, մա՛հ, դու քէն ունիս,

'ի Աղամայ որդին կու հանես.

Կամ մեղաց հարուած ես դու,

Ի մահու պտղէն ծնեալ ես:

Մահվան մեացած պատկերացմամբ և առհասարակ աշխարհի անցե-
վորութեան մասին իր հասկացողութեամբ Թլկուրացին չի տարբերվում
նախորդներից. միայն որովհետեւ նա խիստ ատում և սարսափում է մա-
հից, ուստի և հանգիստ երգել չի կարողանում այդ նյութերը, այլ ընդհա-
կառակը, նույնիսկ յոթանասուներեք տարեկան հասակում մի բուռն և ուժգին
թափով պատկերացնում է մահվան ոչ միայն դառնութեամբ, այլև ամե-
նահաղթ ուժը, որ ոչ մի մարդու, ոչ սրբի ու մարգարեի, ոչ ուժեղի ու
թագավորի մտիկ չի տալիս, այլ ամենքին հավասար ընկնում, հավասար
է իր բռան մեջ ու խորտակում, և ինչպես Քերովրեի տաղի մեջ, գեղեցկու-
թյունը անուշահոտ մի զարշնչի եզեջա՝ բան դարձնում.

Թէ հագիդ է վեց դրահ,

Նետ նետես 'ւ ի թափ անցընես,

² Կ. Կոստանեանց. Հովհաննէս Թլկուրացին և յուր առաքելը, Թիֆլիս, 1892:

Տանիս զնա ի քանտ ածծս,
Դէմ դռանն քար մի ձգես:
Արծիւ հս, յերազ թռչիս,
Լայնաձիդ զթեղ տարածես,
Ձինչ աշխարհս հզօր մանուկ,
Ի թեփո ծայրն ծրարես:
Հաղար երանի՞ նորա,
Ձոր բարի գործով գտանես:
Հեղեղ բոցեղէն տարեր,
Ձոր ի մէջ մեղացն ըմբռնես:

էջ 47

Թլկուրանցու այս անհանգստութիւնն ու սարսափը, նրա գայրույթը, ատելութիւնն ու գարշանքը մահից՝ ծագում են նրա ընդհանուր խառնը-վածքից, որի էական գիծն է կիցստեղծութիւնը: Նա ոչ միայն ապրելու տենչ ունի, այլև գեղեցիկ, ուրախ ու զվարթ ապրելու, և կռուելու համարյալ անապական ապրել՝ միայն սիրելու և գեղեցկութիւնը դիտելու համար: Թայց դրան խանդարում է մահը, ոչ միայն նրանով, որ զրուկում է սիրելուց ու գեղեցկութիւնը տեսնելուց, այլև նրանով, որ, ժամանակի հայացքով, ալիքսիսի կյանքն ու սերն ընդհանրապես, այս աշխարհի համար վտանգավոր էր, իսկ այն աշխարհը մարդու բերողը մահն է: Եթե լլինե՞ր մահը, մարդ այդ վտանգից ազատ կլինե՞ր և կսիրե՞ր ու վայելու-թյամբ կապրե՞ր ընդմիջո՞ւ՝ ատանց որեւէ վրդովմունքի: Թայց այն միտքը, թե մահ կա, ինչպես մի թույն միշտ կաթում է նրա վայելչասիրութեան մեջ, — ահա թե ինչո՞ւ մահն ամենից մեծ լարիքն է:

Թէ չէր մահու՞ն օրն ու դժոխքն
Եւ կամ սարսափ դատաստանին,
Նա՛ այս աղէկ էր դինչ ասաց
Խե Հովհաննէս Թլկուրանցին:

էջ 36

Այսպես է վերջացնում Նա իր կենսուրախ սիրո հրգիծից մեկը (տե՛ս և էջ 26, 30—31, 37, 49—50): Այսպես է հաճախ վերջացնում, երբեմն և սկսում սիրո հրգիծ (տե՛ս նաև ռէալ էջերս, էջ 32):

Բնասատեղծը փորձում է արդարացնել իրեն, թե սերը մարդկային քնութեան մի պահանջ է, որի համար մեղադրել կարելի չէ իրեն, քանի որ Ադամից սկսած (էջ 27—33) մարդիկ միշտ հաղթվել են նրանից (էջ 33—34) և սուտ է, թե կրոնավորներն անզգա են.

Ինձ մեղադիր չէ՞ր կու լինիք,
Հարիւր տարույ հարեղանին,
Որ ճիմմակն է դարձե՞ր դեղին,

Կտրէ զկօրտիկ պատարագին
 Ու զքեզ ուղէ անդն խալին (էջ 32),
 Սէրն կուտանի զամօթն երեսէն
 Ի հաքեղայէն և ի վարդապետէն.
 Երէջ, սարկաւագ կու ձգէ ի կարգէն,
 Տանի զխելքն ի գլխուն, զամօթն երեսէն (էջ 34),
 Թէ վարդապետն զձեզ տնանու,
 Մոռնայ զտւումն ու շատ գրունք (էջ 16),
 ... Զմիակեցին խելքն տանիս,
 Որ կացեր է զօրն անարատ (էջ 29),

Եւ վերջապէս աստված կնոջը ստեղծել է սիրո համար (զուստեղծեր
 զկինն ի կողէն վասն Աղամայ սիրոյն համար) (էջ 27), և նրան սիրում
 են ոչ միայն մարդիկ, այլ ինքն աստված է սիրում, քանի որ գեղեցիկ
 կինն արարութեան պատկերն է.

Պարծանք ու վաճ քո ծնողին,
 Փառք ու պատիւ քո Արարչին (էջ 22),

Բայց այս մտածութիւններն ամենեւին չեն հանգստացնում քանա-
 տեղծին, որովհետեւ սերը դարձյալ մնում է իրրն մի մեղանշականութիւն
 (սկզբնոր մեղաց ճաշակն առնու՝ այլ Աստուծոյ լի տար խաբարս) (էջ 28),
 ուստի և նա տանջվում է երկվութեան մեջ, ու նրա սիրո և ուրախութեան
 հրգեքը, մահվան հիշատակով, վերջում մեծ մասամբ դառնում են և զրդշ-
 ման երգեր.

Բացէն ասեմ, ճարակ չկայ.
 Մահու մեղաց ներքն եմ ես.
 Հայիմ ի քեզ, հայիմ ի նա,
 Որ ի հողոյ ստեղծեր զքեզ:

էջ 30

Բայց ինչքան էլ մահը թունավորում է նրա հոգին, ինչքան էլ մահ-
 վան երգերի մեջ նա երգում է անցավորութիւնը, բայց և այնպէս Թլկու-
 րանցին հոռետես չէ. աշխարհը նրա համար ոչ միայն ուրիշ չէ, այլ, ընդ-
 հակառակն, ամենալավ բանն է, և նույնիսկ Աղամայ անմահութեան դրախ-
 տից լավ, որ պիտի վայելելու երբ վարուն է պայծառ, այգի ու պարտեզ,
 դաշտ ու լեռներ զարդարվում են կանաչ զգեստներով ու ծաղիկներով, երբ
 ջնշում է անուշ քամին, թռչուններն անուշ երգում, ցաղցր գալիս է սոխա-
 կի ձայնը, և մարդ նստում է վարդենիների մօտ, ծառի թանձր ստվերում,
 առնէն ունենալով արագ վազող խոխոջուն ջուրը, ու թէն ընկերի վզով
 ձգած՝ սիրով խմում է անուշ գինին և ուրախութիւն անում: Դա մի այն-

պիսի քան է, ասում է Քլկուրանցին, որ դրանից լավ բան չկա, և մարդ նույնիսկ Աղաթա դրախտի հետ չի փոխիլ այս կյանքը, եթե միայն լինենք մահը («Տաղ գարնան», էջ 35)։

Այս աշխարհասիրությունն արդեն այն չէ, ինչ որ Կոստանդին Երզնկացին ունեն իր գարնան և արեգակի, լուսն և սիրո փառաբանական հրգեթի մեջ, որտեղ ամեն ինչ մի կրոնական հրճվանք էր աստվածային քնություն գեղեցկության ու հավիտենականության անաղջ Աստուծո արդեն մարմինն է իշխում իր թանձրացած, հրկրավոր, ցանկական պահանջով։ մարդը հրկնային ուրտենեթից իջել է իրական աշխարհ, և իրական կյանքի վայելքը, Իսկ այդ վայելքի մեջ էական տեղը մեր Քլկուրանցու համար քնությունը չէ [գրավում] իր գեղեցկություններով և խորհրդավոր ուժերով, սր մարդուն մի հոգևոր վայելչություն է ընծայում, այլ ինքը, մարդու մարմինը, քնությունը նրա, այդ մարմնի համար միայն մի գեղեցիկ դրոսավայր է, մի կանաչ պարտեզ, որ կարելի է ծառի ստվերում նստել, վայելք քաշել, խնդում անել։ Այդ պատճառով Քլկուրանցին, զոն ինձ ծանոթ հրգեթի մեջ, լուսի քնության հրգեթ, ինչպես Կոստանդինը։ Նրա «Փարնան տաղը» նույնիսկ (էջ 35) մի բուրախություն առաջ է, և գարունը նրա համար միայն ուրախության ամենալավ ժամանակն է, որովհետև

Փարնանային ամիսն երբ գալ,
Հաւաար ծաղկի լուր և դաւար.
Գետեթդ լորդոր գնացք առնուն,
Ի լեռներուն թափին ի վայր։

Այդ ժամանակ, քնության այդ զարթույթի հետ՝ զարթում է մարդու մեջ ուրախության և սիրո քնական հոսիլը։—

Գէնա քահար, այլ էի քահար,
Այլ էի կուտան պիտոյ խաբար։

Այս պատճառով, սիրելի կինը բանաստեղծին ներկայանում է գրեթե [միայն] իր գեղեցիկ մարմնով, որ հափշտակում է նրան և որին մեծ սիրով նվիրում է տաղեր։ Գեղեցիկ մարմնի նկարագրի համար, նարեկացու ժամանակից սկսած, ուրեմն 10-րդ դարուց, կազմված է եղել որոշ ձև ու ճաշակ, որով թվում են, ինչպես անում է նարեկացին, հասակը, աչք և ունքը, այտերը, ձեռքերը, բերանն ու շրթունքը, լեզուն ու ձայնը, ծամերը կամ վարսերը, ծոցը, ժպիտը, պատմությունը, գոտին (քամար), քայլվածքը, կենցվածքն ու շարժվածքը։ Գրա հետ միասին առաջ են գալիս ոչ միայն արտաքին նկարագրի համար ընդհանուր պատկերներ և նմանություններ հրկնային լուսատուներից, բույսերով ու անձնիկով, որ քանցնում են հրգիչները, այլև գեղեցկության մի ընդհանուր իդեալական պատկեր, որի մեջ առանձին բանաստեղծները շատ քիչ փոփոխություն են մտցնում նայելով իրենց ճաշակին կամ սիրած կնոջը և կամ իրենց հակամեծերին,

ալիքի կամ պակաս տեղ տալով մարմնին, Երգչի անհատականութիւնը երևում է, զլիսավորապէս, ոչ այդ նկարագրով, այլ իր տրամադրութեամբ. որ նա ղեկում է իր երգի մեջ, Թեպետև մինչև Թիկուրանցին հայտնի են միայն երկու երգիչ՝ Նարեկացի, Կոստանդին, որ ունեն այդ նկարագիրը, և Թիկուրանցին առաջինն է, որի երգերի մեջ մեծ տեղ է բռնում արտաքինը, բայց և այնպէս այդ երգերի համեմատութիւնից հենց պարզ երևում է վերևում գրածի ճշտութիւնը: Շատ բան Թիկուրանցու մեջ ընդհանուր տեղիք է, թեպետև առանձնահատուկ ուժով արտահայտված:

Այդ գեղեցկութիւնն իդեալն, անշուշտ, մեր հին երգիչներին է պատկառ և 10-րդ դարում արդեն գրեթե ամբողջ պատրաստ է. թե արարական ազդեցութիւն կա՞ դրա մեջ թե չէ՝ այդ լիդիան, բայց քանի որ 10-րդ դարու է, նոր պարսկական լիսա Երգոց երգի ազդեցութիւնն անպայման երևում է, բայց այդ ճաշակը շատ հեռու է հին հրեականից:

Կոստանդինին, քանի որ նրան հետաքրքրում է ալիքի ներքինը, գրավում է գեղեցիկ պատկերը իր մի քանի էական գծերով, իր մոտ ռու շիտակ հասակով և մանավանդ պայծառ դժգոյք և ուրբուն սև մազերով: Թիկուրանցուն, ընդհանրապէս, մարմնի բոլոր մասերի հետ՝ ամենից առաջ հափշտակում են ծով-ծով ալքերը, թուխ ու մեծ (էջ 29, 37, 25, 31, 33, 36, 39, ժՀայ էջեր, 32), որ արեպակի նման փայլում են.

Արենման շողջող կը տաս,

Յորժամ սիրով զալեցող ածես (էջ 29):

Մի պատկեր և նմանութիւն, որ նույնիսկ Վահագնի երգի մեջ ենք գտնում՝ «Ալկունքն էին արեգակունք», որ և Նարեկացու մեջ նմանեցրած է ծովի.

Ալքն ծով ի ծով ժիժաղախիտ,

Մաւալանայր յառաւոտուն

Երկու փայլականաձև արեգական նման:

Այս բոլորի հետ՝ այս գեղատեսիլ պատկերը ներքին գրեթե ոչ մի արժեք չունի, բայց եթե այն, որ բանուշ քաղցր եղանակա ձայնով զրույց անում և բնական գեղեցկութիւնը բավական չէ, արվեստով էլ գեղեցկանում է և ձեռքեցում, ու դրանով ալիքի գրավիչ դառնում ու հափշտակում մարդկանց թունավորելու համար: Այդ է Թիկուրանցու երգի կինն իր թանձրացած մարմնով, որ բանաստեղծի համար ամեն ինչ է:

Կինն քաղցրիկ գլուց ունի,

Նայթաւ ի հետ առնէ գալար,

Յանկարծ զթիւնքն ի մարդ թափէ,

Որպէս զականառ բռնէ անճար:

Յունքն քաղէ, դաշքն գեղէ,

հենէջանայ քան զբնիար,

Միշտ զպոռանկն ժամոէ,

Ձմարդիկ կու ձգէ ի քարն ի վայր (էջ 27)։

Պագ մի յերեսէդ կ'աժէ զեղորստան,

Ջջապաշ ու զՅմէն տիւռ շնորհատան,

Երկու վարսդ է գին Չինի և Խոթան,

Պուլզար, Ստամպուլ է Շէհրի հազդան (էջ 34)։

Այսպիսի մարմին երգողի ու զնահատողի համար, քնականաբար, սերն ալլես մի ներքին մտնումական ուժ չէ, հոգնական զաղտնի ցավերի ու վշտի աղբյուր, այլ ֆիզիկական հույզի մի քունկում միայն գեղեցիկ կնոջ տեսքից, քայց այնպիսի քունկում, որ նրան հասկնաւորում, վառում է և սպառում. և այսպես ամեն անգամ, երբ նրան երևում է գեղեցիկ պատկերը, Բանաստեղծն այդ ժամանակ դառնում է մի աշք, սենսատ գեղեցիկ սիրելիին կամ բարեկամին, ինչպես անվանում է նրան երգիչը, նրա մարմինն և մարմնի բոլոր մասերին, և նրանից խնայմաւոր լինելով՝ տանջվում է ինքն ևս մարմնով։ Դրա համար և նրա երգի մեջ մարմնի նկարագրի հետ տեսնում ենք և երգչի իրեն մարմնի խորտակումը, որ ունենում է սիրո առարկայից։

Կնոջ տեսքից նա, մանավանդ երբ հանկարծ է պատահում, և այս մոտիվը սովորականն է, աչկովում է (էջ 25), նրա մարմնով սարսափ է անցնում, ամբողջ մարմնով դողում, շունչը կտրվում է, սիրտը մարում և ուշադնաց լինում (սէլա էջեր, 8, 32)։

Հանգստի ալլովդ տեսիլ զմրտիտ,

Տպազիոն անն ու շուհար

Ինձ անկասկած ի դէմ հլաւ,

Շունչս քաղեցաւ,

Չթողիւր լիս համբերութիւն (32)։

Քանի տեսնիմ՝ կուտարսափիմ,

Սրտիկս ի փորիկս կանցնու կրծիցս (էջ 32)։

Թէ վարդապետն զձեզ տեսնու...

Ամեն անձամբ ի զող ելնու (էջ 36)։

Յանկարծակի մէկ մի տեսայ,

Թուլցայ անկայ ի տեսնէն...

Երբ իմ աչքս ի քեզ դիպաւ...

Ջարհուրեցայ ի տեսնէն... (սէլա էջեր, 32)։

Սերը նրա համար խավարած սրտի լուսատու էակը չէ, ինչպես կոստանդնի համար. Թլկուրանցու սիրո արեղակը, ինչքան էլ փայլուն է, երևան է դալիս իր այրող, խորտակող ուժով, որին ոչինչ չի դիմանում. նա երգչի սիրտը անվախճան կրակ է լցնում (էջ 31) և այրում, վառում է նրան։

Քո սէրն ի յիս դիպաւ, ստոյգ կայրիմ ես (38),
 Ես զքեզ տեսայ նման լուսոյ,
 Զէտ արեգակն որ նոր կելոււ,
 Սիրտս այրեցաւ թարկ կրակով,
 Ես մնացի խն կայելու (49),
 Զինքն ճռնար՝ զէտ զուռի ճեղ,
 Հրով այրէր զերկիր ամեն...
 Երբ իմ աչքերս ի քեզ դիպաւ,
 Նա վառեցայ զէտ մոմեղէն (սէպ, էջեր, 32),
 Ես եմ ափ մի հող, դուն հրեղէն ես,
 Քանի՜ զիմ այրած սիրտն արիւնեա (39),
 Քո սէրն զիս մոմ արար,
 Դու ինձ պողպատ ու կայծքար ես (38),
 Արեւ նման շողշող կրտաս,
 Յորժամ սիրով զաչերդ ածես...
 Դու զվէմերն խորտակես,
 Դու զյերունքն հալ հանես,
 Զով դու սիրես, նազար առնես,
 Անանց կրակով զանձնիկն այրես...
 Ժռան վզովդ բերդիք քակես (29),
 Զեզ ի՞նչ զաղար ես դիմանամ,
 Որ դուք հալէք, հանէք լնուրնք,
 Սիրով քակէք թարծր բերդեր.
 'Ի ի գիւ հանէք վէմք ու սարունք (37),

Անական է, որ այսպիսի սիրո առարկան չպիտի ներկայանար իբրեւ
 թագավոր, որ ծառայութիւն ու ստրկութիւն է պահանջում, կամ իբրեւ
 ազատութիւն բերող տիրուհի (ինչպես Կոստանդին համար), այլ իբրեւ մի
 դահիճ, որ զոհ, մատաղ է (էջ 30) պահանջում, ինչպես սիրո հին անո-
 դոք աստվածուհիները. նա սպանում է, կլանքից կտրում է (էջ 33),—

Դու ինձ լեր դատաւոր, արա՛ դատաստան,
 Սիրով մի՛ սպանաներ, ճէլէտ էֆենտի:

Եվ այս վերջին տողը նա կրկնում է ամեն տան համար,

Դու զիշեր և ցերեկ մէջ իմ սրտին ես,
 Անմահ ու անգրող զարիւնս հեղեր ես...
 Զարկամն զայդ չէր անէր՝ զինչ որ դուն կանես.
 Անթուր՝ անդանակ զարիւնս հեղեր ես (38):

Այսպիսի սերն արգեն մի հիվանդութիւն է, որ, ինչպես ասում են,
 առաջանում է կախարդվելուց միայն, և գրավելով դրանով քունվածի ամ-
 բողջ էությունը, գիշեր ու ցերեկ դրանով պաշտօնակցելով միայն՝ տանում է

ինքնամոռացման ու խեղացնորության և դարձնում է նրան քնիք կտրված մի խեղագոր:

Յորտեղ որ կընստիմ զիս կըմոռնամ ես.
Մի՞թէ զիս դեղեցիր, կամ կախա՞րդ ես.
Ջրո ծով ծով ալերդ դեղով լցն՞ր ես (39):
Սէրն հանէ պարսն ի խեղաց
Որ այլ բակի չկա խաբար,
Իմաստութիւնըն խափանի,
Եւ հանց դատնայ քան զգիւհար (27):
Մարդ որ սիրոյ կուհանդիպի,
Նա քան զկրակ կուլինի վառ,
Այլ ոչ աղօթք ի միտ կուզայ,
Ոչ յայսմաւորք կայդայ ու ճառ (26):
Սէրն կուտանի զամօթն երեսէն
Ի հաբեղալէն և ի վարդապետէն... (34):
Ով որ մեղաց ճաշակն ատնու,
Այլ աստուծոյ լի տար խաբար (26):

Եվ այսպիսի հիվանդին բժշկողը միայն իր սիրոյ առարկան կարող է լինել, որի կողքին նստելով և նրա երեսին նայելով միայն կհանգարտի. —

Հանցեղ նետով զիս խոցեցիր,
Որ այլ չունիմ բժշկարար (25):
Հիւանդ եմ ես, ողջանամ, երբ նստիս ինձ յաջ (33):
Նիստ որ հայիմ յերեսդ ի վայր (31):
Արի ինձ դեղ արա, իմ ճարն դու ես (38):

Իր սիրոյ այս ամբողջ նկարագրի, իր այս հոգնկան վիճակի հետ, Թլկուրանցին մեզ յի տալիս զեղուհու ներքին արժանիքը. ինքը շունի ոչ մի քնքշութիւն զնպի իր բարեկամը: Մի տեղ միայն նա զրոյւմ է.

Է՞ մեղր ու կարագ և կեղևած նուշ,
Քեզ ծուռ նայողին յաշքն հազար փուշ,
Սիրով մի՞ սպանեն, չէլէտ էֆենտի (34):

Բայց այստեղ ևս ոչ թե սիրելիի մասին է հոգ տանում, այլ իր քղահ-
նին՝ համոզել է ուզում իր անկեղծության մասին, ինչպես և ուրիշ տեղ

Թէ զիս յիշեա, թէ լիշեա,
Ես կուտիբեմ արտով զքեզ (29):

Բայց այդ սիրելին երեի անպատասխան է թողնում, որ երգելը մի տեղ հանդիմանում է նրան՝

Աշխարհա խօրտաիկ գէմ դու մէնակ չհաս,
Աստուորս շատ իկէ՛ւ ալլ տի գայ քանց քեզ (39),

«Հայ էջերիւ մեջ տպւած է «Տաղ Յովանէսի վասն սիրոյ», որի վերջում հեղինակն ինքն իրեն կոչում է «Եւ Յովհաննէս»³։ Այդ տաղն տնայա-ման Քրկուրանցունն է, ոչ միայն «Եւ Յովհաննէս» անվան համար, այլ մանավանդ իր ոգով և տրամադրութեամբ ու բովանդակութեամբ։

Այս մեծ ուժն ու խորութիւնն առաջանում է նրանից, որ երգիւք թող-նում է իր բարեկամի մարմինը մի կողմ, և միայն սիրո մեզ արդեն ծանոթ ազդեցութիւնն է վեր հանում իր բոլոր կողմերով։ Այսպէս վարվում է նա, որովհետեւ այստեղ ոչ թե իր հրեշմանքը, բախտավոր սերն է երգում, այլ սիրո ցավը, որովհետեւ, ասում է նա,

Քաղցր լեզուով խոցոտեցալ...

Կերակրեցաք ի մի սեղան, ու խմեցաք ի մի կթխալ,

Մէկտեղ էլաք, մէկտեղ նստաք, ան ժամանակն ո՛ւր է հիմալ.

Ո՛ւր է դաւլըտ, ո՛ւր է երդումն, որ բռնեցաք զաստուած վկալ,

Ի վար անկաք, օտարացաք, շարկամն եղև մեզ մահանալ։

Այսպիսի վիճակը քնականաբար կարիք չի զգում բարեկամին գովե-լու, այլ միայն իր միջոցը երգելու։ Եվ երգում է նա «արիւն արցունքով»։

4. **Գրիգոր Աղթանարցի**։—Հովհաննէս Քրկուրանցուց կրտսեր, բայց երիտասարդ ժամանակ նրան ժամանակակից է մեր երկրորդ սիրերգող կաթողիկոսը, Գրիգոր Աղթանարցի, ծնված 15-րդ դարի վերջերում։ 1515 թ. արդեն ունի բանաստեղծութիւններ, իսկ 1569 թ. դեռ կենդանի է հիշվում։

Սա իր աշխարհայեցողութեամբ և երգի վերջում դրած ապաշխարութեով շատ չի տարբերվում Քրկուրանցուց. նույն հայացքն ունի ունայնութիւն և մահվան մասին, ինչ որ նախորդները, նույնպէս երգեն՝ նվիրված սիրո, գեղեցկութեան և աշխարհային վայելքներին ու մահվան, ինչպէս Քրկու-րանցին, միայն ավելի գեղեցիկ ձևով, բուռն ավյունով և մաքուր ու խո-րացրած բովանդակութեամբ։ Ժողովրդական ձևով մի երգի մեջ բողոքում է մահվան դեմ, որ գալիս, բռնի և անազոտույն կերպով գրկում է մարդու աշխարհի վայելչութիւնն։

Ծամէն առաւօտ և լոյս

Պիւպիւն էր նստեր յայգոյս,

³ Քրկուրանցին իր տաղերի մեջ կոչում է իրեն «Քրկուրանցի» (26), «Եւ Յովհաննէս Քրկուրանցի» (30, 31, 33, 36, 37, 44, 49, 50, 56), «Եւ Յովհաննէս» (39), «Եւ Յովհաննէս» (43), «Յովհաննէս Քրկուրանցի» (45, 47)։ Իսկ երկու տաղի մեջ (Ծ, ԺԾ) հեղինակ չի հիշված։

⁴ Կ. Կոստանյանց, Գրիգորի Աղթանարցի և յուր տաղերը, Թիֆլիս, 1898։

Քաղցրիկ ձայներ վրայ վարդույս,—
Կասեն, թ'արեկ ե՛լ այգույս:

Աշխարհը նրա համար մի սուրախարար տեղիչ է, մի նորաստունի,
գարնանային ծաղկած այգի, շրջապատված ցանկապատով, տնով, ավա-
զանով, անուշ ջրերով, ծաղիկներով, կարմիր ու սպիտակ վարդերով.
մարդն ուզում է վայելել այդ ուրախարար տեղը, կյանք ու լույս տոնենել,
այդ այգու պտուղն ուտել, վարդի հոտն առնել, գինին խմել:—

Քաղեմ փունջ մի վարդ այգույս,
Դնեմ մէջ կարսի գինույս,
Ուրախանամ այս հոտույս:

Ահա թե ի՛նչ է մտածում մարդս միշտ, բայց և ի՛նչ են նրան առում՝
դուրս արի քո այդ այգուց: Մարդը բողոքում է.

Ձեմ ելներ ես այս այգույս,
Այս իմ նորաստունի այգույս,
Յայս ուրախարար տեղույս,
Եւ այս նորաշէն տներու...
Դեռ շեմ տեսեր կեանք և լուս...
Ի՞նչպես ելեմ ես այգույս:

Բայց ավա՜ղ, երիտասարդ կյանքը ստիպված պիտի գրկվի այդ վա-
յելքից և նրա համար աշխարհը կործանվի:—

Մաղկունքն վերացան յայգույս.
Վտրդն թափու իմ այգույս,
Յանկն քակեցաւ յայգույս,
Ահա՛ որ ելայ այգույս:

Բայց մարդուս այս դառն ճակատագիրը, թեպետ Աղթամարցուն ևս
միշտ ապաշարվել է տալիս Թլկուրանցու նման, բայց չի խանգարում գո-
րուն և առանձնագետ սեր երգելու հոգեզմայլ արքեպիսկոպոս (Կոստան-
յան, Նոր ժողովածու, Բ, սյրակ, էջ 16):

Չարունն է բացուեր, վարդ ի պաղլանին.
Քաղցր եղանակն պիւլպիւլն ու դումրին.
Սիրով են վառեալ ի կարմիր թփին,
Կանաչ ու կարմիր տերև կու հագնին:
Գինով եմ, գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցերեկն արևով.
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Եվ նա իր արքեպիսկոպոս և երազանքի առարկան երգում է մի շրեղուն
խանդով, գույների հարստությամբ և թարմությամբ, որոնց մեջ շատ

բան, հարկավ, նախորդ բանաստեղծներին, ուրեմն և թերզ երգոցս-ից է առած իբրև սովորական ձևեր, բայց իր անկեղծ ավյուսով այնպիսի դեղ ու փայլ տված նրանց, որ շլացնում է ընթերցողներին, ինչպես և Աղթամար-ցին ինքը շլացած է եղել իր գեղուհու թաստուածադիծ պատկերիցս։ Իսկույն երևան է դալիս կրակոտ բնավորութունը, որ վառված է, հափշտակված է մի ճոխ անձից և ուղում է նկարել այն։ Եթե նա նկարիչ լիներ, կառներ վրձինն ու ներկով կհաներ այդ, որ միշտ իր ալքի առաջն է։—

Եթե յալաց մարմնոյս ծածկիս,
Մտաց ալօք ինձ երևիս (80)։

Բայց նա խոսքերով է ուղում նկարել, և բառերը բավականութուն չեն տալիս նրան՝ այդ պատկերն իր ուզած ներությամբ գծելու և միշտ նորանոր գույների, նորանոր ձևերի է դիմում՝ օգնության կանչելով բազմաթիվ ծառեր ու ծաղիկներ, հրեղեններ ու թռչուններ, բուրավետ խնկեր ու ակներ, բնության երևույթներ ու լուսատուներ։ Նմանությունների այս կուտակութունը, ծնված սիրազգաց սրտից, վերջիվերջո դարձյալ զոհացում լի տալիս նրան, որովհետև իր գեղուհին աստվածանման է։ Նա ոչ միայն մարմնով կատարյալ է, այլև վերնային է իր հոգով։—

Վերնոց վեհագոյն և աշխարհի պարզ,
Ուշիմ և խոհեմ անօրինակ մարդ... (63)։
Տիպ և գաղափար Տեառն Աստուծո հետ,
Պատկերով պատառեալ, քան զՄիքայէլ ես,
Ժ մէջ հողէղինացս հրեղէն ես (62)։
Դու սքանչելադործ, քան Զօրաւոր խալ (64)։
Մաքուր պատկերով նման հրեշտակի... (57)։
Սոսկալի վարսաւոր սրովբէ (76)։

Գեղուհու այս ներքին մասի հետ, որ առաջին անգամն է երևում մեր բանաստեղծության մեջ, մենք տեսնում ենք Աղթամարցու քնքուշ գործվական վերաբերմունքը դեպի իր սիրո սիրունհին, որին նվիրում է իր երգը, մի վերաբերմունք, որ լուսնի Թլկուրանցին։

Պատկեր ես քո Մտեղծողին շաղկապեալ ի քառանիւթէ
Տիպն իւր գոյացոյց դքեզ, նկարեաց 'ւ եհան յարգանդէ.
Զիա՞րդ օրինակ տամ քեզ յանշնչից և յանզգայէ,
Յայս իմ ալրեցած սրտէս զայս ընծալ ընկալ ընդունէ։
էջ 77.

Ուրիշ տեղեր քնքուշ հոգատարությամբ երգում է.

Օրհնութիւն Փրկչին ի քեզ իրանի,
Կամօքն Աստուծոյ կենսա կենդանի.
Դունդ լար ալսովն ի թէն հալածի,
Զերդ զարեղակն փայլես փ յերկրի (64)։

Միշտ կանաչ կենաս քան զնշդարճնի...
 Քաղուի լոյս աչաց քո թշնամոյն,
 Քեզ միշտ հովանի բանն հայրական,
 Միջայլէ հրեշտակն քեզ պահպան,
 Աշխարհիս կենաս անփորձ 'ս անասան,
 Անմեղ 'ւ անարատ և անապական (էջ 69),
 Ի յամէն դիմաց բղխէ քեզ բարին,
 Եւ քեզ հովանի նշան սուրբ խաչին,
 Պահպան լիցի ուն հայրենին,
 Եւ փրկէ զքեզ ի լար վտանգէ:

Կոտ., Բ. պրակ, էջ ԲԾ:

Այս քնքշության հետ երևում է նաև մաքուր և ազնիվ տարփանքը դեպի գեղուհին, որ ինքն էս մի հրեշտակ է, հեռու թլկուրանցու հեշտալիք բորբոքումից, ավելի մոտ Կոստանդինին: Սակայն Աղթամարցու սերը դրա համար պակաս ուժեղ և կարոտակեղ չէ, նա էլ պակաս լի ալրվում, հալվում ու մաշվում և ծաղկի (68) տեսնելու նրան. նրա սերն էլ շղթայում, իշխում է նրան իր ուժով.—

Հանց սխասաթով իշնուս քան զխան,
 Դրիր զգերիս զընճիլ ու զընտան (59):

Բայց նա տանջանք բերում է միայն իր բացակայությամբ.—

Ունեբոզ է քաշած քան զթափած թուր,
 Թարթափոց քո թեք քան զնշտար սուր.
 Սպանանես գերիս օրն հազար բիր...
 Ոսկի ի Հնդկաց, ակն պատուական,
 Շուրջ դամ և փնտրեմ զքեզ անխափան.
 Ես հմ քեզ խնդրող և վաճառական
 Ի բազում մտաց ծածուկ 'ւ անցուման,
 Նայեա՛ց մէկ ընդ իս ալօքդ մէստան,
 Կամ քաղցրիկ խօսէ կամ տո՛ր պատասխան...
 Ով որ դու նաչիս և առնուս նատար,
 Լինի քան զմոմ՝ պոզպատ է թէ քար:
 Սիրով լափեցիր ու արիր սիրտս խոց,
 Կուտապիմ 'ւ ալթիմ որպէս զհնոց,
 Սրտէս կռթափի յուով հուր ու բոց.
 Զայդ աստուածապիծ պատկերոց քո ինձ ցոյց:
 Քո մէջքդ է բարակ քան զուռի վարոց.
 Սպիտակ ասամունք, մարգարտէ շարոց.
 Դու քաղցրատեսիլ և պտուղ ծառո՛ց.
 Այդ շիրին լեզուէդ տալ՝ քո երկու զրուց:

Քան զշամբայ հղեգն հլեր ևս շիտակ,
 Ունեռդ է կամար որպէս զաղեղնակ,
 Ալերդ է պայծառ որպէս դծովակ,
 Ղարդ հղայ ի ներս, հղայ անճարակ,
 Թարթափդ է խանլար՝ ինքն պաւղպատ զուտ,
 Այտով զիս հարիւր՝ և արիւր խուրդ ու մուրտ,
 Ամպի պես ամիր ինձ սաստիկ կարկուտ,
 Թէ ևս մեռանիմ քեզ շահ չէ, օգուտ (57, 59),
 Վտա՛կ Եղեմայ և գե՛տ Երրդանան,
 Սելովմայ աղբիւր և ջուր ևս յուզման,
 Անկեալ եմ հիւանդ մերձ ամ քո դրան,
 Սպասեմ հանապազ ևս ատղջութեան...
 Ելանես զնաս, ևս լինիմ յառաջ,
 Կամ խօսի՛ր ընդ իս կամ նստի՛ր ի յաջ:
 Գիշեր և ցերեկ եմ ևս երերուն,
 Ոչ կենամ ի դուրս, ոչ օգի՛մ ի տուն...
 Զարկած է վրադ քեզ կարմիր վրան,
 Բաղմիս ահաւոր՝ և ևս քեզ յանդիման,
 Սիրտս փափագի և կայ ի դողման,
 Ալերս է կարօտ տեսող աննման:
 Զիս՝ րդ քաժանիմ ի քէն կենդանի,
 Առանց քո տեսուդ շունչս կտքադի (62—64):

Իսկ իր սիրո ներկայութեամբ, սիրուհու տեսքը ոչ միայն չի ջախջախում նրան, այլ, ընդհակառակը, նրա սիրտը լցնում է մի անուշ բերկրալիք երջանկութեամբ, նրան հանգստացնում ու լուսավորում է և հոգով փարթամացնում (62)։

Պայծառ արուեսեակ ի յառաւօտու,
 Ես եմ քեզ փափադ, ի յիսնէ ևս հեռու.
 Իմ շուշան ծաղիկ, կարմիր վարդն դու...
 Լինի՛ թէ ալուերս քեզ արժանանայ:
 Իմ տուն իմ սրտի՛ և իմ ուրախութիւն,
 Իմ ջունչ ու հոգի՛ և իմ կենդանութիւն...
 Բերկրութեան քաժակ, ոչ ապի՛ յայաթ,
 Ես եմ ծարաւեալ, արքո՛ ինձ մի կաթ... (67—68):
 Նոր գարուն հղև, և նոր առաւօտ...
 Նոր ձայն արձակեց, նոր նստաւ ի մօտ...
 Հեռացաւ ու գնաց յինէն տրամուքիւն,
 Եկն ևհաս ալսօր ինձ ուրախութիւն.
 Այլ փափագ չունիմ, իմ փափագս դուն... (69):
 Գեղեցկագեղ, քաղցրաբարբառ

Աէր քո ունի խորհուրդ անճառ,
Իմանալի արեւ պայծառ,
Լուսաւորեա՛ միտս իմ խաւար...
Նրեկեցան ծաղկունք յերկրի,
Նստցուք ընդ քեզ ի պարտիպի.
Նրգեցից ակէր քեզ, սիրելի՛,
Սիրտ իմ ի սէր քո տոշորի...
Քնակեալ ես դու յիմում սրտիմ,
Սրարեալ ունիմ պքեզ ի հոգիմ...
Թէ տեսանիմ զքեզ կրկին,
Լուսաւորի միտս իմ մթին,
Եւ տամ համբոյր շրթանց քոյին,
Նա՛ վերանամ ես ի յԱգին (80),

Աղթամարցիկն իր սերը բուռն ուժով երգել է երկու ամսամ. նախ՝ վարդու առաջակի ալլարանութիւնամբ, մի սիրալիկալով, երկրորդը դրած 1523 թ., որի մեջ այն մտտիւն է, ինչ որ մշուա երգերի մեջ. այն է՝ վիշտ սիրո բացակայութիւնից և հրճմանք նրա ներկայութիւնամբ. Աշուն է. վարդը չկատարւում, օտխակը անհանգիստ որոնում է վարդը՝ նրան գտնելով և վախճանալով նրա վիճակի համար, որ փորձանք պատահած լինի. նա անիծում է այգին, որ չի պահել վարդը. Միգուցե այգեգործն է արել այդ, կամ ծաղիկները քան պահելով՝ վրձն են առել, Մաղիկները պատասխանում են, թե տեղեկութիւն չունեն վարդի մասին. Սոխակը թաշուններին է հարցնում վարդի մասին. թաշուններն էլ բան չգիտեն. սոխակի ցավը մեծանում է. Այգեգործը միթիթարում է նրան, թի վարդը չի կտրել, կգա. Սոխակը ուրախացած օրհնում է այգին, և նամակ գրելով վարդին՝ իր վշտահար սերն է հայտնում և խնդրում է տեսակցութիւն. Վարդը ժողովում է ծաղիկներին ու ամենքի առաջ կարդալով նամակը, ինքն էլ նամակով պատասխանում է, թե սոխակը քիչ համբերե, և ժամագիր է լինում պարտեղում. Սոխակն ուրախութիւնամբ սպասում է. Գարունը բացվում է, բացվում է և վարդը.

Երբոր արեն ի խոյն եկեալ ժամանեաց,
Ամպն ի վերուտ ցողով յանկարծ որոտաց.
Քուսան ծաղկունք յերկրի հազարք հազարաց,
Վարդն շէր քի միջի, պլպուլն որոնեաց...
Յետոյ տեսաւ կանաչ զտերնն վարդին,
Այլ պատուական պայծառ որպէս զառաջին,
Վարդն էր վարսագրով ի մէջ գահոյին,
Մաղկունքն հաւասար երկրպագեցին (43),

Պլպուլն ուրախացած փառք է տալիս աստուծուն, որ իր աչքով տեսնում է վարդը թիկերի մեջ.

Երկրորդ շարանան տաղըք մի տեսակ շարունակութիւն է առաջինին։
Երր հետագած պլպուլը զալիս է այգին, ծաղիկները աչքալույս են տալիս
վարդին՝ թե դալիս է իր սոխակ սիրելին։ Սոխակը կանչում է զուժրիին
(տատրակին), որ միասին տեսնեն վարդի ելքը։ Նրանք վրան են խփում
պարտիզում, վարդի կանաչ թփի դիմաց, վարդը քնած է կոկոնում, սո-
խակը օկսում է երգել դադելներ։

Գիշեր ցերեկ կամ էրէրուն,
Եւ հսկ'ալրիմ ի դէմ վարդուն.
Թէ ե՞րբ ելնէ ինքն ի քնուն,
Փանի՞ կանչեմ զար իւր սիրուն... (46)։

Մաղիկները նախանձելով ասում են, թե բավական է անժամանակ
երգի, թող սոխակը ելնի գնա իրենց պարտեզից։ Սոխակը պատասխանե-
լով իր սերն է գովում և սիրտը բանում։ Վարդը նրան քաջալերում է, որ
ուշադրութիւն չդարձնի նախանձողներին և իր երգը շարունակի։ Մաղիկ-
ները դարձյալ ասում են — «Փանի՞ կանչեմ, մէկ պահ լսէ՛ք։ Սոխակը
պատասխանում է.

Անաց, թէ սէրն կունեղէ,
Որ վրայ վարդին աշըգ եղէ,
Սիրտս վկայ հետ իւրն հերթ,
Փանի՞ խոցէք, ասէք թէ ե՞րթ,
Հողմն շարժէ զվարդին թերթ,
Նա ի զողման դառնայ իմ լերթ...
Աղաղակեմ արտասուալի,
Ուշադրայ լերթամ հս ալլ տեղի (49)։

Այդ միջոցին վարդը հետզհետե կարմրում է, անմահության հոտ բու-
րում, պլպուլը սիրով արբենում և ուրախանում։ Վարդը տեսնելով, պլպուլն
անուշ երգում է.

Միծաղեցաւ ինքն մէկ պահ,
Պայծառացաւ տիպն քան զչահ.

և կարմիր գուլնով վառում է, իսկ սոխակը

Հոտոյն եղև իսև ու արբած (49 և հտն.)։

Վարդը, սակայն, ամաշկոտ է, ազատ չէ իր սիրո համար։ Թուլունները
կատակելով ծաղրում են սոխակին, թե ռվարդն չի նայեր ինքն երակա։
Նա տանջվում է, գանդատվում է վարդին, կասկածում է, թե մի գուցե
վարդն իրեն չի սիրում, և հավատացնում է վարդին իր սիրո անկեղծության
մասին։ Վարդը քաջալերում է նրան, որ երգի և իր՝ վարդի ահն ու երկ-
յուղը վերացնի.

Ջկանալ փարտէս հտ կուրանամ,
Ջքեղ որ տնտնում, ուրախանամ,
Այլ ի քեզնէ ոչ հեռանամ (50):

Պապուլը զարթնում է կեն գիշերին, վարդը փթթում է առավոտյան,
Սոխակը հափշտակվում է և մտնելով վարդի վրանը՝ սիրո դրամական
համբույր է ուզում: Վարդը, սակայն, սիրելով հանդերձ՝ դեռ անառիկ է,
նա միայն գովում է սոխակին, ուղարկելով դարձյալ ուրիշ ծաղիկների
մոտ: Հավատարիմ զուգրին միանարում է սոխակին և համոզում վարդին,
որ պապուլին քնտրե և ոչ ուրիշ թուղունների: Բայց վարդը պատասխան
ուշացնում է.

Եղև պապուլն թնաթափ,
Թէ ե՛րբ ածեմ զվարդն ի յափ.
Թանի՜ ֆիրդան կանչեմ անշափ,
Ի դէմ վարդին հարկանեմ ծափ:
Ի ձեր սրտին դուք սէր շունիք,
Վասն այն զիմ ձայնըս շրնդունիք:
Վարդըն կ'ասէ. «Մ'ենե՛ր հերիք,
Ես կուկանչեմ, ունեմ կարիք» (52 և հտն.):

Այս վեպի մեջ գործողությունը սիրավեպի մի սքեմա է. բայց դրա
զեղեցիկությունը գործողության մեջ չէ, այլ սիրո զեղզեղանքի մեջ, որ
բարեբանում է ցողաթուրմ պարտիզում, զեղազարդ բուրմունքի մեջ, սի-
րատարի սրտի այն խռովաժուլի նվաղումների, անհանգիստ որոնումների
ու սպասումների մեջ, երբ սերը հեռու է կամ անպատասխան, և այն դաշն
հրճվանքի մեջ, երբ հույսը զորանում է:

Ե. Աշխարհիկ երգ, ուրախություն:—Մենք ունեցել ենք և բուն խրախ-
ճանքի երգեր:

Ներսես Ենոբյանի չալաստանի անցած փառքը ողջայիս գրում էր
հարսանեկան ուրախության համար.

Մ'ւր պարարակ եղև ամուլին.
Ջիարդ ի քեզ ոչ գնանին,
Եւ կամ մատռուկէրն բաժակիբ
Ջի ոչ թաշխն զանայր զինին.
Ուր բարեկամք գուարճակիքք...
Ուր քաղցրահամ երամշուի
Կամ զեղզեղումն եղանակի...
Ուր են աղատքն ի տաճարի
Կամ տեառնորդիքն ի ծաղկոցի...
Մանկունքք քո զուարճալի
Նրման նորոգ բուրաստանի,

Դատերը քո պաճուճալի:
Յերգ և ի Բնար միշտ ի խաղի (12—16):

Այս խրախճանքի երգերից դժբախտաբար ոչինչ չի մնացել մեզ: Կյանքն ինչքան էլ ավերածությունների պատճառով դառն լինելու, բայց: ունեւր և իր ուրախության պահանջը, և աշխարհականների մեջ անպայման շարունակվել են ուրախության երգերը, որ հիշում է Սիդնին, Կրոնավոր-նեւրը, սակայն, դժվար թե շատ վաղ սկսեին մշակել ուրախության երգը, որի մեջ փառաբանվեին միաթամանակ կին ու գինի, պար ու նվագ, սիրով՝ կեր ու խումբ բնության ժողով: Դրա համար պետք էր, որ մտածությունը բուրբուխն ազատվեր միստիքական մղձավանջից և մարմինն ոչ միայն սիրո կողմից, այլև կնոթութեամբ՝ սրվեր կատարյալ ազատություն: Թլկու-րանցին (+1525) նույնիսկ, որ հոգով սիրում է, ինչպես տեսանք, ուրա-խությունը բնության գրկում, Եջթեն բուրբ վզին, սիրով՝ խմէր զանուշ գինին, այդ լավ է համարում, եթե լինեն մահվան օրն ու դժոխքը և դա-տաստանի սարսափը: Նա նույնիսկ արեւոյթյան դժմ գրված մի տաղում՝ խրատում է— Եթէ սէր ունիս հետ Լիստուծոյ, դու զգինին ու բողջ ատէ. գինին է մայր ամենայն լարեաց... Քան զգինին յետև հաղէն երկու երեք՝ այլն անշահ է: Այսպիսի հայացքի տիրը, բնականաբար, ինչքան էլ սեր-երգեր, չէր կարող խրախճանքի երգ հորինել, և եթե երգելու լինեիր՝ պիտի դիմեր այլաբանության:

17-րդ դարու սկզբի տաղարաններում գտնում ենք մի քանի ուրա-խության երգեր, ուրեմն ամենից ուշը 16-րդ դարու երգեր, որոնց մեջ գինին և խրախճանքն են փառաբանում: Սարկավագ Բերգակցին (թերեւ-այն սարկավագը, որի մի սիրո երգը Կոստ., Բ., եր. 60-ում աղավաղված երգել է խառնակոնիսի Քուշակ Նահապետը) գտնում է խաղողը (Կոստ., Գ., եր. 67) իբրև մի ժամահաճութեան պտուղ, որ բուրբ պտուղներից գեղե-ցիկն է և նրանց թագավորը:—

Թելդ քաշած է յոսկւոյն միջէն,
Դու մարգարիտ ոսկի ջարած,
Քո մէկ պտուղդ ատէ ճուհար,
Տպազիոն ական ու դահար...
Ջրեզ հրեշտակն երեւ Նոյի,
Որ քո պտղովդ ուրախանայու

Այս առանձին սիրով պատմում է գինի պատրաստելը, գինին, որ մարդու սիրտ բաց է անում, սիրով մոռանալ տալիս լարակամությունը և ներող է դարձնում մարդու:

Յորժամ խմէ աղքատն ի քէն,
Որ զհացն և զջուրն մոռանայու:
Նա և լինի տէր աշխարհիս,

Արարածոցըս պատապար
Յորժամ խմէ կոյրն ի քէնէ,
Որ ի մօրէն ծնեմ խաւար,
Հանց քաղաքաց տալի մեկնութիւն,
Որ չէ տեսներ, չունի խաւար
Յորժամ խմէ մունճն ի քէնէ,
Որ ի լեզուէն քամ ու տկար,
Ջերտ զթութակն առնու լեզուն,
Մասխարանայ, քան զգիւահար:

Շատ պարզ երևում է արդեն գինու սիրահար զվարթ երգիչը, որը, ասակայն, չի կարողանում հեռ ազատ երգել և ինքն իրեն հանդիմանում է դրա համար:

Ո՛վ Սարկաւա՞դ Բերդակացի,
Դու ի գինւոյն ի՞նչ շահեցար,
Այնչափ ունիս սէր հետ գինւոյ,
Որ քովեցիք սրտովդ յօժար:

Ընդ Սարկավադն իրեն արդարացնում է, թե գինին չէ երգում, այլ պատարացի թրածակը, որ ռեզոն է լուսարար, քանի որ ասանց գինու թռչ ժամ լինի, ոչ պատարագ: Գինու գովքն, ուրեմն, դեռ այն քրդաված, այլարանական, անհամարժեք վիճակի մեջ է, որ ունեւ սկզբում նաև սերը:

Նույն նյութը ավասն իւզդոդի» (Կոստ., Գ. 63) մշակել է Աստվածատուր անունով մեկը (1817 թ. ձեռագիր), պարզաբար իբրև գինու գովք, զվարթ և ուրախ:

Ա՛յ լի՛ց ու տու՛ր, ա՛յ լի՛ց ու տու՛ր,
Անապակէդ ա՛յ լի՛ց ու տու՛ր:

Կրկնում է շարունակ երգիչը:

Սկզբում, բոլոր պաղաքեղներին առաջ, այգում խաղողն են տնկել, ասում է, և բարձր ձայնով գովել, ապա պատել են այգին, պայծառ ծագիկներով ու պտուղներով լցրել ու գինու գովքն ասել:

Քո կոճերդ է՛ի կանգուն,
Ողկոյզն մեծ և քաղցրագոյն,
Պտուղն ի վառ դէմ արևուն
Քան զկանթեղ մէջ գիշերուն:
Ա՛յ լի՛ց կն:

Ապա նույնպես պատմում է գինեգործությունը և գինու գործածու-
թյունը պատարագին, բայց ոչ արդեն աշխարհիկ մտքով:

Քո անունդ լինի բաժակ,
 Որ դուն ի շուռ գաս համարձակ...
 Դու ես գունդով զէտ մանուշակ,
 Կարմիր եազութ անն սուտակ,
 Քեզ քահանայքն են մատուցակ...
 Սարկաւագունք յառաջ եկին,
 Սաղմոսելով մեծարեցին,
 Տարան դրին եկեղեցին,
 Եւ սուրբ խնկօք զարդարեցին:
 Ա՛յ, լի՛ց ու տո՛ւր...
 . . . Զգաւաթն ի լի արա՛ ու տու՛ր
 Թո՛ղ շատ ապրի՛ս ի՛մ խալատու՛ր:
 Ա՛յ, լի՛ց ու տու՛ր...

Իսկական ուրախ զվարճության գիներգու է Մարտիրոս Խարաւարցին իր երկու երգերով, որոնք հորինված են այբբենական սկսվածքով (Կոստ., Բ. 47 և հան.): Սա ոչ թե գինին է երգում, այլ գինարբուքը, տոնական հացկերություն (հր. 49)՝ հյուրերի ու դրացիների հետ մի ուրախ ազգային դիպքի առթիվ: Բազմական են քահանաներ, հյուրեր, դրացիներ և ուսմիկներ, որոնց հոգսը տանում է երգիչը: Գինին գովվում է արդեն իբրեւ նպատակ, և երգիչն ուրախանում է, որ ձեռքին ունի նորից անուշ, պարզ, անխառն գինու գավաթը, և կամկար շատ ուտել-խմելը տանձ ու խնձորով, նուռով զարդարած սեղանի շուրջը և ժողովներով զարդարած կարասի շուրջն ուրախանալը ու նոր կարաս բանալը հրճվանք է պատճառում նրան:

Այսօր տոնեմք, ձեզ աւետի՛ս,
 Ահա ցնծամք յայսմ տոնիս,
 Բարով տեսալ գաւաթն յափիս.
 Աւետիս տամ Հայոց ազգիս...
 Ինձ մեծ աման տու՛ր թէ՛ ունիս,
 Ի քեզ նայեմք երիցանիս,
 Լի՛ց տու՛ր, հղբա՛յր, ի՞նչ կու նայիս,
 Աւետիս տամ Հայոց ազգիս:
 Խնդամք ամէն շուրջ կարասիս,
 Խորվենք հոգ տաք ոլիւրդի միս,
 Սաղկունք բերենք մէջ ժողովիս,
 Աւետիս տամ Հայոց ազգիս:
 Ժերմակ գինի, լաւ դեղ սրտիս,
 Ընշակն անոյշ, համն ա՛ռ տն՛ս.
 Մեք այլ ալտից, խմենք ալտից,
 Աւետիս տամ Հայոց ազգիս:

Յարի՛ ի վեր, հաշտեա՛ց ընդ իս,
Յարի՛ խմէ՛, համբուրէ՛ զիօ,
Նոյնպէս ամէն ժողովրդիս,
Աւետիս տամ Հայոց ազգիս (49 և հտն.):

Սերբ, հաշտութեան համբուրբ, հյուրասիրութիւնը, պատմելը, ան-
նենգ սիրտը, միաժամանակ սիրո թարեմադրութիւնները, ազգի հոգսը
և ունեւիճակ, և ծաղրը, ծիծաղը անբաժան ընկերներ են աշխարհի ուրախու-
թիւններին:

Այսօր խմենք քաղցր և յորդոր,
Բարեկամաց ի հետ բոլոր.
Գինիս աղէկ, ճաշակն աղւոր,
Անո՛յշ խմենք քաղցր և յորդոր:

Դա ազատ ուրախութիւնն է լավ խմողի, որ սիրում է զինին ու
խնդրէ իր բոլոր օրտով և առանց քաշկերու ի ցույց է դնում մարմնա-
պաշտութիւնն առանց որևէ շնորհալիութեան և խորութեան, այլ, ընդ-
հակառակը, մի տեսակ կոպտութեամբ, պարծենկոտութեամբ, որ ինքը
կարողանում է լավ խմել. ժջի խմող մարդ է ծովի խորը:

Այո՛, խմենք քաղցր և յորդոր...
Հիծեալ մաշիմ գլուխ ի կոր,
Փառասիրիմ մարմնով զինչ հոր,
Քճճ, Մարտիրոս, զինով խոշկոր,
Անոյշ խմենք քաղցր և յորդոր (49):

Ո. Նաղաշ Հովնաթան⁵:— Խրախճանքի ամենից նորր և ազնիվ ու ճա-
շակավոր երգիչն է Նաղաշ Հովնաթանը՝ ծնված 1661 թ. Շոտթ գյուղում,
և իր հայրենի գյուղում էլ վախճանված 1722 թվին: Սա իսկական բա-
նաստեղծ և նկարիչ է, որ շատ եկեղեցիներ զարդարած է եղել իր նկար-
ներով, մի ժշտորհալից վարպետ իմաստուն, լավ ծանոթ իր ժամանա-
կի ուսմունքներին, շատ ճանապարհորդած, իբրև սարկավազ մերթ ժա-
ռայած եկեղեցում, շատ հարգված և զիրք ունեցող մի մարդ:

Նրանից հայտնի են 26 տաղ, որոնցից մի քանիսը կրոնական և
խրատական ու երգիծական են, մեծ մասը սիրո և ուրախութեան:

Նաղաշ Հովնաթանը խոհուն մարդ է և կորովի, բարոյականութիւն
որոնող. նա շատ մարդ է տեսած և ավելի շատ մտածած. իր բանա-
ստեղծութեան մեջ մենք տեսնում ենք մի ամբողջական աշխարհայեցո-
ղութիւն, որով քրիստոնեական ոգին և աշխարհասիրութիւնն արդեն
հաշտված են, ինչպես արդի մարդու համար, և վերջ է տրված մեր հին
բանաստեղծութեան ցավագին շեշտերին: Դա մի աշխարհական հայացք
է և ոչ կրոնական:

⁵ Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1810 թ.:

Ճիշտ է, աշխարհս նրա համար ևս սուտ, անցավոր մի երազ է, խաբերա և անհավատարիմ, բանի որ ղէս զիշեր հոգիդ ի բաց պահանջինս, և մարդ պիտի դատաստանին ներկայանա,— բայց աշխարհիս ունայնութիւնն ու մահը նրան այլնա սարսուռ չեն ազդում և քնով չեն պղտորում նրա պարզ ու քնքուշ հոգին: Որովհետև եթէ աստված մարդու համար անկել է այն կյանքի արքայութիւնն դրախտն իր պտուղներով ու ծաղիկներով, իր լուսավոր թթնաններով և հրեշտակների սաղնորով ու տաղներով,— նա և մարդու համար այս աշխարհում պարգևել է զարնանային դրախտը, հացն ու գինին, «աստվածազարդ սեղանը» (85, 88, 90 և այլն): Պետք է, որոհմն, և այս վայելել և այն շնորհալի, «Մարմնաւոր ուրախացէք, հոգևորին մի՛ կենայք ծովս» (85). «Մարմնով խմէք, ուրախացէք, հոգով մեղաց զղջացէք» (88),— այս է նրա ամբողջ աշխարհայացքի սեղմ արտահայտութիւնը:

Հոգևորի համար քավական է միայն, որ մարդ արդարութեամբ ապրի, և նա դրա համար տալիս է իր գործնական խրատները՝ «նրա տալիս անի վասն հոգւոյ» (Եր. 75). չլինել հպարտ, ապերախ, նախանձոտ, ունենալ սնը, լինել աղքատախնամ, ծնողասէր, շար լանել ուրիշներին, չսիրել հայհուանք, աղքատի դատաստանն արդարութեամբ վարել և առհասարակ արդար լինել հարաքերութիւնների մեջ. ժամ զնալ, աղոթել, ջախտուել վարդապետն ու քահանէնս, նրանց օրհնութիւնը տնից անպակաս անել, որովհետև «նոքա ձն մեր կերակրին աղըն»,— բոլորը սովորական ավանդական խրատներ, որ Հովնաթանը մանկութիւնից սովորել է:

Այս են այն գործնական խրատները, որ տալիս է Հովնաթանը, սրանք ուղիղական քարոզներ են, բայց տոյպիս համեղ և անուշ աստված, իսկը ժողովրդական ձևով ու մտածութեամբ և շնորհալի կերպով, հանգիստ ու խաղաղ սրտով և այնպէս ծանրութեամբ ու կշռով, խորը համոզված իր ասածին, և քնական ձևով, առանց որևէ արվեստականութեան, որ այդ տաղը մեր խրատական մեծ տաղերի տեսակի (և ոչ քառյակների) մեջ կարելի է ամենից աղնիվը և գեղեցիկը համարել:

Այս ավանդական խրատներին, սակայն, մի քան նա գուրս է անում,—

Պաս կու պահես ու սէր շունիս՝ էն ասն՝.

Ի՛նչ ոգոտ սատանայէն՝ ամէն օր պաս է,

Որ անգեղջ նախանձոտ շար ու վասվաս է.

Անշէջ կրակն է նորա եաթաղըն (77),

Պաս պահելը, մարմինը տանջելն, որոհմն, ոչ մի արժեք չունի հանդերձալ կյանքի համար: Այսպիսով մի կողմ է դրվում մարմնատանջ ճգնաժամական միտքը, և րանառեղծ լարող է ազատ կերպով, հանգիստ խղճով «մարմնաւոր ուրախանալս, առանց հոգուն վնասելու եր-

կլուզի. Մարմինն իր պահանջն ունի և նրան բաժանելուց թողնելու պիտի տայ իր պահանջի համեմատ. հոգին էլ իրն ունի, նրան էլ օտարացրութեան խօսքերը հաստատելով պիտի բաժանակալութիւն տալ. Այս երկուսն ալլեւ իրար չեն խանգարում:

Մի անգամ որ մարմնատանը հայացքը գնն է գրված, աշխարհի ունայնութիւնն ու վերահաս մահը նրան ալլեւ ոչ միայն արգելք չեն լինում մարմնավորական ուրախանալուն, այլ նույնիսկ պատճառ են դառնում, որ մարդ վայելի և, որքան կարելի է, շատ և լավ վայելի այս աշխարհի բարիքները: Մասնը գինի լից տուր խմեմք, ասում է նա, զձերա յաշխարհս օր քան զօր լարըն կու շատանայ (86), որովհետեւ Եկեցեալ օրին օր չի հասնիւ (90), և Եկաօր քանց վաղըն աղեկն է (68), որովհետեւ ԵՄուտ աշխարհըս անցաւոր է, մարդըն երազ կու նմանիս (եր. 85) և մարդ իր հետ ոյիւն լի տանելու, օտարացրիս մալըն կու մնայ աշխարհիս վերան (91), ուստի մարդ զքանի սաղ է՝ ամէն խմիս (58):

Կյանքը շատ կարճ է, ուստի պետք է բուզեն ձեռքից լթողնել՝ վայելութիւն անելու համար:

Այլ կե՛ր խըմէ՛ հետ ընկերաց,
Քանի որ ֆրսանդ կայ ձեռաց,
Գալ տարի ով սաղ, ո՞վ մեռած.
Նարանք, եղբա՛րք իմ, ցնծալով,
Ուրախութեամբ և պարելով,
Մափըս ծափի հարկանելով:
Է՛ր պարապ կու մնաս, սաղի,
Ֆալաքն է մեր յօմբին հաղի.
Աշխարհս մեզ լէ մնալ պաղի,
Լի՛ց, տո՛ւր, եղբայր իմ, ցնծալով,
Ուրախութեամբ և պարելով,
Մափըս ծափի հարկանելով (78):
Նաղաչն որ այս դառըն կեանքըս մէկ օրէն հիւր է,
Վաղըն մեռելիմ՝ կասեն Ենաղաջ Յովնաթան ո՞ւր էս.
Մեզ ողորմի տվողի հոգւոյն անմահութեան հոտըն բուրէ.
Սիրով խըմէք, խաղաղութեամբ ուրախ լիցուք (86):

Եվ բանաստեղծի սիրո և ուրախութեան երգերը, տոգորված այս մտքով, մի առանձին հրապույր ու գեղ, ավելի խորութիւն ու ներքին բովանդակութիւն են ստանում, մանավանդ որ նրա ուրախութեան երգերը երբեք հոգու պահանջը չեն մոռանում իր ուրախութեան վայրկյաններին.

Ապա ում սրտի քէն ունի՝ հանի, հաշտութեամբ մընայ,
Լավ մարդըն այն է՝ ոնց որ եկալ՝ ալլ այնպէս գնայ (81),
Սիրով խըմէք, խաղաղութեամբ ուրախ լիցուք,—

կրկնում է նա մի երգի մեջ (85)։

Աստուած սիրեք՝ ում սրտում նախաձեռն է կայ՝ հանի (85)։
Թոյլ միք տալ, որ եղբայրութեամբ քէրն հովանայ (86)։
Պարտիմք ընտրել զբարութիւնս, մերժել ի մէնք զլարիս (87)։
Թէ ձեր մէջըն խոսով մարդ կայ՝ ելէք սիրով հաշտեցէք (88)։
Մինակ մի՛ ուտէք, բաժանեցէ՛ք, հաւասար շարէ՛ք (82)։
Եկայք այսօր ժողովեցէք, ընկերք միաբան,
Պարկեշտութեամբ բազմիլ սնդան, եղբայրք պատուական,
Զուարճանալով արասցուք սէր և բարեկենդան (90)։

Այս պատճառով Հովնաթանի ուրախութեան տաղերը մեր հին քանաստեղծութեան ամենից զվարթ և լուսավոր երգերն են, որոնց մեջ կյանքի հրճմանքն արտահայտված է ամենազորեղ, միաժամանակ և ազնիվ շնչաբերով։ Նրա երգը այլևս լավ ուտողի մի սին պարծանք չէ, կոպտաբար փառաբանող ուտել խմելու հաճույքը, ինչպես մի Մարտիրոսի հրդ, այլ բարոյախոսի ու ճաշակավոր արվեստավորի մի նուրբ ու գեղեցիկ վախճալութիւն, որի մեջ ամէլի շատ հոգեւոր զվարճութիւնն է տեղ բռնում. նրա սնդանը ինքը ոչ միայն բարելի է, այլև զարգարուն է—

Սնդանըս լի է ծաղիկ (68)։
Սնդանըս լցեալ միրգ ու ծաղիկ,
Զլինի վեր քաղեք (81)։

... Վարդ ըսեհան և դարանֆիլ ծաղկունք խորհրդաւոր...
Նարգիզ, զամպաղ և սուսամբար, հասաման և սրմպուլ (85),—

դրված է միշտ գեղեցիկ բնութեան մեջ և մարդիկ ուրախանում են՝ ծափ տալով ու ցնծալով, երգելով և աստօնն փառք տալով, իրար համբուրելով և մեծարելով։

Բերէք տաղարան շարական,
Թողէք մանկունք ձայնիւ կարդան (71)։
Կանչէք տաղեր և շարական (79)։

Սաղերն անէ՛ք, տաղերն կանչեցէ՛ք, ծափ տուք և պարէ՛ք (82)։
Մանկունքն երգեն տաղ շարական քաղցր որպէս բլբուլ (85)։
Ո՛վ մանկունք սուրբ եկեղեցւոյ, քաղցր ձայնիւ երգեցէք (88)։

Հաճույքը ստանում են ոչ թե գինիներից ու կերակուրներից, որոնք լոկ պատճառ են լինում սրտերը բանալու, այլ ամէլի բնութիւնից, գեղարվեստից և մարդկանց բարեկամութիւնից։

Զգիտեմ ընկերներին ով ամէլի լավ սրտի խոսք է ասել, քան այս նազաշը.—

Այսօր ուրախութեան օր է,
 Քասէրը՝ կարգաւ բոլորէ՛...
 Եղբարք նստած շարէշար,
 Որպէս թագ մարգարտաշար...
 Պարոնայքն պատուելի,
 Մէկ քան ըզմէկ սիրելի...
 Դուք որպէս աստղ պայծառ էք,
 Վարդ և կնդրուկ հոտ առէք,
 Քաղցր ձայնիւ բարբառէք... (67).
 Նորահաս մանկունք հանճարեղ,
 Խելքըն բոլոր, խօսքըն համեղ,
 Ձեռքնեքն վարդ ու զամբող.
 Հոտ առէք, եղբայրք, ցնծալով,
 Ուրախութեամբ և պարելով
 Մահըս. ծափի հարկանելով (78):

Այս ուրախ ընկերութեան մէջ վատ մարդ չկա, որ բնիկ խոսքի
 չհամբերելով մեղիսն աւերիս, այդպիսին դուրս է ձգում (78), նրանք
 բոլորը սիրով լի են և սրտով պայծառ, ինչպե՞ս նրանց շրջապատող
 ընկերունք և օրը, որ հենց սիրտը բաց է անում և ոչ գինին,—

Այսօր նման է վարդի,
 Եւ ծառոց ծաղկազարդի,
 Սիրտ կու բացուի շատ մարդի (67):

Գեղեցիկ ընկերունն իր զարդարանքներով անհրաժեշտ պահանջ է
 խրախճանքի համար.—

Զի՛ման լինի կանաչ խոտ,
 Մանուշակ սքմալուի հոտ... (68):

Նորափոր գնացք առուոց փրփնջագոյ պաղպաղունակ...
 Այլ և ցուրտ աղբիւր բղխեալ քաղցր և անուշ խիստ գովելի,
 Աւազան ջրով լցեալ պարզ և մաքուր որպէս հայելի...
 Թունկ և կուժ գինով լցեալ ի մէջ ջրոյն սաստիկ ցրտացեալ,
 Զրոյն երեսն միւրդ և ծաղկունք, վարդ բո՛հհան,
 Խնձոր կարմրացեալ (74):

Ցաւուրս դարնան ժամանակին՝
 Փթթեալ ծաղկեցաւ ալգին.
 Հնչէ քաղցրը ձայն տառիակին... (77):
 Վարդըն որ փրթրթեալ բացուի և այլ ծաղկունք զանազան,
 Մահոց պտուղ անուշահամ, հոտ կընդրկի պատուական,
 Մէջլիսըն զարդարեալ ցնծալ գինչ դրախտըն եղեմական...

Անմահութեան հոտըն բուրդ աստուածազարդ սեղանէս (88)։

Մեր առջեւ կանաչ պաղլա, ծաղկունք և լիման,

Աստուածազարդ սեղան հոգալ աշաց յանդիման... (60)։

Քնութիւն մի հրճվալից գովք է Զտուկի տաղը (103) և թի վերայ զարնան և ուրախութեանս (107)։

Այս կենսութիւնը երգիւր, հակառակ նարեկացուն, որ մեռնելուց հետո ուղում էր, թե իր գիրքն ուրիշների բերանով աղոթեմ, մի բան է միայն ցանկանում մնացականներին, որ իր մահից հետո էլ նրանք ուրախանան. «Յիշեցէք նաղաշ Հովնաթան, ածէք խմէք կարմիր կթխան» (71), հաճութիւն կրկնում է նա։

Այս միևնույն կենսախիղ հայացքով նա երգում է և սերը, որ հյանքի խնցույթի մի մասն է, կիներ, բնութիւնը։ Գինին և երգ ու պարը տնրածան մի ընկերութիւն են կազմում նրա ուրախ ու բախտավոր հյանքի համար, և թե խրախճանքի երգերի մեջ կիներ երևան չի գալիս ընկերների հասարակութիւն մեջ, որովհետև սերը սրտի ծածկարանում է, երգերի մեջ, սակայն, անբաժան են գինին, երգն ու բնութիւնը։

Սիրո լամենայով ժամանակն է օրհնյալ զարունը (41, 50), երբ քաջովում է պարտեղի վարդը, որով զարդարում է սիրականն իր գլուխը, պարտեղ տանելով (40) գինի մազայ և ուրախանում (39), թաւ տալով տարփավորին (36), ծաղիկ քաղելով ու ծիծաղելով, բաղչի նման զարգարված գեղուհին, ինքը մի նոր կանաչ պարտեղ։

Նս տաղ կանչեմ, դու է՛լ խաղա (38)։

Պաղլի մէջըն մեկնենք խալի,

Սեղաններ՝ գինույ սիրահի,

Պաղ տուր, որդիդ Աստուած պահի (41)։

Վարդըն ձգեցիր գոգիս մէջ, գոգիս...

Թասըն գէպ ինձ մօտ իմեցիր (41)։

Թող Յովնաթան մէկ տաղ ասէ քո թասին (42)։

Դու քո ձեռքն թաս մի՛ խմեր,

Նկ միատեղ նստեմք սեղան (64),

Մէկ ձեռնիդ գինույ թասըն,

Մէկ ձեռնիդ սմբուլն (66, 54, 59)։

Նա նույնպէս ազատ, անվախ վայելել է ուղում սերը, որովհետև այստեղ ևս երիտասարդութիւնը շուտ անցնում է և մահը վերապաս է։

Մեցիդ շամամներն խիստ է նորահաս,

Վախեմ թէ թառամի, շատ մի՛ կենար պառ... (63)։

Նոր փռուած վարդի նըման ես,

Ափսո՜ս որ խիստ շատ նազ կ'անես.

Գնաց դովրան՝ կու փոշմանես... (43)։

Գու էլ կու մեռնիս, լեւ անմահական,
Ինձ է՞ր կու պահեն տըխուր տրտմական (63):
Գիտեմ որ դու քանց զիս սիրոյ թամահ ես.
Նըռներդ հող կու դառնայ, է՞ր պինդ կու պահես,
Թող համբուրեմ օրհնեմ, հոգով դարդարուես (41):

Այս միևնույն հայացքը գտնուի ենթ նաև մի հայրենի մեջ.—

Թուխ այց ու ունքեր ունիս, լայն ճակատ ու կարմիր երես,
Այդ ճերմակդ որ դուն ունիս, զշամամ ծիծերդ որ ի ներս,
Մեռնիս այլ անգին երթամ՝ զայդ ճերմակ ժողիկդ ի՛նչ առնես
Զամէն որդերն ուտեն, դու է՞ր դիս մահրում կու պահես (47):

Եվ հիմա այստեղ սիրահարի փոքր՝ ողոջել իր անառիկ գեղուհու՝
ցույց տալով նրան աշխարհի ոլնշուքյունը՝ մի ինքնարուխ խոսք է, իսկ
նաղաշի այդ խոսքերը թխոււմ են նրա որոշ աշխարհայացքից, այդ եր-
կուաը, սակայն, հոգով շատ մօտ են իրար, և նաղաշի սիրո երգերը,
ինչպես և հայրենները մեր հին սիրերգության մի-մի առանձին տեսակի
կատարելագործություն են, նույն ժողովրդական ոգով, մաքուր և
զգաստ, և նույնիսկ տարփալից վայրկյաններում նուրբ. հայրենները
միայն մօտ են ալիքի արևմտյան ժողովրդական երգերին, իսկ նաղա-
շինը՝ արևելյան: Այդ պատճառով է՝ մի կողմից նաղաշի երգերի, մյուս
կողմից հայրենների ու ժողովրդական երգերի մեջ ոչ միայն նույն ընդ-
հանուր ոգին ենք գտնում, այլև շատ մոտիվներ, արտահայտություններ.
դարձվածներ և պատկերներ ու դրություններ նույն են. նույնիսկ մեր
այժմյան հասկացողությամբ շատ ազատ, հեշտասեր Տների մեջ, որոնց
թիվը մի քանիսն է, Հովնաթանը չի հեռանում հայրեններից կամ ժողո-
վրդական երգից: Միայն մինչ ռուսերի կարգիչ սիրերգը, ժողովրդա-
կան քառյակներին մշակություն լինելով, սեղմ կերպով պարունակում է
ընդհանրապես սիրամիկից բազմազան միջադեպեր, շատ զաղափարներ
և արտահայտության ձևեր, Հովնաթանի սիրերգն անհատական կյանքի
արտահայտություն լինելով՝ համեմատաբար միատեսակ է թե՛ իր
հղացման, թե՛ իր ընդհանուր եղանակի և թե՛ արտահայտության ձևի մեջ:
Գծրախտաբար նրա կենսագրությունը լիտենք, բայց երգերից
երևում է, որ նա սիրվել է և մեկ անգամից ալիքի, և նրա երգերը ոչ
[թե՛] արվեստով հորինված ընդհանուր դրություններ են, այլ առնված
են ապրած կյանքի պատահարներից (48...), այսինքն երգիչը ոչ թե
ընդհանուր զգացումներ է նրգում, այլ իր սեփականը: Այդ պատահար-
ներն, անշուշտ, մանր բաներ են, բայց սրտի համար մեծ՝ և նա դրանով
հըջանիկ է:

Նրա յարը կամ հայտնում է, որ սիրում է նրան, կամ խոսք ուղար-
կում (35, 60, 46, 48), կամ ծիծաղում նրան (36, 39), կամ նամակ
գրում (36, 37, 39, 44, 47, 56), կամ բարե տալիս (40, 43), բարե ու-

լարկում (47, 48, 54, 58), կամ նրա մոտ գնում (40, 48), նրա հետ խոսում կամ վարդ ու ծաղիկ ձգում նրան (41), կամ նրա սիրով ծարավ է (42, 54), ծոցը նշանց տալիս (42), ծիծաղելով աչքով անում (44, 46, 49, 53, 65), խնդրում, որ պատկերը քաշէ (47), նամակ ուղում տարփավորի (47), մտիկ տալիս Նազաշի աշխատանքին (52), կամ նրանից վարդ առնում (65), կամ պայման և ուխտ դնում նրան (69)։

Բանաստեղծը նրա համար տաղ է գրում (44, 48, 52), ծաղկում (48), նրա պատկերը քաշում (47, 49), նամակ է գրում (47), խաքար խնդրում (58)։

Եվ այդպիսի կենսության ու սիրո մեջ բախտավոր երգիչը, որ բույնն լիակատար վայելել է ուղում, ընդ կարող իր խորքում տխուր սիրերգ հորինել, այլ միայն ուրախ. բայց և այնպես նրա երգերն իրենց արտահայտության հղանակով մեծ մասամբ տխուր են և շունեն այն հրեմվախից բնավորությունը, ինչ որ խրախճանքի երգերը, Այստեղ պետք է նկատի ունենալ երկու գրություն, նա իր սրտի ուրախ թրթիռն է միայն հայտնում իր տարփածուին, միայն [թե] ողբագին հղանակով, որովհետև նրա ուրախությունը շատ մեծ է, երգիչը լալիս, արտասում է, բայց ոչ թե տրտմության արտաստեք է թափում, այլ ուրախության, Մեծ ուրախությունը, շափազանց մեծ հաճույքը նույնպես է ազդում մարդու վրա և նույնպես հիմնովին քայքայում մարդու կազմությունը, ինչպես շափազանց տրտմությունը, և վերջ ի վերջո մի թախծալից հիվանդագին հանգստացնող վիճակի մեջ ձգում սիրահարին, Այսպիսի վիճակի մեջ է Հովնաթանն իր սիրով։

Այդ բուռն սերը, որ սքաղցր, միանգամայն և դառն է, ինչպես ասում է Սապֆոն իր մի նշանավոր սիրերգի մեջ, բնականաբար պետք է երգվեր դժբախտ սիրո ձևով, տխրագին եղանակով, որովհետև դա ևս տարփավորին ձգում է նույն հոգեկան անհասարակչություն և արբեցություն մեջ, որովհետև այդ սերը բուռն է անսահման՝ ուղում է փորձել սերը, եվ այս հատկանիշը ունեն բոլոր մեծ սիրերգուհիները, մասնավորապես արեևելյան, որոնց մեջ սերն ավելի կրքոտ ու խանդակաթ է, Երջանիկ սերը երգվում է դժբախտ սիրո ձևով, որովհետև այդ ժամանակ մարդս կորցնում է իր հոգեկան հասարակչությունը և բուռն հարբեցություն մեջ ձգվում. սկսվում հոգիս հանձնա, Եթե տխրում է նա իսկապես, ոչ թե նրա համար, որ լի սիրով և սեր է պաղատում, ինչպես Վայրենի կարգին մեջ, այլ կամ հեռու է սիրականից, կամ մի երկու օր լուր չունի նրանից, թշնամուց քաշվելով լուր չի ուղարկում, հետը շարունակ տեսնվել է ուղում, սիրականը Նազեր է անում։

Հովնաթանն այն երջանիկ վայրկյանին, երբ իմանում է, թե իր սերը փոխադարձ է, իր սերը երգում է նույն հատկանիշներով, ինչ որ Վայրենի կարգին մեջ դժբախտ սիրահարը, բայց մի մեծ տարբերությամբ, որ երգն այստեղ մեղմ է, հանգիստ, որովհետև արդեն իր էական պահանջը, որ է փոխադարձ սիրվելը, բավականություն է ստացած։

Ժմ հարբն նըստել զամով,
 Լեզուն քանց շաքար համով,
 Ինձ կու սիրէ իւր կտմով.
 Զա՛լում, ուրախ հմ, ամա՛ն, աման (35).
 Պաղումբն ժողիկ քաղես,
 Մածուկ ցէպ ինձ ծիծաղես,
 Կրակով աք՝րտա զաղես.
 Զա՛լում, չըվել հմ, ամա՛ն, աման:
 Գիր ես ցրել տոշխարով,
 Մէջըն լցրել շաքարով,
 Յովնաթանին յառ բարով.
 Զա՛լում, կարգացի, ամա՛ն, աման (36).

Այսպիսի մի երգի մեջ զգալու՞մ հնչյունն արդեն դառնում է փաղաւ-
 շություն, ինչպես և ժողովրդական երգի մեջ «Պուճուր աղջիկ, զալում
 ես»։ Նա զալում է ոչ թե իրոն թանգութիւն, վայրագ հարստահարիչ, ինչ-
 պես նշանակում է այդ բառն իսկապես, այլ իրբն մի շնորհքով ու հաշո-
 ղակ և կտրիճ, որ կարողանում է գրավել տարփավորին, և ծաղիկ քա-
 ղելով ու ծիծաղելով նայելով միայն սիրտը կրակով զաղելու, այրել,
 քայց ոչ անհույս տանջանք, այլ անուշ հաճություն բերող կրակով.
 Նույնպես ոչ թե հուսահատ օգնության մի ճիւղ է այլևս բամա՛ն, ամա՛ն
 բացականշությունը, ինչպես հին ժողովուրդը, այլ դա միայն ցույց է
 տալիս, թե ինքը որքան շատ սիրում է իր գեղունուն։ Եվ երբ որ նա նույն
 երգի մեջ իրեն ժողովուրդ (պարզու) է անվանում,— կամ հիվանդ է
 թխողված սրտով— այլևս ոչ ոք չի հավատում, թե նա իսկապես վըշ-
 տահար է, հիվանդ, այն մտքով, թե զժքախտ է, այլ դա միայն ցույց է
 տալիս, թե սերը որքան հաղթահարե է և չարդում է նրան։

Եվ վերջապես նույն երգի մեջ յարի խոսքը, թե սիրում է երգչին,
 միայն ավելի ևս բորբոքում է նրան՝ թուօսք սիրտըս կու էրն, և նա
 ավելի ևս կարոտում, ծարավում է իր տարփածուին ու ցանկանում նա-
 րանոր տենելի լուրեր ստանալ նրանից, ցանկանում է, որ նա իր ծա-
 րավը հագեցնի և համբուլքով բժշկի իրեն։ Բայց որովհետև այդ չկա,
 ուստի նա և դանգատվում է և գութ հայցում, ինչպես ապերջանիկ սի-
 րահար։

Այսպես, ուրեմն, նազաշի երգերով մեր քնարերգությունը կատա-
 րելապես աշխարհականացել է, նա արդեն նոր ժամանակի երգիչ է։
 Նրա երգը պետք է երևան գար ոչ թե 17-րդ դարի վերջերում, այլ 15—
 16-րդ դարերում։ Բայց 14-րդ դարու վերջերից Հայաստանը Լանկթա-
 մուրի արշավանքից սկսած (1387 թ.) և նրա մահից հետո սոսկալի ա-
 վերածությունների ենթակա եղավ զանազան բռնակալների ձեռքին
 կռիվների ապարդիւ զառնալով, քաղաքներ ու գյուղեր ավերվեցան,
 գերություն, սով, գաղթ, կոտորած... Ապա օսմանցոց և պարսից շահե-

րի մեջ ձաղաթ պատերազմը, որ 250 տարուց ավելի տևեց (1473 թվից)՝ մերթ օսմանցոց, մերթ պարսից ձեռն անցնելով. մինչև 1639 թ. հաշտ-վեցին և նրապիս ու կուր գետերի մեջ եղած երկիրը անցավ պարսից, և ութսուտ տարու լայն մեր արգեն բուրդովին ավերված երկիրը խաղա-դություն ունեցավ, երբ հայոց մեջ սկսվեց վերածնության շրջանը:

Այս խաղաղության շրջանի որդին է ահա Նաղաշ Հովնաթանը, որ ապրել է պարսից համեմատաբար բարձր և կառավարության շրջանում, մի լիառատ ժամանակ, ինչպես նկարագրում է Զաքարիա Խարկավա-զը, որով և հասկանալի է և նրա երգերի ուրախ բովանդակութունը: Այդ ժամանակ և նոր պարսկական ազդեցութունը գործում է հայ ժողո-վրդի վրա և դրա հետևանքն է, որ Նաղաշի երգերը իրենց վրա կրում են արգեն պարսկական բանաստեղծության ազդեցությունը, ոչ միայն բառերի և պատկերների, այլև ոտանավորների վրա. նրա գործածած լայն արգեն երբեմն տարբերվում է մեր հին բանաստեղծական մա-թուր շեշտական չափից, և երբեմն դարձել է զուտ վանկական, մոտիկ ֆրանսերենին: Նրանով իսկապես փակվում է մեր հին երգիչների շար-քը և սկսվում է նոր աշուղների շրջանը: Նաղաշը միշին տեղն է բռնում հնի և նորի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐՈԳՈՒՄԸ 17—19-Դ ԴԱՐԵՐՈՒՄ

16-րդ դարը և 17-րդ դարու առաջին քառորդը հայոց կյանքի և գրա-կասության ամենից անկյալ շրջանն է: Մահմեդական թուրքերն էին բարձրացել բյուզանդական դահի վրա և իրենց պատերազմական բնա-վորությամբ, շարունակ արշավանքներ էին անում՝ ավերելով թե՛ իրենց և թե՛ դրացի երկիրները: Հայաստանը, ինչպես առաջ, ավերիլ պատե-րազմների ասպարեզ էր երկու մահմեդական, քրիստոնեության և քա-ղաքակրթության թշնամի պետությունների մեջ, Մի կողմից տաճիկներն էին ավերում և սոցա թողածը՝ պարսիկները:

Եթե այդ՝ դարեր շարունակ տևող պատերազմների մեջ քիչ ու շատ լինում էին կարճատև խաղաղության շրջաններ՝ այդ ժամանակ էլ ժողո-վրդը կրոնի պատճառով հալածված, ճնշված հարկերի տակ, ենթա-կա կեղեքումների:

Անկումն իր վերջին ժայրն հասնում է 17-րդ դարու սկզբին, երբ՝ պարսից Շահ-Աբաս թաղափորի ձեռով երկրի ավերմունքն յուր վերջին ժայրն է հասնում—հարյուր հազարավորների բռնի գաղթեցնելով, և ապա սով ու ջալալիք:

Այդ վերջին ավերմունքը և վերջին հարվածն է տալիս հայոց հին բաղաճակրթությանը, որ արգեն նվազած էր շատ: Հայերն այնուհետև կամ պետք է ունեանային և վայրենանալով ընկնեին, և կամ, եթե ազգի մեջ կենսունակության դեռ ուժ կար՝ մեծ քանքերով նորից ձգտեին կեն-դանության: Բարեբախտաբար այդ ուժը կար հայոց մեջ, և վերջին ժայր

Հասած ավերմունքից հետո, անմիջապես նորոգութեան ձեռնարկութեանն սկսվեցաւ և այն շատ կարճ ժամանակով մի վերածնութեան շրջան հայոց կյանքի և գրականութեան մէջ, որ սկզբում շատ զանգաղ ատել զնաց՝ Հայաստանի անկայուն քաղաքական գրութեան պատճառով, և հետո՝ շատ արագ քայլերով, երբ այս գարու ամառին քառորդից հետո՝ այդ ամեն տարւոյ պատերազմներին վերջ գրվեցաւ:

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վերածնութեան շրջանի մեջ պատմագրութեան իսկական իմաստով՝ գրութեան լուսնի Մի քանի այդ անունը կրողները լուկ անարվեստ նկարագրողներ են իրենց ժամանակի, կամ իրենցից սակաւ առաջ պատահած դեպքերի, որոնք Հայաստանի կամ հայոց գլխով են անցել, գլխավորապես օտարներից կրած հարստահարութեանների ու ճնշումների նկարագիրը: Այդ պատմագիրները, իսկապես, գրականութեան նյութ չեն կարող լինել, որքան պատմութեան ուսումնասիրութեան համար իբրև աղբյուր կարող են ծառայել:

Մարդկանց հետաքրքրութեանը զարթնած է և ուղում են ժանրայինաւ հին ու նոր մարդոց: Հենքի ժանրայինութեանը ձեռք են բերում հին մատենագիրներ և հատկապես Խորենացի կարդալով, իսկ ժամանակակից իրողութեանների ժանրայինութեանը՝ անկանատեսների պատմութեանը լսելով, և որպէսզի կարողանան ամենքն այդ պատմութեանը լսել, կարիք է զգացվում անկանատեսների վկայութեանը գրի առնելու: Եվ գրի են առնում, Բայց այդ գրվածների մեջ քննադատութեանը, դրուականութեան խուղարկութեանը և վկայութեանների (անկանատեսների) կոնտրոլը բոլորովին բացակայում է, Դիտական երկեր չեն:

Այդ պատմագիրներից են.—

1. Առաքել Գալիմիդի:—Առաքել վարդապետ, Թաւրիզ քաղաքից, Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտներից, Ս. Էջմիածնի միաբանութեանից, անված (երեւի մանկութեանից) և ավարժաւ Մայր Աթոռում. և ծերութեան օրերը հասած, և այնտեղ էլ, ինչպես ինքն ասելն ունէր ընդ հովանեաւ նորին ամփոփել ի հոգւ, մեռած ու թաղված միաբանութեան գերեզմանատանը ՌՃԺԹ—1670 թվին. (տապանագիրն է—«Պատմագիրն այս է տապան Առաքել վարդապետի ՌՃԺԹ»), Իր ժամանակակիցների վկայութեամբ՝ բաւական անուն ստացած, անշուշտ իր ուսման կամ հմտութեան համար. «Ստեփանոս Լեւոնցի իր մեկ թարգմանութեան (Դիտիսիսիսի Արիստակազի գրոցը) հիշատակարանի մեջ Էջմիածնի ուսումնարանի վրա խոսելով՝ կգրուցն—«Ջալնու ժամանակաւ քաղում

1 «Պատմագիրն Առաքել վարդապետի Դարձմիցայ ասկա գիշուածոց Հայաստանաց և գաւառի Արարատայ և մօտին Գողթան գաւառի, սկիտել ի ՌԴԹ թաւանդէն Հայոց մէկ ի ՌՃԺԹ Թ.», Վարդապետ, 1664:

էին ևրենի վարդապետք (էջմիածին), քաղաքանք, քանաստեղծք, աստուածային գրոց քաղք գիտութիւնք և հմուտք, յորոց մի է և Առաքել վարդապետն վիպասան, որ քժտմառեակագրութիւնս հայրապետաց և թագաւորաց զեղեցիկ յարմար բանիւ գրողմեայն (Զարբհ., հր. 172), որի պատեհառով նուրիսկ քննդոնաթյուն ժամանակ հայտնի էր Առաքել պատմագիր անունով:

Այս վկայութիւնից նշում է, որ Առաքել վարդապետը ժամանակի նշանավորներէրց մեկն է, շատ ճանապարհորդած Արենիքում և Արեմուտքում, նվիրակ Փիլիպպոս կաթողիկոսի շունաց աշխարհում, Ասպահան, Ամասիա, Սերաստիա, Ուռհա, Հալեք:

Առաքելի ծննդւան թիվը հայտնի չէ: 1651 թ. սկսել է գրել իր Պատմութիւնը Փիլիպպոս կաթողիկոսի հորգորով. նրա մահից հետո դադարել է գրելուց, և այնուհետև Հակոբ կաթողիկոսի հրամանով վերջացրել է 1662 թ., ՌժԺԱ=1662 թվին, երբ նա իր Պատմութիւնը վերջացնում է, հիշում է և (զլ. Ժ), որ ինքը ծնրացել է և Վարի պակասեալ ի դորութեանց, և մահն եկեալ հանապազօր իմոց աշացս կանգնեալ: Իսկ հիշատակարանի մեջ (ԺԶ) ասլլե գիպեցաւ պատահել ինձ այս գործ, ոչ ի ժամանակս առոյգ երիտասարդութեան, այլ յողորմելի ծնրութեան, վասն զի ծեր էի, նաև յոյժ ցաւագար մարմնով, և ի լուսոյ աշոս պակասեալ և ի պնդութենէ ձեռքս թուլացեալ դողայր. սոյնպես և յայլոց յամենայն կարողութեանց տկարացեալ, և մահու հրաւերք ամենեւեման հանդէպ աշացս եկեալ կացեալս:

Պատմագրի անձնական վկայութիւնն իր ծնրության համար ոչ թե նրա գոյության վերջին տարու՝ 1662 թվականի համար պետք է հասկանանք, այլ ալեի՝ Պատմութիւնը գրելու ամբողջ ընթացքի համար և գրեց նուրիսկ սկզբնավորության ժամանակի համար, որ է Ռժ=1651 մերգ, եթե ընդունենք իր պատմության ընթացքի կեսին՝ 1656 թ. նա ծեր է եղել, և ուժից ընկած և ալքի լուսից պակասած, իսկ այդպիսի ծնրության համար պետք է ընդունենք առնվազն, որ 60—65 տարեկան է եղել այդ ժամանակ, իսկ 1670 թվին, ուրեմն, 74—79 տարեկան հասակում մեռել է, որ և մի անհավանական թիվ չէ, — ուստի ըստ այնմ նա ծնված կլինի 1591—1596-ին: Այս հաշվով, նա Շահաբասի տաղին արշավանքի ժամանակ, ՌՄԲ=1603 թվին 7—12 տարեկան պիտի եղած լինի. Եվ այս հարմարում է խոսքին. — Շնս ինձէն իսկ տեսնելով զաւերս Հայաստան աշխարհին և զնուազին մերոյս ազգին, և զարութիւնն մահմեդականաց, իսկ երկրի ավերումը եղել է Շահաբասի բռնի գաղթից, Զղալօղլու և Շահաբասի կռիվներից և նոցանից հետո եկած Զալալոց և սովի ձեռքից, որ տիրել է ՌՄԲ=1606—1609 թվականներին, երբ տեղեկներ և ցան ազգն Հայոց և զնացին իւրաքանչիւր ոք հանդէպ նրեաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ... Զի յազգէն Հայոց՝ որքան զարիպականք կան յասացեալ գաւառս, յայս ժամանակիս և յայս պատճառէս են զնացեալք» (հր. 65, դւ. է):

Արեմն Հայաստանի ավերումները, ըստ Առաքելի 1603—1609 թթ. լինելով, որ և պատմում է սրտատուզ գրչով (այնուհետև եղած ավերմունքը մասնակի է և հայրենիքից դուրս համար է պատմում), պետք է ենթադրենք, որ ականատեսն համարվելու համար այդ դեպքերը (1603—1609) կատարվել են նրա գոն 7—13 կամ 12—16 տարեկան հասակի ընթացքում, որ համապատասխան է մեր ենթադրած թվականին:

Սակայն այս տարիքը հակասական է թվում, Առաքելն իրեն Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտ է անվանում, իսկ Փիլիպպոս կաթողիկոսի համար գրում է. «Գրչով սորա ի տես տղայութեան շորեքտասան ամաց ակելի կամ պակաս», երբ ութ ամսից հետո սա հանդիպում է Մովսեսին, երբ սա դեռ կաթողիկոս չէր²:

Ըթն 1606-ին Փիլիպպոս 15 տարեկան լինելով, արեմն նա ծնված պիտի լիներ 1591 թվին և հասակակից Առաքելին, Այս ժամանակի համար մի անսովոր բան չէ հասակակցի մոտ ունում անելը, երբ փոքրերն էլ մեծերից ունում էին անում: Այլ մանավանդ թե Առաքելն իրեն Փիլիպպոսի աշակերտ է անվանում ըստ սկզբի վարդապետաց, Սեկսանյի Գօշէ Մխիթարայ գաւազանան՝ որ իջանէ յնշմիածնի դասատունն:

Համենայն դեպս ինչ որ էլ լինի՝ Առաքելն ինչմիածնի դպրոցի վարդապետ է, արեմն բավականին մեծ հասակում է ինչմիածնի եկած և Փիլիպպոս կաթողիկոսից ստացած վարդապետական գաւազան: Եվ իրեն ինչմիածնի դպրոցի գիտուն աշակերտ՝ հետաքրքիր է նրա հալացքն ու զարգացումը տեսնել թե որքան է, ինչպես երևում է, այդ դպրոցը կարողացել է կարճ միջոցում բավական ունում տալ իր աշակերտներին, թնայտև գրաբարի ոչ կատարյալ ունումը, հին գրաբարի, բայց և այնպես զրեթե անխալ պարզ շարադրութիւն կարողացել է անել և, որ ակխավորն է, իբրև Միմեոն Ջուղայեցու քերականութիւն աշակերտ, յատկանցած յնզվին ենթարկվելու տեղը, ավելի հետևել է ժողովրդական պարզ շարադասութիւնը, կենդանի ժողովրդական ձևերին ու դարձվածներին, յսորչելով, ճշտութիւն ու պարզութիւն համար, նույնիսկ գաւառական ու թուրքերեն բառերից, որ և ոչ թե պատմագրի պակասութիւն, այլ առաւելելութիւն պետք է համարել, դի տմեն պատմութիւն կամ գրույցների ժողովածու, ինչպես է Առաքելի Պատմութիւնը, յուր կենդանութիւնը, գույնն ու երանգը ստանում է միայն ժամանակի կենդանի յնզվով պատմվելովը: Առաքել պատմագիրը, անշուշտ, ոչ շատ անգամ հասկանալով, զեղեցիկ գործադրել է մանավանդ ուրիշներին խոսքերը մեղ բերելիս, յսորչելով նույնիսկ զուտ աշխարհարարից: Բայց նա նույնիսկ այդ հասկանալով է անում, քանի որ թուրքերեն և գաւա-

² Սաթաղիկոս եղել է 1620 թվին, և Սարգիս զարան անըր (մեռած 1736) Փիլիպպոսին հանձնում է սրան ցարդութիւն ժամանակ: Մովսես ցարդութիւն է ելելու Երապիտի մահից հետո (մեռել է 1608): Արեմն չուրջ 1610—Փիլիպպոս 15-ի մաս չի տի լինի, որով նա ծնված պիտի լինի 1590-ի մասերը, արեմն Առաքելը հասակակից է Փիլիպպոսին: Այս ասանք անսովոր չէ:

ռական քառերի դիմաց հաճախ գրաբար քառեր է դնում փակագծի մեջ։ Այս լեզուն լատինացած հայերենով գրողների համար, հարկավ, ինչպես Ոսկանի, որ առաջին տպագրողն է Ամստերդամում, պիտի համարվեր «աղաւաղեալ ի հրչաց անհմտաց և անուղայից արանց և բանաստեղծից»։

Սեպեյն այդ դպրոցը, մյուս կողմից, տվի է Ս. Գրոց քաղական ծանոթություն և հին սովորությամբ Առաքելն ևս իր գրվածքի մեջ ցույց է տալիս, որ ինքը գիտն Սուրբ Գրքը, թե Ս. Գրքի ձևերից օգտվելով և թե, որ ավելի հաճախ է պատահում, խրատական կամ նկարագրական օրինակներ բերելով Սուրբ Գրքից։

Նկեղեցու հարադատ դավակ, նկեղեցական ոգով անված, առանց աշխարհական գաղափարների մասնակցության, կրոնասիրության և անարատ բարոյականության հետ՝ ավելի զորեղ է պատմագրի մեջ հայրենասիրության ոգին, որից նրա պատմությունն ավելի շունչ է ստանում, ինչպես է բռնի գաղթի նկարագիրը։

«Եւ զօրապետացն՝ յետ ընդունելոյ զայսպիսի զաշխարհակործան և զսաստիկ հրաման ի թագաւորէն, ելեալ իւրաքանչիւր զօրավար իւրով քնդաւն՝ դիմեցին յիւրաքանչիւր հրամայեալ զաւառսն աշխարհիս Հայոց, և իբրեւ հողմնախառն հուր ընդ եղէզն ընթացեալ, հապճեպ տագնապաւ փաղկաղակի զամենայն բնակիչս գատուացն կարգեալք յիւրաքանչիւր քնակութեանց, և արտասահման արբեալ յիւրաքանչիւր տեղեաց, իբրեւ զլուրս քաղմութեան հօտից և անդէոց զառաջեալ արարեալ՝ բռնությամբ վարեալ՝ ամեալ բերեալ հասուցին ի գաւառն Արաքսառու, և զայնանիստ զայտն նորա լցին ծագէ ի ծագ. քանզի ի ստորոտէ լեռանցն Գառնույ մինչ ի յեզրն Սրասխայ մեծի գետոյն լայնութիւնն էր բանակին, իսկ զերկայնութիւնն դովիմր կշռեաց դու, բայց ևս ասեմ աւուր միոյ ճանապարհ. և յայլուր տեսի՝ որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալս (28)։

«Եւ եղին երեք բանակք մեծամեծք և անհոնք. առաջին՝ բանակն ժողովրդեանն, երկրորդն՝ բանակն Պարսից, երրորդն՝ բանակն Օսմանցւոց։ Եւ այնպէս դիպեցաւ պատահումն՝ զի յորժամ շուէր բանակ ժողովրդեանն, իջեալ բանակէր ի հանգրուանս նոցա Շահաբան զօրօքն Պարսից. և ի շուելն նոցա բանակէր ի նոյն տեղին Զղալօղլին զօրօքն Օսմանցւոց, և այսպէս զհետ միմեանց կրնկակոխ գնալով՝ գնացին, մինչև հասին ժողովուրդքն և Պարսիկքն ի գեղն Զուլայ, և Օսմանցիքն հասին ի Նախուաս։ Եւ այնուհետև ո՛չ թողացուցին Պարսիկքն ժողովրդեանն զկա՛յ առնու՛լ և ոչ ժամ մի, այլ կարի սաստիկ տաղնապաւ նեղէին զժողովուրդն, զօմանս մահու հարուածով գանելով, զօմանց զուշս և զականջս հատանելով, և զօմանց զուխն կտրեալ ի ձող ցցէին, որպէս զհրայր Առաքել կաթուղիկոսին, որում անունն էր Յօհաննան, զսորա և զայլոյ ումեմն ան զգլուխսն կտրեցին, և ի ձող ցցեցին՝ յեզր գետոյն Սրասխայ. զայսոսիկ և առաւել քան զայսոսիկ խոշտանգանս

կտտանաց ածէին ի վերայ ժողովրդեանն, ի յա՛հ և յերկիւղ ժողովրդեան և տեսողացն, զի փութանակի անցցնն զգետն: Զայս ամենայն վտանգս ածէին ի վերայ ժողովրդեանն խորամանկ ազգն Պարսից յահէ Օսմանց-
ւոց, որք զկնի նոցա գայինս (29):

«Իսկ ողորմելի ժողովրդեանն հայէին յառաջ զանհուն գետն տե-
սանէին իբրև զծով՝ որ խեղզէր, և յետուստ զսուրն Պարսից՝ որ սպա-
նանէր, և հարակ փախչելոյ ոչ գտանիր: և առհասարակ աղիողորմ
սղբս, և յորդ արտասուս յաշաց հեղեալ առնէին երկրորդ նրաօս: և ձայն
լալեսց, և հառաչանաց, ճլանաց, վայոց կակծանաց, մորմոքանաց ընդ
միմեանս խառնեալ զոչնցուցանէին ուժգին աղաղակաւ: Իսկ ողորմու-
թիւն և փրկութիւն ոչ ուստեքէ չր:

Աստանօր կարի հարկիւ պիտոյ նղև մերում ժողովրդեանն հինն
Մովսէս՝ և նորին աշակերտն Յեսու առ ի փրկել զնորս Խորայէի ի ձեռա-
նէ երկրորդիս Փարաւոնի, և կամ դադարեցուցանել զուղիս յորդահոսան
և լայնատարած գետոյն մծծի, և ոչ եղև գտեալ: քանզի յորդութիւնք մե-
ղաց ժերոց փակեցին ընդդէմ մեր զդուռն ողորմութեան զթածին Աստու-
ծոյ:

Եւ անողորմ վօրացն Պարսից վարեալ զժողովրդին լնուին ի գետն.
և նոքա ի մէջ գետոյն նա քան զնա բաղմացուցանէին զձայն աղաղակին
և զողորցն ի վտանգէն: Եւ ոմանք ի նոցանէ կալեալ զեղերս նաւացն, և
ոմանք զագիողցն, և ոմանք զագիս ձիոց՝ և զնաւաց, զգոմշոց, և ոմանք
խորովի լողեալք անցանէին: Եւ որք անհմուտք էին լողելոյ և անողորմ,
ժերք և պառատունք, տղայք և աղջկունք, և մատաղ մանկութք լցեալք էին
յերեսս ջրոյն. և գետն առեալ տանէր զնոսա իբրև զխոփ: և ժամանակս
գարնայնոյ, և գետատար մարդով ժածկեալ էր երեսն գետոյն, և թէպէտ
անցին, որք անցինն, այլ բազումք այնք էին՝ որք հեղձմամք ջրոյն մե-
ռան:

Եւ հծծեալք ոմանք ի զօրացն Պարսից՝ որք ունէին ուժեղ ձիս և ին-
քեանք արք արի և կարող, շրջելով ի մէջ քրիստոնէից տեսեալ նկա-
տէին զուստերս և զգոստերս քրիստոնէից, և որոց հաւանեալ սիրտք ի-
րեանց, եթէ կանանց, եթէ աղջկանց, և եթէ տղայոց. էր զի խաբէին
զտեսարսն, թէ տուր՝ զի վասն քո անցուցից ընդ գետն յայնկոյս, և իբրև
անցուցանէր, ո՛չ զնէր անդէն ի գետնի, այլ առեալ երթայր յո՛ւ և կամէր:
Եւ այլք զողորմեամբ առեալ տանէին: Եւ այլք յափշտակութեամբ և
ապանութեամբ առեալ ի տեսարցն տանէին: Եւ բազումք մարք զտղայս, և
տեարք զհիւանդս ի ճանապարհին ընկեցիկ արարեալ լքեալ թողեալ
գնային, վասն անհանգուրծելի և անլմբունելի վտանգին, որ ժամա-
նեալ էր ի վերայ նոցա: Եւ միանգամայն ասեմ՝ զի թշուառութիւնք՝ և
արհաւիրք անտանելիք հասին ի վերայ ազգիս մերոյ, և ոչ բաւեմ թէ
որով տարագու հիւանցից բղքս դամբանակոսն և աշխարանաց ի վերայ
բնկման հայկական սեփոյ, որք այսքան շարակամութեանց եղնն ընդու-
նակը: Զի թէպէտ ըստ սարասի հնոյն Խորայէի լինէին վարեալք գերի

ձեռամբ երկրորդիս Բաքմաքուց, այլ էլ գոյր Երեմիա, որ խրատէր, և ո՛չ Նզեկիէլ, որ լուսաւորէր և ո՛չ Յեսու կամ Զօթաբաբէլ՝ որ զգարձն ատաշնորդէր, այլ եղծալք իբրև զհօտս անհովիտ ցրուեալք և հալածեալք ատաշի գալլոց պատառողաց և գիշատող գազանաց, որք վարէին բռնութեամբ: Եւ նոցա երթալով երթալին և լալին, որք բարձեալ տանէին զսերմանս իւրեանց:

Իսկ յաջորդ սորին, ո՛չ եղև տեսանելի՝ որ ասէ, գալով եկեացն, և ցնծացն, վասն զի ոչ եկին և ոչ եղև ցնծութիւն, այլ անդէն մնացին ուր և տարեալ արգելին, այսինքն յաշխարհն Պարսիցս (30—32):

[Այսպիսի] նկարագիրներ մեր պատմութեանց մեջ քիչ կ'ապատահենք Նդիշեի ժամանակից ի վեր:

Ոգին, ուրեմն, մեղքով բացատրելը նույնն է, ինչ հնեորի մեջ. Սակայն նա մեղքի համար համարելով հանդերձ այդ պատահարները՝ խիստ ուրախանում է, որ մատնելները իրենց պատիժն են ստանում, ինչպես երկու հայկոպոսների համար (եր. 35): Բայց, մյուս կողմից, շատ սատեսարանութեամբ պատմում է (եր. 157) Մելքիսեթ կաթողիկոսի յուր միսն ուտեցնելը, այլև (եր. 159) սքանչանում, հիանում է, որ Մելքիսեթն յուր պատիժն է ստանում, [որ] Արապիոնին արհամարհել էր: Ընդհանրապէս մոռանում է նույնիսկ, որ այդ անարգ վարմունքն հայ կաթողիկոսի հետ է լինում, ինչքան էլ անարժան լինէր: Սակայն այդ մոռացումն ևս պատմագրի հայրենասիրութեանից է. եվ ի՞նչպես լուրախանա Առաքելը, քանի որ իր պատմական նեղ հայացքով Հայաստանի ավերման և աղքատութեան նախապատճառը Մելքիսեթին է համարում, որ հրավիրել էր Շահին այն ավերմունքների, որոնց համար գրում է.

«Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր, ճմլին սիրտք մեր, և զալարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն եկելոյ հասելոյ թշուառութեանս ժողովրդեանս մերոյ: Եվ ոչ բաւեմք աստանօր՝ թէ որով օրինակա՞ և կամ որով տարազու ողբս առեալ աշխարհացուք ի վերայ բնկման ազգին և աշխարհին մերոյ, յաղագս որոյ եւ հրաման մահաբեր ի բերանոյ երկրորդ Սարիստիս և շունչ հրախառն յրոնցաց նորին՝ և եկեր զեղենափայտս Լիբանանու, քանզի անմարդաբնակ արար միահաղոյն զամենայն և զլուրթի աշխարհս Հայոց: Վասն զի ի թշնն վերկիրս՝ ո՛չ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի պարսկաստան, այլ զբաղումս: Եւ սկսելով ի սահմանացն նախշուանու և անցնալ ընդ Եղեգաձոր, առ եղբոր Գեղամայ, և Լուռոյ, և զՀամդաշիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակուան, զՋարիշատ, և մասն ինչ ի գեղորէիցն Կարսայ, և զձօրն Կաղզվանու բնակին, և բովանդակ զերկիրն Ալաշկերտու, և զգեղորայսն Մակուայ. և զերկիրն Աղբակու, և զՍալմաստու, և զԽոյայ, և զՈւրմի, և որ ինչ պանդուխտք և զարիպականք մնացեալք էին ի քաղաքն և ի գեղօրայսն Թարվիղու, զգաշտն Արարատու քովանդակ, և զԵրևան քաղաք, զերկիրն Ղրիսթուլաղայ, զՍաղկունուց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն:

Եւ յառաջ քան զայս՝ զգաւառն Կարնոյ, և զԹաւնեռ, և զԽնուսայ, և զՄանազկերտու, և զԵրծկէոյ, և զԵրճոյ և զԲերկրու, և զՎանայ, աւարով և գերութեամբ բերեալ էին յնրեան, և ընդ սոսա քնցին և տարան:

Արդ՝ զայս ամենայն գաւառքս՝ և որք ընդ սոսոք էին, Հրամայեաց շահն, որ քնցին և տարան յաշխարհն Պարսից, և արար ւերեակ և ամամարդարեակ զՎայելուշ աշխարհս Հայոց:

Որ և այժմ տեսանեմք զարգաւանդ և զբերրի զՀոռ, զարտ և զանդաստանս սորա, և զաւերակն քաղապատիկ գեղօրէիցն և զմեծանիստ աւանացն:

Նա և զաւերումն և զտապալումն և զքայքայումն զանառիկ և զամուր և զհաստահեղոյս վիմարգեամբք և կրով մածուցեալ զանմատոյց բերդօրէիցն:

Եւս առաւել զմեծափառ և զհռչակաւոր վանորայն, զտեղի և զհանգստարան սրբոցն Աստուծոյ:

Եւ զերկնանման և զարարեալքն և զգմբէթաշէն կոփածո և հաստահեղոյս վիմօք կառուցեալ զեկեղեցիս աշխարհիս Հայոց, Տօրում յօրինեալ զանազան և պէս պէս նկարս և տեսակս շուշանաց և կենդանակերպից, գեղեցիկ յօրինուածովք քանդակեալք ի վէմս՝ պէս պէս հնարակերտութեամբ: Որոց ձկն և զիր շինուածոյն և սիւնքն և ախաւեղադէսք կամարացն ազգի ազգի, և լուսանցոյցքն և դրունքն, և ամենայն ինչ խորհրդական:

Նա և զքարհհամ և զականակիտ զմշտաճոսան աղբերակունս շուրցն: Եւ զկարկաշահոս ծիծաղախիտ յաւէտընթաց յառաջախաղաց վտակս չուրցն, որ ի զլիոց ձիւնաբարդ սպիտակափայլ քարերեքն լերանց առ ի ստորն հոսեալ իջանէ ի դաշտ անդր և զշինութիւն նոցին մատակարարէ:

Նա և զքաղցրաշուշ և զառողջարար և զկենդանապարզն զօդ և զհոգմն սորին: Եւ զայլ ամենայն վայելչութիւնս սորա տեսանելով հեղձամղժուկ եղեալ փղձկիմք՝ և հարեալ յարտասուս օղբամբ և աշխարեմք՝ զի անապատ եղև վայելուշ և քաղցր աշխարհս մեր: Եւ ազգ և ժողովուրդ մեր խելեալք ի տեղեաց և անջատեալք ի հայրենի և ի բնիկ ժառանգութեանց, և յօրհնեալ յերկրէ, որ յի է նշխարօք սրբոց աստուծոյ, և ոռգեալ արեամբ սրբոց վկայից՝ և օրհնեալ քարոզութեամբ՝ սրբոց առաքելոց՝ եղևն վտարանդեալք և տարամբժեալք յերկիր օտար և յազգ այլապէս և ալլալեզու, որ և թշնամիք հոգւոյ և հաւատոյ, և արեան ծարաւիք մարմնոյ: Որք և անդէն օր աւուր առ սակաւ սեկաւ նուազին, ոմանք մահօրեամբ և կորստեամբ, և ոմանք հաւատոյ ուրացութեամբ, որք դառնան յանօրէն օրհնս պղծոյն անապատի:

Եւ յաղազս իրկնանման և աղինասարաս եկեղեցեաց զի՜նչ ասացից՝ որք ի խաւարի մեացեալ և ի բնակչաց թափուր եղեալ՝ մերկացեալ ի զարդուց՝ եղեալ հանգրուանք համբարուաց և ջալլամանց ըստ Սալեալ Գեոսանոզի. որքք աղուիսուց և նապաստակաց, մակաղատեղք խաշանց

և անդէոց, բոյնք թռչնոց և աներաքնակ բուսաց: Փոխանակ որ արուր նորոգման, որ զհետ արուր խարխալեալ և քայքայեալ աւերեալ փրուզանի. փոխանակ բուրման խնկոց անուշից՝ լցեալ ողորովք՝ լոռայք ծալեք փառաբանչաց, և կատարմունք տօնից տարեկանաց, և մատուցմունք փերկական պատարագաց (38—40):

Եվ իրավ, խորենացու հայրենասիրութեան ոգին անցել է այդ վարդապետին. խորենացին այդ «Դասաստան» սիրելի դասագիրքը պիտի հղած լինի, որ և Առաքելի մահից 25 տարի հետո իբրև շէքնաղտվէպ և զնդեցկաշար պատմութիւնս նախնեաց մերոց, որ Թոմաս Եպիսկոպոս ռոնծայէ ծաղիկ բերկրութեան ցանկալի ազգին Արամեանա: խորենացու հայրենասիրութեամբ, բայց և առանց խորենացու ճարտասանութեան, պարզ ու բնական, խորենացուց ալիւի սրտառուչ է ողորով յուր հայրենիքը, որից ալիւի զնդեցիկ լէր կարող ոչ մի իրեն ժամանակակից բանաստեղծ ողբալ:

Եվ կամ հետևյալ կտորը (43—44), որի մեջ շուղայեցոց՝ բանալիները գետը ձգելն է նկարագրում, որին կարծես ինքն էլ մասնակցում է. Որքան սրտառուչ և տխուր իր պարզութեան մեջ, կարծես ամբողջ վիշտ լինի և, իրավ, արտասուքով զոված, մի բանաստեղծութեան կենդանի պատկեր է: Եվ ինչպես լմորմոքվեն, քանի որ նրանք պիտի թողնեն ամենայն բարութեամբ լի աշխարհ (Եր. 150), ուր շինութիւն և առատութիւն է, ուր են զգրեցմանատունք հարց և նախնեաց նոցա, վանորայք և ուխտատեղիք, ուր դամբարանք են սրբոց, և մանաւանդ մեծահանգչաւ Եւթոն Սուրբ էջմիածին, ուր կա սուրբ աչն Գրիգոր Լուսաւորչին, որով օրհնի սուրբ մեռնեն, ուստի գեացեալ սփռի յազգս Հայոց յամենայն աշխարհ ուր և իցեն. վասն որոյ ամենայն ազգն Հայոց հնազանդին Սրբոյ Աթոռոյն էջմիածնի և կաթողիկոսի նորա՝ որ անդ նստի... Քանզի ի վերայ աշոյն և էջմիածնի ամենայն ազգն Հայոց կանգնեալ կանա: Եվ այդ հիշելով ուզում էին գերիները դառնալ հայրենիք: Սակայն անհույս, դի ղնոցա երթալով երթային և լային և ետ չեղն տեսանելի՝ որ ասէ, գալով եկեացեն և ցնծացեն (32):

Թե Առաքել վարդապետը որքան ճիշտ ըմբռնել է հայի ժամանակակից զգացմունքն ու տենչանքները և ոգին, և շատ զնդեցիկ կերպով արտահայտել, մեզ համար պարզ կլինի, եթե համեմատենք ժամանակակից մի ոտանավորի հետ. — «Ափսոս քեզ, հայոց խղճիկ ժողովուրդը: Եթե Արարհամ վարդապետի ասածը չլիներ, ոչ ոք կարող չէր ասել, թե դա Առաքել վարդապետինը չէ, նույն զգացմունքը, նույն ձևերով և նույնիսկ նույն բառերով արտահայտված: Նույն հայրենասիրութեամբ լցված, նա հայրանում է այն ժանմիտներին վրա, որոնք դադարեցնում էին զգարեցմունքը, նույն հայրենասիրութեամբ լի ըմբռնում, որոնք լուսան դարիպականքն նախընտանում, թէ շահն զգարեցմունքն թաւրիպու քչեց տարաւ ի պարսից աշխարհ: Լաւ իմ գործ զայն ինքեանց համարեցանա. և զայն իրենք էլ շահիսեման են դառնում, Պարսկաստան գնալու համար, և շահն վասն

հաճելույ զմիտս նոցա և զեռցին նման անմտացն պատրելու, հրամայեաց խղլաթ (պարզե) տալ նոցա, և քշել տանել, որտեղից ալլես լսիտի վերադառնային (Եր. 110, 44. ԺԳ):

Բայց որքան ավելի մեծ սրտմտությամբ լսվում է, երբ հայերը, Պարսկաստանում աղքատացած, շահից օգնություն են ուզում և նա գրամ է փոխ տալիս, երեք տարուց հետո ևս ստանալու պայմանով, իսկ եթե չկարողանան տալ՝ կամ իրենք մահճեղական դատնան, կամ որդին ու դուստրը թաղատրական ծառայել դառնան:

Եկլլ իբր անքան և անմիտ անասուն գոլով՝ զնացին և առին զթագատրական զանձն, որ էր որպէս զմահարար թոյնս օձի, և պատճառեռցին կորստեան. և ոչ եղին մտախոհ, թէ որպէս զփուշա օձի է զանձն այն մահացուցանող: Եկլլ երկրորդին մեղքն իրեանց ժողովրդովքն առին զթագատրական զանձն, Ղարապաշ մելիքի ժողովրդքն առին երեք հարիւր թուման, Ղրիհալան մելիքի ժողովրդքն առին հարիւր թուման, և լաւ իմն գիւտ բարոյ համարեցան զայն անձանց իւրեանց (Եր. 112—113):

Կարծես թէ խորենացու. մեր այդ ամենամեծ հայրենասեր մատենադրի խոսքերն ենք լսում, որ անաշատ կերպով խաբաղանում է հայ ազգի քաղաքական անհեռատեսությունն ու անմտությունը. «Իսկ արքշիռ, և անադորդն, և անիմաստ, և անասնաբարոյ ազգս Հայոց՝ ոչ ի սկիզբն խորհեցան, և ոչ ի վերջն հայեցան՝ թէ զինչ է լինելոց վերջ գործոյս այսորիկ»: Մի գործ նրանց դեմ լարված՝ օրինավորության քողի տակ՝ նրանց դեմ կրոնական հալածանք հանելու և զնպի հոգեւոր ու ազգային կորուստ տանելու:

Ժամանակի վիճակն էր այդ. կրոնի պատճառով հայ ազգը հալածվում էր, և կարելի է ասել, որ Առաքելի ամբողջ գրվածքը գրեթե մի համազգային վկայաբանություն և նահատակություն է, ինչ որ քնդհանուր ազգին է վերաբերում, բայց և ժամանակոր նահատակություններով էլ ի է Առաքելի Պատմությունը (զլ. 67—68), որոնք մի տեսակ հավելված են Առաքելի Պատմության, և կարելու հավելված՝ ժամանակի վիճակը լավ ըմբռնելու համար (Իէ—Եվսն նահատակութեան տէր Անդրէաս քահանային, որ և ամենից պեղեցիկն է, և նախնի վկայաբանություններին հետ կարող է մրցել)³:

Սակայն այդ վկայաբանությանց մեջ՝ մեզ պատմագիրը չի տալիս երեակայական կամ առասպելական զարգացալ պատմություն, այլ մի իրական թշվառ աշխարհի նկարագիր, որի մեջ եթե պատմելու ձեռք ժողովրդական պատմողներին և մեծ մտամբ աղանատներին բերանից առած լինելով՝ ժողովրդական քնավորություն է ստացել. հիմքը իրական է: Այստեղ մենք տեսնում ենք մուլաների, մահճեղական սուխտաների և մուֆթիների կատաղությունը, թե ինչպես մահճեղականը քրիս-

³ Մուրացանի վկայք:

տուննին անպատկեր կարող է ամեն տեսակ, և քրիստոնյան պետք է լռե, թե չէ նահատակութիւնը նրա համար պատրաստ է: Զուր խմելիս կամ լվացվելիս աղբյուրից՝ եթե մահմեդականը դա՝ հայը պիտի հեռանա, եթե լի ուղում նահատակվել: Նույնիսկ լամպիները կարող են նեղել հային, և հայը պետք է լռի, եթե լի ուղում նահատակվել: Բաժանեմ եմ մի հայի համար սուտ ասին, թե նա ցանկացել է մահմեդական դառնալ, և պիտի դառնա, եթե չէ ուղում նահատակվել և այն էլ ինչպես և ինչ շար-շարաններով:

Եվ Առաքելը, ինչպես յուր ժամանակակիցները, իրենց կենդանի հավատքով չէին կարող անտարբեք մնալ այդ ազգայինների բազմաթիվ նահատակութիւնների առաջ:

Եվ այսպիսով, վկայաբանական պատմութիւնը գրավել է մեր հայրերի մտքերը հեռու ի վեր, թե թարգմանութեամբ և թե ինքնուրույն հեղինակութեամբ, թե ոտար և թե մանավանդ հայ վկաների: Այդ տեսակի ընթերցանութիւնը սիրելի էր ազգին այն ժամանակ, և Առաքելը չէր կարող յուր Պատմութեան մեջ շառնել այդ պատմութիւնները, և հենց այդ պատմութիւնները պետք է նրա ժամանակակիցների վրա մեծ տպավորութիւն թողնեին, և Առաքելի Պատմութիւնը մի սիրելի և ժողովրդական գիրք դարձնեին, ինչպես եղել է իրոք:

Ժամանակի ոգին հերոսական էր, որը բռնի զաղթի ժամանակ ծնեցնում էր դուրցազներ և դուրցազնուհիներ. չկանայք և տղայք և աղջկուք... իբրեւ տեսին զինքնանս մատնեալս ի ձեռս անիրաւ մարդոց՝ մղաւնաց, որ վարեն զնոսա ի գերութիւն և պէս պէս աղտեղութեամբ ապականեն զորրութիւն նոցա... պատէին զերեսս փականդամ և ձորձով իւրեանց և լամբով բարձրութենէն ի յայրէ անտի ի վայր արկանէին զինքնանս և մեռանէին: (Եր. 37):

Այսպես և բազմաթիվ քաջ նահատակներով ավելի ևս զորանում էր ժողովրդի մեջ ազգային եկեղեցու հավատը, քերմեռանդ փափազանք համբուրելով զգոգրքս, նրանց մարմնի մասունքը եկեղեցիների մեջ դնելով և քոյոք բազմութեամբ դիմելով սրբի թաղմանը. մի ազգային մեծ հանդես կատարելով այն տխուր ժամանակին, երբ հայը զրկված էր ամեն հանդեսից ու մի տեղ խմբվելու հնարավորութիւնից, թեպետե մահմեդականներն այդպիսի տխուր հանդեսներ կատարելն անգամ արգելում էին (Եր. 417): Միևնույն ազգային միաթաղութիւնն այդպիսիների գլխին լույս է իջեցնում, շարաշար պատժում է հավատաւորացներին, որ միևնույն է՝ ազգութեաններին:

Այդպիսի մի պատմութիւն գտնում ենք եթ զիսում (Եր. 428), մի Նարայրականի վրա, որ հավատ ուրանալու վրա գոհնազաք է լինում, եթե Առաքելն իր քրիստոնեական բարեպաշտութեամբ հավատում է լույս իջնելուն, նա հավատում է և զոռնադաքութեանը, որով հասարակ ժողովրդից բարձր չէ նա յուր սնոտիապաշտութեամբ: Բայց նորա սնոտիապաշտութիւնն ավելի լավ երևում է զՔրիստոսի մասին գրածից

(զգլ. ԾԳ, ԾԴ), որ յուր պատմութեան հետ քնալ կապ չունի, այլ կցված է:— «Կայծ, որ է հաղութ... ով որ ի հետն պահէ՛ նա ի մարդիկ ընդունելի լինի, և զարկուածի լաւ է»: «Սարգիսնե...ի հետն պահելն զարիւն կտրէ, նույնպէս միայն զհաւանքն համար. «Վնասակար թուանարք շմերձենան ի նա. սեռա հազ... սիրցաւութեան լաւ է, երկու պատերազմողի որ կողմն որ անելակշիռ ավաստ լինի՝ այն կողմն յաղթող լինի, կիսն որ ի ծնունդն զավաստ քարն ի բազումն կապեն արձակի աստուծով:»

Արդ, այսպիսի մի մարդ, որի բոլոր գիտութիւնը միայն մի քանի կրօնական գրքեր կարգացած լինելն էր և շատ հասարակագիտութիւններէ ժամանակ յուր հարցասիրութեամբ ձեռք բերած ծանոթութիւնները:— շմերձենան, որ մինչև 1662 թ. 24 գիրք էր միայն հայերէն տրված, որից 5-ը Սաղմոս, 3-ը Հիսուս որդի, 2-ը Ժամագիրք, 1-ը Տոմար, 1-ը Հարանց վարք, 1-ը Աղթարք, 1-ը Կիպրիանոս, իսկ մնացածները ուրբանյան կաթողիկոսպարոյցի կրօնական և քերականութեան ու պատմութեան գրքեր:— պետք է գրեր մի մեծ շրջանի պատմութիւն, որ շարունակութիւն էր նախորդ դարերի և որի պատմական նշանակութիւնը ապագայի համար մեծ պիտի լիներ: Այդպիսի մի անձն չէր կարող, անշուշտ, պատմական առողջ դատողութիւն ունենալ և ոչ իսկ պատմական ընդարձակ աշխարհայեցողութիւն, որ կարողանար իրողութիւնները կշռադատել իրենց պատճառներովն ու ժանրակշիռ հետեւանքներով: Ուստի և նրա՝ գրած պատմութեան մեջ նույնիսկ շատ հրաշալի բաներ են մտնում, որոնց նույնիսկ ինքը հավատում է. Բերնակ, թե ինչպէս Փիլիպպոս կաթողիկոսը մի դիվանար է բժշկում աղոթքով, կամ Պողոս վարդապետի հնչիւնները, որոնց կանչում է յուր մտտ (զգլ. ԺԹ), կամ Պողոս վարդապետի դերացնքին՝ դուների ինքն իրեն բացվելը, կամ նույնիսկ մենելին հարութիւն տալը (ԻԱ գլ., եր. 197), և նույն ինքը հավատում է այդ պատմութեանը, վասն զի սամենքեան արժանացնալէ էին շնորհաց Սրբոյ Հոգւոյն... և այսպիսի պատմութիւնները համարում է շարժանի լսելու... վասն զի հոգին Աստուծոյ վերակացու էր նոցա:»

Այսպիսի բաների հավատով և հասկացողութեամբ Առաքել վարդապետը ոչնչով բարձր չէ ուսմիկ ու տղետ ժողովրդից: Բայց և այնպէս, շնայելով յուր մեծ միամտութեանը, նա յաւի կերպով ըմբռնել է ժամանակի ոգին և մանավանդ Շահաբասի քաղաքականութիւնը, ձգտումներն ու նպատակը. գործ դրած խորամտնի միջոցները՝ միջոցն իր ժամանակակիցները շեն հասկացել այդ թագաւորին, և նա զանազան զրուցիւնների հերոս դարձած, նույնիսկ քրիստոնեասեր է համարվել:

«Արդ՝ որք զովն զայս շահս թէ քրիստոնէաւոր և աշխարհաշն և խաղաղարար թագաւոր էր, այս է նորա քրիստոնէաւորութիւն, որ զամենայն աշխարհն քրիստոնէից՝ գլխաց և գլխաց աներեսց. և զամենեանն սպառնաց սրով և օռովու և գերութեամբ. և զմեացնայն վարեալ

տարաւ ի Յաճրապատ և յԱսպաՀան, որ նսճա ևս օր աւուր անդէն սպա-
ռին պէս պէս կերպիւ Եւ ով ոք որ գտվել կամի զնա, թող յառաջ հա-
յնցնալ նկատեսցէ զարարեալ գործս Նորա, զոր արար ընդ քրիստոնէից՝
և ապա գովեսցէ զնա (Եր. 100):

Ինչպէս երևում է, շատ գովողներ եղել են, խարված նրա խորամանկ
միջոցներից, որ գործ էր դնում՝ բռնի գաղթեցրած հայերի սիրտը շա-
հելու համար: Սակայն Առաքելը նրա հոգու բոլոր մանրամասնութիւնց
մէջ է, կարծես մի քաղաքագետ և հոգեբան լինի: Նա Շահաբասի հոգու
խորքն ու սկիզբն է մտնում վերլուծելով. «հանճարեղն ի խորհուրդս շա-
րեաց» (Եր. 52). հարուստն ի խորհուրդս շարեաց Շահաբաս (Եր. 73).
խորամանկն ի հնարս շարեաց Շահաբաս (Եր. 75). կամայօժար կամա-
րս, սնկելով արուեսկին Շահաբաս (Եր. 86):

Նա տալիս է մեզ իրողութիւնների նկարագիրը, այն էլ ոչ միշտ
ժամանակագրական կարգով, որովհետեւ ժամանակը չէ գտած, այլ
խառն: Այս ժամանակագրութեան մի լրացումն պետք է համարել (զ. Ա)՝
կաթողիկոսների ժամանակագրական կարգը, ինչպէս և ՄԱ և ՄԲ գլուխ-
ները, որոնց մէջ օսմանցոց և պարսից թագավորների ժամանակագրու-
թիւնն է տալիս, որքան որ կարողացել է ժողովել: Եվ պատճառաբա-
նական պատմութիւնն էս գրել էլ չէր կարող, քանի որ իրողութիւնները
հազիվ թէ ժողովել է նա, այն էլ գրեթէ միմիայն բերանացի աղբյուր-
ներից (38, 63, 66, 67, 68, 70, 92, 151, 161, 162, 137, 147, 148, 149).
զրաւոր աղբյուրներ քիչ է գործածում (Եր. 28—111):

Նա ամենքի բերանից ժողովում է իրողութիւնն ճիշտ մանրամաս-
նութիւնները, մեծ ծախքով և նեղութեամբ, կատարելով «յոքնաշխատ և
զրազմաներկ զտաժանելի գործս և՛ աւուրս յոլովս ի սմին գեգեբելով և ի
յուով երկիրս և յաշխարհս շրջագայելով ի խնդիր զրուցած պատմու-
թեան, ոչ միայն ի քրիստոնէից, այլև յայլոց ազանց հարցանելով, և ա-
մենեցունց զասացեալսն գրելով, և վասն զստուգութեան բանին գտա-
նելով, եղև զի զմի պատմութիւն տասն անգամ և անլի կրկնելով գրե-
ցի, և զամս ինն ի սմին գեգեբելով, և զինչս ծախելով, հագիւ թէ զայսքան
պատմութիւնս ի մի վայր հաւաքեցի և գրեցի, և բնաս ոչ ոք. եղև ինձ
ձեռնտու» (Հիշատակ.): Եւ այլ և թէպէտ ի շրջագայութիւնս աշխարհաց ի
բազում տեղիս մասնաւորաբար եղև գրեալ ի սմանէ, սակայն սկիզբն
սորին եղև ի բարձրագահ աթոռն, ի սուրբ էջմիածին և կատարումն ևս
ի Նույն տեղիւնս:

Առաքելի պատմութեան ընթացքից հենց երևում է նրա հարցասի-
րութիւնը և պատմութեան նյութ հավաքելու համար շրջագայելու Այն-
պես որ նրա այս վկայութեանը լիովին հավատալ կարող ենք: Նա հար-
ցասեր է ու հիշատակարան պահող, հետաքրքիր ծանոթութիւն ձեռք բե-
րելու և պատմելու: Սակայն, դժբախտաբար, նա պատմութեան ամբող-
ջութիւնը ևս սկսում է շարադրել հենց այդ 1615—1662 թթ. ընթաց-
քում, երբ ծանոթութիւնների մեծ մասը ձեռք է բերում շրջելով, առանց

ժամանակ ունենալու նախ ժանտթութլունները դասակարգելու և խմբա-
գրելու: Եվ թեպետ նա արագութլյան հետևից է ընկած, բայց նա խիստ
զգայուն է հայ ազգի և եկեղեցու շահերին, արտով ու հոգով հայ լինե-
լով, խիստ հաճախ ցույց է տալիս յուր ասեղութլունը առ ամենը, ինչ որ
կորստաբեր է համարում հայ ազգին և եկեղեցուն:

Բայց և այնպես նրա պատմութլունը, մյուս կողմից, ցուացնում է
այն մարդոց կրքերը, որոնք իբրև գործիչ կամ ականատես՝ տեղեկու-
թյուն են տվել նրան, թեպետև նա ասուցութլյան համար տասն անգամ
փոփոխութլան է ենթարկում յուր պատմութլունը: Սրա հետևանքն էլ
այն է լինում, որ արտաքին ձևի մեջ անխառնափնի կրկնութլուններ և
ավելորդաբանութլուններ շատ է անում (հր. 162):

Սակայն այդ ամենը ավելի նրանից են առաջանում, որ նա յուր աղ-
քյուրները իսկապես չէ կարողանում մշակել, այլ, կարելի է ասել, դա-
նազան մարդկանցից ինչպես լսել է, այնպես էլ շարել է: Այնպես որ
Առաքելի պատմութլունը կարելի է համարել վանազան դրույցների ան-
մշակ ժողովածու, որոնք ծերերի բերանին շատ անգամ պատմվել են, և
ինքը գուցե ուրիշներին, և պատմվելով արդեն մի որոշ ձև ու կերպա-
րանք են ասացել: Սրինակ՝ մի պատմող կլինեք Այրարատի ջնլու մա-
սին, մյուսը Ջուղայի ջնլու մասին: Նա հր. 33 Այրարատի ջնլու պատ-
մութլունը վերջացնում է Սպահանում տեղավորելով, և հր. 33 նորից
սկսում է Գառնվո ջնլը—«դարձեալ դարձցուր...», որովհետև այդ
պատմութլունը ուրիշից է լսել, Եր. 40 նորից դառնում է Ջղալօղլուն, Եր.
41 նորից յուզալօղլու ջնլուն:

Այդպիսի մի-մի անկախ զրույցներ են և բազմաթիվ նահապետու-
թլունները և Ջալալիների մասին պատմածները (Ջորակ, Սուլեյման-բեկ
և այլն) և վկայաբանութլուններն ու Եահաբասի մասին պատմածները և
առհասարակ գրեթե բոլոր պատմութլունները:

Այսպիսի դեպքերում, անշուշտ, կարելի չէ խոսել Առաքել պատ-
մագրի գրվածքի գեղարվեստականութլյան մասին, գրական արժեքի մա-
սին: Նրա ոճը միայն կենդանի է, որովհետև զգացմունքով գրված է, և
որովհետև ժողովրդի բերնից է անում անմիջապես և բարեբախտաբար
լեզուին շատ չէ փոփոխում: Այդպիսի ժողովրդական հերոսների կենդա-
նի պատմութլուն է պիղծ Ջոմարի սատակումը:

Առաքելը մատենագիր չէ, բայց նա յունքը նույնիսկ մատենագիր
լինելու պատրաստութլուն, որ կարողանար մի սիւնքուն մտքնելով յուր
գրածի մեջ, մատենագրական մի երկ տալ մեզ, որի մեջ իրողութլուննե-
րը, մի կենտրոնի շուրջ խմբված, պատկերաձևային բանաստեղծական
կենդանութլամբ:

Սակայն և այնպես, նրա պատմութլյան բուն մասը, իրերի թնական
ընթացքով, երկու բանի շուրջ է պտտում.

ա) Հայաստանի (մասամբ և Վրաստանի) ավերումը և տնկումը
Եահաբասի և օսմանեցոց ձեռով (զլ. Ա.):

թ) Վերածնության սկիզբը Հայաստանում նույն միջոցներին Առաքել կաթողիկոսի մահից (1586—1662), երկու սերնդի վարդապետներին միջև եղած կոիվեցրով, մինչև Մովսես կաթողիկոսի օրով նոր սերունդը հաղթում է և վերանորոգությունն է սկսում Մովսեսի և Փիլիպպոսի օրով, մինչև Ռհին սերունդը ի դեմս՝ Դավթի, Մեթիսեթի, Սահակի ավերածնունդներ է գործում։ Առաքելի համակրությունը, հարկավ, նոր սերնդի կողմն է, որի համար և յուր պատմությունը գրում է։ Ինքն էլ գոցանից մեկն է, Շարունակ զովում է նոր սերունդը, իսկ հինը՝ պախարակում։

Բուն պատմությունը վերջանում է Իջ գլխում, Փիլիպպոսի մահով և վանքերի շինությամբ (վերջին թիվը հիշված է ՌՃԼ—1658)։

Այնուհետև եկած գլուխներն արգեն իբրև հավելվածներ պետք և համարելի, եվ ապա վկայաբանական և յուզկահարների պատմություն, ինչպես և մի քանի տարեգրական տեղեկություններ։ Մի գլուխը «Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ Մարեցի Յովհաննու վարդապետին», Այդ հավելվածներից մի քանիսը շատ ուշ ավելցրած է, ինչպես հրեից Սարեթար պատմությունը, որ միայն Ավետիք երիցու գրչազրի մեջ կա։

2. Ջաքարիա Սարկավազ։— Մնված Քանաքեռում ՌՃԼԶ (1136+551=1687—60=1627) թվին, ինչպես ինքը հիշում է (Գ. հատոր, եր. 2), 1687 թվին 60 տարեկան է եղել։

Ջաքարիա Սարկավազն իր գրության եղանակով Առաքել վարդապետի աշակերտն ու հետևողն է, թեպետև յուր գրաբար լեզվով Առաքելից բարձր է շատ անգամ, բայց իբրև պատմադրի ստոր է կանգնած Առաքելից։ Ըշմարիտ է, Առաքելը ևս շատ անգամ բավական միամիտ է, բայց նա քիչ ու շատ էլի ճաշակ ունի, կարողանում է նյութերի մեջ բնորոշություն տանել, դատել և պատճառներն ու հետևանքները վերլուծել և փոքր ինչ դասավորել նյութը։ Մինչդեռ Ջաքարիան, այդ ժամանակի կրթված ու շատ ճանապարհորդած եկեղեցականը կատարյալ պարզ-միտ է մի լեռան հովվի, մի ուղտապանի լիպի։ Խիստ նեղ հայացքով, գրեթե ամեն բանի, որ լսել է, հավատում է։

Թավական չէ նրա գրածների մեջ նահատակների վրա լույս իջնելը, դեռերի՝ մարդկանց գլխին կատարած գործերը ճշմարիտ պատմություններ են համարվում, մի բան, որին հավատում էին բոլոր ժամանակակիցները, այլև այնպիսի գրույցներ ու ժողովրդական սնտրիապաշտություններ է բերում Ջաքարիան իբրև պատմական իրողություններ, որոնք նույնիսկ մի ժամանակում կազմված չեն, այլ դարեր շարունակ ապրում են ժողովրդի մեջ։ Եվ Ջաքարիան, այդ զարգացած, ճանապարհորդած գրագետը հավատում է այդ ամենին։ Պետք է երևակայել, ուրեմն, թե Ջաքարիայից ստոր կրթությամբ մարդիկ՝ եկեղեցականներ

4 Ջաքարիա Սարկավազ, Պատմագրութիւն, Ա. Բ. Գ. հատ., Վաղարշապատ, 1870։

շինելը կարող էին համարել այն ժամանակ,— էլ ընդ առում թանձր խավար մարդիկ։

Նա յուր վաթսուներեք հասակում, 1837 թվին, ժամանակի չորհանգիստների առաջնորդից, Վ. Սարգիս վարդապետի խոհանարար և քանասիրէ՝ հարկադրված սկսում է գրել կամ անել «Կոնդակ սուրբ ուխտին ճովհաննու վանից», որ և նույն 1837 թվին ավարտում է։ «Յամանայն օր գեղեցիկ,— գրում է Ջաքարիան,— թէ ընդէր ոչ գոյ հաստատուն կոնդակ վանաց, որ ամենայն արժանեք որոնցն գրեալ լինի ի նմա, և վարանէի միշտ առ այն։ Ջաքարիան միշտ մտածում է այդ անել, բայց ձեռնահաս չի լինում, որովհետեւ յուր առաջին տները Ջաքարիան և չորհանգիստ վանահայրերը նրան մարմնավոր գործերով են զբաղեցնում։ Սարգիս վանահայրը գրգռում է նրան այդ անելու լինելով բանասեր։

Եվ նա գրում է չորհանգիստների կոնդակը կամ պատմությունը, «թէ ի պատմագրաց, թէ ի յիշատակարանաց, թէ ի յարձանաց և թէ ի յուր իմաստուն արանց և ի գիտուն ծերոց»։

Եվ Ջաքարիան, համարաբար յուր ծրագրին, նախ համառատարար խոսում է, թե ընդհանրապես ե՞րբ են հայոց մեջ վանքեր շատ շինվել և թե հատկապես ե՞րբ է շինվել չորհանգիստ վանքը, որի հիմնությունը մինչև խոսակցորդի է հասնում։ Այնուհետև խոսում է այդ վանքի թեմի և վիճակի մասին, թե ե՞րբ է այդ վանքը նորոգվել և ծաղկել։

Յուր գրություն և ապացուցման եղանակով հետևում է Առաքելի Հալիսին— «Գլխին»։ «Գլխունս վասն սրբոյն Գրիգորի մերոյ խոսատարի առ յայն, Բայց մի բանի վրա հատուկ ուշադրություն է դարձնում Ջաքարիան, բացի մատենագիրներից ու գրքերի հիշատակարաններից՝ «գտնվում է և արձանագրություններից, նա ընդորինակում է պատերի վրա եղած արձանագրությունները և մանրամասն ճշտություն մտցնում յուր Կոնդակի մեջ, որով Ջաքարիան հանդիսանում է մեր հնագրական արձանագրական թանկագին հիշատակարանները ժողովուրդների նախահայրը Մի բան, որ շատ կարեւոր է։

Այնուհետև աշխատում է չորհանգիստների առաջնորդների անունը, որքան որ կարողացել է ձեռք բերել՝ հիշատակել ժամանակագրական կարգով, հիշելով միանգամայն և յուր աղքատները։ Առանձնապես կանգ է առնում յուր ժամանակի երեք նշանավոր առաջնորդների վրա՝ Ջաքարիա (վաղարշապատցի (1822—1859—1879)), չորհանգիստ Կարբեցի (1859—1879—1879) և Սարգիս Կարբեցի, որի ժամանակ և գրում է Կոնդակը։ Վերապահում է Կոնդակը՝ տեղեկություն տալով նույն վանքի ու չորհանգիստ մատենի մասին, որի համար ժողովում են այնտեղ ամենայն ուրուկ և գոթիք։ Եվ թե ինչպես Մոզես վանք է շինվում և մասունքն այնտեղ փոխադրվում։ Վերջին գլուխներում յուր նախորդների պատմությունն է անում։ Այս գլուխները հնագրական-պատմական կարևոր տեղեկություններ ունի, և արժեքը միայն այդ տեղեկությունների մեջ է։

Երևի Զաքարիայի այս Կոնդակը հայանությունն է գտնում, և նրան մի քանի բանասերներ հորդորում են պատմությունն էլ գրելու

Պատմությունը երկու հատոր է:

Զաքարիայի Պատմությունն իսկապես պատմություն չէ, առաջ ու ճշմարիտ, առասպել ու իրողությունն վարդիվերո, խառնիխառն ժողովմանն են մի տեղ՝ առանց որոշ դասավորության, առանց որևէ կարգի: Ժամանակագրական ճշտություն, իհարկե, պահանջել կարելի չէ մի պարզամիտ մարդուց, որ պարզ սուտը ճշմարտից չոկել չի կարողանում և սոսորջա չնշին, մանր ու մոմեր դեպքերը իբրև կարևոր պատմական եղելություն՝ արձանագրում է:

Զաքարիայի Պատմության երկու հատորները մեկմեկուց բոլորովին տարբեր արժեք ունին: Առաջին մասը, սակավ բացատրությամբ, որ սոսկված է հիշատակարաններից և Առաքել պատմագրից կամ ականատեսից է լսած (Ա. ԺԶ, եր. 28)՝ իբրև պատմական երկ, արժեք չունի, որովհետև դուռ ժողովրդական գրույցներից և երգերից է առնված, որոնց հիմքը, սակայն, անշուշտ պատմական է: Առաջին հատորը, իսկապես, մի ժողովրդական բանաստեղծության ժողովածու պիտի համարել և ոչ պատմագրություն, որով և Զաքարիան, այս միամիտ մարդը, անգիտակցորեն, իր պարզամտության պատճառով, հանդիսացել է հայոց ֆուկլորի—ժողովրդագրության առաջին հավաքողը խորենացուց հետո, բայց և խորենացուց ավելի հարուստ ու հարազատ կերպով, քանի որ նա, հավատացած լինելով թե պատմությունն է տալիս, մեզ ժողովրդական անգիր բանահյուսության օբյեկտներ է տալիս և կամ բովանդակությունը, առանց փոփոխելու և հետաքրքիր մանրամասնություններով, որով նա հանդիսանում է իբրև ժողովրդական գրող, որի գրվածի մեջ մեռնում են ժողովրդական պարզությունը, կոպիտ, բայց թարմ կյանքը:

15 և 16 ու 17-րդ դարը մի դուրացական շրջան է. 15-րդ դարում, լանկթամուրի արշավանքից հետո նոր ազգեր և պետություններ էին գաղմակեղծվում, մի կողմից օսմանյան պետությունը և ազգը, մյուս կողմից քրդերն էին ձգտում պետություն կազմելու (Ղարա Յուսուֆ Սասունում, Իսկենդար, Զհան շահ), մյուս կողմից թաթարների հին պետությունը կործանվել էր և լանկթամուրի հաջորդ Շահրուխի ձեռքով նոր պետություն պիտի կազմվեր և, վերջապես, Միջագետքում Զհանգիր թուրքմենների իշխանապետությունը: Մինչև որ Զհանշահի մահից հետո Ուզուն Հասան, այս Զհանգիրի որդին բարձրանում է պարսից գահը և Հայաստանի միահեծան տերը դառնում (1468 թ.): Բայց նույն ժամանակ օսմանցիք Կ. Պոլիսն առնում են և կազմակերպվում, և սկսվում է երկու նոր կազմակերպված պետությունների մեջ երկուս ու կես դար շարունակ կռիվ: Ուզուն Հասանը հաղթում է (1473), Ուզուն Հասանից հետո խռովություն է ընկնում, և Շահ Իսմայիլ Սեֆյան իշխանը հակառակորդներին ընկճելով՝ Թավրիզում հաստատում է յուր գահը: Հետո Թահմազ որդին, խուտարանդ, Շահաբաս:

Այսպիսի նորոգվում է Սեֆյան ցեղով պարսից պետութիւնը և հաշ-
թական կերպով մեծ պատերազմներ է մղում ասմանցաց գեմ, գյուցագ-
նական կոնիւ, և շատ քնական է, որ ինչպէս պարսից բոլոր հարստու-
թյանց ողջընամորոթյան մասին, նույնպէս և այս հարստութիւն մասին
կազմվում են շատ գրույցներ և երգեր, որոնցից է և Շահ Իսմայիլի և
ապա Շահ Քահմազ Խոսրոսանդի, Շահարասի և Շահնեֆի մասին:
Ահա այդ գրույցներն ու երգերն են և Զաքարիայի պատմութիւն նյութը
կազմում:

Սակայն եթէ այդ գրույցները պատմութիւն չեն, նոցա հիմքը
պատմական է և նոցա մեջ շատ զեղեցիկ երևում են ժամանակակից
կյանքը, բնավորութիւններ և զեպքեր, կենցաղական գծեր, որոնք հե-
տաքրքիր են, որովհետեւ Զաքարիան անպաճույճ, բայց քնական ու կեն-
դանի է հանում, և այս տեսակետից Զաքարիայի պատմութիւն այդ
գրույցների մասը լրացուցիչ է յուր ժամանակի բուն պատմութիւնը:

Այդ գրույցների կամ անեկզոտների, ինչ որ հայոց է վերաբերում,
կենտրոնը կազմում է Շահարասը:

Այսպիսի պարզամիտ մարդը ինչպէս որ Շահ-
արասի վրա պատմվում է՝ պիտի բերեր իբրեւ Շահարասի պատմութիւն,
այլև ուրիշ շատ առասպելներ և սնոտիսպաշտութիւններ և այնպիսի
նկարագիրներ, որոնք պատմութիւն հետ բնով կապ չունեն:

Ինչպէս որ լսել է կամ տեսել և իրեն կարևոր է թվացել, առել է յուր
Պատմութիւն մեջ. երկրաշարժ, արեգակի խափարում, սով, մարախ,
երկնային օդերևութներ, հետաքրքիր գրույցներ, առասպելազարդ պատ-
մութիւններ, որոնք իրողութիւն վրա հիմնված թէ զուտ առասպելական՝
բոլորը կարևոր բաներ են Զաքարիայի աչքին, այն պատճառով, որ քննա-
դատութիւն կատարյալ բացակայութիւն է:

Զաքարիայի պատմութիւնը, առաջին հատորի վերջում և Բ. հատորի
մեջ ներկայանում է, այսպիսով, իբրեւ մեծ պատկեր, որի հիմքը պատմա-
կան է, հիշատակարաններից քաղած և կամ անձամբ տեսած, իսկ այդ
հիմքի վրա շարված են առասպելները և գրույցները, ականատեսի նկա-
րագրութիւնների հետ միասին խառն: Եվ այդ իսկ պատճառով թէ ինչով

Տ Ծրինակ՝ Բ. Գ. ԾԳ., Եր. 188—«Վասն միա նշանին երկնից», որ վիշապ հանեալ
պատմութեանն է: Կամ Բ. Գ. Եր. 35—«Վասն գեղին կերպարանալ կրնա, նույնը և Գան-
ձակեցաւ մեջ, որ և Մեհիթ. Այրիվանեցին իբրեւ նշանավոր դեպք առնում է ժամանակա-
դրութեան մեջ: մարդկանց հետ հարաբերութեան մեջ մտնող պարիկի հայտնի առասպելն
է: Եւսյնպէս Բ., Ե. Եր. 31—«Վասն օրտապատառ առնա, որ ի միում ժամու ատան գոյնս
փոխեացաւ, կամ ավերորոյսանութիւններ աւ դատարկախոսութիւններ, ինչպէս Բ., ԱԱ., Եր.
33—«Պատմութիւն միա վերադիւն, և հարցոյ զուրը «Վասն օրտապատառ առնա, որպէսզի եղ-
բանացին քամոթ անոցիկ որ առնե, ընդէ՞ր տեղիքան արգելոյ անարգ կենդանեաց: Բ.,
Ե., Եր. 12.—«Պատմութիւն կապապառ տուն, որ պատմվում է աստուծոյ տեսիլը շտապ
մարդ Այգաթ և զպատմութեան մեջ առնում է իբրեւ առթիւր: Բ., ԱԱ., Եր. 33—«Վասն իբրեւ
նկարի լուսնի երկնից, Եւս. Բ., ԾԳ., Եր. 188—«Վասն կրակային հրկիցն կրակայու-
մից տուր:

էր զբաղվում յուր ժամանակի հայ և պարսիկ մարդու միտքը, հայ ժողովրդի մտավոր կյանքն ու աշխարհայեցողութիւնը, բարձրը, նիստն ու կացը, սովորութիւնները, սեռտիպապաշտութիւնները, հավատալիքը՝ ավելի ևս պարզ են երևում այդ գրվածքի մեջ, քան մեր որևէ ուրիշ պատմական կարևոր երկի մեջ: Առաջին անգամ մենք այստեղ ենք տեսնում հայ գյուղը, այն էլ գլխավորապէս Արարատյան երկրի, Քանաքեռը, որը Զաքարիայի ծննդավայրն է, մի գյուղ, որ հետո տաղանդով պիտի նկարագրեն Աբովյանը:

Այստեղ մենք տեսնում ենք թե ինչպէս նենգութեամբ են վարվում իրար հետ պարսիկները և օսմանցիք: Շահը տիրում է Երևանի բերդին և հրաման է տալիս օսմանցի բերդապահներին՝ ուր ուզում են երթան. «Եւ նոքա առին զգէշն Մուրթուզայ փաշային, և ելին ի գնալ, իբրև զնացին կէս աւուր ճանապարհ, նենգաւոր ազգն Պարսից զնացին զկնի նոցա, և կոտորեցին զնոսա, և յափշտակեցին զինչսն» (Բ., Զ., եր. 12), Նույն հայացքը պարսից վրա, ինչ որ Առաքելն ունի, որ այսպիսի դեպքեր նույնպէս բերում է. «Կամ ինչպէս պարսիկ ժառաջողը դավաճանում է յուր ազգին և օսմանցոց հրավիրում՝ խոստանալով Երևանը նոցա տալ (Բ., Գ., եր. 5): Կամ ինչպէս պարսիկ խանը Մաղասբերդի սուլթանին, որ պարսից գերիշխանութեան տակ էր, խղճալու տեղ, տիկ է հանում և շահին ուղարկում,—բավական չէր, որ նրա բացակայութեան ժամանակ նրա բերդն օսմանցիք առել էին և նրա որդուն սպանել և կիներ էլ իրեն քահավէժ արել: Բայց պարսիկն երևում է և յուր լավ հատկութեամբ. Քահմազ զուլի բնկը, պատվի զգացմամբ լցված՝ սպանում է գերութեան մեջ այդ դավաճան Մուրադ բնկին և խոնթկարն ասում է—«Բարւոք արար, զի ծառայն իւր սպան» (Բ., Գ., եր. 7 և հտն.):

Այստեղ մենք տեսնում ենք թե՛ հայոց և թե՛ մահմեդականների մեջ տիկ հանելը. կուպիտ բարձրի հայ գյուղացոց մեջ, որոնք իրենց զլխին մահմեդականներից հկած խստութիւնն ու գազանաբարոյութիւնը իրենց համագյուղացիների վրա են քործադրում՝ գազանաբար պատժելով հասարակաց ստացվածքը դողացող տանուտերին (Բ., Բ., նր. 1 և հտն.), և մեր սարկավազը կարծես համակրում է. «և աստ տն՝ս դու զլարչարանս նորա» (Բ., եր. 4), «տեսէք և այժմ լուարուք, ասում է Եղեղրութեամբ:

Մարդկանց արտերն ամբողջապէս քայացած են, և միայն նյութական շահի ետեւից են ընկած, անիրավութիւնը, սպանութիւնը նրանց համար սովորական երևույթ է: Եվ այդ բոլոր առաքինութիւններն ու արատները Զաքարիան մեր աչքի առաջ է դնում և մեզ համար շոշափելի դարձնում, մեզ ցույց է տալիս դրանք գործողութեան մեջ և զանազան մասնավոր տեղեքներ պատմելով: Կենդանի արտահայտիչ պատկերներ, բայց և մեծ մասամբ զգվելի ու քստմենելի:

Եվ այդ բոտութիւնը, կուպտութիւնը նույնիսկ մտնում է Զաքարիայի պատմութեան մեջ, նրա ոճի մեջ, քանի որ մի լուսանկար է անում նա: Կուպիտ խոսվածք, լեզու, նկարագրութիւն ու մտածմունք, խաները մի-մի

րոնակալներն են, ինչպէս և ամեն զորեղ. նրանց ձեռին է սպանել ու ներել ամենքին: Ոչ միայն շահր խիստ պատժել զիտեմ, այլև նույնիսկ յուր զվարճութեան համար տանջել ժողովրդին:

Յ. Արրաւհամ կաթողիկոս Կրետացի:— Ծննդւան և կրթութեան մասին ուրիշ հայտեր չէ: Մնւած է Կրետէի Կանդիա քաղաքում: Քսան և Հինգ տարի առաջնորդ եղած Քնքիրտաղի (Ռոդոսթո), կամ ինչպէս ինքն է գրում՝ Քրակիր քաղաքին, ուստի և երբեմն Արրաւհամ Քնքիրտաղի է կոչւում: 1734 թ., հայոց ՌեճՁ, կաթողիկոս է դառնում (ուխտի եկած լինելով էջմիածին) և մեռնում է 1736 թ.: Միմեռն կաթողիկոսի թշնամոտեմ խիստ զովասանքով է խոսովում Արրաւհամ կաթողիկոսի մասին, թե թէր ահարկու և շքեղատես, մեծանձն և խելօք, ճարտարալեզու և հանճարեղ: Այս պատճառով և սիրելի է լինում Պարսից Նազր Շահին, որ Արրաւհամ կաթողիկոսին սյինքն պահէր և շատ խորհուրդ և տննելիս իւր ընդ սմա տնօրինէր և հարցանէր: Նույն թշնամութեամբ սրա համար ասում է. «քան զամեննսին առաւել արար զարեւրաթիւնս և զօգուտս արդոյ Աթոռոյս և ազգիս և բոլոր երկրիս մերոյ: Նազր Շահ կոյեցեալն այնքան էր ահեղ և զարհուրելի, մինչ քարինքս հալէին յահէն և յանուանէն: Սակայն ողորմածն աստուած այնքան քաղցրացոյց յաշն նորա զսրբազան Հայրապետս մեր, որպէս զԾովնէփ առ Փարաւոն և զԵսթեր առ Արտաշէս, որոյ բան ե խնդիր մի ոչ անկանէր յերկիր առաջի այնպիսոյ բռնաւորին: Արրաւհամ կաթողիկոսի Պատմագրութիւնից հենց այդ ևս նրեում է, ինչ որ թշնամութեամբ սրա համար զովնստով գրում է:

Այդ պատմութիւնն իսկապէս պատմութիւն չէ, այլ անձնական հիշատակարան (memobres), և իբրև այգպիսին՝ մեր պատմութեան մեջ մի առանձին տեղ է բռնում և, կարելի է ասել, եզակի է իր տեսակի մեջ, քանի որ մեզանում պատմական հիշատակարաններ շատ չկան: Արրաւհամն այն է մանրամասն արձանագրում, ինչ որ ինքն արել ու գործել է, կամ մտածել է: Եստ քիչ բան՝ ուրիշներից լսած: Հենց այդ պատճառով ևս Արրաւհամի հիշատակարանը շատ հետաքրքիր է, նա ուրիշներին նկարագրելով հանդերձ՝ դարձյալ ավելի ինքն իրեն է նկարագրում, յուր ճաշակը, հասկացողութիւնները, առաքինութիւններն ու արիւթիւնը, բայց նա ինքն իրեն նկարագրելով՝ նկարագրում է միանգամայն և ժամանակի ընտիր հայ եկեղեցականներին, որոնց լավագույն օրինակներից մեկն էլ ինքն է:

Այստեղ մենք տեսնում ենք, ամենից առաջ, թե ինչպէս մի գաղթական հայ մարդ մանկութիւնից բարեպաշտական կարոտութիւն ունի սուրբ աթոռները տեսնելու, մանավանդ Քվասն Հայաստան երկրի վանօրէից և ուխտատեղեացոյ: Ծպիսկոպոսը թողնում է յուր Քրակիր վիճակը (ՌեճԿԼ— 1719 թ.) տասներորդ տարում առաջնորդութեան և զնում է Ծրու-

Յ Արրաւհամ կաթողիկոս Կրետացի. Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նազր շահին հարցոյ. Վաղարշապատ, 1870:

ազգեմ ուխտ, իսկ ապա, 15 տարի հետո, ճանապարհ է ընկնում, հարյուր-
օր ճանապարհորդելով՝ հասնում է ս. էջմիածին, երկրպագում է սուրբ
տեղեկներին։ Ապա ցանկանում է Տարոնի ս. Կարապետ ուխտ գնալ, վեհը չի
թողնում և նա լսում է։ Ուայց և այնպես՝ փափագանոց ուխտ է անում Արա-
գածի ստորոտների վանքերին։ Եվ թեպետ՝ տեղաբնակ անձամբ, բայց
գնում է Արարատի մյուս վանքերն էլ ուխտ՝ «այնու մոտք և հաւատով, զի
բուժիցիմ ի յարաշար տենդէ ցաւոյս»։ Խոր վիրապ, Ակոռու մոտ՝ Մասիսի
ս. Հակոբա աղոյուրը, Հավուց թառ, Աղջոց վանք, ս. Գեղարդ, Գետար-
դիլ,—Մյուս վանքերն այլևս չէ կարողանում շարունակել այցելել, զի վեհը
մի քանի պատճառներով չուր մոտ է կանչում։

Գալուստին իսկույն ներկայացնում են Արրաճամ վեհապետին՝ սրբա-
զան կաթողիկոսին, որը էր նստեալ ի պարտէզն՝ ի ներքոյ մեծի աշա-
նին։ Կաթողիկոսը սիրով ընդունում է, «զի սաստիկ սէրն որ արժարեմայ
էր ի սրտի մերում Ի. ամէ ի վեր բոցափայլեալ յայտնի երևիւր», գրում է
պարզապէս Արրաճամ։ Նա ամենայն աննածուքյամբ է վերաբերվում Ար-
րաճամ կաթողիկոսին, որ չի թողնում մեր Կրօնացուն իրենից հեռանալ,
«որքան ապաղատեցի և աղաչեցի, չեղև հնար. և ոչ ետ թողլ և հրաման, ալլ
ասաց, եթէ Տէր կամեսցի, ի դալ ամի և ես կամիմ գնալ ի Տարոն... Կա՛ց
առ իս աստէն և ի միասին զնացուիք և անդ կատարեալ զուխա քուս... Եւ
եւ խոստացալ մնալ մինչև ցայգեկութն, և ապա լուել. որ և ծիծաղեցաւ
երանելին և ասաց բարի է, այնպէս եղիցի»։

Կաթողիկոսի հետ ուխտի է գնում Հովհաննավանք, որի առաջնորդ
Հակոբ վարդապետը դալիս հրավիրում է «զվեհն վասն օծման ս. խորա-
նին», ապա Սաղմոսավանք և մյուս սրբատեղիքն ուխտ անում։ Այստեղ
սիրուն նկարագրում է կաթողիկոսի հետաքրքրութիւնը, և թե ինչպես
«երբահայեցաւ է նա և քցաւեցող վասն ամենեցուն», և ասպնջականներին
ձանձրութիւն շտալու համար աճապարում է ս. Աթոռը, մանավանդ որ
ժամանակը խառնակ էր և Քահմազ խանի արշավանքի զրույցները պտըտ-
վում և հասնում են վեհի ականջին։ Կաթողիկոսը շտապում է, որ հոգա-
ղզհոգ ամենեցուն և զի այսպէս բնաւորեալ է... (Եր. 4 և հտն.)։

Ետա ճիշտ ընութագրում է Արրաճամը մեր սեպուխներին՝ տգետ և
ապերախտ, ոչ մի քանի հոգ տանել և ոչ ցավել, յուրաքանչյուրն իր հան-
գրատութիւնը, բարեկեցութիւնը որոնող և դրա համար քանացող և այն
ապահովող, հասարակաց բոլոր հոգար, «զամենայն ցաւս ընկենուլ ի վե-
րալ գլխոյն», «պաշտիչ ուրուականին իւրոյ», կեղծավոր ու շողոքորթ մե-
ծավորի առաջ՝ այն էլ չուր օգտի և բարեկեցութեան համար, իսկ մեծավորի
մեռնելուց հետո՝ երբ այլևս շահ չուեն, եպերել և հեգեկ շորպէս իրենուտ
անտի ունին զայն ազգն մեր, որոյ զպատճառն՝ ոչ ալլ ինչ գիտեմ, եթէ ոչ
զտգիտութիւն և զապերախտութիւն։ Ինչո՞վ է տարբերվում այս ընութա-
գիրը այժմյան վիճակից։ Մի՞թե Արրաճամ կաթողիկոսն չուր ժամանակի
մարդկանց լավ չի ճանաչում և որքա՞ն պեղծեցիկ նկարագրում է նրանց...
սուր, կտրուկ, չոր, բայց այրող։

Մի՞թե այսպիսի մարդկանց մեջ կաթողիկոսն իրավունք չունի ասնու-
-լու Արքահայրին, թղթով ինձ աստուած առաքեաց տեսանելով զխեղճու-
թիւնս իմ... լե՛ր ինձ խորհրդակից, ցաւակից և կարեկից... Մի կաթողի-
կոս, որի ստորոտը կարի նեղացեալ է, զի ի հեռուն հետէ ի դուրս չեմ
եղեալս, և որի վրա է ս. Աթոռի ամբողջ հոգսը, որ քիպեալս նույն բարե-
պաշտական փափազն ունի մի քանի մերձակա վանքեր ուխտի գնալու,
«բայց ցաւն ժամանակիս և զբաղմունքն ոչ հառն թողլա (եր. 5)»:

Եղանակն և տարին ծանր էր և լողն ապականեալս, շատերը հիվան-
դանում և մեռնում են, հիվանդանում է և վեհօր, և մեր Արքահայրը տառա-
պում և վատանում է (եր. 7) և լի ուզում հեռանալ կաթողիկոսի մոտից,
թեպետև տեսնելինս երեք-չորս անգամ ասում է, «գնա՛ հանգստացիր,
խեղճ ես, և ի ճանապարհէ՛ եկեալ դադրած ես», և եպիսկոպոսը գնում է
միայն մտածելով, թե մի՞ զուցե հիվանդը նեղանա կամ տրտմի յուր
լզնալու համար. այնուհետև ևս չգմահեղն նստելով՝ վարանէաք, և ընդ
միմեանս հայելով լռելեայն տրտմեալ երեսօց տարակուսեալս: Մինչև որ
երեսելին յուր օրհնութիւնը տալով աչք ձեռն ի մէջ ձեռացս հիշտ և հան-
դիստ աւանդեաց զմաքուր հոգին իւր ի ձեռն հրեշտակի բարոյ, ա՛յնպէս.
որպէս թէ ոք հանցէ խնձոր մի ի ծոցոյ և տացէ բարեկամին կամ սիրելոյ
խրոյս:

Եվ այդ ալն ժամանակ, երբ այդը կատարելուց հետո նազիր խանի
արշավանքի ահից Երեսնի հայ ընակիչներին կանայք ու մարդիկ փախըս-
տյա գալիս են էջմիածին:

Այս ծանր տարին ոչ ոք չի ուզում, երեկ, կաթողիկոս լինել: Ամենքը
Արքահայրին են մատնացուցց անում, որ հրաժարվում է՝ ասելով «թէ չեմ
բաւական այդմ դործոյ... մանաւանդ դարիպ և օտաւ եմս: Զոռով քարշում
տանում են Երեսնի փաշայի մոտ. Արքահայրը լայիս ողբում է, յի ուզում
կաթողիկոսութիւնը, որովհետև ընտրութիւն պիտի լիներ և Սպահանի ու
Ստամպուլի քաղաքացիք պիտի ընտրեն—«Ապա թե ոչ՞ Սուրբ Աթոռին և
կաթողիկոս նստողին մեծ վնաս կլինի» (9): Բայց փաշան առարկում է.
«Եթէ Սպահան և Ստամպուլ մինչև երթնեկութիւն պրեաք լինի և ընտրու-
թիւն վասն ումեմն, ի մէկ տարին լլինիր, և ահա երկուց կողմանց զօրք
և պատերազմունք երեկն, և էջմիածին ի վերայ հանապարհին է, մինչև
ցալն օրն վանքն պիտի քակուի, և միաբանքն անգլուխ գտնով մինն ոչ
մնայ, այլ ցրուին. այնուհետև ի՞նչ օգուտ է ձեր ընտրութիւնն: Ահա հա-
մոզող պատասխան:

Ժողովում են շրջակա իշխաններն ու եպիսկոպոսները և նրան զո-
ռով գնում են աի ժառանգութիւն և ի ներքոյ լծոյ սուրբ էջմիածնի և Աթո-
ռին մեծի սուրբ հօրն մերոյ Գրիգորի Առաւորչի:

Ու մեծ հոգացողութեան մեջ է նորընտիր կաթողիկոսը, անծանոյ
երկրին, մարդկանց ու միաբաններին, ել ու մտաքին և արարողութեան:
Եվ, որ զլիաւորն է, ամենին փող չկա, իսկ վանքի ծախքը մեծ և անթիւ:
Բայց որ զլիաւորն է՝ Ղարսում շարդում է նազիր զահն օսմանցոց, և եկել

է Արարատի կողմը, Կաթողիկոսին Մեղիքջան քանթարն իմացնում է, որ պիտի ելնել Նաղիբ խանի առաջ ընծաներով: Նաղիբ խանը սիրով ընդունում է, երեք օր յուր մօտ պահում:

Եվ Մայր Աթոռի ու եկեղեցու օգուտը խորհող կաթողիկոսն օգտվելով հասող հանգամանքից, ոչ միայն յուր կաթողիկոսական հրովարտակն է առնում, այլև ուրիշ երեքը էջմիածնի պահանջները թողնելու, և թզի թուրքացողքն և հայրենեացն զրկեսցին, և մի՞ ոք զայց է ի վանքս, և նեղացուցն է առանց հրամանաց խանին: Յոթմէ և ես վստահացեալ հրաւիրեցի զնա զալ ի վանքն թամաշայ և զհարաթ: Եվ նա զալիս է ու բանակում զնոր մօտ անդում. «զցորեանն և զգարին իսպառ կերցուցին երկվարացն և արաթուր կոխեցին, զի ժամանակ էր հնձոց. և զի ևս էր հնձեալ, զանդատում է կաթողիկոսը, եկած օրը կաթողիկոսը խանին ընդառաջ չի զնում, որովհետև ալլը... խելացնորեալք ոչ սուուցին զիս զփէսս պարսից և զսովորութիւնն երկրին»:

Սարսափում է ծերունի կաթողիկոսը. ահալ պակեայ, և ի կենցաղս յուսահատեցայ, և սկսայ այնուհետև ղյծտին և զհրաժարական զոչոյնն ալ, ներումն և ազօթս խնդրել յամենեցունց. և մտեալ ի սուրբ տաճարն՝ անկեալ առաջի սուրբ իշման տեղւոյն, լալով և հառալանօք, և դառն արտասուօք յանձնելով զհոգի իմ յաստուծոյ, և այսպէս պաշարեալ երկիւղիւ, և լքեալ սրտիւ զնացի ի բանակն կիսամեռս: Բայց որքան է մեծ լինում նրա սրտի ուրախութիւնը, որ մինչ ակն ունէի տանջանաց և մահուս, խանը իբրեւ մարդ է վարվում և խիւլայեաց ինձ, և ես՞ ոք ոչ վարմասցի,—բացականչում է ծերունին,—փա՛ռք աստուծո՛ հրաշագործութեանն, մեծ են գործք քո տէր, և յոյժ խոր են խորհուրդք քո, և ապա խաշով ու թափորով բերում են խանին էջմիածին: Եվ խանն ամենայն հետաքրքրությամբ դիտում է ու լսում է ժամերգութիւնը և մինչև իսկ 300 փլորի ոգորմութիւն տալիս: Եվ նույն դիշերը յուր կանանոցն է ուղարկում վանքը տեսնել: Մյուս օրը լուսանալիս՝ նորից զալիս, խոսում, ուրախանում է, մինչև անգամ շնորհակալութիւն հայտնում և մխիթարում՝ ասելով մի հոգար և մի՛ տրամիր և քնաւ մի՛ երկնչիւր, այս օճաղս մեր է...:

Կաթողիկոսն այժմ խրատված՝ ընծաներով հետը մինչև Փարսքար է գնում:

Լինում է Եղիվարդի դաշտում մեծ ճակատամարտը, օսմանցիք կոտորվում ու փախչում են, և կաթողիկոսը դիակներին ու վիրավորներին միջից անցնում է, ազատում շատ վիրավորներ կոտորելուց—թուրք, հայ, հոռոմ ու խնամում:

Շանճարեղն և երկրորդ Աղեքսանդրն պաշարում է Կարսը, նեղը լծում օսմանցոց, Երեսնը և Այրարատն ընկնում են պարսից ձեռք և խաղաղութիւն է լինում: Նաղիբ խանը արշավում է Թիֆլիս և կանչում է խաներին և այլն, նաև կաթողիկոսին և խիստ պատվերներ տալիս Երևանա խանին, որ լավ վարվեն կաթողիկոսի և հայերի հետ, և կաթողիկոսը շատ

ստղամենէր է ստանում հայոց համար, այլև ազատում 300 տուն հայեր՝ Թիֆլիսից Խորասան քշելուց։ Այլև հոգ է տանում հրկրի հարկի մասին, որ աղքատներին չենդնէ։

Ե Ր Գ Ի Զ Ն Ե Ր

Այդ երկու հարյուրից ավելի տարիներ ընթացքում հնդեցականներն և հնդեցական նշույթի մեջ բանաստեղծութիւն չկա, բայց բուն ժողովրդի մեջ հղել է, անշուշտ, բանաստեղծութիւն, և ավելի ժողովրդական երգիչներին մեջ, որոնք մեծ մասամբ աշխարհաբար լեզվով են երգել, իրենց տեղական բարբառով, շատ քիչ տեղեկութիւն ունենալով Ս. Փրցից և գրաբար լեզվից։ Այդպիսի շատ երգիչներն անհման են հիշվում 17-րդ և 18-րդ դարերի համար և արանց ժառանգները հարատւում են մինչև մեր օրերն իսկ։ Բայց դժբախտաբար դրանց երգածները չեն ժողովված ու գրի առնված, ուստի և կորած են. իսկ գրվածներն ևս հրատարակված չեն։

Այսպէս, 17-րդ դարու երկրորդ կեսի երգիչներին մեկն է Նասայեկ Երեց, որ երգել է արևմտյան բարբառով, խառն գրաբարի հետ. ունի երեկ կրօնական կրթութիւն, և երեց լինելով՝ Աստվածածնի վրա էլ տաղեր է ասել, որոնք, սակայն, տպված չեն։ Կոստանյան, Բ. պրակ, եր. 11, կա՝ «Տաղ ի վերայ վարդին և անուշահոտ ծաղկանց», որ սովորական ձևով մի հասարակ գովեստ ու նկարագիր է վարդի ծաղիկների, թեպետև սուր հին բանաստեղծներից, բայց ճաշակը դեռ երևում է ոտանաժողորի և բառերի ընտրութեան մեջ։ Ավելի գեղեցիկ է 1670 թվին գրած մի տաղ (Կոստ., Գ. պրակ, 15)՝ «Տաղ սիրոյ և ուրախութեան», որ նկարագիր է գարնան բնութիւն, ծաղկող այգու, ծառ ու ծաղկի և երգեցիկ թռչունների, հատկապէս պուլպուլի և վարդի (որի համար առումը պայծառագեցաւ վարդն կարմիր սպիտակ, յայտնեցաւ ի մէջ կոկոնին երկնազարդ ճշմարտապէս, իսկ պուլպուլը.— «Աղաղակէր քաղցր ձայնիւ պիւպիւն վարդին սիրուն, ոչ դադարէր երազ շրջելոյ վարդին սիրոյն»... «Առատուն մինչ իրկուն գովք ասէր»)։ Գեղեցիկ նկարագրված է սոխակի սերն առ վարդը, թե ինչպէս նա զարթնում է կես գիշերին, կաքավում, ծիծաղում, արտաբովում ծիծաղելով. կամ երգելով ու ճովողելով վարդիւմ վարդի շուրջը, անթաքթ ալքով նրան նայում։ Խսկ մյուս կողմից՝ ինչպէս վարդը ննջում է ցողի մեջ մանրամասնիկ ողողվելով, մինչդեռ մյուս ծաղիկները «հոստ անուշ բուրնն ի թիփն գունգայն ծաղկածաւալն մի տեղ խմբված ու պար առած սոխակի քաղցր ձայնով հրճվում են, գովում են բոլոր թռչուններին ու սոխակի համար արքայական դահույք պատրաստում։

Անշուշտ այս երգն այլարանական է՝ թռչունք—տղայք, ծաղկունք—աղջկներք. վարդը սիրուհին, և ծաղիկները նրա ընկերուհիք։ Բայց հենց առանց այդ այլարանութեան ևս ուղղակի իրրն բնութիւն երգ՝ մեր գեղեցիկ երգերից մեկն է։

հասարակ երեցից ուղիղ հարյուր տարի հետո ապրել է Սայաթ-Նո-վա,— որ ամենի մեծ և զուտ քնարական երգիչ է, մեծ թերևս գուցե նրա համար, որ նրա զրաձեններից ամենի բան ունինք։ Սակայն Սայաթ-Նովան ուրիշ կարգի երգիչներին է պատկանում։ Նա աշուղ է։

Սաղաթ-Նովա՝— Սայաթ-Նովան աշուղ է, այսինքն՝ ժողովրդա-կան երգիչ։

Սայաթ-Նովայի հայացքն աշուղության վրա նրեւում է նրա մի քանի երգերի մեջ։ Ախվերդյանի հրատարակության մեջ գրած առաջին երգը (1759 թ. գրած) մի զովասանք է քամանչայի. արծաթե ակնեղով, դուխը ջաղահիթ քարած, շիրմայի (փղոսկրյա) կոթով, փորը սաղափով նախշ արած, ոսկե սիմուլ, էրկաթը փանջարա արած, վարադնած ճիպտով. ուշի պոչից ձարը։

Քամանչան (աշուղի նվագարանը) լինումն սաղի մեջն զոված դասն է, որ պարապ վախտին րափառ է ուղում, ժերծըրմում է աշխուժում է լայով ու սուրճով. նրա ճրոյրքը շարվում են զողջանիւրք, և նա ժեմը-լիսի կնան է. նա ղաւտ տխուր սիրտ խնդացնում է, հիվանդի դողը կըտ-րում, թերք քաղցր ձայնը վեր է ունում կամ քաղցր հանգով խոսում, ոչ միայն ճածողին հրկու է շինում, և ճեհտը խաղացողի սիրտը բաց անում, այլ և լսողներին քաղցր դող ու սափա է ցույց տալիս, այն աս-տիճանի, որ ղաւտին զարթում լուսացնում է, շատին էլ օրոր կարգալով քննցնում է բանգով՝ ինչպես մի անուշահամ գինով լիքը ոսկե թաս,։

Երգիչն յուր նվագարանի արտաքին զեղեցկությունը նկարագրելով՝ պատրաստում է նրա ներքին ազդեցությունը ըմբռնելու։ Այդ նպատակով պիտի խոսքով է ասում, քամանչայի արժանավորությունը զգալ տալու համար։

Սակայն ճեմաղա (վատթար) մարդը չի կարող քամանչի այդ ազդե-ցությունը տեսնել, քամանչն նրա պայան է, ուստի և երգիչը հորդորում է ղաւք անել ամենի ևս լավ օրերի, այսինքն փորձերի ետեկից լինել։

Ահա այսպես գիտե երգիչը յուր նվագարանի ու երգի ուժը, որ ոչ ոք կարող է միճելով (ըստ աղուղների) նրա ձեռքից խլել, այսինքն նրան հաղթել, իսկ, ընդհակառակն, քանի սաղ է Սայաթ-Նովան, շատ բան կըտեսնի այդ քամանչն, շատ հաղթանակներ կտանի, միայն հարկա-վոր է, որ խալիս աղոթք անե, որ ապրի նորա անողն։

Ի՞նչ պիտի լինի այդ հրաժշտության նպատակը, արդյո՞ք միայն

1 «Սայաթ-Նովա», լույս զրած աշխատասիրութենով Գեորգ Ախվերդյան, Մոսկվա, 1852.— Մի բժիշկ, Գեորգ Ախվերդյան, որի վաղամա մահը զբնի է հայոց զրակտե-թյունը յուր բաներուն ու սիրող մշակից.— Ախվերդյանը զմարտաբար միայն յուր մի հատարն է լույս ընծայել՝ «Գուտանք», առանց ժամանակ ունենալու։ Այսու զուսանների ժո-ղովածուն ևս հրատարակելու, ինչպես և «Առակ, առած, միճեականակեր և ամենայն տեսակ խաղեր», որոնց ժողովելու, կարգավորելու սիրտեղը չի նա։ Նրա հրատարակությունն յուր հատարանով և ժողովածություններով ոչ միայն յուր ժամանակին, այլև ուշիս ժամա-նակին պատիվ կբերի ամենայն մարդու (անհուշ մի քանի բան հետքով)։

ուրախացնելու Երզնիէն արդեն այն խոսքով թէ՛ «նաքաղ մարդ թիղ չի կանա տեսնի, դուն նրա պատն իսա անկարկում է յուր մտածութիւնն եղանակին, նա իրեն անվանում է մի տարի առաջ, 1758 թ. գրած (լթ. եր. 131) երգի մէջ թաւախի նոքար», որ «համով պիտի ծառայէ ածնէքին, Թեպետն այդ ծառայութիւնն մէջ շատ դառնութիւն է կրում, նվ ինչ է այդ դառնութիւնը. նա իբրեւ խալխի նոքար խալխի կամքը պիտի կատարէ. իսկ խալխի կամքն է զվարճանալ ու սիրտ երգ լսել. սակայն աշխարհը միայն զվարճութիւն ու սեր չէ. քվտը տիգ հարսնիք, վուր տիգն սուք, վուր տիգ սոյլ-րաթ խաղ է ըլլում, վուր տիգ ժամ, վուր տիգ պատարագ, վուր տիգ սիրով տաղ է ըլլում»,—այսինքն ուրիշ խոսքով՝ զվարճութիւնն հետ խառն է և սուգը, մարմնի հետ միացած է և հոգին։ Մարդս երկվութիւնից է կազմված, որոնք իրար հակադիր են ըստ քրիստոնեական հայացքի, և Սայաթ-Նովան կանգնած երկվութիւնն առաջ՝ չի իմանում ի՞նչ վճիռ տա, թէ եր հոգւտ կամքն իս անում, մարմինդ բնորոշադ է ըլլում, և բացականում է՝ «վո՛ւր մէ դարդին կու դիմանաս, դուն շրտտար Սայաթ-Նովան»։

Հոգին պահանջում է և ասում է. «թնկուղ իմանաս, դիտենաս աստ-դերու համբարքն սիրուն, անբարի գործն կորած է», ալղպին է ասում «շարանց վայրն սիրուն, Ավետարանի խօսկիբն՝ մարգարտն կարգը սիրուն»։ Նա քարոզում է. «թն էս կինաց փառքն լուգիս»՝ էն կինաց ալմասն կուտան. «թն հոգւտ խաթիր շալ հագնիս»՝ զար քաշած աստան կուտան»։ Նա պահանջում է մեղքը խոստովանել և անձնուրացութիւն. «Սակայն աշխարհն էլ յուրն է պահանջում. նա այդ քարոզից խնջի չի գալիս, նրա անէի մեջ նստած է քանախտելի չար դնը», որ մինչև դուրս չգա, մարդ չի «աղղվիլ. խոսք ու խրատներով բան չի լինում, նրանց համար ավետարանի խոսքերը ջալ ու զովար են խոզի առջն ամած», ուստի թնկուղ դարաւտանն պահ տաս՝ ծնծով չի խրատվի խիվն... բնդասլն ասըլ չի դանա. Թուով չի սիպտակի սիվն, ծուռն փետն չի դրստի ռանդան»։ Ուստի և Սայաթ-Նովան իզուր կամենում է դրստել իբրեւ «զուրգար» այդ ծուռ փայտը։ Նրան լին հասկանում և նրանից ուրախ երգ են ուղում, «խալխին համով դուրուղ անել» միայն։ Բայց դեռ նա բարի է, ինքն իրեն մխիթարում է աշխարհի այդ անուղղելիութիւնից և կուում. «եով քիզի լեղի պարքիվն, դուն տո՛ւ շաքար», միայն պետք է շանք անել, որ իր «շուշնն չկոտրին, չխփին քար», և շարունակում է միառժամանակ ևս խալխին համով ծառայել։

Սակայն այս երկվութիւնը նրան հանգիստ չի թողնում. նրա աչքի առաջ (լԳ. եր. 136, գր. 1759 թ.) կանգնած է շարունակ աշխարհի ունայնութիւնը մի պատուհանի պատկերով, որի միջից նայելով՝ տեսնում է կյանքի բազմատեսակ եղանակները. այդ պատուհանից մտիկ տվողը խոցվում է դադերով, այնտեղ «սուտը շատացն է», «զուրթը համպ չէ գնում, բարեկամները թշնամի են դառնում», «զուլվաթն էլ թիրար լունի»։ Կամ եր. 143, երգ լէ (1759 թ.). «Շուռ էրիտ շարխ ու փայլագն, գուլմաթը միզնից խոռվ ա, ում հաքին հին շալ ին տեսնում, էլ չին ասում թն էս ո՞վ ա»։ «Իմաստուններն լսեսան էս աշխարհիս հուտն ու համքն»։

Սակայն այդ ունայն աշխարհն էլ ոչ մի մարդու մնալու չէ, մահը պատրաստ է. ոչ ոք չի կարող ապելլիթն առաջնորդ մինչև մուրթն կարող է ապրել, քանի որ աստուծոս հեռին գնալու է մարդու աշխարհքն էլ ու մուտքըն: Եվ զորս գլխանի հաշի մրենն աշխարհի է թամքն, բեր ու մանուկ բաժանվեցան, մանուկն էնդորս հանի լալու, և, որ ամենից դժվարն է՝ «Սատանան մե դամբ է դրի Ադամի զաթն որսալու. շատն սատանանն է տանում, վերջն մեռն է վա՛յ տալու»:

Այս ամենն ի նկատի ունենալով կող ու սահման ալլևս լին զվարճացնում երգին. անցն է նրա բաղդիան քողցր փառքը, նրա դառն վիշտը շատանում է հետզհետե և մանալանդ համբերութունը հատնում է, չի դիմանում խախի դափին: Նա կյանքից ձանձրանում է. «Մարթ համաշա մեկ չի բլիս: Եվ այդ դառնութունը հետզհետե ավելի մեծանում է, որովհետե թերեկ լավ էր, կանց վուր էսօր, իսկ ապագայի համար ևս հույս չունի, քանի որ նա հաճախ հուսախաբվել է՝ «Բաղդերումն բեզարի իմա: Միանգամ արդեն այդ քրիստոնեական հոգեմտության հայացքին հասած՝ ալլևս նա, անշուշտ, «խաղերից էլ պետք է բեզարեք», ինչպես որ բլրուր լաց է լինում, երբ վարդի խաբը շատանում է, այնքան կոկոն քաղում են, որ չեն թողնում ժամանակին բացվի վարդը: Լալիս է, ողորմ է երգիլը աշխարհի վրա, ուր սուտը շատացել է, և ցանկանում է բաղերից բեզարած բլրուր պես դուրս թռնել: աշխարհից, զի լավ մարթն էն է՝ զուխն պահն աշխարհում էլ թիբարովս կամ լավ մարթն էն է՝ սիրով անն բարի հրեշտակներու կամքն»:

Բայց ի՞նչպես պետք է պահել զուխն աշխարհում էլ թիբարովս Շատ պարզ է այն ժամանակի հայացքով: Պետք էր ուրանալ աշխարհն ու մարմինը և միշտ հոգու հոգից երթալ:

Թե ի՞նչպես է հասկանում ժամանակակից մարդն այդ անձնուրացութունը, որ հետևանք է այն հայացքի, թե՛ աշխարհս միզ մնալու չէ, մալ անիլն ինչի՞ն է շահ (եր. 136, 143), կամ բլուր չէ Ունիթի նման, կալ անիլն ինչի՞ն է շահ, շատ գեղեցիկ երևում է Գ. Երզնց, եր. 52, գրած դեռ 1753 թվին: Այդ է՝ նախ կրթել իրեն ճշայն (ամոթ), ապա (համեստութուն), առ (ամոթ) սիրելով, ապա լևստված, հազի, յառ (ընկեր, ալե-տարանական իմաստով) սիրել, զգի, զալամ, դավառ սիրել, լեռատ, սորո (համբերութուն) ու շառ (արդարութուն, դատաստան) սիրել, լուրհա, զոնաղ, տառ սիրել, և վերջիվերջո լվոնի, անապատ, բուռ սիրել: Այս է լևստո շարքումը, այս խրատներն են գրած ճշարանց վարքումը, լահալ մտիկ անիլ հացի ու աղի (արդարության), հպարտութուն լանիլ, ալ խոնարհ լինել:

Բուրբ կրոնավորի համար եղած պահանջներ (նույնպես գիր սիրելը), որոնցով մարդ լևստո դուր կգար, բայց որոնցով հոգու խաթնը մարմնու ումբը կես է լինում, Ուստի և դեռ 1753 թվին երանի է տալիս իրեն, եթի միայն այդ կարողանա անել: Այդ աշխարհուրացության հայացքը հետզհետե զորանում է նրա մեջ, որքան ավելի նա հուսախաբ է

լինում, և մեր երգիչը վերջապես քաշվում է վանք, հակառակ յուր խոստմանը, թե ժքանի սաղ է Սայաթ-Նովին, շատ բան կուտենինս, քամանչառ, Սայաթ-Նովան աշուղ է, և իբրև աշուղ յուր բանաստեղծության նյութ ունի սերը, որ երգվում է սովորաբար վեճերի և ուրախությունների ժամանակ, նրա երգերի մեծ մասը նվիրված է այդ նյութին, որ երգվում է աշուղական ձևերով։

Սայաթ-Նովայի այդ իդեալի նկարագիրը երբեմն մի կանխանմանությամբ է միայն, մի թեմայի զարգացում, որ նման ձևերով արդեն շատ բանաստեղծներ արել են. գրեթե բոլոր նմանությունները կարելի է գտնել 15—16-րդ դարու բանաստեղծների մեջ, եվ ինքը, Սայաթ-Նովան անկախ չէ գտնում այդ ձևերը, այլ շատ հավանորեն պարսկերեն կամ թուրքերեն երգերից պատրաստ առնում է, որին ապացույց են և հանգերը ոտար բառերով։ Անհատականության կնիք գրեթե չկա, եվ ինքն մենք Սայաթ-Նովայի տիկիներ համեմատելու լինենք Աղթամարցու տիկնոջ հետ, ոչ մի առանձին տարբերություն չենք գտնիլ, որովհետև դա մի որոշ տիկին չէ, որ գովում են, այլ տիկնոջ՝ «առնգականփայլ» երեսով տիկնոջ զաղափարը, գեղեցկությունը, և գրեթե միայն արտաքին գեղեցկությամբ կնոջ վերացականությունը։

Ամենից առաջին տեղը բռնում է կնոջ արտաքին գեղեցկության գովքը, կնոջ պաշտամունքը, սիրո արտահայտությունը, մարմնական աննման գեղեցկությունը, որի սեման աշխարհիս մեջ լի տեսածա (Ջ, 61, դ.). կամ՝ «թամամ աշխար պսուտ էկա, լթողի Հաբաշ նազանի. ջրեսա քու դիզարի պես՝ դուն գիփունին բաշ, նազանին» (ԻԾ, 112 ա)։

Ընդհանուր պատկերի մեջ, բնականորեն, ամենից ավելի զբաղվում են ալքերը, որոնց համար զանազան նմանություններ է բերում.—«Օսկու մեջն մինա արած աշխիրդ ակնակապ թաա էա (ԺԸ, 93, բ.), կամ՝ «Աշխիրդ կարմիր վարդ, նուր բացարած տուխտ» (ԺԶ, 88 դ.)։

Դոշ ու թիկունք.—«բոյլմեղ շուրա մատն ավելի լցվիլ է գոշգ ու թիկունքդ» (Դ. 55, բ.)

«Ռանգդ շաքարի» (ԺԶ, 88, ա.)

«Ռանգդ փռանգի ատլաա էա (ԺԸ, 93, բ.)

«Քու տերն բաղն ինչ կոնէ, քու հուտն ռհհան իս շինի...»

Աշխարհն ծով, գուն մէջն նազ, ման իս գալի, լուեգ իս
անուտն (Ժդալ) (ԼԾ, 139, դ.)

«Ղուրբան իմ ծուցիդ նուանը» (ԼԶ, 141, բ.)

«Լիզուդ օսկն դալամի պես» (ԽԱ, 151, դ.)

«Մեզդ հաղիգմեն (գործիք՝ պղնձն թել քաշելու) քաշած
սիրմա մալթուլի (արժաթյա) նման էա...» (Լ., 127, դ.)

«Երիթ հարուր ու վաթսուն ու վից ամեն անդամդ դարարի»
(Դ., 55, դ.)

Հաճախ Սայաթ-Նովան յուր յարին նմանեցնում է ծաղիկների և հատ-
կապես վարդի, սակայն վարդի և սոխակի այլաբանությունն ինչ անուամբ, այլ
յո՞ղ նմանությունն. այլաբանական երգ լուսնի Սայաթ-Նովան. ամենից գե-
ղեցիկ համեմատությունը յուր և յուր յարի մի՞հակի համեմատությունն է
(Ժ. 73)։

Ուստի՞ գու քաս, դարիբ բըրբուլ,
Դու մի՛ լաց 'լի, ես իմ լալու.
Դու վարթ պըտոն՝, ես գողալիկ...
Դու մի՛ լաց 'լի, ես իմ լալու։

Արի՛, բըրբուլ, խոսի՛ր բառըն,
Օխնըվի՛ր քու էկած սարըն.
Քի վարթն էրից, ինձ իմ լարըն,—
Դու մի լաց 'լի, ես իմ լալու...։

Բնությունն առհասարակ գրեթե տեղ չունի. միայն յարի ման գալը
պարտիզում (ԻԲ. 154)։ Սայաթ-Նովայի սիրած նմանություններն են նաև
թանկագին քարեր և մետաղներ, ռենգին ակն վրեժ շարած՝ անբան օսկու
ռախտ իս, գողալ... (ԻԱ, 102, ա.)
«Սկանգարի Զուլդարի թողած իսկահիր իս, անդին լալ իս,
Դանգն գանգի միլին հանած, հիդքաշած մսխալ, մսխալ իս»
(ԻԱ, 102, գ.)։

Հազուադր և զարդը նույնպես գովասանքի առարկա է.—

... Թե խամ հաքնիս, թե դար հաքնիս,
Կու շինիս դումաշ, նազանի...

Բարակ միլթիդ թիրմա շալն՝ նման է օսկե քամարին.

Ղալամն ձեռնն լ'է կանգնում, մաթ շինեցիր նազըշքարին։

Դուն կրակ, հաքածդ կրակ, վո՞ւր մե կըրակին դիմանամ։

Հինդու զալամքարու վրեն ծածկիլ իս՝ մարմաշ, նազանի։

Դաստամադիդ թիլի մնլըն մե շաղա մարչան է քաշած (ԻԵ, 112)։

Ձնայելով Սայաթ-Նովան ժամանակի բոլոր թանկագին բաներով գո-
վում է յուր գողալին, բայց և այնպես հաճախ բառ չի գտնում գովելու.

«Յար, քիզ ինլո՞վ թարիփ անիմ՝ աշխարումս բան լմնաց.
Կրակն ծովեմեն դուս էկած՝ ուշ, շնիրան իս ինձ ամառ։
(ԺԸ, 93, դ.)

Ղուման ասիմ՝ շուրեղեն է կու մաշվի,
 Սալթի ասիմ՝ ախբը մին օր կու տաշվի,
 Զեյրան ասիմ՝ շատ մարթ քիզիդ կու լաշվի (Համեմատվել),
 Քաս վո՛ւնդ թարիփ անիմ՝ միբա (երկին) իս, գողալ:
 Թե մանուշակ ասիմ՝ սաքեմեն կոսին,
 Թե ջավայիթ ասիմ՝ քարեմեն կոսին,
 Թե վուր լուսին ասիմ՝ տարբեմեն կոսին,—
 Արեգագի նման՝ փարա (լույս բուրբակ) իս, գողալ:
 (ԺԶ, 88, բ., գ.)

Ներքին գեղեցկությունը շատ քիչ է ոգևորության նյութ դառնում Սալթ-Նովայի համար, ինչպես առհասարակ մեր ժողովրդական երգերի համար: Բանաստեղծը բավականանում է մի քանի ընդհանուր անհարկ-ներով. «դու խոմ էն գլխեն պոված իս, ես քիզ նուրմեկ գովիմ արի» (Գ. 55, գ.), բայց դեռ արտաքինն է գովում: Կամ՝ «դու էն գլխեն իմաստուն իս, խելքդ հիմարին քաք մի անի» (Ը, 66, ա.), կամ ազգն է գովում «սակդ ասկերում գոված» (Ը, 66, բ.),— «խոսկիրդ քաղցր թաղցր է, լիզուդ շաքար ու նաքաթ է» (ԺԳ., 84, դ., ԺԷ, 90, բ., ԺԸ, 93, բ.):

Ինչպես կնոջ պատկերի մեջ անհատականությունն չկա, նույնպես և հաճախ զգացումների արտահայտությունների մեջ տարբերություն չկա. զգացումները միևնույն ձևով կամ ֆորմով են արտահայտվում, շեյրան լինել (Թ, 69, բ.), այրվել սիրուց, թերած խորված ման իմ գալի, մի տիզ չկա մար ունենամ (ԺԳ, 81, գ.), «Սիբտս էրից՝ շեյրանի նման ման գալդ», կամ՝ «վախում իմ թե՛ ինձ էլ էրիս՝ անհանգիսի հուր իս, ախպեք», «Հուր իս էշիով կրակած» (ԺԱ, 75, ա., բ.), «կրակ նընգած վառ իս էլի» (ԺԱ, 76, ե.), «Ինձ հուրյան, քիրյան արիր» (76, գ.):

Սալթ-Նովան կնոջ պաշտամունք ունի և սեր է գովում, և սերը երգում է կանխանման ձևերով, բայց զուտ անձնական շեշտերով: Այդ սերը մի իդեալական գաղափար չէ, այլ մի իրական նյութական զվարճություն, բայց ոչ ֆիզիկական կրթի զվարճություն, հեթանոսական սեր—Սալթ-Նովայի միտքը հեռու է այդ քանից, երկրավոր զգայականությունից, նվ այդ սերն անարատ մաքուր է:

Սերը պետք է հաստատ լինի (Ը. 66, դ.), և մարդ մի հատիկ յաք ունենա: Այդպիսի սեր ունենալու համար պետք է երկուսն իրար հավասար լինեն (ԺԳ, 81, ա.): Այդպիսի յարն անգին է, որից ոչ մի բանով բաժանվել ու հեռանալ չի լինի, ոչ մարգարտով ու ալմաստով, ոչ մահով, ոչ ահով և ոչ շահի հրամանով (Թ. 50):

Նրա անձնական զգացումը երևում է դժբախտ սիրո մեջ, երբ յարը նազ է առնում (ԺԷ, 90, ե., Թ, 69, բ.) և հեռացնում է յարին (Ը, 66, գ.) ուրիշին լսելով. երբ նրա յարն իրենից նեղացած է և աշխատում է սիրտն առնել (ԻԸ, 119) և հավատացնել, որ ինքը հանցանք չունի (Ը, 66, բ., ե. 58, ա.): Այդ ժամանակ կսկծում ու լաց է լինում անհասական կերպով (Զ,

62, և., ԻԴ, 111, և., ԺԸ, 99, դ.) կամ մահ է ցանկանում (ԻԲ, 106, և., ԺԱ,
103, և.), որովհետև առանց սիրեկանի՝

... Ինչ կոնիմ առյաթն ու սազն,
Ձեռնեմեա վեր կոծիմ շտնգիրն մեկ-մեկ,
Զուներ ուշկ ու միտկըս իրար շաղեցիր,
Փահմես կու հիռացնիմ հանգիրն մեկ-մեկ:

.
Առանց քիզ ինչ կոնիմ աշխարհիս մայրն...
Կու հաքնիմ մազեղեն, կու հաքնիմ շալըն,
Կերթամ ու ման գու քամ վանքերն մեկ-մեկ:
Բըլքամ մե մարթ աաստ պա՝ վուր ինձ խրատե,
Գո՛ւզալ, քու էշխեմեն սիրտըս ազատէ (է. 64):

Ցարից խոստում և հաստատուն երդում է ուզում՝ հաստատ երդում
խոստանալով (ԻԵ. 112, և.): Այսպիսի երգերի մեջ պակաս չեն հնչուն-
ներ, որոնք իրոք մի փափուկ բանաստեղծի սրտից են բխում ու մեզ տա-
նում ի ցավ և ի խնդություներ:

Նա թափառել է ուզում իբրև աշուղ, երբ սիրեկանը մերժում է իրեն
(Ը. 67, և. Ժ.): Աղաչում, խնդրում է գթալ իրեն (Զ. 61, դ., Ը.), ասելով՝
որ պակսի՝ լարին կպակսի (Ը. 67, և.):

Եվ իսկապես Սալաթ-Նովան դժբախտ է լուր սիրո մեջ. «Ինչո՞ւ չէ-
լավ, չոսատ էկա՞ր մե լա՛վ լարին, Սալաթ-Նովա» (ԺԳ, 82, և.): Նա-
դժբախտ [է], որ լուր սիրածն ուրիշին է պատկանում:

ՈՒՐՎԱԳԾԵՐ XIX ԴԱՐՈՒ ՀԱՅՈՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ:

(ԱՌԱՋԻՆ ԵՐԵՄՆԱՄՐԱԿ)

Մեր նոր գրականության սկիզբը:—Ամենից առաջ կուզեի որոշել, թե ո՞ր ժամանակից պետք է դնել մեր նոր գրականության սկիզբը, արդյոք 18-րդ դարում՝ Վենետիկի Մխիթարյանների¹ց, ինչպես դնում են հաճախ:—Ըս կարծում եմ, որ Մխիթարյաններն և ինքը Մխիթար Աբրահան սկիզբ չեն, այլ ծնունդ ու շարունակող են այն մեծ շարժման, որ առաջ է գալիս հայոց եկեղեցու մեջ 17-րդ դարում և տևում է մինչև 19-րդ դարու կեսերը և այս կողմն ևս:

Մեր հեի և նորի բաժանումը լինում է ոչ թե 18-րդ դարում, այլ 16-րդ դարու վերջերը և 17-րդի սկզբներում, երբ համապարփ իշխում էր ափերակ և թանձր տգիտություն, երբ ստգիտութեամբ խոսականացնալ և կորդացնալ էր ազգս Հայոց,—ինչպես գրում է Առաքել պատմագիրը,—և ոչ միայն ոչ ընթերցողին, այլ և ոչ գրիւս գիտէին և զգորութիւն գրոց. վասն զի անպիտանացնալ էր գիրքն յաշս մարդկան և իբրև զկոճեղս փայտից անկնալ յանկնան ուրեք՝ լցնալ հողով և մոխրով:—Անկումը սոսկալի էր. մեր հին քաղաքակրթութիւնը գրեթե ամբողջապես ոչնչացել էր այդ ժամանակ: Մարդիկ կտրվել էին հեից այն աստիճանի, որ հոգեւորականներն եկեղեցուց դուրս աշխարհական հագուստով էին շրջում, տրեխներով ու շուխայով սեղան բարձրանում և մոռացել էին նուրիսկ շատ եկեղեցական կարգեր:

Ըսվ հեի հենց այս մահվան մեջ է, որ սկսում է ծնվել նորը՝ հեի վերածնութեամբ: Պետք էր հայութիւնը փրկել վերջնական անկումից և վայ-

¹ Այս վերնագրի տակ՝ «Արարատի» ընթերցողներին հետզհետե կտրվել մեր 19-րդ դարու գրականության, զխաղորատուն քանասանդղութեան պատմութիւնից տեղութիւններ, որ ցողում են տասը տարի առաջ Մ. Հիմաճեի ճնմարանի լատաններում արած դասախոսութիւններից, ուղղելով և հորից մշակելով: Ասի չի ուզի, որ իմ գրածը չի կարող լինել գրականութեան պատմութեան, որք. կարծում եմ, դժվար է դրել այժմ և մասնականոք էլքմանքում, ուր չկան բոլոր հեղինակները: Ըս կաշխատեմ խոսել այն բաւոր հեղինակներին տեղին, որ կան այլոց:

բննացումից, իմ ահա՝ 17-րդ դարու սակավաթիվ լավագույն մարդկանց բոլոր ձգտումը կենտրոնանում է այն բանի մեջ, որ կենդանացնեն մեռնող հայ կյանքը: Դրա համար երկու ճանապարհ է ներկայանում նրանց— վերածնել հին հայ կյանքը, գիրն ու գրականությունը և ապա օգտվել եվրոպական լուսավորությունից, որ մեր նոր գրականության համար նույն դերը պիտի խաղար, ինչ որ հին քաղաքացական մեր հին գրականության համար: Այս երկու ուղղությամբ առաջ է ընթանում մեր մտավոր շարժումը: Ենթադաս Ա-ի օրերից սկսած մինչև 19-րդ դարու վերջը, հարկավժ ժամանակի բնական շրջափոխությունը: Եվրոպացիներին ազդվելը սկզբում շատ թույլ էր, առաջ էր գալիս միայն գաղթականներին, վաճառականներին, կաթոլիկ քարոզիչներին և ապագություն համար իվրոպա զննող մարդկանց ձեռով, բայց այդ ազդեցությունը հետզհետե զորանում է և 19-րդ դարու երկրորդ կեսից առաջին տեղն է բռնում. մինչև հին վերածնությունը հենց սկզբից գործող է և նույն թափով շարունակվում է մինչև 19-րդ դարու կեսերը, երբ թողնելով յուր կրոնական բնավորությունը՝ աշխարհականանում է:

Հին մեռնություն մեջ վերածնությունն առաջ են բերում ոչ թե Մխիթար Աբրահամ և Մխիթարյանները, այլ Ամբերդցի Սարգիս եպիսկոպոսը (մեռել է 1620 թ.), որ միաբան էր Սաղմոսավանքի, և Տրապիզոնցի Տեր Կիրակոսը (մեռել է 1621 թ.), որոնք բուն երկրի մեջ հիմնում են Սյունյաց Անապատը Տաթևի մոտ: Դրանցից անբաժան պիտի համարել և Սյունեցի Մովսես վարդապետին, որոնք և եղել են «առիթ լուսաւորութեան ազգին Հայոց»: Դրանք և դրանց աշակերտներն են, որ մտածում և գործում են մեր խոսքանալած կյանքը նորոգելու համար:

Այդ մարդիկն իբրև վերածնողներ, ինչպես հատուկ է ամեն վերածնության մարդու, աչքերը դարձնելով դեպի մեր հինը՝ շատ ճիշտ նկատում են մեր հին կյանքի ամենից կարևոր կողմը: Այնտեղ նրանք տեսնում են ամենից առաջ՝ ժողկած վանքեր և անապատներ և իրենք ևս մեծամեծ ջանքերով կարողանում են հետևելով հենրին՝ նորերը հիմնել: Զարմանալի է, թե ինչպես 17-րդ դարու այն անասելի աղքատության մեջ հնարավոր է լինում ոչ միայն բազմաթիվ հին վանքեր նորոգել, այլև: շատ նորերը կանգնեցնել՝ դարին հատուկ մի ճարտարապետությունը: Մխիթար Աբրահամ յուր հիմնած վանքով ահա այս միևնույն գործն է շարունակում, ինչ որ տեղի է ունեցել 17-րդ դարում Հայաստանում:

Վանքերը կենդանանալով՝ կենդանություն և թարմ հոսանք են մղեցրելով ժողովրդի թմրության մեջ: Զարթնում է նոր ուժով կրոնական ոգին: Արդարև այդ վանական և անապատային կյանքի հետ անխուսափելի կերպով նորոգվում են նաև հին ճգնավորությունն ու խստակրոն կյանքը, նոր ուժ են ստանում հին անպիտք հասկացողություններն ու աշխարհայացքը, բայց դա արդեն չէր լինում, որ մեր վանքերը մի անգամ էլ կատարեին իրենց պատմական քաղաքակրթական դերը, որ ունեցել էին 10-րդ դարում: Դրանք մեղմացնում էին ժողովրդի կոշտացած ու

քրտացած քարքերը և, որ գլխավորն է, գիր ու գրագիտութիւն էին տա-
րածուի։ Որովհետեւ վանականներէից շատերը լոկ աղոթքով լէին պարա-
պում և իրենց ամբողջ կյանքն աշխարհից կտրված լէին անց կացնում,
այլ սովորում էին կարգալ, գրել և մտնելով ժողովրդի մեջ՝ քարոզում էին
Նրան և երեխաների համար շղարկատներս, այսինքն դպրոցներ հիմնում։
Ընդ վանական և ծխական դպրոցների սկիզբն ահա՝ այս ժամանակից
է գալիս։

Ապա այդ մարդիկը մեծամեծ, իսկապես հիացմունք պատճառող ջան-
քերով աշխատում են կարգալ և հասկանալ մեր անհատկանալի դարձած ու
մոռացված գրականութիւնն ամբողջ, թե՛ նկեղծական և թե՛ աշխարհիկ
քննադրութիւն ունեցող ձեռագիրները՝ ինքնուրույն թե՛ թարգմանական
երկերը՝ որքան որ կային կամ ճարում էին։ Նրանք արտագրում են բազ-
մաթիվ նոր ձեռագիրներ։ Աշխատում են գտնել ունիթոնների ձեռով լատի-
նացած գրաբար լեզուն։ Հորինում են քերականութիւն, տրամաբանու-
թիւն և այլ նոր դասագրքեր՝ օգտվելով գլխավորապես հին գրքերից, և
նույնիսկ թարգմանութիւններ էլ են անում։ Շարժման գլխավոր կենտ-
րոններ հանդիսանում են էջմիածին և Նոր Զուլա, որտեղից և այս մտա-
վոր շարժումն անցնում է Կ. Պոլիս։ Այս ամենի հետեանքն այն է լինում,
որ քնականաբար առաջ է գալիս մի նոր գրաբար գրականութիւն, որի
առաջին ներկայացուցիչները լինում են Սիմեոն Զուլայեցի և Առաքել
Դավրիժեցի, իսկ վերջինը՝ Արսեն Բաղրատունի։

Իմ նպատակը չէ 17-ի 18-րդ դարերի գրականութիւն մասին խոսել
այստեղ. այլ այն միայն շեշտել եմ ուզում, որ ինչպես մեր՝ 19-րդ դարու
կյանքի ձգտումը, նույնպես և դառար գրականութիւնը քնական շարու-
նակութիւն է նախորդ երկու դարերի։ Այն, ինչ որ 17-րդ դարն սկսել էր
և որ այդ և հաջորդ դարում շատ դանդաղ կերպով և մեծ ընդհատումներով
էր առաջ գնացել բուն երկրի մեջ, 19-րդ դարն ստանում է իբրև ժառան-
գութիւն և ավելի հաջող հանգամանքների մեջ ավելի արագ է առաջ տա-
նում և զարգացնում։ Անցած դարու նոր գրաբար գրականութիւն սկիզբն,
ուրեմն, 17-րդ դարու շարժման մեջ պետք է տեսնել և ոչ 18-րդ դարու
մեջ։ Եվ որովհետեւ 19-րդ դարու գրաբար գրականութիւնը կարելի չէ բա-
ժանել աշխարհաբար գրականութիւնից, քանի որ առաջինն յուր գրական
խնդիրներն ավանդում է երկրորդին և լինում է ժամանակ, գրաբարից
աշխարհաբարին անցման շրջանում, երբ միևնույն մարդիկը երկու լեզուն
ևս, հինը և նորը, բանեցնում են,—ապա և մեր նոր գրականութիւնն
սկսվում է 17-րդ դարում, և այս վերջին երեք դարերը շարունակութիւն
են միմյանց։ 17-րդ դարն է միայն, որ շարունակող չէ նախորդին, այլ
միայն վերածնող։

Ի՞նչ է մեր նոր գրաբար գրականութիւն իշխող գաղափարն ու զգա-
ցումը սկսած 17-րդ դարից մինչև վերջը—երկու բան, կրոնասիրութիւն
և հայրենասիրութիւն, որոնք երկուսն էլ զորեղ կերպով արտահայտված
գտնում ենք արդեն Առաքել Դավրիժեցու երկի մեջ։ Կրոնասիրութիւնը

կամ ավելի ճիշտ՝ կրոնական-եկեղեցական ղեկավարները և ողորդված էր նոր վանական կյանքով՝ հնի աղեղնությունը և նմանողությամբ, բայց և հայ-րենասիրական գաղափարը, որ, իհարկե, 17- և 18-րդ դարերում միշտ այնպես լինելու հասկանում, ինչպես այժմ, արդյունք էր հին գրականությունից և աղեղնությունից, ինչպես մասին հենքից անպայման ամենամեծ դերն է կատարել Մովսես Խորենացին, որ այս շրջանում սիրված, շատ կարգազված և ամենից շատ արտագրված գիրքն է եղել մեր հին պատմագիրներին մեջ։ Այս է պատճառը, որ մեր հին պատմագիրներին առաջին անգամ նրա Հայոց պատմությունն է տպագրվում 1695 թվին՝ աշխատությամբ վանանդեցի Թովմա եպիսկոպոսի, որ դրա համար մինչև Ամստերդամ է գնում։ Մի անգամ որ տպագրության արվեստը բանում էր հայ գրքերի համար, պետք էր մատչելի դարձնել և տարածել սիրված պատմական երկը։ Եթե Խորենացու Հայոց պատմության երևան գալն յուր ժամանակին՝ իբրև առաջին պատմություն Հայոց՝ նշան է եղել ազգի ինքնագիտակցության, այժմ էլ ամենից առաջ նույն գրքի տպագրությունը պիտի լիներ ազգի մեջ ինքնաճանաչություն և հայրենասիրություն մտցնելու համար։

Բայց Խորենացին մենակ բավական չէր հին կյանքի վերածնության համար։ Ուստի և 18-րդ դարու սկզբից Կ. Պոլսում, որ ժամանակի հարմարավոր մտավոր կենտրոնն էր հայոց համար, աշխատում են տպագրել և հետզհետե տպագրում են մի շարք մեր հին մատենագիրներից, ինչպես՝ Ագաթանգեղոս, Փավստոս Բյուզանդ, Եղիշե, Ջենոպ Գլակ, Մեսրոպ Երեց, Ստեփանոս Օրբելյան և այլն։ Իսկ կրոնական բովանդակություն ունեցողներից՝ Նարեկացի, Հաճախապատում, Եղիշի, Համբարձումյան Աստվածաբանություն, Զատուհանի և այլն։ Ընդհանուր առմամբ մի պատկանելի վերածնություն, ուրեմն, տպագրության միջոցով, և այս ա՛յն ժամանակ, երբ վենետիկի հայ միաբնակությունը դեռ նոր էր հիմնվում և երբ նա դեռ շատ ուշ, միայն 18-րդ դարու վերջին քառորդում պիտի երևան գար իբրև հին լեզվի վերածնունդ և գրականության հրատարակիչ։

Բարեբախտությունը սակայն այն էր, որ Մխիթար Աբրահիմ հետո (1676—1749), որի մեծ գործը դրամարի համար է՝ նրա Բառարանը, Մխիթարյանների մեջ գրեթե 18-րդ դարու վերջին քառորդում հանդես են գալիս մի քանի իսկապես աշխատող և բեղմնավոր անձեր։ Միայն Ստեփանյան յուր բերականությամբ (1779 թ.) և Հայոց պատմությամբ (1784—1786 թթ.) մի անգամից քարձրացնում է Մխիթարյանների անունը, որ մինչև այդ գրեթե հայտնի չէր, և խոշոր աղեղնություն է թողնում հետագա սերունդներին։ Մխիթարյանները սեփական ապարան ձևով են բերում միայն 1788 թվին, երբ սկսում են մտածել և նախնայաց տպագրության մասին։ Բայց այս մեծ գործը շատ դանդաղ և առանց որոշ ծրագրի է առաջ գնում։ Հաղիվ մի լորս-հինգ դիրք լույս ընծայած՝ վախճանվում է երկրորդ արժանայն Ստ. Մելքոնյանը (1750—1800) և դադարում է գործը և միայն Սուքիաս Սոմալի (1824—1846) օրով դարձյալ սկսվում է, այս անգամ կանոնավորապես հաջողությամբ, վենետիկի Մխիթարյանները՝ դրանով

վաստակում են նախնայաց մատենագրության հրատարակիչներ լինելու փառքը, թեպետև առաջնութիւնը նրանց չի պատկանում: Բայց այս հանգամանքն իհարկն է պակասեցնում նրանց վաստակի արժանիքը:

Նրանց անվան փայլը զնայով աճում է. որովհետև եթէ մի կողմից Զամյանը յուր թերականությամբ դրաբար լեզուն էր հետակում և միջոց ընծայում հնչողությամբ սովորելու այն, իսկ յուր Հալոց պատմությամբ ազգային անցյալի ուսումնասիրութիւնն էր դուրացնում, մյուս կողմից ինճիճյանը յուր Հնախոսությամբ և Հայաստանի աշխարհագրությամբ Հալոց հին ու նոր աշխարհն էր ծանոթ դարձնում. և վերջապես այս ամենի վրա ավելանում էր Հայկազյան լեզվի նոր թառագործը (1836—1837 թթ.), մի հսկայական աշխատանք, որով անգնահատելի ծառայութիւն է մատուցվել և զեռ շատ երկար կմատուցվի մեր լեզվի ուսումնասիրութիւն համար: Նրանց հետ միացած և քաղմաթիւ գրքեր ու դասագրքեր՝ կրօնական-եկեղեցական, փիլիսոփայական, պատմական, աշխարհագրական և այլ բովանդակութեամբ, հաճախ նույնիսկ մեծամեծ հատորներով, հրատարակում են անխոչ աշխատութեամբ: 19-րդ դարու առաջին կեսը մի բուռն գործունեութիւն շրջան է Մխիթարյանների համար, երբ նրանք հրապարակը լցնում են իրենց գրական աշխատանքներով և թարգմանութիւններով, ավելի շատ գրքերով, քան կարդացողներ կային և շատ շատ ավելի, քան հասկացողներ:

Այսպիսով Մխիթարյանները գլուխ են բերում այն, որ երկու հարյուրից ավելի տարիներ առաջ ձեռնարկել էին հայ վարդապետներն Արեւելքում. բայց բուն երկրի մէջ մեծամեծ գովարտութիւնների և քաղաքական դժբախտ պատահարների հետ կապված լինելով՝ գլուխ լէր գալիս այնպես, ինչպես կցանկանային կատարած լինել այդ գործի համար աշխատողները: Մխիթարյանները յարեախառաքար իրենց ձեռքն են առնում գրականութիւն այս վերածնութիւնը և վայելելով եվրոպական հարմարութիւնները և խաղաղ ու անվտանգ կյանքի դուրսութիւնը՝ անընդհատ առաջ են տանում: Նրանք մատչելի են դարձնում մեր հին գրականութիւն կարեւորագույն մասը. կենդանացնում են, միայն գրքերում, հին գրաբարը ոչ միայն կատարելապես գտնելով լատինաբանութիւններից, այլև նորոգելով, հարստացնելով և ազնւացնելով այն աստիճանի, որ ընդունակ է դառնում այնպիսի իմաստեղծական գրվածքների արտահայտութիւն համար, որ լէր ունեցել հնումը:

Բանաստեղծութեան վիճակը 18-րդ դարու առաջին երեսնամյակում:— Վերածնութիւն առաջին շրջանի մարդիկը, հազիվ գրել-կարդալու և գրոց լեզվի ուսումը սովորած, առանց արտաքին ծանոթութիւնների, մի քանի կցկաւոր ճարտասանական, տրամաբանական ու պատմական տեղեկութիւններ ստացած մի սերունդ, անշուշտ լէին կարող ոչ միայն բանաստեղծութիւն, այլև ընդհանրապես արժեքավոր գրականութիւն առաջացնել. մանավանդ որ վերածնութիւն գործը նպաստավոր պայմանների մէջ լէր բուն երկրում և շարունակ ընդհատվում էր: Եվ եթէ այդ մարդիկն ար-

տաղրէին էլ զորական երկեր, դրանք պիտի լինէին մեր հնի նմանողութեամբ պատմագրութիւնն ու քննարկողութիւնն։ Ուսումն ու պրագմատիկութիւնը եկեղեցականներէ ձեռին էր, և քննականորեն զրականութեան մշակութիւնն էլ նրանք պիտի անէին։ Եւ այդ հոգեւորականը յուր կողմամբ արդէն ընդունակ չէր թաղմակոթմանի զրականութիւնն և մասնավորապէս քանաստեղծութիւնն առաջ բերելու։ Այդ շրջանի մարդկանց միտքն զբաղված էր գլխավորապէս կորցրած ժանտիկութիւնները հետ բերելով։ զեղեցիկ մը առ մտածելու ժամանակ ունէին և ոչ հետաքննողութիւն։ Գեղեցիկ թաղմակոթմանը նրանք տալիս էին հին երգարաններ արտագրելով կամ տալագրելով, կամ երբեմն տաղեր հորինելով, որոնք շատ ավելի ստոր են, քան իրենց նմանողութեան օրինակները։

Այս նոր երգերի ու տաղերի նյութն ևս կազմում են, հարկավ, վարդն ու սոխակը, կամ խնջուլքի ուրախութիւնը, բայց ամենից առաջ՝ կրօնական-քառյական զաղափարները։ Ժամանակի ոգին էր այդպէս։ Կրօնական զերմեռանդութիւնը մեծ էր, ուստի և պահանջ էր զգացվում ոչ միայն նոր կրօնական տաղերի ու գանձերի, այլև նոր աղոթքներին։ Նույնիսկ ժողովրդական երգիչները, որոնց մեծ գլխավոր տեղը բռնում էր Աստված-Նովան 16-րդ դարու երկրորդ կեսում, կրում են իրենց մեծ ժամանակի այդ ոգին։

Անկայն միայն քննարկողութեամբ ու աղոթքներով չի թաղականանում մեր վերածնունդի միտքը։ 17-րդ դարում արդեն ձգտումն է երևում նաև միակեան քանաստեղծութիւնն առաջ բերելու։ Եւ այդ դարձյալ կրօնական-եկեղեցական բովանդակութեամբ։ Ուստի վնայի նյութ են Ս. Գրքի և ուրիշ կրօնական պատմութիւններ, որոնք ոտանավորի են վերածվում, ինչպէս եղել է և մեր զրականութեան մեծը, իմ ինչպէս սիրո ու կրօնական տաղերը, նույնպէս և այս քանաստեղծութիւնը շատ կոնվենցիոնն է, զուրկ կենդանի երակից, շոր ու ցամաք պատմվածքներ, և միայն ոտանավորով հետևակ գրվածք։

Այս մեռած քանաստեղծութեան մասին զաղափար կազմելու համար թաղական է հիշատակել այստեղ Կ. Պոլսեցի Տեր Կաթողոս Բանաւայի թմրանաւոր բանքի զործա առաքելոցը, որ տպված է Կ. Պոլսում 1704 թվին։ Հեղինակն ինքը զրքի վերջում ասում է, թե մի պատմագիրք է տեսել, որի մեծ գրված է եղել, թե 536 թ. Հուստինիանոս կայսրի օրով Վերջապահել Արաբորդոս՝ կիսասարկավազ սրբուհւոյ եկեղեցւոյն Հոսմայ զարմանալի ֆիլիսոֆոս և վարդապետ տաղալափութեանց ոտանավոր է դարձրել Վերջոք առաքելոցը։ Ինքն էլ իմանալով, որ հայոց մեծ չկա այսպիսի բան՝ յուր կողմից տաղալափում է այդ գիրքը, հետևելով ներսես Շնորհալու ճիշտութեան որդին երկին։ Բայց ո՞ր ճիշտութեան որդին, ո՞ր սրտ աշխատութիւնը։ Կանտեղ առեղծարկութիւնն կա և զերմ զգացում, որով համակվում է ընթերցողը։ Իսկ այստեղ սառն, մեքենայական տաղալափութիւնն միայն Վերջոք առաքելոցին բառերի։

Յժմանն առաջին զոր արարի

Սակս փրկութեան ամենայնի։

Ո՛ր, թէոփիլէ այր բարի
 Աշակերտ բանին ճշմարտի,
 Զոր սկսաւ Զիտուս առնել
 Եւ ապա մեզ ուսուցանել:
 Մինչև յօրրն պատուիրելոյ
 Սրբոց առաքելոցն իւրոյ,
 Ի ձեռն Հոգւոյն վկայեալ
 Ընտրեալ զնոսաւ և վերացեալ:
 Որոց եցոյց զինքն կենդանի
 Յետ շարլարանացն և խաչի:
 Բազում արուեստս նոցա ցուցեալ
 Յաւուրս քառասուն նոցա երեսնաւ:

Եւ այսպէս մինչև վերջը:

Ավելի լավ վիճակի մեք չէ գրականութիւնը և՛ 18-րդ դարու վերջում, և՛ 19-րդի սկզբում: Հայրենասիրական գաղափարը, որը վերջին դարու բանաստեղծութեան գլխավոր շարժիչն է, դեռ չի զտված կրօնական-եկեղեցականից: Այդ ներկայանում է կամ դեռ ողբի ձևով, ինչպէս մեր հին գրականութեան մեք է եղել. կամ թե, ինչպէս դարձյալ հաճախ հնումը եղել է, կենսորոնացած է էջմիածնի շուրջը, որի անունը ժողովրդականացնելու և սիրելի դարձնելու համար գրում են ներբողաներ աւ տաղեր: Թե ինչ աստիճանի ցամաք ու սնանկ է գրականութիւնը այս մասին, այդ կարելի է տեսնել 1807 թվին Կ. Պոլսում տպված «Ներքողեան սրբայ Աթոռոյն էջմիածնի քրքույկից, որ հորինել է նվիրակ Աստորաբողի Արամեայ վարդապետը Ձկնի Աստուծոյ՝ օրհնեալ ազգիս Հայոց հոգևոր հայրն և մայրն՝ են երկոցին սոքա. այսինքն Լուսաւորին հոգւոց մերոց սուրբն Գրիգոր. որ ամս հնգետասան ի քովս շարլարանաց՝ որպէս ոսկի մաքրեցաւ. և Աստուածակերտ աթոռս Սուրբ էջմիածնի... Սոքա են յետ Աստուծոյ երայնաւորք մեր և քիւր քարեաց պատեալք. զորս պարտիմք ճանաչել. և առաւել սիրոյ արժանի համարել ըստ առաքելոյն: Թեո. Ի. 12. 13. զշնորհս քայրերարութեանցն մի՛ մոռանալ ըստ Միրաքայ, ԻԹ. 20. Եւ յամենայնի զսոցանէ զոհանալ. ի հաւատս սոցա հաստատուն մնալս և ալլին: Մարդ սպասում է, թե էջմիածնի համար մի կենդանի ներքող գտնի, որի մեք ցոյց տրվի նրա նշանակութիւնը հայ կյանքի մեք, նրա կատարած դերը և տեղը, գտնում է մի ահագին կուտակութիւն Սուրբ Գրքի վկայութիւններով, որ ժայրահեղ աստիճանի սքոլաստիկ մեկնութիւններով համարեցրած են էջմիածնի վրա:

Չվասն դի՛ որպէս առէ Արիստոտէլ գլուխն՝ ճնմականաց դասուն, ի սեռս իւրաքանչիւր իրաց՝ մին է առաջին և զովելի քան զամենայնսն: Զոր-որինակ՝ ի յիննեակ դասակարգութիւնս հրեջտակաց՝ առաջին և զովելի են Սերօբէճն. ի տասն երկինս՝ հրեղէն երկինքն. ի մէջ լուսաւորաց՝ արեւ-զական. ի շորս տարերս՝ հուրն. ի մէջ հողմոց՝ հարաւայինն. ի յօթն հրաւ-

հալելիս՝ ոսկին. ի մէջ տկանց՝ աղամանդն. ի մէջ ծաղկանց՝ վարդն. ի քաղցրահամ ուտելիս՝ մեղրն. ի կերակուրս՝ հացն. ի հեղուկ նիւթս՝ քաղասանն. ի լերինս՝ Սիոն. ի քաղաքս՝ սուրբ Երուսաղէմ. ի տասն սեռականագույն սեռս՝ գոյացութիւնն. ի յառաքինութիւնս՝ ուղին. և ի յաղօթս Աստուածաւոյց ազօթքն: (Զորոց ամենեցուն գովութեան պատճառս՝ տե՛ս ի մեկնութեան Հայր մերին, ի դուին հօթներորդ, յօրինեալն ի մէջն): Արդ՝ որպէս ի սեռս իւրաքանչիւր էակի՝ մին է դուիս ամենայնի, առաջին և գովելի քան զամենայն, ըստ որում կարգաւ ցուցաք. ըստ այսմ օրինակի՝ ի վանորայս և ի յեկեղեցիս հալկազեանս ազգի՝ է ամենագովելի և առաջին՝ դուիս և մայր ամենեցուն՝ Փրիստոսահիմն և Աստուածակերտ Աթոռս մեր՝ Սուրբ Էջմիածին: Եւ սոյն այս ցուցանի՝ ըստ տասն ստորագութեանցն Արիստոտելիս (հր. 16).— Եվ ապա վարդապետը Արիստոտելի տասն ստորագութուններով ապացուցանում է, թե ինչպէս Էջմիածինը գովելի է ըրտո գոյացութեանն, ըստ քանակութեանն, ըստ առնչութեանն, ըստ որակութեանն, ըստ երբին, ըստ ուրինա և այլն:

Բայց այդ դեռ բավական չէ: Գովելի է Էջմիածինը նաև նրա համար, որ յոթն սեղան ունի. իսկ սեղանների յոթն թվի մեջ մեծ խորհուրդ կա, և ի՞նչ է այդ խորհրդավորությունը: Մնախ զի հօթն են մոլորական աստեղքն, Երկրորդ՝ զի նահապետն նոյ առ շրհեղեղան, յամենայն սուրբ անասնոց հօթն հօթն հմայծ ընդ իւր ի տապան... Երրորդ՝ զի թիւն հօթնեակ ի թուաբանից կոչս կոչի... Զորորդ՝ զի հօթն էին ընտիր և գեղեցիկ հասկօն՝ որք միանգամ ելանէին ի միում փնճի, ի նշանակ լինութեան հօթն ամաց, զոր Փարաւոն ետես և Յովսէփ մեկնեաց... Հինգերորդ՝ զի հօթն էին ճրագարանքն ոսկիածուլ Աշտանակին, զոր արար Սոմսէս... Վեցերորդ՝ զի հօթն էին գիսակք զլիսոյն քաջին Սամիասոնի... և այսպէս մի ահագին շարք, ամբողջ վաթսուն երես, որոնց մեջ Էջմիածնի անունը բարձրացնելու համար բացատրում է յոթն թվի խորհրդավորությունը: Նույնպիսի մի շարքով (61 հրես) գովաբանելով Էջմիածնի Յիւզ կաթողիկէն, շուրս սյունը, ցույց է տալիս հինգի և շորս խորհրդավորությունը, և վերջապէս գովում է Էջմիածնի անունը, և մինչև անգամ գումարում է տառերի թվական նշանակությունը և եզրակացնում. «Էջմիածին՝ խորհրդաւոր անուն, որոյ տառքն ըստ համարողական հաշուի բաղկացուցանեն զթիւ ՌԵՂԷ: Եւ աստի հազար հինգ հարիւր՝ (սր է երիցս հինգ), զամենասուրբ Երրորդութեանն և հ՛նգից զգայութեանց կատարեալ կենդանւոյ ցուցանէ խորհուրդս: Եւ իննսուն որ է իննիցս տասն՝ զՓրիստոսի քնակելոյն ինն ամիս ի յորովայն սրբոյ Կուսին, և զիննեակ հրեշտակաց, և զաստիճանաւորացն եկեղեցւոյ՝ նշանակէ՝ խորհուրդս: Այլ և՛ ցուցանէ զտասն երկինս և զտասնաքանեայ օրէնս, զտասն խորանս, և զտասն ստորագութիւնս, զտասն եղանակս ձայնից, զտասն հուղիս անուան, և զտասն դօրութիւնս հոգւոյն և այլն:

Ահա թե ինչպէս և ինչպիսի միջոցներով են մի դար առաջ աշխատել քարձրացնել Էջմիածնի անունը և կոմիւն օտար քարոզիչների դեմ: Ինչ որ

ասան՝ կա այդ ներքողյանի մեջ, բայց էջմիածինը լկա՝ Աբրահամ վարդապետը, որ յուր ժամանակի գիտնականներին մեկն է հղել, մինչև անգամ տաղեր է հորինում էջմիածնի համար և հղանակներն էլ նշանակում, թե ինչպես պիտի երգեն, նույնիսկ աղոթքներն էլ է գրում ուղղված էջմիածնին, և այս ամենը Աստվածաշնչի խոսքերը ժողովելով և հարմարեցնելով էջմիածնի վրա։ Դա պիտանական տիրացուի մի արդյունք էր, որ դրանից աճելի բան չէր կարող արտադրել թի փառս Մօրն Հայաստան։ Դժբախտաբար այդ անմտություններն էին զբաղում ժամանակի հասկացողներին։

Նույնպիսի մի տիրացուի արդյունք է և Կեսարացի Գուղաստախտյան Գրիգոր դպրի թերգաբանը, տպ. Կ. Պոլիս, 1803 թվին։ Այդ մարդն հղել է ժամանակի ականավոր երգիչը, ծանոթ արևելյան եղանակներին և երաժշտության, և անպայման գործնական նպատակի համար հրատարակել է յուր երգարանը, որի երեսին շարադրեցեալն է գրում, բայց ունի և մի երկրորդ մաս, որի երգերն իրենը չեն։ Այստեղ ամենայն ինչ կա, և՛ թուրքերեն ու հունարեն երգեր իրենց թարգմանություններով, և՛ աղոթքներ, և՛ երաժշտության մասին։ Յուր հորինածն առաջին մասն է, որի տաղերի մեծ մասի համար նշանակած է, թե ինչ եղանակով պիտի երգվին, եղանակները թուրքական կամ արաբական են։

Մի կողմ թողնելով աղոթախառն երգերը՝ ևս մերս առ Ս. Հոգին Աստուած, ևս Հայրն երկնաւոր, ևս Մայրն երանութեան և այլն, ինչպես և բարոյակրթական երգերը՝ թերզ խորատորէնս կոչվածները, մենք այստեղ տեսնում ենք, որ տաղասաց դպիրը սիրահար է բնության, զարնան, վարդի ու երգնակի (սոխակի), որոնց և վերաբերում են տաղերի խոշոր մասը։ Բայց նա բնություն երգելով հանդերձ բնություն չի տեսնում, նրա երգած երկինքը երկինք չէ, այլ միջնադարյան երևակայության երկինքը։ Ահա թե ինչպես է սկսվում նրա թերգն ի վերայ երկնի։

Ի յոշնչէ էացելոց.

Համանդեալ ցոյացելոց.

Նախաբսկիզբն՝ հանրից նոցին.

Ի յԱստուծոյ գոյ ածելոց.

Կամարատես՝ մեծ շրջանակ.

Յոյժ աննըման՝ լայն ընդարձակ։

Եվ այսպես, մինչև տների սկզբի տառերը կազմեն թի Գրիգորէս։ Երկինքը բանաստեղծի համար է դեռ մի գգնարկայան, մի քրախճանական տեղ ցնծութեան յորում բարիքն երանութեան, մտքից ու խելքից վեր մի լուսավոր տեղ, մի ռանսիւն խորանայարկչ, լայն, ընդարձակ, ուր սրբերի հույլերն են կենում և տեղի է լուսնի և արևի։ Դա կրոնական հայացքով երկինքն է, և՛ երբեք Երուսաղեմը, որ և մի ուրիշ երգով դարձյալ գովում է Գաղաստախտյանը։ Շատ հասկանալի է, որ այսպիսի երկինքը չպիտի տեսներ բանաստեղծը և այդպիսի բնությունից ոչ մի տպավորություն չստանալով՝ նրա երգն էլ բնության տրամադրություն չպիտի դարձնեի։

Այսպէս և զգեղնեցկատեմիլ յերեսս նրկնի կարի ցանկալի, արծաթա-
նման բոցաճաճանչ յոյժ զարմանալիչ աստղերը նստիմ են դառնում ոտա-
նավորի ոչ իրենց թողած տպավորութեամբ, այլ իրենց մասին եղած
ամանդութեաներով, հավատալիքներով ու սնապաշտութեաներով։ Այս-
պէս և օդը, երկիրը, ծովը գտնում է Գապասախայլանն առանձին երգերով,
նա միայն ֆիզիկական և կրօնական աշխարհագրութեան է գրում և ոչ
թիւ բանաստեղծութեան։

Մեծ թվով երգեր ունի նվիրած և վարդին ու երգնակին, որ սրան էլ
հրապուրում են ինչպէս մեր միջնադարյան երգիչներին։ Բայց ոչ մեկի
մէջ չի երևում այն եռանդն ու կորովը, արտահայտութեան այն ուժը, որ
ունին չովհաննէս Թլկուրանցին կամ Գրիգոր Աղթամարցին։ Նկա ոչ մի
նոր զեղեցիկ գլուտ խոսքի։ Այստեղ էլ անշուշտ վարդն ու սոխակն իրենց
սիրո տխրութեամբ և ուրախութեամբ անբաժան են զարնան ծաղկալից,
զգեղեցիկ եղանակից։ Այստեղ էլ վարդը բացվում է ու բուրում փայլումով,
զարուներ ծաղկում է, դաշտերը զարդարվում և ուրախանում են, զետեք
հոսում, քամին փչում, թռչունները կարկաչում քաղցրանմաց և վարդը
նարիք է զգում, որ զարմանաւորապէս սիրահար սոխակը երգն իրեն և
կանչում է նրան,— և այս է ամենը, ինչ որ Գրիգոր դպիրը հեղեղում է իր
սիրո երգերի մէջ, նվազ ամենը հորինված են հների փշրանքներով՝ միայն
մի բարի նպատակով, որ հայերեն բառեր լինին հայտնի եղանակներն
ասելու համար։ Շնորհալիները Գապասախայլանի լավագույն երգերն են։

Ի վարդէ յերգնակն

Արի՛, սէր իմ, արի՛ երգես ցնծալի.
Եղանակաւ՝ միշտ քաղցրաձայն բաղձալի.
Ահա հՀաս գարուն ծաղկեալ՝ սխրալի.
Միրտ վշտալի՛
Ես վիրալի
Վարանեալ.
Եմ սգալի՛
Միշտ խղճալի
Քնկեցեալ։

Ողբերգական երգով եկ ծայն արձակեա.
Ինձ յալաքին եղանակաւ ձայնակցեա,
Ձայն դովելի՛ երգ ցանկալի դու երգեա.
Միրտ վշտալի և ալլն։

Հալով, ողբով, աղաղակաւ արտասուեմ.
Չքնաղ ձայնիդ՝ քոյին ահա ըսպասեմ.
Նուկաւ յաւէտ՝ դովանալով հանդարտեմ.
Միրտ վշտալի և ալլն։
(Սորա ձայնն է՝ ողբերգական՝ լո՛ւր սէր իմ,
Պիր կիտէքիմ՝ ալի արտըմա պազարըմ)։

Առ Երզնակն

Արի՛ երզնակ դու ցանկալի,
Երջեղաձայն զարմանալի.
Գեղեցիկ ես թուրոց համայնց,
Երզնա սիրով միշտ ցնծալի.
Գովելի, գովելի, գովելի, գովելի լի լի:

Սիրով ցընծա՛ ռատոստելով
Քաղցրիկ ձայնիւ երգակցելով.
Ձայն քո սիրուն զարմանալի
Արի երզնա երգ ցընծալի.
Գովելի և այլն:

Սիրակարկաչ դու պանծալի,
Ջարմանաձայն հիանալի.
Արժան քարի՛ երգ արկելոյ.
Երզնա՛, սէր իմ, միշտ սիրալի,
Գովելի և այլն:

Ուրախացնալ՝ ցընծա՛ սիրով.
Արի՛ փութով ձայնիւ երգով
Ահա է ժամ երգս առնելոյ,
Գարուն եհաս՝ հոտ բուրելով:
Գովելի և այլն:

էվի՛ճ Ձայնիւ՝ ասէ սըմա:
Կեօրտիւմ պիր դոն՝ չէ յիրանալ:

Նույն անկենդան, կյանքից կտրված և հետևակ բանաստեղծություններն անում մինչև երեսնական թվականները նաև Վենետիկի Մխիթարյանները Առաջին մեծ ոտանավոր գրողն է սրանց մեջ 18-րդ դարու վերջում Ղուկաս Ինճիկյանը (1758—1833): Ինճիկյան և բանաստեղծ, շատ տարօրինակ է, բայց Մխիթարյանների հատկությունն է այդ. նույնն եղել է և Ալիշանը և ուրիշները: Բայց մինչև Ալիշանն իսկական բանաստեղծ է, Ինճիկյանը միայն հնախոս և աշխարհագրություն ու պատմություն գրող: Եվ եթե ես այստեղ կարենք եմ համարում կանգ առնել դրա, ինչպես և նախորդների վրա, միայն նրա համար, որ պարզ լինի, թե ինչ վիճակի մեջ է եղել բանաստեղծությունը անցյալ դարու առաջին քառորդում:

Ինճիկյանը, հարկավ, ոչնչով չէ տարբերվում յուր նախորդներից ու ժամանակակիցներից, բայց եթե նրանով, որ ինքն ավելի կարգացած ու զարգացած մարդ է. ուստի ավելի իմաստավոր է գրում: Նա իբրև քերթող հանդես է գալիս 1794 թվին Վենետիկում տպված «Ամարանոց Բյուզանդեան» գրքով, որ երկու մասից է կազմված: Առաջին մասի մեջ, որ ունի վերնագիրս՝ «Մանոթութիւնք աշխարհագրական և առհասարակ նեղուցիւն

Կ. Պրոխոր, նա տալիս է թի մի հասագիսի համապատասխան գրեթե զամենայն կարևոր և զերեւելի տեղեկութիւնս նեղուցին ի հին և ի նոր պատմութիւնս և զստորագրութիւն գրից նորաւ: Այս աշխատանքը Խնճիճյանի հնասէր և փորձ գրչի արդունք է, որ այժմ ևս կարդացվում է իրրև բազմազան ծանոթություններին մի ժողովածու Դա յուր ժամանակի համար մի գեղեցիկ ուղեցույց է եղել Կ. Պրոխոր Բայց Խնճիճյանը գրանով միայն չի բավականացել. կցել է և մի երկրորդ մաս բանաստեղծական՝ «Ամարանոց Ռիւզանդան», որի մեջ «ոտանաւոր լափմամբ ստորագրեն ծովեզերեայ գիւղերէք նոյն նեղուցին», նախ եմբողական ամբող և ապա ասիականը:

Խնճիճյան բանաստեղծն այստեղ մինեւոյն վարդապետն և աշխարհագրություն գրողն է: Զնայելով որ նա բնության գեղեցկություններն է նկարագրում և գովում, ուրեմն աշխարհական նյութ է բանեցնում, բայց կրօնական նպատակի համար: Եթէ հին աստվածաբանները բնությամբ աստուծու գոյութիւնն էին ուղում ապացուցանել, հնախոս կրօնավորն այս գովածուով շարունակ զգալ է տալիս աստուծու մասը բնության մեջ և բնության գովեստը շուր է տալիս և դարձնում փառաբանութիւն աստուծու: Վարդապետը քննել չի ուրանում ինքն իրեն. ուստի կարևոր է համարում մի երկրորդ երգ ևս գրել, որի մեջ խրատներ է կարդում բյուզանդացիներին արծաթախրութիւն, անձնասիրութիւն, աշխարհասիրութիւն ու փառասիրութիւն մասին: Եվ այսպէս նա տաղաշափում է մի քնախորդանքից ու երկու «երգից» կազմված բանաստեղծութիւն, մոտ երեք հազար տող, քառյակներով տներին քաժանված, բոլորը 10-վանկանի տողեր՝ միայն ին հանգում: Նա նորոգում է Շնորհալու ժամանակի ճաշակը հանգերի վերաբերութիւնը, որ նույնիսկ Կոմիտաս քահանային դուր չէր եկել:

Խնճիճյանը հարկավոր բանաստեղծութիւն չէ անում: Այս արագին զանգված տողերի մեջ շատ քիչ քառյակներ են պատահում, որոնք զգացում ունեն. բանաստեղծութիւն փոխանակ ճարտասանութիւնն է բռնում. առանց զործողութիւն միակերպ սառն նկարագիր է: Բնութիւնը չի կենդանացնում ընթերցողին, որովհետեւ ինքը հեղինակն էլ, թեպէտ ազգված է երեւում Քիւզանդիոնի գեղեցիկ տեսարաններէց, ուր ծով, լեռ, հովիտ, դաշտ ու անտառ միացած են, բայց չի կենդանացնում յուր երեսակալութիւն մեջ այդ բնութիւնը: Եվ հետեանքը այն է լինում, որ հեղինակն յուր աշխատութիւն այս մասի մեջ ևս՝ ավելի յուր տեղագրական և հնագրական հմտութիւնն է ցույց տալիս, քան թէ բնութիւն առաջացրած տրամագրութիւնը: Առաջին երգն ամբողջ մի ոտանավորով աշխարհագրութիւն է. իսկ երկրորդ երգը մի հասարակ խրատ: Ժամանակի պահանջն է այդպէս. ոտանավոր չիսել մի նյութ, որի համար ոտանավոր պետք չէ: Այսպէս է, օրինակ, և Մկրտիչ Ավգերյանի (1762—1854), մեծ քառարան կազմողի «Բան գործնական» (1812 թ.), որ է զբարբար ոտանավորով մի «կրթութիւն լորս բարոյական առաքինութեանց վրայ», և կամ Ման. Զախլայանի «Արուեստ աստուծոսիրութեան» խրատականը (1819 թ.):

Բայց լնայելով այս ամենին՝ Խնճիճյանի գրվածքը յուր ժամանակին

յուր տեսակի մեջ մի նորութիւնն է և մի քաջ առաջ է տանում մեր քա-
նաստեղծութիւնը: Նորութիւնը նյութի ընտրութիւնն է. այն՝ որ ինճի-
ճիւնը ցույց է տալիս, թե բացի կրօնականից, խրատօրէն երգերից, էջ-
միածնի ներբողյանից և զարնան վարդ ու սոխակից՝ ոտանավորի նյութ
վարելի է դարձնել և ընտելութիւնը, երգել բնութիւն տեսարանները, կամ,
ինչպէս ինքն է ասում, կենդանագրել Արարչի այդ գեղեցկագորի գործը,
Վերկին նորոգել բնութեան ստեղծութեան: Նա յուր երկի սկզբում, ինչպէս
հենրն անում էին, զիմում է զգուարթուն ոգուն, որ սովորեցնեն իրեն զգու
նիւթական յաննիւթ գու բանին՝ հեղուլ, բայց զժբախտաբար զվարթուն
ոգին օգնութիւնն չէ հասնում և ինճիճիւնի միայն նպատակն է գովելի
մնում:

Այս շրջանում անարժեք ոտանավորներ են շինում և մյուս Մխիթար-
յան քերթողները՝ Ավետիքյան, Ջախջախյան, Ռոմանյան և Նույնիսկ Բադ-
րատունի, որոնց բանաստեղծութիւնները բավական ուշ, 1852 և 1853 թթ.
աւփովմած են երկու հատորի մեջ՝ «Տաղք Մխիթարեան վարդապետաց»: Նրոցը հատորը, հրատար. 1854 թ., յուր մեջ ունի Եղվարդ Հիւրմուզի
(1799—1876) տաղերը, որ սակայն նա նկատի չունի՝ ձեռի տակ
չունենալով:

Գաբրիել Ավետիքյանի (1751—1827) վեց երգերից իսկական բա-
նաստեղծութիւնն հոտ բուրում է միայն «Մօրն սրբուն Աննախանութի եղեր-
երգը», և հինց այդ պատճառով կասկածելի է թվում, թե արդոյց որդեկո-
րույս մօր այդ արտառուլ ողբը մի թարգմանութիւն կամ նմանութիւն չէ՞
որն է հվրոպացի բանաստեղծի, Մյուս երգերը՝ Տոգատի, Շուշանի, Գա-
րեգին Սրվանձտյանի, Վարդանի ու Վահանի վրա գրած տաղեր են, բւոյրը
կրօնական բովանդակութիւնով:

Ավետիքյանի ոտանավորներից շատ ավելի բարձր չեն Մոնումի Զախ-
ջախյանի (1770—1835) քերթվածները: Այդ ոտանավորների արժեքը իմա-
նալու համար հարկավոր է իմանալ, թե ինչպէս են հորինվել գրանց մեծ
մասը, Մխիթարյանների այս մեծ սերնդի մեջ մի տարօրինակ գրական
սովորութիւն է եղել. նրանց զվարճացել են ոտքերով ու հանգերով և
ոտանավոր գրելով՝ իրար հետ հանաքներ են արել, Զբաղված լինելով
ուրիշ գրական ծանր աշխատանքներով՝ բառարան գրելով, թարգմանու-
թիւններ անելով և այլն, մեկ մեկ էլ պետք են զգացել հանգստանալու և
իրենց հանգստութիւնը գտել են քերթողութիւն մեջ: Բայց քերթողութիւն
ի՞նչ տեսակի: Ինչպէս հին աշուղները իրար հետ բառ մտնելիս՝ միմյանց
առեղծվածներ էին առաջարկում հանգեր ու ոտքեր տալով, և մրցակիցը
պետք է յուր ոտիս պատասխանը տար առաջարկված հանգերով ու ոտ-
քերով, ճիշտ նույն ձևով իրար հետ մրցում են և Մխիթարյան ընկեր քեր-
թողները: Իրենց բառով ասեմ, նրանց հորինում են բոնահանգք և
բոնակարգք ոտանավորներ: Ճիշտամ տացի բանաստեղծին նիւթ ինչ
հանդերձ հանգական բառիդ, և ըստ այնմ պահանջեսցի զտաղն, կամ թէ
քերթողն ինքնին՝ տլլոյ ուրուք տաղի յանգավոր բայիւք և յափովք յօրի-

նեցեղ ինչ կամ դարձուցէ նմին պատասխանի, այս ազդ քերթածաց կոչի քոնայաեզա: Նյութը և հանգն ու լափն ուրեմն տալիս են քերթողին և պատվիրում նրան, որ բանաստեղծն և նա բանաստեղծում է բռնահաւանգներ: Բայց այս դեռ թիւ է. այստեղ քերթողն երեւի ազատ է դեռ տրված հանգստեան բառերը դասավորելու մեջ. բայց թեթէ որով առնալի իցէ կարգաւ զծայրայանդ յայնսն՝ անփոփոխ նովին յիշումն անստերիւր պահեցի տաղի, ասի յայնժամ և քոնեկարգա: Ահա՛ թն ինչով են զվարճանում այս քերթողները. նրանք բռնազբոս հանգերն են շարժում:

Այսպես Առան Սիօսակյանը, այսինքն Արսեն Բաղրատունին 1825 թվին առաջարկում է վահրամ Ռուբինյանին, այսինքն Զախչախյանին (Մխիթարյան քերթողներն աշուղների պես իրենց կեղծ անուններն ունին) գրել մի բռնահանդ և բռնակարգ ոտանավոր հենց իրեն Զախչախյանի այդ տեսակի քերթողութեան վրա, ընդամենը շորս տուն 15-վանկանի տողերով. առաջին տան հանգերը պիտի կազմեն լայնալից, եռնից, խից, կապից բառերը. երկրորդին՝ բարեբաւ, կամաւ, շաւ, անդադաւ, երրորդին՝ նպատակ, տխօբակ, օրինակ, ժամանակ. իսկ չորրորդին՝ կենաց, հիւսեաց, բարեաց, ի բաց: Եվ Զախչախյանը գրում է այդ ոտանավորը (Տաղք, Բ. 89): Զարմանալ պետք է, թն ինչպես նա այսպիսի բռնազբոսութեամբ դեռ կարողանում է իմաստ գնել յուր ոտանավորի մեջ: Բաղրատունին ինքն էլ ապա նույն հանգերով պատասխան է գրում Զախչախյանին ոտանավորին (Տաղք, Ա. 143): Եվ այդ դեռ բավական չէ, Զախչախյանը նորից ուրիշ ոտանավորով, նույն հանգերով պատասխանում է Բաղրատունուն, և սիրահարվելով այդ հանգերին՝ դարձյալ ուրիշ երկու ոտանավոր էլ է գրում թմուսով խաբիմքն և թմամենայնի խոհեմութիւնն: Եվ այդ անում է նա մեծ սիրով և պարծանքով.

Եթէ դիպուած բռնազբոսիկ ինձ կարկառէ նպատակ,
Իմ մեղուբէն ճախրէ զնովաւ քերթողական անորժակ—

Զախչախյանը վարպետն է այս կարգի ոտանավորների. ունի մոտ հիսուն այսպիսի քերթված. նրա ոտանավորների մեջ քաղմամբիվ են և այնպիսիները, որոնք միենույն հանգերով են կազմված, ինչպես՝ 19 քերթված միենույն մահանդ-զահամանդ, երթնեկ և տարեկ և այլն հանգերով (Բ. 68—82):

Ասիլ լի ուղիւ, որ այսպիսի ոտանավորները լոկ մեքենայական արդյունք են մի տեսակ սրամտութեան. բանաստեղծութիւն որոնել այդտեղ կարելի չէ. քերթողին տրվում է հանգ և ասվում է զովի բույներին և նա գրում է շոգովեստ յունացն (Բ. 62):

Ջնլինական զարմիցն ըզպերե
Առնում գոյել նիւթ ոչ րստեբը:
Վարժեաց ուսմամբ մեծըն Սողոմ
Ջազգ սովորեալ յանդործ գողօն.
Ջորսըդ ձրկանց և զխշալիւս

Իմաստութեամբ լին լուսավառ,
Եւ որք վարժեալ քաղել զհօրոտ,
Զարեասկան ուսան զորոտ: Եմ ալլն:

Բայց նույն քերթորդ նույն հանգերով և հակառակն է գրում՝ թղար-
սաւ ցունացաւ:

Ազգ պանծալի երբեմն պիւրն,
Ամենայնիւ կաւ արդ ըստեւջ.
Եւ զոր ուսոյց թաղէս, Սողոմ,
Եզիպտական էր այն գաղօն:
Արհեստ քո արդ է զխեշտփառ
Կամ ձուկն որսալ լուսնոյն ի վառ.
Հեռի ի քէն նախնին որոտ,
Թութ քաղեալիւ տնկեա հօրոտ: Եմ ալլն:

Ապա նույն բանաստեղծը զղջում է յուր վերջին գրվածքի վրա և նույն
հանգերով գրում է յՁեղջ ընդ պարսաւին ցունացաւ:

Թէ աղօն Հելլէն երբեմն ըզգօն և զինուք պիւրն
Այդ յիմաստից յամենայն բարեաց ըստեւջ,
Մի զարմանար, ծնցի կրկին ի կուրդ Սողոմ.
Թողցեն դարձեալ համակեալ կան ի գաղօն:
Ի նըւագիլ լուսնոյն ծիւրի և խեշտփառ.
Եւ պատարի յորժամ լուսինն է լուսավառ.
Եւ երբ թխպին կրկինք հողմուտ յամպրոպ յորոտ,
Եւ գեղեցիկն ի դաշտ տապաստ զընի հօրոտ: Եմ ալլն:

Ի՞նչ կարելի է ասել այս տղայամիտ խաղերի համար, որ անում են
վենետկյան քերթողներն իրենց հասուն տարիքում, և որ սահմանված են
միայն ընկերներին զվարճացնելու համար:

Առեր ահա՜ զոր ինձ հտուր յանգ ի վըսեր,
Խեղրուածոյդ մի՛ անլսող զիս դու ասեր.
Թէ քաղցրասցի երգս անպաճոյճ քան ըզհանուրց,
Յետ կարդալոյդ արկ ի մախաղդ և կամ քուրճ:

Եմ իսկապէս, յորում ձգելուս բաներ են դրանք, Եմ բանաստեղծներն
իրենք եւ, նույն ինքն Ջախջախյանը մեծ բան լին համարում այս տաղերը.

Գիտեմք անշուշտ նիւթեալս աւիշկ չէ ինչ ախորժ յօրինակ,
Եւ ո՞ր գիտէ վարձահատո՞յց լիցի ներող ժամանակ:
Ոչ շուք անձանց այլ դիւրութիւն միայն խնդրեմք մեր կենաց-
Ոչ թէ պըսակ զոր բաղօն ազա՜հ հէգ քերթողին ոչ հիւսեաց.

Բանդեալն նոյնս թէ մօմնչէ ա՞կն ունիցի ինչ բտրեաց.
Իժ, Սիսակեան, լուր նրազիս. թէ լախործես կաց ի բաց:

Այս բքանտեալ նոյնսները, շղթայակալ տալերը, շատ բան շնն տալիս մեր մտքին, և ոչինչ մեր զգացումին: Այդ տալերի մեջ Մխիթար-յան քերթողները զբաղվում են իրենց առանձին խնդիրներով, ընկերական կյանքի մանր դնպքերով. ոտանավորով գտվում են միմյանց, կարծես մի տեսակ սիրահարված են մեկմեկու և իրար կրթի, ու խրատել են ուղուս: Նրանք փակված իրենց վանական պատերի մեջ՝ իրենցից, իրենց զրական աշխատանքներից, իրենց բառախաղերից դուրս աշխարհ զրեթն շնն տեսնում, նվ այս ամենը հրդուամ է ներգաշնակ, հրաժշտական ոտքերով, լիահնչյուն հանգերով, մի խոսքով հիանալի տաղաչափությամբ, բայց ամա՛ղ, միայն ալոքան: Մարդ ցավում է, որ այդ զնդեցիկ տողերը, լիքը հանգերը շունին չի և հարուստ բովանդակություն. որ այդ ներգաշնակ տողերից չի կազմվում և ներդաշնակ միություն հորինվածքի, այլ միայն կցկտուր, հաճախ անհարիր շարվածքներ են առաջ գալիս, լավագույն դնպքում հատ հատ առանձնական, իմաստալից խոսքերով, որոնց վրա գոնե մեկ մեկ հանգում է կարգացողի ծանրացած միտքը:

Բարոյական գաղափարները, որ Ջախշայանը դնում է յուր բրնա-հանգն և ոչ թունաճանգն ոտանավորների մեջ, շատ սովորական վարդապետական քարտզներ են, քույրն ընդհանուր քնավորությամբ: Աստված յուր գերագույն իմաստությամբ մարդկանց վիճակը պես պես է ստեղծել, որպեսզի հնարավոր լինի աշխարհում ապրել. ուստի մտադ լախի գծգոհ յուր վիճակից. որովհետև

Եթէ անցնիր ոսկի թագից էր արժանի,
Ի քոյդ փարախ կամ լաղօրիս ո՞ տարժանի:
Կամ թէ գեղջուկ քո պէս մըէ անպէտ քարտէզ
Ո՞ր բաւ յայնժամ ըզքոյդ հեշտին քըրէր պարտէզ:

Մի հին գաղափար, որ զբաղեցրել է մեր վարդապետներին, այն է, թն աշխարհում տնայնոք բան չկա. աստվածալին տեսլությամբ, որ չպետք է ուրանալ, ամենայն ինչ որոշ նպատակի համար է ստեղծված.

Ոչ թօնք անպէտք և ոչ երաշտ,
Ոչ առիժուց, ոչ վագերց վաշտ:
Ոչ անպիտան տեսցնա դու գիժ,
Եթէ յաւացդ առցնա գրիժ...

Աշխարհի մեջ ամենարածր բանը, որ արժանի է երգչի կիթառին՝ է առաքինությունը միջնադարյան քրիստոնեական կրոնական իմաստով: Առաքինի է նա, որ ճշարտարապես ընդունել զընդդիմակից մարմին հետք, որին շնն զբավում աշխարհի փառք ու պատիվը, ճոխությունը, ոչ քաշության անունը, ոչ աշխարհի սերը, որ հաղթում է կրքերին և որի ուժ ու միտքը միշտ Աստուծուն է ուղղված:

Երբ նստի յառուակ, և կամ կողմանի ի ժաղկեայ պարտէզ
Երթք շիղք ամենայն զԱստուած նկարեն իբրև ի քարտէզ:

Ունեցածով զոհանալ, հոգ լսանել աշխարհում զանձ ժողովելու, որ-
մարդուս համար ցնց է: Թեպետև ուսումնականներին շին հարգում մեր
ազգի մեջ, բայց միշտ պետք է աշխատել, աշխատությունն ամեն բանի
կհաղթեն:

Վաստակք շըքեղք՝ իմ ժառանգ յաւերժակից պայազատ,
Անմահութիւն քանգականալ նահատակիս ի ճակատ,—

Ահա՛ Մխիթարյան կուսակրոնի մխիթարությունը յուր մենավոր կյան-
քի մեջ: Ամեն բանում խոհեմություն է հարկավոր և քաջ մտածողություն:

Թէ ոչ կըշռէ ակըն դիտող,
Ինչ ոչ արժէ ձիգ լայնայիճ:
Թէ ոչ ըզժամ գիտէ որսող,
Չարժեն և խոուն հաւք ի ճահիճ:

Այս նյութերի վրա պիտի ավելացնել և այն, որ տաղերգության
ստարկաւ են դառնում Զախչախյանի համար նաև կրոնական բաներ—
Աստվածածնի ծնունդ, Փրկչի ծնունդ, սրբեր և այլն, ապա բուն Մխիթար-
յան ընտանեկան կյանքի դեպքեր, ուղեբժներ, ձոներ՝ ուղղված այցելու-
ներին. իրենց բաստվածապատիվն հոգևոր տիրոջը, աթոռակալներին,
նորընծաներին, թի հանդէս ընդունելութեան վարդապետական զաւաղանի
երկուց նորընծայ վարդապետաց, թի հանդէս սքեմառութեան, թի հան-
դէս ուխտադրութեան և այլն. բոլորը միայն Մխիթարյաններին, այն էլ
միայն ժամանակակից Մխիթարյաններին հետաքրքրող բաներ, զուտ
Մխիթարյան սրայրենապիտությամբ զրված:

Ընդհանուր հայ ազգայինը, հայ ազգային վիճակը, խնդիրները շին
հետաքրքրում Զախչախյանին, եթե այդ խնդիրների մեջ չուզենանք դնել
լեզվի այն երկար դովեւտը— թի վերայ լեզուի բան, որի մեջ սակայն հայ
լեզվի մասին չէ խոսվում, այլ ընդհանրապես լեզվի: Նույնպես թի պար-
սաւագիրս նախնաց երգիծարանութեան մեջ մարդ սպասում է գտնել
դովեւտ հայ նախնիների, բայց այդ խոշոր, բոլորը Կո հանգով կազմված
քերթվածի մեջ այն միտքն է հայտնվում, թե ամենայն բան, որով ներկա
դարը պարծնում է, յուր սկիզբն ունի հին դարի մեջ, և միայն ի միջի
այլոց հետևյալ միամիտ ազգային սնամիտության տողերն են մեջ զալիս:

Երբ մոլին ի դաշտ՝ մեր ցրտահար
Ընդ վայրասուն ցիռ և իշնար,
Եւ կամ որսալի զանգոր ճաղար,

Նա բուռն քաղէր կաղին և խար,
Հայկ նախահաւ գիրաւարար
Յատուք ցորեան և ի յաշար,
Ջեռնոյր թիկունք յիւր ի քովթար
Նա ի սամուրն ի յոսկեկար...
Բամբիշն Հայոց էր ի ժանուար,
Աշխոյժ մանկտին քաջ ձիավար...

Բանաստեղծութիւնն նյութ դառնում են և գրքերի տպագրութիւնը, ի միշի այլոց խորենացու տպագրութիւնն ևս ոգեւորել է այս գերթողին. և սկեռք է խոստովանել, թեպետեւ դարձյալ «բռնածանց», բայց լավագոյն տողերն է ներշնչել նրան.

Երգել խնդրեա զանշուք խորնի
Որ առ ինն պերճ քան զԱնի,
Որ զԱրամեան զարմ և համբաւ
Պայծառացոյց ի շուք անբաւ
Այո՛ հնչեմ կերկեր ի փող
Քերթողահօր իմում ներբող,
Որ զիմն երգէ դիցազուն Հայկ
Տոհմիս դրոշմոց արև և այգ.
Որ ինձ վիպէ ցգաշն Արամ
Հիւսեալ նմին հիւսք անթառամ,
Բարենշան մեզ այս տարի,
Որ յիւր եգիտ բազուկ արի,
Ջնորայն կանգնել արծառն արդար
Ի տիպ աշաց զործոց տիպար,
Տալ յընթերցուած ազգին Հայոց
Ջորս են ի փառս և զոր ի խոց,
Ջոր նայն սուլեաց քաղցր ի յառաջ,
Եւ կնքեաց յողբ ու ի թառաշ:

Պետք է կարծել թէ խորենացու Ողբը գոնե պիտի ազդեր քերթողին, և նա այստեղ պիտի բարձրանար ընդհանուր ազգային վիճակին և իսկական հայրենասիր դառնար. բայց ոչ, նա ողբում է միայն Հայոց ձեռագիրների կորուստը, մնացածն անտարբեր է նրա համար.

Ինձ չի՞ պիտին կաթողքդ ն սիւն,
Ջոր հուր փատեանց ներկեաց արիւն.
Ինձ առիմէ՞ խոյր քո և բարձ,
Ջոր աչ անգութ վաղուց չբարձ...

Կամ նույն հանգերով և նույն խնդրի մասին գրած երկրորդ բանաստեղծութիւնն. մեջ.

Ոչ զամբարտակս և ոչ զսիւն
Ողբամ յարտօսր ողջամբ արիւն:
Զոր բազդ Յոնեաց՝ բաղդն և երարձ,
Զթագ աղգիս զգահն և զբարձ:

Եվ այսպէս, ռաստիւած տվալ և աստված առաջ, ուրեմն թաստուծով մխիթարվիսա: Եվ այս թաստուծով մխիթարվիսա՝ այն աստիճանի դեռ իշխում է, որ տեղ է գտել նուշնիակ սգավոր Վիգի Հայաստանիս պատկերի տակ, որ երևի առաջին անգամ այս մեծ Մխիթարյաններից մտածված և զետեղված է Խորենացու այս 1828 թվի տպագրութիւն վերջում: Ահա՛ թն ինչպէս է հնչում Զախչախյանի այդ ռտանաւորը՝ «Արձանագիր առ ոգին, եղբերդակ ընդ կործանումն Հայկազեան զահուս»:

Ոգիդ վսեմ, զթագն և զբարձ
Թէ ինձ ողբաւ զոր բաղդն երարձ,
Մի՛ լար. բաղդին բարքն են անդարձ:
Թէ զբարձման սրգաս դու խանձ,
Լա՛ց, ա՛ռ և զիմ արտօսր անսանձ.
Ո՛հ, լա՛մ ըզհեզ հեռ և նախանձ:

Մինչ Խորենացու սրտից արյուն է կաթում, երբ հիշում է զահի անկումը, 19-րդ դարու ուսյալ վարդապետը, Հունաստանի ազատութեան օրում նրա օղբի տակ ասում է. «Մի՛ լար. բաղդին բարքն են անդարձ: Բայց և նույն վարդապետը լալիս է և լացի հրավիրում, որ այդ անկման պատճառն են հղել զհեռ և նախանձը: Եվ ուրիշ բան էլ սպասել կարելի չէր մի կրօնավորից, որի համար բանաստեղծութեան զխաւոր նյութը ընդհանուր բարոյական խրատն է կազմում: Ահա թե ինչ է ասում նա այս մասին մի բռնահասնգ, բայց գեղեցիկ տողերով հարուստ քերթվածի մեջ ժողովրդային առ Արամեան քերթողս»:

Նիւթ քերթածաց նախ եղիցի ձեզ Արամազդ,
Գործք եղիւսեանց և ուղղութիւնք հանճարիմաստ.
Խոտումն ախտից և կրթութիւնք մտաց հրահանգ...

Անշուշտ, անմարմին վերացական բարոյականը չէ, որ երգի նյութ դառնալով պիտի կարողանար զհանճարեցեալներգական ի վերամեանց շնչել արատա, ինչպէս ցանկանում է Զախչախյանը վերահիշյալ երգի մեջ, այլ բուն ազգային կյանքը, մարդու թրթուռն սիրտը: Եվ այն, ինչ որ Զախչախյանը խրատներ կարգաւորվ ուղղում է հայ բանաստեղծների, դրսևում իսկապես յուր և յուր ընկերների հրկերն է բնորոշում:

Ան ի՞նչ շարժիք դուք զերկնուղէշ սօս և նոճի
Ան սիւք հոգմոց, թէ քանիցդ յեւզ՝ սիրտ աչ ցօցի:
Կամ թէ քերդողն ամեհացեալ դերդ սէգ առիւծ,

Բաշ ծածանէ՝ ծնծէ դձեռ, բայց սիրտն է հիւծ.
Կամ թէ սրափար աստ անդ սուրայ իբրև թուշու,
Զբռն մոռանայ և ոչ գիտէ ո՛ւր իցէ շուն...
Նն և քերդողք նրկայնաթոխք քան զՄասիս,
Յորոց ճախրել թէն պշնուա՝ խոնջնալ կտախս:

Մեր ասիրտը չի ճոճում ան յոգ տենալով ինչպե՞ս քանտեսեղծութիւնից,
ու թոնջացած ետ ինք կասում, որովհետև գրվածքի ասիրտն է հիւծ և
որովհետև բանաստեղծը յուր բոլոր մոռանում է, բայց բոլոր ոչ այն
վերի տողերի իմաստով: Բանաստեղծութիւնը բոլոր ժողովուրդն ու իրա-
կան կյանքն է, որ լուսնի Զախչախյանը, նրա ամբողջ բանաստեղծութիւն
մեջ միայն թի սուրբ Վարդանան, որոված 1828 թվին,
հետեյալ տողերն են գտնում ժամանակակից կյանքի մասին.

Նըստի մշակ ընդ հովանեալ ի բարտի
Լայ դիւր վաստակ ծածկէ զլալիս զոր պարտի.
Հայի ի թիրտն յամարայնի՝ և ի դարուն,
Ոչ իւր մընայ մեղուացն անմեղ գունդ պարուն:
Զհօտ իւր խըլէ Մար յուզկահար շոյտ ի քալլ.
Ոչ թէ ըզմին որպէս ներող քան զայն գալլ:

Ահա թե ի՞նչը պիտի լիներ մեր բանաստեղծութիւնը, որ
վերջում միայն գտել է Զախչախյանը, բայց դժբախտաբար այն ժամ-
նակ, երբ արդեն ուշ էր: Բայց նա մեր ապագա բանաստեղծութիւնը ան-
նյութը գտել է կիսատ. նա շատ չափավոր է յուր տենչանքների մեջ, Վար-
դանանց գործը գովելով Եղիշիի նմանողութիւնով, նա խնդրում է.

Սո՛ւրբ Վարդանանք, զայս նրդ ձօնէ իմ գուան
Ընդ փունջ ծաղկանց որ յարենէ ձեր բուան.
Վարձ ոչ հայցեմ դահ Պահլավաց հաւասար,
Ոչ զԱրծրունեաց զոր հիմնարկեաց Մանասար...
Դարձցի մաղթեմ անդրէն Մասիս և Մարանդ,
Կանգնել ձեզ սուրբ տաճար ի կորդ ի մարմանդ...

Եվ այս հասկանալի է մի բանաստեղծի համար, որ մի քիչ վերնում
մոռացին Այրարատ հրաժիրելով՝ խնդրում է

Ոչ զԱրամեան նրդաճայնել ինձ բաղդ յոր
Զքաջահաղթ նախապլուսկ կամ Պարոյր.
Եւ ոչ զարին վիշապալաղթ դոռ Տիգրան,
Շամիրեալ ըզթոք ի նիւակին սուր ճիրան,
Այլ Վարդանանց արեան զոր հեղ գոռ Սասան,
Լեր դրուագոք բարձրաճայնիւք վիպասան...
Ո՛վ նրջանիկ սրբոյ դարուն գերդաստան,

ի դա պանծա՛ ի դա ողո՛րմ Հայաստան,
Ոչ թէ ի Հայկ ոչ ի Տիգրան կամ յԱրայ,
Ոչ և բերրի դաշտ զոր ցանեաց քեզ Շարայ՝

Հետո՛ւ ուրեմն ամենայն ինչ, որ աշխարհական է, հետո՛ւ հայրենի աշխարհ և քաղաքական կյանք, և դեռ սրբեր ու սրբեր միայն:

Վերջում հիշենք և այս, որ 1789, 1804 և 1815 թվերին գրված երեք քերթվածներ կան,—սեուագ յաղթութեան ի հանդէս մենամարտութեան Որատեանց, Ողբելոգեալ ի թատեր Մխիթարեանց, քի նենգախոշոշ մահ հոսրովայ Մեծի յաւարտ ողբերգութեանն եղբերգա, քի թատերական ողբերգութեանն Երուսաղայ Հայոց արքայիս: Սրանցից հայտնի էր լինում, որ 18-րդ դարու վերջերում արդեն Մխիթարյանց [կողմից] հայրենն ներկայացումներ են տրված, և երեւի Ջախջախյանը հայերեն, իհարկե, գրաբար, պիեսներ է գրել պատմական բովանդակությամբ: Նույնպես Քոմաճյանն է քերթվածների մեջ կան երկու երգ «Յողբերգութենէ սրբոյն Արղմսեհիս», գրած 1802 թվին:

Եղիա Քոմաճյանի (1777—1848) մեծ վաստակը մեր գրականության համար է՝ Հոմերոսի Իլիականի և Ոդիսականի թարգմանությունը. իբրև ինքնուրույն բանաստեղծ սակավաթիվ քերթվածներ ունի և շատ աննշան է, թեպետև Ջախջախյանի լսի բռնահանգի չի կազմում: Այդպիսիներն ընդամենն երկու են թվում՝ «Յարկածս իւր ողբ եկեղեցւոյն Հայաստանեայց», մի հին նյութ, որ սա էլ դեռ էլ յուր բռնազրոս հանգերի մեջ, ապա «Առ Հայաստան խրախոյս ի պարտութիւն Տուղրիւլայ ի Մանազկերտ»: Այս վերջին նյութը նույն հանգերով և հանգերի նույն դասավորութեամբ երգել է նույն 1828 թվին և Արսեն Բագրատունին, երևի մրցելով Քոմաճյանի հետ: Տուղրիւլի այդ պարտութիւնը Մանազկերտի մոտ, որ ոչ մի առանձին նշանակություն չի ունեցել թուրքերի հառաջխաղացման շարժման համար և բնավ չի ազդել Հայաստանի բախտի վրա, անշուք ողևորում է այս երկուսին ևս անշուշտ միայն այն պատճառով, որ շրոմահանգ և բռնակարգ՝ ոտանավոր են գրում, այսինքն նյութն և հանգերը տվողը պատվիրել է նրանց ոգևորվել այդ նյութով և խոշորացնել այդ դեպքը: Եվ այսպես վարվել են մեր քերթողները: Բագրատունու քերթվածը՝ «Հայաստան առ հուժաստան ի Մանազկերտ» անպայման շատ ավելի բարձր է քան Քոմաճյանինը, յուր թափով և ուժգնությամբ, որ առաջանում է սակայն ոչ թե նյութից, այլ զորեղ խոսքերից: Բիրենք մի մի հատված երկսից ևս.

Գլուխ տարւոյդ հաս նաւասարդ,
Վառեա՛ց հայկադն ի գէն ի դարդ.
Հաստահարուստ իբրև բարտի,
Ճօճեա զտէգդ որպէս պարտի:
Թագիդ, բարէ, եհաս գարուն.

Դու յարթայից անց ի պտուղն
 Քո երկնաճեմ սար ի Մասիս.
 Ահ արկանել ազգաց կասի՞ս.
 Զի ցնծացել թաշն իմ Արամ,
 Եւ ժանկրտոյն նորուն երամ:
 Օ՜ լիասցին իբրեւ Շարայ,
 Իցի՛ւ առլէզք կանգնեն զԱրայ.
 Զի զոգ մեղուդ Տուղրիլըն թռո,
 Տապաստ մեղուացն անկցի ի գոռ:
 Եւ դու ըզթագդ առցես, Թորգոմ,
 Ճաճանլ հատցել շիշեալոդ մոմ.
 Դու բարձրասցիս զեղով նոճի,
 Որ ի դեփիւտ անուշ ճօճի, Եվ ալլն:

Իսկ Բագրատունին գրում է.

Ի զալ ամսոյն մեր նախաարդ
 Զգեցան ազինք զինուց ըզգարդ,
 Բարձրացաւ բախտ մեր զերգ բարտի,
 Գուեզ թշնամեաց մերոց պարտի.
 Իբր այժմեանց հոլլք ի դարուն
 Խայտան Ղայոց կոյսք ի պարուն,
 Եւ ի բոլորըս քո, Մասիս,
 Որ հովանի ոչ պակասիս,
 Խոնեալ կաջաւ կայթէ Արամ
 Որդւովք իւրովք երամ երամ:
 Առատութիւն զայ ճեղ, Շարայ,
 Զիք Շամիրամ Դժժբախտ Արայ-
 Ղալածեցան իբրեւ ըզթռո
 Ի ծուխ ցասման մարտկացրս գոռ:
 Նիստ կեր զմեղըր քո, Թորգոմ,
 Զախ աստեղաց վառեա քեզ մոմ:
 Ի բաց կացցել շիրմաց նոճի,
 Որ ի մոռնշ տխուր ճօճի, Եվ ալլն:

Թոմաճլանի մյուս ոտանավորներն են «Ի սուրբ Դաւիթ մարգարէն»,
 «Ի հարսանիս մեծաց պայազատաց բարեբարաց ազգիս», «Ան ազնու-
 զարմ պատանի Տ. Գարեգին Տատեան», — «որ ուսումնական յաղթանակու
 արքունի հրովարտակին դարձ առնէր ի Փարիզոյ ի հալոհնիս անդր ընդ
 Վենետիկ անցնալ յայց վանացս»։ — Այս վերնագիրներն արդեն ցույց են
 տալիս արժեքն այդ բանաստեղծութիւնների, որոնք քառասնական թվա-
 կանների ծնունդ են, Ավելի աչքի է ընկնում 1843 թվին գրած «Տաղերգու-

թիւն ի մեծն Մխիթար Աբրահամ: Հոմերոսի Ոդիսականի թարգմանին վայել էր այսպէս նմանողութեամբ այսպէս սկսել յուր այդ տաղերգը.

Ինձ, երկին, զԱյրն երգեա, որ յազգէ հողածին
Վերառեալ հրաշացաւ որպէս մարդ երկնային,
Ինքն ողորմէ լուսազգեաց իբր արմի գերակայ,
Եւ դերկորդն գիտաւար փարատեաց թորգոմայ,
Ինձ դարձեալ զայն ասա. այրն անյանց զի՞ զի
Բազմադէմ լըկանօք տանջեցաւ յաշխարհի.
Բայց և ճետ զիւր ձգեաց ի նորոգ գերդաստան,
Ոճրկրեցաւ ծնունդովք, բերկրեցի և յապայն:

Սպասում ենք մի նոր Ոդիսականի, քայց բարեբախտաբար կարճ է կտրում Քոմսեյանը. մի երկու խոսքով նկարագրում է Հայաստան դրախտը, Ադամ, Զրհեղեղ, Նոյ, Հայկ:

Ընտք սորա քաջազունք, որ ի վէպս հրաշանան,
Զի թէպէտ փոքր յածու, գործ ցուցին աննշման:

Եվ ապա Արամին, Տիգրանին ու Վահագնին հիշելուց հետո՝

Մի՛ ալլ շատ իմ քընար, զիմ ըզքաջս յուշ ածեր,
Զի մի՛ երգ քո յապայն ցաւ ածցես կարեմէր:

Հայաստանի վիճակը թշվառ է. ավեր այգի, ավեր տունք է նա.

... Հարուածեալ տուն Հայկայ դիցազին,
Ա՛հ իսպառ խըրթնացաւ, հետքն անգամ չերեին:

Հայաստանը մի կուլրերի աշխարհ է, ուր մարդիկ

Ջեռն ի ծնօտ գերարտօսը յորդ հեղուն ի յարկին,
Ջայն յողորմ այր ընդ այր կողկողին, ո՞ւր է լոյս.
Այսպէս ազգն իմ նըստեր և անյոյս...
Գութ հարաւ Արարլին. սմինչև ցերը այդ խաւար
Թախծութեամբ պաշարէ զԱրամեանն ըզգաւաւո՛ւ:
Ջայն հնչեաց աստուածեան, սէա՛պա լոյս եղիցի՛ս.
Եւ եղև լոյս արհի Մըխիթաւու արփենի:

Մխիթարն ուրեմն է Հայաստանի լուսավորիչ արեգակը և նրա ծնունդ-նեբը միմյանց հետ մրցում են Հայերի մեջ զիմաստից ճրագըս վառելու համար.

Ոմն յիմաստ աստուածեան, ոմն ի վարժքս բնական,
Կէսք յաղխոյժ Պառնասին, կէսք ի գիր հայկարան:

Այդ ոտանավորն յուր շոշափած խնդրով, թնայեալ թույլ արտահայտութեամբ, ավելի մեծ նշանակութիւն ունի քան Մխիթարուան քերթողների

մյուս բազմաթիվ ուսանավորները. սրա մեջ գտնեն ազգի լուսավորութեան հոգն է տարվում: Բայց Թոմաշյանը դրանով ոչ մի առանձին նշանակութիւն չի ստանում մեր բանաստեղծութեան համար, որովհետեւ նրանից առաջ, ինչպես կտեսնենք, ուրիշները նույնն արդեն երգել են ավելի գեղեցիկ և ուժեղ կերպով: Միտիթարյան վարդապետն ուշացել է և նա չուր՝ Եկրիսնի Միտիթարյան տաղերգութեամբ 1843 թվին Թուլ արձագանք է տալիս ուրիշների երգածին և սրբացնում Միտիթարին, Թոմաշյանը ոչ նուրբի և ոչ ձեկ ստեղծող է, նա չէր կարող ուղղութիւն տալ մեր գրականութեանը:

Նույնիսկ Աստիկ Բագրատունին (1790—1866), Միտիթարյանների այս համբաւի վերջնական յուր ստեղծարար տաղերով, կարելի է ասել՝ ոչ մի շարժում չի մտցնում մեր բանաստեղծութեան մեջ, ևս կրկին անգամ համարումք ինչ որ ասել ենք, ինչպես և մուսնիկի տաղերը ծայրնծայր կարգաւ, շատ տաղեր նույնիսկ կրկին ու կրկին անգամ, և ցավում եմ, որ լցոտա արժանի այն գովեստին, որ տալիս են նրան իրենք վնասեղծեցիք առաջ և այժմ՝ համարելով նրան մեծ բանաստեղծ, աստիկեցի և լատին քերթողաց արժանավոր անձն՝ իբր լեզվովն, մտքովն ու սրտովն, այնպես որ եղ լոկ ազգային՝ այլ նոր ժամանակաց ընդհանուր մատենագրութեան ասպարիզին մէջ ալ, իրաւամբք և պատվով նշանակող տեղ մը կրնա գրաւել: Եկրիսնի քերթողական և իսկաշնորհ հանճար, վառվռուն միտք և բացատրութիւն, զարգարուն զնոցիկ լեզու մը: Անկարելի է կարգաւ Եղերք սոխակին, Գանգատ Պառնասալ և Դատաստան Ապոլլոնի, Յաղթանակ արդարոց, Դաշտիկն յաւաք, ու անոնց նման տաղերը և շխտտովանիլ թն ասոնք արտագրողը սովորականն զուրս հանճար մըն է ու նախնի քերթովածոց աշխուժիւն ու նախնի կրթված միտք:

Բայց գծախտաբար այսպես չէ, Արդարեւ Բագրատունին անխոնջ պարապող մարդ է եղել. լավ իմացել է մեր գրաբարը և հին ու նոր օտար լեզուներ. շատ կարդացել է Աստվածաշունչ, ինչպես և Հոմերոս և ուրիշ դյուցազնիքագրութիւններ, մեր հին մատենագրութիւնը. ուսումնասիրել է օտար բանաստեղծութիւններ, որոնցից և թարգմանել է բազմապէս բան. նա արտադրել է ինքնուրույն շատ բան,—բայց այս ամենով հանդերձ նա մեր գրականութեան համար ծառայել է ոչ յուր ինքնուրույն բանաստեղծութեամբ: Նա է՝ և կմտն իբրեւ թարգմանիչ, հալկաբան, քերականութիւն գրող, իսկ իբրեւ բանաստեղծ ոչ միայն տրամախ է այն գովեստին, որ տալիս են նրան, այլ և չի կարող յուր ժամանակի առաջնակարգ չայ բանաստեղծների շարքը դասվել, նա առաջին տեղն է բռնում միայն Միտիթարյան այս առաջին քերթողների մեջ, բայց և յուր իւրեւր մը շատ էլ բարձր է նրանցից:

Նրա տաղերը, հրատարակված 1852 թվին, կազմում են մի մեծագործ ստեղծարար հատոր և բաժանված են մի քանի մասերի՝ Ետերոնականք, Եկրոնականք, Եբարոյականք, Եկնքաղականք, Եթափականք և ապա Եթարգմանութիւնք: Եւ չէ և այս տաղերի նյութը. ինչով է հետաքրքրվում

և ոգևորվում Բագրատունիին. ի՞նչ նորանոր զազափարներ է արժարժում նա յուր երգերի մեջ:

Նրա տոհմունականա տաղերը նվիրված են Քրիստոսի ծննդին և մոգերի երկրպագությանը: Նյութն ուրեմն շատ հին է և մեր շատ բանաստեղծներից հաճախ երգված: Բագրատունին ևս յուր երիտասարդ հասակում, երեխ նոր կրոնավոր դարձած, 1811—1814 թվականներին յուր հարկն է վճարում այդ հին նյութին: Առաջին տաղն՝ «Ի ծնունդ Տեսուհ», որ գրված է 18-րդ դարու իտալացի նշանավոր բանաստեղծ Մետաստազիոյի (1698—1782) նմանողությամբ, իսկապես մի զեղեցիկ քերթված է շնորհալի ու փափուկ անուշաբյամբ, կենդանի ու հարուստ երևակայությամբ, թեպետև սովորական գաղափարներով. այն է՝ մասնուկ Փրկիչը փարնանային մի առավոտ է ծագում մարդկանց համար, մի ճշմարիտ ոսկեզեն դար բանում, զթուփյուն ու սեր, հավասարություն ու խաղաղություն բերելով աշխարհ, ըթի Բագրատունին բավականացած լինել միայն այս քերթվածով, շատ էլ չէինք ցավիլ: Բայց նրա գրիլը բեղմնավոր է, և հենց սկզբից հակված է դեպի վիպականությունը. ուստի և նրա կրոնական զգացումին չէր կարող գոհացում տալ միայն զրոտ Մետաստասեայն քնարերգությունը: Պետք է նորից մի քանի անգամ նույն բանն երգել մեծամեծ քերթվածներով, երկար, վիպական տողերով, առանց սակայն մի որևէ խորություն մտցնելու նյութի մեջ. այլ, ընդհակառակն, ծանծաղացնելով այն, և ոչ միայն մտքերի, այլև խոսքերի և նույնիսկ հատվածների կրկնություններ անելով: Այսպես, օրինակ, ամբողջ տասներեւոթ 1812 թ. գրած մի քերթվածից, առանց այլեւայլության, բառացի առնում դնում է 1813 թվին գրած մի ուրիշ քերթվածի մեջ:

Բագրատունին յուր այս հասակում, արդեն երևում է՝ տարված է հեթանոսական գյուցազներգությամբ: Բայց ի՞նչ ավելի անդուր և անպատեհ՝ քան Փրկիչի խոնարհ ծնունդը վիպիկ հեթանոսաբար և Քրիստոսին անվանել սվեհազուն ծնունդ անմահին Ոլիմպեան (եր. 29), և կամ Միքրանեփառա հայր Աստուծուն դնել Ոլիմպոսի կատարին, ինչպես հոմերական Ջան, բարձր գահի վրա: Այսպես, ծնվում է մասնուկ Հիսուսը անշուք այրում. հավատքը անձնավորել իբրև մի լուսազգեստ, պառաված կույս, ներկա է նրա ծննդյանը. բայց երկրայում է, թե նորածին մանուկը լինի նա՞, որին շորս հազար տարուց ի վեր սպասում է ինքը: Այդ ժամանակ նա

Կուլ է ի ըրտաէն զարտոսր զթառաշ զաղերս մաղթանաց,
Եւ հոգւոց ելեալ առէր առ նոսա դիմօք սըզազգեաց:

Բավական չէ՞, որ Հավատքը, վերացական գաղափարն անձնավորյալ է, նրա արտասուքն ու մաղթանքներն ևս, ըստ հին մեկնաբանների, անձնավորյալ են այստեղ. և Հավատքը պատվիրում է դրանց գնալ Բարձրալի մոտ և հարցնել, թե արդյոք մարում ծնվածը նա՞ է, որ պիտի գա: Եվ ահա այդ արտասուքն ու մաղթանքները սեազգեստ խմբով, թեևրը բաց են անում, գլխակոր, աչքերը խոնարհած հասնում են Ոլիմպոս, պատում են

Ծիրանեփառի բարձր գահը, լաց ու կոծով փարում են նրա ծնկներին և ասում նրան ինչ որ պատվիրել էր Հավատքը:

Խոնարհեաց բարձրեալն ի վերին գահուն զունկն իւր անմուլար
Անժալիտ դիմօք զաղբսրն լսել, սակայն հեղաքար:
Առ ապա ի վեր ըզգլուփս իւր ահեղ և զուլան կամար,
Ի շարժել յօնից սասանեալ զողաց Ոլիմպեայ կատար,
Եւ ո՞ հանդարտէր ի լուր պատգամաց լեզուիի աղղաբար-
Հայեցաւ լերկիւր, ձայն ետ որոտման ի սոյն յայս տիպար:

Եիշտ ինչպես ամպրոպային Զեւր Ոլիմպոսի գլխին: Նա հավատքի
գեհապաններին քաջատրու՛մ է, թե նորածինն յուր որդին է և ապա կանչելով
հրեշտակներին բանակը՝ հրամայում է, որ գնան պաշտեն յուր որդուն:

Եւ ընդ բարքատոյն որոտաց երկին շանթից ի փայլակ,
Հոգւոց անմահից ծածանեալ լերեր սօսափին բանակ,
Եւ երկրպագեալ տէրունեան ռախց գընան լանդաստակ,
Գլուխն ռակեմարս լուսաթև թրոշին արի պատանեակը:

Հրեշտակներն իմաց են տալիս և հովիվներին, որոնք նույնպես գալիս
են երկրպագելու նորածին արքային:

Այս միենույն նյութը, ինչպես և մոգերի երկրպագութեան մասին
քննութեամբ՝ տի յայտնութիւն Տեառնս նա վերածած ունի նաև բնական
ձևի, բաժանված չորս փոքրիկ արարվածներին, երևի Մխիթարյանների
աշակերտական թատրոնում խաղալու համար: Գրանք առաջին հայ օրա-
տորիսներն են, կրոնական թատրոնգութուններ, որոնց ներկայացման հա-
մար առանձին բնական հարմարություն չի պահանջվում: Բազրատունին
այստեղ էլ ներշնչված է անշուշտ Մեսսաստագիտյից, որը նույնպես ունի
բավական թվով օրատորիաներ: Գործողութունը իհարկե շատ պարզ է,
չկա դրամատիկական զարգացում և ոչ քնավորութուններն ուսումնասի-
րութուն. դրանց, ինչպես պետք էր, փոխանակում է կրոնական-բարոյա-
կան այլաբանութունը, որով հրեք մոգերի տեղ հանդես են գալիս անձնա-
վորյալ Հավատք, Հույս և Սեր, և ապա իշխում է աստվածային հրաշալիքն
ու սքանչացումն այդ հրաշալիքի վրա: Բայց դժբախտաբար սառն է հնչում
Բագրատունու քնարերգութունը, և մանավանդ միջի հրգիւրը շունին այն
ցեծագին խանդավառ հափշտակութունը, որ անհրաժեշտ է:

Ինչպես էլ լինի, Բագրատունին յուր այս կրոնական դրամաներով մի
մեծ նորութուն է մտցնում մեր գրականութեան մեջ, մի բոլորովին նոր
տեսակ, որ մինչ այդ գոյություն չի ունեցել մեզնում: Արդարև, ինչպես
տեսանք, Զախախյանի և Թովմաշյանի ոտանավորների մեջ հիշվում են
1789, 1802 և 1804 թվերի համար «Մխիթարյանց թատրոն կամ ռեալիս-
տիկան ռոմանտիկութուն», բայց Բագրատունու այս օրատորիաները, գրված
1812 և 1813 թվերին, ինձ ծանոթ հնագույն գրվածքներն են իրենց դրա-

մատիկականն ձևով, քննականն քառասուն տարի հետո միայն հրատարակված, ուստի և ոչ մի ազդեցություն չթողած մեր գրականություն վրա:

Բազրատունու քննականն առհերթ պետք է հասկանալ կրոնավոր-նեքի և կրոնավորություն վերաբերյալ: Դրանք նվիրված են նորընծա կրոնավորյալներին, այս կամ այն ձևով հետադարձությանը, սրա կամ նրա սքեմ ընդունելուն, նորընծա բարեկամներ անաշխն պատարագին, Մխիթարյան Աթոռակալի ընտրությանը, օժանդ և այլն,—բոլորն էլ ըստ ավելի պատշաճի հորինված ոտանավորներ, Մխիթարյան ընտանիքի մեջ տեղի ունեցող դեպքերին հանդիմանողություն տալու համար: Տաղերիս նյութից հենց կարելի է գուշակել. քն ինչպիսի դադարափար պիտի արժարժվի դրանց մեջ: Դա հոգու և մարմնի, երկնքի և երկրի միջնագրայան կոնվն է: Պետք է կռվել աշխարհի բռնակալ սիրտ դեմ, որ մարդուս հոգին շղթայական պաշտմ է դնակի խառնար անդունդը. պետք է հաղթել այդ կորստաբեր սերին և ամաչեցնել սատանային, որ մարդուս թշնամին է: Եվ այդ նորընծա կրոնավորները, նորոգվելով անունով ու գործով, իբր քաջ զինվորներ մարտունակ են շար թշնամի հրեղեն սպասազենների դեմ. և այդ նրանք կարողանում են անել, որովհետև կատարելով ամենամեծ գործը, այսինքն իրենք իրենց ինքնակամ նվիրելով Աստուծուն իբրև զոհ, դառնում են հրեղեն հրնշտակներ և սարդենի պսակներով սլանում են դնակի երկինք, մտնում փրկչի տունը՝ երկնային կամարը, ուր հավիտյան պիտի ապրեն: Կրոնավորը նման է փյունիկի, որ ինքն իրեն ողջակիզելով՝ հրաշալի կերպով կրկին նորոգվում է հավիտենական կյանքի համար:

Այս է ահա՛ այդ կրոնական տաղերի նյութը, որ անհրաժեշտորեն շարունակ հեղձեղում է քերթողը, քանի որ բոլորը միանման դեպքերից առթված բաներ են: Դա մի շատ հին նյութ է, որ շատ ավելի գեղեցիկ կերպով ներգել է Կոմիտաս կաթողիկոսը՝ Հոսիսիմյանց մի Անձինքի մեջ. որի խաղությունն էլ շունին Բազրատունու այս տաղերը: Հոսիսիմյանք իրենց նվիրելով Քրիստոսի սիրուն՝ դառնում են Հայաստանի փրկության պատեհա. բայց և մեր բանաստեղծն անկեղծ սրտով ուրախանում է լուր նորընծաների ձեռնադրությունների համար, ուրախանում է նրա կարծիքով և սհարսն անարատ Հայաստան, որովհետև

Արդէն սարսիւն սանդարմեօք ի խաւար,
Եխած զմատն արիւն ակամբ Բելիար,
Զի յաջորդէ Յեսու զՄովսէս յամս յամայր
Քական զամուրս, թափել ժանիսն ընդ աւար:

Աթոռակալին նվիրված քերթվածների մեջ մեր քերթողը մեծ թեթևությամբ լափազանցության մեջ է ընկնում, ուժգին տողերով գովելով նրան իբրև աստուծու ընտրածի, և զուտ մխիթարյան տեղական դեպքը խոշորացնելով իբրև մի համազգային բան.

Զարթիր, զարթիր, տուն Սիսական, զարթո՛ւ և պար նուագածու.
Հայրենի մեր աշխարհին սուրբ թագաւոր օծաւ իշխան,

Առէք տաւիդ կընդընդոց փող է բամբիւրն Գողթան,
Գողթան շրտինդն յարուսցէ զբլուրս և զանտաւ
Ծաղթող երգոց ձայնիւ գոչել մըրցական
Ըզիսնեարճ միտս իմաստեոյն՝ ըզտիրտն ի տէր սիրոյն ի վառ:

Այդ նոր առաջնորդը, թթազաւորը, որ համվելայ կոչում ունի Գր-
տապետ Սիննեացա, է մի տարեգակ. որին երգում է տիեզերքը, որովհետեւ
նա ձմեռվա կապանքը քանդում է և այլն:

Ո՛վ է սա նոր արքայ եկեալ ի Սիննիս,
Անձաւք յերանցրն Սիսակայ հարցանեն:
Ընտրեալն է դա եթերին նորապըսակ տէր երկրիս,
Պայ ի պարտէղ ճո սիրելի շունչ հարաւոյ ի հիւսիս.
Հոյւ վարդից և շուշանաց և համապարտ թիւ նրկարէն
Փրթթանդ ոտիւք տէրունեան զարշապարաց յուսեղէն:

Ահա քն ինչպես բարձրացնել գիտե Բագրատունու Մուսան յուր մե-
ծավորին. Եվ ինչի՞ համար, որովհետեւ

Յաւուրց Մուշեայ պակասեցին հարք որդւոց,
Պակասեցին ի տուն Հայկայ պետք հարանց,
Մինչև յարեաւ Մըխիթար, մինչև յարեաւ դէտն Ադոնց,
Որ այդ յերկնից պատշգամէն յառեալ ի մեր յոյժ լալօնս,
Զի՞ յամէ մեզ, ասէին, աթոռակալ ժառանգ մանկանց:

Եվ այժմ այդ ուշացած աթոռակալն ընտրվում և օծվում է:
Միխիթարյանց այս սովորութիւնը, որ կարծես Կ. Պալատից է ծագել,
անցնում է ետ Կ. Պալատի վրայով Հայոց եկեղեցու մեջ և երկար ժամանակ,
կարելի է ասել մինչև մի տասն ու հինգ տարի առաջ, էջմիածնում ևս
պարտք էին համարում գրաբար ճոճեան ոտանավոր ուղերձներով շնորհա-
վորել կաթողիկոսի գալուստը, օծումը, նոր տարին և այլն: Դրանք քնա-
րերգութիւն չեն հարկավ, այլ միայն մտածված հանդեր ու ոտքեր, որոնց
մեջ սակավաթիւ տողեր միայն ունին զգացմունքի շնչու: Դրանց կատա-
րելատիպը կարելի է համարել ահա՛ Բագրատունու այս քերթվածները,
որոնց մեջ փայլուն արտաքին, զարդարուն լեզու, փարթաւ ասացված-
ներ՝ որքան ասեմ՝ կա, բայց իզուր կլինի որոնել զգացմունքի ուժեղու-
թիւն, եթէ լասեմ զգացմունք. իսկ իմաստ ու գաղափարի նկատմամբ
դատարկութիւն է իշխում:

Նույնպիսի շնչութիւն են ներկայացնում դադափարներով և ռարո-
յականա տաղերով Ալիսարհումս խաղաղ կլանք ասածը լկա, այլ միայն
ցաւ ու աղետ, թախիծ ու տաճնապ.

Պանծեալ կան քեզ աղէտք ցաւոց դարան,
Սրտի մտաց երերական

Բքայորդոր ձմեռն ալեաց խոտան.
Փոթորկայոյզ ծով դառնութեան:

Աշխարհս մի ծով է և մարդս նրա վրա մի նավ, որ ալիքների ձեռին խաղալիք է դարձած, դիվաշունչ հողմը առնում տանում է դեպի նավարկություն,—մի հին զառամար և նույնիսկ նմանութուն, որ սակայն Բագրատունին մանրամասնութեան մեջ նորոգում է: Նույնպիսի մի նորոգած ձեռք բրդում է նա վերջին դառնաստանը, որ մեր հին բանաստեղծների սիրած առարկան է հղել և որի ժամանակ երևում է, որ վերջին հալոդությունը ոչ թե անօրինն ունի, այլ արգարը:

Բագրատունու սկենցաղականս կոչած տաղերը, որոնք թվում ամենից շատն են և լի գովեստի արժանացած, նյութով շատ ավելի բարձր չեն: Դրանք մասամբ ուղղված են յուր ընկերներին. մեկի մեջ յուր սերն է հայտնում, մյուսի մեջ յուր շնորհակալությունը ստացած պարգևի համար. կամ թե լացով ճանապարհ դնում յուր ընկերին. մի լորտորդի մեջ պանգատվում, որ յուր սրտի հատոր ընկերն իրեն նամակ չի գրում: Կան և կահանդի շնորհավորություններ իրենց հոգևոր տիրոջը կամ «Առ կարգակիցն ճանապարհորդ ի Հնդկս օգտախնդիր ազգիս», իսկ թե ինչ է այդ օգուտը՝ չի իմացվում. այդ կարգակիցն արիությամբ ծովեր է անցնում, արտում ունենալով ազգի սերը:

Հայկ կառուցող հայրենեաց

Ջքեզ որդի դաւանեաց.

Պարթևն արթուն և ցանկալին քո Սահակ,

Մխիթարայ զորավարք՝ քեզ հարկանեն փողոց հրույակ:

Տես արդէն, տես ի տըխուր գէժս հայրենեաց

Քաղցր շողեալ ըզժըպիտ որդեգորով քո զըգուանեաց:

Կան և ուղերձներ նվիրված Աղեքսանդր Թափայալ Ղարամյանին նրա՝ գալուստը կամ ծնունդը շնորհավորելու համար. որովհետև նա դպրոց է բացել, Մի քերթված Թուսաց Աղեքսանդր Բ. Կայսեր այցելութեան առթիվ, ուրիշները Լեոն ԺԲ պապի Ուրբանյան դպրոցի սաների հետ ճաշկերույթի առթիվ, և այլն: Եվ վերջապես բոնահանգ խաղեր Ջախջախյանի հետ, և ահագին թվով ոտանավորներ նվիրված Տյուզյան ընտանիքի որևէ զուտ ընտանեկան դեպքի, ինչպես՝ ծնվում է մի երեխա, պետք է ոտանավոր գրել. մեռնում է մեկը՝ դարձյալ ոտանավոր է հարկավոր. հիվանդությունից առողջանում է մի ուրիշը՝ ինչպե՞ս կարելի է ոտանավորով խնդակցություն չհայտնել. հապա երբ հարանի՞ք է լինում, իհարկն պետք է հարսին զովիւ... Բագրատունին այդ բազմաթիվ տաղերի մեջ դառնում է Տյուզյանների տանու քերթողը, որ յուր՝ նրանցից վայելած բարիքների համար գրաբար հանգերով ու ոտքերով վարձահատույց է լինում: Դրանք գրի վարժութուններ են միայն երբեմն ձիգ ու երկար տողերով, և սահմանված են միայն մասնավոր մարդկանց սրտերը շոյելու համար:

Նրա կենցաղական տաղերի մեջ շատ գովում են գրաշտին յաւար, հղերք մշակիչ, որ մի ութվանկանի դուզահանգ ոտանավոր է մեծավերջ և յափի պատնառով հենց աշխույժ ճաւնդով է ընթանում: Բովանդակու. թյունը մի շատ հասարակ բան է: Երիտասարդ որդին ծերունի հոր հետ, բախտից հալածված, զալիս քնակվում են ընտթյամբ հարուստ մի ամայի դաշտում. մշակում են. հինգերորդ տարվա վերջը մշակությունը տալիս է յուր արդունավետ պտուղը: Այդ ժամանակ հայրը մեռնում է, և որդին մեն մենակ է մնում ու ասում է.

Այն ինչ արդարն յինէն զնաց,
Վեհն յնթերէ զմեզս իմ յիշխաց.
Յիւրմէ զընդէն ետ ասպատակ
Առնուլ վրէժ արագ արագ:

Իսկ թե ի՞նչ է արեւ որդին, ի՞նչ մեղք է դրածել նա, որի համար աստված վրեժ է առնում, հայտնի չէ այդ: Անշուշտ մի մեղք գործել է, որ ասպատակավորները երեք կողմից վրա են տալիս, ամբարում են արտ ու ալգին, տիրում երկրին և իրեն մշակին էլ: Վհանեալ գանիւ ու ի թաքշ ընդ երկուստ վարեն զիս դարչա: Եվ նա այնուհետեւ մի մխիթարութիւն ունի,— հիշելով յուր անցյալ աշխատանքը՝ ողբալ:

Նախարանն այնպես է, որ մարդ ասպատում է մի դառնագին զորեղ ողբի, մի զգացմունքների բուն զեղման.

Մեկուսեմէնէ, հար ինձ քննար
Ծրգել ձայնիւ ողբերգաբար...
Հացցեն նուաղ լերանց փայտաբ,
Մրորնչեսցեն ձորք և անտառք,
Երեսք մարգաց հարցն զալուկ,
Արտօսը հեղցն սողնալ առուք,
Յաւերժահարսանց պար զեղեցիկ
Ձեռն ի ձեռտի նրստցին լըօիկ.
Ջի մեր դաշտիկն յաւար եղե,
Յոյս վաստակոցս ել ի դերե:

Բայց այդ նյութն ավելի վիպական-նկարագրական է քան քնարական: Բնության նկարագիրները շատ ընդհանուր են և ամեն տեղի. մշակութայն և ավերմունքի նկարագիրը նույնիսկ համայնափ չէ տարված, և վերջը բանաստեղծի թափը թուլանում է և սառն է հեշում այն մասը, երբ հեծեծագին ողբը պիտի լիներ: Գուցե կարելի է ալլաբանություն համարել այս քերթվածը և Հայաստանի պատկերը տեսնել մեջը, բայց այդ կլինե՞ր ձեռք-ձեռքից րացատրութիւն:

Նյութով շատ ավելի ստոր բան է և մյուս գովված քերթվածը չի մահ սոխակին եղերք հովուիչ, որի գեղեցիկ մասը հենց սկիզբն է.

Ալք զեղեցիկ ցօղագին
 Լացէք զմահ սոխակին,
 Վա՛յ և հղո՛ւկ ինձ հիբիս,
 Սուգ և ի յիմ սիրեցիս.
 Զամենեան մի խաւար
 Դընէ յարտօտ անգագար:
 Մի՛ գիտ, մի՛ գիտ ըստիողէք,
 Մի՛ գիտ սըրտիդ տալք երբէք:-
 Զի սէր սոխակն իմ լըռեաց:
 Սան իմ սիրուն երգասաց,
 Զի սէր հաւիկն իմ մեռաւ:
 Սան իմ սիրուն անպարսաւ:
 Նըղով ի սև օրն և ժամ
 Յոր զիւր տարմին լիք երամ,
 Օրն և տեղին սև նըղով՝
 Ուր տեսի զնա մոտ երգով:

Եվ այս բոլորն ինչո՞ւ համար, Մի արճնցի հովիվ՝ մի անգամ սրինգ
 է փչում: Հսում է մի սոխակ նրա նվազը, մոտենում է և ինքն էլ երգում է ո
 Հովվի խնդրի վրա այդ սոխակը նախ նստում է նրա ուսին, և ապա:

Անդուտ ածեալ ըզթներն
 Ի ծայր սրնգին գայր նըստէր:
 Ելեալ և իմ մեղմացալլ,
 Երկ փոխելով ալլ և ալլ
 Եկի՛ և ի տուն իմ մըտի:

Հովվի կինը սրնգի ծայրից ընդունում է սոխակին, փափայելով
 զնում է վանդակում, ուր երգելով նա զվարճացնում է հովվին և յուր
 ընտանիքին:

Սակայն ի սեաւ մանգաղէ
 Ժպիւր՝ մահուն ռով ապրէ:

Մի ամառ այդ սոխակը սատկում է և կարծես աշխարհը կործանվում
 է. կարծես այդ սոխակից էր կախված ոչ միայն հովվի, այլև աշխարհի
 քախտը. Եվ ողբում է ու ողբում հովիվը ու չի մխիթարվում:

Ո՛հ, մի՛ ստիպէք երկարել,
 Սիրտ ոչ բերէ զքանիս թել...
 Ոչ բըժըշկի սրտիս խոց...

Եվ այսպես մոտ երկու հարյուր տողանի մի ահագին քերթված, որի
 մեջ ալլարանութունն էլ կարելի չէ լինում տեսնել, ուստի և ծաղրական մի

բան է դառնում յուր մեծավայելուլ լրջությամբը: Ծաղրելի է դառնում մանավանդ և նրանով, որ արճեշքի հովվի քերանից լսում ենք՝ Ամինդաս, Անանիոս, Տիրու, Որփնոս, Բարզ, Պռոմեթէա, Անյուծ լիբյան, Հիմայայք և այլն, և այլն: Եթէ կլասիկական կյանքից առած ոտանավորների մեջ, ինչպես ա՛ր մահն Կեսարու, կարգում ենք ժողովուրդ արիւսյան, դիք և կամ դիք անուանի, այդ հասկանալի է, որովհետեւ նյութն է պահանջում այդ Բայք երբ մի արճեշքի հովիվ է այսպիսի անուններ արտաբանում և կամ նույն ինքը Բագրատունին, միխթարյան մի վարդապետ, այդ արդեն տաղտկալի է:

Նվ Բագրատունու ամենամեծ ծառայութիւնը մեր գրականութեան համար այն է, որ նա այդ կեղծիքը՝ կեղծ դասական ուղղութիւնը մտցրել է մեր րանաստեղծութեան մեջ: Կրթված լինելով կլասիկական գրականութեան վրա, նա կարծում է, թէ աստվածները կամ դիք աստապանները, որ հիշում են հին քանաստեղծները, մի քանաստեղծական պաճուճանք են միայն և այդ պաճուճանքը կարելի է և հայ կյանքի քերթվածների մեջ գործածել: Նրա համար զրեթն չկա տառված, այլ աստվածք, դիք, անմահք: Նվ այդ անմահները մի քանի քերթվածների մեջ վիտում են՝ Մուսա, Մելլումենն, Պոլիմեիա, Մենմոսինն, Պիգաս, Արամազդ, Ապոլոն, Պիմպլայք, Փայտոնք, Փեքոս, Արես, Պոսիդոն և այլն, և այլն. նույնպես Հելիկոն, Պինգոս, Պառնաս և այլն, և այլն. գրանց հետ բազմաթիւ ակնարկութեաներ հին կլասիկական աստապանների: Ընթերցողն անպարման պետք է ձեռք տակ ունենա մի հատուկ անունների բոսորան, ապա թէ ոչ՝ քան լի հասկանալ Բագրատունու լավագույն համարված քերթվածներից: Որովհետեւ, արեւակ, ի՞նչ կհասկանա մարդ տոռեց քառաբանի հետեւյալ երկուգից՝

Մեզ տիտոնեան հարսն սիրած
Պարզէ զգլխով վրան ներկած:

❧

Բառարանը միայն մեզ տեղեկացնում է, որ Տիթոն եղբւն է Տրոյացի իշխան, Պրիամոս թագավորի եղբայրը, որին իր գեղեցկութեան պատճառով սիրում է Արշալույսը, Ալլորոսն, և անմահացնում նրան: Ե՛րբ տեսնան սիրած հարսն ուրեմն արշալույսն է, և փոխանակ պարզաբար ասելու, թէ «մեզ արշալույսն զգլխով պարզէ վրան ներկած», Բագրատունին վերի տողերն է կազմում: Ջախջախան յուր լավագույն քերթվածի մեջ, Մուսայն առ Արամեան քերթողն, գրում է հետեւյալը.

Բառք անապակք՝ որպէս ուսույց հաւ ձեր Թորգոմ.
Բայց ոչ մոսլիք՝ մինչ լուցանել լապտեր և մոմ,
Կամ ի Տարոն լուել պանդուխտ կամ ի Դըւին,
Մեռելահարց՝ զի՛նչ այն բառից ձեզ միտք թըւին:

Բագրատունու քերթվածները հասկանալու համար ահա՛ հենց այդ միջոցներին պիտի դիմել: Այդ պատճառով թեպետեմ քանի քանի անգամ

կարողացի նրա գոված Պէտ դասնդ տա Պառնասոսից և դատաստան Ապո-
ղոնի» տալը, որի մէջ քառասուն-հիսունից ավելի դիցաբանական անուն-
ներ միայն կան,—բայց շատ քիչ բան հասկացաւ ժապտեր և մոմ» էլ
վառեցի, բայց դարձյալ գոհ չեղաւ, թե իրոք կատարեալացան ըմբռնել եմ
այդ քերթվածի միտքը։ Այո՛, իմացաւ, որ Առանը, այսինքն բանաստեղծ
Թադրատունին, իրեն երեսնայում է հովիվ Քյուրակնչյան լեռներում, յուր
տաղավարում ճաշում է զմայլելով քնութիւն գեղեցկութեանը։ Այդ ժամա-
նակ հանկարծ վերեկից տեսնում է իջնում են

Կառլս կրկին երկածի քառահարկով անուագործ,
Ութսունի երիվարք ի գիլ գոյով քաջափորձ։

Այսինքն երկու ոտանավորով դրած նամակներ է ստանում, որ և
առիթ էն լինում այս քերթվածը գրելու,—ասած է ծանոթութեան մեջ, թե
չէ ընթերցողն ինքը չէր հասկանալ։ Եվ այսպէս դժարաբանում եմ ասել որոշ
քան, բայց եթե այն, որ հեղինակը մեծ տենչանք ունի մեծ բանաստեղծ
դառնալու սրաթե՛ Պիդասի վրա նստած՝ Պինդոս բարձրանալու և մեծ բա-
նաստեղծների հետ անմահութեան մահով մեռնելու։ Բայց շէրք սէր Կամե-
նայց, ո՛հ, լանտերունը իմ գրահիւս. սակաւ բնատուր վեհ ոգի՝ աստուածա-
ստեղծ մեծութիւն», ասում է քերթողը, «Պարք Մուսայից հայկազանց
փախեան ի գոգ Ադրիոյ», այսինքն Վենետիկ Միսթարյան վանքը. բայց
այդտեղ էլ նրանք բանաստեղծութեան համար պահանջված հարմարու-
թյունը, հանգիստն ու պարասը չունին։ Իսկ Հայաստանը հո՛ր բնավ հար-
մարութեան չունի բանաստեղծներ ծնեցնելու համար. բայց մի ժամանակ
այդպէս չէ եղել, մեր բուն երկրում էլ մի ժամանակ մուսաները զվար-
ճացել են։

Ինչքան այս քերթվածի մեջը մութ և դանդաղ է, այնքան վերջին
մասը կենդանի է և գեղեցիկ, որովհետեւ խոսում է իրական կյանքը, սիր-
տը, Բանաստեղծը մտքով սլանում է Հայաստան, բայց ինքն ոտար աշ-
խարհում է, որ նման չէ յուր երեսակայած եղբայրական աշխարհին.

Եւ դառն ողբոց յիշատակ, ով ցանկալի հայրենիք,
Անդ էր երբեմն հնչաւսուն քո Մուսայից ճեմելիք...
Քիւրակն ի ծիր ծաղկազուլում քիւր խոխոջիւք բարեհամ
խայտայ ի բոլլըս հոտից, հազար երէ խռնեհրամ.
Փըլէ հովուիկ նուրք սըրինք, հօտք ըզկընի իւր գըրդին,
Նստի գողտրիկ օրիորդ, կըթէ զըստինըս նոցին.
Հոյլ վըտակին կարկաշտ, անդ երասխայ քարավէժ
Եւ ծիածան ի ցընցուղուն՝ հերքել սաստիցն ըզվըրէժ...
Երկինք չերին կտպուտակ՝ ամպք ոսկեփայլ շուրջ ի խիտ,
Շաղն ի ցօղել շայնկան ի ծոց երկրին մարգարիտ...
Անդ է հոգով իմ Մուսայն, սակայն մարմնով աստ պունդուստ
Ի խորշ նըստի Ադրիոյ հեղախք ծովուց ի քերցն ուխտու...
Պ. Արեւիկե — 57

Քերթվածի այս գնդեցիկ վերջը, որ ես ամբողջը շրերեցի, որից կար-
ծես ազդվում է Գամառ Քաթիպան յուր թիմ սոխակին՝ երգը երգելիս,—
զոնն նմանութուն կա,— է միակ հայրենասիրական արտահայտութիւնը
Քաղրատունու քերթվածների մեջ: Այո, ուրիշ գնպքերում էլ հիշում է նա
Հայաստանի անուններ, բայց հայրենիքը հեռվից մշուշով պատած է հրե-
վում նրան. հայրենիքը և հայրենի հիշատակութիւնները երգի նյութ չեն
դառնում, այլ միայն իրեն մի արտաքին ձև օգնում են նրան, ճիշտ ինչ-
պես և հունական աստվածների, աշխարհագրական տեղերի անուններն և
նրանց ասասպաններն ու զորացները:

Մի կողմ թողնելով մի քանի պատմական անձների վրա տաղերը, ինչ-
պես և քսթափականէ թոնահանդերն թի հերթայնէ, ժանէփ և ճանճես,
որոնց մասին խոսել չարժե,— տեսնում ենք, որ Քաղրատունու բանաստեղ-
ծութիւնների նյութը ամենամեծ մասամբ հասարակ բաներ են. նա աղ-
քատ է հղել մտքերով և նրա մտքերն ու տրամադրութիւնն ընդհանրապես
պրոպանկ են:

Ինչի՞ մեջ է ուրեմն քերթող Քաղրատունու արժանիքը: Երկու բանի
մեջ, նախ՝ նա բնութիւն սիրող է, գիտե զգալ և նկարագրել բնութիւնը.
և ասլա՝ նա հասարակ ու պրոպանկ նյութերն ևս հարուստ ու ճոխ լեզ-
վով արտահայտել գիտե: Կարելի է ասել Քաղրատունին ասացիներէից
է, իհարկն ժամանակով, մեր նոր գրականութեան մեջ, որ կարողանում
է իսկական բնութիւն տալ, լինի այդ ընդարձակ նկարագրերնեով, թե
կարճ պատկերներն ու նմանութիւններն մեջ.

Երփնիւ ծաղկանց դաշտ և հովիտ
Վէտ վէտ խաղայ ծիծաղախիտ.
Նրկարակերպ բուսոց կանաչ
Հիւսկէն օթոց սըփոփ ընդ առաջ.
Թացեալ մարմանդք գիրեանց գծոց
Գրգռն զայգիս սիրեալ տնկոց.
Աղբրականց պարզեալ խոխոջ
Գոյն Նոց ժորժոր լերանց խոռոջ.
Հեղիկ ի մարգ սողոսկ ընդ դար
Հագիւ կրքն ըզգեղ զայլար:
Թացաւ լերանց գնդեցկադիր
Ոսկեգետիք փալլեն ի ծիր.
Հաւերժ մայրեաց խորոխտ յնթեր
Ընդ սոսաւիւն շարժին ըստունը.
Պարզ և յըստակ օդ քաղցրասիգ
Բուրնն վարդից հոտ անուշիկ:
Մեզ Տիտոնեան հարսըն սիրած
Պարզէ զգրլխով վրբան ներկած
Ոսկետըտուն վարդապրսակ

Ընդ աշաւուշն և ընդ Երեւակ.
Շուրջանակի յաշաց հզերք
Հոյլ հոյլ ոսկի սփռին իւր հերք:

Քերեմ մի օրինակ էլ նմանութիւններից.

Որպէս արիք անգնդոց
Ի ծովի երկմիտ տատանին
Ի խիստ հոգմոց զուպարած,
Մինչ ուժգնագոյնն անկասկած
Ոստեալ վարէ ի Հանդրին.
Եւ կամ զօրէն Ծիրատէս
Գարնանազայր թափ առնալ
Վանեալ զըլէ ամհհի
Թումբ և կամուրջ և մայրի՝
Ըզրնաւս ի մի տառ ձուլեալ...

Երբեմն նմանութիւնները հոմերական ձեւով անպակաս ընդարձակվում են, որ ինքնուրույն քննվողութիւն են ստանում և մարդ գրավվելով նկարագրած տեսարանից՝ մոռանում է նույնիսկ երգի բուն նյութը։ Այս ազդեցութիւն է անշուշտ յուր ընթերցանութիւնն. ինչպէս պատմում են, իլիականը նա բերան ասելիս է հղել։ Բայց ընդհանուր առմամբ Բագրատունու տաղերի մեջ ավելի ճարտասանութիւն կա, քան բանաստեղծութիւն, ավելի սովորովի է, արվեստ ունի, քան ինքնաբերաբար ստեղծագործութիւն և զգացում. ուստի նրա նկարեն ու պերճ ոճը յուր բոլոր սեթեթանքով հանդերձ՝ միակերպ է, ձանձրալի է յուր դիմումներով, պարավոր նվագներով և այլն։ Նա ոչ միայն իշխան է լիզվի, այլև ոտանավորի. միանման հաջողութեամբ նրա գրչի տակից դուրս են գալիս և՛ կարճ, սրընթաց տողեր, և՛ դանդաղ, ժանր ու մեծավայելուչ ասացվածներ երկար տողերով։ Հետաւուր հնչումներն ու վանկերը, երաժշտական շեշտներն ու հանգերը երբեմն հափշտակում են ընթերցողին։ Բայց ավա՛ղ, այդ ամենն ապարդիւն են անցնում, որովհետև տաղերն արտաքին գեղեցկութիւն [համեմատ] չունին ներքին հարստութիւն, և մարդ հոգնում, նույնիսկ ուժասպառ է լինում, երբ կարդում է մի լնչին միտք անվերջ երկարութեամբ դարգացրած, մանաւանդ երբ հաճախ այդ լնչին միտքն էս բառերի և խոսքերի հեղեղի մեջ կորչում է։ Մարդ զգում է շարունակ, որ մի սնամեջ քերթողութեան հետ գործ ունի. իսկ այդ բավական է ամենայն բանաստեղծութիւն մեղցնելու համար։

Եվ այս ամենն առաջանում է նրանից, որ Բագրատունին քնարական բանաստեղծ չէ, քնարական ոլիւնջ չունի, բայց և այնպէս նա յուր գեղեցիկ հասակը կորցնում է քնարերգութիւն անելով։ Նա թղիցազանց մարգարէ է, ինչպէս ինքն իրեն անվանում է մի տեղ, ծնված և վիպական բանաստեղծ և առանձնապէս դուրսագնեցողու լինելու։ Եվ 1830 թվից հետո նա

այդ զգում է և ինքն իրեն նվիրում է միայն յուր «Հայկ դիւցազնին», դա-
դարելով այլևս քնարական քերթվածներ հորինելուց, և թեք դարձյալ գրում
է բավականապէս մեծ ու փոքր քերթվածներ, դրանք, այսպէս ասած, ի
սպաշտոնն շինված բաներ են, դրեթե թուրք նվիրված Տյուպան ըն-
տանիքին:

Բազրատունու քանաստեղծութիւն զարգացումը իհարկն «Հայկ դիւ-
ցազնին» մէջ է. բայց եւ այդ քերթվածն յուր ժամանակին առանձին կառ-
նեմ, որովհետեւ դա ծնունդ է մեր 19-րդ դարու քանաստեղծութիւնն ոչ թե
առաջին, այլ երկրորդ երեսնամյակի:

ԻնՏիճյանի ու Գապասախայլանի ժամանակակից է Գրիգոր Փեշտի-
վայնյան (+ 1837), որի քանաստեղծութիւնը դուռ կրոնական է: Կենսա-
դուրբութիւնն ինձ հայտնի չէ: Եղել է սեփականատէր վարժապետ
Կ. Պոլսում, — և այսքանն էլ բավական է: Իբրեւ վարժապետ հորինած ունի
դասագրքեր՝ Քերականութիւն (Կ. Պոլս, 1829), Տրամարանութիւն (Երու-
սաղեմ, 1856), Լուսաշափղ, որ է բացատրութիւն նիկիական հանգանա-
կին (Կ. Պ., 1848) և նույնիսկ Բաղդիրք Հայկազնան լեզուի. ունի և մի
քանաստեղծական երկ «Դիմանութիւն» (Կ. Պ., 1845): Մահից հետո կա-
տարված այս սուպերուրիւնները ցույց են տալիս, որ նա հարգանք ու
հեղինակութիւն է վայելել յուր աշակերտներին մէջ. և իսկապէս մեծ անուն
է ունեցել Փեշտիվայնյանը: Գերմանացի բողոքական քարոզիչները մինչև
այժմ մեծ գովեստով են խոսում նրա մասին՝ անվանելով նրան հայ
ճրագագ, որ իբր իսկապէս բողոքականութիւն է դարձած եղել, ժառուկ
մասնակցել է նրանց ժողովներին և իբր մինչև մահը հավատարիմ բարե-
կամ է եղել ավետարանական եկեղեցուն, թեպետ երբեք արիւնթիւն չի
ունեցել հրապարակով ինքն իրեն բողոքական խոստովանելու:— Այդ
պատմութիւնը ցույց է տալիս միայն, որ Փեշտիվայնյան պատվելին քա-
րացած մարդ չի եղել. հետաքրքրվել է Հայոց եկեղեցուց դուրս ելած
բաներով, եկեղեցական վերանորոգութիւն խնդրով և շատ հետո է եղել
յուր ժամանակակիցների հաւածասիրական ոգուց: Լինելով ջնքմ կրօնա-
սեր, նա ծարավի է եղել կենդանի ոգու և գուցե կարծել է, թէ այդ կզտնի
բողոքականների ժողովներում: Բայց որ նա բողոքականութիւն հարած
լինի, այդ հավանական չէ: Այդ ժամանակ ով որ հայոց եկեղեցուց կաթո-
լիկներէ կամ բողոքականներէ հետ հարաբերութիւն էր ունենում, թեկուզ
արտաքին, համարվում էր կաթոլիկ կամ բողոքական և հալածանքի են-
թարկվում. նույն սխալ հայացքն, ինչպէս երևում է, ունեցել են և ժամա-
նակի բողոքական քարոզիչները՝ բողոքական համարելով նրանց, որոնք
իրենց մոտ դնացել եղել են: Հայտնի է Մատթեոս պատրիարքի նյարդային
անենքող վերաբերմունքը զեպի կաթոլիկներն ու մասնավորապէս զեպի
բողոքականները. իսկ արդ նա Փեշտիվայնյանի հարգողներին մեկն է

² «Mission und Evangelisation im Orient», 1908, հր. 78: Տեղեկութիւն համար
շեռքակալ եւ իմ աշակերտ Գալ. Դաքեղեքյանից:

եղել և նրա սարտի իղձը՝ կատարելու համար՝ նրա մահից ութ տարի հետո, 1845 թվին Կ. Պոլսում տպագրել տալիս նրա օջանկալի մատենանքը, որ է Երիմատնութիւն ի լարլարանս Քրիստոսի Փրկչին մերոյ, և այս՝ յօգուտ ազգիս»:

Այս գրքի մեջ, բացի Փեշտիմալեյանի վերոհիշյալ գլխավոր աշխատանքից, զետեղված են իբրև մի շարքորդ մաս նաև նրա տասնուվեց ժամաթանքներն առ Աստուած և առ սուրբս նորայ: Դրանց աղոթախառն տաղեր են, որ հեղինակն «աղերս» է անվանում, և որոնց մեջ առանձնապես այքի է ընկնում այն հանգամանքը, որ նրան գրավում են ամենից ավելի հայ եկեղեցին և հայ ազգային սրբերը, ինչպես՝ Ս. Էջմիածին, Լուսավորիչ, Արգար թագավոր Հայոց, Տրդատ թագավոր, Ս. Թարգմանիչը, Ներսես Շնորհալի, Վարդան Մամիկոնյան:

Փեշտիմալեյանն յուր բանաստեղծության վրա նայում է նախ՝ իբրև վարժապետ. նա ուսնաւորներ է գրում թի հրահանգութիւն մանկանցս յուր գալոցի, որպեսզի նրանք իրենց վարժապետի օրինակներով վարժվին թի յօրինուածս եմանատիպ գրուածոցս:

... Որք շնն վարժ ի յումման
Քրթթողական բանից լափման,
Կըրթին ի սա՝ գէթ անագան,
Իբր ի նըկար ինչ ուրուական:

Այսպէ՝ նրա հայացքով բանաստեղծությունը մի բարեպաշտական գործ է, որ մանուկներին տալիս է կրոնական հոգևոր կրթութիւն, և կարծում է, ճիշտ ինչպես Նարեկացին, թե յուր աշխատանքը հոգևոր րօշկություն և առողջութիւն պիտի բերե ընթերցողներին:

Այս հայացքը բնականորեն թելագրել է նրան նախ՝ «աղերսներ» գրել և ապա՝ յուր «աղերսներ» մեջ բանեցնել ընդմեջան տաղաշափական ձևեր, որոնց մեջ, եր. 245, ալքի է ընկնում «Աղերս առ ս. Խաչն աստուածընկալ», որ գրված է Բագրատունուց առաջ Բագրատունու զհայկական» կոչված լափում: Մի անգամ որ այդ աղերսները այգաթի ծագում ունին, այլևս դրանից կարելի չէ պահանջել բանաստեղծութիւն. դրանք մեծ մասամբ միակերպ հորինված բաներ են, դիմումներ սովորական նմանութիւններով. օրինակ՝ Շնորհալու աղերսն այսպես է սկսվում.

Աղբիւր ես բարի, կենաց վտակի
Որպէս եղչերու սիսիպի,
Հոգին ծառաւի:
Ճարագ լուսարփի, Արամեանս ազդի
Ծուացո՞ղջոյս քո պայծառ,
Ալացս իմ սրտի:

Այսպես և Շնորհալուն կոչում է՝ ոստ գալագանի, ծագիկ նազելի, ուս ողկուզալի, երկիր բերրի, պարարտ ձիթենի, լեռան կնդրկի, մառան բա-

բնիկ և այլն, և այդ նմանութիւններին համապատասխան մեկ մեկ խնդրվածքներն անում նրանից:

Նման ձևով գտնում է և էջմիածինը,—«Աղծրս առ շնորհածին ծնողն մեր Սուրբ էջմիածին»:

Վուստկերտ խորան փառաց՝

Նրկնաւորին,

Պառուցեալ յԱրարատեան

Մեծի դաշտին,

Մեզհանկան պարծանք ազգիս

Պըսակ անգին:

Դու լճ՝ր միշտ պատապարան

Իմոյ անձին. և այլն:

Փնշտիմալճյանի երկերը ժամանակի կրօնական պահանջին բավարարութիւն տալու են սահմանված: Խորիմյան Հայրիկը պատմում էր, թե ժամանակակից պատրիարքներին մեկը (անունը մոռացել եմ) մի անգամ ասել է Գրիգոր պատվելիին, թե ամեն սրբերի գովեցի՜ր ու աղոթեցի՜ր, մեր և Քաղնոս Առաքյալին ինչո՞ւ մոռացել ես: Պատվելին պատասխանում է. թե Քաղնոս Առաքյալը շատ հեռու է ընկած, ուստի միտը չի հնկել նա: Բայց մի քանի օրից հետո նա բերում է և Հայաստանայց առաքյալի աղերսը, որի սկիզբն է՝ «Առաւօտ լուսաբեր Հայաստան երկրի, Քաղնոս առաքեալ, ընդէ՛ր կ'աս հեռիս: Աղերսը հովանութիւն է գտնում, հղանակ հարմարեցվում նրան և երգվում: Եվ Գրիգոր պատվելիի բազմաթիվ աղերսներից այդ մեկը, որ չի աւանդած նրա «Դիմաւանության» մեջ, յուր հղանակի պատճառով ապրում է մինչև այժմ իբրև երգ: Խորիմյան Հայրիկի սիրած տաղերից մեկը դա էր:

Փնշտիմալճյանին և նրա հոսանքով ընթացողներին անշուշտ եկեղեցուց և սրբերից շատ ավելի մեծ ոգևորության նյութ պիտի տար և ավանտարանական պատմութիւնը, որին նվիրված է մեր այս քերթողի «Դիմաւանութիւնը», գրված 1820 թվականի մոտերը: Այս երկը, որի մեջ մի քանի հատվածներ դարձյալ չենք աղոթքի կերպարանք ունին, համեմատաբար ավելի բարձր է քան աղերսները. բայց և այնպես սա նա բանաստեղծական հղացման արդյունք չէ: Եթե Ինճիճյանը ուսանավորով աշխարհագրութիւն է անում, Փնշտիմալճյանը մի բանաստեղծական կրօնագիտության գիրք է գրում Քրիստոսի տնօրենութեան վրա, որի մեջ ուսանավորով պատմված և մեկնված են Փրկչի շարժարանքը, խաչելութիւնը և այլն, հետը միացրած և Հին Կտակարանից ականարկներ և նույնիսկ ավանդութիւններ: Լինելով մեր վերածնութեան շրջանի միմիայն ներքին հոգեւոր ուղղութեան արտահայտիչ, առանց հվրոպական ազդեցութեան, նա մտածում է այնպես, ինչպես միջնադարում մտածում էր, օրինակ՝ Ներսէս Շնորհալին: Այդ հասկացողությամբ պահանջվում է, որ պրոզայիկ

նյութն ևս բանաստեղծորեն գրվի, որպեսզի տպավորութիւն թողնի և
երեխաները հեշտ սովորեն.

Ուտիւք լափեալ քերթողական,
Առ անձանձիր վերծանութեան.
Ողեալ ի ձե գիմառնական,
Առ շարժութիւն կրից հոգեկան:

Փեշտիմալճյանը նույնիսկ յուր լեզվով և ուսանավորով ևս ազդվում է ԵնորՀայուց. վերջինիս պէս նա շատ պարզ ու վճիտ է գրում. սիրում է ութվանկանի տողեր, և ամբողջ խոշոր հատվածներ մինևույն հանգով է վերջացնում. բայց բոլոր երկր նույն հանգով չի հորինում, ինչպես վարվում են Ինճիճյանը և Հովհան Վանանդեցին յուր առաջին գրվածքներին մեջ. նա ճաշակով համեմատաբար բարձր է յուր ժամանակակիցներից:

Զուեննալով ոչ մի գաղափար թատերգութիւն մասին՝ Փեշտիմալճյանը հորինում է մի տեսակ թատերական երկ, նա ոչ թե մեկնում կամ պատմում է Քրիստոսի տեսրենութիւնը, այլ դրամատիկական ձևով գործող անձեր է մեջ բերում և միայն նրանց խոսել տալիս, և այս ձևը պահում է սկզբից մինչև վերջը: Դա մի բոլորովին նոր ձև էր մեր գրականութիւն մեջ, որ յուր արտաքին նորութիւնով միայն պիտի հաճեի լինել ժամանակակիցներին: Հենց այս պատճառով և նա յուր երկը կոչում է *Գիմառնութիւն*, որովհետև այստեղ մեռած անձերը, և նույնիսկ երկինք, երկիր, աստղ և այլն կենդանանում և խոսում են իբրև կենդանի անձեր: Այս երկը կդառնար միջնադարյան քրիստոնեական թատերգութիւն նման մի բան, եթե միայն հեղինակը ներկայացման մասին մտածած լինել և քիչ ու շատ հարմարեցրած դրան: Բայց նա այդ ձևն ընտրել է միայն ավելի ևս ազդու անելու համար. ուստի և ոչ թե արարվածների ու տեսարաններ է բաժանում նա *Գիմառնութիւն*ը, այլ մասերի և դրութիւնների, որով և նրա երկը բունում է մի տեսակ միջին տեղ դրամատիկական ու վիպական ձևերի մեջ. մինչդեռ նույն ժամանակներում Բագրատունու գրվածքն, ինչպես տեսանք, արտաքուստ դրամատիկական է: Նվ այս հասկանալի է. Փեշտիմալճյանը հին մարդ է, երիտասարդ Բագրատունին համեմատաբար նոր, և սրան ծանոթ էր դրամատիկական ձևն օտար գրականութիւններից: Դրանց երկերն առաջին ձգտումներն են դրամատիկական տեսակն առաջ բերելու մեր գրականութիւն մեջ, և այս տեսակներից հետաքրքիր:

Այսպէս, թեևագրված անշուշտ Կտակ-Գրքից, Փեշտիմալճյանն առաջին արարվածի առաջին տեսարանի մեջ (*Հեղինակի առաջին մասի առաջին գլխի մեջ*) երևան է հանում Քրիստոսին խաչի վրա, դեռ լմեռած. Կույսը խաչի առաջ ողբում է ինքն իրեն և յուր որդուն երկինք ու երկիր կանչելով իրեն սփոփելու.

Ո՞ր սըզոյ, որ մահաբեր,
Որ խաւարի անլոյս գիշեր,

Եհար ըզսիրաւ իմ կարեմէր
Սաստիկ ցաւոց սըրնալ սուսերս
Ալաքըս լուս եղև ըստուեր,
Շիշաւ յանկարծ սրտիս լապտեր.
Կար զօրութեան իմ կենսարեր
Բարձաւ յինչն որպէս թէ շէր...
Երկի՛նք, երկի՛ր, լուս կայք ընդէ՞ր,
Փութաքարո՞ւք զիս սիրոյնի.
Ձի բաց ի ձէնջ լուսիմ ընկեր
Ոյ ի ստորինս և ոյ ի վեր:

Եվ ահա՛ բեմ են մտնում երկինքն ու երկիրն անձնավորալ և հու-
սադրելով Գուլսին՝ հայտնում են, թե Հիսուս պետք է խալվի, որպեսզի
մարգկային ազգն ազատվի՝ սատանայի ձեռով անկումից.

Ձի եղիցի մահուան իւր գին
Ազատութիւն մարգկան ազգին:

Այս խոսքի վրա ներս է մտնում Բանսարկուն և ինքն իրեն արդարաց-
նելով՝ մարդու անկման պատճառը մարդուն իրեն է համարում: Սկսվում
է մի վիճաքանութիւն, որի ժամանակ բեմ են գալիս և մասնակցում վե-
ճին նաև Հրեշտակներ, և վերջը Բանսարկուն ստիպված է լինում կասկա-
ծեղու, թե մի՞ գուցե այս հալչալը կործանե յուր իշխանութիւնը և ազատե
յուր կապալ ոգիները դժոխքի բանտից:

Շարունակութեան մեջ տեսարանն անփոփոխ մնենում է մնում. Կույ-
սըն անդադոր ողորում է, դիմելով այն ամենքին, Աստվածաշնչի այն բոլոր
անձերին, որոնք ըստ մեկնարանների որևէ կերպով գուշակել են Քրիս-
տոսի մարդկայնութիւնը, և զարմանքով հարցնում է, թե ինչո՞ւ նրանց գու-
շակութիւնները չեն կատարվում. յուր որդին ահա՛ խալվում է: Այդ
անձերը՝ Քարբել Հրեշտակ, մոգիր, հովիվներ, Նդիսարեթ, Զաքարիա,
Հովհաննես Մկրտիչ, Սիմեոն ծերունի և ուրիշներ, ինչպես և Հին Կտակա-
յանի նահապետներ, մարգարեներ և այլք, պարտք են համարում հետըզ-
հետ հանդես գալ և մխիթարել Կույսին և հայտնել, թե այդպես էլ պետք
է լինի և թե իրենց մարգարեութիւնից ոչինչ չի վրիպիլ, իսկ՝ քահանայա-
պետներն ու դպիրները և Հրեից ամբոխը մյուս կողմից հրճվանքի մեջ են.
դեհըր սակայն երկշուգով կասկածում են.— Կորնուսույցն ուրեմն ոչինչ
պակաս չի թողնում, ինչ որ Քրիստոսի կյանքին է վերաբերում. երբեմն
մանրամասն, երբեմն համառոտ անհարկներով անցնում է ամեն բան:
Սակայն այսպես լինելով հանդերձ՝ շատ հատվածների մեջ նա յուր երե-
վակայութեամբ կենդանացնում է խոսքն ու նկարագիրը.

Առ քեզ գուլեմ արտասուահոս,
Ն՛կ, մերձաւորդ իմ Ղազարոս՝

Տե՛ս, որ զքեզ ձայնիւ յարոյց,
 Ի փայտ մահու լըռէ անխօս...
 Դառն խորշակ հարաւ զբխոյս.
 Եկէ՞ղ ըզտունկըս քարհրոյս.
 Քառամեցաւ ծաղիկն հոգւոյս.
 Եղէ հս ծառ պըտղակորոյս:

Իսկ Ղազարոսը սփոփելով նրան՝ պատմում է յուր դրությունը գերեզմանի, որ միննույն է դժոխքի մեջ.

Եհաա օրհաս կենաց հիքոյս,
 Ժամանեցի ի բանդ անլոյս...
 Խուժան դիւաց անցընդասոյզ
 Պըտուակէին զինն ի խոյզ.
 Ըսպառնային ըզցաւս անոյժ,
 Ըզհուր անշէշ, զանմեռ որդւանս:
 Ուր խանլէին որպէս ըզխող
 Ամբարշտաց ժողովք յայլ կոյս.
 Ի ծով հրոյ ծըծըմբայոյզ
 Ի լեղ անկեալ որպէս զեռունս:
 Օձք և կարիճք զեղուին թոյնս
 Որպէս ըզգետս առատահոս.
 Գազանք հըրէշք սուր ի լեզուս
 Գիշատէին ըզմեղաւորս...:

Այս ամենը տեսնելով՝ սարսափած մնում է Ղազարոսը. բայց երբ Թրիստոսը ձայնում է նրան,

Յայնժամ շարժեալ դրանց դժոխոց
 Խոռովեցան անդունդք խորոց,
 Զահի հարեալ գումարք այսոց
 Մատենաւ միմեանց ի հարց ի փորձ.
 «Այս ի՞նչ, այս ի՞նչ», — ասեն այլոց,
 «Գու՛նաց առիւծ ահեղագու.
 Իրբև ամպրոպ շփոթ ամպոց
 Զամենեան ահիւ պակոյցս: —
 Անդ բանսարկուն ասէ նոցին.
 «Զայս մի անգամ լուեալ է իմ
 Մինչ յանէից ի դոյ եկին
 Երկիր, երկինք, և մեք ի նմին:
 Ահա՛ այս ձայն է Արարչին,
 Որ դըղըրդեաց զամենեանս.
 Արդ կասկածիմ եկեալ ինքնին
 Յավար առցէ զիմ տուն գանձինս:

Գեները խորհուրդ էն տալիս Բանսարկուին հավաքել յուր զորքը և պատերազմի պատրաստվել։ Նա շի համաձայնում՝ քաջ իմանալով Արարիի զորութիւնը։ Այն ժամանակ կատաղում են դեները և

Գոռան, խանչեն մոլորեցնաւայն,
«Արդ դիտ հնար, ով գոռ իշխան,
Պատճառ շարեաց մեր կորստեանն...
Անդ քանսարկուն գոյէ այսոք.
«Եի դուքս արկէջ զՂազարոս.
Գեռ քառօրեայ շէանց միջոց.
Էարկ աղմուկ ի տարտարոսն»

Այս խոսքի վրա մի ալլանդակ դն վազում է դեպի Ղազարոսը և նրան զուրա ձգում գերեզմանից։

Ասել շի ուղիք, որ բոյոր անձնավորութիւնները խրտվիւղներ են մեայն և ոչ մարդիկ. նրանք ծառայում են լոկ Աստվածորդու մեծութիւնը և մարդեղութիւն խորհուրդը քաջատրեւու համար։ Բայց մի վեհ պատկեր է ներկայացնում ինքն Տեղը, աշխնքն Հիսուս խաչի վրա. նա լուս տանջ-վում է ամենայն համբերութիւնամբ. քիչ է խոսում և խոսում է միայն նրա համար, որ ցոյց տա, թե որովհետեւ աշխարհի անկումը Բանսարկուի հպարտութիւնից ու քմբոստացումից է ծագել, ուստի և ինքը խաչի վրա ամենամեծ խոնարհութիւնամբ պիտի բարձրացնի անկյալ աշխարհը։ Նա մեկ մեկ արտասանում է յուր ճեռքն խոսքերը, ինչպես թէ յայր, թող զոցա, դի ոչ գիտեն դինչ գործեն և ալլն և քաջատրում, թե ինչպես արդարութիւն օրենքի տեղ դնում է դժութիւն օրենքը։ Մխիթարում է յուր մորը և քնքշութիւնամբ հոգում նրա մասին։

Վշտահար մայրը պահում է շարունակ նույն ողբացող վիճակը. լալիս է յուր և յուր որդու վրա. գոգում է որդուն. շի կարողանում հասկանալ, թե ինչու մարդկային ազգը լպիտի փրկվեր առանց յուր որդու անարգ վիճակին և տանջանքներին. նրա վիշտն ավելի մեծանում է, երբ հիշում է յուր որդու հրաշագործութիւնները. նրա դառնագին հեծեծանքը, ողորմագին տեսիլն այն աստիճանի է հասնում, որ նույնիսկ որդուն խաչի վրա մոռանալ է տալիս յուր ցավերը։ Եվ այստեղ, այս ազավոր մոր ողբի ու բողոքի մեջ Փնդտիմալճանը մեկ մեկ իսկական քնարերգու է դառնում։

Տեսարանը սկսում է փոխվել միայն այն ժամանակ, երբ Հիսուս վերջին խոսքն է արտասանում։—Երբորդ մասի սկզբում Քրիստոս արգեն գերեզմանի մեջ է. նա մտնում է դժոխք և կործանում լարի իշխանութիւնը։ Դժոխքում կապված հոգիները մեկ մեկ, Աղաժից սկսած Հին Կտակարանի բոլոր հայտնի անձերը միանման կերպով դիմավորում են Փրկչին, որ նրանց ամենքի հետ կարճ կամ երկար խոսքեր փոխանակելուց հետո՝ բանտարկութիւնից ազատում է նրանց։ Արդարեւերից հետո առաջ են գալիս մեղավորներն իրենց լաջ ու կոծով, հուսակտուր աղաղակով. սակայն այս շարանին վերջը լռեցնում են դեները, գոչելով.

Կարկեցարու ւր. լսկոնաց գումարքը
վախրաղօղանք շո՛ւնք նեւտահարք:

Այստեղ իսկական վերջանում է Քրիստոսի լաբարանքի դիմառնու-
թյունը, սակայն կրոնագիտության դասագիրքն ամբողջական անելու հա-
մար՝ հետեից գայիս են և երեք պատկերներ Հարության, Համարածման և
Հոգւով գալստյան համար, որոնք իրարուց անկախ բնավորութիւն ունին:

Մեր այժմյան պահանջին իհարկե ֓նշտիմալւյանը բավարարութիւն
լի տալ. բայց պատմության մեջ ամենայն բան յուր տեղում պիտի առնել
և այն ժամանակ հաճախ այժմյան անարժեքը ստանում է արժեք՝ դառ-
նալով մի ողակ դեպի կատարելութիւն դիմող զարգացման շղթայի մեջ:
Այս տեսակետից դատելով՝ հասկանալի է լինում, թե ինչու ժամանակա-
կիցները գրավիւն են այդ բնօրինակային և ռաբիճիմային պատկերի տա-
ղաւաքութեամբ. Բաւական է միայն համեմատենք նրա աղերսները Ղա-
զար Զահեկեցու աղոթքների և կամ իրեն ժամանակակից Գապասախալ-
յան զգրի և Աստապատցի Արարհամ վարդապետի աղերսների հետ, որ-
պեսզի համոզվենք, թե ֓նշտիմալւյանն ավելի անկեղծ զգացող է և պարզ
ու մաքուր մտածող, իսկ նրա Բիմառնութեան հետ բնավ համեմատելի
կարող չէ հարյուր տարի առաջ հրատարակված Բորքք առաքելոցը: Կո-
միտաս քահանայի. Նա մի աստիճան աղնվացնում է մեր վերածնութեան
շրջանի կրոնական բանաստեղծութիւնը և մինչև անգամ ազդում հա-
շորդների վրա, ինչպես Խրիմյան Հայրիկի. Բայց և այնպես ֓նշտիմալւ-
յանն յուր ամբողջ էութեամբ, ինչպես նկատեցի, մի տեսակով քերթող է,
որ հոգւով մեր միջնադարյան բանաստեղծների կարգին է պատկանում և
մի առանձին թարմ երակ լի մտքնում մեր. թեկուզ կրոնական, բանաս-
տեղծութեան մեջ. Եվ այս հասկանալի է թե ինչու:

* * *

Մեր հին վերածնութիւնը և հին նմանողութիւնը միայն բավական
չէր կենդանի բանաստեղծութիւն առաջ բերելու. Եվրոպական միտքը
պետք է ներգործեր. բայց մինչ այդ եվրոպացոց հետ ունեցած հայոց
հարաբերութիւնը արտաքուստ էր, ուստի և ազդեցութիւնը աննշան:

Եվրոպական մտքի իսկական ազդեցութիւնը շատ բնականորեն
սկսվում է դաղթաւայրեւում և ղպրեցով և այս միայն 19-րդ դարու ա-
ռաջին քառորդից. Արդարև Կ. Պոլսում 18-րդ դարու վերջերից արդեն
բացվում են ժողովրդական դպրոցներ, բայց դրանք հին ձևով են կազմը-
ված եղել և ժողովրդի մեջ գրագիտութիւն տարածելով հանդերձ՝ հային
երկար ժամանակ չեն կարողացել ծանոթացնել եվրոպական քաղաքա-
կրթութեանը: Դրանց պատվելիները փակված են մնացել մեր ներքին նեղ
շրջանակի մեջ, և միշտ պատկառանքով են նայել դեպի վենետկեցիք՝
համարելով նրանց կատարելութիւն և նմանողութեան աղբյուր, լմտածե-
լով անգամ մրցել նրանց հետ: Ռուսաստանի հայերն ավելի ուշ են կեն-

դանտութեան նշան ցուց տալիս, բայց մի անգամ շարժվելուց հետո՝ գլխավոր հոգսը հենց սկզբից տանում են նոր ձևով դպրոցներ հիմնելու համար։ Աղաքարյան դպրոցն Աստրախանում (1810 թ.), Լազարյան ճեմարանն (1816 թ.) ու Ներսիսյան դպրոցը (1824 թ.) հաստատված հայ դպրութեան, հետագայում պիտի իրենց բարերար ազդեցությունն անհիմնաբար և անհրաժեշտ հայ ժողովրդի վրա, որ 19-րդ դարու առաջին երեսնամյակում դեռ տատալում էր պարսկական և թուրքական դժպետութեաների ձեռքից։

Բաժնական ժամանակ պիտի անցներ սակայն, մինչև որ եվրոպական լեզուների և կյանքի ծանոթությունը այս նոր դպրոցների միջոցով մի առողջ հոսանք մտցներ հայ անշարժության մեջ և հայ միտքը դուրս գալով ինքնագոհ դրությունից՝ կտրվեր միմիայն մի միջնադարին նմանելուց և ազդի հառաչողից։ Բայց անհրաժեշտ էր և հայ կյանքի մեջ փոխադրելու ամեն ինչ որ եվրոպական է։ Եվ այս ձգտումը եվրոպականին նմանելու, որ ծնվում էր զաղթավայրերի դպրոցների մեջ, փնտրվում էր և կամաց կամաց ներքին բնավորություն էր ստանում։ Առանց թուլանալու եկեղեցական-կրոնական զգացմունքի մեջ՝ մարդիկ տեսնում են, որ եկեղեցուց դուրս ուրիշ բան էլ կա. և լին բաժնականանում հայ եկեղեցական անցյալով, չլայ միտքը բացվում է, և սովորում են դիտել և ուսումնասիրել կյանքը, բաղդատությունը դեռ հայի և օտարի ունեցածի մեջ. որոշվում է հայրենասիրության գաղափարը, որ հետզհետե ավելի մեծ ծավալ է ստանում։ Հայրենասիրությունը նրանց ետևող է ներշնչում հայ կյանքը մի նոր ձևով ներգծելու։ Իսկ դրա միջոցներ են համարվում նոր ուսումնական դիտությունը, գիտական գրքերի թարգմանությունը և վերլուծական լրագրությունը։

Լուսավորությունը ծնունդ է առնում արդեն 18-րդ դարու վերջում։ Առաջին ամսաթիվները, Վեդդարարա (1794—1796) լույս է տեսնում Մադրասում Հարություն քահանայի ձեռով, և ապա Վենետիկում հրատարակվում են Ինճիճյանի խմբագրությամբ «Տարեգրություն» (1800—1802) և «Եղևնակ Բիւզանդիան» (1803—1820), որոնք տարեթիվ են, այսինքն տարեհեր մի գիրք են լույս ընծայում։

Լրագրությունն ազդանիշ էր. որ հայությունը լուր ենթ շրջանակից պիտի դուրս գար։ Հայը սկսել էր հետաքրքրվել, թե իրենից դուրս, հեռվում ինչ է կատարվում։ Ահա Վեդդարարա ծրագիրը. «Ազդ արաբոլ լուր» մէ խմացումն լինելոց է ընթերցողաց ծայրաքաղ անցքն նոյնոյ ամսոյ, եթէ ի զանազան կազմերոց, եթէ ի զանազան Բարեկեցաց և եթէ ալլոց զանազան զոց. նաև բանք հարկաւորք և քաղցրալուրք, և ի վերջումն տեսարակիս՝ զօրացոյց մի հետեւեալ ախոյ, պարունակեալ ի նմա զտեսս սրբոց և զաւուրս ծննդեան և լրման լուսնոյ»³, Ինճիճյանի ձեռով խմբագրված տարեթիվներն ևս մանրամասն տեղեկություններ են տալիս նա-

³ Գ. Գալսեփեան, Պատմութիւն Հայ լրագրութեան, Վիեննա, 1865, Ա, էջ 24։

խորդ տարվա մեջ դանազան նրկիրներում կատարված քաղաքական, և-
կնդնական ու գիտական դեպքերի, գյուտերի մասին. դիտելիքներ՝
բժշկական, բնագիտական և այլն. «Աղագրարին» օրացույցին ալստեղ
փոխանակում է զգուշակութիւն օդերևոյթ փոփոխութեանց, — կարծես
բավարարութիւն տալու համար մեր պապերի պահանջին, որ լէին կա-
րող ապրել առանց էֆիմերտիական զուշակութիւնների:

1812 թվին 4. Պոստում կազմվում է մինչև անգամ «Արշարունյաց
ընկերութիւնը», որ իրեն նպատակ է դնում «ազգին մեջ գրականութիւն
ոգի զարթոյցանել» ոչ միայն նախնայաց մատենագրութիւնն ի լույս բնծա-
լելով, այլև ազգին օգտակար գրոց հրատարակման ձեռնտու ըլլալով⁴:
Այս աղատաստի ընկերութիւնը յուր ծախքով 1815-ից ապագրում է ին-
ճիւնյանի «Սուրբ Բիւզանդանը»: Այս ընկերութիւնն է, որ առաջ է բե-
րում և «Դիտակ Բիւզանդանը» (1812—1816), մի շարաթաթերթ, որ սա-
կայն ոչ 4. Պոստում, այլ Վենետիկում Մխիթարյանների ձեռով է խմբա-
գրված և ապագրված, անշուշտ այն պատճառով, որ 4. Պոստի պատմելի-
ներն ընդունակ չէին լրագիր խմբագրելու: Դա սկզբում զբաղվում է գլխ-
խալիքական հմլրուպական և նույնիսկ ամերիկյան քաղաքական անցքերով,
առանձնական նապոլեոնի արարքների մասին լուրեր տալով. իսկ վերջին
հրկու տարին, հոր խմբագրում է Ջախչախյանը, առանձին տեղ է տալիս
նաև ուսումնական և քանասիրական խնդիրներին: Դժբախտաբար, որ-
քան քաղաքական լուրերին ընդարձակ տեղ է տրված այս լրագրի մեջ,
ժամանակակից ազգային խնդիրներն և դեպքերը բոլորովին անհիշա-
րակ են թողնված⁵. Եվ այս հասկանալի է: Մխիթարյանների հուպը մեծ
էր, բայց հետո Վենետիկը չէր կարող ազգային կյանքը ցուացնող և կյան-
քի հետ կապված լրագիր հրատարակել այդ ժամանակ, մասնավանդ որ,
տնանք, վենետիկյան բերթողներն անգամ նույն միջոցին շատ էլ չէին
հետաքրքրվում ազգային ժամանակակից խնդիրներով: Բայց ինչպես էլ
լինի, այս առաջին վենետիկյան լրագիրները, հրատարակված ուսմական
աշխարհարարով, շատ նպաստել են հայերի աշը բանալու և օտար աղ-
գերի կյանքին ու գործունեութիւնը ծանոթանալու: Եվ եթէ Մխիթարյան
խմբագիրներն ազգային կյանքն անուշադիր են թողած, բայց և այնպես
«առաջին անգամ հոս (Դիտակ Բիւզանդյան) կհանդիպենք ազգային ա-
ռաջադիմութիւն հորդորակներու, Արշարունյաց ընկերութիւն անդամ-
ներն խօսված»⁶. Եվ այս շատ էր արդեն:

Այս շարժումը քնականորեն յուր հետ բերում է և պահանջ մի նոր
տեսակի գրականութիւն, որ լի եղել հնումը: Դասագրքերի, կրօնական,
պատմական և այլ բովանդակութիւն գրքերի հետ սկսում են մեկ մեկ
հրկան գալ և բանաստեղծական քաղամտեղբայրներ հմլրուպական աղգե-
րի գրականութիւնից: 1793 թվին արդեն Նոր Նախիջևանում ապագրվում

4 Անդ, հր. 28.

5 Անդ, հր. 34.

6 Անդ, հր. 28.

է Յեննընի Տելմաքը, որ մի ժամանակ Եվրոպայում ամենից ժողովրդապահ և տարածված գիրքն է եղել և յուր խրատական բնավորութեամբ շատ հարմար էր մեր զրազնտներին այն ժամանակվա ճաշակին. ուստի և մի քանի ուրիշ թարգմանութիւններ էլ է ունենում հետագայում, երկրորդ անգամ Զախըախյանի ձեռով Վենետիկում 1826 թվին: Նույն տեղում մի տարի առաջ տպագրվում է, դարձյալ Զախըախյանի թարգմանութեամբ, Գիսնեքի «Մահ Աքելի», որ բնականութեանից զուրկ մի հովվերգութիւն է և արժանացած հայերեն թարգմանութեան անշուշտ նրա համար, որ կրօնական բնավորութիւն ունի, և որ մեր բանաստեղծներն այն ժամանակ շատ ավելի դրախտով, Ադամ-Եվայով էին հետաքրքրվում քան Հայաստանով: 1824 թվին լույս է տեսնում Միլտոնի «Դրախտ կորուսեալն» արձակ թարգմանութիւնը 2. Ավգերյանի ձեռքով: Ընդհատաւոր հայերն ևս անժաման չեն մնում այս թարգմանութիւնների մէջ, Կալկաթայում, ուր 1821 թ. հիմնվում է Մարդասիրական Ճեմարանը, 1826-ին Շատոքրիանի Ատալան է տպվում, իսկ Մագրասում, 1818-ին՝ Վոյտերի Հուլիոս Կեսարը, և 1812-ին՝ Յուրիանի Նումա Պոմպիլիոսը, որ Տելմաքի հատկութեան մի գիրք է և երկրորդ անգամ արժանանում է թարգմանվելու Ե. Հյուրմուշի ձեռքով:

Այս թարգմանութիւնները, դիւավորապես կրօնական-բարոյական ուղղութեամբ վիպական երկեր և նույնիսկ թատերգութիւններ, դանդաղ, բայց անընդհատ շարունակվում են և հետագայում, դիւավորապես վենետիկեցոց ձեռով, որոնք տալիս են հին և ֆրանսիական կլասիկներից մի քանի կարեւոր երկեր՝ դժբախտաբար գրաբար լեզովով: Եվ այսպիսով նույնիսկ 19-րդ դարու սկզբներից առաջ է գալիս գեղարվեստական թարգմանական գրականութիւն, որ պոյութիւն չունի առաջ: Դա արդեն նշան էր, որ հայ գրական միտքը շարժվում էր և պիտի բաժանվեր սքոլաստիկայից և միջնադարյան միակողմանի ու միակերպ պրոզայի բանաստեղծութիւնից ու մի նոր ճանապարհով ընթանար: Հարկավ դեռ շատ ժամանակ պիտի անցներ, մինչև որ ճաշակը, գեղարվեստական հասկացողութիւնը դպրոցի և թարգմանութիւնների միջոցով ազնվանար ու բարձրանար և թոթափելով հինը՝ կարողանար նմանել եվրոպականին և առաջ բերել մի նոր տեսակի, թեկուզ նմանողական, բանաստեղծութիւն, որ արտահայտի լինի կյանքի, յուր մէջ ցուացներ մեր իրականութիւնը և բավականութիւն տար հասարակութեան ձգտումներին: Ամենից առաջ հաջող կերպով այս բանը կարող էին անել Մխիթարյան բանաստեղծները, որոնք քիչ ու շատ ծանոթ էին եվրոպական բանաստեղծութեանը. բայց նրանք ժողովրդի կյանքով չէին ապրում, ուստի և իրենք ինքնուրույն երկերի մէջ թույլ. մանկական ու բավական պարզամիտ են: Բայց և այնպես դրանց բանաստեղծութիւնները, ինչպես և Փնշտիմալճյանին, և թե՛ ժամանակին տպագրված լինելն, կարող էին որոշ չափով բավականութիւն տալ ժամանակակիցներին, որոնք այդ նկատմամբ շատ էլ պահանջակտ չէին: 19-րդ դարու առաջին երեսնամյակում սակայն, որքան գիտեմ, գրեթե ոչինչ չէ տպագրված:

1828 թվին Մոսկովում Առաջալի Արարտեսեան շատ բան խոստացող անվան տակ հրատարակվում է մի դիրք։ Դա Լազարյան հեմարանի սաների բանաՀյուսուժյունների ժողովածուն է, որով նրանք հիմն մի կողմից պարծանքով ուզում են ցույց տալ իրենց հասաջադիմությունը բերթողութեան և ստեղծարանութեան մեջ, մյուս կողմից բառ հասակակիցս արձակեն զառաքին զայս փունջ բանահիւսութեանց, հրախրիալ զնոսալայս աղբիւր լուսաւորութեան, զայլ աշակցել ի քերութաքանդակ հախարակութիւն տողալափութեանց։

Եւտ ընտրոշ է այս կողը յոր ժամանակի համար։ Մարդիկ կրթվում են զպրոցում, կարգում են եվրոպական լեզուներով բանաստեղծութիւններ, նույնը որոնում են և հայոց մեջ ու լին գտնում։ Բայց զպրոցը սովել է նրանց աղդի պակասութիւնը հոգալու միտքը, լին կարող անտարբեր մեալ։ Զկա բանաստեղծութիւն, բայց պետք է ստեղծել։ Ուրեմն ի՞նչ պետք է անել։ Պատասխանը շատ պարզ է և երեխայական։ — Ընդհանր է հրավեր կարգալ հայ զպրոցների բանաստեղծներին, որ զարթնեն։ Եվ այդ անում են Լազարյան սաներն իրենց աշակերտական շաքարդութիւններով ու հարտասանական վարժութիւններով, որոնք անշուշտ սրբագրված ու շինված են իրենց հայկաբանութեան ուսուցիչ Միքայել ժայրաղուն վ. Սալանթիանցից։

Այն բազմաթիւ անուններից, որոնք զրկած են ոտանավորների տակից, և ոչ մեկն էլ ապագայում զրական շնորհք չի ցույց տվել, որքան հայտնի է. բայց և բոլոր զրածներն էլ աննշան բաներ են. մեծ մասամբ ձոներ՝ Զատկի, Մենդյան, Նոր տարվա և այլն առթիվ ուղղված Լազարյան իշխաններին. մի սովորութիւն, որ տեսանք, միայն այդ Լազարյան սաների մեջ չի եղել և միայն նրանք լին, որ իրենց երախտավորներին տվել են այնպիսի մականոններ, ինչպես՝ աստվածաղույզ, դուցապատիվ, դուցազնափայլ, սխրափայլ դասու դուցազանց զուգաթու, դուցածնուդ, մեծամեծարար հերոսք, արքայապետական դուցազանց վեհազնյա անմահից բարձակից և այլն։ Դա ժամանակի ողորմելի ոգու արտահայտութիւնն էր։

Սակայն այսպես լինելով հանդերձ՝ այդ ժողովածուն մի մանկական թոթովանք է, որ ցույց է տալիս, թե լեզուն պիտի բացվի։ Դրա մեջ արդեն երևում է, որ բնականորէն ոչ միայն բարոյական խրատներ ու անսովածաշունչ են սիրում և տաղալափում նրա հատվածները, այլև ոգևորվում են մեր անցյալով ընդհանրապես. ունին արդեն հայրենիքի զաղափար, որով պարծենում են, որովհետև այդ հայրենիքը զրախտն է. ցույց են տալիս ուսման սեր և ուրախանում են, որ պարսից բռնակալ լծից ազատվում է հայ ազգը։ Դրանք ոգևորութեան Նոր նյութեր են, որ Լազարյան սաներն առաջարկում են մեր բանաստեղծներին մշակելու, և որոնցով այնուհետև պիտի զբաղվեն մեր ապագա բանաստեղծութիւնը։

Եվ առաջինը, որ նույն ժամանակներում այս և նման խնդիրներ է

նյաւթ դարձնում բանաստեղծութիւն, է Հովհան Բանանդեցին, որ թնայեա ինճիճյանի ու Փեշտիմալճյանի ժամանակակից է և Բագրատունուց մի սերունդ առաջ մեռած, բայց շատ կողմնորոշ տարբերվում է նրանցից և իսկական հիմնադիրն է դառնում մեր նոր ոգով գրականութիւնը:

Հովհան Միքայել Կանանդեցին (1772—1840) ծնվում է Կան քաղաքում: Ջորս տարեկան հասակում ողբ է մեռւմ հորից, աղքատ մայրը շատ նեղութիւն է կրում յուր թաղմանը ընտանիքը պահելու համար և յուր ութ տարեկան որդուն տալիս է Կոռուց անապատը իրրե փոքրավոր մի ում Գասպար վարդապետի: Այստեղ նա ցույց է տալիս առանձին սեր ուսման և կարգալը երեւի հենց յուր վարդապետից է սովորում, իսկ գրելը՝ վանքի կոնդակագրից: Միաբանները տեսնելով նրա ընդունակութիւններն՝ առանձին խնամք են տանում վրան: Չուտով դպրութիւն չորս աստիճան է ստանում՝ Ամիրզադե անունը փոխելով Հովհանի: Ուսման փափագը նրան Կ. Պոլիս է տանում իր քսանամյա հասակում, երբ լավ ծանոթ էր Աստվածաշնչին, գիտեր շարական ու նարեկ, իհարկե մեծ մասամբ անգիր սերտած, ինչպես սովորական էր ժամանակի համար: Այս միջոցին նա անդիր անել է սկսում և ժողովրդական:

Մայրաքաղաքում նրան հաջողվում է ժողովրդական դպրատունը ուր ստանում է յուր ժամանակի իսկական մեծ ուսուցիչ, սովորում է քերականութիւն, ճարտասանութիւն և տրամաբանութիւն ժողովրդական գրիմաստ ուսուցչաց տիրացու Յարութեան և մահտեսի Կարենցու: Սկզբում ապրում է մեծ նեղութիւնով, յուր հացը հալածութիւն է ուրիշների համար նամակներ գրելով, բայց դպրատան վերականգնու Շնորհք Մկրտիչ Միրիճանյան ամիրան, տեսնելով նրա ընդունակութիւնն ու հառաջագիմութիւնը, շարաքական երեք դահեկան թոշակ է նշանակում նրան, որպէսզի ավելի մեծ հոանդով կարողանա պարապել. և հետո նուրիսի յուր տունն է ընդունում նրան ապրելու, սեղանակից տնելով իրան:

Կանանդեցին այս հասակում արդեն ցույց է տալիս բանահյուսութիւն շնորհ և հորինում է ճառեր կրօնական բովանդակութիւնով, որոնցով կվարճանում էր Շնորհք ամիրան յուր ազատ ժամերին: Այդ ճառերից մեկը գրում է նա յուր մայր դպրատան, յուր հովանավոր ամիրայի և յուր երկու վարժապետներին վրա, կամենալով երախտահարուց լինել նրանց: Մի անգամ ամիրան խնդու է տալիս Ջաքարիա պատրիարքին. և թաղմականները խնդում են Հովհանին, որ իրենց խնդույի առթիւ մի ոտանավոր հորինեւ: Նա ճաշի միջոցին գրում է ուղած ոտանավորը ու կարդում. ամենքը հավանում են և խնդրում պատրիարքին, որ մի սվերտառութիւն մտնէ, այսինքն մականունը դնելով, պատմել Հովհանին: Ամիրայի ցանկութիւնով՝ պատրիարքը սկանիցի կոչումը, որ երեւի դուր չէր գալիս ամիրային, փոխում դարձնում է սկանանդեցի ի հիշատակ Ղուկաս Կանանդեցու:

Կեց տարի սովորելուց հետո Հովհան Կանանդեցին Շնորհք ամիրայից վարժապետ է ուղարկվում Ջմյուռնիա, որ և ուղևորվում է 1788 թ.

ապրիլին, Այստեղ ամուսնանում է նա, և փասնութ տարի վարժապետություն անելուց հետո ձեռնադրվում է քահանա և մի առանձին գրքով, բերականութի քահանայից, բացատրում է քահանաների պարտականությունները, Կյանքի վերջում տասը տարի հողացավությամբ տանջվելով մեռնում է 1840 թ. փետրվարի 3-ին և ամենքից հարգված պատվով թաղվում է:

Հովհանն Վանանդեցին ունեցել է միայն հայ ուսում. չի իմացել ոչ մի և վրացական լեզու, տեղյակ է եղել բացի տաճկերենից նաև պարսկերենի և արաբերենի. և ինչպես երևում է, պարսպել է պարսից գրականություն, որովհետև կենսագրերն⁷ ասում է, թե պարսկերենից թարգմանել է ոտանավորով ժողնուրի ազգարա կոչված բարդական բանաստեղծությունը, Հին կլասիկներ չի կարդացել, բայց նրանց մասին, ինչպես և դիցարանության մասին, տեղեկություն ունի և մեկ մեկ գործ է ածում դից անուններ: Քաջ ծանոթ է եղել հայ մատենագրությունը, որից և ստացել է յուր ամբողջ զարգացումը: Միևուր լինելով գրականության, նա աշակերտական հասակից արդեն դրել է ոտանավորներ, բայց բանաստեղծությամբ պարսպել է իսկապես Զմյուռնիայում և հորինել է շատ բան: Նա գործել է սակայն և իբրև վարժապետ ու պատրաստել է շատ աշակերտներ, որոնցից հետագայում նշանավոր է լինում Մսեր Մսերյանը, որ հիացմունքով ու մեծ ակնածությամբ է խոսում յուր սիրած վարժապետի վրա: Սա յուր աշակերտական երախտագիտությունն արտահայտելու համար 1853 թ. Մոսկվայում հրատարակում է Վանանդեցու ժառանգորդական ի սուրբ Խաչն Քրիստոսի և պատմագրական առասացություն ի Սուրբ Նշանն Վարդգայ, որ գրված է 1815—16 թվին: Ճառի վերջում կա և ոտանավորով բերորող բարեբանութեան ի սուրբ Նշանն Վարդգայ: Դա մի կես քնարական, կես վիպական ներքող է նման Նույն բովանդակության հին երկերին, չի մեկնաբանական բացատրություններով:

Նրա գլխավոր բանաստեղծական երկերն են՝ «Տեսարան հանդիսիցն. Հայկայ, Արամայ և Արայի», որ ժամանակով ամենից հինն է, բայց ապագրված է 1856-ին Զմյուռնիայում. «Արփիական Հայաստանի», Կ. Պոլիս, 1836 թ. և «Ուկի դար Հայաստանի», որ ապագրված է մահից մի տարի հետո, 1841 թ. Զմյուռնիայում:

Վանանդեցին նույնպես հին դպրոցի մարդ է և յուր մեջ կրում է յուր ժամանակակիցների բոլոր պակասությունները բանաստեղծական արվեստի նկատմամբ: Ողբ է մտածող ոգի, ռոմանտիկ երևակայությամբ և խոսքի շնորհքով, բայց նրա բնատուր շնորհքն անկիրթ ու անմշակ է մնացել, և ինքն ևս դուրս է այդ, ուստի և ջղվելով գրում է, թե բանաստեղծում է դիցադեմոնիստիկ շունչով իսկ և տեսությունն անզամ նախնի հաղնեքությունն մերոց կամ օտար ազգաց լայն վատտակ լարացոյց, և ո՛չ ևս ի նույն պիտանեմքոյն զամբողջ հնախօս մատենանս: Այդ ժամանակ

7 «Ուկի Դարի» Հառաքարան:

ու Հոմերոսի և ոչ Վիրգիլիոսի թարգմանութիւններն էին հրատարակված և ոչ իսկ Թագրատունու տաղերը. իսկ Վիզայի Քրիստոսականներ, թարգմ. Թումանյանի, հրատ. 1832 թվին, չէր կարող ազդել Վանանդեցու երկին, քանի որ նա ծնւ էր և յուր երկերը հորինած արդեն, Բանաստեղծութիւն վիպական ձևն ուրեմն ամբողջ ինքը պիտի ստեղծեր, իսկ ինքն առանց նախորդների չէր կարող բնականորեն նոր գեղեցիկ ձև առաջ բերել դրականութիւն մեջ։ Այս պատճառով նրա երկն ալքի է ընկնում ճաշակի և արվեստի բացակայութեամբ։

Ամենամեծ թերութիւնը, որ վնասում է Վանանդեցու աշխատանքին, այն է՝ որ նա ոչ մի զաղափար չունի գեղարվեստական երկի միութեան մասին, և իրրն հին սերնդի մարդ, կարծում է, որ եթե մի պատմական նյութ բանաստեղծական ոճով ուստնալորի վերածվի, կդառնա վիպական քերթված։ Նրա «Արփիականն» ամբողջապես Ագաթանգեղոսի Պատմութիւնն է ուստնալորով գրած։ Հորինվածքի կատարյալ բացակայութիւն է. նյութի մասերի հարմարում, ավելորդ բեռը դուրս ձգել և պակասը լրացնել չգիտե նա։ Բայց և այնպես, թեպետև անծանոթ արվեստի պահանջին, բնազդաբար զգացել է միութեան կարիքը և աշխատելով գործողութիւնը կենտրոնացնել Ս. Գրիգորի շուրջը՝ մի քանի մեծ փոփոխութիւն է մտցրել Ագաթանգեղոսի պատմութեան մեջ։ Նա տառացի չի հետեւել Ագաթանգեղոսին սկզբից մինչև վերջը, այլ ամբողջ սկզբի մասը, Խոսրովի պատերազմները, Անակի գործը, Տրդատի փախուստն ու Լիկիանի մոտ ծառայելը, պատմել է տալիս Գրիգորի դայակին, և Գրիգորն այս պատմութիւնների ազդեցութեան տակ գնում է ծառայելու Տրդատի մոտ։ Անուհետև Տրդատի քաջագործութիւնները պատմել է տալիս Լիկիանիսին Դիոկղետիանոսի առաջ, և վերջապես Հոփսիսիանց նահատակութիւնը հրեշտակն է պատմում Ս. Գրիգորին Խոս-Վիրապում։ Այս և սրանց նման փոփոխութիւններով գործողութիւնը որոշ լավով արագանում և սեղծ է դառնում, բայց դժբախտաբար ամբողջ միջին մասը, Հուսավորչի ճարտարութեանը, բաց չի թողնում, որով և Վանանդեցու քերթվածի կեսից ավելին ավելորդ մի ծանրութիւն է դառնում և մի գործը երկուսի վերածվում։

Ինչքան էլ նա «Արփիականն» մեջ կապված է մնում Ագաթանգեղոսին, չի վարվում սակայն Կոմիտաս քահանայի Գործք Առաքելոցի պես։ Վանանդեցին բանաստեղծ է. նորից հորինում է Ագաթանգեղոսը։ Ագաթազգալով իրեն մանրամասնութիւնների մեջ, ստեղծում է ամբողջական պատկերներ ու դրութիւններ և երբեմն իսկական վիպական ոգով շատ հաջող կերպով կարողանում է մեջ բերել գրավիչ ու կենդանի մանրամասնութիւններ, արտաքինի և հոգու նկարագիրներ, Իսկ այս արդեն մի խոշոր հառաջադիմութիւն է մեր վերածննդի վիպական բանաստեղծութեան մեջ։ Ահա թե ինչպես է նկարագրում Դիոկղետիանոսի վիճակը, երբ նա լսում է Գոթաց Հուլե թագաւորի մենամարտի հրավերը.

Դիոկղեօտեայ յունկն հարեալ ուխտ այսանակ ամրակուտ,
Յոսկերս ողջոյն և ընդ իրանն ահաից տարաւ զսարսուտ.
Ի սաստկաշուին յորպէս յորժամ տատանս առնու հողմոց՝ ուռ,
Այնպէս դողայր ըստ ջերմնոտաց, իւր դալկացան դէմք համուտ:
Վարանական ի հոգս անկեալ՝ քունն հեշտին գայր քի խոյս,
Կասկած ընդոստ յերերոսէն զարդեանցն ի բաց մերժէր հոյս.
Զի ոսկերացն ուժոյ տկա՛ր ի գոռ խիզա՛խ անխարխոյս,
Կնատաստն միշտ փափկացեալ Արեանան շէր ռզոյն կոյս:
Կարշնեղ ջգաց փոխան զյո՛յն մտաց ձկտէ՛ր աստ և անդ.
Հնարից ինչ մարթել ի գիւտ վանձն պահել անվկանդ:

Ապա պատմում է թե ինչպե՛ս կայսեր կոյի վրա՝ զանազան կողմերից.
Իշխանները ժողովում և ներկայանում են կայսրին.

Մարդից մարդից հասա խմբէին իշխանորեար ի մի վայր,
Որպէս յախորժ սրինգ հովուի խաշանց բագուրդ գառն ի մայր.

Լիկիւնեմը պատմում է Տրդատի քաջագործութիւնները.

Անաց, իսկոյն և Տրդատէս կայսեր եկաց յանդիման.
Սէգ ի հասակ ճետ Պահլաւիկ, ցուք հրափայլք լիւր ահան.
— Իմ է այդ գործ ի հաճելեաց, ասէ, կանգնիլ ախոյեան.
Վաղիւ յայս ժա՛մ եա ձերբակալ շառագնեացի յայս ատեան:

Ապա մանրամասն նկարագրում է Տրդատի հագուստն ու զինումը և՝
մենամարտի ելնելը.

Պղնձնիւթ փողոց դանդին ժամադրեցիկ ի պայքար,
Աշխոյժ յերկուց վառեալ կողմանց թնդին զործէ հիարար,
Սիրտ յոխերիմ ի ճակատսին զան ի տեղի վագրաբար,
Բաղձ ի հոգիս դէտակն ի պսակ մենամարտիցն ուժգնակար:
Սօս երկվարք գոռ ի փոխն զափու հատանն յասպարէզ,
Եւ կարախիւն յերկուց կողմանց բոց բորբոքէ անձնակէզ.
Երկոքեանն ի՛սկ մտրակ ի կուշտ տան արշաւել ի կրկէս,
Շրջանս առնուն արձակ խաղան, չերկար բաղխին սաստկապէս...

Եվ երբ Տրդատը բռնում բերում է Գոթաց թագավորին կայսեր առաջ,

Մահի դժափի սիրտ ի կայտիւ հռովմէական համագունդ,
Ի գոլ վառից զթարանձաւս արձագանգին տան ի թունդ...

Երբ Դիոկղեօտիանոսի մարդիկը թագավորի հարսնացու են որոնում,
բանաստեղծն առիթից օգտվում է գեղեցկութիւն հետեւյալ նկարագիրն՝
անեյու (եր. 148).

Հռովմալ ողջոյն թնդայր սահման յաղջկանցն ի վազ ճեպերագ,
Գեղք շպարեալք ի հրապարակս փայլակէին կարգ ի կարգ.

Ձգողակրեայն ուռովք ծածան վարսից խարանաշըն գիսակ,
Նոճեօարաւս քանդամայօղն հարդարեռն պե՛րճ զհասակ:
Երփն գեղոց լքնաղացոյց դէմք շողէին ալծարծուն,
Լուսնեացն երեսս ակն ալծեմանց կաթնածով ի՛նչ լուսարուն:
Յոնք մրադարդք աղծողնակեալ կիսարուրո մէտ ի քուն,
Նոնակեղն ալտիցն ցուք հրավառեալք ի փաղփիւն:
Տաշտից խեղց ծնօտքն ի տիպ, բոլր անուշից հոտնան.
Ռնդունքն որպէս իրանանու իսկ զաշտարակս քեզազան,
Շրթանց փափկիկ կարմրալարք երկն հարեալք ի յորդան,
Կաթուած մեղու լեզուին շնորհք զրոյց բղխին քաղցրաբան:
Կճեալ կրծոց փայլուն տեսիլ ի գոյն վառեալ շուշանաց,
Բարեյարմար մատանցն ճիւղք ձիւնապայծառք ընդ ձեռաց.
Նոյն և մարմնոյն համայն մասամբք անհամեմատն յօրինուած,
Ջրնաւից գիտէր զսիրտ ի խանդ գերեւ տարփանաց:

Բայց երբ խնդրակները շար ոգու գրգմամբ բռնի կերպով մտնում են
կուսանոցը,

... Հռիփսթեմայ՝ ցուս արձակեալ դէմք հրաշատես զարփենին՝
Ստուեր զալլոցն ածէ գեղովք օրիորդաց նահանգին,
Յապսու հարեալ հոյլք յուզակաց փ սիրանս քան Հիացման...

Իսկ երբ նրա պատկերը ցույց է տալիս թաղավորին,
Որպէս ուրուք սիրտ կաթողին ի սէր վառեալ երկրէից,
Անակնկալ ի ձեռս անճառ բերցէ ճոխանս զանմահից,—
Կամ ընդ ծաղկանց վաղաթարշաւ վայելչութեան երանգից
Ջանթառամից հասցէ ունիլ զպերճութիւն հրճուալից,—
Խանդ ի հոգի նոյնպէս ի ներքս ածեալ կայթէ՝ քաշն ալանց,
Յալլո իբրու ի խելս եկեալ վաշ վա՛շ գանել հրճուանաց.
Համայնց ի բաց փախչին դեղձանք, յայն կայ և ե՛թ անկերաց,
Վայրկեանք դարուց նմա բերեն երկարութիւն շրշանաց:

Նս կուլեի, առանց երկարությունից վախենալու, մի երկու հատված
և մէջ բերել ցույց տալու համար, թե ինչպէս հանդարտ ու սիրուն պատ-
մել գիտն այս մոռացված բանաստեղծը:

Խոր տխրութիւն զանհնարին աղուսն ածեալ ի գուպար,
Ջարքայն յանձուկն ի Հռիփսթեմայ գեղոյն լիկեր լարալար:
Ծայգ և ցերեկ յանմխիթարն անկեալ փ սուգ անդաբման,
Եւ յայլոյ խելս ալլանդակեալ կոծէր քալլէր ի կական.
Կուրքն դառինք և ըմպելիք հոտս ի ժահրիցն Ստիգուան,
Ի քիմն աղղեալ յանրերելի ածեն վշտացն ի տուգան:
Անգանտոյն իւր ի շուարս անկեալ առ փիտ հնարից,
Դիւրումն ի սիրտ ածել պետին յայն ի մորմոք ցաւալից.
Երէվայրեացն որոտ տան ժամ բոլոր զօրացըն խմբից,

Փոքու դադէտս մեղմել ցաւոց որ մահաբերն է սրտից...
Այն ինչ ի կառս Տրդատ ելեալ ելուն ճեպէր ընդ քաղաք,
Շեշտ ի վերայ գայր պատուհան շանթ բարկութեան երկնառաք...
Խոտաճարակ ի շամբս անկեալ անդգամէր լարաշար,
Լիակ դանձն ընդ դաշտսն կոծելով ընդ գայոս գայր կնճարար...

Այս ցաւալի դեպքի վրա սուգը բռնուեւ է ամբողջ աշխարհը և նույն-
իսկ բնութիւնը սգում է.

Բերկրանաց փախեան խնծիդք, թոխք ապաւերք խոնեցան,
Դաշտաց լեռանց յեղծ եկին գեղք, ծառք գեղուղէշք խամրացան...
Լցաւ քաղաքն պանծալի մառախլապատ խաւարաւ...
Նոճի հասակն անդ Աշխենայ մեծ թագուհւոյն գեղապանծ,
Յաղէտաւոր յայս կորացեալ դիպուած դնէք ոստաքանց,
Ջայլէր կոծէր անմխիթար, վտակս հոսէր արտասուաց,
Ո՞ր փառք, առէր, Հայաստանի, այր ահլկէց շանթահար,
Ո՞ր պանծագոյն քո այն գահոյք յարփեան ցումունս անկասար,
Անաղ ցաւոյս... արդ ի շամբից ի տիղմն գաս հիգարար,
Ընդ բեհեզաց ծածկոյթ մարմնոյ գայռից շաղախք պատսպար,
Ջիւրոգ սիրոյ քո սերտ ընկերս սիրտիս առից գէթ փնջ խուն,
Որ յամենուտ արդ կողոպտուտս եմ ի փառաց քարձրագոյն,
Ո՞ր փութասցի յԱպողոնին անդր ի մեհեան հրազմոյն
Ջելից ստոյգս առնուլ գուշակս ալսմիկ դիպաց դառնագոյն,
Հա՛յր իմ հղօր, դու Աշխարադ պետդ Ալանաց ոգի սերտ,
Ջքո զստրիկս եկ տեսանել խանձեալ ի ցաւ իբրու շերտ...

Բերած հատվածներից երևում է. թե ինչպիսի վիպական ոգի է ունեցել Վանանդեցին և ինչպիսի եռանդով կենդանացնում է նա պատմվածքը. Նա մի անգամից մեր թմրած, սառն ու անշունչ բանաստեղծությանը հոգի ու շունչ է տալիս. ափսոս միայն, որ Արփիականի տառն հազարից ավելի տողերից հրկու երրորդ մասը ավելորդ բռն է:

Պակաս չի վնասում Վանանդեցու երկին և նրա ճաշակը ոճի, գլխավորապես բառերի ընտրության նկատմամբ. Ուտանավորը կշռված ոտքերով և հնչուն հանգերով, երկար վիպական տողերով, բաժանված քառյակների, թողնում է նյութին պատշաճ լրջության տպավորությունը. Բայց այն վայելքը, որ ընթերցողն ստանում է ոտանավորից և խոսքի հարմարավոր արտահայտություններից, որոնք այն ժամանակ նորութուն են եղել մեր գրականության մեջ, հաճախ անսպասելի կերպով ուշանում է բառերի և երբեմն շարահյուսության անպիտանությունից. Նա սիրող և հետևող է 11-րդ դարու փայլած ճաշակին, որի նմուշը գտնում ենք Գրիգոր Մագիստրոսի և Նարեկացու տաղերի մեջ, այն է՝ լեզվի զեղեցկությունը որոնել խրթնության մեջ. Վանանդեցու այս պակասությունը մասամբ ներքի է լինում, եթե նկատի ունենանք, որ, նա հին, մեղած լեզվով

է գրում, և որ նա առաջինն է, որ խոշոր բանաստեղծական երկեր է հորինում հանգամար ոտանավորով, ուստի և ինքը պիտի ստեղծեր մի նոր բանաստեղծական լեզու, կարիք պիտի ունենար հարուստ բառարանի՝ հանգեր ու խոցեր կազմելու համար։ Այս պատճառով նա բավական ազատ է վարվում բառերի վերաբերմամբ։ Գործ է ածում քիչ գործածական և դժվար հասկանալի բառեր, հաճախ այնպիսի արմատներ, որոնք պարզ կերպով գործածական չեն, կամ նորանոր բառեր է ածանցում և բարդում։ Կամ բառերը մի թուրքովին անսովոր նշանակությամբ բանեցնում։ Եվ վերջապես կան բառեր ևս, որ Առձեռն բառարանի մեջ չկան։ Այս ամենը բավական դժվարացնում է ընթերցողին, որ սակայն հետզհետե վարժվում է այս խորթութունների։

Զպետք է մոռանալ մի հանգամանք ևս։ Մեր լեզվական կրթությունը այժմ հիմնված է մեր կլասիկական համարված գրաբարի վրա։ Մենք այժմ շատ ավելի հեշտությամբ հասկանում ենք մեր առաջին գրաբար մատենագիրները, որոնց լեզուն և ավելի է ազդել մեր աշխարհարարի վրա։ Մինչդեռ դրանց հետ զուգընթաց և դրանցից հետո կան շատ գրաբար գրվածքներ, որ դարոցական ուսման նյութ դարձած չլինելով՝ մինչև այժմ ևս խորթ են մնացել մեզ համար։ Արդ՝ Վանանդեցու ժամանակ թիֆ Մխիթարյան դպրոցում մեր հին լեզվի այս բաժանումն եղած էր և Մխիթարյան գրողներն արդեն հետևում էին զասական գրաբարին, — ուրիշները սակայն այսպիսի խտրություն չէին դնում։ Ուստի և հաճախ այնպիսի լեզու են բանեցնում, որ մեզ դժվար հասկանալի է։ մասնավոր դրա այդ ժամանակ Հայկազյան լեզվի ընդարձակ բառարանը դեռ չէր հաստատարակված և բառերի նշանակությունները դեռ ճշտված չէին։ Վանանդեցին ուրեմն ամեն ինչ ինքը պետք է սովորեր գրքերից մեծ մասամբ առանց բառարանի օգնության, և երեխ դժվար բառերի համար անձամբ բառարան է կազմած եղել յուր համար։ հաճախ իհարկե սխալ մեկնություններով, և այդ հազվագեղ երևացող բառերը գործ է ածել անխտիր յուր քերթվածների մեջ։

Նույն պակասությունները, որ ունի Արփիականը, կան և Ոսկի Դարի մեջ և մինչև անգամ ավելին ևս։ Արփիականի մեջ, թիպետ թույլ կերպով, կա գործողություն և նույնիսկ մի միություն, որ առաջանում է անշուշտ երանից, որ Ազաթանգեղոսն ևս որոշ լափով գեղարվեստական գրվածք է։ Ոսկի Դարի մեջ այդ էլ չկա։ Այս խոշոր քերթվածը, մոտ 5600 15-վանկանի տողերից կազմված, անասելի տուժում է նրանից, որ առանց որոշ ծրագրի և հաջորդականության է հորինված, և ժանրաբեղմնված է կրկնություններով և անպետք մասերով։ Բովանդակություն է ընդհանրապես Հայաստանն յուր պատմությամբ և աշխարհագրությամբ։

Առաջին երգի սկզբում Սահակ Բագրատունին խնդրում է Խորենացուն գրել Ոսկի Դարի մասին, և Խորենացին պատմում, իսկապես նկարագրում է Ոսկի Դարի կյանքը, բնությունը, համառոտ անցնելով Աղտմից և մանրամասն պատմելով ջրհեղեղի մասին։ Այստեղ մենք կգտնենք

և ամեն անհատական ժողովրդած՝ Նախիջևան, Ակոռի, Սիմ, Տարրան, Մարանդ անունների համար, և վերջը՝ թե ինչպես մարդիկ տարածվում են Հայոց աշխարհի զանազան կողմերը, Նյու-Յը դուքսազնեքոթյան համար մի անպետք բան է, բայց կան մեջը կենդանի երեսկայությամբ և աշխույժ հոանդով առաջ տարված անպիտի հատվածներ, որոնց նմանը լուսինի մեք հին բանաստեղծությունը։ Այսպես, օրինակ, կենդանիների ելքը Նոյան տապանից (Եր. 14 և հտն.), որից ավելորդ չի լինի մի քանի տներ ղենի այստեղ, քանի որ այս բանաստեղծն այժմ այլևս չեն կարդում։

Բայց յապրացու մեք տապանին բացման՝ զնոր տեսարան մեր իսկ առջ անդր ի Մասեաց տեսաք լեռին յարտեան. Եղոյն զիս՝ ող զդորդէք յարկ թռչնոցն ի թափ թեւածման, Եւ գետնոյն զի՝ թնդէր յատակ ցամաքայնոցն ի կայթման, Մոխնչա առիւծն որոտացեալ և յագին տա՛յր ուժգին թափ, Իբրև զանիւ հիոայր հոռոյ յորսոյն ի գիւտ զառ ի թափ. Խոժոռագէմ բիրս ի թնալից բացեալ վերայ զանթարթափ, Եւ ընդ խոռն յանձն ապաստան երկիր խաղայր հարթատափ։ Ընդ առապարս ցոռն սաստիկ հնչեալ բառան ըմբահան, Ի դալարեացն անկեալ խնդիր, հովտաց յածէր ընդ սահման. Զազատութեան հարեալ դիպաց յանձկանաց լէ՛ր կապարան, Եւ ոչ ունկանցն ազդէր քրքինջ քանդի լունէր հարկահան... Վա՛շ վա՛շ՝ ո՛րպէս իբր ի փողոյ լուր վառեալ շեշտ յասպարէս, Փառք զյանջօք ձին որոտայր դափր հատեալ ի կրկէս. Խխնչագող իբրև տօնից սուր արշաւեալ ի հանդէս, Ընդ զառիվայր խաղայր լեռին յարօտ դիմել փութապէս։ Նապաստակին սուր էր վազումն ազանջ ընդ ուն ի կոռան, Առ ի կողաց յածեալ լեռին վէմ դառնել յօթեան. Յանձինն ի պուրծ հանճարագիւտ շրջան գործէր ի սուրման, Յնդորք ք կնանս յառապարացն եղեալ ամուրս ապաստան։

Այսպես իրենց բնավորության համեմատ մի քանի խոշոր գծերով նկարագրված են և մյուս շորքոտանիներն ու թռչունները. իսկ կապի՞կը.

Կապիկ ի դէմս անդ Ժամածուռ նոցուն տարեալ զուրուական, Խաղայր, կայթէր, խլիրաս տայր, սողէր, սուրայր մօռն ի բան. Զկենդանեաց նմա զքոսանք էր խառնադանճ կարաւան, Եայն զմայլուն յամպախաղաց մնայր լեռին յարտեան։

Երկրորդ երգի մեջ դարձյալ սկսում է նրկու նախաստեղծից և պատմում է արվեստների ու երկրագործության գյուտը, անելով մի տեսակ ազգագրական և դիդակտիկական բանաստեղծություն։ Այս քանիչպես մարդիկ ցրվում են Հայաստանից դեպի Սեւասար, Հայկի և Բելի մասին, Հայկի դայր Հայաստան, Բելի կռիվը և այլն։

Երրորդ երդն սկսվում է Արամից և Խորենացու համարուտ պատմութ-
յունն է անում, խոսում է Հայոց առևտրի մասին և թե ինչ զաղթական-
նություններ են եկել Հայաստան։ Արշակունիներից հետո գրում է Քաղ-
րատունյաց մասին և Հայոց պատմությունը համարուտ տեսությամբ քն-
րում հասցնում է մինչև Նույնիսկ Ռուսաց տիրապետությունը։

Չորրորդ երգի մեջ ևորից դառնում է դրախտին և հիացմունքով նկա-
րագրում է, երբեմն առանձին գեղեցկությամբ, Հայաստանի բուսականու-
թյունն ու բնությունն ընդհանրապես։ Ապա մի անպետք հնախոսություն
է անում ապացուցանելու, թե դրախտը Հայաստանում է եղել։ Հենեկելով
ինձիճյանին՝ տառամովորով Հայաստանի աշխարհագրությունն է անում,
նկարագրելով լեռները, գետերը, գաղաղները։ Վերջը Հայոց աստվածա-
պաշտությունն ու կրոնն է գովում և պաշտպանում եվրոպացի քարոզիչ-
ների դեմ, վիճելով նրանց հետ։

Խնչ է այս բանաստեղծության արժեքը։

Վանանդեցու գլխավոր արժանիքն իհարկե ձեռի մեջ չէ, որը շատ
անկատար է լուր ամբողջության մեջ։ Թեպետ մանրամասնությունների
ստեղծող է հանդիսանում և գիտե՞ զգալ բնությունն ու երբեմն սիրուն
նկարագրել, բայց նա ընդհանրապես պրոզա և բանաստեղծություն չի
ստարերում և ամեն ինչ խսուկ ի խուլն ուտանալորի է վերածում։ Նրա
գլխավոր վաստակը, որով նա մեր գրականության մեջ տեղ պիտի բռնի,
շողափած գաղափարների և նոր տեսակի զգացումների մեջ է։ Այս նկատ-
մամբ Վանանդեցին իսկապես խոշոր նորամուծությունների է բերել մեր
բանաստեղծությանը, երբ համեմատում ենք սրա գործն իր նախորդների
ու Նույնիսկ ժամանակակիցների հետ և երբ ի նկատի ենք ունենում այն
ազդեցությունը, որ նա թողել է հաջորդների վրա։ Նրանով է իսկապես
սկսվում մեր նոր բանաստեղծությունը, որովհետև նրա գրվածքների մեջ
առաջին անգամ գտնում ենք մեր 19-րդ դարու գեղեցիկ գրականության
գրեթե բոլոր գլխավոր գաղափարներն ու զգացումները։ Շատ բան իհարկե
սահմանային դրություն մեջ է, որովհետև 19-րդ դարու առաջին երեսնամյա-
կում շատ գաղափարներ էլ դեռ նոր էին ծնվում մեր մեջ և պարզված չէին։

Վանանդեցին մի կողմից շարունակելով հին կրոնական ուղղությու-
նը, մյուս կողմից բանաստեղծության առաջ դնում է մի նոր խնդիր, ազ-
գային քաղաքական անցյալը։ Նրա ձեռքով սկսվում է, այսպես ասած,
Հայոց քաղաքական ռեցլայի բանաստեղծությունը, քաղաքական անցյա-
լից առած հայրենասիրական քերթվածների շարքը, որ հետզհետե ավելի
ընդարձակվում է, և որի մեջ ավելի ու ավելի ուշադրության է առնվում
ներկա կյանքը։ «Տեսարանի» մեջ բողոքն, որ մյուսներից վաղ է գրված և
հիշվում է Արփիականի մեջ, վիպական քերթվածների նյութ դարձնում
է Հայկ՝, Արամ, Արա առանձին երգերով և ապա մի լուրրորդ երգով՝ ևս՝

Ն «Հանդիս» դիցադին մերայ Հայկայ» երգի բովանդակությունն է՝ Հայկի ծնունդն ու
սեռնորդը։ Հայաստանի աստվածապաշտությունն ու մարդկանց զեղծումը, ջրհեղեղի մասին,
մարդկանց քաղաքական և բաժանելը, աշտարակաշինությունը, Հայկի ապստամբությունը,

«Յորդորո նմանիւ նախնեաց», ամփոփումն է անում առաջին երեք երգերի: Նույն նյութը նա հեղհեղում է և Ոսկի Դարի մեջ և մասամբ նույնիսկ Արփիականի մեջ:

Սա արդեն մի մեծ հեղափոխություն է մեր քանադոստեղծության մեջ: Դարևո շարունակ քաղաքական կյանքը մերժված է եղել երգի արժանանալուց, քերթողները միակերպ միայն վարդ ու սոխակ, պարտեզ ու զարուհ են երգել և կամ եկեղեցի ու սրբեր, կրոնական խնդիրներ, Հին ու Նոր Կտակարանը, շատ շատ՝ Հայոց եկեղեցական անցյալից՝ հայ սրբեր, իսկ այժմ բանաստեղծը առանց թողնելու կրոնականը՝ ոգևորվում է Հայոց քաղաքական անցյալով: Նա աչք դարձնելով դեպի հեռավոր անցյալը, այնտեղ բացի սրբերից տեսնում է նաև քաղաքական աշխարհական կյանքը և հեռավոր անցյալի միջից հանում է մեր պատմության առասպելական դուրսագնալի, որոնք նրա համար սական իրական էին, և պարժանքով երգում է «Հայկնան ազատութեան» համար կռիվը, որով սկզբվում է հայ ազգի սահնդազին տնրութիւնը (Տեսարան, եր. 51) և թի ինչպես օտարները հնազանդվում են հայերին և

Յօրէ անտի պայծառ փայլէ պարծանք ազգին,

Երբ միապետ հանդիսանայ մեր այս նախնին.

Յադդօ քարեաց ի Հայաստան յաճախեցին

Զքնաղ ցուցեալ համայն ազանց այլ աշխարհին:

Զկա քաղաքական ազատություն առանց նալրեհիքի, և վանանդեցին մեր անցյալ կյանքի՝ «ես քնականորեն հիշեցնում է մեր մոռացված հայրենիքը, որ մեր անցյալի հետ հավասար և նրանից էլ ավելի զբաղեցնում է քերթողին: Մերն է աշխարհ Հայաստան, ինքն իրեն հարց է տալիս նա. և պատասխանն այն ժամանակի համար շատ պարզ էր: Մենք մի այնպիսի հայրենիք ունենք, որի նմանը չի ունեցել և չունի ոչ մի ազգ: Մեր հայրենիքը դալստն է, մարդկության առաջին և երկրորդ որդանը, — մի հին ավանդություն, որ վաղուց արգեն բնիկ գրույց էր դարձել և որ 18-րդ դարու վերջում և 19-րդի սկիզբներում շնորհիվ Չամչյանի և Խնձիճյանի զորեղ կերպով նորոգվել էր հայ զբաղեցնողների շրջանում և ազգային մեծ պարծանք էր համարվում. ուստի և պետք է տեղ գտներ քանաստեղծության մեջ: Սիւ ահա՝ վանանդեցուց սկիզբն է առնում Դարևո Հայաստանի և Նոյան Հայաստանի գովքը, որ այնուհետև երկար ոգևորում է մեր քանաստեղծներին, մինչև անգամ աշխարհաբար գրողներին, ինչպես Գրամա Բաթրիկա և Ուրիշներ: Դա մի սին պարծանք էր, բայց սիրով կապում էր սրտերը երկրի հետ, այն երկրի, որ ուրանում էին իր բնիկները:

դատերազմը և հաղթությունը, Հայկի միապետությունը, աշխարհայինությունը և մահը — Այս «Հանգիստ դիւրալին մերոյ Հայկայ» ուրեմն նախադասութիւնն է Բազմաբանութեան «Հայկի դիւրալին»:

Հրճուի՛մ, վա՛շ ինձ, Հայկե՛ան է տուն ուր ե գրախտն էր գետնդ.

Ուստի քառից բաշխին գետտցն առաջք ուխել յաղթազնդ.

Երկիր բեղնուտ, վայր փափկութեան յերփն ծաղկանց լուսագեղ,

Եւ նախահարցն իսկ նախ քան շուրջ կացեալ դողող տուն շքեղ,

Անդէն և Նոյ զվեցդարեան ձգեալ զաւուրս իւր կենաց...

(Ոսկի Գար, 2).

Գրախտը, Նոյի փրկութեան տեղը, մեր երկիրը, մերն է եղել. և բնական եղբակացութիւնն այն պիտի լիներ, թէ ինչո՞ւ պիտի թողնել, որ օտարները խլեն մեզնից այդ պարծանքը, որ մերն է և մենք պետք է գովենք ու սիրենք:

Ձի թէ մարդկան յերկնակն աճուրդ մէր կաց երկիր նախապար,

Ձմեր և հի՛մ կալցին պարծանս, որ յետինն են դեհը օտար:

(Ո. Գ., 3).

Եվ վանանդեցին ձեռնարկում է մի դուրեցազնեղութիւն գրելու, որով կարողանար հայ երիտասարդներին հասկացնել Հայոց ազգի պարծանքը թէ անցյալի և թէ հայրենիքի նկատմամբ:

Բանաստեղծն ուրեմն սկսել է արդեն մտածել ազգի և հայրենիքի վրա, համեմատել ներկա վիճակն անցյալի հետ և երազել ապագայի համար, Ազգն ու հայրենիքն է շարունակ նրա մտքի մեջ.

Ճուր է սեղանոյ իղձ ազգասիրին

Արժարժուն վառեալ ի ներքս ի հոգին.

Ուր խաղաղականք և այլքն ըստ կարգին

Ազգային դարձուածք հաճոյ ճենճերին:

Այդ ազգն ու հայրենիքը անցյալում՝ ներկայանում են նրան դադարաւանդուն գեղեցիկ, համակ քաղութիւն, քաղազնութիւն և բարեշինութիւն:

Ի Հայաստան նախ կանգնեցան շէնք և քաղաքք ի հիմանց,

Անդեայք և հօտք անդ խայտացին նախ ի ձեռնդս սերմանց...

Հայաստանին են նախարոհատ վաճառականքն փ հանճար,

Որք զառաջինն ի տուրեառս կարգ հաստեցին զճարտար, և այլն:

(Ո. Գ., 88).

Ամեն ինչ լավ է եղել անցյալում, ասում է բանաստեղծը, ամիսո՞ւս միայն, որ իմաստութիւնը պակաս է եղել Հայոց միջից: Մեր նախնիքը հաճախ, մինչ համատարիմ ծառայել են օտարին, զինվել են յուրայիններին դէմ և պատրաստ են եղել իրենց պետութիւնն ուրիշներին մատնելու,— իրենցը քանդել են ուրիշները շինելու համար:

Բա՛րժ փառաց քոց, Հա՛յաստան, դի Հաստողին շնորհաց քան

Ի քեզ յառաջ հնչեաց յատուկ ի մարդկածայն բարբառուման...

Փոյդ հնչեցին անձաւք լերանց նախ արձաղանդ պարզ ի դարձ,
 Փոյդք կայից ծառք և ծաղկունք յակճիս հարան շքաքարձ,
 Գետք և աղբիւրք ի քէն բղխման ուխտ յորդեցին նախապարծ,
 Բայց իցի՞ն թէ քային սրգիք զքոյդ գիտէին շուք, յանկա՞րծ...

(Ո. Գ., 353),

Եվ հայրենիքի արժեքը ըմբռնելու, իսկ օտարներին համառարիմ ծառայելու այդ եղին մեր պապերից ժառանգել ենք մենք և պահու՞մ ենք մի՞նչ և այժմ մեր արյունի մեջ.

Ի Մոսկովաց հայեանց Կայսեր՝ զոր Հայոց տայ գովութիւն,
 Ազգ է անկեղծ և մտերիւմ առ ո՞նք և է տէրութիւն.
 Զոր և արդիւնքն ի նորս և հինս հաւաստիս տան հաստատուն,
 Սակայն զի՞նչ շահ, զի յանճողս են գիւրեանց յարգել քնիկ տուն:

(Ո. Գ., 355),

Ի՞նչ շահ հայ ազգի ամեն բարեմասնութիւններից, երբ անհոգ են մնում քնիկ տունը ճարգելու: Եվ ոչ միայն դրանից օգուտ չունին, այլև տեսնք թե ինչ է եղել դրա հետեանքը.

Վայրապատին ուստի Հայկեան եղեալ սերունդք ի հաւար,
 Եքեղ պատուոյն անկան փոխան՝ մերգուգանացն ի խաւար.
 Ոսկեդրուագ յարկացն շէնք և սրահից գեղապար,
 Յաւով առնմ, յատակեցան յանշէնս եղեալ առապար,
 Ստրկութեան անուրն ի մերս անլոյծ կապեալ պարանոց,
 Հայրենատուրն իսպառ քերքեաց ի վիճակէն աւալոց.
 Երկիր՝ որ դրախտն էր փափկութեան անմահութիւն ծաղկանոց,
 Դժնեայն եղև ազգաց կոխան՝ մեր յանդարման սրտից խոց:
 Խնթիւ ք մեզ զի հայեցաւ Արփին արդարն յիւրն ի դատ,
 Զմեք դիմացն ի տխրաթոյր մերկել տեսիլն ըզախատ,
 Մերոցն եղեալ ժանտ դրացեաց կատականաց ի նախատ...

(Ո. Գ., 356),

Եվ այս ամենը ինչ ո՞ւ համար, ի՞նչ մեղք են արել, որ Աստուծո պատժում է հայերին: Այո՞, մեղանշել են, բայց այլևս ոչ միջնադարյան հայացքով, այլ միայն նրանով, որ օտարասեր հայն անհոգ է իր քնիկ տունը հարգելու համար, և դրա համար հենց այդ օտարների նախատանքի, ծաղրու ծանակի առարկան է դարձած: Արդարեւ եղել են մեր պատմութիւն մեզ շրջաններ, երբ հայերն ընկած դրութիւն մեջ են եղել, բայց ոչ այժմյան պես, որովհետեւ այն ժամանակ առաջ են եկել տղամարդիկ, որոնք սփոյթ յառնէին յազգին պատիւ ձեռնարկուք, իսկ ա՞յժմ... այժմ բանաստեղծն անմխիթար է.

Սակայն զարդիս անփառունակն եմք աղետից ողորդուք.
Աշխարհակալ մեր միացաւ պայծառ թագին փառաւորակ,
Արքայազանց համակ բարձաւ տոհմեղութեան յիշատակ.
Զի ցան ե ցիր յուրտա անկան յոտարազդեացն ի պառակ,
Նորոգութեան ոչ ունելով զանկալեաց նպատակ:

Ահա թե ինչ վիճակի մեջ է պատկերանում հայ ազգն ու աշխարհը
բանաստեղծին, և նրա սիրտը կտրատվում է տեսնելով այդ ամենը, և
սրտի խորքից ձայնում է.

Ո՞վ, զի՞ հոգւոյս փղծկէ զկայս շարախտալար այս արկած,
Եւ կենդանւոյն զմահուն տայ կլնուլ օրհաս վայրանկած:

Եվ այսպէս մեր բանաստեղծութիւնն արդեն գտնւ է յուր իսկական
խորը զգացմունքի աղբյուրը. դա հայրենասիրութեանն է իսկական ըն-
դարձակ իմաստով, որ միանգամից յուր բոլոր թափով գալիս է բարձ-
րացնելու մեր քերթվածները և զորեղ շնչոտեր հնչել տալու նրանց: Եվ վա-
նաստեղծու այդ շնչոտերի մեջ մենք գտնում ենք և՛ նկիշան, և՛ Գամառ Փա-
թիսկա, և՛ Պեշիկթաշլւան և Նույնիսկ Արովյան: Եվ այլապէս էլ չէր կա-
րող լինել, քանի որ բանաստեղծութիւնը կապվում է կյանքի հետ, իսկ
կյանքն ու կյանքի ձգտումները նույն են եղել դրանց ժամանակ:

Բանաստեղծն առաջին անգամ սկսում է վերլուծել ներկա հայ կյան-
քը, որի մեջ ոչ մի մխիթարական բան չի գտնում: Հայն ընկած է, սվայ-
րանկած այն աստիճանի, որ շատ հայեր հայ անունն անարգանք են հա-
մարում իրենց համար:

Անունն՝ որ բուն էր պարծանաց ի նախնեաց քաղցր դարուն,
Այժմիկ, վա՛յ ինձ, յանախորժական անկեալ դնի հիգութիւն.
Զի են բազումք, որք անարգանս անձանց դնեն Հայ զանուն,
Եւ այլոց միտեալ յիմար մտօք ազնուանալ յետին տուն,
Ի ծայրայեղն ալս՝ մոլի կենցաղագէտ չէ մարդկան.
Բայց մերքն և յայս անզգամեալ զսիրտ կալան խժական:

(Ո.Ղ., 328),

Հայն ալլասերվիլ է. քաղաքական իշխանութիւն անկումից հետո՝
սկսել է ցրվել այլ և այլ կողմեր և յուր բնիկ ազգային ոգին հնչտութիւնամբ
հեղափոխում է յուր դուրսփոխ բարքերով. նայելով թե որ երկրում է,
նրանք էլ ընդունում է շարունակ փոփոխելով, այլ աստիճանի, որ

սիւնի և զհայութեան անուն լիշիւլ յալլազանց երկրին.

Որով օր աւուր կորուսեալ զլարգ և զշուք անձին.

Ան օտարազգիս անկած ցուցանեն զազգն ցլխովինս:

(Տեսարան, հր. 140):

Արանից էլ ամենի ստորանալ շի լինիլ մի ազգի համար:

Ի՞նչ է դրա պատճառը և ի՞նչ պիտի լինի դրա ճարձը, — հարց է տալիս բանաստեղծը և պատասխանում:

Ոչ քն ընդհանուր ազգի բնավորութունն է պատճառ այս խորին անկմանը, այլ կրթութիւն պակասութիւնը: Ուրեմն պիտի կրթել հայութիւնը: Եվ ո՞վ պիտի հոգա կրթութիւն համար, — Ամենայն հայ մարդ և հատկապէս քերթողները: Եվ այսպիսով բանաստեղծութիւնը Վանանդեցու գրչի տակ ստանում է մի նոր ազնիւ նպատակ. նա մինչև հիմա գրելովում էր աստուծու և սրբերի, վարդի ու սոխակի խառաքանութիւն համար, իսկ այնուհետև պիտի պարապի ազգի վերաշինութիւն գործով, հասարակութիւն կրթելով: Եվ այս նպատակին նվիրում է Վանանդեցին յուր երկերը: Լինելով ժամանակակից Ինճիճյանի ու Փնշտիմալճյանի, նա նույնիսկ յուր Արփիականը գրում է ռոյ ի պատիւ այնքան սրբոց հուսկ հարեալ գովութեան... Ամենապարծ քանզի նորա ի սիառս կան պարաւորք, որքան Հայաստանի սերգակներին համար. և նա համոզված է, որ յուր օրինակին պիտի հետևեն շատերը նույնպիսի երգեր հորինելով:

Վեհազանցն այո՛ ի սիրտ վառեսցի խանդումն անուշակ

Երազ ի յորդոր դալ քաջազնութեան յարդանցն ի գուշակ:

Եվ հայ բանաստեղծների այդ աշխատանքի արդյունքն այն պիտի լինի վերջը, որ պիտի դադարի դժնյա զանգատն ազգից, որ արդեն ճշգրտում է հարութիւն առնելու, և պիտի դա մի օր, որ պիտի կործանվի հայ ազգի խավար ու խարխուլ ամբարտակը, որ կարծես նրա կոշումն է դարձել:

Ձմրեսցի զազգն, որ յառնել դիտէ, դժնեայ քանքարտակ,
Նսեմն այն կոշման հիմն ի վեր դայցէ խարխուլ ամբարտակ:

Ահա թե ինչով է ոգևորվում և ի՞նչ նպատակ է դնում Վանանդեցին մեր բանաստեղծների համար. նրան ոգևորողը ազգի սերն է, և այս սերն է դրդում նրան գրել առնելու:

Մշտատենչիկ սոյն այս խանդանք յազգին ի սէր սիրավառ
Նշածադիկս իմոց ալեւաց զերկանց մատոյց նոր պատճառ:

Ի՞նչպես և ինչով պիտի առաջ բերել ազգի վերաշինութիւն գործը: Վանանդեցին այդ մասին ունի որոշ հայացքներ, որ ցրված են նրա երկերի մէջ և որոնք ամփոփված են նրա «Տեսարանի» շորթորդ երգի մէջ, որ մի դիպակտիկական քերթված է, ամբողջական մտածութիւնամբ, լի հարուստ և առողջ գաղափարներով: Այստեղ հանդես է գալիս վարժապետ և քահանա բանաստեղծը, որի գլխավոր հոգան է կրթել աճող սերնդի սիրտն ու միտքը: Դաստիարակութիւն մի ամբողջ ծրագիր է բանում նա՝ ընթերցողի առաջ:

Ուսման էական հոգին պիտի կազմի նմանող լինել մեր հայրերին, քն հոգևոր և քն մարմնավոր: Այս պատճառով և Վանանդեցու գրեթե բոլոր բանաստեղծութիւնը զբաղվում է մեր քաղ և իմաստուն նախնիքների արարքները ի տես հանելով, Նույնիսկ ԵՏեսարանիս այս լորրորդ երգի մեջ համառոտ, բայց ուժեղ կերպով թվում է մեր նշանավոր նախնիքները Հայկից սկսած մինչև անգամ բյուզանդական հայազգի կայսրները:

Մեր այս ևն նախնիք և որք ի սոցայն կարգի գերազանց,
Ժոխ բարեկրթութեան ազգին յայտնեցան հայր ի Հայկազանց,
Գանձեալ և զարդիւնս լցին զաշխարհ մեր ի շուք պարծեանց,
Անպարտ զօրացան ի կոր կործանել զոգին թշնամեաց:

Մանուկը պետք է աշխատի իր ընտիր նախնիքների հարազատ զա-
վակը լինել:

Հետեւեա, որդեա՛կ, անշեղ հետեւեա ուշ ընդ կուրծս ածեալ,
Ջի ընտրագոյն հարց զաւակ զարգասցիս հարազատ ընտրեալ:

Եվ ԲՆՆՂ է հայրերին նմանող լինելը,—եթե ոչ նախնիք արդյունքը,
որ ամբարվում նա ազգաշինութեան համար, մարդ պետք է ճանաչ և
ինքն էլ աշխատի վրան և մի քայլ առաջ տանէ: Պետք է հայրերի գործով
որակավրել և նրանց գործը շարունակել:

Ապա մանուկ դո՛ւ, հարազատ ծնունդ գերաբուն քաջաց,
Ջօրացի՛ր հօգր անժողաց պահել զշուք քոց նախնեաց,
Ջանք յարազատակ մի անգործ կացցէ ի քեզ և թմբած,
Ջողգին զօգտաւէտն ի հանդէս կացո՛ւ յամենայն շարժուած:
Ջաւակ ես քաջաց, մի՛ շիջի ի քեզ ոգին նախահարց,
Ջարմ ես վեհազանց, յարեա՛ց ի նոսա յօրանալ ի վարձ,
Ջանդի զի՛նչ օգուտ ունիլ զնախնիս ի մեծ գիւցազանց,
Եւ նուաստանալ անտոհմից գործովք ի կարգ վատ արանց:

Ազգասիրութիւնն ուրեմն ազգաշինութեան մեջ է տեսնում քանաս-
տեղծը և անհատը պարտական է անել ամեն քան հասարակութեան և ազ-
գի համար:

Քեզ յատուկ պարտիս զհասարակաց բարին վերագրեալ,
Ջի թէ մեռանիլ վասն հայրենեաց քաղցր է և զովեալ,
Ջի՛նչ այլ ինչ մեայ՝ որում ազգայինք շնն պարտաւորեալ:

Իսկական հայրենասիրութիւնը ազգին հարեւու, միութեան մեջ է և
ոչ երկպառակութեան, ներքին կոփմաների, բաժան բաժան լինելու մեջ: Եվ
քերթողը ժամանակի կրօնական կոփմաներին ու պառակտումներին ակ-
նարկելով՝ կոչ է անում:

Յարենցուք յազգ մեր, սիրենցուք զազգ մեր սէր համեմտագին.
Մի՛ ղգիառըս մեր թողցուք ի յազուրդ որդարց օտարին:

Այսպիսի ազգասիրութիւնն ահա՛, որ միութիւնն ու ազգաշինութիւնն՝
մեշ է նրանն գալիս, դառնում է աղքատութիւն ազգի բարգաւաճման.

Ազգին շինութեան սէրն է նախադրելու յերկնից վստակեալ
Որով ազգային գործոց դարաստանք ծաղկին ոտոգնալ:

Այս տողերի մեշ մարդ կարդում է ապագայի Պեշիկթաշլլանի «Եղ-
րայր հմք»-ը, Բայց և Վանանդեցին հայրենի համվատի ամանդապահու-
թիւնը քարոզելով՝ ընդունում է խղճի ազատութիւն և խրատում է կրօնի՝
վեճ չհանել, օտարազգիներին հարգել:

Վարենքի անկեղծ ընդ օտարազգիս հոգով հեղութեան.
Մի՛ նիւթեր զլար, կա՛ւ խաղաղութիւն՝ որքան մարթական.
Մի՛ բամբասանօք եղծեր զնոցուն զաւանդն ալական,
Զի ի հարց նոցին յատուկ է նոցա իսկ գործադրութեան:

Կրօնի ազատութիւնն ընդունելով հանդերձ՝ նա յուր կյանքի վերջում
սակալն սաստիկ զայրանում է ամերիկյան բողոքական քարոզիչների
դեմ, որոնք այդ ժամանակ հաստատվել էին Ջայուսեիայում: Անշուշտ
նա շատ վիճաբանութիւններ է ունեցել նրանց հետ և պղտորվել է յուր
հոգու խաղաղութիւնը, որ հարկ է համարել յուր Ոսկի Դարի վերջում
վիճաբանել նրանց հետ: Այդ հատվածը, որ հետո ավելացրած բան է և
վնասում է երկի մթնոլորտին, ցույց է տալիս այն ստեղծութիւնը, որ
նա տաժում է դեպի օտար քարոզիչները, որոնք փոխանակ հեթանոսնե-
րին երթալու, քրիստոնյաների մեշ քրիստոնեութիւն էին քարոզում:

Մերոց կարգաց մեք սիրահաճ հմք ի սրտէ և հաւան...
ՅԱմերիկեան ձեր դարձարութ յորջ նորափոր ոսկեծոր,
Ի վայրենեաց ճեպեցէք սարս որսալ էրէս ի ծործոր.
Մինէ, ճեարտն և որ ալք են անհաւատից մուար փոր,
Զձեզ կուեն, է՞ր յուլանայք, հա՛ վազեցէք ուժգնառոր:

Վանանդեցու զայրույթը շատ հասկանալի է. կաթոլիկութիւնն վեճերը՝
դեռ չվերջացած՝ վրան ավելանում է և բողոքականութիւնն վեճը, որով
և ազգաշինութիւնն գործը խանգարվում է նոր երկպառակութիւններով:
Ուստի և մեր քանաստեղծը բողոքում է ասելով.

Յիմանալին մի՛ սողոսկիք յԱրփաւորլին մեր այգի,
Դաւարագեղ դի ծաղկեացի պտուղ բերել զյարգի.
Մշտահարուածն՝ ի թշնամեաց անմեղ մանկունք Հայ ազգի
Հարան մարմնով, մի՛ ևս հարցին վէրս ընդունել ի հոգի:

Երբեմն նկարագրելով միսիոնարների վարմունքը, դրանց բանեց-
րած հնարները, խաբհայություններն և խորամտնկությունները, լիա-
ռատ դանձի միջոցով միամիտ մարդկանց հրապուրելը, հայոց հին կար-
գների ունչացնելը, ի՞նչ համբերում և սրտմտած րացազանչում է վերջը.

Եանց և թախոց գէշ ձեռ օսկերց օ՛շ թէ մատներ կոտորած:

Նա դեմ է դուրս գալիս և բողոքականների կրոնական գրքերին, ո-
րոնք բռնողիմ ժերոց ծխից բերեն զբան քարեքանդօ, և իրաւունք է տա-
լիս Պատրիարքին, որ նշուղում է նրանց զրքերը.

Մումբ կարկնացի՛, մեզ չէ պիտոյ ւնենրկնան սին քարազ...
Մանկունք ճայկնան, մի՛ յայնոսիկ իդձս լայնէք վայրապար.
Մի՛ ընթնոնաք զգիրս նոցա, ուր իմաստութեան լիք նպար:

Եվ այսպես Վանանդեցին յուր ժերության օրերում դառնում է երգիչ
միսիոնարների դեմ կռվողների, նրա մոլեռանդությունը սակայն միայն
կրոնական գրքերի դեմ է ուղղված. որովհետև իսկույն անմիջապես ավե-
լացնում է, թե լպիտք է փախված մնալ միայն հայ ուսման մեջ:

Մի՛ մոռանար և յայլ սուսացք թուշակ առնուլ պիտանի,
Միայն դի մի՛ դքս զնդծցն վայնչութիւն մայրենի:

Այստեղ արդեն դարձյալ նրան և՛ զայլիս երկտասարդ Վանանդեցին
յուր հառաջագիմական ոգով, որ ազգի փրկությունը տեսնում է ուսման
մեջ, ուսում լայն, ընդարձակ մտքով:

Ծնողք մարմնաւորք, թէ և չէք ձանձօք գրական շնորհին,
Մի՛ անգրագէտ թողուք զմանկունսն ի թարմ հասակին:

Բայց ուսումը պիտի լինի նախ մայրենի լեզվով և հայրենի հողովով
և ապա նոր օտար ազգերի, Ո՛րքան աշխատություն ունին հետևյալ տո-
ղերը.

Մատիցեն մանկունք նախ ի հայրենի վարժն գրավոր,
Ամբարել ի միտս զնախնեացն ազգիս զարդիւնս օգտաւոր...
Ջանա՛ նախագոյն յուսումն լեզուի քո հայրենական,
Ապա յայլ լեզուաց վարժումն գայցեա ըստ վայնչութեան:
Անկարգ հոանդն է գոր ունին ոմանք ի շալիզ ուսման,
Լքեալ զօհպուհն՝ զօտարացն ունիլ զգնուն զչան:

Այսպես միայն կրթված մանուկը կլինի յուր հայրերի հարազատ
զավակ և կկարողանա յուր պարտքը կատարել յուր ազգի նկատմամբ, և
այն երեք միջոցով.

Ազգային գործոց եղիւք վճարել փորձն մեզ յայտնեաց.
Ի զիւ, ի սուր և յաւեհաւսն ի պէտս հասարակաց:

Յորի ընդունակութիւնն ունեցողը դրանով պիտի աշխատի բարձրացնել յուր ազգը՝ գործելով գրականութեան, գիտութեան և փիլիսոփայութեան համար. ով արհեստի ընդունակութիւնն ունի, պիտի արհեստները զարգացնի և հարստացնի յուր ազգը, իսկ սո՛ւրբ: Ինչի՞նչ է պետք դա:

Ինչքան էլ հայերն անտարբեր հանդիսատես լինեին հունական ազատութեան կռիւներին, այդ մեծ հեղափոխութիւնը չէր կարող չազդել նրանց վրայ, և Վանանդեցին, Ջմրուռնիայում նստած, չէր կարող չմտածել այդ մասին: Ըվ ինչպէս երևում է, նա երկար խորհրդածել է այդ մասին և եկել է մի որոշ եզրակացութեան: Նա երկի լավ կշռել է հայ մարդու հոգին, որ սրի գործածութիւնը քարոզելով՝ հարկ է համարում ամենից առաջ մի զգուշութիւն անելու.

Ենա՞ր ի սուսեր, մի՞ զազանասցիս հեղումն արեան:

Յուր ժամանակի համար նա զենքի գործածութիւնը քարոզում է ինքնապաշտպանութեան համար:

Ըստ մեր վիճակի այժմիկ լին և պէտս զէնք զինուորութեան,

Այլ ի պաշտպանել անձին ի դիպուածըս ուղեւորման,

Ի գործ արկ որպէս օրէնք բնութեան տալ քեզ հրաման:

Սակայն Վանանդեցին դրանով միայն չէ սահմանափակում զենքի նշանակութիւնը: Դա ունի և մի այլ կարեւոր ու օգտակար գործածութիւն: Ինչպէս ինքնապաշտպանութեամբ մարդս յուր անձն է պաշտպանում բնական օրենքով, նույնպէս մարդ պարտական է սիրով, արիաքար և անհրկուն սրտով նաև ազգի շահերը պաշտպանել, որ և անհատին են: Նա պարտական է զենքով անսասան դեմ դնել ամեն վտանգներին, որ արգելք են լինում ազգային շահերին. ոչ մի դեպքում չպիտի վախենալ.

Աննկուն սրտիւ տոկալ վտանգացն դժուարութեան,

Որք շահուց ազգին և քո իսկ անձին բերեն դիմափան...

Նա՞ ի մահուանէ որ զամենայնիւ թուի ահռական,

Ոյինչ վահրոտիլ, երբ լիք ի նմա վատանում նշան:

